

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԳՈՐԾԵՐՈՎ

01.07.2022 – 31.12.2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

Հաստիք XVI

ԵՐԵՎԱՆ - 2024

ՀՏԴ 347.992  
ԳՄԴ 67.410  
Հ 247

**Քաղաքացիական գործերով**

*Կազմողներ՝ Գոռ Հակոբյան,  
ՀՀ Վճռաբեկ դատարանի  
քաղաքացիական պալատի նախագահ  
Լիլիանա Միսակյան, ՀՀ Վճռաբեկ  
դատարանի աշխատակազմի  
իրավական փորձաքննությունների  
ծառայության առաջարար մասնագետ  
Արմինե Պողոսյան, ՀՀ Վճռաբեկ  
դատարանի աշխատակազմի  
իրավական փորձաքննությունների  
ծառայության առաջին կարգի  
մասնագետ  
Գոհար Սամվելյան, ՀՀ Վճռաբեկ  
դատարանի աշխատակազմի  
իրավական փորձաքննությունների  
ծառայության առաջին կարգի  
մասնագետ*

**Վարչական գործերով**

*Կազմողներ՝ Հովսեփ Բեդկյան,  
ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական  
պալատի նախագահ  
Հովհաննես Մայիսայան, ՀՀ Վճռաբեկ  
դատարանի աշխատակազմի  
իրավական փորձաքննությունների  
ծառայության գլխավոր մասնագետ*

Հ 247 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ 01.07.2022 –  
31.12.2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ:  
ՀԱՏՈՐ XVI.– ԵՐ. ԱՆՏԱՐԵՍ, 2024.– 1200 էջ:

ՀՏԴ 347.992  
ԳՄԴ 67.410

ISBN 978-9939-98-243-4

© Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան, 2024

Համաֆինանսավորվում  
է Եվրոպական  
միության կողմից



Եվրոպական միություն

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Համաֆինանսավորվում  
և իրականացվում  
է Եվրոպայի խորհրդի  
կողմից

## **Գործընկերություն հանուն լավ կառավարման Աջակցություն դատախիզական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում**

Սույն տպագրությունն իրականացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից համաֆինանսավորվող ծրագրի շրջանակներում: Սույն տպագրության մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում կողմերի պաշտոնական տեսակետները:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

Թիվ 16

01.07.2022 – 31.12.2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

**ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ  
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ**

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ

Ընդհանուր սեփականություն

Գրավի իրավունք

Ընդհանուր դրույթներ գրավի մասին

Հայցային վաղեմություն

Պատասխանատվությունը, պարտավորությունները խախտելու համար

Պայմանագիր կնքելը

Փոխատություն

Ապահովագրություն

Ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները

Այլ գործեր

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Աշխատանքային պայմանագրի

Աշխատանքային պայմանագրի լուծումը

Աշխատանքային կարգապահությունը

## ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապացուցումը

Դատական ծանուցումներ: Դատավարական փաստաթղթերն ուղարկելու (հանձնելու) կարգը

Դատական ծախսեր

Դատավարական ժամկետները

Հաշտության համաձայնությունը

Նախնական դատական նիստը

Վարույթի ավարտն առանց գործն ըստ էության լուծելու

Դատական ակտերի հարկադիր կատարում

## ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ

**Հիմնական դրույթներ:** Քաղաքացիական գործերով դատական ակտերը և դրանց պարտադիր լինելը

**Քաղաքացիական դատավարության մասնակիցները:** Դատավարական իրավահաջորդությունը

**Դատական ծանուցումները:** Դատավարական փաստաթղթերն ուղարկելու (հանձնելու) կարգը

Դատական ծախսեր

Վարույթը վերաքննիչ դատարանում

Այլ գործեր



---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

---

01.07.2022 – 31.12.2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

## **ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ**

**ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ  
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

### **ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Առանձին տեսակի վարչարարության առանձնահատկություններ  
Վարչական պատասխանատվություն  
Հարկային իրավահարաբերություններ  
Իրավունքների պետական գրանցում  
Տնտեսական մրցակցության պաշտպանություն  
Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում  
Վարչարարության հիմունքներ և ապացուցում

### **ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Վարույթը վերաքննիչ դատարանում  
Պարտավորեցման հայց  
Դատավարության մասնակիցներ  
Գործի վարույթի կարճում  
Դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը

# ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ

### ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկում  
Վարչական ակտին բնորոշ հատկանիշներ

### ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայցադիմումի ընդունելիություն  
Վարչական ակտի կատարման կասեցում  
Հայցատեսակներ, մատնանշում և դատավարական ժամկետներ  
Միջանկյալ դատական ակտերի բողոքարկում և դատավարական ժամկետներ  
Դատավարության մասնակիցներ  
Հայցի ապահովում



## ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), հանդիսանալով Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու արդյունքում, ինչպես նաև իրացնելով իր սահմանադրական առաքելությունն ու կրելով Հայաստանի Հանրապետությունում արդարադատության միջավայր ստեղծելու պատասխանատվությունը, տարիներ շարունակ ապահովում է օրենքի միատեսակ կիրառությունը, վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Վճռաբեկ դատարանն իր լիազորությունների իրականացումը քաղաքացիական դատավարության օրենսդրության շրջանակներում փաստացի ապահովում է նաև ինչպես դատարանի կիրառած նյութական և դատավարական իրավունքի նորմերի զարգացմամբ՝ արտահայտելով նոր իրավական դիրքորոշումներ ու զարգացնելով արդեն իսկ արտահայտված իրավական դիրքորոշումները, այնպես էլ՝ դատարանի թույլ տված նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումների վերացմամբ, որոնց արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը: Ընդ որում, այդ նպատակով որոշումներ կայացնելիս Վճռաբեկ դատարանը բոլոր դեպքերում հիմք է ընդունում նաև Մահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քաղաքացիական գործերի վերաբերյալ արտահայտված ուղենիշային դիրքորոշումները:

Սահմանադրությամբ ամրագրված լիազորությունների շրջանակներում Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումներն ուղղորդող նշանակություն ունեն ինչպես դատավորների, իրավաբանական համայնքի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական անձանց և քաղաքացիների համար, այնպես էլ որոշ դեպքերում հիմք են հանդիսանում համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու միջոցով օրենքներում ու այլ իրավական ակտերում որոշակի փոփոխություններ և լրացումներ կատարելու համար:

Վճռաբեկ դատարանի գործառնությունները բխում են ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերից: Մի կողմից իրականացնելով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրորեն վերապահված լիազորությունը՝ Վճռաբեկ դատարանը նպաստում է հանրային իրավահարաբերությունների զարգացմանն այն իմաստով, որ հենց պետությունն է առաջին հերթին շահագրգռված օրենքների և նորմատիվ իրավական այլ ակտերի միատեսակ կիրառման հարցում: Իսկ մյուս կողմից՝ կոնկրետ գործերի շրջանակներում իրականացնելով արդարադատություն՝ դատական սխալի ուղղման կամ վերացման արդյունքում պաշտպանում կամ վերականգնում է մասնավոր անձանց, կազմակերպությունների խախտված նյութական և դատավարական իրավունքները:

Այս առումով հատկապես կարևոր է նշել, որ Վճռաբեկ դատարանի գործառնությունների կյանքի կոչման հարցում մեծ նշանակություն ունեն հասարակության վերաբերմունքը և վստահությունն արդարադատության նկատմամբ, որոնք էլ իրենց հերթին արտահայտվում են վճռաբեկ բողոքներ ներկայացնելու միջոցով:

Սկսած 2022 թվականի հուլիս ամսից մինչև 2023 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում ներկայացված վճռաբեկ բողոքների քննության արդյունքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը կայացրել է մի շարք

նախադեպային նշանակություն ունեցող որոշումներ՝ առաջնորդվելով օրենքի և դատարանի առջև բողոքի հավասարության, իրավական որոշակիության ու իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքներով:

Համոզված եմ, որ կայացված նախադեպային որոշումները, որոնց մի մասը տեղ է գտել սույն ընտրանիում, կնպաստեն միասնական դատական պրակտիկայի ապահովմանն ու իրավունքի զարգացմանը, ինչպես նաև ուղենիշային դեր կունենան ստորադաս ատյանների համար միևնույն փաստական հանգամանքների առկայության դեպքում քաղաքացիական գործերով դատական ակտեր կայացնելու համար:

Հարկ եմ համարում նշել, որ այս ընտրանին հանդիսանում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների կողմից կայացրած որոշումների թվով 16-րդ հատորը: Քաղաքացիական ոլորտին առնչվող մասը բաղկացած է նախադեպային որոշումներում քննության առարկա դարձած իրավական հարցադրումներից, երկու բաժնից՝ «Քաղաքացիական գործերով եզրափակիչ դատական ակտեր» և «Քաղաքացիական գործերով միջանկյալ դատական ակտեր»: Այդ բաժիններն իրենց հերթին ներառում են քաղաքացիական իրավունքին և քաղաքացիական դատավարությանը վերաբերող գլուխներ:

Բացի կայացրած որոշումներից, ներկայացված են նաև դատավորների կողմից կոնկրետ գործերով հայտնած հատուկ կարծիքները:

Սույն ընտրանիում ներառված որոշումներն ելակետային նշանակություն ունեն ընտանեկան, սնանկության, հայցային վաղեմության, ապահովագրության, աշխատանքային, դատական ծախսերի, դատական ծանուցումների ու առանձին վիճահարույց այլ հարցերի լուծման համար:

Կրկին անգամ հույս եմ հայտնում, որ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի որոշումների հերթական ընտրանին կդառնա իրավաբանական հանրության գրադարանի անբաժանելի մասը, ՀՀ բուհերի և այլ կրթական հաստատությունների ուսանողների կրթության համար կունենա գործուն նշանակություն:

**Վճռաբեկ դատարանի  
քաղաքացիական պալատի նախագահ  
Գոռ Հակոբյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ  
01.07.2022 – 31.12.2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

**Աղբյուրների ցանկ թիվ 1**  
**Սույն ընտրանիում ներառված քաղաքացիական գործերով**  
**կայացրած դատական ակտերում կիրառված**  
**Հայաստանի Հանրապետության**  
**Սահմանադրական դատարանի որոշումներ**

1. ՍԴՈ-630, 2006 թվականի ապրիլի 18	(7)
2. ՍԴՈ-652, 2006 թվականի հոկտեմբերի 18	(11, 26, 37, 38, 39)
3. ՍԴՈ-690, 2007 թվականի ապրիլի 9	(11, 26, 31, 37, 38, 39)
4. ՍԴՈ-719, 2007 թվականի նոյեմբերի 28	(11, 26, 37, 38, 39)
5. ՍԴՈ-765, 2008 թվականի հոկտեմբերի 8	(11, 26, 37, 38, 39)
6. ՍԴՈ-844, 2009 թվականի դեկտեմբերի 7	(11, 26, 37, 38, 39)
7. ՍԴՈ-845, 2009 թվականի դեկտեմբերի 8	(17)
8. ՍԴՈ-873, 2010 թվականի ապրիլի 13	(11, 26, 37, 38, 39)
9. ՍԴՈ-890, 2010 թվականի մայիսի 25	(11, 26, 37, 38, 39)
10. ՍԴՈ-932, 2011 թվականի հունվարի 11	(11, 26, 37, 38, 39)
11. ՍԴՈ-942, 2011 թվականի փետրվարի 22	(11, 26, 37, 38, 39)
12. ՍԴՈ-1037, 2012 թվականի հուլիսի 18	(11, 26, 37, 38, 39)
13. ՍԴՈ-1052, 2012 թվականի հոկտեմբերի 16	(11, 26, 37, 38, 39)
14. ՍԴՈ-1102, 2013 թվականի հունիսի 28	(32, 33)
15. ՍԴՈ-1115, 2013 թվականի սեպտեմբերի 24	(11, 26, 37, 38, 39)
16. ՍԴՈ-1127, 2013 թվականի դեկտեմբերի 10	(11, 26, 37, 38, 39)
17. ՍԴՈ-1142, 2014 թվականի ապրիլի 2	(7)
18. ՍԴՈ-1190, 2015 թվականի փետրվարի 17	(11, 26, 37, 38, 39)
19. ՍԴՈ-1192, 2015 թվականի մարտի 3	(11, 26, 37, 38, 39)
20. ՍԴՈ-1196, 2015 թվականի մարտի 17	(11, 26, 37, 38, 39)
21. ՍԴՈ-1197, 2015 թվականի ապրիլի 7	(11, 26, 37, 38, 39)
22. ՍԴՈ-1213, 2015 թվականի հունիսի 9	(7)
23. ՍԴՈ-1220, 2015 թվականի հունիսի 16	(11, 26, 37, 38, 39)
24. ՍԴՈ-1222, 2015 թվականի հունիսի 26	(11, 26, 37, 38, 39)
25. ՍԴՈ-1249, 2015 թվականի դեկտեմբերի 22	(26, 37, 38)
26. ՍԴՈ-1257, 2016 թվականի մարտի 10	(11, 26, 37, 38, 39)
27. ՍԴՈ-1289, 2016 թվականի հունիսի 23	(11, 26, 37, 38, 39)
28. ՍԴՈ-1344, 2017 թվականի փետրվարի 7	(39)
29. ՍԴՈ-1477, 2019 թվականի սեպտեմբերի 24	(31)
30. ՍԴՈ-1574, 2021 թվականի փետրվարի 2	(24)
31. ՍԴՈ-1611, 2021 թվականի սեպտեմբերի 28	(5)
32. ՍԴՈ-1669, 2022 թվականի նոյեմբերի 22	(16)

## Աղբյուրների ցանկ թիվ 2

### Սույն ընտրանիում ներառված քաղաքացիական գործերով կայացրած դատական ակտերում կիրառված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ

1. Amann v. Switzerland, 2000 թվականի փետրվարի 16-ի վճիռ (9)
2. Ankerl v. Switzerland, 1996 թվականի հոկտեմբերի 23-ի վճիռ (28)
3. Bărbulescu v. Romania, 2017 թվականի սեպտեմբերի 5-ի վճիռ (9)
4. Bladet Tromso and Stensaas v. Norway, 1999 թվականի մայիսի 20-ի վճիռ (13)
5. Bratyakin v. Russia, 09.03.2006 թվականի մարտի 9-ի վճիռ (7)
6. Broniowski v. Poland, 2004 թվականի հունիսի 22-ի վճիռ (7)
7. Brumărescu v. Romania, 1999 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (7)
8. Buscarini v. San Marino, 1999 թվականի փետրվարի 18-ի վճիռ (15)
9. Burdov v. Russia, 2002 թվականի մայիսի 7-ի վճիռ (33)
10. Colozza v. Italy, 1985 թվականի փետրվարի 12-ի վճիռ (28)
11. Dombo Beheer B.V. v. The Netherlands, 1993 թվականի հոկտեմբերի 17-ի վճիռ (28)
12. Evans v. The United Kingdom, 2007 թվականի ապրիլի 10-ի վճիռ (9)
13. Former king of Greecce and others v. Grecece, 2000 թվականի նոյեմբերի 23-ի վճիռ (7)
14. Gasus Dosier Und Fördertechnik Gmbh v. The Netherlands,  
1995 թվականի փետրվարի 23-ի վճիռ (33)
15. Guðmundur Andri Ástráðsson v. Iceland, 2019 թվականի մարտի 12-ի վճիռ (7)
16. Hämäläinen v. Finland, 2014 թվականի հուլիսի 16-ի վճիռ (9)
17. Iatridis v. Greece, 1999 թվականի մարտի 25-ի վճիռ (7)
18. Ivanova and Ivashova v. Russia, 2017 թվականի ապրիլի 26-ի վճիռ (26)
19. James and Others v. The United Kingdom, 1986 թվականի փետրվարի 21-ի վճիռ (7)
20. Kreuz v. Poland, 2001 թվականի հունիսի 19-ի վճիռ (37)
21. Khalfauoi v. France, 2000 թվականի մարտի 14-ի վճիռ (31)
22. Khalfauoi v. France, 1999 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռ (30)
23. Konovalova v. Russia, 2014 թվականի հոկտեմբերի 9-ի վճիռ (9)
24. Lavents v. Latvia, 2002 թվականի նոյեմբերի 28-ի վճիռ (15)
25. Libert v. France, 2018 թվականի փետրվարի 22-ի վճիռ (9)
26. Minasyan and Semerjyan v. Armenia, 2009 թվականի հունիսի 23-ի վճիռ (33)
27. Mockuté v. Lithuania, 2018 թվականի փետրվարի 27-ի վճիռ (9)
28. Mutatis mutandis, Jorgic v. Germany, 2007 թվականի հուլիսի 12-ի վճիռ (15)
29. Nunes Dias v. Portugal, 2003 թվականի ապրիլի 10-ի վճիռ (36)
30. Pandjikidze and others v. Georgia, 2009 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռ (15)
31. Papamichalopoulos v. Greece, 1995 թվականի հոկտեմբերի 31-ի վճիռ (33)
32. Pérez de Rada Cavanilles v. Spain, 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (26)
33. Posokhov v. Russia, 2003 թվականի մարտի 4-ի վճիռ (15)
34. Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium,  
1995 թվականի նոյեմբերի 20-ի վճիռ (33)
35. Radu v. The Republic of Moldova, 2015 թվականի ապրիլի 15-ի վճիռ (9)
36. Richert v. Poland, 2011 թվականի հոկտեմբերի 25-ի վճիռ (15)
37. Ryssovskyy v. Ukraine, 28.10.1999 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռ (7)
38. Ryabykh v. Russia, 2003 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռ (7)
39. Sabeh El Leil v. France, 2011 թվականի հունիսի 29-ի վճիռ (7)

- 
40. Satakunnan Markkinapörssi Oy and Satamedia Oy v. Finland, 2017 թվականի հունիսի 27-ի վճիռ (9)
  41. Scollo v. Italy, 1985 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռ (7)
  42. Sõro v. Estonia, 2015 թվականի սեպտեմբերի 3-ի վճիռ (9)
  43. Sporrang and Lönnroth v. Sweden, 1982 թվականի սեպտեմբերի 22-ի վճիռ (7)
  44. Tolstoy Miloslavsky v. The United Kingdom, 1995 թվականի հուլիսի 13-ի վճիռ (30)
  45. Von Hannover v. Germany, 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռ (9)
  46. Xheraj v. Albania, 2008 թվականի հուլիսի 29-ի վճիռ (7)
  47. Yegorychev v. Russia, 2016 թվականի մայիսի 17-ի վճիռ (15)
  48. Zavodnik v. Sloveńie, 2015 թվականի օգոստոսի 21-ի վճիռ (26)

**ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ**  
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**  
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**  
**ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**  
**ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

*2022 թվականի նոյեմբերի 11*

**1. Շանթ Խայալեանն ընդդեմ Նաիրա Բալոյանի և Նաիրա Բալոյանն ընդդեմ Շանթ Խայալեանի, քաղաքացիական գործ թիվ ԵԱԳԳ/4462/02/17**

Էջ  
1-14

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք ընդհանուր գույքից բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ առաջարկ պարունակող ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումը բավարար, թույլատրելի և վերաբերելի ապացույց է՝ պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության կամ բացակայության փաստը հաստատված համարելու համար:

**ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ**

*2022 թվականի սեպտեմբերի 23*

**2. «Ռոսգոսստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ն ընդդեմ Սերյոժա Պետրոսյանի, քաղաքացիական գործ թիվ ԼԳ/0505/02/15**

Էջ  
15-28

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ապահովագրական ընկերության սուբորգացիայի ներկայացման դեպքում հայցային վաղեմության սկզբին, վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը:

*2023 թվականի նոյեմբերի 20*

**3. Վարդան Ասատրյանն ընդդեմ Սմբատ և Վահան Մինասյանների ու Գայանե Վարդանյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԷԳ/2089/02/15**

Էջ  
29-39

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրմանը. ե՞րբ է նորից սկսվում հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սահմանված կարգով հայցը հարուցելու փաստի ուժով այն ընդհատվելուց հետո, այն դեպքում, երբ հայցվորը հրաժարվել է հայցից և գործի վարույթն այդ հիմքով կարճվել է՝ միաժամանակ վերահաստատելով հայցային վաղեմության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:

*2023 թվականի հուլիսի 21*

**4. «Հայաստանի ավտոապահովագրողների քյորո» ՀԿ-ն ընդդեմ Արմենակ Սունեփանյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԳ/34355/02/20**

Էջ  
40-52

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում պատճառված անձնական վնասները հատուցելիս ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքի իրացման հայցային վաղեմության ժամկետի սկզբնական պահը որոշելու հարցին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

*2023 թվականի մարտի 06*

**5. Մևակ Միլիտոնյանն ընդդեմ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԳ/6646/02/21**

Էջ  
53-69

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վնասի հատուցման գործերով պատճառված վնասի հատուցման համար սահմանված նյութաիրավական պայմանների բացահայտման անհրաժեշտությամբ պայմանավորված (վնաս պատճառողի և վնասի առկայություն, ոչ օրինաչափ վարքագիծ, վնասի և ոչ օրինաչափ վարքագծի միջև պատճառահետևանքային

կապ, պարտապանի մեղք) հայցային վաղեմության ժամկետի կիրառման առանձնահատկություններին, մասնավորապես՝ հաշվարկման կարգին՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումները:

**ՊԱՏԱՄԵԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ,  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՄՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

2022 թվականի հոկտեմբերի 21

6. «Տավրիդա» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության (այժմ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն), քաղաքացիական գործ թիվ ԵԴ/4549/02/20

Էջ  
70-89

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների վճարման պարտավորության առաջացման հիմքերին՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած դիրքորոշումը:

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԸ**

2023 թվականի դեկտեմբերի 21

7. «Դյուրի Ֆրի Հոլդինգ» ՍՊԸ-ն ընդդեմ Նոյեմբերյան համայնքի, քաղաքացիական գործ թիվ ՎԴ2/0087/05/21

Էջ  
90-110

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է օրենքով սահմանված պահանջների խախտմամբ կազմակերպված և (կամ) անցկացված մրցույթի անվավեր ճանաչելու դատարանի հայեցողական լիազորության իրականացման պայմաններին՝ հիմք ընդունելով իրավական որոշակիության և իրավունքի գերակայության պահանջներն ու մրցակցող իրավունքների հավասարակշռությունն ապահովելու անհրաժեշտությունը:

**ՓՈՒՄԱՌՈՒԹՅՈՒՆ**

2023 թվականի մայիսի 30

8. Լուսինե Նալբանդյանն ընդդեմ «ԳԼՈՒԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԴ/29387/02/19

Էջ  
111-123

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցերին.  
1. արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածով սահմանված՝ փոխառության պայմանագրի տոկոսների առավելագույն չափի վերաբերյալ օրենսդրական պահանջը կիրառելի է նաև վարկային պայմանագրով նախատեսված տոկոսների չափի նկատմամբ, եթե վարկային պայմանագրով նախատեսված է այլ տոկոսաչափ,  
2. արդյո՞ք վարկային պայմանագրի առարկա հանդիսացող վարկի նկատմամբ հաշվեգրվող տոկոսագումարը և վարկային պայմանագրի տարեկան փաստացի տոկոսադրույքը նույնական են, ու արդյո՞ք վարկային պայմանագրով սահմանվող տարեկան փաստացի տոկոսադրույթի չափի նկատմամբ ևս ենթակա է կիրառման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածով սահմանված՝ փոխառության պայմանագրի տոկոսների չափի վերաբերյալ սահմանափակումը:

**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

2023 թվականի հունվարի 25

9. «Նաիրի Ինչուրանս» ԱՍՊԸ-ն ընդդեմ Լևոն Սարգսյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԴ/25649/02/20

Էջ  
124-138

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք ապահովագրական պայմանագրի մեջ մատնանշված և պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից ընդունված և հաստատված RL 1-001 կանոններին հղում կատարելն ինքնին համապատասխանում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված տվյալների սուբյեկտի կողմից



համաձայնություն տալու պահանջներին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

**2022 թվականի դեկտեմբերի 26**

**10. «Նաիրի Ինչուրան» ՍՊԸ-ն ընդդեմ Արմեն Ազատյանի և Հասմիկ Ազատյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/0210/02/16**

Էջ  
139-151

**Խնդիր.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին ապահովագրական ընկերությանը չտեղեկացնելու դեպքում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը (ապահովադիր) և ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձը հանդես են գալիս համապարտ պարտապաններ, եթե սեփականատերը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել ապահովագրական պատահարի մասին՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձի կողմից այդ մասին նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով:

**2023 թվականի հոկտեմբերի 09**

**11. Մարտին Վարդանյանն ընդդեմ «Ռեսո» ապահովագրական ՓԲԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԵԱԲԳ/2014/02/17**

Էջ  
152-165

**Խնդիր.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի իմաստով անձանց պատճառված վնասի չափի որոշման արտադատական ընթացակարգերին, ինչպես նաև փորձաքննության արդյունքները դատական կարգով վիճարկելու իրավական հնարավորությանը:

**2022 թվականի դեկտեմբերի 31**

**12. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ՀԿ-ն ընդդեմ Սեյրան Առաքելյանի և Նորիկ Ղուկասյանի, քաղաքացիական գործ թիվ ՍԳ/0614/02/20**

Էջ  
166-187

**Խնդիր.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք խտտանման հիմքով հաշվառումից հանված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող վնասն ապահովագրական իրավակարգավորումների շրջանակներում ենթակա չէ հատուցման:

**ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**2022 թվականի հոկտեմբերի 07**

**13. Հայկ Սարգսյանի ընդդեմ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ն և Իրոնա Ազարյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԳ/18063/02/19**

Էջ  
188-197

**Խնդիր.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք լրատվական գործունեություն իրականացնող կազմակերպությունը կարող է պատասխանատվություն կրել գրապարտության համար, եթե դրանք հրապարակվել են նույն կազմակերպության աշխատակից հանդիսացող լրագրողի հեղինակությամբ, և եթե վերջինս հղում է կատարել կազմակերպությանը պատկանող օրաթերթին՝ որպես տեղեկատվության աղբյուրի:

**ԱՅԼ ԳՈՐԾԵՐ**

**2023 թվականի փետրվարի 10**

**14. «Արդշինբանկ» ՓԲԸ-ի դիմումը՝ Ֆինանսական համակարգի հաշտարար Փիրուզ Սարգսյանի 03.12.2019 թվականի թիվ 15-7521/19 որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործ թիվ ԼԳ-2/0043/02/20**

Էջ  
198-215

**Խնդիր.** Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք «կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվությունը» (այսուհետ՝ քաղվածք) համարվում է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի իմաստով սահմանված «պարտադիր ներկայացման տեղեկատվություն»:

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**2023 թվականի հոկտեմբերի 16**

**15. Իվան Մարինյոյն ընդդեմ Լուսինե Մինասյանի և Լուսինե Մինասյանն ընդդեմ Իվան Մարինյոյի, քաղաքացիական գործ թիվ Ե-Գ/32820/02/19**

**Էջ  
216-238**

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրումներին.

1. դատական կազմում ընդգրկված նախագահող դատավորի ինքնաբացարկի դեպքում տվյալ դատավորին հանձնված գործի վերաբաշխման կարգին,

2. Հայաստանի Հանրապետության դատարանի իրավագործությունն ընդունելու եղանակների հարցին,

3. ինչպես նաև վերահաստատել ծնողների և երեխայի փոխհարաբերությունները դատական կարգով որոշելու գործերով «երեխայի լավագույն շահ»-ի ապահովման առաջնահերթության վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ դրանց համատեքստում անդրադառնալով նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի իրավակարգավորման նպատակին և բովանդակային ծանրաբեռնվածությունը,

4. վերահաստատել ապացուցման բեռի բաշխման կանոնների վերաբերյալ նախկինում հայտնած իրավական դիրքորոշումները:

**2023 թվականի դեկտեմբերի 15**

**16. Սարգիս Զատիկյանն ընդդեմ Գոհար Բալասանյանի, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի, քաղաքացիական գործ թիվ Ե-Գ/33825/02/20**

**Էջ  
239-263**

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ծնողների և ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի փոխհարաբերությունները դատական կարգով որոշելու գործերով ՀՀ դատարանների իրավասությունը բացատրելու անթույլատրելիությունը՝ ելնելով «երեխայի լավագույն շահ»-ի ապահովման անհրաժեշտությունից, երաշխավորելով նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությունն ու հոգատարությունը, հաշվի առնելով ծնողների և երեխաների փոխհարաբերությունների վերաբերյալ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերն ու դրանց կիրառման կանոնները, միաժամանակ ստորադաս դատարանների համար արձանագրելով ՀՀ քաղաքացի երեխայի բնակության վայրը սահմանելու գործերով կիրառելի օրենսդրությունն ու իրավասու դատարանին որոշելու ուղեկիշները:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ**

**2023 թվականի մայիսի 30**

**17. Կարեն Մանգասարյանն ընդդեմ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ԱՐ-Գ/4142/02/20**

**Էջ  
264-277**

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով աշխատանքային պայմանագիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված հիմքով լուծելու վերաբերյալ վեճերով ապացուցման առարկան որոշելու առանձնահատկություններին:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ**

**2023 թվականի հունիսի 30**

**18. Գևորգ Էմին-Տեյրյանն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի, քաղաքացիական գործ թիվ Ե-Գ/39757/02/21**

**Էջ  
278-305**

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գործատուի հանձնարարության և աշխատողի պարտականությունների հարաբերակցության հարցին՝ բացահայտելու համար գործատուի հանձնարարությունը չկատարելու դեպքում աշխատողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հնարավորության սահմանները՝ վերահաստատելով և զարգացնելով աշխատողին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

**ՄՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ**

**2022 թվականի նոյեմբերի 23**

19. Ջոն Ասատրյանի սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմայանը և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ «Պրեմիում Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն ընդդեմ Ջոն Ասատրյանի, Մասուն Ասատրյանի, Սիրվարդ Ասատրյանի, քաղաքացիական գործ թիվ ՄՆԴ/0036/02/20

Էջ  
306-317

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրմանը. ե՞րբ է սկսում գործել առանց դատարանի որոշման պարտապահի գույքն օտարելու՝ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված սահմանափակումը:

**2023 թվականի հունվարի 25**

20. Կորյուն Մխիթարյանի դիմումը՝ «Ասիամեզաստոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործ թիվ ՄՆԴ/1246/04/21

Էջ  
318-327

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք սնանկ ճանաչված պարտապահի հիմնադիր հանդիսացող իրավաբանական անձի մասնակից ֆիզիկական անձի պահանջը ենթակա է գրանցման «Մանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում, եթե վերջինս հանդիսանում է նաև պարտապան ընկերության տնօրեն:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԱՊԱՑՈՒՑՈՒՄԸ**

**2022 թվականի սեպտեմբերի 30**

21. Վալերիկ Հայրապետյանն ընդդեմ ՀՀ կառավարության, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության, քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/5064/02/17

Էջ  
328-341

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է փորձաքննություն նշանակելու դատարանի հայեցողությանն այն պարագայում, երբ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատման համար առկա են հակասական ապացույցներ:

**2023 թվականի սեպտեմբերի 19**

22. Տիգրան Հովհաննիսյանն ընդդեմ Անթրանիկ Բողոսյանի և Հայկ Մարտիրոսյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԴ/18039/02/19

Էջ  
342-355

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է փաստի հաստատված լինելու հարցը պարզելիս դատարանի կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գործում եղած բոլոր ապացույցները գնահատելու հարցին՝ անդրադառնալով նաև լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները դատարան ներկայացնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատավարական կարգին:

**2023 թվականի դեկտեմբերի 15**

23. Արտակ Խաչատրյանն ընդդեմ Ստեփան Գալստյանի և Ստեփան Գալստյանն ընդդեմ Արտակ Խաչատրյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԴ/14048/02/18

Էջ  
356-369

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է դատարանի կողմից գործում առկա բոլոր ապացույցների լրիվ և բազմակողմանի հետազոտման ու գնահատման խնդրին, ինչպես նաև փորձաքննություն նշանակելու առանձնահատկություններին՝ վերահաստատելով և զարգացնելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

**ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ: ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ (ՀԱՆՁՆԵԼՈՒ) ԿԱՐԳԸ**

2023 թվականի մարտի 09

24. «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն ընդդեմ Արման Սիմոնյանի, քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ-2/1156/02/21

Էջ  
370-382

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «Ֆիզիկական անձի դեպքում դատական ծանուցագիրը պետք է հանձնվի (...) հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող (...) չափահաս անձին» եզրույթի լույսի ներքո դատավարական փաստաթղթերը դատավարության մասնակիցներին պատշաճ ուղարկելու (հանձնելու) կանոններին:

**ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ**

2022 թվականի նոյեմբերի 25

25. Շամամ Դազարյանի դիմումը՝ Արմեն Հարությունյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործ թիվ ԵԳ/0079/04/18

Էջ  
383-390

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պետական տուրք գանձվում է դիմումատուից այն դեպքում, երբ սնանկության գործի վարույթը կարճվել է դիմումատուից անկախ՝ պարտապանի մեկ այլ սնանկության գործով սնանկ ճանաչվելու հետևանքով:

**ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

2023 թվականի նոյեմբերի 24

26. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի դիմումը՝ անհատ ձեռնարկատեր Նորայր Սոլոյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործ թիվ ՄԵԳ/0434/04/21

Էջ  
391-400

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցին՝ վերահաստատելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:

**ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ**

2022 թվականի հոկտեմբերի 07

27. Սոնա Առաքելյանը, Արմենուհի Սարգսյանը, Մանյակ Սարգսյանն ընդդեմ Բուրատան Դավթյանի, Գևորգ Առաքելյանի, Գայանե Առաքելյանի, քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԳ/2965/02/17

Էջ  
401-413

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հաշտության համաձայնությունը հաստատելու դատարանի լիազորության կիրառման պայմաններին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները:

**ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ**

2023 թվականի նոյեմբերի 24

28. Հասմիկ Պապյանն ընդդեմ Հրանտ Պապյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԳ/30092/02/20

Էջ  
414-436

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննության իրավական հնարավորության հարցին, այն դեպքում, երբ դրանից հետո ներկայացվել է հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն:

**ՎԱՐՈՒՅԹԻ ԱՎԱՐՏՆ ԱՌԱՆՑ ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԵԼՈՒ**

**2023 թվականի մարտի 31**

**29. «ՖԻՆ-ՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն ընդդեմ Հրաչ, Սուրեն, Արաքսյա, Մուշեղ, Մելան և Հայկ Մանուչարյանների ու Սեդա Մինասյանի, քաղաքացիական գործ թիվ ՄԳՅ/0834/02/19**

Էջ  
437-446

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով գործի վարույթն ամբողջությամբ կարճելու հարցին այն դեպքում, երբ գործին մասնակցում են մի քանի պատասխանողներ, որոնցից մեկը կամ մի քանիսը մահացել են մինչև հայցի հարուցումը, մյուսը (մյուսները) դրանից հետո, և մյուս համապատասխանողները ողջ են:

**2023 թվականի սեպտեմբերի 01**

**30. Արթուր Մկրտչյանն ընդդեմ Լուսինե Մ Մանուկյանի, քաղաքացիական գործ թիվ ԼԳ/1411/02/21**

Էջ  
447-460

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելու վերաբերյալ գործերով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված հիմքով այդ գործի վարույթը կարճելու պարտադիր վավերապայմաններին՝ միաժամանակ վերահաստատելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:

**2023 թվականի նոյեմբերի 01**

**31. Կարինե Հակոբյանն ընդդեմ Ալեքսանդր Սահակյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԳ/22976/02/22**

Էջ  
461-469

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պաշտպանական որոշման մասին առաջին ատյանի ատյանի դատարանի կայացրած դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորության հարցին:

**ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ**

**2023 թվականի հոկտեմբերի 03**

**32. Շամվոն Համբարձումյանն ընդդեմ Կոտայքի մարզի Գառնի համայնքի, քաղաքացիական գործ թիվ ԿԳՄ/0244/02/17**

Էջ  
470-483

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վճռի կատարման շրջադարձի մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակին՝ մինևույն ժամանակ անդրադառնալով պատասխանողի կողմում որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի կողմից վճռի կատարման շրջադարձի մասին դիմում ներկայացնելու հնարավորությանը:

**2022 թվականի հոկտեմբերի 07**

**33. Արսեն Զիչյանն ընդդեմ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի իրավահաջորդ Վահնի Կոլոյունի Դեր-Բողոսյանի, քաղաքացիական գործ թիվ ԵԿԳ/0479/02/14**

Էջ  
484-499

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմումի քննության վարույթում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածով նախատեսված բարեխիղճ ձեռքբերողի ինստիտուտի կիրառելիության իրավական հարցին:

## ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

### ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ: ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՐՏԱԳԻՐ ԼԻՆԵԼԸ

2022 թվականի հոկտեմբերի 31

34. «Գազ Սուգան» ԱԿԿ ՓԲԸ-ի դիմումը՝ «Գազ Սուգան Արմենիա» ՀԶ ՍՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործ թիվ ՍՆԴ/0810/04/20

Էջ  
500-511

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է քաղաքացիական գործերով դատական ակտերի տեսակներին, հաշվի առնելով նաև սնանկության վարույթի առանձնահատկությունները:

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ: ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՁՈՐԳՈՒԹՅՈՒՆԸ

2022 թվականի դեկտեմբերի 26

35. «Նաիրի Ինչուրանս» ԱՍՊԸ-ն ընդդեմ Համլետ Գալստյանի, քաղաքացիական գործ թիվ ՇԴ/3360/02/21

Էջ  
512-518

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է մահացած անձի իրավահաջորդի կողմից, որի վերաբերյալ բացակայում է իրավահաջորդով փոխարինելու մասին դատարանի որոշումը:

### ԴԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ: ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ (ՀԱՆՁՆԵԼՈՒ) ԿԱՐԳԸ

2023 թվականի սեպտեմբերի 18

36. Տիգրան Ուստյանի դիմումը՝ Մարիաննա Ոսկանյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործ թիվ ՍՆԴ/0453/04/20

Էջ  
519-541

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է մինչև «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019 թվականի թիվ ՀՕ-294-Ն օրենքի ուժի մեջ մտնելը հարուցված սնանկության գործերով ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին ժողովին ներկա գտնվելու իրավունք ունեցող պարտատերերին ու պարտապանին պատշաճ ծանուցելու կառավարչի պարտականության կատարման, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքի ապահովման հարցերին:

### ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

2022 թվականի հոկտեմբերի 21

37. Ռուստամ Դրբոյանն ընդդեմ Ասահիտ Խանգեղյանի, քաղաքացիական գործ թիվ ԿԴԻ/3245/02/19

Էջ  
542-551

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու մասին ներկայացված միջնորդությունը սկզբնապես մերժվելուց հետո կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում հիմքը լրացված և նոր ապացույց ներկայացված պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու մասին միջնորդությունը ըստ էության կարող է չքննարկվել վերաքննիչ դատարանի կողմից:

**ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

*2022 թվականի հոկտեմբերի 21*

**38. Միրվարդ Մանգասարյանն ընդդեմ Երևան համայնքի, քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2084/02/15**

Էջ  
552-562

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք իրավաչափ է կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել այն հիմքով, որ մինևույն բողոքաբերի կողմից ավելի վաղ ներկայացված վերաքննիչ բողոքն ընդունվել էր վարույթ:

*2023 թվականի փետրվարի 10*

**39. «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ն ընդդեմ «Մահակյան Եղբայրներ» ՍՊԸ-ի, քաղաքացիական գործ թիվ ՍԳ/1004/02/19**

Էջ  
563-579

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ իրավական հարցին՝ արդյո՞ք վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով բողոքարկելն ու ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ չընդունելը բացառում են ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից նշված խախտումները վերացնելու և կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու անձի դատական պաշտպանության իրավունքի հետագա իրացման հնարավորությունը՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

**ԱՅԼ ԳՈՐԾԵՐ**

*2023 թվականի դեկտեմբերի 6*

**40. Լուսինե Վահրամյանի դիմումի՝ սեփական սնանկությունը ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործ թիվ ՍնԴ/0350/04/23**

Էջ  
580-586

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ֆիզիկական անձանց կողմից կամավոր սնանկության դիմում ներկայացվելու դեպքերում իր սնանկության մասին տեղեկությունները հրապարակելու առանձնահատկություններին:





## ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ

### ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ

### 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱԴԴ/4462/02/17**  
**2022թ.**

Քաղաքացիական գործ թիվ

ԵԱԴԴ/4462/02/17

Նախագահող դատավոր  
Դատավորներ

Կ. Չիլինգարյան  
Ա. Մկրտչյան  
Ա. Սմբատյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող  
գեկուցող*

Մ. ԴԻՄԵՅԱՆ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ  
Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ

2022թվականի նոյեմբերի 11-ին

գրավոր ընթացակարգով քննելով Նաիրա Բալոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.10.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Շանթ Խայալեանի ընդդեմ Նաիրա Բալոյանի ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջի մասին, և ըստ հակընդդեմ հայցի Նաիրա Բալոյանի ընդդեմ Շանթ Խայալեանի՝ ՀՀ ք. Երևան Դավթաշեն 3 թաղամասի 13 շենքի 16 բնակարանից Շանթ Խայալեանին պատկանող 1/2 բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### 1. Գործի դատարանական նախապարմությունը

Դիմելով դատարան՝ Շանթ Խայալեանը պահանջել է ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնել, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գույքը հրապարակային սակարկություններով վաճառել: Հակընդդեմ հայցով Նաիրա Բալոյանը պահանջել է առանձնացնել ՀՀ ք.Երևան, Դավթաշեն 3 թաղամասի 13 շենքի 16 բնակարանից Շանթ Խայալեանին պատկանող 1/2 բաժնեմասը և դրա վրա բռնագանձում տարածել:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ն. Ավետիսյան) (այսուհետ՝ Դատարան) 17.06.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը մերժվել, այն է՝

«(...) Շանթ Առաքելի Խայալեանին և Նաիրա Տիգրանի Բալոյանին բաժնային սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Դավթաշեն 3-րդ թաղամաս 13 շենքի 16 բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառել և ստացված գումարը բաշխել ընդհանուր սեփականության մասնակիցներին միջև՝ նրանց 1/2 բաժիններին համաչափ:

Նաիրա Տիգրանի Բալոյանի հակընդդեմ հայցն ընդդեմ Շանթ Առաքելի Խայալեանի՝ Երևան քաղաքի Դավթաշեն 3 թաղամասի 13 շենքի 16 բնակարանից Շանթ Խայալեանին պատկանող 1/2 բաժնեմասը դրա վրա բռնագանձում տարածելու համար առանձնացնելու պահանջի մասին, մերժել (...):»

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.10.2019 թվականի որոշմամբ Նաիրա Բալոյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 17.06.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել հակընդդեմ հայցվոր Նաիրա Բալոյանը (ներկայացուցիչ Լ. Մակինյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը բավարարելով հայցը, պարտավոր էր բավարարել հակընդդեմ հայցը նույնպես, քանի որ 200-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինությունը չպետք է որևէ բացասական հետևանք առաջացնի պարտատիրոջ իրավունքների իրականացման վրա: Այսպիսով, բռնագանձումը պետք է տարածվեր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան և այն հանգամանքը, որ հակընդդեմ հայցը մերժվել է այն հիմքով, որ գույքը բնեղենով բաժանել հնարավոր չէր, իսկ հակընդդեմ հայցվորի պահանջը եղել է բաժնեմասն առանձնացնելը՝ դրա վրա բռնագանձում տարածելու նպատակով, հիմնավոր չէ: Մինևնույն գույքը դրվել է հրապարակային սակարկության՝ այս կերպ վտանգելով և անսկստ թողնելով երեխայի ապրուստի նպատակով բռնագանձման ենթակա ալիմենտի գումարը:

Փաստորեն Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ 01.10.2010 թվականին Նաիրա Բալոյանը դիմել է ՀՀ Երևան քաղաքի

Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ սույն գործով սկզբնական հայցվորի՝ իրենց անչափահաս երեխա Զատա Խայալեանի խնամքի համար ալիմենտի բռնագանձման և պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջների մասին (թիվ ԵԱԴԴ/1076/02/10 քաղաքացիական գործ):

Վերաքննիչ դատարանը ելել է օրենքի տառացի մեկնաբանությունից, այնինչ այստեղ էական ուշադրության պետք է արժանանար օրենքի ընդունման նպատակը, այն է՝ պարտատիրոջ իրավունքների իրացման հնարավորությունը՝ հատկապես այն հանգամանքը, որ ալիմենտի բռնագանձումը անհրաժեշտ էր որպես երեխայի ապրուստի միակ միջոց:

Ուստի ելնելով գործում առկա ուշադրության արժանի փաստերից և հանգամանքներից, երեխայի շահերից ելնելով բաժնեմասն առանձնացնելու անհնարինության պարագայում բռնագանձումը պետք է տարածվեր սկզբնական հայցվորին պատկանող բաժնի վրա՝ հրապարակային սակարկություններով վաճառքից գոյացած գումարի միջոցով:

Վերաքննիչ դատարանը որոշման հիմքում դնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածը, գտել է, որ պատասխանողը կրել, բայց չի կատարել պարտապանի մոտ այլ գույքի բացակայության կամ անբավարարության փաստն ապացուցելու պարտականությունը: Մինչդեռ, հակընդդեմ հայցվորի վրա նման ապացուցման պարտականություն չի դրվել, ուստի դրա բացասական հետևանքները հակընդդեմ հայցվորը չի կարող կրել: Ավելին, հակընդդեմ հայցին կցված՝ կատարողական վարույթն ավարտելու մասին 22.03.2018 թվականի որոշման մեջ հստակ նշված է, որ սկզբնական հայցվորին պատկանող միակ գույքը, որը հայտնաբերվել է կատարողական գործողությունների արդյունքում, բնակարանի 1/2 բաժինն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 31.10.2019 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ հակընդդեմ հայցը բավարարելով կամ գործն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.06.2011 թվականի թիվ ԵԱԴԴ/1076/02/10 քաղաքացիական գործով կայացրած վճռի համաձայն.

«Հայցվորի պահանջը բավարարել մասնակի:

Շանթ Խիալյանից հօգուտ Նաիրա Բալոյանի բռնագանձել ալիմենտ ամսական 50.000 ՀՀ դրամ կայուն դրամական գումարով՝ մինչև Նաիրա Բալոյանի խնամքին գտնվող 01.09.2005 թվականին ծնված Զատա Շանթ Խիալյանի չափահաս դառնալը:

Ալիմենտի բռնագանձումը կատարել 2010 թվականի հոկտեմբերի 1-ից:

Նաիրա Բալոյանի հայցապահանջը մնացած մասով՝ մերժել:

Քաղաքացիական գործի վարույթը՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով՝ կարճել (...)» (**հատոր 1, գ.թ. 59-64**).

2) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 15.11.2017 թվականի և 19.01.2018 թվականի տեղեկանքների համաձայն՝ ք. Երևան, Դավթաշեն 3 թաղամաս 13 շենք, 16 բնակարան հասցեով անշարժ գույքը բաժնային սեփականության իրավունքով գրանցված է Շանթ Առաքելի Խայալեանի (1/2) և Նաիրա Տիգրանի Բալոյանի (1/2) անվամբ (**հատոր 1, գ.թ. 8, 35**).

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Ալիմենտի բռնագանձման բաժնի 23.03.2018 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման համաձայն՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության ալիմենտի բռնագանձման Երևան քաղաքի հարկադիր կատարող Մ. Չալաբյանը, ուսումնասիրելով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 17.11.2011 թվականի թիվ ԵԱԴԴ/1076/02/10 կատարողական թերթը, և 11.12.2017 թվականին հարուցված թիվ 03870248 կատարողական վարույթի նյութերը, պարզել է, որ պարտապան Շանթ Առաքելի Խիալյանը հանդիսանում է ք. Երևան, Դավթաշեն 3 թաղ., 13 շենք թիվ 16 բնակարանի բաժնային սեփականատեր և Նաիրա Բալոյանին առաջարկել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն դիմել դատարան՝ պարտապանի բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու համար (**հատոր 1, գ.թ. 58**).

4) Հետազոտությունների և դատական փորձաքննությունների կենտրոն «Անիկոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետներ Ա. Ստեփանյանի և Պ. Գրիգորյանցի 26.07.2018 թվականի թիվ ԱԴ 07/18 ՇԱ 79 եզրակացության համաձայն՝ ք. Երևան, Դավթաշեն 3 թաղ., 13 շենքի թիվ 16 բնակարանից առանձին մուտքերով 1/2 բաժնեմասն առանձնացնելը հնարավոր չէ (**հատոր 1, գ.թ. 86-112**).

5) ՀՀ ոստիկանության անձնագային և վիզաների վարչության 05.04.2018 թվականի թիվ 22-25252 գրության համաձայն՝ ՀՀ նախագահի 29.10.2012 թվականի թիվ 269-Ա հրամանագրով Սիրիայի քաղաքացի Շանթ Խայալեանին շնորհվել է ՀՀ քաղաքացիություն և 29.03.2013 թվականին ստացել ՀՀ քաղաքացու անձնագիր: Ազգանվան գրեղանը տպագրվել է Խայալեան, քանի որ նա քաղաքացիություն ստանալու համար ներկայացրել է Սիրիայի քաղաքացու անձնագիրը ազգանունը՝ Խիալյան, քանի որ ազգանվան և անվան գրառումը պետք է համընկնի տվյալ անձի՝ օտարերկրյա պետությունում տրված անձնագրում կատարված անգլերեն գրառման հետ (**հատոր 1, գ.թ. 80**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, ինչպես նաև 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածին թիվ ԳԴ-4/0306/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.11.2013 թվականի որոշմամբ տրված մեկնաբանությանը, ինչպես նաև Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածը, խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը (այսուհետ՝ Կոնվենցիա), Կոնվենցիային կից

1-ին արձանագրության 1-ին հոդվածը, Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, ինչի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.*

*- արդյոք ընդհանուր գույքից բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու վերաբերյալ առաջարկ պարունակող ՀՀ ԱԵ ԴԱՀԿ ծառայության կարարողական վարույթն ավարտելու մասին որոշումը բավարար, թույլատրելի և վերաբերելի սպացույց է՝ պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության կամ բացակայության փաստը հաստատված համարելու համար:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ երկու կամ ավելի անձանց սեփականության ներքո գտնվող գույքը նրանց է պատկանում ընդհանուր սեփականության իրավունքով: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գույքի նկատմամբ ընդհանուր սեփականությունը համարվում է բաժնային, եթե օրենքով դրա նկատմամբ սահմանված չէ համատեղ սեփականություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ պարտքը մարելու համար: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ նույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է դրա մասնակիցներին միջև բաժանվել նրանց համաձայնությամբ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի պահանջել առանձնացնելու իր բաժինն ընդհանուր գույքից:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը: Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի համաձայն, բաժնային սեփականության մասնակցին բնեղենով առանձնացվող գույքի անհամաչափությունը բաժնային սեփականության իրավունքում նրա բաժնին վերացվում է նրան համապատասխան դրամական գումար

վճարելով կամ այլ փոխհատուցումով: Բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը կարող են այդ մասնակցի համաձայնությամբ նրան փոխհատուցում վճարել: Այն դեպքերում, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի, դատարանը կարող է նաև այդ սեփականատիրոջ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածին համապատասխան՝ փոխհատուցումն ստանալու պահից սեփականատերը կորցնում է ընդհանուր գույքում բաժնի նկատմամբ իրավունքը:

Նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժին առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարության դեպքում դատարանն իրավունք ունի վճիռ կայացնել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ:

Վերոնշյալ իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ ընդհանուր գույքը բաժանելու կամ նույն հոդվածի 3-5-րդ կետերում սահմանված կանոններով բաժինն առանձնացնելու ակնհայտ աննպատակահարմարությունն օրենսդիրը սահմանել է որպես ընդհանուր գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու պարտադիր նախապայման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույց է այն փաստական տվյալը, որի հետագոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե՝ պահանջատիրոջը գրավոր առաջարկություն է արվել ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականություն համարվող անշարժ գույքից պարտապանի բաժնեմասը առանձնացնելու պահանջ ներկայացնել դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը, ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների համար իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ սահմանելով հանդերձ, որոշակի հանգամանքների առկայության պայմաններում, այն է՝ ընդհանուր գույքից պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության, ինչպես նաև ընդհանուր սեփականության մյուս մասնակիցների կողմից պարտապանի բաժինը գնելուց հրաժարվելու պարագայում, նախատեսել է այդ իրավունքների սահմանափակման հնարավորություն, որի նպատակն է ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների և պարտատիրոջ իրավունքների միջև անհրաժեշտ հավասարակշռություն ապահովելը: Նման իրավիճակում օրենսդիրը պարտատիրոջ իրավունքների

պաշտպանության միակ հնարավոր միջոց է համարել պարտատիրոջ իրավունքը՝ պահանջելու ընդհանուր սեփականություն հանդիսացող գույքը հրապարակային սակարկություններով վաճառել՝ դրանից ստացված գումարն ընդհանուր սեփականության մասնակիցների միջև բաշխելով և բռնագանձումը պարտապանի բաժին գումարի վրա տարածելով (յրեն Լուսրա Դավթյանն ընդդեմ Արսեն Մակարյանի և մյուսների թիվ ԼԴ4/0280/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):

Նախկինում կայացրած իր որոշումներից մեկում ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ընդհանուր գույքից համասեփականատիրոջ բաժինը բնեղենով առանձնացնելու փաստը կարող է հաստատվել միայն համապատասխան մասնագիտական եզրակացությամբ (յրեն Սամվել Ֆրանգոյանի ընդդեմ Հենրիկ Ֆրանգոյանի՝ թիվ ԵԷԴ/1089/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտատիրոջ պահանջով հրապարակային սակարկություններով պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը կարող է վաճառվել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, եթե՝

1. ընդհանուր սեփականության մասնակցի մոտ այլ գույքն անբավարար է պարտատիրոջ նկատմամբ պարտավորությունները մարելու համար,

2. բաժինը բնեղենով առանձնացնելն անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, կամ դրա դեմ առարկում են ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները,

3. պարտատերն ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել է շուկայական գնով գնել պարտապանի բաժինը,

4. ընդհանուր սեփականության մնացած մասնակիցները հրաժարվել են ձեռք բերել պարտապանի բաժինը:

Նման եզրահանգման համար ՀՀ վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 200-րդ հոդվածներով սահմանված կարգավորումների համադրված վերլուծությունը նույն օրենսգրքի 192-րդ և 195-րդ հոդվածների հետ (յրեն «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ և մյուսների գործով՝ թիվ ԳԴ4/0306/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.11.2013 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է. «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից հետևում է, որ պարտատերն ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնելու իր իրավունքը կարող է իրացնել միայն պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում, հետևաբար և **պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության փաստն ապացուցելու պարտականությունը կրում է պարտատերը:** Միաժամանակ այն դեպքում, երբ պարտապանն առարկում է նշված փաստի դեմ՝ վկայակոչելով այլ գույքի առկայությունը, վերջինս է կրում այլ գույքի առկայությունն ապացուցելու պարտականությունը, հետևաբար նաև այդ փաստի վիճելի լինելու դեպքում՝ դրանից բխող բացասական հետևանքները» (յրեն Լուսրա Դավթյանն ընդդեմ և Արսեն Մակարյանի և մյուսների գործով՝ թիվ ԼԴ4/0280/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի «Ընդհանուր դրույթներ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու մասին» վերնագրված 43-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ պարտապանի գույքի վրա

բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա արգելանք դնելը, սահմանափակում կիրառելը, այն առգրավելը և հարկադիր իրացնելը (աճուրդ կամ ուղղակի վաճառք):

Նույն օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ կատարողական թերթով, ապա պարտապանի այլ գույքի վրա բռնագանձումը տարածվում է հետևյալ հերթականությամբ. պարտապան ֆիզիկական անձի պարագայում՝ ա) շարժական գույք, բ) անշարժ գույք:

Նույն հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր հաջորդ հերթի գույքի վրա բռնագանձումը տարածվում է միայն նախորդ հերթի գույքի վրա բռնագանձումը տարածելուց հետո: Առանց նախորդ հերթում ընդգրկված գույքի բռնագանձումն իրականացնելու՝ հաջորդ հերթի գույքը բռնագանձվում է, եթե ակնհայտ է, որ նախորդ հերթի գույքի արժեքն անբավարար է պահանջների բավարարման համար, կամ անհնարին է պարզել նախորդ հերթում ընդգրկված գույքի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի կամ պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն, կամ նախորդ հերթում

ընդգրկված գույքի տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չի կայացել: Եթե միննույն հերթում առկա են գույքի տարբեր տեսակներ, ապա դրանց վրա բռնագանձում տարածելու հերթականությունը որոշում է հարկադիր կատարողը:

Նույն օրենքի 47.1 հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության համաձայն՝ պարտապանի գույքի գույքագրման ժամանակ պարտապանը պարտավոր է գրավոր տեղեկացնել հարկադիր կատարողին գույքի այն տեսակների մասին, որոնք հանդիսանում են բաժնային կամ համատեղ սեփականություն՝ նշելով համասեփականատերերի տվյալները (անունը, ազգանունը (անվանումը), բնակության (գտնվելու) վայրը): Պարտապանը պարտավոր է ներկայացնել նաև համասեփականատերերի սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բաժնային կամ համատեղ սեփականություն հանդիսացող գույքն անշարժ է, ապա բռնագանձումը սույն օրենքով սահմանված կարգով տարածվում է պարտապանին պատկանող բաժնի վրա:

Շարադրված նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու գործընթացը բաղկացած է մի շարք հաջորդական և տրամաբանորեն միմյանց հետ կապված գործողություններից, որոնցից յուրաքանչյուրը հարկադիր կատարողը կատարում է՝ ելնելով նախորդ փուլում ձեռնարկված միջոցների արդյունքներից: Ընդ որում, հարկադիր կատարողը կարող է ավարտել կատարողական վարույթը, եթե ձեռնարկել է իրենից կախված օրենքով թույլատրելի բոլոր միջոցները, սակայն, առկա են այնպիսի հիմքեր և հանգամանքներ, որոնք խոչընդոտում են հետագա կատարողական գործողությունների կատարմանը: Մասնավորապես այն դեպքում, երբ կատարողական վարույթն ավարտվում է պահանջատիրոջ ընդհանուր բաժնային կամ ընդհանուր համատեղ սեփականություն համարվող անշարժ գույքի բաժնետնասն առանձնացնելու պահանջ ներկայացնելու գրավոր առաջարկով, ապա գործում է այն իրավաչափ կանխավարկածը, որ մինչ այդ հարկադիր կատարողը ձեռնարկել է օրենքով թույլատրելի բոլոր միջոցները՝ առանց պարտատիրոջ կողմից դատարան դիմելու հնարավորության բռնագանձումը նրա գույքի վրա տարածելու ուղղությամբ, սակայն բռնագանձումը հնարավոր չէ եղել կատարել՝ այլ անձանց իրավունքներին անթույլատրելի միջամտություն կատարելու խոչընդոտի պատճառով: Այլ խոսքով՝



դա նշանակում է, որ հարկադիր կատարողը չի հայտնաբերել այնպիսի գույք, որի վրա կարող էր բռնագանձում տարածել՝ առանց դատարանի կողմից իրավական խոչընդոտի հաղթահարման: **Դա իր հերթին նշանակում է, որ հարկադիր կատարողը վերոգրյալ հիմքով կատարողական վարույթն ավարտում է, եթե չի հայտնաբերել պարտապանի այլ գույք, որի առկայությունը բավարար կլիներ կատարողական թերթի պահանջն ինքնուրույն կատարելու համար, այդ իսկ պատճառով էլ նշված հիմքով կատարողական վարույթի ավարտն ինքնին վկայում է պարտապանի մոտ այլ գույքի բացակայության կամ անբավարարության մասին՝ անկախ այդ մասին կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման մեջ նշվելուց կամ չնշվելուց:**

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ բռնագանձում տարածելու նպատակով ընդհանուր գույքից բաժինն առանձնացնելու վերաբերյալ

հայցերով հարկադիր կատարողի կողմից ընդունված «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի համաձայն **կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումը պարտատիրոջ կողմից ներկայացնելն ինքնին բավարար է պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության կամ բացակայության հանգամանքը ապացուցված համարելու համար, եթե գործի քննության ընթացքում պարտապանը հակառակը չի ապացուցում:** Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պարտապանի բաժինն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին հայցը չի կարող մերժվել, եթե համապատասխան փորձագիտական եզրակացությամբ հաստատված է այն փաստը, որ վիճարկվող գույքից հնարավոր չէ պարտապանի բաժինն առանձնացնել: Այդ դեպքում առկա են բոլոր հիմքերը գույքը հրապարակային սակարկությունների միջոցով վաճառելու և բռնագանձումը վաճառքից ստացված գումարի բաժնի վրա տարածելու համար:

### ***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

1) Դատարանի 17.06.2019 թվականի վճռի համաձայն սկզբնական հայցը բավարարվել է և վճռվել է՝ բաժնային սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Դավթաշեն 3 թաղամաս 13 շենքի 16 բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառել և ստացված գումարը բաշխել ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց 1/2 –ական բաժիններին համաչափ, իսկ հակընդդեմ հայցը՝ Երևան քաղաքի Դավթաշեն 3 թաղամասի 13 շենքի 16 բնակարանից Շանթ Խայալեանին պատկանող 1/2 բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու համար առանձնացնելու մասին պահանջը մերժվել է:

Վերաքննիչ դատարանի 31.10.2019 թվականի որոշմամբ Նաիրա Բալոյանի վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 17.06.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վերաքննիչ դատարանն իր որոշումը պատճառաբանել է հետևյալ կերպ.

« (...) Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն փաստարկին, թե հակընդդեմ հայցով ներկայացված պահանջի հետապնդած նպատակի և բնույթի թելադրանքով Դատարանը պետք է կայացներ Բնակարանի հրապարակային սակարկություններով վաճառքից գոյացած գումարի վրա բռնագանձում տարածելու մասին վճիռ, ապա այն ակնհայտորեն հիմնավորված չէ և հերքվում է պատասխանողի կողմից ներկայացված հակընդդեմ հայցապահանջի ծավալում «բռնագանձում

տարածելու» պահանջ ներառված չլինելու փաստով, իսկ Դատարանն իրավասու չէր դուրս գալ հակընդդեմ հայցի շրջանակներից:

Ի վերջո, հակընդդեմ հայցի հիմքում դնելով ՀՀ քաղ. օր.-ի 200-րդ հոդվածը, պատասխանողը կրել, բայց չի կատարել պարտապանի մոտ այլ գույքի բացակայության կամ անբավարարության փաստն ապացուցելու պարտականությունը: Այդ փաստի հաստատմանը ծառայող ապացույց չի կարող համարվել հակընդդեմ հայցին կցված՝ կատարողական վարույթն ավարտելու մասին 22.03.2018թ. որոշումը, քանի որ դրանում արձանագրվել է Բնակարանի նկատմամբ Շանթ Առաքելի Խայալեանի բաժնային սեփականություն ունենալու փաստը միայն, և այն չի պարունակում վերջինիս սեփականության իրավունքով պատկանող այլ գույքի կամ դրամական միջոցների բացակայության վերաբերյալ որևէ տեղեկություն»:

«(...) պատասխանողն իր հակընդդեմ պահանջը ձևակերպել է հետևյալ կերպ՝ «... խնդրում եմ ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 3 թաղ., 13 շ., 16 բնակարանից առանձնացնել Շանթ Խայալեանին պատկանող 1/2 բաժնեմասը՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար»: Հակընդդեմ հայցապահանջը ձևակերպող բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից ակնհայտ է, որ այն բովանդակում է Բնակարանից Շանթ Խայալեանին պատկանող 1/2 բաժինն առանձնացնելու մասին պահանջ միայն, որին հաջորդած՝ «դրա վրա բռնագանձում տարածելու համար» արտահայտությունը որևէ պարագայում չի կարող ընկալվել որպես Դատարանին ուղղված առանձին նյութաիրավական պահանջ, քանի որ այն արտացոլում է սուկ բաժին առանձնացնելու վերաբերյալ ներկայացված պահանջի նպատակը և ծառայում է բացառապես այդ նպատակի բացահայտմանը, ընդ որում, այդ նպատակի բացահայտումը զուրկ է հակընդդեմ հայցապահանջի քննության և լուծման համար որևէ նշանակությունից»:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը, արձանագրում է, որ պարտապանի մոտ այլ գույքի առկայության վերաբերյալ ապացույցների բացակայության պայմաններում, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ հարկադիր կատարողի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումն ինքնին բավարար ապացույց է հանդիսանում պարտատիրոջ մոտ այլ գույքի բացակայությունը կամ անբավարարությունը հաստատված համարելու համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից հակընդդեմ հայցվոր Նաիրա Բալոյանի կողմից պարտապանի մոտ այլ գույքի բացակայության փաստն ապացուցելու պարտականությունը չկատարելու մասին պատճառաբանությունը հիմնազուրկ է, քանի որ հակընդդեմ հայցվորն արդեն իսկ իր հակընդդեմ հայցին կից ներկայացրել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության ալիմենտի բռնագանձման բաժնի հարկադիր կատարողի 23.03.2018 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումը, որի համաձայն հարկադիր կատարող Մ. Չալաբյանը պարտատիրոջն առաջարկել է դիմելու դատարան ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանի բաժնեմասն առանձնացնելու և դրա վրա բռնագանձում տարածելու համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ պարագայում հակընդդեմ հայցվորը, կրելով Շանթ Խայալեանի մոտ այլ գույքի բացակայության կամ անբավարարության մասին փաստն ապացուցելու պարտականությունը, կատարել է այն՝ ներկայացնելով դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ալիմենտի բռնագանձման բաժնի հարկադիր կատարողի 23.03.2018 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշումը:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նաիրա Բալոյանը, իրացնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին կետով իրեն վերապահված իրավունքը, պատշաճ կերպով իրականացրել է օրենսդրի կողմից իր վրա դրված ապացուցման պարտականությունը, այն է՝ ներկայացրել է թույլատրելի և վերաբերելի ապացույց, որը բավարար է հաստատված համարելու պարտապանի մոտ այլ գույքի անբավարարության կամ բացակայության փաստը, իսկ պարտապանը, կրելով իր մոտ առաջնահերթության կարգով բռնագանձման ենթակա այլ գույքի առկայության փաստն ապացուցելու պարտականություն՝ չի կատարել այն:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստն ապացուցված լինելու, հետևաբար և՛ դրա դատավարական հետևանքը կիրառելու հարցում, ինչն էլ ազդել է գործի ելքի վրա:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով հիմնավորվում է նաև պարտապանին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մյուս պայմանների առկայությունը: Մասնավորապես, գործում առկա հետազոտությունների և դատական փորձաքննությունների կենտրոն «Անիկոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձագետներ Ա. Ստեփանյանի և Պ. Գրիգորյանցի 26.07.2018 թվականի թիվ ԱԴ 07/18 ՇԱ 79 եզրակացության համաձայն՝ ք. Երևան, Դավթաշեն 3 թաղ. 13 շենքի թիվ 16 բնակարանից առանձին մուտքերով 1/2 բաժնեմասն առանձնացնելը հնարավոր չէ:

Հակընդդեմ հայց ներկայացնելով՝ Նաիրա Բալոյանը խնդրել է հետևյալը. «ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 3 թաղ. 13 շմ 16 բնակարանից առանձնացնել Շանթ Խայալեանին պատկանող 1/2 բաժնեմասը՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար»: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր է բողոքաբերի այն փաստարկը, որ Դատարանի կողմից սկզբնական հայցը բավարարելու պայմաններում բռնագանձումը պետք է տարածվեր Շանթ Խայալեանին պատկանող բնակարանի 1/2 բաժնեմասի հրապարակային սակարկությունից առաջացած գումարի վրա, ինչն անտեսվել է և՛ Դատարանի, և՛ Վերաքննիչ դատարանի կողմից:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ «դրա վրա բռնագանձում տարածելու համար» արտահայտությունը որևէ պարագայում չի կարող ընկալվել որպես Դատարանին ուղղված առանձին նյութաիրավական պահանջ, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքը որևէ կերպ չի կարող ազդել հակընդդեմ հայցով ներկայացված պահանջի իրավաչափության վրա, քանի որ այդ արտահայտությունն ամբողջացնում է գույքի բաժինն առանձնացնելու պահանջը՝ ցույց տալով նման պահանջ ներկայացնելու նպատակը և հայցի բավարարման դեպքում պահանջ ներկայացնողի ակնկալիքը: Պահանջի նման ձևակերպումն ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպմանը, համաձայն որի՝ բաժնային կամ համատեղ սեփականության մասնակցի մոտ այլ գույքի անբավարարության դեպքում նրա պարտատերն իրավունք ունի

ընդհանուր գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու պահանջ ներկայացնել՝ դրա վրա բռնագանձում տարածելու համար: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը վերոհիշյալ պատճառաբանությունն անելիս հաշվի չի առել, որ «դրա վրա բռնագանձում տարածելու համար» արտահայտությունն առանձին նյութաիրավական պահանջ չհամարելու պարագայում կստացվի, որ Դատարանը

սկզբնական հայցը բավարարել է, իսկ միևնույն պահանջով հակընդդեմ հայցը մերժել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բաժինը բնեղենով առանձնացնել անհնար է կամ դրա դեմ առարկում են բաժնային կամ համատեղ սեփականության մնացած մասնակիցները, պարտատերն իրավունք ունի ընդհանուր սեփականության մնացած մասնակիցներից պահանջել շուկայական գնով գնելու պարտապանի բաժինը՝ **պարտքը մարելու համար**: Ընդհանուր սեփականության մնացած մասնակիցների կողմից պարտապանի բաժինը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում պարտատերն իրավունք ունի պահանջելու բռնագանձումը տարածել ընդհանուր սեփականության իրավունքում պարտապանի բաժնի վրա՝ նույն օրենսգրքի 197 հոդվածին համապատասխան:

Օրենքի վկայակոչված տեքստի շարադրանքից ուղղակիորեն բխում է, որ տվյալ դեպքում հակընդդեմ հայցվորը ներկայացրել է օրենքով սահմանված դրույթին լիովին համապատասխանող նյութաիրավական պահանջ, մինչդեռ Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 200-րդ հոդվածին տալով ՀՀ վճռաբեկ դատարանի ԳԴ4/0306/02/11 քաղաքացիական գործով 29.11.2013 թվականի որոշմամբ նույն նորմին տրված մեկնաբանությանը հակասող մեկնաբանություն, միևնույն ժամանակ սխալ մեկնաբանությամբ է կիրառել այդ նորմը:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար՝ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել վերը նշված նյութական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով պետք է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Սահմանադրության նույն հոդվածով անրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված հիմնական իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր փաստ հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարճատաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում բողոք բերող անձից պետական տուրք չի գանձվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ (...) պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով (...)

7. դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար՝  
բ) ոչ դրամական պահանջի գործերով՝ բազային տուրքի քսանապատիկի չափով:

Նկատի ունենալով, որ Նաիրա Բալոյանի վճռաբեկ բողոքը բավարարվում է, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նաիրա Բալոյանի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախապես վճարված 10.000 ՀՀ դրամը, ինչպես նաև վճռաբեկ բողոք ներկայացնելու համար նախապես վճարված 20.000 ՀՀ դրամը ենթակա է բռնագանձման Շանթ Խայալեանից:

Ինչ վերաբերում է փաստաբանի ծախսին, ապա սույն գործում առկա չեն Նաիրա Բալոյանի կողմից փաստաբանների հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրեր: Միաժամանակ փաստաբանների ծախսերի հատուցման պահանջ չի ներկայացվել, ուստի դատական ծասերի հարցն այդ մասով Վճռաբեկ դատարանը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Հակընդդեմ հայցը մերժելու մասով բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 31.10.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Նաիրա Բալոյանի հակընդդեմ հայցը բավարարել՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 15.06.2011 թվականի թիվ ԵԱԴԴ/1076/02/10 քաղաքացիական գործով բռնագանձված գումարի բռնագանձումը տարածել Երևանի Դավթաշեն 3 թաղամասի 13 շենքի 16 բնակարանի հրապարակային սակարկությունների արդյունքում Շանթ Խայալեանին պատկանող 1/2 բաժնի գույքի վաճառքից ստացված գումարի վրա:

Որոշման մնացած մասը թողնել անփոփոխ:

2. Շանթ Խայալեանից հոգուտ Նաիրա Բալոյանի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար: Մնացած դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ԼԳ/0505/02/15**  
**2022թ.**

Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

ԼԳ/0505/02/15  
Լ. Գրիգորյան  
Ա. Պետրոսյան  
Դ. Սերոբյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող* Մ. ԴՐՄԵՅԱՆ  
*գեկուցող* Ս. ԱՆՏՈՆՅԱՆ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 23-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Ռոսգոստրախ Արմենիա» ԱՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.02.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ Սերյոժա Պետրոսյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Սերյոժա Պետրոսյանից հոգուտ Ընկերության բռնագանձել 1.001.500 ՀՀ դրամ՝ որպես հետադարձ պահանջի իրականացում:

ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Մկոյան) (այսուհետ՝ Դատարան) 02.09.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.02.2020 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 02.09.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Մերուժան Սարոյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը, 51-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 53-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 380-րդ և 381-րդ հոդվածների պահանջները, կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնք չպետք է կիրառեր, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մասը, որը պետք է կիրառեր:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «(...) Հայցվորն ընդդեմ Պատասխանողի ներկայացրել է ոչ կյանքի ապահովագրության պայմանագրից բխող հայցապահանջ, որը, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածի պահանջների, կարող է ներկայացվել ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահից սկսած երեք տարում: Գործով ներկայացված հայցադիմումը հանձնվել է Հայցվորի կողմից կապի ծառայությանը 2015 թվականին, մինչդեռ ապահովագրական պատահարը տեղի է ունեցել 2011 թվականին, որպիսի պայմաններում պետք է արձանագրել այն փաստը, որ Հայցվորի կողմից հայցապահանջը դատարան է ներկայացվել դրա համար՝ վերը նշված օրենքով սահմանված հայցային վաղեմության երեք տարվա ժամկետն ավարտելուց հետո, որն էլ կիրառելու վերաբերյալ Պատասխանողի դիմումը հիմք ընդունելով՝ Դատարանը հիմնավոր եկել է այն հետևության, որ հայցային վաղեմության կիրառմամբ պահանջը պետք է մերժել»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածը կարգավորում է ապահովագրության պայմանագրերից բխող պահանջներով հայցային վաղեմությանը վերաբերող հարցերը: Այնինչ, սույն գործով հայցը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի հիման վրա, որոնց համաձայն՝ ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական պատահարի մասին ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով չտեղեկացվելու դեպքում պահանջի իրավունքը ծագում է հետադարձ պահանջի հիման վրա: Այսինքն՝ վերոնշյալ հոդվածը կիրառելի չէ հետադարձ պարտավորությունների հետ կապված պահանջների վերաբերյալ հայցադիմումների նկատմամբ: Նշված հոդվածը վերաբերում է բացառապես պայմանագրից բխող, ապահովագրի և շահառուի կողմից հայցի ներկայացմանը, մինչդեռ սույն գործով ներկայացվել է հետադարձ պարտավորության կատարմանն ուղղված պահանջ (հետադարձ պահանջ), որը սահմանված է նախևառաջ օրենքով, մասնավորապես՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածը հակասում է հետադարձ պահանջներով հայցային վաղեմության հարաբերությունները ուղղակիորեն կարգավորող հոդվածին (սույն օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ մաս), և դրա



կիրառելի լինելու դեպքում կստեղծվի այնպիսի իրավիճակ, երբ ապահովագրական ընկերությունը կարող է իր **հետադարձ պահանջը** ներկայացնել վնաս պատճառող անձի նկատմամբ նույնիսկ այն ժամանակ, երբ դեռևս չի կատարել իր **հիմնական պարտավորությունը**, այն է՝ ապահովագրական հատուցման իրականացումը:

Դատարանի մեկնաբանությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածի փաստացի կիրառումը կարող է պրակտիկայում առաջացնել այնպիսի իրավիճակ, երբ ապահովագրական ընկերությունն ընդհանրապես կգրկվի վնասի հատուցմամբ հետադարձ պահանջներով արդյունավետ դատական պաշտպանության իր սահմանադրական իրավունքից:

Վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո գտնում է, որ որևէ անձի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունք ձեռք բերած ապահովագրական ընկերությունը, որպես հիմնական պարտավորության կատարում, նախ պետք է հատուցի տուժողին (տուժողներին) պատճառված վնասը, որից հետո միայն վերջինիս մոտ կառաջանա հետադարձ պահանջ ներկայացնելու իրավունքը: Հակառակ դեպքում ամբողջությամբ կխախտվի հետադարձ պահանջ հասկացության էությունը:

Ընկերությունն իր հիմնական պարտավորությունը, այն է՝ ապահովագրական հատուցման վճարումը կատարել է 21.03.2012 թվականին (հիմք՝ թիվ 5554 վճարման հանձնարարագիրը), այսինքն, հայցվորի մոտ հետադարձ պահանջի իրավունքով հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվել է ապահովագրական հատուցման վճարումը կատարելու օրվան հաջորդող օրը, որն ավարտվում է 22.03.2015 թվականին, իսկ սույն գործով իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարան է ներկայացվել փոստային ծառայության միջոցով 17.03.2015 թվականին, այսինքն՝ հայցային վաղեմության ժամկետի ավարտից 5 օր առաջ, որպիսի պայմաններում հայցային վաղեմության ժամկետը ավարտվելու մասին խոսք զնալ չի կարող:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.02.2020 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության և Սերյոժա Պետրոսյանի միջև 18.12.2010 թվականին կնքված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության **թիվ SG 001773 վկայագրի** համաձայն՝ Սերյոժա Պետրոսյանը ապահովագրել է իր անձնական օգտագործման «ՎԱԶ 210630» մակնիշի 02 ՕՕ 849 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը, 4-րդ կետով սահմանվել է, որ ավտոմեքենայի շահագործման նպատակն անձնական է, ավտոմեքենայի լիազորված տիրապետողներ վկայագրի 5-րդ կետում չեն նշվել (**հատոր 1-ին, գ.թ. 15**).

2) Պատահարը հիմնավորվել է ՀՀ Ոստիկանության ՃՈ 2-րդ սպայական գումարտակի, 4-րդ վաշտի հետաքննության գծով տեսուչ Վ. Համբարձումյանի կողմից 26.06.2011 թվականին տրված եզրակացությամբ և կից նյութերով, իսկ «ՎԱԶ-210630» մակնիշի, 02 ՕՕ 849 հ/հ-ի ավտոմեքենայի վարորդ Հ. Ասիլբեկյանի

մեղավորությունը պատահարում հիմնավորվել է «Ռուսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի փորձագետ Տ. Կոյունջյանի 30.05.2011 թվականի թիվ SG/C11-3412 եզրակացությամբ (ճանապարհատրանսպորտային պատահարի պատճառների հետազոտություն), համաձայն որի՝ Հ.Ասիլբեկյանը թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի և 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող գործողություններ, ինչով էլ պայմանավորված է եղել պատահարի առաջացումը (**հատոր 1-ին, գ.թ. 21-23, 33-37**).

3) Սամվել Անդրասյանի կողմից 30.01.2011 թվականին «Ռուսգոսստրախ Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը ներկայացրած ԱՊՊԱ ոլորտում պատճառված վնասների հատուցում ստանալու վերաբերյալ թիվ SG001773 հայտային դիմում է ներկայացվել՝ ընտրելով վնասված գույքի վերանորոգման տարբերակը (**հատոր 1-ին, գ.թ. 31**).

4) «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ի ղեկավարի կողմից տրված «Գույքային վնասների վերանորոգում իրականացնող կազմակերպության հաշվետվության (եզրակացության)» համաձայն՝ «ՏՈՅՈՏԱ» մակնիշի, 501 ՍՍ 10 հ/հ-ի ավտոմեքենային պատճառված վնասի վերանորոգման ընդհանուր ծախսը կազմել է 1.001.500 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 37**).

5) «Տոյոտա-Երևան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Ընկերության միջև կազմված հարկային հաշվի, համաձայն՝ «Տոյոտա-Երևան» ՍՊԸ-ն մատուցել է 1.001.500 դրամ ընդհանուր գումարի ծառայություններ (**հատոր 1-ին, գ.թ. 72**).

6) Ընկերության «Հատուցում վճարելու մասին» 06.03.2012 թվականի որոշմամբ, Ընկերությունը, հիմք ընդունելով նշված ապահովագրական պատահարի հանգամանքները, ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» պայմանների, «Հայաստանի ապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի կողմից հաստատված կանոնների դրույթներով և հիմնվելով փորձագետների կողմից տրված եզրակացությունների վրա, որոշել է Սերյոժա Պետրոսյանի ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի համար հատուցում ստանալու վերաբերյալ տուժողի կողմից ներկայացված դիմումը բավարարել (**հատոր 1-ին, գ.թ. 38**).

7) Ընկերության գործադիր տնօրենի կողմից 07.03.2012 թվականին հաստատված թիվ SG-3412 ապահովագրական հավաստագրի համաձայն՝ որոշվել է բավարարել նշված պատահարի հետևանքով պատճառված վնասի հատուցում ստանալու վերաբերյալ տուժողի կողմից ներկայացված դիմումը՝ ավտոլթարի հետևանքով «Նորակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատճառված վնասների դիմաց որպես ապահովագրական հատուցում վճարվել է 1.001.500 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 39**).

8) 21.03.2012 թվականի թիվ 5554 վճարման հանձնարարագրով Ընկերությունը «Տոյոտա Երևան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վճարել է 1.001.500 դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 40**).

9) Ընկերության կողմից 21.08.2012 թվականին Սերյոժա Պետրոսյանին ուղարկված թիվ 2478 ծանուցում-պահանջագրի համաձայն՝ վերջինիս առաջարկվել է ծանուցում-պահանջագիրը ստանալու օրվանից հետո՝ յոթօրյա ժամկետում ներկայանալ ՀՀ, ք.Երևան, Հյուսիսային պողոտա 1 հասցեում գտնվող

Ընկերության գրասենյակ՝ վերոգրյալ ընկերության կողմից հատուցված 1.001.500 դրամի չափով վնասի գումարը մարելու ժամանակացույց կազմելու նպատակով համաձայնագիր կնքելու, կամ մինչև վերը նշված ժամկետի ավարտը 1.001.500 դրամի չափով վնասի գումարը վճարել Ընկերության «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գործող 1570003731650100 հաշվարկային հաշվին (վճարման նպատակ նշել **Սուբ-րոզացիա SG001773 վկայագրի գծով**): Սերյոժա Պետրոսյանը ծանուցում-պահանջագիրը ստացել է **27.08.2012 թվականին (հատոր 1-ին, գ.թ. 41-44)**.

10) Ընկերությունը հայցադիմումը փոստային ծառայության է հանձնել **04.03.2015 թվականին**, ըստ Դատարանի մուտքի դրոշմակնիքի Դատարան է մուտքագրվել 17.03.2015 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 3-6, 45**).

11) Պատասխանողի ներկայացուցիչը 20.01.2017 թվականին հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմում է ներկայացրել (**հատոր 2-րդ, գ.թ. 70**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզադատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ապահովագրական ընկերության սուբրոզացիայի ներկայացման դեպքում հայցային վաղեմության սկզբին, վերահասարակելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը.*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հետադարձ պարտավորությունների համար հայցային վաղեմության ընթացքն սկսվում է հիմնական պարտավորությունը կատարելու պահից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերը նշված հոդվածների վերլուծությանը, արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*տես Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասարողյանի թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

Սեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցային վաղեմության ինստիտուտի առանձին տարրերի՝ կիրառելի ժամկետի (ընդհանուր,

կրճատ կամ երկար), այդ ժամկետի հաշվարկի սկզբի, ընդհատման կամ կասեցման հարցերը որոշ դեպքերում հնարավոր է պարզել միայն վիճելի իրավահարաբերության որոշակիացման արդյունքում, այսինքն՝ պարզելով վիճելի իրավահարաբերության տեսակը (վարձակալության, հողային, ընտանեկան, աշխատանքային և այլ), մասնակիցների շրջանակը, իրավունքների և պարտականությունների ծավալը:

Այսպիսով ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ քանի դեռ դատարանը չի պարզել կիրառելի օրենսդրության հարցը, նյութական իրավունքի նորմերով արժևորվող փաստերի շրջանակը, չի վերլուծել կողմերի փոխահարաբերություններում առկա պայմանագրային դրույթները, չի պարզել սուբյեկտիվ իրավունքի կամ պարտականության ծագման պահը, չի կարող եզրահանգման գալ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկզբնական պահի վերաբերյալ (*լրեն ՀՀ Էկոնոմիկայի նահապարությունն ընդդեմ «Գորիս-Ապակի» ՍՊԸ-ի թիվ ՄԳ3/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտված վերոհիշյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը մեկ անգամ ևս ընդգծում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկզբնական պահը որոշելու համար, ի թիվս այլնի, էական նշանակություն ունի նաև սուբյեկտիվ իրավունքի ծագման պահը պարզելը, քանի որ անձը իր ենթադրյալ խախտված իրավունքի պաշտպանության հայցով դատական պաշտպանության կարող է դիմել միայն այն պարագայում, երբ առկա են այնպիսի իրավաբանական փաստեր, որոնց համակցությունը բավարար է համապատասխան սուբյեկտիվ իրավունքն իրացնելու, ինչպես նաև այդ իրավունքից բխող պահանջով դատարան դիմելու համար:

Անդրադառնալով հետադարձ պարտավորությունների դեպքում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի առանձնահատկություններին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ հետադարձ պարտավորությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ այդպիսի պարտավորություններն ունեն անանցյալ բնույթ, քանի որ չեն կարող ծագել, քանի դեռ չի կատարվել հիմնական պարտավորությունը: Այլ կերպ ասած՝ հիմնական պարտավորությունը կատարված լինելու հանգամանքն այն անհրաժեշտ իրավաբանական փաստն է, որի առկայությունը պարտադիր է հետադարձ պարտավորության կատարում պահանջելու իրավունքի ծագման համար: Ուստի, վերոհիշյալ հանգամանքի հաշվառմամբ օրենսդիրը հետադարձ պարտավորությունների համար հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի առանձնահատուկ կարգ է սահմանել՝ ամրագրելով, որ հետադարձ պարտավորությունների համար հայցային վաղեմության ընթացքն սկսվում է հիմնական պարտավորությունը կատարելու պահից:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապահովագրական հարաբերություններում ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքի ծագման հիմքերին և այդ իրավունքի իրացման առանձնահատկություններին, հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 996-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ ապահովագրողը, որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց պարտավորվում է մյուս կողմին՝ ապահովադրին կամ նրա մատնանշած անձին (շահառուին),

որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել որոշակի իրադարձության (իրադարձությունների) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ոչ կյանքի ապահովագրության պայմանագրից բխող պահանջներով հայցը կարող է ներկայացվել երեք տարվա ընթացքում, իսկ կյանքի ապահովագրության պայմանագրից բխող պահանջներով հայցը կարող է ներկայացվել տասը տարվա ընթացքում:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետի հաշվարկն սկսում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահից:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրի հիման վրա, ըստ որի՝ պայմանագրով մի կողմը՝ ապահովագրողը, որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց մյուս կողմին՝ ապահովադրին կամ նրա մատնանշած անձին (շահառուին), որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում, որոշակի իրադարձության տեղի ունենալու արդյունքում, հատուցում է պատճառված վնասը:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածով սահմանված է ապահովագրության պայմանագրից բխող պահանջներ ներկայացնելու հետ կապված հայցային վաղեմության ժամկետները, ընդ որում ոչ կյանքի ապահովագրության պայմանագրից բխող պահանջներով հայցը կարող է ներկայացվել երեք տարվա ընթացքում, կյանքի ապահովագրության պայմանագրից բխող պահանջներով՝ տասը տարվա ընթացքում, իսկ ժամկետի հաշվարկն սկսում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահից: Այսինքն՝ վերոգրյալ հոդվածը բացառապես վերաբերվում է և կարգավորում ապահովագրական պայմանագրի կողմերի միջև և նույն պայմանագրից բխող պահանջների հայցային վաղեմության ժամկետները, իսկ հետադարձ պահանջի կիրառման գործընթացում առաջացող հարաբերություններն ինքնուրույն հարաբերություններ են, որոնք բխում են օրենքից, ուստի ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը վերը նշված հոդվածով չի կարգավորվում:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ բացի այն հանգամանքից, որ ապահովագրական ընկերությունն իրավունք ունի հետադարձ պահանջ ներկայացնել միայն օրենքում սպառիչ թվարկված դեպքերում, միաժամանակ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախապայման է վերջինիս կողմից տուժողին ապահովագրական հատուցում վճարած լինելու հանգամանքը, հակառակ դեպքում՝ քանի դեռ ապահովագրական ընկերությունը չի հատուցել տուժողին պատճառված վնասը, ապա վերջինս չի կարող հետադարձ պահանջ ներկայացնել ապահովադրին կամ վնաս պատճառած անձին, քանի որ ապահովագրական ընկերության կողմից իր հիմնական պարտավորությունը կատարված չլինելու պայմաններում չի կարող ծագել հետադարձ պարտավորության կատարում պահանջելու իրավունքը (տե՛ս «Ռուսգոսսպրախ-Արմենիա» ԱՓԲԸ ընդդեմ Արմեն Ավելի-Կիսյանի և Մինա Դուկասյանի թիվ ԵՇԴ/0307/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 16.09.2021 թվականի որոշումը):

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ ապահովագրական պատահարը նույն օրենքով նախատեսված դեպք կամ իրադարձություն է, որի դեպքում ապահովագրական ընկերությունը (...) պարտավորվում է տուժողին կամ օրենքով և (կամ) ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարել ապահովագրական հատուցում:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի՝

1) վնաս պատճառած անձի նկատմամբ, եթե՝

ա. նա ապահովագրական պատահարի ժամանակ ավտոտրանսպորտային միջոցը վարել է ակոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության ներքո.

բ. նա առանց հիմնավոր պատճառի լքել է պատահարի վայրը կամ խուսափել է ակոհոլի, թմրանյութերի կամ այլ հոգեմետ նյութերի օգտագործման փաստի վերաբերյալ քննություն անցնելուց.

գ. նա ապահովագրական պատահարի պահին չի ունեցել ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ օրենքով սահմանված կարգով գրկված է եղել այդպիսի իրավունքից, բացառությամբ նույն մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դեպքի.

դ. ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին.

2) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ, եթե՝

ա. ավտոտրանսպորտային միջոցը վնասի պատճառման պահի դրությամբ չի անցել տեխնիկական գնություն, և պատահարի առաջացման անմիջական պատճառ է դարձել ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի անսարքությունը, որը կարող էր բացահայտվել տեխնիկական գնություն անցնելու դեպքում.

բ. ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին.

գ. ավտոտրանսպորտային միջոցի վարումը վստահել է այն վարելու իրավունք չունեցող անձին և գիտեր կամ կարող էր իմանալ, որ այդ անձը չունի վարելու իրավունք.

դ. **ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական ընկերությանն ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել ապահովագրական ընկերությանը մինչև ապահովագրական պատահարը.**

3) ինչպես նաև՝

ա. պատահարի տարածքի կամ ճանապարհի սեփականատիրոջ նկատմամբ, եթե պատահարը տեղի է ունեցել տարածքի կամ ճանապարհի անսարքության կամ թերության պատճառով, և դրանում առկա է սեփականատիրոջ մեղքը.

բ. ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական գնություն իրականացրած կազմակերպության նկատմամբ, եթե պատահարի առաջացման անմիջական պատճառ է դարձել ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի անսարքությունը,

որը չի բացահայտվել տեխնիկական գննության ընթացքում՝ դրա թերի կամ ոչ պատշաճ իրականացման հետևանքով.

գ. օրենքով սահմանված դեպքերում և կարգով այլ անձանց նկատմամբ, որոնց մեղքով տեղի է ունեցել պատահարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում մի քանի անձի նկատմամբ, ապա այդ անձինք ապահովագրական ընկերության նկատմամբ հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունից բխում է նաև, որ ապահովագրական ընկերությունն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հնարավորություն ունի հետադարձ պահանջի միջոցով հետ ստանալու իր կողմից կատարված հատուցումը: Ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք է ձեռք բերում վնաս պատճառած անձի, վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) և (կամ) օրենքով սահմանված այլ անձանց նկատմամբ: «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով հստակ և սպառիչ սահմանված են ինչպես ապահովադրի, այնպես էլ վնաս պատճառած անձի պատասխանատվության հիմքերը, ուստի ապահովագրական ընկերությունը վերջիններիս կարող է հետադարձ պահանջ ներկայացնել միայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով թվարկված դեպքերում:

Վճռաբեկ դատարանը նաև հարկ է համարում փաստել, որ բացի այն հանգամանքից, որ ապահովագրական ընկերությունն իրավունք ունի հետադարձ պահանջ ներկայացնել միայն օրենքում սպառիչ թվարկված դեպքերում, միաժամանակ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախապայման է վերջինիս կողմից տուժողին ապահովագրական հատուցում վճարած լինելու հանգամանքը, հակառակ դեպքում՝ քանի դեռ ապահովագրական ընկերությունը չի հատուցել տուժողին պատճառված վնասը, ապա վերջինս չի կարող հետադարձ պահանջ ներկայացնել ապահովադրին կամ վնաս պատճառած անձին, քանի որ ապահովագրական ընկերության կողմից իր հիմնական պարտավորությունը կատարված չլինելու պայմաններում չի կարող ծագել հետադարձ պարտավորության կատարում պահանջելու իրավունքը:

Միաժամանակ անդրադառնալով «ապահովագրության պայմանագրից բխող պահանջներ» հասկացության էության բացահայտմանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ապահովագրության պայմանագրի բնույթը թույլ է տալիս եզրահանգել, որ ապահովագրության պայմանագրով ապահովադիրը կամ նրա մատնանշած անձը (շահառուն) ձեռք է բերում իրավունք ապահովագրողից պահանջելու որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել որոշակի իրադարձության (իրադարձությունների) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում): Այսինքն՝ ապահովագրական պայմանագրից բխում է ապահովադրի ապահովագրական ընկերությունից ապահովագրական հատուցում պահանջելու իրավունքը, մինչդեռ, հաշվի առնելով ապահովագրության որոշ տեսակների պարտադիր բնույթը, ինչպիսին ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունն է, Վճռաբեկ դատարանը փաստում է,

որ ապահովագրության ոլորտում որոշ հարաբերություններ ծագում են ապահովագրության պայմանագրից անկախ՝ օրենքի ուժով, ինչպիսին սուրբոգացիայի կամ այլ կերպ ասած՝ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրացման արդյունքում առաջացող իրավահարաբերություններն են:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջը բխում է օրենքից, ուստի ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածով նախատեսված պահանջների, սկսվում է ապահովագրական ընկերության կողմից իր հիմնական պարտավորության կատարման, այն է՝ տուժողին ապահովագրական հատուցում վճարելու պահից:

### ***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Սույն գործի փաստերի համաձայն՝ 18.12.2010 թվականին Ընկերության և պատասխանող Սերյոժա Պետրոսյանի միջև կնքվել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SG 001773 վկայագիրը, որի պատճենի համաձայն՝ Սերյոժա Պետրոսյանն ապահովագրել է իր անձնական օգտագործման «ՎԱՋ 210630» մակնիշի 02 ՕՕ 849 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը, վկայագրի 4-րդ կետով սահմանվել է, որ ավտոմեքենայի շահագործման նպատակն է անձնական, ավտոմեքենայի լիազորված տիրապետողներ վկայագրի 5-րդ կետում չեն նշվել:

ՀՀՈ ՃՈ 2-րդ սպայական գումարտակի 4-րդ վաշտի հետաքննության գծով տեսուչի կողմից 26.06.2011 թվականին կազմված եզրակացության պատճենի համաձայն՝ 26.06.2011 թվականին, ժամը 21:30-ի սահմաններում Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղի բնակիչ Հունան Հովսեփի Ասիլբեկյանն իր կողմից վարած «ՎԱՋ 210630» մակնիշի 02 ՕՕ 849 հ/հ ավտոմեքենայով Բերդ-Արծվաբերդ-Քոլազիր ավտոճանապարհի 20,5 կմ հատվածում դուրս է եկել հանդիպակաց երթևեկելի գոտի և բախվել հանդիպակաց երթևեկելի գոտով ընթացող Արարատի մարզի Մխչյան գյուղի բնակիչ՝ Սամվել Հակոբի Անդրասյանի կողմից վարվող «Տոյոտա Լանդ Կոաուզեռ Պոադո» մակնիշի 501 ՍՍ 10 հ/հ ավտոմեքենային՝ պատճառելով նյութական վնաս: Սամվել Անդրասյանը 30.06.2011 թվականին Ընկերությանն է ներկայացրել ԱՊՊԱ ոլորտում պատճառված վնասների հատուցում ստանալու վերաբերյալ թիվ SG001773 հայտային դիմումը:

Ըստ Ընկերության գործադիր տնօրենի կողմից 07.03.2012 թվականին հաստատված թիվ SG-3412 ապահովագրական հավաստագրի պատճենի՝ որոշվել է բավարարել նշված պատահարի հետևանքով պատճառված վնասի հատուցում ստանալու վերաբերյալ տուժողի կողմից ներկայացված դիմումը՝ ավտովթարի հետևանքով «Նորակ» ՍՊԸ-ին պատճառված վնասների դիմաց, որպես ապահովագրական հատուցում, վճարվել է 1.001.500 ՀՀ դրամ:

Համաձայն 21.03.2012 թվականի թիվ 5554 վճարման հանձնարարագրի պատճենի՝ հայցվոր Ընկերությունը «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ին վճարել է 1.001.500 ՀՀ դրամ:

21.08.2012 թվականի՝ Ընկերության կողմից Սերյոժա Պետրոսյանին ուղարկված թիվ 2478 ծանուցում-պահանջագրի պատճենի՝ վերջինիս առաջարկվել է ծանուցում-պահանջագիրը ստանալու օրվանից հետո՝ յոթօրյա ժամկետում, ներկայանալ ՀՀ, ք.Երևան, Հյուսիսային պողոտա 1 հասցեով գտնվող



«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի գրասենյակ՝ վերոգրյալ ընկերության կողմից հատուցված 1.001.500 ՀՀ դրամի չափով վնասի գումարը մարելու ժամանակացույց կազմելու նպատակով համաձայնագիր կնքելու, կամ մինչև վերը նշված ժամկետի ավարտը 1.001.500 ՀՀ դրամի չափով վնասի գումարը վճարել Ընկերության «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում գործող 1570003731650100 հաշվարկային հաշվին (վճարման նպատակ նշել Սուբրոգացիա SG001773 վկայագրի գծով):

Դատարան ներկայացված հայցադիմումով Ընկերությունը հայտնել է, որ 18.12.2010 թվականին վկայագիր կնքելիս Հունան Ասիլբեկյանի վերաբերյալ՝ որպես լիազորված տիրապետողի, տեղեկություններ չտրամադրելու պատճառով ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SG 001773 վկայագրում վերջինս չի նշվել որպես լիազորված տիրապետող: SG 001773 վկայագրի գործողության ընթացքում պատասխանող Սերյոժա Պետրոսյանը «ՎԱԶ-210630» մակնիշի, 02 ՕՕ 849 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի լիազորված տիրապետողների ցանկի փոփոխման վերաբերյալ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը երբևէ չի հայտնել, հետևաբար «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն իր կողմից հատուցված 1.001.500 ՀՀ դրամի չափով հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերել Պատասխանողի նկատմամբ, քանի որ վերջինիս կողմից խախտվել են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով և ԱԳՊԱ պայմաններով սահմանված իր պարտականությունները: Ընկերության կողմից 21.08.2012 թվականին ծանուցում-պահանջագիր է ներկայացվել պատասխանողին, սակայն վերջինս չի կատարել իր պարտավորությունները:

Դատարանը հայցը մերժել է հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով, այն պատճառաբանությամբ, որ «(...) ապահովագրական պատահարը տեղի է ունեցել 18.12.2010 թվականին, հայցվորը ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշումը կայացրել է 06.03.2012 թվականին, հատուցումը վճարվել է 21.03.2012 թվականին, սույն քաղաքացիական գործով հայցը ներկայացրել է 04.03.2015 թվականին, հետևաբար հայցը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022 հոդվածի, ենթակա է մերժման՝ նշված պահանջը ներկայացնելու համար սահմանված հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու հիմքով»:

Վերաքննիչ դատարանը մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ «(...) Գործով հայցադիմումը կապի ծառայությանն է հանձնվել՝ 04.03.2015 թվականին: Պատասխանողը դիմում է ներկայացրել Դատարան՝ հայցային վաղեմության կիրառմամբ հայցը մերժելու մասին: (...) Տվյալ դեպքում Հայցվորը ընդդեմ Պատասխանողի ներկայացրել է ոչ կյանքի ապահովագրության պայմանագրից բխող հայցապահանջ, որն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածի պահանջների կարող է ներկայացվել՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու պահից սկսած երեք տարում: Գործով ներկայացված հայցադիմումը հանձնվել է Հայցվորի կողմից կապի ծառայությանը 2015 թվականին, մինչդեռ ապահովագրական պատահարը տեղի է ունեցել 2011 թվականին, որպիսի պայմաններում պետք է արձանագրել այն փաստը, որ Հայցվորի կողմից հայցապահանջը Դատարան է ներկայացվել՝ դրա համար վերը նշված օրենքով սահմանված հայցային վաղեմության երեք տարվա ժամկետն ավարտվելուց հետո, որն էլ կիրառելու վերաբերյալ Պատասխանողի դիմումը հիմք ընդունելով Դատարանը հիմնավոր եկել է այն հետևության, որ հայցային վաղեմության կիրառմամբ պահանջը պետք է մերժել: (...)»:

Այսպիսով Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ սույն գործով հայցային վաղեմության ժամկետի մեկնարկի հաշվարկման սկզբնական պահը որոշելու մասով կիրառելի նորմ է հանդիսանում հետադարձ պարտավորությունների համար ընդհանուր կանոն հանդիսացող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածից նույն օրենսգրքով նախատեսված բացառությունը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածի հիմքով հայցային վաղեմության ժամկետի մեկնարկի սկիզբ անհրաժեշտ է համարել ապահովագրական պատահարը տեղի ունենալու պահը՝ 26.06.2011 թվականը, մինչդեռ տվյալ դեպքում Ընկերությունը հայցադիմումը Դատարան է ներկայացրել 04.03.2015 թվականին՝ բաց թողնելով հայցային վաղեմության եռամյա ժամկետը:

Վերը նշված մեկնաբանությունների համատեքստում գնահատելով ստորադաս դատարանների պատճառաբանությունների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ տվյալ դեպքում Ընկերությունը «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի հիմքով հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերել ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր (ապահովադիր) Սերյոժա Պետրոսյանի նկատմամբ՝ պատահարի պահի դրությամբ ավտոմեքենայի վարորդ Հ. Ասիլբեկյանի լիազորված տիրապետող չնշելու փաստի ուժով: Ընդ որում՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ԱԳՊԱ պայմանագիրը կնքելիս ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ ապահովագրական ընկերությանն ակնհայտ սուտ տեղեկություններ հայտնելու փաստի ուժով ապահովադրի նկատմամբ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքը բխում է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի ուժով:

Սերյոժա Պետրոսյանի նկատմամբ Ընկերության հետադարձ պահանջի իրավունքը ծագել է 21.03.2012 թվականին, այսինքն՝ Ընկերության կողմից տուժողին ապահովագրական հատուցումներ վճարվելու պահից՝ պատահարի պահի դրությամբ ավտոմեքենայի լիազորված տիրապետողների ցանկում Հունան Ասիլբեկյանի անունը նշված չլինելու փաստի ուժով: Նման եզրահանգման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ թեև ապահովագրական ընկերությունը ապահովադրի նկատմամբ հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, այդուհանդերձ, հետադարձ պահանջի ծագման համար անհրաժեշտ նախապայման է նաև Ընկերության կողմից հիմնական պարտավորությունը կատարելու հանգամանքը, հետևաբար նման պահանջը չի կարող համարվել ապահովագրության պայմանագրից բխող պահանջ, իսկ հակառակի մասին Վերաքննիչ դատարանի պնդումներն անհիմն են:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստական հանգամանքերի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1022-րդ հոդվածի 2-րդ կետի փոխարեն կիրառման ենթակա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված՝ հետադարձ պարտավորությունների համար հայցային վաղեմության եռամյա ժամկետի ընթացքը հիմնական պարտավորությունը կատարելու պահից հաշվարկելու հատուկ կանոնը:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ Ընկերությունը չէր կարող հետադարձ պահանջ ներկայացնել ապահովադրի նկատմամբ, քանի դեռ չէր կատարել իր հիմնական պարտավորությունը՝ տուժողին ապահովագրական հատուցում տրամադրելը:

Նման պայմաններում հաշվի առնելով, որ ապահովագրական պատահարի հետևանքով տուժած անձին պատճառված վնասը 1.001.500 ՀՀ դրամի չափով, Ընկերության կողմից հատուցվել է 21.03.2012 թվականին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցային վաղեմության ժամկետի հոսքն օրենքի ուժով սկսվել է 21.03.2012 թվականից և ավարտվել 21.03.2015 թվականին, հետևաբար հայցադիմումը փոստային ծառայության միջոցով **04.03.2015 թվականին** (Դատարան մուտք եղած՝ 17.03.2015 թվականին) Դատարան ներկայացրած հայցվոր Ընկերությունը հայցային վաղեմության ժամկետը բաց չի թողել, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործով հայցի մերժման հիմքում դրվել է միայն հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հանգամանքը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա է գործն ամբողջ ծավալով նոր քննության անհրաժեշտություն:

#### ***5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.02.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

### 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Քաղաքացիական գործ թիվ **ԵԷԴ/2089/02/15**  
**2023թ.**  
ԵԷԴ/2089/02/15  
Ն. Մարգարյան  
Դ. Սերոբյան  
Լ. Հովհաննիսյան

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող և զեկուցող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ

2023 թվականի նոյեմբերի 20-ին գրավոր ընթացակարգով քննելով Սմբատ և Վահան Մինասյանների ու Գայանե Վարդանյանի (այսուհետ՝ Համապատասխանողներ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ Վարդան Ասատրյանի հայցի ընդդեմ Համապատասխանողների՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

#### Պ Ա Ր Զ Ե Ց

##### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Վարդան Ասատրյանը պահանջել է Համապատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել 15.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ որպես պարտքի հիմնական գումար, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա տոկոսները՝ սկսած 21.05.2009 թվականից մինչև պարտավորության դադարման օրը:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.04.2016 թվականի վճռով քաղաքացիական գործի

վարույթը «կարճվել է՝ նույն անձանց միջև, միևնույն հիմքերով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության հիմքով»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան, դատավորներ՝ Ս. Միքայելյան, Ա. Սմբատյան) 26.04.2017 թվականի որոշմամբ Վարդան Ասատրյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, ու Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.04.2016 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 27.12.2017 թվականի որոշմամբ Վարդան Ասատրյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է, ու ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.04.2017 թվականի որոշումը բեկանվել է, և գործն ուղարկվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Պետրոսյան, դատավորներ՝ Ա. Մկրտչյան, Ա. Սմբատյան) 04.06.2018 թվականի որոշմամբ Վարդան Ասատրյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 07.04.2016 թվականի վճիռը բեկանվել է, ու գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 08.08.2018 թվականի որոշմամբ Համապատասխանողների բերած վճռաբեկ բողոքը վերադարձվել է, ու սահմանվել է հնգօրյա ժամկետ՝ որոշումն ստանալու պահից վճռաբեկ բողոքի ձևական սխալները շտկելու ու վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.10.2018 թվականի որոշմամբ Համապատասխանողների բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Գործի նոր քննության ժամանակ Համապատասխանողները միջնորդություն են ներկայացրել Դատարան՝ խնդրելով կիրառել հայցային վաղեմություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 22.03.2019 թվականի «Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը մերժելու և քաղաքացիական գործի քննությունը վերսկսելու մասին» որոշմամբ Համապատասխանողների միջնորդությունը մերժվել է:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 30.12.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.07.2022 թվականի որոշմամբ Համապատասխանողների բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.12.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք են ներկայացրել Համապատասխանողները (ներկայացուցիչ Տիգրան Խուրշուդյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-333-րդ, 335-րդ, 337-րդ և 340-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձինք նշված հիմքերի առկայությունը պարզապես են հերկյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցային վաղեմության ժամկետը սկսել է հոսել 20.05.2009 թվականից, հայցային վաղեմության երեք տարին լրացել է առնվազն 21.05.2012 թվականին, իսկ օրենքով սահմանված կարգով հայցը հարուցվել է 25.05.2012 թվականին, ինչը նշանակում է, որ սույն քաղաքացիական գործով հայցային վաղեմության ժամկետը հայց ներկայացնելով չի ընդհատվել: Վերաքննիչ դատարանը նշված հանգամանքին որևէ անդրադարձ չի կատարել, այն դեպքում, երբ նշված իրավական հիմնավորման պայմաններում սույն քաղաքացիական գործով պետք է կիրառվեր հայցային վաղեմություն և ներկայացված հայցը մերժվեր ամբողջությամբ: Սահմանված կարգով հայց հարուցելով և պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողությունները կատարելով՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, սակայն ընդհանումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է նորից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 29.07.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճել:

### *3. Վճուրակ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը*

Վճուրակ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 20.05.2008 թվականին Նորիկ Տեր-Գրիգորյանի (մի կողմից) և Սմբատ ու Վահան Մինասյանների, Գայանե Վարդանյանի (մյուս կողմից) միջև կնքվել է փոխառության պայմանագիր, որի համաձայն՝ Նորիկ Տեր-Գրիգորյանը Սմբատ և Վահան Մինասյաններին ու Գայանե Վարդանյանին է հանձնել 100.000 ԱՄՆ դոլլար, որը վերջիններս պարտավորվել են Նորիկ Տեր-Գրիգորյանին վերադարձնել 20.05.2009 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 9**).

2) վերը նշված փոխառության գումարից 75.000 ԱՄՆ դոլարը Համապատասխանողները Նորիկ Տեր-Գրիգորյանին վերադարձրել են մինչև վերջինիս կողմից ստորև նշված հայցադիմումը դատարան ներկայացնելը (**հայցվոր Վարդան Ասատրյանի կողմից վկայակոչված անվիճելի փաստ**).

3) 18.05.2012 թվականին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Նորիկ Տեր-Գրիգորյանի հայցն ընդդեմ Սմբատ Մինասյանի, Գայանե Վարդանյանի ու Վահան Մինասյանի՝ համապարտության կարգով 25.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և կետանցի օրվանից՝ 21.05.2009 թվականից սկսած յուրաքանչյուր օրվա համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տոկոսներ բռնագանձելու պահանջի մասին (**հիմք՝ «www.datalex.am» տեղեկատվական համակարգը, քաղաքացիական գործ՝ թիվ ԵԷԳ/0609/02/12, հատոր 1-ին, գ.թ. 112, 113**).

4) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.05.2012 թվականի որոշմամբ Նորիկ Տեր-Գրիգորյանի միջնորդությունը պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին, մերժվել է ու հայցադիմումը վերադարձվել է: Նորիկ Տեր-Գրիգորյանը սահմանված ժամկետում կրկին հայցադիմումը ներկայացրել է դատարան՝ արդեն վճարելով օրենքով սահմանված պետական տուրքը (**հիմք՝ «www.datalex.am» տեղեկատվական համակարգը, հատոր 1-ին, գ.թ. 112, 113**).

5) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 25.05.2012 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, գործը նշանակվել է դատական քննության 28.06.2012 թվականին (գործի քննությունը չի իրականացվել դատաքննության նախապատրաստական փուլով) (**հիմք՝ «www.datalex.am» տեղեկատվական համակարգը, հատոր 1-ին, գ.թ. 112, 113**).

6) Թիվ ԵԷԴ/0609/02/12 քաղաքացիական գործի քննության ժամանակ (կոնկրետ օրը հայտնի չէ) համապատասխանողները վերադարձրել են ևս 10.000 ԱՄՆ դոլար, որից հետո՝ **27.06.2012 թվականին**, Նորիկ Տեր-Գրիգորյանը դիմում է ներկայացրել դատարան՝ հայցից հրաժարվելու մասին (**հիմք՝ «www.datalex.am» տեղեկատվական համակարգը, հատոր 1-ին, գ.թ. 112, 113**).

7) 04.07.2012 թվականին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը վճիռ է կայացրել հայցից հրաժարվելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 112, 113**).

8) 02.06.2015 թվականին Նորիկ Տեր-Գրիգորյանի և Վարդան Ասատրյանի միջև կնքվել է պահանջի իրավունքը զիջելու մասին (ցեսիա) պայմանագիր, որի համաձայն՝ Նորիկ Տեր-Գրիգորյանը Վարդան Ասատրյանին է զիջել Սմբատ և Վահան Մինասյանների ու Գայանե Վարդանյանի հետ 20.05.2008 թվականին կնքված փոխառության պայմանագրով 15.000 ԱՄՆ դոլլարի չափով մնացած պարտքի նկատմամբ պահանջի իրավունքը՝ նույն ծավալներով ու պայմաններով (**հատոր 1-ին, գ.թ. 11, 12**).

9) Վարդան Ասատրյանի կողմից սույն գործով ներկայացված հայցադիմումը դատարանում ստացվել է 29.06.2015 թվականին (**հիմք՝ հատոր 1-ին, գ.թ. 2-ում առկա էլեկտրոնային մակագրության թերթիկը**).

10) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 30.06.2015 թվականի որոշմամբ Վարդան Ասատրյանի հայցադիմումը վերադարձվել է՝ պետական տուրքի գումարը պակաս վճարված լինելու հիմքով: Վարդան Ասատրյանը սահմանված ժամկետում կրկին հայցադիմումը ներկայացրել է դատարան՝ արդեն վճարելով օրենքով սահմանված պետական տուրքը, որը 20.07.2015 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ՝ այն համարվելով դատարանում ընդունված սկզբնական ներկայացնելու օրը: Գործը «դատաքննության» է նշանակվել 27.08.2015 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 1, 21-38**):

#### **4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ և 340-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խայթարել է արդարադատության բուն էությունը:

*Վճարելի բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին.*

*ե՞րբ է նորից սկսվում հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սահմանված կարգով հայցը հարուցելու փաստի ուժով այն ընդհարվելուց հետո, այն դեպքում, երբ հայցվորը հրաժարվել է հայցից և գործի վարույթն այդ հիմքով կարճվել է՝*



*միաժամանակ վերահասարակելով հայցային վաղեմության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին օրենքով սահմանված կարգով դիմում է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին օրենքով սահմանված կարգով վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Այդ կանոնից բացառությունները սահմանվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ, հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 338-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության մեջ անձանց փոփոխվելը չի հանգեցնում հայցային վաղեմության ժամկետի և դրա հաշվարկման կարգի փոփոխման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողությունները կատարելով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ընդհատումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքը նորից է սկսվում: Մինչև ընդհատումն անցած ժամանակը չի հաշվվում նոր ժամկետի մեջ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածով սահմանված կանոնների համաձայն մեկնաբանելով վերը նշված նորմերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հայցային վաղեմություն է համարում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը, որի ընդհանուր ժամկետը, ի տարբերություն հատուկ ժամկետների, երեք տարի է: Ընդ որում, հայցային վաղեմության ժամկետի ընթացքը, որպես կանոն, սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին, իսկ այն պարտավորությունների համար, որոնք կատարելու համար որոշված է որոշակի ժամկետ՝ դրանց համար հայցային վաղեմության ընթացքն սկսվում է այդ ժամկետի ավարտմամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր կողմից նախկինում կայացրած որոշումներում արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*տե՛ս, օրինակ, Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել*

*Ղասարողյանի թիվ ԵԷԴ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը):*

Մինևույն ժամանակ օրենսդիրը համապատասխան իրավակարգավորումներ է նախատեսել՝ կապված հայցային վաղեմության ժամկետները կասեցվելու և դրա ընթացքն ընդհատվելու հետ: Վերջինիս առումով օրենսդիրը սահմանել է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է բացառապես երկու դեպքում՝ երբ սահմանված կարգով հայց է հարուցվում կամ պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ են կատարվում, որոնցից յուրաքանչյուրի դեպքում ընդհատումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է նորից, և մինչև ընդհատումն անցած ժամանակը չի հաշվվում նոր ժամկետի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ օրենսդիրը, խախտված իրավունքների պաշտպանության համար հայցային վաղեմության ժամկետներ նախատեսելով, միաժամանակ սահմանել է այդ ժամկետների ընդհատման ու կասեցման կարգը և հիմքերը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ և 340-րդ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման համար անհրաժեշտ է հայցը սահմանված կարգով (օրենքով սահմանված կարգով) հարուցած լինելու հանգամանքի առկայությունը, այսինքն՝ երբ հայցը հարուցվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի պահանջներին համապատասխան և ընդունվել է դատարանի կողմից: Հայցային վաղեմության ընթացքի ընդհատման յուրահատկությունը կայանում է նրանում, որ օրենքով մատնանշված հիմքերի առկայության դեպքում հայցային վաղեմության արդեն իսկ անցած ժամանակահատվածն այլևս հաշվի չի առնվում և հայցային վաղեմության ժամկետը սկսում է հոսել վերստին (տե՛ս «Շուխանյան Բնորենեյչը» ՄՊԸ-ն ընդդեմ Կարեն Մկրտչյանի և Նարինե Ավետիսյանի թիվ ԵԿԴ/0526/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

Տվյալ դեպքում օրենսդիրը սահմանափակվել է ընդամենը նշում կատարելով այն մասին, որ ընդհատումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է նորից՝ որոշակիորեն չկոնկրետացնելով, թե սահմանված կարգով հայց հարուցելուց կամ պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություններ կատարելուց հետո ե՞րբ է նորից սկսվում հայցային վաղեմության ժամկետի ընթացքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմք ընդունելով ժամկետների վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումները՝ պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություն կատարելու բոլոր դեպքերում հայցային վաղեմության ժամկետն ընդհատվելիս այն պետք է նորից սկսվի այդ ժամկետի ընդհատման հաջորդ օրվանից:

Ինչ վերաբերում է սահմանված կարգով հայց հարուցելու դեպքում հայցային վաղեմության ժամկետների ընթացքը նորից սկսվելու առումով կոնկրետ օրը որոշելու հետ կապված հարցին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրա անհրաժեշտությունը, բացառությամբ՝ հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքերի, բացակայում է այնքանով, որքանով հայցը բավարարվելու դեպքում, ըստ էության, դատական կարգով վերացվում է անձի խախտված իրավունքը, որը պաշտպանելու անհրաժեշտությունն այլևս վերանում է, իսկ հայցը մերժվելու դեպքում նույն անձանց միջև նույն առարկայի մասին և մինևույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ արդեն առկա է լինում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ, որն արգելք է

հանդիսանալու իրավունքը խախտված անձի կողմից կրկին նույն հայցը դատարան ներկայացնելու համար:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առանձին ուշադրության է ենթակա հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում հայցային վաղեմության ժամկետների ընթացքը նորից սկսվելու հետ կապված համապատասխան օրը որոշելու իրավական հարցը, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով առանձնահատուկ կարգավորված չէ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 334-րդ հոդվածի համաձայն՝ այն չի կարող կարգավորվել նաև պայմանագրի կողմերի համաձայնությամբ, որպիսի հանգամանքից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե հայցից հրաժարվելու դեպքում վերստին ո՞ր օրվանից է սկսում հոսել հայցային վաղեմության ժամկետը՝ դրա ընդհատման հաջորդ օրվանից, թե՛ հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելու մասին եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական նորմերը և դրանց վերաբերյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում հայցային վաղեմության ժամկետների ընթացքը նորից սկսվելու հետ կապված հարցերը լուծելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հայցից հրաժարումը գործին մասնակցող անձի կողմից իր դատավարական իրավունքների իրականացման եղանակ է, երբ վերջինս, օգտվելով տնօրինչականության սկզբունքից, սեփական հայեցողությամբ տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները: Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման բոլոր դրսևորումների դեպքում գործին մասնակցող անձն ինքը պետք է կրի դրա արդյունքում առաջացող բոլոր դրական և բացասական հետևանքների ռիսկը, որպիսի դիրքորոշումների համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելիս հայցային վաղեմության ժամկետը պետք է նորից սկսի դրա ընդհատման՝ սահմանված կարգով հայցը հարուցելու հաջորդ օրվանից:

### *Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարագրում*

Սույն գործի փաստերի համաձայն՝ 20.05.2008 թվականին Նորիկ Տեր-Գրիգորյանի (մի կողմից) և Սմբատ ու Վահան Մինասյանների, Գայանե Վարդանյանի (մյուս կողմից) միջև կնքվել է փոխառության պայմանագիր, որի համաձայն՝ Նորիկ Տեր-Գրիգորյանը Սմբատ ու Վահան Մինասյաններին, Գայանե Վարդանյանին է հանձնել 100.000 ԱՄՆ դոլլար, որը վերջիններս պարտավորվել են Նորիկ Տեր-Գրիգորյանին վերադարձնել **20.05.2009 թվականին**: Նշված փոխառության գումարից Համապատասխանողները Նորիկ Տեր-Գրիգորյանին վերադարձրել են 75.000 ԱՄՆ դոլլար՝ պարտք մնալով մնացած 25.000 ԱՄՆ դոլլարը:

Դրանից հետո՝ **18.05.2012 թվականին**, Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Նորիկ Տեր-Գրիգորյանի հայցն ընդդեմ Սմբատ Մինասյանի, Գայանե Վարդանյանի ու Վահան Մինասյանի՝ մնացած 25.000 ԱՄՆ դոլլարին համարժեք ՀՀ դրամը և կետանցի օրվանից՝ 21.05.2009 թվականից սկսած յուրաքանչյուր օրվա համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տոկոսները համապարտության կարգով բռնագանձելու պահանջի մասին (քաղաքացիական գործ՝ թիվ ԵԷԴ/0609/02/12):

Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.05.2012 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու մասին միջնորդությունը մերժվելու հիմքով: Դրանից հետո Նորիկ Տեր-Գրիգորյանը սահմանված ժամկետում կրկին հայցադիմումը ներկայացրել է դատարան՝ արդեն վճարելով օրենքով սահմանված պետական տուրքը, որի պայմաններում նշված հայցադիմումն ընդունվել է դատարանի վարույթ:

Վերը նշված հայցի հիման վրա հարուցված թիվ ԵԷԴ/0609/02/12 գործը նշանակվել է քննության: Այդ գործի քննության ընթացքում (*կրկնվեալ օրը սույն գործով հնարավոր չի եղել պարզել Վճռարևի դատարանում՝ համապատասխան սպացույցի բացակայության պարճառաբանությանը*) համապատասխանողները վերադարձրել են ևս 10.000 ԱՄՆ դոլար, ու դրանից հետո՝ **27.06.2012 թվականին**, Նորիկ Տեր-Գրիգորյանը դիմում է ներկայացրել դատարան՝ հայցից հրաժարվելու մասին:

04.07.2012 թվականին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը վճիռ է կայացրել հայցից հրաժարվելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին:

Այսուհետև՝ 02.06.2015 թվականին, Նորիկ Տեր-Գրիգորյանի և Վարդան Ասատրյանի միջև կնքվել է պահանջի իրավունքը զիջելու մասին (ցեսիա) պայմանագիր, որի համաձայն՝ Նորիկ Տեր-Գրիգորյանը Վարդան Ասատրյանին է զիջել Սմբատ ու Վահան Մինասյանների և Գայանե Վարդանյանի հետ 20.05.2008 թվականին կնքված փոխառության պայմանագրով 15.000 ԱՄՆ դոլարի չափով մնացած պարտքի նկատմամբ պահանջի իրավունքը՝ նույն ծավալներով ու պայմաններով:

Վարդան Ասատրյանի կողմից սույն գործով ներկայացված հայցադիմումը դատարանում ստացվել է **29.06.2015 թվականին**, որը Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 30.06.2015 թվականի որոշմամբ վերադարձվել է՝ պետական տուրքի գումարը պակաս վճարված լինելու հիմքով: Վարդան Ասատրյանը սահմանված ժամկետում կրկին հայցադիմումը ներկայացրել է դատարան՝ արդեն վճարելով օրենքով սահմանված պետական տուրքը, որպիսի հանգամանքից ելնելով՝ դատարանը 20.07.2015 թվականին որոշում է կայացրել Վարդան Ասատրյանի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին՝ այն համարելով դատարանում ընդունված սկզբնական ներկայացնելու օրը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 22.03.2019 թվականի «Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը մերժելու և քաղաքացիական գործի քննությունը վերսկսելու մասին» որոշմամբ Համապատասխանողների միջնորդությունը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Նորիկ Տեր-Գրիգորյանի կողմից դատարան հայց ներկայացնելու արդյունքում հայցային վաղեմության ժամկետն ընդհատվել է և այն սկսել է հոսել 20.05.2008 թվականից, Նորիկ Տեր-Գրիգորյանը հայցից հրաժարվել է 27.06.2012 թվականին, իսկ գործի վարույթը կարճվել է 04.07.2012 թվականին, ուստի Վարդան Ասատրյանը փոխառությամբ տրված գումարը կարող էր պահանջել մինչև 27.06.2015 թվականը:

Դատարանի 30.12.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Վերաքննիչ դատարանի 29.07.2022 թվականի որոշմամբ Համապատասխանողների բերած վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 30.12.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ նաև այն պատճառաբանություններով, որ

«թիվ ԵՒԴ/0609/02/12 քաղաքացիական գործով օրենքով սահմանված կարգով հայցը հարուցվել է 25.05.2012 թվականին՝ պայմանավորելով հայցային վաղեմության ընթացքի ընդհատումը, այնուհետև հայցային վաղեմության ժամկետի հոսքը վերստին սկսել է հոսել հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճվելու մասին Գալարանի 04.07.2012 թվականի վճիռն օրինական ուժի մեջ մտնելով, որի պայմաններում հայցվորը, սույն գործով հայցը ներկայացնելով 22.06.2015 թվականին՝ հայցային վաղեմության ժամկետը բաց չի թողել»:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի փաստերի վերլուծությունից բխում է, որ 20.05.2008 թվականին Նորիկ Տեր-Գրիգորյանի (մի կողմից) և Սմբատ ու Վահան Մինասյանների, Գայանե Վարդանյանի (մյուս կողմից) միջև կնքված փոխառության պայմանագրի համաձայն՝ դրանում նշված պարտավորության կատարման համար որոշված է եղել որոշակի ժամկետ, որի համաձայն՝ այդ պարտավորությունը պետք է կատարվեր 20.05.2009 թվականին:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը տվյալ դեպքում սկսվել է 21.05.2009 թվականից, երբ Նորիկ Տեր-Գրիգորյանն իմացել է իր իրավունքի խախտման՝ փոխառությամբ տրված գումարի մի մասը՝ 25.000 ԱՄՆ դոլարը, վերադարձված չլինելու մասին, որպիսի պայմաններում օրենքով սահմանված իրավունքի պաշտպանության երեք տարվա ժամանակահատվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ և 328-րդ հոդվածների համաձայն, պետք է լրանար 21.05.2012 թվականին, սակայն **18.05.2012 թվականին, այսինքն՝ օրենքով սահմանված իրավունքի պաշտպանության երեք տարվա ժամանակահատվածում**, Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Նորիկ Տեր-Գրիգորյանի հայցն ընդդեմ Սմբատ Մինասյանի, Գայանե Վարդանյանի ու Վահան Մինասյանի՝ մնացած 25.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը և կետանցի օրվանից՝ 21.05.2009 թվականից սկսած յուրաքանչյուր օրվա համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տոկոսները համապարտության կարգով բռնագանձելու պահանջի մասին:

Չնայած այն հանգամանքին, որ նշված հայցադիմումը ներկայացնելու փաստի ուժով հայցային վաղեմության ժամկետի ընթացքն այդ պահին չի ընդհատվել, քանի որ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.05.2012 թվականի որոշմամբ ներկայացված հայցադիմումը վերադարձվել է՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու մասին միջնորդությունը մերժվելու հիմքով, սակայն դրանից հետո Նորիկ Տեր-Գրիգորյանը սահմանված ժամկետում կրկին հայցադիմումը ներկայացրել է դատարան՝ արդեն վճարելով օրենքով սահմանված պետական տուրքը, որի պայմաններում նշված հայցադիմումն ընդունվել է դատարանի վարույթ, և հայցադիմումը դատարանում սկզբնական ներկայացնելու օրը՝ **18.05.2012 թվականին** ընդունված համարվելու պայմաններում արդեն համարվում է, որ հայցադիմումն օրենքով սահմանված իրավունքի պաշտպանության երեք տարվա ժամանակահատվածում ներկայացված լինելու ուժով **տեղի է ունեցել հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատում**:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայցային վաղեմության ժամկետը Նորիկ Տեր-Գրիգորյանի կողմից 18.05.2012 թվականին

սահմանված կարգով հայց հարուցված լինելու հիմքով ընդհատված լինելու պայմաններում սկսվել է նորից՝ հայց հարուցելու հաջորդ օրվանից, այն է՝ 19.05.2012 թվականից, և պետք է ավարտվեր 19.05.2015 թվականին, այսինքն՝ մինչև Նորիկ Տեր-Գրիգորյանի իրավահաջորդ Վարդան Ասատրյանի կողմից սույն գործով հայցադիմումը Դատարան ներկայացնելը (հայցադիմումը Դատարան է ներկայացրել 29.06.2015 թվականին), սակայն 19.05.2012 թվականին նորից սկսվելու պայմաններում հայցային վաղեմության ժամկետը *կրկին ընդհարվել է Սմբար Մինասյանի, Գայանե Վարդանյանի և Վահան Մինասյանի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողություն կատարելով, այն է՝ թիվ ԵԷԴ/0609/02/12 քաղաքացիական գործի քննության ընթացքում Նորիկ Տեր-Գրիգորյանին ևս 10.000 ԱՄՆ դոլար վերադարձնելու փաստի ուժով, որպիսի փաստն անվիճելի է: Ավելին՝ այդ կապակցությամբ Նորիկ Տեր-Գրիգորյանը 27.06.2012 թվականին դիմում է ներկայացրել դատարան՝ հայցից հրաժարվելու մասին: Հաջորդիվ, հայցային վաղեմության ժամկետը սկսվել է նորից՝ այդ գումարը վերադարձնելու հաջորդ օրվանից, որպիսի հանգամանքները Վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել են:*

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը վերստին սկսել է հոսել հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճվելու մասին Դատարանի 04.07.2012 թվականի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու հիմքով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և բեկանված մասով գործը համապատասխան ստորադաս՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը՝ սահմանելով նոր քննության ծավալ:

Գործի նոր քննության ժամանակ անհրաժեշտ է, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումները, պարզել հետևյալ հարցերը՝

1) հայցային վաղեմության ժամկետը Նորիկ Տեր-Գրիգորյանի կողմից 18.05.2012 թվականին սահմանված կարգով հայց հարուցված լինելու հիմքով ընդհատված լինելու պայմաններում 19.05.2012 թվականից նորից սկսված լինելու դեպքում ե՞րբ են Սմբար Մինասյանը, Գայանե Վարդանյանը և Վահան Մինասյանը կատարել պարտքի ճանաչումը վկայող գործողությունը, այն է՝ թիվ ԵԷԴ/0609/02/12 քաղաքացիական գործի քննության ընթացքում Նորիկ Տեր-Գրիգորյանին վերադարձրել ևս 10.000 ԱՄՆ դոլար գումար,

2) հայցային վաղեմության ժամկետը պարտքի ճանաչումը վկայող վերը նշված գործողությունը կատարելու հաջորդ օրվանից նորից սկսվելու և Նորիկ Տեր-Գրիգորյանի իրավահաջորդ Վարդան Ասատրյանի կողմից սույն գործով հայցադիմումը Դատարան ներկայացնելու (այդ օրվա առումով) պայմաններում արդյո՞ք չի լրացել հայցային վաղեմության ժամկետը:

**5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ սույն [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ] գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.07.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ վերը նշված ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

# 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/34355/02/20 2023թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/34355/02/20
Նախագահող դատավոր	Դ. Սերոբյան
Դատավորներ	Մ. Հարթենյան Գ. Թորոսյան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող</i>	Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
<i>զեկուցող</i>	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
	Ս. ՄԵՂՂՅԱՆ
	Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ

2023 թվականի հուլիսի 21-ին գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության (այսուհետ նաև՝ Բյուրո) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.11.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Բյուրոյի ընդդեմ Արմենակ Ստեփանյանի գումար բռնագանձելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բյուրոն պահանջել է Արմենակ Ստեփանյանից բռնագանձել 402.310 ՀՀ դրամ, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Դ. Մխչյան) (այսուհետ՝ Դատարան) 21.02.2022 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.11.2022 թվականի որոշմամբ Բյուրոյի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 21.02.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Բյուրոն (ներկայացուցիչ Ժենյա Մինասյան): Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:



## 2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, սիսայ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ, 331-րդ, 332-րդ, 335-րդ, 337-րդ և 345-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը, «Ավերտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարասահմանափոխության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 10-րդ, 21-րդ և 49-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ Բյուրոն բաց է թողել հայցային վաղեմության ժամկետը, քանի որ նախնական հատուցման կանխավճարի փոխանցման ժամանակ Բյուրոյի մոտ ծագել է հետադարձ պահանջի իրավունքը, մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հետադարձ պահանջի իրավունքը ծագել է միայն 23.07.2020 թվականից հետո, քանի որ առանց անձի մեղավորության վերաբերյալ համապատասխան դատական ակտի առկայության Բյուրոն չէր կարող հատուցման որոշում կայացնել և իրացնել իր հետադարձ պահանջի իրավունքը:

Վերաքննիչ դատարանի որոշումը պատճառաբանված չէ, քանի որ Վերաքննիչ դատարանը չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, չի անդրադարձել վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.11.2022 թվականի որոշումը:

## 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, և վճռաբեկ բողոքում չեն վիճարկվում փաստերն այն մասին, որ 03.03.2016 թվականին Արմենակ Ստեփանյանն իր վարած ավտոմեքենայով վրաերթի է ելթարել Մարիետա Թադևոսյանին ու անցգոշությամբ պատճառել կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ: Բյուրոյի կողմից 26.05.2016 թվականին «Էրեբունի» բժշկական կենտրոնին հատուցվել է 402.310 ՀՀ դրամ գումար՝ որպես բուժման կապակցությամբ կատարված նախնական հատուցում: Բյուրոն 22.06.2020 թվականի ծանուցմամբ Արմենակ Ստեփանյանին առաջարկել է հատուցել Բյուրոյի կողմից 26.05.2016 թվականին հատուցված 402.310 ՀՀ դրամ գումարը (**հատոր 2, գ.թ. 36-41**).

2) Ավտոտրանսպորտային միջոցի ԱՊՊԱ պայմանագրի վերաբերյալ Բյուրոյի տեղեկանքի պատճենի համաձայն՝ Արմենակ Ստեփանյանի վարած ավտոմեքենան վրաերթի պահին ԱՊՊԱ պայմանագիր չի ունեցել (**հատոր 1, գ.թ. 37**).

3) Թիվ ԵԷԴ/0089/01/16 քրեական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 21.10.2016 թվականի դատավճռով Արմենակ Ստեփանյանը մեղավոր է ճանաչվել՝ 2 տարի ժամկետով զրկվելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից (**հատոր 1, գ.թ. 13-18**).

4) Թիվ ԵԷԴ/0089/01/16 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 03.02.2017 թվականի որոշմամբ 21.10.2016 թվականի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ (**հատոր 1, գ.թ. 21-24**).

5) Թիվ ԵԷԴ/0089/01/16 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 09.06.2017 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 03.02.2017 թվականի որոշման դեմ Արմենակ Ստեփանյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է (**հատոր 1, գ.թ. 25-26**).

6) Բյուրոյի կողմից տուժող Մարիետա Թադևոսյանին հատուցում վճարելու վերաբերյալ որոշումն ընդունվել է 06.05.2020 թվականին: Հատուցում վճարելու վերաբերյալ 06.05.2020 թվականի որոշման պատճենի համաձայն՝ տուժող Մարիետա Թադևոսյանի կողմից որպես թիվ ԵԷԴ/0089/01/16 քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռի՝ դատալեքս համակարգից արտատպված օրինակը Բյուրո ներկայացնելու օր նշված է 23.04.2020 թվականը (**հատոր 1, գ.թ. 12**).

7) Բյուրոն հայցադիմումը Դատարան է ներկայացրել 01.12.2020 թվականին (**հատոր 1, գ.թ. 7-61**).

8) Թիվ ԵԷԴ/0089/01/16 քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատավճռի վերաբերյալ Բյուրոյի կողմից մինչ 23.04.2020 թվականը տեղեկանալու վերաբերյալ ապացույց գործում առկա չէ:

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի խախտում, ինչի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում պարճատված անձնական վնասները հարուցելիս ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքի իրացման հայցային վաղեմության ժամկետի սկզբնական պահը որոշելու հարցին՝ վերահասարակելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ընթացքը սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին, 4-րդ կետի համաձայն՝ հետադարձ պարտավորությունների համար հայցային վաղեմության ընթացքն սկսվում է հիմնական պարտավորությունը կատարելու պահից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերը նշված հոդվածների վերլուծությանը, արձանագրել է, որ օրենսդիրը, ամրագրելով հայցային վաղեմության ընդհանուր երեք տարվա ժամկետը, միաժամանակ սահմանել է նաև այդ ժամկետի հաշվարկման կարգը, այն է՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին (*լրեն Ռազմիկ Դարբինյանն ընդդեմ Դանիել Ղասարողյանի թիվ ԵԷԳ/0723/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.04.2010 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներ արձանագրել է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Հայցային վաղեմության գործնական կիրառության համար **կարևոր նշանակություն ունի հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելը:** (...) (*լրեն Հարություն Ղարազոզյանն ընդդեմ Կարեն Ղազարյանի թիվ ԵՄԳ/0529/02/14 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի, Սևակ Միլիբրոնյանն ընդդեմ «Վեոյիս Ջուր» փակ բաժնետիրական ընկերության թիվ ԵԳ/6646/02/21 գործով 06.03.2023 թվականի որոշումները*):

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ յուրաքանչյուր դեպքում հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի փաստական հանգամանքները, վիճելի իրավահարաբերության բնույթը և սուբյեկտային կազմը: ՀՀ վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է օրենսդրական կարգավորման տրամաբանությունից: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը հայցային վաղեմության ժամկետի լրանալը սահմանել է որպես հայցը մերժելու հիմք, ինչը նշանակում է, որ անգամ այն դեպքում, երբ պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմում է ներկայացրել քաղաքացիական դատավարության սկզբնական փուլերում (գործը դատաքննության նախապատրաստելու), դատարանը, այնուամենայնիվ, պետք է գործը քննի ըստ էության և վերջնական դատական ակտում գնահատական տա հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ միջնորդությանը: Օրենսդրի այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցային վաղեմության ինստիտուտի առանձին տարրերի՝ կիրառելի ժամկետի (ընդհանուր, կրճատ կամ երկար), այդ ժամկետի հաշվարկի սկզբի, ընդհատման կամ կասեցման հարցերը որոշ դեպքերում հնարավոր է պարզել միայն վիճելի իրավահարաբերության որոշակիացման արդյունքում, այսինքն՝ պարզելով վիճելի իրավահարաբերության տեսակը (վարձակալության, հողային, ընտանեկան, աշխատանքային և այլ), մասնակիցների շրջանակը, իրավունքների և պարտականությունների ծավալը (*լրեն ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հենրիկ Սարգսյանի թիվ ԵՄԳ/1149/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի, Սևակ Միլիբրոնյանն ընդդեմ «Վեոյիս Ջուր» փակ բաժնետիրական ընկերության թիվ ԵԳ/6646/02/21 քաղաքացիական գործով 06.03.2023 թվականի որոշումները*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի

սկզբնական պահը որոշելու համար, ի թիվս այլնի, էական նշանակություն ունի նաև սուբյեկտիվ իրավունքի ծագման պահը պարզելը, քանի որ անձը իր ենթադրյալ խախտված իրավունքի պաշտպանության հայցով դատական պաշտպանության կարող է դիմել միայն այն պարագայում, երբ առկա են այնպիսի իրավաբանական փաստեր, որոնց համակցությունը բավարար է համապատասխան սուբյեկտիվ իրավունքն իրացնելու, ինչպես նաև այդ իրավունքից բխող պահանջով դատարան դիմելու համար *(յրեն՝ «Ինսոդ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ընդդեմ Դավիթ Վահանյանի թիվ ԱՐԱԳ/0580/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.07.2021 թվականի որոշումը)*:

Այն դեպքում, երբ վիճող կողմը դիմում է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետը, պետք է քննարկման առարկա դարձնի հայցային վաղեմության ժամկետի լրանալու հարցը: Հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելը հայցը մերժելու հիմք է, անկախ այն հանգամանքից, թե հայցը հիմնավոր է, թե՛ ոչ *(յրեն՝, Հրաչյա Գրիգորյանի ընդդեմ Գեորգի Բաղդասարյանի թիվ ԵԱԴԿ/3423/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.12.2020 թվականի որոշումը)*:

Միևնույն ժամանակ հայցային վաղեմության ժամկետի լրանալու հարցը քննարկելիս դատարանը, նախ և առաջ պարզում է հարցն առ այն, թե հայցային վաղեմության ինչպիսի ժամկետներ են կիրառելի տվյալ դեպքում: (...) *(յրեն՝ նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 08.02.2023 թվականի թիվ ԿԴ3/0225/02/14 որոշումը)*:

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի բովանդակությունից բխում է, որ **ապահովագրական պատահարը** նույն օրենքով նախատեսված դեպք կամ իրադարձություն է, որի դեպքում ապահովագրական ընկերությունը կամ Բյուրոն պարտավորվում է տուժողին կամ օրենքով և (կամ) ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարել ապահովագրական հատուցում:

Նույն հոդվածի 15-րդ կետի բովանդակությունից բխում է, որ **ապահովագրական հատուցումը** ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրական ընկերության կողմից տուժողին կամ օրենքով և (կամ) ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարման ենթակա գումարն է: Նույն օրենքի իմաստով՝ ապահովագրական հատուցումը նաև նույն օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված դեպքերում Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին Բյուրոյի կողմից՝ տուժած անձանց պատճառված վնասների հատուցումն է, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենքով կամ չի բխում կոնկրետ դրույթի իմաստից:

Օրենքի 3-րդ հոդվածի 20-րդ կետի բովանդակությունից բխում է, որ **Երաշխավորման ֆոնդը** նույն օրենքի համաձայն ստեղծված ֆոնդն է, որի կառավարիչն է Բյուրոն, և որի հաշվին նույն օրենքով սահմանված դեպքերում վճարվում են հատուցումներ:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի, Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին տուժած անձանց պատճառված վնասները նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գումարների սահմաններում և սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով և 11-18-րդ հոդվածներով սահմանված դրույթներին համապատասխան հատուցվում են, եթե վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:

Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) Բյուրոն վնաս պատճառած անձի, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում նշված դեպքերում՝ նաև վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ ունի հետադարձ պահանջի իրավունք, (...): (...):

Նախկինում կայացրած որոշմամբ ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրողի կողմից տուժողին կամ օրենքով և (կամ) ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարման ենթակա գումարն է: Ընդ որում, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի իմաստով ապահովագրական հատուցում է նաև նույն օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված դեպքերում Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին Բյուրոյի կողմից՝ տուժած անձանց պատճառված վնասների հատուցումը, եթե այլ բան սահմանված չէ նույն օրենքով կամ չի բխում կոնկրետ դրույթի իմաստից: Այսինքն՝ օրենսդիրն ամրագրել է տուժած անձանց պատճառված վնասների հատուցման իրավունքը Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին, այն պայմաններում, երբ վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր: (...) օրենքով նախատեսված դեպքերում ապահովագրական հատուցումը տրամադրելու պահից սկսած այդ գումարի շրջանակներում հետադարձ պահանջի իրավունքը վնաս պատճառած անձի և (կամ) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ ամսիջականորեն փոխանցվում է ապահովագրողին:

Մասնավորապես օրենսդիրը նման պայման է նախատեսել նաև այն դեպքերի համար, երբ վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր և ապահովագրական հատուցումն իրականացվում է Բյուրոյի կողմից Երաշխավորման ֆոնդի հաշվին: Հետևաբար՝ տուժող կողմին ապահովագրական ընկերության կողմից հատուցում վճարելու դեպքում վերջինս հետադարձ պահանջ կարող է ներկայացնել բացառապես «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում, որոնք վնաս պատճառած անձի և վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ հետադարձ պահանջով դիմելու իրավունք ձեռք բերելու հիմքերի մեջ, *inter alia*, ներառում են վնասի պատճառումն այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր (*տե՛ս «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ՀԿ-ն ընդդեմ Լևոն Դալլաբյանի և Բագրատ Մնացականյանի թիվ ԼԳ/0747/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 22.05.2022 թվականի որոշումը*):

Տուժած անձանց պատճառված վնասները Բյուրոն հատուցում է Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին, եթե վնասը պատճառվել է ԱՊՊԱ պայմանագիր չունեցող ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ: Իր հերթին վնասը հատուցած (*հետադարձ պահանջի իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախապայման է փուժողին ապահովագրական հատուցում վճարած լինելու հանգամանքը, քանի որ հիմնական պարտավորությունը կարարված չլինելու պայմաններում չի կարող ծագել հետադարձ պարտավորության կարարում պահանջելու իրավունքը*) Բյուրոն հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք է ձեռք բերում վնաս պատճառած անձի և (կամ) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովագրի) նկատմամբ:

Անդրադառնալով հետադարձ պարտավորությունների դեպքում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի առանձնահատկություններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հետադարձ պարտավորությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ այդպիսի պարտավորություններն ունեն անսահման ընդունելի, քանի որ չեն կարող ծագել քանի դեռ չի կատարվել հիմնական պարտավորությունը: Այլ կերպ ասած՝ հիմնական պարտավորությունը կատարված լինելու հանգամանքն այն անհրաժեշտ իրավաբանական փաստն է, որի առկայությունը պարտադիր է հետադարձ պարտավորության կատարում պահանջելու իրավունքի ծագման համար: Ուստի, վերոհիշյալ հանգամանքի հաշվառմամբ օրենսդիրը հետադարձ պարտավորությունների համար հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի առանձնահատուկ կարգ է սահմանել՝ ամրագրելով, որ հետադարձ պարտավորությունների համար հայցային վաղեմության ընթացքն սկսվում է հիմնական պարտավորությունը կատարելու պահից (*տե՛ս «Բնագո-Արմենիա» ԱՓԲԸ-ի ընդդեմ Դավիթ Վահանյանի թիվ ԱԲԱԿ/0580/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.07.2021 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ ապահովագրական ընկերության հետադարձ պահանջը բխում է օրենքից և չի կարող համարվել ապահովագրական պայմանագրից բխող պահանջ, ուստի ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը սկսվում է ապահովագրական ընկերության կողմից իր հիմնական պարտավորության կատարման, այն է՝ տուժողին ապահովագրական հատուցում վճարելու պահից (*տե՛ս «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ընդդեմ Արմեն Ավերիսյանի և Սիմա Դուկասյանի թիվ ԵՇԿ/0307/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 16.09.2021 թվականի որոշումը*):

Հինք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել հիմնական պարտավորությունը կատարելու, այն է՝ տուժողին ապահովագրական հատուցում վճարելու «սյսի» բնորոշումն այն դեպքում, երբ ԱՊՊԱ պայմանագիր չունեցող տրանսպորտային միջոցով պատճառվել է անձնական վնաս, և հարուցվել է քրեական գործ, որի քննության արդյունքում կայացված դատական ակտով որոշվել է վնաս պատճառած անձի մեղավորության աստիճանը: Այսպես.

Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում պատճառված անձնական վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտնող դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում պատճառված անձնական վնասների չափը գնահատում է տուժողին բժշկական օգնություն ցուցաբերած կամ նրա առողջությունը վերականգնած բժշկական կամ այլ հաստատությունը կամ մասնագետը, իսկ անձի մեղավորության աստիճանը՝ փորձագետը:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը (*Բյուրոն*) նույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիմումը ստանալուց հետո՝ Բյուրոյի կանոններով սահմանված ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում, պարտավոր է որոշում ընդունել փորձաքննություն նշանակելու մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ հարուցվել է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ,

ինչպես նաև նույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված Բյուրոյի կանոններով սահմանված դեպքերի: (...):

Օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե հարուցվել է քաղաքացիական, *քրեական* կամ դատական կարգով վարչական *գործ, և ուժի մեջ է մտել այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ*, (...) ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) Բյուրոյի կանոններով նախատեսված փաստաթղթերը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, *որոշում է ընդունում ապահովագրական հարուցումը վճարելու* կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին:

Օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ եթե առկա է քաղաքացիական, *քրեական* կամ դատական կարգով վարչական *գործ, և ապահովագրական հարուցման վճարումը կախված է այդ գործի ելքից, ապա* նույն հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ կամ *5-րդ մասերում* նշված ժամկետները կասեցվում են մինչև տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը: (...):

Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ անձի առողջությանը պատճառվել է վնաս (բացառությամբ սույն օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված դեպքերի) և նրան անհրաժեշտ է բժշկական օգնություն ցուցաբերել (նրան ցուցաբերվել է անհրաժեշտ բժշկական օգնություն), և եթե նրա՝ բժշկական հաստատություն դիմելու օրվանից հետո՝ 2 ամսվա ընթացքում, դեռևս որոշում չի կայացվել նրան ապահովագրական հատուցում վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին, ապա Բյուրոն տուժողի կամ նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա վճարում է բժշկական օգնության հետ կապված ծախսերը նրա հետ համաձայնեցրած չափով և կարգով: (...):

Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ծախսերը Բյուրոյի կամ նրա անդամ ապահովագրական ընկերության կողմից վճարված լինելու դեպքում, *եթե որոշվում է վնաս պարճատած անձը*, ապա վնաս պատճառած անձի պատասխանատվությունը ապահովագրած ապահովագրական ընկերությունը պարտավոր է իր կողմից վճարման ենթակա ապահովագրական հատուցման գումարից առաջնահերթ փոխհատուցել Բյուրոյի կամ համապատասխան ապահովագրական ընկերության վճարած գումարը: Չփոխհատուցված գումարի, իսկ *վնասը պարճատած անձի պարասխանաբերությունն ապահովագրված չլինելու դեպքում* Բյուրոյի (համապատասխան ապահովագրական ընկերության) վճարած ամբողջ գումարի չափով Բյուրոն (համապատասխան ապահովագրական ընկերությունը) հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում վնաս պատճառած անձի նկատմամբ: Տուժողի մեղքի առկայության դեպքում Բյուրոն (համապատասխան ապահովագրական ընկերությունը) նույն մասով նախատեսված հետադարձ պահանջի իրավունքը ձեռք է բերում տուժողի նկատմամբ այն չափով, որ չափով տուժողը, օրենքի համաձայն, վնասի փոխհատուցման իրավունք չունի վնաս պատճառած անձի նկատմամբ: (...):

Վկայակոչված հոդվածների համակարգային մեկնաբանումից հետևում է, որ՝

1) ընդհանուր կանոնի համաձայն՝ ապահովագրական հատուցում վճարելու հարցը լուծվում է ապահովագրական հատուցում վճարելու կամ հատուցում վճարելը մերժելու մասին որոշմամբ,

2) պատճառված անձնական վնասի դեպքում տուժողին ապահովագրական հատուցումը կարող է վճարվել մինչև Բյուրոյի կողմից ապահովագրական հատուցում վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու

մասին որոշում կայացնելը, ինչից հետևում է, որ հատուցումը փաստացի վճարվելուց հետո Բյուրոյի կողմից կարող է կայացվել ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշում,

3) նման հնարավորությունը պայմանավորված է նրանով, որ անձնական վնասների դեպքում անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելու, հետևաբար նաև՝ բժշկական անհետաձգելի և անհրաժեշտ ծախսեր կատարելու դրությամբ վնաս պատճառած անձը, այդ թվում՝ վերջինիս մեղավորության աստիճանը կարող են անորոշ լինել,

4) միաժամանակ քրեական գործ հարուցված լինելու դեպքում անձնական վնաս պատճառած անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով՝ դրա առկայության դեպքում,

5) այն դեպքում, երբ տուժողին հատուցումը վճարվել է մինչև Բյուրոյի կողմից ապահովագրական հատուցում վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշում կայացնելը, վնաս պատճառած անձը որոշվելու դեպքում տուժողին վճարած ամբողջ գումարի չափով Բյուրոն հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում վնաս պատճառած անձի նկատմամբ:

Այսինքն՝ այն դեպքում, երբ վնաս պատճառած անձի մեղավորության աստիճանը պետք է որոշվի դատական կարգով, և նշված հանգամանքին պետք է գնահատական տա դատարանը, ապա ապահովագրական հատուցում վճարելու կամ հատուցում վճարելը մերժելու մասին որոշման կայացումն ու դրա հիման վրա հատուցում վճարելը, ըստ էության, կախված են դատական կարգով հարուցված գործի ելքից, և հատուցումը *վճարվում է կամ վճարելը մերժվում են* անձնական վնաս պատճառած անձի մեղավորության վերաբերյալ գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա:

Արդյունքում՝ այն դեպքում, երբ Բյուրոյի կողմից անձնական վնասների գծով ապահովագրական հատուցումը վճարվում է մինչև ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելը (բավարարելու կամ մերժելու մասին), Բյուրոյի հետադարձ պահանջի իրավունքի իրացման հայցային վաղեմության ժամկետի ընթացքի (հոսքի) սկիզբ և միաժամանակ հիմնական պարտավորության կատարման՝ Օրենքի իմաստով հատուցում վճարելու պահ պետք է դիտարկել ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու ժամանակը՝ նկատի ունենալով, որ հետագայում ինչպես վնասի չափի գնահատում իրականացնելու, այնպես էլ վնաս պատճառած անձին որոշելու (այդ թվում՝ մեղավորության աստիճանը պարզելու) դեպքում հատուցման ենթակա գումարի չափը կարող է նվազեցվել (ավելացվել) նախապես վճարված հատուցման չափից:

Հետևաբար՝ նյութաիրավական վերոշարադրյալ փաստակազմի առկայության դեպքում հիմնական պարտավորությունը կատարելու՝ Օրենքի իմաստով հատուցում վճարելու «պահ»-ը ծագում է ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելուց հետո, երբ բացահայտված են *պարճատված անձնական վնասների* չափն ու դրանում *անձի մեղավորության աստիճանը*, ինչը իր հերթին դատական կարգով գործ հարուցված լինելու դեպքում որոշվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով:

***Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Դիմելով դատարան՝ Բյուրոն պահանջել է Արմենակ Ստեփանյանից բռնագանձել 419.637 ՀՀ դրամ, որից 402.310 ՀՀ դրամը՝ որպես տուժողին պատճառված և Բյուրոյի կողմից հատուցված անձնական վնասների գումար, 17.327 ՀՀ դրամը՝



որպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով հաշվեգրված տոկոսներ, ինչպես նաև շարունակել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվեգրումը:

Գործի քննության ընթացքում պատասխանող Արմենակ Ստեփանյանը (ներկայացուցիչ Միշա Էլոյան) ներկայացրել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն՝ այն հիմնավորմամբ, որ 26.05.2016 թվականի վճարման հանձնարարագրով Բյուրոյի կողմից փոխանցվել է 402.310 ՀՀ դրամ՝ որպես տուժող Մարիետա Թադևոսյանի նախնական հատուցում, հետևաբար հիմնական պարտավորության կատարման հաջորդ օրվանից՝ 27.05.2016 թվականից Բյուրոյի մոտ ծագել է պատասխանողից 402.310 ՀՀ դրամ գումարը պահանջելու իրավունք, Բյուրոն իր խախտված իրավունքի պաշտպանության հայցով դատարան կարող էր դիմել մինչև 27.05.2019 թվականը, մինչդեռ բաց է թողել հայցային վաղեմության ժամկետը:

Քննարկելով միջնորդությունը՝ Դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ կետը, արձանագրել է, որ՝

- «*«Արդշինքանկ» ՓԲԸ-ի 26.05.2016 թվականի վճարման հանձնարարականի պարճենի համաձայն՝ Բյուրոյի կողմից Բժշկական կենտրոնին է փոխանցվել 402.310 դրամ, որպես փոխանցման նպարակ նշվել է՝ «նախնական հատուցում Մարիետա Թադևոսյան»: (...) նշված գումարի ուղղվածությունը հարակ է և հանդիսանում է ապահովագրական պարահարի արդյունքում փութած անձի համար կարարված հատուցում:*

- *(...) վճարման հանձնարարականում «նախնական հատուցում» արտահայտությունն ինքնին փաստի փոփոխության չի հանգեցնում, քանզի Օրենքի 49-րդ հոդվածը հարակ սահմանում է երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին փութած անձանց պարճատված վնասների հատուցման և դրանով պայմանավորված հերադարձ պահանջի իրականացման հարավորությունը, որի արդյունքում ևս Մարիետա Թադևոսյանի համար վճարված գումարը այլ կերպ, քան երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին փութած անձին պարճատված վնասի հատուցում, բնութագրելու հիմքեր սուկա չեն: Նշվածի արդյունքում Դատարանը գրնում է, որ Պատասխանողի միջնորդությունը 26.05.2016թ.-ը որպես հիմնական պարարավորության կարարման պահ որոշելու առնչությամբ, հիմնավոր է: (...):*

- *Սույն դեպքում ապացուցված համարելով հիմնական պարարավորության կարարման պահը՝ 26.05.2016թ.-ին, Դատարանը գրնում է, որ հայցային վաղեմության եռամյա ժամկետի հաշվարկը սկսվում է դրան հաջորդող օրվանից՝ 27.05.2016թ.-ից և համարվում է լրացած 27.05.2019թ.-ին:*

- *Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով հայցադիմումը ներկայացվել է 2020թ. դեկտեմբերի 03-ին, Դատարանն արձանագրում է, որ լրացել է հայցային վաղեմության ժամկետը, որը հայցը մերժելու խնկերարիվ հիմք է»:*

Վերոշարադրյալ պատճառաբանություններով Դատարանը վճռել է հայցը մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը հայցվորի կողմից բաց թողնվելու հիմքով:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «*Արմենակ Սրեփանյանի կողմից 03.03.2016թ. Մարիետա Թադևոսյանին վրաերթի ենթարկելու և վերջինիս բուժման նպարակով Բյուրոյի կողմից 402.310 ՀՀ դրամ գումարը բժշկական կենտրոնին 26.05.2016թ. հատուցելու պայմաններում, Բողոքաերն առնվազն 27.05.2016թ. սկսած գիրեր կամ պերք է ինացած լիներ Արմենակ Սրեփանյանի կողմից պարճատված վնասի հատուցմամբ պայմանավորված վերջինիս նկարմամբ հերադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքի ծագման մասին: Արդյունքում, հաշվի առնելով,*

որ Բողոքաբերի կողմից «Էրեբունի» բժշկական կենտրոնին վճարում կատարվել է 26.05.2016թ., իսկ Բողոքաբերի կողմից հաստատարապես հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքի ծագման մասին տեղեկացված լինելու պայմաններում, հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը մեկնարկել է վճարում կատարելու հաջորդ՝ 27.05.2016թ. և ավարտվել է 27.05.2019թ., մինչդեռ սույն գործով հայցադիմումը Դատարան ներկայացվել է միայն 01.12.2020թ., հետևաբար հայցվորը բաց է թողել հայցային վաղեմության ժամկետը»:

Անդրադառնալով Բյուրոյի այն հիմնավորումներին, որ թիվ ԵԷԴ/0089/01/16 քրեական գործով վերջնական դատական ակտը, որով հաստատվում է Արմենակ Ստեփանյանի մեղավորությունը, Բյուրոն ստացել է 23.04.2020 թվականին, և հայցային վաղեմության ժամկետը կարող էր սույն քաղաքացիական գործով հոսել առնվազն 24.04.2020 թվականից, ինչպես նաև հատուցում վճարելու վերաբերյալ որոշմամբ հատակ արձանագրվել է, որ որոշումը կայացվել է միայն թիվ ԵԷԴ/0089/01/16 քրեական գործով վերջնական դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, երբ հաստատվել է Արմենակ Ստեփանյանի մեղավորությունը, քանի որ առանց համապատասխան անձի մեղավորության հաստատման Բյուրոն չէր կարող հատուցման որոշում կայացնել, և չէր կարող իրացնել իր հետադարձ պահանջի իրավունքը, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «*մեղքի հաստատման փաստը դատական կարգով հաստատելը օրենսդիրը պարտադիր չի համարել, ուստի Բողոքաբերի կողմից բժշկական կենտրոնին 26.05.2016թ. վճարում կատարելու արդյունքում հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը մեկնարկել է վճարում կատարելու հաջորդ՝ 27.05.2016թ. և ավարտվել է 27.05.2019թ.*»:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը մերժել է Բյուրոյի վերաքննիչ բողոքը՝ Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ:

Վկայակոչված պատճառաբանություններից հետևում է, որ ստորադաս դատարանները հայցը մերժելիս և վճիռն անփոփոխ թողնելիս հիմք են ընդունել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ դատարան դիմելու հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման հատուկ կարգը:

Ստորադաս դատարանները, ըստ էության հաստատված համարելով վթարի պահին ԱՊՊԱ պայմանագրի բացակայության փաստի ուժով Բյուրոյի կողմից երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին տուժողին հատուցում տրամադրված լինելու հանգամանքը, հայցային վաղեմության ընդհանուր՝ եռամյա ժամկետի բացթողումն արձանագրելիս ելակետային են համարել Բյուրոյի կողմից տուժողին փաստացի հատուցում վճարելը՝ հիմք ընդունելով գործում առկա 26.05.2016 թվականի վճարման հանձնարարականը:

Վերահաստատելով նախկինում կայացրած որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ հետադարձ պահանջի նկատմամբ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է ապահովագրական ընկերության կողմից տուժողին ապահովագրական հատուցում վճարելու պահից՝ Վճարել դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են սույն գործի փաստակազմի առանձնահատկություններն ու Օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը, այդ թվում՝ քրեական գործ հարուցված լինելու փաստը:

Ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ, եթե հատուցում վճարելու պարտականությունը կախված է հարուցված քրեական գործի ելքից, այսինքն՝ համապատասխան ելքը, տվյալ դեպքում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, կանխորոշում է հատուցում վճարելու օրենքով նախատեսված

պարտականության կատարումը, ապա Բյուրոյի համար հատուցումը վճարելու **օրենքով նախատեսված պարտականությունը** ծագում է դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող թիվ 3, 4 և 5 փաստերից հետևում է, որ պատասխանող Արմենակ Ստեփանյանի վերաբերյալ կայացվել է մեղադրական դատավճիռ, որով հաստատվել է վերջինիս մեղքը տեղի ունեցած ավտոտրանսպորտային պատահարի հետևանքով Մարիետա Թադևոսյանին պատճառված անձնական վնասի հարցում. դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել 09.06.2017 թվականին:

Այսինքն՝ Օրենքի իմաստով վնաս պատճառած անձը որոշվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով, որի մասին Բյուրոն իրազեկվել է միայն 23.04.2020 թվականին (տե՛ս փաստ 6): Սույն գործի նյութերով չեն հիմնավորվել Բյուրոյի կողմից դատավճռի մասին ավելի վաղ՝ մինչև 23.04.2020 թվականը, տեղեկանալու, այդ թվում՝ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 23.04.2020 թվականը, տուժողի կողմից Բյուրոյին դիմելու փաստերը:

Ապահովագրական հատուցումը փաստացի վճարվել է ավելի վաղ՝ մինչև հարուցված քրեական գործով դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը և 06.05.2020 թվականին ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշում կայացնելը: Հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով Բյուրոյի կողմից իր հետադարձ պահանջի իրավունքի պաշտպանության հայցով դատարան դիմելու եռամյա ժամկետի հաշվարկը պետք է սկսել ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ որոշում կայացնելու հաջորդող օրվանից՝ 07.05.2020 թվականից: Նշվածի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Բյուրոն իրավունք ուներ հետադարձ պահանջի իրավունքն իրացնել (հայցադիմում ներկայացնել դատարան) մինչև 07.05.2023 թվականը ներառյալ:

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող 7-րդ փաստից հետևում է, որ հայցվորը հայցադիմումը Դատարան է ներկայացրել 01.12.2020 թվականին, հայցային վաղեմության եռամյա ժամկետի պահպանմամբ:

Մինչդեռ ստորադաս դատարանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 4-րդ կետը մեկնաբանելով Օրենքի կիրառելի նորմերի և սույն գործի փաստերի անտեսմամբ, հայցային վաղեմության ժամկետի սկիզբը սխալ են որոշել, գործում առկա ապացույցների սխալ գնահատման հետևանքով հանգել են հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու վերաբերյալ չհիմնավորված հետևության, ուստի վերոշարադրյալ պատճառաբանությունների ուժով հայցային վաղեմություն կիրառելու պատասխանողի միջնորդությունը ենթակա էր մերժման:

Միաժամանակ նկատի ունենալով, որ հայցը մերժվել է հայցային վաղեմության եռամյա ժամկետը լրացած լինելու հիմքով, և գործի ըստ էության քննություն չի իրականացվել, իսկ Վերաքննիչ դատարանն էլ անփոփոխ է թողել Դատարանի վճիռը, Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում վճռաբեկ բողոքի մյուս փաստարկների հիմնավորվածությանը և գտնում է, որ սույն գործով առկա է նոր քննության անհրաժեշտություն՝ պարզելու և ըստ էության ստուգելու հայցապահանջի իրավաչափությունն ու հիմնավորվածությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ նկատի ունենալով, որ հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով հայցը մերժելու պայմաններում ստորադաս դատարանները գործի ըստ էության քննություն չեն իրականացրել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.11.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/6646/02/21
	2023թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/6646/02/21
Նախագահող դատավոր	Հ. Ենոքյան
Դատավորներ	Ն. Գաբրիելյան
	Կ. Համբարձումյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող</i>	Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
<i>գեկուցող</i>	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
	Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ

2023 թվականի մարտի 06-ին գրավոր ընթացակարգով քննելով Սևակ Միլիտոնյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.07.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սևակ Միլիտոնյանի ընդդեմ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ)՝ վնասի հատուցման պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Սևակ Միլիտոնյանը պահանջել է պատասխանողից բռնագանձել 45.800.000 ՀՀ դրամ՝ որպես «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի անգործության հետևանքով պատճառված վնասի հատուցում, որից 38.600.000 ՀՀ դրամը՝ որպես շինությունների վերարտադրման ծախս, 7.200.000 ՀՀ դրամը՝ որպես հողամասի շուկայական արժեք:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Գ. Վարդանյան) 18.03.2022 թվականին վճռել է՝ «Սևակ Միլիտոնյանի հայցն ընդդեմ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության՝ վնասի հատուցման պահանջի մասին, մերժել՝ հայցային վաղեմության ժամկետը հայցվորի կողմից բաց թողնված լինելու հիմքով: Սևակ Միլիտոնյանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 816000.00

ՀՀ դրամ՝ որպես հետաձգված պետական տուրքի գումար: Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված»:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահությանը՝ Հ. Ենոքյան, դատավորներ՝ Ն. Գաբրիելյան, Կ. Համբարձումյան) 15.07.2022 թվականի որոշմամբ Սևակ Միլիտոնյանի վերաքննիչ բողոքը մերժվել է՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 18.03.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել հայցվոր Սևակ Միլիտոնյանը (ներկայացուցիչ՝ Արայիկ Ղազարյան):

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի անունից ներկայացվել է վճռաբեկ բողոքի պատասխան:

## ***2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը***

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*1) Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 60-րդ, 61-րդ և 78-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետը՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Բողոք ներկայացրած անձը կրել է գույքային վնաս, նրա տունը գտնվում է վթարային վիճակում, ստիպված է եղել ԱԻՆ-ի հրահանգով լքել տունը, վթարանությունը կրում է շարունակական բնույթ, եթե առաջնային վթարը պայմանավորված էր 03.01.2018 թվականին տան բակի աստիճանների մոտ մոտավորապես 2մ խորությամբ բացված փոսով, որի ազդեցությամբ վնասվեցին տան պատերը և առաջացան մինչև 3սմ լայնությամբ ճաքեր, ապա 22.01.2019 թվականին տեղի է ունեցել կրկնակի փլուզում, ինչը հաստատվել է ՀՀ ԱԻՆ գլխավոր քարտուղարի կողմից բողոք ներկայացրած անձին հասցեագրված 14.02.2019 թվականի գրությամբ: Ներկայումս տունը գտնվում է վթարային վիճակում, ինչի պատճառով ջրերի շարունակվող հոսքն է, որը 2018 թվականից չի կանխարգելվել, ինչի հետևանքով բողոք ներկայացրած անձն ու վերջինիս ընտանիքը շարունակում են բնակվել այլ վայրում, այսինքն՝ տեղի է ունեցել բողոք ներկայացրած անձի՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի միջամտություն, որը շարունակական բնույթ է կրում:

Միջամտությունը տեղի է ունեցել պատասխանողի կողմից, ինչը հաստատվել է դատաքննության ընթացքում: Մասնավորապես ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարի 18.01.2018 թվականի գրությամբ հաստատվել է, որ 11.01.2018 թվականին ՀՀ ԱԻՆ մասնագետների կողմից ուսումնասիրվել են Երևան քաղաքի Մարի թաղի 18 փողոցի 68 հասցեում գտնվող տան տեխնիկական վիճակը, դրա վատթարացմանը նպաստող պատճառները և արձանագրվել է, որ գրունտային ջրերի սնուցմանը նպաստում են նաև թաղամասի մաշված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, իսկ ՀՀ կառավարության 14.12.2017 թվականի թիվ 1662-Ն որոշման 4-րդ կետի և 4/1 հավելվածի 1573-րդ տողի համաձայն՝ պատասխանողին վարձակալության է հանձնվել Երևան քաղաքում առկա, պետական սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, այդ թվում՝ Մարի թաղ 18 փողոցի գույքը:

Վկայակոչելով ՀՀ Վճռաբեկ դատարանի 12.01.2022 թվականի թիվ ԵԱԲԴ/2192/02/10 և 02.04.2010 թվականի թիվ ԵԷԴ/0723/02/09 որոշումները հայտնել է, որ վաղեմության ժամկետների կիրառումն ամենատարբեր իրավահարաբերությունների հիմքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցնում է դատարանի մատչելիության կամ դատարանի իրավունքի միջամտության, մասնավորապես ՀՀ Վճռաբեկ դատարանը համարել է, որ վաղեմության ժամկետը ոչ միայն միջամտում է անձի դատական պաշտպանության իրավունքին, այլև դրա խախտումը խաթարում է արդարադատության բուն էությունը:

Բողոքաբերը պնդել է, որ վաղեմության ժամկետի հաշվարկը պետք է սկսել այն պահից, երբ, «*ինքը ի վիճակի է եղել գնահատել վնասը*», ինչպես սահմանել է Սարդու իրավունքների եվրոպական դատարանը, մինչդեռ դատարանները վաղեմության ժամկետի սկիզբը հաշվարկել են այն պահից, երբ տեղի է ունեցել վնասը՝ անկախ այն հանգամանքից, որ այդ պահին բողոքաբերն իր ձեռքի տակ չունեի ապացույցներ՝ վնասի ծագման և վնասի չափի մասին: Հետևաբար դատարանները դրսևորել են անհամաչափ մոտեցում և չեն փոխհավասարակշռել բողոքաբերի ու պատասխանողի շահերը:

Բողոքաբերը կրկնակի փյուզման մասին փաստարկով փորձել է հիմնավորել, որ վաղեմության ժամկետը շարունակում է հոսել, քանի որ իր գույքի վնասը նույնպես շարունակական բնույթ ունի, ինչը համահունչ է ՄԻԵԴ նախադեպային իրավունքին առ այն, որ որոշ դեպքերում վաղեմության ժամկետի մեկնարկը կարող է հոսել, մինչդեռ դատարանները ոչ վերաբերելի են համարել կրկնակի փյուզումների, շարունակվող վնասի մասին բողոք ներկայացրած անձի պնդումներն ու ներկայացրած փաստերը:

Դատարանները դատական ստուգման շրջանակից դուրս են թողել մրցակցող լեզվախմբի շահերի փոխհավասարակշռման ՄԻԵԴ մեթոդաբանությունը:

Դատարանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետը կիրառել են ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1611 որոշման մեջ այդ նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք ներկայացրած անձը պահանջել է «բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ/6646/02/21 քաղաքացիական գործով 2022 թվականի հուլիսի 15-ի որոշումը և քաղաքացիական գործն ուղարկել առաջին ատյանի դատարան նոր քննության»:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմքերը, հիմնավորումները**

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի անունից ներկայացվել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ հայտնելով, որ հայցվորը ենթադրյալ վնասների մասին իմացել է առավազն 03.01.2018 թվականից, այդ ժամանակից սկսել է հոսել հայցային վաղեմության եռամյա ժամկետը, մինչդեռ հայցվորը հայցադիմումը ներկայացրել է 12.02.2021 թվականին, ինչից հետևում է, որ վերջինս բաց է թողել հայցային վաղեմության ժամկետը, ինչը հիմք է հայցը մերժելու համար:

Վճռաբեկ դատարանին խնդրել է վճռաբեկ բողոքը մերժել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Էրեբունի համայնք, Սարի-Թաղ, 18 փող., թիվ 68 տան նկատմամբ Երևանի քաղաքապետի 03.11.08 թվականի թիվ 5059-Ա որոշման, հողամասի ուղղակի

վաճառքի 25.12.2008 թվականի թիվ 10367 պայմանագրի, 19.11.08 թվականի թիվ 3008-2008 գլխավոր հատակագծի հիման վրա 27.12.2008 թվականին գրանցվել է Սևակ Միլիտոնյանի սեփականության իրավունքը (**հատոր 1-ին, գ.թ. 79-80**).

2) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ Սևակ Միլիտոնյանին հասցեագրված 18.01.2018 թվականի գրությամբ ի թիվ այլևի հայտնվել է, որ 11.01.2018 թվականին ՀՀ ԱԻՆ մասնագետների կողմից ուսումնասիրվել են Երևան քաղաքի Սարի-Թաղի 18-րդ փողոցի թիվ 68 հասցեում գտնվող տան տեխնիկական վիճակը և դրա վատթարացմանը նպաստող պատճառները: (...) Գրունտային ջրերի սնուցմանը նպաստում են նաև թաղամասի մաշված մատակարարման և ջրահեռացման համակարգերը, որոնց ջրերը մասամբ մակերեսային հոսքով թափվում են գետային ցանցի մեջ, մասամբ էլ ճեղքելով սնում են գրունտային ջրերը: Այս ջրերը լանջերի այն հատվածներում, ուր զանգվածների հավասարակշռությունը մոտ է սահմանային արժեքներին, նպաստում են կաշոնականության նվազմանը, գրունտի վերին շերտի զանգվածի ավելացմանը և արդյունքում շարժումների ակտիվացմանը (**հատոր 1-ին, գ.թ. 77**).

3) ՀՀ վարչապետի աշխատակազմի՝ Սևակ Միլիտոնյանին հասցեագրված 06.12.2019 թվականի գրությամբ ի թիվ այլևի հայտնվել է, որ ՀՀ կառավարության 07.03.2013 թվականի արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ՀՀ տարածքում վթարային դարձած, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման հայեցակարգը, ըստ որի՝ Սարի Թաղի վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրը կարող է լուծվել բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցության տրամադրման միջոցով՝ վթարային բնակելի տունը քանդելու և հողամասի նպատակային նշանակությունը փոխելու պայմանով: Հաշվի առնելով, որ 2019 թվականի պետական բյուջեով, ինչպես նաև 2019-2021թթ. պետական միաժամկետ ծախսերի ծրագրով այդ ուղղությամբ միջոցներ նախատեսված չեն, հետևաբար խնդրին կարող է լուծում տրվել հետագա տարիներին անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության պարագայում (**հատոր 1-ին, գ.թ. 26**).

4) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ հայցվորի ներկայացուցչին հասցեագրված 14.02.2019 թվականի գրությամբ ի թիվ այլևի հայտնվել է, որ 22.01.2019 թվականին Սևակ Միլիտոնյանի զանգն ստանալուց հետո դեպքի վայր է մեկնել արտակարգ իրավիճակների արձագանքման խումբը, ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տան տակ առաջացել է մոտ 6քմ մակերեսով նստվածք, ինչի հետևանքով 3 հիմնասյուներ առանձնացել են առաստաղից, հյուրասենյակի և ննջասենյակի պատերին առաջացել են մոտ 30սմ երկարությամբ ու 5սմ լայնությամբ ճաքեր, առկա է տան փլուզման վտանգ, հրշեջ-փրկարարները սահմանագատել են փլուզման վտանգ ներկայացնող հատվածները և, հաշվի առնելով ստեղծված վտանգավոր իրավիճակը, առաջարկվել է լքել տունը, ինչը, սակայն, չի իրականացվել բնակության համար անհրաժեշտ տեղ չունենալու պատճառով: Միաժամանակ հայտնվել է, որ դեռևս 2018 թվականի հունվար ամսին ԱԻՆ աշխատակիցների կողմից իրականացվել է Սևակ Միլիտոնյանի տան ակնադիտական ուսումնասիրություն, ինչի արդյունքում տեխնիկական վիճակի մասին եզրակացություն ստանալու և վթարայնության աստիճանը որոշելու համար առաջարկվել է դիմել լիցենզավորված կազմակերպությանը (**հատոր 1-ին, գ.թ. 76**).

5) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գլխավոր քարտուղարի՝ Սևակ Միլիտոնյանի ներկայացուցչին հասցեագրված 06.03.2019 թվականի գրությամբ ի թիվ այլևի հայտնվել է, որ 11.01.2018 թվականին ԱԻՆ մասնագետների



կողմից ուսումնասիրվել են Սարի Թաղի 18-րդ փողոցի թիվ 68 հասցեում գտնվող տան տեխնիկական վիճակը և վատթարացմանը նպաստող պատճառները, ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տան բակում գրունտների լվացման հետևանքով առաջացել է մոտ 2մ երկարությամբ, 2մ լայնությամբ և մոտ 1.5մ խորությամբ փոս, վնասվել են կցակառույց հանդիսացող նախասարահի հենասյուները, տան հարավային հատվածի պատերին առկա են մեծ թվով ճաքեր մինչև 4սմ լայնությամբ, իսկ շրջակայքում առկա են գրունտների նստեցումներ: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ ԱԻՆ մասնագետների կողմից առաջարկվել է չօգտագործել տան վտանգավոր հատվածը և հարցի հետագա կարգավորման նպատակով դիմել շենքերի և շինությունների տեխնիկական հետազննության ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը՝ պայմանագրային հիմունքներով շինության տեխնիկական վիճակի հետազոտություններ իրականացնելու և համապատասխան եզրակացություն ստանալու համար: Տան հետագա բնակեցման հարցը կախված է տեխնիկական վիճակի համապատասխան եզրակացությունից: Առաջարկվել է ջրահեռացման համակարգերի շահագործման և խափանումները վերացնելու համար միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ հարցն ուղղել նաև Երևանի քաղաքապետարան (**հատոր 1-ին, գ.թ. 72-73**).

6) Երևանի քաղաքապետարանի՝ Սևակ Միլիտոնյանի ներկայացուցչին հասցեագրված 30.11.2020 թվականի գրությամբ տրամադրվել է ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի «Սարի Թաղ թաղամասում սողանքի առաջացման և ակտիվացման գործոնների բացահայտում» վերստառությամբ 22.07.2019 թվականի հաշվետվությունը, որի «եզրակացություններ» բաժնի համաձայն՝ ըստ քիմիական անալիզների արդյունքների և տարածքի երկրաբանական կառուցվածքի կարելի է եզրակացնել, որ 18-րդ և 28-րդ փողոցների ջրերի ելքերը կապված են գրունտային ջրերի հորիզոնի հետ, որոնց հետ խառնվում են կենցաղային ջրերը, (...), դիտարկվող տարածքի ստորերկրյա հոսքի ձևավորման գործում զգալի դեր ունեն ջրահեռացման համակարգի անսարքությունները, (...), ստորերկրյա հոսքը, որն անցնում է բնակելի տների տակով, ժամանակի ընթացքում սուֆոզիայի տարածքի անխուսափելի ընդլայնման արդյունքում կարող է ընդգրկել ավելի մեծ մակերեսներ, ինչն անմիջական սպառնալիք է շինությունների և բնակչության համար, (...) (**հատոր 1-ին, գ.թ. 32-70**).

7) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի՝ հայցվորի ներկայացուցչին հասցեագրված 05.03.2020 թվականի գրությամբ հայտնվել է, որ Սարի Թաղի 18-րդ փողոցը սպասարկող ջրահեռացման համակարգը ՀՀ կառավարության 14.12.2017 թվականի թիվ 1662-Ա որոշման 4.1 հավելվածով վարձակալությամբ հանձնված է (ցանկի 1573 համարն է) «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին (**հատոր 1-ին, գ.թ. 29-31**).

8) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի՝ հայցվորի ներկայացուցչին հասցեագրված 17.04.2020 թվականի գրությամբ հայտնվել է, որ համաձայն ՀՀ կառավարության 14.12.2017 թվականի թիվ 1662-Ա որոշման 4-րդ կետի՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին հանձնվել է Երևան քաղաքում առկա պետական սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի գույքը, 21.11.2016 թվականին կնքված վարձակալության պայմանագրի հիման վրա «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն ստանձնել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարման, շահագործման ու պահպանման պարտավորությունները (**հատոր 1-ին, գ.թ. 27-28**).

9) Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, և վճռաբեկ բողոքում չի վիճարկվում այն փաստը, որ հայցվորի իրավունքի խախտումը տեղի է ունեցել 03.01.2018 թվականին (անվիճելի փաստ) (**հատոր 3-րդ, գ.թ. 99-109**).

10) Սույն գործով հայցադիմումը Դատարան է ներկայացվել 12.02.2021 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 7-85**):

**4. Վճռաբեկ դատարանի պարզապահությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է՝

➤ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ դատարանի կիրառած նյութական իրավունքի նորմերի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ և 337-րդ հոդվածների կիրառության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

➤ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, ինչի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վնասի հարուցման գործերով պարզապահված վնասի հարուցման համար սահմանված նյութաիրավական պայմանների բացահայտման անհրաժեշտությամբ պայմանավորված (վնաս պարզապահի և վնասի առկայություն, ոչ օրինաչափ վարքագիծ, վնասի և ոչ օրինաչափ վարքագծի միջև պարզապահության միջև կապ, պարզապահի մեղք) հայցային վաղեմության ժամկետի կիրառման առանձնահատկություններին, մասնավորապես՝ հաշվարկման կարգին՝ վերահասարակելով և զարգացնելով նախկինում արդարահայրած դիրքորոշումները:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վնասներ հատուցելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: (...):

Վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը (տե՛ս, օրինակ, Նարայյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից վնաս կրած անձի մոտ իրական կամ բաց թողնված օգուտի տեսքով վնասների, վնաս պատճառող անձի, վնաս պատճառողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի, վնասների և ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է վնաս կրած անձը, իսկ պատճառված վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով կրում է ենթադրյալ վնաս պատճառած անձը (տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի թիվ ԵԿԴ/2600/02/10 որոշումը 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի վկայակոչմամբ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հայցային վաղեմության ընթացքը սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ հայցային վաղեմության ժամկետն այն ժամանակահատվածն է, որն անձին հնարավորություն է տալիս դիմելու դատարան իր իրավունքների պաշտպանության հայցով: Հայցային վաղեմության գործնական կիրառության համար կարևոր նշանակություն ունի հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի իրավակարգավորումից հետևում է, որ հայց հարուցելու իրավունքը ծագած է համարվում միայն այն պահին, երբ իրավագոր անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իրավախախտման փաստի մասին: Հետևաբար՝ հայցային վաղեմության ժամկետի սկիզբը որոշելու համար էական է իրավունքի խախտման առկայությունը

և դրա մասին շահագրգիռ անձի իմանալու կամ այդպիսի հավանականության առկայության պահը (*յրե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի թիվ ԵՄԴ/0529/02/14 որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում հայցային վաղեմության ժամկետի սկիզբը ճիշտ որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի փաստական հանգամանքները, վիճելի իրավահարաբերության բնույթը և սուբյեկտային կազմը: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը բխում է օրենսդրական կարգավորման տրամաբանությունից: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը հայցային վաղեմության ժամկետի լրանալը սահմանել է որպես հայցը մերժելու հիմք, ինչը նշանակում է, որ անգամ այն դեպքում, երբ պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ դիմում է ներկայացրել քաղաքացիական դատավարության սկզբնական փուլերում (գործը դատաքննության նախապատրաստելու), դատարանը, այնուամենայնիվ, պետք է գործը քննի ըստ էության և վերջնական դատական ակտում գնահատական տա հայցային վաղեմության կիրառման վերաբերյալ միջնորդությանը: Օրենսդրի այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ հայցային վաղեմության ինստիտուտի առանձին տարրերի՝ կիրառելի ժամկետի (ընդհանուր, կրճատ կամ երկար), այդ ժամկետի հաշվարկի սկզբի, ընդհատման կամ կասեցման հարցերը որոշ դեպքերում հնարավոր է պարզել միայն վիճելի իրավահարաբերության որոշակիացման արդյունքում, այսինքն՝ պարզելով վիճելի իրավահարաբերության տեսակը (վարձակալության, հողային, ընտանեկան, աշխատանքային և այլ), մասնակիցների շրջանակը, իրավունքների և պարտականությունների ծավալը (*յրե՛ս ՀՀ գլխավոր դատախազությունն ընդդեմ Հենրիկ Սարգսյանի թիվ ԵՄԴ/1149/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով հայցային վաղեմության կիրառման հարցին՝ ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հայցի մերժման ինքնուրույն և բացառիկ հիմք է, սակայն հայցը մերժելու նշված հիմքը չի կարող մեկուսացված լինել գործի փաստական հանգամանքներից և դրանց նկատմամբ կիրառման ենթակա նյութական իրավունքի նորմերից: Հայցային վաղեմության ինստիտուտի առանձին տարրերի՝ կիրառելի ժամկետի (ընդհանուր, կրճատ կամ երկար), այդ ժամկետի հաշվարկի սկզբի, ընդհատման կամ կասեցման հարցերը որոշ դեպքերում հնարավոր է պարզել միայն վիճելի իրավահարաբերության որոշակիացման արդյունքում, այսինքն՝ պարզելով վիճելի իրավահարաբերության տեսակը (վարձակալության, հողային, ընտանեկան, աշխատանքային և այլ), մասնակիցների շրջանակը, իրավունքների և պարտականությունների ծավալը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ քանի դեռ դատարանը չի պարզել կիրառելի օրենսդրության հարցը, նյութական իրավունքի նորմերով արժևորվող փաստերի շրջանակը, չի վերլուծել կողմերի փոխահարաբերություններում առկա պայմանագրային դրույթները, չի պարզել սուբյեկտիվ իրավունքի կամ պարտականության ծագման պահը, չի կարող եզրահանգման գալ հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկզբնական պահի վերաբերյալ (*յրե՛ս ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն ընդդեմ «Գորիս-Ապակի» ՍՊԸ-ի թիվ ՄԴ3/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Շինք ընդունելով վերոշարադրյալը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ այն դեպքում, երբ վիճող կողմը դիմում է ներկայացրել

հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանը, կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ կետը, պետք է քննարկման առարկա դարձնի հայցային վաղեմության ժամկետի լրանալու հարցը: Հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելը հայցը մերժելու հիմք է, անկախ այն հանգամանքից, թե հայցը հիմնավոր է, թե՛ ոչ (յրե՛ս Հրաչյա Գրիգորյանի ընդդեմ Գեորգի Բաղդասարյանի թիվ ԵԱԴԿ/3423/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 17.12.2020 թվականի որոշումը):

Այն դեպքում, երբ վիճող կողմը դիմում է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանների օրակարգային խնդիրն է դառնում պարզել այն իրական ժամանակահատվածը, երբ հայցվորը հետամուտ է եղել իր իրավունքների դատական կարգով պաշտպանությանը (յրե՛ս Սերգեյ Սարգսյանի ընդդեմ Արա Սարգսյանի թիվ ԵԿԿ/0881/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):

ՀՀ Սահմանադրական դատարանը, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասի և 337-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով անդրադառնալով «երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ» եզրույթներին, 28.09.2021 թվականի թիվ ՍԴՈ-1611 որոշմամբ նշել է հետևյալը. «Հայցային վաղեմության ինստիտուտի նպատակների իրացման համար Օրենսգիրքը սահմանել է, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է ոչ միայն այն օրվանից, երբ անձն իմացել է, այլ նաև այն օրվանից, երբ նա պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Ակնհայտ է, որ օրենսդրի կողմից նշված հասկացությունների և իրավիճակների տարբերակումն ինքնանպատակ չէ, և այդ հանգամանքն առանցքային նշանակություն ունի վիճարկվող նորմերի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման առումով: Ենթան պարբերակումն ուղղված է քաղաքացիական շրջանառության մասնակիցների բարեխիղճ վարքագծի, քաղաքացիական շրջանառության և իրավահարաբերությունների որոշակիության և կայունության, իրավահարաբերության բոլոր սուբյեկտների հիմնարար իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը:

Բնականաբար, շահագրգիռ անձը դատարանն պաշտպանության իրավունքն իրացնում է այն դեպքում, երբ համոզված է իր իրավունքի խախտման հարցում: Սակայն նշված հանգամանքը չի ենթադրում, որ անձը կարող է իր «անբարեխիղճ» պասիվ վարքագծով նպաստել իրավունքի խախտման մասին հաստատարապես իմանալու հանգամանքի բացառմանը կամ ազատված լինել իր իրավունքի ենթադրյալ խախտումների հարցում հաստատարապես համոզվելու համար ողջամերորեն ենթադրվող իրավաչափ գործողությունների կատարման անհրաժեշտությունից: Հակառակ դեպքում գործ կունենանք քաղաքացիական շրջանառության որոշակիության և կայունության ու վերջինիս մասնակիցների հիմնարար իրավունքների խախտմանն ուղղված՝ իրավունքի չարաշահում հանդիսացող անբարեխիղճ վարքագծի հետք, ինչը որևէ պարագայում չի կարող ընկած լինել հայցային վաղեմության ինստիտուտի և դրա սահմանադրաիրավական բովանդակության հիմքում: Հենց նշված հանգամանքի բացառմանն ու քննարկված արժեքների պաշտպանությանն է ուղղված քաղաքացիական օրենսդրությամբ անհրազոված այն իրավակարգավորումը, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է ոչ միայն այն օրվանից, երբ անձը հաստատարապես իմացել է, այլ նաև այն օրվանից, երբ նա պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

Այդ առումով ակնհայտ է, որ «*իմացել է*» և «*պետք է իմանար*»/«*պարտավոր էր իմանալ*» հասկացությունների բովանդակությունները հավասար իմաստային

**ծանրաբեռնվածություն չունեն** (ընդգծումը՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի): Եթե այդ հասկացությունները մեկնաբանելիս առանցքային դիրարկվի իրավունքի խախտման մասին հասարակարարական իմանալու հանգամանքը՝ ուշադրությունից դուրս կմնա խախտման մասին հասարակարարական իմանալու նպատակով բավարար տեղեկություններ ձեռք բերելու համար ողջամերթուն ենթադրվող իրավաչափ գործողություններ կատարելու և «անբարեխիղճ պատիվ վարքագծից» ու իրավունքի չարաշահումից զերծ մնալու անհրաժեշտությունը: Մինչդեռ, ինչպես բխում է ներկայացված վերլուծությունից, այդ հանգամանքները բացառիկ կարևորություն ունեն քննարկվող իրավադրոյթների՝ Սահմանադրությանը համապատասխան մեկնաբանության և կիրառման առումով:

Անկրոհելով վերը շարադրվածը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **վիճարկվող իրավադրոյթներում առկա քննարկվող հասկացությունների սահմանադրաիրավական բովանդակությունը ենթադրում է հեղկյայր**. «**խնացել է**» ձևակերպումը մարնացոյց է անում խախտման մասին հասարակարարական իմանալու հանգամանքը: Մինչդեռ, «պետք է իմանալ»/«պարտավոր էր իմանալ» ձևակերպումը վերաբերում է այն բոլոր իրավիճակներին, երբ գործի հանգամանքներից չի բխում իրավունքի խախտման մասին հասարակարարական իմանալու փաստը, սակայն ենթադրվում է, որ համանման իրավիճակում իրավահարաբերության սուբյեկտը պետք է ձեռնարկեր իր իրավունքի ենթադրյալ խախտման հարցում հասարակարարական համոզվելու համար բավարար տեղեկություններ ձեռք բերելուն ուղղված ողջամերթուն ենթադրվող իրավաչափ գործողություններ՝ զերծ մնալով «անբարեխիղճ» պատիվ վարքագծից: Այլ կերպ, վիճարկվող հոդվածներում կիրառվող «պարտավոր էր իմանալ» կամ «պետք է իմացած լիներ» արտահայտությունները կրում են այն բովանդակային ծանրաբեռնվածությունը, ըստ որի, քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում անձը ողջամիտ ուշադրության դեպքում կհմանար **դեպքում կհմանար իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին**:

Այսպիսով՝ ՀՀ Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ կետը և 337-րդ հոդվածի 1-ին կետը համապատասխանում են Սահմանադրությանը՝ այն մեկնաբանմամբ, համաձայն որի՝ «պարտավոր էր իմանալ» կամ «պետք է իմացած լիներ» հասկացությունները վերաբերում են այն իրավիճակներին, երբ քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում անձը ողջամիտ ուշադրության դեպքում կհմանար իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին:

ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ հայցային վաղեմությունը անձի խախտված իրավունքի դատական պաշտպանության համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամանակահատվածն է, ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով հայցային վաղեմության ժամկետի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ Ընկերությունն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին: Օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ անձը տեղյակ լինի ո՞վ է իր իրավունքների խախտողը և ո՞ւմ դեմ պետք է ուղղված լինի պահանջը: Հայցն ինքնին իրենից ներկայացնում է նյութաիրավական պահանջ, որն ուղղված պետք է լինի իրավունքը ենթադրաբար խախտած անձի դեմ (յրենս ՀՀ Վճռաբեկ դատարանի 22.04.2010 թվականի թիվ ԼԴ/0431/02/09 որոշումը):

Այսինքն՝ հայցի իրավունքը կարող է ծագել միայն նյութաիրավական պահանջ ներկայացնելու հնարավորություն ունենալու պահից, ինչը, իր հերթին, պահանջում է ենթադրյալ իրավախախտման պատճառի, հետևաբար՝ պատասխանատու անձը բացահայտված լինելու կամ ողջամտորեն դրա հնարավորությունն

ունենալու փաստի արձանագրում, այլ կերպ՝ հայցային վաղեմություն սկսում է հոսել, երբ անձը ի թիվ այլնի իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման պատճառի և խախտած սուբյեկտի մասին:

Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նրանով, որ, գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններով պայմանավորված, որոշ դեպքերում իրավունքը խախտված անձը չնայած տեղյակ է լինում իր իրավունքի խախտման փաստի մասին, սակայն անորոշ են լինում իրավունքի խախտման պատճառը և ենթադրյալ խախտած անձը:

Մինչդեռ, ինչպես ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկզբնական պահը որոշելու համար, ի թիվ այլնի, էական նշանակություն ունի նաև սուբյեկտիվ իրավունքի ծագման պահը պարզելը, քանի որ անձը իր ենթադրյալ խախտված իրավունքի պաշտպանության հայցով դատական պաշտպանության կարող է դիմել միայն այն պարագայում, երբ առկա են այնպիսի իրավաբանական փաստեր, որոնց համակցությունը բավարար է համապատասխան սուբյեկտիվ իրավունքն իրացնելու, ինչպես նաև այդ իրավունքից բխող պահանջով դատարան դիմելու համար (*տե՛ս «Ինգո-Արմենիա» ԱՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Վահանյանի թիվ ԱՐԱԿ/0580/02/19 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 02.07.2021 թվականի որոշումը*):

Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասի լեզվաբանական մեկնաբանումից հետևում է, որ հայցային վաղեմության ժամկետը հաշվարկվում է իրավախախտման, և ոչ թե իրավախախտումը կատարած անձի մասին իրավատիրոջ իմանալու կամ իմանալու իրական հնարավորության պահից, որպիսի պայմաններում որոշ դեպքերում իրավագոր անձի պահանջի համար հայցային վաղեմության ժամկետը կարող է լրանալ ավելի վաղ, քան կբացահայտվի իրավունքը ենթադրյալ խախտած անձը: Նման գործերով անհրաժեշտ է պարզել այն իրական ժամանակահատվածը, երբ հայցվորը հետամուտ է եղել իր իրավունքների դատական կարգով պաշտպանությանը, տվյալ դեպքում՝ իր իրավունքը ենթադրյալ խախտած անձի բացահայտմանը: Հետևաբար, քանի դեռ պարտապանի անձը որոշակիացված չէ, հնարավոր չէ խախտված իրավունքների պաշտպանության համար հայց ներկայացնել դատարան:

Նման պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 337-րդ հոդվածով ամրագրված՝ *երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին* ձևակերպումը պետք է լայն մեկնաբանվի և ընդգրկի նաև ենթադրյալ իրավախախտի՝ ոչ օրինաչափ վարքագիծ դրսևորողի մասին հաստատապես իմանալու կամ ենթադրյալ իրավախախտին բացահայտելուն միտված ողջամիտ և իրավաչափ գործողություններ ձեռնարկելու բովանդակային ծանրաբեռնվածություն:

Հակառակ դեպքում, այն է՝ վկայակոչված ձևակերպման անհարկի նեղ մեկնաբանումը խաթարում է նորմի իմաստային և նպատակային բովանդակությունը՝ նկատի ունենալով, որ հայցը պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն է, հետևաբար պատասխանողի անհայտ լինելու դեպքում նյութաիրավական պահանջ ներկայացնելու հնարավորությունը ըստ էության օբյեկտիվորեն բացակայում է:

Հայց հարուցելով՝ շահագրգիռ անձը, բացի իր իրավունքի ենթադրյալ խախտման վերացում պահանջելուց, առնվազն պետք է իմանա, թե ով է խախտել իր իրավունքը (ով է պատշաճ պատասխանողը) և խախտման էությունը, որպեսզի ճշգրիտ նշի պատասխանողին և նրանից պահանջի իր իրավունքի խախտման

վերացում (ընտրի իր իրավունքի խախտման վերացման համար անհրաժեշտ և պիտանի հայցապահանջը):

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում վնասի հատուցման պահանջի նկատմամբ հայցային վաղեմության կիրառման ենթակա ժամկետների և դրանց խախտման փաստը պարզելիս ի թիվ սույն որոշմամբ արձանագրված հանգամանքների, ենթակա է պարզման դատական պաշտպանություն հայցող անձի՝ վնաս պատճառած անձի բացահայտմանն ուղղված վարքագիծը, շրջահայացության դրսևորման ակտիվությունն ու գործողությունների արդյունավետությունը, որպիսի պայմանների համալիր գնահատման արդյունքում հնարավոր կլինի արձանագրել, որ հայցվորի կողմից վնասի հատուցման նյութաիրավական պահանջով դատական պաշտպանության դիմելու գործողության հապաղումը պայմանավորված է եղել բացառապես ենթադրյալ պատճառով՝ վնասի հատուցման համար սահմանված նյութաիրավական պայմանի՝ ենթադրյալ ոչ օրինաչափ վարքագծի կրողի անձի բացահայտմանը, հետևաբար նաև՝ իր իրավունքի ենթադրյալ խախտման հարցում հաստատապես համոզվելու համար բավարար տեղեկություններ ձեռք բերելուն ուղղված ողջամտորեն ենթադրվող իրավաչափ գործողությունների իրականացմամբ:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Դիմելով Դատարան՝ հայցվոր Սևակ Միլիտոնյանը պահանջել է պատասխանող «Վեդլիա Ջուր» ՓԲԸ-ից բռնագանձել 45.800.000 ՀՀ դրամ՝ որպես պատասխանողի անգործության հետևանքով պատճառված վնասի հատուցում, որից 38.600.000 ՀՀ դրամը՝ որպես շինությունների վերարտադրման ծախս, 7.200.000 ՀՀ դրամը՝ որպես հողամասի շուկայական արժեք:

Որպես հայցի փաստական հիմնավորում հայցվորը հայտնել է, որ Երևան, Սարի-թաղ, 18-րդ փողոց, թիվ 68 տան սեփականատերն է, 03.01.2018 թվականին թիվ 68 տան բակում առաջացել է փոս՝ 1,5-2 մետր խորությամբ, իսկ 2-րդ հարկի սենյակներում պատերի ճաքերի լայնությունը հասնում է մինչև 3 սմ, ՀՀ ԱԻՆ մասնագետների կողմից 11.01.2018 թվականի Երևան, Սարի-թաղ, 18-րդ փողոց, թիվ 68 հասցեում գտնվող տան տեխնիկական վիճակի և դրա վատթարացմանը նպաստող պատճառների ուսումնասիրության արդյունքում հայտնի է դարձել, որ գրունտային ջրերի սնուցմանը նպաստում են նաև թաղամասի մաշված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, որոնց ջրերը մասամբ մակերեսային հոսքով թափվում են գետային ցանցի մեջ, մասամբ էլ ճեղքերով սնում են գրունտային ջրերը, հայցվորի հետ 17.08.2020 թվականին կնքված պայմանագրի հիման վրա կատարվել է թիվ 68 հասցեում գտնվող շինությունների վերարտադրման ծախսերի և հողամասի շուկայական արժեքի գնահատում, որի համաձայն՝ շինությունների վերարտադրման ծախսերը 17.08.2020 թվականի դրությամբ կազմում են 38.600.000 ՀՀ դրամ, իսկ հողամասի շուկայական արժեքը՝ 7.200.000 ՀՀ դրամ: Սևակ Միլիտոնյանն իրավունք ունի պահանջելու, որ «Վեդլիա Ջուր» ՓԲԸ կողմից հատուցվի վերջինիս անգործության հետևանքով պատճառված վնասը, քանի որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի 05.03.2020 թվականի գրության համաձայն՝ Սարի Թաղի 18-րդ փողոցը սպասարկող ջրահեռացման համակարգը ՀՀ կառավարության 14.12.2017 թվականի թիվ 1662-Ա որոշման 4.1 հավելվածով վարձակալությամբ հանձնված է «Վեդլիա Ջուր» ՓԲԸ-ին, վերջինս է ստանձնել ջրամատակարարման և



ջրահեռացման համակարգերի կառավարման, շահագործման և պահպանման պարտավորությունները:

Որպես հայցի իրավական հիմք հայցվորը վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1058-րդ և 1063-րդ հոդվածները, ՀՀ ջրային օրենսգրքի 1-ին և 12-րդ հոդվածները:

«Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը 16.04.2021 թվականին հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ հայտնելով, որ հայցվորը ենթադրյալ վնասների մասին իմացել է առավազն 03.01.2018 թվականից, հետևաբար այդ ժամանակից սկսել է հոսել հայցային վաղեմության ժամկետը, մինչդեռ հայցը ներկայացվել է 12.02.2021 թվականին: Դատարանին խնդրել է հայցը մերժել հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով (**հատոր 2-րդ, գ.թ. 177-131**):

Հայցվորին առարկել է միջնորդության դեմ՝ հայտնելով, որ թեև հայցվորին 08.01.2018 թվականին պարզ է եղել, որ կրել է վնասներ, սակայն հայցվորի համար պարզ չեն եղել տան փլուզվելու պատճառները, 08.01.2018 թվականից հետո հայցվորը մի շարք հարցումներ է կատարել՝ փլուզման պատճառները պարզելու, փաստաբանական հարցումների արդյունքում ստացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի 17.04.2020 թվականի գրությունը, որից պարզվել է, որ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ն ստանձնել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարման, շահագործման և պահպանման պարտավորությունները, լիցենզիայի համաձայն՝ իրականացնում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում, որի գործառույթներից է համակարգի կառավարումը, շահագործումը, պահպանումն ու բարելավումը: Այսուհետև ստացվել է Երևանի քաղաքապետարանի 30.11.2020 թվականի գրությունը, որով տրամադրվել է «ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 22.07.2019 թվականի հաշվետվությունը, նշված գրությունները ստանալուց և ուսումնասիրելուց հետո միայն պարզ են դարձել անշարժ գույքի փլուզման պատճառներն ու դրանց համար պատասխանատու անձանց շրջանակը, հետևաբար հայցային վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է ոչ այն պահից, երբ փլուզվել է տունը, այլ այն պահից, երբ հայցվորին հայտնի են դարձել փլուզման պատճառները և դրա համար պատասխանատու անձինք, հետևաբար հատուցման պահանջի իրավունքն առաջացել է 30.11.2020 թվականին, երբ տրամադրվել է հաշվետվության պատճենը, քանի որ միայն այդ փաստաթուղթը կարող էր հայցվորի մոտ հստակ պատկերացում ստեղծել առ այն, որ իր կրած վնասը հետևանք է պատասխանողի կողմից իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման և որ հենց սույն գործով պատասխանողը պետք է հատուցի իր կրած վնասները (**հատոր 2-րդ, գ.թ. 143-144**):

Դատարանը, ի թիվ այնի վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ, 332-րդ և 337-րդ հոդվածները, ՀՀ Վճարեկ դատարանի՝ «Ալյանս պլուս» ՍՊԸ-ն ընդդեմ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի (ներկայումս՝ «ՎեՈՆ Արմենիա» ՓԲԸ) թիվ ԵԱԲԴ/4524/02/15 քաղաքացիական գործով ՀՀ Վճարեկ դատարանի 04.06.2019 թվականի որոշումը, հաստատված համարելով «Սևակ Միլիարդյանի իրավունքի խախտումը 2018թ. հունվարի 3-ին րեղի ունեցած լինելու փաստը», արձանագրել է, որ «հայցվոր Սևակ Միլիարդյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, ք. Երևան, Էրեբունի համայնք, Մարի թաղ 18 փողոց, թիվ 68 փուն հասցեում գտնվող անշարժ գույքին 2018թ. հունվարի 3-ին պատճառվել է վնաս, որի կապակցությամբ վերջինս 2018թ. հունվարի 8-ին դիմել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն և 2018թ. հունվարի 18-ի գրությամբ ստացել է պատասխան, որով վերջինիս

յրեղեկացրել են Երևան քաղաքի Մարի թաղ 18 փողոցի 68 հասցում գրնվող փան րեհնհիկական վիճակի և դրա վարթարացմանը նպաստող պարճառների մասին, մասնավորապես՝ րեղեկացրել են, որ գրունարային ջրերի սնուցմանը նպաստում են նաև թաղամասի մաշված ջրամարակարարման և ջրահեռացման համակարգերը, որոնց ջրերը մասամբ մակերեսային հոսքով թափվում են գեարային ցանցի մեջ, մասամբ էլ ճեղքերով սնում են գրունարային ջրերը», «Սևակ Միլիարոնյանի կողմից այլ քան վկայակոչված, ինչպես նաև այլ քան սայացուցված ջիներու պարագայում գործում է 2018թ. հունվարի 18-ի գրության մասին նույն օրը իրագեկված լինելու կանխավարկածը», «2018թ. հունվարի 18-ին սահմանված կարգով հայց հարուցելու համար հայցվոր Սևակ Միլիարոնյանը րիրապեղել է անհրաճեշը և քավարար րեղեկութունների և քաղաքացիական ջրջանառության սովորական պայմաններում ողջամիր ուշադրության դեպքում այդ օրը պեղք է իմանար/պարարավոր էր իմանալ իր իրավունքի իսխարման մասին», եզրահանգել է, որ «հայցային վաղեմության ընթացքը սկավել է 2018թ. հունվարի 19-ից, իսկ հայցվորը հեարամուր է եղել իր իրավունքների դարական կարգով պաշարպանությանը միայն 2021թ. րեարվարի 12-ին, այսինքն՝ հայցային վաղեմության ընթացքը սկավելուց հեար սվելի քան երեք րարի 24 օր անց, հեարարար քաց է թողել օրեկքով սահմանված և րվյալ դեպքում կիրառելի հայցային վաղեմության երեք րարվա ժամկեղը»:

Անդրադառնալով սահմանված կարգով հայց հարուցելու համար պատշաճ պատասխանողին պարգելու վերաբերյալ հայցվորի փաստարկին՝ Դատարանն արճանագրել է. ««Վեղիս Ջուր» ՓԲԸ դեմ կյութարավական պահանջը ներկայացվել է ՀՀ կատավարության 2017թ. դեկերերերի 14-ի թիվ 1662-Ն որոշման հիման վրա, որի 4-րդ կերի և 4/1 հավելվածի 1573-րդ րողի համաճայն՝ «Վեղիս Ջուր» փակ քաճներիրական ընկերությանը վարճակալության է հանճավել (...) այդ թվում՝ Մարի թաղ 18 փողոցի, գուքը, այսինքն՝ հրապարակված նորմարիվ իրավական սկրի հիման վրա, որայիսի պարագայում գործում է այն կանխավարկածը, որ հայցվորը, այդ թվում՝ 2018թ. հունվարի 18-ի դրությամբ պարարավոր էր րիրապեղել այդ րեղեկութունը: Ավելին, րեղեկության աղբյուրը հրապարակված նորմարիվ իրավական սկր է, հեարարար՝ այն պարգելու համար ճավալուն միջոցներ ճեռնարկելու անհարճեշրութուն ջկար և 2018թ. հունվարի 18-ից մինչև 2018թ. րեարվարի 11-ը քավարար և ողջամիր ժամկեղ էր այն պարգելու համար, սակայն հայցվորը այդ ժամկեղում ջի իրականացրել ողջամրորեն եկթարրվող որևէ իրավաջասի գործողություն՝ դրսերելով «անքարեխիղճ» պասիվ վարքագիճ»:

**Վերաքննիչ դատարանը,** վկայակոչելով ՀՀ Սահմանադրական դատարանի 28.09.2021 թվականի թիվ ՄԴՌ-1611 որոշումը, մերճել է հայցվոր Սևակ Միլիարոնյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ:

Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է հետևյալ պատճառարանությունները. «հայցվորն իր իրավունքների իսխարունների մասին իմացել է դեռևս 2018թ. հունվարի 3-ին, որայիսի փասարն ընրունվել է հենց հայցվորի կողմից: Հեարարար առնվազն այդ պահից սկասճ հայցվորը գրկված ջի եղել իր իրավունքների պաշարպանության համար դարարան դիմելուն ուղղված գործողություններ կարարելուց: Սակայն վերջինս հարցումներ կարարելով րարբեր պեարական և րեղական ինքնակատավարման մարմիններին, դարարան հայց է ներկայացրել արդեն հայցային վաղեմության ժամկեղի իսխարմամբ, այն է՝ 2021 թվականի րեարվարի 12-ին: Մինչդեռ դեռևս 2018թ. հունվարի 8-ին հայցվորը դիմել է ՀՀ արրակարգ իրավիճակների սսխարարություն և 2018թ. հունվարի 18-ի գրությամբ արացել է պարասիսան, որով վերջինիս րեղեկացրել են Երևան քաղաքի Մարի թաղ 18 փողոցի

68 հասցեում գրնվող տան տեխնիկական վիճակի և դրա վալթարացմանը նպաստող պայմանների մասին», «հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է իրավունքի խախտման մասին տեղեկանալու պահից, այսինքն՝ ցանկացած տեղեկատվություն, որը վկայում է իրավունքի խախտման մասին, հիմք է հայցային վաղեմության ժամկետը հաշվարկելու համար: Հետևաբար՝ հենց վկայակոչված 2018թ. հունվարի 18-ի գրությամբ հայցվորն իմացել է իր իրավունքների խախտման մասին և չի ներկայացրել այնպիսի փաստարկներ, որոնք հիմք կտան կատարել եզրահանգում հայցային վաղեմության ժամկետն իր կամքից անկախ և հարգելի պայմաններով բաց թողնելու մասին, փոխարենը՝ հայցվորը, դիմելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, օրենքով սահմանված եռամյա ժամկետում չի դիմել դատական կարգով իր իրավունքների պաշտպանության համար: Ընդ որում՝ հայցվորի կողմից հերքազայում կատարված հարցումներով վերջինս չի սրացել այնպիսի նոր տեղեկություններ, որոնք իրեն հայտնի չեն եղել դեռևս 2018թ. հունվարի 18-ին, քանի որ, ըստ էության, բոլոր պատասխան գրություններով փլուզումների պայմանները համընկնում են»:

Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները ըստ էության հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբ՝ հայցվորի կողմից հայց հարուցելու իրավունքի ծագման օր են դիտարկել 18.01.2018 թվականը, այսինքն՝ ՀՀ ԱԲՆ մասնագետների կողմից Երևան քաղաքի Սարի-Թաղ, 18-րդ փողոցի թիվ 68 հասցեում գտնվող տան տեխնիկական վիճակի և դրա վալթարացմանը նպաստող պատճառների ուսումնասիրման մասին ՀՀ ԱԲՆ-ի 18.01.2018 թվականի գրության տրամադրման օրը՝ հիմք ընդունելով այն, որ հայցվորն իր իրավունքի խախտման մասին իմացել է 18.01.2018 թվականին:

Մինչդեռ ստորադաս դատարաններն անտեսել են, որ ՀՀ ԱԲՆ-ի գրությունները միայն հավանական տեղեկություններ են բովանդակում փլուզման պատճառների վերաբերյալ (տե՛ս փաստեր 2, 4, 5): Ավելին, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ հայցվորի ներկայացուցչին հասցեագրված 14.02.2019 թվականի գրությամբ առաջարկվել է տեխնիկական վիճակի մասին եզրակացություն ստանալու և վթարայնության աստիճանը որոշելու համար դիմել լիցենզավորված կազմակերպությանը (տե՛ս փաստ 4), իսկ 06.03.2019 թվականի գրությամբ առաջարկվել է ջրահեռացման համակարգերի շահագործման և խափանումները վերացնելու համար միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ հարցն ուղղել նաև Երևանի քաղաքապետարան՝ նշելով, որ տան հետագա բնակեցման հարցը կախված է տեխնիկական վիճակի համապատասխան եզրակացությունից (տե՛ս փաստ 5):

Իր հերթին իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի փլուզման պատճառների մասին հայցվորը տեղեկացել է Երևանի քաղաքապետարանի՝ հայցվորի ներկայացուցչին հասցեագրված 30.11.2020 թվականի գրությամբ տրամադրված հաշվետվությունից (մասնավորապես ըստ հաշվետվության՝ 18-րդ փողոցի ստորերկրյա հոսքի ձևավորման գործում զգալի դեր ունեն ջրահեռացման համակարգի անսարքությունները, տե՛ս փաստ 6):

Հայցվորի իրավունքը ենթադրաբար խախտած անձի վերաբերյալ տեղեկություն բովանդակում են բացառապես ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի՝ հայցվորի ներկայացուցչին հասցեագրված 05.03.2020 թվականի և 17.04.2020 թվականի գրությունները (տե՛ս փաստեր 7, 8):

Հետևաբար, թեև հայցվորի իրավունքը խախտվել է 03.01.2018 թվականին (անվիճելի փաստ), մինչդեռ իր իրավունքի ենթադրյալ խախտման պատճառների և ենթադրյալ իրավախախտի մասին հայցվորն ամբողջական տեղեկատվություն է ստացել համապատասխանաբար 30.11.2020 թվականի, 05.03.2020 թվականի և 17.04.2020 թվականի գրություններին ծանոթանալու արդյունքում:

Ասվածի համատեքստում հերքվում է հրապարակված նորմատիվ իրավական ակտի ուժով իրավունքը ենթադրաբար խախտած անձի մասին դեռևս 2018 թվականին տեղեկանալու հնարավորության մասին Դատարանի հետևությունը:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առնվազն 11.01.2018 թվականից 30.11.2020 թվականն ընկած ժամանակահատվածում հայցվորը ձեռնարկել է իրավիճակից բխող ողջամիտ, իրավաչափ գործողություններ՝ բացահայտելու իր իրավունքի խախտման պատճառ հանդիսացող հանգամանքները և ենթադրաբար խախտած անձին, ու Վճռաբեկ դատարանի գնահատմամբ միայն Երևանի քաղաքապետարանի՝ հայցվորի ներկայացուցչին հասցեագրված 30.11.2020 թվականի գրությամբ տրամադրված հաշվետվությունն ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի՝ հայցվորի ներկայացուցչին հասցեագրված 05.03.2020 թվականի և 17.04.2020 թվականի գրությունները կարող էին հայցվորին բավարար հիմք տալ՝ հետևություն անելու իր գույքի փլուզման պատճառների և իր նյութաիրավական պահանջի հասցեատիրոջ, այն է՝ իրավունքը ենթադրյալ խախտած անձի մասին:

Այսինքն՝ հայցվորը 2018 թվականից ձեռնարկել է իր **իրավունքի ենթադրյալ խախտման, տվյալ դեպքում՝ վնասի առաջացման պատճառների և իրավունքը խախտողի անձի բացահայտման հարցում հաստատապես համոզվելու համար բավարար տեղեկություններ ձեռք բերելուն ուղղված ողջամտորեն ենթադրվող իրավաչափ գործողություններ, որոնց արդյունքում վնասի առաջացման պատճառների մասին տեղեկատվությունը ստացվել է 30.11.2020 թվականին, ենթադրյալ իրավախախտի մասին հստակ տեղեկությունը ստացվել է 05.03.2020 թվականի, 17.04.2020 թվականի գրություններով:**

Նման պայմաններում հայցվորը վնասի հատուցման պահանջը կարող էր ներկայացնել 30.11.2020 թվականից սկսած երեք տարվա հայցային վաղեմության ժամկետի ընթացքում, այսինքն՝ մինչև 31.12.2023 թվականը ներառյալ:

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող 10-րդ փաստից հետևում է, որ հայցվորը հայցադիմումը Դատարան է ներկայացրել 12.02.2021 թվականին, այսինքն՝ հայցային վաղեմության ընդհանուր՝ երեք տարվա ժամկետի պահպանմամբ:

Անփոփոխելի շարադրվածը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ստորադաս դատարանները հայցային վաղեմության ժամկետի սկիզբը սխալ են որոշել, գործում առկա ապացույցների սխալ գնահատման և կիրառելի նյութական իրավունքի նորմերի սխալ մեկնաբանման հետևանքով հանգել են հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու վերաբերյալ չհիմնավորված հետևության, ուստի վերոշարադրյալ պատճառաբանությունների ուժով հայցային վաղեմություն կիրառելու պատասխանողի միջնորդությունը ենթակա է մերժման:

*Վերոգրյալ պատճառաբանությամբ միաժամանակ հերքվում են վճռաբեկ բողոքի պատրասխանի հիմնավորումները:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ նկատի ունենալով, որ հայցային վաղեմության ժամկետը լրանալու հիմքով հայցը մերժելու պայմաններում ստորադաս դատարանները գործի ըստ էության քննություն չեն իրականացրել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը ստորադաս դատարան ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պարճառաքանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն գլխի (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ) կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական

ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.07.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/4549/02/20
	2022թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/4549/02/20
Նախագահող դատավոր՝	Լ. Գրիգորյան
Դատավորներ՝	Ա. Պետրոսյան
	Կ. Չիլինգարյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող</i>	Մ. ԴՐՄԵՅԱՆ
<i>գեկուցող</i>	Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Է. ՍԵՂՈՒՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 21-ին գրավոր ընթացակարգով քննելով «Տավրիդա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.04.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության (այժմ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն) (այսուհետ՝ Նախարարություն), երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 43.827.940 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 25.07.2016 թվականից մինչև 22.04.2019 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները հաշվարկված 14.423.589,08 ՀՀ դրամի չափով բռնագանձման և դատական ծախսի պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 06.02.2020 թվականի որոշմամբ Ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Նախարարության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ «Տոկոսի բռնագանձման» պահանջի մասով թիվ ԵԴ/23470/02/19 քաղաքացիական գործից

առանձնացվել է առանձին վարույթում ըստ Ընկերության հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Նախարարության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 43.827.940 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 25.07.2016 թվականից մինչև 22.04.2019 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները հաշվարկված 14.423.589,08 ՀՀ դրամի չափով բռնագանձման պահանջի մասը և այդ առանձնացված մասով քաղաքացիական գործով քննությունը շարունակվել է՝ և նշանակվել է նախնական դատական նիստ:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Փ. Ասատրյան) (այսուհետ՝ Դատարան) 06.10.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.04.2021 թվականի որոշմամբ Նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն՝ Դատարանի 06.10.2020 թվականի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է՝ Հայաստանի Հանրապետությունից հոգուտ Ընկերության բռնագանձվել է 1.195.970 ՀՀ դրամ՝ որպես դրամային պարտավորությունը խախտելու համար հաշվարկված տոկոսների գումար, հայցը մնացած մասով մերժվել է: Հայաստանի Հանրապետությունից հոգուտ Ընկերության բռնագանձվել է 23.920 ՀՀ դրամ՝ որպես հայցի համար վճարված պետական տուրքի նախապես վճարված գումար, ինչպես նաև 100.000 ՀՀ դրամ գումար՝ որպես փաստաբանի՝ Դատարանում և Վերաքննիչ դատարանում մատուցված ծառայությունների խելամիտ վարձատրության գումար: Ընկերությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձվել է 793.650 ՀՀ դրամ՝ որպես ՀՀ կրթության և գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վերաքննիչ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումար՝ բավարարված վերաքննիչ բողոքներին համամասնորեն:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ ժեյա Մինասյան):

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Նախարարությունը և ՀՀ ֆինանսների նախարարությունը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ հոդվածների, 66-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, սիսլ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածը, 352-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, որոնք պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և անկասկածաբար և անհերքելի է:*

Այսպես՝ թիվ ԵԿԴ/0003/02/14 քաղաքացիական գործով 11.09.2017 թվականին կայացված վճռով ոչ թե ստեղծվել է պատասխանողների պարտավորությունը հայցվոր ընկերության նկատմամբ, այլ հաստատվել է օրենքի ուժով վաղուց առկա, պատասխանողի կողմից կատարման ենթակա, սակայն չկատարված

պարտավորության առկայությունը: Կետանցի օրը չի կարող կապվել վճիռն օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքի հետ, քանի որ կետանցի առկայությունն, ըստ էության, վճիռը կայացնելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում:

Պատասխանողը պարտավոր է եղել առաջացած պարտավորության ուժով հայցվոր ընկերությանը վճարել դրամ (ինչը հաստատվում է նաև թիվ ԵԿԴ/0003/02/12 քաղաքացիական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով): Չվճարելով այդ դրամը՝ պատասխանողներն ապօրինի պահել են այն, խնայել բողոքաբերի հաշվին, այդ թվում՝ նաև մինչև թիվ ԵԿԴ/0003/02/12 քաղաքացիական գործով կայացված դատական ակտիվ օրինական ուժի մեջ մտնելը: Ուստի մինչև վճիռն օրինական ուժի մեջ մտնելը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կիրառումը լիովին իրավաչափ է: Այն պահից, երբ պատասխանողների մոտ ծագում է հայցվորին վիճարկվող գումարը վերադարձնելու պարտականություն, այդ պարտականության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը ենթակա է որակման որպես պարտավորության կատարման կետանցում:

Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները կարող են հաշվարկվել հիմնական պարտավորության վերաբերյալ դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո, անհիմն է, քանի որ այդ տրամաբանությամբ կարելի է պատճառաբանել, որ ցանկացած այն դեպքում, երբ անձը դիմում է դատական պաշտպանության՝ հայցելով դրամական միջոցների բռնագանձում, ապա պարտավորության ծագումը կախված է պահանջը բավարարման ենթակա լինելու կամ չլինելու հարցի դատական լուծումից: Այդ տրամաբանությամբ պետք է մերժվեն մինչև դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը պահանջվող բոլորը տույժերը, տոկոսները բռնագանձելու պահանջները, քանի որ դրամական միջոցներ վճարելու պարտավորության ծագումը կախված է պահանջը բավարարման ենթակա լինելու կամ չլինելու հարցի դատական լուծումից, հարցի դրական լուծումից:

Փաստն այն է, որ տվյալ դեպքում դատարանը ոչ թե ստեղծել է պարտավորություն, այլ արդարադատություն իրականացնելու միջոցով, իրեն տրված իշխանության ուժով՝ հաստատել այդ պարտավորության առկայությունը, որը ներառում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

Պահանջը դատական կարգով քննվելու և այն դատական ակտի հիման վրա բռնագանձվելու հանգամանքը հիմք չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը չկիրառելու համար, քանի որ պարտավորությունը ծագել է ավելի վաղ համապատասխան հիմքի ի հայտ գալու ուժով, իսկ գործի դատական կարգով քննությունն ընդամենը անձի՝ իր խախտված իրավունքների դատական պաշտպանության եղանակն է: Ավելին, օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվել է նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունն անհիմն է մերժել հայցվոր ընկերության նկատմամբ ունեցած պարտավորությունը կատարելու դիմումը:

Բացի այդ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2019 թվականին տրվել է FN-19/01 սերիայով թիվ 00406 փոխանցելի մուրհակը, որով Հայաստանի Հանրապետությունն՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, պարտավորվել է վճարել 43.827.940 ՀՀ դրամ և սույն մուրհակի կազմման օրվանից մինչև մարման օրը տարեկան 6 տոկոս տոկոսադրույթով հաշվարկված տոկոսագումարը Ընկերությանը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի (օրինական ուժի



մեջ է մտել 31.10.2018 թվականի) թիվ ԵԿԴ/0003/02/14 վճռի և ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 14.12.2018 թվականին տրված կատարողական թերթի հիման վրա, վճարող՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, վճարման աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե, մուրհակի մարման օրը՝ 17.01.2020 թվական, մուրհակի վճարման վայրը՝ ՀՀ կենտրոնական բանկ, մուրհակի կազմման ամսաթիվ՝ 23.01.2019 թվական:

Փաստորեն, Հայաստապանի Հանրապետությունն առանց հայցվոր ընկերության համաձայնության տրամադրել է 23.01.2019 թվականի FN-19/01 սերիայով թիվ 00406 փոխանցելի մուրհակը, հետևաբար չի կարող խոսք լինել այն մասին, որ մուրահակով նախատեսված տոկոսագումարը կողմերի համաձայնությամբ է նախատեսվել:

Միաժամանակ մուրհակով նախատեսված վեց տոկոս տոկոսադրույքը ոչ թե դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերի համար վճարվող տոկոսագումար է, այլ նշված տոկոսագումարը տրամադրվում է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի ուժով:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածը ենթակա է կիրառման հարցի դատական դրական լուծումից հետո, իսկ պարտավորությունը դադարում է մուրհակի տրամադրմամբ, ինչպիսի մեկնաբանությունը հակասում է ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներին:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների բռնագանձման պահանջի մերժման մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 09.04.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ ամբողջությամբ բավարարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների բռնագանձման հայցվորի պահանջը:

### **2.1 Վճռաբեկ բողոքի դեմ երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բերված պարասխանի հիմնավորումները**

Պատասխանողի համար Ընկերության կողմից կատարված լրացուցիչ աշխատանքների համար վճարելու պարտականությունը հիմնավորվել է բացառապես Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի թիվ ԵԿԴ/0003/02/14 վճռով, որով է միայն պետական գնման պայմանագրի գրավոր ձևը չպահպանված գործարքը ճանաչվել վավեր: Հետևաբար միայն վերը նշված վճռով է հաստատվել և առաջացել պատասխանողի կողմից Ընկերությանը 43.827.940 ՀՀ դրամ գումար վճարելու պարտավորությունը: Այսինքն՝ միայն 11.09.2017 թվականի թիվ ԵԿԴ/0003/02/14 վճռի օրինական ուժի մեջ մտնելու հետևանքով է առաջացել պատասխանողի կողմից հայցվորին գումար վճարելու պարտականությունը:

Միաժամանակ հաշվի առնելով, որ մուրհակի տրամադրման հիմքով 23.01.2019 թվականին դադարել է պատասխանողի դատական ակտը կատարելու պարտականությունը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվեգրման ժամկետի ավարտը չի կարող դիտարկվել հայցվորի կողմից կնքված պահանջի իրավունքի զիջման պայմանագրի հիմքով գումարները փոխանցված լինելու օրը՝ 22.04.2019 թվականը, պատասխանողի պարտավորությունների կատարման ժամկետն ավարտվել է 23.01.2019

թվականին և դատական ակտի կատարման հիմքով դադարել է պատասխանողի պարտավորությունը հայցվորի նկատմամբ:

Հետևաբար Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշումը պատճառաբանված և հիմնավոր է, ուստի վճարել բողոքը ենթակա է մերժման:

## **2.2 Վճարել բողոքի դեմ՝ Նախարարության կողմից բերված պատասխանի հիմնավորումները**

Նախարարության համար Ընկերության կողմից կատարված լրացուցիչ աշխատանքների համար վճարելու պարտականությունը բացառապես սահմանվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի թիվ ԵԿԴ/0003/02/14 վճռով, որի համաձայն է միայն պետական գնման պայմանագրի գրավոր ձևը չպահպանած գործարքը ճանաչվել վավեր:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ մուրհակի տրամադրման հիմքով 23.01.2019 թվականին դադարել է դատական ակտը կատարելու պատասխանողի պարտականությունը, ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվեգրման ժամկետի ավարտը չի կարող դիտարկվել Ընկերության կողմից կնքված պահանջի իրավունքի զիջման պայմանագրի հիմքով գումարները փոխանցված լինելու օրը՝ 22.04.2019 թվականը:

## **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի (օրինական ուժի մեջ է մտել 31.10.2018 թվականին) թիվ ԵԿԴ/0003/02/14 վճռով վճռվել է. «1. «Տավրիդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության, երրորդ անձ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի (նախկինում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության), ՀՀ ֆինանսների նախարարության, «Տավրիդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով կառավարիչ Ա.Կարակելյանի՝ 43.827.940 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, բավարարել: Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության հոգուտ «Տավրիդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 43.827.940 ՀՀ դրամ գումար: 2. Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարությունից հոգուտ «Տավրիդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 200.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար» Թիվ ԵԿԴ/0003/02/14 Վճռով հաստատվել է, որ. «Դատարանը հարկ է համարում նշել, որ գործի քննության ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարությունն ընդունել է այն հանգամանքը, որ պահանջվող գումարը լրացուցիչ աշխատանքների կատարման համար փոխանցվել է ֆինանսավորողի կողմից, սակայն հայցվորին չի վճարվել, քանի որ լրացուցիչ աշխատանքները համաձայնեցված չեն եղել պետական իրավասու մարմնի՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ:

- Անդրադառնալով աշխատանքների համաձայնեցման հարցին՝ Դատարանը հարկ է համարում նշել, որ այդ հանգամանքի կապակցությամբ Դատարանին ցուցմունք է տվել վկա Վրեժ Հակոբյանը, ով հայտնել է, որ ինքը հանդիսացել է Թավրիդի արհեստակցական քոլեջի նախկին տնօրենը: Տնօրենի պաշտոնը

ստանձնել է 1987 թվականից մինչև 2011 թվականի հուլիսի 11-ը, սակայն քոլեջում կատարված շինարարական աշխատանքների հանձնումը եղել է 2011 թվականի օգոստոսի 05-ին: Հայտնել է նաև, որ այդ քոլեջում կատարվել են կապիտալ աշխատանքներ, որոնք կատարվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության միջոցով, ֆինանսավորվել են Եվրոպական բանկի միջոցով: Պայմանագրի կողմեր են եղել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և ՀՀ քաղաքաշինության նախարարությունը: Շինարարական աշխատանքների ծավալը գնահատված է եղել, բայց գումարի չափը հստակ չի հիշում: Կատարվել են կապիտալ շինարարական աշխատանքներ: Լրացուցիչ շինարարական աշխատանքներ կատարելու անհրաժեշտությունից ելնելով պաշտոնական գրություն է ուղղվել ՀՀ կրթության և գիտության նախարարին, ստացվել է վերջիններիս թույլտվությունը լրացուցիչ աշխատանքների կատարման համար, բացի այդ, տեղում բազմաթիվ այցեր են կատարվել նախարարության աշխատակիցների կողմից: Լրացուցիչ շինարարական աշխատանքները տևել են 2011 թվականի մայիսից մինչև օգոստոս: Իր պաշտոնից ազատման ժամանակ արդեն բոլոր շինարարական աշխատանքները ավարտված են եղել:

-Դատարանը հարկ է համարում նշել, որ հայցվորի կողմից վկայակոչված՝ շինարարական լրացուցիչ աշխատանքների կատարման, և դրանց կատարման համար ՀՀ կրթության և գիտության նախարարության հանձնարարականի և համաձայնության առկայության հիմնավորմանն են ծառայում նաև հայցվորի կողմից ներկայացված՝ 18.08.2011 թվականի ՀՀ կրթության և գիտության նախարարությանը հասցեագրված «Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի թիվ 025/02 գրությունը՝ հետևյալ բովանդակությամբ. «Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում կատարվել է վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ: Այժմ ընթանում է շինարարական աշխատանքների երկրորդ փուլը: Շինարարական աշխատանքների ծավալներում չի նախատեսվել սահմանային պարիսպի կառուցումը, դրսի զուգարանների և նկուղային մասի վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև շենքի ֆասադի, պահակատան և պահեստային մասի վերանորոգման աշխատանքները: Խնդրում ենք քոլեջում ուսումնական գործընթացը ապահովելու նպատակով նշված աշխատանքները ընդգրկել ընթացիկ ծրագրում»:

-ՀՀ քաղաքաշինության նախարարին 24.08.2011 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության, ի դեմս նախարարի, կողմից հասցեագրվել է թիվ 01/12.2/9344-11 գրությունը, որին կից ներկայացվել է «Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի 18.08.2011 թվականի թիվ 025/02 գրության պատճենը՝ քոլեջի բնականոն գործունեությունն ապահովող մի շարք աշխատանքներ առաջնահերթության կարգով իրականացնելու վերաբերյալ: Նույն գրությամբ հայտնվել է, որ «այդ աշխատանքները տնօրինության առաջարկով սկսվել են նախկին շինարարի կողմից, մնացել են անավարտ և կարևորվում են ուսումնական գործընթացն անխափան կազմակերպելու առումով»: Հաշվի առնելով վերոհիշյալը, հնարավորության դեպքում, խնդրվել է ՀՀ քաղաքաշինության նախարարի աջակցությունը նշված աշխատանքներն ավարտին հասցնելու համար:

-ՀՀ քաղաքաշինության նախարարի 15.09.2011 թվականի թիվ 01/14/44667 գրության համաձայն՝ «Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի մի շարք առաջնահերթ շինարարական աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ վերջինս հայտնել է, որ 24.08.2011 թվականի թիվ 01/12.2/9344-11 գրությամբ ներկայացված առաջարկությունները քննարկվել են

համապատասխան շահագրգիռ կազմակերպության հետ և խնդրին լուծում կտրվի սահմանված կարգով:

-«Տավրիդա» ՍՊ ընկերության կողմից 19.09.2011 թվականին դիմում է հասցեագրվել ՀՀ կրթության և գիտության նախարարին, որով խնդրվել է տալ հանձնարարական՝ հավելյալ կատարված շինարարական աշխատանքների ուսումնասիրման և դրա դիմաց վճարում կատարելու համար:

-ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականի հիմքով ՀՀ քաղաքաշինության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների հետ համատեղ, ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ տնօրենի 27.01.2012 թվականի թիվ 12-Ա հրամանով ստեղծվել է «Տավրիդա» ՍՊԸ-ի կողմից քվեչում իրականացվող լրացուցիչ շինարարական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողով, որի արդյունքում 01.02.2012 թվականին կազմվել և հանձնաժողովի անդամների կողմից ստորագրվել է «Տավրիդա» ՍՊԸ-ի կողմից լրացուցիչ շինարարական աշխատանքների կատարման վերաբերյալ արձանագրություն:

-ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի 20.02.2012 թվականի գրությամբ հայտնվել է, որ ՀՀ քաղաքաշինության և ՀՀ կրթության և գիտության նախարարությունների կողմից համատեղ ստեղծված հանձնաժողովը տեղում ուսումնասիրել է «Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում «Տավրիդա» ՍՊ ընկերության կատարած լրացուցիչ աշխատանքները և արձանագրել դրանց ծավալները: Բարձրացված հարցի կարգավորման ուղղությամբ հաջորդ քայլերին անցնելու համար անհրաժեշտ է «Տավրիդա» ՍՊ ընկերության համաձայնությունն արձանագրված ծավալների նկատմամբ, իսկ անհամաձայնության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան փաստաթղթերով հիմնավորված նկատառումները:

-«Տավրիդա» ՍՊԸ-ն, ի պատասխան 20.02.2012 թվականի գրության, 27.02.2012 թվականի թիվ 12/3 գրությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարին հայտնել է, որ հանձնաժողովը քվեչում իր կողմից կատարված լրացուցիչ աշխատանքների միայն մի մասն է արձանագրել՝ կից ներկայացնելով կատարված այն աշխատանքների ծավալը, որը դուրս է մնացել հանձնաժողովի ուսումնասիրությունից:

-«Սեյսմանվտանգություն» ՍՊԸ-ի կողմից կազմված թվով 2 նախահաշիվների համաձայն՝ շինարարական լրացուցիչ աշխատանքների արժեքը կազմել է 43.827.940 ՀՀ դրամ: «Սեյսմանվտանգություն» ՍՊԸ-ի կողմից կազմված թվով երկու նախահաշիվներով նշված աշխատանքների արժեքի հաշվարկը կատարվել է պայմանագրի անբաժանելի մաս կազմող ծավալաթերթ-նախահաշիվով սահմանված գներով:

-Վերոհիշյալ փաստական հանգամանքների լույսի ներքո Դատարանը հանգում է այն եզրակացության, որ հայցվորի կողմից նախքան լրացուցիչ շինարարական աշխատանքներ ծավալելը՝ պետական իրավասու մարմին հասցեագրվել է գրություն՝ խնդրելով նշված աշխատանքներն ընդգրկել ընթացիկ ծրագրում, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության ի դեմս նախարարի կողմից դիրքորոշում է հայտնվել առ այն, որ նշված աշխատանքներն անհրաժեշտ են ուսումնական գործընթացն ապահովելու համար: Ավելին, հետագայում կատարված լրացուցիչ շինարարական աշխատանքներն ընդունվել են պատասխանողի կողմից, և կազմվել է համապատասխան արձանագրություն:

-Այսպիսով, Դատարանը հանգում է այն եզրակացության, որ հայցվորի կողմից ստացվել է պետական իրավասու մարմնի թույլտվությունը լրացուցիչ շինարարական աշխատանքների իրականացման համար, որոնց փաստացի

ընդունմամբ և օրենքով սահմանված կարգով որևէ առարկություն չներկայացնելով՝ պատասխանողը փաստել է դրանց պատշաճ կատարման և դրանց՝ իր հավանությունը տալու հանգամանքը:

-Վերոհիշյալ իրավական նորմերի և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.06.2015 թվականի որոշմամբ արտահայտված դիրքորոշման լույսի ներքո Դատարանը հանգում է այն եզրակացության, որ խնդրո առարկա լրացուցիչ շինարարական աշխատանքները ծավալվել են առանձին՝ պետական գնումների պայմանագրի շրջանակից դուրս, և առկա է եղել այդպիսիք կատարելու մասին ինչպես կապալառուի՝ հայցվորի թույլտվություն ստանալուն ուղղված գրությունը, այնպես էլ պատվիրատուի կողմից տրված ի պատասխան գրությունները, որոնցով վերջինս չի առարկել դրանց կատարմանը, ավելին, տվել է իր հավանությունը՝ ընդունելով լրացուցիչ կատարված աշխատանքները:

- Դատարանը հարկ է համարում նշել, որ լրացուցիչ աշխատանքների կատարման մասով չի պահպանվել կապալի պայմանագրի գրավոր ձևը, սակայն նշված հանգամանքը չի գրկում կողմին գործարքի և դրա պայմանների վերաբերյալ այլ գրավոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից, ինչը տվյալ դեպքում հայցվորի կողմից կատարվել է: Ավելին, աշխատանքների կատարման փաստը և դրանք հայցվորի կողմից կատարված լինելու հանգամանքը պատասխանողը չի վիճարկել:

-Ինչ վերաբերում է կատարված աշխատանքների արժեքին, ապա պատասխանողի կողմից չի վիճարկվել նաև դրա չափը, և գնահատման արժեքը, ուստի նման պայմաններում Դատարանն իրավաչափ է համարում նաև հայցվորի կողմից ներկայացված հայցագինը (**հատոր 1-ին գ.թ. 27-35**).

2) Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի հարկադիր կատարողի 19.12.2018 թվականի կատարողական վարույթ հարուցելու մասին որոշմամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի (օրինական ուժի մեջ է մտել 31.10.2018 թվականին) թիվ ԵԿԴ/0003/02/14 վճռի հիման վրա տրված կատարողական թերթի հիմքով հարուցվել է թիվ 04866860 կատարողական վարույթը (**հատոր 1-ին գ.թ. 35 դարձերեսին**).

3) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2019 թվականին տրվել է FN-19/01 սերիայով թիվ 00406 փոխանցելի մուրհակը, որով Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, պարտավորվել է վճարել 43.827.940 ՀՀ դրամ և սույն մուրհակի կազմման օրվանից մինչև մարման օրը տարեկան 6 տոկոս տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարը Ընկերությանը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի (օրինական ուժի մեջ է մտել 31.10.2018 թվականին) թիվ ԵԿԴ/0003/02/14 վճռի և ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 14.12.2018 թվականին տրված կատարողական թերթի հիման վրա, վճարող՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, վճարման աղբյուր՝ ՀՀ պետական բյուջե, մուրհակի մարման օրը՝ 17.01.2020 թվական, մուրհակի վճարման վայրը՝ ՀՀ կենտրոնական բանկ, մուրհակի կազմման ամսաթիվ՝ 23.01.2019 թվական (**հատոր 2-րդ գ.թ. 85**).

4) 25.03.2019 թվականի Ընկերության սնանկության գործով կառավարչի (Ցեդենտ) և «Տոնտոն» ՍՊԸ-ի (Ցեսիոնար) միջև կնքվել է պահանջի իրավունքը զիջելու մասին պայմանագիր, որի հիման վրա Ցեդենտը զիջել է, իսկ Ցեսիոներն

ընդունել է Ցեղենստի ՀՀ ֆինանսների նախարարության թողարկած FN-19/01 սերիայի 00406 համարի 17.01.2020 թվականին մարման ժամկետով փոխանցելի մուրհակի հիման վրա Ցեղենստին պատկանող 43.827.940 ՀՀ դրամ տարեկան 6 տոկոս տոկոսադրույքով պահանջի իրավունքը, Ցեղենստի պահանջի իրավունքը նշված գումարի չափով անցնում է Ցեսիոնարին՝ սույն պայմանագիրը ստորագրելու պահին առկա ծավալով և պայմաններով: Ընդ որում, Արարատքանկի միջոցով 22.04.2019 թվականին այն փոխանցվել է Ընկերության հաշվեհամարին, որպիսի փաստն ընդունել է հայցվոր կողմը **(հատոր 2-րդ գ.թ. 80)**.

5) Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի հարկադիր կատարողը հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը և 42-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 01.02.2019 թվականի կատարողական վարույթը կարճելու մասին որոշմամբ կարճել է 19.12.2018 թվականին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի (օրինական ուժի մեջ է մտել 31.10.2018 թվականին) թիվ ԵԿԴ/0003/02/14 վճռի հիման վրա տրված կատարողական թերթի հիմքով հարուցված թիվ 04866860 կատարողական վարույթը **(հատոր 2-րդ գ.թ. 64)**.

6) ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.10.2020 թվականի վճռով Ընկերության հայցն ընդդեմ Նախարարության, պատասխանող կողմում ներգրավված ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ «Տոկոսի բռնագանձման» պահանջի մասին՝ 43.827.940 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 22.04.2016 թվականից մինչև 25.07.2016 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները հաշվարկված 1.354.462,92 ՀՀ դրամի չափով բռնագանձելու պահանջի մասով, մերժվել է հայցային վաղեմություն կիրառելու հիմքով **(հատոր 1-ին գ.թ. 13-21)**.

7) ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 06.02.2020 թվականի որոշմամբ պատասխանող կողմի միջնորդությունը՝ 43.827.940 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 25.07.2016 թվականից մինչև 22.04.2019 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները հաշվարկված 14.423.589,08 ՀՀ դրամի չափով բռնագանձման մասով հայցային վաղեմություն կիրառելու մասին, մերժվել է և թիվ ԵԴ/23470/02/19 քաղաքացիական գործի քննությունը վերսկսվել **(հատոր 1-ին գ.թ. 4-12)**.

8) ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 06.02.2020 թվականի որոշմամբ «Տավրիդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության, պատասխանող կողմում ներգրավված ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ «Տոկոսի բռնագանձման» պահանջի մասով թիվ ԵԴ/23470/02/19 քաղաքացիական գործից առանձնացվել է առանձին վարույթում ըստ «Տավրիդա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության, պատասխանող կողմում ներգրավված ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 43.827.940 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 25.07.2016 թվականից մինչև 22.04.2019 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները հաշվարկված 14.423.589,08 ՀՀ դրամի չափով բռնագանձման պահանջի մասը և այդ

առանձնացված մասով քաղաքացիական գործով քննությունը շարունակել՝ նշանակելով նախնական դատական նիստ (**հատոր 1-ին գ.թ. 2-3**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված փոփոխությունների վճարման պարտավորության առաջացման հիմքերին՝ վերահասարակելով և զարգացնելով նախկինում արդարահայրած դիրքորոշումը:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմաններին ու պահանջներին բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են

տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների: Նույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով (...):

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ պարտավորությունը պետք է կատարվի պատշաճ: Այսպես՝ պարտավորության ուժով պարտապանը պարտավոր է պարտատիրոջ օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Հակառակ դեպքում՝ պարտավորությունը խախտողի նկատմամբ առաջանում են որոշակի բացասական հետևանքներ: Մասնավորապես, եթե այդ պարտավորական հարաբերություններն ունեն դրամային բնույթ, և դրա ուժով պարտապանը պարտավոր է վճարել դրամ, ապա այդ դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու համար այդ գումարին վճարվում են նաև տոկոսներ (*տե՛ս «Դվին կոնցեն» ՓԲԸ-ն ընդդեմ Հայկանուշ Գրիգորյանի և մյուսների թիվ ԵԿԴ/1060/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի վերլուծությանը: ՀՀ վճարելի դատարանը, մասնավորապես, նշել է, որ դրամական պարտավորությունը չկատարելու համար գումարին տոկոսներ վճարելու պարտավորության ծագման հիմքն ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելն է (*տե՛ս, օրինակ, Արամ Հայրապետյանն ընդդեմ Նորիկ Գզիրյանի և մյուսների թիվ 3-502/ՎԴ քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 26.09.2008 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը վրա է հասնում հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում, և

- եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով կամ օրենքով կամ պայմանագրով վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված է որոշակի ժամանակահատվածի համար:

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման, եթե առկա է դրամային պարտավորություն, որի կատարումը խախտվել է, կամ այն չի կատարվել (*տե՛ս «Գազարին» սերմնարածական սպառողական կոոպերատիվն ընդդեմ «Նաիրի Ինշուրանս» սպահովագրական սահմանափակ պարասիանսսպիլությանը ընկերության թիվ ԵԿԴ/0735/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 22.07.2016 թվականի որոշումը*):

Վերահաստատելով և զարգացնելով վերոգրյալ դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հստակեցրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսների հաշվարկը պետք է կատարել սկսած կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝



սահմանելով նաև, որ նույն հոդվածով նախատեսված կարգը կիրառելի է քաղաքապետ այն դեպքերի համար, երբ հատուցման կամ տոկոսի այլ չափի նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Այսինքն՝ վիճարկվող գումարը վերադարձնելու պարտականության ծագման պահից սկսած, երբ անձը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում այդ պարտականությունը, առաջ է գալիս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված պարտավորության կատարման կետանցում: Նման պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի կարգավորումները կիրառելու համար էական նշանակություն ունի այն հարցերի պարզաբանումը, թե որ դրամական հարաբերությունների նկատմամբ է կիրառելի նշված իրավանորմի կանոնը և որ պահից է դրամական պարտավորությունը որակվում կետանցված:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը՝ տոկոսների հաշվարկը և բռնագանձումը, կիրառելի է այնպիսի իրավահարաբերությունների նկատմամբ, որտեղ պարտապանը պարտատիրոջը պարտավոր է վերադարձնել իր մոտ առկա պարտատիրոջը պատկանող դրամական միջոցը, սակայն խուսափում է դրանք վերադարձնելուց կամ պարտավորությունը կատարում է անպատշաճ: Նշվածից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տոկոսների բռնագանձումը պատասխանատվության միջոց է, որը կիրառելի է պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում: Ընդ որում, նշված հոդվածով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման պարտավորության կատարման ժամկետի ավարտից սկսած մինչև գումարը վերադարձնելու օրը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հավելել, որ կողմերի միջև չկատարված դրամական պարտավորության գումարը բռնագանձելու վերաբերյալ վեճի առկայության պայմաններում Դատարանի կողմից գումարի բռնագանձման վերաբերյալ վճիռ կայացնելու ժամկետը որևէ կրպ չի կարող ազդել դրամական պարտավորության կետանցի ժամկետի վրա, եթե տվյալ դրամական պարտավորությունը չի սահմանվում վճռով, այլ առկա է մինչև վճռի կայացումը: Նման դեպքերում դրամական պարտավորության գումարի բռնագանձման վերաբերյալ վճիռը ոչ թե սահմանում է նոր պարտավորություն, այլ արձանագրում է նախկինում առկա կետանցված պարտավորությունը, և ըստ այդմ էլ բռնագանձման է ենթակա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների գումարը կետանցի ժամկետին համապատասխան:

#### ***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 06.02.2020 թվականի որոշմամբ Ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Նախարարության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ «Տոկոսի բռնագանձման» պահանջի մասով թիվ ԵԴ/23470/02/19 քաղաքացիական գործից առանձնացվել է առանձին վարույթում ըստ Ընկերության հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Նախարարության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 43.827.940 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 25.07.2016 թվականից մինչև 22.04.2019 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները հաշվարկված 14.423.589,08 ՀՀ դրամի չափով բռնագանձման պահանջի մասին:

Դատարանը 06.10.2020 թվականի վճռով հայցը բավարարել է պատճառաբանելով, որ, Նախարարությունը պարտավոր էր Ընկերության կողմից լրացուցիչ կատարված աշխատանքների համար ծախսած 43.827.940 ՀՀ դրամը վճարել նշված լրացուցիչ կատարված աշխատանքների արդյունքն ընդունելուց հետո օրենքով սահմանված կարգով, սակայն Նախարարության կողմից պարտավորությունը օրենքով սահմանված կարգով չկատարելու և Ընկերության կողմից դատական պաշտպանության միջոցով գումարը բռնագանձելու պայմաններում Դատարանն անհիմն է համարել պատասխանողի և երրորդ անձի պատճառաբանությունները, որ Նախարարության համար պարտավորությունը ծագել է միայն 11.09.2017 թվականի թիվ ԵԿԴ/0003/02/14 օրինական ուժի մեջ մտած վճռի հիմքով: Միաժամանակ Դատարանը փաստել է, որ Հայաստանի Հանրապետության կողմից 23.01.2019 թվականի մուրհակի տրամադրմամբ ոչ թե դադարել է պատասխանողի պարտավորությունը պատշաճ կատարմամբ 23.01.2019 թվականի դրությամբ, այլ ընդհակառակը Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություն մուրհակում նշված գումարը մարել 17.01.2020 թվականին՝ անգամ տրամադրելով տարեկան տոկոսադրույք, ինչը հավաստում է, որ եթե մուրհակի տրամադրմամբ պարտավորությունը համարվեր կատարված, ապա մուրհակով չէր սահմանվի նաև մուրհակով տրվող պարտավորությունը տոկոսադրույքով վերադարձնելու պայման և մուրհակում Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության չէր ամրագրի, որ պարտավորվում է վճարել, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության համար մուրհակով ծագում է պարտավորություն մուրհակում նշված գումարը վճարելու վերաբերյալ:

Դատարանն արձանագրել է նաև, որ 25.03.2019 թվականին Ընկերության սնանկության գործով կառավարչի (Ցեդենտ) և «Տնտոն» ՍՊԸ-ի (Ցեսիոնար) միջև կնքվել է պահանջի իրավունքը զիջելու մասին պայմանագիր, որի հիման վրա Ցեդենտը զիջել է, իսկ Ցեսիոնարն ընդունել է Ցեդենտի ՀՀ ֆինանսների նախարարության թողարկած FN-19/01 սերիայի 00406 համարի 17.01.2020 թվականին մարման ժամկետով փոխանցելի մուրհակի հիման վրա Ցեդենտին պատկանող 43.827.940 ՀՀ դրամ տարեկան 6 տոկոս տոկոսադրույքով պահանջի իրավունքը, Ցեդենտի պահանջի իրավունքը նշված գումարի չափով անցնում է Ցեսիոնարին՝ սույն պայմանագիրը ստորագրելու պահին առկա ծավալով և պայմաններով: Ընդ որում, Արարատքանկի միջոցով 22.04.2019 թվականին այն փոխանցվել է Ընկերության հաշվեհամարին, որպիսի փաստն ընդունել է հայցվոր կողմը:

Անփոփոխելով վերոգրյալը Դատարանը գտել է, որ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության մուրհակով ստանձնած պարտավորությունը կարող էր դադարել մինչև մուրհակում նշված գումարը դրանում նշված ժամկետում վճարելը, սակայն հաշվի առնելով այն փաստը, որ 25.03.2019 թվականի Ընկերության սնանկության գործով կառավարչի (Ցեդենտ) և «Տնտոն» ՍՊԸ-ի (Ցեսիոնար) միջև կնքված պահանջի իրավունքը զիջելու մասին պայմանագրով Ընկերությունը մուրհակում նշված գումարը ստացել է 22.04.2019 թվականին, որպիսի փաստն ընդունել է Ընկերությունը, ուստիև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների հաշվարկը պետք է իրականացնել մինչև 22.04.2019 թվականը:

Վերաքննիչ դատարանը բեկանելով և փոփոխելով Դատարանի դատական ակտն արձանագրել է, որ Դատարանը չի անդրադարձել այն հանգամանքին, որ հայցվորը աշխատանքները կատարելու վերաբերյալ որևէ պայմանագիր կամ

համապատասխան գրավոր փաստաթուղթ, որով պետք է որոշվեն աշխատանքների ծավալը, արժեքը, վճարման և այլ պայմանները, չի կնքել, որպիսի պայմաններում առկա է եղել նշված հարցերի շուրջ վեճ, որը կարգավորելու նպատակով նույնիսկ հանձնաժողով է ստեղծվել և որոշակի աշխատանք կատարվել, սակայն մինևնույն է՝ հարցը լուծվել է միայն վերը նշված դատական ակտով, ինչն էլ իր հերթին հիմք է փաստելու, որ Հայաստանի Հանրապետության դրամային պարտավորությունն առաջացել է թիվ ԵԿԴ/0003/02/14 վճիռն ուժի մեջ մտնելուց հետո միայն, այսինքն՝ 31.10.2018 թվականից, որն էլ պետք է հաշվի առնվեր՝ որպես պարտավորության կատարման խախտման սկիզբ՝ նկատի ունենալով, որ այդ պահից սկսած գումարը չի վճարվել հայցվորին:

Ըստ Վերաքննիչ դատարանի Դատարանն անհիմն եզրահանգման է եկել նաև պարտավորության խախտման վերջնաժամկետը որոշելիս, քանի որ անտեսել է այն փաստը, որ 23.01.2019 թվականին FN-19/01 սերիայով թիվ 00406 փոխանցելի մուրհակը հայցվորին տալով Հայաստանի Հանրապետությունը դադարեցրել է հայցվորի գումարն ապօրինի պահելու գործողությունները և նույն մուրհակով կողմերը պայմանավորվել են վճարման ենթակա գումարը տարեկան վեց տոկոս տոկոսադրույքով 17.01.2020 թվականի մարման ժամկետին, որպիսի հանգամանքն արդեն բացառում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի՝ 23.01.2019 թվականից հետո ընկած ժամանակահատվածում կիրառումը:

Վերոնշյալին համապատասխան հաշվարկներն իրականացնելով Դատարանը պետք է գար հետևության, որ Հայաստանի Հանրապետությունից հոգուտ հայցվորի պետք է բռնագանձվեր ընդամենը պարտավորության 83 օրվա տևողությամբ խախտման համար հաշվարկված տոկոսներ՝ 1.195.970 ՀՀ դրամի չափով, քանի որ 31.10.2018 թվականից մինչև 23.01.2019 թվականն ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունը չի վճարել հայցվորին դրամային պարտավորությունը:

*Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ստորադաս դատարանների վերը նշված պարճատարանությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը՝*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը՝ տոկոսների հաշվարկը և բռնագանձումը, կիրառելի է այնպիսի իրավահարաբերությունների նկատմամբ, որտեղ պարտապանը պարտատիրոջը պարտավոր է վերադարձնել իր մոտ առկա՝ վերջինիս պատկանող դրամական միջոցը, սակայն խուսափում է դրանք վերադարձնելուց կամ պարտավորությունը կատարում է անպատշաճ: Նշվածից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տոկոսների բռնագանձումը պատասխանատվության միջոց է, որը կիրառելի է պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում: Ընդ որում, նշված հոդվածով նախատեսված տոկոսները ենթակա են հաշվեգրման և բռնագանձման **պարտավորության կատարման ժամկետի ավարտից** սկսած մինչև գումարը վերադարձնելու օրը: Հետևաբար, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետի առաջին պարբերության դրույթը կիրառելու համար հարկ է պարզել, թե որ պահից սկսած է պարտապանի մոտ առաջացել պարտավորության կետանցը, որի արդյունքում վերջինիս մոտ պահվել կամ այլ անձի հաշվին անհիմն ստացվել կամ խնայվել է գումար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել այն հանգամանքը, թե վիճելի

իրավահարաբերության մեջ պարտապանի մոտ որ պահից սկսված է ծագել պարտավորության կետանցը: Նշված հանգամանքը վեճի լուծման համար ունի էական նշանակություն, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածում ամրագրված դրույթների կիրառությունն ուղղակիորեն պայմանավորված է պարտապանի կողմից կետանցման պահի բացահայտմամբ:

Մույն գործի փաստերի համաձայն Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի (օրինական ուժի մեջ է մտել 31.10.2018 թվականին) թիվ ԵԿԴ/0003/02/14 վճռով վճռվել է Ընկերության հայցն ընդդեմ Նախարարության, երրորդ անձ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի (նախկինում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության), ՀՀ ֆինանսների նախարարության, Ընկերության սնանկության գործով կառավարիչ Ա.Կարակելյանի՝ 43.827.940 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, բավարարվել է. Նախարարությունից հօգուտ Ընկերության բռնագանձվել է 43.827.940 ՀՀ դրամ գումար:

Վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներով անդրադարձել է ինչպես պարտավորության կետանցին, այնպես էլ դրա համար նախատեսված պատասխանատվության իրավական հարցին և արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված պարտավորության կատարման կետանցումն առաջ է գալիս վիճարկվող գումարը վերադարձնելու պարտականության ծագման պահից սկսած, երբ անձը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում այդ պարտականությունը: Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածում ամրագրված դրույթների կիրառությունն ուղղակիորեն պայմանավորված է պարտապանի կողմից կետանցման պահի բացահայտմամբ: Ընդ որում, այն դեպքում, երբ պարտավարության կատարման համար ժամկետ նախատեսված չէ՝ դրանք պետք է կատարվեն պարտավորության ծագումից՝ ողջամիտ ժամկետում: Միաժամանակ՝ այդ ժամկետում պարտավորության չկատարման դեպքում օրենքով սահմանված կարգով կիրառվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը (որեն՝ «Հայաստանի ավիրուսպահովագրողների բյուրո» ՀԿ ընդդեմ Արդար Սարգսյանի և Արմեն Կարսպետյանի թիվ ԵԴ/29755/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.03.2021 թվականի որոշումը):

Վերոնշյալ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է դրամական պահանջի կետանցի փաստը: Այսինքն՝ դատական ակտով ոչ թե սահմանվել է պարտավորություն, այլ վճռվել է բռնագանձել կետանցված պարտավորության գումարը: Հետևաբար Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, որ թիվ ԵԿԴ/0003/02/14 քաղաքացիական գործով լուծվել է պայմանագրի կամ համապատասխան փաստաթղթի բացակայության պայմաններում կատարված աշխատանքի ծավալի, արժեքի, վճարման և այլ պայմանների հարցը, անհիմն է, քանի որ ինչպես նշվեց վերևում, թիվ ԵԿԴ/0003/02/14 քաղաքացիական գործի շրջանակներում հաստատված է համարվել այն փաստը, որ Նախարարության կողմից թույլ է տրվել կատարված շինարարական աշխատանքների համար գումարի վճարման կետանց: Հայաստանի Հանրապետությունից՝ որպես պարտապանից, դրամական միջոցների բռնագանձումը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի (մասնավորապես, օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի) և ՀՀ կառավարության 07.08.2000 թվականի «Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների

տրամադրման կարգը հաստատելու մասին» N 436 որոշման դրույթներով, ինչը և կատարվել է պարտապանի կողմից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները պետք է հաշվարկել և գանձել շինարարական աշխատանքների ընդունման օրվանից հաշված **մինչև մուրհակի տրամադրման օրը՝ հաշվի առնելով թիվ ԵԴ/23470/02/19 քաղաքացիական գործով դատարանի կողմից կիրառված հայցային վաղեմության ժամանակահատվածը:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ԵԴ/23470/02/19 քաղաքացիական գործով «Տավրիդա» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության, պատասխանող կողմում ներգրավված ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության՝ «Տոկոսի բռնագանձման» պահանջի մասին՝ 43.827.940 ՀՀ դրամի նկատմամբ սկսած 22.04.2016 թվականից մինչև 25.07.2016 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները՝ հաշվարկված 1.354.462,92 ՀՀ դրամի չափով, բռնագանձելու պահանջի մասով մերժվել է հայցային վաղեմություն կիրառելու հիմքով, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները պետք է հաշվարկել և գանձել ոչ թե շինարարական աշխատանքների ընդունման օրվանից, այլ 25.07.2016 թվականից մինչև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.01.2019 թվականին թիվ FN-19/01 սերիայով թիվ 00406 փոխանցելի մուրհակի տրամադրելը:

*Վերոգրյալ պարճատարանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի դեմ ՀՀ ֆինանսների նախարարության պարասխանում բերված փաստարկները:*

Անդրադառնալով Նախարարության կողմից 05.10.2021 թվականին ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխանին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրավունք ունի ներկայացնելու վճռաբեկ բողոքի պատասխան վճռաբեկ բողոքի պատճենն ստանալու օրվանից մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 15-րդ օրը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը Նախարարությունը ստացել է 13.08.2021 թվականին (հիմք՝ փոստային հավաստագիր): Հետևաբար վճռաբեկ բողոքի պատասխան կարող էր ներկայացվել մինչև 03.09.2021 թվականը ներառյալ (հաշվարկում ներառված չեն ոչ աշխատանքային օրերը): Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան վճռաբեկ բողոքի պատասխանը ներկայացվել է 06.10.2021 թվականին՝ սահմանված ժամկետի խախտմամբ և միջնորդություն չի պարունակում ժամկետի խախտումը հարգելի համարելու վերաբերյալ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը չի գնահատում ներկայացված պատասխանը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի

1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիայի) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

#### ***5. Վճռաբեկ դատարանի պարզապահանջությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ հայցադիմումների և որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ գործին մասնակցելու մասին դիմումների համար՝ գույքային պահանջով հայցազնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ բավարարված կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանի դատարան հարուցված և բողոքարկվող հայցի հայցազնի 3 տոկոսի չափով, իսկ ոչ գույքային բնույթի պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է գույքային պահանջի գործերով՝ հայցազնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս

բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից, իսկ ոչ դրամական բնույթի պահանջի գործերով՝ բազային տուրքի քսանապատիկի չափով:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճարելի բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը՝ բեկանման և փոփոխման, որի արդյունքում հայցը ենթակա է բավարարման մասնակիորեն, Վճարելի դատարանն արձանագրում է, որ պետական տուրքը պետք է բռնագանձվի հետևյալ համամասնությամբ.

- Նախարարությունից հոգուտ Ընկերության ենթակա է բռնագանձման 262.247 ՀՀ դրամ (43.827.940 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները հաշվարկել սկսած 25.07.2016 թվականից մինչև 23.01.2019 թվականը կազմում է 13.112.355 ՀՀ դրամ ( $13.112.355 \times 2\% = 262.247$ )), որպես հայցադիմումը դատարան ներկայացնելու համար սահմանված և Ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:
- Սույն գործով Նախարարության կողմից վերաքննիչ բողոքի համար նախապես վճարվել է 432.708 ՀՀ դրամ, մինչդեռ վճարման էր ենթակա 393.670 ՀՀ դրամ ( $13.112.355 \times 3\% = 393.370$ ): Ուստի Վճարելի դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի հիմքով ավել վճարված պետական տուրքը՝ 39.338 ՀՀ դրամը, ենթակա է վերադարձման Նախարարությանը:
- Նախարարությունից հոգուտ ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման բավարարված հայցապահանջի չափին համամասնորեն 393.670 ՀՀ դրամ ( $13.112.355 \times 3\% = 393.370$ )՝ որպես վճարելի բողոքի համար սահմանված և ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.08.2021 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:
- Ընկերությունից հոգուտ ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման չբավարարված հայցապահանջի չափին համամասնորեն 39.337 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք համար սահմանված պետական տուրքի գումար ( $(14.423.589 - 13.112.355) \times 3\% = 39.337$ ):
- Ընկերությունից հոգուտ ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման չբավարարված հայցապահանջի չափին համամասնորեն 19.337 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոք համար սահմանված պետական տուրքի գումար ( $(14.423.589 - 13.112.355) \times 3\% - 20.000$  ՀՀ դրամ նախապես վճարված պետական տուրքի գումար = 19.337):

Անդրադառնալով հայցվորի՝ փաստաբանի խելամիտ վարձատրությանը՝ Վճարելի դատարանը հարկ է համարում նշել, որ ՀՀ վճարելի դատարանն իր բազմաթիվ նախադեպային որոշումներով արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ «որպես դատական ծախս, թե՛ հայցվորը և թե՛ պատասխանող դատական քննության ընթացքում կարող են ներկայացնել փաստաբանի մատուցած ծառայությունների համար կատարված կամ կատարվելիք վճարումը հավաստող ապացույց»:

ՀՀ վճարելի դատարանը թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով 29.06.2012 թվականի որոշմամբ արտահայտել է նաև այն իրավական դիրքորոշումը, որ «փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի

քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավա-  
հարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործե-  
րով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման  
դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող  
գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը»:

Տվյալ դեպքում Ընկերությունը ի դեմս տնօրեն Վ. Գաբրիելյանի՝ 27.05.2019  
թվականի լիազորագրով լիազորել է Տիգրան Խուրշուդյանին և (կամ) Ժենյա  
Մինասյանին որպես ներկայացուցիչ և (կամ) փաստաբան հանդես գալ բոլոր  
ատյանների դատարաններում: Միաժամանակ «ԱԳՈԱ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԸՆ-  
ԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի ի դեմս տնօրեն Տիգրան Խուրշուդյանի և Ընկերության  
միջև 01.03.2020 թվականին կնքվել է իրավաբանական ծառայությունների վճարո-  
վի մատուցման թիվ ՔՊ-01/03-2020 պայմանագիրը, ըստ որի՝ կատարողը պար-  
տավորվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննվող  
թիվ ԵԴ/6344/02/19 և ԵԴ/4549/02/20 քաղաքացիական գործերի շրջանակներում  
պատվիրատուին մատուցել վճարովի խորհրդատվություն, դատական ներկայա-  
ցուցչություն, ինչպես նաև պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի  
պաշտպանության համար անհրաժեշտ իրավաբանական (փաստաբանական)  
ծառայություններ: Պայմանագրի գինը կազմել է՝ 500.000 ՀՀ դրամ:

Վճարել դատարանը հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով  
Ընկերության անունից վճարել բողոք է ներկայացրել Ընկերության ներկայա-  
ցուցիչ Ժենյա Մինասյանը, իսկ սույն որոշմամբ վերջինիս ներկայացրած վճա-  
րել բողոքը ենթակա է մասնակի բավարարման, ապա սույն վճարել բողոքը  
ներկայացնելու մասով փաստաբանի խելամիտ վարձատրության գումարի բռնա-  
գանձման պահանջը ենթակա է մասնակի բավարարման, այն է՝ 100.000 ՀՀ դրամ  
գումարի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարու-  
թյան օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճարել բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ  
քաղաքացիական դատարանի 09.04.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝  
«Տավրիդա» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ  
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, երրորդ անձ  
ՀՀ ֆինանսների նախարարության՝ 43.827.940 ՀՀ դրամի նկատմամբ սկսած  
25.07.2016 թվականից մինչև 22.04.2019 թվականը ՀՀ քաղաքացիական օրենս-  
գրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները հաշվարկված 14.423.589,08 ՀՀ  
դրամի չափով բռնագանձելու պահանջի մասին, բավարարել մասնակիորեն՝  
43.827.940 ՀՀ դրամի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդ-  
վածով սահմանված տոկոսները հաշվարկել սկսած 25.07.2016 թվականից մինչև  
23.01.2019 թվականը և Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ կրթության,  
գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից հօգուտ «Տավրիդա»  
ՍՊԸ-ի բռնագանձել 13.112.355 ՀՀ դրամ: Մնացած մասով հայցը մերժել:

2. Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության  
նախարարությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 393.670 ՀՀ դրամ՝ որպես



վճռաբեկ բողոքի համար սահմանված և ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 04.08.2021 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարությունից հոգուտ «Տավրիդա» ՍՊԸ-ի բռնագանձել 262.247 ՀՀ դրամ՝ հայցադիմումը դատարան ներկայացնելու համար սահմանված և «Տավրիդա» ՍՊԸ-ի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:

Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարությունից հոգուտ «Տավրիդա» ՍՊԸ-ի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության հատուցման ենթակա գումար:

Ընկերությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել չբավարարված հայցապահանջի չափին համամասնորեն 58.674 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար սահմանված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

# 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ **ՎԴ-2/0087/05/21  
2023թ.**

Քաղաքացիական գործ թիվ

ՎԴ-2/0087/05/21

Նախագահող դատավոր՝

Ն. Կարապետյան

Դատավորներ՝

Լ. Հովհաննիսյան

Լ. Գրիգորյան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

*գեկուցող* Ս. ՄԵՂՐՅԱՆ

Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 21-ին

գրավոր ընթացակարգով քննելով Տավուշի մարզի Նոյեմբերյան համայն-  
քի (այսուհետ՝ Նոյեմբերյան համայնք) և «Արմ-Հելիա Դյութի Ֆրի» սահմանա-  
փակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ  
բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2023 թվականի  
որոշման դեմ՝ ըստ «Դյութի Ֆրի Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվու-  
թյամբ ընկերության (այսուհետ՝ Հոլդինգ) հայցի ընդդեմ Նոյեմբերյան համայնքի  
ու երրորդ անձ Ընկերության՝ մրցույթն անվավեր ճանաչելու և անվավերության  
հետևանքներ կիրառելու պահանջների մասին,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Հոլդինգը պահանջել է անվավեր ճանաչել Տավուշի  
մարզի Այրում համայնքի Բագրատաշեն գյուղի 19-րդ փողոցի թիվ 69/5 հասցեում  
գտնվող՝ 11-016-0236-0110 կադաստրային ծածկագրով հատուկ նշանակության  
0,1036հա հողամասը (այսուհետ նաև՝ Հողամաս) կառուցապատման իրավունքով  
տրամադրելու 29.01.2021 թվականի մրցույթը և որպես հետևանք՝ անվավեր ճա-  
նաչել մրցույթի արդյունքում «Այրումի համայնքապետարանի աշխատակազմ»  
համայնքային կառավարչական հիմնարկի ու Ընկերության միջև 29.01.2021

թվականին կնքված՝ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապատման իրավունք տրամադրելու մասին պայմանագիրը:

ՀՀ վարչական դատարանի 24.05.2021 թվականի որոշմամբ Հոլդինգի հայցադիմումը վերահասցեագրվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 19.10.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.05.2023 թվականի որոշմամբ Նոյեմբերյան համայնքի և Ընկերության վերաքննիչ բողոքները մերժվել են, ու Դատարանի 19.10.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Նոյեմբերյան համայնքը (ներկայացուցիչ Արծրուն Անանյան) և Ընկերությունը (ներկայացուցիչ Վահե Հովսեփյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հոլդինգը (ներկայացուցիչ Էդգար Անդրեասյան):

## **2. Վճռաբեկ բողոքների հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքները քննվում են հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածները, սիսալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ, 290-րդ, 436-րդ, 438-րդ և 463-465-րդ հոդվածները, սիսալ է կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ ու 465-րդ հոդվածները, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը, խախտել է ՀՀ քաղաքացիական դատարարության օրենսգրքի 57-րդ, 59-րդ, 62-րդ և 66-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պարճատարանել են հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ պայմանագրի կնքման համար նախատեսված մրցութային իրավահարաբերությունները տվյալ դեպքում ծագել են մրցույթի կազմակերպչի՝ Տավուշի մարզի Այրում համայնքի և մրցույթին մասնակցած ու հաղթող ճանաչված անձ Ընկերության միջև: Մրցույթի ձևով իրականացվող սակարկություններից ծագող պարտավորության հիմքում ընկած իրավաբանական փաստերը միմյանց հաջորդող գործողությունների ամբողջություն են, մինչդեռ Վերաքննիչ դատարանը խնդրո առարկա մրցույթի իրավաչափությունը գնահատել է ոչ թե սույն գործով քննարկվող փաստական հանգամանքների համակցության մեջ, այլ միայն համայնքի պաշտոնական կայքում մրցույթի վերաբերյալ հայտարարությունը հրապարակված չլինելու հանգամանքի վկայակոչմամբ, որպիսի փաստը չի ապացուցվել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ մրցույթի վերաբերյալ հայտարարությունը 29.12.2020 թվականին համայնքը հրապարակել է ինչպես «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում <https://www.azdarar.am/> հասցեում, իսկ Այրում համայնքի ավագանու 25.12.2020 թվականի թիվ 54-Ա որոշումը, որով համաձայնություն է տրվել Հողամասը կառուցապատման իրավունքով մրցույթով տրամադրելու վերաբերյալ, մինչև մրցույթ հայտարարելը համայնքի պաշտոնական կայքում հրապարակված է եղել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի 1-ին կետում և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում սակարկություններն անվավեր ճանաչելու մասով կիրառված է «կարող է» եզրույթը, որն իր մեջ ներառում է դատարանի կողմից ձեռնարկվող դատավարական այն գործողությունների ամբողջությունը, որն ուղղված է գործարքի վավերության՝ սուրյեկտներին, կամահայտնությանը, բովանդակությանն ու ձևին վերաբերող պայմանների բացահայտմանը:

Վերաքննիչ դատարանը մրցույթի կազմակերպչական գործողությունների նկատմամբ կիրառել է գործարքն անվավեր ճանաչելու պայմանները, մինչդեռ անտեսել է, որ գործարքի՝ օրենքով սահմանված կարգով կնքված լինելու մասով որևէ խախտում չի եղել, իսկ սույն գործով չի ապացուցվել մրցույթի վերաբերյալ հայտարարությունը համայնքի պաշտոնական կայքում չհրապարակելով դրան մասնակցելու հնարավորությունից Հոլդինգին գրկելու փաստը:

Հիմք ընդունելով թիվ ՏԴ/2214/02/21 քաղաքացիական գործով Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 28.12.2021 թվականի վճռով Հոլդինգի՝ շահագրգիռ անձ հանդիսանալու փաստը՝ Վերաքննիչ դատարանը, որպես նախադատելի փաստ պետք է հիմք ընդուներ նաև այն, որ մրցույթի բովանդակությունը կազմող և մրցույթի օրինականությունն ամփոփող թիվ 1 արձանագրության կապակցությամբ հարուցված նշված գործով հաստատված է համարվել նաև գործարքի կողմերի կամքի ու կամահայտնության միջև անհամապատասխանություն չլինելու փաստը: Ավելին՝ մրցույթի բովանդակությունը կազմող և մրցույթի օրինականությունն ամփոփող թիվ 2 արձանագրության մասին Հոլդինգը որևէ փաստարկ չի ներկայացրել ու դրա իրավաչափությունը չի վիճարկել:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ մրցույթին մասնակցելու իրական մտադրություն ունենալու և դրան ուղղված կամահայտնության առկայության դեպքում Հոլդինգը գրկված չի եղել մրցույթի մասին տեղեկանալու, հայտ ներկայացնելու ու դրան մասնակցելու իրավունքից:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Հոլդինգը կարող էր շահագրգիռ անձ համարվել և մրցույթը վիճարկելու հայց հարուցել, եթե մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած լինելու փաստի հիմքով ձեռք բերեր հրապարակային սակարկությունների մասնակցի կարգավիճակ, կամ եթե խնդրո առարկա հողամասի նկատմամբ ունենար այլ իրավունք: Մինչդեռ Հոլդինգը մրցույթին մասնակցելու հայտ չի ներկայացրել, հետևաբար վիճարկվող մրցույթով վերջինիս որևէ իրավունք չի խախտվել:

Վերաքննիչ դատարանը մրցույթն անվավեր ճանաչման ենթակա լինելու իր եզրակացության հիմքում դրել է միայն մրցույթի մասին հայտարարությունը համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված չլինելու Հոլդինգի փաստարկը, մինչդեռ չի պատճառաբանել, թե մրցույթին մասնակցելու Հոլդինգի ենթադրյալ իրավունքն ինչու և ինչպես է գերակշռում օրենքով սահմանված կարգով մրցույթին մասնակցած, մրցույթում հաղթած, օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքած ու պայմանագրից ծագող իրավունքները պետական գրանցման ենթարկած երրորդ անձի՝ Ընկերության իրավունքներին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 23.05.2023 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

### **2.1. Վճռաբեկ բողոքների պատասխանի հիմքերը և հիմնավորումները**

Բողոքաբերների կողմից նշված պատճառաբանություններն անհիմն են, քանի որ ոչ պատշաճ ընթացակարգով մրցույթ կազմակերպելու արդյունքում Հոլդինգը զրկվել է մրցույթին մասնակցելու, ինչպես նաև դրա արդյունքում հաղթող ճանաչվելու հնարավորությունից:

Համայնքը ի դեմս պետության, հանդես է գալիս որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված անձ, կրում է օրենսդրի կողմից սահմանված լրացուցիչ գործողությունների և պարտականությունների կատարման պարտավորություն, հետևաբար համայնքային հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մրցույթին օրենսդրությամբ ներկայացվում են լրացուցիչ ու խիստ պայմաններ:

Ինչ վերաբերում է Այրում համայնքի ավագանու 25.12.2020 թվականի որոշումը համայնքի պաշտոնական կայքում հրապարկված լինելու վերաբերյալ փաստարկներին, ապա հարկ է ընդգծել, որ այն չի կարող հավասարեցվել ՀՀ հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ համայնքի պաշտոնական ինտերնետային կայքերում մրցույթի առարկայի, ձևի, անցկացման տեղի, ամսվա, օրվա, ժամի և հանձնաժողովի կողմից մշակված՝ մրցույթի պայմանների ու պահանջների, մրցույթի անցկացման կարգի, ներառյալ՝ մրցույթում մասնակցության ձևակերպման, մրցույթում հաղթած անձի որոշման, ինչպես նաև մրցույթի առարկայի նախնական գնի մասին տեղեկատվությունը հրապարակելու պահանջին, որը տվյալ պարագայում Համայնքի կողմից չի իրականացվել:

ՀՀ հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ մրցույթի վերաբերյալ տեղեկությունները մի քանի եղանակով հրապարակելու պահանջն ունի իմպերատիվ բնույթ, ուստի Հոլդինգն ունի լիարժեք իրավունք մրցույթի մասին տեղեկանալու ինչպես մրցույթի վերաբերյալ տեղեկությունների հրապարկման բոլոր եղանակներից, այնպես էլ՝ դրանից յուրաքանչյուրից առանձին:

Հոլդինգի՝ որպես շահագրգիռ անձ չհանդիսանալու վերաբերյալ բողոք բերած անձանց փաստարկների առնչությամբ պետք է հաշվի առնել, որ Հոլդինգի շահագրգռվածության փաստը հիմնավորվում է ոչ միայն ՏԴ/2214/02/21 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այլև մինչև մրցույթի անցկացումը Պետական եկամուտների կոմիտեին ուղղված գրություններով, որպիսի հանգամանքը իրականացվել է ստորադաս դատարանների կողմից: Անհրաժեշտ է ընդգծել, որ մրցույթային իրավահարաբերությունները ծագում են մի կողմից համայնքի և մյուս կողմից անորոշ թվով անձանց միջև, ուստի մրցույթի մասին իրազեկման կարգի խախտումը հանգեցնում է անորոշ թվով սուբյեկտների՝ դրան մասնակցելու հնարավորությունից զրկված լինելուն, ուստի այդ հիմքով հայցի հարուցումն ինքնին վկայում է անձի շահագրգռվածության մասին:

### **3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Տավուշի մարզի Այրում համայնքի ավագանին 25.12.2020 թվականի թիվ 54-Ա որոշմամբ համաձայնություն է տվել Այրում համայնքի Բագրատաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ Տավուշի մարզի Այրում համայնքի Բագրատաշեն գյուղի 19-րդ փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող՝ 11-016-0236-0110 կադաստրային ծածկագրով 0,1036հա հողամասը (նպատակային նշանակությունը հատուկ

նշանակության, գործառնական նշանակությունը՝ հատուկ նշանակության) սահմանված կարգով կառուցապատման իրավունքով մրցույթով տրամադրելու համար **(հատոր 1-ին, գ.թ. 22)**.

2) «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 29.12.2020 թվականի թիվ 229 (7441) համարում ներառված է հայտարարություն՝ հետևյալ բովանդակությամբ. «ՀՀ Տավուշի մարզի Այրումի համայնքապետարանը հայտարարում է՝ Այրում համայնքի Բագրատաշեն գյուղի վարչական տարածքում 19-րդ փողոց թիվ 69/5 հասցեում գրնվող 11-016-0236-0110 կադաստրային ծածկագրով հատուկ նշանակության 0.1036 հա հողամասի կառուցապատման իրավունքով մրցույթ անմաքս առևտրի խանութ կառուցելու նպատակով, 600000 դրամ արժեքի մեկնարկային վարձավճարով, քայլի չափը մեկնարկային Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի հունվարի 29-ին, Տավուշի մարզ, ք. Այրում, Արովյան 1 հասցեում, համայնքապետարանի վարչական շենքում ժամը 10:00-ին: Հայտերի ընդունումը դադարում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ: Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր և անձնագիր, ինչպես նաև մրցույթի անցկացման օրը վճարեն նախավճար՝ հողամասի մեկնարկային վարձավճարի 5%-ի չափով: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Այրումի համայնքապետարան, հեռ. 098-72-33-00» **(հատոր 1-ին, գ.թ.23-25)**.

Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում <https://www.azdarar.am/> հասցեում 29.12.2020 թվականին հրապարակվել է «Հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու համար մրցույթ» վերտառությամբ հայտարարություն՝ հետևյալ բովանդակությամբ. «ՀՀ Տավուշի մարզի Այրումի համայնքապետարանը հայտարարում է՝ Այրում համայնքի Բագրատաշեն գյուղի վարչական տարածքում 19-րդ փողոց թիվ 69/5 հասցեում գրնվող 11-016-0236-0110 կադաստրային ծածկագրով հատուկ նշանակության 0.1036 հա հողամասի կառուցապատման իրավունքով մրցույթ անմաքս առևտրի խանութ կառուցելու նպատակով, 600000 դրամ արժեքի մեկնարկային վարձավճարով, քայլի չափը մեկնարկային վարձավճարի 5%-ի: Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի հունվարի 29-ին, Տավուշի մարզ, ք. Այրում, Արովյան 1 հասցեում, համայնքապետարանի վարչական շենքում ժամը 10:00-ին: Հայտերի ընդունումը դադարում է մրցույթի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ: Մրցույթին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար սահմանված վճարի անդորրագիր և անձնագիր, ինչպես նաև մրցույթի անցկացման օրը վճարեն նախավճար՝ հողամասի մեկնարկային վարձավճարի 5%-ի չափով: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Այրումի համայնքապետարան, հեռ. 098-72-33-00:» **(հատոր 1-ին, գ.թ. 98, հատոր 3-րդ, գ.թ. 9)**.

Ընկերությունը 22.01.2021 թվականին ներկայացրել է հողամասի կառուցապատման մրցույթին մասնակցելու հայտ, որով ցանկություն է հայտնել՝ մասնակցելու Այրում համայնքում կայանալիք՝ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասի մրցույթին և վարձակալելու հատուկ նշանակության հողամասը՝ 0,1036հա մակերեսով **(հատոր 1-ին, գ.թ. 29)**.

«Հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» 29.01.2021 թվականի թիվ 1 արձանագրության համաձայն՝ Տավուշի մարզի Այրում համայնքի Բագրատաշեն գյուղի 19-րդ փողոցի թիվ 69/5 հասցեում գտնվող հատուկ նշանակության հողամասը մրցույթում առաջադրված առավելագույն՝ 600.000 ՀՀ դրամ մեկնարկային վարձավճարով տրամադրվել է Ընկերությանը **(հատոր 1-ին, գ.թ. 26)**.

«Հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու արդյունքների մասին» 29.01.2021 թվականի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Տավուշի մարզի Այրում համայնքապետարանի վարչական շենքում նույն օրն անցկացված՝ մրցույթի հանված մեկ հողակտոր՝ 0,1036հա մակերեսով հողամասի մրցույթի հաղթող է ճանաչվել Ընկերությունը (**հատոր 1-ին, գ.թ. 27**)։

Իմնք ընդունելով Տավուշի մարզի Այրում համայնքի ավագանու 25.12.2020 թվականի թիվ 54-Ա որոշումը և 29.01.2021 թվականի թիվ 1 ու թիվ 2 արձանագրությունները՝ 11-016-0236-0110 կադաստրային ծածկագրով 0,1036հա հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու համար Ընկերությանը հաղթող ճանաչելու մասին՝ Տավուշի մարզի Այրում համայնքի ղեկավար Արայիկ Պարսեյանի 29.01.2021 թվականի թիվ 09-Ա որոշմամբ 11-16-0236-0110 կադաստրային ծածկագրով 0,1036հա հատուկ նշանակության հողամասը կառուցապատման իրավունքով՝ տարեկան 600.000 ՀՀ դրամ վարձավճարով տրամադրվել է Ընկերությանը՝ 50 տարի ժամկետով։ Որոշվել է նաև մրցույթի վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա կնքել երկկողմանի պայմանագիր, ինչպես նաև կատարել պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցում (**հատոր 1-ին, գ.թ. 28**)։

«Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրումի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի՝ որպես սեփականատիրոջ, և Ընկերության՝ որպես կառուցապատողի միջև 29.01.2021 թվականին կնքված՝ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապատման իրավունք տրամադրելու մասին պայմանագրով սեփականատերը պարտավորվել է կառուցապատման նպատակով վճարի դիմաց կառուցապատման իրավունք ունեցող իրավաբանական անձին տրամադրել սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը պատկանող 11-016-0236-0110 կադաստրային ծածկագրով 0,1036հա մակերեսով անշարժ գույքը, որը գտնվում է Տավուշի մարզի Այրում համայնքի Բագրատաշեն գյուղի 19-րդ փողոցի թիվ 69/5 հասցեում (**հատոր 1-ին, գ.թ. 18-21**)։

անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03022021-11-0039 վկայականի համաձայն՝ Տավուշի մարզի Այրում համայնքի Բագրատաշեն գյուղի 19-րդ փողոցի 69/5 հողամասի՝ 0,1036հա մակերեսի նկատմամբ գրանցված է Ընկերության՝ կառուցապատման իրավունքը (**հատոր 3-րդ, գ.թ. 18**)։

#### **4. Վճռաբեկ դատարանի պայմանադրությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է.

1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և

ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի ու «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Սույն բողոքների քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ օրենքով սահմանված պահանջների խախտմանը կազմակերպված և (կամ) անցկացված մրցույթն անվավեր ճանաչելու դատարանի հայեցողական լիազորության իրականացման պայմաններին՝ հիմք ընդունելով իրավական որոշակիության և իրավունքի գերակայության պահանջներն ու մրցակցող իրավունքների հավասարակշռությունն ապահովելու անհրաժեշտությունը:*

**(Ա)** Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունը հռչակված է որպես իրավական պետություն, իսկ իրավական որոշակիության սկզբունքն իրավական պետության և հատկապես դրա կարևորագույն հատկանիշներից իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկն է, որը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտել է որպես Կոնվենցիայի անքակտելի մաս (տե՛ս ըստ *Տիգրան Ուսուրյանի դիմումի թիվ ՄԻԴ/0453/04/20 մասնկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.09.2023 թվականի որոշումը*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) մասնավորապես նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Եվրոպական դատարանը նշել է, որ ներպետական իշխանությունները, ըստ էության, ամենաարդյունավետը կարող են գնահատել, թե ինչպես են արդարադատության շահերը և օրենքի գերակայությունը դրսևորվել կոնկրետ իրադրությունում: Եվրոպական դատարանն այնուամենայնիվ ընդգծել է, որ օրենքի գերակայության սկզբունքը ներառում է հավասարապես կարևոր մի շարք այլ սկզբունքներ, որոնք չնայած



վիոխկապակցված են և հաճախ՝ լրացուցիչ, որոշակի հանգամանքներում մտնում են մրցակցության մեջ (*լրեն՝ Brumărescu v. Romania գործով Եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի, Sabeih El Leil v. France գործով Եվրոպական դատարանի 29.06.2011 թվականի, Nejdhet Şahin and Perihan Şahin-ն v. Turkey գործով Եվրոպական դատարանի 20.10.2011 թվականի, GUÐMUNDUR ANDRI ASTRADSSON-ն v. Iceland գործով Եվրոպական դատարանի 12.03.2019 թվականի վճիռները*):

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է նաև այն դիրքորոշումը, որ հին «սխալը» շտկելու անհրաժեշտությունը չպետք է անհամաչափորեն միջամտի նոր իրավունքին, որը ձեռք է բերվել անհատի կողմից՝ բարեխղճորեն ապավինելով պետական մարմինների գործողությունների օրինականությանը (*լրեն՝ Ryssovskyy v. Ukraine գործով Եվրոպական դատարանի 28.10.1999 թվականի վճիռը*):

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, նշել է, որ իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (*լրեն՝ Սահմանադրական դատարանի 09.06.2015 թվականի թիվ ՄԴՈ-1213 որոշումը*):

Սահմանադրական դատարանը հավելել է, որ իրավական որոշակիության սկզբունքն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում (*լրեն՝ Սահմանադրական դատարանի 18.04.2006 թվականի թիվ ՄԴՈ-630 և 02.04.2014 թվականի թիվ ՄԴՈ-1142 որոշումները*):

Եվրոպական դատարանը նշել է, որ իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն: Այս սկզբունքից շեղումն արդարացված է միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է էական և անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ (*լրեն՝ Ryabikh v. Russia գործով Եվրոպական դատարանի 03.12.2003 թվականի վճիռը, կետ 52, Bratyakin v. Russia գործով Եվրոպական դատարանի 09.03.2006 թվականի վճիռը, Xheraj v. Albania գործով Եվրոպական դատարանի 29.07.2008 թվականի վճիռը, կետեր 51-52-րդ*):

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել նրան պատկանող գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով (...):

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված «գույք» հասկացությունն ինքնուրույն նշանակություն ունի, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ

սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ֆորմալ դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, այնպես էլ ունեցվածք համարվող որոշակի այլ իրավունքներ ու շահեր նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև «գույք»՝ նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով ուսումնասիրման ենթակա հարցն այն է, թե արդյոք, ամբողջությամբ վերցված գործի փաստական հանգամանքներով դիմումատուին վերապահվել է իրավունք՝ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութաիրավական շահի մասով (*Կենս, օրինակ, Iatridis v. Greece գործով Եվրոպական դատարանի 25.03.1999 թվականի, Beyler v. Italy գործով Եվրոպական դատարանի 05.01.2000 թվականի և Broniowski v. Poland գործով Եվրոպական դատարանի 22.06.2004 թվականի վճիռները*):

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը բաղկացած է 3 առանձին կանոններից, որի առաջին կանոնը ձևակերպում է գույքից անարգել օգտվելու իրավունքը (*Կենս Sporrang and Lönnroth v. Sweden գործով Եվրոպական դատարանի 22.09.1982 թվականի վճիռը, կեյր 61*):

Սահմանադրության 60-րդ հոդվածի, ինչպես նաև Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունքը բացարձակ չէ, ուստի Սահմանադրությամբ և Արձանագրությամբ նախատեսվում է այն սահմանափակելու իրավական հնարավորություն: Միաժամանակ, Եվրոպական դատարանը նախատեսել է մի շարք չափանիշներ, որոնց պետք է բավարարի այդ սահմանափակումը, և որոնց առկայության դեպքում այն կարող է համարվել թույլատրելի սահմանափակում: Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե՝

1. նախատեսված է օրենքով,
2. բխում է հանրային շահից,
3. անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Առաջին պայմանը ենթադրում է համապատասխան օրենքի առկայություն, որը նախատեսում է սեփականության օգտագործման սահմանափակումները: Այն միաժամանակ պետք է բավարարի Կոնվենցիայի 1-ին Արձանագրությամբ և Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված պահանջները (*Կենս James and Others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը, կեյր 67*):

Երկրորդ պայմանը սահմանում է, որ սեփականության իրավունքի իրականացման միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ՝ ելնելով ընդհանուր, հանրային շահից (*Կենս Former king of Greece and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, կեյր 83*):

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջումներին և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի սեփականատերը ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: Կոնվենցիայի խախտում սկզբունքորեն տեղի չի ունենա, եթե առկա է կոնվենցիոն իրավունքին ավելի քիչ սահմանափակող միջոց, քան այն, որն ընտրվել է որոշակի նպատակի հասնելու համար, սակայն երկու միջոցներն էլ դուրս չեն պետության հայեցողության թույլատրելի շրջանակից: Մյուս կողմից, հետապնդվող նպատակի և

միջամտության համարժեքության հարցը լուծելիս պետք է հաշվի առնվի այլընտրանքային լուծումների առկայությունը: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյունքում հետապնդվող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից (*լռե՛ս Former king of Greec and others v. Greece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը, կետ 89, ինչպես նաև Scollo v. Italy գործով Եվրոպական դատարանի 28.09.1985 թվականի վճիռը, կետ 32*):

**(Բ)** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ սակարկություններն անց են կացվում աճուրդի կամ մրցույթի ձևով: Աճուրդում հաղթած է համարվում առավել բարձր գին առաջարկած անձը, իսկ մրցույթում՝ այն անձը, որը սակարկությունների կազմակերպիչների կողմից նախապես նշանակված մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է լավագույն պայմաններ: Սակարկությունների ձևը որոշում է վաճառվող գույքի սեփականատերը կամ իրացվող գույքային իրավունք տիրապետողը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օրենքով սահմանված կանոնների խախտմամբ անցկացված սակարկությունները շահագրգիռ անձի հայցով դատարանը **կարող է ճանաչել անվավեր:**

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է հրապարակային աճուրդների միջոցով գույքի, գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ իրավունքների իրացման, ինչպես նաև հրապարակային մրցույթների կազմակերպման հետ կապված հարաբերությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: (...):

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

*հրապարակային սակարկություններ կամ սակարկություններ*՝ աճուրդի (մրցույթի) կազմակերպման միջոցով պայմանագրերի կնքման գործընթաց, որին կարող է մասնակցել տույն օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակ.

(...)

*մրցույթ*՝ սակարկությունների ձև, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է լավագույն պայմաններ.

(...):

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 20-28-րդ հոդվածներով սահմանված են մրցույթների կազմակերպման և անցկացման կարգը:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 21-26-րդ հոդվածների պահանջների խախտմամբ կազմակերպված և անցկացված մրցույթը դատական կարգով **կարող է ճանաչվել անվավեր:**

Վերոշարադրյալ նորմերի բովանդակությունից բխում է, որ մրցույթը պայմանագրերի կնքման գործընթաց է, որում հաղթող է ճանաչվում օրենքով նախատեսված պայմաններին բավարարող այն մասնակիցը, ով սակարկությունների կազմակերպիչների կողմից նախապես նշանակված մրցութային հանձնաժողովի

գնահատմամբ առաջարկել է լավագույն պայմանները: Այլ կերպ ասած՝ մրցույթի նպատակն է գույքի, գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ իրավունքների իրացման նպատակով անձանց որոշակի շրջանակից ընտրել լավագույն պայմաններն առաջարկած սուբյեկտին ու վերջինիս հետ մտնել պայմանագրային իրավահարաբերությունների մեջ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի 1-ին կետում և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում կիրառված է **«կարող է ճանաչել անվավեր»** ձևակերպումը, ինչից հետևում է, որ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 21-26-րդ հոդվածների պահանջների խախտմամբ կազմակերպված ու (կամ) անցկացված մրցույթն անվավեր ճանաչելը դատարանի հայեցողական լիազորությունն է, երբ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գործի փաստական հանգամանքները լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելուց ու խախտման բնույթը, ծանրությունը և հետևանքները գնահատման առարկա դարձնելուց հետո դատարանն է որոշում՝ կիրառել իրավական այդ հետևանքը, թե՛ ոչ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով «հայեցողություն» եզրույթի իրավական բովանդակության բացահայտմանը, նշել է, որ այն թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու ու քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ **նպատակահարմարության ու օրինականության ողջամիտ հարաբերակցությունը**: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը:

Հիմք ընդունելով իրավական պետության հիմքում ընկած իրավունքի գերակայության սկզբունքը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ **«նպատակահարմարության» սահմանները** նախևառաջ պայմանավորված են գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզելու, կողմերի իրավահավասարության ու մրցակցության սկզբունքներն ապահովելու անհրաժեշտությամբ, միաժամանակ պայմանավորված են վիճելի իրավահարաբերության բնույթով և տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենսդրության առանձնահատկություններով (*տե՛ս ՀՀ Ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային րեսչությունն ընդդեմ անհասարձեռնարկարեր Գուրգեն Այվազյանի, Իրինա Ալոյանի, Տիգրան Այվազյանի և Արմեն Այվազյանի թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական հայեցողությունն իրավակիրառ գործընթացում դատարանին ընձեռված իրավաչափ լուծումներից որևէ մեկի ընտրության հնարավորությունն է: Անդրադառնալով դատարանների կողմից որևէ հայեցողական լիազորություն իրականացնելու իրավունքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ իրավունքը բացարձակ բնույթ չի կրում,

քանի որ դրա իրականացման ուղեգծում դատարանը կաշկանդված է անձի՝ Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերով և օրենքներով պահպանվող իրավունքներով ու օրինական շահերով: Հետևաբար՝ դատարանն իր հայեցողական լիազորությունը պետք է իրականացնի գործի փաստական հանգամանքների շրջանակներում գործին մասնակցող անձանց երաշխավորված իրավունքների և օրինական շահերի ապահովման գերակայության հաշվառմամբ՝ առաջնորդվելով իրավական պետության ու հատկապես դրա կարևորագույն հատկանիշներից **իրավունքի գերակայության**՝ իրավական որոշակիության, օրինական ակնկալիքների պահպանման և կամայականությունների կանխարգելման պահանջներով:

Եվրոպական դատարանի սահմանած չափորոշիչների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մրցույթի կազմակերպման և (կամ) անցկացման կանոնի խախտում արձանագրելու դեպքում դատարանը մրցույթն անվավեր ճանաչելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի 1-ին կետով ու «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իր հայեցողական լիազորությունն իրականացնելիս պետք է հավասարակշռի պաշտպանվող և միջամտվող շահերը՝ ապահովելով իրավունքի գերակայությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մրցույթն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացվելու դեպքերում մի կողմից առկա է մրցույթի կազմակերպման և (կամ) անցկացման կանոնների խախտման հիմքով այն վիճարկող անձի իրավունքների ապահովման, իսկ մյուս կողմից՝ մրցույթում հաղթած անձի՝ գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության, այսինքն՝ սեփականության իրավունքին անհամաչափ չմիջամտելու պահանջ:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մրցույթն անվավեր ճանաչելու իր հայեցողական լիազորությունն իրականացնելու հարցը դատարանը պետք է գնահատի նշված պաշտպանվող և միջամտվող շահերի հարաբերակցության շրջանակներում՝ յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների գնահատմամբ ողջամիտ հավասարակշռություն ապահովելով այդ իրավունքների միջև:

Այլ կերպ ասած՝ դատարանը գնահատման առարկա պետք է դարձնի այն հարցը, թե արդյո՞ք մրցույթը կայացած լինելու և նոր իրավունքներ գրանցված լինելու պայմաններում մրցույթն անվավեր ճանաչելով **իրավական որոշակիությունից շեղվելն արդարացված է**, թե ոչ՝ միաժամանակ պատճառաբանելով, որ արձանագրված խախտման հետևանքով մրցույթը վիճարկող անձի իրավունքների սահմանափակումն իր բնույթով էական ու անհաղթահարելի բնույթ ունեցող այնպիսի խախտում է, որը հնարավոր չէ վերականգնել առանց իրավական որոշակիության սկզբունքից շեղվելու՝ **մյուս անձի սեփականության իրավունքին միջամտելու**, կամ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ:

(Գ) Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նկատմամբ գույքային իրավունքների իրացման մրցույթները կազմակերպելու և անցկացնելու կարգը սահմանվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ հողային օրենսգրքով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը **կառուցապարմանն նպատակով** կարող են փոխանցվել այլ անձանց միայն սեփականության իրավունքով, բացառությամբ (...) Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերի, որոնց փոխանցումը սեփականության իրավունքով արգելված է:

ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության և համայնքների սեփականության հողամասերը տրամադրվում են սեփականության, **կառուցապարմանն** կամ օգտագործման իրավունքով: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը **կառուցապարմանն նպատակով** կարող են տրամադրվել այլ անձանց միայն սեփականության իրավունքով, բացառությամբ նույն օրենսգրքով սահմանված՝ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերի, որոնց տրամադրումը սեփականության իրավունքով արգելված է (...):

ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք **հասրով նշանակության հողեր**, պետական կամ համայնքային գերեզմանատներ են, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Մինչև 23.07.2021 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետի համաձայն՝ հողամասերի օտարումը, **կառուցապարմանն** և օգտագործման իրավունքի տրամադրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, նույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ համայնքի վարչական տարածքում՝ համայնքի ղեկավարի կողմից (բացի օրենքով սահմանված դեպքերից):

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ նույն կարգի V, VIII և VIII. II բաժիններով սահմանված՝ աճուրդային կարգով հողամասերի օտարման և մրցության կարգով վարձակալության կամ **կառուցապարմանն իրավունքի** տրամադրման մասին հայտարարությունները **պարտադիր հրապարակվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում**, (...):

Կարգի 46.2-րդ կետի համաձայն՝ հողամասերի **կառուցապարմանն իրավունքը** տրամադրվում է միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 481-րդ հոդվածով սահմանված նորմերին և կանոններին համապատասխան (...):

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ մրցույթները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ, 78-րդ, 79-րդ և 80-րդ հոդվածներով սահմանված կարգով:

ՀՀ հողային օրենսգրքի 481-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը **կառուցապատման իրավունքով** տրամադրվում են **մրցույթով՝ նույն օրենսգրքի 76-80-րդ հոդվածներով սահմանված կարգով**, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

ՀՀ հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մրցույթն անցկացնելուց մեկ ամիս առաջ *զանգվածային լրատվության միջոցներով և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների՝ <http://www.azdarar.am>*, ինչպես նաև *համապարասիսան համայնքի պաշտոնական ինտերնետային կայքերում*՝ հանձնաժողովը տեղեկատվություն է հրապարակում մրցույթի առարկայի, ձևի, անցկացման տեղի, ամսվա, օրվա, ժամի և հանձնաժողովի կողմից մշակված՝ մրցույթի պայմանների ու պահանջների, մրցույթի անցկացման կարգի, ներառյալ՝ մրցույթում մասնակցության ձևակերպման, մրցույթում հաղթած անձի որոշման, ինչպես նաև մրցույթի առարկայի նախնական գնի մասին:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե օրենքով այլ բան սահմանված չէ, ապա մրցույթի կազմակերպիչը մրցույթի անցկացման մասին կատարում է *հրապարակային ծանուցում այդ թվում՝ <https://www.azdarar.am/> հասցեում գրվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում*՝ մրցույթն սկսվելուց առնվազն 30 օր առաջ:

Վերոշարադրյալ նորմերի բովանդակությունից բխում է, որ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հատուկ նշանակության հողամասերը քաղաքացիներին ու իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցելն արգելված է (օրենքով կարող են նախատեսվել բացառություններ), իսկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը կարող են համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիներին և իրավաբանական անձանց տրամադրվել **կառուցապատման իրավունքով**՝ մրցույթի միջոցով, որը կազմակերպվում ու անցկացվում է ՀՀ հողային օրենսգրքով, «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով և Կարգով սահմանված կանոններով:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մրցույթի կազմակերպման փուլերից մեկը դրա մասին հրապարակային ծանուցելն է, որն իրականացվում է զանգվածային լրատվության միջոցներում, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում <https://www.azdarar.am/> հասցեում և համապատասխան համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն հրապարակելու միջոցով: Ընդ որում, մրցույթի վերաբերյալ հայտարարություն հրապարակելու նպատակը մի կողմից անձանց անորոշ շրջանակին մրցույթի անցկացման, դրա պայմանների և պահանջների, մրցույթի առարկայի մասին տեղեկացնելն է, մյուս կողմից՝ մրցույթի կազմակերպման ու անցկացման ոլորտում հրապարակայնություն, թափանցիկություն և հաշվետվողականություն ապահովելն է:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մրցույթի կազմակերպչի կողմից դրա անցկացման մասին հայտարարություն հրապարակելու կանոնի խախտում թույլ տրված լինելու դեպքերում դատարանները պետք է գնահատման առարկա դարձնեն այդ խախտման՝ մրցույթի հավանական մասնակիցների իրավունքների, ինչպես նաև դրանց իրացման իրական հնարավորության վրա ունեցած ազդեցության ծավալը՝ յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների հետազոտման միջոցով պարզելով, թե արդյո՞ք հրապարակային մի քանի աղբյուրներում հայտարարություն հրապարակելու որևէ կանոնի խախտումն իր բնույթով այնպիսին է, որ խաթարել է մրցույթի կազմակերպման այդ փուլի նպատակը՝ հանգեցնելով մրցույթի հավանական մասնակիցների իրավունքների անդառնալի խախտման և նրանց գրկելով մրցույթի մասին տեղեկանալու ու դրան մասնակցելու իրական հնարավորությունից:

Շարադրվածի լույսի ներքո Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մրցույթի անցկացման մասին հայտարարություն հրապարակելու կանոնի ցանկացած խախտում չէ, որ պետք է հանգեցնի դատարանի կողմից մրցույթն անվավեր ճանաչելու հայեցողական լիազորության իրականացման: Մրցույթի հավանական մասնակիցների տեղեկացված լինելու և մրցույթին մասնակցելու իրավունքների ու մրցույթում հաղթած անձի ձեռք բերած նոր իրավունքների միջև ողջամիտ հարաբերակցություն ապահովելու միջոցով դատարանները պետք է հանգեն այն եզրակացության, որ ***թույլ տրված խախտման հետևանքով ստացացած հետևանքները էական և անհաղթահարելի բնույթ ունեցող այնպիսի հանգամանքներ են, որոնք արդարացնում են իրավական որոշակիության սկզբունքից շեղվելը՝ մյուս անձի սեփականության իրավունքի միջամտությունը դարձնելով համաչափ, կամ գործով առկա լուրջ իրավաչափ նկարատումները*** գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տավուշի մարզի Այրում համայնքի ավագանին իր 25.12.2020 թվականի թիվ 54-Ա որոշմամբ համաձայնություն է տվել Այրում համայնքի Բագրատաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող հատուկ նշանակության Հողամասը սահմանված կարգով կառուցապատման իրավունքով մրցույթով տրամադրելու համար:

29.12.2020 թվականին «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի թիվ 229 (7441) համարում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցանների պաշտոնական ինտերնետային կայքում <https://www.azdarar.am/> հասցեում հրապարակվել են Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթի անցկացման վերաբերյալ հայտարարություններ:

29.01.2021 թվականին կայացած մրցույթում հաղթող է ճանաչվել Ընկերությունը:

Ի կատարումն Տավուշի մարզի Այրում համայնքի ղեկավար Արայիկ Պարսեյանի 29.01.2021 թվականի թիվ 09-Ա որոշման՝ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրումի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի՝ որպես սեփականատիրոջ, և Ընկերության՝ որպես կառուցապատողի միջև 29.01.2021 թվականին կնքվել է պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապատման իրավունք տրամադրելու մասին պայմանագիր, որով սեփականատերը պարտավորվել է կառուցապատման նպատակով վճարի դիմաց կառուցապատման իրավունք ունեցող իրավաբանական անձին տրամադրել սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետությանը պատկանող՝ 11-016-0236-0110 կադաստրային ծածկագրով 0,1036հա մակերեսով անշարժ գույքը, որը գտնվում է Տավուշի մարզի Այրում համայնքի Բագրատաշեն գյուղի 19-րդ փողոցի թիվ 69/5 հասցեում:

Նշված պայմանագրի հիման վրա Հողամասի՝ 0,1036 մակերեսի նկատմամբ գրանցվել է Ընկերության կառուցապատման իրավունքը:

Դիմելով դատարան՝ Հողինգը պահանջել է անվավեր ճանաչել 29.01.2021 թվականի մրցույթը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել նաև մրցույթի արդյունքում «Այրումի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի ու Ընկերության միջև 29.01.2021 թվականին կնքված՝



պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը:

Դատարանը 19.10.2022 թվականի վճռով հայցը բավարարել է՝ այն պատճառաբանությամբ, որ «(...) հայտարարված մրցույթը կայացել է հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով, որի հաղթող է ճանաչվել «Արմ-Հելիա Դյուրի Ֆրի» ՍՊ ընկերությունը, որպիսի պայմաններում Դատարանը գործում է, որ հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրվել է ՀՀ կառավարության 2001թ. սպրիլի 12-ի N 286 որոշման 48-րդ կետի խախտմամբ, քանի որ վերոնշյալ մրցույթը իրականացվել է ՀՀ հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ, մասնավորապես Այրումի համայնքապետարանի կողմից 29.12.2020 թվականին հայտարարված՝ Հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու համար մրցույթի տեղեկարկությունը Այրում համայնքի պաշտոնական ինտերնետային կայքէջում չի հրատարակվել, որի արդյունքում «Դյուրի Ֆրի Հոլդինգ» ՍՊ ընկերությունը զրկվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիշյալ մրցույթին մասնակցելու հնարավորությունից, (...) իսկ պարասխանող կողմը, ինչպես նաև սույն քաղաքացիական գործով երրորդ անձն այն հրատարակելու վերաբերյալ որևէ սպացույց դատարան չեն ներկայացրել (...)»:

Վերաքննիչ դատարանը 23.05.2023 թվականի որոշմամբ Նոյեմբերյան համայնքի և Ընկերության վերաքննիչ բողոքները մերժել է, պատճառաբանելով, որ՝

- «(...) պետական սեփականություն հանդիսացող հողամասերի դեպքում օրենսդիրը պարտադիր է համարել <http://www.azdarar.am> հասցեում գրվվող Հայաստանի Հանրապետության հրատարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում մրցույթի մասին հայտարարություն հրատարակելուն զուգահեռ զանգվածային լրատվության միջոցներով և համապարասխան համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն հրատարակելը (...)»:

- «(...) վերոնշյալ երեք գործողությունների միաժամանակյա կատարումն անհրաժեշտ, բավարար և պարտադիր պայման է մրցույթի վավերությունն ապահովելու տեսանկյունից, իսկ այդ պահանջներից որևէ մեկի չկատարումը հանգեցնում է մրցույթի անցկացման ընթացակարգային այնպիսի խախտման, ինչպիսին է մրցույթի մասին հնարավոր շահագրգիռ բոլոր անձանց պարզաձև ծանուցված լինելու իրավունքը, որի առկայությունը բացառում է այդ մրցույթը վավեր համարելու հնարավորությունը, ինչը հրատարակային սակարկությունների անցկացման համար առանցքային հարց է, սակարկությունների բնույթից բխող»:

- «(...) այն դեպքում, երբ օրենքով նախատեսված, մրցույթի օրինականության ապահովման համար անհրաժեշտ և շահագրգիռ անձանց մրցույթին մասնակցելու իրավունքի ապահովմանն ուղղված ընթացակարգային կանոնները չեն պահպանվել, ապա շահագրգիռ անձի՝ մրցույթին մասնակցելու իրավունքի խախտման առկայությունն առաջանում է ինքնաբերաբար: (...) ՀՀ հողային օրենսգրքով նախատեսված հայտարարություն տարածելու եղանակներից որևէ մեկի բացակայության դեպքում անձը չի կարող համարվել պարզաձև ծանուցված մրցույթի մասին և պարզաձև ծանուցման բացակայության պայմաններում չի կարող կրել մրցույթին մասնակցության հայտ չներկայացնելու բացասական հետևանքները»:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Դատարանն արձանագրել, իսկ Վերաքննիչ դատարանը վերահաստատել է, որ Այրում համայնքի պաշտոնական ինտերնետային կայքէջում մրցույթի մասին հայտարարություն չի հրատարակվել, այսինքն՝ մրցույթին մասնակցելու իրավունքի ապահովմանն ուղղված ընթացակարգային կանոնները չեն պահպանվել և Հոլդինգը զրկվել է հիշյալ մրցույթին մասնակցելու հնարավորությունից: Վերաքննիչ դատարանը հավելել է, որ

մրցույթի մասին հայտարարությունը գանգվածային լրատվության միջոցներում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում <https://www.azdarar.am/> հասցեում և համապատասխան համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու պահանջներից որևէ մեկի չկատարումն ընթացակարգային այնպիսի խախտում է, որն «*ինքնաբերաբար*» հանգեցնում է շահագրգիռ անձանց պատշաճ ծանուցված լինելու իրավունքի խախտմանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները և սույն գործի փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է աճուրդն անվավեր ճանաչելու լիազորության հայեցողական լինելու հանգամանքը, ինչը նշանակում է, որ մրցույթի կազմակերպման և (կամ) անցկացման, այդ թվում՝ հայտարարություն հրապարակելու կանոնի ցանկացած խախտում «*ինքնաբերաբար*» դատարանի համար չի առաջացնում աճուրդն անվավեր ճանաչելու լիազորության իրականացում, քանի որ, ինչպես արդեն իսկ վերը նշվեց, դատական հայեցողության սահմաններում դատարանները կաշկանդված են անձանց երաշխավորված իրավունքների ու օրինական շահերի ապահովման գերակայության պահանջով: Ուստի անձանց մրցակցող իրավունքների առկայության դեպքերում հայեցողական որևէ լիազորություն գործնականում իրականացնելու կամ դրանից ձեռնպահ մնալու որոշում կայացնելիս դատարանները պետք է ողջամիտ հավասարակշռություն ապահովեն այդ իրավունքների միջև՝ պարզելով կոնկրետ իրադրությունում այդ լիազորությունն իրականացնելու անհրաժեշտությունը:

Տվյալ դեպքում ստորադաս դատարաններն արձանագրել են, որ Այրում համայնքի պաշտոնական ինտերնետային կայքէջում մրցույթի մասին հայտարարություն չհրապարակելու պայմաններում Հոլդինգը գրկվել է Հողամասի կառուցապատման մրցույթին մասնակցելու հնարավորությունից: Այսինքն՝ արձանագրելով մրցույթի մասին Հոլդինգի տեղեկացված լինելու և դրան մասնակցելու իրավունքների խախտում՝ ստորադաս դատարաններն իրավաչափ են համարել այդ իրավունքների պաշտպանության նպատակով մրցույթն անվավեր ճանաչելու հայեցողական լիազորության իրականացումը: Մինչդեռ ստորադաս դատարաններն անտեսել են, որ Հոլդինգի ենթադրյալ խախտված իրավունքներին զուգահեռ առկա է մրցույթի արդյունքում Ընկերության ձեռք բերած նոր իրավունքի պաշտպանության և պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիությունն ապահովելու անհրաժեշտություն, ուստի մրցույթն անվավեր ճանաչելու հարցն անհրաժեշտ է քննարկել այդ իրավունքների հարաբերակցության մեջ՝ պարզելով սեփականության իրավունքին միջամտելու, համապատասխանաբար նաև իրավական որոշակիության սկզբունքից շեղվելու պայմանների առկայությունը:

Ավելին՝ ստորադաս դատարաններն անտեսել են, որ Հողամասի կառուցապատման իրավունքի մրցույթի մասին հայտարարությունը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում <https://www.azdarar.am/> հասցեում 29.12.2020 թվականին հրապարակված լինելու պայմաններում Հոլդինգը չի վիճարկել նշված հրապարակային աղբյուրներից մրցույթի մասին տեղեկանալու հնարավորության փաստը: Մասնավորապես՝ Հոլդինգը չի ներկայացրել դիրքորոշում առ այն, որ մրցույթի մասին նշված երկու հրապարակային և առավել հանրամատչելի աղբյուրներում հրապարակված հայտարարություններին

իրենից անկախ պատճառներով ինքը հասանելիություն չի ունեցել, որպիսի պայմաններում մրցույթի մասին կարող էր տեղեկանալ **միայն Այրում համայնքի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակված հայտարարությամբ:**

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մրցույթի մասին հայտարարությունը նաև համապատասխան համայնքի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակելու կանոնն ինքնանպատակ չէ և միտված է մրցույթի հրապարակայնությունն ապահովելուն, այդուհանդերձ կայացած մրցույթի ու դրա արդյունքում նոր իրավունքներ ծագած լինելու պայմաններում գնահատման առարկա պետք է դարձնել այն հարցը, թե արդյո՞ք նշված ինտերնետային կայքէջում հայտարարություն չհրապարակելը հանգեցրել է մրցույթի մասին Հոլդինգի տեղեկացված լինելու և դրան մասնակցելու իրավունքների խախտման, ու արդյո՞ք այդ իրավունքը գերակա է իրավական որոշակիությունը խախտելու և Ընկերության սեփականության իրավունքին միջամտելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև Հողամասի կառուցապատման իրավունքի մրցույթի մասին հայտարարությունն Այրում համայնքի պաշտոնական ինտերնետային կայքէջում չհրապարակելով թույլ է տրվել մրցույթի կազմակերպման՝ ՀՀ հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում, այդուհանդերձ Հոլդինգը զրկված չի եղել «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթից և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցմաների պաշտոնական ինտերնետային կայքի <https://www.azdarar.am/> հասցեից, որոնք ունեն առավել լայն հասանելիություն, մրցույթի մասին տեղեկանալու, ինչպես նաև մասնակցության հայտ ներկայացնելու **իրական հնարավորությունից:** Ուստի ՀՀ հողային օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի խախտումը չի հանգեցրել Հոլդինգի տեղեկացված լինելու և մրցույթին մասնակցելու իրավունքների **էական ու անհաղթահարելի բնույթ ունեցող** այնպիսի խաթարման, որն արդարացնում է Ընկերության սեփականության իրավունքին միջամտելու միջոցով իրավական որոշակիության սկզբունքից շեղվելը, ինչպես նաև առկա չեն իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ գերակայող իրավաչափ նկատառումներ:

*Վերոգրյալ պատճառաբանությամբ միաժամանակ հերքվում են վճռաբեկ բողոքների պարասխանի հիմնավորումները:*

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 465-րդ հոդվածի 1-ին կետի և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում թույլ տրված լինելու մասին վճռաբեկ բողոքներում նշված փաստարկները, հետևաբար վճռաբեկ բողոքների հիմքի առկայությունը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 23.05.2023 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի

լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### ***5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքների բավարարման արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է ամբողջությամբ բեկանման և փոփոխման, իսկ դրա արդյունքում Հոդինգի հայցը՝ մերժման, Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ, 103-րդ, 109-րդ ու 112-րդ հոդվածները, մինչև 30.10.2021 թվականը գործած խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է լուծել հետևյալ կերպ.

Մինչև 30.10.2021 թվականը գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի բովանդակությունից բխում է, որ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ ոչ դրամական պահանջով՝ բազային տուրքի քառապատիկի չափով:

Նույն հոդվածի 6-րդ կետի «բ» ենթակետի բովանդակությունից բխում է, որ դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ ոչ դրամական պահանջի գործերով՝ բազային տուրքի տասնապատիկի չափով:

Նույն հոդվածի 7-րդ կետի «բ» ենթակետի բովանդակությունից բխում է, որ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ ոչ դրամական պահանջի գործերով՝ բազային տուրքի քսանապատիկի չափով:

Մինչև 30.10.2021 թվականը գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Տվյալ դեպքում Հոլդինգն իր հայցադիմումին կցել է 4.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարման փաստը հաստատող ապացույց, ուստի Դատարանում պետական տուրքի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Սույն գործով ներկայացվել է մեկ հիմնական ոչ դրամական պահանջ, հետևաբար Դատարանի 19.10.2022 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար տվյալ դեպքում ենթակա էր վճարման 10.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումար:

Դատարանի 19.10.2022 թվականի վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքներից յուրաքանչյուրի համար Նոյեմբերյան համայնքը և Ընկերությունը ներկայացրել են 30.000-ական ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարման փաստը հաստատող ապացույցներ:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հոլդինգից հոգուտ Նոյեմբերյան համայնքի և Ընկերության ենթակա է բռնագանձման 10.000-ական ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքներ ներկայացնելու համար օրենքով սահմանված չափով վճարված պետական տուրքի գումար, իսկ Նոյեմբերյան համայնքի ու Ընկերության կողմից ավել վճարված 20.000-ական ՀՀ դրամները ենթակա են նրանց վերադարձման՝ օրենքով սահմանված կարգով:

Վճռաբեկ բողոքներին կից Նոյեմբերյան համայնքը և Ընկերությունը ներկայացրել են 40.000-ական ՀՀ դրամի չափով պետական տուրքի վճարման փաստը հաստատող ապացույցներ: Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հոլդինգից հոգուտ Նոյեմբերյան համայնքի և Ընկերության տվյալ դեպքում ենթակա է բռնագանձման 20.000-ական ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար օրենքով սահմանված չափով վճարված պետական տուրքի գումար, իսկ Նոյեմբերյան համայնքի ու Ընկերության կողմից ավել վճարված 20.000-ական ՀՀ դրամները ենթակա են նրանց վերադարձման՝ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի և «Արմ-Հելիա Դյուրի Ֆրի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2023 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «Դյուրի Ֆրի Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ու երրորդ անձ «Արմ-Հելիա Դյուրի Ֆրի» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության՝ մրցույթն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, մերժել:

2. «Դյութի Ֆրի Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հոգուտ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի բնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար:

3. «Դյութի Ֆրի Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից հոգուտ «Արմ-Հելիա Դյութի Ֆրի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/29387/02/19	2023թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/29387/02/19	
Նախագահող դատավոր՝	Ն. Մարգարյան	
Դատավորներ՝	Կ. Համբարձումյան Հ. Ենոքյան	

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող և զեկուցող</i>	Գ. ՀԱԿՈԲՅԱՆ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ
-----------------------------	--

2023 թվականի մայիսի 30-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.05.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ Լուսինե Նալբանդյանի հայցի ընդդեմ Ընկերության, երրորդ անձինք «Օպտիմուս Լեքս» ՍՊԸ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության՝ պայմանագրի անվավերության հետևանք կիրառելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Լուսինե Նալբանդյանը պահանջել է որպես իր և Ընկերության միջև 19.06.2018 թվականին կնքված վարկային պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) անվավերության հետևանք իրենից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 8.624.703 ՀՀ դրամ՝ որպես վարկի մնացորդի գումար, իսկ Ընկերությունից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 2.135.700 ՀՀ դրամ՝ որպես ստացված տոկոսների հանրագումար:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 26.11.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է անվավեր ճանաչել Պայմանագրի 1.3 կետը, որի

համաձայն՝ սահմանվել է վարկի 59.94 տոկոսադրույք. մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.05.2021 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 26.11.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ Միսակ Բաբաջանյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ, 881-րդ և 887-րդ հոդվածները, «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 4-րդ և 13-15-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ և 381-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես անհիմն է հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տոկոսադրույքի սահմանափակման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածը զետեղված է նույն օրենսգրքի 46-րդ գլխում, որը վարկային պայմանագրի նկատմամբ կիրառելի չէ, եթե վարկային պայմանագրով այլ պայման է նախատեսված:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տարեկան փաստացի տոկոսադրույքի նման չափը պետք է դիտարկել որպես վարկային պայմանագրով սահմանված՝ փոխառության պայմանագրի համար սահմանված կանոններից տարբերվող այլ պայման:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ տարեկան փաստացի տոկոսադրույքը ոչ թե հաճախորդին տրված գումարի վրա հաշվարկվող «մեկ այլ տոկոսադրույք» կամ «բողարկված տոկոսադրույք» է, այլ այն բոլոր ծախսերի տոկոսային արտահայտումն է, որը սպառողը կատարում է կրեդիտի (վարկի) ստացման, դրա հետագա սպասարկման, օգտագործման, մարման համար, այսինքն՝ այն առհասարակ «իրական տոկոս» չէ:

Ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանն իրենց որոշմամբ միջամտել են Ընկերության և սույն գործով հայցվորի միջև առկա մասնավոր պայմանագրային իրավահարաբերություններին՝ սահմանելով, որ վարկատու և վարկառու կողմերի միջև վարկի տրամադրման ու հետագա սպասարկման համար հարակից ծառայությունների արժեքն անվավեր է, եթե այն *«համարյա համարժեք է տոկոսավճարներին»*: Մինչդեռ որևէ իրավական հիմք նման պարզաբանման կամ սահմանափակման համար առկա չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 12.05.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության, կամ բեկանել և փոփոխել այն՝ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝



1) Ընկերության և Լուսինե Նալբանդյանի միջև 19.06.2018 թվականին կնքվել է թիվ CV18-S4201 վարկային պայմանագիրը, որի 1.1. կետի համաձայն՝ Վարկատուն պարտավորվել է Վարկառուին միանվագ տրամադրել կանխիկ (սպառողական) 8.670.000 ՀՀ դրամի չափով վարկ մինչև 19.06.2028 թվականը մարելու ժամկետով, իսկ Վարկառուն պարտավորվել է Պայմանագրով սահմանված ժամկետում վերադարձնել վարկը և տոկոսներ վճարել դրա դիմաց (**հատոր 1-ին, գ.թ. 12, 13**).

2) Պայմանագրի 1.2. կետի համաձայն՝ վարկը տրամադրվել է տարեկան 24% տոկոսադրույքով, իսկ վարկի տրամադրման պահին փաստացի տարեկան տոկոսադրույքը կազմել է 59.94%, որի մեջ ներառված են նաև վարկավորման հետ կապված Վարկառուի ծախսերը՝ վարկի կանխիկացման գումարը, որը կազմում է վարկի գումարի 0.3 տոկոսը, տրանսպորտային միջոցի գնահատման վճարը, որը կազմում է 7.000 ՀՀ դրամ և վարկի տրամադրման միանվագ վճարը՝ վարկի գումարի 1.7 տոկոսի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 12, 13**).

3) Պայմանագրի 2.3.1. կետի համաձայն՝ Վարկառուն իրավունք ունի ժամկետից շուտ մարել վարկը և վճարել հաշվարկված տոկոսներն ու այլ վճարներ:

Պայմանագրի 2.4.2. կետի համաձայն՝ Վարկառուն պարտավորվել է Պայմանագրով սահմանված ժամկետներում մարել վարկը և վճարել վարկի դիմաց հաշվարկված տոկոսագումարներն ու Պայմանագրով սահմանված այլ պարտադիր վճարները (**հատոր 1-ին, գ.թ. 12, 13**).

4) Պայմանագրի 1.7. կետի համաձայն՝ վարկը տրամադրվել է սպառողական նպատակով (**հատոր 1-ին, գ.թ. 12, 13**):

#### **4. Վճուրքի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճուրքի դատարանն արձանագրում է, որ սույն վճուրքի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ, 881-րդ և 887-րդ հոդվածների, «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 4-րդ և 13-15-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ և 381-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճուրքի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցերին.*

1) արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածով սահմանված՝ փոխառության պայմանագրի փոփոխման ատավելագույն չափի վերաբերյալ օրենսդրական պահանջը կիրառելի է նաև վարկային պայմանագրով նախատեսված փոփոխման չափի նկատմամբ, եթե վարկային պայմանագրով նախատեսված է այլ փոփոխաչափ,

2) արդյո՞ք վարկային պայմանագրի առարկա հանդիսացող վարկի նկատմամբ հաշվեգրվող փոփոխագումարը և վարկային պայմանագրի տարեկան փաստացի փոփոխադրույքը նույնական են, ու արդյո՞ք վարկային պայմանագրով սահմանվող տարեկան փաստացի փոփոխադրույքի չափի նկատմամբ ևս ենթակա է կիրառման

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածով սահմանված՝ փոխառության պայմանագրի փոխաների չափի վերաբերյալ սահմանափակումը:

1. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Քաղաքացիական իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով (հոդված 438):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (ինպերատիվ նորմերին):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է պայմանագրի ազատությանը և արձանագրել, որ օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովելու քաղաքացիական օրենսդրության վերը նշված սկզբունքներից կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության, քաղաքացիական իրավունքներն իրենց կամքով և ի շահ իրենց ձեռք բերելու ու իրականացնելու, պայմանագրի հիման վրա իրենց իրավունքները և պարտականություններն ազատ

սահմանելու, պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման որոշելու սկզբունքների իրականացումը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների մասնակիցների՝ կողմերի համար նախատեսել է հնարավորություն՝ կնքելու ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր և սահմանելու պայմանագրի պայմանները, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով:

Օրենսդիրը միաժամանակ նախատեսել է մասնավոր գործերին կամայական միջամտության անթույլատրելիության սկզբունքը, որը ենթադրում է, որ պետական իշխանության կամ տեղական ինքնակառավարման մարմինները, ցանկացած այլ անձինք իրավասու չեն միջամտել քաղաքացիական իրավունքի սուբյեկտների գործերին, եթե նրանք իրենց գործունեությունն իրականացնում են օրենքի պահանջներին համապատասխան: Նշված սկզբունքը ենթադրում է նաև, որ որևէ անձ, այդ թվում նաև դատարանն իրավունք չունի կամայականորեն միջամտելու կողմերի պայմանագրային հարաբերություններին՝ իր հայեցողությամբ պայմանագրային որևէ դրույթ փոփոխելու եղանակով: Դատարանը պայմանագրի որևէ դրույթ իրավասու է փոփոխել միայն համապատասխան հայցապահանջի առկայության պայմաններում: Նման եզրահանգումը բխում է ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ գլխի (Պայմանագիր փոփոխելը և լուծելը) իրավակարգավորումից, այլև դատարանի՝ որպես պետական իշխանության մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակից: *(տե՛ս «Ֆինպեքս» ՄՊԸ-ն ընդդեմ «Մեդարս» ԲԲԸ-ի թիվ ԵՄԳ/0492/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխատուն իրավունք ունի փոխառության գումարից տոկոսներ ստանալ փոխառուից, եթե այլ բան նախատեսված չէ փոխառության պայմանագրով: Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նաև արձանագրել է, որ փոխառության պայմանագիրը գրավոր ձևով կնքվող գործարք է, որի ուժով փոխատուն փոխառուին է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով փոխատուին վերադարձնել փոխառության գումարը կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք: Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրանով նախատեսված դրամը կամ այլ գույքը հանձնելու պահից *(տե՛ս Հասե Սահակյանն ընդդեմ Լեոնիդ Ներսիսյանի թիվ ԵԲԳ/0916/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2011 թվականի, Հրանտ Ալեքիսյանն*

ընդդեմ «Տրանստնիվերսալ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԳ/4542/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի, Ժիրայր Հակոբյանն ընդդեմ Ռուզաննա Վարդանյանի թիվ ԵԷԳ/0313/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումները):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարկային պայմանագրով բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով:

Պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք է նաև վարկային պայմանագիրը, որը, լինելով երկկողմանի պայմանագիր, սահմանում է վարկառուի (պարտապանի) հիմնական պարտականությունը՝ վարկատուին (պարտատիրոջը) վերադարձնել վարկային պայմանագրով ստացված գումարը և տոկոսներ վճարել դրանից: **Ընդ որում, օրենսդիրը սահմանել է, որ վարկային իրավահարաբերությունների վրա փոխառության իրավահարաբերությունների ընդհանուր կանոնները տարածվում են, եթե այլ բան նախատեսված չէ վարկային պայմանագրով և վարկային իրավահարաբերությունների ընդհանուր կանոններով:**

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ նաև արձանագրել է, որ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոխառությանը վերաբերող 46 գլխով նախատեսված կանոնները չեն կիրառվում, եթե վարկային պայմանագրով կողմերը սահմանել են այլ կանոններ: Ընդ որում օրենսդիրը, ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածներում ամրագրված պայմանագրի ազատության սկզբունքից, կողմերին հնարավորություն է տալիս պայմանները որոշելու իրենց հայեցողությամբ, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկին վերաբերող 47-րդ գլխի իմպերատիվ նորմերով (յրեն «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի հայցն ընդդեմ Արթուր Սարգսյանի և մյուսների թիվ ԱԿԳ/0145/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.07.2009 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի վերլուծությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ վարկային պայմանագրով վարկատուն ստանձնում է վարկառուին դրամական միջոցներ տրամադրելու պարտականություն, ինչպես նաև ձեռք է բերում իրավունք՝ պահանջելու հետ վերադարձնել այդ դրամական միջոցները և տոկոսներ վճարել դրանցից, իսկ վարկառուն, իր հերթին, ձեռք է բերում այդ միջոցներն ստանալու իրավունք և ստանձնում վարկատուին տոկոսներ վճարելու ու ստացված միջոցները վերադարձնելու պարտականություն:

Միաժամանակ նշված հոդվածով ամրագրվել է, որ վարկային հարաբերությունների նկատմամբ փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը կիրառելի են, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները

կարգավորող նորմերով և բուն վարկային պայմանագրով: Այսինքն՝ վարկային հարաբերությունները կարգավորելու առումով օրենսդիրը նախապատվությունը տվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վարկային հարաբերությունները կարգավորող նորմերին և վարկային պայմանագրին, որոնցով այլ բան նախատեսված չլինելու դեպքում միայն տվյալ հարաբերությունների նկատմամբ կարող են գործել փոխառության հարաբերությունները կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերը (տես «ՓԼԵՅ ԳՈՈՒԻ» ՄՊԸ-ն ընդդեմ «Պրոկրեդիտ Բանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/4072/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Վերահաստատելով վարկային հարաբերությունները կարգավորող վերը նշված իրավանորմերի կապակցությամբ արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ ի տարբերություն որոշակի կանոնների, երբ վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 46 գլխով նախատեսված կանոնները կիրառելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝ ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 47 գլխով, այնպես էլ վարկային պայմանագրով այլ բան նախատեսված չլինելը, վարկային պայմանագրի տոկոսների առումով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 46 գլխով նախատեսված կանոնները կիրառելու համար բավարար է այն փաստի առկայությունը, որ կողմերի միջև կնքված վարկային պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 47 գլխով վարկային պայմանագրի տոկոսների վերաբերյալ հատուկ կանոն նախատեսված չլինելու հանգամանքով, քանի որ թեկուզև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ (...) **փոխառուն պարտավորվում է վերադարձնել** ստացված գումարը և **տոկոսներ վճարել դրանից**, որպիսի օրենսդրական կարգավորումից ուղղակիորեն բխում է, որ օրենսդիրը նախատեսել է վարկատուի պարտականությունը՝ վարկային պայմանագրով ստացված գումարից բացի, վարկատուին վճարելու նաև դրանից որոշակի տոկոսներ, սակայն ինչպես նույն հոդվածով, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 47 գլխով նախատեսված չէ վարկատուի կողմից վարկատուին վճարման ենթակա տոկոսի առավելագույն չափ:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 448-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

Էական են համարվում պայմանագրի առարկայի մասին պայմանները, **օրենքում կամ այլ իրավական ակտերում որպես էական նշված կամ պայմանագրի տվյալ տեսակի համար անհրաժեշտ պայմանները**, ինչպես նաև այն բոլոր պայմանները, որոնց վերաբերյալ կողմերից մեկի հայտարարությամբ պետք է համաձայնություն ձեռք բերվի:

«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է կրեդիտավորման պայմանագրերից բխող հարաբերությունները, դրանց տեսակների առանձնահատկությունները և պարտադիր պայմանները, **կրեդիտավորման պայմանագրերով տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը և պայմանները**, կրեդիտավորողի պատասխանատվությունը, **կրեդիտավորման պայմանագրերով**

**սպառողների իրավունքները** և այդ պայմանագրերի հետ կապված այլ հարաբերություններ:

«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- **տարեկան փաստացի տոկոսադրույք (Annual Percentage Rate կամ APR)**՝

սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով, և հաշվարկված՝ հիմք ընդունելով նույն օրենքի 13-րդ հոդվածում նշված բանաձևը:

«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ կրեդիտավորողը պարտավոր է ապահովել, որ կրեդիտավորման պայմանագիրն առնվազն ներառի՝ տարեկան փաստացի տոկոսադրույքի չափի վերաբերյալ նշում:

«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ կրեդիտավորողը պարտավոր է ապահովել, որ կրեդիտավորման պայմանագիրն առնվազն ներառի՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը փոխելու կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ նշում:

«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սպառողն իրավունք ունի կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք կրեդիտավորման պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է կրեդիտավորման պայմանագրի կնքման պահին՝ ենթադրելով, որ կրեդիտավորման պայմանագիրը գործելու է պայմանավորված ժամկետում, և պայմանագրի կողմերը պատշաճ կերպով և պայմանավորված ժամկետներում կատարելու են պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ չեն ներառվում հետևյալ վճարները. օրենքով և կրեդիտավորման պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված կամ վճարվելիք տուժանքները և այլ վճարները:

ՀՀ վճարելի դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վարկային պայմանագրի բնույթին, նշել է, որ թեև վարկային պայմանագիրը համարվում է կոնսենսուալ, այն է՝ **կնքված է համարվում, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ**, այդուհանդերձ վարկային պայմանագրի կնքումից հետո կողմերի՝ պայմանագրից բխող պարտավորությունների կատարումը չի կրում բացարձակ բնույթ (տե՛ս «Մարս Նիկել Դիվելոպմենթ» ՍՊԸ-ն ընդդեմ «Առեկ-սիմբանկ-գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի իրավահաջորդ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/3660/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 14.08.2020 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն

սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

ՀՀ վճարելի դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է պայմանագրերի իրավաբանական դասակարգման կամ պայմանագրերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված որոշակի պայմանագրերի տարրերի առկայության բացահայտման կանոններին, և արձանագրել է, որ բացահայտումը մի քանի փուլերից բաղկացած գործընթաց է, որն իրենից ներկայացնում է պայմանագրի մեկնաբանության բաղկացուցիչ մաս: Մասնավորապես՝ պայմանագրի իրավաբանական դասակարգման համար պետք է՝

1) **պարզվեն տվյալ պայմանագրի պայմանները** (առարկան, գինը, ձևը, կողմերի իրավունքների և պարտականությունների շրջանակը):

2) դրանք համադրվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ պայմանագրերի վերաբերյալ ընդհանուր և կոնկրետ **պայմանագրի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող հատուկ նորմերի հետ** պայմանագրի տեսակը որոշելու համար: *(դրեն «Հայփոսթ» ՓԲԸ-ն ընդդեմ անհատ ձեռնարկարեր Վաչագան Հովհաննիսյանի թիվ ԵՄԿ/0720/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 29.06.2012 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերը նշված դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ պայմանագրի առարկայի մասին պայմանները համարվում են էական նաև այն դեպքերում, երբ նշված են օրենքում կամ այլ իրավական ակտերում կամ անհրաժեշտ պայման են պայմանագրի տվյալ տեսակի համար:

Մինևույն ժամանակ Վճարելի դատարանն արձանագրում է, որ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկայի շարքում ընդգրկված են նաև կրեդիտավորման պայմանագրերով տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը և պայմանները, իսկ նույն օրենքի իմաստով բացահայտված է նաև «տարեկան փաստացի տոկոսադրույք» հասկացության բովանդակությունը, որի համաձայն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքն իրենում բովանդակում է **սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը**՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ կրեդիտավորման պայմանագրում կրեդիտավորողի կողմից տարեկան փաստացի տոկոսադրույքի չափի վերաբերյալ պարտադիր նշման օրենսդրական պահանջը թույլ է տալիս գալ եզրահանգման առ այն, որ կրեդիտավորման պայմանագրի էական պայման է հանդիսանում տարեկան փաստացի տոկոսադրույքի չափի վերաբերյալ նշումը:

Ընդհանրացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանը եզրահանգում է, որ տարեկան փաստացի տոկոսադրույքը հանդիսանում է սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով, և հաշվարկված՝ հիմք ընդունելով «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում նշված բանաձևը: Նշված տոկոսի չափի վերաբերյալ նշումը հանդիսանում է կրեդիտավորման պայմանագրի էական պայման, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքի, այն է՝ սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ չեն ներառվում օրենքով և կրեդիտավորման պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար վճարված կամ վճարվելիք տուժանքները և այլ վճարները:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածով վարկառուի կողմից վարկատուին վերադարձվող տոկոսները վճարվում են վարկային

պայմանագրի առարկա հանդիսացող գումարից, այսինքն՝ վարկային պայմանագրի տոկոսագումարի գոյացման աղբյուրը վարկային պայմանագրի առարկա հանդիսացող դրամական միջոցն է (վարկը), մինչդեռ, վարկային պայմանագրով սահմանվող տարեկան փաստացի տոկոսադրույքը հանդիսանում է սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը, որի հաշվարկման կարգը և պայմանները նախատեսված են «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կրեդիտավորողի կողմից կրեդիտավորման պայմանագրում տարեկան փաստացի տոկոսադրույքի չափի վերաբերյալ նշման իրավական պարտականությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 887-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով հանդիսանում է վարկային պայմանագրից բխող հարաբերություն, ինչը թույլ է տալիս արձանագրել, որ դրա նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 46 գլխում նախատեսված կանոնները կիրառման են ենթակա բացառապես այն դեպքում, երբ նույն օրենսգրքի 47-րդ գլխով և վարկային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով այն, որ կրեդիտավորողի կողմից տարեկան փաստացի տոկոսադրույքի չափի վերաբերյալ նշման իրավական պարտականության իրականացումը տեղի է ունենում կրեդիտավորման պայմանագրում դրա վերաբերյալ դրույթի սահմանման միջոցով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ վարկային պայմանագրով սահմանված է տարեկան փաստացի տոկոսադրույքի չափ, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 46 գլխում փոխառության իրավահարաբերությունները կարգավորող ընդհանուր կանոնները, այդ թվում՝ փոխառության պայմանագրի տոկոսների չափի վերաբերյալ սահմանափակումը, կիրառման ենթակա չէ:

### ***Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարմանը***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության և Լուսինե Նալբանդյանի միջև 19.06.2018 թվականին կնքվել է վարկային պայմանագիր, որի 1.1. կետի համաձայն՝ վարկատու Ընկերությունը պարտավորվել է վարկառու Լուսինե Նալբանդյանին միանվագ տրամադրել կանխիկ (սպառողական) 8.670.000 ՀՀ դրամի չափով վարկ մինչև 19.06.2028 թվականը մարելու ժամկետով, իսկ Լուսինե Նալբանդյանը պարտավորվել է Պայմանագրով սահմանված ժամկետում վերադարձնել վարկը և տոկոսներ վճարել դրա դիմաց: Պայմանագրի 1.2. կետի համաձայն՝ վարկը տրամադրվել է տարեկան 24% տոկոսադրույքով, իսկ վարկի տրամադրման պահին փաստացի տարեկան տոկոսադրույքը կազմել է 59.94%, որի մեջ ներառված են նաև վարկավորման հետ կապված Ընկերության ծախսերը՝ վարկի կանխիկացման գումարը, որը կազմում է վարկի գումարի 0.3 տոկոսը, տրանսպորտային միջոցի գնահատման վճարը, որը կազմում է 7.000 ՀՀ դրամ և վարկի տրամադրման միանվագ վճարը՝ վարկի գումարի 1.7 տոկոսի չափով: Պայմանագրի 2.3.1. կետի համաձայն՝ Լուսինե Նալբանդյանն իրավունք ունի ժամկետից շուտ մարել վարկը և վճարել հաշվարկված տոկոսներն ու այլ վճարներ: Պայմանագրի 2.4.2. կետի համաձայն՝ Լուսինե Նալբանդյանը պարտավորվել է Պայմանագրով սահմանված ժամկետներում մարել վարկը և վճարել վարկի դիմաց հաշվարկված տոկոսագումարներն ու Պայմանագրով սահմանված այլ պարտադիր վճարները: Պայմանագրի 1.7. կետի համաձայն՝ վարկը տրամադրվել է սպառողական նպատակով:

Դիմելով դատարան՝ Լուսինե Նալբանդյանը պահանջել է որպես Պայմանագրի անվավերության հետևանք իրենից ՀՀ պետական բյուջե բռնագանձել



8.624.703 ՀՀ դրամ՝ որպես վարկի մնացորդի գումար, իսկ Ընկերությանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 2.135.700 ՀՀ դրամ՝ որպես ստացված տոկոսների հանրագումար:

Դատարանը, պատճառաբանելով, որ «չնայած պատասխանողն ամրագրել է վարկային պայմանագրով սահմանված փոկոսի չափը, որը համապատասխանում է օրենքով նախատեսված չափին, այն է 24 փոկոս, սակայն մեկ այլ դրույթով սահմանել է, որ փաստացի փոկոսադրույթը կազմում է 59,94 փոկոս, որի մեջ ներառվում են վարկավորման հետ կապված ծախսերը, որոնք անփոփոխ են մինչև վարկի վերադարձման օրը: Նշված ձևակերպումից ակնհայտ է, որ 24 փոկոսի սահմանման վերաբերյալ դրույթը ձևական և ոչ կիրառելի դրույթ է, քանի որ ընդամենը կրկնում է օրենքով սահմանված կանոնը, իսկ հաջորդ կետով նախատեսում է փոկոսի առավելագույն չափի կրկնակից ավել փոկոսադրույթ: Չնայած, որ վարկային կազմակերպությունը փաստացի փոկոսադրույթ, որը կրարբերվեր օրենքով սահմանված չափից, սահմանելու օրենսդրական իրավասություն ունի, սակայն դա չի կարող իրականացնել այնպես, որ ձևական դարձի օրենքի պահանջը կամ չեղարկի այն: Այսինքն, այդ փարբերությունը չպետք է լինի այնքան էական, ինչպիսին է սույն գործով, որը կհանգեցնի օրենքով նման դրույթ սահմանելու իմաստարկվմանը: Եթե օրենսդիրն այս ոլորտում իր կարգավորիչ գործառույթն իրականացնելու նպատակով սահմանել է դրամական միջոցների օգտագործման դիմաց վճարվելիք փոկոսի առավելագույն չափ, ապա այդ նորմի գործողությունը շրջանցող կամ որևէ այլ կերպ իմաստարկող գործողություն չի կարող համարվել օրենքի պահանջին համապատասխանող», և գտնելով, որ «պայմանագրով սահմանված փաստացի 59,94 փոկոսադրույթ սահմանելու դրույթը հակասում է օրենքին և անվավեր է կնքման պահից», 26.11.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Պայմանագրի 1.3 կետը, որի համաձայն՝ սահմանվել է վարկի 59,94 տոկոսադրույթ, անվավեր ճանաչելու մասով:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «սպասարկման վճարը, որն ըստ էության փաստացի փոկոսավճար է, գումարվելով սահմանված փոկոսավճարներին և ներառվելով 59,94 փոկոս փաստացի փարբերական փոկոսադրույթի հաշվարկում, գումարային արտահայտությամբ գերազանցում է բանկային փոկոսի հաշվարկի դրույթի կրկնապարհիլը՝ հանգեցնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մասի խախտման», «Պայմանագրի՝ 59.94% փաստացի փարբերական փոկոսադրույթ սահմանող պայմանի վերաբերյալ Կողմերի ձեռք բերած համաձայնությունն առջին է և անվավեր կնքելու պահից, չի կարող Կողմերի համար որևէ իրավական հետևանք առաջացնել և հիմք հանդիսանալ նման գումար հաշվարկելու և բռնագանձելու համար, քանի որ եթե Օրենսդիրն այս ոլորտում պայմանագրի ազատության իրավունքի չարաշահումը կանխարգելելու նպատակով սահմանել է դրամական միջոցների օգտագործման դիմաց վճարվելիք փոկոսի առավելագույն չափ, ապա այդ նորմի գործողությունը շրջանցող կամ որևէ այլ կերպ իմաստարկող գործողություն չի կարող համարվել օրենքի պահանջին համապատասխանող», և գտնելով, որ «իրավաչափ են Դատարանի եզրահանգումներն այն մասին, որ պայմանագրով սահմանված փաստացի 59,94 փոկոսադրույթ սահմանելու դրույթը հակասում է օրենքին և անվավեր է կնքման պահից», Ընկերության վերաքննիչ բողոքը մերժել է:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են, քանի որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում առկա է վարկային պայմանագրից բխող

հարաբերությունների նկատմամբ փոխառության իրավահարաբերությունների ընդհանուր կանոնների կիրառման արգելք, որը դրսևորվել է նրանում, որ սույն գործով կողմերի միջև կնքված Պայմանագրով վարկի տոկոսի չափի վերաբերյալ նախատեսված է այլ բան, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը վերը նշված դիրքորոշումների համատեքստում չէր կարող կատարել նման եզրահանգում:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարել դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու՝ Վճարել դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարել դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճարել դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

##### ***5. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճարել դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Սույն գործով նկատի ունենալով, որ վճարել բողոքի բավարարման արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է ամբողջությամբ բեկանման և փոփոխման՝ Վճարել դատարանը, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ, 109-րդ և 112-րդ հոդվածների,

մինչև 30.10.2021 թվականը գործած խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները և այն, որ Լուսինե Նալբանդյանը հայցադիմումը Դատարան ներկայացնելու համար արդեն իսկ վճարել է պետական տուրքի գումարը, վերաքննիչ և վճարել բողոքները ներկայացնելու համար Ընկերությունը նախապես վճարել է, համապատասխանաբար 10.000 ՀՀ դրամ և 20.000 ՀՀ դրամ, գտնում է, որ Լուսինե Նալբանդյանից հոգուտ Ընկերության պետք է բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի գումար:

Մինևույն ժամանակ Վճարել դատարանն արձանագրում է, որ այլ դատական ծախսերի վերաբերյալ պահանջ ներկայացված չլինելու պատճառաբանությամբ այդ ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարել բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.05.2021 թվականի որոշումը՝ ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 26.11.2020 թվականի վճիռը՝ «ԳԼՈՒԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի և Լուսինե Նալբանդյանի միջև 19.06.2018 թվականին կնքված թիվ CV18-S4201 վարկային պայմանագրի 1.3. կետն անվավեր ճանաչելու մասով, անփոփոխ թողնելու մասով, բեկանել և փոփոխել՝ այդ մասով հայցը մերժել. մնացած մասով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.05.2021 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

2. Լուսինե Նալբանդյանից հոգուտ Ընկերության բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Այլ դատական ծախսերի հատուցման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/25649/02/20 2023թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/25649/02/20
Նախագահող դատավոր՝	Դ. Սերոբյան
Դատավորներ՝	Ա. Խառատյան Մ. Հարթենյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

<i>Նախագահող և զեկուցող</i>	Մ. ԴՐՄԵՅԱՆ Ս. ԱՆՏՈՆՅԱՆ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ Է. ՍԵՂՈՒՅԱՆ
-----------------------------	--

2023 թվականի հունվարի 25-ին  
գրավոր ընթացակարգով քննելով «Նաիրի Ինչուրանս» ապահովագրական  
ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-  
կան դատարանի 16.07.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ընկերության  
ընդդեմ Լևոն Սարգսյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Լևոն Սարգսյանից հոգուտ  
իրեն բռնագանձել 82.578 ՀՀ դրամ, որից 80.000 ՀՀ դրամը՝ ապահովագրական  
հատուցման գումար, 2.578 ՀՀ դրամը՝ կետանցի օրվանից՝ 30.04.2020 թվականից  
մինչև 06.08.2020 թվականը ներառյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ  
հոդվածով սահմանված տոկոսներ, ինչպես նաև 80.000 ՀՀ դրամի նկատմամբ  
հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տո-  
կոսները՝ սկսած հայցադիմումը դատարան ներկայացնելու հաջորդ օրվանից  
մինչև պարտավորության փաստացի կատարման օրը և 1,652 ՀՀ դրամ՝ որպես

նախապես վճարված պետական տուրքի, 55.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 04.02.2021 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.07.2021 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.02.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ Տիգրան Դազարյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## ***2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը***

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Այսպես՝ Դատարանը խախտել է Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո ՀԿ-ի կողմից հաստատված թիվ RL1-001 ընդհանուր պայմանների 16-րդ կետը:

Ըկերությունն ունենալով պարտավորություն ապացուցելու իր կողմից վկայակոչած փաստը, Դատարան է ներկայացրել Լևոն Սարգսյանի կողմից ապահովագրած մեքենան որպես տաքսի շահագործելու փաստը հավաստող լուսանկար, տեսանյութ, որը Դատարանը համարել է ոչ թույլատրելի ապացույց:

Մինչդեռ, Դատարանի կողմից վերոնշյալ նորմի ճիշտ կիրառման դեպքում պարզ կլիներ, որ Ընկերությունը Լևոն Սարգսյանի կողմից ապահովագրված ավտոմեքենան տաքսի շահագործելու փաստը հավաստող ապացույցները ձեռք է բերել իր օրինական իրավունքը իրացնելու հիմքով՝ ղեկավարվելով Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո ՀԿ-ի կողմից հաստատված թիվ RL1-001 ընդհանուր պայմանների 16-րդ կետով:

Պայմանները համարվում են Վկայագրի անբաժանելի մաս, և պարունակում ԱՊՊԱ պայմանագրի կողմերի /ապահովագիր, ապահովագրող/ իրավունքները և պարտականությունները:

Սույն դեպքում Լևոն Սարգսյանն Ընկերության հետ կնքել է SL 437774 վկայագիրը, և հանդիսանալով ապահովադիր, արդեն իսկ ընդունել է SL 437774 վկայագրի կետերով և դրա անբաժանելի մաս կազմող պայմաններով սահմանված պայմանները: Նույնը և ապահովադիրը:

Այսինքն ապահովադիրը ապահովագրողին պայմանների 16-րդ կետի ուժով արդեն իսկ թույլատրել է անհրաժեշտության դեպքում ստանալ փաստաթղթեր և այլ տեղեկություններ:

Ապահովագրողի կողմից պայմաններով սահմանված իր իրավունքի իրացման արդյունքում ձեռք բերված ապացույցները պարզապես չեն կարող դիտարկվել ոչ թույլատրելի, այն էլ Դատարանի կողմից առանց այդ եզրահանգման վերաբերյալ հիմնավորման՝ հանգեցնել հայցի մերժման: Նշվածը դատավարական իրավունքի կոպիտ խախտում է, ինչպես նաև Ընկերության իրավունքների ոտնահարում:

Բացի այդ, ապահովադրի և ապահովագրողի միջև կնքված վկայագրում առկա են անձնական տվյալներ, որոնք հենց ապահովադրին է տրամադրել ապահովագրողին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.07.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

### **3. Վճուրբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճուրբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ ընկերության և Լևոն Սարգսյանի միջև 16/10/2019 թվականին կնքվել է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SL437774 վկայագիրը, որով անձնական օգտագործման նպատակով ապահովագրվել է մարդատար տեսակի 35 RR 687 h/h-ի ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը (**հատոր 1, գ.թ. 11**).

2) 10.03.2020 թվականին ժամը 19:35-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա Մեծարենցի փողոցում՝ ապահովագրված մեքենայի մասնակցությամբ տեղի է ունեցել ՃՏՊ (**հատոր 1, գ.թ. 12** ).

3) Պատահարից հետո պատասխանողը ստորագրել է համաձայնեցված հայտարարագիր՝ ընդունելով իր մեղավորությունը տվյալ ապահովագրական պատահարում (**հատոր 1, գ.թ. 12**).

4) Համաձայն 11.03.2020թ. Վնասների գնահատման փորձաքննություն իրականացնող փորձագետի թիվ 006982 եզրակացության՝ տուժողին պատճառված վնասի չափը գնահատվել է 80.000/ութսուն հազար/ ՀՀ դրամ (**հատոր 1, գ.թ. 13**).

5) Տուժողի՝ ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումի հիման վրա կազմվել է ապահովագրական հատուցում վճարելու՝ թիվ CT21005415 որոշումը, համաձայն որի՝ տուժող կողմին որպես ապահովագրական հատուցում պետք է վճարվի ընդհանուր 80.000/ութսուն հազար/ ՀՀ դրամ գումար /Հինք՝ թիվ CT21005415 համարի ապահովագրական հատուցումը վճարելու վերաբերյալ որոշում, փոխհաշվարկի տեղեկանք/ (**հատոր 1, գ.թ. 18**).

6) Դատարան է ներկայացվել ավտոմեքենայի 35 RR 687 h/h-ի լուսանկարներ /02/12/2019թ./ տանիքին ամրացված՝ TAXI տարբերանշանով, ինչպես նաև տեսանյութ/լագերային կրիչ/ (**հատոր 1, գ.թ. 17, 19**):

### **4. Վճուրբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճուրբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճուրբեկ բողոքի վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի խախտում, որի առկայությունը հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված Վճուրբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք ապահովագրական պայմանագրի մեջ մատրանշված և պայմանագիրը կնքելու պահին գործող*

խմբագրությամբ «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից ընդունված և հաստատված RL 1-001 կանոններին հղում կատարելն ինքնին համապատասխանում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված տվյալների սուբյեկտի կողմից համաձայնություն տալու պահանջներին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք**: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, **անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ**:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) 8-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, **բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով** և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, **հասարակական կարգի** կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

«Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» 28.01.1981 թվականի կոնվենցիայի ((այսուհետ՝ **Կոնվենցիա**) ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 01.09.2012 թվականին) 1-ին հոդվածի համաձայն՝ Կոնվենցիայի նպատակն է ապահովել յուրաքանչյուր Կողմի տարածքում յուրաքանչյուր անհատի, անկախ նրա քաղաքացիությունից կամ բնակության վայրից, իրավունքների և հիմնարար ազատությունների, մասնավորապես նրա գաղտնիության իրավունքի նկատմամբ հարգանքը՝ իրեն առնչվող անձնական տվյալների ավտոմատացված մշակման մասով (տվյալների պաշտպանություն):

Համաձայն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի՝ Կոնվենցիայի նպատակներով՝

ա. «Անձնական տվյալներ» նշանակում է՝ ինքնությունը հաստատված և ինքնությունը հաստատման ենթակա անհատների վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն: (...):

Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ **համապատասխան անվտանգության միջոցներ պետք է ձեռնարկվեն տվյալների ավտոմատացված ֆայլերում** պահվող անձնական տվյալները պատահական կամ

չթույլատրված ոչնչացումից կամ պատահական կորստից, ինչպես նաև **չթույլատրված մուտքից**, փոփոխումից կամ **տարածումից պաշտպանելու համար:**

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվում է անձնական տվյալների՝ որպես հիմնական իրավունքի պաշտպանությունը: Նշված իրավունքի պաշտպանությունը երաշխավորված է նաև Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով, որի մեկնաբանությանն անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) դատական պրակտիկայում: Հարկ է նշել, որ Եվրոպական դատարանը վերջին տասնամյակում զգալիորեն ընդլայնել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանության ենթակա ոլորտի շրջանակը: Նմանօրինակ զարգացումը ներհատուկ է տվյալ հոդվածի բնույթին, քանի որ հիմնական հատկանիշը դրանց կիրառման ընթացքում հավասարակշռության հաստատման անհրաժեշտությունն է մարդու իրավունքների պաշտպանության և Պայմանավորվող պետության կողմից թույլատրելի հայեցողության շրջանակի միջև:

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անձնական կյանքի գաղափարը տարածվում է անձի ինքնությանն առնչվող տարրերի վրա, ինչպիսիք են՝ նրա անունը, լուսանկարը, ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությունը, ինչպես նաև այն, որ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված երաշխիքը հիմնականում կոչված է ապահովել յուրաքանչյուր անձի անհատականության զարգացումն իր նմանների հետ հարաբերություններում առանց արտաքին միջամտությունների: Ուստի գոյություն ունի անհատի՝ այլոց հետ շփման գոտի, որը նույնիսկ հանրային համատեքստում կարող է վերաբերել անձնական կյանքին (*լրե՛ս՝ Von Hannover v. Germany, 07.02.2012 թվականի վճիռ, կետ 95*): Եվրոպական դատարանը նաև նշել է, որ անձնական բնույթի տվյալների պաշտպանությունը հիմնարար նշանակություն ունի Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածում նախատեսված անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի իրացման համար (*լրե՛ս՝ Satukunnan Markkinapörssi Oy and Satamedia Oy v. Finland, 27.06.2017 թվականի վճիռ, կետ 133*): Եվրոպական դատարանը մեկ այլ որոշմամբ, արձանագրելով, որ անհատի «անձնական կյանքին» վերաբերող տվյալների պահպանումը ևս ենթակա է պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի համատեքստում, միաժամանակ նշել է, որ «անձնական կյանք» եզրույթը չպետք է չափազանց նեղ մեկնաբանել: Մասնավորապես, հարգանքն անձնական կյանքի նկատմամբ ներառում է այլոց հետ հարաբերությունների հաստատումը և զարգացումը, այդուհանդերձ, որևէ կերպ չի կարող արդարացվել այնպիսի մեկնաբանությունը, որը բացառում է «անձնական կյանք» եզրույթից մասնագիտական կամ աշխատանքային գործունեությունը: Եվրոպական դատարանի դիտարկմամբ նման լայն մեկնաբանությունը բխում է նաև «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» 28.01.1981 թվականի կոնվենցիայի դրույթներից, որի նպատակն է «ապահովել յուրաքանչյուր Կողմի տարածքում յուրաքանչյուր անհատի, (...) իրավունքների և հիմնարար ազատությունների, մասնավորապես նրա գաղտնիության իրավունքի նկատմամբ հարգանքը՝ իրեն առնչվող անձնական տվյալների ավտոմատացված մշակման մասով (տվյալների պաշտպանություն)» (*լրե՛ս՝ Amann v. Switzerland, 16.02.2000 թվականի վճիռ կետ 65*):

Եվրոպական դատարանը մեկ այլ գործով ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի առաջնային նպատակն է պաշտպանել անձնական և ընտանեկան կյանքը, բնակարանը և նամակագրությունը պետական մարմինների կամայական միջամտություններից (*լրե՛ս՝ Libert v. France, 22.02.2018 թվականի*



վճիռ, կետք 40-42): Այդուհանդերձ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անդամ պետությունները կրում են նաև նույնիսկ մասնավոր անձանց միջև Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված իրավունքների պահպանումը երաշխավորելու դրական պարտավորություն (*լրե՛ս Bărbulescu v. Romania, 05.09.2017 թվականի վճիռ, կետք 108-111*): Այս պարտավորությունները կարող են ենթադրել այնպիսի միջոցների ձեռնարկում, որոնք կոչված կլինեն ապահովել հարգանքն անձնական կյանքի նկատմամբ՝ ընդհուպ մինչև անհատների փոխհարաբերություններում (*լրե՛ս Evans v. The United Kingdom, 10.04.2007 թվականի վճիռ, կետք 75*):

Եվրոպական կոնվենցիայի ներքո պետության համար սահմանված դրական և բացասական պարտավորությունների գնահատման դեպքում կիրառելի սկզբունքները նմանատիպ են: Հարկավոր է հաշվի առնել արդար հավասարակշռությունը, որն անհրաժեշտ է ապահովել հանրության՝ որպես մեկ ամբողջության և անհատի մրցակցող շահերի միջև, ընդ որում Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետում նշված նպատակները հստակ դերակատարում ունեն (*լրե՛ս Härmäläinen v. Finland, 16.07.2014 թվականի վճիռ, կետք 65*): Եվրոպական դատարանը նշել է, որ երբ գործն առնչվում է բացասական պարտավորությանը, անհրաժեշտ է գնահատել, թե արդյո՞ք տվյալ միջամտությունը համապատասխանել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդված 2-րդ մասի պահանջներին, այն է՝ թե արդյո՞ք տվյալ միջամտությունը եղել է օրենքով սահմանված կարգով, արդյո՞ք հետապնդել է իրավաչափ նպատակ և արդյո՞ք անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում:

Վերոնշյալ ներպետական և միջազգային կարգավորումներից հետևում է, որ անձնական տվյալները, լինելով անձի հիմնական՝ պաշտպանության ենթակա իրավունք, կարող են միջամտության առարկա հանդիսանալ: Մասնավորապես, սահմանադիրը նախատեսել է անձնական տվյալների մշակման իրավական հնարավորությունը՝ միաժամանակ սահմանելով դրա իրականացման չափանիշները, որոնք, ըստ էության, բխում են Հայաստանի Հանրապետության վավերացրած վերաբերելի միջազգային փաստաթղթերի բովանդակությունից: Այսպես, անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի *բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ*: Վերը թվարկված չափանիշներն առավել մանրամասն կարգավորված են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք): Այսպես՝

Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն ու պայմանները:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը բացահայտել է նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների բովանդակությունը, այն է՝

1) **անձնական տվյալ**՝ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը.

2) **անձնական տվյալների մշակում**՝ անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների

խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ.

3) **անձնական տվյալների փոխանցում երրորդ անձանց**՝ անձնական տվյալները որոշակի կամ անորոշ շրջանակի այլ անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված գործողություն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով անձնական տվյալները հրապարակելը, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելը.

4) **անձնական տվյալների օգտագործում**՝ անձնական տվյալների հետ կատարվող գործողություն, որի ուղղակի կամ անուղղակի նպատակը կարող է լինել որոշումներ ընդունելը կամ կարծիք ձևավորելը կամ իրավունքներ ձեռք բերելը կամ իրավունքներ կամ արտոնություններ տրամադրելը կամ իրավունքները սահմանափակելը կամ զրկելը կամ այլ նպատակի իրագործումը, որոնք տվյալների սուբյեկտի կամ երրորդ անձանց համար առաջացնում կամ կարող են առաջացնել իրավական հետևանքներ կամ այլ կերպ առնչվել նրանց իրավունքներին ու ազատություններին.

...

6) **տվյալների սուբյեկտ**՝ ֆիզիկական անձ, որին վերաբերում են անձնական տվյալները.

7) **տվյալների բազա**՝ որոշակի հատկանիշներով համակարգված անձնական տվյալների ամբողջություն.

(...)

15) **հանրամատչելի անձնական տվյալներ**՝ տեղեկություններ, որոնք տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ իր անձնական տվյալները հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք օրենքով նախատեսված են որպես հանրամատչելի տեղեկություններ.

(...):

Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները մշակվում են **օրինական և որոշակի նպատակներով և ստանց ԿՐԿԿՆԿԻ համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով**:

Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալների սուբյեկտի գրավոր համաձայնության դեպքում անձնական տվյալներ մշակող համարվող ֆիզիկական կամ իրավաբանական անձինք կարող են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ որոշակի գործողության համար անհրաժեշտ և անձնական տվյալների սուբյեկտի գրավոր համաձայնության մեջ ուղղակիորեն մատնանշված անձնական տվյալը:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **անձնական տվյալներ մշակելը օրինական է, եթե՝**

1) **տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմամբ, և տվյալների սուբյեկտը տվել է իր համաձայնությունը**, բացառությամբ նույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, կամ

2) մշակվող տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից:

Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **տվյալների սուբյեկտի համաձայնությունը համարվում է տրված, և մշակողն այն մշակելու իրավունք ունի**, երբ՝

1) մշակողին հասցեագրած և տվյալների սուբյեկտի ստորագրած փաստաթղթում նշված են անձնական տվյալները, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաթուղթն իր բովանդակությամբ հանդիսանում է անձնական տվյալները մշակելու դեմ առարկություն.

2) մշակողը տվյալները ստացել է տվյալների սուբյեկտի հետ կնքված պայմանագրի հիման վրա և օգտագործում է այդ պայմանագրով սահմանված գործողությունների նպատակով.

3) տվյալների սուբյեկտն իր կամքով, օգտագործելու նպատակով բանավոր փոխանցում է մշակողին իր անձնական տվյալների մասին տեղեկությունները:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձնական տվյալներ մշակողը կամ նույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված լիազորված անձը տվյալների սուբյեկտի համաձայնությունն ստանալու նպատակով **ծանուցում է** տվյալներ մշակելու մտադրության մասին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծանուցման մեջ նշվում են՝

1) տվյալների սուբյեկտի ազգանունը, անունը, հայրանունը.

2) անձնական տվյալների մշակման իրավական հիմքերը և նպատակը.

3) մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը.

4) անձնական տվյալների հետ կատարման ենթակա գործողությունների ցանկը, որոնց համար հայցվում է տվյալների սուբյեկտի համաձայնությունը.

5) այն անձանց շրջանակը, որոնց կարող են փոխանցվել անձնական տվյալները.

6) անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությունը հայցող մշակողի կամ նրա ներկայացուցչի անվանումը (ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը) և գտնվելու կամ հաշվառման (փաստացի բնակության) վայրը.

7) տվյալների սուբյեկտի կողմից անձնական տվյալների ուղղում, ոչնչացում, տվյալների մշակման դադարեցում պահանջելու կամ մշակման հետ կապված այլ գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկություններ.

8) հայցվող համաձայնության գործողության ժամկետը, ինչպես նաև համաձայնությունը հետ կանչելու կարգը և դրա հետևանքները:

Վկայակոչված իրավակարգավորումները հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձնական տվյալների մշակումն օրինական կարող է որակվել միայն այն դեպքում, երբ **տվյալները մշակվել են օրենքի պահանջների պահպանմանը, և տվյալների սուբյեկտը տրվել է իր համաձայնությունը**, բացառությամբ նույն օրենքով կամ այլ օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, կամ երբ մշակվող տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից: Վերոգրյալից հետևում է, որ թե սահմանադիրը, և թե օրենսդիրը կարևորել է անձնական տվյալների մշակման պարագայում տվյալների սուբյեկտի կողմից տրված համաձայնությունը: Իրավակիրառ պրակտիկայում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այդպիսի համաձայնության բովանդակության բացահայտումը (տե՛ս, «Նաիրի Ինչուրանս» ԱՄՊԸ-ն ընդդեմ Ռաֆիկ Մանուկյանի թիվ ԵԴ/6046/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.03.2022 թվականի որոշումը):

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ Եվրոպական դատարանը մի շարք գործերով արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, երբ տվյալները մշակողի կողմից անձնական տվյալների բացահայտումը տեղի է ունեցել առանց տվյալների սուբյեկտի

համաձայնության (*լրե'ս, օրինակ Radu v. The Republic of Moldova, 15.04.2015 թվականի վճիռ, կետեր 30,32; Mockutė v. Lithuania, 27.02.2018 թվականի վճիռ, կետեր 103,106; Sõro v. Estonia, 03.09.2015 թվականի վճիռ, կետեր 17-19,64*): Ընդ որում, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ տվյալների սուբյեկտի համաձայնությունը պետք է ուղիղ և միանշանակ արտահայտված լինի, որպեսզի այն անձնական տվյալն օգտագործելու համար վավեր պայման դիտարկվի (*լրե'ս, Kononova v. Russia, 09.10.2014 թվականի վճիռը, կետեր 47-48*):

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Օրենքի նախագիծը մշակվել է Եվրապառլամենտի ու Եվրախորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի ԵՄ-95-46 «Անձնական տվյալների մշակման ընթացքում մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության մասին» դիրեկտիվի (այսուհետ՝ Դիրեկտիվ) դրույթների հիման վրա<sup>1</sup>, հետևաբար «տվյալների սուբյեկտի համաձայնություն» արտահայտությունը հարկ է համարում բացահայտել նաև դիրեկտիվի դրույթների վերաբերելի կարգավորումների համատեքստում: Այսպես՝ համաձայն Դիրեկտիվի 2-րդ հոդվածի՝ «տվյալների սուբյեկտի համաձայնություն» նշանակում է *որոշակի և տեղեկացված, ազատ տրված ցանկացած կամահայրնություն, որով տվյալների սուբյեկտը տալիս է իր հավանությունը՝ իր անձնական տվյալները մշակելու համար*: Փաստորեն, Դիրեկտիվը սահմանում է, որ *համաձայնություն է՝*

1) «ցանկացած կամահայրնություն, որով տվյալների սուբյեկտը տալիս է իր հավանությունը», և այն պետք է լինի՝

2) «ազատ տրված»,

3) «որոշակի» և

4) «տեղեկացված»:

Դիրեկտիվով համաձայնության համար սահմանված վերոնշյալ չափանիշներին անդրադարձել է Եվրամիության Հոդված 29 Անձնական տվյալների պաշտպանության աշխատանքային խումբը /Article 29 Data Protection Working Party/ (այսուհետ նաև՝ Հոդված 29) Համաձայնության հասկացության վերաբերյալ 2011թ.-ի հուլիսի 13-ի իր 15/2011 կարծիքում:

Հոդված 29-ը, անդրադառնալով «ցանկացած կամահայրնություն, որով տվյալների սուբյեկտը տալիս է իր հավանությունը» չափանիշին, նշել է, որ սկզբունքորեն չկան սահմանափակումներ, թե համաձայնությունն ինչ ձևով պետք է վերցվի, սակայն այն պետք է լինի կամահայտնություն: Համաձայնությունը կարող է տրվել գրավոր՝ հաստատված ստորագրությամբ, բանավոր, գործողության միջոցով, որն ակնհայտ վկայում է համաձայնության մասին: Թեև համաձայնությունը կարող է տրվել ցանկացած ձևով, սակայն այն պետք է հստակ արտացոլի տվյալների սուբյեկտի կամքն իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ: Այսինքն, **համաձայնությունը պետք է լինի «միանշանակ»**: Մա նշանակում է, որ չպետք է որևէ կասկած մնա, որ տվյալների սուբյեկտի համաձայնությունն ուղղված է հենց անձնական տվյալների մշակմանը: Այլ կերպ ասած՝ տվյալների սուբյեկտի կամահայտնությունը, որով նա տալիս է իր հավանությունն անձնական տվյալների

<sup>1</sup> Տես «Անձնական տվյալների պաշտպանության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և ««Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման հիմնավորում <http://www.parliament.am/drafts.php>

մշակման վերաբերյալ, պետք է միանշանակորեն վկայի տվյալների սուբյեկտի մտադրության վերաբերյալ, իսկ եթե կա տվյալների սուբյեկտի մտադրության վերաբերյալ ողջամիտ կասկած, ապա համաձայնությունը չի կարող համարվել միանշանակորեն տրված:

Հոդված 29-ը, անդրադառնալով «ազատ փրված» լինելու չափանիշին, նշել է, որ համաձայնությունը կարող է վավեր համարվել, եթե տվյալների սուբյեկտը համաձայնությունը տվել է իր իրական ընտրությամբ (ազատ, կամավոր որոշմամբ), առանց խաբեության, սպառնալիքի, հարկադրանքի կամ համաձայնություն չտալու դեպքում իր համար բացասական հետևանքի: Եթե համաձայնություն տալ կամ չտալու հետևանքները խաթարում են անձի ազատ ընտրությունը (freedom of choice), ապա համաձայնությունը չի համարվի ազատ տրված:

Հոդված 29-ը, անդրադառնալով «որոշակի» լինելու չափանիշին, նշել է, որ համաձայնությունը կարող է վավեր համարվել, եթե այն կոնկրետ է: Այլ կերպ ասած, ընդհանուր համաձայնությունը, առանց անձնական տվյալի ճշգրիտ նպատակը մանրամասնելու, ընդունելի չէ: Համաձայնությունը պետք է լինի հասկանալի, այսինքն, այն պետք է վերաբերի անձնական տվյալների մշակման հստակ և ճշգրիտ շրջանակի:

Հոդված 29-ը, անդրադառնալով «տեղեկացված» լինելու չափանիշին, նշել է, որ անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությունը պետք է հիմնված լինի անձնական տվյալների մշակման հանգամանքները և հետևանքները գիտակցելու և հասկանալու, անձնական տվյալների մշակման (մշակվող տվյալների, մշակման նպատակի, այլ անձանց հնարավոր փոխանցման, տվյալների սուբյեկտի իրավունքների և այլնի) վերաբերյալ ճշգրիտ և լիարժեք տեղեկությունների վրա: Ընդ որում, տեղեկությունները պետք է հասանելի, հասկանալի և տեսանելի լինեն տվյալների սուբյեկտի համար, այլ ոչ թե «հասանելի ինչ-որ տեղ»:

Անձնական տվյալների մշակման վերաբերյալ համաձայնության վերոնշյալ չափանիշներն, ըստ էության, արտացոլված են նաև Օրենքում, համաձայն որի՝ տվյալների սուբյեկտի անձնական տվյալների մշակումը պետք է առնվազն համապատասխանի Օրենքով նախատեսված անձնական տվյալների մշակման համաձայնության «որոշակիության» և «տեղեկացվածության» չափանիշներին:

Համաձայնության «որոշակի» լինելու չափանիշը ենթադրում է, որ այն պետք է հստակ արտացոլի տվյալների սուբյեկտի կամքն իր անձնական տվյալների մշակման վերաբերյալ: Այսինքն, համաձայնությունը պետք է լինի «միանշանակ», ինչը նշանակում է, որ այն չպետք է որևէ կասկած հարուցի տվյալների սուբյեկտի համաձայնությունը հենց անձնական տվյալների մշակմանն ուղղված լինելու առնչությամբ: Այլ կերպ ասած, տվյալների սուբյեկտի համաձայնությունը, որով նա տալիս է իր հավանությունը անձնական տվյալների մշակման վերաբերյալ, պետք է հաստատապես վկայի տվյալների սուբյեկտի մտադրության վերաբերյալ, իսկ եթե կա տվյալների սուբյեկտի մտադրության վերաբերյալ ողջամիտ կասկած, ապա համաձայնությունը չի կարող համարվել հաստատապես տրված: «Որոշակի» լինելու չափանիշը վերաբերում է նաև ինչպես փոխանցման ենթակա անձնական տվյալների, այնպես էլ՝ այն նպատակների հստակ սահմանմանը, ի իրագործումն որոնց՝ պետք է մշակվեն այդ անձնական տվյալները: Այսինքն՝ համաձայնությունից պետք է հստակ լինի և մշակման ենթակա անձնական տվյալների ցանկը, և դրանց մշակման նպատակների շրջանակը:

Միաժամանակ, անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ համաձայնությունը միշտ ենթադրում է անձնական տվյալի մշակման վերաբերյալ անձնական տվյալների սուբյեկտների իրազեկվածություն: Հենց այս նպատակով օրենսդիրը սահմանել

է անձնական տվյալներ մշակողի կամ Օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված լիազորված անձի կողմից տվյալների սուբյեկտի համաձայնությունն ստանալու նպատակով ծանուցման կառուցակարգ, որը կոչված է ապահովելու համաձայնության՝ «տեղեկացված» լինելու չափանիշին համապատասխանությունը:

Վճռաբեկ դատարանը միևնույն ժամանակ գտնում է, որ պայմանագրով սահմանված և որպես պայմանագրային դրույթ՝ անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը, պետք է հստակ պարունակի անձնական տվյալների համաձայնության բոլոր էական պայմանները: Հետևաբար՝ որևէ պայմանագրով տվյալների սուբյեկտի «քողարկված» համաձայնությունը չի կարող համարվել վերջինիս կողմից տրված և Օրենքի պահանջներին համապատասխան համաձայնություն: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պայմանագրային հարաբերությունների պարագայում անձնական տվյալների մշակումը պետք է իրականացվի բացառապես տվյալների սուբյեկտի կողմից նման անձնական տվյալների մշակման մասին պարտադիր ծանուցմամբ, ընդ որում՝ ծանուցումը պետք է պարունակի Օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված ծանուցման մեջ նշվող պարտադիր պայմանները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միևնույն անձնական տվյալները կարող են օգտագործվել, մշակվել տարբեր նպատակներով: Տվյալների սուբյեկտի կողմից իր կողմից տրամադրված անձնական տվյալները պետք է օգտագործվեն բացառապես այն նպատակով, որ նպատակով տվյալների սուբյեկտը տվել է նման համաձայնություն: Ավելին, միևնույն տեղեկատվության ընդհանուր օգտագործումը՝ առանց անձնական տվյալների համաձայնության մեջ որոշակի նպատակների մատնանշման, ինքնին հակասում է Օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին: Ուստի, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ անձնական տվյալների համաձայնության մեջ մատնանշված միևնույն տեղեկատվության մշակման մասին ընդհանուր (բոլոր նպատակներով) օգտագործման մասին համաձայնությունը չի կարող համարվել Օրենքի պահանջներին համապատասխան համաձայնություն:

### *Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ*

Դատարան ներկայացված գումարի բռնագանձման վերաբերյալ հայցի հիմքում Ընկերությունը դրել է այն հանգամանքը, որ ապահովադիր Լևոն Սարգսյանի կողմից չի կատարվել 16.10.2019 թվականին կնքված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SL 437774 վկայագրով և դրա անբաժանելի մասը հանդիսացող ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով ստանձնած պարտավորությունը: Մասնավորապես՝ Ընկերությունը Լևոն Սարգսյանին պատկանող 35 RR 687 համարանիշով մարդատար մեքենան ապահովագրել է **անձնական** օգտագործման նպատակով, սակայն պատահարի պահին տվյալ վայրում արված լուսանկարներում երևում է, որ ավտոմեքենան օգտագործվել է, որպես տաքսի ծառայություն իրականացնող մեքենա: Հայցադիմումին կից ներկայացնելով [www.police.am](http://www.police.am) կայքից ներբեռնած տեսագրությունը, Ընկերությունը պնդել է, որ ներկայացվող տեսագրությունում պարզ երևում է այն հանգամանքը, որ «Ֆուլվագեն» մակնիշի 35 RR 687 համարանիշով մեքենայի վրա առկա է եղել տաքսի ծառայություն իրականացնող տարբերանշան: Հաշվի առնելով վերոգրյալը, Ընկերությունը գտել է, որ նշված հանգամանքը հակասում է Կանոնների նորմերին և համարվում է կեղծ տեղեկատվության տրամադրում Ապահովագրողին:

**Դատարանն** արձանագրել է, որ «Գործում առկա չէ որևէ թույլատրելի և վերաբերելի ապացույց 35 RR 687 պետհամարանիշի ավտոտրանսպորտային միջոցը «ոչ անձնական» նպատակով օգտագործելու վերաբերյալ, (...): Դատարանը՝ անդրադառնալով հայցադիմումին կից ներկայացված երկու լուսանկարներին, որոնց մեջ պատկերված ավտոմեքենայի վրա առկա է 35 RR 687 հաշվառման համարանիշը և «տաքսի» ծառայության նշան, արձանագրում է, որ նշված լուսանկարները չեն կարող համարվել հայցի փաստական հիմքը հիմնավորող թույլատրելի և վերաբերելի ապացույցներ հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ նշված լուսանկարներով չի երևում, որ 35 RR 687 պետհամարանիշի ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվել է «ոչ անձնական» նպատակով և ավտոտրանսպորտային միջոցը շահագործվել է որպես «տաքսի»:

«Սույն դեպքում գործի նյութերից հետևում է, որ գործով ձեռք չեն բերվել ապացույցներ առ այն, որ պատասխանողը տվել է իր համաձայնությունը որևէ անձնական տվյալ մասնավորապես լուսանկարահանելու և որոշակի անձնական տվյալներ օգտագործելու նպատակով: Նշվածից հետևում է, որ ընկերության կողմից դատարան ներկայացված ապացույցը ձեռք է բերվել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ, քանի որ պատասխանողի անձնական տվյալները մշակվել են առանց պատասխանողի համաձայնության: (...) Այսինքն՝ հայցվորի կողմից ներկայացված ապացույցը՝ դրանում առկա տեղեկությունները չեն կարող հիմք հանդիսանալ հաստատված համարելու, որ 35 RR 687 պետհամարանիշի ավտոմեքենան շահագործվել է ոչ թե անձնական նկատառումներով, այլ՝ որպես տաքսի»:

**Վերաքննիչ դատարանը**, մերժելով Ընկերության վերաքննիչ բողոքը վերահաստատել է Դատարանի եզրահանգումը և արձանագրել, որ «(...) սույն գործով ձեռք չեն բերվել ապացույցներ առ այն, որ Ապահովադիրը տվել է իր համաձայնությունն իր կողմից տրված տվյալներն այլ՝ տվյալ դեպքում ՀՀ ճանապարհային ոստիկանության տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված իրավախախտումների համակարգ մուտք գործելու միջոցով պատասխանողի որոշակի անձնական տվյալներ օգտագործելու նպատակով: Նշվածից հետևում է, որ ընկերության կողմից Դատարան ներկայացված ապացույցները ձեռք են բերվել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ, քանի որ պատասխանողի անձնական տվյալները մշակվել են առանց պատասխանողի համաձայնության և դրանք չեն օգտագործվել այն նպատակով, ինչ նպատակով տրամադրված են եղել»:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Ընկերությունն օգտագործելով ապահովագրական պայմանագրով իրեն հասու դարձած ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի տվյալները, մուտք է գործել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պաշտոնական կայքէջի տեխնիկական միջոցով հայտնաբերված իրավախախտումների բաժին և ներբեռնել պատասխանողին պատկանող ավտոտրանսպորտային միջոցով կայացված վարչական իրավախախտման տեսանյութը, այն դեպքում, երբ պատասխանողի կողմից իր անձնական տվյալներն Ընկերությանն է փոխանցվել բացառապես ԱՊՊԱ պայմանագիր կնքելու ակնկալիքով, և պայմանագրով իր կողմից փոխանցված անձնական տվյալները որևէ այլ նպատակով օգտագործելու վերաբերյալ համաձայնություն պատասխանողը չի տվել:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ սույն դեպքում խոսքը գնում է գրավոր և ավտոմեքենայի սեփականատիրոջ ուղղակի կամքն արտահայտող համաձայնության մասին, իսկ տվյալ դեպքում Լևոն Սարգսյանի կողմից անձնական տվյալներն Ընկերությանը ներկայացնելը հետապնդել է միայն կողմերի միջև ավտոապահովագրական պայմանագրի կնքման նպատակ, ինչը նշանակում է, որ այդ նպատակից և պայմանագրում կոնկրետ նշված (սահմանված) գործողություններ կատարելու նպատակից դուրս որևէ այլ նպատակով Ընկերությունն իրավասու չէր պատասխանողին պատկանող անձնական տվյալներն օգտագործել:

Բացի այդ, անձնական տվյալները չեն կարող մշակվել աննպատակ, և անձնական տվյալների մշակումն իրավաչափ կլինի, եթե առկա լինի տվյալները մշակելու օրինական և որոշակի նպատակ: Ավելին, գործում առկա չէ նաև որևէ ապացույց այն մասին, որ սույն գործով պատասխանողի համաձայնությունը ստանալու նպատակով համապատասխան անձնական տվյալը մշակելու մտադրության մասին վերջինս Ընկերության կողմից ծանուցվել է:

Ընկերության և Լևոն Սարգսյանի միջև 16.10.2019 թվականին կնքված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության թիվ SL 437774 Վկայագրի «Ապահովագրության պայմաններ» վերտառությամբ 7-րդ կետի համաձայն՝ *«Տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտասխանատվության պարտադիր ապահովագրության ընդհանուր պայմանները (սույն պայմանագրում, նաև ԱՊՊԱ պայմաններ)՝ ներառյալ ապահովագրական գումարի չափը, պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների արագման ու օգտագործման պայմանները, ապահովագրական պարահարները (ոբյեկտներ) և սույն պայմանագրի շրջանակներում կամ դրանից դուրս ԱՊՊԱ ոլորտում իրականացվող ծանուցումների կատարման կարգն ու պայմանները սահմանված են «Հայաստանի ավտոպահովագրողների բյուրո» ԻԱՄ-ի (այսուհետև՝ Բյուրո) իրավասու մարմնի կողմից հաստատված և Բյուրոյի՝ [www.paap.am](http://www.paap.am) պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնում հրատարակված ԱՊՊԱ պայմաններով, որոնք կիրառվում են անմիջականորեն: (...)»:*

Վկայագրի «Ապահովագրության պայմաններ» վերտառությամբ վերոնշյալ 7-րդ կետը բովանդակում է միայն ապահովագրողի և ապահովադիրի կողմից ԱՊՊԱ ընդհանուր պայմանների շուրջ ձեռք բերված համաձայնություն: Վկայագրի «Ապահովագրության պայմաններ» վերտառությամբ վերոնշյալ 7-րդ կետը անմիջականորեն չի պարունակում անձնական տվյալների մշակման **նպատակները**: Այս մասով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վկայագրի 7-րդ կետով նախատեսված համաձայնությունն ինքնին հանդիսանում է **«քողարկված»** համաձայնություն, քանի որ նրանում անձնական տվյալների մասով նույնպես հղում է կատարվում Կանոններին:

Հետևաբար՝ այնտեղ է արձանագրել, որ պատասխանողի կողմից իր անձնական տվյալները Ընկերությանն է փոխանցվել բացառապես ԱՊՊԱ պայմանագրի կնքելու ակնկալիքով, ինչը նշանակում է, որ Ընկերությունը սկզբնական և պայմանագրում կոնկրետ նշված (սահմանված) գործողություններ կատարելու նպատակների հետ անհամատեղելի որևէ այլ նպատակով՝ ՀՀ ճանապարհային ոստիկանության տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված իրավախախտումների համակարգ մուտք գործելու միջոցով պատասխանողի անձնական տվյալներն օգտագործելու որևէ իրավունք չի ունեցել:



Այսպիսով, Վճռաբեկ դատարանը հանգում է անփոփոխ եզրահանգման, որ Ընկերության հայցի հիմքում վկայակոչված՝ պատասխանողի կողմից ավտոմեքենան ոչ թե անձնական նկատառումներով, այլ որպես տաքսի շահագործելու փաստն ապացուցելու համար Դատարան ներկայացրած ապացույցը՝ պատահարի վերաբերյալ տեսաձայնագրությունը, ձեռք է բերվել Սահմանադրության և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ: Առկա չէ նաև օրենքով ուղղակիորեն նախատեսված այն դեպքը, որը, թերևս, կարող էր բավարար լինել անձնական տվյալների մշակումը, առանց տվյալների սուբյեկտի համաձայնության առկայության, օրինական համարելու համար:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված հիմնական իրավունքի խախտմամբ ձեռքբերված ապացույցի օգտագործումն արգելվում է (ՀՀ Սահմանադրություն, հոդված 63, մաս 3), ուստի տեսաձայնագրությունը (ապացույցը) չի կարող հիմք հանդիսանալ Ընկերության կողմից հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքի իրացման համար:

Անփոփոխվելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը, մերժելով Ընկերության հայցադիմումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող եզրափակիչ դատական ակտեր: Հետևաբար՝ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը: Միաժամանակ նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

### ***5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ) գլխի կանոնների համաձայն:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Ընկերության կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի

հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.07.2021 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0210/02/16
	2022թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԿԴ/0210/02/16
Նախագահող դատավոր	Ա. Կուրելյան
Դատավորներ	Ա. Մխիթարյան Ս. Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող</i>	Մ. ԴՐՄԵՅԱՆ
<i>գեկուցող</i>	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2022 թվականի դեկտեմբերի 26-ին գրավոր ընթացակարգով քննելով Արմեն Ազատյանի և Հասմիկ Ազատյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.06.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Նաիրի Ինչուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Արմեն Ազատյանի և Հասմիկ Ազատյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է համապարտության կարգով Արմեն Ազատյանից և Հասմիկ Ազատյանից բռնագանձել 1.208.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի փոխհատուցման գումար, այդ գումարին հաշվեգրել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափով գումար՝ սկսած կետանց թույլ տրվելու օրվանից:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ռ. Ալիկյան) 14.06.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (սախագահող դատավոր Լ. Գրիգորյան, դատավորներ Մ. Հարթենյան, Գ. Խանդանյան) 14.12.2017 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.06.2017 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 11.06.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.06.2022 թվականի որոշմամբ Արմեն Ազատյանի և Հասմիկ Ազատյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.06.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք են ներկայացրել Արմեն Ազատյանը և Հասմիկ Ազատյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտնող և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրք) 48-րդ և 49-րդ հոդվածները, «Ավտորրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ և 27-րդ հոդվածները:*

*Բողոքաբերները նշված պնդումները պարճատարանել են հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ապահովագրական պատահարը տեղի է ունեցել լիազորված վարորդ Հասմիկ Ազատյանի մասնակցությամբ, և ապահովադիր Արմեն Ազատյանը պատահարի վայրում չի գտնվել: Հասմիկ Ազատյանը հայտնել է, որ պատահարի մասին չի տեղեկացրել ապահովադիր Արմեն Ազատյանին, իսկ վերջինս էլ հաստատել է, որ պատահարի մասին տեղեկացել է հաջորդ օրը: Մինչդեռ Ընկերությունը որևէ ապացույց չի ներկայացրել այն մասին, որ ապահովադիր Արմեն Ազատյանը պատահարի մասին այն տեղի ունենալուց անմիջապես հետո տեղեկացված է եղել և դրա մասին չի հայտնել:

Վերաքննիչ դատարանը հաստատել է, որ Դատարանը գործի նոր քննության ընթացքում չի հետազոտել գործում առկա ապացույցները, սակայն նշել է, որ բացակայում է բողոքաբերների կողմից նշված ապացույցների հետազոտման անհրաժեշտությունը: Սակայն Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Հասմիկ Ազատյանի վկայակոչած հանգամանքները հիմնավորելու կապակցությամբ ներկայացված ապացույցները ոչ թե վերաբերել են հոգեկան խիստ հուզմունքն ապացուցելուն, այլ առաջին իսկ հնարավորության դեպքում Ընկերությանը պատահարի մասին տեղեկացնելու հանգամանքին: Ապացույցի գնահատումը դատարանի պարտականությունն է և ոչ թե իրավունքը, ուստի ստորադաս դատարանները

չէին կարող ձեռնպահ մնալ գործում առկա ապացույցները հետազոտելուց կամ գնահատելուց:

Վերոգրյալի հիման վրա բողոքարեւները պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 14.06.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Արմեն Ազատյանի և Ընկերության միջև 01.10.2014 թվականին կնքված թիվ SA450718 վկայագրով (այսուհետ՝ Վկայագիր) ապահովագրվել է Արմեն Ազատյանին պատկանող «Mercedes-Benz E 230» մակնիշի 01TT041 հաշվառման համարանիշով ավտոմեքենայի (այսուհետ՝ Ավտոմեքենա) օգտագործումից բխող պատասխանատվությունը:

Ավտոմեքենայի լիազորված տիրապետող է հանդիսանում նաև Հասմիկ Ազատյանը (**հատոր 1-ին, գ.թ. 14-15**).

2) 01.01.2015 թվականին ժամը 06:20-ի սահմաններում, միմյանց են բախվել Ավտոմեքենան և «Skoda Octavia Tour» մակնիշի 58659 հաշվառման համարանիշով ավտոմեքենան: Պատահարի պահին Ավտոմեքենան վարել է Հասմիկ Ազատյանը, ով իրեն ամբողջությամբ մեղավոր է ճանաչել (**հատոր 1-ին, գ.թ. 16, 19**).

3) Պատահարի մասին Հասմիկ Ազատյանը Ընկերությանը հայտնել է 01.01.2015 թվականին, ժամը 09:49-ին (**հատոր 1-ին, գ.թ. 18**).

4) Ընկերությունն ավտոտրանսպորտային պատահարի հետևանքով վնասված ավտոմեքենայի սեփականատիրոջը՝ «Համնուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, վճարել է 1.208.000 ՀՀ դրամի չափով ապահովագրական հատուցում (**հատոր 1-ին, գ.թ. 13, 20**).

5) Գործի քննության ընթացքում Հասմիկ Ազատյանը հայտնել է, որ պատահարի մասին չի տեղեկացրել ապահովադիր Արմեն Ազատյանին, իսկ Արմեն Ազատյանը հայտնել է, որ ավտոտրանսպորտային պատահարի մասին իմացել է այն ժամանակ, երբ Ավտոմեքենան տեղափոխել են տուգանային հրապարակ (**հատոր 1-ին, գ.թ. 114-117**):

### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

(Ա) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է.

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ Վերաքննիչ դատարանի կիրառած Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի և 27-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր,

2) առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել Նախկին օրենսգրքի 48-րդ հոդվածի, Օրենքի 19-րդ և 27-րդ հոդվածների խախտումներ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ արդյո՞ք ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պարտահարի մասին ապահովագրական ընկերությանը չրեղեկացնելու դեպքում ավերորբանսպորտային միջոցի սեփականատերը (ապահովադիր) և ավերորբանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձը հանդես են գալիս համապարփ պարտասպաններ, եթե սեփականատերը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել ապահովագրական պարտահարի մասին՝ ավերորբանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձի կողմից այդ մասին նրան չրեղեկացնելու կամ այլ պարճառով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1017-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ոչ կյանքի ապահովագրության պայմանագրով ապահովադիրն ապահովագրական պատահարի վրա հասնելն իրեն հայտնի դառնալուց հետո պարտավոր է այդ մասին անհապաղ (ողջամիտ ժամկետում) տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին: Եթե պայմանագրով նախատեսված է ծանուցման ժամկետ և (կամ) եղանակ, ապա դա պետք է արվի սահմանված ժամկետում ու պայմանագրում նշված եղանակով (...):

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրով ապահովադիր համարվող անձը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը ապահովագրական պատահարի դեպքում պարտավոր են այդ մասին հայտնել ապահովագրական ընկերությանը: Ապահովագրական պատահարի մասին հայտնելու ժամկետները և կարգը, ինչպես նաև ապահովագրական պատահարից հետո ապահովագրական ընկերության և պատահարի մասնակիցների այլ գործողությունները սահմանվում են Բյուրոյի կանոններով:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներից ԱՊՊԱ պայմանագրով սահմանվում են բացառություններ այն դեպքերի համար, երբ ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը պատահարի հետևանքով հայտնվել են անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որ անհնարին էր ապահովագրական ընկերությանը պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական պատահարի մասին տեղեկացնել, կամ **ապահովադիրը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել ապահովագրական պատահարի մասին՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից նրան չտեղեկացնելու կամ այլ պատճառով:** Ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը կրում են ապահովագրական ընկերությանը նրանց կողմից ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու անհնարինության (անտեղյակության) ապացուցման պարտականությունը: Սույն մասով նախատեսված տեղեկացման պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքների վերացման (ապահովագրական պատահարի մասին տեղեկացվելու) դեպքում ապահովադիրը և (կամ) ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը ապահովագրական պատահարի մասին պարտավոր է պայմանագրով սահմանված կարգով անմիջապես հայտնել ապահովագրական ընկերությանը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած իր որոշմամբ անդրադառնալով օրենսդրի կողմից նախատեսված՝ ապահովագրական ընկերությանն ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու պարտականությունը

կատարելու «անհապաղության» պայմանին, արձանագրել է, որ այն ունի հետևյալ բովանդակությունը. «անհապաղ» նշանակում է առանց հապաղելու, անմիջապես, նույն պահին, հնարավորինս արագ, առավելագույնս սեղմ ժամկետում: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ օրենսդիրը, սահմանելով «անհապաղության» եզրույթը, այն չի դիտել որպես բացարձակ պայման, քանի որ իրավա-նորմի հետագա շարադրանքում կիրառել է նաև «ողջամիտ ժամկետում» հասկացությունը: Իսկ ողջամիտ կարող է գնահատվել այն ժամանակահատվածը, որն **օբյեկտիվորեն** անհրաժեշտ է որևէ կոնկրետ գործողության իրականացման համար: Հետևաբար յուրաքանչյուր դեպքում «անհապաղության» պարտադիր պայմանի գնահատումն իրականացնելիս դատարանները ոչ միայն պետք է հաշվի առնեն ծանուցման անմիջապես, նույն պահին իրականացված լինելու փաստը, այլև՝ դրա իրականացման առաջին իսկ օբյեկտիվ, **արդարացված** հնարավորությունը (յրեն «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն ընդդեմ Վաչագան Խաչատրյանի և Անդրանիկ Գուլբանյանի թիվ ՏԳ3/0222/02/13 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ վերահաստատելով և զարգացնելով իրավական դիրքորոշումը ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վնաս պատճառած անձը կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, թեև պարտականություն են կրում ապահովագրական պատահարի տեղի ունենալն իրենց հայտնի դառնալուց հետո անհապաղ (ողջամիտ ժամկետում) տեղեկացնել ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին, այնուամենայնիվ առաջին իսկ հնարավորության դեպքում ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու հնարավորությունը կարող է պայմանավորվել մի շարք հանգամանքներով, քանի որ ապահովագրական պատահարի հետևանքով կարող է ստեղծվել այնպիսի իրադրություն, որի ազդեցությունն օբյեկտիվորեն կարող է հիմք հանդիսանալ վնաս պատճառած անձի կամ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ համար հապաղելու օրենքով և ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորությունը կատարելուց: Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում գնահատման պետք է արժանացնել ոչ միայն ապահովագրողին տեղեկացնելու **անհապաղ հնարավորությունը**, այլ նաև առաջին իսկ **արդարացված հնարավորությունը**: (...) Ուստի որոշակի ողջամիտ տևողությամբ հապաղումը ցանկացած պատահարի դեպքում պետք է համարել ոչ միայն բնական, այլև անվիճարկելի՝ պատահարի մասնակիցների իրավունքների անհարկի սահմանափակումներն ու հնարավոր վնասները բացառելու կամ առնվազն նվազագույնի հասցնելու նպատակով՝ յուրաքանչյուր դեպքում գնահատման արժանացնելով պատահարի մասին ապահովագրողին տեղեկացնելու՝ **ողջամիտ ժամկետում արդարացված հնարավորությունը** (յրեն «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն ընդդեմ Արմեն Սյրեփանյանի թիվ ԿԳ1/1999/02/14 քաղաքացիական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը):

(Բ) Վերահաստատելով և զարգացնելով Օրենքի 19-րդ հոդվածի կապակցությամբ նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև գույքի սեփականատեր ապահովադրի՝ ապահովագրական պատահարի մասին անտեղյակության պայմաններում դրա մասին անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) ապահովագրողին տեղեկացնելու պարտադիր պայմանի իրագործման օբյեկտիվ և արդարացված հնարավորության առկայության հարցին: Այսպես.

Ապահովադիրն ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո պարտավոր է անհապաղ, այն է՝ առաջին իսկ հնարավորության դեպքում, դրա

մասին հայտնել ապահովագրողին: Այդուհանդերձ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է ԱՊՊԱ պայմանագրով նշված կանոնից բացառություն կազմող դեպքերը: Ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ տեղեկացնելու կանոնից բացառություն են կազմում այն դեպքերը, երբ որոշակի օբյեկտիվ հանգամանքների բերումով հնարավոր չէ պարտադիր այդ պայմանի իրագործումը: Մի դեպքում դա պայմանավորված է ֆիզիկական անհնարինությամբ, երբ ապահովադիրը և/կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը գտնվում են այնպիսի իրավիճակում, որն իրենց գրկում է այդ գործողությունը կատարելու հնարավորությունից, օրինակ՝ անգիտակից կամ ֆիզիկական կարողությունն այլ կերպ սահմանափակող վիճակը: Մյուս բացառությունը վերաբերում է ապահովագրական պատահարի մասին ապահովադրի կողմից ապահովագրողին հայտնելու օբյեկտիվ անհնարինության դեպքին, երբ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի կողմից ապահովագրական պատահարի մասին ապահովադրին չհայտնելու կամ այլ պատճառով վերջինս տեղյակ չի լինում և չի կարող տեղյակ լինել դրա մասին: Եթե ապահովադիրը տեղյակ չի և չի կարող տեղյակ լինել ավտոտրանսպորտային միջոցի մասնակցությամբ ապահովագրական պատահար տեղի ունեցած լինելու մասին, չի կարող նաև դրա մասին հայտնել ապահովագրողին: Նշված դեպքում ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ հայտնելու ապահովադրի պարտականությունը ծագում է ապահովագրական պատահարի մասին տեղեկացվելու պահից: Որպես ապահովագրական պատահարի մասին անհապաղ ապահովագրողին չհայտնելու պատճառ դրա մասին անտեղյակության փաստ վկայակոչելիս ապահովադիրը և/կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը կրում են անհնարինության (անտեղյակության) ապացուցման պարտականությունը:

Շարադրվածի ամփոփմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասն ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ տեղեկացնելու՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված պարտականությունը անհնարին դարձնող հանգամանք է դիտարկում ապահովադրի անտեղյակությունը: Ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին տեղեկացնելու պայմանի իրագործումը գնահատելիս ուշադրության է արժանի ոչ միայն անհապաղության գործոնը, այլև ապահովադրի կողմից այդ պայմանի կատարման արդարացված և ողջամիտ հնարավորության առկայությունը: Եթե ապահովագրական պատահարի և դրա մասին ապահովագրողին տեղեկացնելու միջև ժամանակային սղումն ապահովագրական պատահարի մասին ապահովադրի անտեղյակության հետևանք է, ապա ապահովադրի մոտ դրա մասին ապահովագրողին հայտնելու ողջամիտ հնարավորություն կարող է ծագել դրա մասին տեղեկանալու պահից:

Արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե ապահովադիր սեփականատերը և/կամ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը վկայակոչում են ապահովագրական պատահարի մասին անտեղյակության փաստ, ապա կրում են այդ փաստի ապացուցման պարտականությունը, իսկ դատարանը քննության առարկա պետք է դարձնի ապահովագրողին անհապաղ տեղեկացնելու պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքի և ապահովագրողին տեղեկացնելու արդարացված հնարավորության առկայությունը:

Ապահովագրողին անհապաղ տեղեկացնելու պարտականությունն անհնարին դարձնող ապահովագրական պատահարի մասին ապահովադրի



անտեղյակության հանգամանքը՝ այդպիսին վկայակոչվելու դեպքում, կարևոր նշանակություն ունի ապահովադրի նկատմամբ հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունքի ծագման և վնաս պատճառած անձի հետ նրա համապարտ պատասխանատվություն կրելու հարցերի լուծման համար:

(Գ) Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի վնաս պատճառած անձի նկատմամբ, եթե ԱԳՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ, եթե ԱԳՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով ապահովագրական ընկերությունը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին:

Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն հոդվածի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում մի քանի անձի նկատմամբ, ապա այդ անձինք ապահովագրական ընկերության նկատմամբ հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ:

Նշված նորմերի մեկնաբանությունից հետևում է, որ ինչպես վնաս պատճառած անձի, այնպես էլ գույքի սեփականատեր ապահովադրի նկատմամբ ապահովագրական ընկերության մոտ կարող է ծագել հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք, եթե Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պարտականությունը չի կատարվել և ապահովագրողն անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) ապահովագրական պատահարի մասին չի տեղեկացվել: Ընդ որում՝ եթե միաժամանակ առկա են վնաս պատճառած անձին և ապահովադրին հետադարձ պահանջ ներկայացնելու հիմքեր, ապա վերջիններս հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ և կրում են համապարտ պատասխանատվություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է մեկնաբանվի Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո: Այսպես, վնաս պատճառած անձի և ապահովադրի համապարտ պատասխանատվության հարց քննարկելիս պետք է ուշադրության արժանանա այն հանգամանքը, թե արդյոք գույքի սեփականատեր ապահովադիրը տեղյակ է եղել կամ կարող էր տեղյակ լինել ապահովագրական պատահարի մասին, հետևաբար նաև ունենալ դրա մասին ապահովագրողին տեղեկացնելու արդարացված հնարավորություն: Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձի մասնակցությամբ, ով դրա մասին չի հայտնել ապահովադրին, ապա այդ փաստն ապացուցվելու դեպքում առկա է Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ապահովադրի կողմից ապահովագրողին անհապաղ տեղեկացնելու պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձի կողմից ապահովագրական պատահարի մասին ապահովադրին չտեղեկացնելու կամ այլ պատճառով ապահովադրի անտեղյակության հանգամանքն ապացուցվելու դեպքում ապահովագրական ընկերության մոտ ապահովադրի նկատմամբ հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ծագել չի կարող: Այլ կերպ ասած՝ Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին

մասի 2-րդ կետի «բ» ենթակետի վկայակոչմամբ հետադարձ պահանջի (սուրբրոգացիայի) իրավունք ապահովագրական ընկերության մոտ ապահովադրի նկատմամբ կարող է ծագել այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին չտեղեկացնելը պայմանավորված է եղել սուբյեկտիվ հանգամանքով: Հետադարձ պահանջի (սուրբրոգացիայի) իրավունքի ծագման համար անհրաժեշտ է, որ ապահովադրին ունեցած լինի ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ տեղեկացնելու ողջամիտ և արդարացված հնարավորություն, բայց ձեռնպահ մնա այդ պարտականությունը կատարելուց: Մինչդեռ, եթե ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ տեղեկացնելու պարտականությունն ապահովադրի կողմից չի կատարվել այն անհնարին դարձնող հանգամանքի բերումով՝ ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձի կողմից ապահովագրական պատահարի մասին ապահովադրին չտեղեկացնելու պատճառով, որպիսի փաստն ապացուցվել է, ապա Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետով սահմանված դեպքն առկա չէ, և ապահովադրի վնաս պատճառած անձի հետ միասին համապարտ պատասխանատվություն կրել չի կարող:

Շարադրվածի ամփոփմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 19-րդ և 27-րդ հոդվածները միմյանցից մեկուսի մեկնաբանվել չեն կարող: Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետի հիմքով ապահովագրական ընկերության մոտ ապահովադրի նկատմամբ հետադարձ պահանջի (սուրբրոգացիայի) իրավունք կարող է ծագել և ապահովադրի վնաս պատճառած անձի հետ համապարտ պարտական կարող է հանդես գալ, եթե վկայակոչված և/կամ ապացուցված չեն Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապահովագրական պատահարի մասին ապահովագրողին անհապաղ (առաջին իսկ հնարավորության դեպքում) տեղեկացնելու ապահովադրի պարտականությունը անհնարին դարձնող հանգամանքները:

*(Ի) Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արմեն Ազատյանի և Ընկերության միջև 01.10.2014 թվականին կնքված թիվ SA450718 վկայագրով (այսուհետ՝ Վկայագիր) ապահովագրվել է Արմեն Ազատյանին պատկանող Ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունը: Ավտոմեքենայի լիազորված տիրապետող է հանդիսանում նաև Հասմիկ Ազատյանը (**հատոր 1-ին, գ.թ. 14-15**):

01.01.2015 թվականին՝ ժամը 06:20-ի սահմաններում, միմյանց են բախվել Ավտոմեքենան և «Skoda Oktavia Tour» մակնիշի 58659 հաշվառման համարանիշով ավտոմեքենան: Պատահարի պահին Ավտոմեքենան վարել է Հասմիկ Ազատյանը, ով իրեն ամբողջությամբ մեղավոր է ճանաչել (**հատոր 1-ին, գ.թ. 16, 19**): Պատահարի մասին Հասմիկ Ազատյանը Ընկերությանը հայտնել է 01.01.2015 թվականին, ժամը 09:49-ին (**հատոր 1-ին, գ.թ. 18**):

Ընկերությունն ավտոտրանսպորտային պատահարի հետևանքով վնասված ավտոմեքենայի սեփականատիրոջը՝ «Համնուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, վճարել է 1.208.000 ՀՀ դրամի չափով ապահովագրական հատուցում (**հատոր 1-ին, գ.թ. 13, 20**):

Շինք ընդունելով ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ժամկետում և կարգով Ընկերությանն ապահովագրական պատահարի մասին չտեղեկացնելու փաստն ու Օրենքի 27-րդ հոդվածը՝ Ընկերությունը դիմելով դատարան պահանջել է համապարտության կարգով Արմեն Ազատյանից և Հասմիկ Ազատյանից բռնագանձել 1.208.000 ՀՀ դրամ՝ որպես պատճառված վնասի փոխհատուցման գումար,

այդ գումարին հաշվեգրել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափով գումար սկսած կետանց թույլ տրվելու օրվանից:

Գործի քննության ընթացքում Հասմիկ Ազատյանը հայտնել է, որ պատահարի մասին չի տեղեկացրել ապահովագիտական Արմեն Ազատյանին, իսկ Արմեն Ազատյանը հայտնել է, որ ավտոտրանսպորտային պատահարի մասին իմացել է այն ժամանակ, երբ Ավտոմեքենան տեղափոխել են տուգանային հրապարակ (**հատոր 1-ին, գ.թ. 114-117**):

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ռ. Ափինյան) 14.06.2017 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (սախագահող դատավոր Լ. Գրիգորյան, դատավորներ Մ. Հարթենյան, Գ. Խանդանյան) 14.12.2017 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 14.06.2017 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Անդրադառնալով Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքների վերլուծությանը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը մասնավորապես նշել է, որ «(...) արեղծված իրավիճակում Հասմիկ Ազատյանը կարող էր գրնվել հուզական լարված վիճակում, սակայն վերջինս փաստացիորեն չի հայտնվել անցիտակից վիճակում, այսինքն՝ ամբողջությամբ գիտակցել է տեղի ունեցած պարտահարը, սույն իրողությունը և համապատասխան իրադրությունում կարողացել է ձեռնարկել մի շարք գործողություններ, մասնավորապես՝ զանգել եղբորը և ընկերներին: Ավելին, գործում սույն փաստերի ուսումնասիրությունը վկայում է, որ Հասմիկ Ազատյանը տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պարտահարին հաջորդող ժամանակահատվածում գրնվել է ֆիզիկական և հոգեկան բավարար վիճակում, որպեսզի կարողանար պարզաճորեն կարգադրել օրենքով և պայմանագրով իր վրա դրված հայցվոր ընկերությանն ապահովագրական պարտահարի մասին անհապաղ տեղեկացնելու պարտականությունը (...):»:

Արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արձանագրել է, որ ստորադաս դատարանը չի իրականացրել «գործի փաստերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն» և «վերոնշյալ հանգամանքների անբեկանի արդյունքում հանգել է հայցի անհիմն լինելու վերաբերյալ սխալ եզրահանգման»:

Գործի նոր քննության արդյունքում Դատարանը 11.06.2021 թվականի վճռով հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ «(...) պարտահարը տեղի է ունեցել 01.01.2015թ. ժամը 06:00-ին, մինչդեռ «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական ՍՊ ընկերությանը պարտահարի մասին պարտասխանող Հասմիկ Արմենի Ազատյանը տեղեկացրել է 3 ժամ 19 րոպե ուշ՝ ժամը 09:49-ին: Այսինքն, պարտասխանողի կողմից պարզաճ չեն կատարվել ապահովագրական պարտահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելու պարտավորությունը, չեն պահպանվել թիվ SA-450718 վկայագրի 13-րդ կետով և ԱՊՊԱ պայմանների 7.1 կետով սահմանված պարտահարի մասին տեղեկացնելու ողջամիտ ժամկետները, հետևապես «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարտասխանարվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետի, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանների 9.1.1 կետի «դ» ենթակետի համաձայն հայցվոր «Նաիրի Ինշուրանս» ՍՊԸ-ն իր կողմից հստակագրված 1.208.000 ՀՀ

դրամի չափով ձեռք է բերել հեղադարձ պահանջի իրավունք պարասխանողներ Արմեն Ռազմիկի Ազատյանի և Հասմիկ Արմենի Ազատյանի նկատմամբ (...):»

Դատարանի 11.06.2021 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել պատասխանողներ Հասմիկ Ազատյանը և Արմեն Ազատյանը: Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը և Դատարանի 11.06.2021 թվականի վճիռը բողոքել անփոփոխ:

Հասմիկ Ազատյանի մատով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «(...) գործի առաջին քննության ժամանակ դատարանը հետազոտել է գնահատել է գործում եղած ապացույցները, այդ թվում՝ պարասխանողի ցուցմունքները, գալով հայցը մերժելու մասին եզրահանգման, իսկ գործի նոր քննությունն իրականացվել է վերաքննիչ դատարանի սահմանած ծավալով, նկատի ունենալով դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա վերաքննիչ դատարանի եզրահանգումները, որպիսի պայմաններում բացակայել է բողոքաբերի կողմից նշած ապացույցների հետազոտման անհրաժեշտությունը, քանի որ առաջին արյանի դատարանի հետազոտած նույն ապացույցների հիման վրա վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացությանը, որ Հասմիկ Ազատյանը տեղի ունեցած ճանապարհադրանապորտային պարսխարին հաջորդող ժամանակահատվածում գրնվել է ֆիզիկական և հոգեկան բավարար վիճակում, որպեսզի կարողանար պարզաճորեն կատարել օրենքով և պայմանագրով իր վրա դրված հայցվոր ընկերությանն ապահովագրական պարսխարի մասին անհատապաղ տեղեկացնելու պարտականությունը:

Անդրադառնալով բողոքաբերի այն դիմարկմանը, որ ԱՊՊԱ պայմանագիրը եղել է մեքենայի պահոցում, որը վթարի հետևանքով խաթարված լինելու պարձառով հնարավոր չէր բացել, և ինքը զանգահարել է ուրիշներին պարզելու համար, թե որ ապահովագրական ընկերությանը պետք է տեղյակ պահի ավտոմեքենայի մասին, որպիսի հանգամանքը հավասարվում է հետախուսային խուսակցությունների վերաբերյալ տեղեկանքներում, վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ գործում է այն կանխավարկածը, որ Հասմիկ Ազատյանը, որպես ավտորանապորտային միջոցը տիրապետող անձ, պարտավոր է ավտորանապորտային միջոցը վարելիս տեղյակ լինել իր գործողությունների և անգործության հետևանքով պարասխանապարտության առաջացման հնարավորության և դրա հետևանքների մասին, որի մեջ է ներառվում նաև ավտորանապորտային միջոցների օգտագործումից բխող պարասխանապարտության ոլորտը: Բացի դրանից, ապահովագրական ընկերության վերաբերյալ տվյալների ենթադրյալ չհնարությունը չի կարող դիմարկվել որպես ապահովագրական պարսխարի մասին հայտնելու պարտականության կատարման հարցում բացառություն, այդպիսին Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված չլինելու հիմքով: Հետևաբար, վերաքննիչ բողոքի նշված հիմքն անհիմն է և չի կարող ազդել սույն քաղաքացիական գործի ելքի վրա (...):»

Արմեն Ազատյանի մատով անդրադառնալով ապահովագրական պատահարի մասին տեղեկացված չլինելու մասին փաստարկին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «(...) հայցվորը չի վկայակոչել Ա.Ազատյանի պարսխարի մասին տեղեկացված լինելու փաստը, այլ ընդամենը փաստարկել է պարսխարի մասին սահմանված ժամկետում իրեն չտեղեկացնելու մասին: (...) պարասխանող Ա.Ազատյանը իր առարկության հիմքում դրված փաստը չի ապացուցել, հետևաբար դատարանի եզրահանգումներն իրավաչափ են: Նշվածով հերքվում են բողոքաբերի այն փաստարկները, թե ապահովագրական ընկերությունը որևէ ապացույց չի ներկայացրել այն մասին, որ ապահովադիր Ա.Ազատյանը թեև վթարի մասնակից չի եղել, այդուհանդերձ, վթարի մասին տեղեկացված է եղել այն տեղի ունենալուց անմիջապես հետո դատարանը չի անդրադարձել իր առարկություններին: Ինչ

վերաբերվում է բողոքաբերի այն փաստարկին, թե գործում առկա է ապացույց առ այն, որ Ա. Ազատյանը տեղյակ չի եղել վթարի մասին, ապա վերաքննիչ դատարանը արձանագրում է, որ դատարանը ուսումնասիրելով գործի հանգամանքները և ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա, միանգամայն ճիշտ եզրահանգման: (...)»:

**(Գ-1)** Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հասմիկ Ազատյանի մասով ստորադաս դատարանները հանգել են տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանգամանքների բացակայության վերաբերյալ իրավաչափ եզրակացության: Ընկերության վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն արդեն արձանագրել էր, որ ապահովագրական պատահարին հաջորդող ժամանակահատվածում Հասմիկ Ազատյանը չի գտնվել անգիտակից վիճակում, գիտակցել է տեղի ունեցածը պատահարը և համապատասխան իրադրությունում կարողացել է ձեռնարկել մի շարք գործողություններ, այսինքն՝ ունեցել է ապահովագրական պատահարի մասին Ընկերությանը տեղեկացնելու արդարացված հնարավորություն, որից չի օգտվել: Սույն գործի փաստերը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտված չլինելու պատճառաբանությամբ գործն ուղարկվել է նոր քննության, որի արդյունքում Դատարանն իրավաչափ կերպով արձանագրել, իսկ Վերաքննիչ դատարանը հաստատել է Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանի բացակայությունն ու Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետի հիմքով Հասմիկ Ազատյանի նկատմամբ Ընկերության մոտ հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ծագած լինելու փաստը: Հետևաբար Հասմիկ Ազատյանի մասով վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

**(Գ-2)** Արմեն Ազատյանի՝ Հասմիկ Ազատյանի հետ համապարտ պարտապաններ հանդես գալու գնահատման հարցին Դատարանն առհասարակ չի անդրադարձել, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանն Արմեն Ազատյանի մասով քննարկման առարկա չի դարձրել ապահովագրական պատահարի մասին նրա անտեղյակության փաստը, հետևաբար նաև տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանգամանքի հնարավոր առկայությունը: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը չի անդրադարձել և չի գնահատել Արմեն Ազատյանի և Հասմիկ Ազատյանի բացատրություններն այն մասին, որ վերջինս ապահովագրական պատահարի մասին Արմեն Ազատյանին չի հայտնել, և ապահովադիրը դրա մասին իմացել է միայն որոշ ժամանակ անց: Արդյունքում ստորադաս դատարանների կողմից Արմեն Ազատյանի մասով քննարկման առարկա չի դարձվել տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող պայմանի, այն է՝ ապահովագրական պատահարի մասին անտեղյակության հանգամանքը, ինչը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ էական է Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի հիմքով Ընկերության մոտ Արմեն Ազատյանի նկատմամբ հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ծագելու և Արմեն Ազատյանի և Հասմիկ Ազատյանի համապարտ պարտապաններ հանդես գալու հարցերը գնահատելու և լուծելու համար:

Վերոշարադրյալ պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում Վերաքննիչ դատարանի կողմից Նախկին օրենսգրքի 48-րդ և 49-րդ հոդվածները խախտված լինելու և Օրենքի 19-րդ և 27-րդ հոդվածները

սխալ մեկնաբանված լինելու կապակցությամբ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Արմեն Ազատյանի մասով ստորադաս դատարանները պատշաճ քննություն չեն իրականացրել, քննարկման առարկա չեն դարձրել Արմեն Ազատյանի կողմից ապահովագրական պատահարի մասին տեղյակ չլինելու փաստն ու Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքների առկայությունը:

***(Ե) Գործի նոր քննության ծավալը.***

Նկատի ունենալով այն, որ Արմեն Ազատյանի և Հասմիկ Ազատյանի դեմ պահանջը ներկայացվել է որպես համապարտ պարտապաններ, և որոշմամբ արձանագրվել է Արմեն Ազատյանի՝ համապարտ պարտապան հանդես գալու հարցի կապակցությամբ նոր քննություն իրականացնելու անհրաժեշտությունը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վերապահված լիազորությունը, այն է՝ բեկանել Վերաքննիչ դատարանի 14.06.2022 թվականի որոշումն ու գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ որոշմամբ շարադրված իրավական դիրքորոշումների շրջանակում Արմեն Ազատյանի իրավունքներին առնչվող ծավալով նոր քննության:

***5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ որոշմամբ շարադրված իրավական դիրքորոշումների շրջանակներում Արմեն Ազատյանի իրավունքներին առնչվող ծավալով նոր քննության, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը՝ Հասանիկ Ազատյանի իրավունքների մասով, մերժել:

1.1. Վճռաբեկ բողոքը՝ Արմեն Ազատյանի իրավունքների մասով, բավարարել:

2. Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.06.2022 թվականի որոշումը՝ Արմեն Ազատյանի իրավունքների մասով, ու գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ սույն որոշմամբ սահմանված ծավալով նոր քննության:

3. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

# 11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/2014/02/17
Քաղաքացիական գործ թիվ	ԵԱՔԴ/2014/02/17
Նախագահող դատավոր՝	Կ. Համբարձումյան
Դատավորներ՝	Հ. Ետքյան Ն. Գաբրիելյան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող և զեկուցող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ս. ՄԵՂՐՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Է. ՍԵՂՐԱԿՅԱՆ

2023 թվականի հոկտեմբերի 09-ին գրավոր ընթացակարգով քննելով Մարտին Վարդանյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ Մարտին Վարդանյանի հայցի ընդդեմ «Ռեստ» ապահովագրական ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Աշոտ Հակոբյանի՝ վնասը հատուցելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Մարտին Վարդանյանը պահանջել է Ընկերությունից և Աշոտ Հակոբյանից համապարտության կարգով բռնագանձել 342.000 ՀՀ դրամ, որից 115.000 ՀՀ դրամը՝ որպես չփոխհատուցված վնասի գումար, 27.000 ՀՀ դրամը՝ որպես խախտված իրավունքները վերականգնելու նպատակով կատարված փորձաքննության ծախս ու 200.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 09.06.2020 թվականի վճռով քաղաքացիական գործի վարույթն ըստ Մարտին Վարդանյանի հայցի ընդդեմ Աշոտ Հակոբյանի՝ վնասը հատուցելու պահանջի մասին, կարճվել է՝ հայցվորի կողմից պահանջից հրաժարվելու հիմքով, իսկ ըստ Մարտին Վարդանյանի հայցի ընդդեմ Ընկերության՝ վնասը հատուցելու պահանջի մասին, մերժվել է:



ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.05.2022 թվականի որոշմամբ Մարտին Վարդանյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 09.06.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Մարտին Վարդանյանը (ներկայացուցիչ Մամիկոն Մանուկյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Ավրոպրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարասպահանսարվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-9-րդ, 60-րդ, 62-րդ ու 66-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապարզապես է հերկյալ հիմնավորումներով:*

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չէ, քանի որ դրանում արտացոլված չեն ապացույցների գնահատման, փաստերի հաստատման ու իրավունքի կիրառման գործընթացի կապակցությամբ Դատարանի դատողությունների ընթացքն այն առումով, որ անհասկանալի է, թե Դատարանն ինչու չի նշանակել կրկնակի փորձաքննություն, և ինչու է Դատարանի կողմից իր՝ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործընթացի շրջանակներից դուրս վնասի չափի գնահատման վերաբերյալ ստացված փորձաքննությունը դիտարկվում որպես հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույց:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ապահովագրական ընկերությունը տուժողին պատճառված վնասը հատուցում է կա՛մ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված, կա՛մ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) որակավորած փորձագետների կողմից տրված եզրակացությամբ սահմանված չափով: Դատարանը ճանապարհատրանսպորտային պատահարների առնչությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի վերաբերյալ գործեր քննելիս ոչ միայն կաշկանդված չէ պատճառված վնասների չափի մասին Բյուրոյի որակավորած փորձագետների տված եզրակացությամբ, այլ, ընդհակառակը, եզրափակիչ դատական ակտով ինքն է որոշում և հաստատում պատճառված վնասի չափը:

Տվյալ դեպքում ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում իրեն պատճառված նյութական վնասը փոխհատուցելու պահանջով օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դիմել է Ընկերությանը, ինչի արդյունքում Բյուրոյի որակավորած փորձագետների կողմից իրականացվել է առաջնային փորձաքննություն, ու իր ավտոմեքենային հասցված նյութական վնասը գնահատվել է 380.000 ՀՀ դրամ: Մինչդեռ պատճառված վնասն ավելի է եղել, և ինքը, համաձայն չլինելով առաջնային հաշվետվությամբ սահմանված վնասի չափի հետ, դիմել է դատարան՝ պատճառված վնասը հատուցելու պահանջով: Ստորադաս դատարանների կողմից իր պահանջը մերժվել է առաջնային փորձաքննության արդյունքների վերաբերյալ իր անհամաձայնությունը կրկնակի փորձաքննության

անցկացման պահանջ ներկայացնելու միջոցով չիրականացվելու պատճառաբանությամբ, ինչը դուրս է բողոքում նշված իրավանորմերի տրամաբանությունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.05.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերության կողմից իրականացվել է Մարտին Վարդանյանին պատկանող ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրություն **(անվիճելի փաստ)**.

2) ՀՀ ոստիկանության ՃՈ ՃՏՊ բաժնի ավագ տեսուչ Գ. Խանադյանի կողմից 04.12.2015 թվականին կազմված թիվ 2-14677 եզրակացության համաձայն՝ 11.11.2015 թվականին ժամը 09:10-ի սահմաններում Աշոտ Հակոբյանը թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև Ճանապարհային երթևեկության կանոնների 77-րդ կետի 1-ին մասի պահանջների խախտումներ, որի հետևանքով իր ավտոմոբիլի առջևի աջ մասով բախվել է նաև Վահե Վարդանյանի ավտոմոբիլի ձախ կողային մասին **(հատոր 1-ին, գ.թ. 7)**.

3) 29.12.2015 թվականին Մարտին Վարդանյանը բողոք-պահանջ է ներկայացրել Ընկերությանը՝ նշելով, որ բողոք-պահանջում նշված պատճառաբանությամբ համաձայն չէ վնասի գնահատման առաջնային հաշվետվության հետ, որի համաձայն՝ գույքին պատճառված վնասը կազմում է 380.000 ՀՀ դրամ, և խնդրել է հատուցել իրական վնասը **(հատոր 1-ին, գ.թ. 17)**.

4) 21.01.2016 թվականին Մարտին Վարդանյանն Ընկերության դեմ պահանջ է ներկայացրել Ֆինանսական համակարգի հաշտարարին, որից հետագայում հրաժարվել է, և Ֆինանսական համակարգի հաշտարարը 21.03.2016 թվականին որոշում է կայացրել պահանջի քննությունը դադարեցնելու մասին: Նշված պահանջի քննության շրջանակներում «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ի կողմից տրվել է գնահատման հաշվետվություն այն մասին, որ վթարի հետևանքով Մարտին Վարդանյանին պատկանող ավտոմեքենային պատճառված վնասը կարող է կազմել 495.000 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 18, 19, 43-46)**.

5) 05.08.2016 թվականին Մարտին Վարդանյանը դիմել է Ընկերությանը՝ խնդրելով տալ տեղեկատվություն իր ավտոմեքենային 495.000 ՀՀ դրամի չափով պատճառված նյութական վնասը հատուցելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցների վերաբերյալ: Ի պատասխան այդ դիմումի՝ Ընկերությունը հայտնել է, որ գնահատման փորձաքննությամբ սահմանված 380.000 ՀՀ դրամն իր կողմից փոխանցվել է Մարտին Վարդանյանի տարանցիկ հաշվեհամարին, իսկ ինչ վերաբերվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջը քննելու ընթացքում նշանակված փորձաքննությամբ սահմանված գումարին, ապա այդ պահանջից հրաժարվելու պայմաններում Ընկերության համար որևէ պարտավորություն չի կարող առաջանալ **(հատոր 1-ին, գ.թ. 15, 16)**.

6) Մարտին Վարդանյանի ներկայացուցիչ փաստաբան Մամիկոն Մանուկյանի դիմումի հիման վրա «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից եզրակացություն է տրվել այն մասին, որ հայցվորի ավտոմեքենային պատճառված նյութական վնասի չափը կարող է կազմել 479.400 ՀՀ դրամ **(հատոր 1-ին, գ.թ. 24-26)**:

#### 4. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է եղել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայությամբ, որը հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ավերուրբանասպորուրային միջոցի օգտագործման հետևանքով «Ավերուրբանասպորուրային միջոցների օգտագործումից բխող պարասիսանարվության պարուրադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի իմաստով անձանց պարճառված վնասի չափի որոշման արուրադարական ընթացակարգերին, ինչպես նաև փորձաքննության արդյունքները դարական կարգով վիճարկելու իրավական հնարավորությանը:*

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքների կարևորությունը բազմիցս նշվել է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում:

Նշված հարցին անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (տե՛ս ՄԴՈ-652, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-765, ՄԴՈ-844, ՄԴՈ-873, ՄԴՈ-890, ՄԴՈ-932, ՄԴՈ-942, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1052, ՄԴՈ-1115, ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1196, ՄԴՈ-1197, ՄԴՈ-1220, ՄԴՈ-1222, ՄԴՈ-1257, ՄԴՈ-1289)՝ արձանագրելով, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:

Եվրոպական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրն է դատարանի մատչելիության իրավունքը: *Կրեուզն ընդդեմ Լեհաստանի* գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ քաղաքացիական գործով դատարանում հայց հարուցելու իրավունքը: Այդուհանդերձ, դա է, որ հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հիմքում ընկած մնացած երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեւ Կրեուզն ընդդեմ Լեհաստանի թիվ 28249/95 գանգաբարով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52*):

Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չիետապնդի, ու եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*Կրեւ Աչինգդանեն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 8225/78 գանգաբարով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են այլ անձին վնաս պատճառելու հետևանքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վնասներ հատուցելով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կատանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովագրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 996-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ ապահովագրողը, որոշակի միանվագ կամ պարբերական վճարի (ապահովագրավճարի) դիմաց պարտավորվում է մյուս կողմին՝ ապահովագրին կամ նրա մատնանշած անձին (շահառուին), որոշակի ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել որոշակի իրադարձության (իրադարձությունների) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար (ապահովագրական հատուցում), եթե այդ իրադարձությունների տեղի ունենալը կրում է հավանական և (կամ) պատահական բնույթ և կախված չէ կողմերի կամ ապահովագրված անձի կամ շահառուի կամքից (բացառությամբ կյանքի ապահովագրության այն դեպքերի, երբ հատուցվում է որոշակի հավաստի և ակնկալվող իրադարձության տեղի ունենալը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 998-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ապահովագրության պայմանագրի էական պայմաններից է նաև ապահովագրական պատահարը (պատահարները) կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքում տրվում է ապահովագրական հատուցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9831-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովագրողի կողմից ապահովագրական պայմանագրի հիման վրա ապահովագրին կամ շահառուին վճարման ենթակա գումարն է՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձինք և քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ (**տրանսպորտային միջոցների**, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թոյների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), պարտավոր

են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չեն ապացուցում, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետևանքով: (...) Վնաս հատուցելու պարտականությունը դրվում է առավել վտանգի աղբյուրը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով (վարձակալության իրավունք, լիազորագրով տրանսպորտային միջոցները վարելու իրավունք և այլն) տիրապետող իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով վերը նշված իրավանորմերի վերլուծությանը, արձանագրել է, որ սեփականատերը, իր ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրելով, փաստացի հնարավորություն է ստանում ապահովագրավճարի դիմաց ապահովագրողին փոխանցելու վնասը (որը կարող է պատճառված լինել ինչպես սեփականատիրոջ, այնպես էլ ավտոմեքենայի լիազորված տիրապետողի կողմից) հատուցելու իր պարտականությունը (տե՛ս «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ն ընդդեմ «ՄՄԱՐՏՍՈՎԹ» ՍՊԸ-ի թիվ ԿԴՆ/2015/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Ջարգացնելով նշված դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, ի թիվս այլ դեպքերի, կարող են ծագել այլ անձին վնաս պատճառելու հետևանքով: Ընդ որում, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով ոչ միայն հստակեցրել է «վնաս» հասկացությունն ու սահմանել դրա շրջանակները, այլ նաև նույն հոդվածի 1-ին կետով ամրագրել է, որ իր իրավունքների խախտման դեպքում անձը կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում: Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների բովանդակային վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար անհրաժեշտ է, որպեսզի միաժամանակ առկա լինի իրավաբանական փաստերի հետևյալ կազմը.

1. վնասի առկայությունը,
2. պատասխանող կողմի անիրավաչափ գործողությունը,
3. պատճառական կապը:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ վերոգրյալ կարգավորումները կիրառելի են նաև ապահովագրության ոլորտում՝ վնասից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետով հստակեցվում է, որ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով, որից ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածի 1-ին կետով հստակեցվում է, որ եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով, ապա ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում ապահովադրին (ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա (կամ շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով: (...): Այսինքն՝ ապահովագրական հատուցումը պատահարի դեպքում ապահովագրողի կողմից տուժողին վճարման ենթակա գումարն է (տե՛ս «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությունն ընդդեմ Արամ Խաչունցի թիվ ԵԱՆ-Դ/2065/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.02.2021 թվականի որոշումը):

Վերահաստատելով ապահովագրական հարաբերությունները կարգավորող վերը նշված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան

իրավանորմերի կապակցությամբ արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև հետևյալը.

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրով նույն օրենքով սահմանված պայմաններով ապահովագրվում է տուժած անձանց պատճառված վնասների հատուցման համար ապահովագրված անձանց պատասխանատվությունը:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված լինելու դեպքում *գույքին պարճառված վնասների չափը գնահատվում է*, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ հարուցված չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող դատական ակտ չընդունվելու դեպքում՝ *Բյուրոյի որակավորած փորձագետների (այսուհետ՝ փորձագետ) կողմից*, բացառությամբ նույն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի, որոնց համար Բյուրոյի կանոններով կարող է նախատեսվել ապահովագրական ընկերության կողմից մեղավորության որոշման և (կամ) վնասի չափի գնահատման պարզեցված կարգ:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) նույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիմումը ստանալուց հետո՝ Բյուրոյի կանոններով սահմանված ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում, պարտավոր է որոշում ընդունել փորձաքննություն նշանակելու մասին (...): Փորձաքննության ավարտից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) փորձաքննության արդյունքների մասին գրավոր ծանուցում է ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին): *Ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) նույն մասով նախատեսված ծանուցումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, լրացուցիչ փորձաքննություն չնշանակվելու և կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ չներկայացվելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է գրավոր որոշում՝ ապահովագրական հարուցումը վճարելու կամ՝ ապահովագրական հարուցման վճարումը մերժելու մասին՝* համապատասխան որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկելով ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *եթե ըստ* ապահովադրի, *ապահովագրված անձի, տուժողի (նրա իրավահաջորդի) և* ապահովագրական ընկերության (Բյուրոյի) *փորձագետի եզրակացությունը պարզ կամ ամբողջական չէ, ապա նրանք նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ծանուցման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, իրավունք ունեն փոխադարձ համաձայնությանը նշանակելու լրացուցիչ փորձաքննության անցկացում (...):* Լրացուցիչ փորձաքննության նշանակման դեպքում լրացուցիչ փորձաքննության ավարտից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) փորձաքննության արդյունքների մասին գրավոր ձևով ծանուցում է ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին): *Ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) նույն մասով նախատեսված ծանուցումից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, կրկնակի փորձաքննության պահանջ չներկայացվելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է գրավոր որոշում՝ ապահովագրական հարուցումը վճարելու կամ՝ ապահովագրական*

*հարուցման վճարումը մերժելու մասին՝* համապատասխան որոշումը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով ուղարկելով ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *եթե* ապահովադր-  
*ված անձը, տուժողը (նրա իրավահաջորդը)* կամ ապահովագրական ընկերու-  
թյունը (Բյուրոն) *համաձայն չէ նույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով սահմանված*  
*կարգով անցկացված փորձաքննության արդյունքներին, սպա նա նույն հոդվածի*  
*համապարասխանաբար 1-ին կամ 2-րդ մասով սահմանված ծանուցման օրվանից*  
*հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, իրավունք ունի պահանջելու կրկնակի*  
*փորձաքննության անցկացում (...):*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կրկնակի փորձաքննության անցկաց-*  
*ման պահանջ ներկայացվելու դեպքում կրկնակի փորձաքննություն նշանակելու*  
*և փորձագետը նշանակելու մասին որոշումն ընդունում է Բյուրոն՝ համապարաս-*  
*խան պահանջը ներկայացվելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:* Ընդ  
որում, նույն մասով նախատեսված փորձագետը չպետք է փոխկապակցված լի-  
նի ապահովադրի, ապահովագրված անձի, տուժողի (նրա իրավահաջորդի) և  
ապահովագրական ընկերության (Բյուրոյի) հետ: *Կրկնակի փորձաքննության*  
*անցկացումից հետո լրացուցիչ փորձաքննություն նշանակվել չի կարող, և կրկ-*  
*նակի փորձաքննության արդյունքները կարող են բողոքարկվել միայն դատական*  
*կարգով: Կրկնակի փորձաքննության ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա*  
*ընթացքում, ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) ընդունում է գրավոր որո-*  
*շում՝ ապահովագրական հարուցումը վճարելու կամ՝ ապահովագրական հարուց-*  
*ման վճարումը մերժելու մասին՝* համապատասխան որոշումը 3 աշխատանքային  
օրվա ընթացքում, պատշաճ կերպով ուղարկելով ապահովադրին, ապահովագր-  
ված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին):

Վերը նշված նորմերի մեկնաբանությունից բխում է, որ ավտոտրանսպոր-  
տային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր  
ապահովագրության պայմանագրով նույն օրենքով սահմանված պայմաններով  
ապահովագրվում է ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով  
նույն օրենքով նախատեսված անձնական կամ գույքին պատճառված վնասներ  
կրած ցանկացած՝ նույն օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կար-  
գով հատուցման իրավունք ունեցող անձանց պատճառված վնասների հատուց-  
ման համար ապահովագրված անձանց պատասխանատվությունը: Ընդ որում,  
քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուց-  
ված չլինելու կամ տվյալ գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտ  
ընդունված չլինելու դեպքում գույքին պատճառված վնասի չափը գնահատվում է  
Բյուրոյի որակավորած փորձագետների կողմից:

Մինևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է նաև պատճառված վնասի չա-  
փի որոշման ընթացակարգը, որի համաձայն՝ ապահովագրական ընկերությու-  
նը, տուժողից կամ նրա իրավահաջորդից ստանալով ապահովագրական հա-  
տուցում ստանալու մասին դիմումը, Բյուրոյի կանոններով սահմանված ժամկե-  
տում, սակայն ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում, պարտավոր  
է որոշում ընդունել փորձաքննություն նշանակելու մասին: Ապահովագրական  
ընկերությունը, ստանալով փորձաքննության արդյունքում տրված եզրակացու-  
թյունը, հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցում է  
ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին):  
Եթե ծանուցումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում չի նշանակվում  
լրացուցիչ փորձաքննություն կամ չի ներկայացված կրկնակի փորձաքննություն



անցկացնելու մասին պահանջ, ապա ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) գրավոր ձևով որոշում է ընդունում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին:

Բոլոր այն դեպքերում, երբ ըստ ապահովադրի, ապահովագրված անձի, տուժողի (նրա իրավահաջորդի) և ապահովագրական ընկերության (Բյուրոյի) փորձագետի եզրակացությունը պարզ կամ ամբողջական չէ, ապա ծանուցումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նշված անձանց փոխադարձ համաձայնությամբ կարող է նշանակվել լրացուցիչ փորձաքննություն, որի արդյունքների մասին ևս ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) պարտավոր է գրավոր ծանուցել ապահովադրին, ապահովագրված անձին ու տուժողին (նրա իրավահաջորդին): Եթե ծանուցումից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում կրկնակի փորձաքննություն նշանակելու պահանջ չի ներկայացվում, ապա ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին, իսկ այն դեպքում, երբ ապահովադիրը, ապահովագրված անձը, տուժողը (նրա իրավահաջորդը) կամ ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) համաձայն չէ Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով սահմանված կարգով անցկացված փորձաքննության արդյունքներին, ապա նրանք այդ մասերով սահմանված ծանուցման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունեն պահանջելու կրկնակի փորձաքննության անցկացում, որը նշանակելու մասին Բյուրոն ընդունում է որոշում:

Միևնույն ժամանակ օրենսդիրը սահմանել է, որ կրկնակի փորձաքննության անցկացումից հետո լրացուցիչ փորձաքննություն նշանակվել չի կարող, և կրկնակի փորձաքննության արդյունքները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով: Ընդ որում, կրկնակի փորձաքննության ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) ընդունում է գրավոր որոշում ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին:

Վերը նշված նորմերը ենթարկելով համակարգային վերլուծության, դրանք համադրելով վկայակոչված սահմանադրական և կոնվենցիոն նորմերի, Եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ինչպես նաև ՀՀ վճարելի դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների հետ՝ Վճարելի դատարանը, նպատակ ունենալով զարգացնելու Օրենքի 21-րդ ու 22-րդ հոդվածները, անհրաժեշտ է համարում արձանագրել, որ տվյալ դեպքում օրենսդիրը որոշակի սահմանափակումներ է կիրառել Օրենքի իմաստով պատճառված վնասի չափը դատական կարգով որոշելու համար՝ դրա որոշման եղանակներն առավելապես նախատեսելով արտադատական կարգով, իսկ այդ վնասի չափի որոշման համար դատական կարգ սահմանել է բացառապես այն դեպքի համար, երբ արտադատական կարգով արդեն իսկ առկա է կրկնակի փորձաքննության եզրակացություն, որի արդյունքների հետ վերը նշված անձանցից որևէ մեկն անհամաձայնություն ունի, և անհրաժեշտ է կրկնակի փորձաքննության արդյունքները բողոքարկել դատական կարգով: Նման իրավակարգավորում նախատեսելու արդյունքում, ըստ էության, չի խախտվում անձի դատարանի մատչելիության իրավունքը, ու անձը չի գրկվում այդ իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Սահմանելով նման իրավակարգավորում՝ օրենսդիրը նաև հետապնդել է իրավաչափ նպատակ՝ ողջամիտ

հարաբերակցություն պահպանելով ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև:

***Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարումամբ***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության կողմից իրականացվել է Մարտին Վարդանյանին պատկանող ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրություն: ՀՀ ոստիկանության ՃՈ ՃՏՊ բաժնի ավագ տեսուչ Գ. Խանադյանի կողմից 04.12.2015 թվականին կազմված թիվ 2-14677 եզրակացության համաձայն՝ 11.11.2015 թվականին ժամը 09:10-ի սահմաններում Աշոտ Հակոբյանը թույլ է տվել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև Ճանապարհային երթևեկության կանոնների 77-րդ կետի 1-ին մասի պահանջների խախտումներ, որի հետևանքով իր ավտոմոբիլի առջևի աջ մասով բախվել է նաև Վահե Վարդանյանի ավտոմոբիլի ձախ կողային մասին:

29.12.2015 թվականին Մարտին Վարդանյանը բողոք-պահանջ է ներկայացրել Ընկերությանը՝ նշելով, որ բողոք-պահանջում նշված պատճառաբանությամբ համաձայն չէ վնասի գնահատման առաջնային հաշվետվության հետ, որի համաձայն՝ գույքին պատճառված վնասը կազմում է 380.000 ՀՀ դրամ, և խնդրել է հատուցել իրական վնասը:

21.01.2016 թվականին Մարտին Վարդանյանն ընդդեմ Ընկերության պահանջ է ներկայացրել Ֆինանսական համակարգի հաշտարարին, որից հետագայում հրաժարվել է, և Ֆինանսական համակարգի հաշտարարը 21.03.2016 թվականին որոշում է կայացրել պահանջի քննությունը դադարեցնելու մասին: Նշված պահանջի քննության շրջանակներում «ԱՐ ՎԻ ԷՄ ԲՈՆՍԱՍԼՏ» ՍՊԸ-ի կողմից տրվել է գնահատման հաշվետվություն այն մասին, որ վթարի հետևանքով Մարտին Վարդանյանին պատկանող ավտոմեքենային պատճառված վնասը կարող է կազմել 495.000 ՀՀ դրամ:

Դրանից հետո՝ 05.08.2016 թվականին, Մարտին Վարդանյանը դիմել է Ընկերությանը՝ խնդրելով տալ տեղեկատվություն իր ավտոմեքենային 495.000 ՀՀ դրամի չափով պատճառված նյութական վնասը հատուցելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցների մասին, որին ի պատասխան Ընկերությունը հայտնել է, որ գնահատման փորձաքննությամբ սահմանված 380.000 ՀՀ դրամն իր կողմից արդեն իսկ փոխանցվել է Մարտին Վարդանյանի տարանցիկ հաշվեհամարին, իսկ ինչ վերաբերվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից պահանջը քննելու ընթացքում նշանակված փորձաքննությամբ սահմանված գումարին, ապա այդ պահանջից հրաժարվելու պայմաններում Ընկերության համար որևէ պարտավորություն չի կարող առաջանալ:

Մարտին Վարդանյանի ներկայացուցիչ փաստաբան Մամիկոն Մանուկյանի դիմումի հիման վրա «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից եզրակացություն է տրվել այն մասին, որ հայցվորի ավտոմեքենային պատճառված նյութական վնասի չափը կարող է կազմել 479.400 ՀՀ դրամ:

Այժմ Մարտին Վարդանյանը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ նաև Ընկերության՝ պահանջելով Ընկերությունից բռնագանձել 342.000 ՀՀ դրամ, որից 115.000 ՀՀ դրամը՝ որպես չփոխհատուցված վնասի գումար, 27.000 ՀՀ դրամը՝ որպես խախտված իրավունքները վերականգնելու նպատակով կատարված

փորձաքննության ծախս և 200.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատարանը, պատճառաբանելով, որ «սպահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում տուժողի գույքին պարձատված վնասի չափը քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված չլինելու դեպքում գնահատվում է Բյուրոյի որակավորած փորձագետների կողմից, որն էլ սպահովագրողի կողմից, պահանջվող այլ վավերապայմանների առկայության դեպքում, ենթակա է վճարման տուժողին՝ որպես սպահովագրական հատուցման գումար, իսկ նշված փորձաքննության արդյունքների վերաբերյալ անհամաձայնությունը կարող է իրացվել կրկնակի փորձաքննության անցկացման պահանջով», «տվյալ դեպքում չեն պահպանել «Ավրոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարասիանսարվության պարտադիր սպահովագրության մասին» ՀՀ օրենքով և ԱՊՊԱ պայմանագրով սահմանված սպահովագրական հատուցման վճարման ընթացակարգերը, որպիսի պայմաններում պարասիանսող սպահովագրական ընկերության համար չի կարող առաջանալ Բյուրոյի որակավորած փորձագետների կողմից գնահատված վնասի չափի և հայցվորի կողմից ներկայացված «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ի ավտոմեքենային պարձատված վնասի գնահատման թիվ Հ112 հաշվետվությամբ ու «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 26.04.2017 թվականի թիվ 33001610 եզրակացությամբ որոշված վնասի չափի տարբերությունը, որպես սպահովագրական հատուցման գումար, հայցվորին վճարելու պարտավորություն, քանի որ, ինչպես վերը նշվել է, տվյալ դեպքում պահպանված չեն «Ավրոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարասիանսարվության պարտադիր սպահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, նկարի ունենալով, որ սպահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում հայցվորի գույքին պարձատված վնասի չափը քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով վարչական գործ հարուցված չլինելու դեպքում գնահատվել է Բյուրոյի որակավորած փորձագետների կողմից, որը կազմել է 380.000 ՀՀ դրամ և պարասիանսող «Ռեառ» ԱՓԲ ընկերության կողմից վճարվել է հայցվորին, իսկ հայցվորը նշված փորձաքննության արդյունքների վերաբերյալ իր անհամաձայնությունը չի իրականացրել կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելով», գտել է, որ «Մարտին Աղավարդի Վարդանյանի հայցն ընդդեմ «Ռեառ» ԱՓԲ ընկերության՝ վնասի հատուցման պահանջի մասին, անհիմն է, ուստի այն պետք է մերժել»:

Վերաքննիչ դատարանը Մարտին Վարդանյանի վերաքննիչ բողոքը մերժել է՝ պատճառաբանելով, որ «հիմնավոր է գնահատում Դատարանի այն եզրահանգումը, որ տվյալ դեպքում չեն պահպանել «Ավրոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարասիանսարվության պարտադիր սպահովագրության մասին» ՀՀ օրենքով և ԱՊՊԱ պայմանագրով սահմանված սպահովագրական հատուցման չափի որոշման ընթացակարգերը, որպիսի պայմաններում պարասիանսող «Ռեառ» ԱՓԲ-ի համար չի կարող առաջանալ առաջնային փորձաքննությամբ գնահատված վնասի չափի և հայցվորի կողմից ներկայացված «ԱՐ ՎԻ ԷՄ ՔՈՆՍԱԼՏ» ՍՊԸ-ի ավտոմեքենային պարձատված վնասի գնահատման թիվ Հ112 հաշվետվությամբ ու ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 26.04.2017 թվականի թիվ 33001610 եզրակացությամբ որոշված վնասի չափի տարբերությունը հայցվորին վճարելու պարտավորություն: Իսկ դա պայմանավորված է նրանով, որ տվյալ դեպքում պահպանված չեն «Ավրոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարասիանսարվության պարտադիր սպահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, նկարի ունենալով, որ հայցվորը նշված փորձաքննության արդյունքների

*վերաբերյալ իր անհամաձայնությունը չի իրականացրել կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելով»:*

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը ելել են իրավաչափ եզրահանգման, քանի որ 29.12.2015 թվականին Մարտին Վարդանյանի կողմից Ընկերությանը ներկայացված բողոք-պահանջը բովանդակային առումով իրենից չի ներկայացնում կրկնակի փորձաքննություն անցկացնելու մասին պահանջ. վերջինիս կողմից չի ներկայացվել նաև լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու մասին պահանջ: Այդպիսի պահանջ իրենից չի ներկայացնում նաև 05.08.2016 թվականին Մարտին Վարդանյանի կողմից Ընկերությանը հասցեագրված դիմումը՝ կապված ավտոմեքենային պատճառված նյութական վնասը հատուցելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցների մասին տեղեկատվություն տրամադրելու հետ: Այսինքն՝ սույն գործով առկա չէ կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին Մարտին Վարդանյանի կողմից ներկայացված դիմում, ուստի՝ կրկնակի փորձաքննության եզրակացություն, որի արդյունքը ենթակա լինել բողոքարկման դատական կարգով:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող եզրափակիչ դատական ակտ: Հետևաբար՝ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը:

#### ***5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջներով հայց ներկայացնելու համար պետական տուրքի չափը որոշվում է հայցագնի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի մասի համաձայն՝ հայցագինը որոշվում է դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով՝ պահանջվող գումարի չափով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցագնի մեջ չի ներառվում դատական ծախսերի գումարը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Սույն գործով հայցադիմումը ներկայացնելու ժամանակ գործած խմբագրությանը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» կետի բովանդակությունից բխում է, որ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ գույքային պահանջի գործերով՝ հայցագնի երեք տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

Նկատի ունենալով, որ Դատարանը պետական տուրքի հարցը համարել է լուծված՝ հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի գումարը Մարտին Վարդանյանի կողմից նախապես վճարված լինելու հիմքով, վերաքննիչ բողոք ներկայացնելիս Մարտին Վարդանյանը դրա համար սահմանված պետական տուրքը վճարել է, իսկ վճռաբեկ բողոք ներկայացնելիս Մարտին Վարդանյանի կողմից նախապես չի վճարվել դրա համար սահմանված պետական տուրքի գումարը, իսկ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մարտին Վարդանյանից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 10.000 ՀՀ դրամ (հայցագնի 3%-ը պակաս է բազային տուրքի տասնապատիկից)՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախատեսված պետական տուրքի գումար:

Մինևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այլ դատական ծախսերի վերաբերյալ պահանջ ներկայացված չլինելու պատճառաբանությամբ այդ ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.05.2022 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Մարտին Վարդանյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար պետական տուրքի գումար:

Այլ դատական ծախսերի հատուցման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՐԸ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր  
Դատավորներ

Քաղաքացիական գործ թիվ ՄԴ/0614/02/20  
2022թ.  
ՄԴ/0614/02/20  
Դ. Սերոբյան  
Ա. Խառատյան  
Մ. Հարթենյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- |                  |               |
|------------------|---------------|
| <i>Նախագահող</i> | Մ. ԴՐՄԵՅԱՆ    |
| <i>զեկուցող</i>  | Ա. ՄԿՐՏՉՅԱՆ   |
|                  | Ս. ԱՆՏՈՆՅԱՆ   |
|                  | Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  |
|                  | Գ. ՀԱԿՈԲՅԱՆ   |
|                  | Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ |
|                  | Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  |
|                  | Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ  |

2022 թվականի դեկտեմբերի 12-ին  
գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի ավտոապահովագրողների  
բյուրո» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Բյուրո) վճռաբեկ բողոքը  
ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2021 թվականի որոշման դեմ՝  
ըստ հայցի Բյուրոյի ընդդեմ Սեյրան Առաքելյանի, Նորիկ Ղուկասյանի՝ գումար  
բռնագանձելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Բյուրոն պահանջել է Սեյրան Առաքելյանից և Նորիկ  
Ղուկասյանից համապարտության կարգով բռնագանձել 778.703 ՀՀ դրամ և ՀՀ  
քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատա-  
րանի (դատավոր Ա. Թումանյան) (այսուհետ՝ Դատարան) 22.07.2021 թվականի  
վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատա-  
րան) 24.12.2021 թվականի որոշմամբ Բյուրոյի ներկայացրած վերաքննիչ բողոքը

մերժվել է, և Դատարանի 22.07.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:  
 Վճուռաբեկ բողոք է ներկայացրել Բյուրոն (ներկայացուցիչ Գայանե Պապոյան):  
 Վճուռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճուռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճուռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-9-րդ, 66-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 361-րդ, 362-րդ, 411-րդ, 1058-րդ, 1072-րդ հոդվածները, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարասահմանափակության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին, 2-րդ, 5-րդ, 10-րդ, 23-րդ, 25-րդ և 49-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, և սխալ է մեկնաբանել Օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածները:*

*Բողոքաբերը նշված պնդումները պարզապես անտեղի է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ավտոմեքենան խոտանելու հիմքով հաշվառումից հանելը չի նշանակում, որ այն պարտադիր ապահովագրման ենթակա չէ: Մասնավորապես ավտոմեքենան չի կորցրել իր նպատակային նշանակությունը և դրա նկատմամբ չի դադարել Սեյրան Առաքելյանի սեփականության իրավունքը: Այն պարզապես փոխել է իր կարգավիճակը և դրա նկատմամբ իրավունքները ենթակա չեն եղել գրանցման ճանապարհային ոստիկանությունում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Օրենքի 6-րդ հոդվածով և «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ թիվ RL 1-001 կանոնների 66-րդ կետով սահմանվում են ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման հիմքերը: Ավտոմեքենան հաշվառումից հանելով վաղաժամկետ դադարում է դրա նկատմամբ կնքված ԱՊՊԱ պայմանագիրը, որը դեռևս չի նշանակում, որ այն պարտադիր ապահովագրման ենթակա չէ: Ավելին՝ երբ ավտոմեքենան խոտանման հիմքով հանվում է հաշվառումից, այն չի դադարում առավել վտանգի աղբյուր հանդիսանալուց, որով պատճառված վնասը ենթակա է հատուցման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածով:

Ճանապարհատրանսպորտային պատահարից տուժած անձինք ունեն հատուցում ստանալու իրավական ակնկալիք, որպիսին փաստացի ստացել են: Ներկայացված հայցով Բյուրոն իրականացնում է տուժողներին ի սկզբանե պատկանող և Օրենքի ուժով Բյուրոյին փոխանցված իրավունքները:

Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել, դրանք չի դիտարկել համակցության և փոխադարձ կապի մեջ, ինչի հետևանքով կայացրել է չպատճառաբանված և չհիմնավորված դատական ակտ:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.12.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ բավարարել հայցը:

### **3. Վճուռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճուռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը

1) «VAZ 2101» մակնիշի ավտոմեքենան (գույն՝ կարմիր, նույնականացման համար՝ XTA210100D4328030, SU տեսակ՝ թեթև մարդատար, թափքի համար՝ 4328030, շարժիչի համար՝ 6976477) (այսուհետ՝ նաև Ավտոմեքենա) սեփականության իրավունքով պատկանում է Սեյրան Հայկի Առաքելյանին (**հատոր 1-ին, գ.թ. 28**).

2) Սեյրան Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող Ավտոմեքենան 23.09.2016 թվականի խոտանվել է և այդ հիմքով գրանցումից հանվել (**հատոր 1-ին, գ.թ. 28, 93**).

3) 24.09.2019 թվականին՝ ժամը 00:25-ի սահմաններում, Երևան-Մեղրի ավտոճանապարհին իրար են բախվել Վազգեն Գավրուշայի Սարգսյանի վարած և Վաչե Վալերիի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող «Mercedes-Benz C 200» մակնիշի, 35ZF537 հաշվառման համարանիշով ավտոմեքենան և Նորիկ Իսահակի Ղուկասյանի վարած՝ առանց հաշվառման համարանիշի «VAZ 2101 մակնիշի ավտոմեքենան (**հատոր 1-ին, գ.թ. 21, 32, 56**).

4) Պատահարի հետևանքով «Mercedes-Benz C 200» մակնիշի, 35ZF537 հաշվառման համարանիշով ավտոմեքենային պատճառվել է 734.000 ՀՀ դրամի չափով վնաս (**հատոր 1-ին, գ.թ. 20**).

5) Վազգեն Գավրուշայի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող «Mercedes-Benz C 200» մակնիշի, 35ZF537 հաշվառման համարանիշով ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրված է եղել «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից (**հատոր 1-ին, գ.թ. 32**).

6) 05.11.2019 թվականին Վաչե Հարությունյանի կողմից «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է ներկայացվել «Mercedes-Benz C 200» մակնիշի, 35ZF537 հաշվառման համարանիշով ավտոմեքենային պատճառված վնասի հատուցում ստանալու վերաբերյալ թիվ SJ168082 դիմումը, որի բավարարման արդյունքում նշված ապահովագրական ընկերությունը 28.11.2019 թվականին ընդունել է տուժող Վաչե Հարությունյանին 734.000 ՀՀ դրամի չափի հատուցում վճարելու մասին թիվ Ե-19-6316 որոշում-ծանուցումը և այդ գումարը 09.12.2019 թվականին վճարել է Վաչե Հարությունյանի լիազորված անձ Գևորգ Վարդանյանին (**հատոր 1-ին, գ.թ. 14, 16, 17, 20**).

7) Պատահարի պահին «VAZ 2101» մակնիշի ավտոմեքենայի համար ԱՊՊԱ պայմանագիր կնքված չի եղել (**հատոր 1-ին, գ.թ. 22, 28**).

8) Բյուրոն 10.12.2019 թվականի «Վնասի հատուցմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի իրականացման» թիվ Բ/19-09978 ծանուցմամբ Սեյրան Հայկի Առաքելյանից և Նորիկ Իսահակի Ղուկասյանից պահանջել է համապարտության կարգով հատուցել տուժողին վճարված ապահովագրական հատուցումը՝ 734.000 ՀՀ դրամի, և ապահովագրական ընկերության գործավարման ծախսերի հետ կապված ծախսերը՝ 22.020 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 11-12**):

#### ***4. Վճարել դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները***

Վճարել դատարանն արձանագրում է, որ վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել դատարանի որոշումը կարող է էական



նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ դատարանի կիրառած՝ Օրենքի 5-րդ և 25-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Սույն բողոքի քննության շրջանակում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին՝ արդյո՞ք խուրանման հիմքով հաշվառումից հանված ավերուրանսպորտային միջոցի օգտագործումից բխող վնասն ապահովագրական իրավակարգավորումների շրջանակներում ենթակա չէ հարուցման:*

**(Ա)** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կարող է իրականացվել կամավոր և պարտադիր ապահովագրություն:

Կամավոր ապահովագրությունն ապահովադրի կամավոր ցանկությամբ ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու միջոցով իրականացվող ապահովագրությունն է:

Պարտադիր ապահովագրությունը ապահովադրի կամքից անկախ ապահովագրողի հետ օրենքի ուժով ծագող հարաբերություններն են, որի տեսակները, պայմաններն ու իրականացման կարգը կարգավորվում են սույն օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և պարտադիր ապահովագրության մասին համապատասխան օրենքներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 983-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ապահովադիրն ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած անձն է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 994-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ որպես ապահովագրողներ՝ ապահովագրության պայմանագրեր կարող են կնքել ապահովագրության համապատասխան դատով ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք:

Նշված նորմերից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում թույլատրված է ապահովագրություն երկու տեսակ՝ կամավոր և պարտադիր: Կամավոր ապահովագրության դեպքում օգտվելով օրենքով ընձեռված այդ հնարավորությունից՝ անձն ապահովագրության համապատասխան դատով ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձի (ապահովագրող) հետ ապահովագրության պայմանագիր կնքում է իր ցանկությամբ և հայեցողությամբ: Մինչդեռ պարտադիր ապահովագրության դեպքում անձն ապահովագրողի հետ ապահովագրական իրավահարաբերությունների մեջ մտնում է օրենքի իմպերատիվ թելադրանքով՝ անկախ իր կամքից:

Հայաստանի Հանրապետությունում պարտադիր ապահովագրության է ենթակա ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը, որի առարկան ավտոտրանսպորտային միջոցի շահագործման

հետևանքով երրորդ անձանց գույքին, առողջությանը և/կամ կյանքին պատճառված վնասի հատուցման քաղաքացիական պատասխանատվությունն է: Այս պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմաններն ու իրականացման կարգը սահմանված են «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք):

Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասում սահմանված են Օրենքի հիմնական նպատակները՝ ըստ որոնց, ի թիվս այլնի՝ Օրենքը հետապնդում է **(1) ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանությունը, (4) ապահովագրական հատուցումների վճարման ընթացակարգերի արդյունավետությունը երաշխավորելու նպատակներ:**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ Օրենքի դրույթները մեկնաբանելիս պետք է ելնել դրանց հիմքում դրված նպատակներից, որպիսիք, ի թիվս այլնի, ներառում են նաև ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց սոցիալական խնդիրները, մասնավորապես՝ հնարավոր անվճարունակության խնդիրը լուծելու, պատճառված վնասների հատուցման և շահերի պաշտպանության երաշխավորման արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու, ինչպես նաև պետության և ապահովագրական ընկերությունների նկատմամբ վստահության մակարդակը բարձրացնելու նպատակները<sup>2</sup>:

Օրենքի 1-ին հոդվածը սահմանում է դրա գործողության ոլորտն ու այն հարցերի շրջանակը, որոնք Օրենքը կարգավորում է: Ըստ նշված հոդվածի 1-ին մասի՝ ի թիվս այլնի, Օրենքով են սահմանվում այն ավտոտրանսպորտային միջոցների տեսակները, որոնց համար սահմանված է օգտագործումից բխող պատասխանատվության *պարտադիր ապահովագրություն:*

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ **ավտոտրանսպորտային միջոցն ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր տրանսպորտային միջոցն է (ներառյալ՝ թեթև մարդատար ավտոմոբիլներ, ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, բեռնատար ավտոմոբիլներ, բեռնաուղևորատար ավտոմոբիլներ, հատուկ ավտոմոբիլներ, էլեկտրամոբիլներ, մոտոցիկլետներ, քարշակներ, տրոլեյբուսներ):**

Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարտադիր ապահովագրման ենթակա է օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, *ինչպես նաև* Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով ներմուծվող *և (կամ) Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով վարվող ավտոտրանսպորտային միջոցների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործումից բխող պատասխանատվությունը*, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի.

1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված *բոլոր պայմանների ստկայությունը պարտադիր է*, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է *միայն «և» կամ «ու» շաղկապով* բաժանված պայմաններով,

<sup>2</sup> Տե՛ս «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքն ընդունելու հիմնավորումները:

3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված **բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը**, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» **շաղկապով** բաժանված պայմաններով,

7-րդ մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են **նախկին պայմանների հետ չկապված պայմաններ**:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով շաղկապների և բառերի կիրառման կապակցությամբ սահմանված կանոններով մեկնաբանելով Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտադիր ապահովագրման են ենթակա ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր այն տրանսպորտային միջոցները, որոնք.

- օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում հաշվառված են (նշված պայմանը մյուս պայմաններից բաժանված է «ինչպես նաև» բառերով, ուստի հաշորդիլ թվարկվող պայմանների հետ չկապված, առանձին պայման է),

- վարելու միջոցով ներմուծված են Հայաստանի Հանրապետություն և վարվում են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով (նշված երկու պայմանները բաժանված են «և» շաղկապով, հետևաբար նորմը կիրառելու համար այդ պայմանների առկայություն պարտադիր է),

- վարելու միջոցով ներմուծված են Հայաստանի Հանրապետություն,

- վարվում են ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով (վերջին երկու պայմանները իրարից բաժանված են նաև «կամ» շաղկապով, հետևաբար նորմը կիրառելու համար բավարար է նաև դրանցից մեկի առկայությունը):

Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասում նշված երկու պայմաններն իրարից միաժամանակ «և» ու «կամ» շաղկապներով բաժանված լինելու պայմաններում նորմը պետք է կիրառել ինչպես այդ պայմանների միաժամանակյա առկայության, այնպես էլ դրանցից յուրաքանչյուրի՝ առանձին առկայության դեպքերում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի իմաստով ավտոտրանսպորտային միջոց համարվում են ՀՀ-ում հաշվառված տրանսպորտային միջոցները և **չհաշվառված, սակայն ՀՀ տարածք վարելու միջոցով ներմուծվող և (կամ) ՀՀ-ի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով վարվող տրանսպորտային միջոցները**: Ոստի *Օրենքի խնայող* ավտոտրանսպորտային միջոց համարվող ցանկացած միջոցի օգտագործումից բխող պատասխանատվությունը կարգավորվում է Օրենքով՝ բացառությամբ նույն Օրենքով նախատեսված դեպքերի: Իսկ նման բացառություն հանդիսացող Օրենքով նախատեսված դեպքերը սպառիչ թվարկված են Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասում, ըստ որի՝ պարտադիր ապահովագրման ենթակա չէ հետևյալ տրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը.

1) առավելագույն արագությունը 50 կմ/ժ-ը կամ շարժիչի ծավալը 50 սմ3-ը չզերազանցող ավտոտրանսպորտային միջոցներ.

2) միայն հատուկ առանձնացված վայրերում օգտագործվող մարզական կամ ժամանցի նպատակով օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցներ՝ միայն այդ վայրերում օգտագործելու դեպքում.

3) բացառապես ոչ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար նախատեսված ավտոտրանսպորտային միջոցներ.

4) Հայաստանի Հանրապետության տարածք առանց վարելու ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցների մինչև Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց օգտագործումը:

**(Ա.1.)** Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավտոտրանսպորտային միջոցները հաշվառելու և վարելու հետ կապված՝ ՀՀ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում առաջացող հարաբերությունները կարգավորված են «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **ավտոմոբիլը** ճանապարհով մարդկանց կամ բեռներ փոխադրելու կամ բեռներ փոխադրելու համար օգտագործվող տրանսպորտային միջոցի քարշակման համար նախատեսված մեխանիկական տրանսպորտային միջոցն է (թեթև մարդատար ավտոմոբիլ, ավտոբուս, բեռնատար ավտոմոբիլ, բեռնատուղնորատար ավտոմոբիլ, հատուկ ավտոմոբիլ, էլեկտրամոբիլ) (...): Նույն հոդվածի համաձայն՝ **տրանսպորտային միջոցը** ճանապարհով մարդ, բեռ կամ վրան տեղադրված սարքավորում փոխադրելու համար նախատեսված սարքն է:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականությունը (այսուհետ՝ պետական քաղաքականություն) ճանապարհային երթևեկության կանոնակարգման, անվտանգության ապահովման համար պայմաններ և երաշխիքներ ստեղծելու նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրականացրած սոցիալական, տնտեսական, քաղաքական, կազմակերպչական, իրավական և այլ միջոցառումների համակարգ է:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխով սահմանված են ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման հիմնական պահանջները, որպիսին նաև տրանսպորտային միջոցի պետական գրանցումն ու պետական հաշվառումն է:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ ավտոտրանսպորտային միջոցի **պեղսական հաշվառումը** դրա սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի հիման վրա (...) տրանսպորտային միջոցի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ տեղեկությունների հավաքման և ամրագրման գործառույթ է, որի հետևանքով տրվում են տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր (հաշվառման վկայագրի վրա, բացի հաշվառման տվյալներից, հայերենով և անգլերենով նշվում է նաև «Օտարման հիմք չէ» գրառումը) և (կամ) հաշվառման համարանիշ, (...):

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցը կարող է չներկայացվել պետական հաշվառման, եթե այն առևտրային նպատակներով ձեռք է բերվել (ներմուծվել է) տրանսպորտային միջոցների առևտրային գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտի կողմից, որը Հայաստանի Հանրապետությունում այն չի շահագործելու, կամ եթե Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգից տարբերվող այլ մաքսային ընթացակարգերով կամ Հայաստանի Հանրապետությունում այն չի շահագործվելու:

Շարադրված նորմերից բխում է, որ ավտոտրանսպորտային միջոցի *պեղսական հաշվառումը* նախատեսվել է որպես ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման հիմնական պահանջ: Ըստ այդմ՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի իմաստով տրանսպորտային միջոց համարվող՝ ճանապարհով մարդ, բեռ կամ վրան տեղադրված սարքավորում փոխադրելու համար նախատեսված ցանկացած սարք պետք է ներկայացվի պետական հաշվառման, որը տրանսպորտային միջոցի տեխնիկական բնութագրերի վերաբերյալ տեղեկությունների հավաքման և ամրագրման գործառույթ է, և եզրափակվում է հաշվառման վկայագիր և (կամ) հաշվառման համարանիշ տրամադրելով: Տրանսպորտային միջոցը պետական հաշվառման ներկայացնելու պարտադիր կանոնից բացառությունները սահմանված են *օրենքով*, որպիսիք են հետևյալ դեպքերը.

1. տրանսպորտային միջոցը առևտրային նպատակներով ձեռք է բերվել (ներմուծվել է) տրանսպորտային միջոցների առևտրային գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտի կողմից, ով Հայաստանի Հանրապետությունում այն չի շահագործելու,

2. տրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգից տարբերվող այլ մաքսային ընթացակարգերով կամ Հայաստանի Հանրապետությունում այն չի շահագործվելու:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի «ժա» կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, պետական գրանցման և պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի և պետական հաշվառման փաստաթղթերի (ազգային ու միջազգային վկայագրերի, ժամանակավոր հաշվառման վկայագրի) ձևերը սահմանում է ՀՀ Կառավարությունը:

ՀՀ Կառավարության 09.09.2010 թվականի «Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, պետական գրանցման և պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի, պետական հաշվառման ազգային ու միջազգային վկայականի, պետական հաշվառման ազգային ու միջազգային վկայագրերի և «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրի ձևերը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը, հաշվառման համարանիշների ներկայացվող պահանջները, ինչպես նաև տրանսպորտային միջոցների համարանիշների հաշվառման ու հատկացման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1041-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1251-Ն որոշմամբ (այսուհետ՝ Կարգ) ի թիվս այլնի սահմանվել է նաև տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը:

Կարգով հաստատված Հավելված 2-ի 1-ին կետի համաձայն՝ նույն կարգով սահմանվում են *Հայաստանի Հանրապետության փարսածքում ընդհանուր օգտագործման սպիտակաթիվային ճանապարհներով երթևեկության համար*

**Նախապրեմիա**<sup>ժ</sup> Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ հանդիսացող անձանց սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների պետական հաշվառման, տրանսպորտային միջոցները հաշվառումից ժամանակավոր հանելու և հաշվառումից ժամանակավոր հանված տրանսպորտային միջոցների հաշվառումը վերականգնելու, ինչպես նաև տրանսպորտային միջոցների հաշվառման միջազգային վկայագիր տալու հետ կապված հարաբերությունները:

Տրանսպորտային միջոցները պետական հաշվառման ներկայացնելու և դրա հետ կապակցված հարաբերությունները սահմանված են Կարգով, որը կիրառելի է **Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության համար նախապրեմիա** տրանսպորտային միջոցների նկատմամբ:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի և դրա իրականացումն ապահովելու նպատակով ընդունված Կարգի կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում առաջացող հարաբերություններն են, որոնք ծագում են անձի և պետության՝ որպես հանրային իշխանության կրողի, միջև: Այսպես.

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում պետական կառավարման մարմիններ են հանդիսանում ՀՀ Կառավարությունը և ՀՀ ոստիկանությունը: Ի կատարումն ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի պետական քաղաքականության սկզբունքների և ուղղությունների՝ ՀՀ Կառավարությունը և ՀՀ ոստիկանությունը նշված բնագավառում իրականացնում են մի շարք լիազորություններ: Ի թիվս այլնի՝ ՀՀ Կառավարությունը սահմանում է տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, իսկ ՀՀ ոստիկանությունը սահմանված կարգով իրականացնում է տրանսպորտային միջոցների պետական հաշվառումը՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի «ժա» կետի և 10-րդ հոդվածի 1-ին մասի «ժէ.1» կետի համաձայն:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով ՀՀ Կառավարության և ՀՀ ոստիկանության համար ամրագրված լիազորությունների նպատակն իրենց վրա դրված հանրային պարտականությունությունների կատարումն է: Այդ պատճառով էլ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով և Կարգով սահմանված են հանրային իրավունքի նորմեր, որոնք կարգավորում են Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները և դրանց իրացման համար պատասխանատու իրավասու մարմինների լիազորությունները: Այլ կերպ ասած՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության համար նախատեսված տրանսպորտային միջոցները պարտադիր հաշվառման ներկայացնելու պահանջը պայմանավորված է պետության կողմից Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում ստանձնած իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությամբ:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով որպես ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղություն նախատեսված է նաև ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում օրենսդրության, ստանդարտների, տեխնիկական նորմերի և այլ նորմատիվ իրավական ակտերի կատարման նկատմամբ պետական վերահսկողության սահմանումը և իրականացումը:

Սահմանելով տրանսպորտային միջոցը պարտադիր հաշվառման ներկայացնելու պահանջ և իրականացման կարգ՝ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտները նաև վերահսկողություն են իրականացնում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ոլորտում ընդունված պահանջի՝ տրանսպորտային միջոցը պարտադիր հաշվառման ներկայացնելու, նկատմամբ: Հետևաբար այդ օրենքով և Կարգով հարաբերություններ առաջանում են անհատի և պետության միջև, որտեղ պետությունն իրացնում է Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում ստանձնած իր հանրային իշխանական լիազորությունները և դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնում, իսկ ճանապարհային երթևեկության մասնակիցը ստանձնում է իրավունքներ և կրում պարտականություններ:

Շարադրվածի ամփոփմամբ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով և Կարգով կարգավորվում են անձ-պետություն, այսինքն՝ հանրային հարաբերությունները, և իրավական այդ նորմերով ճանապարհային երթևեկության մասնակիցների կողմից իրենց պարտականությունները չկատարելու դեպքում պետությունը կարող է գործադրել օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու իր լիազորությունը: Մասնավորապես՝ սահմանված կարգով չհաշվառված տրանսպորտային միջոցը վարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 123.4-րդ հոդվածով նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Հետևաբար «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքն ավտոտրանսպորտային միջոցները հաշվառելու և վարելու հետ կապված՝ ՀՀ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում առաջացող հարաբերությունները կարգավորում է հանրային ոլորտում, մինչդեռ ապահովագրական իրավահարաբերությունները մասնավոր ոլորտում առաջացող հարաբերություններ են, որտեղ կարգավորման առարկան ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց *պայրճատված վնասների հատուցումն է*: Հետևաբար ապահովագրական իրավակարգավորումների շրջանակներում կիրառված եզրույթները պետք է մեկնաբանվեն, և քննարկման ենթակա իրավական հարցադրումները պետք է լուծում ստանան մասնավոր իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերի շրջանակներում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տրանսպորտային միջոցները պարտադիր հաշվառման ներկայացնելու՝ հանրային իրավահարաբերություններ կարգավորող նորմերով սահմանված պահանջը չպահպանելը կարող է իրավական հետևանքներ առաջացնել միայն հանրային ոլորտում՝ օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկելու ձևով: Բայց տրանսպորտային միջոցը վարելու համար այն պետական հաշվառման ներկայացնելու՝ հանրային իրավունքի նորմերով սահմանված պարտադիր պահանջը ճանապարհային

երթնեկության մասնակցի կողմից չպահպանելը հիմք չի կարող հանդիսանալ մասնավոր, այն է՝ ապահովագրական և վնասի հատուցման իրավահարաբերությունները բացառելու համար: Հանրային իրավահարաբերություններում ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելը չի կարող ի չիք դարձնել մասնավոր իրավահարաբերություններում նույն անձի կողմից զուգահեռ դրսևորված ոչ իրավաչափ վարքագծի առկայությունն ու դրա հետևանքով վրա հասնող հետևանքների կիրառումը: Հակառակ դեպքում կխախտվեն մասնավոր իրավահարաբերությունների մասնակիցներին երաշխավորված իրավունքները և այլևս չեն երաշխավորվի ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց շահերը:

Հետևաբար եթե վեճն առաջացել է ապահովագրական իրավահարաբերությունների շրջանակներում, ապա իրավական հասկացությունները պետք է մեկնաբանվեն հենց այդ իրավահարաբերությունները կարգավորող՝ մասնավոր իրավունքի նորմերի շրջանակում: Առավել ևս, որ *իրավական հասկացությունների հարաբերականությունը*՝ նույն հասկացության՝ տարբեր օրենքներում գործածված լինելու դեպքում իրավաչափ է դիտարկում այն նորմատիվ համատեքստում մեկնաբանելը:

Հետևաբար «ավտոտրանսպորտային միջոց» հասկացությունն ապահովագրական իրավակարգավորումների շրջանակում պետք է մեկնաբանվի Օրենքի նորմատիվ համատեքստում: Արդյունքում՝ Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասում նշված պայմաններին համապատասխանող ավտոտրանսպորտային ցանկացած միջոցի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում *շաշվառված, բայց ընդհանուր օգտագործման ավիրոնորիային ճանապարհներով վարվող*, օգտագործումից բխող պատասխանատվության հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ ենթակա է կիրառման պարտադիր ապահովագրության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող Օրենքը: Այս եզրահանգման համար հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ նշված մասով Օրենքի 25-րդ հոդվածը որևէ բացառություն չի նախատեսում:

*Անիտիկելով վերևում շարադրվածը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ավտոտրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավիրոնորիային ճանապարհներով վարելու դեպքում դրա օգտագործման հետևանքով պարճատված վնասից բխող պատասխանատվության իրավահարաբերությունները Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի ուժով ենթակա են կարգավորման պարտադիր ապահովագրության հետ կապված իրավահարաբերությունները կանտոնակարգող Օրենքով:*

(Բ) Ինչ վերաբերում է խոտանման հիմքով ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու հետևանքներին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Ճանապարհային երթնեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **հաշվառումից հանումը** տրանսպորտային միջոցն իրավասու այլ մարմնի կողմից հաշվառելու կամ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման կամ խոտանման հետ կապված հաշվառման գործողությունն է:

Կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված է, որ (...) խոտանման հիմքով տրանսպորտային միջոցը հաշվառումից հանվելու դեպքում համապատասխան տրանսպորտային միջոցը համարվում է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության



մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով պետական հաշվառումից հանված (չհաշվառված):

Նույն Կարգով հաստատված Հավելված 2-ի 16-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը հաշվառումից հանվում է տրանսպորտային միջոցի խոտանման դեպքում:

Նշվածից հետևում է, որ որպես տրանսպորտային միջոցը խոտանման հիմքով հաշվառումից հանելու հետևանք Կարգը սահմանում է դրա՝ Օրենքի իմաստով պետական հաշվառումից հանված, այսինքն՝ չհաշվառված, համարվելը, իսկ տրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու դեպքում Օրենքով նախատեսված է միայն ԱՊՊԱ պայմանագիրը վաղաժամկետ դադարած համարելու հետևանք: Մասնավորապես.

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ԱՊՊԱ պայմանագրի գործողությունը դադարում է պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման հետևյալ դեպքերում՝ ավտոտրանսպորտային միջոցը հանվել է (ներառյալ՝ ժամանակավոր) հաշվառումից:

Օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ (...) նույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում ԱՊՊԱ պայմանագիրը վաղաժամկետ դադարում է ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանվելու օրվան հաջորդող օրը, բացառությամբ խոտանման հիմքով հաշվառումից հանվելու, հաշվառումից ժամանակավոր հանվելու, ինչպես նաև հաշվառումից հանվելու այնպիսի դեպքերի, երբ նույն պահին ավտոտրանսպորտային միջոցը հաշվառվում է այլ անձի անվամբ (անվանմամբ), որոնց դեպքում ԱՊՊԱ պայմանագիրը վաղաժամկետ դադարում է ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանվելու պահին (...):

Արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ խոտանման հիմքով հաշվառումից հանված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող վնասն ապահովագրական իրավակարգավորումների շրջանակներում հատուցման ենթակա չլինելու վերաբերյալ հետևությունը չի բխում օրենսդրի հետապնդած և Օրենքում նշված նպատակներից և ի չիք է դարձնում այդ նպատակների կենսագործումը: Մասնավորապես, չեն երաշխավորվում խոտանման հիմքով հաշվառումից հանված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց վնասների հատուցումն ու շահերի պաշտպանությունը և այդ տեսանկյունից ապահովագրական հատուցումների վճարման ընթացակարգերը կորցնում են իրենց արդյունավետությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու դեպքում դրա նկատմամբ գործող ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման մասին կանոնը միտված է այդ պայմանագրի դադարման պահի որոշմանը և չի բացառում **դրա օգտագործումից** բխող պատասխանատվությունն Օրենքի կանոնակարգումներին համապատասխան:

### *Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ*

Դիմելով դատարան՝ Բյուրոն պահանջել է Սեյրան Առաքելյանից և Նորիկ Դուկասյանից համապարտության կարգով բռնագանձել 778.703 ՀՀ դրամ՝ որպես ավտոճանապարհային պատահարի հետևանքով տուժած անձին իր կողմից վճարված ապահովագրական հատուցման գումար, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ:

**Գատարանը** 22.07.2021 թվականի վճռով հայցը մերժման ենթակա լինելու մասին իր եզրակացության հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ «(...) խորանման հիմքով հաշվառումից հանված ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանվելու պահից չի հանդիսանում օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, հետևաբար «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պարասահմանարվության պարտադիր սպահովագրության մասին» մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ուժով ենթակա չէ պարտադիր սպահովագրության: (...) Մեյրան Հայկի Առաքելյանին սեփականության իրավունքով պարկանող սակայն խորանված «ՎԱԶ-2101» մակնիշի 53SL 643 հ/հ ավտոտրանսպորտային միջոցի (րեասկը՝ թեթև մարդասար, թափքի րեասկը՝ սեղան, նույնացման համարը՝ XTA210100D4328030, գույնը կարմիր, թափքի համարը՝ 4328030, շարժիչի համարը՝ 697477, շարժիչի հզորությունը՝ 64) շահագործման արդյունքում պարճատված վնասի հետևանքով առաջացած իրավահարաբերությունները սպահովագրական իրավահարաբերություններ չեն, դրանք չեն կարգավորվում ԱՊՊԱ ոլորտը կարգավորող նորմերով և Կանոններով, հետևաբար բացակայում է ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածով սահմանված վնասի հատուցման պարտականությունն օրենքով վնաս չպարճատած անձի (սպահովագրողի) վրա դնելու դեպքը, այնպես էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1021-րդ հոդվածով սահմանված սուբրոգացիայի իրավական հնարավորությունը: (...):»

**Վերաքննիչ դատարանը** 24.12.2021 թվականի որոշմամբ Բյուրոյի վերաքննիչ բողոքը մերժել է այն պատճառաբանությամբ, որ «(...) Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով հաշվառում չունեցող տրանսպորտային միջոցների վերաբերյալ (ստանձին բացառություններով) ԱՊՊԱ պայմանագիր չի կնքվում, իսկ կնքված ԱՊՊԱ պայմանագիրն էլ վաղաժամկետ դադարում է հենց տրանսպորտային միջոցը հաշվառումից հանվելու (սակ ժամանակավոր) հիմքով՝ այդ թվում խորանման հետևանքով և տրանսպորտային միջոցի սեփականատերը չի կրում հաշվառումից հանված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պարասահմանարվության պարտադիր սպահովագրության ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն: (...) գործով անլիճելի է այն հանգամանքը, որ «ՎԱԶ-2101» մակնիշի 53SL 643 հ/հ ավտոտրանսպորտային միջոցը 2016թ. եղել է խորանված (անկախ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը դադարած կամ պահպանված լինելու հանգամանքի), իսկ վկայակոչված իրավանորմերից հետևում է, որ խորանման հետևանքով հաշվառումից հանված տրանսպորտային միջոցի շահագործման հետևանքով այդ տրանսպորտային միջոցով այլ անձանց պարճատված վնասի հատուցման գործընթացը և դրանից ծագած իրավահարաբերությունները դուրս են ԱՊՊԱ կարգավորման ոլորտից»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի փաստերի համաձայն՝ սեփականության իրավունքով Մեյրան Առաքելյանին պատկանող «VAZ 2101» մակնիշի ավտոմեքենան (Ավտոմեքենա) 23.09.2016 թվականին խտտանվել է, ինչի հիմքով հանվել է հաշվառումից: Դրանից հետո՝ 24.09.2019 թվականին, ժամը 00:25-ի սահմաններում Երևան-Մեղրի ավտոճանապարհին միայնակ են բախվել Վազգեն Գավրուշայի Սարգսյանի վարած և Վաչե Վալերիի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող «Mercedes-Benz C 200» մակնիշի, 35ZF537 հաշվառման համարանիշով ավտոմեքենան և Նորիկ Իսահակի Գուկասյանի վարած՝ առանց հաշվառման համարանիշի «VAZ 2101 մակնիշի ավտոմեքենան, ինչի հետևանքով «Mercedes-Benz C 200» մակնիշի ավտոմեքենային պատճառվել է 734.000 ՀՀ դրամի չափով վնաս:

05.11.2019 թվականին Վաչե Հարությունյանի կողմից «Արմենիա Ինշուրանս» սպահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է ներկայացվել «Mercedes-Benz C 200» մակնիշի, 35ZF537 հաշվառման համարանիշով ավտոմեքենային պատճառված վնասի հատուցում ստանալու վերաբերյալ թիվ SJ168082 դիմումը, որի բավարարման արդյունքում նշված սպահովագրական ընկերությունը 28.11.2019 թվականին ընդունել է տուժող Վաչե Հարությունյանին 734.000 ՀՀ դրամի չափ հատուցում վճարելու մասին թիվ Ե-19-6316 որոշում-ծանուցումը և այդ գումարը 09.12.2019 թվականին վճարել է Վաչե Հարությունյանի լիազորված անձ Գևորգ Վարդանյանին:

Հիմք ընդունելով պատահարի պահին Ավտոմեքենայի վերաբերյալ գործող ԱՊՊԱ պայմանագրի բացակայության փաստը՝ Բյուրոն 10.12.2019 թվականի «Վնասի հատուցմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի իրականացման» թիվ Բ/19-09978 ծանուցմամբ Սեյրան Հայկի Առաքելյանից և Նորիկ Իսահակի Ղուկասյանից պահանջել է համապարտության կարգով հատուցել իր կողմից տուժողին վճարված սպահովագրական հատուցումը՝ 734.000 ՀՀ դրամի, և սպահովագրական ընկերության գործավարման ծախսերի հետ կապված գումարները՝ 22.020 ՀՀ դրամի չափով:

Ավտոմեքենայի օգտագործման հետևանքով առաջացած վնասն սպահովագրական իրավակարագավորումների շրջանակներում հատուցման ենթակա չլինելու մասին իրենց եզրակացության հիմքում ստորադաս դատարանները դրել են Ավտոմեքենայի խոտանված լինելու հիմքով հաշվառումից հանված լինելու փաստը: Մինչդեռ ստորադաս դատարաններն անտեսել են, որ Ավտոմեքենան 23.09.2016 թվականին խոտանելուց և այդ հիմքով հաշվառումից հանելուց հետո Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով **վարելու դեպքում** դրա հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման:

Սույն գործով անվիճելի փաստ է ավտոճանապարհային պատահարի օրվա՝ 24.09.2019 թվականի դրությամբ Ավտոմեքենայի (Օրենքի իմաստով՝ ավտոտրանսպորտային միջոցի) նկատմամբ ԱՊՊԱ պայմանագրի բացակայությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե Ավտոմեքենան 2016 թվականին խոտանվելուց և այդ հիմքով հաշվառումից հանվելուց հետո այնուամենայնիվ շարունակել է երթևեկել Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով, ապա դրա օգտագործումից բխող վնասը ենթակա է հատուցման պարտադիր սպահովագրության իրավահարաբերությունները կանոնակարգող Օրենքով: Ուստի ավտոճանապարհային պատահարի (24.09.2019 թվական) օրվա դրությամբ «VAZ 2101 մակնիշի ավտոմեքենայի նկատմամբ ԱՊՊԱ պայմանագրի բացակայությունը հիմք է Բյուրոյի կողմից օրենքով վերապահված իրավունքներն իրացնելու համար: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ այլ մեկնաբանության դեպքում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ինստիտուտը չի ծառայի իր նպատակներին, քանի որ Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված, բայց ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով վարվող ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանություն և վնասների հատուցում փաստացի չի իրականացվի:

Շարադրվածի ամփոփմամբ Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները, և վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վերապահված լիազորությունը կիրառելու՝ Վերաքննիչ դատարանի 24.12.2021 թվականի որոշումը բեկանելու համար: Նկատի ունենալով, որ գործով ըստ էության քննություն չի իրականացվել Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործն անհրաժեշտ է ուղարկել ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ամբողջ ծավալով նոր քննության:

**5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ գործն ուղարկվում է ամբողջ ծավալով նոր քննության և գործի քննության այս փուլում հնարավոր չէ անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2021 թվականի որոշումն ու գործն ուղարկել ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ՄԴ/0614/02/20 քաղաքացիական գործով 12.12.2022 թվականին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ**

12.12.2022 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) 2022 թվականի դեկտեմբերի 12-ին գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Բյուրո) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Բյուրոյի ընդդեմ Սեյրան Առաքելյանի, Նորիկ Ղուկասյանի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, պալատի դատավորների մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել, բեկանել վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2021 թվականի թիվ ՄԴ/0614/02/20 որոշումը և գործն ուղարկել ընդհանուր իրավասության դատարան նոր քննության: Համաձայն չլինելով վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ նույն պալատի դատավորներ Ս. Անտոնյանս, Ա. Բարսեղյանս և Էդ. Սեդրակյանս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածին համապատասխան ներկայացնում ենք սույն հատուկ կարծիքը:

Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը քննել է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

*Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-9-րդ, 66-րդ հոդվածները, չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 361-րդ, 362-րդ, 411-րդ, 1058-րդ, 1072-րդ հոդվածները, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին, 2-րդ, 5-րդ, 10-րդ, 23-րդ, 25-րդ և 49-րդ հոդվածները, որոնք պետք է կիրառեր, և սխալ է մեկնարանել Օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածները:*

*Բողոքաբերը նշված պնդումները պարզապես անտեսել է հետևյալ փաստարկներով:*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ավտոմեքենան խոտանելու հիմքով հաշվառումից հանելը չի նշանակում, որ այն պարտադիր ապահովագրման ենթակա չէ: Մասնավորապես ավտոմեքենան չի կորցրել իր նպատակային նշանակությունը և դրա նկատմամբ չի դադարել Սեյրան Առաքելյանի սեփականության իրավունքը: Այն պարզապես փոխել է իր կարգավիճակը և դրա նկատմամբ իրավունքները ենթակա չեն եղել գրանցման ճանապարհային ոստիկանությունում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Օրենքի 6-րդ հոդվածով և «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության ԱԳՊԱ ընդհանուր պայմաններ թիվ RL 1-001 կանոնների 66-րդ կետով սահմանվում են ԱԳՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման հիմքերը: Ավտոմեքենան հաշվառումից հանելով վաղաժամկետ դադարում է դրա նկատմամբ կնքված ԱԳՊԱ պայմանագիրը, որը դեռևս չի նշանակում, որ այն պարտադիր

ապահովագրման ենթակա չէ: Ավելին՝ երբ ավտոմեքենան խոտանման հիմքով հանվում է հաշվառումից, այն չի դադարում առավել վտանգի աղբյուր հանդիսանալուց, որով պատճառված վնասը ենթակա է հատուցման ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1072-րդ հոդվածով:

Ճանապարհատրանսպորտային պատահարից տուժած անձինք ունեն հատուցում ստանալու իրավական ակնկալիք, որպիսին փաստացի ստացել են: Ներկայացված հայցով Բյուրոն իրականացնում է տուժողներին ի սկզբանե պատկանող և Օրենքի ուժով Բյուրոյին փոխանցված իրավունքները:

Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի գնահատել, դրանք չի դիտարկել համակցության և փոխադարձ կապի մեջ, ինչի հետևանքով կայացրել է չպատճառաբանված և չհիմնավորված դատական ակտ:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 24.12.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ բավարարել հայցը:

Վճռաբեկ դատարանը Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն է տվել հետևյալ փաստերին.

1) «VAZ 2101» մակնիշի ավտոմեքենան (գույն՝ կարմիր, նույնականացման համար՝ XTA210100D4328030, SU տեսակ՝ թեթև մարդատար, թափքի համար՝ 4328030, շարժիչի համար՝ 6976477) (այսուհետ՝ նաև Ավտոմեքենա) սեփականության իրավունքով պատկանում է Սեյրան Հայկի Առաքելյանին (**հատոր 1-ին, գ.թ. 28**):

2) Սեյրան Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող Ավտոմեքենան 23.09.2016 թվականի խոտանվել է և այդ հիմքով գրանցումից հանվել (**հատոր 1-ին, գ.թ. 28, 93**):

3) 24.09.2019 թվականին՝ ժամը 00:25-ի սահմաններում, Երևան-Մեղրի ավտոճանապարհին իրար են բախվել Վազգեն Գավրուշայի Սարգսյանի վարած և Վաչե Վալերիի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող «Mercedes-Benz C 200» մակնիշի, 35ZF537 հաշվառման համարանիշով ավտոմեքենան և Նորիկ Իսահակի Ղուկասյանի վարած՝ առանց հաշվառման համարանիշի «VAZ 2101 մակնիշի ավտոմեքենան (**հատոր 1-ին, գ.թ. 21, 32, 56**):

4) Պատահարի հետևանքով «Mercedes-Benz C 200» մակնիշի, 35ZF537 հաշվառման համարանիշով ավտոմեքենային պատճառվել է 734.000 ՀՀ դրամի չափով վնաս (**հատոր 1-ին, գ.թ. 20**):

5) Վազգեն Գավրուշայի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող «Mercedes-Benz C 200» մակնիշի, 35ZF537 հաշվառման համարանիշով ավտոմեքենայի օգտագործումից բխող պատասխանատվությունն ապահովագրված է եղել «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից (**հատոր 1-ին, գ.թ. 32**):

6) 05.11.2019 թվականին Վաչե Հարությունյանի կողմից «Արմենիա Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է ներկայացվել «Mercedes-Benz C 200» մակնիշի, 35ZF537 հաշվառման համարանիշով ավտոմեքենային պատճառված վնասի հատուցում ստանալու վերաբերյալ թիվ SJ168082 դիմումը, որի բավարարման արդյունքում նշված ապահովագրական ընկերությունը 28.11.2019 թվականին ընդունել է տուժող Վաչե Հարությունյանին 734.000 ՀՀ դրամի չափ հատուցում վճարելու մասին թիվ Ե-19-6316 որոշում-ծանուցումը և այդ գումարը 09.12.2019 թվականին վճարել է Վաչե

Հարությունյանի լիազորված անձ Գևորգ Վարդանյանին (**հատոր 1-ին, գ.թ. 14, 16, 17, 20**):

7) Պատահարի պահին «VAZ 2101» մակնիշի ավտոմեքենայի համար ԱՊՊԱ պայմանագիր կնքված չի եղել (**հատոր 1-ին, գ.թ. 22, 28**):

8) Բյուրոն 10.12.2019 թվականի «Վնասի հատուցմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի իրականացման» թիվ Բ/19-09978 ծանուցմամբ Սեյրան Հայկի Առաքելյանից և Նորիկ Բասահակի Ղուկասյանից պահանջել է համապարտության կարգով հատուցել տուժողին վճարված ապահովագրական հատուցումը 734.000 ՀՀ դրամի, և ապահովագրական ընկերության գործավարման ծախսերի հետ կապված ծախսերը՝ 22.020 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 11-12**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ դատարանի կիրառած՝ Օրենքի 5-րդ և 25-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Բողոքի քննության շրջանակում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել անդրադարձնալ հետևյալ իրավական հարցին՝ արդյո՞ք խուրանման հիմքով հաշվառումից հանված ավերուրանսպորտային միջոցի օգրագործումից բխող վնասն ապահովագրական իրավակարգավորումների շրջանակներում ենթակա չէ հաշուցման:*

Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական մասում վկայակոչված օրենքներն ըստ էության կիրառելի են սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքի քննության համար և սույն հատուկ կարծիքի հեղինակների կարծիքով հենց դրանց կիրառման արդյունքում վճռաբեկ բողոքը պետք է մերժվեր, իսկ բողոքարկված դատական ակտը թողնվեր անփոփոխ հետևյալ հիմնավորմամբ.

Վճռաբեկ դատարանի որոշման «Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը» բաժնի հիմնավորումներում առկա ներքին հակասությունները ներմուծվել են վճռաբեկ դատարանի դատական ակտ:

Տվյալ դեպքում վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները ոչ թե օրենքի միատեսակ կիրառության խնդրին են վերաբերվում այլ սահմանում են նոր իրավակարգավորում և դրան համապատասխան իրավական հետևանքներ են առաջացնում ինչպես ավտոապահովագրողների այնպես էլ խոտանված կամ հաշվառման ոչ ենթակա տրանսպորտային միջոցների սեփականատերերի համար:

Վճռաբեկ բողոքի հիմնավորումներում ևս վճռաբեկ բողոք բերած անձը նշել է, որ «ԱՊՊԱ» օրենքի 6-րդ հոդվածի և Բյուրոյի կանոնների 66-րդ կետով սահմանվում է ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման հիմքերը: Ավտոմեքենան հաշվառումից հանելով վաղաժամկետ դադարում է դրա նկատմամբ կնքված ապապա պայմանագիրը:

Այս փաստարկները հիմնավոր համարելու դեպքում /դրանք ուղղակի բխում են վկայակոչված իրավանորմերից/ չենք կարող հիմնավորված բողոքի մյուս փաստարկն այն մասին, որ ավտոմեքենայի խոտանումը դեռևս չի նշանակում, որ այն պարտադիր ապահովագրման ենթակա չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե Ավտոմեքենան 2016 թվականին խոտանվելուց և այդ հիմքով հաշվառումից հանվելուց հետո այնուամենայնիվ շարունակել է երթևեկել Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով, ապա դրա օգտագործումից բխող վնասը ենթակա է հատուցման պարտադիր ապահովագրության իրավահարաբերությունները կանոնակարգող Օրենքով:

Ոստի ավտոճանապարհային պատահարի (24.09.2019 թվական) օրվա դրությամբ «VAZ 2101 մակնիշի ավտոմեքենայի նկատմամբ ԱՊՊԱ պայմանագրի բացակայությունը հիմք է Բյուրոյի կողմից օրենքով վերապահված իրավունքներն իրացնելու համար: Վճռաբեկ դատարանը հարկ է համարել նշել, որ այլ մեկնաբանության դեպքում ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ինստիտուտը չի ծառայի իր նպատակներին, քանի որ Հայաստանի Հանրապետությունում չհաշվառված, բայց ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով վարվող ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց շահերի պաշտպանություն և վնասների հատուցում փաստացի չի իրականացվի:

*Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ավտոտրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով վարելու դեպքում դրա օգտագործման հետևանքով պայրճառված վնասից բխող պատասխանատվության իրավահարաբերությունները Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի ուժով ենթակա են կարգավորման պարտադիր ապահովագրության հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող Օրենքով, մինչդեռ Որոշման մեջ հիշարակված իրավական ակտերի բովանդակությունից չենք կարող նման եզրահանգման գալ, քանի որ Օրենքը կարգավորել է ինչպես ապահովագրման ենթակա օբյեկտների սպառիչ ցանկը, այնպես էլ ԱՊՊԱ պայմանագրերի վաղաժամկետ դադարեցման դեպքեր, ապահովագրական հատուցում սրանապու անձանց շրջանակը և հետադարձ պահանջի իրավունք ձեռք բերելու դեպքերն ու պայմանները:*

Արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստել է, որ խոտանման հիմքով հաշվառումից հանված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող վնասն ապահովագրական իրավակարգավորումների շրջանակներում հատուցման ենթակա չլինելու վերաբերյալ հետևությունը չի բխում օրենսդրի հետապնդած և Օրենքում նշված նպատակներից և ի չիք է դարձնում այդ նպատակների կենսագործումը: Մասնավորապես, չեն երաշխավորվում խոտանման հիմքով հաշվառումից հանված ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց վնասների հատուցումն ու շահերի պաշտպանությունը և այդ տեսանկյունից ապահովագրական հատուցումների վճարման ընթացակարգերը կորցնում են իրենց արդյունավետությունը:



Մինչդեռ պետք է փաստել, որ օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթի շրջանակում վճռաբեկ դատարանը չի կարող լայնացնել ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակը, քանի որ այս խնդիրը կարող է կարգավորվել օրենսդրի կողմից:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգման հետևանքը լինելու է այն, որ խոտանված տրանսպորտային միջոցների դեպքում ԱՊՊԱ պայմանագրերը ոչ միայն չպետք է դադարեն, այլև կնքվեն նոր պայմանագրեր, քանի որ այլ անձանց գույքին հնարավոր վնաս հասցնելու դեպքում անհնարին կդառնա վնասի հատուցումը ԱՊՊԱ համակարգի միջոցով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու դեպքում դրա նկատմամբ գործող ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման մասին կանոնը միտված է այդ պայմանագրի դադարման պահի որոշմանը և չի բացառում **դրա օգտագործումից** բխող պատասխանատվությունն Օրենքի կանոնակարգումներին համապատասխան:

Վերը նշված իրավական դիրքորոշման հետ համաձայն չենք, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գույքին, կյանքին, առողջությանը պատճառված վնասի հատուցումը չի կապել բացառապես ապահովագրական ինստիտուտի առկայության հետ: Վճռաբեկ բողոքում վնասի հատուցման հետ վկայակոչված հողվածները ենթակա են կիրառման նաև ինքուրույն ռեժիմով՝ առանց ապահովագրական իրավահարաբերությունների առկայության:

Օրենքով հստակ նշված են այն դեպքերը, երբ «Բյուրոն» իրականացնում է ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով տուժողներին պատճառված վնասի փոխհատուցում և երբ է ձեռք բերում հետադարձ պահանջի իրավունք:

Բյուրոյի կողմից կողմից հատուցում տալու և հետադարձ պահանջի իրավունք ձեռք բերելու առաջնային և հիմնական պայմանը ԱՊՊԱ-ի օբյեկտ հանդիսացող ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կողմից համապատասխան պայմանագրի չկնքումն է, որի համար սահմանված է նաև վարչական պատասխանատվություն: Ապահովագրական ընկերությունների կողմից առանց իրավական և փաստական հիմքի տրվող հատուցումներով չի կարող ծագել հետադարձ պահանջի իրավունք, ելնելով ապահովագրական և քաղաքացիական օրենսդրության ընդհանուր իրավակարգավորումներից:

Ավտոտրանսպորտային միջոցի խոտանումը ոչ միայն դրա հաշվառման դադարման և ԱՊՊԱ պայմանագրի դադարման հիմք է, այլ նաև հիմք է գույքահարկի դադարման՝ քանի որ վերանում է ավտոտրանսպորտային միջոցի նպատակային օգտագործման իրավաբանական հնարավորությունը, չնայած և սեփականատերը պահպանում է ավտոտրանսպորտային միջոց հանդիսացող առարկայի մասերի և ագրեգատների նկատմամբ սեփականության իրավունքը /նույն համեմատությունը կարող է արվել քանդված անշարժ գույքի շինանյութի մասով/:

Սույն գործի փաստերից հետևում է ՃՏՊ-ի արդյունքում տուժողին վնաս է պատճառել Նորիկ Իսահակի Ղուկասյանը, որը տվյալ գույքի սեփականատերը չէ, և շահագործման ոչ ենթակա ավտոմեքենան ընդհանուր օգտագործման ճանապարհին վարել է առանց իրավական հիմքի: Նշված գույքը ենթակա չի եղել շահագործման որպես ավտոտրանսպորտային միջոց ոչ միայն այն պատճառով, որ խոտանված լինելու պատճառով հաշվառված չի եղել, այլ նաև տեխնիկապես ևս պիտանի չի եղել ընդհանուր օգտագործման ճանապարհներով վարելու համար:

Խոտանված ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր Սեյրան Առաքելյանը ԱՊՊԱ օրենքով և բյուրոյի կանոններով չուներ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու ոչ իրավունք, ոչ պարտականություն, հետևաբար, տուժող կողմին ապահովագրական հատուցում տված ապահովագրական ընկերությունը իրավասու չէր տուժող կողմի կրած վնասները հատուցեր ԱՊՊԱ օրենքի իրավակարգավորումների շրջանակներում:

Տվյալ դեպքում տուժող կողմի գույքային վնասը պետք է հատուցվեր քաղաքացիական և քաղաքացիական դատավարությամբ օրենսգրքերով սահմանված կարգով:

ԱՊՊԱ օրենքը ի տարբերություն կամավոր ապահովագրության որպես ապահովագրական օբյեկտ է դիտում ոչ թե սեփական գույքին պատճառված վնասը և/կամ գույքի կորուստը, այլ երրորդ անձանց նկատմամբ առաջացած գույքային պատասխանատվությունը և այս առումով տուժողին Օրենքի շրջանակներում փոխհատուցում տալու համար էական նշանակություն ունեցող հանգամանք պետք է դիտվեր ԱՊՊԱ պայմանագրի ենթակա օբյեկտի առկայության և դրա վերաբերյալ պայմանագիր կնքելու պարտականության միաժամանկյա առկայությունը:

Այս համատեքստում էլ պետք է գնահատական տրվեր վճարել բողոքի հարցադրմանը՝ ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում տուժող կողմին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ և 1058-րդ հոդվածների կիրառությունը կախված չէ բացառապես ԱՊՊԱ օրենքի կիրառումից: Օրենքով նախատեսված իրավահարաբերությունների բացակայության դեպքում անձի գույքին, կյանքին և առողջությանը պատճառված վնասը հատուցվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պայմաններով և կարգով:

Վճարել դատարանի որոշման պատճառաբանական մասում կատարված վերլուծությամբ ամրագրվել է այն դիրքորոշումը, որ Հայաստանի Հանրապետությունում թույլատրված է ապահովագրություն երկու տեսակ՝ կամավոր և պարտադիր: Կամավոր ապահովագրության դեպքում օգտվելով օրենքով ընձեռված այդ հնարավորությունից՝ անձն ապահովագրության համապատասխան դասով ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձի (ապահովագրող) հետ ապահովագրության պայմանագիր կնքում է իր ցանկությամբ և հայեցողությամբ: Մինչդեռ պարտադիր ապահովագրության դեպքում անձն ապահովագրողի հետ ապահովագրական իրավահարաբերությունների մեջ մտնում է օրենքի իմպերատիվ թելադրանքով՝ անկախ իր կամքից: Որոշման մեջ վկայակոչելով համապատասխան իրավանորմերը, նշվել են այն դեպքերը երբ ավտոտրանսպորտային միջոցները ենթակա են պարտադիր ապահովագրության և այն դեպքերը, երբ պարտադիր ապահովագրություն չի պահանջվում: Որոշմամբ բացահայտված է նաև ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման բովանդակությունը և դրա չպահպանելու հետևանքները, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման հիմքերը:

Սակայն դրանով հանդերձ իրավական եզրահանգումը չի բխում ինչպես վկայակոչված իրավական ակտերից, այնպես էլ գործի փաստերից, քանի որ իրավական դիրքորոշմամբ Վճարել դատարանն ըստ էության նոր իրավական կարգավորում է տալիս խոտանված և դրա հետևանքով հաշվառումից հանված և ըստ *Լության սպորինգի* շահագործվող ավտոմեքենայի մասնակցությամբ ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում գույքային

պատասխանատվության հարցի վերաբերյալ, այդպիսի դեպքը ներառելով ավտոապահովագրողների բյուրոյի կողմից տրվող հատուցումների ցանկում: Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական մասից չի երևում, թե ի վերջո վճռաբեկ բողոքի որ հիմքն էր հիմնավոր և ինչ պատճառաբանությամբ:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ վճռաբեկ բողոքը ենթակա էր մերժման:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Անտոնյան  
Էդ. Սեդրակյան  
Ա. Բարսեղյան

### 13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ-18063/02/19  
2022թ.

Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր  
Դատավորներ

ԵԴ/18063/02/19  
Տ. Նազարյան  
Ն. Բարսեղյան  
Ա. Պետրոսյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող* Մ. ԴՐՄԵՅԱՆ  
*գեկուցող* Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Ս. ԱՆՏՈՆՅԱՆ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 07-ին  
գրավոր ընթացակարգով քննելով Հայկ Սարգսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-  
րաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ  
հայցի Հայկ Սարգսյանի ընդդեմ «Իրավունք մեղիա» սահմանափակ պատաս-  
խանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և Իլոնա Ազարյանի՝  
գրպարտության և վիրավորանքի միջոցով պատվին, արժանապատվությանը և  
բարի համբավին հասցված վնասի հատուցման պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Հայկ Սարգսյանը պահանջել է պարտավորեցնել Ընկե-  
րությանը և Իլոնա Ազարյանին հրապարակային ներողություն խնդրել և դատա-  
րանի վճիռը հրապարակել նույն՝ «Իրավունք» թերթում ու կայքում, ինչպես նաև  
պարտավորեցնել վերջիններիս համապարտության կարգով որպես փոխհատու-  
ցում վճարել 700.000 ՀՀ դրամ՝ գրպարտության համար և 200.000 ՀՀ դրամ՝ վի-  
րավորանքի համար:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի  
(այսուհետ՝ Դատարան) (դատավոր Ա. Ստեփանյան) 02.03.2021 թվականի վճռով

հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Ընկերությանը պարտավորեցվել է որպես Ընկերության «Իրավունք» թերթում և [www.iravunk.com](http://www.iravunk.com) համացանցային կայքում «Դավիթ Սանասարյանի դեմ ողջ փաթեթը ԱԱԾ-ին է հասել Հայկ Սարգսյանի թեթև ձեռքով. «Իրավունք»» վերնագրով հրապարակման մեջ հայցվոր Հայկ Զարեհի Սարգսյանի վերաբերյալ գրպարտչական փաստացի տվյալներ ներկայացնելու հետևանքով հայցվորի պատվին և արժանապատվությանը պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցում Հայկ Սարգսյանին վճարել 90.000 ՀՀ դրամ: Հայցը մնացած մասով մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.09.2021 թվականի որոշմամբ Հայկ Սարգսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն, իսկ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է ամբողջությամբ՝ Դատարանի 02.03.2021 թվականի վճիռը Ընկերության դեմ ներկայացված հայցապահանջին վերաբերող մասով բեկանվել և փոփոխվել է՝ այդ մասով հայցը մերժվել է, իսկ Իլոնա Ազարյանի դեմ ներկայացված հայցապահանջին վերաբերող մասով վճիռը բեկանվել է, և գործն այդ մասով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայկ Սարգսյանը (ներկայացուցիչ Տիգրան Հայրապետյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Ընկերությունը և Իլոնա Ազարյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածները, Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ քննարկվող հոդվածը հրապարակվել է «Իրավունք» թերթում, իսկ Իլոնա Ազարյանն աշխատում է Ընկերությունում՝ որպես լրագրող, հետևաբար տվյալ դեպքում Իլոնա Ազարյանը չի կարող համարվել լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն պարագայում լրատվական գործունեություն իրականացրել է Ընկերությունը, որը պատասխանատվություն է կրում վիրավորական արտահայտություններ և գրպարտություն պարունակող տեղեկություններ հրապարակելու և տարածելու համար, և հանդիսանում է պատշաճ պատասխանող, ինչպես Իլոնա Ազարյանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է մասնակիորեն՝ Ընկերության դեմ ներկայացված հայցապահանջին վերաբերող մասով Դատարանի վճիռը բեկանող և փոփոխող՝ հայցն այդ մասով մերժող մասով բեկանել Վերաքննիչ դատարանի 28.09.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Քանի որ Վերաքննիչ դատարանի 28.09.2021 թվականի որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացվել է մասնակի, և բողոքաբերը համաձայն է պատասխանող

Իրոնա Ազարյանի մասով գործը նոր քննության ուղարկելու՝ Վերաքննիչ դատարանի եզրակացության հետ, նա չի կարող հայցել բարենպաստ դատական ակտի եզրափակիչ մասի փոփոխություն կատարել:

Վերաքննիչ դատարանը նշել է, թե ինչու չի անդրադարձել բողոքի բողոք հիմքերին և հիմնավորումներին:

Բողոքաբերը չի նշել իրավական այն նորմը, համաձայն որի Ընկերությունը պետք է Իրոնա Ազարյանի հետ համապարտ պատասխանատվություն կրի: Ընկերությունը չի հանդիսացել խնդրո առարկա հողվածի հեղինակ, և դրա ներքնում գրառում է կատարել հողվածի հեղինակի Իրոնա Ազարյանի մասին: Ընկերությունը բացահայտել է իր տարածած հողվածի հեղինակին, որպիսի պայմաններում որպես տարածող ազատվել է պատասխանատվությունից: Ընդ որում՝ հողվածը կասկած հարուցող անձի կողմից չի հրապարակվել, ինչի մասին վկայում է նաև այն փաստը, որ հայցվորը հայց հարուցել է նաև լրագրող Իրոնա Ազարյանի դեմ:

Խնդրո առարկա հողվածով հայտնվել է տեղեկատվություն, որը ատելության խոսք կամ հայհոյանք չի հանդիսացել: Միայն հայցվորի սուբյեկտիվ դիրքորոշմամբ արտահայտությունը հայհոյանք համարելը բավարար չէ այն այդպիսին վերադրակելու համար:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը

1) www.iravunk.com համացանցային կայքում 14.05.2019 թվականին տեղադրվել է «Դավիթ Սանասարյանի դեմ ողջ փաթեթը ԱԱԾ-ին է հասել Հայկ Սարգսյանի թեթև ձեռքով. «Իրավունք»» վերնագրով հետևյալ հրապարակումը.

««Իրավունք» թերթը գրում է.

«Մեզ հասած տեղեկություններով, ինչպես նաև իշխանական շրջանակներում ակտիվորեն շրջանառվող խոսակցությունների համաձայն, ժամանակավորապես լիազորությունները դադարեցված Պետական վերահսկողության ծառայության պետ Դավիթ Սանասարյանի դեմ ողջ ինֆորմացիոն փաթեթը ԱԱԾ-ին է հասել արան-նրան «յողոր» պաշտոններ շուայելու գործում մեծ վարպետ Զարեհ Սարգսյանի պարզամալոր որդու՝ Հայկ Սարգսյանի թեթև ձեռքով: Ամբողջ ինտիրն այն է, որ ըստ օրում կախված լուրերի, Դավիթ Սանասարյանը կամաց-կամաց դուրս էր եկել հենց Զարեհ Սարգսյանի՝ ժամանակին կարարած «ոչ մաքուր» անցյալի հերքերի վրա: Իսկ դա, հասարար, ոմանց հեչ ձեռք չէր տալիս:

Այդ մասին տեղեկացվել է Հայկ Սարգսյանը, և նա որոշել է հորը «փրկելու» համար, ինչպես մեր աղբյուրն է ասում. «Փուռը տալ Դավիթ Սանասարյանին»: Առավել մանրամասն՝ թերթի այսօրվա համարում» (հատոր 1-ին, գ.թ. 13).

2) www.iravunk.com համացանցային կայքում 14.05.2019 թվականին տեղադրվել է «ՍԱՆԱՍԱՐՅԱՆԻ ԳՈՐԾԻ ՇԵՐԹ-ԱԿՆՆ ՎԱՐԿԱԾԸ» վերնագրով հետևյալ հրապարակումը.

««Իրավունքին» հասած տեղեկություններով, ինչպես նաև իշխանական շրջանակներում ակտիվորեն շրջանառվող խոսակցությունների համաձայն, ժամանակավորապես լիազորությունները դադարեցված Պետական վերահսկողական ծառայության պետ Դավիթ Սանասարյանի դեմ (ով մեղադրվում է պաշտոնական լիազորությունները չարաշահելու մեջ) ողջ ինֆորմացիոն փաթեթը ԱԱԾ-ին է հասել արան-նրան «յողոր» պաշտոններ շուայելու գործում մեծ վարպետ, Զարեհ Սարգսյանի պարզամալոր որդու՝ Հայկ Սարգսյանի թեթև ձեռքով: Ամբողջ ինտիրն այն է, որ, ըստ օրում կախված լուրերի, Դավիթ Սանասարյանը կամաց-կամաց դուրս էր եկել

հենց *Զարեհ Սարգսյանի ժամանակին կատարած «ոչ մաքուր» անցյալի հետքերի վրա: Իսկ դա, հասարար, ոմանց հեջ ձեռք չէր տալիս: Այդ մասին տեղեկացվել է Հայկ Սարգսյանը, եւ նա որոշել է հորը «փրկելու» համար, ինչպես մեր աղբյուրն է ասում. «Փոռը տալ Դավիթ Սանասարյանին»: Ըար նույն վարկածի, Զարեհ Սարգսյանի վրա դուրս գալը դուր չէր եկել նաև իշխանություններին, այս կերպ փորձել են ժամանակավորապես չեզոքացնել Սանասարյանին: Իսկ այն, որ Զարեհ Սարգսյանը ժամանակին թաթախված է եղել բազմաթիվ կոռուպցիոն թեմաների մեջ, բազմիցս անդրադարձ է եղել նաև մամուլի տարբեր էջերում: ԻԼՈՆԱ ԱԶԱՐՅԱՆ» (հատոր 1-ին, գ.թ. 14).*

3) «Իրավունք Մեդիա» ՄՊԸ տնօրեն Գ.Գրիգորյանի կողմից 01.09.2020 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Իլոնա Ազարյանը 2012 թվականից աշխատում է «Իրավունք Մեդիա» ՄՊԸ-ում՝ որպես լրագրող, կես դրույքով (...)**(հատոր 1-ին, գ.թ. 120):**

**4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որը հիմնավորվում է ստորև ներկայացվող պատճառարանություններով:

*Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք լրացրվական գործունեություն իրականացնող կազմակերպությունը կարող է պարասիսանարվություն կրել գրպարտության համար, եթե դրանք հրապարակվել են նույն կազմակերպության աշխարակից հանդիսացող լրագրողի հեղինակությամբ, և եթե վերջինս հղում է կատարել կազմակերպությանը պարվանող օրաթերթին՝ որպես տեղեկարվության աղբյուրի:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ գրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ գրպարտություն կատարած անձի դեմ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ անձն ազատվում է վիրավորանքի կամ գրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի հրապարակման, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

Նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ եթե վիրավորելիս կամ գրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ գրպարտությունը հրապարակային

ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվական գործունեություն իրականացնողը:

«Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ստորև բերված հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են հետևյալ նշանակությամբ.

(...) 3) լրատվական գործունեություն իրականացնող՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, որն իր անունից տարածում է լրատվության միջոց:

Եթե Հայաստանի Հանրապետությունում լրատվական գործունեություն իրականացնողն այդ գործունեության առանձին փուլերն իրականացնում է այլ անձանց (գուտ տարածողը, հրատարակիչը և այլն) հետ կնքած գործարքների հիման վրա, ապա այդ անձինք, սույն օրենքի իմաստով, լրատվական գործունեություն իրականացնողներ չեն.

4) լրագրող՝ լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, լրատվական գործունեություն իրականացնողի ներկայացուցիչ, նրա հետ կնքած աշխատանքային կամ այլ պայմանագրի հիման վրա տեղեկատվություն փնտրող, հավաքող, ստացող, պատրաստող, խմբագրող. (...):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի մեկնաբանության համատեքստում իր նախադեպային իրավունքում արձանագրել է, որ «ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ լրատվություն տարածելու 10-րդ հոդվածով սահմանված լրագրողի պաշտպանությունը գործում է, եթե [լրագրողները] գործում են բարեխղճորեն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու նպատակով» (*Իրե'ս Բլադեյր Տրոնտոն ու Սթենասասան ընդդեմ Նորվեգիայի գործով Եվրոպական դատարանի 20.05.1999 թվականի վճիռը, կետ 65*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ կետի բովանդակությունից հետևում է, որ անձն ազատվում է պատասխանատվությունից երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- արտահայտված կամ ներկայացված փաստացի տվյալներն անձի հրապարակային ելույթների, պաշտոնական փաստաթղթերի, հեղինակային ստեղծագործությունների, **լրատվական գործունեություն իրականացնող ընկերությունների հրապարակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերադրադրությունն են,**

- տեղեկատվությունը տարածելիս **հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին:**

Իսկ սույն հոդվածի 9-րդ կետի բովանդակությունից բխում է, որ եթե լրատվական գործունեություն իրականացնողը արտահայտությունները կամ փաստացի տվյալները հրապարակելիս բացահայտում է հեղինակի անունը, ապա չի կրում վիրավորանքի կամ գրպարտության համար փոխհատուցման պարտականությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության հարցին, արձանագրել է, որ տեղեկատվությունը բառացի կամ բարեխիղճ ներկայացնելու օրենսդրի պահանջը նպատակ է հետապնդում ապահովելու բացահայտված աղբյուրում տեղ գտած տեղեկատվության բառացի շարադրանքը կամ հրապարակել այն այնպես, որ



չփոխվի ինչպես ամբողջական իմաստը, այնպես էլ կոնկրետ փաստերի վերաբերյալ առկա տեղեկատվությունը: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով տեղեկատվության աղբյուրներն անձինք են (ֆիզիկական և իրավաբանական), որոնք տարբեր միջոցներով հրապարակում են տեղեկատվությունը: Տեղեկատվության աղբյուր են հանդիսանում հեղինակները և լրատվական գործակալությունները (տե՛ս Թարթուլ Մանասերյանն ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊԸ-ի թիվ ԵԿԳ/2293/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.04.2012 թվականի որոշումը):

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ հղում է կատարված տեղեկատվության աղբյուրին, սակայն նույն աղբյուրում տեղ գտած տեղեկատվությունը հրապարակված չէ բառացի կամ բարեխիղճ, այլ կերպ՝ հրապարակողը փոփոխություններ է մտցրել տեղեկատվության մեջ, ավելացրել է, հանել կամ փոփոխել փաստերը (շարադրանքը կամ դրա առանձին մասերը), ապա հրապարակող անձը չի ազատվում պատասխանատվությունից: Նույն կանոնը գործում է նաև այն դեպքում, երբ տարածողը թեև վերարտադրում է տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ շարադրանքը, այդուհանդերձ հղում է կատարում մի աղբյուրի, որը չի համարվում «տեղեկատվության աղբյուր» ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իմաստով, այն է՝ չի հանդիսանում հեղինակ կամ լրատվական գործակալություն: Ընդ որում, բովանդակային առումով տեղեկատվության աղբյուրի բացահայտումը պետք է կատարվի տեղեկատվությունը տարածելու հետ միաժամանակ: Տեղեկատվությունը տարածելիս և ոչ թե դրանից հետո աղբյուրի բացահայտումը նպատակ է հետապնդում այդ տեղեկատվության հասցեատերերի մոտ ապահովել տեղեկացվածություն այն մասին, որ զրպարտությունը կամ վիրավորանքը դուրս է գալիս կոնկրետ սուբյեկտից, այլ ոչ թե անմիջական հրապարակողից կամ անորոշ թվով սուբյեկտներից: Աղբյուրի բացահայտումը, կախված աղբյուրի տեսակից, կարող է ազդել հասարակական կարծիքի ձևավորման վրա:

Այսպիսով, հրապարակման մեջ կիրառվող հղումը միջոց է նույնականացնելու ներկայացվող տեղեկատվությունը այն տեղեկատվության հետ, որին հղում է տրվել: Ընդ որում, հղման միջոցով տեղեկատվության աղբյուրի բացահայտումը հնարավորություն է տալիս հասցեատերերի (լսարանի, ընթերցողների) մոտ առաջացնել համոզմունք առ այն, որ բոլոր տվյալների կամ արտահայտությունների հեղինակ է հանդիսանում հղման մեջ որպես այդպիսին նշված անձը կամ լրատվական գործակալությունը:

Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ տեղեկատվություն հրապարակողը, եթե նույնիսկ հրապարակել է տեղեկատվության բովանդակությունը բառացի կամ բարեխիղճ և հղում է կատարել աղբյուրին, չի ազատվում պատասխանատվությունից, եթե դատավարության ընթացքում կապացուցվի, որ նա գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ զրպարտություն լինելու մասին, քանի որ նման դեպքում անձի մոտ առկա է զրպարտելու դիտավորությունը: Այս դեպքում ինչպես տեղեկատվությունը կրող աղբյուրը, այնպես էլ այդ տեղեկատվությունը հրապարակողը կրում են համապարտ պատասխանատվություն որպես համատեղ վնաս պատճառողներ: Նշված պայմանի պահպանման կարևորությունը առավելապես դրսևորվում է նրանում, որ պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին ենթադրաբար վնաս պատճառած արտահայտությունները հանդիսանում են փաստեր կամ գնահատողական դատողություններ, իսկ Դատարանը, քննարկելով արտահայտության՝ կոնկրետ իրավիճակում և պայմաններում վիրավորական լինելը կամ զրպարտություն

հանդիսանալը, գնահատում է ներկայացված արտահայտությունները, հետևաբար այն պարագայում, երբ վերարտադրված տեղեկատվության մեջ փաստերը, բառերը շարադրվում են փոփոխված կերպով, դատարանն արդեն գնահատում է նոր ներկայացված փաստեր կամ գնահատողական դատողություններ, ինչը անհնարին կդառնա տեղեկատվության՝ ոչ բարեխիղճ վերարտադրության պարագայում:

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արտահայտությունների կամ փաստացի տվյալների վերարտադրման մեջ դրանց հաջորդականությունը և ամբողջականությունը դատարանի համար ուղեցուցային են՝ գնահատելու դրանց ինչպես ինքնուրույն իմաստը, այնպես էլ հրապարակման շարադրանքում ամբողջական իմաստը, և ըստ այդմ որոշելու, թե արդյոք տվյալ դեպքում կիրառելի է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված պատասխանատվությունից ազատելու հիմքը:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ քննարկվող իրավական հարցադրման համատեքստում անհրաժեշտ է համարում նշել, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ զրպարտության գործերով պատասխանատվությունը կրում է տեղեկատվության աղբյուրը կամ հեղինակը, եթե հանդես չի գալիս անանուն կամ կեղծ անհատական տվյալներով. հակառակ դեպքում պատասխանատվությունը փոխանցվում է տեղեկատվությունը տարածողին (հրապարակողին): Հետևաբար, եթե զրպարտություն պարունակող նյութը տպագրվել է լրատվության միջոցով, և լրատվական գործունեություն իրականացնողը՝ հրապարակողը, բացահայտել է հրապարակվող նյութի հեղինակին՝ նշելով լրագրողի անունը, իսկ վերջինս որպես հրապարակվող տեղեկությունների աղբյուրի հղում է կատարել տվյալ լրատվական միջոցին, ապա պատշաճ պատասխանողներ են հանդիսանում ինչպես լրագրողը՝ որպես հեղինակ, այնպես էլ նյութը տարածող լրատվական ընկերությունը՝ որպես տեղեկատվության տարածող և լրագրողի կողմից վկայակոչված աղբյուր: Նման փաստական հանգամանքների դեպքում թե՛ հեղինակի, թե՛ տեղեկատվությունը հրապարակող ընկերության ներգրավումը դատավարությանն անհրաժեշտություն է ինչպես վեճի ճիշտ լուծման, այն է՝ կողմերի պատասխանատվության կամ դրանից ազատելու հիմքերի առկայության հարցերը պարզելու, այնպես էլ համապատասխանողներին միջև պատասխանատվությունը ճիշտ բաշխելու տեսանկյունից:

### *Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայկ Սարգսյանը, դիմելով դատարան, խնդրել է պարտավորեցնել Ընկերությանը և Իրոնա Ազարյանին հրապարակային ներողություն խնդրել իրենից և դատարանի վճիռը հրապարակել նույն՝ «Իրավունք» թերթում ու կայքում, ինչպես նաև պարտավորեցնել պատասխանողներին համապարտության կարգով փոխհատուցում վճարել 700.000 ՀՀ դրամ՝ զրպարտության համար և 200.000 ՀՀ դրամ՝ վիրավորանքի համար:

**Դատարանը** հայցը բավարարել է մասնակիորեն՝ պատճառաբանելով, որ խնդրո առարկա հոդվածը հրապարակվել է «Իրավունք» թերթում, իսկ Իրոնա Ազարյանն աշխատում է «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ում որպես լրագրող, հետևաբար տվյալ դեպքում Իրոնա Ազարյանը չի կարող համարվել որպես լրատվական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, ում անունից տարածվել է զանգվածային լրատվությունը, որտեղ հրապարակվել են ենթադրյալ

վիրավորական արտահայտությունները և/կամ զրպարտություն պարունակող տեղեկությունները, ուստի Իլոնա Ազարյանը չի հանդիսանում պատշաճ պատասխանող, և վերջինիս դեմ ներկայացված պահանջների մասով հայցը ենթակա է մերժման:

Դատարանն արձանագրել է նաև, որ զրպարտությանը վերաբերող պահանջի մասով «ապացուցված են պատասխանող «Իրավունք Մեդիա» ՍՊ ընկերության «Իրավունք» թերթում և [www.iravunk.com](http://www.iravunk.com) համացանցային կայքում «Դավիթ Սանասարյանի դեմ ողջ փաթեթը ԱԱԾ-ին է հասել Հայկ Սարգսյանի թեթև ձեռքով. «Իրավունք»» վերնագրով հրապարակման մեջ հայցվորի վերաբերյալ (...) փաստացի տվյալներ ներկայացված լինելու, այդ արտահայտությունն իրականում հայցվոր Հայկ Սարգսյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորելու, ներկայացվածն իր մեջ հայցվորի ենթադրյալ որոշակի գործողությունների վերաբերյալ կոնկրետ, հստակ տեղեկություններ պարունակելու, նշված արտահայտությունը հրապարակային ձևով արված լինելու, ներկայացվածն իրականությամբ չհամապատասխանելու, անհիմն, ոչ հավաստի լինելու փաստերը»:

**Վերաքննիչ դատարանը** մասնակիորեն բավարարել է Հայկ Սարգսյանի բողոքը՝ պատճառաբանելով. «(...) [Վ]երոնշյալ դեպքում պատշաճ պատասխանող կարող է հանդիսանալ հենց տեղեկատվության աղբյուրը, հոդվածի հեղինակը՝ Իլոնա Ազարյանը՝ նկատի ունենալով, որ վերջինս է լրատվության միջոցի օգտագործմամբ տարածել որոշակի տեղեկատվություն: Ինչ վերաբերում է Ընկերության՝ վիրավորանքի և զրպարտության համար պատասխանատվությունից ազատվելու վերաբերյալ փաստարկին, ապա Վերաքննիչ դատարանն այն հիմնավորված է համարում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ երբ լրատվության միջոցը հղում է կատարում իր տեղեկատվության աղբյուրին, նա միայն հանդիսանում է հարթակ այլ անձանց կողմից տեղեկություններ տարածելու համար, այսինքն՝ որևէ պատասխանատվություն չի կրում արտահայտությունների զրպարտչական կամ վիրավորական լինելու համար: Ընդ որում՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ պատասխանող Ընկերությունը տեղեկատվության աղբյուրը բացահայտել և դրան հղում է կատարել տեղեկատվության տարածման հետ միաժամանակ: Տետևաբար՝ սույն դեպքում կիրառելի է եղել Քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերով նախատեսված՝ հոդվածը տարածողի՝ սույն դեպքում Ընկերության, քաղաքացիաիրավական պատասխանատվությունից ազատվելու իմպերատիվ պահանջը»:

Այսպիսով, հարկ է արձանագրել, որ Դատարանը գործի քննության արդյունքում հաստատված է համարել Ընկերության պատասխանատվության համար անհրաժեշտ բոլոր փաստական հանգամանքները և հայցը բավարարել է մասնակի՝ միայն Ընկերության դեմ ներկայացվող պահանջների մասով, մինչդեռ լրագրող Իլոնա Ազարյանի մասով, հայցը մերժվել է նրա՝ ոչ պատշաճ պատասխանող հանդիսանալու պատճառաբանությամբ՝ ըստ այդմ չքննելով նրա դեմ ներկայացվող պահանջները և դրանց դեմ նրա կողմից ներկայացված առարկությունները: Վերաքննիչ դատարանը հայցվորի բողոքը բավարարել է մասնակիորեն՝ բեկանել է Իլոնա Ազարյանի դեմ ներկայացված պահանջները մերժելու մասով և գործն այդ մասով ուղարկել է նոր քննության, իսկ Ընկերության բողոքի բավարարման արդյունքում Ընկերության դեմ ներկայացված պահանջները բավարարող մասով վճիռը բեկանել է և փոփոխել՝ հայցն այդ մասով մերժել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ և 9-րդ կետերի կիրառության արդյունքում:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Գործի քննությամբ հաստատված փաստերից հետևում է, որ 14.05.2019 թվականին [www.iravunk.com](http://www.iravunk.com) համացանցային կայքում հրապարակվել են հայցվորի վերաբերյալ փաստացի տվյալներ ներկայացնող երկու նույնաբովանդակ հոդվածներ՝ «Դավիթ Սանասարյանի դեմ ողջ փաթեթը ԱՄԾ-ին է հասել Հայկ Սարգսյանի թեթև ձեռքով. «Իրավունք»» և «ՍԱՆՍԱՐՅԱՆԻ ԳՈՐԾԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ» վերնագրերով: Դրանցից առաջինը հրապարակվել է «Իրավունք» թերթի անունից («**«Իրավունք» թերթը գրում է (...)**»), իսկ երկրորդը՝ նույն թերթի լրագրող Իլոնա Ազարյանի հեղինակությամբ՝ հղում կատարելով «Իրավունք» թերթի տեղեկատվությանը (հոդվածի սկզբնարմատում հեղինակը նշել է **««Իրավունքին» հասած տեղեկություններով**):

Իլոնա Ազարյանը լրատվական գործունեություն իրականացնող ընկերության՝ «Իրավունք Մեդիա» ՄԴԸ-ի հետ կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող լրագրող է, ով հայցվորին վերաբերող փաստացի տվյալներ պարունակող նյութը հրապարակելիս միաժամանակ հղում է կատարել տեղեկատվության աղբյուրին՝ նշելով, որ հրապարակվող տեղեկություններն ի թիվս այլ աղբյուրների հիմնված են նաև **««Իրավունքին» հասած տեղեկությունների»** վրա: Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ նման պայմաններում հոդվածը ընթերցող որևէ երրորդ անձի համար հղման առկայությունը հենց հոդվածի սկզբնարմատում տեսնելը առաջացնում է ողջամիտ համոզմունք առ այն, որ ներկայացվելիք ամբողջ տեղեկատվությունը, ինչը կարող է պարունակել վիրավորանքի կամ զրպարտության տարրեր, պատկանում է հղման մեջ որպես տեղեկատվության աղբյուր վկայակոչված անձանց:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Ընկերությունը չի կարող ազատվել զրպարտության համար պատասխանատվությունից հեղինակի անունը նշելու հանգամանքի ուժով այն պարագայում, երբ հեղինակը, որպես իր տեղեկատվության աղբյուր, վկայակոչել է Ընկերությանը պատկանող լրատվական միջոցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով պատասխանող Իլոնա Ազարյանի պատասխանատվության հարցը պարզելու նպատակով գործն ուղարկվել է առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, և Ընկերության դեմ ներկայացված պահանջների քննության մասով գործի ելքն ուղղակիորեն կապված է բեկանված մասով գործի քննության արդյունքների հետ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության պատասխանատվության հարցը լուծելու համար առկա է վերոնշյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գործի նոր քննության անհրաժեշտություն:

*Վերոգրյալ պարճատարանությամբ միաժամանակ հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նույն օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.09.2021 թվականի որոշման՝ «Իրավունք մեղիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերաքննիչ բողոքը բավարարելու և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 02.03.2021 թվականի թիվ ԵԴ/18063/02/19 քաղաքացիական գործով կայացրած վճիռը՝ «Իրավունք Մեղիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դեմ ներկայացված հայցապահանջին վերաբերող մասով, բեկանելու և փոփոխելու, վերջինիս մասով հայցը մերժելու մասը և գործն այդ մասով ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԼԴ2/0043/02/20	2023թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԼԴ2/0043/02/20	
Նախագահող դատավոր՝	Կ. Համբարձումյան	
Դատավորներ՝	Ն. Մարգարյան	
	Հ. Ենոքյան	

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող և զեկուցող</i>	Մ. ԴԻՄԵՅԱՆ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ

2023 թվականի փետրվարի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.07.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի դիմումի՝ (Ֆինանսական համակարգի հաշտարար Փիրուզ Սարգսյան (այսուհետ՝ Հաշտարար) և հաճախորդ Գարիկ Քոչինյան)՝ Հաշտարարի 03.12.2019 թվականի թիվ 15-7521/19 որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է չեղյալ ճանաչել Հաշտարարի 03.12.2019 թվականի թիվ 15-7521/19 որոշումը (այսուհետ՝ Որոշում)։

ՀՀ Լոռու մարզի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Գ. Զաքարյան) (այսուհետ՝ Դատարան) 19.03.2021 թվականի որոշմամբ դիմումը մերժվել է։

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.07.2021 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.03.2021 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը (ներկայացուցիչ Պավել Մարտիրոսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հաշտարարը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէր հետևանքավորում:*

Վերաքննիչ դատարանի կողմից քննարկման առարկա չի դարձվել այն հարցը, թե արդյոք «քաղվածքը» ևս հանդիսանում է «պարտադիր ներկայացման տեղեկատվություն», մինչդեռ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի քննարկման և հստակ մեկնաբանման դեպքում կհանգեր այն եզրահանգման, որ քաղվածքը պարտադիր ներկայացման տեղեկատվություն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.07.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ չեղյալ ճանաչել Որոշումը:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվում են տարբեր հասկացություններ, մասնավորապես՝ պարտադիր ներկայացման տեղեկատվություն է համարվում կրեդիտավորման պայմանագրի պայմանների կամ կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ կրեդիտավորման պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ կրեդիտավորման ներքին ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ քաղվածքն իր մեջ ներառում է կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը:

Վերոգրյալից հետևում է, որ այս երկու հասկացություններն ունեն տարբեր բովանդակություն, ուստի օրենսդիրը, օգտագործելով տարբեր տերմիններ, չէր կարող մինևսույն հասկացությունը նկատի ունենալ:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

1) 12.02.2018 թվականին Գարիկ Քոչինյանի կողմից ներկայացված՝ Հաշտարարին քարտով վարկային գծի և/կամ գրավի խստոր պայմանագիր կնքելու

հաճախորդի առաջարկ-դիմումի (այսուհետ՝ Դիմում) հիման վրա Բանկը Գարիկ Քոչինյանին տրամադրել է 1.483.000 ՀՀ դրամի սահմանաչափով վարկային գիծ: Դիմումի 13-րդ կետի համաձայն՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը Գարիկ Քոչինյանը ցանկանում է ստանալ «էլեկտրոնային կապով (sms, էլեկտրոնային փոստ և այլն)» (**հատոր 1-ին, գ.թ. 70-72**):

2) Գարիկ Քոչինյանը 07.08.2019 թվականին բողոք-պահանջ է ներկայացրել Բանկին՝ պահանջելով վճարել «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված 300.000 ՀՀ դրամ՝ օրենքով սահմանված պարբերականությանը հաշվի քաղվածքներ չտրամադրելու համար (**հատոր 1-ին, գ.թ. 65-66**):

3) Գարիկ Քոչինյանը Հաշտարարին ներկայացրած թիվ 07-1192/19 դիմումով խնդրել է որոշում կայացնել Բանկի կողմից «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի խախտման համար իրեն 300.000 ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 62-64**):

4) Հաշտարարի 03.12.2019 թվականի թիվ 15-7521/19 որոշմամբ բավարարվել է Գարիկ Քոչինյանի Բանկի դեմ ուղղված թիվ 07-1192/19 պահանջը՝ 300.000 դրամ գումարի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 27-36**):

#### **4. Վճուրակ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճուրակ դատարանն արձանագրում է, որ սույն վճուրակ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճուրակ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք «կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվությունը» (այսուհետ՝ քաղվածք) համարվում է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի իմաստով սահմանված «պարտադիր ներկայացման տեղեկատվություն»:*

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝

1. Կրեդիտավորողի և սպառողի միջև ցանկացած հաղորդակցում, որը կապված է կրեդիտավորման պայմանագրի պայմանների կամ կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման հետ կամ վերաբերում է կրեդիտավորման պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ կրեդիտավորողի ներքին ակտերին, կատարվում է գրավոր եղանակով՝ փոստային կապի միջոցով, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի: Ընդ որում, սույն մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:

2. Կրեդիտավորողը պարտավոր է իր կողմից կամ կրեդիտավորման պայմանագրով սահմանված պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան երեսնօրյա



պարբերականությամբ, սպառողին ներկայացնել կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը՝ փոստային կապի միջոցով, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի:

3. Սպառողն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունը փոստային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում ստանալու պայմանով: Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում ստանալու սպառողի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, կրեդիտավորողն իրավունք չունի սպառողին պարտադրելու, այդ թվում՝ սպառողի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ սպառողը հրաժարվի պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կապով ստանալու իր իրավունքից:

4. Եթե պարտադիր ներկայացման տեղեկատվությունն սպառողին պետք է հանձնվի բանկի տարածքում, ապա բանկը պարտավոր է առնվազն 3 տարի թղթային կամ էլեկտրոնային կրիչի վրա պահպանել սպառողի կողմից չպահանջված տեղեկատվությունը:

5. Սպառողների իրավունքների պաշտպանության նպատակից ելնելով՝ Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել նույն հոդվածով նախատեսված հաղորդակցման կարգ, պայմաններ, ձևեր և նվազագույն պահանջներ:

«Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 19.06.2019 թվականին ընդունված թիվ ՀՕ-93-Ն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրվել է հետևյալ կերպ՝ «2. Կրեդիտավորողը պարտավոր է իր կողմից կամ կրեդիտավորման պայմանագրով սահմանված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը, **սպառողին ներկայացնել կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը՝ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի: Ընդ որում, սույն մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն»:**

Վկայակոչված իրավանորմների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, կարևորելով սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ամրագրել է այն տեղեկատվության շրջանակը, որը Կրեդիտավորողը որոշակի պարբերականությամբ պարտավորվում է փոխանցել իր հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող Սպառողին: Օրենսդրական կարգավորումների

վերլուծությունից հետևում է, որ պարտադիր փոխանցման ենթակա է այն տեղեկատվությունը, որն այս կամ այն կերպ շոշափում է Սպառողի իրավունքները և (կամ) պարտականությունները կամ անդրադառնում է դրանց իրականացմանը կամ դրանց չիրականացման հետևանքներին:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն բողոքի հիմքում բարձրացված հարցադրումը, հարկ է համարում անդրադառնալ այն իրավական խնդրին, թե արդյոք «քաղվածք» վերտառությամբ փաստաթղթում ներառված տեղեկատվությունը ևս կարող է համարվել որպես պարտադիր ներկայացման տեղեկատվություն: Այդ իսկ նկատառումով Վճռաբեկ դատարանը նախ և առաջ անհրաժեշտ է համարում բացահայտել վերը նշված փաստաթղթի բովանդակությունը:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված «Բանկի ել ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ը հաստատելու մասին թիվ 229-Ն որոշման 7-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ «Բաղվածք»՝ «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված հաշվի քաղվածք կամ «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ:

Վերոգրյալ իրավանդումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղվածքը փաստաթուղթ է (նաև էլեկտրոնային փաստաթուղթ), որը բովանդակում է նաև կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ քաղվածքի՝ սպառողին ուղարկելու անհրաժեշտությունը և պարտադիրությունը կայանում է նրանում, որ այն էական դեր է խաղում սպառողի կողմից իր եկամուտների, պայմանագրից բխող պարտականությունների, դրանք չկատարելու հետևանքով առաջացող պատասխանատվության միջոցների, պարտավորությունների հիմքերի և մարումների նկատմամբ հսկողություն իրականացնելու հարցում: Մասնավորապես, օրենքով սահմանված հաճախականությամբ քաղվածքների տրամադրումը սպառողի համար առավել արդյունավետ և դյուրին է դարձնում կրեդիտավորման պայմանագրի վերաբերյալ տվյալների նկատմամբ իր իսկ հաշվապահությունն իրականացնելու գործընթացը: Բացի այդ, այն նաև Սպառողի կողմից Կրեդիտավորողի գործունեության նկատմամբ վերահսկողության կարևոր երաշխիք է:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ֆինանսական կազմակերպության կողմից քաղվածքների տրամադրումը նախ և առաջ բխում է սպառողի օրինական շահերից, որի չստանալու և/կամ ուշ ստանալու դեպքում սպառողը գրկվում է կրեդիտավորման պայմանագրի նկատմամբ հսկողություն իրականացնելու իր իրավունքից:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ քաղվածքում ներառվող տեղեկատվությունը, չնայած այն հանգամանքին, որ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին կարգավորմամբ ուղղակիորեն սահմանված չի եղել որպես

պարտադիր ներկայացման տեղեկատվություն, այնուհանդերձ, հողվածի բովանդակությունը և նպատակը, ֆինանսական գործունեության ոլորտում առաջացող իրավահարաբերությունների առաձնահատկությունները վկայում են այն մասին, որ նախկին խմբագրությամբ կարգավորման պայմաններում ևս քաղվածքում ներառված տեղեկատվությունը պետք է դիտարկել որպես պարտադիր ներկայացման տեղեկատվություն: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև այն իրավական իրողությունը, որ քաղվածքում ներառված տեղեկատվության բովանդակությունը և՛ նախկին, և՛ ներկայիս կարգավորումներով նույնն է, իսկ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում կատարելով օրենսդրական փոփոխություն՝ օրենսդիրը ավելի հստակեցրել և որոշակիացրել է քաղվածքի դերը՝ դրանում ներառված տեղեկատվությունն ուղղակիորեն համարելով պարտադիր ներկայացման տեղեկատվություն:

### ***Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Սույն գործի փաստերի համաձայն՝ 12.02.2018 թվականին Գարիկ Քոչինյանի կողմից ներկայացված՝ Հաշվարկային քարտով վարկային գծի և/կամ գրավի խառը պայմանագիր կնքելու հաճախորդի առաջարկ-դիմումի (այսուհետ՝ Դիմում) հիման վրա Բանկը Գարիկ Քոչինյանին տրամադրել է 1.483.000 ՀՀ դրամի սահմանաչափով վարկային գիծ:

Դիմումի 13-րդ կետի համաձայն՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը Գարիկ Քոչինյանը ցանկանում է ստանալ «էլեկտրոնային կապով (sms, էլեկտրոնային փոստ և այլն)»:

Գարիկ Քոչինյանը 07.08.2019 թվականին բողոք-պահանջ է ներկայացրել Բանկին՝ պահանջելով վճարել «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված 300.000 ՀՀ դրամ՝ օրենքով սահմանված պարբերականությամբ հաշվի քաղվածքներ չտրամադրելու համար:

Գարիկ Քոչինյանը Հաշտարարին ներկայացրած թիվ 07-1192/19 դիմումով խնդրել է որոշում կայացնել Բանկի կողմից «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի խախտման համար իրեն 300.000 ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ:

Հաշտարարի 03.12.2019 թվականի թիվ 15-7521/19 որոշմամբ բավարարվել է Գարիկ Քոչինյանի՝ Բանկի դեմ ուղղված թիվ 07-1192/19 պահանջը՝ 300.000 դրամ գումարի չափով:

Հաշտարարը 03.12.2019 թվականի Որոշմամբ բավարարել է Գարիկ Քոչինյանի՝ Բանկի դեմ ուղղված թիվ 07-1192/19 պահանջը՝ 300.000 ՀՀ դրամ գումարի չափով, այն հիմնավորմամբ, որ «և՛ Օրենքով, և՛ Կանոնակարգ 8/05-ով առանձնացվում են երկու տարբեր հասկացություն՝ «պարտադիր ներկայացման տեղեկատվություն» և «քաղվածք»: Նշված հասկացությունների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Օրենքի առանձին հոդվածներով և Կանոնակարգ 8/05-ի առանձին գլուխներով: (...) Այսինքն միայն «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2019թ. հունիսի 19-ին ընդունված թիվ ՀՕ-93-Ն օրենքով, (...) օրենսդիրը սահմանել է, որ քաղվածքը ևս պետք է համարվի պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվություն: Հետևաբար մինչև սույն փոփոխության ուժի մեջ մտնելը գործող Օրենքի խմբագրությամբ

օրենսդիրը փարանջարել է քաղվածքն ու պարտադիր ներկայացման ենթակա տեղեկարկությունը և քաղվածքը, որպես պարտադիր ներկայացման տեղեկարկություն, չի սահմանել: (...) Եման պայմաններում Հաշտարարը գրնում է, որ քաղվածք և «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր ներկայացման տեղեկարկություն հասկացությունները միմյանց հեղ տոյնսական չեն և առանձնանում են միմյանցից իրենց բովանդակությամբ»:

Գատարան ներկայացրած դիմումով Բանկը խնդրել է չեղյալ ճանաչել Որոշումը:

**Գատարանը** մերժել է Բանկի դիմումը՝ պատճառաբանելով, որ՝ «Այն հանգամանքը, որ Օրենքում կարարված փոփոխությամբ քաղվածքը և սահմանվել է որպես պարտադիր ներկայացման տեղեկարկություն, վկայում է այն մասին, որ մինչև այդ փոփոխությունները կարարվելը քաղվածքը չի կարող համարվել պարտադիր ներկայացման տեղեկարկություն, այլայես իմաստ չէր ունենա կարարել օրենսդրական փոփոխություն և դրանով քաղվածքը բնորոշել որպես պարտադիր ներկայացման տեղեկարկություն: (...) քաղվածք և «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր ներկայացման տեղեկարկություն հասկացությունները միմյանց հեղ տոյնսական չեն և առանձնանում են միմյանցից իրենց բովանդակությամբ»:

**Վերաքննիչ դատարանը** մերժել է Բանկի բողոքը՝ արձանագրելով հետևյալը. «Անորոշատնալով բողոքաբերի այն փաստարկին, ըստ որի՝ Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկարկությունը ևս (համնձայն Կանոնակարգ 8/05-ի՝ քաղվածքը) տլյալ հոդվածի իմաստով ներառվում է «պարտադիր ներկայացման տեղեկարկություն» հասկացության մեջ՝ Վերաքննիչ դատարանն այն գնահատում է չիմնավորված, քանի որ նշված Կանոնակարգի 6-րդ գլխում սահմանված են ֆինանսական կազմակերպության և սպառողի՝ պայմանագրի գործողության ընթացքում հաղորդակցման համար պարտադիր պայմանները»:

Ստորադաս դատարանները գտել են, որ Բանկը խախտել է Գարիկ Քոչինյանի քաղվածք ստանալու իրավունքը՝ այն պատճառաբանությամբ, որ քաղվածքը և պարտադիր ներկայացման տեղեկատվությունը տոյնսական չեն և տարբերվում են միմյանցից: Մինչդեռ վերևում ներկայացված պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասում «պարտադիր ներկայացման տեղեկատվություն» բառակապակցությունը ոչ թե պետք է ընկալել տոյն հոդվածի 1-ին մասով սահմանված դրա նորմատիվ՝ իրավաբանական մեկնաբանման իմաստով, այլ դրանում պարունակվող բառերի քերականական իմաստով: Նկատի ունենալով, որ քաղվածքը կրեդիտավորողի կողմից սպառողին պարտադիր ներկայացման ենթակա և ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած նվազագույն տարբերը պարունակող տեղեկությունների ամբողջություն է, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով պարտադիր ներկայացման տեղեկատվություն է, քանզի կրեդիտավորման պայմանագրով սահմանված, բայց ոչ պակաս, քան երեսնօրյա պարբերականությամբ, այն սպառողին ներկայացնելը կրեդիտավորողի պարտականությունն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը սխալ մեկնաբանելու հետևանքով ստորադաս դատարանները քննարկման առարկա չեն դարձրել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ 12.02.2018 թվականի Դիմումը, պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվությունը ստանալու՝ Գարիկ Քոչինյանի

նախընտրած կարգն ու Բանկի կողմից «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի պահանջները պահպանված լինելու կամ չլինելու հանգամանքը:

Հետևաբար «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի խախտման մասին բողոքում բերված փաստարկը հիմնավորված է, ինչը բավարար է Վերաքննիչ դատարանի 15.07.2021 թվականի որոշումը բեկանելու համար, քանի որ ստորադաս դատարանները թույլ են տվել այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանությամբ:*

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը խախտելու հետևանքով ստորադաս դատարանները Որոշման իրավաչափությունը սույն որոշմամբ բարձրացված հարցերի շրջանակում չեն գնահատել, ինչպես նաև գործում առկա ապացույցներն այդ հարցերի կապակցությամբ պատշաճ չեն հետազոտվել և գնահատվել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի հոդվածին 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վերապահված լիազորությունը՝ բեկանել Վերաքննիչ դատարանի 15.07.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

#### ***5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ գործն ուղարկվում է ամբողջ ծավալով նոր քննության և գործի քննության այս փուլում հնարավոր չէ անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.07.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

### Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԼԳ-2/0043/02/20 քաղաքացիական գործով 10.02.2023 թվականին կայացված որոշման վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 10.02.2023 թվականին քննելով «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.07.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Բանկի ընդդեմ Ֆինանսական համակարգի հաշտարար Փիրուզ Սարգսյանի և Գարիկ Քոչինյանի՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի 03.12.2019 թվականի թիվ 15-7521/19 որոշումը չեղյալ ճանաչելու պահանջի մասին, նույն պալատի դատավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի՝ րեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.07.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատավոր Ա. Բարսեղյան և Է. Սեդրակյան համաձայն չլինելով վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը նշված որոշման վերաբերյալ:

#### **1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է չեղյալ ճանաչել Հաշտարարի 03.12.2019 թվականի թիվ 15-7521/19 որոշումը (այսուհետ՝ Որոշում):

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Գ. Զաքարյան) (այսուհետ՝ Դատարան) 19.03.2021 թվականի որոշմամբ դիմումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.07.2021 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.03.2021 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը (ներկայացուցիչ Պավել Մարտիրոսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հաշտարարը:

#### **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հերկյալ փաստարկներով:*

Վերաքննիչ դատարանի կողմից քննարկման առարկա չի դարձվել այն հարցը, թե արդյոք «քաղվածքը» ևս հանդիսանում է «պարտադիր ներկայացման տեղեկատվություն», մինչդեռ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի

17-րդ հոդվածի քննարկման և հստակ մեկնաբանման դեպքում կհանգեր այն եզրահանգման, որ քաղվածքը պարտադիր ներկայացման տեղեկատվություն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.07.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ չեղյալ ճանաչել Որոշումը:

**2.1. Վճուարել բողոքի պարասխանի հիմնավորումները**

«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանվում են տարբեր հասկացություններ, մասնավորապես՝ պարտադիր ներկայացման տեղեկատվություն է համարվում կրեդիտավորման պայմանագրի պայմանների կամ կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ կրեդիտավորման պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ կրեդիտավորման ներքին ակտերի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ քաղվածքն իր մեջ ներառում է կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը:

Վերոգրյալից հետևում է, որ այս երկու հասկացություններն ունեն տարբեր բովանդակություն, ուստի օրենսդիրը, օգտագործելով տարբեր տերմիններ, չէր կարող միևնույն հասկացությունը նկատի ունենալ :

**3. Որպես վճուարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստեր Վճուարել դատարանն արձանագրել է հետևյալը**

1) 12.02.2018 թվականին Գարիկ Քոչինյանի կողմից ներկայացված՝ Հաշվարկային քարտով վարկային գծի և/կամ գրավի խառը պայմանագիր կնքելու հաճախորդի առաջարկ-դիմումի (այսուհետ՝ Դիմում) հիման վրա Բանկը Գարիկ Քոչինյանին տրամադրել է 1.483.000 ՀՀ դրամի սահմանաչափով վարկային գիծ:

Դիմումի 13-րդ կետի համաձայն՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը Գարիկ Քոչինյանը ցանկանում է ստանալ «էլեկտրոնային կապով (sms, էլեկտրոնային փոստ և այլն)» **(հատոր 1-ին, գ.թ. 70-72):**

2) Գարիկ Քոչինյանը 07.08.2019 թվականին բողոք-պահանջ է ներկայացրել Բանկին՝ պահանջելով վճարել «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված 300.000 ՀՀ դրամ՝ օրենքով սահմանված պարբերականությամբ հաշվի քաղվածքներ չտրամադրելու համար **(հատոր 1-ին, գ.թ. 65-66):**

3) Գարիկ Քոչինյանը Հաշտարարին ներկայացրած թիվ 07-1192/19 դիմումով խնդրել է որոշում կայացնել Բանկի կողմից «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի խախտման համար իրեն 300.000 ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ **(հատոր 1-ին, գ.թ. 62-64):**

4) Հաշտարարի 03.12.2019 թվականի թիվ 15-7521/19 որոշմամբ բավարարվել է Գարիկ Քոչինյանի Բանկի դեմ ուղղված թիվ 07-1192/19 պահանջը՝ 300.000 դրամ գումարի չափով **(հատոր 1-ին, գ.թ. 27-36):**



#### 4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք «կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվությունը» (այսուհետ՝ քաղվածք) համարվում է «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի իմաստով սահմանված «պարտադիր ներկայացման տեղեկատվություն»:*

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝

1. Կրեդիտավորողի և սպառողի միջև ցանկացած հաղորդակցում, որը կապված է կրեդիտավորման պայմանագրի պայմանների կամ կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման հետ կամ վերաբերում է կրեդիտավորման պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ կրեդիտավորողի ներքին ակտերին, կատարվում է գրավոր եղանակով՝ փոստային կապի միջոցով, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի: Ընդ որում, սույն մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:

2. Կրեդիտավորողը պարտավոր է իր կողմից կամ կրեդիտավորման պայմանագրով սահմանված պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան երեսնօրյա պարբերականությամբ, սպառողին ներկայացնել կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը՝ փոստային կապի միջոցով, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի:

3. Սպառողն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունը փոստային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում ստանալու պայմանով: Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում ստանալու սպառողի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, կրեդիտավորողն իրավունք չունի սպառողին պարտադրելու, այդ թվում՝ սպառողի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ սպառողը հրաժարվի պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կապով ստանալու իր իրավունքից:

4. Եթե պարտադիր ներկայացման տեղեկատվությունն սպառողին պետք է հանձնվի բանկի տարածքում, ապա բանկը պարտավոր է առնվազն 3 տարի թղթային կամ էլեկտրոնային կրիչի վրա պահպանել սպառողի կողմից չպահանջված տեղեկատվությունը:

5. Սպառողների իրավունքների պաշտպանության նպատակից ելնելով՝ Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել նույն հոդվածով նախատեսված հաղորդակցման կարգ, պայմաններ, ձևեր և նվազագույն պահանջներ:

«Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 19.06.2019 թվականին ընդունված թիվ ՀՕ-93-Ն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրվել է հետևյալ կերպ՝ «2. Կրեդիտավորողը պարտավոր է իր կողմից կամ կրեդիտավորման պայմանագրով սահմանված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը, **սպառողին ներկայացնել կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն**, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը՝ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի: **Ընդ որում, սույն մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:**»

Վկայակոչված իրավանքների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը, կարևորելով սպառողների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ամրագրել է այն տեղեկատվության շրջանակը, որը Կրեդիտավորողը որոշակի պարբերականությամբ պարտավորվում է փոխանցել իր հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող Սպառողին: Օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ պարտադիր փոխանցման ենթակա է այն տեղեկատվությունը, որն այս կամ այն կերպ շոշափում է Սպառողի իրավունքները և (կամ) պարտականությունները կամ անդրադառնում է դրանց իրականացմանը կամ դրանց չիրականացման հետևանքներին:

Վճարելի դատարանը, հաշվի առնելով սույն բողոքի հիմքում բարձրացված հարցադրումը, հարկ է համարում անդրադառնալ այն իրավական խնդրին, թե արդյոք «քաղվածք» վերտառությամբ փաստաթղթում ներառված տեղեկատվությունը ևս կարող է համարվել որպես պարտադիր ներկայացման տեղեկատվություն: Այդ իսկ նկատառումով Վճարելի դատարանը նախ և առաջ անհրաժեշտ է համարում բացահայտել վերը նշված փաստաթղթի բովանդակությունը:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված «Բանկի ել ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ը հաստատելու մասին թիվ 229-Ն որոշման 7-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ «Քաղվածք»՝ «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված հաշվի քաղվածք կամ «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ:

Վերագրյալ իրավանորմերի լույսի ներքո Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղվածքը փաստաթուղթ է (սան էլեկտրոնային փաստաթուղթ), որը բովանդակում է նաև կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ քաղվածքի՝ սպառողին ուղարկելու անհրաժեշտությունը և պարտադիրությունը կայանում է նրանում, որ այն էական դեր է խաղում սպառողի կողմից իր եկամուտների, պայմանագրից բխող պարտականությունների, դրանք չկատարելու հետևանքով առաջացող պատասխանատվության միջոցների, պարտավորությունների հիմքերի և մարումների նկատմամբ հսկողություն իրականացնելու հարցում: Մասնավորապես, օրենքով սահմանված հաճախականությամբ քաղվածքների տրամադրումը սպառողի համար առավել արդյունավետ և դյուրին է դարձնում կրեդիտավորման պայմանագրի վերաբերյալ տվյալների նկատմամբ իր իսկ հաշվապահությունն իրականացնելու գործընթացը: Բացի այդ, այն նաև Սպառողի կողմից Կրեդիտավորողի գործունեության նկատմամբ վերահսկողության կարևոր երաշխիք է:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ֆինանսական կազմակերպության կողմից քաղվածքների տրամադրումը նախ և առաջ բխում է սպառողի օրինական շահերից, որի չստանալու և/կամ ուշ ստանալու դեպքում սպառողը զրկվում է կրեդիտավորման պայմանագրի նկատմամբ հսկողություն իրականացնելու իր իրավունքից:

Վերագրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ քաղվածքում ներառվող տեղեկատվությունը, չնայած այն հանգամանքին, որ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի նախկին կարգավորմամբ ուղղակիորեն սահմանված չի եղել որպես պարտադիր ներկայացման տեղեկատվություն, այնուհանդերձ, հոդվածի բովանդակությունը և նպատակը, ֆինանսական գործունեության ոլորտում առաջացող իրավահարաբերությունների առաձևահատությունները վկայում են այն մասին, որ նախկին խմբագրությամբ կարգավորման պայմաններում ևս քաղվածքում ներառված տեղեկատվությունը պետք է դիտարկել որպես պարտադիր ներկայացման տեղեկատվություն: Նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հաշվի է առնում նաև այն իրավական իրողությունը, որ քաղվածքում ներառված տեղեկատվության բովանդակությունը և՛ նախկին, և՛ ներկայիս կարգավորումներով նույնն է, իսկ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում կատարելով օրենսդրական փոփոխություն՝ օրենսդիրը ավելի հստակեցրել և որոշակիացրել է քաղվածքի դերը՝ դրանում ներառված տեղեկատվությունն ուղղակիորեն համարելով պարտադիր ներկայացման տեղեկատվություն:

### ***Վերագրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Սույն գործի փաստերի համաձայն՝ 12.02.2018 թվականին Գարիկ Քոչինյանի կողմից ներկայացված՝ Հաշվարկային քարտով վարկային գծի և/կամ գրավի խառը պայմանագիր կնքելու հաճախորդի առաջարկ-դիմումի (այսուհետ՝ Դիմում)

հիման վրա Բանկը Գարիկ Քոչինյանին տրամադրել է 1.483.000 ՀՀ դրամի սահմանաչափով վարկային գիծ:

Դիմումի 13-րդ կետի համաձայն՝ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը Գարիկ Քոչինյանը ցանկանում է ստանալ «էլեկտրոնային կապով (sms, էլեկտրոնային փոստ և այլն)»:

Գարիկ Քոչինյանը 07.08.2019 թվականին բողոք-պահանջ է ներկայացրել Բանկին՝ պահանջելով վճարել «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված 300.000 ՀՀ դրամ՝ օրենքով սահմանված պարբերականությամբ հաշվի քաղվածքներ չտրամադրելու համար:

Գարիկ Քոչինյանը Հաշտարարին ներկայացրած թիվ 07-1192/19 դիմումով խնդրել է որոշում կայացնել Բանկի կողմից «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի խախտման համար իրեն 300.000 ՀՀ դրամ վճարելու վերաբերյալ:

Հաշտարարի 03.12.2019 թվականի թիվ 15-7521/19 որոշմամբ բավարարվել է Գարիկ Քոչինյանի՝ Բանկի դեմ ուղղված թիվ 07-1192/19 պահանջը՝ 300.000 դրամ գումարի չափով:

Հաշտարարը 03.12.2019 թվականի Որոշմամբ բավարարել է Գարիկ Քոչինյանի՝ Բանկի դեմ ուղղված թիվ 07-1192/19 պահանջը՝ 300.000 ՀՀ դրամ գումարի չափով, այն հիմնավորմամբ, որ «և՛ Օրենքով, և՛ Կանոնակարգ 8/05-ով առանձնացվում են երկու տարբեր հասկացություն՝ «պարտադիր ներկայացման տեղեկատվություն» և «քաղվածք»: Նշված հասկացությունների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են Օրենքի առանձին հոդվածներով և Կանոնակարգ 8/05-ի առանձին գլուխներով: (...) Այսինքն միայն «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կարարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2019թ. հունիսի 19-ին ընդունված թիվ ՀՕ-93-Ն օրենքով, (...) օրենսդիրը սահմանել է, որ քաղվածքը ևս պետք է համարվի պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվություն: Հերևաբար մինչև սույն փոփոխության ուժի մեջ մտնելը գործող Օրենքի խմբագրությամբ օրենսդիրը փարանջատել է քաղվածքն ու պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվությունը և քաղվածքը, որպես պարտադիր ներկայացման տեղեկատվություն, չի սահմանել: (...) Նման պայմաններում Հաշտարարը գտնում է, որ քաղվածք և «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր ներկայացման տեղեկատվություն հասկացությունները միմյանց հետ նույնական չեն և առանձնանում են միմյանցից իրենց բովանդակությամբ»:

Դատարան ներկայացրած դիմումով Բանկը խնդրել է չեղյալ ճանաչել Որոշումը:

**Դատարանը** մերժել է Բանկի դիմումը՝ պատճառաբանելով, որ՝ «Այն հանգամանքը, որ Օրենքում կարարված փոփոխությամբ քաղվածքը ևս սահմանվել է որպես պարտադիր ներկայացման տեղեկատվություն, վկայում է այն մասին, որ մինչև այդ փոփոխությունները կարարվելը քաղվածքը չի կարող համարվել պարտադիր ներկայացման տեղեկատվություն, այլապես իմաստ չէր ունենա կարարել օրենսդրական փոփոխություն և դրանով քաղվածքը բնորոշել որպես պարտադիր ներկայացման տեղեկատվություն: (...) քաղվածք և «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտադիր ներկայացման տեղեկատվություն հասկացությունները միմյանց հետ նույնական չեն և առանձնանում են միմյանցից իրենց բովանդակությամբ»:

**Վերաքննիչ դատարանը** մերժել է Բանկի բողոքը՝ արձանագրելով հետևյալը. «Անդրադատնալով բողոքաբերի այն փաստարկին, ըստ որի՝ Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկարկությունը ևս (համաձայն Կանոնակարգ 8/05-ի՝ քաղվածքը) տվյալ հոդվածի իմաստով ներառվում է «պարտադիր ներկայացման տեղեկարկություն» հասկացության մեջ՝ Վերաքննիչ դատարանն այն գնահատում է չհիմնավորված, քանի որ նշված Կանոնակարգի 6-րդ գլխում սահմանված են ֆինանսական կազմակերպության և սպառողի՝ պայմանագրի գործողության ընթացքում հաղորդակցման համար պարտադիր պայմանները»:

Ստորադաս դատարանները գտել են, որ Բանկը խախտել է Գարիկ Քոչինյանի քաղվածք ստանալու իրավունքը՝ այն պատճառաբանությամբ, որ քաղվածքը և պարտադիր ներկայացման տեղեկատվությունը նույնական չեն և տարբերվում են միմյանցից: Մինչդեռ վերևում ներկայացված պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասում «պարտադիր ներկայացման տեղեկատվություն» բառակապակցությունը ոչ թե պետք է ընկալել նույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրա նորմատիվ՝ իրավաբանական մեկնաբանման իմաստով, այլ դրանում պարունակվող բառերի քերականական իմաստով: Նկատի ունենալով, որ քաղվածքը կրեդիտավորողի կողմից սպառողին պարտադիր ներկայացման ենթակա և ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած նվազագույն տարրերը պարունակող տեղեկությունների ամբողջություն է, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով պարտադիր ներկայացման տեղեկատվություն է, քանզի կրեդիտավորման պայմանագրով սահմանված, բայց ոչ պակաս, քան երեսնօրյա պարբերականությամբ, այն սպառողին ներկայացնելը կրեդիտավորողի պարտականությունն է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը սխալ մեկնաբանելու հետևանքով ստորադաս դատարանները քննարկման առարկա չեն դարձրել գործում առկա ապացույցները, մասնավորապես՝ 12.02.2018 թվականի Դիմումը, պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվությունը ստանալու՝ Գարիկ Քոչինյանի նախընտրած կարգն ու Բանկի կողմից «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի պահանջները պահպանված լինելու կամ չլինելու հանգամանքը:

Շեռնաբար «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի խախտման մասին բողոքում բերված փաստարկը հիմնավորված է, ինչը բավարար է Վերաքննիչ դատարանի 15.07.2021 թվականի որոշումը բեկանելու համար, քանի որ ստորադաս դատարանները թույլ են տվել այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Վճռաբեկ բողոքի պարասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճառաբանությամբ:*

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը խախտելու հետևանքով ստորադաս դատարանները Որոշման իրավաչափությունը սույն որոշմամբ բարձրացված հարցերի շրջանակում չեն գնահատել, ինչպես նաև գործում առկա ապացույցներն այդ հարցերի կապակցությամբ պատշաճ չեն հետազոտվել և գնահատվել, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է կիրառել ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի հոդվածին 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վերապահված լիազորությունը՝ բեկանել Վերաքննիչ դատարանի 15.07.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

### **5. Հարուկ կարծիքի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանի որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ համաձայն չենք հետևյալ պատճառաբանությամբ.

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝

1. Կրեդիտավորողի և սպառողի միջև ցանկացած հաղորդակցում, որը կապված է կրեդիտավորման պայմանագրի պայմանների կամ կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման հետ կամ վերաբերում է կրեդիտավորման պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ կրեդիտավորողի ներքին ակտերին, կատարվում է գրավոր եղանակով՝ փոստային կապի միջոցով, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի: Ընդ որում, սույն մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:

2. Կրեդիտավորողը պարտավոր է իր կողմից կամ կրեդիտավորման պայմանագրով սահմանված պարբերականությամբ, բայց ոչ պակաս, քան երեւնօրյա պարբերականությամբ, սպառողին ներկայացնել կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը՝ փոստային կապի միջոցով, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող Օրենքին զուգահեռ գործել է նաև նորմատիվ բնույթ ունեցող Կենտրոնական բանկի խորհրդի թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Բանկի ել ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» կանոնակարգ 8/05-ը: Նշված իրավական ակտում «Քաղվածք» եզրությին տրվել է ինքնուրույն իրավական բովանդակությունը՝ կախված բանկային ծառայության տեսակից և կարգավորվող իրավահարաբերությունից:

«Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածում կատարված փոփոխության հետ միաժամանակ փոփոխություն է կատարվել նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Բանկի ել ավանդատուի, կրեդիտավորողի և սպառողի հաղորդակցման կարգը, պայմանները, ձևերը և նվազագույն պահանջները» 8/05 կանոնակարգում:

Այսինքն մինչև օրենքում փոփոխություն կատարելը քաղվածք եզրույթն ունեցել է 8.05 կանոնակարգով սահմանված ինքնուրույն բովանդակություն և բանկի հաճախորդին /սպառողին/ տրամադրման կարգ, որն էլ հիմք է հանդիսացել հաշտարարի կողմից այդ բովանդակությամբ որոշման կայացման համար և այդ իրավական դիրքորոշումն էլ արտահայտել են ինչպես ընդհանուր իրավասության

դատարանը, այնպես էլ վերաքննիչ քաղաքացիական դատարանը բանկի դիմումի քննության ընթացքում:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման հիմքում դրվել է օրենքի նոր խմբագրությունը, որի ընդունումից հետո բնականաբար փոփոխության է ենթարկվել նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված 8.05 կանոնակարգը:

Մեր կարծիքով ինչպես ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաճախորդի բողոքի, այնպես էլ բանկի դիմումի քննությունը ընդհանուր իրավասության դատարանի և վերաքննիչ դատարանի կողմից իրականացվել է իրավահարաբերության ծագման պահին գործող իրավական կարգավորումների շրջանակում, իսկ հետագայում օրենսդրի կողմից ցանկացած նպատակով օրենքում կատարված փոփոխությունները /քանի որ դրանց հետադարձ ուժ չի տրվել/ չեն կարող կիրառվել նախկինում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ կամ հիմք հանդիսանալ նախկինում գործող իրավական նորմատիվ ակտերի մեկնաբանման համար:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ վճռաբեկ բողոքը ենթակա էր մերժման:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Ս. Աստոնյան,  
Ա. Բարսեղյան,  
Էդ. Սեդրակյան

# 15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/32820/02/19 2023թ.

Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

ԵԴ/32820/02/19  
Ն. Կարապետյան  
Կ. Չիլինգարյան  
Լ. Գրիգորյան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*զեկուցող* Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Ս. ՄԵՂՐՅԱՆ  
Է. ՍԵՂՐԱԿՅԱՆ

2023 թվականի հոկտեմբերի 16-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ Իվան Մարինոյի հայցի ընդդեմ Լուսինե Մինասյանի, երրորդ անձ Էրեբունի վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին, ու ըստ Լուսինե Մինասյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Իվան Մարինոյի՝ ալիմենտ բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2022 թվականի որոշման դեմ Իվան Մարինոյի բերած վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Իվան Մարինոն պահանջել է սահմանել իր երեխայի՝ Միքայել Անտոնիո Իվան Մարինոյի հետ տեսակցության հետևյալ կարգը՝ Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր օր 5 ժամ ֆիզիկապես և Հայաստանի Հանրապետությունից դուրս ու Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր օր 15 րոպե հեռահաղորդակցության սարքերի, հավելվածների, հարթակների և ծրագրերի միջոցով՝ առավոտյան 09:00-ից մինչև երեկոյան 23:00-ն ընկած ժամանակահատվածում՝ կողմերի համաձայնությամբ:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լուսինե Մինասյանը պահանջել է Իվան Մարինոյից բռնագանձել 05.08.2014 թվականին ծնված Միքայել Անտոնիո



Մարինոյի ապրուստի միջոց՝ ալիմենտ կայուն դրամական գումարով՝ յուրաքանչյուր ամիս 350.000 ՀՀ դրամ՝ սկսած հայցը ներկայացնելու օրվանից մինչև չափահաս դառնալը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 20.06.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է սահմանել տեսակցության հետևյալ կարգը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր 5 ժամ տևողությամբ՝ ժամը 16:00-21:00 ընկած ժամանակահատվածում, իսկ ոչ աշխատանքային օրերին 5 ժամ տևողությամբ՝ ժամը 13:00-18:00 ընկած ժամանակահատվածում՝ կողմերի համաձայնությամբ որոշված վայրում, հեռահաղորդակցության սարքերի, հավելվածների, հարթակների, ծրագրերի միջոցով տեսակցության հետևյալ կարգը՝ յուրաքանչյուր օր Հայաստանի Հանրապետության ժամով 20:00-20:15 հայցը՝ մնացած մասով, մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը բավարարվել է մասնակիորեն՝ Իվան Մարինոյից հօգուտ Լուսինե Մինայանի, որպես Միքայել Աստոնիո Մարինոյի ապրուստի միջոց բռնագանձվել է 200.000 ՀՀ դրամ ալիմենտի գումար, ալիմենտի բռնագանձումն սկսվել է 17.07.2020 թվականից մինչև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 108-րդ հոդվածով սահմանված հիմքերի վրա հասնելը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.12.2022 թվականի որոշմամբ Իվան Մարինոյի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 20.06.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճուրքի բողոք է ներկայացրել Իվան Մարինոն (ներկայացուցիչ Նարեկ Սամսոյան):

Վճուրքի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճուրքի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճուրքի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 6-րդ, 60-րդ և 61-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետք նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 11-րդ, 13-րդ 27-րդ, 29-րդ, 62-րդ, 66-րդ, 167-րդ, 169-րդ, 182-րդ, 203-րդ, 365-րդ, 379-րդ և 431-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս հաշվի չի առել, որ Դատարանի վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննությունն իրականացնող դատավորներ Կ. Համբարձումյանին և Ն. Գաբրիելյանին փոխարինելու, այն է՝ վերջիններիս վարույթից հեռացնելու ու դատավորներ Կ. Չիլինգարյանին ու Լ. Գրիգորյանին նշանակելու գործողությունն ուղղակիորեն հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասին: Հետևաբար՝ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված անվերապահ բեկանման հիմքը, այն է՝ գործը ոչ օրինական կազմով քննելու պայմանի առկայությունը:

Վերաքննիչ դատարանը, անտեսելով վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը և հիմնավորումները, չի անդրադարձել դրանց՝ թույլ տալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ինքը երբևէ չի հայտարարել ՀՀ իրավագործությունն ընդունելու մասին, ՀՀ իրավագործությունն ընդունելուն ուղղված համապատասխան միջնորդություն չի ներկայացրել, իսկ ներկայացուցչի ակտիվ գործողությունները բավարար պայման չեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման համար, հետևաբար Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել տվյալ նորմը: Իր ներկայացուցիչը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված գործողություններից որևէ մեկը չկատարելով և տեսնելով, որ Դատարանն ամեն դեպքում քննում է ՀՀ իրավագործությունից դուրս գտնվող վեճ ու իր իրավունքները սահմանափակող դատական ակտեր է կայացնում, իրականացրել է իր դատական պաշտպանության իրավունքը, իսկ դատական պաշտպանության իրավունքն իրականացնելը չի կարող մեկնաբանվել որպես իրավագործության ճանաչմանն ուղղված գործողության կատարում:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պայմանների բացակայության դեպքում կիրառել է տվյալ հոդվածը և առանց պատճառաբանելու իրավաչափ է համարել Դատարանի եզրահանգումները՝ այդպիսով հիմնավոր համարելով վճիռը: Ավելին, Դատարանը չի ունեցել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորումը կիրառելու համար անհրաժեշտ և բավարար պայմանների համակցություն ու վճռում չի պատճառաբանել, թե ո՞ր օրենքի կամ այլ իրավական ակտի հիման վրա, ո՞ր ապացույցն է գտնվում միայն հակընդդեմ հայցով հայցվորի մոտ ու չի գտնվում որևէ այլ անձի մոտ:

Վերաքննիչ դատարանը, ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչելու դեպքում թույլատրելի համարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 7-րդ մասում նշվածից բացի այլ հետևանքի կիրառումը, դուրս է եկել իր լիազորությունների սահմաններից, թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի, 64-րդ հոդվածի 7-րդ մասի և 169-րդ հոդվածի խախտում, ինչի հետևանքով իրեն չի տրամադրվել ողջամիտ հնարավորություն իր գործը ներկայացնելու այնպիսի պայմաններում, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ապացուցման ենթակա փաստերը ներկայացնող և այդ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու բոլոր անբարենպաստ հետևանքները կրող սուբյեկտին որոշելիս Դատարանը չի առաջնորդվել իր կողմից կայացված ու օրինական ուժի մեջ մտած 16.12.2021 թվականի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ, խախտել է այն, իսկ Վերաքննիչ դատարանն առանց որևէ իրավական հիմքի հիմնավոր է համարել Դատարանի գործողությունները՝ կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներից չբխող դատողություններ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածը, որևէ ձևով չի պարզել և բացահայտել երեխայի նախկին կենսաապահովման մակարդակն ու հակընդդեմ հայցով հայցվորի գույքային դրությունը, իր հերթին իրավաչափ է համարել այդ մասով Դատարանի անգործությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.12.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության կամ հակընդդեմ հայցի մատուցող քաղաքացիական գործի վարույթը կարճել:

### 3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից 10.10.2016 թվականին տրված թիվ 459224 ծանոթյան վկայականի համաձայն՝ 05.08.2014 թվականին ծնված Միքայել Անտոնիո Մարինոյի հայրն Իվան Մարինոն է, մայրը՝ Լուսինե Մինասյանը (**հատոր 1-ին, գ.թ. 189**).

2) «Միկա» սպորտային ակումբի նախագահի կողմից 07.07.2020 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Միքայել Անտոնիո Մարինոն 2019 թվականի նոյեմբեր ամսից հաճախում է «Միկա» սպորտային ակումբ (**հատոր 1-ին, գ.թ. 200**): Նույնաբովանդակ տեղեկանք է տրվել նաև 25.01.2022 թվականին (**հատոր 3-րդ, գ.թ. 94**).

3) «Օլիմպական» ՄՊԸ-ի գլխավոր տնօրենի կողմից 09.07.2020 թվականին տրված տեղեկանքի համաձայն՝ Միքայել Անտոնիո Մարինոն հաճախում է «Օլիմպական» ՄՊԸ-ի լողի մարզումներին, ամսվա վճարը կազմում է 12.000 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 199**).

4) ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի քոլեջի ղեկավարի կողմից 10.07.2020 թվականին տրված թիվ 20-07-699 տեղեկանքի համաձայն՝ Միքայել Անտոնիո Իվան Մարինոն 2018-2019 թվականների ուսումնական տարում հաճախել է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր Քոլեջի նախակրթարանի 2-4 տարեկանների խումբ: Ուսումնառության պայմանագրով սահմանված տարեկան ուսումնական վճարը կազմել է 370.000 ՀՀ դրամ՝ ներառյալ տրանսպորտային ծառայության դիմաց վճարվող գումարը: 2019-2020 թվականների ուսումնական տարում հաճախել է նախակրթարանի 5-6 տարեկանների խումբ, տարեկան ուսումնական վճարը կազմել է 350.000 ՀՀ դրամ՝ ներառյալ տրանսպորտային ծառայության դիմաց վճարվող գումարը: Հաճախել է կարատեի խմբակ՝ 6.000 ՀՀ դրամ և նկարչության խմբակ՝ 5.000 ՀՀ դրամ ամսավճարով (**հատոր 1-ին, գ.թ. 202**).

5) ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի Արևելյան դպրոց-պարտեզի ղեկավարի կողմից 14.07.2020 թվականին տրված թիվ 20-07-704 տեղեկանքի համաձայն՝ Միքայել Անտոնիո Իվան Մարինոն 2020-2021 թվականների ուստարում սովորում է 2-րդ դասարանում: Ուսումնառության պայմանագրով սահմանված տարեկան ուսումնական վճարը կազմում է 290.000 ՀՀ դրամ: Հաճախելու է լողի (ամսական վճարը՝ 8.000 ՀՀ դրամ) և կարատեի (ամսական վճարը՝ 10.000 ՀՀ դրամ) պարապմունքների (**հատոր 1-ին, գ.թ. 201**).

6) ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի Արևելյան դպրոց-պարտեզի ղեկավարի կողմից 18.01.2022 թվականին տրված թիվ 22-01-19 տեղեկանքի համաձայն՝ Միքայել Անտոնիո Իվան Մարինոն 2021-2022 թվականների ուստարում սովորում է 3-րդ դասարանում, ուսումնառության պայմանագրով սահմանված ուսումնական վճարը տարեկան կազմում է 130.000 ՀՀ դրամ, երկարացված օրվա ծառայության համար՝ տարեկան 100.000 ՀՀ դրամ (**հատոր 3-րդ, գ.թ. 92**).

7) Լուսինե Մինասյանին հասցեագրված 19.04.2021 թվականի գրությամբ Իվան Մարինոյի ներկայացուցիչը պահանջել է տրամադրել հետևյալ տեղեկատվությունը՝ կրթադաստիարակչական, սպորտային ի՛նչ հաստատություններ է հաճախում երեխան, դրանց անվանումները, գտնվելու վայրի հասցեները, առկայության դեպքում՝ ամսական վճարվող վճարների չափերը, արդյո՞ք երեխան ենթարկվել է բժշկական որևէ միջամտության ՀՀ-ում գտնվելուց ի վեր, բժշկական հաստատությունների անվանումները, գտնվելու վայրի հասցեները, կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն (**հատոր 2-րդ, գ.թ. 32-33, հատոր 4-րդ, գ.թ. 44-45**).

8) Իվան Մարինոյին հասցեագրված 27.05.2021 թվականի պատասխան գրությամբ Լուսինե Մինասյանի ներկայացուցիչը տրամադրել է տեղեկատվություն, այդ թվում՝ երեխայի համար կատարվող վճարումների վերաբերյալ (**հատոր 2-րդ, գ.թ. 35-38**).

9) Դատարանի 22.07.2020 թվականին տրված կատարողական թերթի հիման վրա 23.10.2020 թվականին ավագ հարկադիր կատարողի կողմից որոշում է կայացվել կատարողական վարույթ հարուցելու մասին (**հատոր 3-րդ, գ.թ. 110**), որի շրջանակներում Իվան Մարինոն ներկայացրել է հայտարարագիր՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի, գույքային իրավունքների մասին՝ նշելով, որ գույք չունի (**հատոր 3-րդ, գ.թ. 102-107**).

10) Իվան Մարինոյին հասցեագրված 19.01.2022 թվականի դիմում-պահանջով Լուսինե Մինասյանի ներկայացուցիչը պահանջել է տրամադրել համապատասխան ապացույցներ Իվան Մարինոյի՝ Իտալիայում աշխատանքի, աշխատավարձի չափի, Իտալիայում սեփականության իրավունքով պատկանող, այդ թվում՝ համատեղությամբ առկա անշարժ գույքի (հնարավորության դեպքում ֆինանսական միջոցների) առկայության վերաբերյալ՝ Դատարան ներկայացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված կամ որևէ ձևով այն բացահայտել Դատարանի համար (**հատոր 3-րդ, գ.թ. 111-112**).

11) ՀՀ արտաքին գործերի նախարարին հասցեագրված դիմումով Լուսինե Մինասյանի ներկայացուցիչը խնդրել է աջակցել դիվանագիտական միջոցներով պարզելու հետևյալ տեղեկությունները՝ Իտալիայի քաղաքացի Իվան Մարինոն Իտալիայում ո՞րտեղ է աշխատում, ո՞րքան է կազմում նրա աշխատավարձը, ի՞նչ անշարժ և շարժական գույք է գրանցված նրա անունով (**հատոր 3-րդ, գ.թ. 116**).

12) ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության պետի՝ Լուսինե Մինասյանի ներկայացուցչին հասցեագրված 25.01.2022 թվականի թիվ 1108-1/2929-22 գրությամբ հայտնվել է, որ հայցվող տեղեկությունները ներառում են անձնական տվյալներ և երրորդ անձանց կարող են փոխանցվել տվյալների տուրքեկտի համաձայնությամբ (**հատոր 3-րդ, գ.թ. 114**).

13) Իվան Մարինոյի աշխատավարձի և նրան սեփականության իրավունքով պատկանող գույքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ՀՀ-ում Իտալիայի դեսպանատուն կատարած հարցմանն ի պատասխան Լուսինե Մինասյանի ներկայացուցչին 25.01.2022 թվականին էլեկտրոնային հաղորդագրությամբ հայտնվել է, որ նման առկա տվյալներ չունեն (**հատոր 3-րդ, գ.թ. 117-123**).

14) Լուսինե Մինասյանի ներկայացուցիչը, 26.01.2022 թվականին Դատարան ներկայացրած միջնորդությամբ վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասը, պահանջել է Իվան Մարինոյին պարտավորեցնել ներկայացնելու համապատասխան ապացույցներ Իտալիայում աշխատանքի, աշխատավարձի չափի, նրան սեփականության իրավունքով

պատկանող, այդ թվում՝ համատեղությանը առկա անշարժ գույքի (հնարավորության դեպքում ֆինանսական միջոցների) առկայության վերաբերյալ կամ հաստատված համարել Իվան Մարինոյի՝ Իտալիայի Հանրապետության Տոսկանա երկրամասի Արեցցո քաղաքի Կաստիլիոն Ֆիորետինո «Պաստիֆիչո Ֆարիանելի» իտալական մակարոնեղեն արտադրող ընկերությունում որպես արտահանման մենեջեր աշխատելու և 2000 եվրո կայուն եկամուտ, ինչպես նաև պարզևավճար ստանալու, սեփականության իրավունքով 10.000 եվրո արժողությամբ Ռենո մակնիշի ավտոմեքենա ու 500.000 եվրո շուկայական արժեքով առանձնատուն ունենալու փաստերը (**հատոր 3-րդ, գ.թ. 127-128**).

15) Դատարանը 09.03.2022 թվականին որոշում է կայացրել Լուսինե Մինսայանի ներկայացուցչի միջնորդությունը՝ ապացույց պահանջելու վերաբերյալ, բավարարել և Իվան Մարինոյից պահանջել Իտալիայում աշխատանքի, աշխատավարձի չափի, սեփականության իրավունքով պատկանող, այդ թվում՝ համատեղությանը առկա անշարժ գույքի (հնարավորության դեպքում ֆինանսական միջոցների) առկայության վերաբերյալ ապացույցներ (**հատոր 4-րդ, գ.թ. 19**).

16) Դատարանում գործի քննության ընթացքում՝ 06.06.2022 թվականի դատական նիստին, Իվան Մարինոյի ներկայացուցիչը հայտնել է, որ ստացել է Դատարանի 09.03.2022 թվականի որոշումը, սակայն վստահորդ Իվան Մարինոյի՝ արտասահմանում գտնվելու պատճառով այդ որոշման կատարման մասին ոչինչ չի կարող ասել, անհնար է ապացույց ներկայացնել (**հատոր 4-րդ, գ.թ. 67-71**).

17) Իվան Մարինոյի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մակագրվել է դատական հետևյալ կազմին՝ նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան, դատավորներ՝ Կ. Համբարձումյան, Ն. Գաբրիելյան (հիմք՝ էլեկտրոնային մակագրության թերթիկ, **հատոր 5-րդ, գ.թ. 1-2**).

18) նախագահող դատավոր Հ. Ենոքյանի կողմից 11.10.2022 թվականին «Բացարկ հայտնելու մասին» որոշում է կայացվել (**հատոր 5-րդ, գ.թ. 109-110**): Այնուհետև գործը վերաբաշխվել է, և դատական համակարգ համակարգչային ծրագրի միջոցով մակագրվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի հետևյալ կազմին՝ նախագահող դատավոր՝ Ն. Կարապետյան, դատավորներ՝ Կ. Զիլինգարյան ու Լ. Գրիգորյան (**հատոր 6-րդ, գ.թ. 8**).

19) Դատարանում գործի քննության ընթացքում հակընդդեմ հայցով պատասխանող Իվան Մարինոն որպես հակընդդեմ հայցից պաշտպանվելու միջոց հակընդդեմ հայցի վերաբերյալ առարկություն և գրավոր դիրքորոշումներ (պահանջներ), ինչպես նաև հակընդդեմ հայցի քննության շրջանակներում հակընդդեմ հայցի ապահովման կիրառված միջոցը վերացնելու գրավոր ու բանավոր միջնորդություններ է ներկայացրել Դատարան՝ դրանց հիմքում երբևէ չդնելով Հայաստանի Հանրապետության դատարանի իրավագրության բացակայության փաստը (**հատոր 1-ին, գ.թ. 262-264, հատոր 2-րդ, գ.թ. 4, 5, 32, 33, 39-43, հատոր 3-րդ, գ.թ. 64, 65, հատոր 4-րդ, գ.թ. 44, 45**).

20) Դատարանը 16.12.2021 թվականին ապացուցման պարտականություն բաշխելու մասին որոշում է կայացրել՝ ալիմենտի բռնազանձման պահանջի մասով սահմանելով ապացուցման ենթակա հետևյալ փաստերը՝ Լուսինե Մինսայանը պետք է ապացուցի, որ նա հանդիսանում է երեխայի մայրը, ամսական 350.000 ՀՀ դրամ վճարելու ալիմենտային պարտավորությունը բխում է երեխայի լավագույն շահերից. հակընդդեմ հայցով պատասխանող Իվան Մարինոյի համար ապացուցման պարտականություն չի սահմանվել (**հատոր 3-րդ, գ. թ. 73-74**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է եղել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայությամբ, որը հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ՝*

*1) դատական կազմում ընդգրկված նախագահող դատավորի ինքնաբացարկի դեպքում րվյալ դատավորին հանձնված գործի վերաբաշխման կարգին,*

*2) Հայաստանի Հանրապետության դատարանի իրավագործությունն ընդունելու եղանակների հարցին,*

*3) ինչպես նաև վերահասարակել ծնողների և երեխայի փոխհարաբերությունները դատական կարգով որոշելու գործերով «երեխայի լավագույն շահ»-ի ապահովման առաջնահերթության վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ դրանց համարեքսպում անդրադառնալով նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի իրավակարգավորման նպատակին և բովանդակային ծանրաբեռնվածությանը,*

*4) վերահասարակել ապացուցման բեռի բաշխման կանոնների վերաբերյալ նախկինում հայտնված իրավական դիրքորոշումները:*

**1)** Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով վճռաբեկ բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի խախտման վերաբերյալ հիմքի առկայությունը, նշված մասով վճռաբեկ բողոքի հիմնավորվածությունը պարզելու համար նախ անդրադառնում է այդ մասով վերաբերելի և կիրառելի իրավակարգավորումներին: Այսպես՝

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքները քննում և դրանց վերաբերյալ, ինչպես նաև նույն օրենսգրքի 384-րդ և 385-րդ հոդվածներով նախատեսված հարցերով որոշումները կայացնում է կոլեգիալ՝ երեք դատավորի կազմով:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանում գործի քննությունը, իսկ վերաքննիչ դատարանում բողոքի քննությունն անցկացվում են

դատարանի անփոփոխ կազմով, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ինքնաբացարկ հայտնելու կամ բացարկը բավարարվելու դեպքում բացարկված դատավորը փոխարինվում է, և գործի քննությունն սկսվում է սկզբից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարող է բացարկ հայտնվել, կամ դատավորը սեփական նախաձեռնությամբ պարտավոր է ինքնաբացարկ հայտնել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված հիմքերով:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե դատավորը (...) տվյալ գործով հայտնել է ինքնաբացարկ, (...), ապա տվյալ դատավորին հանձնված գործերը վերաբաշխվում են տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող այլ դատավորների միջև:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորների միջև գործերը բաշխվում, վերաբաշխվում են, և կոլեգիալ դատական կազմերը ձևավորվում են մասնագիտացման սկզբունքի և պատահական ընտրության, ինչպես նաև նույն գլխում ամրագրված կանոնների հիման վրա՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով: (...):

Բարձրագույն դատական խորհրդի՝ «Դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը, գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի տոկոսաչափեր, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորների ցանկը և նրանց հանձնվող գործերի տոկոսաչափերը սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-16-Ն-6 որոշման (ուժի մեջ է մտել 28.05.2021 թվականին) 2-րդ կետի համաձայն՝ սահմանվել է Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու, դատավորների միջև գործերի վերաբաշխման կարգը՝ համաձայն հավելված 2-ի (այսուհետև՝ Հավելված):

Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգի Հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով սահմանված է դատական ակտերի դեմ բերված բողոքներով գործերի կոլեգիալ քննության կարգ, ապա վերաքննիչ դատարանում գործը քննվում է կոլեգիալ դատական կազմերով: Դատական կազմը նախագահում է տվյալ կազմի այն դատավորը, որին նույն որոշմամբ սահմանված կարգով հանձնվել է կոնկրետ գործը:

Բարձրագույն դատական խորհրդի սահմանած սահմանած կարգի Հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ Ծրագրի միջոցով տարվա սկզբում ձևավորված դատական կազմերն ամբողջ տարվա ընթացքում չեն փոփոխվում: Նշված կայուն դատական կազմերին հանձնված գործերով դատական կազմում ընդգրկված դատավորին (դատավորներին) հնարավոր է փոխարինել բացառապես օրենքով նախատեսված համապատասխան հիմքերի առկայության դեպքերում և դրա համար սահմանված համապատասխան կարգով:

Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգի Հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ եթե ինքնաբացարկի որոշում է կայացվել **դատական կազմի նախագահող դատավորի** կամ դատական կազմի բոլոր դատավորների կողմից,

ապա նշված դատական գործի վերաբաշխումը կատարվում է Ծրագրի միջոցով (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, այդ թվում՝ այնպիսի դատավորի կողմից, ով պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան) արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով «օրենք» հասկացությունը ներառում է, մասնավորապես, դատական մարմինների ստեղծումը և դրանց իրավասությունը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև ներպետական օրենսդրության ցանկացած այլ դրույթ, որի խախտման դեպքում մեկ կամ մի քանի դատավորների մասնակցությունը գործի քննությանը կհակասեր օրենքին (*յրե՛ս Pandjigidze and others v. Georgia թիվ 30323/02 զանգայրով Եվրոպական դատարանի 27.10.2009 թվականի վճիռը, կետ 104*):

Եվրոպական դատարանը մեկ այլ գործով վերահաստատել է, որ «օրենքի հիման վրա ստեղծված» եզրույթն ինքնին արտացոլում է օրինականության սկզբունքը, որը բնորոշ է Կոնվենցիայով և կից Արձանագրություններով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Հետևաբար՝ այն պարագայում, երբ ներպետական օրենսդրության կիրառելի դրույթների համաձայն՝ դատարանն իրավասու չէ քննել տվյալ գործը, այն չի համարվում «օրենքի հիման վրա ստեղծված» դատարան Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով (*յրե՛ս Richert v. Poland թիվ 54809/07 զանգայրով Եվրոպական դատարանի 25.10.2011 թվականի վճիռը, կետ 41*):

Ընդ որում, Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» եզրույթը ոչ միայն կազմում է «դատարանի» առհասարակ գոյության իրավական հիմքը, այլև ներառում է յուրաքանչյուր գործով դատարանի կազմը (*յրե՛ս Yegorychev v. Russia թիվ 8026/04 զանգայրով Եվրոպական դատարանի 17.05.2016 թվականի վճիռը, կետ 64; Buscari v. San Marino թիվ 24645/94 զանգայրով Եվրոպական դատարանի 18.02.1999 թվականի վճիռը; Posokhov v. Russia թիվ 63486/00 զանգայրով Եվրոպական դատարանի 04.03.2003 թվականի վճիռը, կետ 39*): Ուստի այն դեպքերում, երբ օրենքով դատարանի կազմին ներկայացվող պահանջներն ապահովված չեն, ապա խաթարվում է օրինականության սկզբունքը՝ անձին գրկելով արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարրը կազմող՝ «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի առջև կանգնելու իրավունքից (*յրե՛ս mutatis mutandis, Jorgic v. Germany թիվ 74613/01 զանգայրով Եվրոպական դատարանի 12.07.2007 թվականի վճիռը, կետ 64*):

Դեռ ավելին, Կոնվենցիայի համակարգին բնորոշ օրինականության սկզբունքի լույսի ներքո Եվրոպական դատարանն արձանագրել է, որ համապատասխան գործը ենթակա է քննության միայն «օրենքի հիման վրա ստեղծված» դատարանի կողմից, քանի որ հակառակ դեպքում այն չի կարող ունենալ գործեր քննելու համար ժողովրդավարական հասարակությունում պահանջվող լեգիտիմություն (*յրե՛ս Lavents v. Latvia թիվ 58442/00 զանգայրով Եվրոպական դատարանի 28.11.2002 թվականի վճիռը, կետ 81*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդրադառնալով դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերին, նշել է, որ վճռի



անվերապահ բեկանման հիմքերի ցանկի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը քննարկվող հոդվածում առանձնացրել է այնպիսի դատավարական սխալներ, որոնք անմիջականորեն կապված են արդարադատության սկզբունքների և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտումների հետ: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ նման խախտումների առկայության պայմաններում դատարանի վճիռը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, և վճիռը բողոքարկող անձը պարտավոր չէ ապացուցել, որ այդ դատավարական խախտումները հանգեցրել են կամ կարող էին հանգեցնել գործի սխալ լուծման: Այդպիսի խախտումների առանձնահատկությունը մյուս դատավարական խախտումների համեմատ կայանում է նրանում, որ դրանք այնքան էական են, որ խաթարում են դատարանի՝ իբրև իրավունքների համապարփակ և արդյունավետ պաշտպանությանը կոչված պետական մարմնի դերն ու նշանակությունը: Նման խախտումների առկայությամբ կայացված դատական ակտը չի կարող լինել համոզիչ ու հեղինակավոր և պետք է գնահատվի որպես թույլ տրված խախտման հետևանք (յրե՛ս «ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Արթուր Մասցակյանի, ԱԶ Լիանա Արրահամյանի թիվ ԵԿԿ/2677/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.05.2020 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը սահմանել է դատավորի վարույթում գտնվող գործերի վերաբաշխման հիմքերը, որոնցից է, ի թիվս այլնի, դատավորի ինքնաբացարկը: Միաժամանակ նախատեսվել է, որ այդ (ինքնաբացարկի) հիմքով գործի վերաբաշխումը ենթակա է կատարման Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգի Հավելվածով: Իր հերթին Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգի Հավելվածով նախատեսվում է, որ Վերաքննիչ դատարանում կոլեգիալ դատական կազմի **նախագահող դատավորի կողմից ինքնաբացարկ** հայտնելու դեպքում դատական կազմը նախագահող դատավորին հանձնված գործը վերաբաշխվում է Ծրագրի միջոցով:

Այսինքն՝ նկարագրված դեպքում ինքնաբացարկ հայտնած դատավորը չի փոխարինվում մեկ այլ դատավորով, այլ նախագահող դատավորին հանձնված գործը վերաբաշխվում է այլ դատական կազմի:

**Վերոգրյալ իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծրագրի միջոցով սույն գործով Իվան Մարինոյի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը մակագրվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատական հետևյալ կազմին՝ նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան,

դատավորներ՝ Կ. Համբարձումյան և Ն. Գաբրիելյան: Այնուհետև, նախագահող դատավոր Հ. Ենոքյանի կողմից 11.10.2022 թվականին «Բացարկ հայտնելու մասին» որոշում է կայացվել: Դատավոր Հ. Ենոքյանի ինքնաբացարկի հիմքով գործը վերաբաշխվել է, և Ծրագրի միջոցով մակագրվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի հետևյալ կազմին՝ նախագահող դատավոր՝ Ն. Կարապետյան, դատավորներ՝ Կ. Զիլինգարյան և Լ. Գրիգորյան:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանում սույն գործի վերաբաշխման հիմք է հանդիսացել դատական կազմի նախագահող դատավոր Հ. Ենոքյանի ինքնաբացարկը, որպիսի պայմաններում գործը Ծրագրի միջոցով վերաբաշխվել և հանձնվել է դատական այլ կազմի:

Հետևաբար՝ Վերաքննիչ դատարանում դատական կազմը փոփոխվել է

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 46-րդ հոդվածով սահմանված հիմքով և Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ և վերոշարադրյալ հիմնավորմամբ հերքվում են բողոք բերած անձի կողմից Վերաքննիչ դատարանի ոչ օրինական կազմի վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկները:

2) ՀՀ իրավագործությունը չընդունելու մասին վճռաբեկ բողոքի փաստարկի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ երաշխավորելով անձի դատական պաշտպանության իրավունքը՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է այն իրավական միջոցները, որոնք հնարավորություն են տալիս գործնականում ապահովելու այդ իրավունքի իրացումը: Դրանցից է նաև դատավարական նորմերով սահմանված այն դատարանի և այն դատավորի կողմից գործի քննության իրավունքը, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով: Այսինքն՝ դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովվում է դատավարական այնպիսի կառուցակարգի միջոցով, ինչպիսին է ընդդատությունը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ գործի ճիշտ ընդդատության որոշումն ունի գործնական կարևոր նշանակություն, քանի որ դատական պաշտպանությունը կարող է արդյունավետ լինել միայն այն պարագայում, եթե գործի քննությունն իրականացվում է իրավասու դատարանի կողմից՝ տվյալ դատավարությանը բնորոշ կանոններով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ և հակառակը, եթե գործը քննում է այն դատարանը, որը տվյալ գործը քննելու իրավասություն չունի, ապա դա հանգեցնում է դատական պաշտպանության սահմանադրությամբ ամրագրված իրավունքի խախտմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի բովանդակությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետության դատարաններն իրավունք ունեն քննելու օտարերկրյա անձանց մասնակցությամբ քաղաքացիական գործեր նաև այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, և գործին մասնակցող օտարերկրյա անձն ընդունում է Հայաստանի Հանրապետության դատարանի իրավագործությունը կա՛մ այդ մասին հայտարարելով կա՛մ իրավագործության իրականացմանն ուղղված համապատասխան միջնորդություններ ներկայացնելով:

*Վերոգրյալ իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ*

Տվյալ դեպքում օտարերկրյա անձ Իվան Մարինոն երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու մասին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի

առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, ինչն իրենից ենթադրում է, որ վերջինս, դրսևորելով նման վարքագիծ, ընդունել է Հայաստանի Հանրապետության դատարանի իրավագործությունը: Բացի այդ, տեսակցության կարգ սահմանելու մասին հայց ներկայացնելով Հայաստանի Հանրապետության դատարան և այդ կերպ ընդունելով Հայաստանի Հանրապետության դատարանի իրավագործությունը՝ հայցվոր Իվան Մարինոն ընդունել է նաև դրա դեմ օրենքով նախատեսված բոլոր դատավարական միջոցներով պաշտպանվելու պատասխանողի հնարավորությունը: Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նրանով, որ Իվան Մարինոյի որպես հայցվորի համար պետք է կանխատեսելի լիներ հայցի դեմ պատասխանող Լուսինե Մինասյանի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պաշտպանության միջոցներից օգտվելու հնարավորության առկայությունը:

Մասնավորապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից հայցի դեմ պատասխանողի պաշտպանության երկու միջոց է նախատեսում՝ հայցադիմումի պատասխան (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 139-րդ հոդված) և հակընդդեմ հայց ներկայացնելը (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդված): Ընդ որում, իրեն վերապահված դատական պաշտպանության միջոցները և եղանակները գործին մասնակցող անձը տնօրինում է սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս):

Տվյալ դեպքում սկզբնական հայցով պատասխանող Լուսինե Մինասյանը, իրացնելով հակընդդեմ հայց հարուցելու իրեն տրված դատավարական իրավունքը, որպես հայցի դեմ պաշտպանվելու օրենքով նախատեսված դատավարական միջոց, ալիմենտ բռնագանձելու պահանջի մասին հակընդդեմ հայց է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Իր հերթին Դատարանում գործի քննության ընթացքում հակընդդեմ հայցով պատասխանող Իվան Մարինոն որպես հակընդդեմ հայցից պաշտպանվելու միջոց հակընդդեմ հայցի վերաբերյալ առարկություն և գրավոր դիրքորոշումներ (պահանջներ), ինչպես նաև հակընդդեմ հայցի քննության շրջանակներում հակընդդեմ հայցի ապահովման կիրառված միջոցը վերացնելու գրավոր ու բանավոր միջնորդություններ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության դատարան՝ դրանց հիմքում երբևէ չդնելով Հայաստանի Հանրապետության դատարանի իրավագործության բացակայության փաստը: Բացի այդ, Իվան Մարինոյի ներկայացուցիչը մասնակցել է հակընդդեմ հայցի քննության նպատակով հրավիրված դատական նիստերին՝ նաև բանավոր դիրքորոշումներ հայտնելով ալիմենտ բռնագանձելու պահանջի մասին՝ դրանց հիմքում նույնպես չդնելով Հայաստանի Հանրապետության դատարանի իրավագործության բացակայության փաստը:

Վերոգրյալից հետևում է, որ Դատարանում գործի քննության ընթացքում Իվան Մարինոն ՀՀ իրավագործությունն ընդունելու վերաբերյալ թեև ուղղակիորեն չի հայտարարել, սակայն իր վարքագծով փաստացի և ըստ էության ընդունել է այն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը թեև հիմնավոր է գնահատում բողոք ներկայացրած անձի փաստարկն այն մասին, որ դատական պաշտպանության իրավունքն իրականացնելը չի կարող մեկնաբանվել որպես իրավագործության ճանաչմանն ուղղված գործողության կատարում, այդուհանդերձ, սույն գործի փաստերի (*սկզբնական հայցի հարուցումը, հակընդդեմ հայցի դեմ առարկություններ ներկայացնելը, հակընդդեմ հայցի շրջանակներում միջնորդություններ հարուցելը, ինչպես նաև Դատարանում գործի քննության ընթացքում Դատարանի գործը*

ընենելու իրավագործությունը չվիճարկելը, իրավագործության բացակայության վերաբերյալ որևէ դիրքորոշում չհայտնելը) համակցությունը բավարար հիմք է հետևություն անելու, որ դատական պաշտպանության իրավունքի ի սկզբանե և հետագա իրականացումը, ինչպես նաև իրավագործության վերաբերյալ առաջին ատյանի դատարանում առարկության բացակայությունն ուղղակիորեն վկայում են սկզբնական հայցով հայցվորի Հայաստանի Հանրապետության դատարանի իրավագործության անվերապահ ընդունման մասին:

Ի վան Մարինոյի վերոշարադրյալ վարքագիծը Վճռաբեկ դատարանը գնահատում է Հայաստանի Հանրապետության դատարանի իրավագործության ընդունում, որպիսի իրավաչափ եզրահանգում է կատարել նաև Վերաքննիչ դատարանը:

Վերոշարադրյալի ուժով հերքվում են Հայաստանի Հանրապետության դատարանի իրավագործության բացակայության և գործն այդ հիմքով կարճման ենթակա լինելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի փաստարկները:

3) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը, բացառությամբ նույն օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված փաստերի, ենթակա են ապացուցման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները, ինչպես նաև դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից և գնահատումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Համակարգային վերլուծության ենթարկելով վերը նշված իրավական նորմերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը: Դատական կարգով պահանջներ կամ առարկություններ ներկայացնող անձը կրում է ոչ միայն դրանց հիմքում որոշակի փաստեր ղնելու (վկայակոչելու), այլև այդ փաստերը հաստատող ապացույցներ ներկայացնելու պարտականություն, ինչը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը նրա համար առաջացնում է անբարենպաստ հետևանքներ:

Այսինքն՝ ապացուցելու պարտականությունը դիտարկվում է որպես պահանջների և առարկությունների հիմքում ընկած ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի առկայությունը կամ բացակայությունը հաստատող

ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտություն, ինչն ապահովված է որոշակի անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքով:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ քաղաքացիական դատավարությունում բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի մնալու բացասական (անբարենպաստ) հետևանքները, ըստ էության, հանգում են նրան, որ բոլոր ապացույցների հետազոտումից հետո որևէ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում դատարանը կարող է համապատասխան փաստի գոյությունն իրավաչափորեն համարել հերքված (չապացուցված) *(տե՛ս «Արսուգրիգ» ՍՊԸ-ն ընդդեմ Ա/Չ Տիրան Զայինյանի թիվ ԵԱԲԴ/3111/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.11.2021 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքների իրագործման պայմաններում ներկայացված ապացույցները բավարար չեն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության մասին օբյեկտիվ և հիմնավորված եզրահանգում կատարելու համար կամ այդպիսիք, բացառությամբ կողմերի ցուցմունքների, ընդհանրապես բացակայում են, այսինքն՝ երբ բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, գործով վերջնական որոշում կայացնելու ուղենիշը դրա բացասական հետևանքներն այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմի վրա դնելու կանոնն է, ինչը թույլ է տալիս գործով ձեռք բերված ապացույցների ոչ բավարար լինելու, դրանց հակասականության կամ բացակայության պայմաններում որոշելու այն սուբյեկտներին, ովքեր պետք է կրեն նման իրավիճակի անբարենպաստ հետևանքները *(տե՛ս Մոնիկա Մարտիրոսյանն ընդդեմ Արմավիրի մարզի Մրգաշար համայնքի թիվ ԱԲԴ/3808/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2021 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի իրավակարգավորման շրջանակներում (հոդվածներ 48-րդ և 49-րդ) ՀՀ վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը, նշել է, որ օրենսդիրն այդպես է սահմանել, **քանի որ որևէ փաստի վրա հիմնվող կողմն իրազեկ է և դատարանին կարող է ցույց տալ փաստի մասին տեղեկություններ պարունակող աղբյուրները:** Ենթադրվում է, որ շահագրգռված կողմը կձեռնարկի բոլոր միջոցներն իր մատնանշած փաստն ապացուցելու համար *(տե՛ս «Դեազա» ՍՊԸ-ն ընդդեմ Կուրաթի մարզի Արովյան համայնքի թիվ ԿԴՆ/1125/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.07.2021 թվականի որոշումը):*

Ընդ որում, ապացուցման բեռի բաշխման ընդհանուր կանոնը կիրառվում է բոլոր այն դեպքերում, երբ դատավարական կամ նյութական իրավունքի սորմերով տվյալ փաստի հաստատման վերաբերյալ **հասրուկ կանոն սահմանված չէ** *(տե՛ս ՀՀ գլխավոր դատարհագրությունն ընդդեմ Արամ Ավետիսյանի թիվ ԵԱԲԴ/1096/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված է ապացուցման պարտականությունը բաշխելու **հասրուկ կանոն:** Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե գործին մասնակցող անձի վկայակոչած փաստի վերաբերյալ ապացույցն օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով գտնվում է միայն գործին մասնակցող այլ անձի մոտ, ապա վկայակոչված փաստը համարվում է հաստատված, քանի դեռ գործին մասնակցող համապատասխան անձը հակառակը չի ապացուցել:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ նշված դատավարական կանոնը դատարանին իրավունք է վերապահում որոշակի փաստական հանգամանքների հաստատման դեպքում ենթադրելու որոշակի փաստի գոյությունը կամ բացակայությունը՝ որոնվող փաստի ապացուցման պարտականություն կրող անձին ազատելով այն ապացուցելու պարտականությունից և հակառակն ապացուցելու պարտականությունը դնելով մյուս կողմի վրա: Ընդ որում, ենթադրվող փաստը կարող է համարվել հաստատված ու դրվել վճռի հիմքում այն դեպքում, երբ հակառակն ապացուցելու պարտականություն կրող կողմը չի կատարում դատարանի կողմից իր վրա դրված ապացուցման պարտականությունը:

Արդյունքում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասում ձևակերպված կանոնն ընդհանուր նշանակություն ունի բոլոր այն իրավիճակների համար, երբ գործին մասնակցող անձի վկայակոչած փաստը հաստատող ապացույցն օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով գտնվում է գործին մասնակցող այլ անձի տիրապետման ներքո: Եթե ապացուցման պարտականության կատարումը նշված պատճառներով դատավարության մասնակցից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, ապա այն չի կարող դրվել տվյալ կողմի վրա. ապացուցման ենթակա փաստը պետք է ենթադրվի, իսկ հակառակն ապացուցելու բեռը՝ դրվի հակառակ կողմի վրա:

**3.1)** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը կարող է գործին մասնակցող այլ անձից ապացույց պահանջելու միջնորդությամբ դիմել գործը քննող առաջին ատյանի դատարան:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու դեպքում առաջին ատյանի դատարանը կայացնում է ապացույցը պահանջելու մասին որոշում, (...):

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ապացույց պահանջելու մասին որոշումը կատարելու համար նոր ժամկետ չսահմանելու կամ ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչելու դեպքում առաջին ատյանի դատարանը ապացույց պահանջելու մասին որոշման հիման վրա կազմված կատարողական թերթն անհապաղ ուղարկում է հարկադիր կատարման, իսկ այդ անձի նկատմամբ նշանակում է տուգանք:

Ինչպես արդեն նշվել է, ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելը գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքն է (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդված): Գործին մասնակցող անձանց միջնորդությամբ ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ դատարանը կարող է իրականացնել, մասնավորապես, ապացույցներ պահանջելու կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածը հանդես է գալիս այն կառուցակարգի դերում, որը կոչված է օժանդակելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված կարգով ապացուցման պարտականության կատարմանը, և հնարավորություն է ընձեռում

իր վկայակոչած փաստը հիմնավորող ապացույցին օբյեկտիվորեն չտիրապետող, այն ձեռքբերելու անհնարինությունը հիմնավորող կողմին օժանդակելու համապատասխան ապացույցը ձեռքբերելու հարցում:

Այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածը ոչ թե գործում է 62-րդ հոդվածից զատ կամ հանդիսանում է ապացուցման պարտականությունը բաշխելու հատուկ կանոն, այլ կրում է օժանդակ բնույթ՝ ըստ էության նպատակ հետապնդելով ապահովելու 62-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմի առկայությունը:

Իր հերթին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված են դատավարական հետևանքներ (կատարողական թերթը կատարման ուղարկելը և տուգանքը), որոնք, որպես կանոն, Դատարանի կողմից պետք է կիրառվեն, եթե ապացույց պահանջելու մասին որոշումը կատարելու համար նոր ժամկետ չսահմանվի կամ ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչվեն: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վկայակոչված հետևանքներն ընդամենը ապացույց պահանջելու մասին որոշումը կատարելուն ուղղված ներգործության միջոցներ են, քանի որ միջնորդության հարուցումն ու դրա բավարարումը չեն կարող ինքնանպատակ լինել. դրա վերջնական նպատակն անհրաժեշտ ապացույցի ձեռքբերումն է, իսկ ապացույց պահանջելու մասին որոշման կատարման պարտականությունը կրող կողմը պետք է կրի պատասխանատվություն իր դատավարական պարտականությունը հարգելի չճանաչված պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Հաշվի առնելով կոնկրետ գործի դատավարական ընթացքը և փաստերը, ելնելով առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ գործը քննելու և օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը լուծելու (Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ) պահանջից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը կարող է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված դատավարական հետևանքները:

**3.2) Ինչպես արդեն նշվեց, դատարանը, որպես ընդհանուր կանոն, իր նախաձեռնությամբ ապացույցներ ձեռք բերելու իրավասություն չունի: Այլ կերպ ասած, գործը քննող դատավորը կարող է իրականացնել բացառապես մրցակցության օժանդակող, այն երաշխավորող գործառույթներ՝ զերծ մնալով կողմերի նախաձեռնությունը սեփականով փոխարինելուց:**

Բացառություն են այն վարույթները, որոնց առանձնահատկությունների հաշվառմամբ, օրենսդիրը սահմանել է, որ դրանց շրջանակներում դատարանը, չկաշկանդվելով գործին մասնակցող անձանց միջնորդությունների բացակայությամբ, օրենքով կանխորոշված շրջանակներում պարտավոր է ցուցաբերել անհրաժեշտ նախաձեռնություն և կատարել ապացույցների ձեռքբերմանն ուղղված որոշակի դատավարական գործողություններ, մասնավորապես գործին մասնակցող ու այդպիսին չհանդիսացող այլ անձանցից պահանջելու ապացույցներ, ստանալու այլ տեղեկություններ և նյութեր, նշանակելու փորձաքննություն, հարցաքննելու վկաների, փորձագետների ու այլն:

Նման նախաձեռնություն ցուցաբերելու անհրաժեշտություն է նախատեսված, օրինակ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասում: Այսպես.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով**՝ դատարանը գործի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով պարտավոր է, չսահմանափակվելով գործին մասնակցող անձանց միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկել ողջամիտ միջոցներ գործի քննությունը լրիվ, բազմակողմանի իրականացնելու համար, մասնավորապես պահանջելու տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու գործին մասնակցող անձանց ներկայանալ դատական նիստի, նշանակելու փորձաքննություն, հարցաքննելու վկաների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու փաստաթղթեր:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածում օգտագործված՝ «երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով» բառակապակցության բովանդակության պարզաբանմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հոդվածում «ելնելով» բառի կիրառումն ինքնանպատակ չէ: Տվյալ դեպքում երեխայի շահը գնահատելիս օրենսդիրն օգտագործում է «ելնելով» եզրույթը՝ ուղղակիորեն ընդգծելով հոդվածում նկարագրված դատավարական գործողություններն ի պաշտոնե կատարելու դատարանի պարտականության հիմքը, այն է՝ յուրաքանչյուր գործողություն կատարելիս *puignansuultu* երեխայի շահով առաջնորդվելու անհրաժեշտությունը:

Վկայակոչված իրավակարգավորման որևէ այլ, այդ թվում՝ երեխային պահելու պարտականություն ունեցող ծնողների շահերի ապահովմանն օժանդակող և մրցակցային դատավարությունը կասկածի դնող մեկնաբանությունը չի բխում հոդվածի նպատակային նշանակությունից:

Վճռաբեկ դատարանի նման հետևության հիմք է նաև հետևյալը.

- ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների առաջնային պաշտպանությունը.

- «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի ուժով պետությունը պարտավորվում է օրենսդրական, վարչական միջոցներ ձեռնարկել երեխայի շահերի ապահովման համար, սահմանել երեխայի խնամարկյալների, ծնողների իրավունքների և պարտականությունների ծավալը, հետևել պետական և պատկան մարմինների գործունեությանը տվյալ իրավահարաբերություններում միտված երեխայի բարեկեցությանն անհրաժեշտ պաշտպանությանը և հոգատարությանը.

- «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ



անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները.

- Սահմանադրությունն առանձին՝ 37-րդ հոդվածով ամրագրել է երեխայի իրավունքների պաշտպանությունը: Մասնավորապես նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

### ***Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարմանը***

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Լուսինե Մինայանը պահանջել է Իվան Մարինոյից բռնագանձել 05.08.2014 թվականին ծնված Միքայել Անտոնիո Մարինոյի ապրուստի միջոց՝ ալիմենտ կայուն դրամական գումարով՝ յուրաքանչյուր ամիս 350.000 ՀՀ դրամ՝ սկսած հայց ներկայացնելու օրվանից մինչև չափահաս դառնալը:

Հակընդդեմ հայցով պատասխանող Իվան Մարինոյի ներկայացուցիչը գործի ամբողջ քննության ընթացքում առարկել է ալիմենտ բռնագանձելու պահանջի դեմ՝ հայտնելով, որ գործի շրջանակներում չի ներկայացվել ապացույց այն մասին, որ Իվան Մարինոն աշխատում է, ունի 2.000 եվրո կայուն եկամուտ, ստանում է պարգևավճար, ինչպես նաև հակընդդեմ հայցվորը պահանջել է բռնագանձել ամսական 350.000 ՀՀ դրամ, սակայն չի ներկայացրել նշված գումարի հաշվարկի մեխանիզմը:

Դատարանը, արձանագրելով, որ «*հայցվոր կողմից չեն փրամադրվել Իրալիայում աշխատանքի, աշխատավարձի չափի, ինչպես նաև սեփականության իրավունքով պարկանոց գույքի առկայության վերաբերյալ ապացույցներ, քանի որ համապարասխան որոշումը սրացել է հայցվորի ներկայացուցիչը, սակայն դատարանն նկատում է, որ քանի որ իր վարահորդը Հայաստանի Հանրապետությունում չէ, հեղուսարար, այդ տեղեկարվությունը հնարավոր չէ փրամադրել*», «*միաժամանակ, հայցվորի ներկայացուցիչը սրացել է նաև հակընդդեմ հայցվորի ներկայացուցչի դիմում-պահանջը, վերը նշված ապացույցները փրամադրելու համար, սակայն որևէ ապացույց չի փրամադրվել*», հաստատված է համարել հայցվորի կողմից վկայակոչված հիշյալ փաստերը:

Միաժամանակ, Դատարանը նշելով, որ «*չնայած հասարարված է համարել հայցվորի գույքային դրության վերաբերյալ հակընդդեմ հայցվորի ներկայացրած փաստերը, այնուամենայնիվ, նկարի ունենալով, որ առկա չէ կոնկրետ ապացույց, որ Հայցվորն աշխատավարձը սրանում է կայուն կերպով և յուրաքանչյուր ամիս, ինչպես նաև առկա չէ ապացույց պարգևավճարի չափի վերաբերյալ և այն ևս յուրաքանչյուր ամիս սրանալու վերաբերյալ*», եզրահանգել է, որ «*ալիմենտի գումարը պետք է սահմանել կայուն գումարով*», «*այլ ապացույցների բացակայությամբ պայմանավորված հասարարված համարելով, որ երեխայի ծախսերն ամբողջությամբ հոգում է մայրը*», արձանագրելով, որ «*երեխայից առանձին ապրող ծնողը ևս պետք է մասնակցի երեխայի համար կարարվող ծախսերին*», ու վճռել է հայցը բավարարել մասնակիորեն՝ Իվան Մարինոյից որպես երեխայի ապրուստի միջոց բռնագանձել 200.000 ՀՀ դրամ ալիմենտի գումար, հայցը մնացած մասով մերժվել է:

Դատարանի վճիռը սույն գործով վճռաբեկ բողոքին նույնաբովանդակ հիմքերով և հիմնավորումներով Իվան Մարինոն բողոքարկել է վերաքննության կարգով:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ և 64-րդ հոդվածների վերաբերյալ վերաքննիչ բողոքի հիմքերին ու հիմնավորումներին, արձանագրել է, որ «26.01.2022 թվականի դատական նիստի ընթացքում Դատարանը կողմերի հետ քննարկել է սպացույց պահանջելու մասին միջնորդությունը և հաջորդ 09.03.2022 թվականի դատական նիստում այդ միջնորդությունը բավարարել է՝ հրապարակելով միջնորդության բովանդակությունը: Թե՛ 26.01.2022 թվականի, թե՛ 09.03.2022 թվականի դատական նիստերին մասնակցել է Իվան Մարինոյի ներկայացուցիչը, իսկ 06.06.2022 թվականին Իվան Մարինոյի ներկայացուցիչը հայտնել է, որ որոշումը սրացել են, սակայն ոչինչ այդ մասով չի կարող ներկայացնել, քանի որ վարահորդը գրավում է ՀՀ սահմաններից դուրս», «Լուսինե Մինասյանի ներկայացուցիչը սպացույց պահանջելու մասին որոշման մեջ նշված սպացույցները ձեռք բերելու նպատակով դիմել է ինչպես ՀՀ արտաքին գործերի նախարարություն, այնպես էլ ՀՀ-ում Բրազիլիայի դեսպանատան հյուպատոսական բաժին, սակայն պատասխան չի սրացել՝ մի դեպքում դրանք անձնական տվյալներ համարվելու, մյուս դեպքում՝ այդ տեղեկատվության բացակայության հիմքով: Միաժամանակ, գույքային իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվությանը լավագույնս տիրապետում է հենց հասցեատերը, անձը չի կարող տեղեկություն չունենալ կամ հնարավորություն չունենալ իր եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն ստանալ կամ ներկայացնել: Ենթան պայմաններում Վերաքննիչ դատարանի գնահատմամբ Իվան Մարինոն չի կարարել դատարանի՝ իրեն ուղղված պահանջը՝ առանց որևէ հարգելի պարճատ նշելու՝ չներկայացնելով գույքային իրավունքների և պարտականությունների վերաբերյալ սպացույցներ, ինչը չի կարող գնահատվել որպես դատավարական բարեխիղճ վարքագիծ, մինչդեռ իրավունքներից ոչ բարեխիղճորեն օգտված կողմը չի կարող հայցել այդ իրավունքի պաշտպանություն», «Դատարանը գրավոր սպացույց է պահանջել հակընդդեմ հայցով պարտասխանող Իվան Մարինոյից, իսկ վերջինս առանց որևէ հարգելի պարճատի չի տրամադրել այն, ինչը հակընդդեմ հայցով հայցվոր Լուսինե Մինասյանի համար դժվարացրել և անհնարին է դարձրել այդ սպացույցի ձեռքբերումը», եզրահանգել է, որ «այդ սպացույցները չներկայացնելու բացասական հետևանքների ռիսկը պետք է կրեր հակընդդեմ հայցով պարտասխանողը»:

Տվյալ դեպքում Դատարանը 16.12.2021 թվականին կայացրել է սպացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում՝ ալիմենտի բռնագանձման պահանջի մասով սահմանելով սպացուցման ենթակա հետևյալ փաստերը՝ Լուսինե Մինասյանի կողմից պետք է սպացուցվի, որ նա հանդիսանում է երեխայի մայրը, ամսական 350.000 ՀՀ դրամ վճարելու ալիմենտային պարտավորությունը բխում է երեխայի լավագույն շահերից: Հակընդդեմ հայցով պատասխանող Իվան Մարինոյի համար սպացուցման պարտականություն չի սահմանվել:

Դատարանի 16.12.2021 թվականի որոշման լույսի ներքո Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Դատարանի սահմանած վերոնշյալ բեռն ունի ընդհանրական ձևակերպում, և հաշվի առնելով սկզբնական հայցով հայցվոր Լուսինե Մինասյանի ներկայացուցչի կողմից կատարված դատավարական գործողությունները, կոնկրետ փաստի սպացուցման համար սպացույց ձեռք բերելուն ուղղված գործողությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ թեև Լուսինե Մինասյանի վրա ուղղակիորեն սպացուցման պարտականություն չի դրվել սպացուցելու, որ Իվան Մարինոն ստանում է ամսական 2.000 եվրո աշխատավարձ, սակայն այն պարզ է եղել Լուսինե Մինասյանի համար, որպիսի եզրահանգումը Վճռաբեկ դատարանը պայմանավորում է պահանջվող ալիմենտի

չափն Իվան Մարինոյի ենթադրյալ ամսական աշխատավարձի հետ համադրելու արդյունքում:

Նման պայմաններում բողոքաբերի փաստարկն այն մասին, որ Իվան Մարինոյի կողմից 2.000 եվրո աշխատավարձ ստանալու փաստը չի ներառվել ապացուցման ենթակա փաստերի մեջ, Վճռաբեկ դատարանը վերը նշված պատճառաբանությամբ հիմնավորված չի համարում:

Տվյալ դեպքում Լուսինե Մինասյանը, ի կատարումն Դատարանի որոշմամբ իր վրա դրված ապացուցման պարտականության՝

- Դատարան է ներկայացրել երեխայի համար կատարված և շարունակաբար կատարվող ծախսերը հիմնավորող ապացույցներ,

- Իվան Մարինոյին հասցեագրված դիմումով պահանջել է տրամադրել համապատասխան ապացույցներ աշխատավարձի չափի, սեփականության իրավունքով պատկանող գույքի վերաբերյալ,

- նույնաբովանդակ գրություններ է հասցեագրել նաև ՀՀ արտաքին գործերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի դեսպանատան ներկայացուցչին:

Նկատի ունենալով հայցվող տեղեկատվության և դրանք հիմնավորող ապացույցներն ինքնուրույն ձեռքբերելու անհնարինությունը՝ Լուսինե Մինասյանի ներկայացուցիչն ապացույց պահանջելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացրել Դատարան, որը բավարարվել է, և Իվան Մարինոյից պահանջվել են աշխատանքի, աշխատավարձի չափի, սեփականության իրավունքով պատկանող գույքի վերաբերյալ ապացույցներ:

Արդյունքում միջնորդությունը ներկայացնելիս Լուսինե Մինասյանը հիմնավորել է, որ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու հնարավորություն չունի, քանի որ հարցումների հասցեատերերը, հիմք ընդունելով այդ թվում «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, մերժել են դրանց տրամադրումը, ձեռնարկել է հնարավոր բոլոր իրական և ողջամիտ միջոցներն Իվան Մարինոյի գույքային դրությունը հիմնավորող ապացույցներ հավաքագրելու ուղղությամբ, ապացույց պահանջելու միջնորդության հիմնավորումներում Լուսինե Մինասյանը նշել է ինչպես պահանջվող ապացույցը, այն ներկայացնելու անհնարինությունը, այնպես էլ այն փաստը, որի հաստատման համար անհրաժեշտ է պահանջվող ապացույցը, այսինքն՝ Լուսինե Մինասյանի ներկայացրած միջնորդությունն ուղղված է եղել Իվան Մարինոյի կողմից 350.000 ՀՀ դրամի չափով ալիմենտ վճարելու համար անհրաժեշտ եկամուտ ստանալու և ալիմենտի հայցվող գումարի նշված չափը երեխայի լավագույն շահից բխելու վկայակոչված փաստերը հիմնավորող ապացույցներ ներկայացնելուն:

Գործի քննության ընթացքում Իվան Մարինոյի ներկայացուցիչը, ընդունելով ապացույց պահանջելու որոշումն ստանալու փաստը, ոչ թե հերքել է իր վստահորդի որևէ գույք ունենալու կամ աշխատելու և աշխատավարձ ստանալու փաստերը, այլ վկայակոչել է հայցվող ապացույցները ներկայացնելու անհնարինությունը՝ պայմանավորված իր վստահորդի Հայաստանի Հանրապետությունից բացակայելու հանգամանքով:

Լուսինե Մինասյանի ներկայացուցիչը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով պահանջել է հաստատված համարել Իվան Մարինոյի գույքային դրության վերաբերյալ հակընդդեմ հայցով հայցվոր Լուսինե Մինասյանի վկայակոչած փաստերը (փաստ 14):

Փաստերի նման դասավորվածության պայմաններում Դատարանը, իրավաչափորեն ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 4-րդ մասով, հակընդդեմ հայցվոր Լուսինե Մինասյանի վկայակոչած փաստերը համարել է հաստատված, ինչն արձանագրվել է նաև Վերաքննիչ դատարանի կողմից: Ավելին՝ Դատարանը, հաստատված համարելով հայցվորի գույքային դրության վերաբերյալ հակընդդեմ հայցվորի ներկայացրած փաստերը, այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ առկա չէ կոնկրետ ապացույց, որ հայցվորն աշխատավարձը ստանում է կայուն կերպով և յուրաքանչյուր ամիս, ինչպես նաև առկա չէ ապացույց պարզևավճարի չափի ու յուրաքանչյուր ամիս այն ստանալու վերաբերյալ, նվազեցրել է ալիմենտի չափը՝ այն սահմաններով կայուն գումարով՝ հայցը բավարարելով մասնակիորեն:

Արդյունքում գործին մասնակցող անձը, սույն պարագայում՝ հակընդդեմ հայցով պատասխանող Իվան Մարինոն, տիրապետության տակ ունենալով իր գույքային դրության վերաբերյալ ապացույցները, դրանք չի բացահայտել և չի ներկայացրել Դատարան, դրսևորել է անգործություն:

Վճարել բողոքում բողոքաբերը փորձ է կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածը ծառայեցնել ալիմենտ վճարելու պարտականություն ունեցող ծնողի շահերի պաշտպանությանն այն դեպքում, երբ, ինչպես սույն որոշմամբ նշվել է, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածը կոչված է ծառայելու երեխայի լավագույն շահի բացահայտմանը և պաշտպանությանը, ինչը, Վճարել դատարանի գնահատմամբ, տվյալ դեպքում ապահովվել է: Ներկայացված վճարել բողոքի համապատասխան հիմքը չի բխում քննարկվող հոդվածի նպատակից, հետևաբար չի կարող դատական ակտի բեկանման հանգեցնող դատական սխալ գնահատվել:

Անդրադառնալով նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 7-րդ մասի կիրառման վերաբերյալ բողոքաբերի փաստարկին, Վճարել դատարանը, այն մասամբ հիմնավորված գնահատելով հանդերձ, հարկ է համարում նշել, որ Իվան Մարինոյի ներկայացուցիչը, ներկայանալով 06.06.2022 թվականի դատական նիստին, հայտնել է, որ իր վստահորդ Իվան Մարինոյի գույքային դրության վերաբերյալ ապացույց ներկայացնելն անհնարին է վերջինիս՝ արտասահմանում գտնվելու պատճառով: Նման պատճառաբանության առկայությունն ինքնին բավարար հիմք է տվել Դատարանին չկիրառելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված հետևանքները և կիրառելու նույն օրենսգրքի 62-րդ հոդվածով նախատեսված հետևանքը:

Այս առումով հատկանշական է նաև այն, որ բողոքաբերը ոչ գործի քննության ընթացքում, ոչ վերաքննիչ բողոքում կրկին չի բացահայտում իր գույքային դրությունը՝ չի մատնանշել որևէ ապացույց, որի բացակայությունը կամ առկայությունը կարող էր այլ դատական ակտի կայացման օբյեկտիվ հիմք հանդիսանալ:

Շիմք ընդունելով վերը նշվածը՝ Վճարել դատարանն արձանագրում է, որ Դատարանը, երեխայի համար ամսական 200.000 ՀՀ դրամ ալիմենտ բռնագանձելու պահանջի մասին վճիռ կայացնելով, իսկ Վերաքննիչ դատարանն այն անփոփոխ թողնելով, ապահովել են երեխայի նկատմամբ ծնողի ունեցած պարտականությունների կատարումը և ծնողների իրավունքների իրականացումը՝ երաշխավորելով երեխայի շահերը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճարել դատարանը գտնում է, որ սույն վճարել բողոքի քննության արդյունքներով

չի հիմնավորվում Վերաքննիչ դատարանի կողմից գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալի առկայությունը: Դատարանը, հակընդդեմ հայցը մասնակիորեն բավարարելով, իսկ Վերաքննիչ դատարանը՝ այդ մասով Դատարանի վճիռն անփոփոխ թողնելով, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր, որպիսի պայմաններում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճարել բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճարել դատարանի լիազորությունը:

**5. Վճարել դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջներով հայց ներկայացնելու համար պետական տուրքի չափը որոշվում է հայցագւնի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցագւնը որոշվում է՝ ալիմենտ բռնագանձելու հայցերով՝ մեկ տարվա ընթացքում կատարվելիք վճարումների հաշվարկի չափով, իսկ եթե ալիմենտի բռնագանձման պահանջը ներկայացվել է մեկ տարուց պակաս ժամանակահատվածի համար, ապա այդ ժամանակահատվածում կատարվելիք վճարումների հաշվարկի չափով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճարել դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Սույն գործի նկատմամբ կիրառելի խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի «ա» ենթակետի բովանդակությունից բխում է, որ դատարանի դատական ակտերի դեմ վճարել բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ դրամական պահանջի գործերով՝ հայցագւնի երեք տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի բազային տուրքի հազարապատիկից:

Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի 05.12.2022 թվականի որոշումը բողոքարկվում է մասնակիորեն՝ ըստ Լուսինե Մինասյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Իվան Մարինոյի՝ ալիմենտ բռնագանձելու պահանջի մասով, և հաշվի առնելով, որ սույն գործով բողոքարկված մասով վճարել բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարումը ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական պալատի 21.06.2023 թվականի որոշմամբ հետաձգվել է, Վճարել դատարանը գտնում է, որ վճարել բողոքը մերժվելու պայմաններում Իվան Մարինոյից ՀՀ պետական բյուջե ենթակա է բռնագանձման 72.000 ՀՀ դրամ (200.000 ՀՀ

դրամ \* 12 \* 3%)՝ որպես բողոքարկված մասով վճարել բողոքի համար սահմանված և ՀՀ վճարել դատարանի քաղաքացիական պալատի 21.06.2023 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումար:

Միաժամանակ, սկստի ունենալով, որ պետական տուրքից բացի փաստաթղթերով հիմնավորված այլ դատական ծախսեր առկա չեն, Վճարել դատարանը դատական ծախսերի բաշխման հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարել բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.12.2022 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
2. Իվան Մարինոյից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 72.000 ՀՀ դրամ:
3. Այլ դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:
4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

# 16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/33825/02/20	2023թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/33825/02/20	
Նախագահող դատավոր	Ն. Կարապետյան	
Դատավորներ՝	Լ. Գրիգորյան Տ. Նազարյան	

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող</i>	Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
<i>գեկուցող</i>	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
	Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
	Ս. ՄԵՂՐՅԱՆ
	Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 15-ին գրավոր ընթացակարգով քննելով Սարգիս Զատիկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ Սարգիս Զատիկյանի հայցի ընդդեմ Գոհար Բալասանյանի, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխաների բնակության վայրը որոշելու ու երեխաների հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Սարգիս Զատիկյանը պահանջել է Էմիլի և Էվելինա Զատիկյանների բնակության վայր սահմանել իր բնակության վայրը՝ ք. Երևան, Նոր Արեշ, 32-րդ փողոց, թիվ 85 տուն հասցեն, ինչպես նաև տեսակցության կարգ սահմանել Էմիլի ու Էվելինա Զատիկյանների հետ:

Սարգիս Զատիկյանը 29.01.2021 թվականին հայցի առարկան փոփոխելու և հայցապահանջը լրացնելու միջնորդություն է ներկայացրել, որով պահանջել է Էմիլի և Էվելինա Զատիկյանների բնակության վայր սահմանել իր բնակության վայրը՝ ք. Երևան, Նոր Արեշ, 32-րդ փողոց, թիվ 85 տուն հասցեն՝ պատասխանողին պարտավորեցնելով կայացվելիք վճիռն օրինական ուժի մտնելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում երեխաներին հանձնել իրեն, սահմանել իր կողմից

երեխաներին տեսակցելու հետևյալ կարգը՝ պարտավորեցնել պատասխանողին շաքաթական առնվազն երկու անգամ երեխաներին ներկայացնել ք. Երևան, Նոր Արեշ, 32-րդ փողոց, 85 տուն հասցե՝ օրական 2-4 ժամ տևողությամբ կամ ապահովել երեխաների ներկայությունը և նրանց հետ ազատ հաղորդակցումը Երևան քաղաքի որևէ հասցեում:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 17.12.2021 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթն ըստ Սարգիս Զատիկյանի հայցի ընդդեմ Գոհար Բալասանյանի, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ինսամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխաների բնակության վայրը որոշելու ու երեխաների հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջների մասին, կարճվել է՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով, Սարգիս Զատիկյանից հօգուտ Գոհար Բալասանյանի բռնագանձվել է 60.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար. ՀՀ պետական բյուջեից Սարգիս Զատիկյանին վերադարձվել է 8.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.07.2022 թվականի որոշմամբ Սարգիս Զատիկյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.12.2021 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Սարգիս Զատիկյանը (ներկայացուցիչ Հրանտ Անանյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի կոնվենցիայի (այսուհետը՝ Կոնվենցիա) 32-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հերկյալ փաստարկներով.*

Դատարանը վկայակոչել է Կոնվենցիայի 32-րդ հոդվածը, որը միայն նախատեսում է, որ հայցվորը «կարող է» նաև դիմել նշված երկրի դատարան, եթե երեխաները մշտապես բնակվում են նշված երկրում, այսինքն՝ Կոնվենցիան սահմանում է իր իրավունքը, այլ ոչ թե պարտականությունը, իսկ իրավական օգնության վերաբերյալ Կոնվենցիայի դրույթները չեն կարող ստեմացնել և վերացնել ներպետական օրենսդրության ընդդատության կանոնները, դրանք միայն այլընտրանք են սահմանում իր համար, ոչ թե ներպետական օրենսդրության պահանջները ոտնահարելով պարտադիրություն՝ անձին զրկելով իր քաղաքացիության երկրում դատական արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Ստորադաս դատարանները որևէ պատշաճ տեղեկություն չունեն երեխաների կյանքի որակի և պայմանների, կրթության ու այլնի մասին, սակայն ըստ էության հանգել են հետևության՝ իբրև Հայաստանից դուրս գտնվելը բխում է նրանց շահերից, իսկ հոր կողմից դատական պաշտպանություն հայցելը չի բխում երեխաների լավագույն շահերից:



Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասը, չի անդրադարձել պատասխանողի ներկայացուցչի կողմից ապացույցներ ներկայացնելու համար սահմանված ժամկետից հետո՝ առանց համապատասխան միջնորդության նոր ապացույց կցելու և այդ ապացույցները Դատարանի կողմից վիճարկվող եզրափակիչ որոշման հիմքում դնելու հանգամանքին, մինչդեռ նշված փաստաթղթերը որպես ապացույց հետագոտելու ու վերջնական դատական ակտի հիմքում դնելու համար դրանք Դատարանում պետք է քննարկվեին միայն պատշաճ միջնորդության առկայության պայմաններում. այդ փաստաթղթերը ներկայացվել և գործի նյութերին կցվել են մեխանիկորեն, իր ներկայացուցչին չի տրամադրվել այդ փաստաթղթերի բնօրինակը՝ օտարալեզու տարբերակը, ինչն ինքնին միջնորդությունն առանց քննարկման թողնելու ինքնուրույն հիմք է: Այլ կերպ ասած՝ քննարկվող ապացույցները ներկայացվել են օրենքով սահմանված կարգի էական խախտմամբ, իսկ այդպիսի խախտումն իրավաչափ չի կարող համարվել միայն այն հիմնավորմամբ, որ կողմը չի առարկել դրա դեմ: Հակառակ մոտեցման պարագայում, եթե դատավարության ընթացքում կողմերից մեկն ակնհայտ ապօրինի գործողություն է կատարում, ապա այն կարող է համարվել իրավաչափ՝ զուտ մյուս կողմի չարձագանքելու պատճառով, ինչն անթույլատրելի և արդարադատության բուն էությունը խաթարող մոտեցում է:

Ինչպես Դատարանում գործի քննության ընթացքում, այնպես էլ վերաքննիչ բողոքում ինքը նշել է, որ չի վիճարկում երեխաների՝ հայցադիմում ներկայացնելուց 4 օր առաջ ՌԴ մեկնելը և այդտեղ գտնվելն ու ոչ թե նրանց՝ ՌԴ-ում մշտապես բնակվելը, հատկապես այն դեպքում, երբ ինքը վիճարկում է, ի թիվս այլի, հենց «մշտական բնակության» եզրույթը և հասկացությունը, ուստի անթույլատրելի է ստորադաս դատարանների այն գնահատականը, թե ինքը չի վիճարկել երեխաների՝ ՌԴ-ում մշտապես բնակվելու հանգամանքը:

Ստորադաս դատարաններն անտեսել են, որ Հայաստանի քաղաքացին կարող է ունենալ միայն մեկ մշտական բնակության վայր, իսկ եթե փոխում է իր մշտական բնակության վայրը, ապա նախ յոթնօրյա ժամկետում պարտավոր է տեղեկացնել ՀՀ հյուպատոսական մարմնին, որն էլ իր հերթին դիմումն ստանալուց հետո պետք է կարգավորի նշված գործընթացը: Դատարանին չի ներկայացվել պատշաճ ապացույց այն մասին, որ պատասխանողը փոխել է իր մշտական բնակության վայրը: Ավելին՝ ՀՀ պետական ռեգիստրի պաշտոնական կայքից հետևում է, որ պատասխանողի տվյալները ռեգիստրում որևէ փոփոխության չեն ենթարկվել, և վերջինիս մշտական բնակության կացարանն է Հայաստանը:

Ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ առկա չէ որևէ ապացույց, որ երեխաները 2020 թվականի հոկտեմբերից մշտապես, առանց ընդհատման բնակվել են ՌԴ-ում: Փաստ է միայն, որ 2020 թվականի հոկտեմբերի 8-ին պատասխանողը երեխաներին գաղտնի տարել է ՌԴ, իսկ թե դրանից հետո՝ մինչև 2021 թվականի դեկտեմբեր ամիսը, երեխաներն անընդմեջ գտնվել են ՌԴ-ում, թե տեղափոխվել են այլ վայր, որևէ ապացույց առկա չէ:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.07.2022 թվականի որոշումը և որոշում կայացնել գործն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր կազմով նոր քննության ուղարկելու վերաբերյալ:

### 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 27.04.2014 թվականին ծնված Էմիլի Սարգիս Զատիկյանի հայրը Սարգիս Զատիկյանն է, մայրը՝ Գոհար Բալասանյանը (**հատոր 1-ին, գ.թ. 10**).

2) 29.05.2019 թվականին ծնված Էվելինա Սարգիս Զատիկյանի հայրը Սարգիս Զատիկյանն է, մայրը՝ Գոհար Բալասանյանը (**հատոր 1-ին, գ.թ. 11**).

3) Սարգիս Զատիկյանը և Գոհար Բալասանյանը ՀՀ քաղաքացիներ են (**հատոր 1-ին, գ.թ. 12, 31**).

4) Էրեբունու թիվ 13 տեղամասի լիազոր ներկայացուցչի կողմից տրված, տրման ամսաթիվ չբովանդակող տեղեկանքի պատճենի համաձայն՝ Սարգիս Զատիկյանը բնակվում է ք. Երևան, Նոր Արեշ 32-րդ փողոցի թիվ 85 տանը, ունի երկու դուստր Էմիլի Զատիկյանը և Էվելինա Զատիկյանը, երեխաները ծնվել ու ապրել են նշված հասցեում, Մոսկվա են մեկնել 07.10.2020 թվականից (**հատոր 1-ին, գ.թ. 175**).

5) Էմիլի Զատիկյանը և Էվելինա Զատիկյանը հաշվառված են եղել «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնում, հետազոտություններն ու պատվաստումներն ստացել են ամբողջական ծավալով: 2020 թվականի հոկտեմբերից դադարել է հաճախումը, 2021 թվականի հունվարից երեխաները հանվել են հաշվառումից (**հատոր 1-ին, գ.թ. 174**).

6) Էմիլի Զատիկյանը 05.09.2018 թվականից 20.08.2020 թվականը հաճախել է Երևանի թիվ 69 մանկապարտեզ ՀՈԱԿ (**հատոր 1-ին, գ.թ. 178**).

7) Էմիլի Զատիկյանը 2020-2021 ուսումնական տարում ընդունվել է Երևանի Պարոյր Սևակի անվան հ. 123 հիմնական դպրոցի առաջին դասարան, 2020 թվականի հոկտեմբերի 9-ին ազատվել է դպրոցից Ռուսաստանի Դաշնություն մեկնելու կապակցությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 177**).

8) Բալաշիխա քաղաքային օկրուգի թիվ 12 միջնակարգ հանրակրթական դպրոցի տնօրենի կողմից 22.04.2021 թվականին տրված թիվ 116 տեղեկանքի՝ ռուսերենից հայերեն թարգմանության համաձայն՝ 2021 թվականի հունվարի 11-ից սկսած Էմիլի Զատիկյանը հաճախում է Բալաշիխա քաղաքային օկրուգի թիվ 12 միջնակարգ հանրակրթական դպրոցի մունիցիպալ բյուջետային հանրակրթական հաստատության բազայի «Ապագա առաջին կուրսեցու դպրոց» վճարովի կուրսը (**հատոր 1-ին, գ.թ. 159**).

9) Գոհար Բալասանյանին ՌԴ բնակության թույլտվության վերաբերյալ փաստաթուղթը տրամադրվել է 12.08.2021 թվականին: Հաշվառման ժամկետ է սահմանվել մինչև 19.01.2022 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 49, 53**).

10) թվով երկու փաստաթղթերի՝ ռուսերենից հայերեն թարգմանությունների համաձայն՝ Էմիլի Սարգիս Զատիկյանի (ծնված՝ 2014 թվականի ապրիլի 27-ին) և Էվելինա Սարգիս Զատիկյանի (ծնված՝ 2019 թվականի մայիսի 29-ին) գտնվելու վայրի հասցեն է՝ Մոսկվայի մարզ, Նովոյե Պավլինո միկրոշրջան, Բալաշիխա քաղաք, Տրոիցկայա փողոց, շենք 2-րդ, թիվ 3 բնակարան: Թարգմանությունները տրման ամսաթիվ չեն բովանդակում (**հատոր 1-ին, գ.թ. 51-52**).

11) Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, և վճռաբեկ բողոքում չի վիճարկվում փաստն այն մասին, որ Էմիլի Զատիկյանն ու Էվելինա Զատիկյանը գտնվել են Ռուսաստանի Դաշնությունում 2020 թվականի հոկտեմբերից:

**4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է՝

- 1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող անչափահասների ու նրանց ծնողների փոխհարաբերությունները (բնակության վայրը որոշում, տեսակցության կարգի սահմանում) դատական կարգով որոշելու վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար, ինչպես նաև
- 2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում, որի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում առաջնահերթ ընդգծել ծնողների և ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխայի փոխհարաբերությունները դատական կարգով որոշելու գործերով ՀՀ դատարանների իրավասությունը բացատրելու անթույլարբերելիությունը՝ ելնելով «երեխայի լավագույն շահ»-ի սպասովման անհրաժեշտությունից, երաշխավորելով նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությունն ու հոգաբարությունը, հաշվի առնելով ծնողների և երեխաների փոխհարաբերությունների վերաբերյալ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերն ու դրանց կիրառման կանոնները, միաժամանակ սորորադաս դատարանների համար արձանագրելով ՀՀ քաղաքացի երեխայի բնակության վայրը սահմանելու գործերով կիրառելի օրենսդրությունն ու իրավասու դատարանին որոշելու ուղենիշները:*

**Ա)** Սահմանադրության 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) թիվ 4 արձանագրության՝ «Տեղաշարժի ազատությունը» վերտառությամբ 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ որևէ պետության տարածքում օրինական կարգով գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունք:

Պետություն-քաղաքացի իրավահարաբերություններում կարևոր է նրա բնակության վայրը որոշելը: Բնակության վայրի ազատ ընտրության իրավունքն ուղղակիորեն կապված է անձի և պետության միջև իրավական հարաբերությունների

առկայության, այս կամ այն պետության սահմաններում գտնվելու ժամանակահատվածի հետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տասնչորս տարեկան չդարձած անչափահասների (...) բնակության վայր է համարվում նրանց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, (...) բնակության վայրը: Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս անձը պարտավոր է յոթնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել այն համայնքի տեղական ղեկավարին, որտեղ գտնվում է նրա նոր կացարանը: Բնակիչը կարող է հաշվառվել միայն մեկ կացարանում:

«Բնակչության պետական ղեկավարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...): Մշտական բնակության վայր (կացարան) է համարվում այն տարածքը, որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում և հայտարարում է որպես իր կացարան: Մշտական բնակության վայրը (կացարանը) փոխելիս անձը պարտավոր է յոթնօրյա ժամկետում գրավոր տեղեկացնել այն համայնքի տեղական ղեկավարին, որտեղ գտնվում է նրա նոր կացարանը: Բնակիչը կարող է հաշվառվել միայն մեկ կացարանում:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը «բնակության վայր» հասկացությունը սահմանում է երեխայի բնակելի տարածության իրավունքի համատեքստում՝ սահմանելով, որ բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից (հոդված 16):

Վկայակոչված հոդվածներից հետևում է, որ ըստ էության բնակությանը վայրն այն տարածքն է՝

- որտեղ անձն ունի բնակվելու իրավունք,
- որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես բնակվում է,
- որն անձի կողմից բացահայտված է որպես իր կացարան:

Միաժամանակ երեխաների բնակության վայրը վերջինների օրինական ներկայացուցիչների (տվյալ դեպքում՝ ծնողների) բնակության վայրն է և փաստացի նույնանում է այդ հասցեի հետ:

Անձի բնակության վայրն այն բնակելի տարածքն է, որն ունի հասցե, ըստ որի պետք է իրականացնել նաև անձի հաշվառումը: Ընդ որում, անձը կարող է ունենալ միայն մեկ հաշվառման վայր:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ բնակության վայրը չի նույնանում անձի գտնվելու վայրի հետ:

**Բ)** ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին: Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու (...) իրավունք (...):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան ունի իր ծնողների (...) հետ շփվելու իրավունք: Ծնողների ամուսնության դադարեցումը, այն անվավեր ճանաչվելը կամ նրանց առանձին ապրելը չեն սահմանափակում երեխայի իրավունքները: Ծնողներից առանձին (այդ թվում՝ տարբեր

պետություններում) ապրելու դեպքում երեխան իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք ունի, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ծնողների միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով տասը տարին լրացած երեխայի կարծիքը: (...):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխայից առանձին ապրող ծնողը իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու: Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն գրավոր համաձայնություն կնքելու երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացման մասին: Եթե ծնողները չեն կարող համաձայնության գալ, ապա նրանց կամ նրանցից մեկի պահանջով խնամակալության և հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ վեճը լուծում է դատարանը:

Երեխայի դաստիարակությանը մասնակցելու և նրա հետ շփվելու ծնողի իրավունքը բխում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված՝ ընտանեկան կյանքի նկատմամբ յուրաքանչյուրի հարգանքի իրավունքի էությունից, որի վերաբերյալ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված պրակտիկայի համաձայն՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսանկյունից երեխայի և ծնողների՝ միմյանց հետ շփվելու իրավունքն ընտանեկան կյանքի հիմնարար տարրերից մեկն է: Ավելին, ըստ Եվրոպական դատարանի, բնականոն ընտանեկան հարաբերությունները չեն դադարում ծնողներից մեկի առանձնանալու կամ նրանց ամուսնալուծվելու դեպքում, անգամ եթե դրա արդյունքում երեխան դադարում է բնակվել ծնողներից մեկի հետ (*լրեսն Հովհաննես Չոբանյանն ընդդեմ Լիանա Տիգրանյանի, երրորդ անձ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի թիվ ԵՄԴ/3747/02/17 քաղաքացիական գործով ՀՀ Վճարելի դատարանի 19.11.2021 թվականի որոշումը*):

Ծնողների՝ ամուսնալուծված լինելու կամ առանձին ապրելու դեպքում երեխաների մշտական բնակության վայրն ըստ էության որոշվում է դատական կարգով: Այսինքն՝ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում վեճը, թե ում մոտ պետք է բնակվեն անչափահաս երեխաները, լուծում է դատարանը:

**Գ)** Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի

առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Երաշխավորելով անձի դատական պաշտպանության իրավունքը՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է այն իրավական միջոցները, որոնք հնարավորություն են տալիս գործնականում ապահովելու այդ իրավունքի իրացումը: Դրանցից է նաև դատավարական նորմերով սահմանված այն դատարանի և այն դատավորի կողմից գործի քննության իրավունքը, որոնց ընդդատությանը այն վերապահված է օրենքով: Այսինքն՝ դատական պաշտպանության իրավունքի իրացումն ապահովվում է դատավարական այնպիսի կառուցակարգի միջոցով, ինչպիսին է ընդդատությունը:

Գործի ճիշտ ընդդատությունը որոշելն ունի գործնական կարևոր նշանակություն, քանի որ դատական պաշտպանությունը կարող է արդյունավետ լինել միայն այն պարագայում, եթե գործի քննությունն իրականացվում է իրավասու դատարանի կողմից՝ տվյալ դատավարությանը բնորոշ կանոններով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ և հակառակը, եթե գործը քննում է այն դատարանը, որը տվյալ գործը քննելու իրավասություն չունի, ապա դա հանգեցնում է դատական պաշտպանության սահմանադրությամբ ամրագրված իրավունքի խախտմանը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև իրավական այլ ակտերով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ընտանեկան օրենսդրությամբ, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Ընդ որում, միջազգային իրավունքի առաջնությունը վերաբերում է պայմանագրային նորմերի կիրառելիությանը, այսինքն՝ կոնկրետ դեպքի նկատմամբ ներպետական օրենքները չեն կիրառվում, և հարցը լուծվում է միջազգային պայմանագրի նորմերով:

Ըստ այդմ, Սահմանադրության վկայակոչված հոդվածի ուժով սույն գործով իրավասու դատարանին և կիրառելի օրենսդրությունը բացահայտելու նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Միսսկի 22.01.1993 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ Միսսկի կոնվենցիա, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 21.12.1994 թվականին) 32-րդ հոդվածը սույն գործով կիրառելի չլինելու վերաբերյալ վճռաբեկ բողոքի հիմքին:

Այսպես, Միսսկի կոնվենցիայի՝ «Ծնողների և երեխաների իրավահարաբերությունները» վերտառությամբ 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողների

և երեխաների իրավահարաբերությունները որոշվում են այն պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում մշտապես բնակվում են երեխաները:

Սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ծնողների և երեխաների միջև իրավահարաբերությունների վերաբերյալ գործերով իրավասու է այն պայմանավորվող կողմի դատարանը, որի օրենսդրությունը սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան ենթակա է կիրառման:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո:

Միաժամանակ ՄիՆսկի կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից 28.03.1997 թվականին ՄիՆսկի կոնվենցիայի արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 09.06.2000 թվականին) 9-րդ կետով ի թիվ այլևի կատարվել է հետևյալ փոփոխությունը՝ 32-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը շարադրվել են հետևյալ խմբագրությամբ. «1. *Ծնողների և երեխաների իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ երեխաներին պահելու առնչությամբ ծնողների պարտականությունները, որոշվում են այն Պայմանավորվող կողմից օրենսդրությամբ, որի տարածքում նրանք մշտական համարեղ բնակության վայր ունեն, իսկ ծնողների և երեխաների մշտական համարեղ բնակության վայրի բացակայության դեպքում, նրանց փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի քաղաքացին է հանդիսանում երեխան:* (...): 3. *Ծնողների և երեխաների միջև իրավահարաբերությունների գործերով իրավասու է այն պայմանավորվող կողմի դատարանը, որի օրենսդրությունը սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան, ենթակա է կիրառման*»:

Հետևում է, որ Արձանագրությամբ փոփոխվել է ՄիՆսկի Կոնվենցիայի 32-րդ հոդվածում ամրագրված ծնողների և երեխաների իրավահարաբերություններում (բացառությամբ այլմենտային պարտավորությունների) ծագած վեճերը լուծելիս կիրառելի օրենսդրությունն ու իրավասու դատարանը որոշելու կանոնը:

Այսինքն՝ ՄիՆսկի Կոնվենցիայի մասնակիցները փոփոխել են հիշատակված գործերով իրավասու դատարանի և կիրառելի օրենսդրության որոշման ելակետային պայմանը՝ սահմանելով, որ երեխայի բնակության վայրը որոշելու վեճը ենթակա է լուծման այն պետության օրենսդրության շրջանակներում և դատարանի կողմից,

- որի տարածքում ծնողներն ու երեխաներն ունեն մշտական համատեղ բնակության վայր,
- որի քաղաքացի է երեխան:

Ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը:

Գ) Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

«Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ երեխան, ում ծնողները նրա ծնվելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, անկախ ծնվելու վայրից, ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն (...):

Քաղաքացիության իրավունքն արտացոլում է անձի և պետության կայուն իրավական կապը: Քաղաքացիության ինստիտուտը պետության և քաղաքացու համար առաջ է բերում փոխադարձ իրավունքներ, պարտականություններ ու պատասխանատվություն, կանխորոշում պետության և անհատի փոխհարաբերությունների բովանդակությունը: Այլ կերպ՝ սահմանադրաիրավական մակարդակում անձի իրավունքների և պարտականությունների ծավալն ուղղակիորեն կախված է անձի ու պետության միջև առկա կապի բնույթից: Քաղաքացիությունը ոչ միայն հիմնարար իրավունք է, այլև անհրաժեշտ նախապայման՝ անհատի մի շարք այլ իրավունքների իրացման համար: Ձեռք բերելով պետության քաղաքացիություն՝ անձը պարտավորվում է դրսևորել այնպիսի վարքագիծ, որը համահունչ կլինի տվյալ պետության Սահմանադրությանը և օրենքներին, **իսկ պետությունը սահմանադրաիրավական պարտավորություն է կրում իր հովանավորության ու պաշտպանության ներքո պահել իր քաղաքացիներին:**

Քաղաքացիությունը երեխայի ինքնության կարևոր կողմն է և կարևորագույն իրավունք է՝ պայմանավորելով երեխայի կողմից այլ իրավունքներից ազատորեն օգտվելու հնարավորությունը: Միաժամանակ, երեխաներն իրենց իրավունքների և ազատությունների խախտումների առնչությամբ ամենախոցելի խումբն են, ու խիստ սահմանափակ հնարավորություն ունեն ինքնուրույն պաշտպանելու դրանք: «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայում արտացոլված երեխայի լավագույն շահի սկզբունքի ուժով ցանկացած մարմին ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտում պարտավոր է գնահատել և հաշվի առնել երեխայի լավագույն շահը՝ որպես առաջնային նկատառում երեխայի քաղաքացիությանը վերաբերող բոլոր գործողություններում կամ որոշումներում, ինչը բազմիցս շեշտվել է նաև կոնվենցիայով նախատեսված՝ Երեխայի իրավունքների կոմիտեի քաղաքացիությանն առնչվող զեկույցներում: Այս սկզբունքի իրացման նպատակով անհրաժեշտ է բավարար երաշխիքներ սահմանել նորմատիվ իրավական ակտերում, հատկապես երեխաների ապաքաղաքացիության վտանգը չեզոքացնելու նպատակով (*լրև՝ Սահմանադրական դատարանի 22.11.2022 թվականի թիվ ՄՂՈ-1669 որոշումը*):

Քաղաքացիության՝ որպես կենսական անհրաժեշտ տարրի կարևորությունն ընդգծված է նաև միջազգային փաստաթղթերում:

Մասնավորապես «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան քաղաքացիության պահպանումը դիտարկում է որպես երեխայի ինքնության տարր և պարտավորեցնում մասնակից պետություններին իր ինքնության տարրից (այդ թվում՝ քաղաքացիությունից) զրկված երեխային տրամադրել համապատասխան աջակցություն ու պաշտպանություն՝ շուտափույթ կերպով նրա ինքնությունը վերականգնելու նպատակով («Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մաս):

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և **ծննդյան պահից ձեռք է բերում** անվան և **քաղաքացիության իրավունք**, ինչպես նաև որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք:

Քաղաքացիության՝ որպես իրավական կարգավիճակի բնութագրիչներ են պետության և քաղաքացու կապի իրավական բնույթը, փոխադարձ իրավունքների, պարտականությունների ու պատասխանատվության առաջացումը:

Պետության և անձի միջև կապի իրավական բնույթն, ի թիվս այլնի, արտահայտվում է քաղաքացու նկատմամբ իր իրավական համակարգի, իրավասության տարածմամբ ու նրա նկատմամբ որոշակի պարտականություններ ստանձնելով:



Ասվածի ուղղակի արտացոլումն է Սահմանադրության 47-րդ հոդվածի 8-րդ մասը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքի հիման վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո են:

Իր հերթին պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների առաջնային պաշտպանությունը (ՀՀ ընտանեկան օրենսգրքը, հոդված 1):

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով պետությունը պարտավորվում է օրենսդրական, վարչական միջոցներ ձեռնարկել երեխայի շահերի ապահովման համար, սահմանել երեխայի խնամարկյալների, ծնողների իրավունքների և պարտականությունների ծավալը, հետևել պետական ու պատկան մարմինների գործունեությանը տվյալ իրավահարաբերություններում միտված երեխայի բարեկեցությանն անհրաժեշտ պաշտպանությանը և հոգատարությանը:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում **երեխայի լավագույն շահերին:**

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

Սահմանադրության 37-րդ հոդվածով ամրագրվել է երեխայի իրավունքների պաշտպանությունը՝ որպես սահմանադրական նորմ: Մասնավորապես՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ երեխայի՝ իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերությունները և անմիջական շփումները պահպանելու իրավունքը կարող է սահմանափակվել այն դեպքում, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին:

Ընդ որում, վերոնշյալ երկու իրավադրույթները «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված՝ «երեխայի լավագույն շահ» իրավունքի ամրագրումն է սահմանադրության մակարդակով, հետևաբար ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածում «երեխայի շահ» հասկացությունը պետք է մեկնաբանվի որպես երեխայի լավագույն շահ:

**Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը կարևորում է քաղաքացիության ինստիտուտի էությունը և նշանակությունը, մասնավորապես՝ այն առումով, որ քաղաքացիությունն անձի (տվյալ դեպքում՝ երեխայի) ու պետության միջև կայուն իրավական կապ է՝ իրեն բնորոշ փոխադարձ իրավունքներով և պարտականություններով, ուստի, գործի փաստական հանգամանքներից ելնելով, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այն անհրաժեշտ է հաշվի առնել՝ ծնողների ու երեխաների կայուն ու մշտական շփումն ապահովելու, ծնողների խնամքին և հոգատարությանն արժանանալու սկզբունքների ապահովման տեսանկյունից:**

Հարկ է նշել, որ նույնանման կարգավորում է նախատեսել նաև Մինսկի Կոնվենցիայից և Արձանագրությունից հետո՝ 07.10.2022 թվականին ընդունված՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի կոնվենցիայի (այսուհետ՝ Քիշնևի կոնվենցիա, ՀՀ համար ուժի մեջ է մտել 19.02.2005 թվականին) 35-րդ հոդվածը, որը նույնաբովանդակ է Մինսկի կոնվենցիայի 32-րդ հոդվածի՝ Արձանագրությամբ փոփոխված խմբագրությանը, և երեխաների ու ծնողների իրավահարաբերություններում (բացառությամբ ալիմենտային պարտավորությունների) ծագած վեճերը լուծելիս կիրառելի օրենսդրությունն ու իրավասու դատարանը որոշելու կանոն է սահմանել հաջորդաբար ծնողների և երեխաների մշտական համատեղ բնակության վայրի և երեխայի քաղաքացիության վերաբերյալ ելակետային տվյալների պարզման անհրաժեշտությունը:

Համանման մոտեցում է ցուցաբերվել նաև ներպետական օրենսդրությամբ, մասնավորապես ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ «Ընտանեկան օրենսդրության կիրառումը օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասնակցությամբ ընտանեկան հարաբերությունների նկատմամբ» վերտառությամբ 7-րդ բաժնի 148-րդ հոդվածում սահմանել է, որ ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները (ընդ որում՝ երեխաների ապրուստը հոգավու ծնողների պարտականությունը) որոշվում են այն պետության օրենսդրությամբ, որի տարածքում նրանք ունեն համատեղ բնակության վայր: Ծնողների և զավակների համատեղ բնակության վայրի բացակայության դեպքում ծնողների ու զավակների իրավունքները և պարտականությունները որոշվում են այն պետության օրենսդրությամբ, **որի քաղաքացին է երեխան:** Հայցվորի պահանջով ալիմենտային պարտավորությունների և ծնողների ու զավակների միջև այլ հարաբերությունների նկատմամբ կարող է կիրառվել այն պետության օրենսդրությունը, որի տարածքում մշտապես ապրում է երեխան:

Օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ ծնողների և զավակների իրավունքների ու պարտականությունների առնչությամբ ընտանեկան օրենսդրությունը կիրառելիս ներպետական օրենսդրությամբ նույնպես ելակետային է համարվել ծնողների և զավակների՝ համատեղ բնակության վայր ունենալու հանգամանքը, բացակայության դեպքում՝ երեխայի քաղաքացիությունը:

Ավելին՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Կոլիզիոն նորմեր» վերտառությամբ 81-րդ գլխի «Քաղաքացիների նկատմամբ կիրառվող իրավունքը» 1-ին պարագրաֆի «Քաղաքացու անձնական օրենքը» վերտառությամբ 1262-րդ հոդվածի 2-րդ մասը մշտական բնակության վայրի պետության իրավունքի կիրառումը սահմանում է քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ՝ նույն հոդվածի 1-ին մասով ամրագրելով, որ քաղաքացու անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որի քաղաքացիությունն ունի տվյալ անձը: Եթե անձն ունի երկու կամ ավելի պետության քաղաքացիություն, ապա նրա անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որի հետ այդ անձն առավել սերտ է կապված:

Ե) Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ ՀՀ քաղաքացի երեխայի բնակության (տեսակցության կարգի սահմանման) վայրը որոշելու գործերով երեխայի՝ նույնիսկ այլ պետության տարածքում գտնվելու հանգամանքը չի կարող խոչընդոտ լինել գործով անհրաժեշտ նյութաիրավական փաստակազմը պարզելու և ըստ էության դատական ակտ կայացնելու համար՝ նկատի ունենալով ինչպես ՀՀ միջազգային պայմանագրերով, այնպես էլ փոխադարձության հիման վրա իրավական օգնություն տրամադրելու, դատական ակտերը

ճանաչելու ու կատարելու իրավակարգավորումների և գործուն մեխանիզմների առկայությունը:

***Վերագրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարանամբ***

Դիմելով Դատարան՝ հայցվոր Սարգիս Զատիկյանը պահանջել է Էմիլի և Էվելինա Զատիկյանների բնակության վայր սահմանել իր բնակության վայրը՝ ք. Երևան, Նոր Արեշ, 32-րդ փողոց, թիվ 85 տուն հասցեն՝ պատասխանողին պարտավորեցնելով կայացվելիք վճիռն օրինական ուժի մտնելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում երեխաներին հանձնել իրեն, սահմանել իր կողմից երեխաներին տեսակցելու հետևյալ կարգը՝ պարտավորեցնել պատասխանողին շաբաթական առնվազն երկու անգամ երեխաներին ներկայացնել ք. Երևան, Նոր Արեշ, 32-րդ փողոց, թիվ 85 տուն հասցե՝ օրական 2-4 ժամ տևողությամբ կամ ապահովել երեխաների ներկայությունը և նրանց հետ ազատ հաղորդակցումը Երևան քաղաքի որևէ հասցեում:

Պատասխանող Գոհար Բալասանյանը ներկայացրած հայցադիմումի պատասխանով առարկել է հայցի դեմ՝ ի թիվս այլնի, հայտնելով, որ հայցվորից հեռացել է 2020 թվականի հուլիսին և բնակվել իր տատի ու պապի տանը, որը գտնվում է հայցվորի տնից երկու տուն հեռավորության վրա: Նկատի ունենալով, որ պատասխանողը ՀՀ-ում չունի բնակվելու վայր, պատասխանողի ծնողները ՌԴ քաղաքացիներ են և բնակվում են այստեղ, 2020 թվականի հոկտեմբերի սկզբին մեկնել է ՌԴ ու առայժմ բնակվում է ՌԴ-ում, նման պայմաններում խնամակալության և հոգաբարձության մարմինը չի կարողանալու իրականացնել երեխաների կյանքի հետազոտություն ու տրամադրել երեխաների լավագույն շահից բխող եզրակացություն, անհնար է լինելու նաև տեսակցության կարգի իրականացումը:

Դատարանը, վկայակոչելով Մինսկի կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերը, հաստատված համարելով, որ «*Էմիլի Զարիկյանն ու Էվելինա Զարիկյանը մայր ծնող Գոհար Բալասանյանի հետ 2020 թվականի հոկտեմբեր ամսից մշտապես բնակվում են Ռուսաստանի Դաշնությունում*», եզրահանգել է, որ «*վեճի նկարանամբ կիրառելի է երեխաների մշտապես բնակության վայրի՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը, ուստի Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով քննարկվող պարագայում իրավասու դատարան չէ*»:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ պատճառաբանությունները, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Դատարանը որոշում է կայացրել քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին:

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Մինսկի կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին մասը, արձանագրելով, որ «*թե պարասիսանողի կողմից ներկայացված ապացույցներով (պարասիսանողին բնակության թույլտվություն փոխադրություն, դպրոց հաճախելու մասին տեղեկանք, գրնվելու վայրի մասին երկու տեղեկանքներ), թե՛ հայցվորի հայտարարություններով (Վերաքննիչ դատարանում դատական նիստի ընթացքում ևս հայցվոր Սարգիս Զարիկյանն ընդունել է, որ երեխաները 2020 թվականի հոկտեմբերից գրնվել են Ռուսաստանի Դաշնությունում) հաստատվում է, որ երեխաները դեռևս 2020 թվականի հոկտեմբերից գրնվում են Ռուսաստանի Դաշնության տարածքում, այսինքն՝ երեխաների սոցիալական կայքերը գրնվում են Ռուսաստանի Դաշնությունում, վերջիններս շուրջ երկու տարի է ինչ իրենց կենսակերպը վարում են այդտեղ*», եզրահանգել է, որ «*երեխաների*

ՀՀ-ում հաշվառված լինելը չի կարող էական նշանակություն ունենալ և գործի առավել արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով Կոնվենցիայի 32-րդ հոդվածի ուժով սույն քաղաքացիական գործը ենթակա չէ քննության Հայաստանի Հանրապետության դատարանում քաղաքացիական դատավարության կարգով», մերժել է հայցվոր Սարգիս Զատիկյանի վերաքննիչ բողոքը՝ Դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում արձանագրել, որ ստորադաս դատարանները սխալ են որոշել կիրառելի օրենսդրությունը:

Վճռաբեկ դատարանի նման հետևությունը պայմանավորված է նրանով, որ կիրառելի օրենսդրության և իրավասու դատարանի բացահայտումը ստորադաս դատարանները պետք է իրականացնեին՝ հիմք ընդունելով Մինսկի կոնվենցիայի՝ Արձանագրությամբ փոփոխված 32-րդ հոդվածի խմբագրությունն այն դեպքում, երբ ստորադաս դատարանները կաշկանդված էին Արձանագրությամբ կատարված փոփոխությամբ և կիրառելի օրենսդրության, ինչպես նաև իրավասու դատարանի հարցն իրավասու էին որոշելու Արձանագրությամբ կատարված փոփոխությունների հաշվառմամբ:

Ըստ այդմ, ստորադաս դատարանները՝

- նախ՝ պետք է պարզեին ծնողների և երեխաների մշտական համատեղ բնակության վայր ունենալու հանգամանքը,

- դրա բացակայության դեպքում՝ երեխաների քաղաքացիությունը:

Մինչդեռ ստորադաս դատարաններն ըստ էության հարցը քննելու իրավասու դատարան չլինելու և այդ հիմքով գործի վարույթը կարճելու հետևությունն արել են՝ բացառապես ղեկավարվելով Մինսկի Կոնվենցիայի՝ մինչ Արձանագրությամբ փոփոխված 32-րդ հոդվածի նախկին խմբագրությամբ, հիմք ընդունելով երեխաներ Էվելինա և Էմիլի Զատիկյանների՝ մայր ծնողի պատասխանող Գոհար Բալասանյանի հետ 2020 թվականի հոկտեմբեր ամսից ՌԴ-ում գտնվելու հանգամանքը՝ այն արձանագրելով որպես երեխաների մշտական բնակության վայր:

Բացի այդ, սույն գործի փաստերի, կողմերի դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

- հայցվորը և պատասխանողը ՀՀ քաղաքացիներ են, հետևաբար Սահմանադրության 47-րդ հոդվածի հիմքով ՀՀ քաղաքացիներ են նաև նրանց երեխաները,

- երեխաների մայրը՝ Գոհար Բալասանյանը, ժամանակավորապես գտնվում է ՌԴ-ում, երեխաների հայրը մշտապես բնակվում և աշխատում է ՀՀ-ում,

- երեխաներից Էմիլի Զատիկյանը ներկայումս 8 տարեկան է, Էվելինա Զատիկյանը՝ 3 տարեկան (ստորադաս դատարանների կողմից դատական ակտերը կայացնելու դրությամբ երեխաները համապատասխանաբար եղել են 7 և 2 տարեկան),

- հայցվորը և պատասխանողը, ինչպես նաև նրանց երեխաներն ունեցել են մշտական համատեղ բնակության վայր մինչև 2020 թվականի հուլիս ամիսը (երեխաները եղել են 6 և 1 տարեկան),

- 2020 թվականի հուլիս ամսից մինչև հոկտեմբեր ամիսը երեխաները մայր ծնողի՝ Գոհար Բալասանյանի հետ բնակվել են Սարգիս Զատիկյանից առանձին, Հայաստանի Հանրապետությունում,

- երեխաներ Էմիլի և Էվելինա Ջատիկյանները մայր ծնողի՝ Գոհար Բալասանյանի հետ գտնվում են Ռուսաստանի Դաշնությունում 2020 թվականի հոկտեմբեր ամսից (անվիճելի փաստ),

- Դատարանի որոշումը կայացնելու՝ 17.12.2021 թվականի դրությամբ երեխաները և պատասխանողը ՌԴ-ում գտնվելու ժամանակահատվածը մոտավորապես մեկ տարի է, Վերաքննիչ դատարանի որոշման կայացման դրությամբ՝ մեկ տարի վեց ամիս, ավելին, Գոհար Բալասանյանի և երեխաների համար ՌԴ-ում գտնվելու ժամանակահատված է սահմանվել մինչև 19.01.2022 թվականը, իսկ երեխաներից Էմիլի Ջատիկյանը ՌԴ հանրակրթական դպրոց է սկսել հաճախել միայն 11.01.2021 թվականից:

Այսինքն՝ գործում բացակայում է երեխաների և ծնողների՝ **մշտական համատեղ բնակության վայր** ունենալու փաստը հավաստող որևէ ապացույց, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Ավելին՝ վկայակոչված փաստերի համադրված վերլուծությամբ հերքվում է օտարերկրյա պետությունում երեխաների սոցիալական սերտ կապերի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը:

Վկայակոչված իրավակարգավորումների լույսի ներքո գործի փաստերի արձանագրմամբ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ստորադաս դատարանները սույն՝ երեխաների բնակության վայրը որոշելու (տեսակցություն կարգ սահմանելու) գործով կիրառելի օրենսդրության և իրավասու դատարանի հարցը պարզելիս պետք է առաջնորդվելին Արձանագրությամբ փոփոխված Մինսկի կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ երկրորդ կանոնի կիրառմամբ, այն է՝ երեխայի բնակության վայրը որոշելու վեճը ենթակա է լուծման այն պետության օրենսդրության շրջանակներում ու դատարանի կողմից, որի քաղաքացի են երեխաները:

Նկատի ունենալով, որ գործում բացակայում է երեխաների և ծնողների՝ **մշտական համատեղ բնակության վայր** ունենալու փաստը հավաստող որևէ ապացույց, սույն գործով երեխաները ՀՀ քաղաքացիներ են, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ երեխաների՝ ծնողներից որևէ մեկի հետ ապրելու իրավունքի հարցը քննելու իրավասու դատարան է ՀՀ դատարանը:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ իրավունքն առավել սերտ կապ ունի երեխաների լավագույն շահերը գնահատելու հարցի հետ, քանի որ սույն գործով հաստատված փաստերը հիմք են տալիս եզրահանգելու, որ ՀՀ-ն այն պետությունն է՝

- որի քաղաքացին են երեխաները,

- որի մարմինների քննության ներքո է գտնվել հայցվորի և պատասխանողի ամուսնալուծության հարցը (ըստ Court.am դատական տեղեկատվական համակարգի տվյալների՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 08.10.2020 թվականի թիվ ԵԴ/24352/02/20 վճռով լուծվել է Սարգիս Ջատիկյանի և Գոհար Բալասանյանի 26.07.2013 թվականին գրանցված ամուսնությունը),

- որի հետ երեխաներն առավել սերտ կապ ունեն,

- որի ՀՀ իրավասու դատարանի իրավագործությունն ըստ էության կողմերն ընդունել են:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն գործով կիրառելի ներպետական և միջազգային իրավակարգավորումները, ելնելով երեխաների շահերի առավել ապահովման անհրաժեշտությունից, հիմք ընդունելով սույն գործով հաստատված այն բոլոր փաստերը, որոնք հավաստում են

երեխաների բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությունն ու հոգատարությունը՝ արձանագրում է, որ սույն գործով երեխաների՝ ծնողներից որևէ մեկի հետ ապրելու հարցը պետք է որոշվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ՀՀ իրավասու դատարանի կողմից, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից՝ հանգեցնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի չհիմնավորված կիրառման և այդ հիմքով՝ քաղաքացիական գործի կարճման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սխալ կիրառման պայմաններում սույն գործի ամբողջ ծավալով ըստ էության քննությունն իրականացնելու նպատակով տվյալ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի 11.07.2022 թվականի որոշումը բեկանելու և գործը ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

*Հաշվի առնելով գործի ամբողջ ծավալով նոր քննություն իրականացնելու անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի մյուս փաստարկներին չի անդրադառնում՝ նկարի ունենալով, որ դրանք գնահատելու հնարավորությունը ներկա փուլում բացակայում է:*

##### **5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դարական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԵԳ/33825/02/20 քաղաքացիական գործով 2023 թվականի դեկտեմբերի 15-ի կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ**

**15.12.2023 թվական**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2023 թվականի դեկտեմբերի 15-ին գրավոր ընթացակարգով քննելով Սարգիս Զատիկյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ Սարգիս Զատիկյանի հայցի ընդդեմ Գոհար Բալասանյանի, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխաների բնակության վայրը որոշելու ու երեխաների հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջների մասին, որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 11.07.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

Վճռաբեկ դատարանի դատավոր Էդ. Սեդրակյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

### ***1. Գործի դարավարական նախապայմանությունը***

Դիմելով դատարան՝ Սարգիս Զատիկյանը պահանջել է Էմիլի և Էվելինա Զատիկյանների բնակության վայր սահմանել իր բնակության վայրը՝ ք. Երևան, Նոր Արեշ, 32-րդ փողոց, թիվ 85 տուն հասցեն, ինչպես նաև տեսակցության կարգ սահմանել Էմիլի ու Էվելինա Զատիկյանների հետ:

Սարգիս Զատիկյանը 29.01.2021 թվականին հայցի առարկան փոփոխելու և հայցապահանջը լրացնելու միջնորդություն է ներկայացրել, որով պահանջել է Էմիլի և Էվելինա Զատիկյանների բնակության վայր սահմանել իր բնակության վայրը՝ ք. Երևան, Նոր Արեշ, 32-րդ փողոց, թիվ 85 տուն հասցեն՝ պատասխանողին պարտավորեցնելով կայացվելիք վճիռն օրինական ուժի մտնելուց հետո՝ յոթնօրյա ժամկետում երեխաներին հանձնել իրեն, սահմանել իր կողմից երեխաներին տեսակցելու հետևյալ կարգը՝ պարտավորեցնել պատասխանողին շաբաթական առնվազն երկու անգամ երեխաներին ներկայացնել ք. Երևան, Նոր Արեշ, 32-րդ փողոց, 85 տուն հասցե՝ օրական 2-4 ժամ տևողությամբ կամ ապահովել երեխաների ներկայությունը և նրանց հետ ազատ հաղորդակցումը Երևան քաղաքի որևէ հասցեում:

Երևան քաղաքի առաջին ստյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 17.12.2021 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթն ըստ Սարգիս Զատիկյանի հայցի ընդդեմ Գոհար Բալասանյանի, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխաների բնակության վայրը որոշելու ու երեխաների հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջների մասին, կարճվել է՝ գործը



քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով, Սարգիս Զատիկյանից հօգուտ Գոհար Բալասանյանի բռնագանձվել է 60.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար. ՀՀ պետական բյուջեից Սարգիս Զատիկյանին վերադարձվել է 8.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.07.2022 թվականի որոշմամբ Սարգիս Զատիկյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.12.2021 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Սարգիս Զատիկյանը (ներկայացուցիչ Հրանտ Անանյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## ***2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը***

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 22.01.1993 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 32-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Դատարանը վկայակոչել է Կոնվենցիայի 32-րդ հոդվածը, որը միայն նախատեսում է, որ հայցվորը «կարող է» նաև դիմել նշված երկրի դատարան, եթե երեխաները մշտապես բնակվում են նշված երկրում, այսինքն՝ Կոնվենցիան սահմանում է իր իրավունքը, այլ ոչ թե պարտականությունը, իսկ իրավական օգնության վերաբերյալ Կոնվենցիայի դրույթները չեն կարող նսեմացնել և վերացնել ներպետական օրենսդրության ընդդատության կանոնները, դրանք միայն այլընտրանք են սահմանում իր համար, ոչ թե ներպետական օրենսդրության պահանջները ոտնահարելով պարտադիրություն՝ անձին զրկելով իր քաղաքացիության երկրում դատական արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Ստորադաս դատարանները որևէ պատշաճ տեղեկություն չունեն երեխաների կյանքի որակի և պայմանների, կրթության ու այլնի մասին, սակայն ըստ էության հանգել են հետևության՝ իբրև Հայաստանից դուրս գտնվելը բխում է նրանց շահերից, իսկ հոր կողմից դատական պաշտպանություն հայցելը չի բխում երեխաների լավագույն շահերից:

Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասը, չի անդրադարձել պատասխանողի ներկայացուցչի կողմից ապացույցներ ներկայացնելու համար սահմանված ժամկետից հետո՝ առանց համապատասխան միջնորդության նոր ապացույց կցելու և այդ ապացույցները Դատարանի կողմից վիճարկվող եզրափակիչ որոշման հիմքում դնելու հանգամանքին, մինչդեռ նշված փաստաթղթերը որպես ապացույց հետագոտելու ու վերջնական դատական ակտի հիմքում դնելու համար դրանք Դատարանում պետք է քննարկվեին միայն պատշաճ միջնորդության առկայության պայմաններում. այդ փաստաթղթերը ներկայացվել և գործի նյութերին կցվել են մեխանիկորեն, իր ներկայացուցչին չի տրամադրվել այդ փաստաթղթերի բնօրինակը օտարալեզու տարբերակը, ինչն ինքնին միջնորդությունն առանց

քննարկման թողնելու ինքնուրույն հիմք է: Այլ կերպ ասած՝ քննարկվող ապացույցները ներկայացվել են օրենքով սահմանված կարգի էական խախտմամբ, իսկ այդպիսի խախտումն իրավաչափ չի կարող համարվել միայն այն հիմնավորմամբ, որ կողմը չի առարկել դրա դեմ: Հակառակ մոտեցման պարագայում, եթե դատավարության ընթացքում կողմերից մեկն ակնհայտ ապօրինի գործողություն է կատարում, ապա այն կարող է համարվել իրավաչափ զուտ մյուս կողմի չարձագանքելու պատճառով, ինչն անթույլատրելի և արդարադատության բուն էությունը խաթարող մոտեցում է:

Ինչպես Դատարանում գործի քննության ընթացքում, այնպես էլ վերաքննիչ բողոքում ինքը նշել է, որ չի վիճարկում երեխաների հայցադիմում ներկայացնելուց 4 օր առաջ ՌԴ մեկնելը և այդտեղ գտնվելն ու ոչ թե նրանց՝ ՌԴ-ում մշտապես բնակվելը, հատկապես այն դեպքում, երբ ինքը վիճարկում է, ի թիվս այլնի, հենց «մշտական բնակության» եզրույթը և հասկացությունը, ուստի անթույլատրելի է ստորադաս դատարանների այն գնահատականը, թե ինքը չի վիճարկել երեխաների՝ ՌԴ-ում մշտապես բնակվելու հանգամանքը:

Ստորադաս դատարաններն անտեսել են, որ Հայաստանի քաղաքացին կարող է ունենալ միայն մեկ մշտական բնակության վայր, իսկ եթե փոխում է իր մշտական բնակության վայրը, ապա նախ յոթնօրյա ժամկետում պարտավոր է տեղեկացնել ՀՀ հյուպատոսական մարմնին, որն էլ իր հերթին դիմումն ստանալուց հետո պետք է կարգավորի նշված գործընթացը: Դատարանին չի ներկայացվել պատշաճ ապացույց այն մասին, որ պատասխանողը փոխել է իր մշտական բնակության վայրը: Ավելին՝ ՀՀ պետական ռեգիստրի պաշտոնական կայքից հետևում է, որ պատասխանողի տվյալները ռեգիստրում որևէ փոփոխության չեն ենթարկվել, և վերջինիս մշտական բնակության կացարանն է Հայաստանը:

Ստորադաս դատարանները հաշվի չեն առել, որ առկա չէ որևէ ապացույց, որ երեխաները 2020 թվականի հոկտեմբերից մշտապես, առանց ընդհատման բնակվել են ՌԴ-ում: Փաստ է միայն, որ 2020 թվականի հոկտեմբերի 8-ին պատասխանողը երեխաներին գաղտնի տարել է ՌԴ, իսկ թե դրանից հետո՝ մինչև 2021 թվականի դեկտեմբեր ամիսը, երեխաներն անընդմեջ գտնվել են ՌԴ-ում, թե տեղափոխվել են այլ վայր, որևէ ապացույց առկա չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.07.2022 թվականի որոշումը և որոշում կայացնել գործն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր կազմով նոր քննության ուղարկելու վերաբերյալ:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 27.04.2014 թվականին ծնված Էմիլի Սարգիս Զատիկյանի հայրը Սարգիս Զատիկյանն է, մայրը՝ Գոհար Բալասանյանը (**հատոր 1-ին, գ.թ. 10**).

2) 29.05.2019 թվականին ծնված Էվելինա Սարգիս Զատիկյանի հայրը Սարգիս Զատիկյանն է, մայրը՝ Գոհար Բալասանյանը (**հատոր 1-ին, գ.թ. 11**).

3) Սարգիս Զատիկյանը և Գոհար Բալասանյանը ՀՀ քաղաքացիներ են (**հատոր 1-ին, գ.թ. 12, 31**).

4) Էրեբունու թիվ 13 տեղամասի լիազոր ներկայացուցչի կողմից տրված, տրման ամսաթիվ չբովանդակող տեղեկանքի պատճենի համաձայն՝ Սարգիս Զատիկյանը բնակվում է ք. Երևան, Նոր Արեշ 32-րդ փողոցի թիվ 85 տանը, ունի

երկու դուստր՝ Էմիլի Զատիկյանը և Էվելինա Զատիկյանը, երեխաները ծնվել ու ապրել են նշված հասցեում, Մոսկվա են մեկնել 07.10.2020 թվականից (**հատոր 1-ին, գ.թ. 175**).

5) Էմիլի Զատիկյանը և Էվելինա Զատիկյանը հաշվառված են եղել «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնում, հետազոտություններն ու պատվաստումներն ստացել են ամբողջական ծավալով: 2020 թվականի հոկտեմբերից դադարել է հաճախումը, 2021 թվականի հունվարից երեխաները հանվել են հաշվառումից (**հատոր 1-ին, գ.թ. 174**).

6) Էմիլի Զատիկյանը 05.09.2018 թվականից 20.08.2020 թվականը հաճախել է Երևանի թիվ 69 մանկապարտեզ ՀՈԱԿ (**հատոր 1-ին, գ.թ. 178**).

7) Էմիլի Զատիկյանը 2020-2021 ուսումնական տարում ընդունվել է Երևանի Պարոյր Սևակի անվան հ. 123 հիմնական դպրոցի առաջին դասարան, 2020 թվականի հոկտեմբերի 9-ին ազատվել է դպրոցից Ռուսաստանի Դաշնություն մեկնելու կապակցությամբ (**հատոր 1-ին, գ.թ. 177**).

8) Բալաշիխա քաղաքային օկրուգի թիվ 12 միջնակարգ հանրակրթական դպրոցի տնօրենի կողմից 22.04.2021 թվականին տրված թիվ 116 տեղեկանքի ռուսերենից հայերեն թարգմանության համաձայն՝ 2021 թվականի հունվարի 11-ից սկսած Էմիլի Զատիկյանը հաճախում է Բալաշիխա քաղաքային օկրուգի թիվ 12 միջնակարգ հանրակրթական դպրոցի մունիցիպալ բյուջետային հանրակրթական հաստատության բազայի «Ապագա առաջին կուրսեցու դպրոց» վճարովի կուրսը (**հատոր 1-ին, գ.թ. 159**).

9) Գոհար Բալասանյանին ՌԴ բնակության թույլտվության վերաբերյալ փաստաթուղթը տրամադրվել է 12.08.2021 թվականին: Հաշվառման ժամկետ է սահմանվել մինչև 19.01.2022 թվականը (**հատոր 1-ին, գ.թ. 49, 53**).

10) թվով երկու փաստաթղթերի՝ ռուսերենից հայերեն թարգմանությունների համաձայն՝ Էմիլի Սարգիս Զատիկյանի (ծնված՝ 2014 թվականի ապրիլի 27-ին) և Էվելինա Սարգիս Զատիկյանի (ծնված՝ 2019 թվականի մայիսի 29-ին) գտնվելու վայրի հասցեն է՝ Մոսկվայի մարզ, Նովոյե Պավլինո միկրոշրջան, Բալաշիխա քաղաք, Տրոիցկայա փողոց, շենք 2-րդ, թիվ 3 բնակարան: Թարգմանությունները տրաման ամսաթիվ չեն բովանդակում (**հատոր 1-ին, գ.թ. 51-52**).

11) Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, և վճռաբեկ բողոքում չի վիճարկվում փաստն այն մասին, որ Էմիլի Զատիկյանն ու Էվելինա Զատիկյանը գտնվել են Ռուսաստանի Դաշնությունում 2020 թվականի հոկտեմբերից:

#### ***4. Հարուկ կարծիքի հիմնավորումները***

Դիմելով Դատարան՝ հայցվոր Սարգիս Զատիկյանը պահանջել է Էմիլի Զատիկյանի և Էվելինա Զատիկյանի բնակության վայր սահմանել հայցվորի բնակության վայրը ք. Երևան, Նոր Արեշ, 32-րդ փողոց, 85 տուն հասցեն՝ պատասխանողին պարտավորեցնելով կայացվելիք վճիռն օրինական ուժի մտնելուց հետո՝ յոթօրյա ժամկետում երեխաներին հանձնել իրեն, սահմանել հայցվորի կողմից երեխաներին տեսակցելու հետևյալ կարգը՝ պարտավորեցնել պատասխանողին շաբաթական առնվազն երկու անգամ երեխաներին ներկայացնել ք. Երևան, Նոր Արեշ, 32-րդ փողոց, 85 տուն հասցե՝ օրական 2-4 ժամ տևողությամբ կամ ապահովել երեխաների ներկայությունը և նրանց հետ ազատ հաղորդակցումը Երևան քաղաքի որևէ հասցեում:

Պատասխանող Գոհար Բալասանյանը ներկայացրած հայցադիմումի պատասխանով առարկել է հայցի դեմ՝ ի թիվս այլնի, հայտնելով, որ հայցվորից հեռացել է 2020 թվականի հուլիսին և բնակվել իր տատի և պապի տանը, որը

գտնվում է հայցվորի տնից երկու տոն հեռավորության վրա, նկատի ունենալով, որ պատասխանողը ՀՀ-ում չունի բնակվելու վայր, պատասխանողի ծնողները ՌԴ քաղաքացիներ են և բնակվում են այնտեղ, 2020 թվականի հոկտեմբերի սկզբին մեկնել է ՌԴ և առայժմ բնակվում է ՌԴ-ում, որպիսի պայմաններում խնամակալության և հոգաբարձության մարմինը չի կարողանալու իրականացնել երեխաների կյանքի հետազոտություն և տրամադրել երեխաների լավագույն շահից բխող եզրակացություն, անհնար է լինելու նաև տեսակցության կարգի իրականացումը:

**Դատարանը**, վկայակոչելով Մինսկի կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերը, հաստատված համարելով, որ «*Լմիլի Զարիկյանն ու Էվելինա Զարիկյանը մայր ծնող Գոհար Բալասանյանի հետ 2020 թվականի հոկտեմբեր ամսից մշտապես բնակվում են Ռուսաստանի Դաշնությունում*», եզրահանգել է, որ «*վեճի նկարումանք կիրառելի է երեխաների մշտապես բնակության վայրի Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունը, ուստի Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով քննարկվող պարագայում իրավասու դատարան չէ*»:

Վերոշարադրյալ պատճառաբանություններով, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, Դատարանը որոշում է ընդունել քաղաքացիական գործի վարույթը կարճել:

**Վերաքննիչ դատարանը**, վկայակոչելով Մինսկի կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին մասը, արձանագրելով, որ «*թե պարասխանողի կողմից ներկայացված ապացույցներով (պարասխանողին բնակության թույլտվություն տալու մասին փաստաթուղթ, դպրոց հաճախելու մասին տեղեկանք, գրնվելու վայրի մասին երկու տեղեկանքներ), թե՛ հայցվորի հայրաբարություններով (Վերաքննիչ դատարանում դատական նիստի ընթացքում ևս հայցվոր Սարգիս Զարիկյանն ընդունել է, որ երեխաները 2020 թվականի հոկտեմբերից գրնվել են Ռուսաստանի Դաշնությունում) հաստատվում է, որ երեխաները դեռևս 2020 թվականի հոկտեմբերից գրնվում են Ռուսաստանի Դաշնության տարածքում, այսինքն՝ երեխաների սոցիալական կապերը գրնվում են Ռուսաստանի Դաշնությունում, վերջիններս շուրջ երկու տարի է ինչ իրենց կենսակերպը վարում են այդտեղ», եզրահանգել է, որ «*երեխաների ՀՀ-ում հաշվառված լինելը չի կարող էական նշանակություն ունենալ և գործի առավել արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով Կոնվենցիայի 32-րդ հոդվածի ուժով սույն քաղաքացիական գործը ենթակա չէ քննության Հայաստանի Հանրապետության դատարանում քաղաքացիական դատավարության կարգով*», մերժել է հայցվոր Սարգիս Զատիկյանի վերաքննիչ բողոքը՝ Դատարանի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:*

**Վճռաբեկ դատարանն** արձանագրել է, որ «*(...) ստորադաս դատարանները սույն՝ երեխաների բնակության վայրը որոշելու (տեսակցություն կարգ սահմանելու) գործով կիրառելի օրենսդրության և իրավասու դատարանի հարցը պարզելիս պետք է առաջնորդվեն Արձանագրությանը փոփոխված Մինսկի կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ երկրորդ կանոնի կիրառումանք, այն է՝ երեխայի բնակության վայրը որոշելու վեճը ենթակա է լուծման այն պետության օրենսդրության շրջանակներում և դատարանի կողմից, որի քաղաքացի են երեխաները*»:

Նկատի ունենալով, որ գործում բացակայում է երեխաների և ծնողների մշտական համարելիք բնակության վայր ունենալու փաստը հավասարող որևէ ապացույց, սույն գործով երեխաները ՀՀ քաղաքացիներ են, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ երեխաների ծնողներից որևէ մեկի հետ ապրելու իրավունքի հարցը քննելու իրավասու դատարան է ՀՀ դատարանը:

(...) Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն գործով կիրառելի ներպետական և միջազգային իրավակարգավորումները, ելնելով երեխաների շահերի ապահովման անհրաժեշտությունից, հիմք ընդունելով սույն գործով հասարակած այն բոլոր փաստերը, որոնք հավասարում են երեխաների բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությունը և հոգաբարությունը՝ արձանագրում է, որ սույն գործով երեխաների՝ ծնողներից որևէ մեկի հետ ապրելու հարցը պետք է որոշվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ՀՀ իրավասու դատարանի կողմից, ինչն անսրեավել է սրտրադաս դատարանների կողմից՝ հանգեցնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի չհիմնավորված կիրառման և այդ հիմքով՝ քաղաքացիական գործի կարճման»:

Վճռաբեկ դատարանի դատավոր Էդ. Սեդրակյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրակակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, շարադրում են իմ հատուկ կարծիքը այդ մասերի վերաբերյալ:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով պետությունը պարտավորվում է օրենսդրական, վարչական միջոցներ ձեռնարկել երեխայի շահերի ապահովման համար, սահմանել երեխայի խնամարկյալների, ծնողների իրավունքների և պարտականությունների ծավալը, հետևել պետական և պատկան մարմինների գործունեությանը տվյալ իրավահարաբերություններում միտված երեխայի բարեկեցությանն անհրաժեշտ պաշտպանությանը և հոգատարությանը:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

Կոնվենցիան ելնելով պայմանավորվող կողմերի քաղաքացիներին և նրանց տարածքներում բնակվող անձանց անձնական և գույքային իրավունքների կապակցությամբ պայմանավորվող բոլոր կողմերում սեփական քաղաքացիներին հավասարազոր իրավական պաշտպանություն ապահովելու ձգտումից, կարևորելով իրավական օգնություն ցուցաբերելու և որոշակի գործերի առանձնահատկություններով պայմանավորված ենթակայության և ընդդատության հատուկ կանոնների նախատեսման անհրաժեշտությունը, սահմանել է քաղաքացիական, ընտանեկան և քրեական որոշակի շրջանակի գործերի քննության ընդդատության հատուկ կանոններ: Այսինքն՝ Կոնվենցիան ստորագրած պետություններն ընդհանուր համաձայնությամբ իրենց քաղաքացիների մասնակցությամբ որոշ գործերի քննության իրավասությունը «գիջել», «փոխանցել» են մեկ այլ պայմանավորվող պետության՝ ելնելով գործերի արդյունավետ, արագ քննություն ապահովելու կանոնից և վստահ լինելով, որ Կոնվենցիայի ուժով իրենց քաղաքացիները ստանալու են այլ պետության քաղաքացիներին հավասարազոր իրավական

պաշտպանություն: Այլ կերպ ասած՝ պայմանավորող պետությունները համաձայնություն են ձեռք բերել իրենց քաղաքացիների վերաբերյալ որոշակի վեճերի քննությունն այլ պետության իրավասությանը հանձնելու վերաբերյալ՝ սահմանելով ընդդատության հատուկ կանոններ:

Ընդ որում, ներպետական դատարանները սահմանափակված են ոչ միայն ներպետական նորմատիվ իրավական ակտերով, այլև վավերացված միջազգային պայմանագրերով: Այն դեպքում, երբ միջազգային պայմանագրով սահմանված է ընդդատության հատուկ կանոն, ապա ազգային դատարանները ոչ միայն իրավասու են, այլև պարտավոր են կիրառել այդ կանոնները (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայրը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով): Ուստի, միջազգային պայմանագրով սահմանված ընդդատության հատուկ կանոնի կիրառումը ներպետական դատարանի կողմից չի կարող բնութագրվել որպես ներպետական նորմերի նսեմացում:

Կոնվենցիայի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողների և երեխաների իրավահարաբերությունները որոշվում են այն Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ, որի տարածքում մշտապես բնակվում են երեխաները:

Երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ պայմանավորվող պետությունները Կոնվենցիայով համաձայնության են եկել երեխայի հետ կապված վեճերը լուծել այն պետությունում, որտեղ մշտապես բնակվում է երեխան՝ անկախ քաղաքացիությունից. երեխայի բնակության վայրում հնարավոր է առավել արդյունավետ ապահովել վերջինիս կենսապայմանների, սոցիալական շփումների, կարիքների բացահայտման հնարավորությունը, երեխային դատարան հրավիրելը հնարավոր է կազմակերպել առավել արագ և առանց երեխային լրացուցիչ տեղափոխելու, տվյալ վայրի իրավասու մարմինները ևս առավել արդյունավետ կարող են երեխայի կենսապայմանները հետազոտել կամ մշտական այցելություններ, հսկողություն իրականացնել:

Կոնվենցիան օգտագործում է «երեխայի բնակության վայր եզրույթը: Հարկ է նշել, որ բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է: Այսինքն՝ բնակության վայրն այն տարածքն է, որտեղ անձը վարում է իր կենսակերպը՝ բնակվում է մշտապես կամ առավելապես: Երեխաների վերաբերյալ վեճերով հատկապես մշտական բնակության վայրը պարզելու համար պետք է հասկանալ, թե երեխան որտեղ է վարում իր կենսակերպը, որտեղ են նրա սոցիալական կապերը, շրջապատը, որտեղ է վերջինս օրինակ դպրոց կամ այլ հաստատություն հաճախում:

Սույն քաղաքացիական գործով թե՛ պատասխանողի կողմից ներկայացված ապացույցներով (պատասխանողին բնակության թույլտվություն տալու մասին փաստաթուղթ, դպրոց հաճախելու մասին տեղեկանք, գտնվելու վայրի մասին երկու տեղեկանքներ), թե՛ հայցվորի հայտարարություններով (Վերաքննիչ դատարանում դատական նիստի ընթացքում ևս հայցվոր Սարգիս Ջատիկյանն ընդունել է, որ երեխաները 2020 թվականի հոկտեմբերից գտնվել են Ռուսաստանի Դաշնությունում) հաստատվում է, որ երեխաները դեռևս 2020 թվականի հոկտեմբերից գտնվում են Ռուսաստանի Դաշնության տարածքում, այսինքն՝ երեխաների սոցիալական կապերը գտնվում են Ռուսաստանի Դաշնությունում, վերջիններս շուրջ երկու տարի է ինչ իրենց կենսակերպը վարում են այդտեղ: Նման

պայմաններում երեխաների՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված լինելը չի կարող էական նշանակություն ունենալ և գործի առավել արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով Կոնվենցիայի 32-րդ հոդվածի ուժով սույն քաղաքացիական գործը ենթակա չէ քննության Հայաստանի Հանրապետության դատարանում քաղաքացիական դատավարության կարգով՝ միաժամանակ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ ՌԴ-ում մշտապես բնակվելու պարագայում առկա է խնամակալության հանձնաժողովին ներգրավելու իրավական կարգավորումների իրականացման անհնարինություն:

Միաժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Վճռաբեկ դատարանի այն պատճառաբանությունը, որ «Մինսկի Կոնվենցիայից և Արձանագրությունից հետո՝ 07.10.2022 թվականին ընդունված՝ «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի կոնվենցիայի (այսուհետ՝ Քիշնևի կոնվենցիա, ՀՀ համար ուժի մեջ է մտել 19.02.2005 թվականին) 35-րդ հոդվածը, որը նույնաբովանդակ է Մինսկի կոնվենցիայի 32-րդ հոդվածի՝ Արձանագրությամբ փոփոխված խմբագրությանը, և երեխաների ու ծնողների իրավահարաբերություններում (բացառությամբ ալիմենտային պարտավորությունների) ծագած վեճերը լուծելիս կիրառելի օրենսդրությունն ու իրավասու դատարանը որոշելու կանոն է սահմանել հաջորդաբար ծնողների և երեխաների մշտական համատեղ բնակության վայրի և երեխայի քաղաքացիության վերաբերյալ ելակետային տվյալների պարզման անհրաժեշտությունը», անհիմն է, քանի որ վերոնշյալ փոփոխությունը կատարվել է 07.10.2022 թվականին, իսկ սույն քաղաքացիական գործով Դատարանը գործի վարույթը՝ քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով, կարճել է 17.12.2021 թվականին, հետևաբար սույն քաղաքացիական գործը ենթակա չէ քննության Հայաստանի Հանրապետության դատարանում:

Ամփոփելով նշվածը՝ հարկ է արձանագրել, որ ստորադաս դատարանները իրականացրել են գործի բազմակողմանի քննություն, ուստի սույն գործով առկա չէ գործի նոր քննության անհրաժեշտություն: Հետևաբար գտնում եմ, որ վճռաբեկ բողոքը հիմնավորված չէ և ենթակա է մերժման, իսկ Վերաքննիչ դատարանի՝ 11.07.2022 թվականի որոշումը պետք է թողնել անփոփոխ:

ԴԱՏԱՎՈՐ՝ Էդ. Սեդրակյան

# 17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ/4142/02/20  
2023թ.  
ԱՐԴ/4142/02/20  
Ս. Թորոսյան  
Ն. Մարգարյան  
Լ. Գրիգորյան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով

*Նախագահող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*զեկուցող* Է. ՍԵՂՐԱՎԿՅԱՆ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2023 թվականի մայիսի 30-ին գրավոր ընթացակարգով քննելով «Հայկական Ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) բերած վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.04.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Կարեն Մանգասարյանի ընդդեմ Ընկերության՝ ամենամյա արձակուրդը տեղափոխելու և աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին հրամաններն անվավեր ճանաչելու, աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հատուցում վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Սույն գործով դիմելով դատարան՝ Կարեն Մանգասարյանը պահանջել է անվավեր ճանաչել Ընկերության 16.11.2020 թվականի ամենամյա արձակուրդը տեղափոխելու վերաբերյալ թիվ 671-Ա հրամանը:

Թիվ ԱՐԴ/0252/02/21 քաղաքացիական գործի շրջանակներում դիմելով դատարան՝ Կարեն Մանգասարյանը պահանջել է անվավեր ճանաչել աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին Ընկերության 08.01.2021 թվականի թիվ 2/Ա հրամանը, իրեն վերականգնել 20.11.2006 թվականի թիվ 15-6 աշխատանքային



պայմանագրով աշխատանքում և Ընկերությանը պարտավորեցնել իրեն վճարել հատուցում՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Ֆիդանյան) 30.12.2020 թվականի որոշմամբ սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ, իսկ 01.02.2021 թվականի որոշմամբ թիվ ԱՐԴ/0252/02/21 քաղաքացիական գործը միացվել է սույն գործին:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Ֆիդանյան) (այսուհետ՝ Դատարան) 27.12.2021 թվականի վճռով Կարեն Մանգասարյանի հայցն ընդդեմ Ընկերության՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին 08.01.2021 թվականի թիվ 2/Ա հրամանն անվավեր ճանաչելու, հայցվորին 20.11.2006 թվականի թիվ 15-6 աշխատանքային պայմանագրով աշխատանքի վերականգնելու և հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար հատուցում վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասով, բավարարվել է, Կարեն Մանգասարյանը վերականգնվել է նախկին աշխատանքում՝ Ընկերության գնումների բաժնի առաջատար ճարտարագետի պաշտոնում, և բռնագանձվել է հարկադիր պարապորդի գումար՝ սկսած 08.01.2021 թվականից մինչև վերջինիս փաստացի աշխատանքի վերականգնելու օրը՝ միջին աշխատավարձի չափով: Ընկերության՝ ամենամյա արձակուրդը տեղափոխելու վերաբերյալ 16.11.2020 թվականի թիվ 671-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.04.2022 թվականի որոշմամբ Կարեն Մանգասարյանի և Ընկերության բերած վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 27.12.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 03.08.2022 թվականի որոշմամբ Կարեն Մանգասարյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Տիգրան Վարդազարյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խստիվ է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետը Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ, 66-րդ և 191-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 14.07.2011 թվականի ««Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1024-Ն և 02.03.2006 թվականի «Բժշկատնօրոշման փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշումները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես և հերկյալ փաստարկներով:*

Վերաքննիչ դատարանը, Դատարանի ոչ իրավաչափ դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելով, ինչպես նաև անտեսելով այն փաստը, որ բողոքաբերը Կարեն Մանգասարյանի հաշմանդամության մասին տեղեկացել է միայն 29.03.2021 թվականին՝ հայցի հիմքի փոփոխությունը և լրացումը թույլատրելու

վերաբերյալ միջնորդությունից, փորձել է տեղեկատվություն ստանալ ՀՀ պետական մարմիններից, իսկ մերժվելուց հետո դիմել է Դատարան ապացույց պահանջելու միջնորդությամբ, ինչը ևս մերժվել է և առանց որևէ հիմնավոր պատճառաբանության և վերլուծության բողոքաբերի փաստարկներն ու դրանց հիմնավորումները գործի ելքի համար ոչ էական գնահատելով և նյութական իրավունքի նորմի կիրառելիության հանգամանքին անդրադարձ չկատարելով՝ թույլ է տվել արդար և անկողմնակալ լինելու սկզբունքի խախտում:

Սույն գործի նյութերում առկա չէ որևէ ապացույց, որ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինը կայացրել է վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում, ինչից էլ հետևում է, որ Դատարանն իրավասու չէր սեփական նախաձեռնությամբ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի փոխարեն կասեցնել վարչական վարույթը կամ ենթադրել, որ այդ վարույթը եղել է կասեցված: Բացի այդ, վարչական վարույթի կասեցումը պարտադիր պահանջ չէ և այն կարող է կասեցվել, եթե առկա լինի ՀՀ կառավարության 02.03.2006 թվականի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշման 26-րդ կետի «ա» և «գ» ենթակետերի պահանջներից որևէ մեկը, այնինչ սույն գործով անհասկանալի է, թե ո՞ր կետով է վարույթը ենթադրաբար կասեցված եղել, եթե նման ապացույց գործում առկա չէ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը 25.08.2020 թվականից մինչև 25.10.2020 թվականը վարչական վարույթը կասեցված է համարել այն հիմքով, որ Կարեն Մանգասարյանը հետագայում ճանաչվել է հաշմանդամ, մինչդեռ այդ պատճառաբանությունն անհիմն է, քանի որ Կարեն Մանգասարյանը հաշմանդամության կարգ ստանալու համար դիմել է միայն 17.11.2020 թվականին, իսկ անաշխատունակության թերթիկի փակման հիմքով աշխատանքի է ներկայացել 15.11.2020 թվականին: Այսինքն՝ հաշմանդամության կարգ ստանալու համար հայցվորը դիմել է այն ժամանակ, երբ արդեն իսկ ծագել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված հիմքը: Ընդ որում, բժշկական փորձաքննական թիվ 517562 որոշումը տրվել է 05.02.2021 թվականին՝ աշխատանքային պայմանագիրը լուծելուց գրեթե մեկ ամիս անց և որևէ իրավական հետևանք Ընկերության համար չէր կարող առաջացնել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 22.04.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) սույն գործով դիմելով դատարան՝ Կարեն Մանգասարյանը պահանջել է անվավեր ճանաչել ամենամյա Ընկերության 16.11.2020 թվականի արձակուրդը տեղափոխելու վերաբերյալ թիվ 671-Ա հրամանը:

Թիվ ԱԲԴ/0252/02/21 քաղաքացիական գործի շրջանակներում դիմելով դատարան՝ Կարեն Մանգասարյանը պահանջել է անվավեր ճանաչել աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին Ընկերության 08.01.2021 թվականի թիվ 2/Ա հրամանը, իրեն վերականգնել 20.11.2006 թվականի թիվ 15-6 աշխատանքային պայմանագրով աշխատանքում և Ընկերությանը պարտավորեցնել իրեն վճարել հատուցում՝ հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար:

Դատարանի 30.12.2020 թվականի որոշմամբ սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ, իսկ 01.02.2021 թվականի որոշմամբ թիվ ԱԲԴ/0252/02/21 քաղաքացիական գործը միացվել է սույն գործին **(հատոր 1-ին, գ.թ. 1-4, 34, հատոր 4, գ.թ. 3-8)**։

2) Ընկերության և Կարեն Մանգասարյանի միջև 20.11.2006 թվականին անորոշ ժամկետով կնքված թիվ 15-6 աշխատանքային պայմանագրով Կարեն Մանգասարյանն Ընկերությունում աշխատանքի է ընդունվել որպես երկրորդ կարգի ճարտարագետ **(հատոր 1-ին, գ. թ. 6, 7)**։

3) Ընկերության 08.01.2021 թվականի թիվ 2/Ա հրամանով Կարեն Մանգասարյանի հետ 20.11.2006 թվականին կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է ժամանակավոր անաշխատունակության պատճառով 127 աշխատանքային օր՝ 19.05.2020 թվականից մինչև 14.11.2020 թվականը, անընդմեջ բացակայելու և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով **(հատոր 4-րդ, գ. թ. 16)**։

4) 25.06.2021 թվականին կայացած նախնական դատական նիստում գործին մասնակցող անձանց հետ Դատարանը քննարկել և սահմանել է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի հետևյալ շրջանակը։

ա) Ընկերության և Կարեն Մանգասարյանի միջև 20.11.2006 թվականին անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր կնքված լինելը,

բ) Ընկերության 16.11.2020 թվականի թիվ 671Ա հրամանի հիմքում ընկած փաստերի իրավաչափ լինելը,

գ) Ընկերության 16.11.2020 թվականի թիվ 671Ա հրամանի ընդունման օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելը,

դ) 15.04.2020-14.05.2020 թվականներին Կարեն Մանգասարյանի ամենամյա արձակուրդում գտնվելը,

ե) 11.05.2020-14.05.2020 թվականներին Կարեն Մանգասարյանի անաշխատունակության մեջ գտնվելը,

զ) 15.05-2020-16.06.2020 թվականներին Կարեն Մանգասարյանի ամենամյա արձակուրդում գտնվելը,

է) 19.05.2020-14.11.2020 թվականներին Կարեն Մանգասարյանի անաշխատունակության մեջ գտնվելը,

ը) Կարեն Մանգասարյանի ամենամյա արձակուրդի հրամանը երկարաձգված լինելը, դրա օրը (կամ երկարացման օրը)

թ) Ընկերության 08.01.2021 թվականի թիվ 2/Ա հրամանի հիմքում ընկած փաստերի իրավաչափ լինելը,

ժ) Ընկերության 08.01.2021 թվականի թիվ 2/Ա հրամանի ընդունման օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելը,

ի) աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով) բացակայած լինելը,

յ) Կարեն Մանգասարյանի COVID19-ով վարակված լինելը, ինքնամեկուսացման մեջ գտնվելը **(հատոր 2-րդ, գ. թ. 87-89, 93, 94)**։

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանը սույն գործով կիրառել է ՀՀ կառավարության 14.07.2011 թվականի ««Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1024-Ն և 02.03.2006 թվականի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշումները, որոնք չպետք է կիրառել՝ արդյունքում թույլ տալով այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հաստատվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ աշխարհորդի երկարամյա անաշխատունակության հետևանքով աշխատանքային պայմանագիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված հիմքով լուծելու վերաբերյալ վեճերով ապացուցման առարկան որոշելու առանձնահատկություններին:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում գործին մասնակցող անձանց հետ քննարկում է **գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, այդ թվում՝ ապացուցման կարիք չունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակը**, գործին մասնակցող անձանց հետ քննարկում է ապացուցման պարտականությունը նրանց միջև բաշխելու հարցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը:

Նախկինում կայացրած որոշումներով անդրադառնալով քաղաքացիական գործերով ապացուցման առարկային՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան ձևավորվում է ոչ միայն հայցի կամ դրա դեմ բերվող առարկությունների հիմքում ընկած փաստերից, այլև վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմում մատնանշված փաստերից (*յրեն, Սելյան Քոչարյանն ընդդեմ Օսիկ Մալաքյանի, Շուշիկ Ալեքսանյանի թիվ ԵԱԲԳ/0232/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը*):

ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ապացուցման առարկան կազմում են այն **նյութափրակական և դատափրակական բնույթի փաստերը**, որոնք գործի հարուցման, քննության և լուծման համար ունեն նշանակություն: Դատավարական բնույթի փաստերը, որպես կանոն, գործի վարույթը կասեցնելու,

կարճելու կամ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու հիմք են, որոնք ենթակա են ապացուցման: Ընդ որում, մրցակցային դատավարության պայմաններում ապացուցման առարկայի մեջ մտնող ինչպես նյութաիրավական, այնպես էլ դատավարական բնույթի փաստերը հիմնավորելու պարտականությունը դրված է գործին մասնակցող անձանց վրա (*տե՛ս*, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Կալյա» ՍՊԸ-ի, Սիլվա Համբարձումյանի թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը):

ՀՀ Սահմանադրական դատարանը 08.12.2009 թվականի թիվ ՄԴՈ-845 որոշմամբ անդրադառնալով 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ նշված հոդվածով ըստ էության նախատեսվում է ապացուցման առարկայի շրջանակներն ուրվագծելու՝ դատարանի իրավասությունը: Ապացուցման առարկան այն իրավաբանական (հիմնականում նյութաիրավական բնույթի) փաստերի համակցությունն է, որոնք էական նշանակություն ունեն գործն ըստ էության լուծելու համար, և ենթակա են պարզելու դատական քննության ընթացքում: Յուրաքանչյուր գործով ապացուցման առարկայի մեջ մտնող փաստերի կազմը տարբեր է, այն կախված է կողմերի ներկայացրած պահանջներից ու առարկություններից:

ՀՀ Սահմանադրական դատարանը փաստել է, որ ապացուցման առարկայի մեջ մտնող նյութաիրավական փաստերը հանգամանքներ են, որոնց առկայության կամ բացակայության հետ նյութական իրավունքի նորմերը կապում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագումը, փոփոխումը, դադարումը, կամ որոնք արգելակում են իրավունքների և պարտականությունների առաջացմանը: Գործով այս փաստերը պարզելն անհրաժեշտ է տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմի ճիշտ կիրառման և գործն ըստ էության ճիշտ լուծելու համար: Դա էլ հաշվի առնելով որոշվում է **ապացուցման առարկան, որն ապացուցողական գործունեության առաջին և ամենակարևոր դատավարական գործողությունն է:** Դատարանի վճիռը չի բխի գործի փաստական հանգամանքներից, հետևաբար՝ օրինական ու հիմնավորված լինել չի կարող, եթե գործին մասնակցող անձինք և դատարանը ճիշտ չորոշեն ապացուցման առարկան կազմող փաստական հանգամանքների շրջանակը և լրիվ չպարզեն դրանք: Փաստական հանգամանքների այդ ամբողջությունը, որն անհրաժեշտ է նաև այլ իրավական հարցեր լուծելու համար, յուրաքանչյուր գործով ենթակա է պարտադիր պարզաբանման: Գործով ապացուցման ենթակա փաստական հանգամանքների այդ ամբողջությունը կազմում է ապացուցման առարկայի հիմնական բովանդակությունը: Բայց դա դեռ բավարար չէ ամեն մի գործով քննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու համար: Ապացուցման առարկան ավելի լայն հասկացություն է, դրա մեջ մտնում են նաև այն փաստական հանգամանքները, որոնց պարզաբանումն անհրաժեշտ է գործին ճիշտ լուծում տալու համար:

ՀՀ Սահմանադրական դատարանը հավելել է, որ յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան կազմող փաստական հանգամանքների ճիշտ սահմանումն անհրաժեշտ պայման է դատաքննության սահմանները որոշելու համար: Ապացուցման առարկայի շրջանակների անհիմն ընդարձակումը կարող է գործը ծանրաբեռնել ավելորդ նյութերով, որը պատճառ կհանդիսանա գործին չվերաբերող նյութերի կուտակմանը, դատավարության ձգձգմանը: Մյուս կողմից՝

ապացուցման առարկայի շրջանակների անհիմն սահմանափակումը կարող է պատճառ դառնալ գործի միակողմանի, ոչ լրիվ և ոչ օբյեկտիվ քննության համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, այդ թվում՝ ապացուցման կարիք չունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելը **գործը դատաքննության նախապատրաստելու փուլի կենտրոնական խնդիրներից մեկն է** (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մաս, 7-րդ կետ, 169-րդ հոդված), որի պատշաճ լուծումը առանցքային նշանակություն ունի գործի քննությունը ճիշտ կազմակերպելու, վարույթի ընթացքը, ուղղվածությունը և բովանդակությունն ուրվագծելու, ինչպես նաև օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ կայացնելու համար: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակը որոշելիս դատարանը ղեկավարվում է ոչ միայն կողմերի ներկայացրած պահանջներով և նրանց վկայակոչած հանգամանքներով, այլ նաև նյութական իրավունքի նորմի (նորմերի) բովանդակությամբ և անհրաժեշտության դեպքում կարող է ապացուցման առարկայի մեջ ներառել այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք կողմերը չեն վկայակոչել, բայց դրանք նյութական իրավունքի նորմի կիրառման տեսանկյունից գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշմամբ արձանագրել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու ինստիտուտը նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը: Այդ նպատակով օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ սահմանում է ոչ միայն կողմերի, այլև դատարանի գործողությունները: ՀՀ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մրցակցության սկզբունքի հիման վրա: Մակայն գործը դատաքննության նախապատրաստելու վերաբերյալ նորմերը սահմանում են մրցակցային դատավարությունում դատարանի պարտականությունները: Միաժամանակ դատարանը, ղեկավարելով գործը դատաքննության նախապատրաստելու գործընթացը, պահպանում է անկախություն, օբյեկտիվություն և անաչառություն, իսկ գործը դատաքննության նախապատրաստելու ժամանակ դատարանի գործողություններն ուղղված են ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանորմերի կիրառմանը (յուն'ս, *Երևանի քաղաքապետարանի «Երևանի Էլեկտրաարանապորտ» ՓԲԸ-ն ընդդեմ Դավիթ Մարտիրոսյանի ու ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության Էրեբունի անձնագրային բաժնի թիվ ԵԷՆ/1637/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նպատակը քաղաքացիական գործի արդյունավետ քննության ապահովումն է: Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նշված նպատակի իրականացումը պայմանավորված է դատավարության այս փուլի խնդիրների ճիշտ իրականացմամբ: ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ քաղաքացիադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հետևյալ հիմնական խնդիրները՝

- վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելը,

- դատավարության մասնակիցների կազմը ճշտելը և նրանց մասնակցությունն ապահովելը,

- **գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելը,**

- ապացույցների բավարար համակցության ձևավորումը (ապացույցների կենտրոնացումը) ապահովելը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործը դատաքնության նախապատրաստելու փուլի առանցքային տարրը նախնական դատական նիստն է. այն գործը դատաքնության նախապատրաստելու այնպիսի իրավական կառուցակարգ է, որն ապահովում է դատավարության քննարկվող փուլի հիմնական խնդիրների լուծումը, գործը դատաքնության նախապատրաստելուն ուղղված գործողությունների զգալի մասի իրականացումը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդիրը նախնական դատական նիստում իրականացվող գործողությունների շարքում նախատեսել է նաև ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելու և ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան կողմերի միջև ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական գործողությունները: Դատարանի կողմից կատարվող նշված գործողություններն ուղղված են գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելու և մինչև դատաքնությունը բոլոր հնարավոր ապացույցները կենտրոնացնելու՝ գործը դատաքնության նախապատրաստելու փուլի խնդիրների լուծմանը (*յրե՛ս, «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ն ընդդեմ «ԱՐՄԻՆԿՈՒ» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/0930/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատել է, որ ապացուցման առարկան որոշելիս դատարանն ուրվագծում է այն փաստական հանգամանքների շրջանակը, որոնք գործն ըստ էության լուծելու համար ունեն էական նշանակություն, ինչպես նաև թույլատրելիության և վերաբերելիության կանոններից ելնելով կանխորոշում է դատաքնության սահմանները՝ բացառելով գործի քննության ընթացքում ավելորդ հանգամանքներ և ապացույցներ հետազոտելու անհրաժեշտությունը: Այսինքն՝ գործը դատաքնության նախապատրաստելիս օրենքով սահմանված որոշակի կանոնների պահպանմամբ գործին մասնակցող անձանց միջև ապացուցման պարտականությունը բաշխելը, մինևույն ժամանակ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման համաձայն գործն ըստ էության լուծելը պետք է դիտարկել դատարանի կարևորագույն խնդիրներից մեկը: Հետևաբար՝ դատարանը, նախնական դատական նիստում ապացուցում պահանջող փաստերի շրջանակը կողմերի հետ քննարկելիս և ապացուցման բեռը բաշխելիս, պարտավոր է քննության ենթակա վեճի լուծումը պայմանավորել ապացուցման պարտականության բաշխման կանոններին համապատասխան կայացված ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ (*յրե՛ս, Ասյա Պողոսյանն ընդդեմ Գայանե Գայարյանի, «Հայրուսագազարդ» ՓԲԸ-ի (իրավահաջորդ՝ «Գազարոն Արմենիա» ՓԲԸ), երրորդ անձինք Երևանի քաղաքացիատրանսպորտի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ԵԱԲԳ/1539/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.04.2020 թվականի որոշումը*):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է՝ գործատուի նախաձեռնությամբ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ աշխատողի երկարատև անաշխատունակության հետևանքով (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր, եթե օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով):

Նշված նորմերի բովանդակությունից հետևում է, որ գործատուն իրավունք ունի իր նախաձեռնությամբ լուծելու աշխատողի հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, եթե ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատողն աշխատանքի չի ներկայացել.

- ավելի քան 120 օր անընդմեջ կամ,
- վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շարադրված պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում գործատուին վերապահելով իր նախաձեռնությամբ աշխատողի հետ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավունք՝ օրենսդիրն ընդհանուր այդ կանոնից նախատեսել է բացառություն: Մասնավորապես, օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով կարող է նախատեսված լինել որոշ հիվանդությունների դեպքում աշխատատեղը և պաշտոնը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում նշված ժամկետներից ավելի երկար ժամանակով պահպանելու պահանջ: Ժամանակավոր անաշխատունակության դեպքում աշխատանքից ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր բացակայելու ընդհանուր կանոնի կիրառմամբ աշխատանքային պայմանագիրը գործատուն չի կարող լուծել, եթե անաշխատունակության հիմք հանդիսացած հիվանդության դեպքում որևէ **օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է** աշխատատեղը և պաշտոնը 120 կամ 140 օրը գերազանցող ժամկետով պահպանելու պահանջ:

Շարադրվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կիրառումից *բացառություն կազմող միակ հիմքը* նախատեսված է նույն հոդվածով, և դրա կիրառումը որևէ այլ հիմքով բացառելու հնարավորություն սահմանված չէ: Ուստի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված և ընդհանուր կանոնից բացառություն համարվող հիմքն առկա չլինելու պայմաններում գործատուն կարող է նշված հիմքով լուծել աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Ինչպես արդեն նշվել է, գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու և օրինական, պատճառաբանված ու հիմնավորված դատական ակտ կայացնելու կարևորագույն նախադրյալներից է նախնական դատական նիստում գործին մասնակցող անձանց հետ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը քննարկելու, ապացուցման առարկայի շրջանակն ուրվագծելու դատարանի գործողությունը: Աշխատանքային պայմանագիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով լուծելու իրավաչափության հարց քննարկելիս դատարանն ապացուցման առարկայի մեջ պետք է ներառի ինչպես հայցի կամ դրա դեմ բերված առարկությունների



հիմքում ընկած, այնպես էլ նշված նյութափրավական նորմի բովանդակությունը կազմող և դրա կիրառումը պայմանավորող փաստերը: Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում ապացուցման առարկայի մեջ մտնում է նաև այն փաստը պարզելը, թե արդյո՞ք որևէ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված է աշխատողի ժամանակավոր անաշխատունակության հիմք հանդիսացած հիվանդության դեպքում իր աշխատատեղը և պաշտոնը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված ժամանակահատվածը գերազանցող ժամկետով պահպանելու պահանջ, թե ոչ: Այսինքն՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի ճիշտ կիրառելիությունն ապահովելու նպատակով դատարանը քննարկման առարկա պետք է դարձնի այն հարցը, թե գործով կիրառելի է այդ նորմով սահմանված ընդհանուր կանոնը, թե՞ որևէ այլ օրենք կամ նորմատիվ իրավական ակտ սահմանում է աշխատատեղը և պաշտոնը 120 կամ 140 օրը գերազանցող ժամկետով պահպանելու պահանջ, այսինքն՝ առկա՞ է բացառություն կազմող հիմքը:

Մույն գործով Կարեն Մանգասարյանը խնդրել է անվավեր ճանաչել Ընկերության 08.01.2021 թվականի թիվ 2/Ա հրամանը, որով իր հետ 20.11.2006 թվականին անորոշ ժամկետով կնքված թիվ 15-6 աշխատանքային պայմանագիրը լուծվել է ժամանակավոր անաշխատունակության պատճառով 127 աշխատանքային օր՝ 19.05.2020 թվականից մինչև 14.11.2020 թվականը, անընդմեջ բացակայելու և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով:

**Դատարանը** 27.12.2021 թվականի վճռով աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին 08.01.2021 թվականի թիվ 2/Ա հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապորդի ամբողջ ժամանակահատվածի համար հատուցում վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասով հայցը բավարարել է՝ ՀՀ կառավարության 14.07.2011 թվականի ««Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրառումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1024-Ն և 02.03.2006 թվականի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշումների վկայակոչմանն ուղեկցող այն պատճառաբանությամբ, որ «(...) Կարեն Մանգասարյանը 19.05.2020-14.11.2020թ.թ. գրնայել է ժամանակավոր անաշխատունակության մեջ: Վերջինիս անաշխատունակությունը չի վերականգնվել և նրան փրվել է ուղեգիր բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու համար, որի արդյունքում բժշկասոցիալական հանձնաժողովը «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.03.2006թ. թիվ 276-Ն որոշման 13-րդ հոդվածի հիմքով 25.08.2020թ. թույլատրել է փորձաքննություն անցած անձ Կարեն Մանգասարյանի անաշխատունակության թերթիկի ժամկետը երկարաձգելու, ինչը ենթադրում է, որ սահմանված կարգով թույլատրվել է անաշխատունակության օրերի երկարաձգումը: Նույն որոշման 19-րդ կետի հիմքով հարուցված վարչական վարույթը կասեցվում է, որի համար 26 հոդվածի համաձայն սահմանված է 60 օր ժամկետ: Այսինքն սկսած 25.08.2020թ. մինչև 25.10.2020թ. Կարեն Մանգասարյանի անաշխատունակությունը կասեցվել է 60 օր ժամկետով և այդքան օրը անաշխատունակության օրերի մեջ բնականաբար չպետք է հաշվարկվի, քանի որ կասեցում նշանակում է որևէ քանի ընթացքի կատարումը ժամանակավորապես դադարեցնել: Պատահական չէ, որ օրենսդիրը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում ժամանակավոր անաշխատունակության անընդմեջ օրերի քանակը սահմանել է 120 օր, քանի որ նշված նորմի կիրառման համար ընդունվել են «Բժշկասոցիալական

փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.03.2006թ. թիվ 276-Ն, «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին 14.07.2011թ. թիվ 1024-Ն որոշումները և դրանք միմյանցից անջար չեն կարող կիրառվել: Գործարուն ունենալով Կարեն Մանգասարյանի անաշխատունակության թերթիկները սկսած 19.05.2020թ. մինչև 25.08.2020թ., 26.10.2020թ. մինչև 15.11.2020թ. պետք է հաշվարկեր անընդմեջ անաշխատունակ օրերի քանակը և դրանց հանրագումարը 120 օրացուցային օրը գերազանցելու դեպքում կարող էր վերջինիս հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծել հիմքում դնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ ավելի քան 120 օր անընդմեջ անաշխատունակության մեջ գրավելու հիմքով աշխատանքի չներկայանալը: Սույն դեպքում 19.05.2020թ. մինչև 24.08.2020թ. ներառյալ, 25.08.2020թ. և 25.10.2020թ. կասեցված օրեր, 26.10.2020թ. մինչև 14.11.2020թ.՝ ներառյալ անընդմեջ անաշխատունակության օրերի քանակը կազմում է 120 օր, այսինքն անաշխատունակության օրերը չի գերազանցում 120 օրը, հետևաբար վիճարկվող անհատական իրավական ակտում առկա չէ իրավական հիմքը ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը (...):»:

**Վերաքննիչ դատարանը** Ընկերության վերաքննիչ բողոքը մերժել է այն հիմնավորմամբ, որ «(...) բժշկասոցիալական փորձաքննական թիվ 1517562 որոշումից հետևում է, որ Կարեն Մանգասարյանի նկատմամբ կատարվել է հաջորդ բժշկասոցիալական փորձաքննությունը, որի կատարման սկիզբը եղել է 17.11.2020թ., ավարտը 05.02.2021թ.: Բժշկասոցիալական փորձաքննական թիվ 1517562 որոշմամբ Կարեն Մանգասարյանը ճանաչվել է հաշմանդամ: Այսինքն ակնհայտ է, որ ԲՄՓձ-ի կողմից անաշխատունակության թերթիկի երկարաձգումը 25.08.2020թ. թույլատրելուց հետո չի ավարտվել Կարեն Մանգասարյանի հաշմանդամության կարգը որոշելու գործընթացը, այդ պարճատու, հաշվի առնելով ՀՀ կառավարության վերը նշված որոշումներով սահմանված ժամկետները, Դատարանն իրավաչափորեն հանգել է հետևության, որ 25.08.2020թ. մինչև 25.10.2020թ. վարչական վարույթը եղել է կասեցված:

Ավելին վարչական վարույթի կասեցված լինելու մասին է վկայում այն, որ ՀՀ կառավարության 02.03.2006թ. թիվ 276-Ն որոշման թիվ 1 հավելվածի 25-րդ կետով սահմանված է փորձաքննական որոշումն ընդունելու ժամկետը, այն է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի դիմումը մուրաքազրվելու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

Տվյալ դեպքում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի դիմումը մուրաքազրվել է ԲՄՓՁ-ին մինչև 25.08.2020թ. և այդ ժամանակից սկսած իրականացվել է վարչական վարույթ մինչև 05.02.2021թ., երբ ընդունվել է թիվ 1517562 որոշումը: ՀՀ կառավարության վերը նշված որոշումներով նահատարված ժամկետները համադրելով նշված փաստերի հետ ակնհայտ է դառնում, որ մինչև 25.08.2020թ. հարուցված և 05.02.2021թ. ավարտված վարչական վարույթի ընթացքում 25.08.2020թ. մինչև 25.10.2020թ. վարչական վարույթն եղել է կասեցված, հակասակ դեպքում հաշմանդամության կարգի վերաբերյալ որոշումը ՀՀ կառավարության վերը նշված որոշումներով սահմանված ժամկետների համաձայն կլինեք երկու ամսից ավելի շուր: Վերը նշվածով հերքվում է նաև պարասիանդի այն պնդումները, թե կասեցման որոշում առկա չէ և կասեցումը պարտադիր չէ, քանի որ անկախ այդ հանգամանքից, ՀՀ կառավարության նշված որոշումներով սահմանված ժամկետների և սույն գործի փաստերի համադրումից հետևում է, որ միայն կասեցված լինելու պայմաններում կարող էր վարչական վարույթի գործընթացն այդքան երկարաձգվել»:

Վերոշարադրյալ պատճառաբանությունների գնահատմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կիրառումը փաստացի բացառել են ՀՀ կառավարության 14.07.2011 թվականի ««Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1024-Ն և 02.03.2006 թվականի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշումների վկայակոչմամբ: Մասնավորապես, Դատարանը ՀՀ կառավարության նշված որոշումների կիրառմամբ գտել է, որ 25.08.2020 թվականից 25.10.2020 թվականն ընկած ժամանակահատվածում Կարեն Մանգասարյանի մասով հարուցված վարչական վարույթը 60 օր ժամկետով եղել է կասեցված, քանի որ նրա անաշխատունակության թերթիկի ժամկետը 25.08.2020 թվականին երկարաձգվել է, իսկ կասեցված այդ ժամանակահատվածը ենթակա չէ հաշվարկման ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված անաշխատունակության 120 օրերի մեջ, քանի որ *«կասեցում նշանակում է որևէ բանի ընթացքի կարարումը ժամանակավորապես դադարեցնել»*: Դատարանը գտել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը ՀՀ կառավարության նշված որոշումներից մեկուսի չի կարող կիրառվել, և եզրահանգել է, որ Կարեն Մանգասարյանի ժամանակավոր անաշխատունակությունը չի գերազանցել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված 120 օրը, հետևաբար նշված կետի կիրառման պայմանն առկա չի եղել:

Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել Ընկերության ներկայացրած վերաքննիչ բողոքի փաստարկները նույն՝ ՀՀ կառավարության 14.07.2011 թվականի ««Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1024-Ն և 02.03.2006 թվականի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշումների կիրառմամբ, և արձանագրել Դատարանի պատճառաբանությունների իրավաչափությունը:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարաններն անտեսել են, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կիրառման *միակ բացառություն կազմող հիմքը* որևէ օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով որոշակի հիվանդության առկայության դեպքում աշխատատեղը և պաշտոնը 120 կամ 140 օրը գերազանցող ժամկետով պահպանելու հնարավորության առկայությունն է: Դատարանները ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կիրառման հնարավորությունը պետք է բացառեն միայն այն դեպքում, եթե աշխատողի ժամանակավոր անաշխատունակության հիմք հանդիսացած հիվանդության մասով որևէ օրենք կամ այլ նորմատիվ իրավական ակտ սահմանում է նշված հոդվածով սահմանված ժամկետը գերազանցող ժամանակահատվածով աշխատատեղը և պաշտոնը պահպանելու պահանջ: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կիրառումից բացառություն որևէ այլ հիմքով, առավել ևս՝ ՀՀ կառավարության 14.07.2011 թվականի ««Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1024-Ն և 02.03.2006 թվականի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշումների կիրառմամբ անելու հնարավորություն օրենսդիրը չի սահմանել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ ստորադաս դատարանները կիրառել են վարչական վարույթը կասեցնելու՝ ՀՀ կառավարության 14.07.2011 թվականի ««Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1024-Ն և 02.03.2006 թվականի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշումներով սահմանված այն նորմերը, որոնք սույն գործով կիրառելի չեն: Նշվածը Դատարանի կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները, այսինքն՝ ապացուցման առարկան, սխալ որոշելու հետևանք է: Դատարանը քննարկման առարկա չի դարձրել և գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանք չի դիտարկել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ որպես նյութաիրավական նորմի, բովանդակությունը կազմող և դրա կիրառումը պայմանավորող փաստերը, ինչի հետևանքով քննարկման առարկա չի դարձվել հայցվորի մոտ այնպիսի հիվանդության առկայությունը, որն օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով իր աշխատատեղը կամ պաշտոնն ավելի երկար պահպանելու հիմք է: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն անտեսել է նշված հանգամանքներն ու կիրառելով նույն իրավական ակտերը (ՀՀ կառավարության որոշումները)՝ հանգել է Դատարանի պատճառաբանությունների իրավաչափության մասին սխալ հետևության:

Շարադրված պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում ՀՀ կառավարության 14.07.2011 թվականի ««Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1024-Ն և 02.03.2006 թվականի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշումները սխալմամբ կիրառելու հետևանքով արդարադատության բուն էությունը խաթարված լինելու վերաբերյալ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները:

Նկատի ունենալով, որ Դատարանը սխալ է որոշել ապացուցման առարկան, ինչի հետևանքով ստորադաս դատարաններում քննության առարկա չեն դարձվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կիրառման պայմանները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վերապահված լիազորությունը՝ բեկանել Վերաքննիչ դատարանի 22.04.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

##### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.04.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

# 18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր  
Դատավորներ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/39757/02/21  
ԵԴ/39757/02/21  
Կ. Համբարձումյան  
Հ. Ենոքյան  
Ա. Ոսկանյան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*գեկուցող* Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
Ս. ՄԵՂՐՅԱՆ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Է. ՍԵՂՈՎԿՅԱՆ

2023 թվականի հունիսի 30-ին գրավոր ընթացակարգով քննելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ ԵՊՀ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.10.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Գևորգ Էմին-Տերյանի ընդդեմ ԵՊՀ-ի՝ հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Գևորգ Էմին-Տերյանը պահանջել է անվավեր ճանաչել ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 07.09.2021 թվականի թիվ 165/80 հրամանը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Գաբրիելյան) (այսուհետ՝ Դատարան) 14.03.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ անվավեր է ճանաչվել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 07.09.2021թ. թիվ 165/80 հրամանը, պատասխանողից բռնագանձվել է 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, իսկ ՀՀ պետական բյուջե բռնագանձվել է 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.10.2022 թվականի որոշմամբ ԵՊՀ-ի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.03.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 15.12.2022 թվականի որոշմամբ ԵՊՀ-ի ներկայացրած վճռաբեկ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է ժամկետ՝ վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու ու վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել ԵՊՀ-ն (ներկայացուցիչ Էդգար Բաղենյան):  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 215-րդ և 223-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառարանել է հետևյալ փաստարկներով.*

Գործով ձեռքբերված ապացույցներով հիմնավորվել է, որ վիճարկվող հրամանը հայցվորի նկատմամբ արձակելու պահի դրությամբ վերջինս աշխատել է ԵՊՀ-ում՝ ԵՊՀ-ի հանրային կապերի ծառայության պետ, ԵՊՀ-ի մամուլի խոսնակի աշխատանքային պաշտոնում, անմիջական վերադասն է հանդիսացել ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանը, ում կողմից 26.08.2021 թվականին հայցվորին տրվել է կոնկրետ և հստակ աշխատանքային հանձնարարություն՝ մինչև 27.08.2021 թվականը ժամը 13.00-ն պատրաստել «Առավոտ» օրաթերթին ներկայացվելիք հերքման տեքստի նախագիծ՝ «Գևորգ Էմին-Տերյանի գրապարտությունները» վերնագրով, որտեղ հստակ նշված կլինի, որ «Առավոտ» օրաթերթում 24.08.2021 թվականին «Թուղթ առ մեծն աստվածաբան, վեհագույն հայագետ, Մեծ Հայքի կրթության ու գիտության վերջին հույս, ԵՊՀ վերջին պաշտպան Հովհաննես Հովհաննիսյան» վերնագրով տպագրված նյութն ամբողջությամբ սուտ է, կեղծիք և գրապարտություն, հերքման տեքստի նախագիծը նախապես էլեկտրոնային եղանակով համաձայնեցնել ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի հետ:

Գործի քննությամբ հիմնավորվել է, որ հայցվորի կողմից չի կատարվել աշխատանքային հանձնարարությունը, գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց այն մասին, որ աշխատանքային հանձնարարությունն ստանալուց հետո հայցվորի կողմից պատրաստվել է կոնկրետ «Գևորգ Էմին-Տերյանի գրապարտությունները» վերնագրով և ««Առավոտ» օրաթերթում 24.08.2021 թվական «Թուղթ առ մեծն աստվածաբան, վեհագույն հայագետ, Մեծ Հայքի կրթության ու գիտության վերջին հույս, ԵՊՀ վերջին պաշտպան Հովհաննես Հովհաննիսյան» վերնագրով տպագրված նյութն ամբողջությամբ սուտ է, կեղծիք և գրապարտություն» շարադրանքով տեքստի նախագիծ ու այն համաձայնեցվել է ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի հետ:

Աշխատանքային հանձնարարությունը տրվել է կոնկրետ այն սուբյեկտի կողմից, ով ունեցել է հայցվորին աշխատանքային հանձնարարություն տալու լիազորություն, հանձնարարությունը վերաբերել է կոնկրետ ԵՊՀ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկությունների հերքմանը, այլ ոչ թե մասնավոր անձի: Հայցվորի

կողմից աշխատանքային հանձնարարությունը չկատարելը հանդիսացել է աշխատանքային

կարգապահական կանոնների խախտում՝ անմիջական վերադասի կարգադրությունը չկատարելու առումով, ինչպես նաև՝ տվյալ պահին առաջացրել է ԵՊՀ-ի հեղինակությունը վտանգվելու ռիսկի առաջացման ողջամիտ ենթադրություն:

Ստորադաս դատարանների կողմից անտեսվել է, որ աշխատանքային հանձնարարությունը չկատարելու հանգամանքն ընդունվել է հայցվորի կողմից 31.08.2021 թվականին ներկայացված գրավոր բացատրությամբ՝ վկայակոչելով նաև չկատարման վերաբերյալ որոշակի պատճառներ:

Աշխատանքային հանձնարարությունը հայցվորի կողմից կատարված չլինելու փաստը հաստատվել է գործում առկա ապացույցներով, որոնք սխալ են գնահատվել կամ անտեսվել են ստորադաս դատարանների կողմից:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ գործում առկա չէ ապացույց՝ հերքման տեքստն ինչպես Գևորգ Էմին-Տերյանի կողմից ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին «Mullberry» էլեկտրոնային համակարգով ուղարկված լինելու, այնպես էլ «Առավոտ» օրաթերթում կամ այլ ԶԼՄ-ում հրատարակված լինելու վերաբերյալ, ապա նշված եզրահանգումն անհիմն է, չի բխում գործով ձեռք բերված ապացույցների համադրումից, քանի որ հիշյալ հանգամանքները նախ որևէ էական նշանակություն չեն կարող ունենալ սույն քաղաքացիական գործի լուծման համար, բացի այդ, գործի նյութերի, այդ թվում՝ հայցվորի կողմից ներկայացված փաստական տվյալների օբյեկտիվ ուսումնասիրությունից նշված փաստերն անվիճելի են դառնում: Բացի այդ, տվյալ պատճառաբանությունն արձանագրելով՝ Վերաքննիչ դատարանը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակներից, քանի որ այն չի բխում ոչ վճռի բովանդակությունից, ոչ էլ ներկայացված վերաքննիչ բողոքի ծավալից:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 25.10.2022 թվականի որոշումը և այն փոփոխել՝ որոշում կայացնել Դատարանի 14.03.2022 թվականի վճիռը բեկանելու ու փոփոխելու՝ Գևորգ Էմին-Տերյանի հայցն ամբողջությամբ մերժելու մասին:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) «Աշխատանքի ընդունելու մասին» 27.02.2018 թվականի թիվ 37/135 հրամանով Գևորգ Էմին-Տերյանն ընդունվել է աշխատանքի որպես ԵՊՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ – ԵՊՀ մամուլի խոսնակ:

Հրամանի 2.2.1. կետի համաձայն՝ աշխատողը պարտավոր է բարեխղճորեն և ժամանակին կատարել ՀՀ օրենսդրությամբ, պաշտոնի անձնագրով սահմանված աշխատանքային պարտականությունները, **2.2.2. կետի համաձայն՝ կատարել ԵՊՀ կառավարման մարմինների որոշումները**, 2.2.4. կետի համաձայն՝ անվերապահորեն պահպանել ԵՊՀ ներքին կարգապահական կանոնները, **2.2.8. կետի համաձայն՝ հոգ տանել ԵՊՀ հեղինակության բարձրացման մասին**, 2.2.10. կետի համաձայն՝ կատարել ՀՀ օրենսդրությամբ և ԵՊՀ ներքին իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ, 2.3.3. կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի նկատմամբ կիրառել խրախուսանքներ և կարգապահական տույժեր (**հատոր 1-ին, գ.թ. 101**).



2) «Այլ աշխատանքի տեղափոխելու մասին» 26.07.2019 թվականի թիվ 137/13 հրամանով ԵՊՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ, ԵՊՀ մամուլ խոսնակ Գևորգ Էմին-Տերյանը տեղափոխվել է այլ աշխատանքի և նշանակվել ԵՊՀ հանրային կապերի ծառայության պետ – ԵՊՀ մամուլի խոսնակ:

Հրամանի 2.2.1. կետի համաձայն՝ աշխատողը պարտավոր է բարեխղճորեն և ժամանակին կատարել ՀՀ օրենսդրությամբ, պաշտոնի անձնագրով սահմանված աշխատանքային պարտականությունները, **2.2.2. կետի համաձայն՝ կատարել ԵՊՀ կառավարման մարմինների որոշումները**, 2.2.3. կետի համաձայն՝ անվերապահորեն պահպանել ԵՊՀ ներքին կարգապահական կանոնները, **2.2.7. կետի համաձայն՝ հոգ տանել ԵՊՀ հեղինակության բարձրացման մասին**, 2.2.9. կետի համաձայն՝ **պատասխանատվություն կրել** օրենքների, ԵՊՀ կանոնադրության, պաշտոնի անձնագրի, իրավական այլ ակտերի պահանջները և **իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար**, 2.3.3. կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի նկատմամբ կիրառել խրախուսանքներ և կարգապահական տույժ (**հատոր 1-ին, գ.թ. 96**).

3) «Աշխատանքային հարաբերությունները երկարաձգելու մասին» 15.11.2019 թվականի թիվ 213/29 հրամանով ԵՊՀ հանրային կապերի ծառայության պետ – ԵՊՀ մամուլի խոսնակ Գևորգ Էմին-Տերյանի հետ 01.01.2020 թվականից աշխատանքային հարաբերությունները երկարաձգվել են անորոշ ժամկետով, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի մյուս դրույթները թողնվել են անփոփոխ (**հատոր 1-ին, գ.թ. 94**).

4) «Առավոտ» օրաթերթում 24.08.2021 թվականին Գևորգ Էմին-Տերյանի կողմից հրապարակվել է «Թուղթ առ մեծն աստվածաբան, վեհագույն հայագետ, Մեծ Հայքի կրթության ու գիտության վերջին հույս, **ԵՊՀ վերջին պաշտպան Հովհաննես Հովհաննիսյան**» վերտառությամբ հետևյալ հոդվածը.

«Հարգելի պարոն Հովհաննես Հովհաննիսյան, նախ ուզում եմ ասել, որ մեծագույն պատիվ է Ձեր ժամանակակիցը լինելը: Ձեզ պես հնուտ և խորագետ աստվածաբան աշխարհը չի տեսել արդեն մի քանի հարյուր տարի: Ամեն անգամ, երբ մեղիաներով ու հատկապես Հանրային հեռուստաընկերությամբ ես լսում եմ Ձեր խոսքը, իմ մարմինը հուզմունքից քրտնում է, որովհետև անհնար է պատկերացնել, որ նման մեծությունը կարող է ժամանակակից մեղիառեսուրսներով երևալ. ոնց որ հնարավոր լիներ տեսնել Լյուդերին, Կավլինին կամ վերջապես՝ Գոշին: Մենք ապրում ենք այնպիսի մանր ժամանակներում, երբ աննշան մարդիկ անընդհատ փորձում են ճղճիմ միջոցներով առաջ գնալ, երբ թայֆայականությունը միշտ ավելի բարձր է գնահատվում, քան հայրենիքի շահը, երբ գաճաճ գրագողները փորձում են գրոհել գիտության ու կրթության կաճառները, երբ բարեփոխիչների դիմակ հագած սրիկաները կործանում են հայրենիքը, երբ ի պաշտոնե արժեքների պաշտպանները մտածում են միայն փողի և շնության մասին: Մի խոսքով, պարոն Հովհաննիսյան, կարելի էր ասել, որ սա Ձեր ժամանակը չէ, բայց իրականում Դուք եք մեր մանր և աղետի ժամանակները բարձրացնողը: Կանցնի մի քիչ ժամանակ՝ մի հինգ հարյուր-հազար տարի, և մեր ժամանակից կմնա միայն Ձեր անունը՝ որպես մարդկության փրկության համար շողացող մի արեգակ: Եվ ես ուզում եմ ԵՊՀ բոլոր ներկա ու նախկին սերունդների անունից՝ Հրաչյա Աճառյանից մինչև Սերգեյ Համբարձումյան, Հակոբ Մանանդյանից մինչև վաղվա առաջինկուրսեցին, Ձեզ շնորհակալություն ասել, որ թողել եք աստվածաբանական Ձեր լրջագույն գործերը, դարերի համար մղվող բանավեճերը և համաձայնել եք զբաղեցնել Երևանի պետական համալսարանի

նեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնը: Ինչ խոսք, դա շատ փոքր ու նեղ աթոռ է Ձեզ պես գիգանտի համար, բայց Ձեր որոշումը հույս է ներշնչում, որ գուցե ԵՊՀ-ն էլ տանք Ձեր հետևից, բարձրացնենք 100-ամյա պայակիկին և հազարամյակների խորքից Ձեր անվան կողքին հիշվի նաև ԵՊՀ անունը, գուցե դառնա նաև այնպիսի ուխտատեղի, ինչպիսին Նարեկավանքն է, բայց ոչ հարևան պետության կազմում: Բայց քանի որ մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ բացարձակապես բոլոր մարդիկ ունեն որոշակի իրավունքներ (ինչպիսի անհեթեթություն), ես էլ ուզում եմ օգտվել այդ անհեթեթ իրավունքից և հրապարակային Ձեզ ուղղել մի քանի հարց: Իհարկե, կլինեն չար լեզուներ, որոնք կպնդեն, թե հարցեր տալու իրավունքից ես չարամտորեն օգտվում եմ՝ Ձեզ աստվածաբանական լրջագույն խնդիրներից և ԵՊՀ ներկայիս իրավիճակով հիանալուց կտրելու համար, բայց հավատացե՛ք. նախ՝ այս հարցերն ունեն շատ երկրային, նույնիսկ կենցաղային նպատակ. սերունդների համար ցրել որոշ բամբասանքներ և ամբողջացնել Ձեր վնաս կենսագրության քիչ լուսաբանված որոշ դրվագներ, ապա նաև՝ որպես աննշան և վատը տարածող մի մարդ՝ ես էլ եմ տենչում փառքի և Ձեզ նամակ գրելը, անկասկած, մի այնպիսի փաստ է, որի շնորհիվ իմ համեստ անունն էլ ինչ-որ կերպ կապրի դարեդար Ձեր անվան կողքին, ինչպես Լուիջի դել Ռիչիոյի անունն ապրում է Միքելանջելոյի նամականիում: Բայց անցնենք հարցերին: 1. ԵՊՀ որոշ չարամիտ խմբեր տարածում են, որ 2018 թվականի դեկտեմբերի 29-ին Դուք հանդիպել եք ԵՊՀ այն ժամանակվա նեկտոր Արամ Միմոնյանի հետ և առաջարկել եք, որ պարոն Միմոնյանը ևս օգնի նրան, որ Գևորգ Մուրադյանը դառնա ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ: Դրա դիմաց, ասում են, Դուք Ա. Միմոնյանին խոստացել եք, որ նա կպահպանի իր պաշտոնը մինչև նեկտորական ժամկետի ավարտը, այսինքն՝ 2020 թվականի մայիսը: Տարօրինակ զուգադիպությամբ նույն օրը ՊՎԾ պետ Դավիթ Սանասարյանը հայտարարեց ԵՊՀ-ում հայտնաբերված 800 միլիոն դրամի չափով չարաշահումների մասին, ինչին հաջորդեց Արամ Միմոնյանի ասուլիսը: Չարամիտ լեզուները, ամեն կերպ փորձելով նսեմացնել Ձեր քաջությունը, պնդում են, որ Դուք այդ օրը չափազանց վախեցած եք եղել և նույնիսկ մի նախկին ընկերոջ միջոցով փոխանցել եք պարոն Միմոնյանին, որ Դուք այդ հայտարարության հետ կապ չունեք: Հետո Գևորգ Մուրադյանը միաձայն ընտրվեց ԵՊՀ ՀԽ նախագահ, բայց Դուք, այդուհանդերձ, «զցեցիք» Արամ Միմոնյանին: Ասեք սերունդներին, որ սա լկտի սուտ է: 2. Ճիշտ են, արդյոք, կրթության ու գիտության համակարգի միջանցքներում ուրվականների պես համառ պտտվող այն լուրերը, թե իբր Ձեզ պես առաքինի գործիչը «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքը մշակելիս անընդհատ շփվել է ԳԱԱ ակադեմիկոսների հետ, նրանց որոշակի խոստումներ է տվել, բթացրել է տարեց մարդկանց զգոնությունը և վերջում փաստի առաջ է կանգնեցրել: 3. Հ1-ի եթերում խոսելով ընդհանրապես հոգաբարձու հասկացության մասին՝ շատ դիպուկ նկատեցիք, որ հոգաբարձուները պետք է լինեն այն մարդիկ, որոնք փող են բերում ԵՊՀ: Խնդրում եմ՝ մի կողմ դրեք Ձեզ այդքան գեղեցկացնող համեստությունը և հրապարակեք, թե որպես ԵՊՀ «գլխավոր հոգաբարձու» աշխատած ընթացքում ինչքա՞ն գումար եք Ձեր ձեռքով բերել և մուտք արել ԵՊՀ բանկային հաշվեհամարին: Եվ Ձեզնից բացի՝ մյուս հոգաբարձուները ֆինանսական ինչպիսի՞ հոսքեր են ապահովել համալսարանի համար: 4. Պարոն Հովհաննիսյան, հետաքրքիր է նաև Ձեր «հոգաբարձուական» գործողություններից ԵՊՀ-ն տուժե՞լ է, թե՞ ոչ: Օրինակ՝ քաղաքական պատվերները դատական վեճերի պատճառ դարձե՞լ են, թե՞ ոչ: 5. Հանրային

հեռուստարձկերության եթերում նշեցիք անձնական շահով առաջնորդվելու անթույլատրելիության մասին: Իրոք, միայն մեծերը կարող են նման պարզ ձևակերպմամբ խտացնել ասելիքը: Բայց բնական հարց է առաջանում. անձնական շահ չէ՞ արդյոք այն, որ հատուկ Ձեր «չափսերով» օրենք և կառավարության ու նախարարի որոշումներ են կարվում՝ ապականելով կրթության ու գիտության ոլորտը և բուհական համակարգը: **6.** Մամուլում անընդհատ հրապարակումներ են հայտնվում այն մասին, թե իբր Ձեզ պես մտքի զիգանտը իր դոկտորական ատենախոսության մեծ մասը հնոտրեն արտագրել է տարբեր աղբյուրներից: Դուք Ձեզ գրագող համարո՞ւմ եք: Եվ ինչպե՞ս կարող է գրագողության մեջ մեղադրվող գիտնականը համալսարանի ուսանողներից պահանջել, որ բարեխիղճ լինեն իրենց ուսանողական աշխատանքներում: **7. Ճի՞շտ են, արդյոք, այն լուրերը, որ Դուք եք մասամբ կազմակերպել ԵՊՀ-ի դեմ ուսանողական և ոչ միայն ուսանողական որոշ խմբերի ցույցերը, ապա գիտխորհրդի դահլիճի գրավումից և Արամ Միմնյանի հոսպիտալացումից հետո գիշերով թաքուն գնացել եք ԵՊՀ, որ ուսանողներին հրահանգեք՝ լքեն դահլիճը, քանի որ որոշ դեսպանատներից զանգել էին վարչապետի աշխատակազմ և դժգոհություն հայտնել:** **8.** Ինչպե՞ս ստացվեց, որ ԵՊՀ ռեկտորի ժ.պ.-ի նախորդ ընտրություններից հաղթեց ԵՊՀ պաշտոնապես ամենահարուստ մարդը, արդյո՞ք այդ փաստում կոռուպցիոն ռիսկեր չկային: Դուք՝ որպես այդ ընտրությունների ժամանակ «գլխավոր հոգաբարձու», պետք է, որ իմանաք այս հարցի պատասխանը: **9.** Ի՞նչ եք կարծում. արդյոք աշխարհի երեսին գոյություն ունի պատասխանատվություն, թե՞ դա մտացածին բառ է: Եթե գոյություն ունի, ապա ո՞վ է պատասխանատու նրանում, որ և Գևորգ Մուրադյանը, և Գեղամ Գևորգյանը և բազմաթիվ այլ նշանակումներ եղել են օրենքի և ԵՊՀ կանոնադրության կոպիտ խախտումներով: **10.** Երբևէ 50 դոլար կաշառք վերցրել էք ուսանողներից: **11.** Եվ կոռուպցիայի վերաբերյալ հաջորդ հարցը: Կոռուպցիա չէ՞ արդյոք այն, որ Ազգային ժողովի պատգամավորը, որն ավելի բարձր աշխատավարձ է ստանում մասնավոր բուհերից մեկից, քան իր պատգամավորական աշխատավարձն է, օրենք է գրում հանրային բուհերի մասին: Եվ արդյոք տարօրինակ չէ՞, որ այդ օրենքի հակասահմանադրական ճանաչվելուց հետո ոչ մի ձևի պատասխանատվություն չի ցանկանում կրել: **12.** Ճի՞շտ է, արդյոք, այն ստոր բամբասանքը, որ տարիներ առաջ Դուք վեց ամսով գործուղված եք եղել եվրոպական մի համալսարան, բայց չեք հասցրել ժամանակին վերադառնալ և Ձեր փոխարեն մի որոշ ժամանակ ուրիշ մարդիկ են ստորագրել ու դաս արել, ապա այդ փաստը բացահայտվել է, և Սերժ Սարգսյանի եղբայր, նույնպես աստվածաբան, նույնպես ԵՊՀ ռեկտորի հավակնություն ունեցած Լևոն Սարգսյանը, ում դոկտորականի թղթերի համար Դուք ԵՊՀ միջանցքներում վազվզում էիք, միջնորդել է և փրկել Ձեր աստվածաբանական կաշին: **13.** Հանրային հեռուստարձկերության եթերում Դուք այն տեսակետը հայտնեցիք, որ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամներ պետք է լինեն աշխարհում ճանաչում և փող ունեցող մարդիկ, օրինակ՝ Նուբար Աֆեյանը և Ռուբեն Վարդանյանը, և հանուն դրա պետք է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կազմից հանել ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին: Հետաքրքիր է, այդ մարդիկ միայն այդ պայմանով են համաձայն ընդգրկվել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կազմում, մի՞թե հնարավոր չէր նրանց համոզել, որ ԿԳՄՍ նախարարության քվտայով ևս հնարավոր է ԵՊՀ ՀԽ անդամ դառնալ, ինչպես դարձել էր Ռալֆ Յիրիկյանը, որը առեղծվածային պայմաններում փաստացի հրաժարվեց իր մանդատից: **14.** Եղել է, արդյոք, այնպիսի դեպք Ձեր կյանքում, որ խառնակչություն անեք և հետո պատասխանատվությունը թողնեք այնպիսի խեղճ մարդու

վրա, ինչպիսին նախկին նախարար Արայիկ Հարությունյանն էր: **15.** Արդյո՞ք այն հանգամանքը, որ բազմաթիվ հանրապետականներ և «Հայաստան» դաշինքի անդամներ թաքուն աջակցում են Ձեզ, չի նշանակում, որ **ինչ-որ այլ, ավելի մեծ ու չերևացող, գուցե հետախուզական ուժեր են աջակցում Ձեզ, որոնք բնավ հետաքրքրված չեն ԵՊՀ հզորացմամբ, 16.** Հանրային հեռուստաընկերության եթերում ասացիք, որ հնարավորինս շուտ պետք է ընտրվի ԵՊՀ ղեկավար: Ինչո՞ւ դա չէիք ասում ու անում այն ժամանակ, երբ Դուք ինքներդ էիք ղեկավար ընտրելու պատասխանատուն, մի՞թե այն պատճառով, որ թեկնածուների ցուցակում Դուք ինքներդ չկայիք: **17. Երեք տարի շարունակ հերքում էիք ԵՊՀ ղեկավար դառնալու Ձեր երազանքի մասին, թեև ես ինքս դա գիտեի ուսանողախուլիզանական խմբի կողմից ԵՊՀ գիտխորհրդի դահլիճը գրավելու օրը:** Բացի աստվածահաճո աղոթքներից՝ ուրիշ ի՞նչ կերպ եք փոխելու սուտ խոսողի Ձեր իմիջը: **18.** Եղե՛լ է, արդյոք, վերջին օրերին մի այնպիսի դեպք, որ մի շատ հայտնի ընդդիմադիր գործչի խնդրեք, որ միջնորդի և հանդիպում կազմակերպի ԵՊՀ ստորաբաժանումներից մեկի ղեկավարի՝ մի չնչին մարդու հետ, բարեկամության խոստումներով և աշխատանքից ազատելու սպանալիքով, բայց այդ չնչին մարդը Ձեր աստվածաբանական էությունը մերժել է, ինչպես դրանից մեկ տարի առաջ մերժել էր ղեկան դառնալու Ձեր մեկ այլ ակնարկ-առաջարկը: **19. Ե՛վ ԵՊՀ-ում Ձեզ ներկայացնելու ժամանակ, և Հանրային հեռուստաընկերության եթերում շեշտեցիք, որ ինչ-որ անտիպ ծրագիր ունեք, թե ինչ է պետք անել ԵՊՀ-ի հետ: Ի՞նչ եք կարծում. արդյո՞ք Նիկոլ Փաշինյանը Ձեզ ԵՊՀ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելիս հաշվի է առել Ձեր «ԵՊՀ կա ԵՊՀ» ծրագրի դրույթները, թե՛ նա դա արել է հոտնկայս իրեն ծափահարելու և նմանատիպ այլ գործողությունների համար: 20. Ե՛վ վերջին հարցս. պարոն Հովհաննիսյան, Ազգային ժողովի դահլիճում Նիկոլ Փաշինյանին հոտնկայս ծափ տվող պատգամավորը ինչպե՞ն է դիմավորելու նրան Երևանի պետական համալսարանում: Մի բան է ինձ շատ զարմացնում, ինչքան նախանձ և անհեռատես կարող են լինել մարդիկ: Մանավանդ այն մարդիկ, որոնք նստած են կառավարությունում: Երբ կառավարության հատուկ նիստում փոփոխվում էր ԵՊՀ կանոնադրությունը, որ համապատասխանեցվի Ձեզ, այսինքն՝ հանվում էր ղեկավարի դուրսբերման պրոցեդուրա լինելու պահանջը, մի՞թե հնարավոր չէր ևս երկու բառ ավելացնել. **ԵՊՀ ղեկավարը պետք է լինի աստվածաբան և նրա անունը պետք է լինի Հովհաննես:** Իրոք, անհատակ է մարդկային նախանձը: Ես գիտեմ, որ Ձեր մեծության տեր անձնավորությունը այս մեծարանքի նամակը կարդալուց հետո հապշտապ վերցնելու է փետուրով գրիչը և Լյութերի մտքի սրությամբ ու շատ կարճ մի գրությամբ ցիրուցան է անելու արծվի դեմ դուրս եկած ճնճողուկին: Արևմտյան քաղաքակրթությունը փոխած Վերածննդի դարաշրջանը պայմանականորեն սկսում են Պետրարկայի նամակներից մեկով, որտեղ պոետը նկարագրում է մեղմ հովիկը և դա համարում աստվածային: **Ես վստահ եմ, որ Դուք հենց այդ մեղմ հովիկն եք, որից սկիզբ է առնելու Երևանի պետական համալսարանի Մեծ Վերածնունդը:** Որդիական խոնարհությամբ մատչյմ ի համբոյր Ձերդ Սրբութեան Օծեալ Սուրբ Աջոյն Գևորգ ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ» (**հատոր 1-ին, գ.թ. 103**).**

5) ԵՊՀ-ի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանի կողմից Գևորգ Էմին-Տերյանին հասցեագրված «աշխատանքային հանձնարարություն» վերտառությամբ 26.08.2021 թվականի գրությամբ «Երևանի պետական համալսարան» ԵՊՀ-ի հանրային կապերի ծառայության պետ, ԵՊՀ-ի մամուլի խոսնակ Գևորգ Էմին-Տերյանին հանձնարարվել է «1. Մինչև 27.08.2021թ., ժամը՝ 13:00-ն, **պատրաստել** «Առավոտ» օրաթերթին ներկայացվելիք **հերքման**

**տեքստի նախագիծ** «Գևորգ Էմին-Տերյանի գրապարտությունները» վերնագրով, որտեղ հստակ նշված կլինի, որ «Առավոտ» օրաթերթում 24.08.2021թ., «Թուրթ առ մեծն աստվածաբան, վեհագույն հայագետ, Մեծ Հայքի կրթության ու գիտության վերջին հույս, ԵՊՀ-ի վերջին պաշտպան Հովհաննես Հովհաննիսյան» վերնագրով տպագրված նյութն ամբողջությամբ սուտ է, կեղծիք և գրապարտություն: **2. Հերքման տեքստի նախագիծը, նախապես էլեկտրոնային եղանակով համաձայնեցնել ինձ հետ» (հատոր 1-ին, գ.թ. 82).**

6) ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանի կողմից Գևորգ Էմին-Տերյանին հասցեագրված «Աշխատանքային հանձնարարություն» վերտառությամբ 31.08.2021 թվականի գրությամբ «Երևանի պետական համալսարան» ԵՊՀ-ի հանրային կապերի ծառայության պետ, ԵՊՀ-ի մամուլի խոսնակ Գևորգ Էմին-Տերյանին հայտնվել է հետևյալը. «Համաձայն 26.08.2021թ. աշխատանքային հանձնարարության՝ ԵՊՀ հանրային կապերի ծառայությունը՝ ի դեմս ծառայության պետ Գևորգ Էմին-Տերյանի, պարտավոր էր հստակ և պատշաճ կերպով պատրաստել հերքման տեքստի նախագիծ և այն ինձ հետ համաձայնեցնելուց հետո հրապարակել «Առավոտ» օրաթերթում: Mulberry համակարգով 27.08.2021թ.-ին ստացել եմ հերքման տեքստը, այնուհետև նույն տեքստը տեսել եմ հրապարակված, առանց իմ համաձայնության: Խնդրում եմ տալ բացատրություն առ այն, թե ինչու է հերքման տեքստը հրապարակվել առանց իմ համաձայնությունը ստանալու» **(հատոր 1-ին, գ.թ. 102).**

7) ԵՊՀ-ի հանրային կապերի ծառայության պետ, ԵՊՀ-ի մամուլի խոսնակ Գևորգ Էմին-Տերյանի կողմից ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանին հասցեագրված «Բացատրություն» վերտառությամբ 31.08.2021 թվականի գրությամբ՝

- «Աշխատանքային հանձնարարություն» վերտառությամբ 31.08.2021 թվականի գրության վերաբերյալ հայտնվել է հետևյալը. «Նախ՝ տվյալ հանձնարարությունը չի տրվել հստակ կերպով, չունի իրավական որոշակիություն, և անհայտ էր դրա իրականացման հնարավորությունը հատկապես, եթե հաշվի առնենք, որ նման հանձնարարությունը չի բխում գործատու-աշխատող հարաբերություններից: Ես՝ որպես ԵՊՀ հանրային կապերի ծառայության պետ, **պարտավոր եմ իմ աշխատանքային գործունեության ընթացքում իրականացնել իմ պարտականությունները, որոնք բխում են ԵՊՀ շահերից**, սակայն ոչ անձերի (ինչքան էլ աշխատանքային իրավահարաբերություններով պայմանավորված նրանք իմ նկատմամբ ունեն վերադաս դիրք): Տվյալ դեպքում Դուք հանդես եք գալիս ոչ թե որպես ԵՊՀ ռեկտոր, այլ որպես ֆիզիկական անձ, այսինքն՝ այստեղ մենք գործ ունենք երկու տարբեր իրավական սուբյեկտների հետ՝ Հովհաննես Հովհաննիսյանը՝ որպես ԵՊՀ ռեկտորի ժ.պ. և Հովհաննես Հովհաննիսյանը՝ որպես ֆիզիկական անձ, ՀՀ քաղաքացի: Որպես ֆիզիկական անձ՝ Ձեր իրավունքները Դուք կարող եք պաշտպանել՝ դիմելով դատարան, քանի որ դա հանդիսանում է իրավական պաշտպանության միակ հնարավոր ձևը ԶԼՄ-ներով հրապարակված հոդվածի հերքում ստանալու համար: Ավելին, Ձեր մատնանշած հոդվածում ԵՊՀ հասցեին առկա չէ որևէ վիրավորական կամ գրպարտչական փաստական հանգամանք, ուստի ԵՊՀ իրավունքները որևէ կերպ խախտված չեն, իսկ ես Ձեր հանձնարարականի համատեքստում չեմ կարող ԵՊՀ անունից հանդես գալ օրաթերթի հետ հարաբերություններում և պահանջել հերքում: (...): Լավագույն դեպքում ես կարող էի Ձեր՝ որպես ֆիզիկական անձի անունից հանդես գալ օրաթերթի հետ հարաբերություններում, որը դուրս է աշխատանքային հարաբերությունների համատեքստից: (...) Հետևաբար Ձեր հանձնարարությունը չի

բխում աշխատանքային իրավահարաբերություններից, այն չի ձևավորվել ԵՊՀ-ԵՊՀ մամլո խոսնակ հարաբերություններից, չի բխում իմ աշխատանքային գործառույթներից, ուստի Դուք՝ հանդես գալով որպես գործատուի իրավասու անձ, այսինքն՝ ԵՊՀ անունից հանդես գալու իրավունք ունեցող անձ, չեք կարող ԵՊՀ աշխատողին տալ նման հանձնարարություն, պահանջել դրա համար բացատրություն, ուստի կիրառել հնարավոր պատասխանատվության միջոց (...):»

- «Աշխատանքային հանձնարարություն» վերտառությամբ 26.08.2021 թվականի գրության վերաբերյալ հայտնվել է հետևյալը. «Բացատրության 1-ին կետում նշված փաստարկներն ամբողջությամբ կիրառելի են նաև սույն հանձնարարության համար: (...) Ես՝ հանդես գալով որպես ԵՊՀ հանրային կապերի ծառայության պետ, ԵՊՀ մամուլի խոսնակ, ունեմ աշխատանքային պայմանագրով և ԵՊՀ ներքին կանոնակարգերով նախատեսված իմ աշխատանքային գործառույթները և աշխատանքային պարտականությունները, մինչդեռ Ձեր նշած հանձնարարականը որևէ կերպ չի տեղավորվում իմ աշխատանքային գործառույթների կամ աշխատանքային պարտականությունների մեջ: Ավելին, որպես ընդհանուր կանոն, անձը չի կարող կատարել վերադասի այնպիսի հանձնարարություններ, որոնք չեն բխում օրենքից կամ հակասում են դրանց, իսկ հանձնարարությունը, ձևակերպված լինելով գրավոր, ըստ էության իրավական ակտ է, որը կարող է ՀՀ աշխատանքային օրենսգրքով անվավեր ճանաչվել դատարանի կողմից, քանի որ իմ վերոնշյալ պատճառաբանություններով դրանք հակասում են օրենքին, չեն բխում դրանից, ուստի դուրս են աշխատանքային իրավահարաբերություններից: Բացի դրանից, Դուք Ձեր հանձնարարություններով ինձ փաստացի դրդում եք այնպիսի արարքի կատարմանը, որն ընդհուպ կարող է հանգեցնել քրեաիրավական արարքի, քանի որ դա ճնշում է լրատվական միջոցի նկատմամբ (...): Հերքման իրավունք ունի անձը, որի իրավունքները խախտող փաստացի տեղեկություններ են հրապարակվել: **Մինչդեռ ես, հանդես գալով որպես ԵՊՀ հանրային կապերի ծառայության պետ, այսինքն՝ հանդես գալով ԵՊՀ անունից, պարտավոր էի լրատվամիջոցին ապացուցել, որ փաստացի խախտվել են ԵՊՀ իրավունքները, սակայն ես իրավասու չեմ և իմ աշխատանքային պարտականություններից ամենևին չի բխում ֆիզիկական անձի իրավունքների հնարավոր խախտման համար իմ պաշտոնի դիրքերից հանդես գալը:** ԵՊՀ իրավունքները նշված հոդվածում որևէ կերպ խախտված չեն, ուստի Դուք անձամբ կամ որպես ֆիզիկական անձ Ձեր լիազոր ներկայացուցչի միջոցով կարող եք միայն դիմել լրատվամիջոցին հերքում ստանալու պահանջով, եթե այն կարծիքին եք, որ այդ հոդվածով խախտվել են Ձեր իրավունքները: (...) ես օժտված եմ պաշտպանության այնպիսի մակարդակով, ինչպիսին ԶԼՄ-ն է, սակայն պետք է նկատի ունենալ, որ ես ամենամեծ ցանկության դեպքում անգամ իմ հոդվածները հրապարակած ԶԼՄ-ին չեմ կարող հարկադրել հերքումներ հրապարակելու: Այս առումով ինձ մոտ առաջանում է նաև շահերի բախման խնդիր՝ մի կողմից հանդես գալ որպես հոդվածի հեղինակ, իսկ մյուս կողմից՝ որպես ԵՊՀ աշխատող: Ուստի Դուք կարող եք նման հանձնարարությունը տալ այլ անձի, որը կզբաղվի դրանով՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ և ՄԻԵԴ նախադեպերով սահմանված բոլոր պահանջները» (**հատոր 1-ին, գ.թ. 36-40**).

8) ԵՊՀ-ի 07.09.2021 թվականի թիվ 165/80 հրամանով, ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 36-րդ, 220-րդ, 223-րդ և 224-րդ հոդվածներով, ԵՊՀ-ի Կանոնադրության 56-րդ կետի 13-րդ ենթակետով, նկատի ունենալով Գևորգ Էմին-Տերյանի ներկայացրած գրավոր բացատրության հիմնավոր չլինելը, Գևորգ Էմին-Տերյանի նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն»

կարգապահական տույժի տեսակը՝ ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանի 26.08.2021 թվականի աշխատանքային հանձնարարությունը չկատարելու համար:

Հրամանի համաձայն՝ «ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանի կողմից ԵՊՀ հանրային կապերի ծառայության պետ Գևորգ Էմին-Տերյանին 26.08.2021 թվականին տրվել է աշխատանքային հանձնարարություն (...): Ի կատարումն հանձնարարության՝ Գևորգ Էմին-Տերյանի կողմից կատարվել է նյութի հրապարակում՝ առանց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի հետ նախապես համաձայնեցնելու, իսկ հրապարակված նյութի տեքստը Mulberry էլեկտրոնային համակարգով ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին է ուղարկվել դրա հրապարակումից հետո: Ընդ որում, ուղարկված նյութը չի պարունակել աշխատանքային հանձնարարությամբ նշված նյութի հերքման բովանդակություն: Այսինքն՝ չի կատարվել 26.08.2021 թվականի աշխատանքային հանձնարարությունը, այն է՝ չի պատրաստվել հերքում աշխատանքային հանձնարարությամբ նշված նյութի կապակցությամբ, ի կատարումն հանձնարարության հրապարակված նյութը, նախապես չի համաձայնեցվել ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի հետ: (...): «Առավոտ» օրաթերթում 24.08.2021 թվականին տպագրված հոդվածի առնվազն վերնագրից պարզ է դառնում, որ այն վերաբերում է ոչ միայն Հովհաննես Հովհաննիսյանի անձին, այլև ԵՊՀ-ին, դրանում Հովհաննես Հովհաննիսյանի անձը բնութագրվում է որպես ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար կամ առնվազն ԵՊՀ-ի հետ անմիջական առնչություն ունեցող անհատ անձ: Բացի այդ, տվյալ հոդվածի տարբեր հատվածներում արտահայտված մտքերից հասարակ ընթերցողի համար առավել քան պարզ է դառնում, որ դրանում խոսքը գնում է ոչ թե Հովհաննես Հովհաննիսյանի՝ որպես առանձին անհատի, այլ ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի մասին՝ վերջինիս աներևույթ բացասական որակներ հասցեագրելու երանգներով և դրանք զուգորդելով բացարձակ ցինիզմի ոճաբանությամբ: Ըստ հոդվածի հեղինակի՝ ԵՊՀ-ի հետագա ճակատագիրը վտանգված է այն դեպքում, եթե ԵՊՀ-ի ղեկավարը հանդիսանում է Հ. Հովհաննիսյանը, որպիսի պայմաններում էական վտանգ է առաջանում ԵՊՀ-ի հեղինակության և վարկանիշի նվազեցման առումով: Այդ իսկ պատճառով պետք է արձանագրել, որ քննարկվող հոդվածը վերաբերում է ոչ միայն Հ. Հովհաննիսյան մասնավոր անձին, այլ կոնկրետ և էպես ԵՊՀ-ի հեղինակությանը՝ այն բացասական ներկայացնելու ոճաբանությամբ:

**Հետևաբար 26.08.2021 թվականի աշխատանքային հանձնարարությունը լիովին օրինաչափ է, դրա կատարման անհրաժեշտությունը բխում է կոնկրետ ԵՊՀ-ի շահերի պաշտպանության և ԵՊՀ-ի հեղինակությունը բարձր պահելու նպատակից, որը բխում է Գևորգ Էմին-Տերյանի աշխատանքային պարտականություններից և կոնկրետ նախատեսված է վերջինիս աշխատանքի ընդունելու մասին 27.02.2018 թվականի թիվ 37/135 հրամանի 2.2.8. և 26.07.2019 թվականի թիվ 137/13 հրամանի 2.2.7. կետերով:**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ 26.08.2021 թվականի աշխատանքային հանձնարարությունը չկատարելը իրավաչափ չէ, ուստի այն պետք է որակել որպես աշխատանքային կանոնների կարգապահական խախտում, որին պետք է հետևի համապատասխան կարգապահական պատասխանատվություն, իսկ աշխատանքային կարգապահության խախտման կապակցությամբ ներկայացված գրավոր բացատրությունը հիմնավոր չէ: (...):» **(հատոր 1-ին, գ.թ. 88-91):**

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է՝

1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 215-րդ, 220-րդ և 223-րդ հոդվածների միատեսակ կիրառության համար, ու գտնում է, որ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ աշխատողի աշխատանքային գործառույթների, աշխատողին տրվող հանձնարարությունների և դրանք չկատարելու հետևանքների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար,

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի խախտում, ինչի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գործարտի հանձնարարության և աշխատողի պարտականությունների հարաբերակցության հարցին՝ բացահայտելու համար գործարտի հանձնարարությունը չկատարելու դեպքում աշխատողի նկատմամբ կարգապահական րոյթ կիրառելու հնարավորության սահմանները՝ վերահասարակելով և զարգացնելով աշխատողին պարտախանարվության ենթարկելու վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:*

Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր որ ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ աշխատանքային իրավունքները և պարտականությունները կարող են ծագել, փոփոխվել և դադարել՝ սույն օրենսգրքով, այլ օրենքներով, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և գործատուների այն գործողություններից, որոնք, թեև օրենքով



կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ աշխատանքային օրենսդրության սկզբունքների, առաջացնում են աշխատանքային իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործատուները, աշխատողները և նրանց ներկայացուցիչներն իրենց իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս պարտավոր են պահպանել օրենքը, գործել բարեխիղճ և ողջամիտ: (...):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողը պարտավոր է բարեխիղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, (...):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունն աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված վարքագծի կանոններն են, որոնց պարտավոր են ենթարկվել բոլոր աշխատողները:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կազմակերպության ներքին կարգապահական կանոնները (գործատուի ներքին իրավական ակտը) կանոնակարգում են (...) աշխատանքային պայմանագրի կողմերի հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, (...) աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր:

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով: Ըստ այդմ, թե՛ աշխատողը, թե՛ գործատուն ձեռք են բերում փոխադարձ իրավունքներ և պարտականություններ: Մասնավորապես, աշխատողը պարտավորվում է բարեխիղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտականությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, իսկ գործատուն պարտավորվում է աշխատողին տրամադրել պայմանագրով որոշված աշխատանքը, վճարել նրա կատարած աշխատանքի համար պայմանավորված աշխատավարձը և ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ պայմանագրով, կողմերի համաձայնությամբ նախատեսված աշխատանքային պայմաններ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37-րդ հոդվածը՝ որպես աշխատանքային պարտականությունների կատարման սահմանները որոշող ընդհանուր նորմ, սահմանում է աշխատանքային իրավունքների իրացման և պարտականությունների կատարման երեք հիմնական չափանիշ՝ օրենքի պահպանում, բարեխիղճություն և ողջամտություն:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ օրենսդիրն աշխատողին պարտավորեցնում է աշխատանքային պարտականությունները կատարել օրինականության, բարեխիղճության և ողջամտության սկզբունքների պահպանմամբ: Աշխատողն աշխատանքային պարտականությունները կատարում է ոչ թե ամբողջովին իր հայեցողությամբ՝ այլ պարտադիր

կերպով ենթարկվելով աշխատանքային ռեժիմին, կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքային կարգապահությանը, աշխատանքի սահմանված նորմաներին *(տե՛ս Արմինե Աբելյանն ընդդեմ ԱԶ Հովհաննես Դանիելյանի թիվ ԿԴ/0125/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2012 թվականի որոշումը)*:

Աշխատողի կողմից աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով ստանձնած պարտավորությունների (այսուհետ նաև՝ աշխատանքային պարտականություններ) կատարման ընդհանուր ցուցիչը բարեխղճությունն է:

Ողջամտությունը և բարեխղճությունն աշխատանքային իրավունքների իրականացման անհրաժեշտ ընդհանուր չափանիշներն են: Նշված երկու սկզբունքահասկացությունները ի թիվ այլնի կիրառվում են աշխատանքային իրավունքների և պարտականությունների կատարման սահմանները որոշելիս: Բարեխղճությունը մասնավորապես պահանջում է հաշվի առնել մյուս կողմի արդարացված շահը, իսկ ողջամտությունը գործողություն է՝ իրավունքի սուբյեկտի կամային ակտ, որը սերտորեն կապված է բարեխղճության հետ, քանի որ ողջամիտ վարքագիծ կարող է դրսևորել բարեխիղճ սուբյեկտը:

Վկայակոչված չափանիշներն ուղենիշային են և էական ի թիվ այլնի աշխատանքային պարտականությունների կատարման, ինչպես նաև աշխատողի նկատմամբ կարգապահական ներգործության հարցերը քննարկելիս:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, ընդգծելով, որ աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել իր բոլոր պարտականությունները, որոնք կարող են սահմանված լինել ինչպես օրենսդրությամբ կամ գործատուի ներքին իրավական ակտերով, այնպես էլ աշխատանքային պայմանագրով՝ այդ թվում նաև բարեխղճորեն կատարելով աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքը՝ աշխատանքային գործառույթները, անդրադարձել է աշխատանքային գործառույթների սահմանմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը մասնավորապես փաստել է, որ պայմանավորված աշխատանքի տարբեր տեսակների առանձնահատկություններով՝ մի դեպքում աշխատանքային գործառույթները հնարավոր է սահմանել հստակորեն և սպառնիչ կերպով, **մեկ այլ դեպքում հնարավոր է միայն սահմանել գործառույթների որոշակի շրջանակ, որի դեպքում աշխատողի վրա կարող են դրվել սահմանված գործառույթներին համանման պարտականություններ**: Ընդ որում, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածը պարտադիր է համարում աշխատանքային պայմանագրում (աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտում) պաշտոնի անվանումը և (կամ) աշխատանքային գործառույթները նշելը: Այսինքն՝ անգամ հնարավոր է աշխատանքային գործառույթները պայմանագրում ընդհանրապես չնախատեսել, որի դեպքում աշխատանքային պարտականությունները, որպես կանոն, սահմանվում են գործատուի ներքին իրավական ակտերով (օրինակ՝ տվյալ պաշտոնի նկարագիրը սահմանող իրավական ակտով): Չնայած աշխատանքային պայմանագրով հիմնական գործառույթները կամ դրանց բնույթը (պաշտոնի սահմանման եղանակով) պետք է սահմանված լինեն, այդուհանդերձ, դա չի բացառում, որ **աշխատողի վրա կարող են դրվել նաև պարտականություններ, որոնք բխում են վերջինիս պաշտոնի բնույթից, գործատուի ներքին կարգապահական կանոններից կամ օրենսդրությունից**:

Աշխատանքային պայմանագրի հասկացությունից հետևում է, որ **աշխատողն** աշխատանք է կատարում գործատուի համար, այլ կերպ ասած՝ **կատարում է գործատուի հանձնարարությունները:** (...) գործատուի կողմից աշխատողին հանձնարարություններ կարող են տրվել ցանկացած ձևով, եղանակով և կարգով:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այդ հանձնարարությունների ոչ պատշաճ կատարման դեպքում գործում են ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված հետևանքները, մասնավորապես՝ այն կարող է համարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով սահմանված աշխատանքային կարգապահության խախտում, որի դեպքում կարող են կիրառվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածով սահմանված տույժերը, ընդհուպ մինչև աշխատանքային պայմանագրի լուծում (*տե՛ս «Հայկական ծրագրեր» ՄՊԸ-ն ընդդեմ Գագիկ Հովհաննիսյանի թիվ ԵԱԴԴ/3614/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.07.2018 թվականի որոշումը*):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունն իրականացնում են աշխատողների ներկայացուցիչները, իսկ աշխատողների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի և կոլեկտիվ պայմանագրերի կատարման նկատմամբ ոչ պետական վերահսկողությունը՝ գործատուները (գործատուների ներկայացուցիչները):

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 222-րդ հոդվածի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտող աշխատողների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական ներգործության միջոցներ:

Այսինքն՝ աշխատողի կարգապահական պատասխանատվությունն իրագործվում է նրա նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված կարգապահական սանկցիաների (ներգործության միջոցներ) կիրառմամբ:

Նշված միջոցները նախատեսված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

Աշխատողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու իրավագործությամբ օժտված է գործատուն, ով աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իր իրավունքն իրականացնում է անհատական իրավական ակտ ընդունելու միջոցով, ընդ որում, պարտադիր է գործատուի կողմից կարգապահական տույժ կիրառելու համար օրենսդրությամբ սահմանված կարգի պահպանումը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց բացատրության:

Վերոգրյալից բխում է, որ աշխատողի նկատմամբ կարող է կիրառվել կարգապահական տույժ՝ ներքոհիշյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- աշխատողը թույլ է տվել աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված աշխատանքային կարգապահության կանոններից որևէ մեկի խախտում,

- խախտումը տեղի է ունեցել աշխատանքային որևէ պարտականության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով,

- խախտումը կատարվել է աշխատողի մեղքով,

- խախտումը կատարել է կոնկրետ աշխատողը:

Այսինքն՝ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը պետք է պայմանավորվի ոչ միայն կարգապահության խախտման, այլև այդ խախտման մեջ աշխատողի մեղքի առկայության, աշխատողի կողմից իր աշխատանքային պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի համակցությամբ:

Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ աշխատանքային կարգապահությունը ենթադրում է աշխատողի կողմից իր իրավունքներից բարեխիղճ օգտվելու, աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու պարտականություն: **Աշխատանքային կարգապահության պահպանումը պետք է յուրաքանչյուր աշխատողի համար համարվի վարքագծի պարտադիր, այլ ոչ թե ընտրանքային կանոն**, որի պահպանումը յուրաքանչյուր աշխատողի պարտականությունն է, իսկ դրանով ամրագրված պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հիմք է նրա նկատմամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված ներգործության համապատասխան միջոցների կիրառման համար:

Միաժամանակ, չնայած նրան, որ աշխատողի կողմից աշխատանքային կարգապահությունը խախտելու դեպքում գործատուն ինքն է որոշում կիրառման ենթակա կարգապահական տույժի տեսակը, այնուամենայնիվ, այն չի կարող կրել կամայական բնույթ, և յուրաքանչյուր դեպքում գործատուի ընտրած կարգապահական տույժի տեսակը պետք է **համաչափ լինի** աշխատողի կատարած խախտման ծանրությանը, որի ապահովմանն էլ ուղղված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածով սահմանված՝ մինչև կարգապահական տույժի կիրառումն աշխատողից խախտման մասին պարտադիր գրավոր բացատրություն պահանջելու գործատուի պարտականությունը:

Ենթադրյալ խախտում թույլ տված աշխատողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելուց առաջ գրավոր բացատրություն պահանջելու և այդ բացատրության ներկայացման համար ողջամիտ ժամանակ տրամադրելու գործատուի պարտականությունն ինքնանպատակ չէ. ուղղված է աշխատողի իրավունքներն

ու պարտականությունները հավասարակշռելուն, գործատուի կողմից ինքնիրավչությունն ու աշխատողի իրավունքների խախտումը կանխելուն:

Փաստորեն, մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուի կողմից աշխատողից խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելը պարտադիր է, իսկ այդ բացատրությունն աշխատողից պետք է պահանջվի մինչև կարգապահական տույժի կիրառումը՝ սահմանելով այդ բացատրությունը տալու համար ողջամիտ ժամկետ (*տե՛ս Էդգար Գրիգորյանն ընդդեմ «Ազադ Ֆայն Քեմիքալ» ՍՊԸ-ի թիվ ԵԱԲԳ/1066/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2013 թվականի որոշումը*):

Աշխատողին կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ գործատուի կայացրած իրավական ակտը պետք է հիմնված լինի խախտման փաստի օբյեկտիվ և բազմակողմանի (հաշվի առնելով նաև աշխատողի փաստարկներն ու պատճառաբանությունները) քննության վրա:

Այլ կերպ ասած, գործատուի կողմից աշխատանքային կարգապահությունը խախտած անձի նկատմամբ պատասխանատվության համապատասխան միջոցը (կարգապահական տույժի տեսակը) ընտրելիս և այն կիրառելիս պետք է պահպանվի համաչափությունն աշխատողի կողմից կատարված խախտման ծանրության աստիճանին, դրա արդյունքում վրա հասնող իրավական հետևանքներին: Այսինքն՝ առավել նվազ ծանրության կարգապահական խախտման դեպքում պետք է կիրառվի առավել մեղմ աշխատանքային կարգապահական պատասխանատվության միջոց, և հակառակը: (...) Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ աշխատողի նկատմամբ կարգապահական տույժի կիրառումն ինքնանպատակ չէ, այն ուղղված է նաև աշխատանքային իրավահարաբերությունների կայունության պահպանմանը, որպիսի պայմաններում դրա կիրառումը չի կարող կրել ձևական բնույթ, ուստի և տույժ նշանակելիս գործատուն պարտավոր է իրավական գնահատման ենթարկել աշխատողի կատարած խախտման բնույթը, դրա ծանրությունը և արդյունքում վրա հասնող իրավական հետևանքները, աշխատողի նախկինում կատարված աշխատանքը, ինչպես նաև աշխատանքային բնականոն հարաբերությունների խաթարման պատճառ հանդիսացած այլ հանգամանքները (*տե՛ս Հարություն Ասրոնյանն ընդդեմ «ՎԵՈՒԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԳ/3661/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2021 թվականի որոշումը*):

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով: Հիմնադրամի մարմիններն են՝ կառավարիչը (տնօրենը, գործադիր տնօրենը կամ գլխավոր տնօրենը, **ռեկտորը**):

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «կառավարիչը՝

(...)

8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

9) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին:

10) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ»:

Կանոնադրությամբ կարող են սահմանվել կառավարչի նաև այլ իրավասություններ:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության (այսուհետ նաև՝ Կանոնադրություն) (հաստատվել է ՀՀ կառավարության 27.11.2014 թվականի թիվ 1408-Ն որոշմամբ, փոփոխությունը գրանցվել է 13.09.2021 թվականին) 56-րդ կետի համաձայն՝ «ԵՊՀ ռեկտորը՝

(...)

11) աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է (...) գիտահետազոտական ինստիտուտների և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, որոշում նրանց գործունեության ոլորտներն ու իրավասությունը,

(...)

13) աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր, (...)»:

Կանոնադրության 131-րդ կետի համաձայն՝ ԵՊՀ-ի աշխատողները պարտավոր են՝

«1) պահպանել և կատարել սույն կանոնադրության, ԵՊՀ-ի ներքին կարգապահական կանոնների և այլ ներքին իրավական ակտերի պահանջները.

2) կատարել ԵՊՀ-ի ղեկավար մարմինների օրինական որոշումները.

(...)

6) կատարել ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ-ի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և ԵՊՀ-ի այլ ներքին իրավական ակտերով նախատեսված պարտականություններ»:

Շարադրվածն ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ՝

- ԵՊՀ-ի ռեկտորն աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, որոշում է նրանց գործունեության ոլորտներն ու իրավասությունը.

- ԵՊՀ-ի ռեկտորն իր իրավասության սահմաններում արձակում է կատարման համար պարտադիր ցուցումներ՝ հանձնարարություններ և վերահսկում դրանք.

- կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը կրում է ռեկտորի՝ որպես ԵՊՀ-ի կառավարման և կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի իրավասությունը սահմանող և վերահսկող մարմնի օրինական ցուցումները կատարելու պարտականություն:

### ***Վերը նշված դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Դիմելով Դատարան՝ հայցվոր Գևորգ Էմին-Տերյանը պահանջել է անվավեր ճանաչել ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 07.09.2021 թվականի թիվ 165/80 հրամանը:

Գործի քննության ընթացքում հայտնաձև գրավոր և բանավոր դիրքորոշումներով հայցվոր Գևորգ Էմին-Տերյանը ի թիվ այլնի հայտնել է, որ Mulberry համակարգի միջոցով պատասխանողի ուղարկած գրությամբ բացատրություն է պահանջվել առ այն, «թե ինչու է հերքման տեքստը հրապարակվել առանց իմ համաձայնությունը ստանալու», մինչդեռ, ինչպես վկայում է հրամանի ուսումնասիրությունը, հայցվորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոց է կիրառվել այլ արարքի համար, իբր թե հայցվորը չի կատարել իր պարտականությունը՝ հոգ տանելու ԵՊՀ-ի հեղինակության մասին: Հիմնավորված չէ ԵՊՀ-ի մասին հոգ տանելու պարտականության խախտման փաստը, հրամանում վկայակոչված 2.2.7 կետը չունի իրավական որոշակիություն, և իր նկատմամբ այդ

պարտականության խախտման համար չէր կարող կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոց: Հրամանով հայտարարված է խիստ նկատողություն, սակայն հիմնավորված չէ մեղքը, խախտման ծանրությունը և այլ հանգամանքեր:

Վիճարկվող հրամանի փաստական հիմքերը չեն համընկնում իրավական հիմքերի հետ: Որպես իրավական հիմք նշված է ԵՊՀ-ի հեղինակության մասին հոգ տանելու պարտականությունը, սակայն որպես փաստական հիմք ներկայացվել է, որ հայցվորը չի կատարել աշխատանքային հանձնարարությունը: **Աշխատանքային հանձնարարությունը բաղկացած է եղել երկու կետից. պատրաստել հերքման տեքստ և համաձայնեցնել տեքստը գործատուի հետ:** Հրամանում ներառված է այն, որ հերքման տեքստ չի պատրաստվել և չի հրապարակվել, այնինչ պատասխանող կողմն ընդունել է, որ հերքման տեքստը հրապարակվել է առանց համաձայնեցնելու: Դատական նիստի ժամանակ պատասխանող կողմը հայտնել է, որ հերքման տեքստի բովանդակությունը չի համապատասխանել գործատուի պահանջներին, ընդ որում այդ պահանջների մասին աշխատանքային հանձնարարության մեջ նշված չի եղել: ԵՊՀ-ի հեղինակության մասին հոգ տանելու պարտականությունը վերացական պահանջ է, հետևաբար աշխատողը չի կարող կարգապահական պատասխանատվության ենթարկվել իրավական որոշակիությունից զուրկ նորմի խախտման համար: Պատիժը պետք է համաչափ լինի, ուստի, եթե ԵՊՀ-ի հեղինակությունը չի տուժել և խիստ նկատողություն է հայտարարվել, իսկ տուժելու պարագայում ի՞նչ պետք է արվեր: Գևորգ Էմին-Տերյանը «Գևորգ Էմին-Տերյանի գրապարտությունները» վերնագրով հոդված է հրապարակել, որտեղ գրված է, որ նյութն ամբողջությամբ կեղծիք է և զրպարտություն: Իրենք չեն ընդունում այն հանգամանքը, որ տեքստը համաձայնեցված չի եղել գործատուի հետ: ԵՊՀ-ի ռեկտորը հաստատել է, որ ստացել է հրապարակման տեքստը:

Պատասխանողը գործի քննության ընթացքում հայտնած գրավոր և բանավոր դիրքորոշումներով հայտնել է, որ հայցվորի կողմից չի կատարվել կամ առնվազն ոչ պատշաճ է կատարվել իր վերադասի՝ ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանի աշխատանքային հանձնարարությունը, կատարվել է նյութի հրապարակում՝ առանց ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի հետ նախապես համաձայնեցնելու, հրապարակված նյութի տեքստը «Mulberry» էլեկտրոնային համակարգով ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին է ուղարկվել դրա հրապարակումից հետո, որը չի պարունակել աշխատանքային հանձնարարությամբ նշված նյութի հերքման բովանդակություն: Գևորգ Էմին-Տերյանի աշխատանքային պայմանագրով և պաշտոնի անձնագրով որպես աշխատանքային պարտավորություն ամրագրված է, որ պետք է հոգ տանի ԵՊՀ-ի հեղինակության մասին: Տպագրված հոդվածը միանշանակ վերաբերել է ոչ թե Հովհաննես Հովհաննիսյան անձին, այլ ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին, որն անբաժանելի կապ է ստեղծում ցանկացած ընթերցողի մոտ, որ այդ հոդվածը կապված է ԵՊՀ-ի հետ, քանի որ հոդվածում անընդհատ նշվում է ԵՊՀ-ի ռեկտորի Ժայ: Եթե անձը թույլ է տալիս այնպիսի աշխատանքային կարգապահական խախտում, որը չի ենթադրում ԲՈՒՀ-ի հեղինակության համար վտանգ, ապա դա հասարակ աշխատանքային կարգապահական խախտում կհամարվի, իսկ տվյալ դեպքում Գևորգ Էմին-Տերյանը չի հերքել և դրանով իսկ ԲՈՒՀ-ի ռեկտորի մոտ ողջամիտ ենթադրություն է առաջացել, որ, եթե դա չկանխվեր, հնարավոր է առաջացնել ԲՈՒՀ-ի

հեղինակագրկման վտանգ: Հողվածը հրապարակվել է, սակայն այն չի համաձայնեցվել և այդ հողվածը հերքում չի եղել:

**Դատարանն** արձանագրել է, որ «ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ.Հովհաննիսյանի 26.08.2021 թվականի «Աշխատանքային հանձնարարություն» վերաբերյալ գրությանը նշված հանձնարարության՝ հերքման տեքստի նախագիծը ԵՊՀ ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանի հետ չհամաձայնեցնելու հանձնարարության ենթադրյալ չկատարումը չի կարող համարվել հայցվորի՝ ԵՊՀ հեղինակության բարձրացման մասին հոգ տանելու պարտավորության չկատարում: Ավելին, պատասխանողը, կրելով սպացուցման բեռի պարտականությունը, չի ներկայացրել որևէ սպացույց առ այն, որ հերքման տեքստի նախագիծը ԵՊՀ ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանի հետ չի համաձայնեցվել և հրապարակված տեքստը հանձնարարության պահանջներին չի համապատասխանել: Ընդ որում, պատասխանողն իր 31.08.2021թ. «Աշխատանքային հանձնարարություն» վերաբերյալ գրությանը ընդունել է, որ հերքման տեքստը հրապարակվել է և այն «mulberry» էլեկտրոնային համակարգով ԵՊՀ ժամանակավոր պաշտոնակատարին է ուղարկվել 27.08.2021 թվականին, մինչդեռ պատասխանողի կողմից չի ներկայացվել սպացույց առ այն, որ հերքման տեքստը «mulberry» էլեկտրոնային համակարգով ԵՊՀ ժամանակավոր պաշտոնակատարին է ուղարկվել 27.08.2021 թվականին դրա հրապարակումից հետո միայն: 31.08.2021թ. «Աշխատանքային հանձնարարություն» վերաբերյալ գրության վերնագրի և բովանդակության համադրումից լիարժեքորեն չի բխում, որ դրանով հայցվորից պահանջվել է գրավոր բացատրություն որևէ ենթադրյալ իրավաստիարման համար՝ կարգապահական վարույթի շրջանակներում: Իսկ այդպիսին դիտարկելու պարագայում անգամ, այն չի կարող համարվել խախտման մասին գրավոր բացատրություն պահանջելու գրություն՝ հրամանի հիմքում ընկած ենթադրյալ խախտման («Աշխատողը պարտավոր է հոգ տանել ԵՊՀ հեղինակության բարձրացման մասին») վերաբերյալ: Հերքաբար, աշխատողը զրկված է եղել վիճարկվող հրամանի հիմքում դրված իրավական նորմով սահմանված դիպուկահիստով նկարագրված պահանջի ենթադրյալ խախտման վերաբերյալ բացատրություն ներկայացնելու իրավաստի հնարավորությունից»:

**Դատարանը**, անդրադառնալով «հերքման տեքստի նախագիծը նախապես էլեկտրոնային եղանակով ԵՊՀ ռեկտորի ժ.պ.-ի հետ համաձայնեցնելու» հանձնարարության՝ աշխատանքային հանձնարարություն հանդիսանալու հանգամանքին և աշխատողի՝ այն կատարելու պարտականությանը, արձանագրել է, որ «ԵՊՀ ռեկտոր ժ/պ Հ. Հովհաննիսյանի «Աշխատանքային հանձնարարություն» վերաբերյալ գրությունից, ինչպես նաև «Առավուր» օրաթերթում տպագրված հողվածի բովանդակությունից հստակ երևում է, որ հայցվորի վրա դրվել է իր աշխատանքային գործառույթների, ինչպես նաև գործարարի՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրում իրավաբանական անձի հետ որևէ առնչություն չունեցող, ԵՊՀ ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանի՝ որպես ֆիզիկական անձի հետ կապված պարտականություն, որի կատարումը չէր բխում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասից, հայցվորի աշխատանքային պարտականություններից, ուստի այս առումով նշված հանձնարարությունը չկատարելը չէր կարող համարվել ոչ իրավաստի վարքագիծ: Ավելին, 24.08.2021թ. «Առավուր» օրաթերթում տպագրված նյութի բովանդակությունից հետևում է, որ այն կարող էր վերաբերել բացառապես ֆիզիկական անձի, մասնավորապես «մեծն աստվածաբան», «վեհագույն հայագետ», «Մեծ Հայքի կրթության և գիտության վերջին հույս» արտահայտությունները ԵՊՀ հիմնադրամին՝ որպես գործարարի և որպես իրավաբանական անձի, չեն կարող վերագրվել, դրանք մարդուն նկարագրող գնահատողական դասագրություններ են»:



Վերոշարադրյալ պատճառաբանություններով, վկայակոչելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 216-րդ, 218-րդ, 220-րդ, 222-224-րդ, 226-րդ հոդվածները, **Գատարանը** վճռել է հայցը բավարարել՝ անվավեր ճանաչել ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 07.09.2021 թվականի թիվ 165/80 հրամանը:

**Վերաքննիչ դատարանը** որպես պարզման ենթակա առաջադրել է հետևյալ հարցադրումը. «արդյո՞ք սույն վեճի ծագման հիմք հանդիսացած հրամանի առանցքում ընկած փաստական փոխադր («Առավուր» օրաթերթում արված հրապարակումը) և այդ փոխադր համալսարանի ռեկտորի ժ/պ-ի՝ 26.08.2021 թվականի հանձնարարությունը սահմանված ձևաչափով չհերքելի առհասարակ բխել է Հիմնադրամի՝ որպես գործարար և Գևորգ Էմին-Տերյանի՝ որպես աշխատող աշխատանքային իրավահարաբերություններից, արդյո՞ք փոխադր աշխատանքային հանձնարարությունը բխել է գործարար-աշխատող հարաբերություններից և այդպիսի հանձնարարության չկատարումն արդյո՞ք գործարարի աշխատանքային կարգապահության խախտում է հանդիսանում»:

Առաջադրված հարցադրման համատեքստում **Վերաքննիչ դատարանն** արձանագրել է, որ «Առավուր» օրաթերթում 24.08.2021թ.-ին ԵՊՀ մասնույի խոսնակ Գևորգ Էմին-Տերյանի կողմից հրապարակվել է հոդվածը, որի ամբողջական ուսումնասիրության, սկսած հոդվածի վերլուծության և բովանդակության համադրական հետազոտման արդյունքում հետևությունն այն է, որ հրապարակված նյութը ամբողջությամբ վերաբերում է Հովհաննես Հովհաննիսյան ֆիզիկական անձին և նրա գործողություններին՝ նախքան ռեկտորի ժամանակավոր պաշտոնին նշանակվելը: (...) Նշված բովանդակությամբ աշխատանքային հանձնարարություն վերաբերությամբ փաստաթղթից ուղղակիորեն հետևում է, որ գործարարի ակնկալիքն ուղղված է «Առավուր» օրաթերթում 24.08.2021թ.-ի «Թուրթ առ մեծն ասարվածարան, վեհագույն հայագետ, Մեծ Հայքի կրթության ու գիտության վերջին հույս, ԵՊՀ վերջին պաշտպան Հովհաննես Հովհաննիսյան» վերնագրով տպված նյութի հերքմանը: Այսինչ օրաթերթում տպված հիշյալ հոդվածն իր բովանդակությամբ ուղղված է Հովհաննես Հովհաննիսյան ֆիզիկական անձին և նրա նախկին գործունեությանը: Հոդվածում վերջինիս հղվում են որոշակի հարցադրումներ: Իսկ ողջ հոդվածն իր բովանդակությամբ չի բովանդակում որևէ առերևույթ զրպարություն և (կամ) վիրավորանք՝ ուղղված Երևանի պետական համալսարանի հասցեին (ընդ որում՝ հակառակն սպառնացող որևէ փաստական փոխադր գործում առհասարակ բացակայում է): (...) «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի և ԵՊՀ կանոնադրության իրավակարգավորումների շրջանակում Հովհաննես Հովհաննիսյանը կարող է Երևանի պետական համալսարանի անունից գործել՝ ներկայացնելով վերջինիս, ինչպես նաև պաշտպանելով վերջինիս շահերը, սակայն Հովհաննես Հովհաննիսյանը չի կարող, գործելով Երևանի պետական համալսարանի անունից, աշխատանքային հանձնարարություն տալու միջոցով պահանջել ի շահ իրեն՝ որպես ֆիզիկական անձ Հովհաննես Հովհաննիսյանի որոշակի գործողությունների կատարում, և առավել ևս այդպիսի պահանջի չկատարման բացասական հետևանքները չեն կարող որակվել որպես աշխատողի կողմից աշխատանքային կարգապահության խախտում՝ դրանից բխող հետևանքներով: Գևորգ Էմին-Տերյանը 24.08.2021թ.-ին հոդված հրապարակելիս չի գործել որպես ԵՊՀ հանրային կապերի ծառայության պետ, մասնույի խոսնակ, այլ գործել է որպես ֆիզիկական անձ Գևորգ Էմին-Տերյան»:

Վկայակոչված պատճառաբանություններով **Վերաքննիչ դատարանն** արձանագրել է, որ «Երևանի պետական համալսարանի անունից գործող ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 26.08.2021 թվականի աշխատանքային հանձնարարություն վերաբերությամբ փաստաթղթով ԵՊՀ մասնույի խոսնակին «Գևորգ

Լւին-Տերյանի գրապարտությունները» վերնագրով հողված (հերքում) հրապարակելու պահանջը չի տեղավորվում գործարու-աշխարհող իրավահարաբերությունների շրջանակում: (...) Բացի այդ, նշված հրապարակումը կարարվել է ոչ թե ԵՊՀ մամուլի խոսնակ Գևորգ Լւին-Տերյանի կողմից, այլ հրապարակումը կարարած ՋԼՄ-ի հողվածի հեղինակն անձամբ Գևորգ Լւին-Տերյանն է, ով ի պաշտոնն չի գործել, հրապարակումը կարարվել է աշխարանքային իրավահարաբերություններից դուրս, ուստի հերքման տեքստը հրապարակելու հիմքերն ու ընթացակարգն այլ է: Նշվածից հետևությունն այն է, որ դրա իրավաչափ չլինելու հանգամանքը բացառում է այն չկարարելու մեջ կարգապահական պարասիանսարվության ենթարկելու հնարավորությունը»:

**Վերաքննիչ դատարանը** եզրահանգել է, որ «պարասիանող կողմը չի ներկայացրել բավարար սպացուցներ և չի հիմնավորել այն փաստը, որ 24.08.2021թ.-ին Գևորգ Լւին-Տերյանի կողմից «Առավուր» օրաթերթում տպագրված նյութն իր բովանդակությամբ գրապարտություն է ուղղված հենց Երևանի պետական համալսարանի հասցեին, և այդ կասկակցությամբ ԵՊՀ հանրային կապերի ծառայության պետ, ԵՊՀ մամուլի խոսնակ Գևորգ Լւին-Տերյանին տրված աշխարանքային հանձնարարությունը՝ համարժեք հերքման տեքստը հրապարակելու տեքստով, բխել է հենց Երևանի պետական համալսարանի և Գևորգ Լւին-Տերյանի աշխարանքային հարաբերություններից: Գևորգ Լւին-Տերյանը պարտավորվել է կարարել իր և գործարուի միջև կնքված անհարակյան իրավական ակտիս համահունչ և միայն այդ աշխարանքային իրավահարաբերություններից բխող հանձնարարությունները: Ուստի, հարցի կասկակցությամբ պարզարանման ենթակա միակ հարցադրումը պետք է լինել արդյոք աշխարանքային հանձնարարությունը բխել է գործարու-աշխարհող աշխարանքային հարաբերությունների բնույթից: Ինչի պարասիանն էլ սույն որոշմամբ Վերաքննիչ դատարանի կողմից հանգամանորեն տրվել է: Ավելին, պարզ չէ, թե առհասարակ հրապարակվել է հերքում, թե ոչ, եթե այնուամենայնիվ հրապարակվել է, սպա որ օրը և այդ օրվա կոնկրետ ժամը քահիսին է հրապարակվել այն, ինչպիսի բովանդակություն է այն ունեցել և վերջիվերջո Mullberry էլեկտրոնային համակարգով Հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակարար Հովհաննես Հովհաննիսյանին հերքման տեքստի նախագիծը ուղարկվել է նախքան ենթադրյալ հրապարակումը, թե ենթադրյալ հրապարակումից հետո: Այս հանգամանքների սպացուցման բեռը կրում էր պարասիանող կողմը, առավել ևս, որ Mullberry էլեկտրոնային համակարգը հնարավորություն է տալիս բացահայտել թե կոնկրետ հասցեատերերի միջև տեղի ունեցած էլեկտրոնային գրագրությունը (փաստաշրջանատությունը) կոնկրետ որ օրը և այդ օրվա ժամը քահիսին է եղել: Ասվածը առավել քան տրամարանակյան է, քանի որ նշված սպացուցների քաղաքացիական գործում բացակայության պայմաններում հնարավոր չէ բացառել, որ Գևորգ Լւին-Տերյանը ԵՊՀ ռեկտորի պաշտոնակարարի 26.08.2021 թվականի աշխարանքային հանձնարարություն վերտոտությամբ փաստաթղթով պահանջվող գործողությունը կարարել է մինչև 27.08.2021 թվականի ժամը 13:00-ին, այսինքն այդ փաստաթղթով սահմանված ժամկետում, չհաշված որ հերքման տեքստի բացակայության պայմաններում առհասարակ հնարավոր չէ հասկանալ, թե բովանդակային առումով վերջիվերջո ինչի հետ համանայն չի եղել ԵՊՀ ռեկտորի պաշտոնակարարը: Հետևարար, վիճելի է մնում վերոհիշյալ փաստերի հասարակված լինելու հարցը, ուստի ևս մասով ևս դրա բացասական հետևանքները կրում է պարասիանողը, համանայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հողվածի 6-րդ մասի»:

Արդյունքում **Վերաքննիչ դատարանը** մերժել է ԵՊՀ-ի վերաքննիչ բողոքը՝ Գատարանի վճիռը թողնելով անփոփոխ:

Վկայակոչված պատճառաբանություններից հետևում է, որ ստորադաս դատարանները հայցը մերժելիս և վճիռն անփոփոխ թողնելիս հիմք են ընդունել այն, որ՝

- հայցվորի վրա դրվել է իր աշխատանքային գործառույթների, գործատու ԵՊՀ-ի՝ որպես իրավաբանական անձի հետ առնչություն չունեցող, ԵՊՀ-ի ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանի՝ որպես ֆիզիկական անձի հետ կապված պարտականություն, որի կատարումը չէր բխում հայցվորի աշխատանքային պարտականություններից,
- 24.08.2021 թվականի «Առավոտ» օրաթերթում տպագրված նյութն ամբողջությամբ վերաբերում է Հովհաննես Հովհաննիսյան ֆիզիկական անձին և նրա գործողություններին,
- Հովհաննես Հովհաննիսյանը չի կարող, գործելով ԵՊՀ-ի անունից, աշխատանքային հանձնարարություն տալու միջոցով պահանջել ի շահ իրեն՝ որպես ֆիզիկական անձ Հովհաննես Հովհաննիսյանի որոշակի գործողությունների կատարում,
- գործատուի ակնկալիքն ուղղված է «Առավոտ» օրաթերթում 24.08.2021 թվականին տպված նյութի հերքմանը, այնինչ հոդվածն իր բովանդակությամբ ուղղված է Հովհաննես Հովհաննիսյան ֆիզիկական անձին և նրա նախկին գործունեությանը, ողջ հոդվածն իր բովանդակությամբ չի բովանդակում որևէ առերևույթ զրպարտություն և (կամ) վիրավորանք՝ ուղղված Երևանի պետական համալսարանի հասցեին.
- հերքման տեքստ հրապարակելու հիմքերն ու ընթացակարգն այլ են:

Հայցը մերժելու վերաբերյալ ստորադաս դատարանների պատճառաբանություններից վկայակոչված առանցքային եզրահանգումներին անդրադառնալիս Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում արձանագրել, որ գործի քննության ընթացքում կողմերի հայտնած դիրքորոշումներից և ներկայացրած ապացույցներից հետևում է, որ ինչպես հայցվոր Գևորգ Էմին-Տերյանը, այնպես էլ ԵՊՀ-ն ընդունել են **Գևորգ Էմին-Տերյանի՝ որպես աշխատողի կողմից** 26.08.2021 թվականի աշխատանքային հանձնարարությունն ստանալուց հետո որոշակի (անհայտ) բովանդակությամբ տեքստ պատրաստելու, այն 27.08.2021 թվականին ԵՊՀ-ին ուղարկելու, ԵՊՀ-ի կողմից 27.08.2021 թվականին ստացվելու, ինչպես նաև՝ այն հրապարակելու հանգամանքները (տե՛ս կողմերի դիրքորոշումները, ինչպես նաև փաստեր 6, 7, 8):

Հետևաբար Վերաքննիչ դատարանը, կասկածի տակ դնելով առհասարակ 26.08.2021 թվականի հանձնարարությունը որևէ կերպ կատարված լինելու, այն ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին ուղարկված լինելու կամ չլինելու, հրապարակման ժամանակի և բովանդակության հարցերն ու դրանք քննարկման առարկա դարձնելով, ըստ էության, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններից, գնահատման առարկա է դարձրել հարցեր, որոնք չեն դրվել վճռի հիմքում, գործի ելքը որևէ կերպ չեն կանխորոշել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանում քննարկման առարկա պետք է դարձվեին հետևյալ հարցադրումները՝

1) հայցվոր Գևորգ-Էմին-Տերյանը՝ որպես աշխատող, ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 26.08.2021 թվականի հանձնարարությունը կատարելու պարտականություն ունեցե՞լ է, թե՞ ոչ,

2) եթե այո՝ գործատուի կողմից շարադրված բովանդակությամբ հանձնարարությունը կատարել է, թե՛ ոչ:

1) Առաջին հարցադրման կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ որոշակի (անհայտ) բովանդակությամբ տեքստի նախագիծ պատրաստվելու և այն ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանին ուղարկելու, ինչպես նաև հրապարակվելու փաստերն անվիճելի են այնքանով, որքանով ըստ էության չվիճարկվելով՝ ընդունվել են հայցվորի և պատասխանողի կողմից:

Միաժամանակ սույն գործով ԵՊՀ-ի՝ որպես գործատուի կողմից Գևորգ Էմին-Տերյանին՝ որպես աշխատողին հասցեագրված 26.08.2021 թվականի աշխատանքային հանձնարարությունը կատարելու պարտականություն ունենալու փաստը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Այսպես, վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող թիվ 1, 2 և 3 փաստերից հետևում է, որ ԵՊՀ-ի՝ «Աշխատանքի ընդունելու մասին» 27.02.2018 թվականի հրամանով Գևորգ Էմին-Տերյանն ընդունվել է աշխատանքի որպես ԵՊՀ-ի լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ, ԵՊՀ-ի մամուլի խոսնակ, 26.07.2019 թվականի հրամանով տեղափոխվել է այլ աշխատանքի և նշանակվել ԵՊՀ-ի հանրային կապերի ծառայության պետ, ԵՊՀ-ի մամուլի խոսնակ, 15.11.2019 թվականի հրամանով Գևորգ Էմին-Տերյանի հետ 01.01.2020 թվականից աշխատանքային հարաբերությունները երկարաձգվել են անորոշ ժամկետով, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի մյուս դրույթները թողնվել են անփոփոխ:

Վկայակոչված անհատական իրավական ակտերով Գևորգ Էմին-Տերյանն ունեցել է ի թիվ այլևի ԵՊՀ-ի ներքին կարգապահական կանոնները պահպանելու, ԵՊՀ-ի ղեկավար մարմինների օրինական որոշումները կատարելու, ԵՊՀ-ի հեղինակության բարձրացման մասին հոգ տանելու պարտականություններ (տե՛ս փաստեր 1, 2, 3):

Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, ելնելով մամուլ խոսնակի գործունեության առանձնահատկությունից և, օրինակ, ԵՊՀ-ի հեղինակության բարձրացման մասին հոգալու պարտականության բովանդակությունից, վերջինիս վրա ԵՊՀ-ի ղեկավար մարմնի ցուցումով կարող են դրվել նաև համանման այլ պարտականություններ, այդ թվում՝ տրվել հանձնարարություններ:

Մասնավորապես ԵՊՀ-ի մամուլ խոսնակի՝ որպես կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի համար հստակ սահմանված չեն այն գործողությունները, որոնք ենթակա են կատարման, ինչը, ինչպես արդեն նշվեց ՀՀ վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումների վկայակոչմամբ, լիովին իրավաչափ է. աշխատանքային պարտականությունները նման կերպ սահմանված լինելու պայմաններում միանշանակ է, որ հայցվորը, քաջատեղյակ լինելով, օրինակ, ԵՊՀ-ի շահերից բխող պարտականություններ իրականացնելու, դրանից բխող ԵՊՀ-ի կառավարման մարմնի օրինական ցուցումները կատարելու պարտականության առկայության մասին, իրազեկված է նաև այն հնարավոր հանձնարարությունների, ցուցումների կատարման հավանականության մասին, որոնք կարող են բխել ինչպես ԵՊՀ-ի շահերից բխող գործողություններ իրականացնելու, այնպես էլ ԵՊՀ-ի կառավարման մարմնի հանձնարարությունները կատարելու պարտականության բնույթից:

Մասնավորապես, օրինակ ԵՊՀ-ի հեղինակության պահպանման նկատառումով ԵՊՀ-ի ռեկտորի՝ որպես կառավարման մարմնի և կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի իրավասությունը սահմանելու իրավունք ունեցող

անձի՝ ռեկտորի կողմից կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարին կարող է ցուցվել ԵՊՀ-ի հեղինակության պահպանմանը, այն որևէ կերպ խաթարող հանգամանքների չեզոքացմանը միտված հանձնարարությունների կատարում, ինչպես օրինակ՝ ԵՊՀ-ի վերաբերյալ հրապարակված նյութերի վերլուծություն, արձագանք և այլն:

Հետևաբար Գևորգ Էմին-Տերյանի՝ որպես կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի, մամլո խոսնակի՝ ԵՊՀ-ի հեղինակության բարձրացման մասին հոգալու և ռեկտորի հանձնարարությունները կատարելու պարտականությունն ուղղակիորեն կանխորոշում է վերջինիս՝ որպես աշխատողի գործունեության ուղղություններն ու առանցքային գործողությունները, թեև դրանք ուղղակիորեն սահմանված չեն, այդուհանդերձ, բխում են վերջինիս պաշտոնի բնույթից, կառավարման մարմնի որոշումները կատարելու պարտականությունից:

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող թիվ 4 փաստից հետևում է, որ «Առավոտ» օրաթերթում 24.08.2021 թվականին հրապարակված հոդվածը օբյեկտիվ դիտորդի ընկալմամբ կարող է գնահատվել «ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանին» վերաբերող: Ընդ որում, թեև հոդվածի առանձին բաղադրիչներ, հարցադրումներ կարող են որակվել որպես ՀՀ քաղաքացի Հ. Հովհաննիսյանին հասցեագրված, այդուհանդերձ, **այլ է առանձին բաղադրիչներից ձևավորված համատեքստի ընդհանրական բովանդակությունն ու օբյեկտիվ դիտորդի , հանրության կողմից ընկալումը:**

Մասնավորապես, տվյալ դեպքում հոդվածն առանց հայցվորի և ստորադաս դատարանների նախընտրած մասնավորեցումների (*օրինակ արտադաս դասարանները ըստ էության նշել են, որ «մեծն աստիճանն»*, «*վեհագույն հայագետ»*, «*Մեծ Հայքի կրթության և գիտության վերջին հույս»* արտահայտությունները ԵՊՀ հիմնադրամին՝ որպես գործարարի և որպես իրավաբանական անձի չեն կարող վերագրվել, դրանք մարդուն նկարագրող գնահատողական դասորդություններ են կարող էր վերաբերել բացառապես ֆիզիկական անձի) դիտարկելու պայմաններում ակնհայտ է, որ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի վերաբերյալ ներկայացված փաստացի տվյալները, թեկուզև հարցադրումների ձևով (*ինչը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ձևական բնույթ է կրում, հարցադրումներն ըստ էության ճարտասանական են*) բացառապես նպատակ են հետապնդում անվերապահորեն արձանագրելու ԵՊՀ-ի՝ որպես Մայր բուհի հեղինակագրկման վտանգը Հ. Հովհաննիսյանի՝ որպես ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելու փաստով պայմանավորված:

Իր հերթին ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանը, հանդես գալով որպես ԵՊՀ-ի կառավարիչ, հրապարակված հոդվածը գնահատելով որպես ԵՊՀ-ի հեղինակությունը և գործարար համբավն արատավորող, ի պաշտոնե որպես ԵՊՀ-ի աշխատակից, ստորաբաժանման ղեկավար, մամլո խոսնակ Գևորգ Էմին-Տերյանին 26.08.2021 թվականին հասցեագրել է հանձնարարություն հետևյալ բառացի շարադրանքով՝ «1. Մինչև 27.08.2021թ., ժամը 13:00-ն, **պատրաստել** «Առավոտ» օրաթերթին ներկայացվելիք **հերքման տեքստի նախագիծ**, 2. Հերքման տեքստի **նախագիծը, նախապես** էլեկտրոնային եղանակով **համաձայնեցնել ինձ հետ**»:

Շարադրվածից հետևում է, որ ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանի կողմից մամլո խոսնակ Գևորգ Էմին-Տերյանից պահանջվել է պատրաստել նախագիծ և այն համաձայնեցնել ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանի հետ:

Ասվածի համատեքստում ստորադաս դատարանների հետևությունները՝ հերքման տեքստ հրապարակելու վերաբերյալ հանձնարարությունը ԵՊՀ-ի՝ որպես գործատուի և Գևորգ Էմին-Տերյանի՝ որպես աշխատողի աշխատանքային իրավահարաբերություններից չբխելու, հերքում հրապարակելու պահանջը գործատու-աշխատող իրավահարաբերությունների շրջանակում չտեղավորվելու վերաբերյալ, Վճռաբեկ դատարանը գնահատում է գործի փաստական հանգամանքներից, մասնավորապես 26.08.2021 թվականի հանձնարարության բովանդակությունից չբխող:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Գևորգ Էմին-Տերյանից՝ որպես ԵՊՀ-ի մամուլ խոսնակից պահանջվել է բացառապես տեքստի նախագծի պատրաստում և համաձայնեցում, մինչդեռ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ տրվել է հերքման տեքստ հրապարակելու հանձնարարություն:

Այսպիսով, չի հիմնավորվել, որ 26.08.2021 թվականի հանձնարարությամբ աշխատողի վրա դրվել է հերքում հրապարակելու պարտականություն, քանի որ այդպիսի բովանդակությամբ հանձնարարություն գործում առկա չէ, իսկ տրված հանձնարարությունն էլ աշխատողի կողմից պարտադիր կատարման ենթակա որևէ անօրինական ցուցում չի պարունակում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ 26.08.2021 թվականի բովանդակությամբ հանձնարարությունը (տե՛ս փաստ 5) բխում է ինչպես ԵՊՀ-ի կառավարման մարմնի՝ որպես գործատուի՝ հանձնարարություն տալու, դրա կատարումը վերահսկելու իրավասությունից, այնպես էլ այդ հանձնարարությունը կատարելու և ԵՊՀ-ի հեղինակության բարձրացման մասին հոգալու Գևորգ Էմին-Տերյանի՝ որպես աշխատողի պարտականությունից (տե՛ս սույն որոշման 1) կետը):

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվոր Գևորգ-Էմին-Տերյանը՝ որպես աշխատող, ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 26.08.2021 թվականի հանձնարարությունը (տեքստի նախագծի պատրաստում և համաձայնեցում) կատարելու պարտականություն ունեցել է:

2) Երկրորդ հարցադրման կապացությամբ հարկ է նկատի ունենալ, որ միաժամանակ սույն գործով ԵՊՀ-ի՝ որպես գործատուի կողմից Գևորգ Էմին-Տերյանին՝ որպես աշխատողին հասցեագրված 26.08.2021 թվականի աշխատանքային հանձնարարությունը կատարված չլինելու փաստը հիմնավորվում է գործում առկա ապացույցներով:

Այսպես, ԵՊՀ-ի հանրային կապերի ծառայության պետ, ԵՊՀ-ի մամուլի խոսնակ Գևորգ Էմին-Տերյանի կողմից ԵՊՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանին հասցեագրված «Բացատրություն» վերտառությամբ 31.08.2021 թվականի գրությամբ փաստացի ներկայացված են 26.08.2021 թվականի հանձնարարությունը չկատարելու պատճառները, որոնք ըստ էության հանգում են հետևյալին՝

- 24.08.2021 թվականին «Առավոտ» օրաթերթում հրապարակված հոդվածը վերաբերել է Հ. Հովհաննիսյանին՝ որպես ֆիզիկական անձի, ոչ թե որպես ԵՊՀ-ի ռեկտորի,

- հոդվածը չի վերաբերում ԵՊՀ-ին, չի առնչվում վերջինի հեղինակությանը, ԵՊՀ-ի իրավունքները որևէ կերպ խախտված չեն,

- Ռեկտորը Գևորգ Էմին-Տերյանին հոդվածը հերքելու պահանջ ներկայացնելու իրավունք չունի:

Այսինքն՝ աշխատողը ներկայացված բացատրությամբ անուղղակիորեն ընդունել է հանձնարարությունը կատարված չլինելու հանգամանքը՝ շարադրելով այն չկատարելու պատճառները:

Ընդ որում, հանձնարարությունը չկատարելու վկայակոչված պատճառաբանությունները չեն բխում բուն հանձնարարությունից, դրա բովանդակությունից, քանի որ 26.08.2021 թվականի հանձնարարությունը չի բովանդակում հայցվորի՝ որպես հողվածի հեղինակ ֆիզիկական անձի անունից հերքում հրապարակելու պահանջ:

Անդրադառնալով նաև գործատուի աշխատանքային հանձնարարությունը հստակ և որոշակի չլինելու վերաբերյալ հայցվորի բացատրություններին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ ցանկացած աշխատանքային գործունեություն ենթադրում է գործատուի կողմից աշխատողին հանձնարարությունների հասցեագրում և վերջինիս կողմից նշված հանձնարարությունների կատարմանն ուղղված գործողությունների իրականացում, և նշված բնականոն աշխատանքային գործընթացի ընթացքում օբյեկտիվորեն հնարավոր են իրավիճակներ, երբ տրված հանձնարարությունների կապակցությամբ աշխատողի մոտ առկա լինեն որոշակի մտահոգություններ և (կամ) հարցեր ու (կամ) աշխատողի համար հանձնարարության կատարման կապակցությամբ պահանջվեն լրացուցիչ պարզաբանումներ, ինչը, սակայն, չի կարող ենթադրել, որ աշխատողը կարող է առհասարակ հրաժարվել նշված հանձնարարությունների կատարումից և ցուցաբերել լիակատար անգործություն:

Բարեխիղճ աշխատանքը ենթադրում է, որ աշխատողը ողջամտորեն պետք է ձեռնարկի որոշակի միջոցներ՝ բացահայտելու իրեն առաջադրված պահանջի բովանդակությունը և ակնկալվող կատարման եղանակը (այդ թվում՝ ներկայացնել նշված խնդիրը իր անմիջական աշխատանքային ղեկավարին), և (կամ) ողջամտության սահմաններում ձեռնարկել միջոցներ իրեն հասցեագրված հանձնարարության կապակցությամբ առկա հարցերի պատասխանները ստանալու համար, որպիսի գործողությունների կատարումից հետո և գործատուի կողմից հանձնարարության կատարման խոչընդոտների վերացման կապակցությամբ որոշակի միջոցներ չձեռնարկելու պայմաններում միայն կարելի է խոսել աշխատողի մոտ մեղքի, ուստի և կարգապահական խախտման դեպքի բացակայության մասին:

Մինչդեռ տվյալ դեպքում հայցվորը, ստանալով հանձնարարականը, ի սկզբանե ցուցաբերել է անգործություն, իսկ հայցվորի կողմից վկայակոչված խնդիրների բնույթը թույլ է տալիս եզրահանգել, որ հայցվորի կողմից շրջահայացություն և բարեխիղճություն ցուցաբերելու պայմաններում դրանք կարելի էր լուծել և սահմանված կարգով իրականացնել աշխատանքային հանձնարարությունը, ինչը, սակայն, հայցվորի կողմից չի կատարվել:

Վերոշարադրյալը Վճռաբեկ դատարանին թույլ է տալիս եզրահանգելու, որ հայցվորն ունեցել է 26.08.2021 թվականի աշխատանքային հանձնարարությունը կատարելու պարտականություն, հանձնարարության կատարումը բխել է հայցվորի՝ որպես ստորաբաժանման ղեկավարի, մամուլ խոսնակի՝ ԵՊՀ-ի հեղինակության բարձրացման մասին հոգալու պարտականության կատարման ապահովման անհրաժեշտությունից, հայցվորի հաստիքին վերագրված գործառնությունից (ԵՊՀ-ի նեկրոթի ժամանակավոր պաշտոնակատարի՝ հայցվորի վերադարձը հանդիսանալու և հայցվորին հանձնարարություն փախու իրավասության առկայությունը, ինչպես նաև ԵՊՀ-ի շահերից բխող գործառնությունը կատարելու աշխատանքային պարտականություն ունենալու փաստը հայցվորն ընդունել է նաև գրավոր բացատրությամբ՝ նշելով. «Ես՝ որպես ԵՊՀ հանրային կապերի ծառայության պետ,

*պարտավոր եմ իմ աշխատանքային գործունեության ընթացքում իրականացնել իմ պարտականությունները, որոնք բխում են ԵՊՀ շահերից, սակայն ոչ անձերի (ինչքան էլ աշխատանքային իրավահարաբերություններով պայմանավորված նրանք իմ նկատմամբ ունեն վերադաս դիրք»)), ինչը հայցվորը պետք է կատարեր բարեխղճորեն և պատշաճ, սակայն չի կատարել:*

Ըստ էության առկա է եղել հայցվորի կողմից իր գործատուի աշխատանքային բնույթի հանձնարարության կատարումից հրաժարվելու դեպք, ինչը հաստատվում է գործով առկա վերոշարադրյալ գրավոր ապացույցների համակցությամբ:

Տվյալ դեպքում վիճարկվող հրամանի հիմքում վկայակոչվել է բացառապես 26.08.2021 թվականի աշխատանքային հանձնարարությունը չկատարելու փաստը, իսկ ԵՊՀ-ի հեղինակության բարձրացման մասին հոգալու պարտականությունը վկայակոչվել է՝ ի հիմնավորումն նշված հանձնարարությունը կատարելը հայցվորի աշխատանքային պարտականություններից բխելու փաստի՝ ելնելով հայցվորի կողմից գրավոր բացատրությամբ ներկայացված փաստարկներից:

Վկայակոչված փաստական հանգամանքներն անտեսվել են ստորադաս դատարանների կողմից:

Ամփոփելով շարադրվածը՝ Վճռաբեկ դատարանը եզրակացնում է, որ ստորադաս դատարանները գործում առկա ապացույցների սխալ գնահատման հետևանքով հանգել են հայցվորի վրա իր աշխատանքային գործառույթների հետ չառնչվող պարտականություն դրված լինելու, այն կատարելու պարտականություն չունենալու վերաբերյալ չհիմնավորված հետևության, ինչն ազդել է գործի ելքի վրա և բավարար է Վերաքննիչ դատարանի վիճարկվող դատական ակտը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր որոնի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար՝ գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:



ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի կանոններին համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ նույն գլխի կանոնների համաձայն:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար պետական տուրքի գումարը վճարված է, և վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակի, գտնում է, որ հայցվորի՝ կիրառելի խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «ա» կետի ուժով պետական տուրքի վճարումից ազատված լինելու և Վճռաբեկ դատարանում այլ դատական ծախսերի մասով փաստաթղթեր ներկայացված չլինելու պայմաններում Վճռաբեկ դատարանում դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.10.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Գևորգ Էմին-Տերյանի հայցն ընդդեմ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի 07.09.2021 թվականի կարգապահական տույժ կիրառելու մասին թիվ 165/80 հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

# 19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր  
Դատավորներ

Քաղաքացիական գործ թիվ **ՍնԴ/0036/02/20 2022թ.**  
ՍնԴ/0036/02/20  
Ս. Գրիգորյան  
Ա. Կուրեվյան  
Գ. Թորոսյան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- |                  |               |
|------------------|---------------|
| <i>Նախագահող</i> | Ս. ԴՐՄԵՅԱՆ    |
| <i>գեկուցող</i>  | Ա. ՄԿՐՏՉՅԱՆ   |
|                  | Ս. ԱՆՏՈՆՅԱՆ   |
|                  | Ա. ԲԱՐՄԵՂՅԱՆ  |
|                  | Գ. ՀԱԿՈԲՅԱՆ   |
|                  | Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ |
|                  | Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  |
|                  | Է. ՍԵՂՐԱԿՅԱՆ  |

2022 թվականի նոյեմբերի 23-ին գրավոր ընթացակարգով քննելով «Պրեմիում Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Ջոն Ասատրյանի սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմայանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Ընկերության ընդդեմ Ջոն Ասատրյանի, Սասուն Ասատրյանի, Սիրվարդ Ասատրյանի՝ գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ջոն Ասատրյանի սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմայանը և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Ընկերությունը պահանջել են անվավեր ճանաչել Երևան քաղաքի Պ. Սևակի փողոցի 106 շենքի 47 բնակարան հասցեի անշարժ գույքի մասի առովաճառքի 19.09.2019 թվականի թիվ 8352 պայմանագիրը և Սասուն

Ասատրյանի ու Սիրվարդ Ասատրյանի անվամբ թիվ 8352 պայմանագրի հիմքով կատարված սեփականության իրավունքի գրանցումը, վերականգնել Ջոն Ասատրյանի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Պ. Սևակի փողոցի 106 շենքի 47 բնակարան հասցեի անշարժ գույքի 1/4 բաժնի նկատմամբ:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր Տ. Փոլադյան) (այսուհետ՝ Դատարան) 13.10.2021 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.05.2022 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.10.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ Ռոզա Մինասյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածը և սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը:*

*Բողոքաբերը նշված պնդումները պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը ստորագրվել է 19.09.2019 թվականին, իսկ իրավունքի պետական գրանցումն իրականացվել է 24.09.2019 թվականին: Մինչդեռ Երևան քաղաքի Պ. Սևակի փողոցի 106 շենքի 47 հասցեի բնակարանում պարտապան Ջոն Ասատրյանին պատկանող բաժնի օտարման գործարքից ծագող իրավունքների պետական գրանցումն իրականացնելիս առկա չի եղել այդ գույքի օտարումը թույլատրող դատարանի որոշում:

Վերաքննիչ դատարանը նշել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմանափակումն իրավաբանական ուժ է ձեռք բերում դրա պետական գրանցման պահից:

Թեպետ դատարանը պետք է սնանկության դիմումը վարույթ ընդունելու որոշումն անհապաղ ուղարկեր իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմիններ, սակայն այդ կարգավորումը պայմանավորված է օրենքի ուժով գոյություն ունեցող սահմանափակման մասին տեղեկատվությունը պետական մարմիններ ներկայացնելու անհրաժեշտությամբ: «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը գույքն օտարելու սահմանափակում նախատեսում է դիմումը վարույթ ընդունելու պահից, ոչ թե այդ սահմանափակումը ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գրանցելու պահից: Հետևաբար՝ անկախ դատարանի կողմից տեղեկատվությունը ներկայացնելու հանգամանքից, սահմանափակումն օրենքի ուժով պետք է համարվի կիրառված:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.05.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցն ամբողջությամբ բավարարել:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը

1) Թիվ ՄՆԴ/1528/04/19 սնանկության գործով Ընկերության դիմումը՝ Ջոն Ասատրյանին սնանկ ճանաչելու մասին, ՀՀ սնանկության դատարանի (դատավոր Տ. Փոլադյան) 19.09.2019 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ **(հատոր 1, գ.թ. 13)**։

2) Ջոն Ասատրյանի, որպես վաճառողի, և Մասուն և Սիրվարդ Ասատրյանների, որպես գնորդների, միջև 19.09.2019 թվականին ստորագրվել է անշարժ գույքի մասի առուվաճառքի պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր), որով Ջոն Ասատրյանը վաճառել է, և Մասուն և Սիրվարդ Ասատրյանները ձեռք են բերել Երևան, Քանաքեռ-Զեյթուն Պարույր Սևակի փողոցի 106 շենքի 47 հասցեի բնակարանի 1/4 բաժինը **(հատոր 1, գ.թ. 11)**։

3) ՀՀ Կադաստրի կոմիտեի 19.06.2020 թվականի թիվ ԱՏ-19062020-01-0282 տեղեկանքի համաձայն՝ Երևան, Քանաքեռ-Զեյթուն Պարույր Սևակի փողոցի 106 շենքի 47 հասցեի անշարժ գույքի նկատմամբ 24.09.2019 թվականին կատարվել է իրավունքի պետական գրանցում, հիմքը՝ 19.09.2019 թվականի 8352 մասի առուվաճառքի պայմանագիր **(հատոր 1, գ.թ. 108)**։

4) ՀՀ Կադաստրի կոմիտեի 23.06.2021 թիվ ԱՏ-23062021-99-0221 տեղեկանքի համաձայն՝ Ջոն Ասատրյանի սնանկության վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ՀՀ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային համակարգ մուտքագրվել է 11.10.2019 թվականին **(հատոր 2, գ.թ. 41)**։

**4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, մասնավորապես բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական ու կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար։

*Սույն բողոքի քննության շրջանակում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը՝ ե՞րբ է սկսում գործել առանց դատարանի որոշման պարտապանի գույքն օտարելու՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված սահմանափակումը։*

**(Ա)** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ։

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դիմումը վարույթ ընդունելու մասին դատավորը կայացնում է որոշում (...):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի համաձայն՝ դատարանը սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկում է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններին, ինչպես նաև կենտրոնական դեպոզիտարիա։

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից՝ արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի գույքի, ինչպես նաև նրա մասնակցի (մասնակիցների) սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայքաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը, բացառությամբ նույն օրենքի 55-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած իր որոշման մեջ անդրադառնալով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածին, արձանագրել է, որ այդ հոդվածով օրենսդիրը նախատեսել է պարտատերերի պահանջների բավարարման սառեցման կամ այլ կերպ ասած՝ մորատորիումի ինստիտուտը: Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը կամ մորատորիումը պարտապանի վճարունակության վերականգնման նպատակին հասնելու միջոցներից մեկն է: Այն առաջնահերթ ուղղված է պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն (յրեն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն ընդդեմ «ԱՍՏ» ՓԲԸ-ի և մյուսների թիվ ԵԿԴ/1873/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշմամբ նշել է նաև, որ սնանկության վարույթի առանձնահատկություններով, սնանկության նպատակներով պայմանավորված՝ պարտապանի նկատմամբ կիրառվում են մի շարք սահմանափակումներ՝ սկսած պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ ընդունելու պահից: Մասնավորապես՝ արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի պարտավորություններով պարտատիրոջը դրամական կամ այլ բավարարում տալը («Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և 2-րդ մասի 2-րդ կետեր), պարտապանի գույքը տնօրինելը («Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետ), պարտատիրոջն արգելվում է մինչև պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմում ներկայացնելը պարտապանի նկատմամբ ստանձնած ցանկացած պարտավորության հաշվանցը պարտապանի նկատմամբ ունեցած իր պահանջի հետ («Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետ) և այլն: Նշված սահմանափակումներն *ինքնանպասպակ չեն*, այլ ուղղված են սնանկության գործընթացում պարտապանի գույքի ամբողջականության ապահովմանը՝ նպատակ ունենալով ապահովելու պարտատերերի պահանջների՝ օրենքով սահմանված հերթականությամբ համաչափ բավարարումը: Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը միաժամանակ ուղղված է նաև պարտապանի շահերի բավարարմանը՝ նկատի ունենալով, որ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է դատարանի հսկողությամբ (...): Հետևաբար՝ պարտատերերի պահանջների բավարարման սառեցման նպատակը մի կողմից բոլոր պարտատերերի շահերի ապահովումն է, որպեսզի որևէ պարտատեր օրենքով սահմանված առաջնահերթության խախտմամբ բավարարում չստանա, մյուս կողմից պարտապանի շահերի ապահովումն է՝ նկատի ունենալով, որ պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգի հստակ պահպանմամբ՝ նպատակ ունենալով հնարավորինս ապահովելու նաև պարտապանի գործունեությունը (յրեն «Դոն-Ալֆոն» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Յուրիկ Օհանյանն ընդդեմ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի թիվ ԵԱԲԴ/0254/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ սնանկության գործընթացի նպատակն է երաշխիքներ ստեղծել մի կողմից՝ պարտատերերի պահանջները համահասնորեն բավարարելու, մյուս կողմից՝ հնարավոր դեպքերում պարտապանի գույքային դրությունը կայունացնելու (պարտապանի վճարունակության վերականգնումը) և նրա տնտեսական գործունեության շարունակականությունն ապահովելու համար: Մասնավորապես, պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել, որ կիրառված սահմանափակումները չսահմանափակեն անձի սեփականության իրավունքի իրացման հնարավորությունն այն աստիճանի, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Դրա համար անհրաժեշտ է ապահովել սահմանափակման նպատակի իրավաչափությունը, կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև համաչափության ողջամիտ հարաբերակցությունը: Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում սնանկության գործընթացում պետք է հաշվի առնվեն բոլոր շահագրգիռ կողմերի շահերը:

ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ սնանկության վարույթում օրենքով սահմանված կարգով պարտապանին սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ ընդունելու պահից սկսած պարտապանի նկատմամբ կիրառվում են սահմանափակումներ, որոնց նպատակը *պարտատերերի իրավունքների օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկն է*: Այսինքն՝ դատավարական այս եղանակով պարտատերերն ապահովում են իրենց՝ պարտապանի գույքից բավարարում ստանալու իրավունքն այն դեպքում, երբ պարտապանը կփորձի լինել անբարեխիղճ (*լրեն, «ՍԱԿԵ» ԲԸ-ն ընդդեմ «Սպիրակ-1» ԲԲԸ-ի թիվ ՍՄԴ/0837/04/19 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.10.2021 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է «Մանկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետին և 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետին՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում (*լրեն, Արարավազդ Միմոնյանն ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի, երրորդ անձինք՝ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, Վահան Թերզյանի, սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ Արսեն Չիրչյանի թիվ ՎԴ3/0075/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2022 թվականի որոշումը*): Այդ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը վերստին հաստատել է, որ ինքնանպատակ չէ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետում սնանկության վերաբերյալ **դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը** նաև գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններին դատարանի կողմից անհապաղ ուղարկելու վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանված պահանջը, քանի որ, ըստ օրենքի կարգավորման նպատակի, նշված նորմով օրենսդիրը սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից պարտապանի գույքի, ի թիվս այլնի, նաև օտարումն արգելելու նպատակ է հետապնդել: Միաժամանակ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ «(...) գույքի նկատմամբ դատարանի ակտի հիման վրա սահմանափակում կիրառված լինելու դեպքերում, որպիսին համարվում է նաև սնանկության վերաբերյալ **դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը**, քանի որ այն առաջացնում է պարտապանի գույքն առանց դատարանի որոշման որևէ իրավունքով ծանրաբեռնելու սահմանափակում, անարժ գույքի պետական միասնական կադաստրը կրում է այդ սահմանափակումը համապարասխան դատարանի ակտը սրանապուց հետո գրանցման մատյանում պետական գրանցման ենթարկելու պարտականություն»:

Առաջնորդվելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումներով՝ Վճռաբեկ դատարանը վերստին փաստում է, որ պարտատերերի իրավունքների պաշտպանությունն ապահովելու հարցում կարևորվում է սնանկության ամբողջ ընթացքում պարտապանի գույքի ամբողջականությունն ապահովելու երաշխիքի առկայությունը: Ընդ որում՝ պարտապանի կողմից անբարեխիղճ վարքագիծ դրսևորելու հնարավորությունը նվազեցնելու նպատակով նրա գույքի նկատմամբ սահմանափակումներ սկսվում են կիրառվել սնանկության վարույթի հարուցման պահից:

Մանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու փաստն արդեն ստեղծում է պարտապանի հնարավոր սնանկության վտանգ, ինչն այդ փուլում առաջացնում է իր գույքի էական նվազեցմանն ուղղված պարտապանի հետագա անբարեխիղճ վարքագիծը կանխելու անհրաժեշտություն: Այդ պատճառով առանց դատարանի որոշման պարտապանի գույքն օտարելու արգելքը սկսում է գործել սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու պահից, որպիսի միակ փաստի հետ օրենսդիրը պայմանավորել է այդ արգելքի գործարկումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված՝ առանց դատարանի որոշման պարտապանի գույքն օտարելու սահմանափակումը կիրառելու համար նշված նորմը որևէ այլ պայման, քան սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն է, չի պահանջում: Ուստի սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման առկայությունն արդեն բավարար է «Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված արգելքի առկայության փաստը հաստատելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո պարտապանի գույքի վերաբերյալ կնքված օտարման, վարձակալության, գրավադրման կամ այն այլ ձևով ծանրաբեռնող գործարքները համարվում են օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարքներ: Այդ գործարքները փաստացի կնքվում են «Մանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով սահմանված պահանջի խախտմամբ, հետևաբար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով անվավեր գործարքներ են:

(Բ) Ինչ վերաբերում է «Մանկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով սահմանված՝ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններին անհապաղ ուղարկելու դատարանի պարտականությանն ու նույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հետ դրա փոխգործակցմանը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և այլ գույքային իրավունքները, այդ իրավունքների *սահմանափակումները*, դրանց ծագումը, փոխանցումն ու դադարումը ենթակա են պետական գրանցման (...):

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ **անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը** գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման, գույքի կադաստրային գնահատման, հաշվառման, գույքի, դրա նկատմամբ իրավունքների, իրավունքների սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, տեղեկատվական բանկի ստեղծման և

կառավարման միասնական գործառույթն է: Իսկ **պետական գրանցումը** նույն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից իրականացման ենթակա պարտադիր գործառույթ է, որն ուղղված է պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման, փոխանցման, դադարման և սահմանափակումների ճանաչման, ինչպես նաև պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների հավաքագրման, մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության ու միասնականության ապահովմանը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ ի թիվս այլնի, պետական գրանցման հիմնական սկզբունքն ու խնդիրն է պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների **ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը**:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ սահմանափակումների պետական գրանցման համար հիմք են **դատական ակտերը, (...)**:

Նշված նորմերի մեկնաբանությունից հետևում է, որ գույքի նկատմամբ իրավունքների, ինչպես նաև սահմանափակումների պարտադիր պետական գրանցում իրականացնելու գործառույթը հետապնդում է պետության կողմից դրանք ճանաչելու, դրանց երաշխավորումն ու պաշտպանությունն իրականացնելու նպատակներ: Ընդ որում՝ սահմանափակումների պետական գրանցում իրականացնելու հիմք է նաև դատական ակտը: Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքի նկատմամբ որևէ իրավունքի սահմանափակման մասին դատական ակտը պետական գրանցում իրականացնող մարմնի համար հիմք է այդ սահմանափակման պետական գրանցում իրականացնելու և այդ կերպ պետության կողմից այն ճանաչելու, երաշխավորելու և պաշտպանելու համար:

Այլ կերպ ասած՝ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման հիմքը դատական ակտն է, որի ընդունման հետ էլ պետք է կապել արգելքի առկայությունը, իսկ պետական գրանցումը դատական ակտի հիման վրա արդեն իսկ կիրառված սահմանափակման ճանաչումը, դրա երաշխավորումն ու պաշտպանումն է պետության կողմից: Ուստի գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակումն առկա է համապատասխան դատական ակտի ընդունման, և ոչ թե այդ սահմանափակումը պետական գրանցման ենթարկելու պահից:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետը և 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը նշված հիմնավորումների ներքո մեկնաբանելու արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առանց դատարանի որոշման պարտապանի գույքի օտարումն արգելվում է սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից, իսկ այդ որոշումն իրավունքների պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններին անհապաղ ուղարկելու դատարանի պարտականությունը կարևորվում է այդ սահմանափակումը պետական գրանցման ենթարկելու ուժով պետության կողմից ճանաչելու, երաշխավորելու և պաշտպանելու անհրաժեշտությամբ:

Այսինքն՝ պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման կայացման պահից առանց դատարանի որոշման պարտապանի գույքի օտարման սահմանափակումը համարվում է կիրառված՝ պարտատերերի իրավունքները երաշխավորելու նպատակով, և այն, որպես սահմանափակման կիրառման հիմք, դատարանի կողմից անհապաղ ուղարկվում է



իրավունքների պետական գրանցումն իրականացնող պետական մարմիններին սահմանափակումը պետության կողմից ճանաչելու, երաշխավորելու և պաշտպանելու նպատակով: Նշվածը հիմք ընդունելով, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ օրենսդրի կողմից սահմանված սահմանափակման որոշումն անհապաղ գրանցում իրականացնող մարմինն ուղարկելու պահանջն իր հերթին վերը նշված նպատակների համահունչ իրագործման նպատակ է հետապնդում: Ուստի դատարանները պարտավոր են իրենց գործունեության ընթացքում կատարելու նշված պահանջը և **անհապաղ** ուղարկել գրանցում իրականացնող մարմիններին համապատասխան որոշումները նաև բացառելու սույն գործի հիմքում ընկած իրավիճակը:

Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված սահմանափակման կիրառումը դրա պետական գրանցման ենթարկելու պահով պայմանավորելու դեպքում այն կորցնում է իր գործնական նշանակությունը և դառնում ինքնանպատակ: Այդ դեպքում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված սահմանափակման գործարկումը կախվածության մեջ է դրվում դատարանի և իրավունքների պետական գրանցումն իրականացնող մարմինների գործողություններից: Ավելին՝ խեղաթյուրվում է օրենսդրի հետապնդած՝ սահմանափակումը պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշման պահից կիրառելու և այդ փուլից ի վեր պարտապանի գույքի ամբողջականության պահպանության նկատմամբ դատական վերահսկողություն սահմանելու նպատակը, որը հստակ և որոշակի ամրագրված է Օրենսդրի կողմից և որևէ բացառություն չի նախատեսում:

### *Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ջոն Ասատրյանին սնանկ ճանաչելու մասին Ընկերության դիմումը ՀՀ սնանկության դատարանի 19.09.2019 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ (թիվ ՄՆԴ/1528/04/19 սնանկության գործով):

Ջոն Ասատրյանի, որպես վաճառողի, և Սասուն և Սիրվարդ Ասատրյանների, որպես գնորդների, միջև 19.09.2019 թվականին ստորագրվել է անշարժ գույքի մասի առուվաճառքի պայմանագիր, որով Ջոն Ասատրյանը վաճառել է, և Սասուն և Սիրվարդ Ասատրյանները ձեռք են բերել Երևան, Քանաքեռ-Զեյթուն Պարույր Սևակի փողոցի 106 շենքի 47 հասցեի բնակարանի 1/4 բաժինը:

ՀՀ Կադաստրի կոմիտեի 19.06.2020 թվականի թիվ ԱՏ-19062020-01-0282 տեղեկանքի համաձայն՝ Երևան, Քանաքեռ-Զեյթուն Պարույր Սևակի փողոցի 106 շենքի 47 հասցեի անշարժ գույքի նկատմամբ 24.09.2019 թվականին կատարվել է իրավունքի պետական գրանցում, հիմքը՝ 19.09.2019 թվականի 8352 մասի առուվաճառքի պայմանագիր:

ՀՀ Կադաստրի կոմիտեի 23.06.2021 թիվ ԱՏ-23062021-99-0221 տեղեկանքի համաձայն՝ Ջոն Ասատրյանի սնանկության վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ՀՀ Կադաստրի կոմիտեի էլեկտրոնային համակարգ մուտքագրվել է 11.10.2019 թվականին:

Դիմելով դատարան՝ Ջոն Ասատրյանի սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմալյանը և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ Ընկերությունը պահանջել են անվավեր ճանաչել Երևան քաղաքի Պ. Սևակի փողոցի 106 շենքի 47 բնակարան հասցեի անշարժ գույքի

մասի առուվաճառքի 19.09.2019 թվականի թիվ 8352 պայմանագիրը և Սասուն Ասատրյանի ու Սիրվարդ Ասատրյանի անվամբ թիվ 8352 պայմանագրի հիմքով կատարված սեփականության իրավունքի գրանցումը, վերականգնել Ջոն Ասատրյանի սեփականության իրավունքը Երևան քաղաքի Պ. Սևակի փողոցի 106 շենքի 47 բնակարան հասցեի անշարժ գույքի 1/4 բաժնի նկատմամբ:

**Դատարանը** մերժել է հայցը հետևյալ պատճառաբանությամբ՝ «(...) հայցվոր կողմը պետք է հիմնավորեր պարտապան Ջոն Ասատրյանի համար որոշակի գործողությունների կատարումը սահմանափակող նորմով սահմանված իրավակարգավորման վրա հասնելու պահը:

(...) հայցվոր կողմին չհաջողվեց ապացուցել, որ 19.09.2021 թվականին կնքված առուվաճառքի պայմանագիրը կնքվել է ՀՀ սնանկության դատարանի 19.09.2019 թվականի «Պրեմիում Կրեդիթ» ՈԻՎԿ փակ բաժնետիրական ընկերության Ջոն Ասատրյանին սնանկ ճանաչելու մասին դիմումը վարույթ ընդունելու որոշումը կայացնելուց հետո, որի պարագայում կգործեր «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով պարտապանին որոշակի գործողություններ կատարելը սահմանափակող նորմը, որպիսի հանգամանքների առկայության պարագայում, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների ուժով, կարող էին առաջանալ քննարկվող գործարքների անվավերության առերևույթ հարկանիշներ:

Ավելին, Դատարանն արձանագրում է, որ հայցվոր կողմին սույն քաղաքացիական գործի քննության ընթացքում չհաջողվեց ապացուցել, որ Ջոն Ասատրյանը տեղյակ է եղել սնանկության դիմում դատարան ներկայացված լինելու մասին (...):

**Վերաքննիչ դատարանը** մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքն ու Դատարանի վճիռը թողել անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ «(...) սույն գործում չկա որևէ փաստական հիմք առ այն, որ վիճարկվող առուվաճառքի պայմանագրի ստորագրման պահին (19.09.2019 թվականին), ինչպես նաև դրանից ծագող իրավունքի պետական գրանցման պահին (24.09.2019 թվականին) առկա է եղել ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն, Պ. Սևակի փողոցի 106-րդ շենքի 47-րդ բնակարանի նկարմամբ Ջոն Ասատրյանի տնօրինման իրավունքի գրանցված սահմանափակում, հետևաբար նշված ժամանակահատվածում առուվաճառքի պայմանագրի կնքման համար իրավական արգելք գոյություն չի ունեցել (...):

Թեև սույն գործով վիճարկվող առուվաճառքի պայմանագրից ծագած իրավունքը գրանցվել է 24.09.2019 թվականին, այդուհանդերձ, ինչպես վերը նշվեց, պայմանագրից բխող իրավունքի պետական գրանցման պահին առկա չի եղել Բնակարանի նկարմամբ Ջոն Ասատրյանի տնօրինման իրավունքի գրանցված սահմանափակում, հետևաբար վերոնշյալ պայմանագրի կնքման հարցում կողմերը իրավական խոչընդոտ չեն ունեցել: Ավելին, ՀՀ կադաստրի կոմիտեն 23.06.2021 թվականի տեղեկանքով հայտնել է, որ Ջոն Ասատրյանի սնանկության վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի դիմումը վարույթ ընդունելու մասին 04.10.2019 թվականի ՄԵԿ/1528/04/19 որոշումը ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային համակարգ մուտքագրվել է 11.10.2019 թվականին (...):

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրակացությունների իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ արդյունքում հանգեցրել նշված հոդվածով նախատեսված սահմանափակումը կիրառված համարելու պահի կապակցությամբ սխալ եզրահանգման:

Վերաքննիչ դատարանը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված արգելքի կիրառումը պայմանավորել է

պարտապան Ջոն Ասատրյանի տնօրինման իրավունքի սահմանափակումը պետական գրանցման ենթարկված լինելու հանգամանքով: Արդյունքում՝ Վերաքննիչ դատարանը հանգել է այն եզրակացության, որ Պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ՝ 24.09.2019 թվականին, սահմանափակում դեռևս առկա չի եղել, քանզի համապատասխան սահմանափակումը պետական գրանցման ենթարկված չի եղել:

Մինչդեռ քննարկվող նորմով նախատեսված՝ առանց դատարանի որոշման գույքն օտարելու պարտապանի իրավունքի սահմանափակումը կիրառվում է պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացվելու պահից, տվյալ դեպքում՝ 19.09.2019 թվականից: Անկախ այն հանգամանքներից, թե ՀՀ սնանկության դատարանը նշված որոշումը երբ է ուղարկել ՀՀ Կադաստրի կոմիտեին և վերջինս այն երբ է ստացել ու պարտապան Ջոն Ասատրյանի տնօրինման իրավունքի սահմանափակումը պետական գրանցման ենթարկել, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի կիրառման հիմքը եղել է ՀՀ սնանկության դատարանի 19.09.2019 թվականի որոշումը: Ուստի 19.09.2019 թվականից ի վեր գույքն օտարելու Ջոն Ասատրյանի իրավունքը եղել է սահմանափակված:

Ջոն Ասատրյանի, որպես վաճառողի, և Սասուն և Սիրվարդ Ասատրյանների, որպես գնորդների, միջև 19.09.2019 թվականին ստորագրված Պայմանագրով Երևան, Քանաքեռ-Զեյթուն Պարույր Սևակի փողոցի 106 շենքի 47 հասցեի բնակարանի 1/4 բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը գնորդներին պետական գրանցման է ենթարկվել 24.09.2019 թվականին: Նշված փաստերը հիմք ընդունելով, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել հետևյալը.

Առուվաճառքի պայմանագիրը գույքի օտարման պայմանագիր է, հետևաբար սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու որոշում կայացվելու պահից այդպիսի պայմանագիր կնքելու պարտապանի իրավունքը սահմանափակված է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 470-րդ հոդվածի 5-րդ կետի բովանդակությունից բխում է, որ առուվաճառքի պայմանագրի առանձին տեսակ է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 561-րդ հոդվածի համաձայն՝ վաճառողը, անշարժ գույքի առուվաճառքի (այսուհետ՝ անշարժ գույքի վաճառքի) պայմանագրով պարտավորվում է գնորդի սեփականությանը հանձնել հողամաս, շենք, շինություն, բնակարան կամ այլ անշարժ գույք (հոդված 134):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 562-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը կնքվում է գրավոր՝ կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով (450 հոդվածի 3-րդ կետ), իսկ 2-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 563-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագրով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը գնորդին ենթակա է պետական գրանցման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 449-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ այն պայմանագիրը, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման, կնքված է համարվում այդ իրավունքի գրանցման պահից:

Վերոշարադրյալից բխում է, որ գնորդին ի սեփականություն հանձնվելիք հողամասի, շենքի, շինության, բնակարանի կամ այլ անշարժ գույքի նկատմամբ

սեփականության իրավունքի փոխանցումը գնորդին ենթակա է պետական գրանցման, ուստի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը համարվում է կնքված այդ իրավունքի գրանցման պահից:

Վճռաբեկ դատարան անհրաժեշտ է համարում փաստել, որ Պայմանագիրը կնքվել է 24.09.2019 թվականին, մինչդեռ դրանից առաջ՝ դեռևս 19.09.2019 թվականին, Ջոն Ասատրյանին սնանկ ճանաչելու մասին Ընկերության դիմումը ՀՀ սնանկության դատարանի կողմից ընդունվել է վարույթ, որպիսի փաստի ուժով այդ օրվանից ի վեր պարտապան Ջոն Ասատրյանին արգելված է եղել առանց դատարանի որոշման իր գույքն օտարելը:

Վերոշարադրյալ պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը Վերաքննիչ դատարանի կողմից սխալ մեկնաբանելու կապակցությամբ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները և վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի 23.05.2022 թվականի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները սխալ են մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, որպիսի պայմաններում անհրաժեշտ է գործն ուղարկել ամբողջ ծավալով նոր քննության: Հետևաբար պետք է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վերապահված լիազորությունը՝ բեկանել Վերաքննիչ դատարանի 23.05.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Մասնկության դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

##### ***5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դարական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ ամբողջ ծավալով նոր քննություն իրականացնելու նպատակով գործն ուղարկվում է ՀՀ Մասնկության դատարան՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի քննության այս փուլում հնարավոր չէ անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին: Դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.05.2022 թվականի որոշումն ու գործն ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Մասնկության գործ թիվ **ՍնԴ/1246/04/21**  
**2023թ.**

Մասնկության գործ թիվ

ՍնԴ/1246/04/21

Նախագահող դատավոր՝

Ա. Խառատյան

Դատավորներ՝

Ն. Բարսեղյան

Լ. Գրիգորյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի  
քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող* Մ. ԴՐՄԵՅԱՆ  
*գեկուցող* Ա. ԱՆՏՈՆՅԱՆ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Է. ՍԵՂՈՒՅԱՆ

2023 թվականի հունվարի 25-ին

գրավոր ընթացակարգով քննելով Էռնեստ Ղազարյանի վճռաբեկ բողոքը  
սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.06.2022  
թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Կորյուն Մխիթարյանի՝ «Ասիամեգաստ-  
ոռյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկե-  
րություն) սնանկ ճանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կորյուն Մխիթարյանը պահանջել է Ընկերությանը ճա-  
նաչել սնանկ:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Տ. Փոլադյան) (այսուհետ՝ Դատա-  
րան) 22.11.2021 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Դատարանի 30.03.2022 թվականի որոշմամբ հաստատվել է Ընկերության  
պահանջների վերջնական ցուցակը, և նշանակվել է պարտատերերի առաջին  
ժողով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.06.2022 թվականի որոշմամբ Էռնեստ Ղազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, Արմեն Մինանյանի, Նիկոլայ Մուսոյանի, Հայկ Դանիելյանի, Լյուդվիգ Գզողյանի, Արտյոմ Մելքոնյանի, Դիանա Ենոքյանի, Ռաֆայել Տեր-Վարդանյանի, Վահագն Ղազարյանի, Տաթևիկ Սաֆարյանի, Նազիկ Հովհաննիսյանի, Նորայր Կարապետյանի, Ռադիկ Գևորգյանի, Ավետիք Մարտիրոսյանի, Արտակ Ավետյանի, Ալբերտ Հովհաննիսյանի, Սերգեյ Քոչարյանի, Կարապետ Ղազարյանի, Պետիկ Հովակիմյանի, Գայանե Սարգսյանի, Գրենիկ Միրզոյանի, Անահիտ Սարգսյանի, Տիգրան Գրիգորյանի, Կարեն Ստեփանյանի, Արտյոմ Հակոբյանի, Ադասի Խաչատրյանի, Լիլիթ Հարությունյանի, Էդմոնդ Գրիգորյանի, Ապրես Մարտիրոսյանի, Մարգարիտ Մարգարյանի, Վրեժ Վարդանյանի, Ցոլակ Թորոսյանի, Կոլյա Խաչիկյանի, Էդգար Հովակիմյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի «Մասնկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին» 30.03.2022 թվականի որոշումը մասնակի՝ բողոքը ներկայացրած անձանց պահանջների գրանցումը մերժելու մասով, վերացվել է, և այդ մասով հարցն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Էռնեստ Ղազարյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Մասնանսադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածը, չի կիրառել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի «է» կետը, որը պետք է կիրառեր, կիրառել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի «թ» կետը, որը չպետք է կիրառեր:*

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Բողոքաբերը նշել է, որ Դատարանի 30.03.2022 թվականի որոշմամբ հաստատվել է պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը, որով Էռնեստ Ղազարյանի պահանջը գրանցվել է որպես «թ» հերթի պահանջ: Նույն որոշմամբ Դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության 100 տոկոս բաժնետերերը հանդիսանում է «Էռնեստ Կո» ՍՊԸ-ն, Էռնեստ Ղազարյանի պահանջը՝ 696.474.155 ՀՀ դրամի չափով, գրանցել է որպես «թ» հերթի պահանջ: Վերաքննիչ դատարանն իր հերթին արձանագրել է, որ «Էռնեստ Ապրեսի Ղազարյանը հանդիսանում է «Էռնեստ Կո» սահմանափակ պայրասիանսարվոյթյամբ ընկերության և «Ասիամեզասարոյ» սահմանափակ պայրասիանսարվոյթյամբ ընկերության փոօրենր և սեփականատերերը: Վերաքննիչ դատարանը Դատարանի Էռնեստ Ղազարյանի՝ 696.474.155 ՀՀ դրամի չափով պահանջը՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ուժով Ընկերության պայրասրտերերի ցուցակի՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում գրանցելու վերաբերյալ հերկությունը գնահատել է իրավաչափ և սույն գործի փաստական հանգամանքներից բխող»:

Վերաքննիչ դատարանը խաթարել է արդարադատության բուն էությունը, քանի որ առանց գործում առկա ապացույցների, գործի նյութերի պատշաճ ուսումնասիրության՝ եկել է գործի նյութերից և օրենսդրությունից ակնհայտորեն չբխող

եզրահանգման՝ պահանջի գրանցման հերթի վերաբերյալ՝ այդկերպ խախտելով սահմանված արդար դատաքննության իրավունքն այն աստիճան, որ Էռնեստ Ղազարյանը, գտնվելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածով նախատեսված ամենավերջին հերթում, փաստացի զրկվելու է սնանկության վարույթով իրեն հասանելիք գումարների ստացումից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 20.06.2022 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ Էռնեստ Ղազարյանի պահանջը գրանցել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի «է» կետի հիմքով:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դիմելով դատարան՝ Կորյուն Մխիթարյանը պահանջել է Ընկերությանը ճանաչել սնանկ: ՀՀ սնանկության դատարանի 22.11.2021 թվականի վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ (**հավելված, հատոր 1, գ. թ. 3-9, 13-25**).

2) Էռնեստ Ղազարյանը դատարան է ներկայացրել Ընկերության հանդեպ ունեցած պահանջը, որի հիմքում դրել է իր և Ընկերության միջև 13.08.2020 թվականին կնքված նպատակային փոխառության պայմանագիրը, 13.05.2020 թվականին կնքված նպատակային փոխառության պայմանագիրը, 04.05.2020 թվականին կնքված թիվ 050 նպատակային փոխառության պայմանագիրը և խնդրել է գրանցել իր պահանջը Ընկերության պարտատերերի պահանջների ցուցակում՝ 696.474.150 ՀՀ դրամի չափով, որից 676.188.500 ՀՀ դրամը՝ պարտավորության մայր գումար, իսկ 20.285.655 ՀՀ դրամը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ (**հավելված, հատոր 1, գ. թ. 29-36**).

3) 04.08.2020 թվականին ՀՀ Երևան նոտարական տարածքում Ընկերության բաժնետերեր Ռադիկ Գևորգյանի, Գուլգանա Ամանշիևայի և «Էռնեստ Կո» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Բաժնեմասի առուվաճառքի» պայմանագիր, ըստ որի՝ Ընկերության բաժնետերեր Ռադիկ Գևորգյանը և Գուլգանա Ամանշիևան Ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը վաճառել են «Էռնեստ Կո» ՍՊԸ-ին 145.700.500 ՀՀ դրամով:

4) Ընկերության 100 տոկոս բաժնեմասը պատկանում է «Էռնեստ Կո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Վերոնշյալ փոփոխությունը ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 18.08.2020 թվականին:

5) Էռնեստ Ղազարյանը հանդիսանում է «Էռնեստ Կո» ՍՊԸ-ի տնօրենը և սեփականատերը և Ընկերության տնօրենը:

### **4. Վճռաբեկ դատարանի պարունտարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ այն հիմնավորմամբ, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածը, որը խաթարել է արդարադատության բուն էությունը,



և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին. արդյո՞ք սնանկ ճանաչված պարտապանի հիմնադիր հանդիսացող իրավաբանական անձի մասնակից ֆիզիկական անձի պահանջը ենթակա է գրանցման «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում, եթե վերջինս հանդիսանում է նաև պարտապան ընկերության փնթեկ:*

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և սույն օրենքով սահմանված կարգով: Եթե սույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կանոններով:

Նույն օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում, բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի:

1.1. Նույն օրենքի 11-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված միջնորդության առկայության և պարտատիրոջ կողմից սույն հոդվածով սահմանված ընդհանուր կարգով պահանջ ներկայացվելու դեպքում դատարանը դիտարկում է միայն այդ պահանջը:

2. Պարտատիրոջ պահանջում պետք է նշվեն՝

ա) պահանջը ներկայացնող պարտատիրոջ՝

- իրավաբանական անձի համար՝ անվանումը և գտնվելու վայրը,

- ֆիզիկական անձի համար՝ անունը և բնակության վայրը.

բ) պարտավորությունը, որից բխում է պահանջը, ինչպես նաև կատարման ժամկետը.

գ) պահանջի չափը՝ առանձին նշելով հիմնական պարտքի, վնասների, տուժանքի (տուգանքի, տույժի) չափերը՝ համապատասխան հաշվարկներով.

դ) պահանջը հիմնավորող հանգամանքները:

Պահանջին կից ներկայացվում են այն հիմնավորող փաստաթղթերը: Պահանջը ներկայացնելու ժամկետից հետո պահանջը հիմնավորող փաստաթղթեր կարող են ներկայացվել, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է սահմանված ժամկետում նման փաստաթուղթ ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Պահանջը և նրանց կից փաստաթղթերը ներկայացվում են 3 օրինակից:

2.1. Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները չպահպանելու դեպքում ներկայացված պահանջը չի դիտարկվում, որի մասին պարտատերը տեղեկացվում է ոչ ուշ, քան հաջորդ օրը:

3. Պահանջը սահմանված կարգով ներկայացվելու դեպքում գրանցվում է դատարանում:

4. Պահանջի գրանցումից ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում դատարանը պահանջի և նրան կից փաստաթղթերի օրինակներն ուղարկում է կառավարչին՝ դրա մեկ օրինակը պարտապանին հանձնելու համար:

5. Նույն հոդվածի առաջին մասով նախատեսված ժամկետում ներկայացրած բոլոր պահանջները կառավարիչն ընդգրկում է պարտատերերի պահանջների

նախնական ցուցակում՝ նույն օրենքի 82-րդ հոդվածով սահմանված պահանջների բավարարման հերթականությանը համապատասխան:

6. Պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետից հետո՝ եռօրյա ժամկետում, պահանջների նախնական ցուցակը կառավարիչը ներկայացնում է դատարան, պարտապանին, առավել մեծ պահանջներ ունեցող 5 պարտատերերին և հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Եթե հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը նախնական ցուցակի դեմ գրավոր առարկություններ չեն ներկայացնում դատարան, ապա դատավորը եռօրյա ժամկետում առանց նիստ հրավիրելու որոշում է կայացնում պահանջների ցուցակը հաստատելու մասին (վերջնական ցուցակ): (...)

8. Եթե իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հրապարակումից հետո՝ յոթ օրվա ընթացքում, կառավարիչը, պարտապանը և պարտատերերը գրավոր առարկություն են ներկայացնում պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, ապա դատարանը առարկությունն ստանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը և որոշում է կայացնում պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերի չապահովված պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

(...)

է) չապահովված պարտատերերի պահանջները, ներառյալ՝ պարտադիր սոցիալական վճարները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած՝ հարկերի և (կամ) վճարների, վարչարարությունից ծագած տուգանքների գծով պարտավորությունները, բացառությամբ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջների.

(...)

թ) պարտապանի հիմնադիրների (մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների) պահանջները (...):

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերլուծելով վերոգրյալ իրավադրույթները և հաշվի առնելով օրենսդրի նպատակը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը նախատեսելով սնանկության վարույթում պարտատերերի կողմից իրենց պահանջների ներկայացման որոշակի ընթացակարգ, միաժամանակ սահմանել է այդ պահանջների ցուցակը հաստատելու հստակ կառուցակարգ՝ այն եզրափակելով դատարանի կողմից պահանջների վերջնական ցուցակը հաստատելու վերաբերյալ լիազորության իրացմամբ: ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է

վկայակոչված իրավակարգավորումների վերլուծությանը՝ մասնավորապես նշելով, որ սնանկության վարույթում օրենսդիրը, ինչպես պարտատերերի շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակ ունենալով, այնպես էլ ելնելով սնանկ ճանաչված պարտապանի շահերից, այն է՝ հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնելու իր բնականոն գործունեությունը, հաղթահարելու ֆինանսական դժվարությունները, վերականգնելու նրա կենսունակությունը, սահմանել է պարտատերերի կողմից պահանջների ներկայացման և դրանց հիմնավորվածության ստուգման որոշակի կառուցակարգ: Մասնավորապես՝ օրենսդրորեն ամրագրվել է, որ սնանկության մասին հայտարարությունից հետո մեկամսյա ժամկետում պարտատերերն իրենց պահանջները դատարան ներկայացնելիս պարտավոր են նշել այն պարտավորության մասին, որից բխում է պահանջը, դրա կատարման ժամկետը, ինչպես նաև պահանջը հիմնավորող հանգամանքները: Միաժամանակ, օրենսդիրը պարտավորեցրել է դատարանին անկախ պահանջի (պահանջների) նկատմամբ առարկություն ներկայացնելուց, քննության առնել դատարան ներկայացված յուրաքանչյուր պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը, ապահովվածությունը, որից հետո միայն որոշում կայացնել պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին: Նման օրենսդրական կարգավորումն ինքնանպատակ չէ և նպատակ ունի բացառելու սնանկության վարույթում չհիմնավորված պահանջներ ընդգրկելը, քանի որ այդպիսիք կհանգեցնեն ինչպես այն պարտատերերի իրավունքների և օրինական շահերի խախտման, որոնց պահանջները հիմնավորված են, այնպես էլ՝ պարտապանի և նրա հիմնադիրների (մասնակիցների) իրավունքների և օրինական շահերի խախտման:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ներկայացված պահանջների վերջնական ցուցակը հաստատելիս դատարանները պետք է առաջին հերթին հաշվի առնեն այն հանգամանքը, որ հաստատման են ենթակա միայն այն պահանջները, որոնց առկայության և չափի վերաբերյալ ներկայացված են բավարար ապացույցներ, ընդ որում, ապացույցների բավարար լինելը գնահատողական կատեգորիա է, և յուրաքանչյուր գործով այն ենթակա է գնահատման՝ ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից: Միաժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության վարույթում պահանջների վերջնական ցուցակի հաստատումը սնանկության վարույթի առանցքային փուլերից է, որի հիման վրա կատարվում է պարտատերերի գրանցված պահանջների բավարարումը: Հետևաբար, առարկությունների քննարկման արդյունքում պահանջի օրինականությունը որոշելիս դատարանները պետք է ուշադրություն դարձնեն պարտատիրոջ կողմից պահանջը հիմնավորող հանգամանքների հիմնավորվածությանը՝ դրանով իսկ ապահովելով պահանջների վերջնական ցուցակը հաստատելու մասին որոշման իրավական հիմնավորվածությունը (*լրեն ըստ դիմումի «ԱՄԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊ-ԲՈՄԲԱՆԿԻ ԻՍՈՒՄԵ» ՓԲԸ-ի՝ Սարգիս Գասպարյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին թիվ ԿԻ/0033/04/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

Վերլուծելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նշված դրույթով ամրագրված հերթում ընդգրկել է չապահովված պարտատերերի պահանջները, այդ թվում՝ պարտադիր սոցիալական վճարները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած՝ հարկերի և (կամ) վճարների, վարչարարությունից ծագած տուգանքների գծով պարտավորությունները՝ դրանց շարքից բացառելով ստորադաս չապահովված

պարտատերերի պահանջները (դրանք ընդգրկված են այլ հերթում): Մինևույն ժամանակ, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի վերլուծությունից հետևում է, որ նշված դրույթով ամրագրված հերթում կարող են գրանցվել բացառապես պարտապան իրավաբանական անձի **հիմնադիրների, ինչպես նաև մասնակիցների, բաժնետերերի, անդամների** կամ **գործընկերների** պահանջները:

Սույն որոշմամբ առաջադրված իրավական հարցի համատեքստում Վճռաբեկ դատարանը վերոնշյալ իրավական վերլուծությունների ամփոփման արդյունքում արձանագրում է, որ սնանկ ճանաչված պարտապանի հիմնադիր հանդիսացող իրավաբանական անձի մասնակից ֆիզիկական անձը, որը նաև պարտապան ընկերության տնօրեն է, չի հանդիսանում դրա հիմնադիր, մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր, հետևաբար պարտապանի հանդեպ նրա ունեցած պահանջը ենթակա չէ գրանցման «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի հերթում:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Էռնեստ Ղազարյանը դատարան ներկայացրած դիմումով խնդրել է Ընկերության պարտատերերի պահանջների ցուցակում գրանցել Ընկերության նկատմամբ ունեցած իր պահանջը՝ 696.474.150 ՀՀ դրամի չափով, որից՝ 676.188. 500 ՀՀ դրամը՝ պարտավորության մայր գումար, իսկ 20.285.655 ՀՀ դրամը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ՝ հիմքում դնելով իր և Ընկերության միջև 13.08.2020 թվականին կնքված նպատակային փոխառության պայմանագիրը, 13.05.2020 թվականին կնքված նպատակային փոխառության պայմանագիրը, 04.05.2020 թվականին կնքված թիվ 050 նպատակային փոխառության պայմանագիրը:

04.08.2020 թվականին Երևան նոտարական տարածքում Ընկերության բաժնետերեր Ռադիկ Գևորգյանի, Գուլգանա Ամանշիևայի և «Էռնեստ Կո» ՍՊԸ-ի միջև կնքվել է «Բաժնետնամսի առուվաճառքի» պայմանագիր, ըստ որի՝ Ընկերության բաժնետերեր Ռադիկ Գևորգյանը և Գուլգանա Ամանշիևան Ընկերության 100 տոկոս բաժնետոմսերը վաճառել են «**Էռնեստ Կո**» ՍՊԸ-ին 145.700.500 ՀՀ դրամով:

Ընկերության 100 տոկոս բաժնետնամսը պատկանում է «Էռնեստ Կո» ՍՊԸ-ին. նշված փոփոխությունը ՀՀ Արդարադատության նախարարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 18.08.2020 թվականին: Էռնեստ Ղազարյանը հանդիսանում է «**Էռնեստ Կո**» ՍՊԸ-ի տնօրենը և սեփականատերը և միաժամանակ Ընկերության տնօրենը:

Դատարանը 30.03.2022 թվականի «Մասնկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին» որոշմամբ նշել է, որ «(...) Էռնեստ Ապրեսի Ղազարյանը հանդիսանում է «Էռնեստ Կո» սահմանափակ պարտահանսարվությամբ ընկերության և «Ասիամեզասարոյ» սահմանափակ պարտահանսարվությամբ ընկերության տնօրենը և սեփականատերերը: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ Էռնեստ Ղազարյանի՝ 696 474 155 ՀՀ դրամի չափով պահանջը, «Էռնեստ Կո» սահմանափակ պարտահանսարվությամբ ընկերության՝ 145 701 000 ՀՀ դրամի և 123 732 000 ՀՀ դրամի պահանջները՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ուժով ենթակա են գրանցման «Ասիամեզասարոյ» սահմանափակ պարտահանսարվությամբ ընկերության պարտավորերի

ցուցակի՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում»:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ մերժել է Էոնեստ Ղազարյանի վերաքննիչ բողոքը՝ վերահաստատելով Դատարանի պատճառաբանությունները և վկայակոչելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը («Պարտապանի հետ փոխկապակցված անձինք»)՝ իրավաչափ գնահատելով Էոնեստ Ղազարյանի՝ 696.474.155 ՀՀ դրամի չափով պահանջը՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ուժով «Ասիամեգաստոռ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտատերերի ցուցակի՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում գրանցելու վերաբերյալ Դատարանի հետևությունը:

Վերը շարադրված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը:

Դատարանի որոշմամբ Էոնեստ Ղազարյանի պահանջը գրանցվել է «թ» հերթում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ պարտապան Ընկերության 100 տոկոս բաժնետերերը «Էոնեստ Կո» ՍՊԸ-ն է, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Էոնեստ Ղազարյանը հանդիսանում է «Էոնեստ Կո» ՍՊԸ-ի **տնօրենք և սեփականատերեր** և Ընկերության **տնօրենք**:

Վերաքննիչ դատարանը Էոնեստ Ղազարյանի պահանջը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ուժով Ընկերության պարտատերերի ցուցակի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում գրանցելու վերաբերյալ Դատարանի հետևությունը գնահատել է իրավաչափ՝ վկայակոչելով պարտապանի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ իրավական նորմեր:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի հետ փոխկապակցված են համարվում՝

ա) պարտապանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմնական, դուստր կամ կախյալ իրավաբանական անձը.

բ) պարտապանի ղեկավարը, ինչպես նաև տնօրենների խորհրդի (ղիտորդ խորհրդի) անդամը, պարտապանի կողեզիալ գործադիր մարմնի անդամը, գլխավոր հաշվապահը (հաշվապահը), ինչպես նաև սնանկ ճանաչելու դիմում ներկայացնելու պահից վերջին մեկ տարվա ընթացքում նշված պաշտոններից ազատված անձը.

գ) պարտապանի կանոնադրական (բաժնեհավաք, փայտափափ) կապիտալի 20 և ավելի տոկոսին տիրապետող անձը.

դ) պարտապանին կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձը կամ մարմնի անդամը:

Պարտապանի նկատմամբ փոխկապակցված է համարվում նաև անձը, որը սույն մասում նշված ֆիզիկական անձանց հետ գտնվում է սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված հարաբերությունների մեջ, իսկ սույն մասի «գ» կամ «դ» կետերի հիմքով իրավաբանական անձի փոխկապակցվածության ղեկավարում՝ նաև այդ անձի՝ սույն մասի «բ» կետում նշված պաշտոն զբաղեցնող ֆիզիկական անձը:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ օրենսդիրը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի իմաստով փոխկապակցված անձանց

պահանջները առանձնահատուկ հերթով չի նախատեսել նույն օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում:

Տվյալ դեպքում Էռնեստ Ղազարյանի պահանջի հիմքում դրված փոխառության պայմանագրերի կողմերն են **Ֆիզիկական անձ** Էռնեստ Ղազարյանը և սույն գործով պարտապան Ընկերությունը, և պարտավորական հարաբերություններ ծագել են վերջինների միջև: Այլ կերպ ասած՝ փոխառության պայմանագրերը փոխադարձ իրավունքներ և պարտականություններ են առաջացել բացառապես Էռնեստ Ղազարյանի և Ընկերության համար: Վճարել դատարանն արձանագրում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանն անտեսել են այն հանգամանքը, որ «Էռնեստ Կո» ՍՊԸ-ն իրավաբանական անձ է և որևէ կերպ չի կարող նույնանալ Էռնեստ Ղազարյան **Ֆիզիկական անձի** հետ:

Սույն գործի ուսումնասիրությունից և վերոգրյալ պատճառաբանություններից ակնհայտ է, որ Էռնեստ Ղազարյանը՝ որպես **Ֆիզիկական անձ**, ոչ իրավահարաբերության ծագման պահին և ոչ էլ դրանից հետո չի հանդիսացել Ընկերության **հիմնադիր (մասնակից, բաժնետեր, անդամ կամ գործընկեր)**: Հետևաբար, Ընկերության նկատմամբ Էռնեստ Ղազարյանի պահանջը չէր կարող գրանցվել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետով նախատեսված հերթում:

Ինչ վերաբերում է պարտապանի հետ փոխկապակցված անձ լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի դիտարկմանը, ապա Վճարել դատարանը հարկ է համարում նշել, որ Վերաքննիչ դատարանը ընդամենը վկայակոչել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը՝ չկատարելով նշված իրավանորմի և սույն գործի փաստերի համադրում:

Վերոգրյալից հետևում է, որ Էռնեստ Ղազարյանի 696.474.150 ՀՀ դրամ չապահովված պահանջը պետք է ներառվի Ընկերության սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակի «է» հերթում:

Այսպիսով, վճարել բողոքի հիմքի առկայությունը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճարել դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճարել դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարել դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճարել դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի՝ նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ գործի նյութերում, ինչպես նաև բողոքին կից ներկայացված չէ Էռնեստ Ղազարյանի և փաստաբան Արսեն Սախոյանի ինչպես նաև փաստաբան Արթուր Մանուկյանի միջև կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, կամ համապատասխան վճարումը կատարելու փաստը հավաստող ապացույց, իսկ վերաքննիչ և վճռաբեկ բողոքները ներկայացվել են Էռնեստ Ղազարյանի կողմից, հետևաբար Վճռաբեկ դատարանը Էռնեստ Ղազարյանի՝ փաստաբանի խելամիտ վարձատրության փոխհատուցման մասով գտնում է դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.06.2022 թվականի որոշումը և փոփոխել այն հետևյալ կերպ. Էռնեստ Ղազարյանի 696.474.150 ՀՀ դրամի չափով պահանջը գրանցել ՀՀ սնանկության դատարանի 30.03.2022 թվականի «Մասնկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը հաստատելու և պարտատերերի առաջին ժողով նշանակելու մասին» որոշման մեջ՝ որպես «է» հերթի չապահովված պահանջ: Մնացած մասով որոշումը թողնել անփոփոխ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

# 21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-  
կան դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/5064/02/17  
2022թ.  
ԵԿԴ/5064/02/17  
Գ. Խանդանյան  
Հ. Ենոքյան  
Տ. Նազարյան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող* Մ. ԴՐՄԵՅԱՆ  
*գեկուցող* Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Ա. ԱՆՏՈՆՅԱՆ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Է. ՍԵՂՈՒՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 30-ին  
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ կառավարության, ՀՀ ֆինանսների նա-  
խարարության և ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների  
նախարարության (ներկայումս՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուց-  
վածքների նախարարություն) (այսուհետ՝ Նախարարություն) վճռաբեկ բողոքնե-  
րը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.10.2019 թվականի որոշման  
դեմ ըստ հայցի Վալերիկ Հայրապետյանի ընդդեմ ՀՀ կառավարության, Նա-  
խարարության, երրորդ անձինք՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի  
կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ իրավունքի  
խախտումը վերացնելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Վալերիկ Հայրապետյանը պահանջել է պարտավո-  
րեցնել պատասխանողներին իրեն սեփականության իրավունքով պատկանող  
0,7722քմ հողամասը բերել նախկին վիճակին, այն է՝ 0,7722քմ հողամասի հա-  
մադրվող /0,0847քմ/ մասից հանել ճանապարհը:



Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Մազմանյան) (այսուհետ՝ Դատարան) 26.03.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 10.10.2019 թվականի որոշմամբ ՀՀ կառավարության և երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության ու պատասխանող Նախարարության ներկայացրած վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 26.03.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել ՀՀ կառավարությունն ու ՀՀ ֆինանսների նախարարությունը (ի պաշտոնն ներկայացուցիչ Ատոմ Զանջուղազյան) և Նախարարությունը (ի պաշտոնն ներկայացուցիչ Սուրեն Պապիկյան):

Վճռաբեկ բողոքների պատասխան է ներկայացրել Վալերիկ Հայրապետյանը (ներկայացուցիչ Արմինե Ավետիսյան):

## **2. ՀՀ կառավարության և ՀՀ ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք) 60-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, խախտել է սույն օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետը, 48-րդ հոդվածի 2-րդ կետը, 51-րդ հոդվածի 1-ին կետը և 53-րդ հոդվածի 1-ին կետը:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանն էլ է հետևյալ հիմնավորումներով.*

Սույն գործի քննության ընթացքում հայցվորը հղում անելով իր կողմից ներկայացված և գործում առկա ապացույցներին, հատկապես հիմք ընդունելով «Վ.Կ.Գ.ԵՈ» ՍՊԸ-ի կողմից 26.06.2017 թվականին տրված գրությունը՝ պնդել է, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող 7722քմ հողամասից 847քմ հողամասը համադրվում է Մ2 ավտոմայրուղու հետ: Իսկ պատասխանող կողմը դատարան ներկայացրած առարկությունների և ապացույցների շրջանակում պնդել է, որ 2010 թվականին Մ2, Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի 182-րդ կմ-ում կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ, որոնց ընթացքում ճանապարհի ծրագծի փոփոխություն չի կատարվել, ինչպես նաև առկա չէ համադրություն Վալերիկ Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող 7722քմ հողամասից 847քմ հողատարածքի և Մ2 ավտոմայրուղու հետ: Հաշվի առնելով գործով ներկայացված ապացույցների իրար հակասող բովանդակությունները, կողմերի հիմնավորումներն ու սույն գործի առանձնահատկությունները, միանշանակ է, որ 7722քմ հողամասից 847քմ հողամասը Մ2 ավտոմայրուղու հետ համադրման առկայության կամ բացակայության փաստը կարող է հաստատվել միայն համապատասխան փորձագիտական եզրակացությամբ, որի կապակցությամբ դատարանի կողմից համապատասխան փորձաքննություն չի նշանակվել:

Դատարանի կայացրած վճռի տրամաբանությունը և բովանդակությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Դատարանը որևէ ձևակերպմամբ չի նշել պատասխանող կողմի ներկայացրած ապացույցները մերժելու փաստարկները, ինչի արդյունքում գործի հանգամանքների բազմակողմանի հետազոտություն չի

կատարվել և խախտվել են պատասխանող կողմի իրավունքներն ու օրինական շահերը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 10.10.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել, կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Նախարարության վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածը, չի կիրառել «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, նույն օրենքի 4-րդ, 7-րդ և 13-րդ հոդվածները, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ և 23-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596 որոշումը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 168-րդ, 135-րդ և 163-րդ հոդվածները, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածը, Նախկին օրենսգրքի 60-րդ հոդվածը, որը պետք է կիրառեր, խախտել է Նախկին օրենսգրքի 62-րդ, 66-րդ, 86-րդ հոդվածները:

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ հիմնավորումներով.*

Սույն գործով կարևոր է այն հանգամանքը, որ գործ ունենք միջպետական մայրուղու անխափան շահագործման և այն հետագայում վիճելի հողամասից հանելու առանձնահատուկ դեպքի հետ, որը չհիմնավորված և ոչ իրավաչափ դատական ակտի գոյության պայմաններում կխախտի պետության սեփականության իրավունքներն ու օրինական շահերը՝ հանգեցնելով ծանր հետևանքների, մասնավորապես՝ չհիմնավորված դատական ակտը օրինական ուժ ստանալու պայմաններում պատասխանող կողմի համար կառաջացնի պետական միջոցներից լրացուցիչ չպլանավորած ծախսեր կատարելու պարտավորություն՝ իրավունքի խախտումը վերացնելու և Մ2 միջպետական ավտոմայրուղու 182-րդ կմ-ում նոր ճանապարհ կառուցելու մասով: Ավելին, դատական ակտի կատարման ընթացքում կառաջանան խոչընդոտներ՝ միջպետական ավտոմայրուղու անխափան երթևեկության կազմակերպման և շահագործման առումով:

Վերաքննիչ դատարանը չի ապահովել գործի փաստական հանգամանքների լրիվ և բազմակողմանի քննությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 10.10.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել, կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.2. Վճռաբեկ բողոքի պայտասխանի հիմնավորումները**

Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի վթարային տեղամաս 182-րդ կմ հատվածում 2010 թվականին կատարված շինարարական աշխատանքների հետևանքով փաստացի տեղի է ունեցել ճանապարհի ծրագծի փոփոխություն, ինչն անհայտ պատճառով չի արտացոլվել կադաստրային քարտեզում:

Հարկ է նշել, որ սույն գործով արդեն իսկ ներկայացվել է համապատասխան մասնագետի եզրակացություն առ այն, որ հայցվորին սեփականության իրավունքով պատկանող 7722քմ հողամասից 847քմ հողամասը համադրվում է Մ2

ավտոմայրուղու հետ: Նշված եզրակացության առկայության պայմաններում պատասխանող կողմը չի միջնորդել նշանակելու առանձին փորձաքննություն՝ համադրման փաստը հաստատելու կամ ժխտելու նպատակով:

Այսպիսով, ներկայացված վճարելի բողոքներն անհիմն են և ենթակա են մերժման:

**3. Վճարելի բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը**  
Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Վալերիկ Հայրապետյանը «Կարմրախայթ» կոոպերատիվից նվեր է ստացել Սյունիքի մարզի Ծղուկ գյուղում գտնվող «Կարմրախայթ» կոոպերատիվին պատկանող շինությունը՝ բաղկացած 163,98քմ բնակելի և 141,54քմ օժանդակ մակերեսից (**հատոր 1-ին, գ.թ. 10**).

2) Վալերիկ Հայրապետյանի սեփականության իրավունքը Սյունիքի մարզի Ծղուկ գյուղի Հյուսիսային հատվածի թիվ 1 արտադրական շենքի նկատմամբ գրանցվել է պետական գրանցման միասնական 09-049-4-3 մատյանի 126 համարի տակ: Հոդամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 04.10.2005 թվականի թիվ 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով (**հատոր 1-ին, գ.թ. 14-17**).

3) ՀՀ ԿԱ Անշած գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի կողմից 16.06.2017 թվականի անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 16062017-09-0022 վկայականի համաձայն՝ հայցվոր Վալերիկ Հայրապետյանի անվամբ Սյունիքի մարզի Գորայք համայնքի Ծղուկ գյուղի Հյուսիսային հատված 1 արտադրական շենքի և 0,7722 հեկտար հողամասի նկատմամբ գրացվել է սեփականության իրավունք (**հատոր 1-ին, գ.թ. 11**).

4) «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ-ի անունից, և «Սիսիանի Ճանշին» ՍՊ ընկերության միջև 31.08.2010 թվականին կնքվել է պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ՄԲԱՇԶԲ-10/18 պայմանագիրը, որի 1.1 կետի համաձայն՝ կատարողի կողմից պատվիրատուի հանձնարարությամբ պետք է իրականացվեր Մ2, Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի վթարային տեղամաս 182-րդ կմ-ում հիմնանորոգման աշխատանքներ:

5) Ի պատասխան հայցվորի դիմումի՝ «Վ.Կ.Գ.ԵՈ» ՍՊ ընկերության կողմից չափագրման արդյունքում, 26.06.2017 թվականին տրվել է գրություն, որի համաձայն՝ հայցվորին սեփականության իրավունքով պատկանող /վկայական 16062017-09-0022/ 09-049-0109-0026 ծածկագրով 7722քմ հողամասից 847քմ հողամասը համադրվում է Մ2 ավտոմայրուղու հետ (**հատոր 1-ին, գ.թ. 88**).

6) Ի պատասխան հայցվորի՝ 10.07.2017 թվականի գրության՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն աշխատակազմի ղեկավարը 07.08.2017 թվականի թիվ 08/14-1/14727 գրությամբ հայտնել է, որ 2010 թվականին Մ2, Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի 182-րդ կմ-ում կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ, որոնց ընթացքում ճանապարհի ծրագծի փոփոխություն չի կատարվել (**հատոր 1-ին, գ.թ. 18**).

7) անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ 08.06.2018 թվականի թիվ ՄՄ/3402-18 գրությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ըստ Սյունիքի մարզի Գորայք համայնքի Ծղուկ գյուղի Հյուսիսային հատված թիվ 1 հասցեի կադաստրային /արխիվային/ գործի նյութերի՝ ժողովրդական դեպուտատների

Մխիթանի շրջխորհրդի գործկումի՝ 08.01.1990 թվականի թիվ 1/8-1 որոշման համաձայն՝ «Կարմրախայտ-1» կոտայերատիվին հատկացվել է 1,5հա մակերեսով հողամաս, սակայն վերջինիս անվամբ 04.01.1998 թվականին գույքագրում է կատարվել 0,5հա մակերեսով հողամասի նկատմամբ: Հարկ է նշել, որ գույքագրման, հետագայում նաև սեփականության իրավունքի գրանցման վկայականներում պատկերված հողամասի գծային չափերով մակերեսը կազմում է 0,7722հա, սակայն վկայականներում թյուրիմացաբար նշվել է 0,5հա: Այնուհետև, 09.01.1998 թվականի նվիրատվության պայմանագրի հիման վրա քաղաքացի Վալերիկ Հայրապետյանի անվամբ 10.01.1998 թվականին կատարվել է գույքագրում, որից հետո նաև՝ 05.03.2004 թվականին սեփականության իրավունքի պետական գրանցում: (...): Որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված Գորայք համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի և վերջինիս կողմից 13.06.2017 թվականին տրված գրության հիման վրա 16.06.2017 թվականին կատարվել է նոր պետական գրանցում /վերագրանցում/ և հողամասի մակերեսն ուղղվել է 0,7722հա, որն էլ առանց համադրման տեղադրվել է կադաստրային քարտեզում:

Հայտնվել է նաև, որ, հետագայում որակավորման վկայական ունեցող մեկ այլ անձի կողմից կազմվել է իրադրության հատակագիծ և եզրակացություն, որի համաձայն՝ նշված հողամասը 0,0847հա մակերեսով համադրվում է Մ2 ավտոմայրուղու հետ (**հատոր 1-ին, գ.թ. 52-53**).

8) ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից ՀՀ Սյունիքի մարզպետ Կ. Համբարձումյանին 13.07.2018 թվականին ուղղված թիվ 01/16.1/11755-18 գրությամբ հայտնվել է, որ Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի 182-րդ կմ հատվածը համադրվում է Վալերիկ Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող 7722 քմ-ից 847քմ. մակերեսով հողատարածքին:

Խնդրվել է մարզպետի միջնորդությունը Գորայք համայնքի ղեկավարին՝ վերանայել ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի Ծղուկ գյուղի Հյուսիսային հատված թիվ 1 հասցեում գտնվող հողամասի հատակագիծը, որը կբացառի համադրությունը ՀՀ սեփականություն հանդիսացող Մ2, Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի 182-րդ կմ-ի ճանապարհահատվածի հետ (**հատոր 1-ին, գ.թ. 50-51**).

9) ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի ղեկավարի կողմից 15.08.2018 թվականին տրված թիվ 185 պատասխան-գրությամբ հայտնվել է հետևյալը.

*«1. Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման Մ2 ավտոմայրուղու 182-րդ կմ հատվածը գրնվում է Գորայք համայնքի Ծղուկ բնակավայրի հարակից հատվածում:*

*2. Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման Մ2 ավտոմայրուղու 182-րդ կմ հատվածում 2010թվականին կատարված շինարարական աշխատանքների համար շինարարության թույլտվություն սրանապու վերաբերյալ դիմում ներկայացվել է, թե ոչ՝ հարակ պարասխանել չեն կարող, քանի որ երեք անգամ՝ 08.09.2017 թվականի թիվ 35, 22.12.2017 թվականի թիվ 58 և 31.08.2018 թվականի թիվ 169 գրություններով դիմել են շինարարության պարվիրարու ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը և որևէ պարասխան չեն սրացել: Գորայք խոշորացված համայնքի կազմում ընդգրկված նախկին Ծղուկ համայնքի արխիվային փաստաթղթերում կատարված ուսումնասիրությամբ՝ խնդրո առարկա շինարարության վերաբերյալ փաստաթղթեր առկա չեն: Ծղուկ համայնքի նախկին ղեկավար Մեսրոպ Անիրջանյանի՝ 04.09.2017թ. գրավոր բացատրագրով վերջինս*

հավասարել է, որ Մ2 ավերումայրուղու 182-րդ կմ հատվածում 2010 թվականին կատարված շինարակական աշխատանքների համար շինարարության թույլտվություն ստանալու վերաբերյալ դիմում Ծղուկի համայնքապետարան շինարարության պարվիրարուրդի կողմից չի ներկայացվել և կատարված շինաշխատանքները սպորինի է՝ կատարված է առանց շինթույլտվության:

3. Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման Մ2 ավերումայրուղու 182-րդ կմ հատվածում 2010 թվականին կատարված շինարակական աշխատանքների հետևանքով փաստացի տեղի է ունեցել ճանապարհի ծրագծի փոփոխություն, ինչը իրենց անհայտ պարճատով չի արտացոլվել կադաստրային քարտեզում (**հիմք՝ ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեից Վալերիկ Հայրապետյանին տրված 22.06.2017 թվականի թիվ ԱԱ-21/06/2017-24-0007 քարտեզագրական նյութերի վերաբերյալ տեղեկանքը**): Ծրագծի փոփոխությունը փաստվում է նաև ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության պատվերով շինարարությունը իրականացրած Սիսիանի «ՃԱՆՇԻՆ» ՍՊ ընկերության տնօրեն Հրաչիկ Գաբրիելյանի՝ 05.09.2017 թվականին տված գրավոր բացատրագրով:

4. 04.09.2017 թվականին Սյունիքի մարզի Գորայքի համայնքապետարանի աշխատակազմում Սիսիան քաղաքի բնակիչ Վալերիկ Հայրապետյանի դիմումի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ: Նախապատրաստված նյութերով պարզվել է, որ դիմումատու Վ.Հայրապետյանը Գորայք համայնքի Ծղուկ բնակավայրի Հյուսիսային հատված թիվ 1 հասցեում գտնվող 09-049-0109-0026 կադաստրային ծածկագրով 7722քմ. հողամասի և այդ հողամասի վրա կառուցված 09-049-0109-0026-001 կադաստրային ծածկագրով հասարակական նշանակության օբյեկտի սեփականատերն է և այդ հողամասի 847քմ. մակերեսը համադրվում է Մ2 միջպետական նշանակության ավտոմայրուղու հետ՝ համաձայն «Վ.Կ.Գ.ԵՈ» ՍՊ ընկերության կողմից չափագրման արդյունքում Վ.Հայրապետյանին տրամադրած իրադրության հատակագծի: Չափագրող Վ.Ենգիբարյանի կողմից արձանագրած համադրությունը հնարավոր է դարձել 2010 թվականին Մ2 միջպետական նշանակության ավտոմայրուղու 182-րդ կմ-ում կատարված հիմնանորոգման աշխատանքների հետևանքով: Նշված աշխատանքների արդյունքում ավտոճանապարհի՝ «Դալի» գետի վրայով անցնող հատվածը մասնակի փլուզումից հետո չի վերականգնվել նույն տեղում, այլ վերակառուցվել է բոլորովին նոր տեղամասով՝ փլուզված հատվածից Երևան-Մեղրի ուղղությամբ դեպի ձախ մի քանի տասնյակ մետր փլուզված հատվածից վերև, համապատասխանաբար՝ Վ.Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում: Ճանապարհի ծրագծի ակնհայտ փոփոխությունն առանց որևիցե չափագրման նկատելի է նաև անգնե աչքով՝ նախկին ճանապարհի փլուզումից հետո մնացած հետքերից, ինչպես նաև համայնքի բնակիչների և վարորդների հետ անցկացրած հարցախոյզից:

Միաժամանակ, վարչական վարույթի նյութերով նախապես հայտնի փաստերի ստուգման և հաստատման նպատակով ՀՀ Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության առաջարկությամբ ստեղծվել է համատեղ հանձնաժողով՝ կատարված շինարարության օրինականությունը ստուգելու նպատակով, սակայն որևիցե պատասխան հանձնաժողովի կատարած աշխատանքի արդյունքների վերաբերյալ Գորայքի համայնքապետարանին չի տրամադրվել» (**հատոր 1-ին, գ.թ. 73**).

10) ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի ղեկավարի՝ 03.09.2018 թվականի թիվ 08/16.1/14288-18 պատասխան-գրությամբ Մ2 Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման 182-րդ կմ-ի

վթարային հատվածի վերականգնման աշխատանքների վերաբերյալ հայտնվել է հետևյալը «1-3 ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարությունը 2010 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության համաձայն՝ «Ճաննախագիծ» ՄՊ ընկերությանը պատվիրել է Մ2 Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման 182-րդ կմ-ի վթարային հատվածի վերականգնման աշխատանքային նախագիծ: Աշխատանքային նախագծի համաձայն՝ աշխատանքների իրականացման նպատակով «Սիսիանի Ճանշին» ՄՊ ընկերության հետ 31.08.2010թ. կնքվել է թիվ ՄԲԱՇՁԲ-10/18 պետական գնման պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ աշխատանքների կատարումն ավարտվել է 20.11.2010 թվականին» **(հատոր 1-ին, գ.թ. 69-70)**։

1) ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 07.08.2017 թվականի թիվ 08/14.1/14727 գրությամբ Վալերիկ Հայրապետյանին պատասխանվել է, որ Մ2 Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 182-րդ կմ-ում կատարվել է հիմնանորոգման աշխատանքներ, որոնց ընթացքում ծրագրի փոփոխություն չի կատարվել **(հատոր 1-ին, գ.թ. 18)**։

#### **4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն վճարելի բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել Նախկին օրենսգրքի 60-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով։

*Վճարելի դատարանը հարկ է համարում անդրադառնալ փորձարկություն նշանակելու դատարանի հայեցողությանն այն պարագայում, երբ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատման համար առկա են հակասական ապացույցներ:*

Նախկին օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Այդ տեղեկությունները հաստատվում են՝ (...) փորձագետների եզրակացություններով:

Նախկին օրենսգրքի 48-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Նախկին օրենսգրքի 53-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի

եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*տե՛ս թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց հետազոտում է նախ՝ գործին դրա վերաբերելիության, օրենքով նման ապացույցի թույլատրելիության, արժանահավատության, իսկ վերաբերելի բոլոր ապացույցները միասին՝ որոշակի փաստ (փաստեր) հաստատելու համար բավարարության տեսանկյունից և անդրադառնալով ապացույցների արժանահավատության հարցին՝ արձանագրել է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը ստուգելուց հետո պարտավոր է ստուգել նաև տվյալ ապացույցի արժանահավատությունը, և ապացույցների միջև հակասության դեպքում մերժել իր կարծիքով ոչ արժանահավատ ապացույցը՝ հիմնավորելով տվյալ մերժումը, իսկ փաստը հաստատել արժանահավատ ապացույցի հիման վրա (*տե՛ս թիվ 3-81(ՏԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը*):

Իր մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ապացույցների արժանահավատությունն ապացույցի հատկանիշ է, որը բնութագրում է ապացույցման առարկան կազմող հանգամանքների հավաստիությունն ու հստակությունը: Արժանահավատ է այն ապացույցը, որը գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ հավաստի տեղեկություն է բովանդակում: Ապացույցի արժանահավատության ստուգման և գնահատման չափորոշիչները տարբեր են՝ պայմանավորված հետազոտված ապացույցի տեսակով (*տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/1342/02/11 քաղաքացիական գործով 18.07.2014 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ գործի ճիշտ լուծման նպատակով դատարանը պարտադիր կերպով պետք է ստուգի ապացույցների արժանահավատությունը, քանի որ միայն արժանահավատ ապացույցն է հնարավորություն տալիս հաստատելու կամ հերքելու գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները: Գործով ձեռք բերված որոշ ապացույցների ոչ հավաստիության վերաբերյալ կարող է վկայել դատարանի կողմից մինևնույն հանգամանքի կամ փաստի վերաբերյալ հակասական, միմյանց բացառող տեղեկությունների, տվյալների ստացումը: Ապացույցի հավաստիության մասին կարելի է դատել առաջին հերթին ելնելով այդ տեղեկատվության աղբյուրի բնույթից (հատկանիշներից), այսինքն՝ ապացույցների արժանահավատությունն առաջին հերթին կախված է տեղեկատվության աղբյուրի որակից:

Մինևնույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ապացույցների արժանահավատությունը կախված է նաև գործով ձեռք բերված տարբեր ապացույցների՝ միմյանց համապատասխանությունից, հավաքված և հետազոտված բոլոր ապացույցների ընդհանուր գնահատականից, քանի որ գործով ձեռք բերված և հետազոտված բոլոր ապացույցների գնահատումը միայն կարող է վերհանել ապացույցների միջև եղած հակասությունները և արդյունքում որոշել ապացույցների հավաստիությունը: Այլ կերպ ասած, եթե դատարանի մոտ կասկածներ են առաջանում՝ կապված ձեռք բերված և հետազոտվող ապացույցների հավաստիության վերաբերյալ, ապա այդ կասկածներն անհրաժեշտ է փարատել՝ տվյալ ապացույցներն այլ ապացույցների հետ համադրելու միջոցով:

Այսպիսով, ապացույցների հավաստիության և փոխադարձ կապի տեսանկյունից դրանց գնահատման նպատակն այն է, որ վերացվեն ձեռք բերված և հետազոտվող ապացույցների միջև առկա հակասությունները, փարատվեն ստացված ապացուցողական տեղեկատվության ողջ համակցության հետազոտման արդյունքում կատարված եզրահանգման հավաստիության վերաբերյալ բոլոր կասկածները: Պարզելով ապացույցների արժանահավատությունը դատարանը որոշում է դրանց բավարար լինելը, բացահայտում է ձեռք բերված և հետազոտված ապացույցների հիման վրա որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ եզրակացություն անելու հնարավորությունը, ինչը թույլ է տալիս ստուգել նաև գործով հավաքված ապացույցների լրիվությունը *(լրե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԳ/10507/05/13 վարչական գործով 27.11.2015 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացույցների գնահատման հարցին, արձանագրել է նաև, որ ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները: Ապացույցների անբավարար լինելու դեպքում գործի հանգամանքների վերաբերյալ դատարանը կարող է կատարել ոչ թե որոշակի, այլ հավանական եզրակացություններ, մինչդեռ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտը չի կարող հիմնված լինել հավանական եզրակացությունների և դատողությունների վրա *(լրե՛ս թիվ ԵԱԲԴ/0483/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը)*:

Գործն ըստ էության լուծող դատական ակտով Դատարանը պարտավոր է պատճառաբանել յուրաքանչյուր հայցապահանջի բավարարման կամ մերժման վերաբերյալ իր եզրահանգումը, ինչը պետք է հիմնված լինի միայն արժանահավատ ապացույցների վրա: Դատարանը չի կարող բավարարել հայցապահանջը, եթե այն հիմնավորող որևէ իրավական կամ փաստական հանգամանք առկա չէ *(լրե՛ս թիվ ԵԿԳ/0807/02/10 քաղաքացիական գործով 28.11.2014 թվականի որոշումը)*:

Նախկին օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով՝ դատարանը կարող է կողմի (կողմերի) միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակել:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու իրավասությունը դատարանն իրականացնում է դատական հայեցողության իրավունքով՝ ելնելով հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակից *(լրե՛ս Ռեզոլյուցիայի Սարգսյանը և Լիդա Մուկանյան ընդդեմ Ռեաֆիկ Հախավերդյանի թիվ 3-259(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված դատավարական նորմի վերլուծությանը, արձանագրել է, որ դատարանն իրավունք ունի գործի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով նշանակել փորձաքննություն՝ իր որոշմամբ սահմանելով հարցերի ցանկը և բովանդակությունը, իսկ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքում դատարանն իրավունք ունի նաև նշանակել լրացուցիչ փորձաքննություն: Փորձագետի եզրակացությունն ապացույցի տեսակ է, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև



վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած մյուս բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն՝ փորձաքննության նշանակումն ինքնանպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ (տե՛ս «Օրինակ Սթոն» ՄՊԸ-ն ընդդեմ «Վագ քար» ՄՊԸ-ի և մյուսների թիվ ԱՎԴ1/0074/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

Այսպիսով, ամփոփելով վերագրյալ իրավական նորմերն ու մեկնաբանությունները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի ճիշտ լուծումը հիմնականում կախված է գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը որոշելուց և դրանց հաստատման համար ներկայացված և/կամ ձեռք բերված ապացույցների բազմակողմանի վերլուծությունից և գնահատումից:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը պետք է հաստատվի բավարար ապացույցներով, և որ ամենակարևորն է՝ այդ ապացույցները պետք է օժտված լինեն արժանահավատության բարձր մակարդակով: Էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը հաստատող ապացույցը պետք է լինի միանշանակ, և որևէ պարագայում չհարուցի որևէ կասկած:

Ապացույցների գնահատման արդյունքում դատավորի մոտ ձևավորվող ներքին համոզմունքը պետք է հիմնված լինի ոչ թե հավանական ենթադրությունների վրա, այլ պետք է ունենա օբյեկտիվ հիմքեր:

Բոլոր այն դեպքերում, երբ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար առկա ապացույցների համակցությունը կասկած է հարուցում՝ իրար հակասող ապացույցների առկայության հանգամանքով պայմանավորված, դատարանը պետք է գնահատի այդ ապացույցների արժանահավատությունը՝ մերժելով իր կարծիքով ոչ արժանահավատ ապացույցը՝ հիմնավորելով տվյալ մերժումը, իսկ փաստը հաստատել արժանահավատ ապացույցի հիման վրա: Միաժամանակ բոլոր այն դեպքերում, երբ ապացույցների հակասությունն այնպիսին է, որ դատարանը չի կարող պատճառաբանված կերպով հիմնավորել ոչ արժանահավատ ապացույցի մերժումը և արժանահավատ ապացույցի հիման վրա դատական ակտի կայացման իրավաչափ լինելու հիմնավորվածությունը, դատարանը պետք է կիրառի օրենսդրությամբ թույլատրված ցանկացած միջոց՝ այնպիսի ապացույց ձեռք բերելու, որը միտված կլինի վիճելի և գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայության կամ բացակայության հաստատմանը:

### ***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Սույն գործով Վալերիկ Հայրապետյանը դիմել է դատարան և պահանջել է պարտավորեցնել պատասխանողներին իրեն սեփականության իրավունքով պատկանող 7722քմ հողամասը բերել նախկին վիճակին, այն է՝ 7722քմ հողամասի համադրվող /847քմ/ մասից հանել ճանապարհը:

**Դատարանը** 26.03.2019 թվականի վճռով հայցը բավարարել է հետևյալ պատճառաբանությամբ. «գործի փաստերը համադրելով՝ դատարանը գտնում է, որ պատասխանողները Մ2, Երեւան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի համապատասխան հարվածը անցկացրել են հայցվորին սեփականության իրավունքով պատկանող հողամասով, որի հիման վրա հայցվորին սեփականության

իրավունքով պատկանող հողամասում առանց իրավական հիմքերի կառուցվել է նոր ճանապարհ: Մասնավորապես՝ գործի փաստերով դատարանը հաստատված համարեց, որ հայցվորին սեփականության իրավունքով պատկանող 7722քմ հողամասից 847քմ հողամասը համադրվում է Մ2 ավտոմայրուղու հետ»:

**Վերաքննիչ դատարանը** 10.10.2019 թվականի որոշմամբ ՀՀ կառավարության և երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարության ու պատասխանող Նախարարության վերաքննիչ բողոքները մերժել է, և Դատարանի 26.03.2019 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ արձանագրելով, որ Դատարանը գործով իրականացրել է լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն և արդյունքում հայցը բավարարելու վերաբերյալ կայացրել է օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, որի ապացուցմանը պետք է ուղղված լինեին ստորադաս դատարանների ջանքերը, հետևյալն է. արդյո՞ք Վալերիկ Հայրապետյանին պատկանող 7722քմ հողամասի 847քմ հատվածը համադրվում է Մ2 ավտոմայրուղու հետ:

Սույն գործով Վալերիկ Հայրապետյանը դիմել է դատարան և պնդել է, որ Մ-2, Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի վթարային տեղամաս 182-րդ կմ-ում կատարված աշխատանքների արդյունքում 2010 թվականին իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի միջոցով անցկացվել է նոր ճանապարհ (իր հողամասի 847քմ հատվածը համադրվում է Մ2 ավտոմայրուղու հետ) և պահանջել է պարտավորեցնել պատասխանողներին իրեն սեփականության իրավունքով պատկանող 7722քմ հողամասը բերել նախկին վիճակին, այն է՝ 7722քմ հողամասի համադրվող /847քմ/ մասից հանել ճանապարհը:

Գործով պատասխանողները պնդել են, որ Մ2 Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի 182-րդ կմ-ում կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ, որոնց ընթացքում ծրագծի փոփոխություն չի կատարվել և առկա չէ որևէ համադրություն Վալերիկ Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի և Մ2 ավտոմոբիլային ճանապարհի միջև:

Սույն գործով կողմերը, իրենց պնդումները հիմնավորելու նպատակով, դատարան են ներկայացրել մի շարք ապացույցներ, որոնցից են՝

- Նախարարության աշխատակազմի ղեկավարի՝ 03.09.2018 թվականի թիվ 08/16.1/14288-18 պատասխան-գրությունը, համաձայն որի՝ Մ2 Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման 182-րդ կմ-ի վթարային հատվածի վերականգնման աշխատանքների վերաբերյալ հայտնվել է հետևյալը «1-3 ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարությունը 2010 թվականին «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության համաձայն՝ «Ճանապարհ» ՄՊ ընկերությանը պարվիրել է Մ2 Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման 182-րդ կմ-ի վթարային հատվածի վերականգնման աշխատանքային նախագիծ: Աշխատանքային նախագծի համաձայն՝ աշխատանքների իրականացման նպատակով «Միսիանի Ճանչին» ՄՊ ընկերության հետ 31.08.2010թ. կնքվել է թիվ ՄԲԱՇՁԲ-10/18 պետական գնման պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ աշխատանքների կատարումն ավարտվել է 20.11.2010 թվականին»:

- Որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված Գորայք հասնաքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի և վերջինիս

կողմից 13.06.2017 թվականին տրված գրությունը, որի հիման վրա 16.06.2017 թվականին կատարվել է նոր պետական գրանցում /վերագրանցում/ և հողամասի մակերեսն ուղղվել է 0,7722հա, **որն էլ առանց համադրման տեղադրվել է կադաստրային քարտեզում:**

- Հետագայում որակավորման վկայական ունեցող մեկ այլ անձի կողմից կազմված իրադրության հատակագիծը և եզրակացությունը, որի համաձայն՝ նշված հողամասը 0,0847հա մակերեսով **համադրվում է Մ2 ավտոմայրուղու հետ:**

- «Վ.Կ.Գ.ԵՈ» ՍՊ ընկերության կողմից չափագրման արդյունքում Վ. Հայրապետյանին տրամադրած իրադրության հատակագիծը, համաձայն որի՝ չափագրող Վ. Եսգիբարյանի կողմից **արձանագրած համադրությունը** հնարավոր է դարձել 2010 թվականին Մ2 միջպետական նշանակության ավտոմայրուղու 182-րդ կմ-ում կատարված հիմնանորոգման աշխատանքների հետևանքով: Նշված աշխատանքների արդյունքում ավտոճանապարհի «Դալի» գետի վրայով անցնող հատվածը մասնակի փլուզումից հետո չի վերականգնվել նույն տեղում, այլ վերակառուցվել է բոլորովին նոր տեղամասով՝ փլուզված հատվածից Երևան-Մեղրի ուղղությամբ դեպի ձախ մի քանի տասնյակ մետր փլուզված հատվածից վերև, համապատասխանաբար՝ Վ. Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում: **Ճանապարհի ծրագծի ակնհայտ փոփոխությունն** առանց որևիցե չափագրման նկատելի է նաև անգնն աչքով՝ նախկին ճանապարհի փլուզումից հետո մնացած հետքերից, ինչպես նաև համայնքի բնակիչների և վարորդների հետ անցկացրած հարցազրույցից:

- ՀՀ Սյունիքի մարզի Գորայք համայնքի ղեկավարի՝ 15.08.2018 թվականի թիվ 185 գրությունը, համաձայն որի՝ ի պատասխան ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Գ. Մուղնեցյանի՝ 09.08.2018 թվականի գրության հայտնվել է հետևյալ տեղեկատվությունները. (...) Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման Մ2 ավտոմայրուղու 182-րդ կմ հատվածում 2010 թվականին կատարված շինարարական աշխատանքների հետևանքով **փաստացի տեղի է ունեցել ճանապարհի ծրագծի փոփոխություն, ինչը՝ իրենց անհայտ պատճառով չի արտացոլվել կադաստրային քարտեզում:**

- ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 07.08.2017 թվականի թիվ 08/14.1/14727 գրությամբ Վալերիկ Հայրապետյանին պատասխանվել է, որ Մ2 Երևան-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 182-րդ կմ-ում **կատարվել են հիմնանորոգման աշխատանքներ, որոնց ընթացքում ծրագծի փոփոխություն չի կատարվել:**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թե՛ Դատարանը, և թե՛ Վերաքննիչ դատարանը իրենց եզրահանգումը կատարելուց առաջ մեջբերել են նաև վերոնշյալ իրարամերժ ապացույցները, և առանց որևէ վերլուծություն կատարելու՝ արձանագրել են, որ գործի փաստերը համադրելով գտնում են, որ հայցվորին սեփականության իրավունքով պատկանող 7722քմ հողամասից 847քմ հողամասը համադրվում է Մ2 ավտոմայրուղու հետ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ևս մեկ անգամ արձանագրել, որ գործով ձեռք բերված ապացույցների արժանահավատությունը գնահատելիս դատարանները պետք է վեր հանեն իրար հակասող ապացույցները և, եթե գործով ձեռք բերված ապացույցների համակցությունը թույլ է տալիս, կայացնեն դատական ակտ, դրա հիմքում դնելով արժանահավատ ապացույցները՝ համապատասխան պատճառաբանություններով, իսկ դատարանի կարծիքով ոչ արժանահավատ ապացույցը մերժել՝ հիմնավորելով տվյալ մերժումը: Այսինքն՝ դատարանի

պատճառաբանություններից պետք է պարզ դառնա, թե նման դատական ակտ կայացնելու հիմքում որ ապացույցներն են դրվել և ինչպիսի պատճառաբանություններով, և որ ապացույցներն են գնահատվել ոչ արժանահավատ՝ կրկին ինչպիսի պատճառաբանություններով:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով կայացված դատական ակտերը չեն պարունակում պատճառաբանություններ վկայակոչված իրարամերժ ապացույցների՝ հիմնավոր կամ անհիմն լինելու վերաբերյալ, և թե ինչ հիմքով են ընտրվել հողամասի և ավտոմայրուղու համադրումը հիմնավորող ապացույցները, և ինչ հիմքով են մերժվել համադրման բացակայության վերաբերյալ ապացույցները՝ անհայտ է:

Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով սույն գործի փաստերը և սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ անհրաժեշտ է գործն ուղարկել նոր քննության՝ գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու և դրանք պատշաճ կերպով հիմնավորող ապացույցների հիման վրա հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ կայացնելու համար:

Այսպիսով, վճռաբեկ բողոքների հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

*Վճռաբեկ բողոքների պարասխանի հիմնավորումները հերքվում են սույն որոշմամբ՝ նշված պարճառաբանություններով:*

##### **5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դարձական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որի դեմ կայացվել է եզրափակիչ դատական ակտ, կրում է Հայաստանի Հանրապետության կողմից վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարված գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև դատարանի և գործին մասնակցող անձանց կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են «Դատական ծախսերը» վերտառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ

գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.10.2019 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ-18039/02/19 2023թ.

Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

ԵԴ-18039/02/19  
Ն. Մարգարյան  
Ս. Թորոսյան  
Լ. Հովհաննիսյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*զեկուցող* Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Ս. ՄԵՂՂՅԱՆ  
Է. ՍԵՂՈՒՄՅԱՆ

2023 թվականի սեպտեմբերի 19-ին գրավոր ընթացակարգով քննելով Տիգրան Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.10.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ Տիգրան Հովհաննիսյանի հայցի ընդդեմ Անթրանիկ Բողոսյանի և Հայկ Մարտիրոսյանի՝ ինքնակամ կառուցված պարիսպը՝ բետոնյա հիմքը քանդելու, մետաղական ճաղավանդակները, մետաղական դռները և մետաղական կոնստրուկցիաներն ապամոնտաժելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Հովհաննիսյանը պահանջել է պատասխանողներին պարտավորեցնել քանդել ք.Երևան, Անտառային փողոցի 19-րդ շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի՝ թիվ 30 բնակարանի սահմաններին ինքնակամ կառուցված պարիսպը՝ բետոնյա հիմքը և մետաղական ճաղավանդակներն ամբողջությամբ ու մետաղական դռները, իսկ թիվ 30 բնակարանի դիմաց ինքնակամ ցանկապատով առանձնացված տարածքում առկա մետաղական կոնստրուկցիան՝ ապամոնտաժել:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Լ. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 19.05.2022 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.10.2022 թվականի որոշմամբ Տիգրան Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.05.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Տիգրան Հովհաննիսյանը (ներկայացուցիչ Սուրեն Բաղդասյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Անթրանիկ Բողոսյանը և Հայկ Մարտիրոսյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 3-րդ, 39-րդ, 10-րդ, 60-րդ, 61-րդ և 63-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ ու 163-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-9-րդ, 11-րդ, 13-րդ, 57-րդ, 58-րդ, 64-րդ, 66-րդ, 68-րդ, 75-րդ, 84-րդ, 178-րդ, 179-րդ ու 199-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

2005 թվականից սկսվել է «Պատուհան դեպի Արարատ» բնակելի համալիրի կառուցումը, որը ներառել է նաև թիվ 19 շենքը: Բնակելի համալիրի կառուցման պահից կառուցվել է լողավազան: Այդ շենքի նկատմամբ 19.12.2006 թվականին գրանցվել է Անթրանիկ Բողոսյանի սեփականության իրավունքը, տրվել է սեփականության իրավունքի վկայական: Սեփականության իրավունքի վկայականում 19-րդ շենքի հողամասի վրա քարե հիմքով ցանկապատի վերաբերյալ իրավունքի պետական գրանցում կատարված լինելու վերաբերյալ գրառում առկա չէ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ իր կողմից ներկայացված թիվ 23 լուսանկարները Դատարանի կողմից որպես թույլատրելի ապացույց չեն գնահատվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը խախտված լինելու պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ թեև միջնորդության մեջ նշված չեն եղել՝ երբ, որտեղ, ում կողմից, ինչպես և ինչ պայմաններում են արվել լուսանկարները, սակայն իր ներկայացուցիչը 27.01.2022 թվականի դատական նիստին, երբ քննարկվում էր ներկայացված ապացույցները թույլատրելու միջնորդությունը, հայտնել է լուսանկարների՝ երբ, որտեղ, ում կողմից, ինչպես նաև ինչ պայմաններում արված լինելու մասին, մինչդեռ Դատարանը, միջնորդությունը մերժելով անհիմն պատճառաբանությամբ, իրեն զրկել է դատական նիստին պահանջվող տեղեկությունները հայտնելու հնարավորությունից: Ավելին՝ 13.12.2019 թվականի դատական նիստին ճաղավանդակներն ապամոնտաժելու վերաբերյալ լուսանկարներ են հետագոտվել, սակայն այդ հանգամանքին Դատարանը վճռով չի անդրադարձել, ինչը նույնպես անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն վեճի ընթացքում, երբ Հայկ Մարտիրոսյանը դարձել էր թիվ 30 բնակարանի սեփականատերը, իր դիմում-բողոքների հիման վրա ցանկապատի ապամոնտաժման հանգամանքը պատկերված է եղել նաև լուսանկարներում, սակայն Հայկ Մարտիրոսյանի անմիջական մասնակցությամբ այդ ապամոնտաժված ճաղավանդակները կրկին տեղադրվել են:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.10.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը բավարարել:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները**

Անթրանիկ Բողոսայանի և Հայկ Մարտիրոսյանի անունից ներկայացվել է վճռաբեկ բողոքի պատասխան՝ ի թիվ այլնի հայտնելով, որ լուսանկարները ներկայացնելիս հայցվորը չի պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջները, մասնավորապես՝ լուսանկարների ուսումնասիրությունից պարզ չէ, թե դրանք որտեղ և երբ են կատարվել, դրանցով չեն ապացուցվում նաև հայցվորի վկայակոչած փաստերը, ինչն իրավաչափորեն արձանագրել են ստորադաս դատարանները:

Վճռաբեկ դատարանին խնդրել են վճռաբեկ բողոքը մերժել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենի համաձայն՝ ք. Երևան, Կենտրոն, Վ. Անտառային փողոցի 19-րդ շենքի թիվ 10 բնակարանի նկատմամբ տարածամկետ վճարումով առուվաճառքի 14.11.2017 թվականի պայմանագրի հիման վրա 17.11.2017 թվականին գրանցվել է Տիգրան Հովհաննիսյանի սեփականության իրավունքը, իսկ 0.1388հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 10)**.

2) գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ 03.06.2019 թվականի տեղեկանքի պատճենի համաձայն՝ ք. Երևան, Կենտրոն, Վ. Անտառային փողոցի 19-րդ շենքի թիվ 30 բնակարանի նկատմամբ 17.05.2019 թվականից գրանցված է Անթրանիկ Բողոսայանի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 12)**.

3) անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենի համաձայն՝ ք. Երևան, Կենտրոն, Վ. Անտառային փողոցի 19-րդ շենքի թիվ 30 բնակարանի նկատմամբ տարածամկետ վճարմամբ առուվաճառքի 02.07.2019 թվականի պայմանագրի հիման վրա 10.07.2019 թվականին գրանցվել է Հայկ Մարտիրոսյանի սեփականության իրավունքը, իսկ 0.1388հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը **(հատոր 2-րդ, գ.թ. 40)**.

4) հայցադիմումում ներկայացված են լուսանկարներ, որոնք 13.12.2019 թվականի դատական նիստին հայցվոր Տիգրան Հովհաննիսյանի ներկայացուցչի և պատասխանող Անթրանիկ Բողոսայանի ներկայացուցչի մասնակցությամբ հետազոտվել են Դատարանի կողմից (հիմք՝ 13.12.2019 թվականի դատական նիստի արձանագրության էլեկտրոնային կրիչը) **(հատոր 1-ին, գ.թ. 75)**.

5) հայցվոր Տիգրան Հովհաննիսյանի ներկայացուցիչը 24.09.2021 թվականին Դատարան է ներկայացրել թվով 23 լուսանկարներ **(հատոր 2-րդ, գ.թ. 13-22)**, իսկ 03.01.2022 թվականին՝ նշված լուսանկարները թույլատրելու գրավոր միջնորդություն **(հատոր 2-րդ, գ.թ. 64, 67)**.

6) Դատարանում գործի քննության ընթացքում՝ 27.01.2022 թվականի դատական նիստին՝ թվով 23 լուսանկարները թույլատրելու միջնորդությունը քննարկելիս



հայցվոր Տիգրան Հովհաննիսյանի ներկայացուցիչը պատրաստակամություն է հայտնել բանավոր նշելու լուսանկարների՝ երբ, որտեղ, ում կողմից, ինչպես և ինչ պայմաններում արված լինելու մասին: Դատարանը պարզաբանել է, որ պահանջվող տեղեկատվությունը պետք է նշվեր գրավոր ներկայացված միջնորդությամբ, ինչը չի արվել (հիմք՝ 27.01.2022 թվականի դատական նիստի արձանագրության համակարգչային համառոտագրումը, էլեկտրոնային կրիչը) (**հատոր 2-րդ, գ.թ. 111**).

7) 27.01.2022 թվականի դատական նիստին, Դատարանը, արձանագրելով, որ հայցվորը ներկայացրած միջնորդությամբ չի նշել, թե լուսանկարները երբ, որտեղ, ում կողմից, ինչպես և ինչ պայմաններում են արվել, այսինքն՝ չի պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջը, որոշում է կայացրել հայցվորի ներկայացրած լուսանկարները ապացույցների կազմից հանելու մասին (հիմք՝ 27.01.2022 թվականի դատական նիստի արձանագրության համակարգչային համառոտագրումը, էլեկտրոնային կրիչը) (**հատոր 2-րդ, գ.թ. 109-111**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառարանություններով:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին անդրադառնալ փաստի հաստատված լինելու հարցը պարզելիս դատարանի կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գործում եղած բոլոր ապացույցները գնահատելու հարցին՝ անդրադառնալով նաև լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները դատարան ներկայացնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատավարական կարգին:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը, բացառությամբ նույն օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված փաստերի, ենթակա են ապացուցման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները, ինչպես նաև դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները ներկայացնում են գործին մասնակցող անձինք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույց է այն փաստական տվյալը, որի հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց

պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ապացույցի տեսակներն են լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները:

Հաշվի առնելով լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների և տեսագրությունների որպես ապացույցի տեսակների առանձնահատկությունները, գործող դատավարական օրենքը սահմանել է դրանք ներկայացնելու, թույլատրելու և հետազոտելու հատուկ կանոններ: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները հետազոտվում են համապատասխան տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ դիտման միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լուսանկարներ (լուսաժապավեններ), ձայնագրություններ և տեսագրություններ թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնելիս դրանք ներկայացնող անձը պարտավոր է նշել՝ երբ, որտեղ, ում կողմից, ինչպես և ինչ պայմաններում են արվել այդ լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները: Այդ փաստերը չբացահայտելու կամ դրանց վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ ներկայացնելու դեպքում լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները չեն հետազոտվում և հանվում են ապացույցների կազմից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնելիս դրանք իրականացնելու ժամանակի, վայրի, իրականացնողի, իրականացնելու եղանակների ու պայմանների մասին տեղեկությունները դատարանի և գործին մասնակցող այլ անձանց առջև բացահայտելու պահանջը պայմանավորված է ներկայացված լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների ու տեսագրությունների թույլատրելիության գնահատումն իրականացնելու անհրաժեշտությամբ՝ նկատի ունենալով, որ միայն թվարկված փաստերն ուսումնասիրելու միջոցով դատարանը կարող է ստուգել լուսանկարահանելու, ձայնագրելու ու տեսագրելու օրինականությունը: Ընդ որում, քննարկվող փաստերից որևէ մեկը չբացահայտելը կամ դրանց արժանահավատությունը հերքող բավարար ապացույցների առկայությունն ընդհանրապես բացառում են ներկայացված ապացուցողական նյութի հետազոտումը: Նման իրավաբանական վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը քննարկվող պահանջի խախտման դեպքերի համար սահմանել է ապացույցի ոչ թույլատրելի լինելու կանխավարկածը, որը կարող է հաղթահարվել միայն նշված տեղեկությունները ներկայացնելու միջոցով:

Գործող օրենսդրությամբ ապացուցման ողջ պարտականությունը դրված է գործին մասնակցող անձանց վրա՝ ապացույցներ հավաքելու և դատարան ներկայացնելու պարտականությունը կրում են կողմերը: Դատարանը, իր հերթին, պատասխանատու է ապացուցման գործընթացի կազմակերպման համար կրելով ներկայացված միջնորդությանն անդրադառնալու ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դրան լուծում տալու պարտականություն՝ այդ կերպ ապահովելով նաև ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 13-րդ հոդվածով ամրագրված՝ կողմերի մրցակցության հիման վրա դատավարության իրականացման սկզբունքի իրագործումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված են ապացուցման պարտականությունը կատարելու նպատակով իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցներն ու դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները դատարան ներկայացնելու կանոնները:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ ապացույցը ներկայացվում է դատարան այն թույլատրելու միջնորդությամբ (բացառությամբ, եթե հայցադիմումում կամ հայցադիմումի պատասխանում վկայակոչված ապացույցները դատարան են ներկայացվում նշված դատավարական փաստաթղթերին կից կամ ներկայացվում է ոչ թե ապացույցը, այլ այն ձեռք բերելու միջնորդություն)՝ մատնանշելով փաստը, որը գործին մասնակցող անձը ցանկանում է ապացուցել:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները նույնպես պետք է ներկայացվեն դրանք թույլատրելու վերաբերյալ միջնորդությամբ: Ընդ որում, լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնելիս դրանք ներկայացնող անձը պարտավոր է նշել, թե երբ, որտեղ, ում կողմից, ինչպես, և ինչ պայմաններում են արվել այդ լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները: Այդ փաստերը չբացահայտելը կամ դրանց վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ ներկայացնելը հիմք է լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները չհետազոտելու ու ապացույցների կազմից հանելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց միջնորդությունները գործի քննության հետ կապված բոլոր հարցերով դատարանը լուծում է դատական նիստին ներկա գործին մասնակցող մյուս անձանց դիրքորոշումը լսելուց հետո, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական նիստից դուրս ներկայացված միջնորդությունն ստորագրում է այն ներկայացնող գործին մասնակցող անձը կամ նրա ներկայացուցիչը: (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատական նիստից դուրս միջնորդություն ներկայացրած անձը պարտավոր է միջնորդությանը կցել տվյալ միջնորդությունը և դրան կից փաստաթղթերը գործին մասնակցող անձանց ուղարկելու փաստը հավաստող ապացույցներ (...):

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատական նիստում գրավոր միջնորդություն ներկայացրած անձը պարտավոր է դատական նիստին ներկա գործին մասնակցող մյուս անձանց տրամադրել միջնորդության և դրան կից փաստաթղթերի պատճենները:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից բխում է, որ միջնորդությունները կարող են ներկայացվել ինչպես բանավոր դատական նիստում, այնպես էլ՝ գրավոր: Ընդ որում, գրավոր միջնորդությունը կարող է ներկայացվել ինչպես դատական նիստում, այնպես էլ դատական նիստից դուրս:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ առաջին աստիճանի դատարանը նախնական դատական

նիստի ընթացքում գործին մասնակցող անձանց հետ քննարկում և լուծում է ներկայացված ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված դատավարական գործողությունները կատարելիս դատարանը ներկայացված ապացույցները հետազոտում է այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են գործի դատաքննության արդյունավետ նախապատրաստություն իրականացնելու համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վճիռ կայացնելիս գնահատում է ապացույցները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների **բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ** հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, **թույլատրելիության**, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ապացույցների հետազոտման **բազմակողմանիությունը** ենթադրում է, որ գործում առկա ապացույցների ուսումնասիրության (ընկալման) ընթացքում դատարանը պետք է հաշվի առնի գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների դատողությունն ու բացատրությունները՝ միաժամանակ իր իրավասության սահմաններում ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները ստացված փաստական տվյալների արժանահավատությունը ստուգելու համար: Ապացույցների հետազոտման **լրիվությունը** ենթադրում է գործով ներկայացված (ձեռք բերված) բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցների ընկալում ու ստուգում, փաստերի գոյության կամ բացակայության մասին վերջնական եզրահանգումներ կատարելու համար անհրաժեշտ և բավարար ամբողջ ապացուցողական նյութի վերլուծություն ու ստուգում: Ապացույցների հետազոտման **օբյեկտիվությունը** ենթադրում է, որ դատարանն ապացույցները հետազոտելիս որևէ կերպ չպետք է շահագրգռված լինի գործի ելքով և անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերի ապացույցների հետազոտման ընթացքում՝ ապահովելով կողմերի մրցակցությունն ու իրավահավասարությունը և զերծ մնալով գործի ելքի կամ այս կամ այն ապացույցի արժանահավատության վերաբերյալ նախնական դատողություններ կատարելուց:

Դատարանի կողմից ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունն առաջնահերթ նշանակություն ունի դրանք առանձին-առանձին ու իրենց համակցության մեջ ճիշտ գնահատելու՝ դրանց արժանահավատությունը և բավարարությունը ճիշտ որոշելու ու գործի քննության արդյունքում օրինական և հիմնավորված դատական ակտ կայացնելու համար:

Վերը նշված դատավարական նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ հայցային վարույթում գործին մասնակցող անձանց կողմից, ի կատարումն ապացուցելու պարտականության, ներկայացված ապացույցներին, այդ թվում՝ լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները և տեսագրությունները թույլատրելու միջնորդությունների քննարկմանը դատարանը նախնառաջ պետք է անդրադառնա նախնական դատական նիստում՝ ներկայացված ապացուցողական նյութի վերաբերելիության ու թույլատրելիության հարցը լուծելիս (ապացուցողական նյութի նախնական գտում):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դատական նիստից դուրս գրավոր կամ դատական նիստում գրավոր կամ բանավոր ձևով ներկայացվում է լուսանկարներ (լուսաժապավեններ), ձայնագրություններ, տեսագրություններ և դրանց էլեկտրոնային կրիչները թույլատրելու վերաբերյալ միջնորդություն, որում նշված չեն կամ ոչ պատշաճ (ոչ լրիվ ծավալով) ձևով են նշված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող տեղեկությունները, ապա դատարանը, նպատակ ունենալով պահպանելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջները, պարտավոր է միջնորդություն ներկայացրած անձին առաջարկել կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պարտականությունը բացահայտել դրանով պահանջվող տեղեկությունները: Նշված տեղեկությունները չբացահայտելու դեպքում լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրությունները, տեսագրությունները և դրանց էլեկտրոնային կրիչները ենթակա չեն հետազոտման դատաքննության փուլում՝ ապացույցների կազմից հանվելու հիմքով:

Վճռաբեկ դատարանի վերը նշված դիրքորոշումը պայմանավորված է նրանով, որ թեև ապացույց ներկայացնելու հատուկ կանոնների սահմանմամբ ընդունելիության որոշակի սահմանափակում նախատեսելն ինքնասպառակ չէ (ինչպես արդեն նշվել է, այն թելադրված է թույլատրելիության նախնական գնահատումն իրականացնելու անհրաժեշտությամբ) և չի կարող ձևական բնույթ կրել, սակայն միաժամանակ պետք է բացառել այնպիսի իրավիճակները, երբ ընթացակարգային նորմերի չափազանցված ձևականացումը կարող է իր ազդեցությունն ունենալ դատավարության արդարացիության վրա:

**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող բոլոր փաստերը, բացառությամբ նույն օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված փաստերի, ենթակա են ապացուցման:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն ազատվում է գործի լուծման համար նշանակություն ունեցող այն փաստերն ապացուցելու պարտականությունից, որոնք գործին մասնակցող մյուս անձինք ընդունում են առաջին ատյանի դատարան ներկայացված դատավարական փաստաթղթով, դատական նիստի ընթացքում արված հայտարարությամբ, դիրքորոշում հայտնելու կամ ցուցմունք տալու ընթացքում (անվիճելի փաստեր), բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը գտնում է, որ՝

1) առկա են ողջամիտ կասկածներ, որ փաստն ընդունվում է խաբեության, բռնության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ, մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով, ճշմարտությունը թաքցնելու կամ ոչ իրավաչափ գործողություններ քողարկելու նպատակով:

2) այդ փաստը կարող է հաստատվել միայն օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված որոշակի ապացույցով:

3) այդ փաստի հաստատումն անխուսափելիորեն ազդում է գործին չմասնակցող անձի՝ գործին մասնակցող անձանցից որևէ մեկի նկատմամբ ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի վերլուծությունից բխում է, որ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, գործին մասնակցող անձն ազատվում է գործի լուծման համար նշանակություն ունեցող այն փաստերն ապացուցելու պարտականությունից, որոնք գործին

մասնակցող մյուս անձինք ընդունում են առաջին աստիճանի դատարան ներկայացված դատավարական փաստաթղթով, դատական նիստի ընթացքում արված հայտարարությամբ, դիրքորոշում հայտնելու կամ ցուցմունք տալու ընթացքում (անվիճելի փաստեր):

Անդրադառնալով 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածին, վերահաստատելով ապացուցելուց ազատվելու հիմքերի վերաբերյալ նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները և անդրադառնալով անվիճելի փաստերի ապացուցման անհրաժեշտությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ քաղաքացիական գործի քննության արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե որքանով է պարզ և հստակ ապացուցման գործընթացը: Այդ գործընթացը հնարավորինս պարզեցնելու, գործին մասնակցող անձանց և դատարանին անհարկի չձանաբեռնելու նպատակով օրենսդիրը սահմանել է դեպքեր, երբ գործի քննության ընթացքում որոշակի փաստեր որոշակի հանգամանքներում անհրաժեշտ չէ ապացուցել: Դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև օրենսդրի կողմից իբրև ապացուցելուց ազատվելու հիմքեր սահմանված են հանրահայտ, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով և դատավճռով հաստատված փաստերը, սակայն դատարաններն իրավացիորեն ապացուցման կարիք չունեցող փաստերի շարքին են դասում նաև այսպես կոչված «անվիճելի փաստերը»: Դրանք գործին մասնակցող անձանց կողմից վկայակոչված, գործի լուծման համար նշանակություն ունեցող այն փաստերն են, որոնք գործին մասնակցող մյուս անձինք ընդունում են դատարան ներկայացված դատավարական փաստաթղթերով, դատական նիստի ընթացքում արված հայտարարությամբ, դիրքորոշում հայտնելու կամ ցուցմունք տալու ընթացքում: Գործին մասնակցող անձանց կողմից գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ընդունումը կրճատում է ապացուցման ենթակա փաստերի շրջանակը և դատարանին հնարավորություն է տալիս կենտրոնանալու վիճելի փաստերի ապացուցման գործընթացի վրա (*տես՝ Սյրեփան Հայրապետյանն ընդդեմ Նիհաս Կուցանյանի թիվ ԵԱԲԳ/4741/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.03.2019 թվականի որոշումը*):

Նկատի ունենալով, որ դատավարական փոփոխությունները զարգացել են ՀՀ վճռաբեկ դատարանի վերը հիշատակված դիրքորոշմանը համահունչ, ապացուցման կարիք չունեցող փաստերի տարանջատմամբ պայմանավորված՝ ապացուցման գործընթացի հնարավորինս պարզեցման և հստակեցման վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի վկայակոչված դիրքորոշումը հավասարապես կիրառելի է նաև գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների նկատմամբ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պայմանները (այդ թվում՝ բացառությունները):

### ***Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Տիգրան Հովհաննիսյանը ներկայացրել է հայցադիմում՝ ք.Երևան, Անտառային փողոցի 19-րդ շենքի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի թիվ 30 բնակարանի սահմաններին ինքնակամ կառուցված պարիսպը բետոնյա հիմքը և մետաղական ճաղավանդակներն ամբողջությամբ ու մետաղական դռները քանդելու, թիվ 30 բնակարանի դիմաց ինքնակամ ցանկապատով

առանձնացված տարածքում առկա մետաղական կոնստրուկցիան ապամոնտաժել պարտավորեցնելու պահանջների մասին:

Գործի քննության ընթացքում Դատարան ներկայացրած գրավոր դիրքորոշումներով հայցվորը հայտնել է, որ պատասխանող Անթրանիկ Բողոսյանի կողմից վերը նշված բնակարանի ամբողջ երկայնքով ինքնական կառուցված պարիսպը բետոնյա հիմքը և մետաղական ճաղավանդակն ամբողջությամբ սահմանափակում են հայցվորի՝ ընդհանուր սեփականություն հանդիսացող տարածք մուտք գործելու հնարավորությունը, իսկ այդ բնակարանի դիմաց ինքնական ցանկապատով առանձնացված տարածքում առկա մետաղական կոնստրուկցիան, գտնվելով հայցվորի սեփականություն հանդիսացող թիվ 10 բնակարանի պատուհանների տակ, առաջացնում է հայցվորի բնակարան ապօրինի մուտք գործելու հնարավորություն: Մինչև թիվ 30 բնակարանը պատասխանող Հայկ Մարտիրոսյանին վաճառելը՝ շենքում այլ երեխաներ են բնակվել, և մինչ այդ բնակարանի սահմանները երկու կողմից մետաղական ցանկապատով առանձնացված չեն եղել, առկա չեն եղել դռան փականներ, դեպի լողավազան մուտքն ազատ է եղել 2005 թվականի համալիրի կառուցումից մինչև 02.07.2019 թվականը՝ թիվ 30 բնակարանի վաճառքը:

Պատասխանող Անթրանիկ Բողոսյանը Դատարան ներկայացրած հայցադիմումի պատասխանով (*վերջինիս ներկայացուցիչը՝ սակ բանավոր հայտնած դիրքորոշումներով, հարոր 1-ին, գ.թ. 75*) ի թիվ այլնի հայտնել է, որ բնակելի համալիրի կենտրոնական հատվածում տեղակայված է լողավազան, որի բոլոր մուտքերն առանձնացված են ցածր մետաղական դռներով՝ երեխաների անվտանգությունն ապահովելու նպատակով: Նշված մետաղական դռները, դրանց բետոնյա հիմքերն առկա են եղել դեռևս 2009 թվականից, թիվ 19 շենքի հարևանությամբ դեռևս 2009 թվականից առկա է մետաղական կոնստրուկցիա, որի վրա անցկացվում է համապատասխան ծածկոց, որը պաշտպանում է արևի ճառագայթներից և հնարավորություն է տալիս բնակիչներին բակում՝ արևից պաշտպանված հատվածում, ժամանակ անցկացնել: 2019 թվականին մետաղական դռան աջ և ձախ հատվածը ցանկապատվել է թեթև կոնստրուկցիաներով՝ ճաղերով, որի նպատակը եղել է «աուտիզմ» հիվանդությամբ տառապող երեխայի անվտանգության ապահովումը՝ մուտքը դեպի լողավազան:

Պատասխանող Հայկ Մարտիրոսյանը Դատարան ներկայացրած հայցադիմումի պատասխանով հայտնել է, որ վեճի առարկա հանդիսացող պարիսպը, մետաղական դռները և մետաղական կոնստրուկցիան առնչվում են միայն թիվ 30 բնակարանի մուտք ու ելքին, դրանց ամկայությունը չի խոչընդոտում հայցվորի ազատ տեղաշարժը: Բնակելի համալիրի կենտրոնական հատվածում տեղակայված է լողավազան, որի բոլոր մուտքերն առանձնացված են ցածր մետաղական դռներով՝ երեխաների անվտանգությունն ապահովելու նպատակով, մետաղական դռները և դրանց բետոնյա հիմքերը, մետաղական կոնստրուկցիան առկա են եղել դեռևս 2009 թվականից, 2019 թվականին մետաղական դռան աջ ու ձախ հատվածը ցանկապատվել է թեթև կոնստրուկցիաներով՝ ճաղերով, որի նպատակը եղել է իր՝ «աուտիզմ» հիվանդությամբ տառապող երեխայի անվտանգության ապահովումը, դռները փականներ չունեն և որոշակի ուժի գործադրմամբ բացվում են:

Դատարանն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ ի թիվ այլնի սահմանել է հայցվորի կողմից ապացուցման ենթակա հետևյալ փաստը՝ ք. Երևան, Վ. Անտառային փողոցի 19-րդ շենքի թիվ 30 բնակարանի դիմաց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի

վրա Անթրանիկ Բողոսայանի կողմից կառուցվել է ինքնակամ կառույց՝ պարիսպ՝ բետոնյա հիմք, բետոնյա հիմքի վրա տեղադրվել են մետաղական կոնստրուկցիաներ, մետաղական դռներ, դռների փականներ, ինչի արդյունքում խախտվել են հայցվորի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը:

Ի կատարումն նշված որոշման՝ հայցվորն ի թիվ այլևի Դատարան է ներկայացրել թվով 23 լուսանկարներ և դրանք թույլատրելու գրավոր միջնորդություն:

27.01.2022 թվականի դատական նիստին Դատարանը, անդրադառնալով ներկայացված ապացույցների թույլատրելիությանը և վերաբերելիությանը, հայցվորի ներկայացրած թվով 23 լուսանկարները հանել է հետազոտման ենթակա ապացույցների կազմից՝ արձանագրելով, որ հայցվորը չի պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը:

Գործի քննության արդյունքում Դատարանը, ի թիվ այլևի արձանագրելով, որ «ՀՀ վարչական դատարանի 13.02.2020թ. թիվ ՎԴ/7976/05/18 վճիռը մերել է օրինական ուժի մեջ, որով փաստորեն անվավեր է ճանաչվել Երևանի քաղաքապետարանի աշխարհակազմի վարչական իրավահաստատումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետի 12.06.2019 թվականի թիվ Վ-22/8 որոշումը, այսինքն՝ Երևանի քաղաքապետի 24.05.2019 թվականի թիվ 029664 արձանագրությամբ և նշած որոշմամբ արձանագրված իրավահաստատման փաստը առկա չէ, իսկ հայցվորի ներկայացուցչի կողմից չի ներկայացվել որևէ այլ վերաբերելի և թույլատրելի ապացույց ի հիմնավորումն այն փաստի, որ Անթրանիկ Բողոսայանի կողմից կառուցվել է ինքնակամ կառույց՝ պարիսպ՝ բետոնյա հիմք, բետոնյա հիմքի վրա տեղադրվել են մետաղական կոնստրուկցիաներ, մետաղական դռներ, դռների վրա փականներ, այսինքն՝ գործով ներկայացված ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում այդ փաստերի առկայությունը, որպիսի պայմաններում վիճելի է մնում նաև այն փաստի առկայությունը, որ նման գործողությունների արդյունքում խախտվել են հայցվորի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, եթե բոլոր ապացույցների հետազոտումից և զննհարումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, սպա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը», վճռել է հայցը մերժել:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով ներկայացված լուսանկարները թույլատրելու միջնորդությունը մերժելու հայցվորի վերաքննիչ բողոքի փաստարկին, արձանագրելով, որ «Որոշակի րեսակի ապացույցներ թույլատրելու մասին միջնորդությունների ներկայացման համար օրենսդիրը սահմանել է հարակ կարգ և դրա չպահպանման բացասական հետևանքներ՝ համապարասիան ապացույցը թույլատրելու մասին միջնորդությունը մերժելու կամ ապացույցների շարքից ապացույցը հանելու տեսքով», և վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասը, եզրահանգել է, որ «Դատարանի կողմից հայցվորի ներկայացրած լուսանկարներն ապացույցների շարքից հանելն իրավաչափ է և բիւել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումներից, որի ուժով, լուսանկարներ թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացնելիս, հայցվորը պարտավոր է եղել նշել դրանց թույլատրելիությունը կանխորոշող հարկանիշները»:

Վկայակոչված պատճառաբանություններից հետևում է, որ հայցվորի ներկայացրած թվով 23 լուսանկարները Դատարանը հանել է հետազոտման ենթակա ապացույցների կազմից այն հիմնավորմամբ, որ չի պահպանվել լուսանկարների՝



որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված ապացույցի տեսակը ներկայացնելու դատավարական կարգը:

Իր հերթին լուսանկարները հետազոտման ենթակա ապացույցների կազմից հանելու Դատարանի հետևությունը Վերաքննիչ դատարանը գնահատել է իրավաչափ՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասով՝ նույնպես արձանագրելով ապացույցի նշված տեսակը ներկայացնելու դատավարական կարգը պահպանված չլինելու հանգամանքը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների հետևության իրավաչափությանը՝ Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում նշել, որ հայցվորի ներկայացուցիչը Դատարան է ներկայացրել թվով 23 լուսանկարներ և դրանք թույլատրելու **գրավոր** միջնորդություն:

Թեև **գրավոր** ներկայացված միջնորդության մեջ չեն նշվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկությունները (գրավոր միջնորդությունը չի բովանդակել տեղեկություն այն մասին, թե երբ, որտեղ, ում կողմից, ինչպես և ինչ պայմաններում են արվել թվով 23 լուսանկարները), այդուհանդերձ, դրանք բացահայտելու հարցին Դատարանը չի անդրադարձել դատական նիստում միջնորդության քննարկման ընթացքում: Մասնավորապես, թվով 23 լուսանկարները թույլատրելու **գրավոր** ներկայացված միջնորդության քննարկման ժամանակ հայցվորի ներկայացուցիչը պատրաստակամություն է հայտնել նշելու լուսանկարների՝ երբ, որտեղ, ում կողմից, ինչպես և ինչ պայմաններում արված լինելու մասին, մինչդեռ Դատարանը զրկել է հայցվորի ներկայացուցչին նման հնարավորությունից:

Տվյալ դեպքում միջնորդության քննարկման ժամանակ՝ 27.01.2022 թվականի դատական նիստին, որին մասնակցել են նաև պատասխանողների ներկայացուցիչները, **գրավոր** միջնորդությունը բանավոր լրացնելու հնարավորությունից հայցվորի ներկայացուցչին զրկելով՝ Դատարանը ըստ էության միջնորդության քննարկման նկատմամբ ցուցաբերել է խիստ ձևական, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերը նշված իրավակարգավորումներից չբխող մոտեցում: Դատական նիստում գրավոր ներկայացված միջնորդությունը քննարկելիս հայցվորի ներկայացուցչի բանավոր պարզաբանումները, այդ թվում՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից 83-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկությունների բացահայտումը՝ գրավոր ներկայացված միջնորդության հետ համակցությամբ, բավարար էին միջնորդությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ներկայացված լինելու փաստն արձանագրելու համար:

Այսինքն՝ ըստ էության, բացակայել են ներկայացված թվով 23 լուսանկարների հետազոտումը դժվարացնող, անհնարին դարձնող կամ դրա արժանահավատությունը կասկածի տակ դնող այլ հիմնավոր պատճառներ, հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման պատճառաբանությամբ Դատարանը չէր կարող ներկայացված լուսանկարները հանել հետազոտման ենթակա ապացույցների կազմից և եզրահանգում անել այն մասին, որ հայցվորի ներկայացուցչի կողմից չի ներկայացվել որևէ այլ վերաբերելի ու թույլատրելի ապացույց ի հիմնավորումն այն փաստի, որ Անթրանիկ Բողոքասյանի կողմից կառուցվել է ինքնակամ կառույց՝ պարիսպ բետոնյա հիմք, բետոնյա հիմքի վրա տեղադրվել են մետաղական կոնստրուկցիաներ, մետաղական դռներ, դռների վրա փականներ:

Ավելին՝ ստորադաս դատարաններն անտեսել են նաև, որ հայցվորի պնդմամբ լուսանկարներում պատկերված, հայցի առարկան կազմող բետոնյա հիմքի, ճաղավանդակների, դռների և մետաղական կոնստրուկցիաների առկայության, դրանց տեղադրման ժամանակի, պայմանների ու պատճառների վերաբերյալ գրավոր դիրքորոշումներ են հայտնել պատասխանողներ Անթրանիկ Բողոսյանը և Հայկ Մարտիրոսյանը՝ գրավոր դիրքորոշումներով (հայցադիմումի պատասխաններով) ընդունելով դրանց առկայության փաստը:

Վերոշարադրյալը թույլ է տալիս Վճռաբեկ դատարանին եզրահանգելու, որ հայցապահանջի հիմքում վկայակոչված և գործի լուծման համար նշանակություն ունեցող բետոնյա հիմքի, դռների, ճաղավանդակների ու մետաղական կոնստրուկցիաների առկայության և դրանցով հայցվորի իրավունքների ու օրինական շահերի խախտման վերաբերյալ փաստերի առկայությունը կամ բացակայությունը հնարավոր է պարզել սույն գործով կողմերի դիրքորոշման և ներկայացված թվով 23 լուսանկարների որպես հետազոտման ենթակա ապացույցների հետ համակցությամբ հետազոտման ու գնահատման հիման վրա, ինչը տվյալ դեպքում չի իրականացվել:

Վերը նշված պատճառաբանությամբ ընթացակարգային նորմերի նկատմամբ Դատարանի դրսևորած ձևական մոտեցումը, ըստ էության, հանգեցրել է ապացուցողական նյութի անտեղի կորստի: Մինչդեռ որպես հայցապահանջը հիմնավորող ապացույցների՝ թվով 23 լուսանկարների պատշաճ հետազոտումը և գնահատումը կարող են ձևավորել Դատարանի ներքին համոզմունքի օբյեկտիվ հիմք ու ազդել գործի ելքի վրա:

*Վերոգրյալ պարճառաբանությամբ միաժամանակ հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները:*

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորի ներկայացրած թվով 23 լուսանկարները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով հետազոտելու և գնահատելու նպատակով առկա է ամբողջ ծավալով գործի նոր քննության անհրաժեշտություն, ուստի տվյալ դեպքում կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործն ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դարսական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի

քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [Գլուխ 10] կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.10.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ-14048/02/18 2023թ.

Քաղաքացիական գործ թիվ

ԵԴ-14048/02/18

Նախագահող դատավոր՝

Կ. Համբարձումյան

Դատավորներ՝

Մ. Հարթենյան

Ն. Մարգարյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

*Նախագահող  
զեկուցող*

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ  
Ս. ՄԵՂՐՅԱՆ  
Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 15-ին

գրավոր ընթացակարգով քննելով Ստեփան Գալստյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ Արտակ Խաչատրյանի հայցի ընդդեմ Ստեփան Գալստյանի՝ սեփականության իրավունքի խոչընդոտները վերացնելու պահանջի մասին, և ըստ Ստեփան Գալստյանի հակընդդեմ հայցի ընդդեմ Արտակ Խաչատրյանի՝ հարկադիր սերվիտուտ սահմանելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Արտակ Խաչատրյանը պահանջել է վերացնել իր սեփականության իրավունքի խոչընդոտները, այն է՝ Ստեփան Գալստյանին վտարել Երևանի Արաբկիր, Քեռու փողոցի թիվ 99/3 հասցեում գտնվող հողամասից, վերջինիս պարտավորեցնել հեռացնել Երևանի Արաբկիր, Քեռու փողոցի թիվ 99ա հասցեում գտնվող բնակելի տան ջրագիծը, թվով 2 ծխատարերը, ինչպես նաև տեղադրված մետաղական և այլ կոնստրուկցիաները, վերականգնել հողամասի՝ մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը, Ստեփան Գալստյանին

պարտավորեցնել չխոչընդոտել Երևանի Արաբկիր, Քեռու փողոցի թիվ 99/3 և թիվ 99ա հասցեների հողամասերի միջև պարհսպ կառուցելուն:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ստեփան Գալստյանը պահանջել է Արտակ Խաչատրյանի սեփականությունը հանդիսացող Երևանի Արաբկիր, Քեռու փողոցի թիվ 99/3 տան և թիվ 99ա հասցեների արանքում ընկած՝ մեկ մետր լայնություն ու 21 մետր երկարություն ունեցող հողատարածքի նկատմամբ սահմանել հարկադիր սերվիտուտ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.07.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է, իսկ հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.12.2020 թվականի որոշմամբ Ստեփան Գալստյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 14.07.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ստեփան Գալստյանը (ներկայացուցիչ Աննա Տոնոյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արտակ Խաչատրյանը (ներկայացուցիչ Դիանա Շախբամանյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասը, 60-րդ հոդվածի 1-ին մասը, 61-րդ հոդվածի 1-ին մասը և 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, 57-րդ հոդվածը, 59-րդ հոդվածի 1-ին մասը, 60-րդ հոդվածի 1-ին մասը, 62-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը, 63-րդ հոդվածի 2-րդ մասը, 66-րդ հոդվածի 2-րդ մասը, 84-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 85-րդ հոդվածի 1-ին մասը, 86-րդ հոդվածի 1-ին մասը, 91-րդ հոդվածը, 152-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը, 162-րդ հոդվածի 1-ին մասը, 379-րդ հոդվածի 2-րդ մասը, 381-րդ հոդվածի 5-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապարզապես է հերքելյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ իր ներկայացուցիչն ապացուցման բեռը բաշխելու մասին որոշմամբ սահմանված՝ ապացույցներ կամ դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետի օրը՝ 05.06.2020 թվականին, Դատարան է ներկայացրել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու, «Շին Էքսպերտ» ՍՊԸ-ի դատաշինարարատեխնիկական փորձաքննություն իրականացրած փորձագետին դատական նիստին հրավիրելու և փորձագիտական եզրակացության վերաբերյալ բացատրություն տալու մասին միջնորդություններ, որոնք Դատարանի արձանագրային որոշմամբ մերժվել են:

Վերաքննիչ դատարանն արտահայտել է իրար հակասող դիրքորոշումներ, մասնավորապես՝ արձանագրելով, որ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդության քննարկման ժամանակ դատարանն օժտված է հայեցողական լիազորությամբ՝ մերժելու կամ բավարարելու ներկայացված միջնորդությունը, հայցվորը պետք է օգտվեր իր փորձագիտական եզրակացություն ներկայացնելու

իրավունքից, հակառակ դեպքում կրում է դրա բացասական հետևանքները, առանց համապատասխան փորձագիտական եզրակացության հնարավոր չէ հարկադիր սերվիտուտ սահմանելու հարցում գալ վերջնական եզրահանգման:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված է պահանջ՝ միջնորդության մեջ նշել ապացուցման ենթակա փաստը, որը պետք է հաստատվի փորձագետի եզրակացությամբ, սահմանված են միջնորդություն ներկայացնելու համար դատավարական ժամկետներ, սահմանված է ընթացակարգ՝ կապված միջնորդությունը դատավարության մասնակիցներին մատչելի դարձնելու հետ: Այսինքն՝ դատավարության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ միջնորդության մերժումն ինչքան էլ որ հայեցողական լիազորություն է, պետք է բխի օրենսդրական անհրաժեշտությունից, այսինքն՝ պետք է ելնի դատավարության մասնակցի կողմից օրենքի պահանջը չկատարելու փաստից կամ միջնորդությամբ նշված փաստը փորձագետի եզրակացությամբ հաստատման ենթակա չլինելու փաստից, ինչպես նաև գործի բնույթից, վեճն առանց փորձագիտական եզրակացության արդար լուծելու հնարավորության առկայությունից:

Տվյալ դեպքում Դատարանի հայեցողական լիազորության իրացումը դուրս է վերոնշյալ սահմաններից, իսկ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը, հաշվի առնելով սույն գործի բնույթը, չի համապատասխանում արդարադատություն իրականացնելու դատարանի կոչմանը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.12.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմքերը և հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Գործով պարզման ենթակա հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի վերաբերյալ իր ներկայացրած միջնորդության հիման վրա Դատարանն արդեն մեկ անգամ նշանակել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն, բողոքաբերը ներկա է գտնվել դատական նիստին և միջնորդության վերաբերյալ հայտնել է իր կարծիքը: Փորձաքննության արդյունքում փորձագետին առաջադրված հարցերը բովանդակային առումով համընկնում են բողոքաբերի կողմից հետագայում ներկայացված միջնորդության հիման վրա նշանակված փորձաքննությամբ առաջադրված հարցադրումներին, որոնց վերաբերյալ փորձագետի կողմից տրվել են սպառիչ պատասխաններ: Հետևաբար Դատարանն իրավացիորեն մերժել է սույն գործով բողոքաբերի՝ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդությունը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Արտակ Խաչատրյանը 04.12.2018 թվականին դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն է ներկայացրել Դատարան, որը Դատարանի 04.12.2018 թվականի որոշմամբ բավարարվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 28, 32-35**).

2) «Շին Էքսպերտ» ՍՊԸ-ի 24.06.2019 թվականի թիվ 18/029Դ փորձագիտական եզրակացության համաձայն՝

- Արտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Արաբկիր, Քեռու փողոցի թիվ 99/3 հասցեում գտնվող փաստացի պակաս օգտագործվող հողամասով անցնում են Ստեփան Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող թիվ 99ա բնակելի տան ջրագիծը, ինչպես նաև թվով 2 ծխատար, որոնք հնարավոր է տեղափոխել համապատասխան տեխնիկական փաստաթղթերի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նախագծերի առկայության պարագայում,

- Արտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող թիվ 99/3 հասցեի հողատարածքի տիրապետման հետևանքով տեղատեսության օրվա դրությամբ Երևանի Արաբկիր, Քեռու փողոցի թիվ 99ա հասցեում գտնվող Ստեփան Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան, նկուղի, օժանդակ շինությունների և դեպի հողամասի տարբեր հատվածների մուտքի խոչնդոտներ առկա չեն, սակայն թիվ 99/3 հասցեում գտնվող տնատիրության կողմից փաստացի պակաս 23,42 (23,42x1,0)մ2 մակերեսով հողամասի ձախ սահմանային եզրագծով պարսպի կառուցման պարագայում (երկկողմանի փակումը, կամ նմանատիպ շինարարական աշխատանքների իրականացումը) թիվ 99ա հասցեում գտնվող բնակելի տնից դեպի իրենց բակային հատված դուրս գալու հնարավորություն չի լինի (**հատոր 2-րդ, գ.թ. 46-55**).

3) հակընդդեմ հայցով հայցվոր Ստեփան Գալստյանը 10.03.2020 թվականին «Սերվիտուտի փորձագետ ներգրավելու վերաբերյալ» միջնորդություն է ներկայացրել Դատարան, որը Դատարանի արձանագրային որոշմամբ մերժվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 79-81**).

4) հակընդդեմ հայցով հայցվոր Ստեփան Գալստյանի ներկայացուցիչը 09.06.2020 թվականին դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն է ներկայացրել Դատարան, որը Դատարանի արձանագրային որոշմամբ մերժվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 107-109, 118-120**).

5) հակընդդեմ հայցով հայցվոր Ստեփան Գալստյանի ներկայացուցիչը 05.06.2020 թվականին փոստային ծառայության միջոցով միջնորդություն է ներկայացրել դատարան «Շին Էքսպերտ» ՍՊԸ-ի դատաշինարարատեխնիկական փորձաքննություն իրականացրած փորձագետին դատական նիստին հրավիրելու և 24.06.2019 թվականի թիվ 18/029Դ փորձագիտական եզրակացության վերաբերյալ բանավոր բացատրություն տալու համար, որը Դատարանի արձանագրային որոշմամբ մերժվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 115, 116, 118-120**):

#### **4. Վճարելի դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Սույն գործով վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով՝ սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի, 84-րդ հոդվածի 1-ին մասի և 86-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Սույն վճարելի բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ դատարանի կողմից գործում առկա բոլոր*

ապացույցների լրիվ և բազմակողմանի հետազոտմանն ու գնահատմանն ինդիքին, ինչպես նաև փորձաքննությունն նշանակելու առանձնահատկություններին՝ վերահասարակելով և զարգացնելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ուրիշի գույքից սահմանափակ օգտվելու իրավունքներն են գույքային սերվիտուտը:

Նույն հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ուրիշի գույքից սահմանափակ օգտվելու իրավունքներն են անձնական սահմանափակ սերվիտուտը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ հարկադիր գույքային սերվիտուտ կարող է սահմանվել հարևան կամ այլ հողամասով անցնելու, երթնելելու, էլեկտրահաղորդման, կապի գծերի կամ խողովակաշարերի անցկացման ու շահագործման, ջրամատակարարման, հողաբարելավման, վերանորոգման, շինարարական աշխատանքներ կատարելու կամ գերակա գույքի սեփականատիրոջ այլ կարիքները բավարարելու համար, որոնք չեն կարող ապահովվել առանց սերվիտուտ սահմանելու, կամ որոնց ապահովումը կապված է անհամաչափ զգալի ծախսերի հետ:

Նույն հոդված 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքում հարկադիր գույքային սերվիտուտը սահմանում է դատարանը՝ սերվիտուտ պահանջող անձի հայցով՝ կամավոր գույքային սերվիտուտ սահմանելու վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ սեփականության իրավունքի իրավագործություն հանդիսացող օգտագործման իրավունքը ենթադրում է, որ սեփականատերն իրավական և փաստական հնարավորություն պետք է ունենա օգուտներ ստանալու իր գույքից: Նկատի ունենալով, որ իր գույքից օգտվելը կարող է պայմանավորված լինել նաև այլ սեփականատերերի գույքի հետ առնչվելով՝ օրենսդիրը նախատեսել է սերվիտուտի, այդ թվում՝ հարկադիր սերվիտուտի՝ ուրիշի գույքից սահմանափակ կերպով օգտվելու իրավունքը: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հողամասի շենքի, շինության և այլ անշարժ գույքի սեփականատերն իրավունք ունի հարևան հողամասի սեփականատիրոջից վերջինիս պատկանող հողամասի շենքի, շինության և այլ անշարժ գույքի սահմանափակ օգտագործման (սերվիտուտ) պահանջով դիմել դատարան, եթե այն անհրաժեշտ է մասնավորապես՝ անցնելու և երթնելելու համար, որը չի կարող ապահովվել առանց սերվիտուտ սահմանելու: Ընդ որում՝ օրենսդիրը որևէ բացառություն ընդհանուր կանոնից չի սահմանել, այսինքն՝ սահմանված չեն այն դեպքերը, թե երբ է հարկադիր սերվիտուտը ենթակա մերժման: Նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ինչպես սերվիտուտով ծանրաբեռնվող անշարժ գույքի սեփականատերը պետք է հնարավորություն ունենա լիարժեքորեն օգտվելու իր գույքից, այնպես էլ սերվիտուտի սահմանման կարիք ունեցող գույքի սեփականատերը, հակառակ դեպքում սեփականության իրավունքը կկրի հոչակագրային բնույթ, քանի որ սեփականատերը հնարավորություն չի ունենա լիարժեքորեն օգտվելու իր իրավագործություններից: Հետևաբար սերվիտուտ սահմանելու պահանջներ քննելիս դատարանները պետք է հաշվի առնեն երկու սեփականատերերի շահերի հավասարակշռման անհրաժեշտությունը՝ այդ թվում այն բացահայտելով փորձաքննության միջոցով (որեն Գայանե Խաչատրյանն ընդդեմ Կիրան Հակոբյանի և



մյուսների թիվ ԵՄԴ/1573/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2018 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույց է այն փաստական տվյալը, որի հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա՝ ղեկավարվելով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ՝ փաստի հաստատման համար բավարարության տեսանկյունից:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում փաստել է, որ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրակացությունը պետք է լինի գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը և ներքին համոզմունքը (*Կրեն Թուզանաս Թորոպյանն ընդդեմ Նվեր Մկրտչյանի թիվ ԵԱԲԴ/1688/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.07.2011 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար (*Կրեն Սվեդլյանաս Ժուլիկյանն ընդդեմ Անահիտ Խաչատրյանի թիվ ԵՄԴ/0232/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզման հանգեցրելու համար պարտավոր է յուրաքանչյուր ապացույց հետազոտել նախ՝ գործին դրա վերաբերելիության, օրենքով նման ապացույցի թույլատրելիության, արժանահավատության տեսանկյունից, ապա գնահատել գործում եղած բոլոր ապացույցների համակցությանը, ինչի արդյունքում միայն հնարավոր կլինի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը (*Կրեն Աշոտ Հազարյանը և Մարգարիտ Դալլաքյանն ընդդեմ «Վանաձոր» նուրարական փարածքի*

նորար Արուսյակ Ազարյանի, Մարինե Յուրիկի Պարանյանի թիվ ԼԳ/0898/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը (տե՛ս Արման Վարդապարյանի ընդդեմ Կարինե Վարդապարյանի թիվ ԵԱԲԳ/0598/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ապացույցի տեսակներն են գրավոր ապացույցները:

Նույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ապացույցի տեսակներն են փորձագետի եզրակացությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով փորձագետի եզրակացությունը նախատեսված է որպես առանձին ապացույցի տեսակ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը գործի քննության ընթացքում գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործում պահանջող հարցերի բացահայտման և պարզաբանման նպատակով ձեռք բերված գրավոր փաստաթուղթն է, որը տրվում է փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ առաջադրված հարցերին պատասխանելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը կարող է փորձաքննություն նշանակել գործին մասնակցող անձի միջնորդությամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր նախաձեռնությամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն ներկայացնելիս պարտավոր է դրանում նշել ապացուցման ենթակա այն փաստը, որը պետք է հաստատվի փորձագետի եզրակացությամբ, և առաջադրել հարցեր, որոնք պետք է պարզաբանվեն փորձաքննության ընթացքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկ այլ որոշման շրջանակներում անդրադառնալով փորձագետի եզրակացությունը որպես գրավոր ապացույցի առանձին տեսակ գնահատելու հարցին, արձանագրել է, որ փորձագետի եզրակացությունն ապացույցի տեսակ է, իսկ դատարանը գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզում է բացառապես ապացույցների հիման վրա, որոնք դատարանը պարտավոր է գնահատել գործում եղած մյուս բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և

օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Այսինքն փորձաքննության նշանակումն ինքնանպատակ չէ և չի կարող կրել ձևական բնույթ (յրեն «Օրինեթ Սթոն» ՄՊԸ-ն ընդդեմ «Կազ քար» ՄՊԸ-ի թիվ ԱՎԴ1/0074/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ թեև 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով փորձաքննության նշանակմանը վերաբերելի իրավակարգավորումները որոշակի փոփոխությունների են ենթարկվել, մասնավորապես՝ այդ օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը կարող է փորձաքննություն նշանակել գործին մասնակցող անձի միջնորդությամբ, իսկ իր նախաձեռնությամբ փորձաքննություն կարող է նշանակել միայն օրենքով նախատեսված դեպքերում, այնուամենայնիվ, գործին մասնակցող անձի կողմից այդպիսի միջնորդություն ներկայացվելու դեպքում այն մերժելու կամ բավարարելու հարցը լուծելիս Դատարանը դատական հայեցողություն դրսևորելիս պետք է հաշվի առնի վիճելի իրավահարաբերության բնույթը, տվյալ գործի փաստերը պարզելու դատավարական անհրաժեշտությունը՝ ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա ներքին համոզման հանգելու պարտականության լիարժեք իրականացման տեսանկյունից՝ միաժամանակ երաշխավորելով կողմերի մրցակցության և իրավահավասարության դատավարական սկզբունքների պահպանումը:

Բնորոշելով «դատական հայեցողությունը» ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ այն կոնկրետ իրավական վեճի լուծման գործընթացում օրենսդրությամբ կանխորոշված շրջանակներում դատարանի կողմից որոշակի դատավարական գործողության կատարման կամ այդպիսի գործողության կատարումից ձեռնպահ մնալու հնարավորությունն է, որը, սակայն, չի կարող մեկնաբանվել որպես անսահմանափակ սզատություն, քանի որ իրավական պետության հիմքում ընկած իրավունքի գերակայության սկզբունքը պահանջում է, որ երաշխավորվի կամայականության արգելքը, և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները: Ըստ այդմ, «դատական հայեցողության» սահմանները նախևառաջ պայմանավորված են գործի փաստական հանգամանքները լրիվ և բազմակողմանի պարզելու, կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներն ապահովելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև վիճելի իրավահարաբերության բնույթով և տվյալ իրավահարաբերությունը կարգավորող նյութաիրավական օրենսդրության առանձնահատկություններով (յրեն ՀՀ Ֆինանսների նախարարությունն ընդդեմ Սայեն Դազարյանի և այլոց թիվ ԱՎԴ/0011/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև գործին մասնակցող բոլոր անձանց հավասարության սկզբունքի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործին մասնակցող անձանց մրցակցության հիման վրա, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական

նիստի ընթացքում (...) իրականացնում է նույն օրենսգրքով նախատեսված՝ գործի արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:

Դատարանի առջև հավասարության և մրցակցության սկզբունքները սերտորեն փոխկապված են, ու միայն դատարանի առջև հավասարության սկզբունքի իրացման պայմաններում է հնարավոր ապահովել մրցակցության սկզբունքի լիարժեք իրացումը: Քաղաքացիական դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև արդարացի հավասարակշռության իմաստով, հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը և պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույց ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (*Իրե'ս Ասկերլը ընդդեմ Շվեյցարիայի գործով ՄԻԵԴ-ի 23.10.1996 թվականի որոշումը, կետ 38-րդ, Դոմբո Բեհեր Բ. Վ. ընդդեմ Նիդերլանդների գործով ՄԻԵԴ-ի 07.10.1993 թվականի որոշումը, կետ 66*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կողմերի իրավահավասարությամբ իրականացվող և մրցակցության վրա հիմնված դատավարությունում դատարանի անկախ և անաչառ դերը պետք է արտահայտվի գործի փաստական հանգամանքները պարզելով, ինչպես նաև ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու համար պայմաններ ստեղծելով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածը դատարանից պահանջում է յուրաքանչյուր գործի քննությունն իրականացնելիս մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ու միջազգային-իրավական փաստաթղթերով ամրագրված իրավունքների և ազատությունների առավելագույնս արդյունավետ ապահովում և պաշտպանություն:

### ***Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ստեփան Գալստյանը պահանջել է Արտակ Խաչատրյանի սեփականությունը հանդիսացող Երևանի Արաբկիր, Քեռու փողոցի թիվ 99/3 և թիվ 99ա հասցեների արանքում ընկած հողատարածքի նկատմամբ, որն ունի մեկ մետր լայնություն և 21 մետր երկարություն՝ ընդհանուր 21քմ մակերես, սահմանել հարկադիր սերվիտուտ:

Սկզբնական հայցով հայցվոր Արտակ Խաչատրյանը 04.12.2018 թվականին դատատեխնիկական փորձաքննությունն նշանակելու մասին միջնորդություն է ներկայացրել Դատարան, որը Դատարանի 04.12.2018 թվականի որոշմամբ բավարարվել է:

«Շին Էքսպերտ» ՍՊԸ-ի 24.06.2019 թվականի թիվ 18/029Դ փորձագիտական եզրակացության համաձայն՝ Արտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Արաբկիր, Քեռու փողոցի թիվ 99/3 հասցեում գտնվող փաստացի պակաս օգտագործվող հողամասով անցնում են Ստեփան Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող թիվ 99ա բնակելի տան ջրագիծը, ինչպես նաև թվով 2 ծխատար, որոնք հնարավոր է տեղափոխել համապատասխան տեխնիկական փաստաթղթերի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նախագծերի առկայության պարագայում: Արտակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող թիվ 99/3 հասցեի հողատարածքի տիրապետման հետևանքով տեղատեսության օրվա դրությամբ Երևանի Արաբկիր, Քեռու փողոցի թիվ 99ա հասցեում գտնվող՝ Ստեփան Գալստյանին սեփականության

իրավունքով պատկանող բնակելի տան, նկուղի, օժանդակ շինությունների և դեպի հողամասի տարբեր հատվածների մուտքի խոչնդոտներ առկա չեն, *սակայն թիվ 99/3 տնտեսության կողմից փաստացի պակաս 23,42 (23,42x1,0)մ2 մակերեսով հողամասի ձախ սահմանային եզրագծով պարսպի կառուցման պարագայում (երկկողմանի փակումը, կամ նմանատիպ շինարարական աշխատանքների իրականացումը) թիվ 99ա հասցեում գրավող բնակելի տնից դեպի իրենց բակային հարված դուրս գալու հնարավորություն չի լինի:*

Հակընդդեմ հայցով հայցվոր Ստեփան Գալստյանը 10.03.2020 թվականին «Սերվիտուտի փորձագետ ներգրավելու վերաբերյալ» միջնորդություն է ներկայացրել Դատարան, որը Դատարանը մերժել է:

Հակընդդեմ հայցով հայցվոր Ստեփան Գալստյանի ներկայացուցիչը 09.06.2020 թվականին դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն է ներկայացրել Դատարան, որը Դատարանը մերժել է:

Հակընդդեմ հայցով հայցվոր Ստեփան Գալստյանի ներկայացուցիչը 05.06.2020 թվականին միջնորդություն է ներկայացրել դատարան «Շին Էքսպերտ» ՍՊԸ-ի դատաշինարարատեխնիկական փորձաքննություն իրականացրած փորձագետին դատական նիստին հրավիրելու և 24.06.2019 թվականի թիվ 18/029Գ փորձագիտական եզրակացության վերաբերյալ բանավոր բացատրություն տալու համար, որը Դատարանը կրկին մերժել է:

Դատարանը, պատճառաբանելով, որ «*«Շին Էքսպերտ» ՍՊԸ-ի 24.06.2019 թվականի թիվ 18/029Գ փորձագիտական եզրակացության համաձայն Արարակ Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող քաղաք Երևան, Արաբկիր, Քեռու փողոց, թիվ 99/3 հասցեում գրավող փաստացի պակաս օգրագործվող հողամասով անցնում են Սրեփան Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող թիվ 99ա բնակելի տան ջրագծը, ինչպես նաև թվով 2 ծխարար, որոնք հնարավոր է տեղափոխել համապատասխան տեխնիկական փաստաթղթերի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նախագծերի առկայության պարագայում», «Փորձագետի եզրակացությամբ արձանագրվել է երկու հասցեների միջև ընկած տարածքում առկա ջրագծի, ծխարարների ասֆիճանավանդակների տեղափոխման հնարավորությունը: Այսինքն արձանագրվելով, որ Երևան քաղաքի Քեռու փողոց թիվ 99ա հասցեում առկա հնարավորությունը ենթակառուցվածքների ձևափոխման այնպես, որպեսզի չխոչընդոտի նույն հասցեի թիվ 99/3 հասցեի անշարժ գույքի անսարգել տիրապետմանը և օգրագործմանը», 14.07.2020 թվականին վճիռ է կայացրել Արտակ Խաչատրյանի հայցը բավարարելու և Ստեփան Գալստյանի հակընդդեմ հայցը մերժելու մասին:*

Վերաքննիչ դատարանը 18.12.2020 թվականի որոշմամբ մերժել է Ստեփան Գալստյանի վերաքննիչ բողոքը և Դատարանի 14.07.2020 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ «*Հակընդդեմ հայցով հայցվոր Սրեփան Գալստյանը, հակընդդեմ հայցի վերջնապահանջի, այն է՝ վիճելի տարածքի մասով հարկադիր սերվիտուտ սահմանելու մասին փոփոխության վերաբերյալ միջնորդություն ներկայացնելով, չի ներկայացրել որևէ փաստական տվյալ, որ առանց հարևան հողամասի նկատմամբ սերվիտուտի սահմանման հնարավոր չի լինի ապահովել իր հողամաս (բակային տարածք) անցնելը, էլեկտրահաղորդման, ջրամատակարարման, հողաբարելավման, վերանորոգման, շինարարական աշխատանքներ կատարելը կամ դրանց ապահովումը կապված է անհամաչափ զգալի ծախսերի հետ», «Հակընդդեմ հայցով հայցվորը, Դատարանի կողմից փորձաքննություն նշանակելու միջնորդությունները մերժելու պարագայում (երկրորդ միջնորդության*

ներկայացման ժամանակ ունեցել է նաև հանրային պաշտպան հանդիսացող ներկայացուցիչ), չի օգրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածով սահմանված կարգով փորձագետի եզրակացություն ներկայացնելու իր իրավունքից և չի հիմնավորել հարկադիր սերվիտուտ սահմանելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանների առկայությունը: Հերևաբար, վերջինս, որպես հարկադիր սերվիտուտի սահմանման պահանջ ներկայացրած անձ, կրում է ՀՀ քաղաքացիական դատարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասով նախարեամբ քաղաքացիական հերևանքները»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների և սույն գործի փաստերի համադրմամբ գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 214-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումից բխում է, որ Դատարանի կողմից հարկադիր գույքային սերվիտուտ սահմանելու նախապայմանները երկուսն են, մասնավորապես՝

1) եթե սերվիտուտ պահանջող անձի կարիքների բավարարումը չի կարող ապահովվել առանց սերվիտուտ սահմանելու,

2) այդ կարիքների ապահովումը կապված է անհամաչափ զգալի ծախսերի հետ:

Սույն գործով Դատարանը դատատեխնիկական փորձաքննություն է նշանակել սերվիտուտի սահմանման պահանջի մասին հակընդդեմ հայցադիմումը վարույթ ընդունած լինելու պայմաններում, և փորձագետին հարցեր են առաջադրվել միայն սկզբնական հայցադիմումի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզման կապակցությամբ: Փորձագետին որևէ հարց չի առաջադրվել այն մասին, թե արդյո՞ք հակընդդեմ հայցվորի կարիքների բավարարումը հնարավոր է ապահովել առանց սերվիտուտ սահմանելու կամ արդյո՞ք այդ կարիքների ապահովումը կապված չէ անհամաչափ զգալի ծախսերի հետ: «Շին Էքսպերտ» ՍՊԸ-ի 24.06.2019 թվականի թիվ 18/029Դ փորձագիտական եզրակացությունը չի պարունակում հակընդդեմ հայցի լուծման համար էական նշանակություն ունեցող վերոնշյալ հարցերի պատասխանները:

Վերը նշված փորձագիտական եզրակացության համաձայն՝ սկզբնական հայցով ակնկալվող պարսպի կառուցման պարագայում հակընդդեմ հայցվորի բնակելի տնից դեպի իրենց բակային հատված դուրս գալու հնարավորություն չի լինի: Նույն եզրակացության համաձայն՝ հակընդդեմ հայցվորի կարիքները բավարարող ենթակառուցվածքները հնարավոր է տեղափոխել միայն համապատասխան տեխնիկական փաստաթղթերի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև նախագծերի առկայության դեպքում:

Դատարանը, մերժելով սերվիտուտի փորձագետ ներգրավելու և դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին հակընդդեմ հայցվորի միջնորդությունները, ի վերջո չի պարզել, թե արդյո՞ք հնարավոր է ձեռք բերել վերոնշյալ տեխնիկական փաստաթղթերը և նախագծերը, ու դրանք ձեռք չբերելու պարագայում ինչպես պետք է ապահովվեն հակընդդեմ հայցվորի կարիքները:

Վերոշարադրյալից բխում է, որ Դատարանը պետք է պարզեր, թե արդյո՞ք հակընդդեմ հայցվորի կարիքների բավարարումը հնարավոր է ապահովել առանց սերվիտուտ սահմանելու կամ արդյո՞ք այդ կարիքների ապահովումը կապված չէ անհամաչափ զգալի ծախսերի հետ: Դատարանը հաշվի չի առել նաև այն փաստը, որ թիվ 18/029Դ փորձագիտական եզրակացության համաձայն՝ սկզբնական հայցվորի կողմից պարիսպ կառուցվելու դեպքում հակընդդեմ հայցվորի

բնակելի տնից դեպի բակային հատված դուրս գալու հնարավորություն չի լինի, և նման պայմաններում Դատարանը, բավարարելով սերկայացված հայցադիմումը և հակընդդեմ հայցվորին պարտավորեցնելով չխոչընդոտել սկզբնական հայցվորին կառուցել պարիսպ, խախտել է հակընդդեմ հայցվորի սեփականության իրավունքը:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն այն մասին, որ փորձաքննություն նշանակելը Դատարանի հայեցողական լիազորությունն է, իսկ հակընդդեմ հայցվորն էլ չի օգտվել արտադատական փորձաքննություն անցկացնելու և դրա արդյունքները Դատարան ներկայացնելու իր իրավունքից՝ անհիմն են, քանի որ դատական հայեցողությունը կոնկրետ իրավական վեճի լուծման գործընթացում օրենսդրությամբ կանխորոշված շրջանակներում դատարանի կողմից որոշակի դատավարական գործողության կատարման կամ այդպիսի գործողության կատարումից ձեռնպահ մնալու հնարավորությունն է, որը սակայն չի կարող մեկնաբանվել որպես անսահմանափակ ազատություն: Ուստի վերոնշյալ փաստերի առկայության պայմաններում թեև փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը բավարարելը հանդիսանում է դատարանի հայեցողական լիազորությունը, այնուամենայնիվ Դատարանն ուներ հնարավորություն կողմերի մրցակցության և իրավահավասարության դատավարական սկզբունքների հաշվառմամբ նշանակելու՝ նոր փորձաքննություն, որի առկայության պարագայում արդեն հնարավոր կլիներ հստակ եզրահանգման գալ հարկադիր սերվիտուտի սահմանման անհրաժեշտության վերաբերյալ՝ հաշվի առնելով երկու սեփականատերերի շահերը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ փորձաքննություն նշանակելու մասին սկզբնական հայցվորի միջնորդությունը բավարարելով, իսկ հակընդդեմ հայցվորի նմանօրինակ երկու միջնորդությունները, ինչպես նաև փորձաքննությունն իրականացրած փորձագետին դատական նիստին հրավիրելու և բացատրություն տալու միջնորդությունը մերժելով՝ Դատարանը վերջինիս դրել է սկզբնական հայցվորի համեմատ անբարենպաստ դատավարական վիճակում:

Վերոշարադրյալի համատեքստում եզրահանգելով, որ հակընդդեմ հայցվորը չի հիմնավորել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 214-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանների առկայությունը, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հակընդդեմ հայցվորը կատարել է անհրաժեշտ դատավարական գործողություններ, այն է՝ ներկայացրել է սերվիտուտի փորձագետ ներգրավելու և դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու, ինչպես նաև փորձագետին դատարան հրավիրելու ու իրականացրած փորձաքննության վերաբերյալ բացատրություն տալու միջնորդություններ, մինչդեռ Դատարանի կողմից վերոնշյալ միջնորդությունները մերժելու և նոր փորձաքննություն չնշանակելու արդյունքում գործը քննվել ու դատական ակտը կայացվել է առանց հակընդդեմ հայցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու: Ավելին՝ պատշաճ գնահատման չի ենթարկվել նաև այն հանգամանքը, որ վեճի նման ձևով լուծման արդյունքում հակընդդեմ հայցվոր Ստեփան Գալստյանը գրկվել է իր բնակելի տնից դեպի իրենց բակային հատված դուրս գալու հնարավորությունից, որպիսի հանգամանքի մասին նշված է գործում առկա «Շին Էքսպերտ» ՍՊԸ-ի 24.06.2019 թվականի թիվ 18/029Դ փորձագիտական եզրակացությունում:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով Դատարանը, մերժելով կողմի փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդությունը, չի ապահովել գործի

փաստական հանգամանքների լրիվ և բազմակողմանի քննություն, որի արդյունքում խախտել է հակընդդեմ հայցվորի արդար դատաքննության ու սեփականության իրավունքները:

*Վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները հերքվում են վերոգրյալ պատճառաբանություններով:*

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի 18.12.2020 թվականի որոշումը բեկանելու և գործն ամբողջ ծավալով Երևանի քաղաքի առաջին առյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան նոր քննության ուղարկելու համար:

Գործի նոր քննության ժամանակ անհրաժեշտ է սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան ձեռք բերել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտող փորձագետի եզրակացություն և դրա տվյալները համադրելով գործում առկա մյուս ապացույցների հետ՝ հանգել համապատասխան եզրահանգումների:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքի բավարարման արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտը ենթակա է բեկանման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պայմաններում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել Երևան քաղաքի



առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիա-  
կան դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝

Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ-2/1156/02/21  
2023թ.  
ԱՐԱԴ-2/1156/02/21  
Լ. Գրիգորյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող և զեկուցող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Է. ՍԵՂՈՒԿՅԱՆ

2023 թվականի մարտի 09-ին  
գրավոր ընթացակարգով քննելով ըստ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ի (այսուհետ՝  
Ընկերություն) հայցի ընդդեմ Արման Սիմոնյանի՝ գումար բռնագանձելու պահան-  
ջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատա-  
րանի 01.07.2022 թվականի որոշման դեմ Արման Սիմոնյանի վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Արման Սիմոնյանից բռնա-  
գանձել 324.000 ՀՀ դրամ, ինչպես նաև այդ գումարի նկատմամբ ՀՀ քաղաքա-  
ցիական օրենսգրքի 411-րդ հոդվածին համապատասխան վճարման ենթակա  
տոկոսները՝ սկսած հայցադիմումը դատարան մուտք լինելու օրվանից մինչև  
պարտավորության կատարման օրը:

Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝  
Դատարան) 11.02.2022 թվականի որոշմամբ հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատա-  
րան) 01.07.2022 թվականի որոշմամբ Արման Սիմոնյանի բերած վերաքննիչ բողո-  
քը մերժվել է, և Դատարանի 11.02.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արման Սիմոնյանը (ներկայա-  
ցուցիչ Գայանե Պապոյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ Մարուսյա Ավետիսյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ, 13-րդ, 93-95-րդ և 99-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես անհիմն է հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանը, անտեսելով, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «(...) կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համարեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին» դրույթը ՀՀ սահմանադրական դատարանի 02.02.2021 թվականի թիվ ՍԴՈ-1574 որոշմամբ ճանաչվել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերին ու 75-րդ հոդվածին հակասող, հիմնվել է այդ իրավական նորմի վրա: Ավելին՝ ինքը համատեղ չի էլ բնակվել իր հաշվառման հասցեում բնակվող այն անձանց հետ, ովքեր ենթադրաբար ստացել են ծանուցագիրը, քանի որ 2019 թվականից սկսած մշտապես բնակվում է Հայաստանից դուրս՝ Բելգիայում, ինչի վերաբերյալ Դատարանին ներկայացվել են ապացույցներ՝ անձնագրի պատճենը և ԱԱԾ-ի գրությունը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն գործում առկա հետադարձ ծանուցումը չի պարունակում այն անձի մասին տեղեկություններ, ում հանձնվել է իրեն հասցեագրված՝ հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշումը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ ինքը երբևէ չի ծանուցվել, Դատարանից երբևէ չի ստացել հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշում, դրանց մասին չի իրազեկվել նաև հրապարակային ծանուցումների միջոցով և օբյեկտիվորեն չէր էլ կարող, քանի որ, ինչպես արդեն նշել է վերը, դեռևս 2019 թվականից հեռացել է Հայաստանից և մինչ օրս բնակվում է արտերկրում: Դրա հետևանքով ինքը գրկվել է իր դիրքորոշումն արտահայտելու հնարավորությունից, որն ազդել է գործի ելքի վրա, քանի որ հայցը բավարարվել է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.07.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ վերաքննիչ բողոքը բավարարել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1 Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները**

Պատշաճ ծանուցման եղանակներից է դատական ծանուցագիրը հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին հանձնելը:

Տվյալ դեպքում այն հանգամանքը, որ պատասխանողը երկրում չի եղել, չի գրկել վերջինիս գործի քննության մասին ծանուցվելու հնարավորությունից, քանի որ Դատարանը բոլոր դատավարական փաստաթղթերը՝ հայցադիմումը վարույթ

ընդունելու և գործը պարզեցած վարույթի կարգով քննելու վերաբերյալ որոշումն ու վճիռն ուղարկել է նույն հասցեով, այն է՝ պատասխանողի հաշվառման վայրի հասցեով, որոնք ստանալու վերաբերյալ գործում առկա են հավաստագրեր, ինչը ենթադրում է, որ եթե ոչ անձամբ, ապա հաշվառման վայրում բնակվող այլ չափահաս անձի միջոցով պատասխանողն ստացել է առաջին որոշումը, սակայն որևէ քայլ չի ձեռնարկել գործի քննությունն ընդհանուր հայցային վարույթի կարգով իրականացնելու համար:

Ըստ պատասխանողի՝ վճռի առկայության մասին իրազեկվել է իր հարազատներից, ինչը ենթադրում է, որ պատասխանողի հաշվառման վայրի հասցեով ուղարկված ծանուցումներն ստացվել են պատասխանողի հաշվառման վայրում բնակվող չափահաս անձանց կողմից և պատասխանողը չի հերքում, որ գործի քննության մասին իրեն տեղեկացրել են հարազատները:

Գործով պատասխանողին ուղարկվել է ծանուցում առ այն, որ ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական հատուցումը նվազեցնելու վերաբերյալ որոշում է կայացվել և վերջինս պարտավորվել է հատուցման դիմումով սահմանված կարգով վերադարձնել Ընկերության կողմից հատուցման դիմումի շրջանակներում վճարված գումարները, սակայն ապարդյուն, ինչի արդյունքում գումարի բռնագանձման պահանջ է ներկայացվել ընդդեմ պատասխանողի:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Ընկերությունն ընդդեմ Արման Սիմոնյանի՝ 324.000 ՀՀ դրամ գումարի և այդ գումարին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների բռնագանձման պահանջով հայցադիմում է ներկայացրել Դատարան: Հայցադիմումում, ի թիվս այլնի, որպես պատասխանող Արման Սիմոնյանի հաշվառման հասցե նշվել է ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Թալին, Տերյան փողոց, շենք 24, բնակարան 5 (**հատոր 1-ին, գ.թ. 3-8**).

2) Դատարանի 17.11.2021 թվականի «Հայցադիմումը վարույթ ընդունելու, հայցի ապահովման վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու և գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին» որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, նաև որոշվել է գործը քննել պարզեցված վարույթի կարգով և դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով հրապարակել 11.02.2021 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 2**).

3) վերը նշված որոշումը համապատասխան գրությամբ, որով պատասխանող Արման Սիմոնյանին գրավոր պարզաբանվել է Դատարանի որոշումն ստանալուց հետո կատարման ենթակա գործողությունների, դրանց կատարման ժամկետների և չկատարելու հետևանքների մասին, Արման Սիմոնյանին պատվիրված նամակով ուղարկելու նպատակով 17.12.2021 թվականին հանձնվել է փոստային ծառայությանը: Վերջինիս հասցեագրված առաքանին ստացված լինելու վերաբերյալ հետադարձ ծանուցման վրա առկա է ստացման ամսաթիվ՝ «21.12.21» և ստորագրություն (**հատոր 1-ին, գ.թ. 46-48**).

4) Դատարանի վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով հրապարակվել է 11.02.2022 թվականին (հիմք՝ «[www.court.am](http://www.court.am)» կայքը).

5) Դատարանի վճիռը պատասխանող Արման Սիմոնյանին հայցադիմումում նշված հասցեով պատվիրված նամակով ուղարկելու նպատակով 12.02.2022 թվականին հանձնվել է փոստային ծառայությանը: Վերջինիս հասցեագրված

առաքանին ստացված լինելու վերաբերյալ հետադարձ ծանուցման վրա առկա է ստացման ամսաթիվ՝ «16.02.22» և ստորագրություն (**հաստոր 1-ին, գ.թ. 54, 56, 58**).

6) Դատարանի 11.02.2022 թվականի վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքին կից Արման Սիմոնյանը ներկայացրել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության 11.03.2022 թվականի թիվ 2/6/3-181 գրությունը, որի համաձայն՝ 01.05.2019 թվականից մինչև 11.03.2022 թվականն ընկած ժամանակահատվածում սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում առկա տվյալների համաձայն՝ Արման Վաղինակի Սիմոնյանը ՀՀ պետական սահմանը հատել է հետևյալ օրերին՝ էլք՝ 28.05.2019 թվականին, մուտք՝ 28.05.2019 թվականին, էլք՝ 04.06.2019 թվականին, մուտք՝ 04.06.2019 թվականին, **էլք՝ 15.07.2019 թվականին. մուտքի վերաբերյալ նշում առկա չէ (հաստոր 2-րդ, գ.թ. 33)**:

#### **4. Վճռաբեկ դատարանի պայրճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, քանի որ դատական ակտ կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տրվել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ, 13-րդ, 93-95-րդ և 99-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «Ֆիզիկական անձի դեպքում դատական ծանուցագիրը պետք է հանձնվի (...) հասցեարհրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համարեղ քնակվող (...) չափահաս անձին» եզրույթի լույսի ներքո հարկ է համարում անդրադառնալ դատավարական փաստաթղթերը դատավարության մասնակիցներին պարզաձև ուղարկելու (հանձնելու) կանոններին:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև գործին մասնակցող բոլոր անձանց հավասարության սկզբունքի հիման վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանն ապահովում է, որ գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձինք ունենան յուրաքանչյուր

հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու հավասար հնարավորություն, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործին մասնակցող անձանց մրցակցության հիման վրա, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծանուցագիրը դատավարության մասնակիցներին ուղարկելու (հանձնելու) մասին սույն [9-րդ գլուխ] գլխի կանոնները կիրառելի են դատավարական փաստաթղթերը դատավարության մասնակիցներին ուղարկելու (հանձնելու) նկատմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարության մասնակիցները, բացառությամբ գործին մասնակցող անձանց ներկայացուցիչների, նույն օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում են դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծանուցագիրն ուղարկվում է դատավարության մասնակցի նշած հասցեով (ծանուցման հասցե):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձի դեպքում դատական ծանուցագիրը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձը գործի քննությանը մասնակցում է որպես հակադիր շահեր ունեցող կողմ (ՀՀ սահմանադրական դատարանի 02.02.2021 թվականի թիվ ՄՊՈ-1574 որոշմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված՝ «(...) կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին» դրույթը, ճանաչվել է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 75-րդ հոդվածին հակասող):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հետադարձ ծանուցումը պետք է տեղեկություններ պարունակի այն անձի վերաբերյալ, որին ծանուցագիրը հանձնվել է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր նախադեպային իրավունքում, մասնավորապես՝ Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի գործով, արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (տե՛ս, Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը, կետ 38): Քաղաքացիական դատավարությունը կողմերի հավասարության հիման վրա իրականացնելու սկզբունքի էությունն այն է, որ դատավարության բոլոր փուլերում կողմերն օժտված են իրենց իրավունքների և օրինական շահերի

պաշտպանության միջոցներ օգտագործելու հավասար հնարավորություններով: Հավասարության սկզբունքը՝ կողմերի միջև արդարացի հավասարակշռության իմաստով, հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցելու իրավական խնդրին՝ նշելով, որ անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գործին մասնակցող անձին (անձանց) դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը (*յրեն Վերգուշ Վարդանյանն ընդդեմ Եղիշ Թորոսյանի և մյուսների թիվ 3-19(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.02.2008 թվականի որոշումը*):

Դատական նիստի ժամանակի և վայրի մասին գործին մասնակցող անձանց տեղեկանալու իրավունքը և դատարանի՝ նրանց տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են Սահմանադրությամբ երաշխավորված օրենքի առջև բոլորի հավասարության համընդհանուր սկզբունքի և դրանից բխող ու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների հետ: Մրցակցային դատավարության սկզբունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր կողմ պետք է ունենա գործում եղած կամ լրացուցիչ ներկայացված ապացույցների մասին տեղեկանալու և դրանց մասին մեկնաբանություններ ներկայացնելու հնարավորություն:

Նշված սկզբունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանցից յուրաքանչյուրին ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն, քանի որ այդպիսի հնարավորությունն է կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայմանը:

Միևնույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ գործին մասնակցող անձանց պատշաճ ծանուցումը՝ վերջիններիս նյութական իրավունքների իրացման կարևոր նախապայման է (*յրեն «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերությունն ընդդեմ Վահե և Ռոսարոն Բարսեղյանների թիվ ԼԴ/0221/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ գործով կայացված որոշմամբ ընդգծել է, որ ցանկացած դեպքում դատարանը պետք է կատարի դատավարության մասնակիցներին դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելուն ուղղված ակտիվ գործողություններ և պետք է ձեռնարկի օրենսդրությամբ նախատեսված՝ կոնկրետ իրավիճակում հնարավոր բոլոր ծանուցման միջոցները և եղանակները: (...) անկախ ծանուցման ընտրված եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել դատավարության համապատասխան մասնակիցների՝ դատական նիստի մասին պատշաճ տեղեկացված լինելու փաստը (*յրեն, Խաչիկ Պողոսյանն ընդդեմ Ժենյա և Հարություն Պողոսյանների թիվ ԵԿԴ/2767/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վերահաստատելով դատական ծանուցումների դատավարական ինստիտուտի վերաբերյալ նախկինում արտահայտած վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ դրանք կիրառելի են նաև 09.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումների նկատմամբ (*յրեն «ԱՇՏԱ-ԲԱԿ-ԿԱԹ» ՓԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանն ընդդեմ*

Ա/2 Աննա Սարգսյանի թիվ ԵԴ/4928/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.09.2022 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև դատավարական փաստաթղթերը դատավարության մասնակիցներին ուղարկելու (հանձնելու) սկստմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանները պարզեցված վարույթն իրականացնում են նույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն [41-րդ գլուխ] գլխի դրույթներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջներն առաջին ատյանի դատարանը քննում է պարզեցված վարույթի կարգով: (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 298-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հարցը լուծում է հայցադիմումը վարույթ ընդունելու որոշմամբ, իսկ նույն օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում պարզեցված վարույթ կիրառում է մինչև նախնական դատական նիստի ավարտն առանձին ակտի ձևով կայացված որոշմամբ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման մեջ նշվում է եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը ենթակա է հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման հետ մեկտեղ գործին մասնակցող անձին ուղարկվում է գրավոր պարզաբանում՝ դատարանի որոշումը ստանալուց հետո կատարման ենթակա գործողությունների, դրանց կատարման ժամկետների և չկատարելու հետևանքների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց միջնորդությունները, ինչպես նաև նրանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները կարող են ներկայացվել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարզեցված վարույթի շրջանակներում հակընդդեմ հայց կարող է ներկայացվել պարզեցված վարույթ կիրառելու մասին դատարանի որոշումն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործի քննությունը պարզեցված վարույթի կարգով իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործին մասնակցող անձանցից ստանալ պարզաբանումներ գործի լուծման համար նշանակություն



ունեցող վկայակոչված հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ:

Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործի քննությունը պարզեցված վարույթի կարգով իրականացվում է առանց դատական նիստ հրավիրելու, բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե նույն օրենսգրքի 297-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հանգամանքներն ի հայտ են եկել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը կայացնելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև եզրափակիչ դատական ակտ հրապարակելը, դատարանը որոշում է կայացնում գործն ընդհանուր հայցային վարույթի կարգով քննելու մասին և նույն օրենսգրքի 166-րդ հոդվածով սահմանված կարգով հրավիրում է նախնական դատական նիստ:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է նաև, որ դատարանները, նույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ գլխի դրույթներով սահմանված հատուկ կանոնների պահպանմամբ, պարզեցված վարույթ իրականացնում են, եթե ներկայացվել է նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի բռնագանձման վերաբերյալ պահանջ: Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու հարցն առաջին ատյանի դատարանը լուծում է հայցադիմումը վարույթ ընդունելու որոշմամբ, որում նշվում է եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը: Նշված որոշումը ենթակա է հրապարակման դատական իշխանության պաշտոնական կայքում, և այդ որոշումն ուղարկվում է գործին մասնակցող անձանց: Միաժամանակ գործին մասնակցող անձին ուղարկվում է նաև գրավոր պարզաբանում՝ դատարանի որոշումն ստանալուց հետո կատարման ենթակա գործողությունների, դրանց կատարման ժամկետների և չկատարելու հետևանքների մասին:

Կողմերի մրցակցության և հավասարության սկզբունքների իրականացման դրսևորում է գնահատվում նաև, երբ գործին մասնակցող անձինք հնարավորություն ունեն վերը նշված վարույթի շրջանակներում ներկայացնելու իրենց միջնորդությունները, պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները, ինչպես նաև՝ հակընդդեմ հայց:

### ***Վճուրակ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունն ընդդեմ Արման Միմոնյանի՝ 324.000 ՀՀ դրամի և այդ գումարին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների բռնագանձման պահանջով Դատարան ներկայացրած հայցադիմումում, ի թիվս այլնի, որպես պատասխանող Արման Միմոնյանի հաշվառման հասցե նշել է ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Թալին, Տերյան փողոց, շենք 24, բնակարան 5-ը: Դատարանը, 17.11.2021 թվականին որոշում կայացնելով նաև գործով ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու, գործը պարզեցված վարույթի կարգով քննելու և դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով 11.02.2022 թվականին հրապարակելու մասին, այն Դատարանի աշխատակազմի միջոցով համապատասխան գրությամբ, որով պատասխանող Արման Միմոնյանին գրավոր պարզաբանվել է Դատարանի որոշումն ստանալուց հետո կատարման ենթակա գործողությունների, դրանց կատարման ժամկետների և չկատարելու հետևանքների մասին,

պատվիրված նամակով պատասխանող Արման Սիմոնյանին հայցադիմումում նշված հասցեով ուղարկելու նպատակով 17.12.2021 թվականին հանձնել է փոստային ծառայությանը: Վերջինիս հասցեագրված առաքանին ստացված լինելու վերաբերյալ հետադարձ ծանուցման վրա առկա է ստացման ամսաթիվ՝ «21.12.21» և ստորագրություն:

Դատարանի վճիռը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով հրապարկվել է 11.02.2022 թվականին:

Վճիռը պատասխանող Արման Սիմոնյանին պատվիրված նամակով ուղարկելու նպատակով 12.02.2022 թվականին հանձնվել է փոստային ծառայությանը: Վերջինիս հասցեագրված առաքանին ստացված լինելու վերաբերյալ հետադարձ ծանուցման վրա առկա է ստացման ամսաթիվ՝ «16.02.2022» և ստորագրություն:

Վերը նշված վճռի դեմ Արման Սիմոնյանը ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ դրան կցելով ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից 11.03.2022 թվականին տրված թիվ 2/6/3-181 գրությունն այն մասին, որ 01.05.2019 թվականից մինչև 11.03.2022 թվականն ընկած ժամանակահատվածում սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում առկա տվյալների համաձայն՝ Արման Վաղինակի Սիմոնյանը ՀՀ պետական սահմանը հատել է հետևյալ օրերին՝ էլք՝ 28.05.2019 թվականին, մուտք՝ 28.05.2019 թվականին, էլք՝ 04.06.2019 թվականին, մուտք՝ 04.06.2019 թվականին, էլք՝ 15.07.2019 թվականին. մուտքի վերաբերյալ նշում առկա չէ:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «Սույն գործի փաստերից հետևում է, որ Դատարանը գործը քննել է պարզեցված վարույթի կարգով՝ պահպանելով Պարասիսանտոյի ծանուցելու կանոնները և ներկայացված հայցի կապակցությամբ դիրքորոշում հայտնելու նրա իրավունքը, մասնավորապես, Դատարանի 17.11.2021 թվականի որոշումը, հայցադիմումը, որոշումը սրանապուց հետո կարարման ենթակա գործողությունների, դրանց կարարման ժամկետների և չկարարելու հետևանքների մասին պարզաբանումը ուղարկվել են Պարասիսանտոյին՝ Արագածուրի մարզ, ք. Թային, Տերյան փողոց, 24 շենք, 5-րդ բնակարան հասցեով և սրացվել են այդ հասցեում, ինչը հավասարվում է հետադարձ ծանուցման հավասարագրի վրա կարարված ամսաթվի (21.10.2021 թվական) գրառմանը և ստորագրությամբ», եկել է այն եզրահանգման, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի ուժով գործին մասնակցող անձը համարվում է պարզաձև ծանուցված նաև այն դեպքում, երբ ծանուցագիրը հանձնվում է դրա հասցեարկորջ ծանուցման (հաշվատման) հասցեում նրա հետ համարեղ բնակվող չափահաս անձանց: Տվյալ դեպքում հիմնավորվել է այն հանգամանքը, որ Դատարանի 17.11.2021 թվականի որոշումը, հայցադիմումը, որոշումը սրանապուց հետո կարարման ենթակա գործողությունների, դրանց կարարման ժամկետների և չկարարելու հետևանքների մասին պարզաբանումն ուղարկվել են Պարասիսանտոյի հաշվատման վայրի հասցեով և սրացվել են չեն վերադարձվել/ իսկ բողոք բերած անձը չի ժխտել, որ առաքանին սրացողը Պարասիսանտոյի հետ համարեղ բնակվող չափահաս անձ չէ և հաշվի առնելով նաև այն փաստը, որ վճիռը Դատարանի կողմից ուղարկվել է Պարասիսանտոյին նույն վերը նշված հասցեով և սրացվել է 16.02.2022թ. /գ.թ. 54, 58/, որից հետո Պարասիսանտոյը 01.03.2022թ. լիազորել է իր ներկայացուցչին վերաքննիչ բողոք ներկայացնել վճռի դեմ և օրենքով սահմանված ժամկետում վերջինս ներկայացրել է վերաքննիչ բողոք, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ օրենքով սահմանված կարգով իրականացված Դատարանի գործողություններով Պարասիսանտոյը փաստացի իրազեկված է եղել սույն գործի վարույթի մասին և նրա դատավարական

իրավունքները Դատարանի կողմից չեն խախտվել, քանի որ նույնիսկ արտերկրում գտնվելով՝ վերջինս զրկված չի եղել իր իրավունքները Դատարանում պատշաճ ներկայացնելու հնարավորությունից»։ Արդյունքում Վերաքննիչ դատարանը 01.07.2022 թվականին որոշում է կայացրել Արման Միմոնյանի վերաքննիչ բողոքը մերժելու մասին։

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Անդրադառնալով սույն որոշմամբ առաջադրված այն հարցին, թե արդյոք գործով պատասխանողը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի ուժով համարվում է պատշաճ ծանուցված և, ի նկատի ունենալով, որ ՀՀ քաղաքացիական դատավարությունը չի սահմանում, թե ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ինչ պետք է հասկանալ «համատեղ բնակվել» ասելով, ուստի Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նախևառաջ բացահայտել նշված եզրույթի բովանդակությունը, որից հետո նոր միայն հնարավոր կլինի անդրադառնալ գործով պատասխանողի պատշաճ ծանուցման հարցին։

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած օրենսդրի՝ նշված իրավանորմով սահմանված եղանակով դատական նիստի ժամանակի և վայրի մասին դատավարության մասնակցին ծանուցելու ընթացակարգը, ըստ էության, կոչված է երաշխավորելու դատավարության մասնակցին՝ իր վերաբերյալ քննվող գործի ընթացքի վերաբերյալ դատարանի կողմից հնարավոր բոլոր միջոցներով իրազեկելու իրավաչափ նպատակ, այնուամենայնիվ, մինչև սույն կարգով ծանուցումն ու դատավարական փաստաթղթերը դատավարության մասնակցի ծանուցման (հաշվառման) հասցեով ուղարկված լինելու դեպքում այն ծանուցագրի հասցեատիրոջ կողմից վերջինիս հետ տվյալ հասցեում համատեղ բնակվող անձի միջոցով ստացված լինելու և, ըստ այդմ, գործի վերաբերյալ իրազեկված լինելու փաստն արձանագրելը, նախևառաջ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք դատավարության մասնակցի ծանուցման (հաշվառման) հասցեում բնակվող անձի կողմից դատավարության մասնակցին հասցեագրված դատական ծանուցագրերն ու փաստաթղթերը ստանալը դեռևս բավարար չէ արձանագրելու տվյալ հասցեի փաստացի բնակչի և տևական ժամանակահատվածով ՀՀ-ից բացակայող գործով պատասխանողի համատեղ բնակվելու փաստը, քանի որ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող անձի կողմից դատական ծանուցագրերը ստանալու դեպքում է միայն հնարավոր ապացուցված համարել ծանուցման հասցեատիրոջ՝ գործի վերաբերյալ պատշաճ ծանուցված լինելը։

Այսպես, Ըստ Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի՝ «համատեղ» նշանակում է «միևնույն տեղում, իրար հետ, միասին»։

Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում «համատեղ» բառի իմաստային բացատրությունը տրվում է որպես «միասին, միատեղ (միևնույն տեղում, իրար հետ)»։

Ըստ Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի Ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի՝ «համատեղ» նշանակում է «միասին կատարվող, միատեղ»։

Այս առումով հատկանշական է նաև ՀՀ սահմանադրական դատարանի 02.02.2021 թվականի թիվ ՄԴՌ-1574 որոշումը, որով վերջինս անդրադարձել է

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված «(...) կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին» դրույթի՝ ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցին՝ ըստ այդմ նշված դրույթը ճանաչելով Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 75-րդ հոդվածին հակասող՝ հետևյալ արձանագրմամբ. «(...) օրենսդիրը չի մանրամասնել, թե ինչ պետք է հասկանալ համատեղ բնակության ներքո՝ վերջինս որոշելու հիմքում դրվող հայտանիշի/չափանիշի առումով որոշակի ժամանակահատվածը, համապատասխան սուբյեկտների շրջանակը, համատեղ տնտեսություն վարելը, տվյալ հասցեում հաշվառված լինելը և այլն: Այդ առումով, համատեղ բնակությունը որոշելու հիմքում դրվող հայտանիշը սահմանված է, օրինակ, «Հանրային ծառայության մասին» օրենքով՝ կապված հայտարարագրման պարտականության հետ (հոդված 34, մաս 10): Ըստ այդմ, «Սույն օրենքի իմաստով՝ համատեղ բնակվող է համարվում պաշտոնն ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում 183 և ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձը»: Այսինքն՝ տվյալ դեպքում շեշտադրումը կատարված է որոշակի ժամանակահատվածի վրա: (...):»

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ «համատեղ բնակվել» եզրույթի օգտագործումն ինքնանպատակ չէ և նշված եզրույթի ներքո պետք է հասկանալ որոշակի ժամանակահատվածում անձի համատեղ բնակվելը: Այլ կերպ ասած՝ տեղական ժամանակահատվածով երկրից դուրս բնակություն հաստատող անձը չի կարող համարվել իրենից հեռավորության վրա գտնվող անձի հետ համատեղ բնակվող:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների բովանդակությունից բխում է, որ վերաքննիչ բողոքը մերժելու հիմք, ըստ էության, հանդիսացել են ստորև նշված երկու հանգամանքները՝

1. գործում առկա է եղել Դատարանի 17.11.2021 թվականի որոշումը, հայցադիմումը, որոշումն ստանալուց հետո կատարման ենթակա գործողությունների, դրանց կատարման ժամկետների և չկատարելու հետևանքների մասին պարզաբանումը պատասխանող Արման Սիմոնյանին Արագածոտնի մարզի Թալին քաղաքի Տեղյան փողոցի թիվ 24 շենքի 5-րդ բնակարան հասցեով ուղարկված և այն այդ հասցեում ստորագրությամբ ստացված լինելու վերաբերյալ հետադարձ ծանուցման հավաստագիրը, ու բողոք բերած անձը չի ժխտել, որ առաքանին ստացողն իր հետ համատեղ բնակվող չափահաս անձ չէ.

2. Դատարանի վճիռը պատասխանողին ուղարկվել է վերը նշված հասցեով և ստացվել է 16.02.2022 թվականին, որից հետո պատասխանողը 01.03.2022 թվականին իր ներկայացուցչին լիազորել է վերաքննիչ բողոք ներկայացնել Դատարանի վճիռի դեմ, որն օրենքով սահմանված ժամկետում ներկայացվել է, ուստի պատասխանողը փաստացի իրագեկված է եղել սույն գործի վարույթի մասին և նրա դատավարական իրավունքները Դատարանի կողմից չեն խախտվել:

Առաջին հանգամանքի մասով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ համապատասխան դատավարական փաստաթղթերը վերը նշված հասցեով ուղարկված լինելը դեռևս բավարար չէ արձանագրելու համար, որ դրանք պատասխանող Արման Սիմոնյանին ուղարկվել են (հանձնվել են) պատշաճ ձևով, քանի որ հետադարձ ծանուցումը տեղեկություններ չի պարունակում այն անձի վերաբերյալ, որին ծանուցագիրը հանձնվել է ստորագրությամբ:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ խախտվել է բողոքաբերի արդար դատաքննության իրավունքը և վերջինս զրկվել է ողջամիտ հնարավորությունից՝ մրցակցության և հավասարության

սկզբունքների հիման վրա ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ կատարելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ գլխով նախատեսված վերը նշված դատավարական գործողությունները, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չէին դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Ավելին՝ Վերաքննիչ դատարանը, իր պատճառաբանության հիմքում դնելով այն, որ բողոք բերած անձը չի ժխտել, որ առաքանին ստացողն իր հետ համատեղ բնակվող չափահաս անձ չէ, ըստ էության, կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասը, որի «(...) կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին» դրույթը ՀՀ սահմանադրական դատարանի 02.02.2021 թվականի թիվ ՍԴՌ-1574 որոշմամբ ճանաչվել է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին ու 75-րդ հոդվածին հակասող առանց որևէ նախապայմանի:

Ինչ վերաբերվում է վերը նշված երկրորդ հանգամանքին, ապա այդ մասով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի վճռի դեմ սահմանված ժամկետում Արման Սիմոնյանի ներկայացուցչի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելը չի կարող բավարար հիմք հանդիսանալ եզրահանգում անելու համար այն մասին, որ նրա դատավարական իրավունքները Դատարանի կողմից չեն խախտվել:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ, 13-րդ, 93-95-րդ և 99-րդ հոդվածների այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը:

*Վճռաբեկ բողոքի պարասիսանի հիմնավորումները հերքվում են սույն որոշմամբ նշված պարճառաբանություններով:*

### **5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատարանի ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն գլխի [10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.07.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Մասնկության գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
դատավորներ՝

ԵԴ/0079/04/18  
Ն. Բարսեղյան  
Ա. Խառատյան  
Ս. Թորոսյան

Մասնկության գործ թիվ **ԵԴ/0079/04/18**  
**2022թ.**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- |                             |               |
|-----------------------------|---------------|
| <i>Նախագահող և զեկուցող</i> | Մ. ԴԻՄԵՅԱՆ    |
|                             | Ս. ԱՆՏՈՆՅԱՆ   |
|                             | Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  |
|                             | Գ. ՀԱԿՈԲՅԱՆ   |
|                             | Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ |
|                             | Ա. ՄԿՐՏՉՅԱՆ   |
|                             | Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  |
|                             | Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ  |

2022 թվականի նոյեմբերի 25-ին գրավոր ընթացակարգով քննելով Շամամ Ղազարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ դիմումի Շամամ Ղազարյանի ընդդեմ Արմեն Հարությունյանի՝ պարտապահին սնանկ ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապարմությունը**

Դիմելով դատարան՝ Շամամ Ղազարյանը պահանջել է Արմեն Հարությունյանին ճանաչել սնանկ:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Ա. Չիչոյան) (այսուհետ՝ Դատարան) 31.07.2019 թվականի վճռով գործի վարույթը կարճվել է: Շամամ Ղազարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձվել է 100.000 ՀՀ դրամ՝ որպես հետաձգված պետական տուրքի գումար:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.12.2019 թվականի որոշմամբ Շամամ Ղազարյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 31.07.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Շամամ Ղազարյանը (ներկայացուցիչ՝ Մերի Խաչատրյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Արմեն Հարությունյանը (ներկայացուցիչ՝ Լիլիթ Մակինյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չէ, որ հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ դիմումատուն դիմում ներկայացնելիս կարող էր տեղեկություն ունենալ Արմեն Հարությունյանի մեկ այլ սնանկության գործի առկայության մասին, հիմնավոր չէ, քանի որ թիվ ԵԱԴԴ/0105/04/17 սնանկության գործով որոշակի տվյալներ թեև լրացված են [www.datalex.am](http://www.datalex.am) տեղեկատվական համակարգում, սակայն նույն այդ էջում լրացված չէ որևէ անհատականացնող տվյալ, որով հնարավոր կլիներ նույնականացնել երկու սնանկության գործով պարտապաններին /տվյալները փակ են/:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ տվյալ դեպքում պետական տուրքի վճարման պարտականությունը դիմումատուի վրա դնելով խաթարվում է արդար դատաքննության իրավունքը, քանի որ դիմումատուն դատարան չէր դիմի, եթե պարտապանի ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման արդյունքում նման անհրաժեշտություն չծագեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 03.12.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ պետական տուրքի գումարը՝ 100.000 ՀՀ դրամը բռնագանձել Արմեն Հարությունյանից կամ պետական տուրքի հարցը համարել լուծված:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Վճռաբեկ բողոքն անհիմն է և ելթակա է մերժման, քանի որ սույն գործով Դատարանը, կարճելով սույն սնանկության գործի վարույթը պարտապան Արմեն Հարությունյանի մեկ այլ սնանկության գործով սնանկ ճանաչված լինելու հիմքով, և նկատի ունենալով, որ թիվ ԵԱԴԴ/0105/04/17 սնանկության գործով դիմումն ավելի վաղ է ներկայացվել, որպիսի հանգամանքը չէր կարող հանդիսանալ պարտապանի մեղքի արդյունք, իրավաչափորեն գտել է, որ Դատարանի 15.02.2018 թվականի որոշմամբ հետաձգված պետական տուրքի գումարը պետք է բռնագանձել դիմումատու Շամամ Ղազարյանից, ըստ այդմ, վճռելով Շամամ Ղազարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես հետաձգված պետական տուրքի գումար:

Ըստ բողոքաբերի՝ Դատարանը սխալ է մեկնաբանել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածը: Այնինչ, նշված հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը



գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, այսինքն՝ վճարում է այն կողմը, ում պահանջները չեն բավարարվել: Հետևաբար, նկատի ունենալով, որ սույն գործով դիմումատու Շամամ Ղազարյանի դատարան ներկայացված պահանջը՝ Արմեն Հարությունյանին սնանկ ճանաչելու մասին, չի բավարարվել, դատական ծախսերի վճարման պարտականությունը պետք է կրի դիմումատուն:

### **3. Վճուրբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճուրբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Դատարան ներկայացված դիմումով Շամամ Ղազարյանը խնդրել է պարտապան Արմեն Հարությունյանին ճանաչել սնանկ, միաժամանակ միջնորդել է պետական տուրքի հարցին անդադարձաբար վճողով և այն բռնագանձել պարտապանից (**հատոր 1-ին, գ.թ. 3-5**).

2) Դատարանի «Դիմումը վարույթ ընդունելու, սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակելու և պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին» 15.02.2018 թվականի որոշմամբ Շամամ Ղազարյանի դիմումն ընդդեմ Արմեն Հարությունյանի՝ վերջինիս սնանկ ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ, իսկ պետական տուրքի վճարումը հետաձգվել է և որոշվել է այդ հարցը լուծել վճողով (**հատոր 1-ին, գ.թ. 1**).

3) Դատարանի «Դիմումը վարույթ ընդունելու մասին» 14.06.2017 թվականի որոշմամբ Վարդուհի Գրիգորյանի դիմումն ընդդեմ Արմեն Հարությունյանի՝ վերջինիս սնանկ ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ (**հատոր 1-ին, գ.թ. 31**).

4) Թիվ ԵԱԴԴ/0105/04/17 սնանկության գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 22.11.2018 թվականի վճողով Վարդուհի Գրիգորյանի դիմումն ընդդեմ Արմեն Հարությունյանի՝ սնանկ ճանաչելու պահանջի մասին, բավարարվել է. Արմեն Հարությունյանը ճանաչվել է սնանկ: Վճիռը ստացել է օրինական ուժ (**հատոր 1-ին, գ.թ. 126-128**).

5) Դատարանի 31.07.2019 թվականի վճողով գործի վարույթը կարճվել է: Շամամ Ղազարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձվել է 100.000 ՀՀ դրամ՝ որպես հետաձգված պետական տուրքի գումար (**հատոր 1-ին, գ.թ. 134-135**):

### **4. Վճուրբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումները**

Վճուրբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճուրբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճուրբեկ դատարանը հարկ է համարում անդադարձաբար հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պետական տուրք գանձվում է դիմումատուից այն դեպքում, երբ սնանկության գործի վարույթը*

*կարճվել է դիմումնադրուից անկախ՝ պարտապանի մեկ այլ սնանկության գործով սնանկ ճանաչվելու հետևանքով:*

Իրավահարաբերության ծագման պահին գործող՝ 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրք) 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Նախկին օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) եթե պարտապանի նկատմամբ սնանկության գործ կա դատարանում, ապա նոր դիմողի ներկայացրած սնանկության դիմումը քննվում է որպես առանձին վարույթ և ենթակա է կարճման, եթե նախորդ վարույթի գործով պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ է օրինական ուժի մեջ մտնում:

Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե դիմումը դատարան ներկայացնելուց հետո պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետևանքով պարտապանը դադարում է անվճարունակ լինելուց կամ նույն օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանված հիմքերը վերանում են, ապա դիմումը մերժելու մասին վճռով դատարանը պարտավորեցնում է պարտապանին փոխհատուցել դատական ծախսերը և վճարել ժամանակավոր կառավարչի վարձատրությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Օրենքով կարգավորված չի եղել այն հարցը, թե ում վրա պետք է դրվի դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի փոխհատուցման պարտականությունը՝ նույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքով՝ սնանկության գործի վարույթը կարճվելու դեպքում:

Անդրադառնալով ներկայումս գործող իրավակարգավորումներին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկության վտանգի դիմումը բավարարելու մասին վճիռ կայացնելու դեպքում նույն պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով այլ դիմումներով դատարանի վարույթում առկա գործերի վարույթը կարճվում է վճռի բողոքարկման ժամկետը լրանալուց, իսկ վճռի բողոքարկված լինելու դեպքում՝ օրինական ուժի մեջ մնալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սնանկության դիմումը մերժվելու կամ գործի վարույթը կարճվելու դեպքերում դատական ծախսերի և ժամանակավոր կառավարչի (կառավարչի) վարձատրության փոխհատուցման պարտականությունը դրվում է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած անձի վրա, բացառությամբ նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատական ծախսերի և ժամանակավոր կառավարչի (կառավարչի) վարձատրության փոխհատուցումը կատարվում է պարտապանի հաշվին, եթե՝ 1) սնանկության գործի վարույթը կարճվել է

պարտապանին այլ սնանկության գործով սնանկ ճանաչելու հիմքով. 2) սնանկության մասին դիմում ներկայացվելուց հետո պարտքի լրիվ կամ մասնակի մարման հետևանքով պարտապանը դադարել է անվճարունակ լինելուց, կամ նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերը վերացել են, և դիմողը հետ է վերցրել սնանկության մասին դիմումը. 3) դա նախատեսված է դատարանի կողմից հաստատված հաշտության համաձայնությամբ:

Վերոգրյալից բխում է, որ օրենսդիրը կարգավորել է սնանկության դիմումը մերժվելու կամ գործի վարույթը կարճվելու դեպքերում դատական ծախսերի փոխհատուցման հարցը՝ սահմանելով, որ նման դեպքերում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը, որպես կանոն, դրվում է սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած անձի վրա: Միաժամանակ օրենսդիրը բացառություն է սահմանել այս ընդհանուր կանոնից, ի թիվս այլնի, նաև այն դեպքերի համար, երբ սնանկության գործի վարույթը կարճվում է պարտապանին այլ սնանկության գործով սնանկ ճանաչելու հիմքով՝ նախատեսելով, որ այս դեպքում դատական ծախսերի փոխհատուցումը կատարվում է պարտապանի հաշվին: Այսինքն՝ օրենսդիրը գտել է, որ այն դեպքում, երբ անձը սնանկության դիմում է ներկայացնում դատարան, սակայն գործի վարույթը կարճվում է պարտապանի արդեն իսկ մեկ այլ գործի շրջանակներում սնանկ ճանաչված լինելու հիմքով, այնուամենայնիվ, սնանկության վերաբերյալ դիմում ներկայացրած անձի կողմից դատարան դիմելը չպետք է համարվի չարդարացված և վերջինս չպետք է անբարենպաստ հետևանքներ կրի դատական պաշտպանություն հայցելու համար: Այլ կերպ ասած՝ սնանկության ողջ ինստիտուտի առանձնահատկությունը պահանջում է, որպեսզի պարտապանին սնանկ ճանաչելուց հետո այդ նույն պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով հարուցված գործերի վարույթները կարճվեն, ինչը չի ենթադրում, որ այդ պահանջները եղել են անհիմն կամ բավարարման ոչ ենթակա:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պարտապանին այլ սնանկության գործով սնանկ ճանաչելու հիմքով սնանկության գործի վարույթը կարճվելու դեպքում դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի փոխհատուցման պարտականությունը պետք է դրվի պարտապանի վրա, քանի որ հակառակ դեպքում, այսինքն՝ պետական տուրքի փոխհատուցման պարտականությունը դիմումատուի վրա դնելը կխաթարի դատական պաշտպանության իրավունքի էությունը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձը չպետք է որևէ կերպ կաշկանդված լինի դատական պաշտպանության դիմելու հարցում հատկապես այն դեպքերում, երբ մեկ այլ գործով դեռևս առկա չէ պարտապանին սնանկ ճանաչելու պահանջը բավարարելու կամ մերժելու մասին օրինական ուժի մեջ մտած վճիռ, ուստի բոլոր այն դեպքերում, երբ սնանկության գործի վարույթը կարճվում է պարտապանին այլ սնանկության գործով սնանկ ճանաչելու հիմքով, ապա դատական ծախսերի փոխհատուցումը պետք է կատարվի պարտապանի հաշվին:

***Վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Դատարան ներկայացված դիմումով Շամամ Ղազարյանը խնդրել է պարտապան Արմեն Հարությունյանին ճանաչել սնանկ, միաժամանակ միջնորդել է պետական տուրքի հարցին անդարադառնալ վճռով և այն բռնագանձել պարտապանից:

Դատարանի «Դիմումը վարույթ ընդունելու, սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակելու և պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին»

15.02.2018 թվականի որոշմամբ Շամամ Ղազարյանի դիմումն ընդդեմ Արմեն Հարությունյանի վերջինիս սնանկ ճանաչելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ, իսկ պետական տուրքի վճարումը հետաձգվել է և որոշվել է այդ հարցը լուծել վճռով:

Թիվ ԵԱԴԴ/0105/04/17 սնանկության գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 22.11.2018 թվականի վճռով Վարդուհի Գրիգորյանի դիմումն ընդդեմ Արմեն Հարությունյանի սնանկ ճանաչելու պահանջի մասին, բավարարվել է. Արմեն Հարությունյանը ճանաչվել է սնանկ: Վճիռը ստացել է օրինական ուժ:

Դատարանը 31.07.2019 թվականի վճռով կարճել է գործի վարույթը՝ պատճառաբանելով, որ թիվ ԵԱԴԴ/0105/04/17 սնանկության գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 22.11.2018 թվականի վճռով Արմեն Հարությունյանն արդեն իսկ սնանկ է ճանաչվել և վճիռը մտել է օրինական ուժի մեջ, որպիսի հանգամանքը Դատարանին հայտնի է դարձել պարտապանի ներկայացուցչի 16.07.2019 թվականին Դատարան ներկայացված համապատասխան դիմումով: Միաժամանակ վճռով Շամամ Ղազարյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձվել է 100.000 ՀՀ դրամ՝ որպես հետաձգված պետական տուրքի գումար:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Շամամ Ղազարյանի պետական տուրքի բաշխման մասով ներկայացված վերաքննիչ բողոքը, արձանագրել է. «պարտապան Ա. Հարությունյանի նկատմամբ թիվ ԵԱԴԴ/0105/04/17 սնանկության գործը հարուցվել է Շամամ Ղազարյանի կողմից նույն պարտապանի նկատմամբ թիվ ԵԴ/0079/04/18 սնանկության գործը հարուցելուց շուրջ մեկ տարի առաջ, և այդ մասին տեղեկությունները հասանելի են եղել դատական իշխանության պաշտոնական կայքէջում՝ կայքէջի բոլոր այցելուների համար, ուստի Վերաքննիչ դատարանը գտնում է, որ սնանկության գործի վարույթը կարճելիս՝ պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ դիմումը դատարան ներկայացնելու համար օրենքով սահմանված և դատարանի որոշմամբ հետաձգված պետական տուրքը վճարելու պարտականությունը դիմումատու Շամամ Ղազարյանի վրա դնելու առնչությամբ ՀՀ սնանկության դատարանի հետևություններն իրավաչափ են և բխում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի իրավակարգավորումներից»:

Մինչդեռ վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումը և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թեև թիվ ԵԱԴԴ/0105/04/17 սնանկության գործով դիմումը ներկայացվել է 14.06.2017 թվականին (հիմք՝ court.am պաշտոնական կայք), իսկ սույն գործով Շամամ Ղազարյանի դիմումը՝ ավելի ուշ՝ 15.02.2018 թվականին, այդուհանդերձ, թիվ ԵԱԴԴ/0105/04/17 սնանկության գործով պարտապան Արմեն Հարությունյանին սնանկ ճանաչելու մասին վճիռը կայացվել է 22.11.2018 թվականին, այսինքն՝ սույն գործով Շամամ Ղազարյանի կողմից սնանկության դիմում ներկայացնելուց հետո: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Շամամ Ղազարյանի կողմից սնանկության դիմում ներկայացնելու պահին դեռևս առկա չի եղել պարտապան Արմեն Հարությունյանին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած վճիռ: Այս հանգամանքի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պարտապան Արմեն Հարությունյանին սնանկ ճանաչելու մասին վճիռ դեռևս կայացված չլինելու պայմաններում Շամամ Ղազարյանի կողմից իր դատական պաշտպանության իրավունքից օգտվելը չի կարող համարվել չարդարացված, ուստի վերջինս դատարան դիմելու համար չպետք է կրի որևէ

բացասական հետևանք, այդ թվում նաև՝ պետական տուրքի վճարման պարտականության տեսքով:

Այսպիսով, Շամամ Ղազարյանի վճարել բողոքի հիմքը Վճարել դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը՝ դատական ծախսերի բաշխման մասով, բեկանելու համար:

*Վճարել բողոքի պատրաստմանում բերված փաստարկները հերքվում են վերոհիշյալ պատճառաբանություններով:*

Միաժամանակ Վճարել դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի ակտն ամբողջությամբ բեկանելու և փոփոխելու՝ Վճարել դատարանի լիազորությունը կիրառելու համար հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն սնանկության գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճարել դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճարել դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճարել դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

#### **5. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում բողոք բերող անձից պետական տուրք չի գանձվում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական ակտը բողոքարկվել է դատական ծախսերի մասով, Վճարել դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճարել դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.12.2019 թվականի որոշումը՝ ՀՀ սնանկության դատարանի 31.07.2019 թվականի վճիռը՝ Շամամ Դազարյանից ՀՀ պետական բյուջե 100.000 ՀՀ դրամ բռնագանձելու մասով անփոփոխ թողնելու մասը և այն փոփոխել հետևյալ կերպ. Արմեն Հարությունյանից ՀՀ պետական բյուջե բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Մանակության գործ թիվ  
Նախագահող դատավոր՝

Մանակության գործ թիվ **ՍնԴ/0434/04/21**  
**2023թ.**

ՍնԴ/0434/04/21  
Լ. Գրիգորյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող և զեկուցող* Գ. ՀԱԿՈՒՅԱՆ  
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ  
Ս. ՄԵՂՐՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2023 թվականի նոյեմբերի 24-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) դիմումի՝ անհատ ձեռնարկատեր Նորայր Սողոմյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.08.2022 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Կոմիտեի բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Կոմիտեն պահանջել է անհատ ձեռնարկատեր Նորայր Սողոմյանին ճանաչել սնանկ:

ՀՀ սնանկության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 29.03.2021 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Դատարանի 02.08.2021 թվականի որոշմամբ անհատ ձեռնարկատեր Նորայր Սողոմյանի ձեռնարկատիրական գործունեությունը, ինչպես նաև գույքը պարտապանի կողմից անձամբ կառավարելու և տնօրինելու բոլոր իրավունքները կասեցվել են:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.08.2022 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը վերականգնելու մասին Կոմիտեի միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածը:*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ թիվ ՍՆԴ/0434/04/21 սնանկության գործով Դատարանի կողմից 02.08.2021 թվականին կայացված՝ անհատ ձեռնարկատեր Նորայր Սոլոյանի գործունեության դադարեցման վարույթ սկսելու մասին որոշումը բողոքարկելու հիմք ծառայող ՀՀ վճռաբեկ դատարանի 24.06.2022 թվականի որոշումը Կոմիտեն ստացել է 06.07.2022 թվականին, ուստի վերաքննիչ բողոք կարող էր ներկայացվել այդ որոշումն ստանալու հաջորդ օրվանից 15-օրյա ժամկետում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել և փոփոխել» Վերաքննիչ դատարանի 19.08.2022 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է եղել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտման առերևույթ առկայությամբ, որը հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պարճատը հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցին՝ վերահասարակելով նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:*

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական



իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին ատյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որպեսզի հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ ատյանի դատարան): Այն է՝ երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առնվազն երկու ատյանում լավամ լինելու իրավունք: Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի՝ օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը (*Իրե՛ս, ի թիվս այլի, Ժաննա Տերյանն ընդդեմ Վահան Տերյանի և Վահան Տերյանն ընդդեմ Ժաննա Տերյանի թիվ ԵԱԵԴ/0563/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.12.2018 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ Սահմանադրության և Կոնվենցիայի համապատասխան հոդվածներով ամրագրված՝ անձի դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկը դատական ակտերի բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովել դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը: Ուղղված լինելով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների երաշխավորմանը՝ այդուհանդերձ, օրենսդրի կողմից սահմանված են բողոքարկման իրավունքի իրացման որոշակի պայմաններ, որոնցից են ժամկետային սահմանափակումները (*Իրե՛ս «ՍՌ Ֆարինա» ՍՊԸ-ի սնանկության գործով կատավարիչ Տիգրան Սահակյանն ընդդեմ Գագիկ Դավթյանի թիվ ԿՌ/0764/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.12.2019 թվականի որոշումը*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան), անդրադառնալով բողոքարկման իրավունքի և դրա իրացման պայմաններին, արձանագրել է, որ (...) բողոք ներկայացնելու իրավունքը պետք է իրացվի այն պահից սկսած, երբ համապատասխան անձը ձեռք է բերել իրական հնարավորություն ծանոթանալու դատարանի որոշման հետ, որը շոշափում է նրա իրավունքները կամ օրինական շահերը, կամ նրա համար առաջացնում է որոշակի հետևանքներ: (...) Դատական ծանուցումները համարվում են միջոց դատարանի և դատավարության մասնակիցների միջև փոխազդեցություն ստեղծելու համար և ուղղված են դատավարության մասնակիցներին կայացված ակտերի մասին տեղեկացնելուն, ինչպես նաև նրանց՝ այդ ակտերը բողոքարկելու հնարավորություն տալուն: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի սահմանում դատական ակտերի հանձնման կոնկրետ եղանակ, ինչպես, օրինակ, պատվիրված նամակով ուղարկելն է: Սակայն միաժամանակ դատարանի որոշումն անձին պետք է

հանձնված լինի այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա ստուգել ինչպես դատական ակտը փոխանցված լինելու հանգամանքը, այնպես էլ այն հանձնելու ստույգ օրը (*լրեն՝ Ivanova and Ivashova v. Russia գործով Եվրոպական դատարանի 26.04.2017 թվականի վճիռը, կետեր 41, 45-46*):

Դատարանի մատչելիության իրավունքի դրսևորումներից է համարվում կայացված որոշումների մասին պատշաճ ծանուցում ստանալու իրավունքը, մասնավորապես այն դեպքերում, երբ բողոք բերելու իրավունքը սահմանափակված է որոշակի ժամկետներով (*լրեն՝ Zavodnik v. Sloveńie գործով Եվրոպական դատարանի 21.08.2015 թվականի վճիռը, կետ 71*):

Վերոշարադրյալ դիրքորոշումների լույսի ներքո ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ անձի բողոքարկման իրավունքը, հանդիսանալով դատարանի մատչելիության իրավունքի բաղկացուցիչ տարր, կարող է իրացվել այն դեպքում, երբ անձն իրական հնարավորություն է ձեռք բերել ծանոթանալու դատարանի որոշման հետ: Ներպետական օրենսդրությամբ դատական ակտը հրապարակելու, գործին մասնակցող անձանց հանձնելու և նրանց ուղարկելու ընթացակարգեր սահմանելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդում այդ միջոցներով ստեղծել բավարար հիմքեր և երաշխիքներ, որպեսզի անձինք կարողանան անխաթար կերպով օգտվել իրենց դատական պաշտպանության իրավունքից: Ուստի ելնելով այդ նպատակներից՝ դատավարական նորմերով սահմանված՝ դատական ակտը հրապարակելու և գործին մասնակցող անձանց հանձնելու կամ նրանց ուղարկելու ընթացակարգերը պետք է ուղղված լինեն պաշտպանության միջոցներն ավելի հասանելի դարձնելուն, այլ ոչ դրանք ոչ իրավաչափորեն սահմանափակելուն (*լրեն՝ «Եղիցի Լույս-ԲՀ» ՄՊԸ-ն ընդդեմ «Արմինե» ԱԿ-ի թիվ ԿԴ/0412/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.05.2019 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նույն որոշմամբ ամփոփելով Եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումները, եզրահանգել է, որ թեև Կոնվենցիայի 6-րդ հոդվածը հստակ չի սահմանում, թե դատարանի կայացրած ակտն ինչ կերպով պետք է հանձնվի անձին, սակայն միանշանակ է այն, որ դատական ակտը պետք է հանձնվի այնպիսի եղանակով, որը հնարավորություն կտա իրապես պարզելու ինչպես դատական ակտի փոխանցված լինելու հանգամանքը, այնպես էլ այն հանձնելու ստույգ օրը: Դատական ակտի հանձնման կոնկրետ եղանակ չսահմանելով հանդերձ՝ Կոնվենցիան և դրա կիրառումը պահանջում են, որպեսզի անձի բողոքարկման իրավունքի իրացումը սերտորեն փոխկապակցված լինի դատարանի կայացրած ակտին ծանոթանալու իրական հնարավորության հետ: Այսինքն՝ դատավարական նորմերը պետք է սահմանվեն այնպես, որպեսզի գործին մասնակցող անձանց համար իրական հնարավորություն ապահովեն տիրապետելու դատական ակտի բովանդակությանը, և չարդարացված կերպով չսահմանափակվի նրանց բողոք բերելու իրավունքը: Դրա հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ հանդիսանալով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների բաղադրատարրերից մեկը՝ բողոքարկման իրավունքը կարող է սահմանափակվել պետության կողմից, սակայն այդ սահմանափակումները՝ ներառյալ ժամկետայինները, չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել է, որ իր առջև դրված չէ ազգային դատարանների փոխարեն գործելու խնդիր: Ներպետական օրենսդրության մեկնաբանության խնդիրների լուծումը նախ և առաջ ազգային դատարանների գործառնություն է, իսկ Եվրոպական դատարանի դերակատարումը պարզելն է, թե

արդյոք ազգային դատարանների կողմից տրված մեկնաբանությունները համատեղելի են Կոնվենցիայի հետ: Վերոշարադրյալը հատկապես վերաբերում է դատարանների կողմից դատավարական այնպիսի նորմերի մեկնաբանությանը, ինչպիսիք են, օրինակ, դատավարական փաստաթղթեր կամ բողոք ներկայացնելու ժամկետների սահմանափակումները (*լռես՝ Pérez de Rada Cavanilles v. Spain գործով Եվրոպական դատարանի 28.10.1998 թվականի վճիռը, կետ 43*):

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում արձանագրել է, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման (*լռես՝ թիվ ՄԴՈ-652, թիվ ՄԴՈ-690, թիվ ՄԴՈ-719, թիվ ՄԴՈ-765, թիվ ՄԴՈ-844, թիվ ՄԴՈ-873, թիվ ՄԴՈ-890, թիվ ՄԴՈ-932, թիվ ՄԴՈ-942, թիվ ՄԴՈ-1037, թիվ ՄԴՈ-1052, թիվ ՄԴՈ-1115, թիվ ՄԴՈ-1127, թիվ ՄԴՈ-1190, թիվ ՄԴՈ-1192, թիվ ՄԴՈ-1196, թիվ ՄԴՈ-1197, թիվ ՄԴՈ-1220, թիվ ՄԴՈ-1222, թիվ ՄԴՈ-1257, թիվ ՄԴՈ-1289 որոշումները*):

ՀՀ սահմանադրական դատարանը 22.12.2015 թվականի թիվ ՄԴՈ-1249 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ Վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը Վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով (*ex jure*)՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով:

Իր հերթին ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ըստ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշման՝ բողոքարկման ժամկետը բաց թողնելու դեպքում բողոքաբերի կողմից ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն և համապատասխան ապացույցներ ներկայացնելը, իսկ վերադաս դատարանի կողմից նշված միջնորդության քննարկումը և ապացույցները գնահատելը, պարտադիր է (*լռես՝ «ՄԵՖ Ինտերնեյշնլ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՄՊԸ-ն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Մարինե Ասրյանի, Ասարուր Գրիգորյանի,*

անհատ ձեռնարկատեր Սարյինա Հայրապետյանի, Նարինե Բարսայանի, Հովհաննես Խաչիկյանի թիվ ԵԴ/14539/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.01.2022 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են (...) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանն առանձին ակտի ձևով կայացնում է այն որոշումները, որոնք ենթակա են բողոքարկման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, եթե նույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի առանձին ակտի ձևով կայացված որոշումը գործին մասնակցող անձանց հանձնվում է առձեռն, իսկ դրա անհնարինության դեպքում նրանց է ուղարկվում կայացման պահից ետոյա ժամկետում, եթե նույն օրենսգրքով այլ ժամկետ սահմանված չէ:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել վերաքննության կարգով՝ դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ վերաքննիչ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի: (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներ արձանագրել է, որ դատարաններում սնանկության գործերի վարումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սնանկության վարույթի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը կիրառվում են այնքանով, որքանով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերով այլ կանոններ նախատեսված չեն: Այսինքն՝ այն պարագայում, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով նախատեսված է այլ կանոն, սակայն «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերը նշված հանգամանքի նկատմամբ սահմանել են այլ մոտեցումներ, ապա պետք է կիրառվեն «Մասնկության մասին» ՀՀ օրենքի դրույթները (տե՛ս ըստ ՀՀ պետական եկամտային կոմիտեի դիմումի թիվ

ՄԵԳ/0104/04/19 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.05.2020 թվականի որոշումը):

Նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով դրանք կայացվելու օրվանից՝ 15-օրյա ժամկետում: Բացառություն է այն դեպքը, երբ դատարանը հարգելի է համարում նշված ժամկետի բաց թողումը: Ընդ որում օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանելով, որ առանձին ակտի տեսքով կայացվող որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, եթե այլ բան սահմանված չէ օրենքով, միաժամանակ դատարանի համար սահմանել է պարտականություն՝ այդ որոշումները կայացման պահից եռօրյա ժամկետում ուղարկելու գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ առձեռն նրանց չի հանձնվել: Այսինքն՝ օրենսդիրը կարևորել է դատական ակտի օրինակը գործին մասնակցող անձանց կողմից ստանալու հանգամանքը, ինչն ուղղված է վերջիններիս բողոքարկման իրավունքի իրացման իրական հնարավորության երաշխավորմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր հետևությունը պայմանավորվել է նաև այն հանգամանքով, որ անձի բողոքարկման իրավունքը պետք է ուղեկցվի բավարար երաշխիքներով, որոնք հնարավորություն կտան դատական ակտը բողոքարկող անձանց արդյունավետ օգտվելու վերադաս ատյանի մատչելիությունից, ներառյալ նրանց կողմից հիմնավոր բողոքներ ներկայացնելու հնարավորության տրամադրումը (յրեն ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի դիմումի թիվ ԿԴ/0159/04/16 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.01.2022 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձինք զրկվում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը, պարզելով, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, որոշում է կայացնում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում բաց թողնված ժամկետը ենթակա չէ վերականգնման:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ժամկետը բաց թողնելու պատճառի հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը զրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության կամ գործուղման մեջ գտնվելու պատճառով (յրեն «Հայրիզնեսրանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «ՄԻԼԼԱՐ»

*ՄՊԸ-ի թիվ ԵԿԳ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):*

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանվել է դատավարական ժամկետների բաց թողնման և դրանք վերականգնելու կարգը: Մասնավորապես բոլոր այն դեպքերում, երբ դատավարական ժամկետները գործին մասնակցող անձանց կողմից բաց են թողնվել հարգելի պատճառներով, ապա դատարանն իրավասու է բավարարել այդ ժամկետը վերականգնելու վերաբերյալ գործին մասնակցող անձի միջնորդությունը: Հարկ է նկատել նաև, որ օրենսդրի կողմից դատավարական ժամկետի բաց թողնման պատճառի հարգելի լինելու հիմքերն արդարացիորեն չեն նշվել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական ֆունկցիան թողնելով դատարանների հայեցողությանը: Դա պայմանավորված է նրանով, որ յուրաքանչյուր դեպքում դատավարական ժամկետի բաց թողնման պատճառը կարող է լինել տարբեր, ինչն էլ ենթակա է գնահատման ելնելով յուրաքանչյուր գործի հանգամանքներից (*տե՛ս ըստ ՀՀ պետական եկամտարների կոմիտեի դիմումի, թիվ ԱՐԳ/0070/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.07.2021 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո վերահաստատելով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոք ներկայացրած անձը բաց է թողել բողոքարկման համար օրենքով նախատեսված դատավարական ժամկետը, ապա պարտավոր է ներկայացնել ոչ միայն բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն, այլ նաև՝ իր կողմից ներկայացված միջնորդությամբ վկայակոչված հանգամանքները հավաստող համապատասխան ապացույցներ, որոնք հնարավորություն կընձեռեն դատարաններին գնահատելու ներկայացված միջնորդության հիմնավորվածությունը:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ օրենսդիրը չի հստակեցրել և չի սահմանել դատավարական ժամկետի բաց թողնման պատճառների հարգելի լինելու հիմքերը, այնուամենայնիվ, դրանք պետք է հանդիսանան ժամկետը բաց թողնելու օբյեկտիվ և (կամ) սուբյեկտիվ այնպիսի պատճառներ, որոնց առկայությունը պայմանավորել է անձի՝ դատավարական ժամկետների ավարտից հետո բողոքարկման իրավունքի իրացման իրավաչափությունը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ դատավարական ժամկետի բաց թողնման պատճառները գնահատելիս դատարանները պետք է քննարկման առարկա դարձնեն այն հարցը, թե անձի կողմից վկայակոչված պատճառները որքանով են իրական խոջընդոտ հանդիսացել դատական ակտը բողոքարկելու իրավունքի իրացման համար:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը 02.08.2021 թվականին որոշում է կայացրել անհատ ձեռնարկատեր Նորայր Սուրյանի ձեռնարկատիրական գործունեությունը, գույքը պարտապանի կողմից անձամբ կառավարելու և տնօրինելու բոլոր իրավունքները կասեցնելու մասին (**հավելված, գ.թ. 22, 23**):

Դատարանը **03.08.2021 թվականին** գրություն է կազմել վերը նշված որոշումը Կոմիտեին ուղարկելու մասին, որից հետո այն ուղարկել է Կոմիտեին, որը վերջինս ստացել է **06.08.2021 թվականին (հավելված, գ.թ. 28, 29)**:

Դատարանի 02.08.2021 թվականի «Անհատ ձեռնարկատեր Նորայր Գազիկի Սոդյանի ձեռնարկատիրական գործունեությունը կասեցնելու մասին» որոշման դեմ Կոմիտեն փոստային առարման եղանակով վերաքննիչ բողոք է ներկայացրել 18.07.2022 թվականին միաժամանակ միջնորդելով վերաքննիչ բողոք բերելու դատարանական ժամկետի բացթողումը հարգելի համարել այն պարճատարանությունը, որ «ՀՀ սնանկության դատարանի 02.08.2021 թվականի թիվ ՍԿ/0434/04/21 սնանկության գործով կայացված ՄՁ Նորայր Սոդյանի գործունեության դադարեցման վարույթ սկսելու որոշումը բողոքարկելու հիմք է ծառայում ՀՀ վճարել դատարանի 24.06.2022 թվականին կայացված որոշումը, որով բավարարվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՄՁ Նորայր Սոդյանի մուր թեմատիկ հարկային արուգում իրականացնելու թույլտվություն փառու մասին միջնորդությունը, իսկ մինչև ՀՀ վճարել դատարանի 24.06.2022 թվականի որոշումը ՀՀ ՊԵԿ-ը իրավական հիմքեր չունեն բողոքարկելու դատարանի 02.08.2021 թվականի պարտապանի գործունեության դադարեցման վարույթ սկսելու որոշումը» (հավելված, գ.թ. 51-57):

Վերաքննիչ դատարանը, պատճառարանելով, որ՝

1) «Տվյալ դեպքում բողոքարկված որոշումը կայացվել է 02.08.2021 թվականին և փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Կոմիտեին և սրացվել վերջինիս կողմից 06.08.2021 թվականին (գ.թ. 29): Վերաքննիչ բողոքը պարունակում է այն ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պարճատր հարգելի համարելու և այդ ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն այն հիմնավորումներ, որ որոշման բողոքարկման համար իրավական հիմք է հանդիսանում սույն գործով ՀՀ վճարել դատարանի 24.06.2022 թվականին կայացրած որոշումը, որը Կոմիտեն սրացել է 06.07.2022 թվականին, և բողոքը բերել է այդ օրվանից սկսած 15 օրյա ժամկետում»,

2) «վերաքննիչ բողոքին կցված ապացույցներով հաստատվում է, որ Կոմիտեի վկայակոչած ՀՀ վճարել դատարանի որոշումը կայացվել է 24.06.2022 թվականին, ուստի այս պարագայում Դատարանի 02.08.2021 թվականի որոշումը կարող էր բողոքարկվել այդ որոշման կայացման պահից սկսած 15-օրյա ժամկետում՝ մինչև 11.07.2022 թվականը ներառյալ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ վճարել դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, մինչդեռ վերաքննիչ բողոքը ներկայացվել է այդ ժամկետն ավարտվելուց հետո՝ 18.07.2022 թվականին»,

3) «ՀՀ վճարել դատարանի դատական ակտի կայացման փաստը բավարար է եղել բողոքը բերելու համար, իսկ դրա հիմնավորումները որևէ ազդեցություն չէին կարող ունենալ վերաքննիչ բողոքը շարադրելու համար»,

գտել է, որ «քննարկվող միջնորդությունը ենթակա է մերժման՝ անհիմն լինելու պարճատարանությանը, իսկ վերաքննիչ բողոքը բերվել է դրա համար օրենքով սահմանված ժամկետն ավարտվելուց հետո, ուստի բողոքի ընդունումը ենթակա է մերժման»:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ իրավական վերլուծությունները և ելնելով սույն գործի փաստական հանգամանքներից՝ Վճարել դատարանը, շահաձայնվելով Վերաքննիչ դատարանի որոշման հիմքում դրված վերը նշված թիվ 1 և թիվ 2 պատճառարանություններին, գտնում է, որ այնուամենայնիվ դրանք չեն հանգեցրել գործի սխալ լուծմանը, քանի որ Կոմիտեի կողմից վերաքննիչ բողոք բերելու համար բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությամբ որպես դատավարական ժամկետը բաց թողնելու հարգելի պատճառ վկայակոչված հանգամանքները վերը նշված դիրքորոշումների համատեքստում չեն հանդիսանում հարգելի օբյեկտիվ և (կամ) սուբյեկտիվ պատճառներ: Վճարել դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նրանով,

որ տվյալ դեպքում Կոմիտեի կողմից չեն վկայակոչվել այնպիսի հանգամանքներ, որոնք առաջացել են վերջինիս կամքից անկախ հիմքերով, կամ Կոմիտեն զրկված է եղել օրենքով սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք ներկայացնելու դատավարական գործողությունը կատարելու հնարավորությունից՝ պայմանավորված սուբյեկտիվ գործոնով (Կոմիտեի կողմից վկայակոչված հանգամանքները բացառապես պայմանավորված են ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված վերը նշված որոշումն ստանալու օրվա հետ): Այսինքն՝ դատավարական ժամկետը բաց է թողնվել ոչ ողջամիտ և բավարար պատճառաբանությամբ, որի պայմաններում միջնորդությունը տվյալ դեպքում ենթակա էր մերժման:

Ավելին՝ Կոմիտեի կողմից ներկայացված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդության մեջ սխալ է նշվել այն դատական ակտի անվանումը, որի բողոքարկումն իբրև պայմանավորված է եղել ՀՀ վճռաբեկ դատարանի 24.06.2022 թվականի որոշմամբ՝ Դատարանի 02.08.2021 թվականի «Անհատ ձեռնարկատեր Նորայր Սոլոյանի ձեռնարկատիրական գործունեությունը կասեցնելու մասին» որոշման փոխարեն նշվել է նույն թվականին Դատարանի կողմից կայացված մեկ այլ՝ «Անհատ ձեռնարկատեր Նորայր Սոլոյանի գործունեության դադարեցման վարույթ սկսելու մասին» որոշումը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի 19.08.2022 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար, ուստի այն պետք է թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.08.2022 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ



## 27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԱՐԱԴ/2965/02/17	2022թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԱՐԱԴ/2965/02/17	
Նախագահող դատավոր	Հ. Ենոքյան	
Դատավորներ	Ն. Մարգարյան	
	Կ. Համբարձումյան	

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող</i>	Մ. ԴՐՄԵՅԱՆ
<i>գեկուցող</i>	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 07-ին գրավոր ընթացակարգով քննելով Թագուհի Ամիրյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.11.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սոնա Առաքելյանի, Արմենուհի Մարգարյանի, Մանյակ Մարգարյանի ընդդեմ Բուրաստան Դավթյանի, Գևորգ Առաքելյանի, Գայանե Առաքելյանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Թագուհի Ամիրյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և որպես հետևանք՝ ժառանգության իրավունքի վկայագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Սոնա Առաքելյանը, Արմենուհի Մարգարյանը և Մանյակ Մարգարյանը պահանջել են իրենց ճանաչել 29.05.2002 թվականին մահացած Թոռնիկ Առաքելյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ և այդ հիմքով որպես հետևանք անվավեր ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի նոտար Ս. Հովհաննիսյանի կողմից 10.06.2011 թվականին պատասխանողներ Բուրաստան Դավթյանի, Գևորգ Առաքելյանի և Գայանե Առաքելյանի անվամբ տրված (սեղանամատյանի գրանցում թիվ 484) ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը:

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Գ. Խաչատրյան) 01.02.2019 թվականի վճռով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ կողմերի կնքած հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (սախագահող դատավոր Լ. Գրիգորյան, դատավորներ Ա. Պետրոսյան, Դ. Սերոբյան) 06.02.2020 թվականի որոշմամբ գործին մասնակից չդարձված անձանց՝ Գայանե Խաչատրյանի և Նորայր Սարգսյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 01.02.2019 թվականի վճիռը բեկանվել է գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Մարգարյան) (այսուհետ՝ Դատարան) 26.03.2020 թվականի որոշմամբ սույն քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Դատարանի 14.12.2020 թվականի որոշմամբ Թագուհի Ամիրյանը ներգրավվել է որպես սույն քաղաքացիական գործով վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ:

Դատարանի 06.05.2021 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.11.2021 թվականի որոշմամբ Դատարանի 06.05.2021 թվականի վճիռը բեկանվել է և հաստատվել է կողմերի հաշտության համաձայնությունը:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Թագուհի Ամիրյանը (ներկայացուցիչ Աստղիկ Պապիկյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել Սոնա Առաքելյանը, Արմենուհի Սարգսյանը և Մանյակ Թորոսյանը (ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ, 61-րդ, 151-րդ և 375-րդ հոդվածները:*

*Բողոքաբերը նշված պնդումները պարզապես չեն հերկյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ թիվ ԱՐԱԴ/0084/02/12 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով հաստատված է համարվել ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա գյուղի 1-ին փողոցի 12 տուն հասցեում գտնվող 003-016 կադաստրային ծածկագիրը կրող 0,207 հա մակերեսով տնամերձ հողամասը (այսուհետ նաև՝ Հողամաս) և 97,77 քմ մակերեսով բնակելի տունը (այսուհետ նաև՝ Բնակելի տուն) Գայանե Խաչատրյանի և Նորայր Սարգսյանի կողմից տաք տարի բարելավողներն, բացահայտ, անընդմեջ, որպես սեփական գույք, տիրապետելու փաստն ու դրա նկատմամբ ճանաչվել է նրանց սեփականության իրավունքը: Միաժամանակ հաստատվել է, որ 14.03.2013 թվականից ի վեր ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա գյուղի 1-ին փողոցի 12 տուն հասցեում գտնվող Հողամասը և Բնակելի տունը Թոռնիկ Առաքելյանի ժառանգության զանգվածի մեջ չի մտել, ուստի դրա վերաբերյալ հաշտության համաձայնությունը չէր կարող հաստատվել:

Վերաքննիչ դատարանի հաստատած հաշտության համաձայնությունը խախտում է ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա գյուղի 1-ին փողոցի 12 տուն հասցեում գտնվող գույքի սեփականատեր Թագուհի Ամիրյանի իրավունքներն ու օրինական շահերը: Մասնավորապես Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Գայանե

Խաչատրյանը և Նորայր Սարգսյանը 29.10.2019 թվականին նոտարական կարգով վավերացված պայմանագրով իրենց համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա գյուղ 1-ին փողոց, թիվ 12 հասցեում գտնվող գույքն օտարել են բողոքաբերին, որից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում: Նշված ապացույցի հիման վրա Դատարանը Թագուհի Ամիրյանին սույն քաղաքացիական գործով ներգրավել է որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ, բայց հաշտության համաձայնությունը չի ստորագրվել բողոքաբեր Թագուհի Ամիրյանի կողմից:

Վերաքննիչ դատարանի հաստատած հաշտության համաձայնությունը պարունակում է այնպիսի պայմաններ, որոնք թույլ չեն տալիս որոշակիորեն պարզել հատկացվող գույքը կամ այն գործողությունները, որոնք կողմը պարտավոր է կատարել, քանի որ ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա գյուղի 1-ին փողոցի 12 տուն հասցեում գտնվող գույքը չի պատկանում սույն գործով պատասխանողներին և պարզ չէ, թե հաստատված հաշտության համաձայնությամբ նրանք ինչ են պարտավոր կատարել: Ավելին՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա գյուղի 1-ին փողոցի 12 տուն հասցեում գտնվող գույքի նկատմամբ պատասխանողների սեփականության իրավունքը գրանցված չէ:

Բողոքարկված դատական ակտում առկա չէ նշում բողոքաբերի՝ որպես սույն գործով երրորդ անձ ներգրավված լինելու մասին: Ավելին՝ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել բողոքաբերի ներկայացրած վերաքննիչ բողոքի պատասխանին և դրա մասին նշում չի կատարել դատական ակտում:

Վերաքննիչ դատարանը հաշտության համաձայնությունը հաստատելիս անտեսել է գործում եղած ապացույցները, այդ թվում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով ապացուցման կարիք չունեցող փաստերը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.11.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ մերժել հայրը:

### **2.1. Վճարել բողոքի պարասխանի հիմքերը, հիմնավորումները**

Վճարել բողոքն ամբողջությամբ անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ սույն գործին մասնակից դարձած անձանց միջև կնքված հաշտության համաձայնագիրը որևէ ձևով չի շոշափել երրորդ անձի իրավունքներն ու օրինական շահերը:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը

1) ՀՀ Արագածոտնի մարզի «ԱՊԱՐԱՆ» նոտարական տարածքի նոտար Սիրեկան Հովհաննիսյանի կողմից 10.06.2011 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով (սեղանամատյանի գրանցում թիվ 484 (այսուհետ՝ նաև Վկայագիր)) 20.05.2002 թվականին մահացած Թոռնիկ Թադևոսի Առաքելյանի ժառանգներ են ճանաչվել Բուրաստան Դավթյանը, Գևորգ Առաքելյանը և Գայանե Առաքելյանը:

Նշվել է, որ ժառանգական գույքը, որի համար Վկայագիրը տրվել է, բաղկացած է՝

«1. ՀՀ Արագածոտն մարզի, Ափնա գյուղում գտնվող 0.3135 (գրո ամբողջ երեք հազար հարյուր երեսունհինգ) հեկտար տնամերձ հողամասից, ծածկագիր՝ 0003-034, 376.4 (երեք հարյուր յոթանաստույնվեց ամբողջ չորս) ք.մ. մակերեսով

բնակելի տնից, 70.12 (յոթանասուն ամբողջ տասներկու) ք.մ. մակերեսով գոմից, 24.87 (քսանչորս ամբողջ ութսուկոթ) ք.մ. մակերեսով հացատնից:

2. 0.207 (զրո ամբողջ երկու հարյուր յոթ) հեկտար տնամերձ հողամասից, ծածկագիր՝ 003-016, 118.8 (հարյուր տասնութ ամբողջ ութ) ք.մ. մակերեսով բնակելի տնից. (...)» **(հատոր 1-ին, գ.թ. 11)**.

2) Թիվ ԱՐԱԴ/0084/02/12 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Գայանե Խաչատրյանի և Նորայր Սարգսյանի ընդդեմ Բուրաստան Դավթյանի, Գևորգ Առաքելյանի և Գայանե Առաքելյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և անհիմն հարստացման հետևանքով գույքը վերադարձնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.04.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի՝ ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչվել է հայցվորներ Գայանե Խաչատրյանի և Նորայր Սարգսյանի սեփականության իրավունքը ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա գյուղի 1-ին փողոցի 12 տուն հասցեում գտնվող 0,207 հա մակերեսով տնամերձ հողամասի և 97,77 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ, իսկ անհիմն հարստացման հետևանքով գույքը վերադարձնելուն պարտավորեցնելու պահանջի մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.06.2012 թվականի որոշմամբ Բուրաստան Դավթյանի, Գևորգ Առաքելյանի և Գայանե Առաքելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.04.2012 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշմամբ Գայանե Խաչատրյանի և Նորայր Սարգսյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.06.2012 թվականի որոշումը բեկանվել է և օրինական ուժ է տրվել ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.04.2012 թվականի վճիռին **(հատոր 3-րդ, գ.թ. 18-26)**.

3) 14.05.2013 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման թիվ 14052013-02-0036 վկայականի համաձայն՝ ՀՀ Արագածոտն մարզի Ափնագյուղ համայնքի 1-ին փողոցի 12-րդ հասցեում գտնվող 0,207 հա մակերեսով հողամասի (կադաստրային ծածկագիրը՝ 02-023-0003-0016) և 97,77 ք.մ. մակերեսով բնակելի տան (կադաստրային ծածկագիրը՝ 02-023-0003-0016-001) նկատմամբ գրանցվել է Նորայր Սարգսյանի և Գայանե Խաչատրյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը **(հատոր 3-րդ, գ.թ. 27)**.

4) Նորայր Սարգսյանի և Գայանե Խաչատրյանի, որպես վաճառողների, և Թագուհի Ամիրյանի, որպես գնորդի, միջև 29.10.2019 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով վաճառողները վաճառել, իսկ գնորդը ձեռք է բերել ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Ափնագյուղ գյուղի 1-ին փողոցի 12-րդ հասցեում գտնվող անշարժ գույքը՝ բաղկացած 0,207 հա մակերեսով հողամասից (կադաստրային ծածկագիրը՝ 02-023-0003-0016) և 97,77 ք.մ. մակերեսով բնակելի տնից (կադաստրային ծածկագիրը՝ 02-023-0003-0016-001) **(հատոր 5-րդ, գ.թ. 40-42)**.

5) ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 06.05.2021 թվականի վճռով հայցը մերժվել է:

6) Վերաքննիչ դատարանը 25.11.2021 թվականի որոշմամբ Դատարանի 06.05.2021 թվականի վճիռը բեկանել և հաստատել է կողմերի հաշտության համաձայնությունը՝ հետևյալ բովանդակությամբ.

«(...) Սոնա Թոռնիկի Առաքելյանը, Արմենուհի Թոռնիկի Սարգսյանը և Մանյակ Թոռնիկի Առաքելյանը (այսուհետ Կողմ-1) մի կողմից, և Բուրաստան Հայկի Դավթյանը, Գևորգ Թոռնիկի Առաքելյանը և Գայանե Թոռնիկի Առաքելյանը (այսուհետ Կողմ 2) մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր), (...) կնքեցին սույն հաշտության համաձայնությունը հետևյալի մասին.

1. Թոռնիկ Թադևոսի Առաքելյանը մահացել է 29.05.2002թ.-ին (այսուհետ՝ Ժառանգատու):

2. Կողմ-1-ը հանդիսանում են ժառանգատուի երեխաները:

3. Ժառանգատուի մահից հետո ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի նոտար Ս. Հովհաննիսյանի կողմից 10.06.2011թ.-ին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տրվել Կողմ-2-ի անվամբ: Բացի վկայագրում նշված ժառանգներից առաջին հերթի ժառանգ են հանդիսանում նաև Կողմ-1-ը:

4. Կողմ-1-ը ժառանգատուի մահից հետո փաստացի տիրապետել են ժառանգական զանգվածի մեջ մտնող անշարժ գույքերը, կատարել վճարումներ, կրել գույքի պահպանման հոգսը:

5. Կնքելով սույն հաշտության համաձայնությունը, Կողմ-2-ը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Կողմ-1-ը Սոնա Թոռնիկի Առաքելյանը, Արմենուհի Թոռնիկի Սարգսյանը և Մանյակ Թոռնիկի Առաքելյանը ճանաչվեն 29.05.2002թ.-ին մահացած Թոռնիկ Թադևոսի Առաքելյանի ժառանգությունն ընդունած ժառանգ և այդ հիմքով որպես հետևանք մասնակի անվավեր ճանաչվի ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի նոտար Ս. Հովհաննիսյանի կողմից 10.06.2011թ.-ին Կողմ-2-ի Բուրաստան Հայկի Դավթյանի, Գևորգ Թոռնիկի Առաքելյանի և Գայանե Թոռնիկի Առաքելյանի անվամբ տրված (սեղանամատյանում գրանցում թիվ 484) ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա Բուրաստան Հայկի Դավթյանի, Գևորգ Թոռնիկի Առաքելյանի և Գայանե Թոռնիկի Առաքելյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և յուրաքանչյուր ժառանգ ճանաչվի ժառանգությունն ընդունած՝ հավասար բաժնեմասերով, յուրաքանչյուրը՝ 1/6 բաժնեմասով:

(...)

8. Սույն համաձայնագրի հիման վրա կայացվելիք դատական ակտից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման Բուրաստան Հայկի Դավթյան 1/6-րդ, Գևորգ Թոռնիկի Առաքելյան 1/6-րդ, Գայանե Թոռնիկի Առաքելյան 1/6-րդ, Սոնա Թոռնիկի Առաքելյան 1/6-րդ, Արմենուհի Թոռնիկի Սարգսյան 1/6-րդ, և Մանյակ Թոռնիկի Առաքելյան 1/6-րդ բաժնեմասերով» (...) **(հատոր 7-րդ, գ.թ. 53-56, հատոր 8-րդ, գ.թ. 113-116):**

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Սույն բողոքի քննության շրջանակում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հաշտության համաձայնությունը հաստատելու դատարանի լիազորության կիրառման պայմաններին՝ վերահասարակելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումները:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով (...) կողմերը կարող են վեճը լուծել հաշտության համաձայնությամբ, սկսել արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց կամ գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:

Տնօրինչականության սկզբունքը քաղաքացիական դատավարության հիմնաքարային սկզբունքներից է, որը յուրաքանչյուրի համար երաշխավորում է սեփական հայեցողությամբ իր նյութական և դատավարական իրավունքներն ու դրանց պաշտպանության եղանակները տնօրինելու հնարավորություն: Մասնավորապես, տնօրինչականության սկզբունքը կողմերին ընձեռում է իրենց հայեցողությամբ օրենքով նախատեսված որոշակի գործողություններ կատարելու կամ դրանց կատարումից հրաժարվելու ազատություն:

Տնօրինչականության սկզբունքն իր արտահայտումը գտել է դատարանի վարությամբ գտնվող վեճը դատավարության ցանկացած փուլում հաշտության համաձայնությամբ ավարտելու գործին մասնակցող անձանց վերապահված հնարավորությամբ: Ընդ որում՝ հաշտության համաձայնությունը գործին մասնակցող անձանց համատեղ կամահայտնության արդյունքն է, այսինքն՝ երկկողմանի փոխհամաձայնեցված տնօրինչական գործողությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ, որը ձևակերպվում է գրավոր, ստորագրում են գործին մասնակցող անձինք և ներկայացվում է դատարանի հաստատմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով դատական կարգով կնքված հաշտության համաձայնությանը, արձանագրել է, որ հաշտության համաձայնությունը կողմերի միջև փոխզիջման արդյունքում ձեռքբերված պայմանավորվածություն է, որը հաստատվում է դատարանի կողմից: Հաշտության համաձայնություն կնքելը տնօրինչական դատավարական գործողություն է, որի միջոցով կողմերը տնօրինում են ինչպես իրենց նյութական, այնպես էլ՝ դատավարական իրավունքները: Մասնավորապես, կնքելով նման համաձայնություն՝ կողմերը փոխադարձ պայմանավորվածությամբ որոշակի փոփոխության են ենթարկում վիճելի իրավահարաբերությունը՝ այդ իրավահարաբերության շրջանակներում ստանձնելով նոր պարտավորություններ կամ վիճելի իրավահարաբերությունը փոխարինելով մեկ այլ իրավահարաբերությամբ կամ ուղղակիորեն դադարեցնելով այն: Վերը նշվածում դրսևորվում է հաշտության համաձայնության նյութաիրավական (քաղաքացիաիրավական) կողմը: Հաշտության համաձայնությամբ կողմերը միաժամանակ տնօրինում են իրենց դատավարական իրավունքները, ինչի արդյունքում դատավարության հետագա ընթացքը գործի վարույթի կարճամաբ դադարում է: Նշվածում էլ դրսևորվում է հաշտության համաձայնության դատավարական կողմը: Ընդ որում, հաշտության համաձայնությունը հաստատող դատարանի վճիռն իր դատավարական նշանակությամբ և հետևանքներով հավասարեցված է գործն

ըստ էության լուծող վճռին, որի կամավոր չկատարումը հանգեցնում է դատական ակտի հարկադիր կատարման (իրեն «Յունիքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Հրաշք Ապագա» ՍՊԸ-ի թիվ ԼԳ/0039/04/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.07.2016 թվականի որոշումը):

Վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ հաշտության համաձայնությամբ գործին մասնակցող անձինք զիջումների միջոցով փոխադարձաբար ընդունելի պայմաններով նորովի որոշում են իրենց իրավունքներն ու պարտականությունները, և վեճը լուծելու պայմանները միմյանց հետ համաձայնեցնելով դադարեցնում են իրենց միջև ծագած դատական վեճը: Այդուհանդերձ դատական վեճը լուծելու նպատակով փոխադարձաբար ընդունելի պայմաններ սահմանելու տնօրինչականության գործողություն կատարելու ազատությունը սահմանափակված է օրինականության սկզբունքի պահպանման պահանջով: Այսպես.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե՝

1) այն հակասում է օրենքին կամ այլ իրավական ակտերին.

2) խախտում է այլ անձի իրավունքները կամ օրինական շահերը.

3) պարունակում է այնպիսի պայմաններ, որոնք թույլ չեն տալիս որոշակիորեն պարզել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք կողմը պարտավոր է կատարել.

4) պարունակում է այնպիսի պարտավորություններ, որոնց կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հաշտության համաձայնությունը դատարանի կողմից չհաստատվելու դեպքում գործի քննությունը շարունակվում է: Դատարանը հաշտության համաձայնությունը չհաստատելու դեպքում կայացնում է արձանագրային որոշում: Դատարանի կողմից չհաստատված հաշտության համաձայնությունը որևէ նյութաիրավական կամ դատավարական հետևանք չի առաջացնում:

Շարադրված իրավանորմերից բխում է, որ հաշտության համաձայնությունը գործին մասնակցող անձանց փոխհամաձայնեցված կամքն արտահայտելու հետ մեկտեղ չպետք է հակասի օրենքին կամ այլ իրավական ակտերին, չխախտի այլ անձի իրավունքները կամ օրինական շահերը, չպարունակի այնպիսի պայմաններ, որոնք թույլ չեն տալիս որոշակիորեն պարզել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք կողմը պարտավոր է կատարել, չպարունակի այնպիսի պարտավորություններ, որոնց կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ: Հետևաբար՝ հաշտության համաձայնությունը հաստատելու փուլում դատարանի վերահսկողության առարկան կազմում է հաշտության համաձայնությամբ օրինականության սկզբունքի պահանջները պահպանված լինելու հարցի պարզումը: Եթե հաշտության համաձայնության ուսումնասիրության արդյունքում դատարանը բացահայտում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասում ներառված պայմաններից որևէ մեկի առկայությունը, ապա չի հաստատում այն և գործի քննությունը շարունակվում է: Ուստի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասում ներառված պայմաններից մեկի առկայությունը հաշտության համաձայնության հաստատումը բացառող հանգամանք է:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տնօրինչական գործողություններն օրինականության սկզբունքի պահպանմամբ՝ դատարանի վերահսկողության

ներքո կատարելու անհրաժեշտությունն օրինականության սկզբունքի ապահովման նախադրյալն է: Այդ պատճառով յուրաքանչյուր դեպքում հաշտության համաձայնությունը հաստատելիս դատարանը պարտավոր է պարզել այդպիսի հաստատումը բացառող՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմանների բացակայությունը:

Հաշտության համաձայնությունը հաստատելիս օրինականության սկզբունքի ապահովումն ապահովելը կարևորվում է այն տեսանկյունից, որ դատական ակտը կարող է անբարենպաստ հետևանքներ ունենալ երրորդ անձանց քաղաքացիական հարաբերությունների վրա՝ անուղղակի առնչվելով նրանց որևէ իրավունքին կամ կողմերի միջև հաստատված հարաբերություններին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածով հաշտության համաձայնություն կնքելու իրավունք վերապահված է գործին մասնակցող անձանց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն՝ գործին մասնակցող անձինք են կողմերը, *երրորդ անձինք*, դիմողները և դիմումի քննության ելքով շահագրգռված այլ անձինք՝ նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված գործերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը տարբերակում է վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող և ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց: Երրորդ անձանց երկու տեսակների միջև սկզբունքային տարբերությունը կայանում է վեճի առարկայի նկատմամբ նրանց շահագրգռվածությամբ:

Առաջինի դեպքում գործի մեջ մտնելու հիմքը հարուցված վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջի առկայությունն է: Դրանից ելնելով՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք հարուցված քաղաքացիական գործի մեջ մտնում են սկզբնական հայցով հայցվորի և/կամ պատասխանողի դեմ հայցադիմում ներկայացնելու միջոցով և օգտվում են հայցվորի բոլոր իրավունքներից և կրում նրա բոլոր պարտականությունները՝ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով հայցվորը (դիմողը) իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու իր պահանջից, փոփոխելու հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը, պատասխանողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն ընդունելու հայցվորի պահանջը, *կողմերը կարող են վեճը լուծել հաշտության համաձայնությամբ*, սկսել արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց կամ գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:

Նշված նորմերից հետևում է, որ եթե վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք օգտվում են հայցվորի բոլոր իրավունքներից, ապա կարող են նաև վեճը լուծել հաշտության համաձայնությամբ:

Ի տարբերություն վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձանց՝ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք հայցվորի կամ պատասխանողի կողմից քաղաքացիական գործին մասնակցում են իրենց շահերը պաշտպանելու համար՝ նկատի ունենալով, որ դատական ակտը կարող է ազդել կողմերից մեկի նկատմամբ նրա իրավունքների կամ պարտականությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ



չներկայացնող երրորդ անձինք օգտվում են կողմի իրավունքներից և կրում են նրա պարտականությունները, **բացի** հակընդդեմ հայցադիմում ներկայացնելու, հայցապահանջի չափ ավելացնելու կամ նվազեցնելու, հայցի առարկան կամ հիմքը փոխելու, հայցապահանջներից հրաժարվելու, հայցապահանջներն ընդունելու, հայցի ապահովում պահանջելու, արբիտրաժային համաձայնություն կնքելու, **հաշտության համաձայնություն կնքելու**, դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու և արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց սկսելու իրավունքից:

Ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց մասով օրենսգիրքն ուղղակի բացառում է նրանց կողմից հաշտության համաձայնություն կնքելու հնարավորությունը: Այս պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հաշտության համաձայնության հաստատումը բացառող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմանների բացակայությունը պարզելու դատարանի պարտականությունն ուղղված է նաև ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի իրավունքների պաշտպանությանը:

Ճիշտ է, լինելով գործին մասնակցող անձ՝ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձն իրավունք չունի կնքել հաշտության համաձայնություն և ուղղակիորեն չի կարող ազդել դրա բովանդակության և պայմանների վրա, այդուհանդերձ պետք է պաշտպանված լինի այն ռիսկից, որ գործին մասնակցող անձինք կկնքեն իր իրավունքներն ու օրինական շահերը խախտող հաշտության համաձայնություն: Ներկայացված դեպքերում կարևորվում է դատարանի դերը՝ պարզել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմանների առկայությունը և չհաստատել հաշտության համաձայնությունը, եթե այն խախտում է այլ անձի, այդ թվում՝ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձի, իրավունքները կամ օրինական շահերը:

### ***Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարագրում***

Սույն գործով դիմելով դատարան՝ Սոնա Առաքելյանը, Արմենուհի Մարգարյանը և Մանյակ Մարգարյանը պահանջել են իրենց ճանաչել 29.05.2002 թվականին մահացած Թոռնիկ Առաքելյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ և այդ հիմքով որպես հետևանք անվավեր ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի նոտար Ս. Հովհաննիսյանի կողմից 10.06.2011 թվականին պատասխանողներ Բուրաստան Դավթյանի, Գևորգ Առաքելյանի և Գայանե Առաքելյանի անվամբ տրված (սեղանամատյանի գրանցում թիվ 484) ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը:

ՀՀ Արագածոտնի մարզի «ԱՊԱՐԱՆ» նոտարական տարածքի նոտար Սիրեկան Հովհաննիսյանի կողմից 10.06.2011 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրում նշվել է, որ ժառանգական գույքը բաղկացած է՝

«1. ՀՀ Արագածոտն մարզի, Ափնա գյուղում գտնվող 0.3135 (գրո ամբողջ երեք հազար հարյուր երեսունհինգ) հեկտար տնամերձ հողամասից, ծածկագիր՝ 0003-034, 376.4 (երեք հարյուր յոթանասունվեց ամբողջ չորս) ք.մ. մակերեսով բնակելի տնից, 70.12 (յոթանասուն ամբողջ տասներկու) ք.մ. մակերեսով գոմից, 24.87 (քսանչորս ամբողջ ութսույրոթ) ք.մ. մակերեսով հացատնից:

2. 0.207 (գրո ամբողջ երկու հարյուր յոթ) հեկտար տնամերձ հողամասից, ծածկագիր՝ 003-016, 118.8 (հարյուր տասնութ ամբողջ ութ) ք.մ. մակերեսով բնակելի տնից. (...):»:

Թիվ ԱՐԱԳ/0084/02/12 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Գայանե Խաչատրյանի և Նորայր Սարգսյանի ընդդեմ Բուրաստան Դավթյանի, Գևորգ Առաքելյանի և Գայանե Առաքելյանի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու և անհիմն հարստացման հետևանքով գույքը վերադարձնելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.04.2012 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչվել է հայցվորներ Գայանե Խաչատրյանի և Նորայր Սարգսյանի սեփականության իրավունքը ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա գյուղի 1-ին փողոցի 12 տուն հասցեում գտնվող 0,207 հա մակերեսով տնամերձ հողամասի և 97,77 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ, իսկ անհիմն հարստացման հետևանքով գույքը վերադարձնելուն պարտավորեցնելու պահանջի մասով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.06.2012 թվականի որոշմամբ Բուրաստան Դավթյանի, Գևորգ Առաքելյանի և Գայանե Առաքելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.04.2012 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 05.04.2013 թվականի որոշմամբ Գայանե Խաչատրյանի և Նորայր Սարգսյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 29.06.2012 թվականի որոշումը բեկանվել է և օրինական ուժ է տրվել ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 05.04.2012 թվականի վճիռին:

14.05.2013 թվականին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման թիվ 14052013-02-0036 վկայականի համաձայն՝ ՀՀ Արագածոտն մարզի Ափնագյուղ համայնքի 1-ին փողոցի 12-րդ հասցեում գտնվող 0,207 հա մակերեսով հողամասի (կադաստրային ծածկագիրը՝ 02-023-0003-0016) և 97,77 ք.մ. մակերեսով բնակելի տան (կադաստրային ծածկագիրը՝ 02-023-0003-0016-001) նկատմամբ գրանցվել է Նորայր Սարգսյանի և Գայանե Խաչատրյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:

Նշված փաստերից բխում է, որ Վկայագրում ներառված գույքերից՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա գյուղի 1-ին փողոցի 12 տուն հասցեում գտնվող Հողամասի և Բնակելի տան նկատմամբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչվել է Գայանե Խաչատրյանի և Նորայր Սարգսյանի սեփականության իրավունքը, որը 14.05.2013 թվականին ելթարկվել է պետական գրանցման:

Նորայր Սարգսյանի և Գայանե Խաչատրյանի, որպես վաճառողների, և Թագուհի Ամիրյանի, որպես գնորդի, միջև 29.10.2019 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով վաճառողները վաճառել, իսկ գնորդը ձեռք է բերել ՀՀ Արագածոտն մարզի Ապարան համայնքի Ափնագյուղ գյուղի 1-ին փողոցի 12-րդ հասցեում գտնվող անշարժ գույքը՝ բաղկացած 0,207 հա մակերեսով հողամասից (կադաստրային ծածկագիրը՝ 02-023-0003-0016) և 97,77 ք.մ. մակերեսով բնակելի տնից (կադաստրային ծածկագիրը՝ 02-023-0003-0016-001):

Գործի քննության ընթացքում նշված պայմանագիրը ներկայացվել է Դատարանին, որի հաշվառմամբ Դատարանը 14.12.2020 թվականի որոշմամբ նշված պայմանագրով գնորդին՝ Թագուհի Ամիրյանին, ներգրավվել է որպես սույն քաղաքացիական գործով վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ:

Դատարանի 06.05.2021 թվականի վճռով հայցը մերժվել է: Վերաքննիչ դատարանը 25.11.2021 թվականի որոշմամբ Դատարանի 06.05.2021 թվականի վճիռը բեկանել և հաստատել է կողմերի հաշտության համաձայնությունը՝ հետևյալ բովանդակությամբ.

«(...) Սոնա Թոռնիկի Առաքելյանը, Արմենուհի Թոռնիկի Սարգսյանը և Մանյակ Թոռնիկի Առաքելյանը (այսուհետ Կողմ-1) մի կողմից, և Բուրաստան Հայկի Դավթյանը, Գևորգ Թոռնիկի Առաքելյանը և Գայանե Թոռնիկի Առաքելյանը (այսուհետ Կողմ 2) մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր), (...) կնքեցին սույն հաշտության համաձայնությունը հետևյալի մասին.

1. Թոռնիկ Թադևոսի Առաքելյանը մահացել է 29.05.2002թ.-ին (այսուհետ՝ Ժառանգատու):

2. Կողմ-1-ը հանդիսանում են ժառանգատուի երեխանները:

3. Ժառանգատուի մահից հետո ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի նոտար Ս. Հովհաննիսյանի կողմից 10.06.2011թ.-ին ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր է տրվել Կողմ-2-ի անվամբ: Բացի վկայագրում նշված ժառանգներից առաջին հերթի ժառանգ են հանդիսանում նաև Կողմ-1-ը:

4. Կողմ-1-ը ժառանգատուի մահից հետո փաստացի տիրապետել են ժառանգական զանգվածի մեջ մտնող անշարժ գույքերը, կատարել վճարումներ, կրել գույքի պահպանման հոգսը:

5. Կնքելով սույն հաշտության համաձայնությունը, Կողմ-2-ը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Կողմ-1-ը Սոնա Թոռնիկի Առաքելյանը, Արմենուհի Թոռնիկի Սարգսյանը և Մանյակ Թոռնիկի Առաքելյանը ճանաչվեն 29.05.2002թ.-ին մահացած Թոռնիկ Թադևոսի Առաքելյանի ժառանգությունն ընդունած ժառանգ և այդ հիմքով որպես հետևանք մասնակի անվավեր ճանաչվի ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի նոտար Ս. Հովհաննիսյանի կողմից 10.06.2011թ.-ին Կողմ-2-ի Բուրաստան Հայկի Դավթյանի, Գևորգ Թոռնիկի Առաքելյանի և Գայանե Թոռնիկի Առաքելյանի անվամբ տրված (սեղանամատյանում գրանցում թիվ 484) ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, դրա հիման վրա Բուրաստան Հայկի Դավթյանի, Գևորգ Թոռնիկի Առաքելյանի և Գայանե Թոռնիկի Առաքելյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և յուրաքանչյուր ժառանգ ճանաչվի ժառանգությունն ընդունած՝ հավասար բաժնետնասերով, յուրաքանչյուրը՝ 1/6 բաժնետնասով: (...)

8. Սույն համաձայնագրի հիման վրա կայացվելիք դատական ակտից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման Բուրաստան Հայկի Դավթյան 1/6-րդ, Գևորգ Թոռնիկի Առաքելյան 1/6-րդ, Գայանե Թոռնիկի Առաքելյան 1/6-րդ, Սոնա Թոռնիկի Առաքելյան 1/6-րդ, Արմենուհի Թոռնիկի Սարգսյան 1/6-րդ, և Մանյակ Թոռնիկի Առաքելյան 1/6-րդ բաժնետնասերով»:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հաստատել է սույն գործով հայցվորների և պատասխանողների միջև կնքված հաշտության համաձայնությունն այն դեպքում, երբ այն պարունակել է դրույթներ մի գույքի և դրա իրավական ճակատագրի վերաբերյալ, որը սեփականության իրավունքով պատկանել է սույն քաղաքացիական գործով վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Թագուհի Ամիրյանին:

Մասնավորապես, հայցվորներ Սոնա Առաքելյանը, Արմենուհի Սարգսյանը, Մանյակ Առաքելյանը մի կողմից և պատասխանողներ Բուրաստան Դավթյանը, Գևորգ Առաքելյանը և Գայանե Առաքելյանը մյուս կողմից հաշտության են եկել առ այն, որ պատասխանողները ճանաչվեն 29.05.2002 թվականին մահացած Թոռնիկ Առաքելյանի ժառանգությունն ընդունած ժառանգներ, որպես հետևանք

մասնակի անվավեր ճանաչվեն Վկայագիրը, պատասխանողների անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, և յուրաքանչյուր ժառանգ ճանաչվի ժառանգությունն ընդունած՝ հավասար բաժնեմասերով, յուրաքանչյուրը՝ 1/6 բաժնեմասով: Նույն համաձայնությամբ սահմանվել է, որ դատական ակտից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման յուրաքանչյուր ժառանգի համար 1/6-րդ բաժնեմասով:

Հաստատելով հաշտության համաձայնությունը՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Վկայագրում ներառված՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա գյուղի 1-ին փողոցի 12 տուն հասցեում գտնվող 0,207 հա մակերեսով տնամերձ հողամասի և 97,77 քմ մակերեսով բնակելի տան սեփականատերը սույն քաղաքացիական գործով վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ Թագուհի Ամիրյանն է, ուստի հայցվորներն ու պատասխանողներն իրավասու չէին հաշտության համաձայնության առարկա դարձնել այդ գույքերն ու փոխադարձաբար որոշել դրա իրավական ճակատագիրը:

Հետևաբար՝ նշված հաշտության համաձայնությունը խախտում է երրորդ անձ Թագուհի Ամիրյանի՝ որպես ՀՀ Արագածոտնի մարզի Ափնա գյուղի 1-ին փողոցի 12 տուն հասցեում գտնվող 0,207 հա մակերեսով տնամերձ հողամասի և 97,77 քմ մակերեսով բնակելի տան սեփականատիրոջ իրավունքները, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի հիմքով Վերաքննիչ դատարանի կողմից չպետք է հաստատվեր:

*Վերոգրյալ պարճատարանությամբ միաժամանակ հերքվում են վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները:*

Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի խախտում թույլ տրված լինելու մասին վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները և վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի 25.11.2021 թվականի որոշումը բեկանելու համար:

Հաշտության համաձայնությունը հաստատելու պայմաններում Վերաքննիչ դատարանը չի իրականացրել Սոնա Առաքելյանի, Արմենուհի և Մանյակ Սարգսյանների վերաքննիչ բողոքի քննություն, ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետք է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով վերապահված լիազորությունը՝ բեկանել Վերաքննիչ դատարանի 25.11.2021 թվականի որոշումը և Սոնա Առաքելյանի, Արմենուհի և Մանյակ Սարգսյանների վերաքննիչ բողոքն ըստ էության քննելու նպատակով գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

##### **5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոններին համապատասխան:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկված դատական ակտը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտով գործին մասնակցող անձանց միջև վերաբաշխում է դատական ծախսերը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլխի կանոնների համաձայն:

Նկատի ունենալով, որ վերաքննիչ բողոքի քննությունն իրականացնելու նպատակով գործն ուղարկվում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան նոր քննության՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործի քննության այս փուլում հնարավոր չէ անդրադառնալ դատական ծախսերի բաշխման հարցին: Դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.11.2021 թվականի որոշումն ու գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/30092/02/20 2023թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԴ/30092/02/20
Նախագահող դատավոր՝	Ա. Կուրեխյան
Դատավորներ՝	Ա. Մխիթարյան Ս. Գրիգորյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող և զեկուցող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ  
Ս. ՄԵՂՐՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Է. ՍԵՂՐԱԿՅԱՆ

2023 թվականի նոյեմբերի 24-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ Հասմիկ Պապյանի հայցի ընդդեմ Հրանտ Պապյանի՝ առոչինչ գործարքների անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.05.2022 թվականի որոշման դեմ Հրանտ Պապյանի վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Բ Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Հասմիկ Պապյանը պահանջել է 18.07.2009 թվականին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատուոյաց փողոցի 17-րդ շենքի թիվ 91 և 15.12.2019 թվականին Երևանի Հերացու փողոցի 10-րդ շենքի թիվ 44 հասցեներում գտնվող գույքի վերաբերյալ կնքված շինծու առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝ անվավեր ճանաչել Հրանտ Պապյանի անվամբ տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականները:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 28.10.2021 թվականի վճռով հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է, և հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.05.2022 թվականի որոշմամբ Հասմիկ Պաայանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 28.10.2021 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է սոր քննության:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Հրանտ Պաայանը (ներկայացուցիչ Արամազդ Կիվիրյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հասմիկ Պաայանը (ներկայացուցիչ Արմեն Պողոսյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգրքը ՀՀ սահմանադրական օրենքի 6-րդ, 8-րդ ու 9-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-9-րդ, 12-րդ, 168-րդ, 170-րդ և 380-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով:*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցի հիմքի և առարկայի փոփոխություն կատարելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է այն փուլում, երբ Դատարանն արդեն 22.02.2021 թվականին կայացրել էր «Հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդության ապացուցման պարտականությունը բաշխելու մասին» որոշում, իսկ այդ փուլում օրենսդիրն արգելում է հայցի հիմքի ու առարկայի փոփոխություն կատարելը: Հայցվորի կողմից հայցի հիմքը և առարկան փոփոխելու միջնորդություն ներկայացնելը հետապնդել է բացառապես հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը քննարկման առարկա չդարձնելու նպատակ: Հայցվորը զրկված չի եղել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը հայցի հիմքի և առարկայի փոփոխության վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվորի կողմից ներկայացված միջնորդությունները դատարանի քննարկման առարկա չէին կարող հանդիսանալ ոչ միայն առաջնահերթության առումով, այլ նաև միջնորդության ժամկետը բաց թողնելու տեսանկյունից:

Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշմամբ խախտվել է նաև անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, և Վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումը բավարար կերպով պատճառաբանված ու հիմնավորված չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.05.2022 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 28.10.2021 թվականի վճիռն:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է, քանի որ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով և 170-րդ հոդվածի 1-ին մասով, մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը՝ 07.10.2021 թվականին դատարան է

ներկայացվել հայցի հիմքի ու առարկայի փոփոխություն թույլատրելու մասին միջնորդություն:

Տվյալ դեպքում գործ ունենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված սկզբունքի հետ, որի դեպքում հակասությունը պետք է լուծվի հօգուտ սկզբունքի:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) Հասմիկ Պապյանը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Հրանտ Պապյանի՝ պահանջելով 18.07.2009 թվականին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Բազրատունյաց փողոցի 17-րդ շենքի թիվ 91 և 15.12.2019 թվականին Երևանի Հերացու փողոցի 10-րդ շենքի թիվ 44 հասցեներում գտնվող գույքի վերաբերյալ կնքված շինծու առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝ անվավեր ճանաչել Հրանտ Պապյանի անվամբ տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականները:

Դատարանի 23.10.2020 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ **(հատոր 1-ին, գ.թ. 2-9, 21, 22)**.

2) Դատարանը 11.01.2021 թվականին որոշում է կայացրել 22.02.2021 թվականին նախնական դատական նիստ նշանակելու մասին **(հատոր 1-ին, գ.թ. 39, 40)**.

3) պատասխանող Հրանտ Պապյանի ներկայացուցիչը 19.02.2021 թվականին ներկայացրել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն **(հատոր 1-ին, գ.թ. 78, 79)**.

4) Դատարանը 22.02.2021 թվականին որոշում է կայացրել գործին մասնակցող անձանց միջև միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին **(հատոր 1-ին, գ.թ. 83-86)**.

5) 22.02.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստը հետաձգվել է, և հաջորդ նախնական դատական նիստը նշանակվել է 15.06.2021 թվականին, իսկ 15.06.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստը հետաձգվել է, ու հաջորդ նախնական դատական նիստը նշանակվել է 07.10.2021 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 81, 82, 93-95)**.

6) Հասմիկ Պապյանը 07.10.2021 թվականին Դատարան է ներկայացրել հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն՝ պահանջելով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Բազրատունյաց պողոտայի 17-րդ շենքի թիվ 91 և Երևանի Մ. Հերացու փողոցի 10-րդ շենքի թիվ 44 հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ՝ դրանց նկատմամբ դադարեցնելով Հրանտ Պապյանի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 98-103)**.

7) 07.10.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստում Դատարանը որոշում է կայացրել հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը «առկախելու» մասին, քանի դեռ չի անդրադարձել հայցային վաղեմություն կիրառելու մասին պատասխանող Հրանտ Պապյանի միջնորդությանը, ու որոշել է այդ փուլում չքննարկել հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը:

Դատարանը, քննարկելով հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը, գործի քննությունը հայտարարել է ավարտված՝ հայտարարելով, որ



դատական ակտը կիրառարակվի 28.10.2021 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 108-111**).

8) Դատարանը 28.10.2021 թվականին վճիռ է կայացրել հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու և հայցը մերժելու մասին (**հատոր 1-ին, գ.թ. 113-123**):

#### **4. Վճուրբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճուրբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճուրբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ, 168-րդ և 170-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճուրբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննության իրավական հնարավորության հարցին, այն դեպքում, երբ դրանից հետո ներկայացվել է հայցի ստարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն:*

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմելու դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև գործին մասնակցող բոլոր անձանց հավասարության սկզբունքի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցադիմումի կամ դիմումի հիման վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձն իրականացնում է իր դատավարական իրավունքները, տնօրինում է դատական պաշտպանության միջոցները և եղանակները սեփական հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով հայցվորը (դիմողը) իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու իր պահանջից, փոփոխելու հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը, պատասխանողն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն ընդունելու հայցվորի պահանջը, կողմերը կարող են վեճը լուծել հաշտության համաձայնությամբ, սկսել արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց կամ գործը հանձնել արբիտրաժի լուծմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործին մասնակցող անձանց մրցակցության հիման վրա, բացառությամբ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարության մասնակիցները պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից «արդարացի լուծման» հասկացության մեկնաբանությունների արդյունքում ձևավորվել է նախադեպային դիրքորոշում այն մասին, որ լուծման արդարացիության տարրերից են դատավարության կողմերի հավասարությունը և մրցակցային դատավարությունը, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ: Եվրոպական դատարանը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջը համարելով դատավարության մրցակցության ու հավասարության սկզբունքներ, հետևողականորեն իր վճիռներում բացահայտել է նաև այդ սկզբունքների բովանդակությունը, որի համաձայն՝ «կողմերի հավասարությունը» նշանակում է, որ դատավարության յուրաքանչյուր կողմին պետք է ընձեռվի պատշաճ հնարավորություն ներկայացնելու իր գործը, ներառյալ՝ ապացույցները, այնպիսի պայմաններում, որոնք նրա համար մյուս կողմի համեմատությամբ չեն ստեղծի անբարենպաստ վիճակ (*լրեն Դոմբո Բեհիրն ընդդեմ Նիդեռլանդների գործով Եվրոպական դատարանի 17.10.1993 թվականի վճիռը, § 30-35*):

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է նաև այն դիրքորոշումը, որ Պայմանավորվող պետությունները ոչ միայն պետք է ամրագրեն քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, այլև կոնկրետ գործով պետք է ապահովեն անձի կողմից այդ իրավունքի իրականացման իրական հնարավորությունը (*լրեն Կոլոցցան ընդդեմ Իսրայիլի գործով Եվրոպական դատարանի 12.02.1985 թվականի որոշումը, կետ 28*):

Եվրոպական դատարանը միաժամանակ ընդգծել է, որ դատարանի առջև հավասարության և մրցակցության սկզբունքները սերտորեն փոխկապված են, ու միայն դատարանի առջև հավասարության սկզբունքի իրացման պայմաններում է հնարավոր ապահովել մրցակցության սկզբունքի լիարժեք իրացումը: Քաղաքացիական դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև արդարացի հավասարակշռության իմաստով, հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքնության հիմնական տարրերից մեկը ու պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույց ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ

վիճակում (յրեն Անկերյը ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի որոշումը, կեր 38-րդ, ինչպես նաև Դունթո Բեեեր Բ. Վ. ընդդեմ Նիդերլանդների գործով Եվրոպական դատարանի 07.10.1993 թվականի որոշումը, կեր 66):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ մրցակցային դատավարության պայմաններում դատարանը, որպես արդարադատություն իրականացնող մարմին, որոշակի դատավարական գործողությունների կատարմանը ձեռնամուխ է լինում միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը հայցում է համապատասխան գործողության կատարումը: Այսինքն, կողմերի իրավահավասարության և մրցակցության սկզբունքներով պայմանավորված՝ դատարանը հանդես է գալիս որպես միայն վեճը լուծող մարմին և կաշկանդված է որոշակի դատավարական գործողություններ սեփական հայեցողությամբ իրականացնելու արգելքով: Մասնավորապես՝ դատարանի կողմից դատավարական որոշակի գործողությունների կատարման համար անհրաժեշտ է, որպեսզի շահագրգիռ անձը գրավոր, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև բանավոր, հայցի համապատասխան գործողության կատարումը: Հետևաբար, համապատասխան միջնորդության առկայությունն այն նախապայմանն է, որը վկայում է շահագրգիռ անձի կողմից համապատասխան գործողության հայցման մասին, ինչն էլ դատարանի կողմից պետք է ենթակա լինի քննության: Մյուս կողմից, քաղաքացիադատավարական հարաբերությունները ծավալվում և գործառնում են տնօրինչականության սկզբունքի շրջանակներում: Քաղաքացիադատավարական այս սկզբունքի բովանդակությունը ներառում է այն դատավարական իրավունքները, որոնք թույլ են տալիս կանխորոշել դատական պաշտպանության առարկան և ազդել դատավարության ուղղվածության և ընթացքի վրա (յրեն «Յունիբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Յուրիկ Սուպելյանի և Միխայիլ Վարդիկյանի թիվ ԱՐԱԴ/1440/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.01.2016 թվականի որոշումը):

Նախկինում կայացված մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքներն ու դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմել, թե չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնել, թե չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով (յրեն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն ընդդեմ «Գորիս-Ապակի» ՍՊԸ-ի թիվ ՄԴ3/0055/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը հարուցվում է նույն օրենսգրքով սահմանված կարգով հայցադիմում ներկայացնելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հայցադիմումում պարտադիր նշվում են այն փաստերը, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները:

Նույն հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հայցադիմումում

պարտադիր նշվում են պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը (պահանջները), իսկ մի քանի պատասխանողների դեմ հայցադիմում ներկայացնելիս հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջը (պահանջները), եթե այն համիրավ չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է հայցի առարկան, հայցի փաստական և իրավական հիմքերը:

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է վիճելի իրավահարաբերության բնույթը, այդ թվում՝ կիրառելի իրավական նորմերը՝ չսահմանափակվելով գործին մասնակցող անձանց մատնանշած իրավական նորմերով:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է՝ հայցվորը պնդում է արդյոք իր պահանջները, պատասխանողն արդյոք ամբողջությամբ կամ մասնակի ընդունում է հայցվորի պահանջները, և գործին մասնակցող անձինք չեն ցանկանում արդյոք կնքել հաշտության համաձայնություն կամ վեճը լուծել հաշտարարության միջոցով՝ պարզաբանելով հաշտարարության էությունը:

Նույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում քննում է գործի արդյունավետ քննությանն ուղղված՝ գործին մասնակցող անձանց այլ միջնորդությունները, ինչպես նաև իրականացնում է նույն օրենսգրքով նախատեսված՝ գործի արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը կարող է վկայակոչել հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հիմնավորում է տվյալ փաստը մինչ այդ վկայակոչելու անհնարինությունն իրենից անկախ պատճառներով: Այդ դեպքում հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը կարող է վկայակոչվել ոչ ուշ, քան մինչև առաջին ատյանի դատարանում դատաքննության ավարտը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացված լինելու դեպքում դատարանը նույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերում նշված դատավարական գործողությունները կատարելուց հետո հայցային վաղեմություն կիրառելու դիմումի և դրա դեմ բերված առարկությունների հիման վրա արձանագրային որոշմամբ՝

1) որոշում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը:

2) գործին մասնակցող անձանց միջև բաշխում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը:

3) գործին մասնակցող անձանց հետ քննարկում է նրանց կողմից ապացույցներ ներկայացնելու համար ժամկետ տրամադրելու հարցը և անհրաժեշտության դեպքում սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետը:

4) իրականացնում է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո դատարանը, հաշվի առնելով

գործին մասնակցող անձանց կարծիքը, որոշում է հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը տվյալ կամ հաջորդ դատական նիստում քննելու հարցը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն կիրառելու միջնորդության և դրա դեմ բերված առարկությունները քննարկելուց հետո դատարանը գործի քննությունը հայտարարում է ավարտված և հրապարակում է դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-9-րդ կետերով նախատեսված հարցերը քննարկելուց հետո առաջին ատյանի դատարանը կայացնում է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց ներկայությամբ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու դեպքում դատարանն անհրաժեշտության դեպքում իրականացնում է նույն օրենսգրքի 167-րդ հոդվածով նախատեսված դատավարական գործողությունները:

ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում, ի թիվս հայցի և առարկությունների փաստական ու իրավական հիմքերի, պարզում է վիճելի իրավահարաբերության բնույթը, այդ թվում՝ կիրառելի իրավական նորմերը՝ չսահմանափակելով գործին մասնակցող անձանց մատնանշած իրավական նորմերով և գործին մասնակցող անձանց հետ քննարկում է ապացուցման պարտականությունը նրանց միջև բաշխելու հարցը, ինչպես նաև քննարկում ու լուծում է ներկայացված ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցը: Միայն նշված գործողությունները կատարելուց հետո է դատարանը կայացնում ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում: Նման իրավակարգավորման նպատակն այն է,

որպեսզի ապացուցման պարտականությունը բաշխվի ճիշտ՝ կիրառելի իրավական նորմերին համապատասխան՝ վերը նշված հարցերը նախապես քննարկելով գործին մասնակցող անձանց հետ: Մասնավորապես, կիրառելի իրավական նորմերը որոշելիս կողմերի հետ այդ հարցի քննարկման պահանջն ինքնանպատակ չէ, այն կոչված է ապահովելու գործին մասնակցող անձանց դիրքորոշումների ճշտումը, ապացուցման գործընթացում նրանց պարտականությունների հատկեցումը (*տե՛ս «Հիմնարար հետազոտությունների կենտրոն» ՓԲԸ-ն ընդդեմ «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/4497/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2021 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, տնօրինչականության սկզբունքի ներքո անդրադառնալով հայցվորի՝ հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխելու, այն լրացնելու, հայցից մասնակիորեն կամ ամբողջությամբ հրաժարվելու իրավունքին, արձանագրել է, որ յուրաքանչյուր դեպքում հայցվորը, ելնելով քաղաքացիական դատավարությունում գործող տնօրինչականության սկզբունքից, ինքն է որոշում ինչպես հայցի առարկան ու հիմքերը (իրավական և փաստական), այնպես էլ որոշում է կայացնում հետագայում իր պահանջից ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվելու, կամ փոփոխելու ու (կամ) լրացնելու հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը: Այսինքն՝ հայցի առարկան և (կամ) հիմքը փոփոխելու, այն լրացնելու, հայցից մասնակիորեն կամ ամբողջությամբ հրաժարվելու հայեցողական իրավունքով օժտված է բացառապես հայցվորը (*տե՛ս «ՎԱՄՄ» ՍՊԸ-ն ընդդեմ Արսեն Գևորգյանի թիվ ԵԿԴ/2456/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.07.2021 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շահագրգիռ անձը, իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս դատավարական օրենքով նախատեսված որևէ միջնորդություն հարուցելով, ակնկալում է իր կողմից բարձրացված հարցի որոշակի լուծում՝ դատարանի կողմից համապատասխան որոշման կայացման ձևով: Այսինքն՝ դատավարության մասնակցի միջնորդություն հարուցելու իրավունքին համապատասխանում է տվյալ հարցով որոշում կայացնելու դատարանի պարտականությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ դատարանի որոշմանը ներկայացվող պարտադիր պահանջ է քննարկվող հարցի վերաբերյալ համապատասխան եզրահանգումը, հետևաբար այդպիսի եզրահանգման բացակայության պայմաններում բացակայում է նաև դատարանի որոշումը, ինչի արդյունքում խախտվում է անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը (*տե՛ս «Ռեքվիզիտ» ՍՊԸ-ն ընդդեմ «Մեզարոն» ՍՊԸ-ի թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 11.03.2015 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցային վաղեմության ժամկետի լրանալու հարցը քննարկելիս դատարանը նախ և առաջ պարզում է հարցն առ այն, թե հայցային վաղեմության ինչպիսի ժամկետներ են կիրառելի տվյալ դեպքում: Մասնավորապես, առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջի քննության դեպքում, եթե գործին մասնակցող անձը դատարանին խնդրել է կիրառել հայցային վաղեմություն, դատարանը պետք է պարզի, թե ինչ տեսակի պայմանագրի անվավերության հետևանքներ են տվյալ գործով քննարկվում, ինչ բնույթի հարաբերություններ են կարգավորվում դրանով, և արդյո՞ք տվյալ տեսակի պայմանագրին ներկայացված են այնպիսի պահանջներ, որոնք չպահպանելը հանգեցնում է առոչնչության: Միայն այդ հանգամանքները պարզելուց հետո կարող է դատարանը հետևություն անել այն մասին, թե տվյալ գործարքի նկատմամբ հայցային վաղեմության

ինչպիսի ժամկետներ են կիրառելի՝ ընդհանուր, թե հատուկ, և հայցային վաղեմության համապատասխան ժամկետի խախտում տեղի ունեցել է, թե՛ ոչ (*լրեն Հրաչյա Գրիգորյանն ընդդեմ Գեորգի Բաղդասարյանի թիվ ԵԱԴԴ/3423/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.12.2020 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, ի ապահովումն տնօրինչականության սկզբունքի, հայցվորին իրավունք է վերապահել նաև փոփոխելու հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը, իսկ պատասխանողին՝ նաև ամբողջությամբ կամ մասնակիորեն ընդունելու հայցվորի պահանջը, վկայակոչելու հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը: Ընդ որում, օրենսդիրը վերը նշված դատավարական գործողությունների կատարման համար սահմանել է համապատասխան ժամկետներ, այն է՝ հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ գրավոր միջնորդությունը կարող է ներկայացվել, իսկ հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը կարող է վկայակոչվել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, բացառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը որոշակի ընթացակարգ է նախատեսել հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը քննության առնելու կարգի առումով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանելով, որ այդ միջնորդությունը, ըստ էության, պետք է քննվի նույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերում նշված դատավարական գործողությունները կատարելուց հետո, որպիսի դատավարական գործողություններից են դատարանի կողմից նախնական դատական նիստի ընթացքում հայցի առարկան, դրա փաստական և իրավական հիմքերը պարզելը, ինչպես նաև պարզելը՝ արդյո՞ք հայցվորը պնդում է իր պահանջները:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ վերը նշված իրավական կարգավորումները բավարար հիմք են հանդիսանում հետևություն անելու այն մասին, որ եթե առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետում ներկայացված և՛ հայցի հիմքի ու (կամ) առարկայի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխություն թույլատրելու միջնորդություն, և՛ հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդություն, ապա դատարանները բոլոր դեպքերում նախ պետք է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով լուծեն հայցի հիմքի ու (կամ) առարկայի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխություն թույլատրելու հարցը՝ ապահովելով հայցվորի տնօրինչականության սկզբունքի իրագործումը, և հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո նոր միայն լուծեն հայցային վաղեմություն կիրառելու մասին հարցը, եթե վերը նշված փոփոխությունը թույլատրելուց հետո ևս պատասխանողը պնդի այդ միջնորդությունը: Ընդ որում, տվյալ դեպքում էական չէ, թե վերը նշված միջնորդություններից ժամանակագրական առումով որն է ներկայացվել ավելի վաղ: Ավելին՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասում նշված դատավարական գործողությունների ցանկի բովանդակությունից ևս բխում է, որ մինչ հայցային վաղեմություն կիրառելու մասին հարցը լուծելը նախ անհրաժեշտ է վերջնականապես պարզել հայցի հիմքն ու առարկան, առանց որի անհնարին կլինի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասում նշված դատավարական գործողությունների իրականացումը:

### **Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հասմիկ Պապյանը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Հրանտ Պապյանի՝ պահանջելով 18.07.2009 թվականին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց փողոցի 17-րդ շենքի թիվ 91 և 15.12.2019 թվականին Երևանի Հերացու փողոցի 10-րդ շենքի թիվ 44 հասցեններում գտնվող գույքի վերաբերյալ կնքված շինծու առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝ անվավեր ճանաչել Հրանտ Պապյանի անվամբ տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականները: Դատարանի 23.10.2020 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանը 11.01.2021 թվականին որոշում է կայացրել 22.02.2021 թվականին նախնական դատական նիստ նշանակելու մասին:

Մինչ նշանակված նախնական դատական նիստը՝ 19.02.2021 թվականին, պատասխանող Հրանտ Պապյանի ներկայացուցիչը ներկայացրել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն: Դատարանը 22.02.2021 թվականին որոշում է կայացրել գործին մասնակցող անձանց միջև միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին, և 22.02.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստը հետաձգել է, ու հաջորդ նախնական դատական նիստը նշանակել է 15.06.2021 թվականին: 15.06.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստը ևս հետաձգվել է, և հաջորդ նախնական դատական նիստը նշանակվել է 07.10.2021 թվականին:

Հասմիկ Պապյանը 07.10.2021 թվականին Դատարան է ներկայացրել հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն՝ պահանջելով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Բագրատունյաց պողոտայի 17-րդ շենքի թիվ 91 և Երևանի Ս. Հերացու փողոցի 10-րդ շենքի թիվ 44 հասցեններում գտնվող անշարժ գույքի նկատմամբ՝ դրանց նկատմամբ դադարեցնելով Հրանտ Պապյանի սեփականության իրավունքը: 07.10.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստում Դատարանը որոշում է կայացրել հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը «առկախելու» մասին՝ պատճառաբանելով, որ դեռ չի անդրադարձել հայցային վաղեմություն կիրառելու մասին պատասխանող Հրանտ Պապյանի միջնորդությանը, ու որոշել է այդ փուլում չքննարկել հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը:

Դատարանը, քննարկելով հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը, գործի քննությունը հայտարարել է ավարտված՝ հայտարարելով, որ դատական ակտը կիրառարակվի 28.10.2021 թվականին:

Դատարանը 28.10.2021 թվականին վճիռ է կայացրել հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու և հայցը մերժելու մասին:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ

- «*հայցի հիմքն ու առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելն այն դատարարական գործողությունն է, որի միջոցով հայցվորն իրացնում է իրեն վերապահված մեկ այլ իրավունք, դիմելով դատարանին՝ գործի քննությունը սկզբնապես ներկայացված հայցի հիմքից և (կամ) առարկայից տարբերվող այլ հիմքի և (կամ) առարկայի շրջանակներում շարունակելու համար: Նշվածից հետևում է, նաև, որ դատարանը պարտավոր է հայցը քննել դրանով ներկայացված*



հիմքերի և առարկայի շրջանակներում, հետևաբար որոշակիորեն կաշկանդված է նաև հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու արդյունքում փոփոխված հայցի շրջանակներով, հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվել է հայցի հիմքի և առարկայի փոփոխության վերաբերյալ միջնորդություն, դատարանն անկախ միջնորդությունների ներկայացման հաջորդականությունից, նախևառաջ պետք է քննության առարկա դարձնի հենց այդ միջնորդությունը, քանի որ դրա լուծումն է կանխորոշում, թե որ հիմքերի և առարկայի շրջանակներում է շարունակվելու գործի քննությունը»,

- «հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունն ավելի վաղ ներկայացված լինելն ինքնին չէր կարող խոչընդոտ համդիսանալ հայցի հիմքն ու առարկան փոփոխելու միջնորդությունը քննության առնելու համար, հետևաբար, դատարանի կողմից այդ միջնորդությունը չքննարկելը, կամ դրա քննարկումը հայցային վաղեմություն կիրառելու միջնորդության քննարկման արդյունքից կախման մեջ դնելն իրավաչափ չէ և ուղղակիորեն հանգեցրել է փնտրինչականության սկզբունքի խախտմանը»,

եզրահանգել է, որ «քննարկելով և չլուծելով հայցի հիմքն ու առարկան փոփոխելու մասին հայցվորի միջնորդությունը և մինչ այդ քննության առնելով հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը, դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ և 170-րդ հոդվածները և կիրառել է նույն օրենսգրքի 168-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, թույլ տալով դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծման, հետևաբար վերաքննիչ բողոքը հիմնավորված է ենթակա է քակարարման»:

Հիմք ընդունելով վերոշարադրյալ իրավական վերլուծությունները և սույն գործի փաստերը՝ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումները հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Դատարանը, արձանագրային որոշում կայացնելով վերը նշված պատճառաբանությամբ հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ գրավոր միջնորդության քննարկումն «առկախելու մասին», խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի պահանջը, քանի որ կայացրել է նշված նորմի բովանդակությունից չբխող որոշում, այնքանով, որ քանով օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով նման տեսակի որոշում կայացնելու լիազորություն դատարաններին չի վերապահել:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանի եզրահանգումները բխում են նաև վերը նշված նորմատիվ իրավական ակտերի, կոնվենցիոն նորմերի և Վճռաբեկ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումների բովանդակությունից, քանի որ Վճռաբեկ դատարանն իր հերթին արձանագրում է, որ Դատարանը, չքննարկելով ու չլուծելով հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում հայցվորի ներկայացրած գրավոր միջնորդությունն ու առաջնահերթություն տալով ժամանակագրական առումով մինչ այդ ներկայացված հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությանը, խախտել է հայցվորի տնօրինչականության սկզբունքը՝ անտեսելով ինչպես այն հանգամանքը, որ հայցվորը գործել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված տնօրինչականության սկզբունքի շրջանակներում ու այդ նպատակով ցանկացել է իրացնել իր դատավարական իրավունքները, այնպես էլ՝ օրենսդրի կողմից սահմանված հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը քննության առնելու վերը նշված ընթացակարգը:

Անփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող եզրափակիչ դատական ակտ: Հետևաբար՝ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու լիազորությունը:

*Վճռաբեկ բողոքի պարտասխանում բերված փաստարկները հիմնավորվում են վերոգրյալ պարճատարանություններով:*

**5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, որպիսի պարագայում սույն գործը Վերաքննիչ դատարանի որոշման ուժով ենթակա է նոր քննության, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, և այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.05.2022 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ԵԳ/30092/02/20 քաղաքացիական գործով 2023 թվականի նոյեմբերի 24-ին կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ**

**24.11.2023 թվական**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2023 թվականի նոյեմբերի 24-ին գրավոր ընթացակարգով քննելով Հրանտ Պապյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.05.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ Հասմիկ Պապյանի հայցի ընդդեմ Հրանտ Պապյանի՝ առոչինչ գործարքների անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, նույն պալատի ընդհանուր թվի մեծամասնությամբ որոշել է վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.05.2022 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի դատավոր Էդ. Սեդրակյանս համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ետևտուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

### **1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Հասմիկ Պապյանը պահանջել է 18.07.2009 թվականին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց փողոցի 17-րդ շենքի թիվ 91 և 15.12.2019 թվականին Երևանի Հերացու փողոցի 10-րդ շենքի թիվ 44 հասցեներում գտնվող գույքի վերաբերյալ կնքված շինծու առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝ անվավեր ճանաչել Հրանտ Պապյանի անվամբ տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականները:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 28.10.2021 թվականի վճռով հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է, և հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 18.05.2022 թվականի որոշմամբ Հասմիկ Պապյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 28.10.2021 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Հրանտ Պապյանը (ներկայացուցիչ Արամազդ Կիվիլոյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Հասմիկ Պապյանը (ներկայացուցիչ Արմեն Պողոսյան):

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 6-րդ, 8-րդ ու 9-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-9-րդ, 12-րդ, 168-րդ, 170-րդ և 380-րդ հոդվածները:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցի հիմքի և առարկայի փոփոխություն կատարելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է այն փուլում, երբ Դատարանն արդեն 22.02.2021 թվականին կայացրել էր «Հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդության ապացուցման պարտականությունը բաշխելու մասին» որոշում, իսկ այդ փուլում օրենսդիրն արգելում է հայցի հիմքի ու առարկայի փոփոխություն կատարելը: Հայցվորի կողմից հայցի հիմքը և առարկան փոփոխելու միջնորդություն ներկայացնելը հետապնդել է բացառապես հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը քննարկման առարկա չդարձնելու նպատակ: Հայցվորը գրկված չի եղել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը հայցի հիմքի և առարկայի փոփոխության վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվորի կողմից ներկայացված միջնորդությունները դատարանի քննարկման առարկա չէին կարող հանդիսանալ ոչ միայն առաջնահերթության առումով, այլ նաև միջնորդության ժամկետը բաց թողնելու տեսանկյունից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 18.05.2022 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 28.10.2021 թվականի վճռին:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պարասխանի հիմնավորումները**

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավոր է, քանի որ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով և 170-րդ հոդվածի 1-ին մասով, մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը՝ 07.10.2021 թվականին դատարան է ներկայացվել հայցի հիմքի ու առարկայի փոփոխություն թույլատրելու մասին միջնորդություն:

Տվյալ դեպքում գործ ունենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածով նախատեսված սկզբունքի հետ, որի դեպքում հակասությունը պետք է լուծվի հօգուտ սկզբունքի:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը

1) Հասմիկ Պապյանը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Հրանտ Պապյանի՝ պահանջելով 18.07.2009 թվականին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատույաց փողոցի 17-րդ շենքի թիվ 91 և 15.12.2019 թվականին Երևանի Հերացու փողոցի 10-րդ շենքի թիվ 44 հասցեներում գտնվող գույքի վերաբերյալ կնքված շինծու առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ՝ անվավեր ճանաչել Հրանտ Պապյանի անվամբ տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականները:

Դատարանի 23.10.2020 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ **(հատոր 1-ին, գ.թ. 2-9, 21, 22)**։

2) Դատարանը 11.01.2021 թվականին որոշում է կայացրել 22.02.2021 թվականին նախնական դատական նիստ նշանակելու մասին **(հատոր 1-ին, գ.թ. 39, 40)**։

3) պատասխանող Հրանտ Պապյանի ներկայացուցիչը 19.02.2021 թվականին ներկայացրել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն **(հատոր 1-ին, գ.թ. 78, 79)**։

4) Դատարանը 22.02.2021 թվականին որոշում է կայացրել գործին մասնակցող անձանց միջև միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին **(հատոր 1-ին, գ.թ. 83-86)**։

5) 22.02.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստը հետաձգվել է, և հաջորդ նախնական դատական նիստը նշանակվել է 15.06.2021 թվականին, իսկ 15.06.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստը հետաձգվել է, ու հաջորդ նախնական դատական նիստը նշանակվել է 07.10.2021 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 81, 82, 93-95)**։

6) Հասմիկ Պապյանը 07.10.2021 թվականին Դատարան է ներկայացրել հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն՝ պահանջելով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Բազրատունյաց պողոտայի 17-րդ շենքի թիվ 91 և Երևանի Մ. Հերացու փողոցի 10-րդ շենքի թիվ 44 հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ՝ դրանց նկատմամբ դադարեցնելով Հրանտ Պապյանի սեփականության իրավունքը **(հատոր 1-ին, գ.թ. 98-103)**։

7) 07.10.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստում Դատարանը որոշում է կայացրել հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը «առկախելու» մասին, քանի դեռ չի անդրադարձել հայցային վաղեմություն կիրառելու մասին պատասխանող Հրանտ Պապյանի միջնորդությանը, ու որոշել է այդ փուլում չքննարկել հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը։ **(հատոր 1-ին, գ.թ. 108-111)**

8) Դատարանը 22.02.2021 թվականին կայացրել է «Հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդության ապացուցման պարտականությունը բաշխելու մասին» որոշում։ **(հատոր 1-ին, գ.թ. 83-88)**

9) Դատարանը, քննարկելով հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը, գործի քննությունը հայտարարել է ավարտված՝ հայտարարելով, որ դատական ակտը կիրառարակվի 28.10.2021 թվականին **(հատոր 1-ին, գ.թ. 108-111)**։

10) Դատարանը 28.10.2021 թվականին վճիռ է կայացրել հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու և հայցը մերժելու մասին **(հատոր 1-ին, գ.թ. 113-123)**։

#### **4. Հարուկ կարծիքի հիմնավորումները**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հասմիկ Պապյանը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Հրանտ Պապյանի՝ պահանջելով 18.07.2009 թվականին Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Բազրատունյաց փողոցի 17-րդ շենքի թիվ 91 և 15.12.2019 թվականին Երևանի Հերացու փողոցի 10-րդ շենքի թիվ 44 հասցեներում գտնվող գույքի վերաբերյալ կնքված շինծու առուվաճառքի պայմանագրերի նկատմամբ կիրառել առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ

անվավեր ճանաչել Հրանտ Պապյանի անվամբ տրված սեփականության իրավունքի գրանցման վկայականները: Դատարանի 23.10.2020 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանը 11.01.2021 թվականին որոշում է կայացրել 22.02.2021 թվականին նախնական դատական նիստ նշանակելու մասին:

Մինչ նշանակված նախնական դատական նիստը՝ 19.02.2021 թվականին, պատասխանող Հրանտ Պապյանի ներկայացուցիչը ներկայացրել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն: Դատարանը 22.02.2021 թվականին որոշում է կայացրել գործին մասնակցող անձանց միջև միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին, և 22.02.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստը հետաձգել է, ու հաջորդ նախնական դատական նիստը նշանակել է 15.06.2021 թվականին: 15.06.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստը ևս հետաձգվել է, և հաջորդ նախնական դատական նիստը նշանակվել է 07.10.2021 թվականին:

Հասմիկ Պապյանը 07.10.2021 թվականին Դատարան է ներկայացրել հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն՝ պահանջելով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Բագրատունյաց պողոտայի 17-րդ շենքի թիվ 91 և Երևանի Մ. Հերացու փողոցի 10-րդ շենքի թիվ 44 հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ դրանց նկատմամբ դադարեցնելով Հրանտ Պապյանի սեփականության իրավունքը: 07.10.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստում Դատարանը որոշում է կայացրել հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը «առկախելու» մասին՝ պատճառաբանելով, որ դեռ չի անդրադարձել հայցային վաղեմություն կիրառելու մասին պատասխանող Հրանտ Պապյանի միջնորդությանը, ու որոշել է այդ փուլում չքննարկել հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը:

Դատարանը, քննարկելով հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը, գործի քննությունը հայտարարել է ավարտված՝ հայտարարելով, որ դատական ակտը կիրառարակվի 28.10.2021 թվականին:

Դատարանը 28.10.2021 թվականին վճիռ է կայացրել հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու և հայցը մերժելու մասին:

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ

- «հայցի հիմքն ու առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելն այն դատավարական գործողությունն է, որի միջոցով հայցվորն իրացնում է իրեն վերապահված մեկ այլ իրավունք, դիմելով դատարանին՝ գործի քննությունը սկզբնապես ներկայացված հայցի հիմքից և (կամ) առարկայից տարբերվող այլ հիմքի և (կամ) առարկայի շրջանակներում շարունակելու համար: Նշվածից հետևում է նաև, որ դատարանը պարտավոր է հայցը քննել դրանով ներկայացված հիմքերի և առարկայի շրջանակներում, հետևաբար որոշակիորեն կաշկանդված է նաև հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու արդյունքում փոփոխված հայցի շրջանակներով, հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվել է հայցի հիմքի և առարկայի փոփոխության վերաբերյալ միջնորդություն, դատարանն անկախ միջնորդությունների ներկայացման հաջորդականությունից, նախևառաջ պետք է քննության առարկա դարձնի հենց այդ միջնորդությունը, քանի որ դրա լուծումն է կանխորոշում, թե որ հիմքերի և առարկայի շրջանակներում է շարունակվելու գործի քննությունը»:

- «հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունն ավելի վաղ ներկայացված լինելն ինքնին չէր կարող խոչընդոտ հանդիսանալ հայցի հիմքն ու առարկան փոփոխելու միջնորդությունը քննության առնելու համար, հետևաբար, դատարանի կողմից այդ միջնորդությունը չքննարկելը, կամ դրա քննարկումը հայցային վաղեմություն կիրառելու միջնորդության քննարկման արդյունքից կախման մեջ դնելն իրավաչափ չէ և ուղղակիորեն հանգեցրել է տնօրինչականության սկզբունքի խախտմանը»:

Եզրահանգել է, որ «չքննարկելով և չլուծելով հայցի հիմքն ու առարկան փոփոխելու մասին հայցվորի միջնորդությունը և մինչ այդ քննության առնելով հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը, դատարանը չի կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ և 170-րդ հոդվածները և կիրառել է նույն օրենսգրքի 168-րդ հոդվածը, որը չպետք է կիրառել, թույլ տալով դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծման, հետևաբար վերաքննիչ բողոքը հիմնավորված է ենթակա է բավարարման»:

**Վճռաբեկ դատարանն** արձանագրել է որ «(...) Դատարանը, արձանագրային որոշում կայացնելով վերը նշված պարճատարանությանը հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ գրավոր միջնորդության քննարկումն «ստկյախելու մասին», խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի պահանջը, քանի որ կայացրել է նշված նորմի բովանդակությունից չբխող որոշում, այնքանով, որքանով օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով նման փաստի որոշում կայացնելու լիազորություն դատարաններին չի վերապահել: (...) Դատարանը, չքննարկելով ու չլուծելով հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում հայցվորի ներկայացրած գրավոր միջնորդությունն ու առաջնահերթություն փայլով ժամանակագրական առումով մինչ այդ ներկայացված հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությանը, խախտել է հայցվորի փնտրիչականության սկզբունքը՝ անսրեսելով ինչպես այն հանգամանքը, որ հայցվորը գործել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով իրեն վերապահված փնտրիչականության սկզբունքի շրջանակներում ու այդ նպատակով ցանկացել է իրացնել իր դատավարական իրավունքները, այնպես էլ՝ օրենսդրի կողմից սահմանված հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը քննության առնելու վերը նշված ընթացակարգը»:

Վճռաբեկ դատարանի դատավոր Էդ. Սեդրակյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրավակիչ մասերում Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության արտահայտած կարծիքի հետ, շարադրում են հատուկ կարծիքս դրա վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը հարուցվում է նույն օրենսգրքով սահմանված կարգով հայցադիմում ներկայացնելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հայցադիմումում պարտադիր նշվում են այն փաստերը, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները:

Նույն հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ հայցադիմումում պարտադիր նշվում են պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը (պահանջները), իսկ մի քանի պատասխանողների դեմ հայցադիմում ներկայացնելիս

հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջը (պահանջները), եթե այն համիրավ չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է հայցի առարկան, հայցի փաստական և իրավական հիմքերը:

Նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է վիճելի իրավահարաբերության բնույթը, այդ թվում՝ կիրառելի իրավական նորմերը՝ չսահմանափակվելով գործին մասնակցող անձանց մատնանշած իրավական նորմերով:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է՝ հայցվորը պնդում է արդյոք իր պահանջները, պատասխանողն արդյոք ամբողջությամբ կամ մասնակի ընդունում է հայցվորի պահանջները, և գործին մասնակցող անձինք չեն ցանկանում արդյոք կնքել հաշտության համաձայնություն կամ վեճը լուծել հաշտարարության միջոցով՝ պարզաբանելով հաշտարարության էությունը:

Նույն հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարզում է՝ գործին մասնակցող անձանց հետ քննարկում է ապացուցման պարտականությունը նրանց միջև բաշխելու հարցը,

Նույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում քննում է գործի արդյունավետ քննությանն ուղղված՝ գործին մասնակցող անձանց այլ միջնորդությունները, ինչպես նաև իրականացնում է նույն օրենսգրքով նախատեսված՝ գործի արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը կարող է վկայակոչել հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը մինչև գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հիմնավորում է տվյալ փաստը մինչ այդ վկայակոչելու անհնարինությունն իրենից անկախ պատճառներով: Այդ դեպքում հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը կարող է վկայակոչվել ոչ ուշ, քան մինչև առաջին ատյանի դատարանում դատաքննության ավարտը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացված լինելու դեպքում դատարանը նույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերում նշված դատավարական գործողությունները կատարելուց հետո հայցային վաղեմություն կիրառելու դիմումի և դրա դեմ բերված առարկությունների հիման վրա արձանագրային որոշմամբ՝

1) որոշում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը.

2) գործին մասնակցող անձանց միջև բաշխում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը.

3) գործին մասնակցող անձանց հետ քննարկում է նրանց կողմից ապացույցներ ներկայացնելու համար ժամկետ տրամադրելու հարցը և անհրաժեշտության դեպքում սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետը.

4) իրականացնում է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:



Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո դատարանը, հաշվի առնելով գործին մասնակցող անձանց կարծիքը, որոշում է հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը տվյալ կամ հաջորդ դատական նիստում քննելու հարցը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն կիրառելու միջնորդության և դրա դեմ բերված առարկությունները քննարկելուց հետո դատարանը գործի քննությունը հայտարարում է ավարտված և հրապարակում է դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-9-րդ կետերով նախատեսված հարցերը քննարկելուց հետո առաջին ատյանի դատարանը կայացնում է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված կյուրթաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց ներկայությամբ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու դեպքում դատարանն անհրաժեշտության դեպքում իրականացնում է նույն օրենսգրքի 167-րդ հոդվածով նախատեսված դատավարական գործողությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ առաջին ատյանի դատարանը նախնական դատական նիստի ընթացքում պարտավոր է կատարել նշված իրավանորմում նախատեսված բոլոր գործողությունները: Մինչդեռ նույն օրենսգրքի 168-րդ հոդվածով օրենսդիրը նախատեսել է նշված ընդհանուր կանոնից բացառություն: Մասնավորապես՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը քննության առնելու մասով նախատեսվել է հատուկ ընթացակարգ, ըստ որի՝ հայցային վաղեմություն

կիրառելու մասին միջնորդություն ներկայացված լինելու դեպքում դատարանը պարտավոր է կատարել միայն նույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերում նշված դատավարական գործողությունները և նշված դատավարական գործողությունները կատարելուց անմիջապես հետո պետք է անցնի հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննությանը դրա շրջանակներում հերթականությամբ իրականացնելով բացառապես հետևյալ գործողությունները. որոշում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, գործին մասնակցող անձանց միջև բաշխում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը, գործին մասնակցող անձանց հետ քննարկում է նրանց կողմից ապացույցներ ներկայացնելու համար ժամկետ տրամադրելու հարցը և անհրաժեշտության դեպքում սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետը, իրականացնում է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ: Նշված իրավակարգավորմամբ օրենսդիրը, հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննության ընթացքում նախատեսելով բացառապես օրենսգրքով նախատեսված որոշակի գործողությունների կատարման կարգ, ապահովել է գործերի արդյունավետ և ողջամիտ ժամկետում քննության իրականացումը:

Այսպիսով, օրենսդիրը գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելուց բացի նաև նախատեսել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման կայացման մեկ այլ տեսակ՝ այն է՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը:

Անդրադառնալով հայցի առարկան և/կամ հիմքը փոփոխելու կառուցակարգին՝ հարկ եմ համարում արձանագրել՝ հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ գրավոր միջնորդություն ներկայացնելու հայցվորի իրավասությունը սահմանափակված է ժամկետներով, մասնավորապես՝ հայցվորն այդպիսի միջնորդություն ներկայացնելու իրավագործությամբ օժտված է մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը: Օրենսդիրը նշված միջնորդության ներկայացման ժամկետի պայմանը նախատեսել է մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը՝ չմասնավորեցնելով, թե այն վերաբերելի է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմանը, թե հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմանը: Նշվածից պարզ է դառնում, որ հայցի առարկայի և/կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը հայցվորն իրավասու է ներկայացնել մինչև գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը, իսկ հայցային վաղեմության ժամկետ կիրառելու միջնորդություն ներկայացված լինելու և այդ միջնորդության քննության ընթացքում մինչև հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը: Բացի այդ՝ վերը նշված իրավանորմերից նաև բխեցվում է, որ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննության ընթացքում դատարանն իրավասու է իրականացնել բացառապես օրենսդրական մակարդակով որոշակիացված գործողություններ և ՀՀ քաղաքացիական

դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-6-րդ կետերում նշված գործողությունները կատարելուց հետո նույն օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասում նշված դատավարական գործողությունները կատարելուց բացի դատավարական այլ գործողության այդ թվում՝ հայցի հիմքի և/կամ առարկայի փոփոխության միջնորդության քննության, իրականացման իրավագործություն:

Վերը նշված իրավանորմերի վերլուծությունը համադրելով սույն գործի փաստերի նկատմամբ հարկ է նշել հետևյալը.

Մինչ նշանակված նախնական դատական նիստը՝ 19.02.2021 թվականին, պատասխանող Հրանտ Պապյանի ներկայացուցիչը ներկայացրել է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդություն:

Դատարանը 22.02.2021 թվականին կայացրել է «Հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ միջնորդության ապացուցման պարտականությունը բաշխելու մասին» որոշում:

Հասմիկ Պապյանը 07.10.2021 թվականին Դատարան է ներկայացրել հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդություն՝ պահանջելով ճանաչել իր սեփականության իրավունքը Երևանի Բագրատունյաց պողոտայի 17-րդ շենքի թիվ 91 և Երևանի Մ. Հերացու փողոցի 10-րդ շենքի թիվ 44 հասցեներում գտնվող անշարժ գույքի նկատմամբ՝ դրանց նկատմամբ դադարեցնելով Հրանտ Պապյանի սեփականության իրավունքը:

07.10.2021 թվականին նշանակված նախնական դատական նիստում Դատարանը որոշում է կայացրել հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը «առկախելու» մասին՝ պատճառաբանելով, որ դեռ չի անդրադարձել հայցային վաղեմություն կիրառելու մասին պատասխանող Հրանտ Պապյանի միջնորդությանը, ու որոշել է այդ փուլում չքննարկել հայցի առարկայի և հիմքի փոփոխություն թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը:

Վերը նշված փաստերից պարզ է դառնում, որ Հասմիկ Պապյանը հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը չի ներկայացրել մինչև հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը և հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննության փուլում այլևս դատավարական իրավասություն չի ունեցել ներկայացնելու հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդություն:

Այսինքն, Դատարանը հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննության փուլում իրավաչափորեն քննության առարկա չի դարձրել Հասմիկ Պապյանի հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը:

Վերոգրյալ իրավական և փաստական հիմնավորումների համատեքստում Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի խախտում, այն է՝ խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-4-րդ մասերը, 6-րդ մասը, 170-րդ հոդվածի 1-ին մասը:

Ամփոփելով՝ գտնում ենք, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի խախտում, որը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Հետևաբար սույն գործով անհրաժեշտ էր կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված՝

վճռաբեկ բողոքը բավարարելու, վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

ԴԱՏԱՎՈՐ՝ Էդ. Սեդրակյան

## 29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում՝ Քաղաքացիական գործ թիվ՝ ՍԳ3/0834/02/19  
Սախազահող դատավոր՝ Ս. Նազարյան  
Դատավորներ՝ Ն. Կարապետյան  
Կ. Չիլինգարյան

Քաղաքացիական գործ թիվ՝ ՍԳ3/0834/02/19  
2023թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող և զեկուցող* Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆ  
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2023 թվականի մարտի 31-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ Հրաչ, Սուրեն, Արաքսյա, Մուշեղ, Մելան և Հայկ Մանուչարյանների ու Սեդրա Մինասյանի (այսուհետ՝ նաև Համապատասխանողներ) ընդհանուր գույքում բաժնի վրա բռնագանձում տարածելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.07.2022 թվականի որոշման դեմ Ընկերության բերած վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է համատեղ սեփականության իրավունքով Համապատասխանողներին պատկանող ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում գտնվող 2.885հա մակերեսով հողամասից բնեղենով առանձնացնել պարտապան Հրաչ Մանուչարյանին պատկանող 1/8 բաժինը՝ դրա վրա դատարանի վճռով սահմանված բռնագանձումը տարածելու համար, իսկ բաժինն առանձնացնելու անհնարիության կամ աննպատակահարմարության դեպքում այդ գույքը վաճառել հրապարակային սակարկություններով՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ՝ բռնագանձումը տարածելով Հրաչ Մանուչարյանին հասանելիք գումարի վրա:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 24.02.2022 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.07.2022 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 24.02.2022 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ Հարություն Չաղբյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ, 197-րդ և 200-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված հիմքի առկայությունը պարզապես ցուցաբերել է հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը կիրառել է թիվ ԼԴ1/0721/02/20, թիվ ԼԴ2/0055/02/21, թիվ ԼԴ1/1122/02/20, թիվ ԼԴ2/0403/02/19, թիվ ԼԴ4/0713/02/19, թիվ ԼԴ2/1266/02/19 և թիվ ԱԲԴ1/0846/02/20 քաղաքացիական գործերով ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում ու թիվ ԵԱՆԴ/1984/02/08 և թիվ ԱԲԴ1/0004/02/18 քաղաքացիական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման մեջ նույն նորմին տրված մեկնաբանությանը հակասող մեկնաբանությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 195-րդ, 197-րդ և 200-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, քանի որ օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու նպատակից ելնելով՝ անհրաժեշտ է իրավունքի զարգացում՝ կապված համատեղ կամ բաժնային համասեփականատերերի շարքում մահացած սեփականատիրոջ առկայության պարագայում համատեղ կամ բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու անհնարինության դեպքում այդ բաժնի գնմանն ուղղված առաջարկի, ինչպես նաև գնման նախապատվության իրավունքի հետ՝ հաշվի առնելով սեփականության և ժառանգության ինստիտուտները, ինչպես նաև պարտատիրոջ Սահմանադրությամբ ու Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.07.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 19.08.2019 թվականին Ընկերությունը հայց է հարուցել Դատարան ընդդեմ Հրաչ, Սուրեն, Արաքսյա, Մուշեղ, Մելան և Հայկ Մանուչարյանների ու Սեդա Մինասյանի՝ պահանջելով համատեղ սեփականության իրավունքով վերջիններիս պատկանող ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում գտնվող 2.885հա մակերեսով հողամասից բնեղենով առանձնացնել պարտապան Հրաչ Մանուչարյանին պատկանող 1/8 բաժինը՝ դրա վրա դատարանի վճռով սահմանված բռնագանձումը տարածելու համար, իսկ բաժինն առանձնացնելու անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում այդ գույքը վաճառել հրապարակային սակարկություններով՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ՝ բռնագանձումը տարածելով Հրաչ Մանուչարյանին հասանելիք գումարի վրա (**հատոր 1-ին, գ.թ. 2-32**).

2) Համապատասխանողներից Արաքսյա Մանուչարյանը մահացել է մինչև վերը նշված հայցի հարուցումը՝ 23.01.2017 թվականին, իսկ Սուրեն Մանուչարյանը մահացել է նույն հայցը հարուցվելուց հետո՝ 15.02.2020 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 59, 149**).

3) Դատարանի 15.10.2020 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է մինչև Արաքսյա Մանուչարյանի և Սուրեն Մանուչարյանի իրավահաջորդության հարցի լուծումը (**հատոր 2-րդ, գ.թ. 28, 29**).

4) Դատարանի 19.01.2022 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է՝ «Սուրեն Մանուչարյանի և Արաքսյա Մանուչարյանի մահից ավելի քան 6 ամիս անցնելու և նրանց իրավահաջորդության վերաբերյալ տեղեկություններ դատարանին չներկայացվելու» հիմքով՝ պայմանով, որ «գործի վարույթի կասեցման հիմքի պահպանված լինելու հանգամանքը ենթակա է պարզման դատական նիստով» (**հատոր 2-րդ, գ.թ. 45**).

5) Դատարանի 24.02.2022 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով՝ հայցը մինչև հարուցումը մահացած պատասխանողի դեմ հարուցված լինելու պատճառաբանությամբ (**հատոր 2-րդ, գ.թ. 68, 69**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պայրճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի իմաստով՝ քանի որ՝

1) Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը կիրառել է թիվ ԼԴ1/0721/02/20, թիվ ԼԴ2/0055/02/21, թիվ ԼԴ1/1122/02/20, թիվ ԼԴ2/0403/02/19, թիվ ԼԴ4/0713/02/19, թիվ ԼԴ2/1266/02/19 և թիվ ԱԲԴ1/0846/02/20 քաղաքացիական գործերով ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում նույն նորմին տրված մեկնաբանությանը հակասող մեկնաբանությամբ,

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով գործի վարույթն ամբողջությամբ*

*կարճելու հարցին այն ղեպքում, երբ գործին մասնակցում են մի քանի պարասիստներ, որոնցից մեկը կամ մի քանիսը մահացել են մինչև հայցի հարուցումը, մյուսը (մյուսները) դրանից հետո, և մյուս համապարասիստները ողջ են:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն այն գործով, որին պետք է մասնակցեր մահացած կամ մահացած ճանաչված անձի ժառանգը, եթե ժառանգությունը դեռևս ոչ ոք չի ընդունել, որպես ժառանգի ներկայացուցիչ հանդես է գալիս ժառանգական գույքի պահպանման և կառավարման համար նշանակված անձը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե գործին մասնակցող անձը մահացել է, և վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը գործի վարույթի կասեցումն առաջացրած հանգամանքները վերանայու մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ վերսկսում է գործի վարույթը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցը հարուցվել է մինչև հարուցումը մահացած պատասխանողի դեմ:

Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով գործին մասնակցող քաղաքացու մահվան հիմքով գործի վարույթը կասեցնելու հարցին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործի վարույթի կասեցումը գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ էության արգելակում է գործի հետագա ընթացքը: Միաժամանակ, օրենքով գործի վարույթի կասեցման համար նախատեսված են երկու խումբ հիմքեր: Դրանցից առաջին խումբը վերաբերում է սպառիչ թվարկված այն հիմքերին, որոնց առկայության դեպքում գործի քննության շարունակումը դառնում է անհնարին, և դատարանը պարտավոր է դրանցից որևէ մեկի ի հայտ գալուց հետո կասեցնել գործի վարույթը: Այդպիսի հիմքերից է նաև գործին մասնակցող քաղաքացու մահը, որի դեպքում գործի կողմերից մեկը դուրս է մնում հետագա դատավարությունից, ինչը բացառում է դրա շարունակումը: Իսկ երկրորդ խումբը վերաբերում է այն հիմքերին, որոնց առկայությունը գործի քննության հետագա շարունակումը կարող է դարձնել անհնարին կամ դժվարացնել, և դատարանը, ելնելով գործի փաստական հանգամանքներից, յուրաքանչյուր դեպքում պետք է որոշի գործի հետագա քննության շարունակման նպատակահարմարությունը: Այդ իսկ պատճառով երկրորդ խումբ հիմքերն օրենքով սպառիչ թվարկված չեն, այլ դատարանին իրավունք է տրված օրենքով նախատեսված այլ դեպքերում ևս կասեցնել գործի վարույթը: Այսինքն՝ գործի վարույթի կասեցումը չի կարող կրել ձևական բնույթ, իսկ դրա միակ նպատակը գործի շարունակմանը խոչընդոտող հանգամանքների վերացումն է (*տե՛ս Սամվել, Մահակ և Մուլթան Մարկոսյաններն ընդդեմ Լուսիկ Գևորգյանի և մյուսների թիվ ԵԿԴ/0808/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.11.2013 թվականի որոշումը*):

Վերը նշված նորմերի մեկնաբանությունից բխում է, որ օրենսդիրն առանձին-առանձին իրավակարգավորման է ենթարկել գործին մասնակցող անձի մահվան դեպքում գործի հետագա ընթացքը լուծելու հարցը՝ սահմանելով, որ բոլոր այն դեպքերում, երբ պարզվում է, որ հայցը հարուցվել է մինչև դրա հարուցումը



մահացած պատասխանողի դեմ, ապա տվյալ գործի վարույթը ենթակա է կարճման, իսկ եթե գործին մասնակցող անձը, այդ թվում՝ նաև պատասխանողը, մահացել է հայցը հարուցվելուց հետո և վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն, ապա բոլոր այդ դեպքերում դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը մինչև իրավահաջորդության հարցի լուծումը, իսկ նշված հանգամանքը վերանայլու մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ եռօրյա ժամկետում, իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ վերսկսել գործի վարույթը: Ընդ որում, այն գործով, որին պետք է մասնակցեր մահացած կամ մահացած ճանաչված անձի ժառանգը, եթե ժառանգությունը դեռևս ոչ ոք չի ընդունել, որպես ժառանգի ներկայացուցիչ հանդես է գալիս ժառանգական գույքի պահպանման և կառավարման համար նշանակված անձը:

Ինչպես նշվեց վերը, Վճռաբեկ դատարանը նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ պայմանավորված նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորել է նրանով, որ առկա է եղել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը զարգացնելու խնդիր, քանի որ օրենսդիրն առանձին չի կարգավորել գործի հետագա ընթացքն այն դեպքում, երբ գործով առկա են մի քանի պատասխանողներ, որոնցից մեկը մահացել է մինչև հայցի հարուցումը, իսկ մյուսը (մյուսները)՝ հայցը հարուցվելուց հետո:

Այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանը, վերը նշված դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով այն հարցին, թե ինչպես է ենթակա կարգավորման գործի հետագա ընթացքը վերը նշված դեպքում, արձանագրում է, որ այդ դեպքում ևս վերը նշված դիրքորոշումները ենթակա են կիրառման, այսինքն՝ գործի վարույթը ենթակա է կարճման բացառապես մինչև հայցի հարուցումը մահացած պատասխանողի մասով, իսկ հայց հարուցելուց հետո մահացած պատասխանողի (պատասխանողների) մասով գործի վարույթն օրենքով նախատեսված դեպքում ենթակա է կասեցման, որից հետո՝ համապատասխան հիմքերով պայմանավորված՝ վերսկսման: Ընդ որում նշված դիրքորոշումը հավասարապես կիրառելի է նաև այն դեպքերում, երբ բացի նշված անձանցից, գործին մասնակցում են նաև այլ անձինք, որոնք ողջ են:

### *Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարանում*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը 19.08.2019 թվականին հայց է հարուցել Դատարան ընդդեմ Հրաչ, Մուրեն, Արաքսյա, Մուշեղ, Մելան և Հայկ Մանուչարյանների ու Սեդա Մինասյանի՝ պահանջելով համատեղ սեփականության իրավունքով վերջիններիս պատկանող՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում գտնվող 2.885հա մակերեսով հողամասից բնեղենով առանձնացնել պարտապան Հրաչ Մանուչարյանին պատկանող 1/8 բաժինը՝ դրա վրա դատարանի վճռով սահմանված բռնագանձումը տարածելու համար, իսկ բաժինն առանձնացնելու անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում այդ գույքը վաճառել իրապարակային սակարկություններով՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ՝ բռնագանձումը տարածելով Հրաչ Մանուչարյանին հասանելիք գումարի վրա:

Մինչ նշված հայցը Դատարան հարուցելը համապատասխանողներից Արաքսյա Մանուչարյանն արդեն 23.01.2017 թվականին մահացած է եղել:

Համապատասխանողներից Սուրեն Մանուչարյանը մահացել է հայց հարուցվելուց հետո՝ գործի քննության ժամանակ՝ 15.02.2020 թվականին:

**Ընդ որում, վճարել բողոքի քննությանը պարզվեց նաև, որ հայցը հարուցվելուց հետո՝ 15.11.2021 թվականին, մահացել է Համապատասխանողներից նաև Մուշեղ Մանուչարյանը:**

Դատարանի 15.10.2020 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է մինչև Արաքսյա Մանուչարյանի և Սուրեն Մանուչարյանի իրավահաջորդության հարցի լուծումը, որից հետո Դատարանի 19.01.2022 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը վերսկսվել է այն պատճառաբանությամբ, որ «Սուրեն Մանուչարյանի և Արաքսյա Մանուչարյանի մահից անցել է ավելի քան 6 ամիս և դատարանին չեն ներկայացվել նրանց իրավահաջորդության վերաբերյալ տեղեկություններ»:

Դրանից հետո՝ 24.02.2022 թվականին, Դատարանը, պատճառաբանելով, որ «ներկայացվել է ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքից պարտապանի բաժինն առանձնացնելու, դրա անհնարինության դեպքում ամբողջ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջի մասին, որի դեպքում բաժնային սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրի իրավունքները պետք է պաշտպանված լինեն, ինչը տվյալ դեպքում անհնար է ապահովել, իսկ դա շրթայական կապված է գույքի նկատմամբ հայցվորի ներկայացրած պահանջի շրջանակներում նախատեսած գործողությունները օրենքի սահմաններում և ընթացակարգով իրականացնելու հետ», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, որոշում է կայացրել գործի վարույթն ամբողջությամբ կարճելու մասին հայցը մինչև հարուցումը մահացած պատասխանողի դեմ հարուցված լինելու հիմքով:

Վերաքննիչ դատարանը Ընկերության վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի 24.02.2022 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը թողել է օրինական ուժի մեջ՝ պատճառաբանելով, որ «հայցը ներկայացվել է համասեփականատերերից մեկի բաժինն առանձնացնելու կամ ամբողջ գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու պահանջով, ուստի Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա վարելահողի բոլոր սեփականատերերը պետք է օգտվեն այդ գույքից պարտապանին պատկանող բաժինը գնելու՝ Քաղաքացիական օրենսգրքի 195-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նախապատվության իրավունքից, իսկ առանց մահացած պատասխանողների իրավահաջորդության հարցի լուծման հնարավոր չէ պարզել համատեղ սեփականության իրավունքի օբյեկտ հանդիսացող անշարժ գույքից պարտապանի բաժինը գնելու հարցում ընդհանուր սեփականության բոլոր մասնակիցների կամահայտնությունը, այսինքն՝ անհնարին է համատեղ սեփականության իրավունքի օբյեկտ հանդիսացող վարելահողից պարտապանի բաժինը բնեղենով առանձնացնելու հնարավորությունը: Արդյունքում՝ անկախ գործով մի քանի պատասխանողների (համասեփականատերերի) առկայությունից, հայցի էությունից բխում է վերջիններիս սերտ փոխկապակցվածությունը, որպիսի պարագայում թեկուզև մեկ պատասխանողի բացակայությունը՝ մահվան հիմքով, ըստ էության, անհնարին է դարձնում գործի քննությունն առանց նշված պատասխանողի (վերջինիս իրավահաջորդության հարցի լուծման), հետևաբար՝ ստեղծված իրավիճակում բաժնային սեփականության մասնակիցներից յուրաքանչյուրի իրավունքի պաշտպանությունն ապահովելն անհնարին լինելու և դրա՝ գույքի նկատմամբ հայցվորի ներկայացրած պահանջի շրջանակներում նախատեսած

գործողություններն օրենքի սահմաններում և ընթացակարգով իրականացնելու հետ շղթայական կապված լինելու վերաբերյալ Դատարանի հետևությունն իրավաչափ է, ուստի իրավաչափ է նաև մինչև հայցի հարուցումը մահացած պատասխանողի Արաքայա Մանուչարյանի դեմ հարուցված գործի վարույթը Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կիրառմամբ կարճելու մասին բողոքարկվող որոշումը, որպիսի պայմաններում «Քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին» Դատարանի 24.02.2022թ. որոշումը վերացնելու մասին բողոք բերած անձի պահանջը ենթակա չէ բավարարման»:

Վերոգրյալ դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են, քանի որ չեն բխում վերը նշված իրավական նորմերի մեկնաբանությունից, և չէին կարող բավարար հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը մերժելու համար, քանի որ, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, սույն գործի փաստերի համաձայն՝ մինչև սույն գործով հայցը Դատարան հարուցվելը մահացել է համապատասխանողներից միայն Արաքայա Մանուչարյանը, որի պայմաններում գործի վարույթը ենթակա էր կարճման բացառապես վերջինիս մատով: Մինչև սույն ժամանակ, նկատի ունենալով, որ համապատասխանող Սուրեն Մանուչարյանը մահացել է հայցը հարուցվելուց հետո, վերը նշված դիրքորոշումների համաձայն՝ գործի վարույթը ենթակա էր կասեցման, որից հետո, համապատասխան հիմքերով պայմանավորված՝ վերսկսման, որպիսի դատավարական գործողությունները, ըստ էության, Դատարանը կատարել է: Այնուհետև, գործի քննությունը ենթակա էր շարունակման ընդհանուր կարգով:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը, ըստ էության, այն մասին, որ *«նաևն պահանջ ներկայացված լինելու պայմաններում գույքի բոլոր սեփականատերերը պետք է օգրվեն այդ գույքից պարտապանին պարկուտող բաժինը գնելու նախապարտության իրավունքից, մինչդեռ առանց մահացած պարտախանողների իրավահաջորդության հարցի լուծման հնարավոր չէ պարզել համարել սեփականության իրավունքի օբյեկտ հանդիսացող անշարժ գույքից պարտապանի բաժինը գնելու հարցում ընդհանուր սեփականության բոլոր մասնակիցների կամահայրնությունը, որպիսի պարագայում թելուզև մեկ պարտախանողի բացակայությունը՝ մահվան հիմքով, ըստ էության, անհնարին է դարձնում գործի քննությունն առանց նշված պարտախանողի (վերջինիս իրավահաջորդության հարցի լուծման)»,* ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն չէր կարող բավարար հիմք հանդիսանալ գործի վարույթն ամբողջությամբ կարճելը իրավաչափ համարելու համար, քանի որ օրենսդիրն առանձին հայցապահանջների առումով վերը նշված պարտադիր կանոնից որևէ բացառություն չի նախատեսել:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանը, թիվ ԵԱՆԴ/1984/02/08 քաղաքացիական գործով քննելով «Ֆինքա» բարեգործական հիմնադրամի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.08.2009 թվականի որոշման դեմ ըստ «Ֆինքա» բարեգործական հիմնադրամի հայցի ընդդեմ Թագուհի, Հովհաննես, Լուսինե և Արման Թարխանյանների բնակարանը հրապարակային սակարկություններով վաճառելու և գումարի բռնագանձումը Թագուհի Թարխանյանի բաժնի վրա տարածելու պահանջների մասին, 04.12.2009 թվականին կայացված որոշմամբ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ *«համարել սեփականության ներքո գրվելով բնակարանի սեփականատերերի միջև օրենքով կամ իրենց համաձայնությամբ բաժինները որոշված լինելու մասին քաղաքացիական գործում որևէ սպացույց առկա չլինելու պայմաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 199-րդ*

հողվածի 2-րդ կետի հիմքով Երևանի Հ. Հովհաննիսյան թաղամասի 25/1 շենքի թիվ 3 բնակարանի սեփականատերերի բաժինները հավասար են, այսինքն՝ յուրաքանչյուրինը 1/5-ական մաս, հետևաբար Թագուհի Թարխանյանը վիճելի բնակարանում ունի 1/5 մասի սեփականության իրավունք, որի վրա հնարավոր է բռնագանձում տարածել: Ինչ վերաբերում է Ելենա Հակոբյանի մահից հետո վիճելի գույքի մեջ բաժինները հարակ որոշված չլինելու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգմանը, ապա Վճռաբեկ դատարանը գրնում է, որ նշված հանգամանքը, Թագուհի Թարխանյանի համարեղ սեփականության ներքո գրնվող բնակարանում 1/5 մասով սեփականության իրավունք ունենալու պայմաններում, սույն հայցի քննարկման աստիճաններում չի կարող ունենալ էական նշանակություն, ստավել ևս, որ Դատարանի վճռի եզրահանգից մասում անբացավել է, որ Ելենա Հակոբյանի բաժնեմասին հաշվարկվող գումարը պետք է թողնել հարկադիր կարարման ծառայության դեպոզիտ հաշվում՝ մինչև նրա ծառայության նկարանմը ձևակերպումը»:

**Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մյուս հիմքերին, արձանագրում է հետևյալը.**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 406-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ բողոքի քննության արդյունքներով կայացված Վճռաբեկ դատարանի որոշման մեջ նշվում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ նույն օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից առնվազն մեկի առկայության հիմնավորումը:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արանանագրում է, որ հիմնավոր է վճռաբեկ բողոքը նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետով նախատեսված հիմքով՝ պայմանավորված նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, վարույթ ընդունելու մասին վճռաբեկ բողոքում նշված հիմքը, քանի որ վճռաբեկ բողոքի քննությամբ հաստատվեց, որ Վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը կիրառել է թիվ ԼԴ1/0721/02/20, թիվ ԼԴ2/0055/02/21, թիվ ԼԴ1/1122/02/20, թիվ ԼԴ2/0403/02/19, թիվ ԼԴ4/0713/02/19, թիվ ԼԴ2/1266/02/19 և թիվ ԱԴԴ1/0846/02/20 քաղաքացիական գործերով ստորադաս դատարանների օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում նույն նորմին տրված մեկնաբանությանը հակասող մեկնաբանությամբ:

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ ստորադաս դատարանները վերը նշված գործերով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը մեկնաբանելու արդյունքում, ի տարբերություն սույն գործով Վերաքննիչ դատարանի մեկնաբանման, քաղաքացիական գործի վարույթը կարճել են ոչ թե ամբողջությամբ, այլ՝ բացառապես մինչև հայցի հարուցումը մահացած պատասխանող-ընդհանուր սեփականության մասնակցի մասով, իսկ մյուս պատասխանողների մասով հայցը բավարարվելու արդյունքում, ըստ էության, վճիռ է կայացվել գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին՝ ստացված գումարը հետագայում բաշխելով ընդհանուր սեփականության մասնակիցների միջև՝ նրանց բաժիններին համաչափ՝ մինչև հայցի հարուցումը մահացած պատասխանող-ընդհանուր սեփականության մասնակցի բաժնին համաչափ գումարը թողնելով հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վերը նշված հանգամանքները դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի և 390-րդ հոդվածի 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի 15.07.2022

թվականի որոշումը մասնակիորեն՝ համապատասխանողներ Հրաչ, Սուրեն, Մուշեղ, Մելան ու Հայկ Մանուչարյանների և Սեդա Մինասյանի դեմ ուղղված պահանջի մասով Դատարանի 24.02.2022 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին» որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասով, բեկանելու համար: **Ընդ որում, գործի նոր քննության ժամանակ անհրաժեշտ է նկարի ունենալ հայցը հարուցվելուց հետո՝ 15.11.2021 թվականին համապատասխանող Մուշեղ Մանուչարյանի մահացած լինելու հանգամանք:**

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ դատական ակտը մասնակիորեն բեկանելու և բեկանված մասով գործը համապատասխան ստորադաս դատարան, տվյալ դեպքում՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը՝ համապատասխանողներ Հրաչ, Սուրեն, Մուշեղ, Մելան և Հայկ Մանուչարյանների ու Սեդա Մինասյանի դեմ ուղղված պահանջի մասով գործի հետագա ընթացքը սահմանված կարգով լուծելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.07.2022 թվականի որոշումը մասնակիորեն՝ համապատասխանողներ Հրաչ, Սուրեն, Մուշեղ, Մելան և Հայկ Մանուչարյանների ու Սեդա Մինասյանի դեմ ուղղված պահանջի մասով ևս Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 24.02.2022 թվականի «Քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին» որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասով, բեկանել և գործն այդ մասով ուղարկել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝

նոր քննության. մնացած մասով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.07.2022 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

### 30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ	ԼԴ/1411/02/21 2023թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԼԴ/1411/02/21	
Նախագահող դատավոր՝	Լ. Հովհաննիսյան	
Դատավորներ՝	Ս. Թորոսյան Ն. Մարգարյան	

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող և զեկուցող* Գ. ՀԱԿՈՒԹՅԱՆ  
Ս. ՄԵՂՐՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2023 թվականի սեպտեմբերի 01-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ Արթուր Մկրտչյանի հայցի ընդդեմ Լուսինե Մ Մանուկյանի, իրավասու մարմիններ Վանաձոր համայնքի ու Գավառ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ երեխաների բնակության վայրը որոշելու ու ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2022 թվականի որոշման դեմ Արթուր Մկրտչյանի բերած վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Արթուր Մկրտչյանը պահանջել է երեխաների՝ 31.12.2012 թվականին ծնված Արսեն և 04.10.2014 թվականին ծնված Ալիկ Մկրտչյանների բնակության վայր որոշել իր բնակության վայրը, ինչպես նաև Լուսինե Մ Մանուկյանից որպես Արսեն և Ալիկ Մկրտչյանների ապրուստի միջոց բռնագանձել ալիմենտ՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 60.000 ՀՀ դրամ:

Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 14.06.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է 31.12.2012 թվականին ծնված Արսեն և 04.10.2014 թվականին ծնված Ալիկ Մկրտչյանների բնակության վայր որոշել հոր՝ Արթուր Մկրտչյանի բնակության վայրը, ինչպես նաև Լուսինե Մ Մանուկյանից հոգուտ 31.12.2012

թվականին ծնված Արսեն և 04.10.2014 թվականին ծնված Ալիկ Մկրտչյանների բռնագանձել ալիմենտ Լուսինե Մ Մանուկյանի վաստակի և (կամ) այլ եկամտի 1/3 չափով՝ սկսած 17.03.2021 թվականից մինչև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ալիմենտային պարտավորությունների դադարման հիմքերից որևէ մեկի վրա հասնելը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.12.2022 թվականի որոշմամբ Լուսինե Մ Մանուկյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 14.06.2022 թվականի վճիռը՝ երեխաների բնակության վայրը որոշելու պահանջի մասով, բեկանվել է, և քաղաքացիական գործի վարույթը կարճվել է, իսկ ալիմենտ բռնագանձելու պահանջի մասով Դատարանի 14.06.2022 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արթուր Մկրտչյանը (ներկայացուցիչ Արթուր Սուքիասյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը և 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված հիմքի ստկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն քաղաքացիական գործով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը կիրառելի չէ, քանի որ իր կողմից ներկայացված և Ռուսաստանի Դաշնության Օրենսդրության քաղաքի Լենինսկի շրջանային դատարանում քննված քաղաքացիական գործերը մինևնույն հիմքով չեն:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ քաղաքացիական գործում առկա՝ Ռուսաստանի Դաշնության Օրենսդրության քաղաքի Լենինսկի շրջանային դատարանի 27.10.2020 թվականի վճռի բովանդակության մեջ չկա նշում այն մասին, որ երեխաների բնակության վայրը որոշելու հիմքը եղել է այն, որ դա բխում է երեխաների լավագույն շահից: Հետևաբար, սույն քաղաքացիական գործի և Ռուսաստանի Դաշնությունում քննված քաղաքացիական գործերի՝ մինևնույն հիմքերով լինելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը որևէ փաստական հիմք չունի:

Բացի այդ, Ռուսաստանի Դաշնության Օրենսդրության քաղաքի Լենինսկի շրջանային դատարանի 27.10.2020 թվականի վճռում որպես փաստական հիմք վկայակոչված է փորձագետի եզրակացությունը, իսկ սույն քաղաքացիական գործի նյութերում առկա է կատարողական վարույթի շրջանակներում իրականացված փորձագետի այլ եզրակացություն, որտեղ նշված եզրահանգումները վկայում են այն մասին, որ երեխաների բնակության վայրը հոր բնակության վայրում որոշելը բխում է երեխաների շահերից: Հետևաբար, այլ են նաև Ռուսաստանի Դաշնության Օրենսդրության քաղաքի Լենինսկի շրջանային դատարանի 27.10.2020 թվականի վճիռը կայացնելու համար հիմք հանդիսացած փորձագետի եզրակացությունը և սույն քաղաքացիական գործով վճռի հիմքում դրված փորձագետի եզրակացությունը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Ռուսաստանի Դաշնությունում քաղաքացիական գործը քննելուց հետո երեխաների բնակության վայրի հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ



փոխվել են, մասնավորապես՝ երեխաների բնակության երկիրը, մոտ երկու տարի երեխաները բնակվում են իր հետ, կապված են իր և իր կողմի ընտանիքի ու հարազատների հետ, Վանաձոր քաղաքում հաճախում են դպրոց, սպորտային մարզումների, իրենց բնակության վայրում ունեն բազմաթիվ ընկերներ և այլն:

Ռուսաստանի Դաշնությունում քննված քաղաքացիական գործի և սույն քաղաքացիական գործի հիմքերի տարբերությունը նաև այն է, որ շուրջ երկու տարվա ընթացքում Լուսինե Մ Մանուկյանը չի կարողացել վերականգնել հոգեբանական կապը երեխաների հետ ու ազդել երեխաների կարծիքի վրա, ինչի արդյունքում ներկայումս առկա է այն իրավիճակը, որ երեխաներին Լուսինե Մ Մանուկյանի բնակության վայր տեղափոխելը անհնար է: Երեխաներին Լուսինե Մ Մանուկյանի բնակության վայր տեղափոխելու անհնարինությունը հիմնավորվում է նաև նրանով, որ Ռուսաստանի Դաշնությունում քննված գործով տրված՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը, որի հիման վրա անչափահասներ Արսեն և Ալիկ Մկրտչյանների խնամքը պետք է հանձնվեին Լուսինե Մ Մանուկյանին, դեռևս 2021 թվականի օգոստոս ամսից մնացել է անկատար, քանի որ երեխաները կտրականապես հրաժարվել են գնալ մոր մոտ, իսկ 2022 թվականի հունիս ամսից սկսած ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժինը մի քանի անգամ միջոցներ է ձեռնարկել Ռուսաստանի Դաշնությունում քննված գործով կայացված վերջնական դատական ակտի պահանջները կատարելու ուղղությամբ, սակայն կրկին կատարողական թերթի պահանջը մնացել է անկատար, քանի որ երեխաները կտրականապես հրաժարվել են գնալ մոր մոտ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.12.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Արսեն ու Ալիկ Մկրտչյանների բնակության վայրը սահմանել (որոշել) իր բնակության վայրը, Լուսինե Մ Մանուկյանից հօգուտ Արթուր Մկրտչյանի՝ որպես Արսեն և Ալիկ Մկրտչյանների ապրուստի միջոց բռնագանձել ալիմենտ՝ յուրաքանչյուր երեխայի համար ամսական 60.000 ՀՀ դրամ:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը

1) 31.12.2012 թվականին ծնված Արսեն Արթուրի Մկրտչյանի և 04.10.2014 թվականին ծնված Ալիկ Արթուրի Մկրտչյանի ծնողներն են Արթուր Արսենի Մկրտչյանն ու Լուսինե Ալիկի Մ Մանուկյանը (**հատոր 1-ին, գ.թ. 18, 19**).

2) հայցվոր Լուսինե Ալիկի Մ Մանուկյանը հայց է ներկայացրել Ռուսաստանի Դաշնության Օրենքուրգ քաղաքի Լենինսկի շրջանային դատարան ընդդեմ պատասխանող Արթուր Մկրտչյանի՝ ամուսնությունը լուծելու և որպես երեխաների բնակության վայր իր բնակության վայրը որոշելու պահանջների մասին, իսկ պատասխանող Արթուր Մկրտչյանը ներկայացրել է հակընդդեմ հայց՝ խնդրելով որպես երեխաների բնակության վայր որոշել իր բնակության վայրը:

Ռուսաստանի Դաշնության Օրենքուրգ քաղաքի Լենինսկի շրջանային դատարանի 27.10.2020 թվականի վճռով Լուսինե Ալիկի Մ Մանուկյանի հայցը բավարարվել է, իսկ Արթուր Մկրտչյանի հակընդդեմ հայցը մերժվել է: Ռուսաստանի Դաշնության Օրենքուրգի մարզային դատարանի քաղաքացիական գործերով դատական կոլեգիայի 20.04.2021 թվականի որոշմամբ վճիռը թողնվել է անփոփոխ, իսկ Արթուր Մկրտչյանի վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:

Թիվ ԼԴ/0007/16/21 քաղաքացիական գործով Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 11.10.2021 թվականի որոշմամբ Լուսինե Մ Մանուկյանի դիմումը բավարարվել է՝ Ռուսաստանի Դաշնության Օրենքորգ քաղաքի Լենինսկի շրջանային դատարանի 27.10.2020 թվականի վճիռը՝ ըստ Լուսինե Մ Մանուկյանի հայցի ընդդեմ Արթուր Մկրտչյանի՝ ամուսնությունը լուծելու և որպես անչափահաս երեխաներ Արսեն Մկրտչյանի ու Ալիկ Մկրտչյանի բնակության վայր իր բնակության վայրը որոշելու պահանջների մասին բավարարելու վերաբերյալ, ճանաչվել է Հայաստանի Հանրապետությունում և թույլատրվել հարկադիր կատարման:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 24.12.2021 թվականի որոշմամբ Արթուր Մկրտչյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 11.10.2021 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 02.03.2022 թվականի որոշմամբ Արթուր Մկրտչյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է:

3) 2021 թվականի մարտին Արթուր Մկրտչյանը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Լուսինե Մ Մանուկյանի, իրավասու մարմիններ Վանաձոր համայնքի ու Գավառ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ երեխաների բնակության վայրը որոշելու ու ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին: Նշված հայցադիմումը 23.06.2021 թվականին ընդունվել է վարույթ **(հատոր 1-ին, գ.թ. 3-10, հատոր 2-րդ, գ.թ. 3):**

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Սույն բողոքի բնության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ ծնողների միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելու վերաբերյալ գործերով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված հիմքով այդ գործի վարույթը կարճելու պարտադիր վավերապայմաններին՝ միաժամանակ վերահասարարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի վերաբերյալ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները:*

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և

ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը, երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը (...):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ծնողների միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշվում է ծնողների համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում ծնողների միջև վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից և հաշվի առնելով երեխայի կարծիքը: Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված վեճերը քննելիս գործին պետք է մասնակից դարձնի խնամակալության և հոգաբարձության մարմնին, անկախ նրանից, թե ով է ներկայացրել երեխայի պաշտպանության մասին հայց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խնամակալության և հոգաբարձության մարմինը պարտավոր է անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի պայմանների հետազոտություն, որը (որոնք) հավակնում է (են) երեխայի խնամքի և դաստիարակության կազմակերպմանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը, (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատարանները երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան երեխայի շահերի առավել ապահովմանը (*իրեն Անի Մարտիրոսյանն ընդդեմ Գուրգեն Խալաթյանի թիվ ԵԱԲԴ/0474/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.03.2012 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում գտել է, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու և երեխաների բնակության վայրի շուրջ ծնողների համաձայնության բացակայության դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը պետք է համեմատական գնահատական տա և պատճառաբանի, թե որ ծնողի հետ բնակվելն է բխում երեխայի շահերից և նպաստում երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը (*իրեն Արա Միրզախանյանն ընդդեմ Դիանա Խաչատրյանի թիվ 3-432/ՏԴ քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է նաև, որ ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելիս դատարանը յուրաքանչյուր կոնկրետ գործով պետք է ելնի երեխայի լավագույն շահերից՝ այն գնահատելիս որպես հիմք ընդունելով օրենսդրորեն սահմանված հետևյալ պայմանները.

- 1) երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ,
- 2) երեխայի տարիքը,
- 3) ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշները,

4) ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները,

5) երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ երեխայի բնակության վայրը որոշելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործեր քննելիս դատարանը կարող է բացահայտել երեխայի լավագույն շահերը հիմք ընդունելով ոչ միայն երեխայի լավագույն շահերը որոշելու օրենսդրորեն կանխորոշված վերոգրյալ չափանիշները, այլ նաև տվյալ գործով դատարան ներկայացված և դատարանին հայտնի այլ պայմաններ: Ընդ որում, երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի բացահայտման հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գործում առկա յուրաքանչյուր ապացույցի անմիջական գնահատման արդյունքում: Այլ կերպ ասած՝ երեխայի բնակության վայրը որոշելիս երեխայի լավագույն շահերի բովանդակության մեջ ընդգրկվող յուրաքանչյուր չափանիշի առկայության կամ բացակայության մասին դատարանի դիրքորոշումը պետք է ձևավորվի գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման արդյունքում՝ հաշվի առնելով ապացույցների համակցությունը և փոխադարձ կապը, ինչպես նաև դատարանի ներքին համոզմունքը (*լրեն Աննա Ասատրյանն ընդդեմ Դավիթ Խաչատրյանի թիվ ԵՄԿ/0124/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.12.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով երեխայի՝ դատարանում լաված լինելու իրավունքի իրացման առանձնահատկություններին վերջինիս բնակության վայրը որոշելու իրավակարգավորման համատեքստում, արձանագրել է, որ երեխայի բնակության վայրը որոշելու իրավակարգավորման համատեքստում մինչև տասը տարեկան երեխայի կարծիքը պարտադիր չէ դատարանի համար, և վերոնշյալ խնդիրը լուծելիս դատարանը պետք է ելնի կոնկրետ գործի հանգամանքներից, երեխայի տարիքից և հասունության մակարդակից և առաջնորդվի երեխայի լավագույն շահերով՝ ապահովելով «երեխայի լավագույն շահերի» բովանդակությունը կազմող անհրաժեշտ պայմանների առկայությունը (*լրեն Նարինե Մելքոնյանն ընդդեմ Ալբերտ Ալավերդյանի թիվ ԵԿ/1057/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.10.2019 թվականի որոշումը*):

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեյս Կրեյս v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*):

Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*Կրեյս Կրեյս v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*):

Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*Կրեյս Կրեյս v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացված որոշմամբ անդարադառնալով դատարանի մատչելիության իրավունքին ուղղակիորեն հարաբերակցվող հայց հարուցելու իրավունքի նախադրյալներին, արձանագրել է, որ դրանք այն հանգամանքներն են, որոնց առկայության կամ բացակայության հետ օրենսդիրը կապում է կոնկրետ գործով դատարան հայց ներկայացնելու սուբյեկտիվ իրավունքի ծագումը: Հայց ներկայացնելու իրավունքի բացասական նախադրյալ է նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությունը (*Կրեյս Կրեյս «Տորք 5/4» համապիտույթունն ընդդեմ Մարգիտ Մանուկյանի թիվ ԵԴ/16359/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական սյալարի 16.12.2020 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ, բացառությամբ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշման:

Վերը նշված որոշմամբ վերլուծելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ համանման կարգավորում բովանդակել է նաև Հայաստանի

Հանրապետության քաղաքացիական դատավարության 1998 թվականի հունիսի 17-ի օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետը, որի կապակցությամբ *Մյունխի մարզի Ներքին Հանդ համայնքն ընդդեմ «Գ. Արշակյան» ՄՊԸ-ի թիվ ԵԿԴ/0407/02/11 քաղաքացիական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանը 25.12.2012 թվականի որոշմամբ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ գործի վարույթը կարող է կարճվել միայն այն դեպքում, երբ նույնն են օրինական ուժի մեջ մտած վճռով լուծված և տվյալ քաղաքացիական գործերի կողմերը, այսինքն՝ քաղաքացիական վարույթում հակադիր շահերով օժտված անձինք, հայցի առարկան, այսինքն՝ հայցվորի կողմից պատասխանողին ուղղված կյոթաիրավական պահանջը, հայցի հիմքը, այսինքն՝ այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները՝ բացառությամբ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշման առկայության դեպքերի, և նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում քաղաքացիական գործի վարույթը կարճվել չի կարող:

*«Նորք 5/4» համապիրությունն ընդդեմ Սարգիս Մանուկյանի թիվ ԵԴ/16359/02/18 քաղաքացիական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանը 16.12.2020 թվականի որոշմամբ դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ օրենսդրի կողմից նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած վճռի պարագայում դատարան դիմելու իրավունքի սահմանափակումն ինքնանպատակ չէ, այլ նպատակաուղղված է դատավարական իրավունքների չարաշահման կանխարգելմանը, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի, իրավական որոշակիության, դատական խնայողության սկզբունքների ապահովմանը: Շահագրգիռ անձը, դատարան դիմելով, իրացնում է դատական պաշտպանության և արդար դատաքննության իր իրավունքները, որոնք միաժամանակ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքներ են նաև դատավարության մյուս կողմի համար: Չնայած հայցվորի տնօրինչական իրավունքն է հայց հարուցելը, սակայն այդ իրավունքն ուղղակիորեն առնչվում է նաև պատասխանողի դատավարական իրավունքների հետ, ուստի օրենսդիրը նախատեսել է որոշակի երաշխիքներ նաև պատասխանողի համար՝ դատական պաշտպանության իր իրավունքն իրացնելու հարցում: Մասնավորապես՝ դատական պաշտպանության իրավունքը ենթադրում է նաև իրավական որոշակիություն, կանխատեսելի դատական ակտի առկայություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և այդ սկզբունքի շրջանակներում՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշին՝ արձանագրելով, որ արդար դատաքննության իրավունքը պահպանված է այն դեպքում, երբ անձը հնարավորություն ունի ստանալու որոշակի, հաստատուն որոշում՝ կապված իր իրավունքների և պարտականությունների հետ, ու կարող է համոզված լինել, որ որոշ ժամանակ անց այդ որոշումը չի վերացվի: Իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ, ի թիվս այնի, ներառվում է նաև դրույթ այն մասին, որ կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայում՝ միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով (*լրե՛ս, օրինակ, Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան ու Միշա Վարդանյանների և մյուսների թիվ ԱԲԴ/0062/02/09 քաղաքացիական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը): Հետևաբար նաև այս սկզբունքի հաշվառմամբ է, որ օրենսդիրն արգելում է նույն հայցով (նույն անձանց միջև, նույն առարկայի

մասին և մինևնույն փաստական հիմքերով) կրկին դատարան դիմելն օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում՝ օրենքով սահմանված որոշակի բացառություններով հանդերձ:

Բացի այդ, ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադառնալով գործի վարույթը կարճելու դատավարական փուլին, նշել է, որ գործի վարույթի կարճումն իրենից ներկայացնում է գործի վարույթի ավարտ՝ առանց դատարանի կողմից գործն ըստ էության քննելու և վեճը լուծող վերջնական դատական ակտ կայացնելու (*լրեն՝ Նիկոլայ Իսկանդարյանն ընդդեմ ՀՀ կատավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Վեհաճուշ Գրիգորյանի թիվ 3-169(ՎՀԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2007 թվականի որոշումը*): Ըստ այդմ էլ Վճռաբեկ դատարանը գտել է, որ չնայած այն հանգամանքին, որ գործի վարույթի կարճումը դատավարական մի փուլ է, որի ընթացքում դատարանը գործի ըստ էության քննություն չի իրականացնում, այնուամենայնիվ դատավարական այս փուլում դատարանը պարզում և գնահատում է գործի վարույթի կարճման հիմքում ընկած փաստական հանգամանքների հիմնավորվածությունը՝ արդյունքում կայացնելով համապատասխան դատական ակտ: Նույն գործով ՀՀ վճռաբեկ դատարանը, անհրաժեշտ համարելով մեկնաբանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված «մինևնույն փաստական հիմքերով» օրենսդրական եզրույթը, արձանագրել է, որ չնայած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին անմիջականորեն չի սահմանում հայցի փաստական հիմքերի հասկացությունը, այնուամենայնիվ, այն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերի (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մաս, 121-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ) համակարգային վերլուծությունից, որի համաձայն՝ օրենսդիրը որպես հայցադիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պարտադիր նշվող պայման սահմանել է այն փաստական հանգամանքները նշելը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը: Հայցադիմումում պարտադիր պետք է ներառվեն հայցապահանջը հիմնավորող փաստական հիմքերը, որոնք, ըստ էության, այն իրավաբանական փաստերն են (հանգամանքները), որոնք դրվել են հայցվորի պահանջի հիմքում և որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է որոշակի իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով հայցի փաստական հիմքը վերջնականորեն որոշում է դատարանը՝ հիմք ընդունելով գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները, ինչպես նաև այդ իրավահարաբերությունը կարգավորող նյութական իրավունքի նորմերը: Օրենսդիրը, բացի փաստական հանգամանքներից, հայցվորին չի պարտադրում հայցադիմումում ներառել նաև այն իրավական նորմերը, որոնք կարգավորում են վիճելի իրավահարաբերությունը (*լրեն՝ «Նորք 5/4» համարիրությունն ընդդեմ Սարգիս Մանուկյանի թիվ ԵԿ/16359/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 16.12.2020 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով հայցի փաստական հիմքի իրավական վերլուծությանը, փաստել է, որ հայցի փաստական հիմքում դրված իրավաբանական փաստերը միայն վերացական հիմք են պահանջ ներկայացնելու համար: Քաղաքացիական դատավարության շրջանակներում դրանք պետք է նաև հիմնավորվեն: Այդ գործընթացը ներառվում է ապացուցման գործընթացում: Օրենսդիրը, բացի հայցի փաստական

հիմքերից, նախատեսում է նաև, որ հայցադիմումում նշվում են այն ապացույցները, որոնք հաստատում են հայցի հիմքում դրված փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե որ ապացույցն ինչ փաստի հաստատմանն է ուղղված: Դրանք, ըստ էության, հայցի փաստական հիմքը հիմնավորող ապացույցներն են: ՀՀ քաղաքացիական դատավարության շրջանակներում պետք է տարբերակել հայցի փաստական հիմքը, հայցի հիմքը և պահանջը հիմնավորող ապացույցները: Հայցի հիմքում ընկած փաստական հանգամանքների մատնանշումը հայցադիմումի մեջ համարվում է տվյալ հիմքով հայցի ներկայացում: Հայցի հիմքում դրված փաստերի հիմնավորումը կապված է ապացուցման գործընթացի հետ և չի կարող նույնացվել հայցի հիմքի հետ: Հայցի փաստական հիմքերի ներկայացումը և դրանք հիմնավորող ապացույցները չներկայացնելը տարբեր իրավաբանական նշանակություն և հետևանքներ ունեն: Հայցի հիմքում դրված փաստերի վերաբերյալ ապացույցներ չներկայացնելը հիմք է հայցը մերժելու համար, իսկ հայցի փաստական հիմքի ներկայացումն անձին գրկում է այդ հիմքով նորից դատարան դիմելու հնարավորությունից (*տե՛ս Վիգեն Որոշանյանի ընդդեմ Սուրիկ Սեդրակյանի թիվ ԵՇԿ/0473/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 27.05.2011 թվականի որոշումը*):

ՀՀ ընտանեկան օրենսգրքի վերը նշված նորմերի վերաբերյալ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում զարգացնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված հիմքով գործի վարույթը կարճելու պարտադիր վավերապայմանների առումով արտահայտված իավական դիրքորոշումները՝ Վճարելի դատարանն արձանագրում է հետևյալը:

Ինչպես արդեն իսկ նշվեց վերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված հիմքով գործի վարույթը կարճելու պարտադիր վավերապայմաններից է օրինական ուժի մեջ մտած վճռով լուծված և տվյալ քաղաքացիական գործով հայցի փաստական հիմքի, այսինքն՝ այն իրավաբանական փաստերի (հանգամանքների) նույնական լինելը, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները, և որոնք դրվել են հայցվորի պահանջի հիմքում, ու որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է որոշակի իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը: Իրավական որոշակիության սկզբունքի հաշվառմամբ է, որ օրենսդիրն արգելում է նույն հայցով (նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով) կրկին դատարան դիմելն օրինական ուժի մեջ մտած վճռի առկայության պայմաններում՝ օրենքով սահմանված որոշակի բացառություններով հանդերձ: Սակայն իրավական որոշակիության սկզբունքը սույն դեպքում պետք է դիտարկել նաև այն տեսանկյունից, որ դատարանը ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելու վերաբերյալ գործերով ՀՀ քաղաքացիական դատավարության 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված հիմքով գործի վարույթը կարճելու պարտադիր վավերապայմանների առկայությունը գնահատելիս պետք է հիմք ընդունի Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումը, որի համաձայն՝ երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

Դրանից ելնելով՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում, երբ դատարանը քննում է ծնողների՝ միմյանցից առանձին ապրելու դեպքում երեխաների բնակության վայրը որոշելու վերաբերյալ գործ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում



նշված հիմքով գործի վարույթը կարճելիս պետք է պարզի՝ արդյո՞ք նույնական են օրինական ուժի մեջ մտած վճռով լուծված և տվյալ քաղաքացիական գործով հայցի փաստական հիմքերը: Ընդ որում, օրինական ուժի մեջ մտած վճռով լուծված և տվյալ քաղաքացիական գործով հայցի փաստական հիմքերի նույնական լինելը կարող է հաստատվել բացառապես այն դեպքում, երբ *ժամանակային գործունի առումով տեղի չի ունեցել երեխայի լավագույն շահի փոփոխություն*, որպիսի գնահատականը կարող է տրվել՝ հիմք ընդունելով երեխայի ներկայիս կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի ներկայիս տարիքը, ծնողների ներկայիս բարոյական և անձնական այլ հատկանիշները, ծնողներից յուրաքանչյուրի ու երեխայի միջև ներկայումս գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության և զարգացման համար ներկայումս պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային և ընտանեկան դրությունը, և այլն):

### *Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ*

Սույն գործի փաստերի համաձայն՝ 31.12.2012 թվականին ծնված Արսեն Արթուրի Մկրտչյանի և 04.10.2014 թվականին ծնված Ալիկ Արթուրի Մկրտչյանի ծնողներն են սույն գործով հայցվոր Արթուր Մկրտչյանը ու պատասխանող Լուսինե Ալիկի Մ Մանուկյանը:

2021 թվականի մարտ ամսին Արթուր Մկրտչյանը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Լուսինե Մ Մանուկյանի, իրավասու մարմիններ Վանաձոր համայնքի ու Գավառ համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմինների՝ որպես երեխաների բնակության վայր իր բնակության վայրը որոշելու ու ալիմենտ բռնագանձելու պահանջների մասին: Նշված հայցադիմումը 23.06.2021 թվականին ընդունվել է վարույթ:

Դատարանի 14.06.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է 31.12.2012 թվականին ծնված Արսեն և 04.10.2014 թվականին ծնված Ալիկ Մկրտչյանների բնակության վայր որոշել հոր՝ Արթուր Մկրտչյանի բնակության վայրը, ինչպես նաև Լուսինե Մ Մանուկյանից հոգուտ 31.12.2012 թվականին ծնված Արսեն և 04.10.2014 թվականին ծնված Ալիկ Մկրտչյանների բռնագանձել ալիմենտ Լուսինե Մ Մանուկյանի վաստակի ու (կամ) այլ եկամտի 1/3 չափով՝ սկսած 17.03.2021 թվականից մինչև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ ալիմենտային պարտավորությունների դադարման հիմքերից որևէ մեկի վրա հասնելը:

Վերաքննիչ դատարանի 15.12.2022 թվականի որոշմամբ Լուսինե Մ Մանուկյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 14.06.2022 թվականի վճիռը՝ երեխաների բնակության վայրը որոշելու պահանջի մասով, բեկանվել է, և քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին ու մինևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի առկայության հիմքով՝ այն պատճառաբանությամբ, որ *«սույն գործով խնդրո առարկա հարցի՝ անչափահասներ Արսեն Արթուրի Մկրտչյանի և Ալիկ Արթուրի Մկրտչյանի բնակության վայրն որոշելու հարցի կապակցությամբ առկա է օրինական ուժի մեջ մտած օրտարերկրյա դատարանի դատական ակտ, որը ձանաչվել է և կատարվում է ՀՀ-ում, նշված դատական ակտով կողմեր են հանդիսանում նույն Լուսինե Ալիկի Մ Մանուկյանը և Արսեն Արթուրի Մկրտչյանը, նշված դատական ակտով երեխաների բնակության վայրի հարցը լուծվել է հոգուտ*

Լուսինե Ալիկի Մ Մանուկյանի, իսկ հակընդդեմ հայցվոր Արսեն Արթուրի Մկրտչյանի պահանջը մերժվել է»:

Մինևույն ժամանակ Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Արթուր Մկրտչյանի կողմից դատական նիստում հայտնած այն փաստարկին, որ «Օրենքուրդ քաղաքի Լենինսկի շրջանային դատարանի 27.10.2020թ. 2-4161 56RS0018-01-2020-005120-06 վճռի կայացումից հետո երեխաները արդեն որոշակի ժամանակահատված բնակվում են Հայցվորի հետ, փոխվել են նաև առանձին փաստական հանգամանքներ», գտել է, որ «առաջնորդվելով իրավական որոշակիության, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության, ինչպես նաև դատական պաշտպանության իրավունքի չարաշահման արգելքով, վկայակոչված փաստական հանգամանքները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջը անբեկելու և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի գոյության պայմաններում՝ դրան ուղղակիորեն հակասող այլ դատական ակտի կայացման իրավաչափ ակնկալիք ունենալու համար: Հակառակ դեպքում կարացվի, որ անձը, դիմելով դատարան և սրանալով իր պահանջի բավարարման վերաբերյալ դատական ակտ, չի կարող ունենալ որևէ վարստություն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունության, նշված դատական ակտի հասցեատերերի համար սահմանված իրավունքների և պարտականությունների նկատմամբ, քանի որ դատավարական նորմերի նման անհարկի լայն մեկնաբանման արդյունքում կողմը կարող է անընդմեջ դիմել դատարան՝ հակադարձ պահանջի բավարարման ակնկալիքով և արդարադատության իրականացումը կկրի ձևական բնույթ, ինչն, իհարկե, չի բխում ոչ գործող դատավարական նորմերի փաստաբանությունից և ոչ էլ ՀՀ սահմանադրական դատարանի 11.02.2020 թվականի թիվ ՄԻՌ-1515 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումից»:

Արդյունքում Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «սույն քաղաքացիական գործի վարույթը երեխաների բնակության վայրը որոշելու պահանջի մասով, ենթակա է կարճման, և հաշվի առնելով, որ Օրենքուրդ քաղաքի Լենինսկի շրջանային դատարանի 27.10.2020թ. 2-4161 56RS0018-01-2020-005120-06 վճռով երեխաների բնակության վայրը որոշված է Լուսինե Ալիկի Մ Մանուկյանի բնակության վայրով», գտել է, որ «ատարկայագուրկ է դառնում նաև հոգուր Հայցվորի ալիմենտի բուսագանձման հարցի քննարկումը, քանի որ երեխաներն, ըստ էության, գտնվելու են Պարսպախանտղի ինստիտուտում, ուստի բողոքարկվող դատական ակտը՝ ալիմենտի բուսագանձման պահանջի մասով, պետք է բեկանել և փոփոխել մերժելով նշված պահանջը»:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի փաստերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև նույն են օրինական ուժի մեջ մտած՝ Ռուսաստանի Դաշնության Օրենքուրդ քաղաքի Լենինսկի շրջանային դատարանի կողմից կայացված վճռով լուծված և սույն քաղաքացիական գործերի կողմերը, ինչպես նաև հայցի առարկան, սակայն նույնը չեն հայցի հիմքերը, որպիսի եզրահանգումը պայմանավորված է նրանով, որ սույն քաղաքացիական գործով հայցվոր Արթուր Մկրտչյանի կողմից ներկայացված հայցապահանջի հիմքում դրվել են Ռուսաստանի Դաշնության Օրենքուրդ քաղաքի Լենինսկի շրջանային դատարանի կողմից վճիռը կայացնելուց հետո ժամանակային գործոնի առումով տեղի ունեցած որոշակի փոփոխություններ՝ կապված երեխայի լավագույն շահի հետ, որոնք,

ըստ հայցվորի դիրքորոշման, արտահայտվում են նրանում, որ Ռուսաստանի Դաշնության Օրենսդրության քաղաքի Լենինսկի շրջանային դատարանի կողմից վճիռը կայացվելուց հետո փոխվել է երեխաների տարիքը, երեխաներն ավելի քան մեկ տարի բնակվում են իր հետ, որով պայմանավորված՝ փոխվել են կենսապահովման պայմանները, անցել է շուրջ մեկուկես տարի, մինչդեռ պատասխանողը, տևական ժամանակ հնարավորություն ունենալով շփվելու իր երեխաների հետ, այդ ժամանակահատվածում չի կարողացել վերականգնել հուզական կապը նրանց հետ: Այսինքն՝ սույն քաղաքացիական գործով հայցվոր Արթուր Մկրտչյանը հայցապահանջի հիմքում դրել է այնպիսի նոր հանգամանքներ, որոնք երեխաների լավագույն շահերին առնչվում են այնքանով, որքանով վերաբերում են նաև վերջիններիս՝ ներկա դրությամբ ունեցած կապվածությանը հայցվոր Արթուր Մկրտչյանի հետ, երեխաների ներկայիս տարիքին, ծնողներից յուրաքանչյուրի և երեխաների միջև ներկայումս գոյություն ունեցող հարաբերություններին:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի վերը նշված պատճառաբանությունը չէր կարող բավարար հիմք հանդիսանալ Դատարանի 14.06.2022 թվականի վճիռը երեխաների բնակության վայրը որոշելու պահանջի մասով, բեկանելու և քաղաքացիական գործի վարույթը՝ նույն անձանց միջև, նույն առարկայի մասին ու միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրակացության հիմքերով, կարճելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը վերը նշված հանգամանքները դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի և 390-րդ հոդվածի 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի 15.12.2022 թվականի որոշումն ամբողջությամբ բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դատական ակտն ամբողջությամբ բեկանելու և գործը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության ուղարկելու լիազորությունը՝ որպես նոր քննության ծավալ սահմանելով Լուսինե Մ Մանուկյանի բերած վերաքննիչ բողոքի ըստ էության քննության իրականացումը:

### ***5. Վճռաբեկ դատարանի պարանոտաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.12.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

### 31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Ֆաղաքացիական գործ թիվ ԵԴ/22976/02/22  
Նախագահող դատավոր՝ Լ. Ենոքյան 2023թ.

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

Նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
գեկուցող Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ  
Ս. ՄԵՂՐՅԱՆ  
Է. ՍԵՂՐԱԿՅԱՆ

2023 թվականի նոյեմբերի 01-ին

գրավոր ընթացակարգով քննելով Կարինե Հակոբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.07.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Կարինե Հակոբյանի ընդդեմ Ալեքսանդր Սահակյանի՝ պաշտպանական որոշում կայացնելու պահանջի մասին,

#### Պ Ա Ր Զ Ե Ց

##### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Կարինե Հակոբյանը պահանջել է կայացնել պաշտպանական որոշում և Ալեքսանդր Սահակյանի նկատմամբ վեց ամիս ժամկետով կիրառել հետևյալ սահմանափակումները՝

1. արգելել Ալեքսանդր Սահակյանին այցելել իր հետ համատեղ չբնակվող Կարինե Հակոբյանին, ինչպես նաև վերջինիս խնամքի տակ գտնվող անչափահաս որդուն՝ Անոն Սահակյանին, նրանց աշխատանքի, ուսման, հանգստի, բնակության և այլ վայրեր,

2. արգելել Ալեքսանդր Սահակյանին հիսուն մետր հեռավորությունից ավելի մոտենալ Կարինե Հակոբյանին և իր խնամքին գտնվող անչափահաս որդուն՝ Անոն Սահակյանին,

3. արգելել Ալեքսանդր Սահակյանին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել Կարինե Հակոբյանի հետ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 20.06.2022 թվականի որոշմամբ հայցը բավարարվել է մասնակիորեն՝ հետևյալ կերպ՝

«(...) 2. Ալեքսանդր Բաբկենի Սահակյանի նկատմամբ 6 /վեց/ ամիս ժամկետով կիրառել հետևյալ սահմանափակումները.

1/ Արգելել Ալեքսանդր Բաբկենի Սահակյանին այցելել իր հետ համատեղ չբնակվող Կարինե Վարուժի Հակոբյանին /ծնված՝ 01.07.1986թ-ին/, նրա աշխատանքի, ուսման, հանգստի, բնակության և այլ վայրեր,

2/ Արգելել Ալեքսանդր Բաբկենի Սահակյանին 50 մետր հեռավորությունից ավելի մոտենալ Կարինե Վարուժանի Հակոբյանին,

3/ Արգելել Ալեքսանդր Սահակյանին հեռախոսային, նամակագրական կամ կապի այլ միջոցներով հաղորդակցվել Կարինե Վարուժանի Հակոբյանի հետ»: Մնացած մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.07.2022 թվականի որոշմամբ Դատարանի 20.06.2022 թվականի «Պաշտպանական որոշման պահանջի մասին հայցադիմումը քննության առնելու մասին» որոշման դեմ Կարինե Հակոբյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Կարինե Հակոբյանը (ներկայացուցիչ Անահիտ Բեգլարյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ և 13-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ, 26-րդ, 360-րդ և 361-րդ հոդվածները, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով նախատեսված է պաշտպանական որոշման բողոքարկման ենթակա լինելու մասին կանոն, իսկ բողոքարկման կարգի մասով հղում է կատարված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին: Տվյալ դեպքում գործը քննվել է հատուկ հայցային վարույթի կարգով և կայացվել է եզրափակիչ դատական ակտ, որը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումների շրջանակում ենթակա է բողոքարկման:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 14.07.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

**3. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ, 361-րդ և 370-րդ հոդվածների միատեսակ կիրառության համար, քանի որ թիվ ԵԴ/13821/02/20, թիվ ԵԴ/24118/02/18 ու թիվ ԵԴ/8186/02/21 քաղաքացիական գործերով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում նշված նորմերը կիրառվել են հակասող մեկնաբանությամբ:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «Ընդունվելու բռնության կանխարգելման, ընդունվելու բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընդունվելու համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պաշտպանական որոշման մասին առաջին արյանի դատարանի կայացրած դատական ակտը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորության հարցին:*

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատական քննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ դրանք դիտարկելով դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատարնթացակարգային բնագավառներում (քրեական, քաղաքացիական և վարչական):

Իր մի շարք որոշումներում անդրադառնալով դատարանի մատչելիության սահմանափակումների հարցին՝ Սահմանադրական դատարանն ամրագրել է հետևյալը.

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը (*յրեն Սահմանադրական դատարանի 24.09.2019 թվականի ՄԴՈ-1477 որոշումը*):

Սահմանադրական դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է նաև, որ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ օրենսդրորեն նախատեսված, հստակ և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն (*յրեն Սահմանադրական դատարանի 09.04.2007 թվականի թիվ ՄԴՈ-690 որոշումը*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն ևս՝ արդարադատության մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ տարր է:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*տե՛ս Եվրոպական դատարանի Էշինգդեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 28.05.1985 թվականի վճիռը*):

Դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ Եվրոպական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (*տե՛ս Եվրոպական դատարանի Case of Khalifaoui v. France գործով 14.03.2000 թվականի վճիռը*):

Ազգային ժողովի կողմից 13.12.2017 թվականին ընդունվել և 31.01.2018 թվականին ուժի մեջ է մտել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում



բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք):

Ընտանիքում բռնության դրսևորումները կանխարգելելու և պատասխանատվության գործուն իրավական մեխանիզմներ նախատեսելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Օրենքով ներդրվել է նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների ինստիտուտը և սահմանվել են այդ միջոցների տեսակները: Այսպես՝

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներն են՝ նախագգուշացումը, անհետաձգելի միջամտության որոշումը և պաշտպանական որոշումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *նախագգուշացում կիրառելու մասին որոշումը կարող է բողոքարկվել* վերադատության կարգով՝ ընտանիքում բռնություն գործադրած անձին հանձնվելուց կամ դրա բովանդակությունը նրան հեռախոսակապի միջոցով պարզաբանվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, *ինչպես նաև դարական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում:*

Օրենքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ (...) *Անհետաձգելի միջամտության որոշումը կարող է բողոքարկվել* վերադատության կարգով՝ ընտանիքում բռնություն գործադրած անձին դրա մասին իրազեկելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, *ինչպես նաև դարական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում:*

Օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *պաշտպանական որոշման* դիմումին ներկայացվող պահանջները, դրանք քննելու կարգը, դատարանի կողմից ընդունվող ակտերը, *դրանք բողոքարկելու կարգը* և պաշտպանական որոշման դադարման հիմքերը *նախատեսվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով: (...)*

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Օրենքի համապատասխան իրավակարգավորումներով օրենսդիրն ուղղակիորեն նախատեսել է, որ ինչպես *նախագգուշացում կիրառելու մասին որոշումը*, այնպես էլ *անհետաձգելի միջամտության որոշումը* կարող է բողոքարկվել ինչպես վերադատության, այնպես էլ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում:

Մինչդեռ, ի տարբերություն վերը նշված՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության երկու միջոցների, մյուս երրորդ միջոցի՝ պաշտպանական որոշման առումով օրենսդիրը նպատակ չի ունեցել Օրենքի շրջանակներում կարգավորելու նաև դրա բողոքարկման հարցը և այդ որոշման դատական կարգով բողոքարկում Օրենքով ուղղակիորեն չի նախատեսել, ու նման որոշման վերաբերյալ դիմումին ներկայացվող պահանջները, այն քննելու կարգը, նման դիմումի վերաբերյալ դատարանի կողմից ընդունվող ակտերի տեսակները, *դրանք բողոքարկելու կարգը* և պաշտպանական որոշման դադարման հիմքերը նախատեսելը վերապահել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին:

Ազգային ժողովի կողմից 13.07.2018 թվականին ընդունվել և 26.07.2018 թվականին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման

վերաբերյալ գործերը համարվել են որպես հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գործեր, ու ՀՀ քաղաքացիական դատավարություն օրենսգիրքը լրացվել է «ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ» վերնագիրը կրող 271-րդ գլխով:

Վերը նշված լրացմամբ համապատասխան իրավակարգավորումներ են նախատեսվել պաշտպանական որոշման վերաբերյալ հայցադիմումի ներկայացման վայրի դատարանի, այդ հայցադիմումին ներկայացվող պահանջների, դրա քննության, այդ հայցադիմումի վերաբերյալ կայացվող դատական ակտերի տեսակների, դրանց բովանդակության, ուժի մեջ մտնելու և այլնի մասին, մինչդեռ այդ լրացմամբ որևէ իրավակարգավորում չի նախատեսվել դատական կարգով պաշտպանական որոշման բողոքարկման կարգի վերաբերյալ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք ունեն առաջին ատյանի դատարանի դատական ակտերի վերաքննության կարգով վերանայման իրավունք՝ **նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռների և **նույն օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումների** դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք, (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա առաջին ատյանի դատարանի հետևյալ որոշումները՝

1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը,  
 2) հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը,  
 3) հայցի ապահովման միջոց կիրառելու, հակընդդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունները մերժելու, հայցի ապահովումը վերացնելու մասին որոշումները,

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշումը, վճռի վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու մասին որոշումները,

5) գործի վարույթը կասեցնելու, գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումները,

6) հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշումը,

7) գործի վարույթը կարճելու մասին որոշումը,

8) դատական տուգանք կիրառելու մասին որոշումը,

9) օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը,

10) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը,

11) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը,

12) օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը,

13) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության քննության արդյունքով կայացված որոշումը,

14) դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը,

**15) այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում:**

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը գործին մասնակցող անձանց վերապահել է առաջին ատյանի դատարանի դատական ակտերի վերաքննության կարգով վերանայման իրավունք՝ պայմանով, որ այդ իրավունքը նախատեսված լինի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Տվյալ դեպքում օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասում թվարկելով առաջին ատյանի դատարանի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը, միևնույն ժամանակ չի սահմանափակել դրանց շրջանակը՝ նշելով, որ վերաքննության կարգով կարող են բողոքարկվել նաև այլ որոշումներ՝ պայմանով, որ բողոքարկումը նախատեսված լինի օրենքով:

Տվյալ դեպքում ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով, այնպես էլ այլ օրենքով «Հնտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման բողոքարկում նախատեսված չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Օրենքով նախատեսված պաշտպանական որոշումը գործին մասնակցող անձինք վերաքննության կարգով բողոքարկելու իրավունք չունեն:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված եզրահանգումը բխում է նաև օրենսդրի դրսևորած վարքագծից, որի համաձայն՝ վերջինս, Օրենքն ընդունելուց հետո ընդունելով նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, իսկ դրանից հետո՝ նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» վերը նշված օրենքը, պաշտպանական որոշումը բողոքարկելու կարգ այնուամենայնիվ չի սահմանել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով:

Նշված իրավակարգավորման բովանդակությունից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքարկվում է այնպիսի դատական ակտ, որը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով, ապա նման բողոքի ընդունումը ենթակա մերժման:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը վերը նշված իրավական դիրքորոշումների համատեքստում եզրահանգում է, որ եթե վերաքննության կարգով բողոքարկվում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած՝ Օրենքով նախատեսված պաշտպանական որոշումը, ապա նման բողոքի ընդունումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով ենթակա է մերժման:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարմանը***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանը 20.06.2022 թվականին որոշում է կայացրել Օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ հայցադիմումը բավարարելու մասին:

Այդ որոշումը բողոքարկվել է վերաքննության կարգով, և Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «Տվյալ պարագայում բողոքարկվել է Դատարանի՝ 20.06.2022թ. «Պաշտպանական որոշման պահանջի մասին հայցադիմումը քննության առնելու մասին» դատական ակտը, որը բողոքարկման ենթակա լինելու մասին որևէ դրույթ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերը նշված հոդվածով նախատեսված չէ, այսինքն՝ առկա է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու օրենսդրական արգելք:

14.07.2022 թվականին որոշում է կայացրել բողոքի ընդունումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում նշված հիմքով մերժելու մասին:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք հիմնավոր են, իսկ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի 14.07.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

*Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, հիմնավոր համարելով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքի առկայությունը, արձանագրում է, որ նմանապիսի փաստական հանգամանքներով գործերի քննության ղեկավար վերը նշված նորմերն անհրաժեշտ է կիրառել սույն որոշմամբ տրված մեկնաբանություններին համապատասխան, և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում նշված հիմքով:*

#### **5. Վճռաբեկ դատարանի պարճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն բողոքը մերժվում է, և բողոքի քննության շրջանակներում դատական ծախսեր, այդ թվում՝ պետական տուրք, չեն առաջացել, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.07.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ԿԴՆ/0244/02/17  
2023թ.

Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

ԿԴՆ/0244/02/17  
Ն. Գաբրիելյան  
Ն. Մարգարյան  
Տ. Նազարյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող և զեկուցող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ս. ՄԵՂՐՅԱՆ  
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2023 թվականի հոկտեմբերի 03-ին  
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ ջրային կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.10.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ Շնավոն Համբարձումյանի հայցի ընդդեմ Կոտայքի մարզի Գառնի համայնքի, երրորդ անձինք «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և Կոմիտեի՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Շնավոն Համբարձումյանը պահանջել է ձեռքբերման վաղեմության ուժով ճանաչել իր սեփականության իրավունքը Կոտայքի մարզի Գառնի ձորում 07-021-0398-0001 և 07-021-0398-0018 ծածկագրերի տակ գտնվող տարածքների նկատմամբ:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճռով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, և գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2018 թվականի որոշմամբ գործին մասնակից չդարձված Կոմիտեի վերաքննիչ բողոքը բավարարվել

է՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.01.2019 թվականի որոշմամբ Շնավոն Համբարձումյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) 12.04.2019 թվականի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ:

Դատարանի 01.07.2019 թվականի որոշմամբ Ընկերության միջնորդությունը՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ներգրավելու մասին, բավարարվել է՝ Ընկերությունը ներգրավվել է որպես պատասխանողի կողմում հանդես եկող վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ:

Դատարանի 23.10.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի միջնորդությունը՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ներգրավելու մասին, բավարարվել է՝ Կոմիտեն ներգրավվել է որպես պատասխանողի կողմում հանդես եկող վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ:

Դատարանի 25.02.2021 թվականի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կարճվել է՝ հայցվորի կողմից պահանջից հրաժարվելու հիմքով:

Դատարանի 18.05.2021 թվականի որոշմամբ Ընկերության դիմումը՝ վճռի շրջադարձ կատարելու վերաբերյալ, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.10.2021 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 18.05.2021 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Դատարանը խախտել է Սահմանադրության 10-րդ և 60-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 149-րդ, 163-րդ, 166-րդ ու 168-րդ, «Դատարանի ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ և 27-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149-րդ ու 183-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես ցուցաբերում է հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ նախկին դատավարության ընթացքում իր օրինական իրավունքները գործի նոր քննության ընթացքում այդպես էլ մնացել են ոտնահարված և չվերականգնված. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից բեկանված վճռի հիմքով գրանցվել է հայցվոր Շնավոն Համբարձումյանի սեփականության իրավունքը: Ստեղծված իրավիճակը շտկելու նպատակով գործով դատավարության մասնակից, երրորդ անձ Ընկերությունն օգտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ դատական ակտի շրջադարձ կատարելու հնարավորությունից և դիմում է ներկայացրել Դատարան, սակայն Դատարանն Ընկերության դիմումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ նման դիմում կարող է ներկայացնել միայն պատասխանողը՝ Գառնի համայնքը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2018 թվականի որոշմամբ արձանագրվել է, որ ինքը 75,92հա մակերեսով ջրային նշանակություն ունեցող հողատարածքի մի մասը սեփականության իրավունքով, մյուս մասն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տիրապետում է, և նույն գործով հայցվորի կողմից վիճարկվող՝ ձեռքբերման վաղեմության ուժով Գառնի ձորում գտնվող տարածքների նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի բավարարման պարագայում հնարավոր է իրեն օրինական հիմքերով պատկանող հողատարածքի մի մասը համադրվի հայցվորին հատկացվելիք հողատարածքի հետ, ինչը և պետք է պարզելին ստորադաս դատարանները:

Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն այն մասին, որ սույն գործով վճռի կատարման շրջադարձ իրականացնելու վերաբերյալ միջնորդությամբ կարող է հանդես գալ միայն պատասխանող Գառնի համայնքը՝ անհիմն է:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.10.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Ընկերության դիմումը բավարարել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը

1) Շնավոն Համբարձումյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Կոտայքի մարզի Գառնի համայնքի՝ ձեռքբերման վաղեմության ուժով Կոտայքի մարզի Գառնի ձորում 07-021-0398-0001 և 07-021-0398-0018 ծածկագրերի տակ գտնվող տարածքների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճռով հաստատվել է կողմերի միջև կնքված հետևյալ բովանդակությամբ հաշտության համաձայնությունը

«(...)

1. Ես հայցվոր Շնավոն Հրանտի Համբարձումյանս համաձայնվում և հաշտվում եմ առ այն, որ Կոտայքի մարզի Գառնի համայնքի ղեկավար Ա. Սահակյանի կողմից սարքագրվի սույն համաձայնագիրը, այն մասին, որ նս, որպես համայնքի ղեկավար չի առարկում, որպեսզի Կոտայքի մարզ, Գառնի ձորում գրավող 07-021-0398-0001 և 07-021-0398-0018 ծածկագրերի տակ գրավող տարածքների նկատմամբ ձեռք բերման վաղեմության ուժով ճանաչվի իմ սեփականության իրավունքը:

2. Ես ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի ղեկավար Ա. Սահակյանս ընդունում եմ, որ 1991 թվականից առ այսօր Շնավոն Հրանտի Համբարձումյանի կողմից օգտագործվում է Կոտայքի մարզ, Գառնի ձորում գրավող 07-021-0398-0001 և 07-021-0398-0018 ծածկագրերի տակ գրավող տարածքները և համաձայն եմ, որպեսզի այդ տարածքների նկատմամբ ճանաչվի Շնավոն Հրանտի Համբարձումյանի սեփականության իրավունքը:

(...)»:

Նշված քաղաքացիական գործի վարույթը կարճվել է: Վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 1-ին, գ.թ. 2-6, 29-31**).

2) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճռի, Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 10.11.2017 թվականի և նույն համայնքի ղեկավարի 12.02.2018 թվականի որոշումների հիման վրա



19.02.2018 թվականին գրանցվել է Շմավոն Համբարձումյանի սեփականության իրավունքը ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում գտնվող 07-021-0398-0018 ծածկագրով 0,4021հա մակերեսով հողամասի նկատմամբ (**հատոր 2-րդ, գ.թ. 14, 15**).

3) Կոտայքի մարզի Գառնի համայնքի սեփականություն հանդիսացող 07-021-0398-0001 ծածկագրով 0,2771հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը «վերագրանցվել է Գառնի գյուղի բնակիչ Շմավոն Համբարձումյանին», և որպես սեփականություն Կադաստրի կոմիտեի կողմից տրվել է թիվ 07-021-0398-0023 ծածկագրով թիվ 19022018-07-0062 սեփականության իրավունքի վկայական (**հատոր 4-րդ, գ.թ. 52**).

4) Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճռի, Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 10.11.2017 թվականի և նույն համայնքի ղեկավարի 12.02.2018 թվականի որոշումների հիման վրա 19.02.2018 թվականին գրանցվել է Շմավոն Համբարձումյանի սեփականության իրավունքը ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքում գտնվող 07-021-0398-0023 ծածկագրով 0,2771հա մակերեսով հողամասի նկատմամբ (**հատոր 4-րդ, գ.թ. 59**).

5) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2018 թվականի որոշմամբ գործին մասնակից չդարձված ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճիռը բեկանվել է, ու գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության, այն պատճառաբանությամբ, որ *«բողոք բերող անձի կողմից հիմնավորվել է (ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից կատարված իրավունքի գրանցման վկայագրերով) վկայակոչված այն փաստը, որ սույն գործով Հայցվորի կողմից պահանջված հողամասը հնարավոր է համադրվել է Կոմիտեին հարկացված հողամասի հետ, այսինքն բողոքարկվող դատական ակտն առնչվում է Կոմիտեի իրավունքներին, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքերը բավարար են վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար»:*

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.01.2019 թվականի որոշմամբ Շմավոն Համբարձումյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է (**հատոր 2-րդ, գ.թ. 109-111, 219-222**).

6) գործի նոր քննության ընթացքում Ընկերության կողմից ներկայացվել է վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ներգրավվելու մասին միջնորդություն:

Դատարանը 01.07.2019 թվականին որոշում է կայացրել Ընկերության միջնորդությունը բավարարելու և Ընկերությանը սույն քաղաքացիական գործով որպես պատասխանողի կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ներգրավելու մասին, այն պատճառաբանությամբ, որ *«սույն քաղաքացիական գործով ապագայում կայացվելիք դատական ակտը կարող է ազդել «Վեոյիս Ջուր» ՓԲԸ-ի իրավունքների և պարտականությունների վրա: Հեղինակը վերջինս պարզ է մասնակցություն ունենա գործով ընթացող դատավարությանը՝ հնարավորություն ունենալով արտահայտել իր իրավական դիրքորոշումը: Վերը նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը, դատարանն արձանագրում է, որ սույն գործով կայացվող վճիռը կարող է առնչվել «Վեոյիս Ջուր» փակ բաժնետիրական ընկերության իրավունքներին» (**հատոր 3-րդ, գ.թ. 15-19, 68-72**).*

7) գործի նոր քննության ընթացքում Կոմիտեի կողմից ներկայացվել է վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ ներգրավվելու մասին միջնորդություն:

Դատարանը, պատճառաբանելով, որ «ՀՀ վերաքննիչ դատարանի 15.10.2018 թվականի որոշմամբ հասարակվել է, որ բողոք բերող անձի կողմից հիմնավորվել է ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից կատարված իրավունքի գրանցման վկայագրերով/ վկայակոչված այն փաստը, որ սույն գործով հայցվորի կողմից պահանջված հողամասը հնարավոր է համադրվել է կոմիտեին հարկացված հողամասի հետ, այսինքն՝ բողոքարկվող դատական ակտն առնչվում է կոմիտեի իրավունքներին, որպիսի պայմաններում վերաքննիչ դատարանը գրել է, որ բողոքի հիմքերը բավարար են վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար», և ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը, արձանագրել է, որ «սույն գործով կայացվող վճիռը կարող է առնչվել ՀՀ ջրային կոմիտեի իրավունքներին», ու 23.10.2019 թվականին որոշում է կայացրել Կոմիտեի միջնորդությունը բավարարելու և Կոմիտեին սույն քաղաքացիական գործով որպես պատասխանողի կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ ներգրավելու մասին (**հատոր 4-րդ, գ.թ. 6-8, 21-25**).

8) գործի նոր քննության ընթացքում հայցվոր Շմավոն Համբարձումյանը ներկայացրել է հայցից հրաժարվելու և գործի վարույթը կարճելու մասին միջնորդություն:

Դատարանը 25.02.2021 թվականին որոշում է կայացրել հայցից հրաժարվելու հիմքով քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին: Նշված որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 7-րդ, գ.թ. 4, 51-57**).

9) Ընկերությունը ներկայացրել է վճռի շրջադարձ կատարելու մասին դիմում՝ պահանջելով վերը նշված անշարժ գույքի՝ հողամասերի նկատմամբ վերականգնել ՀՀ Կոտայքի մարզի Գանսի համայնքի սեփականությունը՝ այն պատճառաբանելով նրանով, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճիռը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 15.10.2018 թվականի որոշմամբ բեկանված լինելու պայմաններում դատական ակտի շրջադարձ չի կատարվել, ուստի շրջադարձը պետք է կատարի նոր դատական ակտ կայացրած դատարանը՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, որի անհրաժեշտությունը բխում է նաև այն հանգամանքից, որ դրանով շոշափվում են Ընկերության իրավունքները և օրինական շահերը՝ նկատի ունենալով, որ տվյալ հատվածով անցնում են ջրամատակարարման խողովակներ, որոնց շահագործումն իրականացնում է Ընկերությունը:

Դատարանի 18.05.2021 թվականի որոշմամբ վճռի շրջադարձ կատարելու մասին Ընկերության դիմումը մերժվել է (**հատոր 8-րդ, գ.թ. 2-10, 79-95**).

10) Վերաքննիչ դատարանի 28.10.2021 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 18.05.2021 թվականի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ (**հատոր 9-րդ, գ.թ. 86-91**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատաբանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ

Վերաքննիչ դատարանի կիրառած «Դատական ակտերի կատարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վճռի կատարման շրջադարձի մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակին՝ միևնույն ժամանակ անդրադառնալով պարասիսանտոյի կողմում որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի կողմից վճռի կատարման շրջադարձի մասին դիմում ներկայացնելու հնարավորությանը:*

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ի կատար ածված վճիռը բեկանվել է և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր վճիռ, կամ **գործի վարույթը կարճվել է**, կամ հայցը թողնվել է առանց քննության, ապա դատարանը կայացնում է դատական ակտ՝ գույքը **պարտասպանին** լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի կատարման շրջադարձի հարցը լուծում է նոր դատական ակտ կայացրած դատարանը:

Եթե դատարանը չի լուծել բեկանված վճռի կատարման շրջադարձի հարցը, **պարտասպանն** իրավունք ունի դիմել նոր դատական ակտ կայացրած դատարան:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական վարույթի կողմերն են պահանջատերը և պարտապանը: (...): Պարտապանն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը կամ օտարերկրյա պետությունը, որը, կատարողական թերթի համաձայն, պարտավոր է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից: (...):

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ վճռի կատարման շրջադարձի մասին որոշում կայացնելու համար պարտադիր է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝

- 1) գործով կայացված վճիռն ի կատար է ածվել,
- 2) ի կատար ածված վճիռը բեկանվել է, և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր վճիռ, կամ **գործի վարույթը կարճվել է**, կամ հայցը թողնվել է առանց քննության:

Ընդ որում, որպես կանոն, վճռի կատարման շրջադարձի հարցը լուծում է այն դատարանը, որը կայացրել է դատական ակտը բեկանելու և հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր դատական ակտ, կամ գործի վարույթը կարճել է, կամ հայցը թողել է առանց քննության՝ նոր դատական ակտին համապատասխան որոշում կայացնելով գույքը լրիվ կամ մասնակի պարտապանին վերադարձնելու մասին: Այն դեպքում, երբ նոր դատական ակտ կայացրած դատարանը չի լուծել բեկանված վճռի կատարման շրջադարձի հարցը, ապա այդ հարցը կարող է լուծվել **պարտասպանի** կողմից վճռի կատարման շրջադարձի մասին առանձին դիմումի հիման վրա:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև

իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում (*տե՛ս Պապամիխալոպոպուլոսն ընդդեմ Հունաստանի (Papamichalopoulos v. Greece) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 31.10.1995 թվականի վճիռը, կետ 34*):

ՀՀ սահմանադրական դատարանը 28.06.2013 թվականի թիվ ՄԴՌ-1102 որոշմամբ արձանագրել է, որ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը կոչված է կարգավորելու քաղաքացիաիրավական հարաբերություններ՝ կապված դատական սխալի արդյունքում կայացված դատական ակտի կատարմամբ անձին պատճառված նյութական վնասի վերականգնման (հատուցման) հետ: Նյութական-իրավական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել մասնավոր այնպիսի դեպքերում, երբ առկա են դատարանի կայացրած ակտի բեկանման (լրիվ կամ մասնակի), **գործի վարույթը կարճելու**, հայցն առանց քննության թողնելու՝ օրենքով նախատեսված հիմքեր, հետևաբար՝ նաև այդ ակտն ի կատար ածելու արդյունքում առաջացած իրավական հետևանքները վերացնելու (այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը, գործի հանգամանքներով պայմանավորված շահագրգիռ կողմի (տուժողի) նախկին իրավունքներն ու պարտականությունները վերականգնելու) իրավական անհրաժեշտություն: Այսինքն՝ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի նպատակն արդար և արդյունավետ արդարադատության իրականացման (արդարադատության նպատակների իրականացման) ապահովումն է, իսկ օբյեկտը՝ գույքային իրավունքն է և դրանով պայմանավորված կողմերի՝ միմյանց հանդեպ ունեցած իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրացման իրավաչափությունը՝ քաղաքացիաիրավական տվյալ վճռի շրջանակներում: Այսինքն՝ վճռի կատարման շրջադարձի ինստիտուտի կիրառմամբ պետությունը, ի դեմս իրավասու դատարանի, նպատակ ունի կատարելու անձանց սեփականությունը պաշտպանելու (այդ թվում՝ այլոց ապօրինի գործողություններից) իր պոզիտիվ պարտականությունը, որը նաև արդարադատության իրականացման հիմնական խնդիրներից է: Դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի ինստիտուտը կարևոր երաշխիք է Սահմանադրության ինչպես 8-րդ, 18-րդ և 19-րդ, այնպես էլ այլ հոդվածներին համապատասխան անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության առումով: (...):

Նախկինում կայացրած որոշումներից մեկով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ իրավակարգավորման բովանդակության համաձայն՝ դատավարական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել, եթե՝

1. առկա է դատարանի ի կատար ածված վճիռ, և
2. դատարանի ի կատար ածված վճիռն իրավասու դատական ատյանի կողմից բեկանվել է, և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր դատական ակտ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության:

Վճռի կատարման շրջադարձի նպատակն է դատական կարգով վերականգնել պատասխանողի իրավունքները և օրինական շահերը, որոնք խախտվել են բեկանված դատական ակտով: Բեկանված դատական ակտի փոխարեն համապատասխան դատարանի կողմից կայացվում է գործն ըստ էության լուծող այլ

դատական ակտ՝ հայցը լրիվ կամ մասնակի մերժելու կամ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին, որից հետո պարտապանը (գույքի նախկին սեփականատերը) իրավունք է ձեռք բերում վերականգնել նախկին դրությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վճռի կատարման շրջադարձի նպատակն է՝ վերացնել ի կատար ածված դատական ակտի իրավական հետևանքները՝ վերականգնել այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը և գործի հանգամանքներով պայմանավորված՝ վերականգնել **շահագրգիռ կողմի** խախտված նախկին իրավունքներն ու պարտականությունները (*Կրե՛ս ըստ Նինա Չալոբիկյանի դիմումի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի թիվ 2-4247/2004թ. որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմումի քննության վարույթի նպատակը մինչև բեկանված դատական ակտի կատարումը եղած դրությունը վերականգնելն է: Այսինքն՝ բոլոր դեպքերում խոսք է գնում բեկանված դատական ակտով որոշված, սահմանված և տրամադրված իրավունքների և պարտականությունների մասին, որոնք վերացվել են դատական ակտի բեկանմամբ (*Կրե՛ս Արսեն Չիչյանն ընդդեմ Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի և մյուսների՝ թիվ ԵԿԿ/0479/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.10.2022 թվականի որոշումը*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական դատավարության մասնակիցներն են գործին մասնակցող անձինք (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք են կողմերը, երրորդ անձինք, դիմողները և դիմումի քննության ելքով շահագրգռված այլ անձինք՝ նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված գործերով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք, նույն օրենսգրքի և այլ օրենքների պահանջների պահպանմամբ, իրավունք ունեն կատարելու նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված այլ դատավարական գործողություններ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք ունեն և կրում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, նույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դատավարական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարության կողմերն են հայցվորը և պատասխանողը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողը գործին մասնակցող այն անձն է, որի դեմ հայց է ներկայացվել առաջին ատյանի դատարան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել հայցվորի կամ պատասխանողի կողմում մինչև դատաքննության ավարտը, իսկ նույն օրենսգրքի 41-րդ և 42-րդ գլուխներով նախատեսված կարգով քննվող գործերով՝ մինչև եզրափակիչ դատական ակտի հրապարակումը, եթե գործով կայացվող վճիռը կարող է ազդել կողմերից մեկի հանդեպ նրանց ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա

կամ կարող է հանգեցնել նման իրավունքների և պարտականությունների ծագմանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք օգտվում են կողմի իրավունքներից և կրում են նրա պարտականությունները, բացի հակընդդեմ հայցադիմում ներկայացնելու, հայցապահանջի չափ ավելացնելու կամ նվազեցնելու, հայցի առարկան կամ հիմքը փոխելու, հայցապահանջներից հրաժարվելու, հայցապահանջներն ընդունելու, հայցի ապահովում պահանջելու, արբիտրաժային համաձայնություն կնքելու, հաշտության համաձայնություն կնքելու, դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու և արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց սկսելու իրավունքից:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձը, առաջնորդվելով Սահմանադրությամբ և օրենքով իրեն տրված հնարավորությամբ, իրավունք ունի սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական ու դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Ավելին, հայցվորի պահանջների բավարարումը պատասխանողի կողմում հանդես եկող, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի համար անցանկալի է, դրա արդյունքում նրա փաստացի և իրավական վիճակը կարող է էականորեն վատթարանալ (*լրեն Աշոտ Հակոբյանն ընդդեմ «Հինգերորդ աստղ» ՄՊԸ-ի և մյուսների թիվ ԱՐԱԴ/1190/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2021 թվականի որոշումը, Հավելյալ Չափարարանն ընդդեմ «Հինգերորդ աստղ» ՄՊԸ-ի և մյուսների թիվ ԱՐԱԴ/1197/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2021 թվականի որոշումը*):

Վերոգրյալ իրավանորմների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը գործին մասնակցող անձանց թվին է դասել նաև վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց, ովքեր կարող են հանդես գալ կամ հայցվորի, կամ պատասխանողի կողմում և օգտվել նրանց իրավունքներից ու կրել նրանց պարտականությունները, բացառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 7-րդ մասում նշված իրավունքներից:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի վերը նշված դիրքորոշումների համատեքստում բացահայտելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործված «պարտապան» եզրույթը՝ Վճռաբեկ դատարանը, զարգացնելով իր կողմից նախկինում արտահայտված դիրքորոշման մեջ օգտագործված «շահագրգիռ կողմ» արտահայտությունը, արձանագրում է, որ թեկուզև վճռի կատարման շրջադարձի մասին դիմում ներկայացնելու իրավունքը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով վերապահված է բացառապես նույն օրենքի 7-րդ հոդվածի իմաստով «պարտապան» հանդիսացող կատարողական վարույթի կողմին, ով, կատարողական թերթի համաձայն, պարտավոր է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից, այդուհանդերձ այդ իրավունքից օգտվելու հնարավորությունը պետք է ընձեռել ինչպես այն պատասխանող-պարտապանին, ով կամովին կատարել է դատական ակտը, այնպես էլ այն անձանց, ովքեր թեն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի իմաստով ուղղակիորեն չեն հանդիսանում

պարտապան, սակայն քաղաքացիական դատավարությունում ներգրավված լինելով պատասխանողի կողմում որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, օգտվել են կողմի, տվյալ դեպքում՝ պատասխանողի իրավունքներից և կրել նրա պարտականությունները, բացի նույն հոդվածով նախատեսված իրավունքներից՝ պայմանով, որ հայցը բավարարելու արդյունքում ի կատար ածված դատական ակտը հաստատապես ազդել է նրանց իրավունքների ու օրինական շահերի վրա՝ վերջիններիս համար հանդիսանալով անցանկալի և նրանց փաստացի ու իրավական վիճակը վատթարացնող:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում, երբ պարտապան չհանդիսացող, սակայն պատասխանողի կողմում որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ ներգրավված անձի կողմից ներկայացվում է վճռի կատարման շրջադարձի մասին դիմում, դատարանները պարտավոր են, վերը նշված պարտադիր պայմանների առկայությունը պարզելուց բացի, նաև պարզել այդ անձի՝ վերը նշված դիրքորոշումների համատեքստում շահագրգիռ լինելու հանգամանքը:

#### ***Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Շմավոն Համբարձումյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Կոտայքի մարզի Գառնի համայնքի՝ ձեռքբերման վաղեմության ուժով Կոտայքի մարզի Գառնի ձորում 07-021-0398-0001 և 07-021-0398-0018 ծածկագրերի տակ գտնվող տարածքների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին:

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճռով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, որով, ըստ էության, Կոտայքի մարզի Գառնի համայնքի ղեկավար Ա. Սահակյանը, ընդունելով, որ 1991 թվականից Շմավոն Համբարձումյանն օգտագործել է Կոտայքի մարզ, Գառնի ձորում գտնվող 07-021-0398-0001 և 07-021-0398-0018 ծածկագրերով տարածքները, համաձայնվել է, որ այդ տարածքների նկատմամբ ճանաչվի Շմավոն Համբարձումյանի սեփականության իրավունքը: Նշված քաղաքացիական գործի վարույթը կարճվել է: ***Վճիռը չի բողոքարկվել և մնել է օրինական ուժի մեջ:***

Վերը նշված վճռի, ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 10.11.2017 թվականի և նույն համայնքի ղեկավարի 12.02.2018 թվականի որոշումների հիման վրա 19.02.2018 թվականին գրանցվել է Շմավոն Համբարձումյանի սեփականության իրավունքը Կոտայքի մարզի Գառնի համայնքում գտնվող 07-021-0398-0018 ծածկագրով 0,4021հա մակերեսով ու 07-021-0398-0023 ծածկագրով 0,2771հա մակերեսով հողամասերի նկատմամբ: ***Այսինքն՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճիռն ի կատար է ածվել:***

Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել գործին մասնակից չդարձված ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի

վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության, այն պատճառաբանությամբ, որ «*բողոք բերող անձի կողմից հիմնավորվել է (ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից կատարված իրավունքի գրանցման վկայագրերով) վկայակոչված այն փաստը, որ սույն գործով Հայցվորի կողմից պահանջված հողամասը հնարավոր է համադրվել է Կոմիտեին հարկացված հողամասի հետ, այսինքն բողոքարկվող դատարանն ակտիվ առնչվում է Կոմիտեի իրավունքներին, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ բողոքի հիմքերը բավարար են վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար*»։ **Այսինքն՝ ի կատար ածված՝ Կուրայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճիռը բեկանվել է:**

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 30.01.2019 թվականի որոշմամբ Շմավոն Համբարձումյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Գործի նոր քննության ընթացքում ինչպես Ընկերության, այնպես էլ Կոմիտեի կողմից ներկայացվել են վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ներգրավվելու մասին միջնորդություններ, որոնցից Ընկերության միջնորդությունը Դատարանի 01.07.2019 թվականի որոշմամբ բավարարվել է, և Ընկերությունը սույն քաղաքացիական գործով ներգրավվել է որպես պատասխանողի կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ այն պատճառաբանությամբ, որ «*սույն քաղաքացիական գործով ապագայում կայացվելիք դատարանն ակտիվ կարող է ազդել «Վեոլիս Ջուր» ՓԲԸ-ի իրավունքների և պարտականությունների վրա: Հետևաբար՝ վերջինս պետք է մասնակցություն ունենա գործով ընթացող դատավարությանը՝ հնարավորություն ունենալով արտահայտել իր իրավական դիրքորոշումը: Վերը նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը, դատարանն արձանագրում է, որ սույն գործով կայացվող վճիռը կարող է առնչվել «Վեոլիս Ջուր» ՓԲԸ-ի իրավունքներին», իսկ Կոմիտեի միջնորդությունը Դատարանի 23.10.2019 թվականի որոշմամբ բավարարել է, և Կոմիտեն սույն քաղաքացիական գործով ներգրավվել է որպես պատասխանողի կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ այն պատճառաբանությամբ, որ «*ՀՀ վերաքննիչ դատարանի 15.10.2018 թվականի որոշմամբ հաստատվել է, որ բողոք բերող անձի կողմից հիմնավորվել է /ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից կատարված իրավունքի գրանցման վկայագրերով/ վկայակոչված այն փաստը, որ սույն գործով հայցվորի կողմից պահանջված հողամասը հնարավոր է համադրվել է կոմիտեին հարկացված հողամասի հետ, այսինքն՝ բողոքարկվող դատարանն ակտիվ առնչվում է կոմիտեի իրավունքներին, որպիսի պայմաններում վերաքննիչ դատարանը գտնել է, որ բողոքի հիմքերը բավարար են վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար*», «*ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը, դատարանն արձանագրում է, որ սույն գործով կայացվող վճիռը կարող է առնչվել ՀՀ ջրային կոմիտեի իրավունքներին*»:*

Գործի նոր քննության ընթացքում հայցվոր Շմավոն Համբարձումյանը ներկայացրել է հայցից հրաժարվելու և գործի վարույթը կարճելու մասին միջնորդություն, որի հիման վրա Դատարանը 25.02.2021 թվականին որոշում է կայացրել քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին: Նշված որոշումը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: **Այսինքն՝ Կուրայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճիռը բեկանվելուց հետո գործի վարույթը կարճվել է, և նոր դատարանն ակտիվ կայացրած դատարանը չի լուծել բեկանված վճիռի կատարման շրջադարձի հարցը:**



Այնուհետև Ընկերությունը վճռի շրջադարձ կատարելու մասին դիմում է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով վերը նշված անշարժ գույքի՝ հողամասերի նկատմամբ վերականգնել Կոտայքի մարզի Գառնի համայնքի սեփականությունը՝ այն պատճառաբանելով նրանով, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 11.09.2017 թվականի վճիռը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից 15.10.2018 թվականի որոշմամբ բեկանված լինելու պայմաններում դատական ակտի շրջադարձ չի կատարվել, ուստի շրջադարձը պետք է կատարի նոր դատական ակտ կայացրած դատարանը՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, որի անհրաժեշտությունը բխում է նաև այն հանգամանքից, որ դրանով շոշափվում են Ընկերության իրավունքները և օրինական շահերը՝ նկատի ունենալով, որ տվյալ հատվածով անցնում են ջրամատակարարման խողովակներ, որոնց շահագործումն իրականացնում է Ընկերությունը:

Դատարանը, պատճառաբանելով, որ «*«Վեոյիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը ՀՀ Կոտայքի մարզ, Գառնի համայնքում գրանվող 07-021-0398-0001 և 07-021-0398-0018 ծածկագրերով հողամասերի նախկին սեփականատերերը չի հանդիսանում: Թիվ ԿԴ1/0244/02/17 քաղաքացիական գործով պարասիսանող (պարտապան) է հանդիսանում Գառնի համայնքը: Մինչդեռ, վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմում է ներկայացրել վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ «Վեոյիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը», «վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմում կարող է ներկայացնել պարտապանը (գույքի նախկին սեփականատերերը)», 18.05.2021 թվականին որոշում է կայացրել վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ Ընկերության դիմումը մերժելու մասին:*

Վերաքննիչ դատարանը, պատճառաբանելով, որ «*Սույն գործով հայցվորը հանդիսացել է Շմավոն Հրանսրի Համբարձումյանը, իսկ պարասիսանողը՝ Գառնի համայնքը, (...), Ջրային կոմիտեն սույն գործով ներգրավվել է որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ պարասիսանողի կողմում, (...), սույն գործով վճռի կատարման շրջադարձ իրականացնելու վերաբերյալ միջնորդությամբ կարող էր հանդես գալ միայն պարասիսանող Գառնի համայնքը, քանի որ հայցվոր Շմավոն Հրանսրի Համբարձումյանի կողմից Դատարանում ներկայացված հայցադիմումի նյութաիրավական պահանջն ի սկզբանե ուղղված է եղել Գառնի համայնքին (...)*», 28.10.2021 թվականին որոշում է կայացրել Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժելու, և Դատարանի 18.05.2021 թվականի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք չեն կարող բավարար հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը մերժելու համար, քանի որ, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.10.2018 թվականի որոշմամբ գործին մասնակից չդարձված ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի վերաքննիչ բողոքը բավարարվել է այն պատճառաբանությամբ, որ «*բողոք բերող անձի կողմից հիմնավորվել է (ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից կատարված իրավունքի զրանցման վկայագրերով) վկայակոչված այն փաստը, որ սույն գործով Հայցվորի կողմից պահանջված հողամասը հնարավոր է համադրվել է Կոմիտեին հարկացված հողամասի հետ, այսինքն՝ բողոքարկվող դատական ակտն առնչվում է Կոմիտեի իրավունքներին*», իսկ Դատարանը 23.10.2019 թվականին որոշում է կայացրել Կոմիտեի միջնորդությունը

բավարարելու, և վերջինիս սույն քաղաքացիական գործով որպես պատասխանողի կողմում վճռի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ներգրավելու մասին, որպիսի հանգամանքը Վճռաբեկ դատարանը բավարար է համարում հաստատված համարելու, որ հայցը բավարարելու արդյունքում ի կատար ածված դատական ակտը հնարավոր է ազդեր Կոմիտեի իրավունքների ու օրինական շահերի վրա՝ վերջինիս համար հանդիսանալով անցանկալի և նրա փաստացի ու իրավական վիճակն էականորեն վատթարացնող: Հակառակ պարագայում Դատարանը որոշում կկայացնէր Կոմիտեի միջնորդությունը մերժելու մասին՝ այն հիմնավորելով նրանով, որ բացակայում են վերջինիս որպես վճռի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ ներգրավելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան իրավական հիմքերը:

Վերաքննիչ դատարանը վերը նշված հանգամանքներն անտեսել է և, ըստ էության, Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժելը բացառապես պայմանավորել է նրանով, որ վճռի կատարման շրջադարձ իրականացնելու վերաբերյալ միջնորդությամբ կարող էր հանդես գալ միայն պատասխանող Գառնի համայնքը, ում ի սկզբանե ուղղված է եղել հայցադիմումում նշված նյութաիրավական պահանջը: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեկուզև «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի իմաստով Կոմիտեն չի հանդիսացել պարտապան, այդուհանդերձ հնարավոր է, որ վերը նշված դիրքորոշումների համատեքստում հանդիսանար նման դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձ, որպիսի հանգամանքն ստորադաս դատարանները չեն պարզել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործն ընդհանուր իրավասության դատարան նոր քննության ուղարկելու լիազորությունը վերը նշված դիրքորոշումների հաշվառմամբ քննարկելու վճռի շրջադարձ կատարելու մասին Ընկերության դիմումը:

### ***5. Վճռաբեկ դատարանի պարզապահանջությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պայմաններում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 28.10.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

### 33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/0479/02/14 2022թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԿԴ/0479/02/14
Նախագահող դատավոր՝	Ա. Պետրոսյան
Դատավորներ՝	Լ. Գրիգորյան Դ. Սերոբյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող</i>	Մ. ԴԻՄԵՅԱՆ
<i>զեկուցող</i>	Ս. ԱՆՏՈՆՅԱՆ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 07-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Արսեն Չիչյանի ընդդեմ Սերոբյանի-Գորիոն Դեր-Բողոսյանի իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի, երրորդ անձինք՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի, «Արարատբանկ» ՓԲԸ-ի՝ նվիրատվության պայմանագիրը կնքված ճանաչելու և սեփականության իրավունքը ճանաչելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.10.2019 թվականի որոշման դեմ Իրինա Հարությունյանի և Ռաշիդ Սիմոնյանի բերած վճռաբեկ բողոքները,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Արսեն Չիչյանը պահանջել է պարտավորեցնել Սերոբյանի-Գորիոն Դեր-Բողոսյանին՝ իր հետ կնքելու Երևան քաղաքում գտնվող երկու գույքային միավորների նվիրատվության պայմանագրեր:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Սուքոյան) 03.03.2017 թվականի վճռով գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Սմբատյան, դատավորներ՝ Ն. Բարսեղյան, Հ. Ենոքյան) 23.11.2017 թվականի որոշմամբ Արսեն Զիյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.03.2017 թվականի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Գործի նոր քննության ընթացքում փոխելով հայցապահանջը՝ հայցվորը պահանջել է Երևան քաղաքի Նալբանդյան 7-րդ շենքի թիվ 1 և թիվ 1ա հասցեներում գտնվող անշարժ գույքերի մասով կնքված ճանաչել նվիրատվության 13.11.2013 թվականի պայմանագիրը և այդ գույքային միավորների նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ռ. Ալի-սյան) 14.09.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Կ. Զիլինգարյան, դատավորներ՝ Ա. Խառատյան, Ա. Մկրտչյան) 20.12.2018 թվականի որոշմամբ Սերով-Գորիոն Դեր-Բողոսայանի իրավահաջորդ Վանիս Դեր-Բողոսայանի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է: Վճիռը բեկանելու և գործի վարույթը կարճելու կամ գործը նոր քննության ուղարկելու պահանջներին վերաբերող մասով վերաքննիչ բողոքը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 03.04.2019 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.12.2018 թվականի որոշման դեմ Արսեն Զիյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Տ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 11.07.2019 թվականի որոշմամբ Սերով Գորիոնի Դեր-Բողոսայանի իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսայանի ներկայացուցչի Դիանա Գրիգորյանի՝ վճռի կատարման շրջադարձի մասին դիմումը, բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.10.2019 թվականի որոշմամբ Իրինա Հարությունյանի և Ռաշիդ Միմոնյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 11.07.2019 թվականի «Վճռի կատարման շրջադարձի մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Իրինա Հարությունյանը (ներկայացուցիչ Արթուր Մուքիասյան) և Ռաշիդ Միմոնյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

## **2. Իրինա Հարությունյանի վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածը, ինչը հանգեցրել է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրության առաջին հոդվածով սահմանված՝ սեփականության անձեռնմխելիության իրավունքի խախտման:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել բողոքի այն հիմքին, համաձայն որի՝ Դատարանի դատական ակտը պատճառաբանված չէ, Դատարանը որևէ գնահատական չի տվել Իրինա Հարությունյանի բարեխիղճ ձեռք բերող հանդիսանալու հանգամանքին, չի հիմնավորել, թե ինչու է թույլատրելի համարել գույքը բարեխիղճ ձեռք բերողից վերցնելը, և թե ինչու բարեխիղճ ձեռքբերման ինստիտուտը կիրառելի չէ սույն գործի փաստերի նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նաև այն հարցին, թե ինչպես կարող է իրավաչափ համարվել Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի սեփականության իրավունքի ճանաչումն Իրինա Հարությունյանի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր չճանաչելու կամ չդադարեցնելու պայմաններում:

Բացի այդ, Իրինա Հարությունյանը վերաքննիչ բողոքով ոչ թե արտահայտել է դիրքորոշում բարեխիղճ ձեռք բերողի ինստիտուտի կիրառման մասին, այլ վերաքննիչ բողոքի փաստարկը վերաբերել է Դատարանի կողմից վերոգրյալ հիմքով խախտում թույլ տալուն: Այսպես՝ առանց Իրինա Հարությունյանի կողմից դիրքորոշում արտահայտելու Դատարանը պետք է արձանագրեր, որ Իրինա Հարությունյանը հանդիսանում է բարեխիղճ ձեռք բերող, և որ բարեխիղճ ձեռք բերողի ինստիտուտի կիրառմամբ վճռի կատարման շրջադարձի մասին դիմումը ենթակա է մերժման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.10.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Երևան քաղաքի Նալբանդյան 7-րդ շենքի թիվ 1 բնակարանի մասով դիմումը մերժել:

**2.1. Ռաչիդ Միմնյանի վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**  
Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Իրինա Հարությունյանը վերաքննիչ բողոքով ոչ թե արտահայտել է դիրքորոշում բարեխիղճ ձեռք բերողի ինստիտուտի կիրառման մասին, այլ վերաքննիչ բողոքի փաստարկը վերաբերել է Դատարանի կողմից վերոգրյալ հիմքով խախտում թույլ տալուն: Հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 5-րդ մասը Վերաքննիչ դատարանի կողմից կիրառվել է սխալ:

Նշված բնակարանի նկատմամբ Իրինա Հարությունյանի սեփականության իրավունքի գրանցումը դադարեցված չլինելու պայմաններում բողոքաբերի գրավի իրավունքը դադարեցնելը որևէ տրամաբանություն և հիմնավորում չունի: Ընդ որում գրավի իրավունքն անգամ չի դադարեցվել՝ որպես Իրինա Հարությունյանի սեփականության իրավունքի դադարեցման հետևանք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 25.10.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Երևան քաղաքի Նալբանդյան 7-րդ շենքի թիվ 1 բնակարանի մասով դիմումը մերժել:

### **3. Վճուրակ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճուրակ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 28.02.2014 թվականին Դատարան ներկայացրած հայցադիմումում Արսեն Չիչյանը խնդրել է պարտավորեցնել Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանին՝ իր հետ կնքելու Երևան քաղաքում գտնվող երկու գույքային միավորների նվիրատվության պայմանագրեր (խնդրո առարկա գույքային միավորների հասցեները նշվել են հայցադիմումում) պատճառաբանելով, որ պատասխանող Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանը 13.11.2013 թվականին վկաների ներկայությամբ իր ստորագրած և «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ն տնօրենի ստորագրությամբ ու կնիքով վավերացված գրավոր հայտարարությամբ պարտավորվել է հայցվորին նվիրել անշարժ գույքի՝ ՀՀ Լոռու մարզում գտնվող տասներկու և Երևան քաղաքում գտնվող երկու միավոր, իսկ համապատասխան նվիրատվության պայմանագրեր չկնքելու դեպքում իրեն վճարել 300.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ ազատվելով վերը նշված գույքային միավորները նվիրելու պարտավորությունից, բայց ՀՀ Լոռու մարզում գտնվող տասներկու գույքային միավորների նվիրատվության վերաբերյալ 04.12.2013 թվականի պայմանագրերը ստորագրելուց հետո դադարեցրել է ստանձնած պարտավորության կատարումը (**հատոր 1-ին, գ.թ 3-5**).

2) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 18.03.2014 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Նույն որոշմամբ բավարարվել է հայցի ապահովում կիրառելու մասին հայցվորի միջնորդությունը՝ արգելանք դնելով Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանին սեփականության իրավունքով պատկանող և հայցադիմումում նշված՝ Երևան քաղաքում գտնվող անշարժ գույքի երկու միավորների վրա (**հատոր 1-ին, գ.թ 22-21**).

3) 06.03.2015 թվականի ՀՀ ԱՆ «Հրագրան» քրեակատարողական հիմնարկի պետի գրությամբ դատարանն իրազեկվել է այն մասին, որ 21.09.2014 թվականին Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանը մահացել է (փաստաբան Լուսինե Սահակյանի գրությանը կցվել է նաև հանգուցյալի մահվան վկայականի լուսապատճենը) (**հատոր 1-ին, գ.թ 126-127**).

4) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 08.09.2015 թվականի որոշմամբ գործի վարույթը կասեցվել է մինչև Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի իրավահաջորդության հարցի լուծումը (**հատոր 2-րդ, գ.թ 41**).

5) Դատարանը 15.02.2016 թվականի որոշմամբ վերսկսել է քաղաքացիական գործի վարույթը, իսկ պատասխանողին նրա իրավահաջորդով փոխարինելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը Դատարանի 17.02.2017 թվականի արձանագրային որոշմամբ մերժվել է (**հատոր 2-րդ, գ.թ 43, 74-75**):

6) Դատարանի 03.03.2017 թվականին հրապարակած վճռով 17.06.1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա քաղաքացիական գործի վարույթը կարճվել է (**հատոր 2-րդ, գ.թ 85-91**).

7) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.11.2017 թվականի որոշմամբ Դատարանի 03.03.2017 թվականի վճռի դեմ հայցվորի կողմից բերված վերաքննիչ բողոքը բավարարվել է, բողոքարկված վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է սոր քննության (**հատոր 3-րդ, գ.թ 52-54**).

8) Դատարանը 27.04.2018 թվականի արձանագրային որոշմամբ բավարարել է հայցվորի միջնորդությունը և պատասխանողին փոխարինել է նրա իրավահաջորդով՝ որպես այդպիսին ճանաչելով Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանին (**հատոր 4-րդ, գ.թ 28-29**).

9) 28.06.2018 թվականին հայցվորը ներկայացրել է հայցադիմումի փոփոխություն և խնդրել է Երևան քաղաքում գտնվող երկու գույքային միավորների մասով կնքված ճանաչել նվիրատվության 13.11.2013 թվականի պայմանագիրը և այդ գույքային միավորների նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը (**հատոր 4-րդ, գ.թ 40-46**).

10) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018 թվականի վճռով Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի 13.11.2013 թվականի և Արսեն Բենիկի Չիչյանի միջև ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7, բնակարան 1 հասցեում գտնվող և ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7 շենք, 1ա հասցեում գտնվող, անշարժ գույքերի մասով նվիրատվության պայմանագիրը ճանաչվել է կնքված:

ՀՀ ք.Երևան, Նալբանդյան 7, բնակարան 1 հասցեում գտնվող անշարժ գույքի (գրանցված ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ Կ5-2 մատյանի թիվ 00097 համարի տակ, բաղկացած 88,2 քմ շինությունից, որի նկարագիրը տրված է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 21.02.2002 թվականին տրված Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 413298 վկայականում), և ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7 շենք, 1 ա հասցեում գտնվող տարածքի (գրանցված ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից, շինության ծածկագիր 01-006-0110-0001-004-034, բաղկացած 100,7 քմ շինությունից) նկատմամբ ճանաչվել է Արսեն Բենիկի Չիչյանի սեփականության իրավունքը (**հատոր 4-րդ, գ.թ. 98-108**).

11) Արսեն Չիչյանը 15.10.2018 թվականին դիմում է ներկայացրել Դատարան, խնդրելով թիվ ԵԿԴ/047902/14 քաղաքացիական գործով վճիռը հաստատել երկրորդ կնիքով (**հատոր 4-րդ, գ.թ. 128**).

12) Արսեն Չիչյանը 17.10.2018 թվականին դիմում է ներկայացրել Դատարան, խնդրելով թիվ ԵԿԴ/047902/14 քաղաքացիական գործով վերացնել հայցի ապահովումը և տրամադրել կատարողական թերթ (**հատոր 4-րդ, գ.թ. 129**).

13) Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանի կողմից Դատարանի 14.09.2018 թվականի վճռի դեմ փոստային առաքմամբ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում մուտքագրվել է 17.10.2018 թվականին (**հատոր 5-րդ, գ.թ. 8-21**).

14) Դատարանի 18.10.2018 թվականի որոշմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով 18.03.2014 թվականի որոշման հիման վրա պատասխանող Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան Նալբանդյան 7 շենքի թիվ 1 և 1ա հասցեներում գտնվող անշարժ գույքերի վրա կիրառված արգելանքը վերացվել է և տրվել է կատարողական թերթ (**հատոր 4-րդ, գ.թ. 130-132**).



15) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն՝ 23.10.2018 թվականին Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 7 շենքի թիվ 1 բնակարանի նկատմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018 թվականի վճռի հիման վրա գրանցվել է Արսեն Չիչյանի սեփականության իրավունքը (**հատոր 7-րդ, գ.թ. 22-23**)։

16) 23.10.2018 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրի համաձայն Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 7 շենքի թիվ 1 բնակարանը Արսեն Չիչյանը 90.000.000 ՀՀ դրամով վաճառել է Իրինա Հարությունյանին (**հատոր 7-րդ, գ.թ. 16-17**)։

17) Պայմանագրի հիման վրա նշված գույքի նկատմամբ 24.10.2018 թվականին գրանցվել է Իրինա Հարությունյանի սեփականության իրավունքը (**հատոր 7-րդ, գ.թ. 20-21**)։

18) 25.10.2018 թվականին կնքված Փոխառության և անշարժ գույքի գրավի պայմանագրի համաձայն՝ Իրինա Հարությունյանը Ռաշիդ Սիմոնյանից փոխառությամբ ստացել է 90.000.000 ՀՀ դրամ գումար մինչև 24.10.2021 թվականը վերադարձնելու պայմանով և ի ապահովումն պարտավորությունների կատարման գրավադրվել է Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 7 շենքի թիվ 1 բնակարանը (**հատոր 7-րդ, գ.թ. 12-15**)։

19) 29.10.2018 թվականին նշված գույքի նկատմամբ գրանցվել է Ռաշիդ Սիմոնյանի գրավի իրավունքը (**հատոր 7-րդ, գ.թ. 18-19**)։

20) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն՝ 06.11.2018 թվականին Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 7 շենքի թիվ 32 հասցեի անշարժ գույքի նկատմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018 թվականի վճռի հիման վրա գրանցվել է Արսեն Չիչյանի սեփականության իրավունքը (**հատոր 7-րդ, գ.թ. 10-11**)։

21) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.12.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018 թվականի վճիռը բեկանվել փոփոխվել է և Արսեն Չիչյանի հայցը մերժվել է (**հատոր 5-րդ, գ.թ. 143-153**)։

22) ՀՀ վճռաբեկ դատարանի 03.04.2019 թվականի որոշմամբ մերժվել է նշված որոշման դեմ Արսեն Չիչյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը (**հատոր 6-րդ, գ.թ. 36-39**)։

23) 02.05.2019 թվականին Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսյանը Դատարան է ներկայացրել դիմում պահանջելով. «Կատարել թիվ ԵԿԴ/0479/02/14 վճռի շրջադարձ և վերականգնել մինչև 14.09.2018 թվականի թիվ ԵԿԴ/0479/02/14 վճռի հիման վրա կատարված սեփականության իրավունքի գրանցումը եղած վիճակը, այն է՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7 շենք, բնակարան 1 և ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7 շենք, 32 տարածքի «նախկին 1ա բնակարան» հասցեների անշարժ գույքերի նկատմամբ ճանաչել Սերոփ Գորիոն Դեր-Բողոսյանի սեփականության իրավունքը՝ դադարեցնելով ՀՀ, ք. Երևան Նալբանդյան 7 շենք, բնակարան 1 հասցեի անշարժ գույքի նկատմամբ 25.10.2018 թվականի Ռաշիդ Սպարտակի Սիմոնյանի անվամբ կատարված գրավի իրավունքը «գրավի իրավունքի պետական գրանցումը»» (**հատոր 7-րդ, գ.թ. 3-9**)։

#### ***4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս ստորադաս դատարանների կողմից թույլ է տրվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմումի քննության վարույթում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածով նախատեսված բարեխիղճ ձեռքբերողի ինստիտուտի կիրառելիության իրավական հարցին:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում:

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք:

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից:

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով:

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով:

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով:

7) անհիմն հարստացման հետևանքով:

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով:

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

2. Գույքի նկատմամբ պետական գրանցման ենթակա իրավունքները ծագում են դրանց գրանցման պահից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝

գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի համաձայն՝

1. անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

2. Գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

3. Եթե վիճահարույց գործարքի բովանդակությունից բխում է, որ այն կարող է դադարել միայն ապագայում, ապա դատարանը, գործարքը ճանաչելով անվավեր, դադարեցնում է դրա գործողությունն ապագայում:

Նույն օրենսգրքի 275-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:

2. Եթե գույքն անհատույց է ձեռք բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից, ապա սեփականատերը բոլոր դեպքերում իրավունք ունի հետ պահանջել այդ գույքը:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Նույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում անդրադարձել է սեփականության իրավունքի պաշտպանության իրավական խնդրին:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Սահմանադրությունը, հռչակելով սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, երաշխավորում է յուրաքանչյուրի՝ սեփականություն ունենալու բացարձակ իրավունքը՝ միաժամանակ ամրագրելով օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքից զրկելու հնարավորությունը միայն դատական կարգով (*լրեն Գևորգ Գևորգյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի*

պերական կումիրերի, Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2434/05/08 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 30.04.2009 թվականի որոշումը):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված «գույք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներն ու շահերը նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև «գույք» նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյոք, գործի բոլոր հանգամանքներից ելնելով, դիմումատուն ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ (*լրե՛ս, օրինակ, Մինասյանը և Մետերջյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ 23.06.2009 թվականի վճիռը, 55-րդ կետը*):

Միաժամանակ ՄԻԵԴ-ը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացությունը բնորոշել է ընդլայնված կերպով՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*լրե՛ս Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium գործով ՄԻԵԴ 20.11.1995 թվականի վճիռը*): Ըստ ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (*լրե՛ս Burdov v. Russia գործով ՄԻԵԴ 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետը*):

Մեկ այլ գործի շրջանակներում ՄԻԵԴ-ն արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածում կիրառվող «գույք» եզրույթը սահմանափակված չէ միայն ֆիզիկական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով, այն իր մեջ ընդգրկում է նաև ակտիվներ հանդիսացող որոշ այլ իրավունքներ ու շահեր, որոնցից է, օրինակ, պարտավորության գույքային ասպահովման իրավունքը (*լրե՛ս Gasus Dosier - Und Fördertechnik GmbH v. The Netherlands գործով ՄԻԵԴ 23.02.1995 թվականի վճիռը, 53-րդ կետը*):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ սեփականատերեր չհամարվող անձինք կարող են ունենալ հետևյալ գույքային իրավունքները՝

- 1) հողամասի կառուցապատման.
- 2) գույքի օգտագործման.
- 3) սերվիտուտի, ներառյալ՝ անձնական սերվիտուտի.
- 4) գրավի.
- 5) կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունք:

Այսպիսով, «գրավի իրավունքը պետք է դիտարկել որպես «գույք»՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ (1) գրավի իրավունքը հանդիսանում է գրավառուի սահմանափակ իրային իրավունքը, (2) գրավառուն ունի հիմնական պարտավորության չկատարման դեպքում նախապատվության իրավունքով գրավադրված գույքի արժեքից իր պահանջների բավարարում ստանալու «օրինական սպասելիք»: Հետևաբար սեփականության

իրավունքի պաշտպանության թե՛ սահմանադրաիրավական, թե՛ կոնվենցիոն ընթացակարգերը հավասարապես կիրառելի են նաև գրավի իրավունքի պաշտպանության նկատմամբ»:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական գրանցման հիմնական սկզբունքներն ու խնդիրներն են՝ պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների (...) ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը (...):

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր է մերժել իրավունքի պետական գրանցումը, եթե՝ անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ առկա է գրանցված իրավունք կամ սահմանափակում կամ նախնական նշում, **որը բացառում է ներկայացված իրավունքի կամ սահմանափակման գրանցումը:**

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի կամ դրա որևէ մասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը համարվում է չեղարկված՝ այդ գույքի կամ դրա համապատասխան մասի նկատմամբ որևէ հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցում իրականացվելու պահից:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից բխում է, որ պետական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը, այդ թվում՝ նաև՝ անձի սեփականության հիմնարար իրավունքի պաշտպանության ու երաշխավորման բնագավառում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը իրավունքի, այդ թվում՝ սեփականության իրավունքի գրանցումն իրականացնող լիազոր մարմնի վրա պարտականություն է դրել մերժելու գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելը, եթե տվյալ գույքի կամ նրա միավորի կամ մասի նկատմամբ արդեն առկա է այլ անձի գրանցված իրավունք, որը բացառում է ներկայացված իրավունքի գրանցումը: Այսինքն՝ վկայակոչված՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ինպերատիվ կերպով սահմանված է արգելք՝ նույն գույքի նկատմամբ այլ անձի սեփականության իրավունքը գրանցելու հարցում, որի նպատակն է երաշխավորել և պաշտպանել անձի գրանցված սեփականության իրավունքը և բացառել անշարժ գույքի նկատմամբ արդեն իսկ գրանցված իրավունքի դեպքում այլ անձի կողմից ներկայացված իրավունքի գրանցումը: Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ եզրահանգումը բխում է այն հանգամանքից, որ գույքի նկատմամբ որևէ հիմքով սեփականության իրավունքի նոր պետական գրանցում իրականացվելու պահից այդ գույքի նկատմամբ նախկին սեփականության իրավունքի պետական գրանցումը համարվում է չեղարկված (ուժը կորցրած), այսինքն՝ գույքի նկատմամբ նոր սեփականության իրավունքի գրանցումը հանգեցնում է այդ գույքի նկատմամբ ավելի վաղ գրանցված սեփականության իրավունքի դադարման: Երբ գրանցում իրականացնող մարմինը գույքի նկատմամբ այլ անձի արդեն իսկ գրանցված սեփականության իրավունքի առկայության պայմաններում այդ նույն գույքի նկատմամբ կատարում է սեփականության իրավունքի նոր գրանցում, ընդ որում՝ որպես նոր սեփականատիրոջ սեփականության իրավունքի ծագման հիմք ընդունելով այնպիսի իրավաբանական փաստեր և դրանք հիմնավորող գրավոր փաստաթղթեր, որոնք չեն բխում արդեն իսկ գրանցված սեփականատիրոջ կամքից և գործողություններից (օրինակ՝ երբ գրանցված սեփականատերն իր գույքն

օտարել է առուվաճառքի կամ նվիրատվության ձևով կամ կտակել է այլ անձի կամ հրաժարվել իր սեփականությունից), Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նման պայմաններում սեփականության իրավունքի նոր գրանցումը խախտում է արդեն իսկ գրանցված սեփականատիրոջ իրավունքները:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ի կատար ածված վճիռը բեկանվել է և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր վճիռ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության, ապա դատարանը կայացնում է դատական ակտ՝ գույքը պարտապանին լրիվ կամ մասնակի վերադարձնելու մասին՝ նոր դատական ակտին համապատասխան:

Նախկինում կայացրած որոշումներից մեկով ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերոնշյալ իրավակարգավորման բովանդակության համաձայն՝ դատավարական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծել, եթե՝

1. առկա է դատարանի ի կատար ածված վճիռ, և

2. դատարանի ի կատար ածված վճիռն իրավասու դատական ատյանի կողմից բեկանվել է, և կայացվել է հայցը լրիվ կամ մասնակի մերժելու մասին նոր դատական ակտ, կամ գործի վարույթը կարճվել է, կամ հայցը թողնվել է առանց քննության:

Վճռի կատարման շրջադարձի նպատակն է դատական կարգով վերականգնել պատասխանողի իրավունքներն ու օրինական շահերը, որոնք խախտվել են բեկանված դատական ակտով: Բեկանված դատական ակտի փոխարեն համապատասխան դատարանի կողմից կայացվում է գործն ըստ էության լուծող այլ դատական ակտ՝ հայցը լրիվ կամ մասնակի մերժելու կամ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին, որից հետո պարտապանը (գույքի նախկին սեփականատերը) իրավունք է ձեռք բերում վերականգնել նախկին դրությունը (*տե՛ս, ըստ Նյուս Չայրիկյանի դիմումի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2013 թվականի թիվ 2-4247/2004թ. որոշումը*):

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վճռի կատարման շրջադարձի նպատակն է՝ վերացնել ի կատար ածված դատական ակտի իրավական հետևանքները՝ վերականգնել այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը և գործի հանգամանքներով պայմանավորված՝ վերականգնել շահագրգիռ կողմի խախտված նախկին իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ սահմանադրական դատարանի 28.06.2013 թվականի թիվ ՄԴՌ-1102 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ կյուրակական-իրավական իմաստով դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի հարց կարող է լուծվել մասնավոր այնպիսի դեպքերում, երբ առկա են դատարանի կայացրած ակտի բեկանման (լրիվ կամ մասնակի), գործի վարույթը կարճելու, հայցն առանց քննության թողնելու՝ օրենքով նախատեսված հիմքեր, հետևաբար՝ նաև այդ ակտն ի կատար ածելու արդյունքում առաջացած իրավական հետևանքները վերացնելու (այդ ակտի կայացմանը նախորդող իրավական դրությունը, գործի հանգամանքներով պայմանավորված շահագրգիռ կողմի (տուժողի) նախկին իրավունքներն ու պարտականությունները վերականգնելու) իրավական անհրաժեշտություն: Այսինքն՝ դատարանի ի կատար ածված վճռի կատարման շրջադարձի նպատակն արդար և արդյունավետ արդարադատության իրականացման (արդարադատության նպատակների իրականացման) ապահովումն է, իսկ օրյեկտը՝ **գույքային իրավունքն է և դրանով պայմանավորված**

**կողմերի՝ միմյանց հանդեպ ունեցած իրավունքներն ու պարտականությունները, դրանց իրացման իրավաչափությունը՝ քաղաքացիաիրավական տվյալ վճռի շրջանակներում:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (**restitutio in integrum**): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է **այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում** (յրեն *Պապամիխալոպոպուլոսն ընդդեմ Հունաստանի (Papamichalopoulos v. Greece)* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 31.10.1995 թվականի վճիռը, կետ 34):

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմումի քննության վարույթի նպատակը մինչև **բեկանված դատական ակտի** կատարումը եղած դրությունը վերականգնելն է: Այսինքն՝ բոլոր դեպքերում խոսք է գնում բեկանված դատական ակտով որոշված, սահմանված և տրամադրված իրավունքների և պարտականությունների մասին, որոնք վերացվել են դատական ակտի բեկանմամբ: Հետևաբար վճռի շրջադարձի դիմումի քննության բովանդակությունը պետք է սահմանափակվի բեկանված դատական ակտի ծավալով, չսահմանափակելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածով բարեխիղճ ձեռքբերողի համար օրենքով վերապահված իրավունքները: Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ քաղաքացիական իրավունքներ են ծագել ոչ թե բեկանված դատական ակտի՝ այլ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ հիմքերով /օր.՝ գործարք/, ապա քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը ենթակա է իրականացման քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածով բարեխիղճ ձեռք բերողի համար օրենքով վերապահված երաշխիքները, որը հնարավոր է իրականացնել բացառապես հայցային վարույթի կարգով՝ ապահովելով արդար դատաքննության սահմանադրական և միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքները:

**Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018 թվականի վճռով Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսայանի 13.11.2013 թվականի և Արսեն Բենիկի Չիչյանի միջև ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7, բնակարան 1 հասցեում գտնվող և ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7 շենք, 1ա հասցեում գտնվող, անշարժ գույքերի մասով նվիրատվության պայմանագիրը ճանաչվել է կնքված: Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսայանի իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսայանի կողմից Դատարանի 14.09.2018 թվականի վճռի դեմ փոստային առաքմամբ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում մուտքագրվել է 17.10.2018 թվականին: Դատարանի 18.10.2018 թվականի որոշմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/0479/02/14 քաղաքացիական գործով 18.03.2014 թվականի որոշման հիման վրա պատասխանող Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսայանին սեփականության

իրավունքով պատկանող ք. Երևան Նալբանդյան 7 շենքի թիվ 1 և 1ա հասցեներում գտնվող անշարժ գույքերի վրա կիրառված արգելանքը վերացվել է և տրվել է կատարողական թերթ:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համաձայն՝ 23.10.2018 թվականին Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 7 շենքի թիվ 1 բնակարանի նկատմամբ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018 թվականի վճռի հիման վրա գրանցվել է Արսեն Չիչյանի սեփականության իրավունքը: 23.10.2018 թվականին կնքված անշարժ գույքի վաճառքի պայմանագրի համաձայն Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 7 շենքի թիվ 1 բնակարանը Արսեն Չիչյանը 90.000.000 ՀՀ դրամով վաճառել է Իրինա Հարությունյանին: Պայմանագրի հիման վրա նշված գույքի նկատմամբ 24.10.2018 թվականին գրանցվել է Իրինա Հարությունյանի սեփականության իրավունքը:

25.10.2018 թվականին կնքված Փոխառության և անշարժ գույքի գրավի պայմանագրի համաձայն՝ Իրինա Հարությունյանը Ռաշիդ Միմոնյանից փոխառությամբ ստացել է 90.000.000 ՀՀ դրամ գումար մինչև 24.10.2021 թվականը վերադարձնելու պայմանով և ի ապահովումն պարտավորությունների կատարման գրավադրվել է Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 7 շենքի թիվ 1 բնակարանը: 29.10.2018 թվականին նշված գույքի նկատմամբ գրանցվել է Ռաշիդ Միմոնյանի գրավի իրավունքը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.12.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ Արսեն Չիչյանի հայցը մերժվել է: ՀՀ վճռաբեկ դատարանի 03.04.2019 թվականի որոշմամբ մերժվել է նշված որոշման դեմ Արսեն Չիչյանի ներկայացուցչի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

02.05.2019 թվականին Սերոփ-Գորիոն Դեր-Բողոսյանի իրավահաջորդ Վանիս Կոբյունի Դեր-Բողոսյանը Դատարան է ներկայացրել դիմում՝ պահանջելով կատարել թիվ ԵԿԴ/0479/02/14 վճռի շրջադարձ և վերականգնել մինչև վճռի հիման վրա կատարված սեփականության իրավունքի գրանցումը եղած վիճակը:

**Դատարանը** 11.07.2019 թվականի որոշմամբ բավարարել է Վանիս Կոբյունի Դեր-Բողոսյանի դիմումը՝ վերականգնելով մինչև 14.09.2018 թվականի թիվ ԵԿԴ/0479/02/14 վճռի հիման վրա կատարված սեփականության իրավունքի գրանցումը եղած վիճակը, այն է՝ ՀՀ քաղաք Երևան, Նալբանդյան 7 շենք, բնակարան 1 և ՀՀ քաղաք Երևան, Նալբանդյան 7 շենք, 32 տարածքի (սախկին 1ա բնակարան) հասցեների անշարժ գույքերի նկատմամբ ճանաչվել է Սերոփ Գորիոնի Դեր-Բողոսյանի սեփականության իրավունքը՝ դադարեցնելով ՀՀ քաղաք Երևան, Նալբանդյան 7 շենք, բնակարան 1 հասցեի անշարժ գույքի նկատմամբ 25.10.2018 թվականին Ռաշիդ Միմոնյանի անվամբ կատարված գրավի իրավունքը (գրավի իրավունքի պետական գրանցումը):

**Վերաքննիչ դատարանը** 25.10.2019 թվականի որոշմամբ մերժել է Իրինա Հարությունյանի և Ռաշիդ Միմոնյանի ներկայացրած վերաքննիչ բողոքները, և Դատարանի 11.07.2019 թվականի որոշումը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ տեղեկացված լինելով վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմումի քննության մասին՝ Իրինա Հարությունյանը և Ռաշիդ Միմոնյանը չեն մասնակցել և որևէ դիրքորոշում չեն ներկայացրել, մասնավորապես՝ Իրինա Հարությունյանի բարեխիղճ ձեռք բերող հանդիսանալու վերաբերյալ:

Սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝



Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռի կատարման շրջադարձի վերաբերյալ դիմումի քննության վարույթի նպատակը մինչև բեկանված դատական ակտի կատարումը եղած դրությամբ վերականգնելն է՝ այսինքն բեկանված դատական ակտով հայցվորին տրված իրավունքների վերացումը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը **կիրառելիս դրա գործողության տիրույթում պետք է լինի բացառապես այն իրավունքների չեղարկումը, որոնք սահմանվել են բեկանված վճռով /դատական ակտով/:** Մինչդեռ դատարանները բարեխիղճ ձեռք բերողի ինստիտուտի կիրառման հարցը լուծել են բողոքաբերներին վճռի շրջադարձի դիմումի քննության մասնակից դարձնելու դատավարական գործողությամբ այն դեպքում, երբ վերջիններս չունեն այնպիսի դատավարական կարգավիճակ, որը թույլ կտար իրականացնելու իրենց իրավունքների արդյունավետ պաշտպանություն, այդ թվում՝ գործարքի անվավերության դեպքում ռեստիտուցիայի կիրառում և վնասների հատուցում:

Տվյալ դեպքում բողոք բերող անձանց իրավունքները ծագել են օրենքով սահմանված կարգով կնքված գործարքների հիման վրա և այդ գործարքները քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չեն վիճարկվել որպես վիճահարույց կամ պահանջ չի ներկայացվել առոչինչ գործարքի հետևանքներ կիրառելու վերաբերյալ:

Այս համատեքստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա չէ դատական ակտ որով վերացել են նոտարական կարգով կնքված և պետական գրանցում ստացած գործարքները և դրանց հիման վրա կատարված պետական գրանցումները՝ տվյալ դեպքում սեփականության և գրավի իրավունքները, ապա վճռի կատարման շրջադարձի դիմումի քննությամբ դրանք չեն կարող անվավեր ճանաչվել և այդ կերպ վերականգնվել քաղաքացիական գործով պատասխանողի խախտված իրավունքները, քանի որ վճռի շրջադարձի դիմումով ենթակա են վերացման բացառապես տվյալ դատական ակտով սահմանված քաղաքացիական իրավունքները:

Ավելին՝ դատական ակտի կատարման շրջադարձով լուծվել է այնպիսի հարց, որով գույքի նկատմամբ նոր սեփականության իրավունքի գրանցումը հանգեցրել է այդ գույքի նկատմամբ այլ անձի գրանցված սեփականության իրավունքի դադարման՝ այն պայմաններում, օրինական ուժի մեջ մտած դատական ակտով այդ իրավունքը չի դադարեցվել և/կամ իրավունքի գրանցումն անվավեր չի ճանաչվել, հետևաբար նշված դատական ակտի կատարման շրջադարձով չեին կարող վերականգնվել բեկանված դատական ակտով քաղաքացիական գործին չմասնակցող անձանց ունեցած այն իրավունքները, որոնք ծագել են ոչ թե բեկանված դատական ակտի՝ այլ նոտարական կարգով կնքված և սահմանված կարգով պետական գրանցում ստացած գործարքի հիմքով: Հակառակ դեպքում կստացվի մի իրավիճակ, երբ դատական ակտի կատարման շրջադարձով դատարանը փաստացի, առանց հայցային վարույթի կարգով քննելու և օրենքով սահմանված կարգով սեփականության իրավունքի հիմքում ընկած գործարքի անվավեր ճանաչելու, դադարեցնում է բեկանված դատական ակտի քաղաքացիական գործին չմասնակցող անձանց սեփականության և դրանից բխող գույքային իրավունքները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

#### ***5. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները դարական ծախսերի բաշխման վերաբերյալ***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են. ոչ առևտրային կազմակերպություններ և ֆիզիկական անձինք՝ դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով:

Նույն հոդվածի նախավերջին պարբերության համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Իրինա Հարությունյանը և Ռաշիդ Միմոնյանը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի ուժով ազատված են եղել հայցադիմումի, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքի վճարման պարտականությունից, պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Մասնակի բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.10.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝

Սերովի-Գորինոն Դեր-Բողոսայանի իրավահաջորդ Վանիս Կորյունի Դեր-Բողոսայանի դիմումը՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 14.09.2018 թվականի վճռի շրջադարձ կատարելու վերաբերյալ՝ Երևան քաղաքի Նալբանդյան 7-րդ շենքի թիվ 1 բնակարանի մասով, մերժել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 25.10.2019 թվականի որոշումը՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7 շենք, 32 տարածքի «նախկին 1ա բնակարան» հասցեի մասով, թողնել օրինական ուժի մեջ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ**  
**ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ**  
**ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**  
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

**34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատա-  
 րանի որոշում  
 Մասնկության գործ թիվ  
 Նախագահող դատավոր՝

Մասնկության գործ թիվ **ՄնԴ/0810/04/20**  
**2022թ.**  
 ՄնԴ/0810/04/20  
 Ս. Թորոսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
 պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- |                  |               |
|------------------|---------------|
| <i>Նախագահող</i> | Մ. ԴՐՄԵՅԱՆ    |
| <i>գեկուցող</i>  | Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  |
|                  | Ս. ԱՆՏՈՆՅԱՆ   |
|                  | Գ. ՀԱԿՈԲՅԱՆ   |
|                  | Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ |
|                  | Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  |
|                  | Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ  |

2022 թվականի հոկտեմբերի 21-ին  
 գրավոր ընթացակարգով քննելով ըստ «Գազ Սուզան» ԱԱԿ ՓԲԸ-ի (այսու-  
 հետ՝ Ընկերություն) դիմումի՝ «Գազ Սուզան Արմենիա» ՀԶ ՍՊԸ-ին (այսուհետ՝  
 Կազմակերպություն) սնանկ ճանաչելու պահանջի մասին, սնանկության գործով  
 ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.08.2020 թվականի «Վերաքննիչ  
 բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Ընկերության և Կազմակեր-  
 պության բերած վճռաբեկ բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### **1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությանը սնանկ ճանաչել:

ՀՀ սնանկության դատարանի (դատավոր՝ Լ. Կատվայան) (այսուհետ՝ Դատարան) 14.05.2020 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Դատարանի 25.03.2020 թվականի որոշմամբ Սերյոժա Մինասյանը նշանակվել է Կազմակերպության սնանկության գործով կառավարիչ:

Դատարանի 13.05.2020 թվականի որոշմամբ սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ Սերյոժա Մինասյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են և ժամանակավոր կառավարիչ է նշանակվել Զավեն Վարդանյանը:

Դատարանի 22.05.2020 թվականի որոշմամբ Զավեն Վարդանյանը նշանակվել է Կազմակերպության սնանկության գործով կառավարիչ՝ դադարեցնելով վերջինիս սնանկության ժամանակավոր կառավարչի լիազորությունները:

Դատարանի 02.06.2020 թվականի որոշմամբ Ընկերության առարկություն ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը մերժվել է, իսկ սնանկության ժամանակավոր կառավարիչ Զավեն Վարդանյանին որպես հիմնական կառավարիչ նշանակելու դեմ առարկությունը թողնվել է առանց քննության:

Դատարանի 03.06.2020 թվականի որոշմամբ Ընկերության և Կազմակերպության առարկություն ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը մերժվել է, իսկ սնանկության ժամանակավոր կառավարիչ Զավեն Վարդանյանին որպես հիմնական կառավարիչ նշանակելու դեմ առարկությունը թողնվել է առանց քննության:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.08.2020 թվականի որոշմամբ Ընկերության և Կազմակերպության վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Դավիթ Դանելյան) և Կազմակերպությունը (ներկայացուցիչ՝ Հարթուն Հարթուն Քարամ Մարդիրոսի):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 28-րդ, 29-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ, 13-րդ հոդվածները, ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածը, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, 20-րդ հոդվածի 5-րդ մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11-րդ, 361-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձինք նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել են հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանը, անտեսել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության իրավակարգավորումները կիրառելի են նաև սնանկության վարույթի նկատմամբ, եթե «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ կոնկրետ

հարցի կապակցությամբ տարբերակվող իրավակարգավորում: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը սահմանում է մասնկության վարույթի շրջանակներում կայացվող դատական ակտերի բողոքարկման հնարավորություն՝ չսահմանափակելով բողոքարկման հնարավորությունը որոշման որևէ տեսակով, այսինքն՝ չառանձնացնելով միջանկյալ ակտի որևէ տեսակի բողոքարկման հնարավորությունը: Իր հերթին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն էլ է սահմանում օրենքով նախատեսված դեպքում այլ որոշումների բողոքարկման հնարավորությունը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ մասնկության գործով կառավարչի ընտրության համատեղ թեկնածու ներկայացնելու իրավունքը հանդիսանում է պարտատիրոջ և պարտապանի համար օրենքով երաշխավորված իրավունք, և այդ իրավունքի անտեսումն ուղղակի ազդեցություն ունի իրենց կողմից ընտրված կառավարչի միջոցով մասնկության վարույթ սկսելու և իր ընտրած կառավարչի միջոցով մասնկության վարույթին մասնակցելու պարտատիրոջ և պարտապանի իրավունքի վրա: Այլ կերպ ասած՝ պարտատերն իր կողմից առաջարկված կառավարչի նշանակման, գործունեության հարցում ունի օրենքով նախատեսված օրինական շահագրգռվածություն: Առաջին ատյանի դատարանն առանց քննության թողնելով կողմերի դիմումը փաստացի զրկել է վերջիններիս օրենքով երաշխավորված իրավունքի պաշտպանության՝ դատական պաշտպանություն ստանալու իրավունքից:

Միաժամանակ Վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորության առկայության հարցում դրսևորել է տարբերակված մոտեցում: Մասնավորապես՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ՄԻԴ/0837/04/19 մասնկության գործով 22.11.2019 թվականին կայացված որոշմամբ արտահայտվել է այն դիրքորոշումը, որ միջանկյալ ակտը ենթակա է բողոքարկման վերաքննության կարգով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 05.08.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

### **3. Վճռաբեկ դատարանի պարանտաքանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը: Ուղղված լինելով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների երաշխավորմանը՝ այդուհանդերձ, օրենսդրի կողմից սահմանված են բողոքարկման իրավունքի իրացման որոշակի պայմաններ, որոնցից են ժամկետային սահմանափակումները:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են (...) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Վերոգրյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ դատարաններում սնանկության գործերի վարումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սնանկության վարույթի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը կիրառվում են այնքանով, որքանով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերով այլ կանոններ նախատեսված չեն: Այսինքն՝ այն պարագայում, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով նախատեսված է այլ կանոն, սակայն «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերը նշված հանգամանքի նկատմամբ սահմանել են այլ մոտեցումներ, ապա պետք է կիրառվի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի դրույթը: Նշված կանոնը վերաբերում է նաև սնանկության վարույթի շրջանակներում կայացվող դատական ակտերի տեսակները և դրանց բողոքարկման հնարավորությունը որոշելուն:

Նախորդ քաղաքացիական դատավարության օրենսդրության կարգավորման պայմաններում ՀՀ սահմանադրական դատարանը, 11.01.2011 թվականի

թիվ ՄԴՌ-932 որոշմամբ կարևորելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքում օգտագործված՝ «սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական իմաստի բացահայտման, կիրառման պրակտիկայում դրսևորված մոտեցումների գնահատման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն, թե որ իրավական ակտով կամ ակտերով սահմանված կանոններն են ենթակա կիրառման սնանկության գործերով դատավարական կարգի նկատմամբ, արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի՝ վերը նշված դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ սնանկության գործի քննության ժամանակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը կիրառվում են միայն այն մասով, որով տվյալ դատավարական հարաբերությունը կարգավորված չէ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով: ՀՀ սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ հաշվի առնելով սնանկության գործի բաղադրատարր հանդիսացող առանձին վարույթների բնույթը, առանձնահատկությունները, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանը՝ օրենսդիրը նշված վարույթներից առանձնացրել է երկուսը, և միայն այդ վարույթներով կայացված դատական ակտերն է դիտարկել որպես վեճն ըստ էության լուծող դատական ակտեր: Խոսքը վերաբերում է պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթին, որի ընթացքում դատարանը կայացնում է պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռ կամ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումը մերժելու մասին վճիռ, և սնանկության գործն ավարտելու վերաբերյալ վարույթին: Օրենսդիրը սնանկության գործի բաղադրատարր հանդիսացող մի շարք առանձին վարույթների շարքում իրավաչափորեն առանցքային նշանակություն է վերապահել պարտապանին սնանկ ճանաչելու և սնանկության գործն ավարտելուն ուղղված վարույթներին: Մնացած բոլոր վարույթները, այդ թվում՝ ժողովի որոշումների և սնանկության գործով կառավարչի գործողությունների բողոքարկման վարույթները, հանդիսանում են պարտապանին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի իրավական հետևանքները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մինչև սնանկության գործն ավարտելու մասին վճռի կայացումը:

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով սնանկության գործի ընթացքում կայացվող միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությանը, նշել է, որ օրենսդիրը, ելնելով սնանկության գործի մաս կազմող առանձին վարույթների բնույթից, առանձնահատկություններից, սնանկության գործի ընթացքի վրա դրանց ազդեցության աստիճանից, սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միջանկյալ դատական ակտերի մի մասի համար է սահմանել բողոքարկման հնարավորություն: Այդ ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են կասեցնել կամ խոչընդոտել պարտապանին սնանկ ճանաչելու պահանջով դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, սնանկության գործի քննության հնարավորությունը, այն է՝ դիմումի ընդունումը մերժելու, դիմումը վերադարձնելու, պարտապանի մոտ ստուգման կամ ուսումնասիրության իրականացումը թույլատրելու, պահանջների վերջնական ցուցակը հաստատելու, պահանջի, պահանջի փոփոխության դեմ առարկությունները քննարկելու արդյունքում պահանջի չափը, օրինականությունը, առաջնահերթությունը և ապահովվածությունը որոշելու, սնանկ ճանաչված անձի գույքն օտարելու թույլտվություն տալու, պահանջը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների հարգելիությունը որոշելու մասին որոշումները:



ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսդրի կողմից իրավաչափ մոտեցում է ցուցաբերվել՝ կապված սնանկության գործում ներառվող առանձին վարույթներով կայացվող միայն որոշակի խումբ միջանկյալ դատական ակտերը բողոքարկելի համարելու հետ:

Անդրադառնալով այդ որոշումների՝ վերաքննության կարգով բողոքարկելիության հնարավորությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ «Սնանկության գործի ընթացքում կայացված ակտերի բողոքարկումը» **վերտառությամբ** 20-րդ հոդվածը սահմանում է սնանկության գործի քննության ընթացքում կայացվող դատական ակտերի բողոքարկումը: Ընդ որում, վերը նշված հոդվածով օրենսդիրը հնարավորություն է տվել բողոքարկելու սնանկության գործի քննության ընթացքում կայացվող ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերը: Մասնավորապես՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասում, որպես ընդհանուր կանոն, ամրագրվել է, որ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները նույնպես ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով՝ դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի (*տե՛ս ըստ «Էյչ-Էս-Բի-Սի քսնկ Հայաստան» ՓԲԸ-ի դիմումի թիվ ԿԴ1/0261/04/16 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.06.2018 թվականի որոշումը*):

Անդրադառնալով ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման՝ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրության պայմաններում կիրառելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախորդից էականորեն տարբերվող կարգավորումներ է նախատեսել ինչպես դատական ակտերի տեսակների, այնպես էլ դրանց բողոքարկման հնարավորությունների վերաբերյալ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական գործով դատարանը կայացնում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտեր:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եզրափակիչ դատական ակտեր են՝

1) առաջին ատյանի դատարանի կայացրած՝

ա. վճիռը և օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստացած վճարման կարգադրությունը,

բ. գործի վարույթը կարճելու, հայրը կամ դիմումն առանց քննության թողնելու, արբիտրաժի վճիռը, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, օտարերկրյա արբիտրաժի վճռի ճանաչման և հարկադիր կատարման, օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու, կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու, դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, կատարման եղանակն ու կարգը փոխելու, դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումների քննության արդյունքով կայացվող որոշումները.

2) վերաքննիչ դատարանի՝ առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքով կայացրած, ինչպես նաև վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու, վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումները.

3) Վճռաբեկ դատարանի՝ վերաքննիչ դատարանի եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության արդյունքով կայացրած, ինչպես նաև վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու, վճռաբեկ վարույթը կարճելու մասին որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտեր են նույն հոդվածի 2-րդ մասում չնշված որոշումները, որոնք կայացվում են առանձին ակտի ձևով կամ արձանագրային որոշմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի համաձայն՝

1. Վերաքննության կարգով բողոքարկման են ենթակա առաջին ատյանի դատարանի հետևյալ որոշումները՝

1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը.

2) հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը.

3) հայցի ապահովման միջոց կիրառելու, հակընդդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունները մերժելու, հայցի ապահովումը վերացնելու մասին որոշումները.

4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին որոշումը, վճռի վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու մասին որոշումները.

5) գործի վարույթը կասեցնելու, գործի վարույթը վերսկսելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին դատարանի որոշումները.

6) հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշումը.

7) գործի վարույթը կարճելու մասին որոշումը.

8) դատական տուգանք կիրառելու մասին որոշումը.

9) օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

10) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

11) ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

12) օտարերկրյա դատական ակտը ճանաչելու և կատարման թույլատրելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

13) կատարողական թերթը կատարման ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդության քննության արդյունքով կայացված որոշումը.

14) դատական ակտի կատարման շրջադարձ կատարելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով կայացված որոշումը.

15) այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում:

2. Դատարանի՝ նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 8-րդ կետերով սահմանված որոշումների դեմ բողոք ներկայացնելը չի խոչընդոտում դատարանում գործի քննության ընթացքին:

Այսպես, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճռի կայացումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, գործին որպես դիմող մասնակցած պարտատերերը (եթե պարտատերերը մի քանիսն են, ապա բոլոր պարտատերերը միասին), իսկ կամավոր սնանկության դեպքում պարտապանը ժամանակավոր կառավարչին տվյալ սնանկության գործով կառավարիչ նշանակելու դեմ կարող են ներկայացնել

առարկություններ՝ նույն հոդվածի 9-րդ մասով սահմանված հիմքերի առկայությամբ: Առարկություններ ներկայացնելու հետ միաժամանակ համապատասխանաբար պարտաւերը կամ պարտապանը կարող է ներկայացնել կառավարչի իր թեկնածուին՝ կցելով վերջինիս գրավոր համաձայնությունը՝ որպես կառավարչի թեկնածու հանդես գալու վերաբերյալ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ժամանակավոր կառավարչին որպես կառավարիչ նշանակելու դեմ սահմանված կարգով առարկելու և կառավարչի թեկնածության վերաբերյալ առաջարկ ներկայացվելու դեպքում դատարանը մեկօրյա ժամկետում որոշում է կայացնում կառավարիչ նշանակելու մասին՝ ստուգելով կառավարչի թեկնածուի համապատասխանությունը նույն հոդվածով սահմանված պահանջներին:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ժամանակավոր կառավարչին որպես կառավարիչ նշանակելու դեմ սահմանված կարգով առարկելու և կառավարչի թեկնածության վերաբերյալ առաջարկ չներկայացվելու կամ ներկայացված թեկնածուի՝ սույն հոդվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում դատարանը մեկօրյա ժամկետում կառավարչի թեկնածություն ներկայացնելու պահանջագիր է ներկայացնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 17.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ դատարանի՝ սնանկության գործով կայացված վճիռներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, բացառությամբ սնանկության գործն ավարտելու մասին վճռի, որն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 15 օր հետո: Դատարանի՝ սնանկության գործով առանձին ակտի ձևով կայացված որոշումներն ուժի մեջ են մտնում դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվելու պահից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը չի տարանջատում սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի տեսակները, այլ միայն 17.1-րդ հոդվածով սահմանվում է, որ դատարանի՝ սնանկության գործով կայացված վճիռներն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, բացառությամբ սնանկության գործն ավարտելու մասին վճռի, որն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 15 օր հետո, իսկ՝ սնանկության գործով առանձին ակտի ձևով կայացված որոշումներն ուժի մեջ են մտնում դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվելու պահից, ինչպես նաև նույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանում է սնանկության գործի ընթացքում կայացված ակտերի բողոքարկման հետևյալ կարգը:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սնանկության գործի քննության ընթացքում կայացվող որոշումները կարող են բողոքարկվել վերաքննության կարգով՝ դրանք կայացվելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ վերաքննիչ դատարանը ժամկետի բացթողումը համարում է հարգելի: Որոշումների բողոքարկումը չի կասեցնում այդ որոշումներից բխող գործողությունների կատարումը, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտապանի, կառավարչի կամ պարտատիրոջ միջնորդությամբ վերաքննիչ դատարանն իր որոշմամբ կասեցնում է այդ գործողությունների կատարումը, եթե այդ միջնորդությամբ հիմնավորվում է, որ դա չանելն անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ պարտապանի կամ պարտատիրոջ համար:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սնանկության գործի ընթացքում կայացվող որոշման դեմ բերված բողոքը քննվում և որոշում է կայացվում միջանկյալ

դատական ակտերի դեմ բերված բողոքի քննության համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններով:

Բացի նշված կարգավորումներից, «Մասնկության մասին» ՀՀ օրենքը որոշակի ակտերի դեպքում սահմանում է բողոքարկման այլ ժամկետներ (օրինակ՝ սնանկության դիմումի ընդունումը մերժելու մասին կամ դիմումը վերադարձնելու մասին որոշումների դեպքում):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով թվարկվում են վերաքննության կարգով բողոքարկման ենթակա որոշումները, որոնց ցանկը սպառիչ չէ՝ նկատի ունենալով, որ նույն հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են նաև առաջին ատյանի դատարանի այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներն էականորեն տարբերվում են նախորդ օրենսգրքի կարգավորումներից, որպիսի պայմաններում ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումը՝ դատական ակտերի դասակարգմամբ պայմանավորված իրավական հետևանքների առաջացման մասով, ամբողջությամբ կիրառելի արդարացված չի կարող համարվել՝ նկատի ունենալով, որ այն վերաբերել է գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի բողոքարկմանը, մինչդեռ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունն օգտագործում է եզրափակիչ և միջանկյալ դատական ակտ եզրույթները: Ընդ որում, ինչպես արդեն նշվեց, «Մասնկության մասին» ՀՀ օրենքը չի տարանջատում սնանկության վարույթում կայացվող դատական ակտերի տեսակները:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սնանկության վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ անհրաժեշտ է սնանկության վարույթում կայացվող դատական ակտերը տարանջատելիս և դրանց բողոքարկման հնարավորությունը որոշելիս հիմք ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված դատական ակտերի տեսակները՝ բացառելու համար երկու փոխկապակցված իրավական ակտերի միջև եզրութաբանության օտարացվածությունը:

Հիմք ընդունելով արդեն իսկ 09.04.2018 թվականից գործող քաղաքացիական դատավարության նոր օրենսդրության եզրութաբանությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սնանկության վարույթում կայացվող դատական ակտերը ևս պետք է տարանջատել եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերի: Նկատի ունենալով, որ գործող քաղաքացիական դատավարության օրենսդրությունը եզրափակիչ դատական ակտերը սահմանել է սպառիչ ցանկով, իսկ «Մասնկության մասին» ՀՀ օրենքը հատուկ կարգավորում չունի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Դատարանի 03.06.2020 թվականի «Դիմումի ներկայացման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և դիմումն առանց քննության թողնելու մասին» որոշումը պետք է համարել միջանկյալ դատական ակտ՝ նկատի ունենալով, որ վերջինս թվարկված չէ եզրափակիչ դատական ակտերի ցանկում: Հետևաբար, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը՝ միջանկյալ դատական ակտ պետք է համարել նաև Վերաքննիչ դատարանի 05.08.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների

համատեքստում արձանագրում է, որ սույն գործով բողոքարկված դատական ակտը՝ «Դիմումի ներկայացման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և դիմումն առանց քննության թողնելու մասին» Դատարանի 03.06.2020 թվականի որոշման բողոքարկման արդյունքում Վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը, միջանկյալ դատական ակտ է:

***Վճարել դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությանը ճանաչել սնանկ: Դատարանի 25.03.2020 թվականի որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ և սնանկության ժամանակավոր կառավարիչ է նշանակվել Սերյոժա Մինասյանը: Դատարանի 13.05.2020 թվականի որոշմամբ սնանկության գործով ժամանակավոր կառավարիչ Սերյոժա Մինասյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել են: Դատարանի 14.05.2020 թվականի վճռով դիմումը բավարարվել է և Ընկերությունը սնանկ է ճանաչվել: Դատարանի 22.05.2020 թվականի որոշմամբ Զավեն Վարդանյանը նշանակվել է Ընկերության սնանկության գործով կառավարիչ՝ դադարեցնելով վերջինիս ժամանակավոր կառավարչի լիազորությունները: Դատարանի 03.06.2020 թվականի որոշմամբ Ընկերության և Կազմակերպության առարկություն ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը մերժվել է, իսկ փոխադարձ համաձայնությամբ սնանկության ժամանակավոր կառավարիչ Զավեն Վարդանյանին որպես հիմնական կառավարիչ նշանակելու դեմ առարկությունը թողնվել է առանց քննության:

Դատարանը, Ընկերության և Կազմակերպության դիմումի ներկայացման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելով և դիմումն առանց քննության թողնելով, պատճառաբանել է հետևյալը՝ օրենսդիրը չի սահմանել տվյալ դիմումի ներկայացման բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու հիմքեր և ընթացակարգ, ինչպես նաև չի նախատեսել այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական ֆունկցիան դատարանի հայեցողությանը թողնելու օրենսդրական հնարավորությունը, այն էլ կառավարիչ նշանակելու մասին որոշումը կայացնելուց հետո, հետևաբար գտել է, որ փոխադարձ համաձայնությամբ կառավարչի թեկնածու ներկայացնելու մասին դիմումի ներկայացման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը պետք է մերժել:

Անդրադառնալով փոխադարձ համաձայնությամբ կառավարչի թեկնածու ներկայացնելու մասին դիմումին՝ Դատարանը, հաշվի առնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի իրավակարգավորումները, արձանագրել է, որ Դատարանի 13.05.2020 թվականի «Թիվ ՍնԴ/0810/04/20 սնանկության գործով նոր ժամանակավոր կառավարիչ՝ Սերյոժա Մինասյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին» որոշումը հաջորդ օրը՝ 14.05.2020 թվականին, իսկ Դատարանի 14.05.2020 թվականի վճիռը հաջորդ օրը՝ 15.05.2020 թվականին, օրենքով սահմանված կարգով, ուղարկվել են կողմերին: Միաժամանակ վերոնշյալ դատական ակտերը տեղադրվել են դատալեքս տեղեկատվական համակարգում: Այսպիսով Դատարանը կատարել է կողմերին ծանուցելուն ուղղված հնարավոր բոլոր գործողությունները և օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետների պահպանմամբ 22.05.2020 թվականի դրությամբ՝ առարկություն ներկայացված չլինելու պայմաններում, 22.05.2020 թվականի որոշմամբ Զավեն Վարդանյանին նշանակել է Ընկերության սնանկության գործով կառավարիչ՝

դադարեցնելով նրա ժամանակավոր կառավարչի լիազորությունները: Այսինքն՝ Դատարանը գտել է, որ փոխադարձ համաձայնությամբ կառավարչի թեկնածու ներկայացնելու մասին դիմումը պետք է թողնել առանց քննության:

Վերաքննիչ դատարանը, մերժելով Ընկերության և Կազմակերպության վերաքննիչ բողոքի ընդունումը, պատճառաբանել է, որ օրենսդիրը չի սահմանել սնանկության վարույթի ընթացքում բողոքարկման ենթակա որոշումների շրջանակ, ուստի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածն անհրաժեշտ է մեկնաբանել այնպես, որ դատարանի մեկնաբանության արդյունքում ավելորդ չդառնա քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգավորումը, հետևաբար «սնանկության գործի ընթացքում կայացվող որոշումներ» եզրույթն անհրաժեշտ է մեկնաբանել ոչ թե ըստ ծավալի լայն տարածական իմաստով և այն տարածել գործի քննության ընթացքում կայացվող ցանկացած որոշման վրա, այլ ըստ ծավալի նեղ՝ որպես ելակետ ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումը, և սնանկության վարույթի ընթացքում բողոքարկելի համարել միայն այն որոշումները, որոնք ուղղակիորեն նախատեսված են տվյալ օրենքով և եզրափակում են դատավարական հարցի լուծումը: Բոլոր այն որոշումները, որոնց բողոքարկման հնարավորությունն ուղղակիորեն նախատեսված չէ «Մասնկության մասին» ՀՀ օրենքով և ընդունվում են դատավարական գործողությունների հետևանքով կամ դրանք կատարելիս չեն կարող բողոքարկվել վերաքննության կարգով: Տվյալ դեպքում պարտապանի և պարտատիրոջ փոխադարձ համաձայնությամբ կառավարչի թեկնածու ներկայացնելու դիմումի բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին որոշումը դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքի վրա որևէ ազդեցություն չունի, հետևաբար Վերաքննիչ դատարանը գտել է, որ վերաքննիչ բողոքի ընդունումը պետք է մերժել, այն բողոքարկման ենթակա չլինելու հիմքով:

Հաշվի առնելով վերը նշված իրավական դիրքորոշումները և դրանք համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի 05.08.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման եզրահանգումները չեն բխում վերոգրյալ իրավական դիրքորոշումներից և սույն գործի փաստերից:

Անդրադառնալով Ընկերության Դատարանի 03.06.2020 թվականի «Դիմումի ներկայացման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և դիմումն առանց քննության թողնելու մասին» որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորությանը՝ Վճռաբեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը բողոքարկման ենթակա որոշումների ցանկը սպառիչ չի սահմանել. օրենսդիրը նախատեսել է վերաքննության կարգով որոշումների բողոքարկման հնարավորություն նաև այն դեպքում, երբ այդ իրավունքը սահմանված է այլ օրենքներով: Հիմք ընդունելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի կարգավորումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 15-րդ կետով նշված «այլ որոշումներ» եզրույթի տակ պետք է ընդգրկվի նաև՝ Դատարանի 03.06.2020 թվականի «Դիմումի ներկայացման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և դիմումն առանց քննության թողնելու մասին» որոշումը:

Վերը նշված դիրքորոշումն արտահայտելիս Վճռաբեկ դատարանը կարևորում է, որ սնանկության վարույթն ունի առանձնահատկություններ, այն չի

սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելով և սնանկության վարույթն ավարտելով, այլ ներառում է պարտապանին սնանկ ճանաչելուց հետո ծագած մի շարք առանձին փուլեր, որոնցից յուրաքանչյուրն առաջացնում է կարևոր իրավական հետևանքներ:

Դրանից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունները, որ Դատարանի 03.06.2020 թվականի «Դիմումի ներկայացման բաց թողնված ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և դիմումն առանց քննության թողնելու մասին» որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտ չէ, քանի որ չի սահմանափակում անձի դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքը, անհիմն է, քանի որ բողոքարկման իրավունքի նման սահմանափակումը չի բխում անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության միջոցների արդյունավետության երաշխիքների սահմանման պահանջից: Վերը նշված դատավարական կարգավորումը, բացառելով հիշատակված որոշման անմիջական բողոքարկման հնարավորությունը, չի ապահովում դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, որի պայմաններում Վերաքննիչ դատարանը, կայացնելով «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշում, թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի և «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 6-րդ մասի խախտում՝ դրա արդյունքում սահմանափակելով Ընկերության և Կազմակերպության՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով ու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 05.08.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 05.08.2020 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/3360/02/21  
2022թ.

Քաղաքացիական գործ թիվ  
Նախագահող դատավոր

ՇԴ/3360/02/21  
Ն. Գաբրիելյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- |                  |               |
|------------------|---------------|
| <i>Նախագահող</i> | Մ. ԴՐՄԵՅԱՆ    |
| <i>գեկուցող</i>  | Ա. ՄԿՐՏՉՅԱՆ   |
|                  | Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ  |
|                  | Գ. ՀԱԿՈԲՅԱՆ   |
|                  | Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ |
|                  | Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  |
|                  | Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ  |

2022 թվականի դեկտեմբերի 26-ին  
գրավոր ընթացակարգով քննելով Հայկուշ Գալստյանի վճռաբեկ բողոքը ՀՀ  
վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.06.2022 թվականի «Վերաքննիչ բո-  
ղոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒ-  
ՐԱՆՍ» սպահովագրական սահմանափակ պատասխանատվության ընկերու-  
թյան (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Համլետ Գալստյանի՝ 580,762 ՀՀ դրամ  
բռնագանձելու, ինչպես նաև նշված գումարի վրա հաշվարկվող ՀՀ քաղաքացիա-  
կան օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները՝ 28.01.2021 թվականից  
մինչև պարտավորության փաստացի կատարումը բռնագանձելու պահանջների  
մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Համլետ Գալստյանից  
բռնագանձել 580,762 ՀՀ դրամ, ինչպես նաև պահանջել է բռնագանձել նշված  
գումարի վրա հաշվարկվող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով  
սահմանված տոկոսները՝ 28.01.2021 թվականից մինչև պարտավորության փաս-  
տացի կատարման օրը:



ՀՀ Շիրակի մարզի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Գ. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 27.08.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.06.2022 թվականի որոշմամբ Հայկուշ Գալստյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 10.08.2022 թվականի որոշմամբ Հայկուշ Գալստյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է և սահմանվել է ժամկետ՝ վճռաբեկ բողոքի թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայկուշ Գալստյանը (ներկայացուցիչ՝ Հայկ Հարությունյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը, 33-րդ հոդվածի 1-ին մասը, 24-րդ հոդվածի 1-ին կետը, 25-րդ հոդվածի 1-ին կետը, 20-րդ հոդվածը, 40-րդ հոդվածի 1-ին մասը, 157-րդ հոդվածի 1-ին մասը, 182 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, 183 հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:*

*Բողոքաբերը նշված պնդումները պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության չի ենթարկել գործում առկա բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից, արդյունքում կայացնելով չպատճառաբանված դատական ակտ:

Այսպես, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բողոքաբերը չգիտեր և պարտավոր չէր իմանալու Համետ Գալստյանի դեմ հարուցված քաղաքացիական գործի մասին: Այնուամենայնիվ, Հայկուշ Գալստյանն իմանալով Համետ Գալստյանի դեմ հարուցված քաղաքացիական գործի մասին, Դատարանի 27.08.2021 թվականի վճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ խնդրելով բեկանել այն և քաղաքացիական գործի վարույթը կարճել, սակայն Վերաքննիչ դատարանը ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է՝ խախտելով բողոքաբերի իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է «բեկանել Վերաքննիչ դատարանի 22.06.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը և կարճել քաղաքացիական գործի վարույթը»:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ դատավարական փաստերը՝

1) Ընկերությունն ընդդեմ Համետ Գալստյանի գումարի բռնագանձման պահանջի մասին սույն գործով հայցադիմումն առձեռն եղանակով ՀՀ Շիրակի մարզի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացրել 31.05.2021 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 3**).

2) Դատարանի 08.06.2021 թվականի որոշմամբ Ընկերության հայցադիմումը վարույթ է ընդունվել (**հատոր 1-ին, գ.թ. 1**).

3) ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի ՔԿԱԳ տարածքային բաժնի մահվան մասին պետական վկայականի պատճենի համաձայն՝ Համլետ Վանիկի Գալստյանը մահացել է 21.12.2020 թվականին, որը ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային մատյանում գրանցվել է՝ 28.12.2020 թվականին, իսկ գրանցման համարն է՝ 889/1626/2020 (**հատոր 1-ին, գ.թ. 78**)։

4) ՀՀ Շիրակի մարզի նոտարական տարածքի նոտար՝ Հայկուշ Լևոնի Ֆենդյանի կողմից 20.05.2022 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի պատճենի համաձայն Համլետ Վանիկի Գալստյանի մահից հետո գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսանում վերջինիս կինը՝ Հայկուշ Հրաչի Գալստյանը։ Նույն վկայագրի համաձայն՝ ժառանգական գույքը, որի նկատմամբ տրվել տվյալ է վկայագիրը հանդիսանում են՝ ՀՀ, Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի Ավգնոցի փողոց 26 հասցեում գտնվող բնակելի տան և հողամասի 1/2 մասը, ինչպես նաև 2012 թվականի արտադրության «LAND ROVER RANGE ROVER SPORT HSE 5.0» մակնիշի ավտոմեքենայի 1/2 մասը (**հատոր 1-ին, գ.թ. 77**)։

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով, այն է՝ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ թիվ ՍԳ/1158/02/22 քաղաքացիական գործով ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը կիրառվել է հակասող մեկնաբանությամբ։

Սույն բողոքի ըննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման, երբ վերաքննիչ բողոքը ներկայացվել է մահացած անձի իրավահաջորդի կողմից, որի վերաբերյալ բացակայում է իրավահաջորդով փոխարինելու մասին դատարանի որոշումը։

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք։

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան։

Կոնվենցիա 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք։

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է։ Այնուամենայնիվ, այդ

իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*լրե'ս Էշիսգրեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ-ի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

ՄԻԵԴ-ը մեկ այլ վճռով նշել է, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, սակայն այդ սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չհետապնդի իրավաչափ նպատակ, և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*լրե'ս Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ի 14.03.2000 թվականի վճիռը, կետ 36*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքներ ունենալու և դատավարական պարտականություններ կրելու ունակությունը ճանաչվում է բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար հավասարապես (դատավարական իրավունակություն):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի դատավարության կողմերն են հայցվորը և պատասխանողը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ից 4-րդ մասերի համաձայն՝ դատավարությունից գործին մասնակցող անձանցից մեկի դուրս գալու դեպքում (**քաղաքացու մահ**, իրավաբանական անձի վերակազմակերպում, պահանջի զիջում, պարտքի փոխանցում և այլն) դատարանը որոշում է կայացնում գործին մասնակցող անձին նրա իրավահաջորդով փոխարինելու վերաբերյալ: **Դատավարական իրավահաջորդությունը հնարավոր է դատավարության ցանկացած փուլում:** Դատավարությունից հայցվորի դուրս գալու դեպքում հայցվորի փոխարինումը տեղի է ունենում հայցվորի իրավահաջորդի միջնորդությամբ: Այն բոլոր գործողությունները, որոնք կատարվել են դատավարության ընթացքում մինչև իրավահաջորդի գործի մեջ մտնելը, նրա համար պարտադիր են այնքանով, որքանով դրանք պարտադիր կլինեին այն անձի համար, որին փոխարինել է իրավահաջորդը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս փաստել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*լրեն ի թիվս այլնի, «Ցաաթ Սիլյա»*)

ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը, Վարդան Աբրահամյանն ընդդեմ «Արդշինքանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԴ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 20-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն) բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1184-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության դեպքում մահացածի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում, որպես միասնական ամբողջություն, անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն), եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքի կանոններով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը կատարվում է ըստ կտակի և ըստ օրենքի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1190-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգներ կարող են լինել ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված քաղաքացիները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1216-1219-րդ հոդվածների համաձայն՝ առաջին հերթի ժառանգներն են ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով: Երկրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի հարազատ, համահայր կամ համամայր եղբայրները և քույրերը: Ժառանգատուի եղբայրների և քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով: Երրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը: Չորրորդ հերթի ժառանգներն են ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը (հորեղբայրները, հորաքույրները, քեռիները, մորաքույրները): Ժառանգատուի հորեղբայրների և հորաքույրների ու քեռիների և մորաքույրների երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1225-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգություն ձեռք բերելու համար ժառանգը պետք է այն ընդունի (...):

**ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգական իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով:**

Վճռաբեկ դատարանը, համակարգային կապի մեջ դիտարկելով ժառանգության և դատավարական իրավահաջորդության իրավական ինստիտուտները, արձանագրում է, որ ժառանգության միջոցով քաղաքացու մահից հետո կատարվում է իրավահաջորդություն՝ նյութական իրավունքի շրջանակում, որն իր հերթին, ի թիվ այլ հանգամանքների, կարող է հիմք հանդիսանալ դատավարական իրավահաջորդության: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ժառանգության հիմքով դատավարական իրավահաջորդության հարցը լուծելիս դատարանը

պետք է գնահատի դրա համար անհրաժեշտ իրավական հիմքերի՝ ժառանգության ընդունման ուժով նյութական իրավահաջորդության փաստի առկայությունը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատավարական իրավահաջորդությանը դատարանը գործին մասնակցող անձին փոխարինում է իրավահաջորդով, եթե նյութական իրավահաջորդության մասին վեճը բացակայում է, այդ փաստն արդեն իսկ հաստատված կամ ձևակերպված է օրենքով սահմանված կարգով և դրա վերաբերյալ **ներկայացվել է համապատասխան ապացույց**: Ավելին, նման որոշում կարող է կայացվել դատավարության ցանկացած փուլում:

Ժառանգությունը ժառանգի դիմումով ձևակերպում է ժառանգության բացման վայրի նոտարը՝ ստուգելով դրա համար համապատասխան հիմքերի առկայությունը և տրամադրելով ժառանգության իրավունքի վկայագիր:

Վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ ժառանգության հիմքով դատավարական իրավահաջորդության հարցը կարող է լուծել միայն նշված ընթացակարգերի արդյունքում ձեռք բերված համապատասխան ապացույցի հիման վրա, որը կվկայի նյութական իրավահաջորդության հաստատված փաստի մասին և հիմք կհանդիսանա դատավարական իրավահաջորդության համար: Ստորադաս դատարանում դատավարության մասնակցին իրավահաջորդով փոխարինելու մասին որոշման բացակայության պայմաններում, Վերաքննիչ դատարանը՝ վերաքննիչ բողոքում նշված հիմնավորումներին համապատասխան, նախ պետք է գնահատի՝ արդյոք ժամանակային առումով հնարավոր էր նման իրավահաջորդության հարցի քննարկում Դատարանի կողմից, իսկ եթե նման հիմքը բացակայում է, պարտավոր է անդրադառնալ բողոքաբերի նյութաիրավական իրավահաջորդությունը հաստատող ապացույցներին՝ ապահովելով ժառանգի դատական պաշտպանության իրավունքը:

### ***Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Այսպես, Դատարանի 27.08.2021 թվականի վճռի համաձայն՝ Ընկերության հայցը բավարարվել է:

Դատարանի 27.08.2021 թվականի վճռի դեմ 03.06.2022 թվականին վերաքննիչ բողոք է ներկայացրել Հայկուշ Գալստյանը՝ հայտնելով, որ հանդիսանում է Համլետ Գալստյանի իրավահաջորդը և խնդրել է բեկանել ու փոփոխել Դատարանի 27.08.2021 թվականի վճիռը, իսկ գործի վարույթը կարճել:

Վերաքննիչ դատարանի 22.06.2022 թվականի որոշմամբ Հայկուշ Գալստյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով, այն հիմնավորմամբ, որ քաղաքացիական գործում առկա չէ պատասխանող Համլետ Գալստյանին իրավահաջորդ Հայկուշ Գալստյանով փոխարինելու մասին որոշում:

Հաշվի առնելով նշված իրավական դիրքորոշումները, ինչպես նաև սույն գործի փաստերը և Վերաքննիչ դատարանի եզրահանգման հիմնավորումները, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վերաքննիչ բողոք ներկայացրած անձն իր վերաքննիչ բողոքում նշել է. «(...) *Դատարանը գործը քննել է պարզեցված վարույթի կարգով, պարասիսանողի անվանը որևէ ծանուցում չի արացվել երբևէ և 27.08.2021թ. հրապարակել է գործով դատարանի ակտ, որը նույնպես չի արացվել*: Հայկուշ Գալստյանը ամուսնու Համլետ Գալստյանի ժառանգությունն ընդունելուց հետո ցանկացել է մեքենայի տեխնիկական զննությունն իրականացնել և հայրնի է դարձել, որ կա արգելանք: (...) Իսկ դատարանի

ծանուցագրերը չի սրացվել ոչ Համլետ Գալստյանի անվամբ ոչ այլ անձի անվամբ: Իսկ համայնքի ղեկավարի կողմից սրացված պատասխանի համաձայն Համլետ Գալստյանի վերջին հայրնի բնակության վայրի մասին տեղեկությունների չեն հայտնաբերվել: Տվյալների համաձայն 17.09.2021թ. դատական ակտը մերել է օրինական ուժի մեջ և 11.11.2021թ. չորվել է կարարողական թերթ»: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն քաղաքացիական գործում վերաքննիչ բողոք ներկայացնելիս արդեն իսկ առկա է եղել նաև ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի պատճենը (**հատոր 1-ին, գ.թ. 77**), որը ներկայացվել է՝ գործի նյութերին ծանոթանալու կապակցությամբ ներկայացված դիմումին կից: Ժառանգության իրավունքի վկայագրի պատճենի համաձայն Համլետ Գալստյանի ժառանգ է հանդիսանում վերջինիս կինը՝ Հայկուշ Գալստյանը: Ավելին, Հայկուշ Գալստյանը վերաքննիչ բողոքի վերջնամասում նշել է նաև, որ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի պատճենն առկա է սույն քաղաքացիական գործում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնար իրավահաջորդության հիմքերի գնահատմանը և ապահովեր վերաքննիչ բողոք բերած անձի արդար դատաքննության իրավունքը:

Վերաքննիչ դատարանը, չգնահատելով իրավահաջորդության հիմք հանդիսացող ապացույցը, սխալ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 22.06.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.06.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

### 36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում  
Մասնկության գործ թիվ  
Նախագահող դատավոր՝

Մասնկության գործ թիվ **ՍնԴ/0453/04/20**  
**2023թ.**  
ՍնԴ/0453/04/20  
Լ. Գրիգորյան

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*գեկուցող* Ա. ՄԿՐՏՉՅԱՆ  
Ս. ՄԵՂՐՅԱՆ  
Է. ՍԵՂՐԱԿՅԱՆ

2023 թվականի սեպտեմբերի 18-ին գրավոր ընթացակարգով քննելով Տիգրան Ուստյանի և սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանի (այսուհետ նաև՝ Կառավարիչ) վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.02.2023 թվականի որոշման դեմ՝ ըստ Տիգրան Ուստյանի դիմումի՝ Մարիաննա Ոսկանյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին,

#### Պ Ա Ր Զ Ե Ց

##### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Տիգրան Ուստյանը պահանջել է Մարիաննա Ոսկանյանին ճանաչել սնանկ:

ՀՀ սնանկության դատարանի 25.02.2020 թվականի որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ, իսկ 03.08.2020 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2020 թվականի որոշմամբ Մարիաննա Ոսկանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ սնանկության դատարանի 03.08.2020 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ սնանկության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 26.02.2021 թվականի որոշմամբ սնանկության գործն ընդունվել է վարույթ, իսկ 25.04.2022 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Դատարանի 04.05.2022 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Ռուզաննա Մարգարյանը:

Դատարանի 12.08.2022 թվականի որոշմամբ բավարարվել է սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանի միջնորդությունը՝ պարտապանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Աբովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի վաճառքը թույլատրելու մասին:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.02.2023 թվականի որոշմամբ Մարիաննա Ոսկանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 12.08.2022 թվականի «Գույքի վաճառքը թույլատրելու մասին» որոշումը վերացվել է, և հարցն ուղարկվել է նոր քննության:

Վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Տիգրան Ոստյանը (ներկայացուցիչ Լևոն Բաղդասարյան) և սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանը:

Վճռաբեկ բողոքների պատասխաններ է ներկայացրել Մարիաննա Ոսկանյանը:

## **2. Տիգրան Ոստյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 60-րդ, 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ և 98-րդ հոդվածները, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածը, չի կիրառել 12.12.2019 թվականի ««Մասնկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասը, որը պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Մարիաննա Ոսկանյանը գործի քննության ընթացքում նշած՝ «ք.Երևան, Նալբանդյան փողոց 25/14 շենք, բն. 85» ծանուցման հասցեով դատարանի և սնանկության գործով կառավարչի ուղարկած ծանուցագրերը մի դեպքում ստացել է, մյուս դեպքում՝ ոչ, ինչը վկայում է վերջինիս ուղղակի դիտավորություն ունենալու մասին: Ավելին՝ Մարիաննա Ոսկանյանը գործի քննության ընթացքում իր հասցեի փոփոխության մասին Դատարանին և սնանկության գործով կառավարչին չի հայտնել, ուստի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի ուժով համարվել է պատշաճ ծանուցված, և սնանկության գործով կառավարիչը չի ունեցել վերջինիս մասով հրապարակային ծանուցում անելու պարտականություն: Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել այն հարցին, որ պարտապանն իր վերաքննիչ բողոքում կրկին նույն հասցեն է նշել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ պարտապանն ունեցել է ներկայացուցիչ փաստաբան, ով նույնպես իր ծանուցման «ք. Երևան, Ծառավ Աղբյուրի փ. 55/11 շ., 176 բն.» հասցեով ուղարկված պարտատերերի ժողովի վերաբերյալ ծանուցումը չի ստացել և չի հայտնել հասցեի փոփոխության մասին:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածով սահմանված կարգավորմանը՝ անտեսելով, որ այն չկիրառելու դեպքում կիսաթարվի ամբողջ սնանկության վարույթը, քանի որ սնանկության գործով գույքն աճուրդի միջոցով արդեն իսկ վաճառված կլինի



և առկա կլինի անշարժ գույքի նոր սեփականատեր: Արդյունքում կխախտվեն ոչ միայն իրավական որոշակիության սկզբունքն ու գործի քննության ողջամիտ ժամկետները, այլ նաև նոր սեփականատիրոջ՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքը:

Վերաքննիչ դատարանը կիրառել է 12.12.2019 թվականի ««Մասնկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասը, սակայն անտեսել է, որ այն ուժի մեջ մտած չի եղել և տարածվել է 15.04.2020 թվականից հետո հարուցված սնանկության գործերի վրա: Սույն սնանկության գործով սնանկության դիմումը ներկայացվել է 24.02.2020 թվականին, իսկ նշված օրենքն ուժի մեջ է մտել 15.04.2020 թվականից: Նշվածից հետևում է, որ սնանկության գործով կառավարիչը հրապարակային ծանուցում տեղադրելու պարտականություն չի ունեցել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 01.02.2023 թվականի որոշումը:

### **2.1 Կատարչի վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, սխալ է կիրառել 12.12.2019 թվականի ««Մասնկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ 29-րդ հոդվածի 9-րդ մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը նշել է, որ պարտատերերի ժողովի վերաբերյալ ծանուցումը պարտապանի կողմից չստացվելու պայմաններում սնանկության գործով կառավարիչը դրա մասին հայտարարությունը չի հրապարակել «www.azdarar.am» կայքում, մինչդեռ անտեսել է, որ 12.12.2019 թվականի ««Մասնկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ 29-րդ հոդվածի 9-րդ մասը տարածվում է միայն այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց օրվանից՝ 15.04.2020 թվականից հետո վարույթ ընդունված գործերի վրա:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի կիրառման, մասնավորապես հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում կառավարչի կողմից հայտարարություն հրապարակելու դեպքերից որևէ մեկն առկա չէ՝ պարտատերերի թիվը 10-ից ավել չէ, չկան խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող պարտատերեր և անհրաժեշտ տեղեկությունների բացակայություն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Դատարանին և սնանկության գործով կառավարչին հայտնի է պարտապանի ծանուցման հասցեն՝ «Երևան, Նալբանդյան փ., 25/14շ., 85», որը վերջինս և նրա ներկայացուցիչը հայտնել են Դատարանին՝ այն նշելով ներկայացված բոլոր դիմումների, բողոքների, այդ թվում՝ վերաքննիչ բողոքի մեջ: Այսինքն՝ ծանուցումն արվել է կառավարչին հայտնի պարտապանի ծանուցման հասցեով, և առկա չէ անհրաժեշտ տեղեկության բացակայություն, ուստի հրապարակային ծանուցում ապահովելու անհրաժեշտությունը բացակայել է:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ թեև պարտապանը հրաժարվել է ստանալ ժողովի մասին ծանուցումը, այնուհանդերձ տեղյակ է եղել ինչպես սնանկության գործի, այնպես էլ գույքի վաճառքի մասին: 22.07.2022 թվականին, երբ գնահատողը տեղագնություն կատարելու նպատակով այցելել է անշարժ գույք, Մարիաննա Ոսկանյանը տեղեկացել է իր անշարժ գույքի գնահատման գործընթացի մասին, որպիսի փաստն ընդունել է վերաքննիչ բողոքով՝ նշելով, որ գնահատողը տարածքը լավ չի գննել, մի քանի լուսանկար է արել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ պարտատերերի ժողովի և բոլոր երեք աճուրդների մասին հայտարարությունները հրապարակվել են «www.azdarar.am» կայքում, ու պարտապանը հնարավորություն ունեցել է տեղեկանալու աճուրդների անցկացման վայրի, ժամի, մեկնարկային գնի մասին և հանդես գալու գույքն ավելի թանկ վաճառելու առաջարկով: Ավելին՝ պարտապանը կարող էր իմանալ, որ գրավի առարկա հանդիսացող իր անշարժ գույքը սնանկության վարույթում պետք է վաճառվի, ուստի բավարար բարեխղճություն ցուցաբերելու դեպքում կարող էր սնանկության գործով կառավարչից կամ դատարանից ժամանակին տեղեկանալ գույքի իրացման գործընթացի մասին, ստանալ գույքի գնահատման հաշվետվության և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Բողոքարկվող որոշումն իրավական անորոշություն է առաջացնում, քանի որ աճուրդը կայացել է, և գնորդի իրավունքն էլ ենթարկվել է պետական գրանցման: Հարցը նոր քննության ուղարկելու արդյունքում ստացվում է իրավիճակ, որ դատարանի կողմից լուծման ենթակա հարցը սպառված է ու օբյեկտիվ իրականության մեջ գոյություն չունի:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել» Վերաքննիչ դատարանի 01.02.2023 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 12.08.2022 թվականի «Գույքի վաճառքը թույլատրելու մասին» որոշմանը:

## **2.2 Մարիաննա Ոսկանյանի կողմից ներկայացված վճարելի բողոքների պատասխանների հիմնավորումները**

Սույն գործով առկա չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի կիրառման հիմքը, քանի որ ինքը և իր ներկայացուցիչն իրենց հասցեները չեն փոխել: Ավելին՝ իր վերաքննիչ բողոքի դեմ վերաքննիչ բողոքի պատասխանն չի ներկայացվել և նշված հանգամանքը Վերաքննիչ դատարանում քննության առարկա չի դարձվել:

Բացի այդ, ժողովի անցնկացման վայրի և ժամանակի մասին սնանկության գործով կառավարիչը պետք է պատշաճ ծանուցի ոչ թե պարտապանի ներկայացուցչին, այլ պարտապանին, առավել ևս, որ իր տված լիազորագրում ներկայացուցչին վերապահված չէ ծանուցումներ ստանալու լիազորություն:

12.12.2019 թվականի «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ 29-րդ հոդվածի 9-րդ մասը սույն գործով կիրառելի է: Թեև սույն գործով սնանկության դիմումը ներկայացվել է 24.02.2020 թվականին և 25.02.2020 թվականին ընդունվել է վարույթ, այդուհանդերձ դրա հիման վրա 03.08.2020 թվականին կայացված վճիռը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2020 թվականի որոշմամբ բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության, որի արդյունքում 16.02.2021 թվականին գործն ընդունվել է Դատարանի վարույթ: Այսինքն՝ սույն գործը հարուցված է համարվում 16.02.2021 թվականին: Եթե անգամ նշված

հողվածը սույն սնանկության գործով կիրառելի չէ, ապա կիրառման է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածը, որի պահանջները սնանկության գործով կառավարչի կողմից չեն պահպանվել:

01.08.2023 թվականի դրությամբ իրեն ուղարկված՝ ժողովի անցնկացման վայրի և ժամանակի մասին ծանուցագրի վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում սնանկության գործով կառավարիչը պարտավոր է եղել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն տեղադրել: Ավելին՝ 01.08.2023 թվականի ժողովի մասին սնանկության գործով կառավարիչը ոչ միայն ծանուցագիրն ուղարկել է «Մանկության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի խախտմամբ, այլև ծանուցումը չի պարունակել ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին ծանոթանալու կարգն ու ժողովի մասնակիցների գրանցման կարգը, և դրանում չեն պարզաբանվել ժողովին չներկայանալու հետևանքները:

Երևան քաղաքի Աբովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 հասցեում գտնվող գույքը գնահատվել է որպես բնակարան, մինչդեռ այն հասարակական նշանակության օբյեկտ է: Անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը կազմվել է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի խախտումներով, դրանում նշված գույքի շուկայական արժեքն անհամեմատ ցածր է, իսկ ինքը ծանուցված չի եղել ժողովի անցնկացման վայրի և ժամանակի մասին, ինչի հետևանքով գրկված է եղել իր միակ բնակարանի հրապարակային սակարկություններով վաճառքը թույլատրելու հարցի շրջանակներում միջնորդություններ ու առարկություններ ներկայացնելու հնարավորությունից:

### **3. Վճուրքի բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը**

Վճուրքի բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) 24.02.2020 թվականին Դատարանում մուտքագրված դիմումով Տիգրան Ուստյանը պահանջել է Մարիաննա Ոսկանյանին ճանաչել սնանկ (**հավելված 1, գ. թ. 2-4**).

2) Դատարանի 25.02.2020 թվականի որոշմամբ դիմումն ընդունվել է վարույթ, իսկ 03.08.2020 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 18.12.2020 թվականի որոշմամբ Մարիաննա Ոսկանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ սնանկության դատարանի 03.08.2020 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

Դատարանի 26.02.2021 թվականի որոշմամբ սնանկության գործն ընդունվել է վարույթ, իսկ 25.04.2022 թվականի վճռով դիմումը բավարարվել է (**հավելված 1, գ. թ. 1, 21-25, 30-36**).

3) 21.07.2022 թվականին սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանը պարտապան Մարիաննա Ոսկանյանին փոստային ծառայության միջոցով՝ «ԵՐԵՎԱՆ, Ք. / Գ. ԵՐԵՎԱՆ Փ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 25/14, 85» հասցեով ուղարկել է ծանուցում՝ հայտնելով, որ անկախ գնահատող ընկերության միջոցով իրականացվելու է պարտապան Մարիաննա Ոսկանյանին պատկանող ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Աբովյան փողոց, թիվ 28 շենք, բնակարան 1 հասցեում գտնվող անշարժ գույքի գնահատում, պարտատերերի ժողովը կայանալու է 01.08.2022 թվականին և դրա օրակարգը պարտապանին պատկանող գույքի վաճառքի ծրագիրը հաստատելն է (**հավելված 1, գ. թ. 58, 59**).

4) 01.08.2022 թվականի արձանագրության համաձայն՝ պարտատերերի ժողովին մասնակցել են պարտատերեր Քրիստինա Գուլոյանի ներկայացուցիչ Ռուզաննա Գևորգյանը և Տիգրան Ուստյանը, պարտապանը և մյուս պարտատեր «Յունիվերսալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն ժողովին չեն ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել են, պարտատերերը կողմ են քվեարկել, և ժողովում հաստատվել է գույքի վաճառքի ծրագիրը (**հավելված 1, գ. թ. 60**).

5) 03.08.2022 թվականին սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանը պարտապան Մարիաննա Ոսկանյանին փոստային ծառայության միջոցով՝ «ԵՐԵՎԱՆ, Բ. / Գ. ԵՐԵՎԱՆ Փ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 25/14, 85» հասցեով ուղարկել է ծանուցում՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Արովյան փողոց, 28-րդ շենք, բնակարան 1 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ հրապարակային սակարկություններով վաճառքը թույլատրելու մասին միջնորդությամբ դատարան դիմելու և հրապարակային սակարկություններով գույքի վաճառքի մեկնարկային գինը 132.700.000 ՀՀ դրամ կազմելու մասին (**հավելված 1, գ. թ. 66, 67**).

6) անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 20.11.2006 թվականի թիվ 2238162 վկայականում Կենտրոն համայնքի Արովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարանի նպատակային նշանակությունը նշված է բնակելի, իսկ օգտագործման նպատակը՝ բնակարան (**հավելված 2, գ. թ. 79-81**).

7) 05.08.2022 թվականին դատարանում ստացվել է պարտապան Մարիաննա Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Արովյան փողոց, 28-րդ շենք, թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի բաց դասական եղանակով հրապարակային սակարկություններով վաճառքը 132.700.000 ՀՀ դրամ մեկնարկային գնով թույլատրելու մասին սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանի միջնորդությունը:

Միջնորդությանը կցված թիվ 20-055 փորձագետի եզրակացության (այսուհետ նաև՝ Եզրակացություն) համաձայն՝

- փորձաքննության կատարումը սկսվել է 22.07.2022 թվականին և ավարտվել 29.07.2022 թվականին,

- փորձագետին պարզաբանման համար ներկայացվել է հետևյալ հարցը. «Առանց տեղազննություն կատարելու որոշել պարտապան Մարիաննա Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Արովյան փողոցի 28 շենքի, թիվ 1 հասցեում գտնվող բնակարանի շուկայական արժեքը (տարածքը փաստացի օգտագործվում է հասարակական նշանակությամբ՝ որպես ստամաբուժարան)՝ հիմք ընդունելով գույքագրման ժամանակ իմ կողմից կատարված լուսանկարները:»,

- փորձաքննության կատարման համար տրամադրվել է «20.11.2006թ. տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 2238162 վկայականի պատճենը:»,

- «Թույլատրող և սահմանափակող պայմաններ» բաժնում, ի թիվս այլնի, նշված է, որ «Մյուս եզրակացության հետևությունները հիմնված են փորձաքննությունը նշանակելու մասին որոշմամբ առաջադրված ելակետային տվյալների և տրամադրված նյութերի հետազոտության վրա՝ առանց այդ տվյալների և նյութերի հավաստիություն ու թույլատրելիությունը երաշխավորելու, (...)»:

- «ՀԵՏԱԶՆՏՈՒԹՅՈՒՆ» բաժնում նշված է, որ անշարժ գույքը «Հետազոտման ամսաթվի դրությամբ օգտագործվում է որպես ստամաբուժարան»,

- Փորձագետի կողմից անշարժ գույքի շուկայական արժեքի որոշումն իրականացվել է համեմատական և եկամտային մեթոդներով՝ ստացված

արդյունքների կշիռն ընդունելով համապատասխանաբար 60% և 40% հարաբերակցությամբ:

Փորձագետը եզրակացրել է, որ Երևան քաղաքի Արուսյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 հասցեում գտնվող բնակարանի շուկայական արժեքը փորձաքննության կատարման ժամանակահատվածի դրությամբ կազմել է 132.700.000 ՀՀ դրամ (**հավելված 1, գ. թ. 44-57**).

8) Դատարանի 12.08.2022 թվականի «Գույքի վաճառքը թույլատրելու մասին» որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքում Մարիաննա Ոսկանյանը որպես իր հասցե նշել է «ք. Երևան, Նալբանդյան փ., 25/14շ. բն. 85» հասցեն (**հավելված 2, գ. թ. 35-41**).

9) Մարիաննա Ոսկանյանը ներկայացրած վերաքննիչ բողոքում նշել է հետևյալը.

«(...) Մարիաննա Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Արուսյան փողոց, 28շ., բն.1 հասցեում գտնվող անշարժ գույքը հանդիսանում է հասարակական նշանակության օբյեկտ, որտեղ ներկայումս գործում է ատամնաբուժարան, սակայն այն հրապարակային սակարկություններով վաճառելու նպատակով գնահատման է ներկայացվել որպես բնակարան և գնահատվել անհամեմատ ցածր արժեքով, որի հետևանքով խախտվել է Մարիաննա Ոսկանյանի սեփականության իրավունքը: (...) Գնահատվող անշարժ գույքի նկատմամբ առկա է եղել սահմանափակում, այն է՝ թիվ ԵԴ/28887/02/19 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը կիրառել է հայցի ապահովման միջոց՝ արգելելով պատասխանող Մարիաննա Ոսկանյանին և այլ երրորդ անձանց կատարել ք. Երևան, Արուսյան փողոցի 28 շենքի թիվ 1 բնակարան հասցեի անշարժ գույքի օտարման կամ այլ իրավունքով ծանրաբեռնման գործողություններ, (...) որը պարտադիր կերպով պետք է արտացոլված լիներ սույն գործով իրականացված փորձաքննության հաշվետվության մեջ: Բացի այդ, չի կատարվել անշարժ գույքի տեղագնություն, փորձաքննության եզրակացության մեջ ամբողջությամբ ներկայացված չեն անշարժ գույքի տեղագնության արդյունքները, (...): Փորձագետը չի կատարել պատշաճ տեղագնություն, (...): Նման պայմաններում փորձագետը չէր կարող գնահատվող գույքի վերաբերյալ ստանալ անհրաժեշտ և բավարար տվյալներ գնահատումը ճիշտ և օբյեկտիվ իրականացնելու համար, բացի այդ, անշարժ գույքի գնահատումն իրականացվել է որպես բնակարանի, սակայն տվյալ անշարժ գույքը հանդիսանում է հասարակական նշանակության օբյեկտ, այլ ոչ թե բնակարան: (...)» (**հավելված 2, գ. թ. 35-41**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պարզադատությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ մինչև 15.04.2020 թվականը գործած խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու

իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից 12.12.2019 թվականի «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն օրենքի խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն վճռաբեկ բողոքների քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ մինչև «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019 թվականի թիվ ՀՕ-294-Ն օրենքի (այսուհետք նաև՝ Օրենք) ուժի մեջ մտնելը հարուցված սնանկության գործերով ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին ժողովին ներկա գրնվելու իրավունք ունեցող պարտավորությունն ու պարտասպանին պարզաձև ծանուցելու կառավարչի պարտականության կատարման, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքի սպառնալույսի հարցերին:*

Նախքան նշված հարցին անդրադառնալը՝ Վճռաբեկ դատարանը նպատակահարմար է գտնում նախ քննարկման առարկա դարձնել Վերաքննիչ դատարանի կողմից սխալ խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենք կիրառված լինելու մասին վճռաբեկ բողոքներում նշված փաստարկները՝ նկատի ունենալով, որ այդ հարցի լուծումը ելակետային է բողոքների քննության համար և կանխորոշում է սույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից կիրառման ենթակա իրավական նորմերը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019 թվականի թիվ ՀՕ-294-Ն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 15-ից և տարածվում է *նույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված* սնանկության գործերի վրա: *Մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը հարուցված* սնանկության գործերը վարվում են մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի նորմերով:

Անդրադառնալով նորմատիվ իրավական ակտերի՝ ժամանակի մեջ գործողության կանոններին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա: Այսինքն՝ նորմատիվ իրավական ակտը փաստացի իրավական հետևանքներ է առաջացնում դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած կամ գործող հարաբերությունների համար: Այս ընդհանուր կանոնից կարող է նախատեսվել բացառություն միայն Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով: Օրենսդիրը միաժամանակ սահմանել է, որ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մասի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը գործող հարաբերությունների վրա, եթե օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: Նման

իրավակարգավորումը նպատակ ունի պաշտպանել հասարակական հարաբերությունների այն մասնակիցներին, ովքեր արդեն իսկ մտել են որոշակի իրավահարաբերությունների մեջ մինչև նոր իրավական ակտի ընդունումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններս իրենց վարքագիծն արդեն իսկ համապատասխանեցրել են ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի ինպերատիվ պահանջներին (յրեն ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիմումի՝ «Ամիգո Արմեն» ՄՊԸ-ին սնանկ ճանաչելու պահանջի մասին թիվ ՄԳ2/0037/04/16 սնանկության գործով ՀՀ վճարելի դատարանի 19.02.2019 թվականի որոշումը):

Վճարելի դատարանն արձանագրում է, որ Օրենքով կատարված փոփոխությունների և լրացումների կիրառումն օրենսդիրը պայմանավորել է **սնանկության գործի հարուցման ամսաթվի** հետ՝ սահմանելով, որ եթե սնանկության գործը հարուցվել է մինչ Օրենքի ուժի մեջ մտնելը՝ 15.04.2020 թվականը, ապա այն վարվում է նախքան դրա ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերով, իսկ եթե հարուցվել է Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, ապա Օրենքով կատարված փոփոխությունները և լրացումներն այդ սնանկության գործով կիրառելի են:

Ինչպես մինչև Օրենքը գործած, այնպես էլ ներկայումս գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է, իսկ 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը դատավորն ընդունում է վարույթ դիմումն ստանալու օրը: (...):

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սնանկության վարույթի հարուցման հիմքը կամավոր կամ հարկադրված **սնանկության դիմումն է**, որն օրենքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված լինելու դեպքում ընդունվում է վարույթ, որպիսի փաստի հիմքով հարուցվում է սնանկության գործը:

Տվյալ դեպքում 24.02.2020 թվականին մուտքագրված հարկադրված սնանկության դիմումով Տիգրան Ոստյանը պահանջել է Մարիաննա Ոսկանյանին ճանաչել սնանկ, որը ՀՀ սնանկության դատարանի 25.02.2020 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն սնանկության գործը հարուցվել է, այսինքն՝ Մարիաննա Ոսկանյանին սնանկ ճանաչելու վերաբերյալ Տիգրան Ոստյանի հարկադրված սնանկության դիմումը վարույթ է ընդունվել **25.02.2020 թվականին**՝ նախքան Օրենքի ուժի մեջ մտնելը, հետևաբար Օրենքով կատարված լրացումները և փոփոխությունները սույն սնանկության գործով կիրառելի չեն:

Վերաքննիչ դատարանը 01.02.2023 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանի կողմից ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին ծանուցումները պատշաճ կատարված լինելու հարցը քննարկելիս կիրառել է այդ պահի դրությամբ գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասը, որը, ի թիվս այլ դեպքերի, անձի հայտնած հասցեով ուղարկված ծանուցագիրը վերադարձվելու դեպքում պարտավորեցնում է ծանուցումն իրականացնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված կարգով: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «Պարտապանին պատկանող գույքի

վաճառքի ծրագրի հաստատման օրակարգով 2022 թվականի օգոստոսի 01-ին Կառավարիչը հրավիրել է պարտավորների ժողով, որի մասին պարտավորներին և Պարտապանին 21.07.2022թ. ծանուցում է ուղարկել, սակայն վերջինիս ծանուցումը վերադարձվել է, որից հետո Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցում չի հրապարակվել: (...), **հանգելով այն եզրակացության, որ** «բացակայում է այն փաստը հիմնավորող ապացույց, որ վերը նշված ժողովի մասին Պարտապանը պարզաճ ծանուցված է, մինչդեռ Կառավարիչը միջնորդություն ներկայացնելիս և Դատարանը որոշում կայացնելիս առանց հիմքերի ընդունել են այն փաստը, որ Պարտապանը պարզաճ ծանուցվել է կայացած ժողովի մասին և իբրև պահպանվել են «Մասնկության մասին» ՀՀ օրենքի պահանջները: (...):»:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը 9-րդ մասով լրացվել է ««Մասնկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019 թվականի թիվ ՀՕ-294-Ն օրենքով, ուստի այդ նորմը ենթակա է կիրառման միայն **15.04.2020 թվականից** հետո հարուցված սնանկության գործերով, մինչդեռ սույն գործը հարուցվել է մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը՝ **25.02.2020 թվականին**: Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անձի հայտնած հասցեով ուղարկված ծանուցագիրը վերադարձվելու դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով սահմանված կարգով ծանուցում իրականացնելու՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածում լրացված նորմը սույն գործով կիրառելի չէ և Վերաքննիչ դատարանի կողմից սույն գործով սխալ նորմ կիրառված լինելու կապակցությամբ բողոքներում ներկայացված փաստարկները հիմնավորված են:

Հինք ընդունելով շարադրված պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանի կողմից հաջորդիվ վկայակոչվում են մինչև ««Մասնկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019 թվականի թիվ ՀՕ-294-Ն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավակարգավորումները:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին ժողովին ներկա գտնվելու իրավունք ունեցող պարտատերերին և պարտապանին կառավարիչը պետք է պատշաճ ծանուցի:

Ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվում է ստացականով, (...):

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող պարտատերերի թիվը 10-ից ավելի լինելու կամ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձի ծանուցումն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկությունների բացակայության դեպքում, ինչպես նաև ժողովին ներկա գտնվելու իրավունք ունեցող (խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող) պարտատերերի համար պատշաճ ծանուցում է համարվում <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված հայտարարությունը:

Նշված նորմերի բովանդակությունից բխում է, որ սնանկության գործով կառավարիչը պարտավոր է ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցել դրան ներկա գտնվելու իրավունք ունեցող պարտատերերին ու պարտապանին, մասնավորապես՝ պատվիրված նամակով նրանց ծանուցում



ուղարկել՝ ապահովելով ստացման փաստի մասին ապացույցների առկայությունը: Այդուհանդերձ նույն հոդվածով նախատեսված դեպքերում ծանուցումը պատվիրված նամակով ուղարկելու փոխարեն սնանկության գործով կառավարիչն անձանց պատշաճ ծանուցումը կարող է ապահովել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն տեղադրելու միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող պարտատերերի թիվը 10-ից ավելին լինելու կամ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձի ծանուցումն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունների բացակայության դեպքերում սնանկության գործով կառավարչի կողմից <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն տեղադրելը նույնպես համարվում է պատշաճ ծանուցում: Այս եղանակով ծանուցումն իրականացվում է նաև բոլոր այն դեպքերում, երբ պետք է ծանուցվեն խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող պարտատերերը:

Սույն գործով Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին պարտապան Մարիաննա Ոսկանյանին ուղարկված ծանուցագիրը վերադարձվելու պայմաններում սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանի կողմից *«Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցում չի հրապարակվել»*, իսկ *«Դատարանը չի անդրադարձել այն հարցին, որ Կառավարչի կողմից պահպանվել են արդյոք «Մասնկության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջները, մասնավորապես, գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու վերաբերյալ ժողովի մասին նույն օրենքի 34-րդ հոդվածի համաձայն Պարտապանը պարշաճ ծանուցվել է, թե ոչ»*:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սույն գործով ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն տեղադրելու՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերից որևէ մեկն առկա չէ: Մասնավորապես՝ սույն գործով պարտատերերի թիվը 10-ից ավել չէ, ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց ծանուցումն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունները չեն բացակայել, ինչպես նաև առկա չեն խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող պարտատերեր, հետևաբար Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն տեղադրելու պարտականություն սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանը չի կրել և այս կապակցությամբ բողոք բերած անձանց փաստարկները նույնպես հիմնավորված են:

Բողոք բերած անձինք բողոքներում ներկայացրել են Դատարանի 12.08.2022 թվականի «Գույքի վաճառքը թույլատրելու մասին» որոշումը վերացնելու և Երևանի Արևմտյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը թույլատրելու հարցը նոր քննության ուղարկելու պայմաններում *իրավական որոշակիության սկզբունքի* խախտման մասին փաստարկներ՝ մասնավորապես նշելով, որ *«կիսաթարվի ամբողջ սնանկության վարույթը, քանի որ սնանկության գործով գույքն աճուրդի միջոցով արդեն իսկ վաճառված կլինի և առկա կլինի անշարժ գույքի նոր սեփականատեր»*, *«աճուրդը կայացել է և գնորդի իրավունքը ենթարկվել է պետական*

գրանցման: Հարցը նոր քննության ուղարկելու արդյունքում սրացվում է իրավիճակ, որ դատարանի կողմից լուծման ենթակա հարցը սպառված է և օբյեկտիվ իրականության մեջ գոյություն չունի»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտապան Մարիաննա Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Արովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը Դատարանի 12.08.2022 թվականի «Գույքի վաճառքը թույլատրելու մասին» որոշման հիման վրա արդեն իսկ հրապարակային սակարկություններով վաճառված լինելու պայմաններում այդ հարցը նոր քննության ուղարկելը պետք է դիտարկել **իրավական որոշակիության սկզբունքի, սեփականության և արդար դատաքննության իրավունքների համարեքարում:**

Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունը հոչակված է որպես իրավական պետություն, իսկ **իրավական որոշակիության սկզբունքն** իրավական պետության և հատկապես դրա կարևորագույն հատկանիշներից **իրավունքի գերակայության** գլխավոր պահանջներից մեկն է, որը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) դիտել է որպես Կոնվենցիայի անքակտելի մաս:

Եվրոպական դատարանը մասնավորապես նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի Կոնվենցիայի նախաբանի լույսի ներքո, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերի ընդհանուր ժառանգության մասն է իրավունքի գերակայությունը, որի բաղկացուցիչ մասն է իրավական որոշակիության սկզբունքը: Եվրոպական դատարանը նշել է, որ ներպետական իշխանությունները, ըստ էության, ամենաարդյունավետը կարող են գնահատել, թե ինչպես են **արդարադատության շահերը և օրենքի գերակայությունը դրսևորվել կոնկրետ իրադրությունում:** Եվրոպական դատարանն այնուամենայնիվ ընգծել է, որ օրենքի գերակայության սկզբունքը ներառում է հավասարապես կարևոր մի շարք այլ սկզբունքներ, որոնք չնայած որ փոխկապակցված են և հաճախ՝ լրացուցիչ, որոշակի հանգամանքներում մտնում են մրցակցության մեջ (*լրեն Brumărescu-ն ընդդեմ Ռուսիայի 28.10.1999 թվականի, Sabeh El Leil-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով*

29.06.2011 թվականի, *Nejdet Şahin and Perihan Şahin-ն ընդդեմ Թուրքիայի 20.10.2011 թվականի, GUÐMUNDUR ANDRI ASTRADSSON-ն ընդդեմ Իսլանդիայի 12.03.2019 թվականի վճիռները*։

Ռիստովսկին ընդդեմ Ուկրաինայի գործով (զանգատ թիվ 29979/04) 20.01.2012 թվականի վճռով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ հին «սխալը» շտկելու անհրաժեշտությունը *չպետք է անհամաչափորեն միջամտի նոր իրավունքին, որը ձեռք է բերվել անհատի կողմից՝ բարեխղճորեն սպասվինելով պետական մարմինների գործողությունների օրինականությանը*։

Սահմանադրական դատարանը ևս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և նշել, որ իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները։ Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի *գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (ընդ թիվ ՄԴՈ-1213 որոշումը)*։

Սահմանադրական դատարանը հավելել է, որ իրավական որոշակիության սկզբունքն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները *ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վարած լինեն ինչպես իրենց պաշտոնասպես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում (ընդ թիվ ՄԴՈ-630 և թիվ ՄԴՈ-1142 որոշումները)*։

Եվրոպական դատարանը նշել է, որ իրավական որոշակիության պահանջները բացարձակ չեն։ *Այս սկզբունքից շեղումն արդարացված է* միայն այն դեպքում, երբ դա *անհրաժեշտ է էական և անհաղթահարելի բնույթ ունեցող հանգամանքների թելադրանքով կամ եթե լուրջ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ (ընդ Ryabykh v. Russia գործով 03.12.2003 թվականի վճիռը, կետ 52, Bratyakin v. Russia գործով 09.03.2006 թվականի վճիռը, Xheraj v. Albania գործով 29.07.2008 թվականի վճիռը, կետեր 51-52-րդ)*։

Հիմք ընդունելով վճռաբեկ բողոքներում ներկայացված փաստարկները և շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի Արտվյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի հրապարակային սակարկություններն արդեն կայացած լինելու և գույքի նոր սեփականատեր առկա լինելու պայմաններում նշված հարցը նոր քննության ուղարկելիս Վերաքննիչ դատարանը պետք է պատճառաբաներ, որ *իրավական որոշակիության սկզբունքից շեղվելն արդարացված է*, մասնավորապես՝ առկա է արդար դատաքննության իրավունքի էական և անհաղթահարելի բնույթ ունեցող այնպիսի խախտում, որը հնարավոր չէր վերականգնել առանց իրավական որոշակիության սկզբունքից շեղվելու, կամ իրավաչափ նկատառումները գերակայում են իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ։

Վճռաբեկ դատարանի նման եզրահանգման հիմքում ընկած է նաև այն հանգամանքը, որ պարտապան Մարիաննա Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Արտվյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառված լինելու պայմաններում այդ հարցը նոր քննության ուղարկելը պարունակում է նաև Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իր

գույքից անարգել օգտվելու իրավունքի խախտման ռիսկեր՝ *այն անձի համար*, ով, սպալվինելով պետական մարմնի գործողությունների օրինականությանը, ձեռք է բերել սեփականության իրավունք՝ վստահ լինելով պաշտոնապես ճանաչված իր կարգավիճակի անփոփոխելիությանը:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը բաղկացած է 3 առանձին կանոններից, որի առաջին կանոնը ձևակերպում է գույքից անարգել օգտվելու իրավունքը (*լրե՛ս Սպորտոնգր* և *Լոնրոդոն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի 22.09.1982 թվականի վճիռը*, կետ 61):

Սահմանադրության 60-րդ հոդվածի, ինչպես նաև Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականության իրավունքը բացարձակ չէ, ուստի Սահմանադրությամբ և Արձանագրությամբ նախատեսվում է այն սահմանափակելու իրավական հնարավորություն: Միաժամանակ, Եվրոպական դատարանը նախատեսել է մի շարք չափանիշներ, որոնց պետք է բավարարի այդ սահմանափակումը, և որոնց առկայության դեպքում այն կարող է համարվել թույլատրելի սահմանափակում:

Գույքից անարգել օգտվելու միջամտությունը կարող է թույլատրելի համարվել, եթե՝

1. նախատեսված է օրենքով,
2. բխում է հանրային շահից,
3. անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Առաջին պայմանը ենթադրում է համապատասխան օրենքի առկայություն, որը նախատեսում է սեփականության օգտագործման սահմանափակումները: Այն միաժամանակ պետք է բավարարի Կոնվենցիայի 1-ին Արձանագրությամբ և Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված պահանջները (*լրե՛ս Ջեյմսը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի 21.02.1986 թվականի վճիռը*, կետ 67):

Երկրորդ պայմանը սահմանում է, որ սեփականության իրավունքի իրականացման միջամտությունը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ ելնելով ընդհանուր, հանրային շահից (*լրե՛ս Former king of Grecc and others v. Grece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000 թվականի վճիռը*, կետ 83):

Երրորդ պայմանը նախատեսում է, որ գույքից անարգել օգտվելու միջամտությունը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում և ուղղված լինի իրավաչափ նպատակի հասնելուն: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հանրության շահից բխող պահանջմունքների և անհատի իրավունքների միջև: Նման բարենպաստ հավասարակշռությանը հնարավոր չէ հասնել այն դեպքերում, երբ գույքի սեփականատերն ստիպված է «անհատական և չափազանց մեծ անհարմարություններ» կրել: Կոնվենցիայի խախտում սկզբունքորեն տեղի չի ունենա, եթե առկա է կոնվենցիոն իրավունքին ավելի քիչ սահմանափակող միջոց, քան այն, որն ընտրվել է որոշակի նպատակի հասնելու համար, սակայն երկու միջոցներն էլ դուրս չեն պետության հայեցողության թույլատրելի շրջանակից: Մյուս կողմից, հետապնդող նպատակի և միջամտության համարժեքության հարցը լուծելիս պետք է հաշվի առնվի այլընտրանքային լուծումների առկայությունը: Պետության հայեցողության թույլատրելի շրջանակները կախված են գործի հանգամանքներից, Կոնվենցիայով երաշխավորված իրավունքի տեսակից, միջամտության արդյունքում հետապնդող իրավաչափ նպատակի բնույթից, ինչպես նաև միջամտության ծավալներից (*լրե՛ս Former king of Grecc and others v. Grece գործով Եվրոպական դատարանի 23.11.2000*

թվականի վճիռը, կետ 89, Սկոյլոն ընդդեմ Իտալիայի գործով Եվրոպական դատարանի 28.09.1985 թվականի վճիռը, կետ 32):

Տվյալ գործով Վերաքննիչ դատարանը գտել է, որ պատշաճ ծանուցված չլինելու հետևանքով «խախտվել է Պարտապանի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածներով երաշխավորված արդար դատարանության իրավունքը»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը գնահատման չի արժանացրել նաև այն հարցերը, թե արդյոք պարտապան Մարիաննա Ոսկանյանի արդար դատաքննության իրավունքի ենթադրյալ խախտումն ինքնին այնպիսին է, որ գույքից անարգել օգտվելու կոնվենցիոն իրավունքի սահմանափակումը համաչափ է, և արդյոք առկա չէ *գույքից անարգել օգտվելու կոնվենցիոն իրավունքն ավելի քիչ սահմանափակող այլընտրանքային միջոց*, քան ընտրված հարցը նոր քննության ուղարկելն է:

Մարիաննա Ոսկանյանի արդար դատաքննության իրավունքի խախտում թույլ տրված լինելու իր պատճառաբանությունների հիմքում Վերաքննիչ դատարանը դրել է վերջինիս պատշաճ ծանուցված չլինելու հանգամանքը, որի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառելի են (...) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ քան նախատեսված չէ «Մասնկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Անդրադառնալով նշված իրավանդությունների վերլուծությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ սնանկության վարույթի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը կիրառվում են այնքանով, որքանով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերով այլ կանոններ նախատեսված չեն: Այսինքն՝ այն պարագայում, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով նախատեսված է այլ կանոն, սակայն «Մասնկության մասին» ՀՀ օրենքի նորմերը նշված հանգամանքի նկատմամբ սահմանել են այլ մոտեցումներ, ապա պետք է կիրառվի «Մասնկության մասին» ՀՀ օրենքի դրույթը (*լրեն ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի դիմումի՝ Ամալյա Բեգլարյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին թիվ ՍՆԴ/0104/04/19 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.05.2020 թվականի որոշումը*):

**Նույն գործով կիրառելի խնդրությանը «Մասնկության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝** ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին սնանկության գործով կառավարչի կողմից պարտատերերին ու պարտապանին ուղարկված ծանուցագրերը վերադարձվելու դեպքում այլ կանոններ սահմանված չլինելու պայմաններում կիրառման են ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի ներքոնշյալ նորմերը և դրանց վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները: Այսպես՝

Սույն գործով կիրառելի խմբագրությանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծանուցագիրն ուղարկվում է դատավարության *մասնակցի նշած հասցեով (ծանուցման հասցե)*, իսկ 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձի դեպքում դատական ծանուցագիրը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը (...):

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե դատավարության մասնակիցը հրաժարվել է ստանալ ծանուցագիրը, կամ նրա հայտնած հասցեով ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է դատարան, կամ ուղարկելու օրվանից երկշաբաթյա ժամկետում դատարանը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ դատավարության մասնակցի հասցեն անհայտ է, ապա դատարանը դատական ծանուցագիրը ուղարկում է՝

1) ֆիզիկական անձի դեպքում՝ այդ անձի հաշվառման, աշխատանքի վայրի հայտնի հասցեով և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին, իսկ գործի նյութերում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ նաև այդ հասցեներով. (...):

Սույն գործով կիրառելի խմբագրությանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված գործողությունները կատարելու հետ միաժամանակ դատական ծանուցագիրը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Նույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո 15-րդ օրն անձը համարվում է ծանուցված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ դատավարության մասնակիցը *պարտավոր է դադարանքին հայտնել գործի քննության ընթացքում իր հասցեի*, էլեկտրոնային փոստի կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցի *փոփոխության մասին*: Նման հաղորդման բացակայության դեպքում ծանուցագիրն ուղարկվում է այն հասցեով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով, որով դատավարության մասնակիցը վերջին անգամ ծանուցվել է, և *համարվում է հանձնված, թեև ուզել հասցեապերհն այն փաստից չի արացել*:

Շարադրված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ծանուցագիրը ֆիզիկական անձի կողմից չստացվելու կամ այդ փաստի հաստատմանը ծառայող ապացույցի բացակայության դեպքերում դատարանը կրում է գործի ընթացքի մասին գործին մասնակցող անձանց իրազեկելուն ուղղված որոշակի գործողություններ ձեռնարկելու պարտականություն, այն է՝ ծանուցագիրն ուղարկում է ֆիզիկական անձի հաշվառման, աշխատանքի վայրի հայտնի հասցեներով, ինչպես նաև նրա վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին, իսկ գործի նյութերում այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում նաև այդ հասցեներով՝ միաժամանակ այն տեղադրելով Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Ընդ որում՝ եթե դատարանը կատարել է նշված բոլոր գործողությունները, ապա հաջորդող 15-րդ օրը ֆիզիկական անձն *օրենքի խնամարով* համարվում է *ծանուցված*:

Այդուհանդերձ դատավարության մասնակիցների պատշաճ ծանուցումն ապահովելու տեսանկյունից ակտիվ գործողություններ ձեռնարկելու պարտականություն ունի ոչ միայն դատարանը՝ օրենքով նախատեսված և կոնկրետ իրավիճակում ծանուցման հնարավոր բոլոր միջոցների և եղանակների կիրառմամբ գործի ընթացքի մասին դատավարության մասնակիցներին իրազեկելու տեսանկյունից, այլ նաև դատավարության մասնակիցը՝ գործի քննության ընթացքում իր հասցեի, էլեկտրոնային փոստի կամ էլեկտրոնային այլ հաղորդակցության միջոցի փոփոխության մասին դատարանին հայտնելու տեսանկյունից: Ընդ որում, դատարանին հայտնած հասցեով ուղարկված ծանուցագիրը դատավարության մասնակցի կողմից չստացվելու դեպքում, եթե բացակայում է հասցեի փոփոխության մասին հաղորդումը, համարվում է հասցեատիրոջը *հանձնված՝ անգամ հասցեատիրոջ կողմից այն փաստացի չարացվելու դեպքում*:

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անհրաժեշտ է հավասարակշռություն գտնել շահագրգիռ տարբեր շահերի միջև: Դատավարությունն անորոշ ժամկետով երկարաձգելը դատավարությանը ներգրավված անձանցից մեկի հասցեն գտնելու նպատակով կարող է *անհամարելի լինել իրավական օրինականության և արդարադատության պարզաձև իրականացման սկզբունքների հետ*: Հետևաբար՝ դատարան դիմելու իրավունքը պայմանավորվող կողմերին չի արգելում իրենց օրենսդրությամբ նախատեսելու նման իրավիճակներում կիրառվող ընթացակարգեր՝ *երաշխավորելով այդ շահերի պարզաձև պաշտպանվածությունը (լրեն՝ Nunes Dias v. Portugal գործով (գանգալր թիվ 69829/01, 2672/03) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 10.04.2003 թվականի վճիռը)*:

Այս առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես նշել է, որ դատաքննության մասնակիցներից յուրաքանչյուրն *ինքը պետք է շահագրգռված լինի իր իրավունքների պաշտպանությամբ և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ավարտվելու հարցում՝ և չպետք է կարարի այնպիսի գործողություններ, որոնք կիտչընդորեն գործի քննության բնականոն ընթացքը և կճգճգեն դատավարությունը*: Հակառակ պարագայում կստացվի, որ կողմերից մեկը, ունենալով անսահմանափակ իրավունքներ, պաշտպանության գործող կառուցակարգը կօգտագործի ի վնաս մյուս կողմի՝ խախտելով վերջինիս իրավունքները և օրինական շահերը, ինչը *կհակասի արդարադատության բուն էությանն ու դատավարության նպատակին*, քանի որ դատավարությունը կոչված է վերականգնելու և պաշտպանելու մարդու իրավունքները և օրինական շահերը (լրեն՝ ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետարանն ընդդեմ Սյրուպա Հովհաննիսյանի թիվ ՄԴ2/0196/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքով սնանկության գործով կառավարչի համար սահմանված լիազորությունների, նրա դերակատարման մասին ամրագրված օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը թույլ է տալիս ընդգծել, որ սնանկության գործով կառավարչի կողմից իր լիազորությունների իրականացումը հետապնդում է պարտապանի գույքի պահպանման և պարտատերերի պահանջների պատշաճ բավարարումն ապահովելու նպատակ, հետևաբար այդ լիազորությունները մեկնաբանելիս պետք է առաջնորդվել այն սկզբունքով, որ դրանք ուղղված են նշված նպատակի կենսագործմանը: Այս մոտեցումը դրված է նաև թիվ ԵՄԴ/0049/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2017 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավարչի դատավարական կարգավիճակի վերաբերյալ արտահայտված դիրքորոշման հիմքում, համաձայն որի՝ սնանկության գործով կառավարիչը սնանկության վարույթում

պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովող հիմնական անձն է:

Հիմք ընդունելով մի կողմից պարտապանի գույքային դրությունը կայունացնելու և մյուս կողմից պարտատերերի շահերի պաշտպանությունն ապահովելու դերը՝ սնանկության վարույթի ընթացքում առանձին գործողությունների մասին ծանուցումներ իրականացնում է նաև սնանկության գործով կառավարիչը, ով պարտապանին և պարտատերերին ծանուցագրերը նույնպես ուղարկում է նրանց նշած՝ սնանկության գործով հայտնի հասցեներով (ծանուցման հասցե): Եթե սնանկության վարույթի ընթացքում պարտապանը կամ պարտատերն իրենց նշած հասցեով ծանուցվում են դատավարական կամ առանձին գործողությունների մասին, և իրենց հասցեի փոփոխության մասին գործի քննության ընթացքում չեն հայտնում, *սույն գործով կիրառելի խմբագրությանը «Մասնկության մասին» ՀՀ օրենքով այլ կանոն նախատեսված չլինելու պայմաններում* ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի ուժով կրում են նաև դրանից բխող բացասական հետևանքները՝ հասցեագրված ծանուցումը համարվում է նրանց հանձնված՝ անկախ փաստացի ստացվելու հանգամանքից:

Սահմանադրության 63-րդ հոդվածով և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում դատական պաշտպանության իրավունքը երաշխավորված է նաև *դատավարության մյուս կողմի համար*: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածով նախատեսված հետևանքը հետապնդում է դատավարության մասնակիցների շահերը հավասարակշռելու և նրանցից մեկի անբարեխիղճ վարքագծից մյուսների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակ, երբ դատավարության կողմերից մեկը ստեղծում է գործի քննության բնականոն ընթացքին սպառնացող խոչընդոտներ՝ ձգձգելով դատավարությունն ու ստեղծելով իրավական օրինականության և արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքների հետ անհամատեղելի իրավիճակներ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, եթե դատավարության կողմերից մեկն իր իրավունքների պաշտպանության հարցում շահագրգռվածություն չի ցուցաբերում՝ իր հասցեի փոփոխության մասին դատարանին հայտնելու միջոցով դատարանի կողմից լրացուցիչ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը կանխելու և այդկերպ գործի ողջամիտ ժամկետում քննությանը նպաստելու հարցում, ապա իր վարքագծի բացասական հետևանքները պետք է կրի հենց այդ կողմը, ոչ թե դատավարության մյուս մասնակիցներն ու դատավարությունն ընդհանրապես:

Սույն սնանկության վարույթի շրջանակներում պարտապան Մարիաննա Ոսկանյանի՝ դատարանին, ինչպես նաև սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանին հայտնի հասցեն է՝ «ք. Երևան, Նալբանդյան փ., 25/14շ., բն. 85»: *Այս նույն հասցեն որպես պարտապան Մարիաննա Ոսկանյանի հասցե նշված է նաև Դատարանի 12.08.2022 թվականի «Գույքի վաճառքը թույլատրելու մասին» որոշման դեմ ներկայացված վերաքննիչ բողոքում*:

Մասնկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանը պարտապան Մարիաննա Ոսկանյանի սնանկության գործով հայտնի հասցեով 21.07.2022 թվականին ուղարկել է ծանուցում՝ հայտնելով, որ անկախ գնահատող ընկերության միջոցով իրականացվելու է նրան պատկանող՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Արուսյան փողոց, 28-րդ շենք, թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքի գնահատում,



պարտատերերի ժողովը կայանալու է 01.08.2022 թվականին և դրա օրակարգը պարտապանին պատկանող գույքի վաճառքի ծրագիրը հաստատելն է:

01.08.2022 թվականին կայացած պարտատերերի ժողովում հաստատվել է գույքի վաճառքի ծրագիրը:

03.08.2022 թվականին սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանը կրկին պարտապան Մարիաննա Ոսկանյանի՝ սնանկության գործով հայտնի հասցեով ուղարկել է ծանուցում՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Արովյան փողոց, 28-րդ շենք, թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքի՝ հրապարակային սակարկություններով վաճառքը թույլատրելու մասին միջնորդությամբ դատարան դիմելու և հրապարակային սակարկություններով գույքի վաճառքի մեկնարկային գինը 132.700.000 ՀՀ դրամ կազմելու մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտապան Մարիաննա Ոսկանյանը սնանկության գործի ընթացքում իր հասցեի փոփոխության մասին ոչ միայն չի հայտնել, այլև պարտատերերի ժողովի, ինչպես նաև սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքը հրապարակային սակարկություններով վաճառքի հանելու մասին պատշաճ ծանուցված չլինելու հիմքով ներկայացված իր վերաքննիչ բողոքում նշել է նույն՝ «ք. Երևան, Նալբանդյան փ., 25/14շ., բն. 85» հասցեն:

Պարտապան Մարիաննա Ոսկանյանի կողմից սնանկության վարույթի ընթացքում իր հասցեի փոփոխության մասին հաղորդման բացակայության, ինչպես նաև վերաքննիչ բողոքում նույն՝ «ք. Երևան, Նալբանդյան փ., 25/14շ., բն. 85» հասցեն նշված լինելու փաստերի համակցությունը Վճռաբեկ դատարանին թույլ են տալիս արձանագրել, որ պարտապան Մարիաննա Ոսկանյանը 21.07.2022 թվականին և 03.08.2022 թվականին իրեն հասցեագրված ծանուցումները չի ստացել ոչ թե սնանկության գործով կառավարչի կողմից իր լիազորությունները ոչ պատշաճ կամ թերի կատարելու, այլ սույն գործով իր հայտնած (հետագայում վերաքննիչ բողոքով հաստատած) հասցեով ուղարկված ծանուցումները չստանալու և իր հասցեի փոփոխության մասին չհայտնելու վարքագծի պատճառով: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշվածի բացասական հետևանքները պետք է կրի պարտապան Մարիաննա Ոսկանյանը՝ «ք. Երևան, Նալբանդյան փ., 25/14շ., բն. 85» հասցեով 21.07.2022 թվականին և 03.08.2022 թվականին սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանի ուղարկած ծանուցումները նրան հանձնված համարելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության 98-րդ հոդվածով նախատեսված հետևանքը կիրառելու եղանակով:

Վերոշարադրյալ պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի դատավարական փաստերի պայմաններում սնանկության գործով կառավարչի վրա Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցագիր տեղադրելու պարտականություն դնելով՝ Վերաքննիչ դատարանը վերջինիս ծանուցաբեռնել է օրենքով չնախատեսված լրացուցիչ գործառույթ իրականացնելու պարտականությամբ, հետևաբար Վերաքննիչ դատարանի կողմից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի խախտում թույլ տրված լինելու կապակցությամբ վճռաբեկ բողոքներում նշված փաստարկները հիմնավորված են:

Վերոշարադրյալ պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում վճռաբեկ բողոքներում ներկայացված փաստարկները և վճռաբեկ բողոքների հիմքի առկայությունը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի 01.02.2023 թվականի որոշումը վերացնելու համար:

Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի 01.02.2023 թվականի դատական ակտը վերացնելու արդյունքում ՀՀ սնանկության դատարանի 12.08.2022 թվականի «Գույքի վաճառքը թույլատրելու մասին» որոշումը մտնում է օրինական ուժի մեջ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Մարիաննա Ոսկանյանի լաված լինելու, իր իրավունքների լիարժեք իրականացումը և դրանց պաշտպանությունն ապահովելու, այսինքն՝ վերջինիս արդար դատաքննության իրավունքի իրացումը երաշխավորելու համար պետք է անդրադառնալ իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքի հրապարակային սակարկություններով վաճառքը թույլատրելու հարցի վերաբերյալ պարտապան Մարիաննա Ոսկանյանի՝ վերաքննիչ բողոքում ներկայացված դիրքորոշմանը:

Սույն որոշման «3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը» բաժնի 9-րդ փաստը Մարիաննա Ոսկանյանի վերաքննիչ բողոքում ներկայացված փաստարկների տառացի վերարտադրությունն է, որի բովանդակությունից հետևում է, որ վերջինիս առարկությունը հանգել է մասնավորապես հետևյալին՝

1. Երևան քաղաքի Աբովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը գնահատման է ներկայացվել որպես բնակարան և գնահատվել անհամեմատ ցածր արժեքով, մինչդեռ հանդիսանում է հասարակական նշանակության օբյեկտ և գործում է որպես ատամնաբուժարան,

2. Եզրակացության մեջ չի արտացոլվել նշված անշարժ գույքի նկատմամբ առկա սահմանափակումը՝ կիրառված հայցի ապահովման միջոցը,

3. փորձագետը չի կատարել պատշաճ տեղազննում, իսկ եզրակացության մեջ ամբողջությամբ ներկայացված չեն անշարժ գույքի տեղազննության արդյունքները:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փորձաքննության կատարման համար տրամադրվել է Երևան քաղաքի Աբովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 20.11.2006 թվականի թիվ 2238162 վկայականի պատճենը, որում անշարժ գույքի նպատակային նշանակությունը նշված է բնակելի, իսկ օգտագործման նպատակը՝ բնակարան:

Անշարժ գույքի շուկայական արժեքի որոշումը համեմատական մեթոդով իրականացնելիս համեմատվող նմանակների (անալոգների) սեփականության իրավունքի արժեքը ճշտելու գործոններից է անշարժ գույքի նպատակային և գործառնական նշանակությունը (տե՛ս Եզրակացության «ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ» բաժինը), ուստի Երևան քաղաքի Աբովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի նպատակային և գործառնական նշանակության մասին տեղեկություններ պարունակող միակ փաստաթղթի հետազոտման հիման վրա փորձագետը նշված գույքի շուկայական արժեքը որոշել է նույն նպատակային և գործառնական նշանակություն ունեցող նմանակների (անալոգների) հետ համեմատությամբ՝ արժեքների վրա ազդող հնարավորինս համադրելի գործոնների հիման վրա: Ընդ որում, փորձագետը խնդրո առարկա անշարժ գույքը հասարակական նշանակությամբ՝ որպես ատամնաբուժարան օգտագործվելու մասին նշել է Եզրակացության «ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ» բաժնում:

Շարադրված պատճառաբանությունների հիմքով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ փորձագետը, նշված անշարժ գույքի շուկայական արժեքը 2022 թվականի հուլիս ամսին Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանում առաջարկվող՝ բնակելի նպատակային նշանակություն ունեցող բնակարանների համեմատական տվյալների վերլուծությամբ որոշելով, որևէ խախտում թույլ չի տվել:

Ինչ վերաբերում է Մարիաննա Ոսկանյանի այն փաստարկներին, որ Եգրակացության մեջ չի արտացոլվել Երևան քաղաքի Աբովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ առկա սահմանափակումը՝ կիրառված հայցի ապահովման միջոցը, փորձագետը չի կատարել պատշաճ տեղագնում և եզրակացության մեջ ամբողջությամբ ներկայացված չեն անշարժ գույքի տեղագնության արդյունքները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ փորձագետը փորձաքննությունն իրականացրել է իրեն առաջադրված հարցերի շրջանակներում՝ տրամադրված նյութերի հիման վրա:

Փորձագետի եզրակացությունից հետևում է, որ փորձագետին առաջադրվել է *ստանց տեղագնություն իրականացնելու* որոշել Երևան քաղաքի Աբովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը՝ հիմք ընդունելով սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանի կողմից գույքագրման ժամանակ կատարված լուսանկարները, իսկ փորձաքննության համար տրամադրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 20.11.2006 թվականի թիվ 2238162 վկայականի պատճենը:

Վճռաբեկ դատարանը նշում է, որ Եգրակացության «Թույլատրող և սահմանափակող պայմաններ» բաժնում, ի թիվս այլնի, նշված է, որ «Սույն եգրակացության հետևությունները հիմնված են փորձաքննությունը նշանակելու մասին որոշմամբ առաջադրված ելակետային տվյալների և տրամադրված նյութերի հետազոտության վրա՝ առանց այդ տվյալների և նյութերի հավաստիություն ու թույլատրելիությունը երաշխավորելու, (...)»: Նշվածից հետևում է, որ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքի հաշվարկը փորձագետն իրականացրել է փորձաքննություն իրականացնելու համար տրամադրված նյութերի, տվյալ դեպքում՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենի հետազոտության վրա, ուստի նշված անշարժ գույքի նկատմամբ առկա սահմանափակման՝ հայցի ապահովում կիրառված լինելու մասին իմանալ, համապատասխանաբար նաև այդ գործոնը հաշվի առնել վերջինս չէր կարող: Ընդ որում, անշարժ գույքի շուկայական արժեքի որոշումը համեմատական մեթոդով իրականացնելիս փորձագետն այդ մեթոդի շարադրանքի մեջ նշել է համեմատվող նմանակների (անալոգների) սեփականության իրավունքի արժեքը ճշտելու գործոնները, որոնցից է նաև «գույքային իրավունքներն ու սահմանափակումները (այդ թվում՝ իրավունքների և օգտագործման նկատմամբ)», մինչդեռ նշված գործոնի առկայության մասին իրեն նյութեր տրամադրված չլինելու պայմաններում վերջինս օբյեկտիվորեն այդ գործոնը հաշվի չի առել, ուստի այս մասով պարտապան Մարիաննա Ոսկանյանի առարկությունն անհիմն է:

Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի շուկայական արժեքը փորձագետը որոշել է *իրեն առաջադրված հարցի շրջանակում*՝ սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանի կողմից գույքագրման ժամանակ կատարված լուսանկարների հիման վրա (թվով 6 լուսանկարները կցվել են Եգրակացությանը) և առանց տեղագնություն իրականացնելու, ուստի այս կապակցությամբ պարտապան Մարիաննա Ոսկանյանի առարկությունը նույնպես իրավաչափ չէ:

Ամփոփելով շարադրված պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պարտապան Մարիաննա Ոսկանյանի ներկայացրած առարկությունը քննարկման առարկա դարձնելու պայմաններում անգամ բացակայել է Երևան

քաղաքի Աբովյան փողոցի 28-րդ շենքի թիվ 1 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի բաց դասական եղանակով հրապարակային սակարկություններով վաճառքը 132.700.000 ՀՀ դրամ մեկնարկային գնով թույլատրելու մասին սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանի միջնորդությունը մերժելու մասին որոշում կայացնելու՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածով սահմանված հիմքը:

Ամփոփելով վերոգրյալը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բացակայում են էական և անհաղթահարելի բնույթ ունեցող այնպիսի հանգամանքները կամ իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ գերակայող լուրջ իրավական նկատառումները, որոնք կարող էին Վերաքննիչ դատարանին հիմք տալ իրավական որոշակիության սկզբունքից շեղվելու և սեփականության իրավունքին միջամտելն արդարացնելու համար:

*Վճռաբեկ բողոքների պատասխաններում ներկայացված փաստարկները հերքվում են վերոգրյալ պարճատարանությամբ:*

Վերոշարադրյալ պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքների հիմքի առկայությունը դիտում է բավարար Վերաքննիչ դատարանի 01.02.2023 թվականի որոշումը վերացնելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանի թույլ տրված խախտումները հանգեցրել են հարցի սխալ լուծման՝ խաթարելով արդարադատության բուն էությունը: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանը խախտել է իրավունքի գերակայության բաղկացուցիչ տարր համարվող իրավական որոշակիության սկզբունքը՝ անտեսելով, որ բացակայում է պարտապան Մարիաննա Ոսկանյանի արդար դատաքննության իրավունքի էական և անհաղթահարելի բնույթ ունեցող այնպիսի խախտումը կամ իրավական որոշակիության սկզբունքի նկատմամբ գերակայող լուրջ իրավական նկատառումը, որը կարող էր արդարացնել իրավական որոշակիության սկզբունքից շեղվելը, ինչպես նաև անհամաչափ սահմանափակել է գույքից անարգել օգտվելու իրավունքը՝ անտեսելով արդար դատաքննության իրավունքի իրացման նպատակին համնելու համար գույքից անարգել օգտվելու իրավունքն ավելի քիչ սահմանափակող այլընտրանքային միջոցի առկայությունը:

Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի 01.02.2023 թվականի դատական ակտը վերացնելու արդյունքում ՀՀ սնանկության դատարանի 12.08.2022 թվականի «Գույքի վաճառքը թույլատրելու մասին» որոշումը մտնում է օրինական ուժի մեջ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան նոր դատական ակտ կայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միջանկյալ դատական ակտ բողոքարկված լինելու պայմաններում դատական ծախսեր չեն առաջացել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Տիգրան Ոստյանի և սնանկության գործով կառավարիչ Ռուզաննա Մարգարյանի վճռաբեկ բողոքները բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 01.02.2023 թվականի որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

### 37. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԿԴԻ/3245/02/19 2022թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԿԴԻ/3245/02/19
Նախագահող դատավոր	Դ. Մերոբյան
Դատավորներ	Ս. Հարթենյան Գ. Թորոսյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող</i>	Մ. ԴԻՄԵՅԱՆ
<i>զեկուցող</i>	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ Ս. ԱՆՏՈՆՅԱՆ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ Գ. ՀԱԿՈԲՅԱՆ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 21-ին գրավոր ընթացակարգով քննելով Անահիտ Խանգելոյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.05.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Ռուստամ Դրբոյանի ընդդեմ Անահիտ Խանգելոյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ռուստամ Դրբոյանը պահանջել է Անահիտ Խանգելոյանից բռնագանձել 2.142.000 ՀՀ դրամ, որպես պարտքի գումար, ինչպես նաև 17.08.2017 թվականից մինչև 22.07.2019 թվականը բռնագանձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսագումար՝ 367.048 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև բռնագանձել նույն հոդվածով սահմանված տոկոսները մինչև գումարի ամբողջական վերադարձնելու օրը:

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Արզումանյան) (այսուհետ՝ Դատարան) 29.09.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի՝ հետևյալ կերպ.

«1. (...)

Պատասխանող Անահիտ Խանգելոյանից հոգուտ հայցվոր Ռուստամ Դրբոյանի բռնագանձել 2 639 178 (երկու միլիոն վեց հարյուր երեսունինը հազար հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ 70 (յոթանասուն) լումա, որից 2 142 000 ՀՀ դրամը՝ պարտքի գումար, 497 178 ՀՀ դրամ 70 լուման՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքով հաշվեգրված տոկոսի գումար:

24.07.2019 թվականից մինչև պարտավորության դադարման օրը, 2 142 000 ՀՀ դրամին հաշվեգրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների տոկոսները և այդ գումարը բռնագանձել պատասխանող Անահիտ Խանգելոյանից հոգուտ հայցվոր Ռուստամ Դրբոյանի:

2. Հայցը՝ պատասխանող Անահիտ Խանգելոյանից հոգուտ հայցվոր Ռուստամ Դրբոյանի 14 045 ՀՀ դրամ 3 լումա տոկոսի գումարը բռնագանձելու պահանջի մասով, մերժել: (...):»

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր Գ. Սերոբյան, դատավորներ Մ. Հարթենյան, Գ. Թորոսյան) 20.04.2022 թվականի «Վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը վերականգնելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ Անահիտ Խանգելոյանի ներկայացրած վերաքննիչ բողոք բերելու դատավարական ժամկետը վերականգնվել է, իսկ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.05.2022 թվականի որոշմամբ Անահիտ Խանգելոյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Անահիտ Խանգելոյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խստորեն է Սահմանադրության 10-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին և 6-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, «Պետական փողոցի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «դ» կերպը, նույն օրենքի 31-րդ հոդվածի «գ» կերպը, թիվ 3-365 (ՎԳ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.08.2008 թվականի և թիվ ԿԴ/0338/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.04.2008 թվականի որոշումներում փոխված դիրքորոշումները, ինչպես նաև «Պայքար և հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գործով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի որոշման 44-րդ կերպով փոխված իրավական մեկնաբանությունը:*

*Բողոքաբերը նշված պնդումները պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.04.2022 թվականի «Վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը

վերականգնելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է, այնինչ ներկայացվել էին թոշակառու լինելու մասին, երկրորդ խմբի հաշմանդամ լինելու և ծանր հիվանդության մասին ապացույցները:

Կրկին անգամ վերաքննիչ բողոք ներկայացնելիս վերաքննիչ բողոքին կից ներկայացվել է նաև սնանկ ճանաչելու մասին որոշումը: Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանը 20.05.2022 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է, հաշվի չառնելով ինչպես թոշակառու և երկրորդ խմբի հաշմանդամ հանդիսանալու, ծանր հիվանդություն ունենալու հանգամանքները, այնպես էլ սնանկ ճանաչվելու մասին վճռի առկայությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 20.05.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

### 3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ դատավարական փաստերը՝

1) Դատարանի 29.09.2021 թվականի վճռի դեմ ներկայացնելով վերաքննիչ բողոք՝ Անահիտ Խանգելոյանը վերաքննիչ բողոքում ներառել է պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա անհնարինության դեպքում պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդություն՝ հայտնելով, որ հանդիսանում է թոշակառու, երկրորդ խմբի հաշմանդամ, և ունի առողջական խնդիրներ (**հատոր 4-րդ, գ.թ. 6-7**).

2) Ի թիվս այլի, Անահիտ Խանգելոյանը վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության գրասենյակի՝ բժշկասոցիալական փորձաքննական 17.08.2020 թվականի թիվ 1487222 որոշումը, որի համաձայն վերջինիս տրվել է երկրորդ խմբի հաշմանդամի կարգավիճակ (**հատոր 4-րդ, գ.թ. 29-30**).

3) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.04.2022 թվականի «Վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը վերականգնելու և վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ, Անահիտ Խանգելոյանի՝ պետական տուրքի վճարումից ազատելու կամ դրա անհնարինության դեպքում պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը մերժվել է հետևյալ հիմնավորմամբ. «(...) *Տվյալ պարագայում բողոք բերած անձը ներկայացրել է վերաքննիչ բողոք բերելու համար վճարման ենթակա պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու՝ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն, մինչդեռ վերաքննիչ բողոքին կցել է միայն իր թոշակառու և երկրորդ խմբի հաշմանդամ լինելը հավաստող ապացույցները:*

*Վերաքննիչ դատարանը ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը գտնում է, որ այն չի կարող բավարարվել, քանի որ միջնորդությանը կից չի ներկայացվել բողոքաբերի ծանր ֆինանսական դրության վերաբերյալ որևէ ապացույց, որով կհիմնավորվեր վերջինիս կողմից պետական տուրքը ամբողջությամբ կամ մասնակի վճարելու անկարողության հանգամանքը: (...)*» (**հատոր 4-րդ, գ.թ. 40-41**).

4) Անահիտ Խանգելոյանը կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է դիմում, որով հայտնել է հետևյալը. «(...) *միջնորդության մեջ հարակ*



նշել են, որ ես հանդիսանում եմ երկրորդ խմբի հաշմանդամ, ստանում եմ 43000 ՀՀ դրամ, կ/թռչակ, չեմ աշխատում, նյութապես գրնվում եմ ծանր պայմաններում: **Ներկայումս էլ դատարանի կողմից 18.02.22թ. ճանաչվել եմ սնանկ:» (հատոր 4-րդ, գ.թ. 61-63).**

5) Անահիտ Խանգեղյանը կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքին կից ներկայացրել է ՀՀ սնանկության դատարանի 18.02.2022 թվականի վճռի պատճենը, ըստ որի՝ Անահիտ Խանգեղյանը ճանաչվել է սնանկ: **(հատոր 4-րդ, գ.թ. 51).**

6) Վերաքննիչ դատարանի 20.05.2022 թվականի որոշմամբ Անահիտ Խանգեղյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) բողոքաբերի կողմից 05.05.2022թ. կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում չի շրկվել Վերաքննիչ դատարանի 20.04.2022թ. որոշմամբ արձանագրված խախտումը, այն է՝ վերաքննիչ բողոքին կից կրկին չի ներկայացվել օրենքով նախատեսված պետական փութքը վճարելու սպացույցը, և կրկին ներկայացված վերաքննիչ բողոքով բողոքաբերը կրկին միջնորդել է կիրառել վերաքննիչ բողոք բերելու համար վճարման ենթակա պետական փութքի գծով արտոնություն պետական փութքի վճարումից ազատելու կամ պետական փութքի վճարման ժամկետը հետաձգելու մասին, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը գրնում է, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում չի վերացվել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված խախտումը, ինչը հիմք է վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու համար: (...)» **(հատոր 4-րդ, գ.թ. 105):**

#### **4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել Սահմանադրության 10-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածների, Կոնվենցիայի 1-ին և 6-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 8-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «դ» կետի, նույն օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու մասին ներկայացված միջնորդությունը սկզբնապես մերժվելուց հետո կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում հիմքը լրացված և նոր սպացույց ներկայացված պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու մասին միջնորդությունը ըստ էության կարող է չքննարկվել Վերաքննիչ դատարանի կողմից:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության

վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Կոնվենցիա 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յրե՛ս Էշինգդեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ-ի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

ՄԻԵԴ-ը մեկ այլ վճռով նշել է, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, սակայն այդ սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չհետապնդի իրավաչափ նպատակ, և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*յրե՛ս Խալֆանին ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ի 14.03.2000 թվականի վճիռը, կետ 36*):

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում արձանագրել է, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքսին չի կարող դիտվել որպես

Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման (*տե՛ս թիվ ՄԴՈ-652, թիվ ՄԴՈ-690, թիվ ՄԴՈ-719, թիվ ՄԴՈ-765, թիվ ՄԴՈ-844, թիվ ՄԴՈ-873, թիվ ՄԴՈ-890, թիվ ՄԴՈ-932, թիվ ՄԴՈ-942, թիվ ՄԴՈ-1037, թիվ ՄԴՈ-1052, թիվ ՄԴՈ-1115, թիվ ՄԴՈ-1127, թիվ ՄԴՈ-1190, թիվ ՄԴՈ-1192, թիվ ՄԴՈ-1196, թիվ ՄԴՈ-1197, թիվ ՄԴՈ-1220, թիվ ՄԴՈ-1222, թիվ ՄԴՈ-1257, թիվ ՄԴՈ-1289 որոշումները*):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարության մասնակիցները պետք է իրենց դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվում են չարաշահմանը համաչափ՝ նույն օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաներ կամ օրենքով նախատեսված իրավական ներգործության այլ միջոցներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հիմքով միջնորդություն կրկին ներկայացնելն արգելվում է: **Նախկինում մերժված միջնորդությունը նույն հիմքով ներկայացվելու դեպքում չի քննարկվում:**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում են պետական տուրքը վճարելու (...) մասին ապացույցները: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա վերաքննիչ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը, եթե բողոք բերողն ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից (...):

Շարադրված նորմերի մեկնաբանությունից բխում է, որ վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում բողոքաբերը կրում է օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարված լինելու փաստը հաստատող ապացույց ներկայացնելու պարտականություն: Պետական տուրքի վճարման արտոնություն ակնկալելու պայմաններում բողոքին կցվում կամ բողոքում ներառվում է համապատասխան միջնորդությունը, եթե բողոքաբերն օրենքով արդեն ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից:

ՄԻԵԴ-ը բազմիցս նշել է, որ պետական տուրքը վճարելու պարտավորությունը չի կարող դիտարկվել որպես դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, որն ինքնին չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին: Այնուամենայնիվ, այդ տուրքերի գումարը գնահատելը որոշակի գործի հատուկ հանգամանքների տեսանկյունից, ներառյալ դրանք վճարելու դիմումատուի ունակությունը և դատավարության այն փուլը, որում նման սահմանափակումը կիրառվել է, հանգամանքներ են, որոնք էական են որոշելու համար անձն

օժտված է եղել դատարանի մատչելիության իրավունքով, թե ոչ (*լրեն Քրոյցն ընդդեմ Լեհաստանի* (*Kreuz v. Poland*), թիվ 28249/95, պարբերություն 60):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրք վճարողներն իրավունք ունեն (...) դիմել համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի վճարման արտոնություններ ստանալու համար (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝ պետական տուրքի վճարումից ազատում, պետական տուրքի նվազեցում, պետական տուրքի դրույքաչափի նվազեցում, պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում, պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ նույն օրենքի 9 հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից:

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած որոշմամբ անդրադարձել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու՝ դատարանների և դատավորների լիազորության իրականացման պայմաններին և ընդգծել, որ «(...) յուրաքանչյուր դեպքում պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդության առկայության պայմաններում դատարանները պետք է նշված միջնորդությունները քննության առնեն և լուծեն՝ հաշվի առնելով նաև գործի հանգամանքները: Այսպես, օրինակ, օրենսդիրը, ամրագրելով հայցադիմումների, վերաքննիչ և վճարելի բողոքների համար պետական տուրք վճարելու պարտականություն, տարբերակված մոտեցում է դրսևորել պետական տուրքի չափի հարցում՝ հիմք ընդունելով վիճելի իրավահարաբերության բնույթը՝ գույքային կամ ոչ գույքային: Դատարանները միջնորդություն ներկայացրած անձի գույքային դրությունը գնահատելիս որպես ուղղորդող չափանիշ հիմք են ընդունում նաև վճարման ենթակա պետական տուրքի չափը, հետևաբար վիճելի իրավահարաբերության բնույթը պարզելը յուրաքանչյուր դեպքում օբյեկտիվորեն անհրաժեշտ է կամ միջնորդություն հարուցած անձի գույքային դրության վերաբերյալ փաստարկները կարող են հիմնավորվել քննվող գործի շրջանակներում ձեռնարկված դատավարական միջոցներով (օրինակ՝ որպես հայցի ապահովման միջոց՝ արգելանք է դրվել անձի դրամական միջոցների վրա): Վերոգրյալից հետևում է, որ միջնորդություն ներկայացրած անձի գույքային դրության գնահատումը չի կարող իրականացվել՝ անտեսելով գործի հանգամանքները, հետևաբար դատարանները նման միջնորդություններ քննության առնելիս պետք է ուսումնասիրեն նաև համապատասխանաբար հայցադիմումները, վերաքննիչ և վճարելի բողոքները» (*լրեն «Տեքվիտե» սահմանափակ պարասիանսարվությանը ընկերությունն ընդդեմ «Մեգարոն» սահմանափակ պարասիանսարվությանը ընկերության թիվ ԵՇԴ/1017/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 11.03.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճարելի դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ վերահաստատելով և զարգացնելով իր նախկին որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները գտել է, որ «(...) դատարանները պետական տուրքի մասով արտոնություն կիրառելու մասին միջնորդություն ներկայացրած անձի **գույքային**

**դրությունը գնահատելիս**, որպես ուղղորդող չափանիշներ պետք է հիմք ընդունեն (1) վիճելի իրավահարաբերության բնույթը, (2) վճարման ենթակա պետական տուրքի չափը, (3) գույքային դրության վերաբերյալ քաղաքացիական գործի հանգամանքները, (4) կենսաապահովման համար անհրաժեշտ միջոցների չափը:» (յրե՛ս Մինոն Խաչիկյանը և Մելսինա Խաչիկյանն ընդդեմ «Ագարակի Պղնձամոլիբդենային կոմբինատը» փակ բաժնետիրական ընկերության թիվ ՄԳ/0393/02/20 քաղաքացիական գործով ՀՀ վճարելի դատարանի 03.03.2022 թվականի որոշումը):

Շարադրված նորմերի մեկնաբանությունից բխում է, որ դատարանները լիազորված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի կիրառմամբ սահմանելու նույն օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված արտոնություն, ներառյալ՝ պետական տուրքի վճարումից ազատելու կամ պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգելու մասին: Այն դրսևորվում է պետական տուրք վճարելու պարտականություն ունեցող անձի կողմից համապատասխան միջնորդության ներկայացմամբ և դատարանի կողմից նշված միջնորդության քննության արդյունքում առանձին որոշման ընդունմամբ՝ հիմք ընդունելով վերջինիս գույքային դրությունը: Այլ կերպ ասած՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը լիազորում է դատարաններին և դատավորներին սահմանելու պետական տուրքի վճարումը հետաձգելու արտոնություն՝ **անձի գույքային դրության հաշվառմամբ:**

Վճարելի դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված նույն հիմքով միջնորդություն կրկին ներկայացնելու օրենսդրական արգելքը չի վերաբերում այն դեպքերին, երբ դատավարության մասնակցի կողմից կրկին ներկայացվել է նույն միջնորդությունը, սակայն ներկայացվել է նոր ապացույց: Այն պարագայում, երբ դատավարության մասնակցի ավելի վաղ ներկայացրած միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է, և վերջինս կրկին ներկայացրել է նոր միջնորդություն, ապա դատարանները պետք է գնահատման առարկա դարձնեն այն հանգամանքը, թե արդյոք կրկին ներկայացված միջնորդությունը պարունակում է նոր հիմք կամ դրան կցված է նոր ապացույց և միայն նշված հանգամանքը պարզելու պայմաններում կայացնեն համապատասխան որոշում:

**Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարագրմամբ.**

Այսպես, Վերաքննիչ դատարանի 20.05.2022 թվականի որոշմամբ Անահիտ Խանգեղյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) բողոքաբերի կողմից 05.05.2022թ. կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում չի շրկվել Վերաքննիչ դատարանի 20.04.2022թ. որոշմամբ արձանագրված խախտումը, այն է՝ վերաքննիչ բողոքին կից կրկին չի ներկայացվել օրենքով նախատեսված պետական տուրքի վճարելու ապացույցը, և կրկին ներկայացված վերաքննիչ բողոքով բողոքաբերը կրկին միջնորդել է կիրառել վերաքննիչ բողոք բերելու համար վճարման ենթակա պետական տուրքի գծով արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու կամ պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու մասին, որպիսի պայմաններում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում չի վերացվել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված խախտումը, ինչը հիմք է վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու համար: (...)» (հատոր 4-րդ, գ.թ. 105):

Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններից հետևում է, Անահիտ Խանգեղյանի կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել

է այն հիմքով, որ չի վերացվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.04.2022 թվականի որոշմամբ արձանագրված խախտումը, այն է՝ վերաքննիչ բողոքին կից չի ներկայացվել պետական տուրքը վճարելու մասին ապացույցը և կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքով կրկին վերջինս միջնորդել է կիրառել պետական տուրքի գծով արտոնություն: Հիմք ընդունելով սան ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումները, Վերաքննիչ դատարանն Անահիտ Խանգելոյանի կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 20.05.2022 թվականի որոշմամբ Անահիտ Խանգելոյանի կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին որոշումը հիմնավորված չէ և չի բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի վճռի դեմ առաջին անգամ ներկայացնելով վերաքննիչ բողոք՝ Անահիտ Խանգելոյանը խնդրել է ազատել իրեն պետական տուրքը վճարելու պարտականությունից, իսկ դրա անհնարինության դեպքում հետաձգել պետական տուրքի վճարումը: Վերոնշյալ միջնորդությունը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.04.2022 թվականի որոշմամբ մերժվել է: Նույն որոշման համաձայն՝ *«(...) Տվյալ պարագայում բողոք բերած անձը ներկայացրել է վերաքննիչ բողոք բերելու համար վճարման ենթակա պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն, մինչդեռ վերաքննիչ բողոքին կցել է միայն իր թռչակառու և երկրորդ խմբի հաշմանդամ լինելը հավաստող ապացույցները: (...)»:* Վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրում է, որ նույն միջնորդությամբ Անահիտ Խանգելոյանը չի հայտնել, այն մասին, որ վերջինս ՀՀ սնանկության դատարանի 18.02.2022 թվականի վճռով ճանաչվել է սնանկ և միջնորդությանը կից չի ներկայացրել վերոնշյալ վճռի պատճենը:

Կրկին ներկայացնելով վերաքննիչ բողոք, Անահիտ Խանգելոյանը վերաքննիչ բողոքում ներկայացրել է նույն միջնորդությունը, խնդրելով՝ ազատել իրեն պետական տուրքի վճարումից կամ դրա անհնարինության դեպքում հետաձգել պետական տուրքի վճարումը: Վերջինս, ի հիմնավորումն նշված միջնորդության, վերաքննիչ բողոքին կից նաև ներկայացրել է ՀՀ սնանկության դատարանի 18.02.2022 թվականի վճիռը, համաձայն որի Անահիտ Խանգելոյանը ճանաչվել է սնանկ: Բացի այդ, վերաքննիչ բողոքին կից առկա է դիմում, որով հայտնել է՝ *«(...) միջնորդության մեջ հարակ նշել եմ, որ ես հանդիսանում եմ երկրորդ խմբի հաշմանդամ, ստանում եմ 43000 ՀՀ դրամ, կ/թռչակ, չեմ աշխատում, նյութապես գրնվում եմ ծանր պայմաններում: Ներկայումս էլ դատարանի կողմից 18.02.22թ. ճանաչվել եմ սնանկ:» (հատոր 4-րդ, գ.թ. 51):*

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Անահիտ Խանգելոյանի գույքային դրությանը վերաբերող՝ ՀՀ սնանկության դատարանի 18.02.2022 թվականին վերջինիս սնանկ ճանաչելու մասին վճռի պատճենը ներկայացված լինելու և պետական տուրքի միջնորդության հիմքերն ըստ էության լրացված լինելու պայմաններում, Վերաքննիչ դատարանը քննության առարկա չի դարձրել կրկին ներկայացված պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին միջնորդությունը՝ թույլ տալով արդարադատության բուն էությունը խաթարող դատավարական իրավունքի խախտում:

Անահիտ Խանգելոյանի կողմից պետական տուրքի գծով արտոնություն կիրառելու մասին նույն միջնորդությունը ըստ էության լրացված հիմքով

ներկայացված լինելու պայմաններում՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.04.2022 թվականի որոշմամբ արձանագրված խախտումը չվերացնելու, և որպես արդյունք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով վերջինիս վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին պատճառաբանությունները հիմնավորված չեն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 20.05.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու և գործն՝ Անահիտ Խանգելոյանի պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին միջնորդությունը քննարկելու և ըստ դրա արդյունքների՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելու նպատակով, Վերաքննիչ դատարան՝ նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.05.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

### 38. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/2084/02/15 2022թ.
Քաղաքացիական գործ թիվ	ԵԿԴ/2084/02/15
Նախագահող դատավոր	Ն. Բարսեղյան
Դատավորներ	Լ. Գրիգորյան Ա. Խառատյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող</i>	Մ. ԴԻՄԵՅԱՆ
<i>գեկուցող</i>	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
	Ս. ԱՆՏՈՆՅԱՆ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
	Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Է. ՍԵՂՈՎԱԿՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 21-ին գրավոր ընթացակարգով քննելով Սիրվարդ Մանգասարյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.06.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Սիրվարդ Մանգասարյանի ընդդեմ Երևան համայնքի (այսուհետ՝ Համայնք) սեփականության իրավունքը ճանաչելու և Համայնքի անվամբ 18.04.2014 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Սիրվարդ Մանգասարյանը պահանջել է ճանաչել իր սեփականության իրավունքը, ինչպես նաև անվավեր ճանաչել Համայնքի անվամբ 18.04.2014 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:



Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Լ. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 02.02.2022 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (սախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան, դատավորներ՝ Լ. Գրիգորյան, Ա. Խառատյան) 06.05.2022 թվականի որոշմամբ Սիրվարդ Մանգասարյանի ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (սախագահող դատավոր՝ Ն. Բարսեղյան, դատավորներ՝ Լ. Գրիգորյան, Ա. Խառատյան) 19.05.2022 թվականի որոշմամբ Սիրվարդ Մանգասարյանի վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.06.2022 թվականի որոշմամբ Սիրվարդ Մանգասարյանի ներկայացուցիչ Հայկ Սողոմոնյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Սիրվարդ Մանգասարյանը (ներկայացուցիչներ՝ Հայկ Սողոմոնյան, Գուրգեն Թորոսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 370-րդ և 372-րդ հոդվածները, ինչպես նաև սխալ է կիրառել նույն օրենսգրքի 368-րդ հոդվածի 6-րդ մասը:*

*Բողոքաբերը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Տվյալ դեպքում, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.05.2022 թվականի որոշմամբ Սիրվարդ Մանգասարյանի ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանի վերաքննիչ բողոքը վերադարձվել է, քանի որ բողոքաբերի ներկայացուցիչը միջնորդել էր պետական տուրքի գծով կիրառել արտոնություն և հետաձգել պետական տուրքի վճարումը, իսկ նույն որոշմամբ Սիրվարդ Մանգասարյանի (ներկայացուցիչ՝ Գուրգեն Թորոսյան) պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը մերժվել է:

03.06.2022 թվականին կրկին վերաքննիչ բողոք է ներկայացվել՝ վերացնելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.05.2022 թվականի որոշմամբ մատնանշած վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումը, այն է՝ վճարվել է վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախատեսված պետական տուրքը:

Վերաքննիչ դատարանի կողմից առանց որևէ իրավաչափ հիմքի բողոքաբերի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, ինչը ոչ միայն հանգեցրել է դատավարական իրավունքի նորմի խախտման, այլ նաև իրական խոչընդոտներ է ստեղծել սահմանադրորեն ամրագրված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման կապակցությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 13.06.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

### 3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ դատավարական փաստերը՝

1) Դատարանի 02.02.2022 թվականի վճռի դեմ Սիրվարդ Մանգասարյանը 01.03.2022 թվականին առձեռն եղանակով վերաքննիչ բողոք է ներկայացրել, որը ստորագրված է վերջինիս կողմից (**հավելված 1-ին, գ.թ. 1-10**).

2) Սիրվարդ Մանգասարյանը 23.03.2022 թվականին ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան մուտքագրված դիմումով հայտնել է, որ Դատարանի 02.02.2022 թվականի վճռի դեմ երկու վերաքննիչ բողոք է ներկայացվել (իր և իր ներկայացուցչի կողմից), և հայտնել է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում այսուհետ, որպես վերջինիս ներկայացուցիչ է հանդես գալու փաստաբան Հայկ Սողոմոնյանը՝ միաժամանակ խնդրելով, բոլոր դատավարական փաստաթղթերը հանձնել կամ ուղարկել վերջինիս՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 48/2 հասցեով: Նշված դիմումին կից միաժամանակ ներկայացրել է 22.03.2022 թվականին 3 տարի ժամկետով, հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիր, ինչպես նաև փաստաբան Հայկ Սողոմոնյանի փաստաբանական արտոնագրի և անձնագրի պատճենը (**հավելված 1-ին, գ.թ. 11-14**).

3) Սիրվարդ Մանգասարյանի ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանի կողմից 03.03.2022 թվականին փոստային առաքման եղանակով վերաքննիչ բողոք է ներկայացվել Դատարանի 02.02.2022 թվականի վճռի դեմ: Վերաքննիչ բողոքը ստորագրված է Սիրվարդ Մանգասարյանի ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանի կողմից, և վերաքննիչ բողոքը պարունակում է նաև պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդություն (**հավելված 1-ին, գ.թ. 15-31**).

4) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.05.2022 թվականի որոշմամբ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը մերժվել է, և վերաքննիչ բողոքը վերադարձվել է հետևյալ պատճառաբանությամբ՝ «(...) Վերաքննիչ բողոք ներկայացվելուց հետո դրա հիմքերը և հիմնավորումները չեն կարող լրացվել կամ փոփոխվել, բացառությամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո կրկին ներկայացնելու դեպքերի: Հետևում է, որ Վերաքննիչ դատարանում արդեն իսկ առկա է Սիրվարդ Մանգասարյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոք, իսկ վերջինս Վերաքննիչ դատարան հասցեագրած 23.03.2022թ. գրությամբ խնդրել է բոլոր դատավարական փաստաթղթերը հանձնել կամ ուղարկել Հայկ Սողոմոնյանին՝ ք.Երևան, Գ.Նժդեհի 48/2 հասցեով, նկարի ունենալով, որ րվյալ քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում իր ներկայացուցիչն է հանդիսանալու փաստաբան Հայկ Սողոմոնյանը, կցելով իր կողմից վերջինիս փոխարինողի բնօրինակը:

Փաստորեն, վերաքննիչ բողոք բերած անձի կողմից չի պահպանվել ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները, ինչը նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝ բողոքը վերադարձնելու հիմք է: Չի պահպանվել ՀՀ քաղաքացիական դատարավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները ևս (...)» (**հավելված 1-ին, գ.թ. 33-34**).

5) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.05.2022 թվականի որոշմամբ Սիրվարդ Մանգասարյանի վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

6) Սիրվարդ Մանգասարյանի ներկայացուցիչ Հայկ Սողոմոնյանը կրկին անգամ վերաքննիչ բողոք է ներկայացրել կցելով նաև 10.000 ՀՀ դրամ պետական տուրք վճարելու մասին անդորրագիրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը ստորագրել է Սիրվարդ Մանգասարյանի ներկայացուցիչ Հայկ Սողոմոնյանը (**հավելված 1-ին, գ.թ. 46-68**).

7) Վերաքննիչ դատարանի 13.06.2022 թվականի որոշմամբ Սիրվարդ Մանգասարյանի ներկայացուցիչ Հայկ Սողոմոնյանի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է՝ հետևյալ հիմնավորմամբ. «(...) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 6-ին մասի համաձայն վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում: Վերաքննիչ բողոք ներկայացվելուց հետո դրա հիմքերը և հիմնավորումները չեն կարող լրացվել կամ փոփոխվել, բացառությամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո կրկին ներկայացնելու դեպքերի: Նման պայմաններում, նկատի ունենալով, որ Սիրվարդ Մանգասարյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ դատարանի 19.05.2022թ. որոշմամբ ընդունվել է վարույթ, Սիրվարդ Մանգասարյանի անունից ներկայացված մեկ այլ կամ նույնանուն հիմքերով և հիմնավորումներով ներկայացված վերաքննիչ բողոքը չի կարող ընդունվել վարույթ, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումը, համաձայն որի՝ վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, իսկ րվյալ պարագայում արդեն իսկ Սիրվարդ Մանգասարյանի կողմից ներկայացված է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի կողմից ընդունվել է վարույթ:

Հետևաբար, Վերաքննիչ դատարանը գրնում է, որ նույն անձի անունից ներկայացված վերաքննիչ բողոքի վարույթ ընդունված լինելու պայմաններում, մեկ այլ նույն անձի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման (...)» (հավելված 1-ին, գ.թ. 69):

#### 4. Վճռաբեկ դատարանի պարճառությանունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները էական նշանակություն կունենան նմանատիպ գործերով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 1-ին մասի միատեսակ կիրառության համար: Միաժամանակ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. *արդյո՞ք իրավաչափ է կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել այն հիմքով, որ միևնույն բողոքաբերի կողմից ավելի վաղ ներկայացված վերաքննիչ բողոքն ընդունվել էր վարույթ:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յրե՛ս Էշինգհեյնս ընդդեմ Միացյալ Թագավորության ՄԻԵԴ-ի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

ՄԻԵԴ-ը մեկ այլ վճռով նշել է, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, սակայն այդ սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չհետապնդի իրավաչափ նպատակ, և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*յրե՛ս Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ի 14.03.2000 թվականի վճիռը, կետ 36*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս փաստել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*յրե՛ս, օրինակ, «Տասթ Սիլայ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի*

թիվ ՎԴ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը, Վարդան Արրահամյանն ընդդեմ «Արդշինքանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԿ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը):

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում արձանագրել է, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման (լրես թիվ ՄԴՈ-652, թիվ ՄԴՈ-690, թիվ ՄԴՈ-719, թիվ ՄԴՈ-765, թիվ ՄԴՈ-844, թիվ ՄԴՈ-873, թիվ ՄԴՈ-890, թիվ ՄԴՈ-932, թիվ ՄԴՈ-942, թիվ ՄԴՈ-1037, թիվ ՄԴՈ-1052, թիվ ՄԴՈ-1115, թիվ ՄԴՈ-1127, թիվ ՄԴՈ-1190, թիվ ՄԴՈ-1192, թիվ ՄԴՈ-1196, թիվ ՄԴՈ-1197, թիվ ՄԴՈ-1220, թիվ ՄԴՈ-1222, թիվ ՄԴՈ-1257, թիվ ՄԴՈ-1289 որոշումները):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմելու դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում (...) վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝

- 1) չեն պահպանվել նույն օրենսգրքի 368-րդ հոդվածի պահանջները.
- 2) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին.
- 3) մինչև վերաքննիչ դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը բողոք բերած անձից դիմում է ստացվել այն հետ վերցնելու մասին.
- 4) բողոք բերող անձի կողմից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է.
- 5) վերաքննիչ բողոք է բերվել մեկից ավելի դատական ակտերի դեմ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու որոշումն ստանալուց հետո՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով եռօրյա ժամկետում սահմանված կարգով **կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը**: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝

1) նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում բողոք ներկայացրած անձը ներկայացրել է նոր վերաքննիչ բողոք, որում չի վերացրել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված բոլոր խախտումները, կամ բողոքը ներկայացրել է նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետի խախտմամբ, կամ նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացրել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու մասին միջնորդություն, որը մերժվել է.

2) վերաքննիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բաց թողած ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է.

3) բողոքում նշված հիմքով նույն գործով վերաքննիչ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել.

4) բողոքը ներկայացրել է այն անձը, որը դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի.

5) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վերաքննության կարգով.

6) վերաքննիչ բողոքը բերվել է գույքային պահանջով քաղաքացիական գործով, եթե տվյալ գործով վճռի առարկայի արժեքը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերող անձն իր վերաքննիչ բողոքում հիմնավորում է, որ առաջին ատյանի դատարանը թույլ է տվել արդար դատաքննության իրավունքի բուն էությունը խաթարող դատական սխալ.

7) բողոքարկվող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է 20 տարի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշումներից մեկում արձանագրել է, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծելու փուլում օրենսդիրը վերաքննիչ դատարանին օժտել է բացառապես վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ դրա ընդունումը մերժելու հիմքերի առկայությունը կամ բացակայությունը ստուգելու լիազորությամբ, քանի որ այդ հիմքերի բացակայությամբ է պայմանավորել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը: Հակառակ դեպքում համապատասխան հիմքերի առկայության պայմաններում վերաքննիչ բողոքը ենթակա է վերադարձման կամ դրա ընդունումը ենթակա է մերժման, որի պայմաններում այլևս վերաքննիչ վարույթ չի հարուցվում (*տես Աշոտ Դումանյանն ընդդեմ Արամայիս, Կարեն, Էմիլ Թումանյանների և մյուսների թիվ ԵԱԲԴ/2549/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.12.2020 թվականի որոշումը*):

Այսպիսով՝ վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ բողոքը

վերադարձնելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերը սպառիչ թվարկված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխանաբար 371-րդ և 372-րդ հոդվածներում, ինչից բխում է, որ օրենսդիրը բացառել է որևէ այլ հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հնարավորությունը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերը սպառիչ ցանկով սահմանելը մի կողմից համահունչ է իրավական որոշակիության սկզբունքին, իսկ մյուս կողմից երաշխավորում է անձի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացումը:

Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ բացակայում են վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու՝ օրենքով նախատեսված հիմքերը, ապա վերաքննիչ դատարանը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի 1-ին մասի ուժով պարտավոր է կայացնել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անդրադառնալով վերաքննիչ բողոքը վերադարձնելու ինստիտուտին, հարկ է համարում նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոք բերած անձն իրավունք ունի վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, իսկ վճռման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով եռօրյա ժամկետում վերացնել բողոքում թույլ տրված խախտումները և սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնել: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ բողոքը կրկին ներկայացվելու դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե արդյոք բողոք բերած անձը վերաքննիչ բողոքը կրկին ներկայացրել է օրենքով սահմանված ժամկետում և արդյոք վերացրել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված բոլոր խախտումները, հակառակ պարագայում՝ վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով:

Այսպիսով Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը վերաքննիչ դատարանին լիազորել է ստուգել կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում խախտումները շտկված լինելու հանգամանքը: Ավելին, բողոք բերած անձի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ մատնանշված բոլոր խախտումները շտկված լինելու և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 7-րդ կետերով սահմանված հիմքերից որևէ մեկի բացակայության պայմաններում՝ վերաքննիչ դատարանը պարտավոր է կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու օրենքով վերապահված լիազորությունը կիրառելիս կաշկանդված է բացառապես օրենսդրի սահմանած՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված հիմքերով, հակառակ պարագայում՝ եթե վերաքննիչ դատարանն իրավասու լինի օրենքով չնախատեսված ցանկացած հիմքով մերժելու վերաքննիչ բողոքի ընդունումը, ապա կխախտվի իրավական որոշակիությունը և արդար դատաքննության իրավունքի մաս կազմող դատարանի մատչելիության իրավունքը:

**Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարումսմբ.**

Դատարանի 02.02.2022 թվականի վճռի դեմ Սիրվարդ Մանգասարյանը 01.03.2022 թվականին առձեռն եղանակով վերաքննիչ բողոք է ներկայացրել, որը ստորագրված է վերջինիս կողմից (**հավելված 1-ին, գ.թ. 1-10**):

Սիրվարդ Մանգասարյանի կողմից (ներկայացուցիչ՝ Գուրգեն Թորոսյան) փոստային առաքման եղանակով 03.03.2022 թվականին վերաքննիչ բողոք է ներկայացվել Դատարանի 02.02.2022 թվականի վճռի դեմ: Վերաքննիչ բողոքը ստորագրված է Սիրվարդ Մանգասարյանի ներկայացուցիչ՝ Գուրգեն Թորոսյանի կողմից, և վերաքննիչ բողոքը պարունակում է նաև պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդություն (**հավելված 1-ին, գ.թ. 15-31**):

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.05.2022 թվականի որոշմամբ Սիրվարդ Մանգասարյանի ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանի՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությունը մերժվել է, և վերաքննիչ բողոքը վերադարձվել է հետևյալ պատճառաբանությամբ. «Սույն պարագայում բողոքաբերի պարճառաբանությունները կապված անսպահով վիճակում գտնվելու հետևանքով վերաքննիչ բողոքի համար նախատեսված պետական տուրք վճարել չկարողանալու հետ, դեռևս բավարար հիմք չէ բողոքաբերի գույքային դրության վերաբերյալ եզրահանգում կատարելու և, ըստ այդմ, պետական տուրքի վճարման գծով համապարասիան արդյունություն կիրառելու համար:

Բողոք բերած անձի գործով վերաքննիչ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը վճարելու հնարավորության բացակայության փաստը Վերաքննիչ դատարանի կողմից չի կարող հաստատվել առանց վերջինիս գույքային ծանր դրության վերաբերյալ սպառնացների: Իսկ նման սպառնացներ ներկայացնելու անհնարինության վերաբերյալ հիմնավորումներ ընդհանրապես բացակայում են»:

Ավելին, նույն որոշմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ «(...) Վերաքննիչ դատարանում արդեն իսկ առկա է Սիրվարդ Մանգասարյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոք, իսկ վերջինս Վերաքննիչ դատարանն հասցեագրած 23.03.2022թ. գրությամբ խնդրել է բոլոր դատավարական փաստաթղթերը հանձնել կամ ուղարկել Հայկ Սողոմոնյանին՝ ք.Երևան, Գ.Նժդեհի 48/2 հասցեով, նկարի ունենալով, որ փոխյա քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում իր ներկայացուցիչն է հանդիսանալու փաստաբան Հայկ Սողոմոնյանը, կցելով իր կողմից վերջինիս փոխյա լիազորագրի բնօրինակը:

Փաստորեն, վերաքննիչ բողոք բերած անձի կողմից չի պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները, ինչը նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի համաձայն՝ բողոքը վերադարձնելու հիմք է: Չի պահպանվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները ևս (...):»:

Միաժամանակ, նույն որոշման եզրափակիչ մասի համաձայն, բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու համար բողոք բերած անձին տրվել է 15-օրյա ժամկետ՝ որոշումը ստանալու պահից և նշվել, որ **թույլ տրված խախտումները վերացվելու և նույն ժամկետում կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված:**

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.05.2022 թվականի որոշմամբ Սիրվարդ Մանգասարյանի վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ դատարանի 13.06.2022 թվականի որոշմամբ Սիրվարդ Մանգասարյանի (**ներկայացուցիչ՝ Հայկ Սողոմոնյան**) կողմից կրկին ներկայացված



վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է հետևյալ հիմնավորմամբ. «(...) **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 6-ին մասի համաձայն՝** վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում: **Վերաքննիչ բողոք ներկայացվելուց հետո դրա հիմքերը և հիմնավորումները չեն կարող լրացվել կամ փոփոխվել, բացառությամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո կրկին ներկայացնելու դեպքերի:** Նման պայմաններում, նկատի ունենալով, որ Սիրվարդ Մանգասարյանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ դատարանի 19.05.2022թ. որոշմամբ ընդունվել է վարույթ, Սիրվարդ Մանգասարյանի անունից ներկայացված մեկ այլ կամ նույնանուն հիմքերով և հիմնավորումներով ներկայացված վերաքննիչ բողոքը չի կարող ընդունվել վարույթ, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումը, համաձայն որի՝ վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, իսկ րվյալ պարագայում արդեն իսկ Սիրվարդ Մանգասարյանի կողմից ներկայացված է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ դատարանի կողմից ընդունվել է վարույթ:

Հերևաբար, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նույն անձի անունից ներկայացված վերաքննիչ բողոքի վարույթ ընդունված լինելու պայմաններում, մեկ այլ նույն անձի կողմից կրկին ներկայացված վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման:

**Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածով՝ Վերաքննիչ դատարանը (...):**

Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններից հետևում է, որ Սիրվարդ Մանգասարյանի (ներկայացուցիչ՝ Հայկ Սողոմոնյան) կողմից կրկին ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, իսկ տվյալ որոշման կայացման ժամանակ, արդեն իսկ առկա էր Սիրվարդ Մանգասարյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.05.2022 թվականի որոշմամբ ընդունվել էր վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «Վերաքննիչ բողոքի ձևը և բովանդակությունը» վերտառությամբ 368-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում: Վերաքննիչ բողոք ներկայացվելուց հետո դրա հիմքերը և հիմնավորումները չեն կարող լրացվել կամ փոփոխվել, բացառությամբ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո կրկին ներկայացնելու դեպքերի:

Վերոնշյալի վերլուծության արդյունքում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է՝ վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները վերաքննիչ բողոքում ներկայացնելու պահանջ, որը վերաբերելի չէ խախտումներով ներկայացված վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո կրկին ներկայացված բողոքի ընդունելության հարցը լուծելու դեպքին: Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերը սահմանված են բացառապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածի 6-րդ մասը կիրառելի չէ վերաքննիչ բողոքի ընդունումը

մերժելու հիմքերի ստուգման նկատմամբ, քանի որ Վերաքննիչ դատարանը պետք է առաջնորդվեր և կիրառեր բացառապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկը: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի որոշման պատճառաբանական մասում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի վկայակոչմանը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը թեև նշել է, որ նշված որոշումը կայացնելիս ղեկավարվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածով, սակայն չի պատճառաբանել, թե վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի որ կետով սահմանված հիմքով է առաջնորդվել, այդպիսով կայացնելով ոչ իրավաչափ որոշում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը քննելիս Վերաքննիչ դատարանն առաջնահերթ պարտավոր էր պարզել, թե արդյոք վերաքննիչ բողոք բերած անձի կողմից վերացվել են ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 06.05.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ արձանագրված խախտումները, ինչը, սակայն, քննության առարկա չի դարձվել:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 1-ին մասի և 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 13.06.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը, ինչպես նաև այն, որ Վերաքննիչ դատարանն ըստ էության դուրս է եկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի շրջանակից, չի պարզել և գնահատել կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում խախտումները վերացված լինելու հանգամանքը, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ որոշումը վերացնելով անհրաժեշտ է գործն ուղարկել Վերաքննիչ դատարան՝ կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում խախտումները վերացված լինելու և վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը պարզելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ և 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 13.06.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը և Սիրվարդ Մանգասարյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը պարզելու համար գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

### 39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում	Քաղաքացիական գործ թիվ ՍԳ/1004/02/19
Քաղաքացիական գործ թիվ	ՍԳ/1004/02/19
Նախագահող դատավոր՝	Դ. Սերոբյան
Դատավորներ՝	Մ. Հարթենյան Գ. Թորոսյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող</i>	Մ. ԴՐՄԵՅԱՆ
<i>զեկուցող</i>	Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
	Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
	Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
	Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2023 թվականի փետրվարի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով «Սահակյան Եղբայրներ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.02.2022 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կազմակերպության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 8.301.072 ՀՀ դրամ գումար և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 19.04.2021 թվականի վճռով հայցը

քավարարվել է մասնակի, Կազմակերպությունից հոգուտ Ընկերության բռնագանձվել է 8.024.380,56 ՀՀ դրամ, որից 7.264.494,56 ՀՀ դրամը՝ որպես մատակարարված ապրանքների համար վճարման ենթակա ընդհանուր գումար, 726.449 ՀՀ դրամը՝ որպես պայմանագրով սահմանված տույժի գումար և 33.437 ՀՀ դրամը՝ որպես 23.08.2019 թվականից մինչև 06.09.2019 թվականն ընկած ժամանակահատվածի համար պարտավորության մայր գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի չափով հաշվեգրված տոկոսներ: 07.09.2019 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը պարտավորության՝ վարկի մայր գումարի՝ 7.264.494,56 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկվել և Կազմակերպությունից հոգուտ Ընկերության բռնագանձվել են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսներ՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Կ. Զիլինգարյան, դատավորներ՝ Ն. Գաբրիելյան, Լ. Գրիգորյան) 30.07.2021 թվականի որոշմամբ Կազմակերպության միջնորդությունները՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և պետական տուրքի վճարումը տաժամկետելու վերաբերյալ, մերժվել են, իսկ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Կազմակերպության ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.02.2022 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոք ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու վերաբերյալ Կազմակերպության միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Կամակերպությունը (ներկայացուցիչ՝ Հերմինե Ավետիսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

*Վերաքննիչ դատարանը խախտել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասը և 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես և հերկյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ պատասխանողը վերաքննիչ բողոք բերելու համար դատավարական ժամկետները բաց է թողել զուտ այն պատճառով, որ բողոքարկել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 30.07.2021 թվականի որոշումը: Նշված վճռաբեկ բողոքի ընդունումը ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է 17.11.2021 թվականի

որոշմամբ, այդ որոշումը «www.datalex.am» կայքում գններացվել է 08.12.2021 թվականին, իսկ դրա թղթային տարբերակը պատասխանողը մինչ օրս չի ստացել: Վերաքննիչ բողոքը կրկին ներկայացրել է 12.01.2022 թվականին, երբ տեղեկացել է այդ որոշման մասին՝ կից ներկայացնելով պետական տուրքի վճարման անդորրագիրը և միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետները հարգելի համարելու մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 03.02.2022 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) սույն գործով Դատարանի կողմից 19.04.2021 թվականին կայացված վճիռը «www.court.am» կայքում հրապարակվել է 31.05.2021 թվականին (**հատոր 4-րդ, գ.թ. 127-146, «www.court.am» կայք**).

2) Դատարանի 19.04.2021 թվականի վճռի դեմ Կազմակերպությունը վերաքննիչ բողոքը ներկայացրել է 01.07.2021 թվականին՝ միջնորդելով վերականգնել բաց թողնված ժամկետը (**հատոր 5-րդ, գ.թ. 4-29**).

3) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի որոշմամբ Կազմակերպության միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ, մերժվել է առարկայագուրկ լինելու հիմքով, իսկ պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է, և վերաքննիչ բողոքը վերադարձվել է (**հատոր 5-րդ, գ.թ. 30, 31**).

4) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 20.10.2021 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի որոշման դեմ Կազմակերպության ներկայացրած վճռաբեկ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է ժամկետ թերությունները շտկելու ու վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար (**հատոր 5-րդ, գ.թ. 47-50**).

5) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի որոշման դեմ Կազմակերպության ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է (**հատոր 5-րդ, գ.թ. 73-77**).

6) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշումը նաև Կազմակերպությանն ուղարկելու նպատակով փոստային ծառայությանն է հանձնվել 03.12.2021 թվականին (**հատոր 5-րդ, գ.թ. 79**).

7) 12.01.2022 թվականին Կազմակերպությունը կրկին վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 19.04.2021 թվականի վճռի դեմ՝ միջնորդելով հարգելի համարել վերաքննիչ բողոք ներկայացնելու համար դատավարական ժամկետը բաց թողնելը՝ դրա հիմքում դնելով այն, որ Դատարանի վճիռը «www.datalex.am» կայքում հրապարակվել է 30 օր ուշացումով՝ 31.05.2021 թվականին, այն ստացել է 23.06.2021 թվականին, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և

վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշումը մինչև օրս չի ստացել, այն «datalex.am» կայքում հրապարակվել է ևս 30 օր ուշացումով (**հատոր 5-րդ, գ.թ. 87-95**).

8) Վերաքննիչ դատարանի 03.02.2022 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու մասին Կազմակերպության միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են (**հատոր 5-րդ, գ.թ. 97, 98**):

**4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասի և 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադարձնալ հետևյալ իրավական հարցին՝ արդո՞ք վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով բողոքարկելն ու ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վարույթ չընդունելը բացառում են ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից նշված խախտումները վերացնելու և կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու անձի դատական պաշտպանության իրավունքի հետագա իրացման հնարավորությունը՝ վերահասարակելով նախկինում արդարադատության իրավական դիրքորոշումները:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում (*յրեն թիվ ՄԴՈ-652, թիվ ՄԴՈ-690, թիվ ՄԴՈ-719, թիվ ՄԴՈ-765, թիվ ՄԴՈ-844, թիվ ՄԴՈ-873, թիվ ՄԴՈ-890, թիվ ՄԴՈ-932, թիվ ՄԴՈ-942, թիվ ՄԴՈ-1037, թիվ ՄԴՈ-1052, թիվ ՄԴՈ-1115, թիվ ՄԴՈ-1127, թիվ ՄԴՈ-1190, թիվ ՄԴՈ-1192, թիվ ՄԴՈ-1196, թիվ ՄԴՈ-1197, թիվ ՄԴՈ-1220, թիվ ՄԴՈ-1222, թիվ ՄԴՈ-1257, թիվ ՄԴՈ-1289*) անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր: Մասնավորապես՝

- վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն (*յրեն ՀՀ սահմանադրական դատարանի 09.04.2007 թվականի թիվ ՄԴՈ-690 որոշումը*),

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ (*լրե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 10.12.2013 թվականի թիվ ՄԴՈ-1127 որոշումը*),

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում (*լրե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 10.03.2016 թվականի թիվ ՄԴՈ-1257 որոշումը*):

- Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*լրե՛ս Եվրոպական դատարանի Էշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Եվրոպական դատարանը մեկ այլ վճռով նշել է, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, սակայն այդ սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, եթե այն չհետապնդի իրավաչափ նպատակ, և եթե կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև չլինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն (*լրե՛ս Եվրոպական դատարանի Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի գործով 14.03.2000 թվականի վճիռը, կետ 36*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար

դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում սպահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը: Ուղղված լինելով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների երաշխավորմանը՝ այդուհանդերձ, օրենսդրի կողմից սահմանված են բողոքարկման իրավունքի իրացման որոշակի պայմաններ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 368-րդ հոդվածով սահմանված են վերաքննիչ բողոքի ձևին և բովանդակությամբ ներկայացվող պահանջները, որոնք չպահպանելը հանգեցնում է նույն օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու հետևանքի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերով վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու ու *որոշումն սպասալուց հետո*՝ վճռի դեմ ներկայացված բողոքով 15-օրյա ժամկետում, իսկ վճարման կարգադրության կամ որոշման դեմ ներկայացված բողոքով ետօրյա ժամկետում սահմանված կարգով կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում այն համարվում է վերաքննիչ դատարան ներկայացված սկզբնական ներկայացման օրը: Կրկին ներկայացված վերաքննիչ բողոքում առկա խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել Վճռաբեկ դատարան՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը կարող են բողոքարկվել *այն սպասալուց պահից* տասնհինգօրյա ժամկետում, եթե նույն օրենսգրքով կամ այլ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

Անդրադառանալով վերոգրյալ իրավանորմերին ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշում կայացվելու դեպքում բողոքաբերն այն ստանալուց հետո ունի կա՛մ որոշմամբ նշված խախտումները շտկելու և դրանով սահմանված ժամկետում կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու կա՛մ այդ որոշման դեմ նույն օրենսգրքով սահմանված կարգով վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք: Այսինքն՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո բողոքաբերին ընձեռվում է օրենսգրքով սահմանված վարքագծի՝ իր համար նախընտրելի եղանակը սեփական հայեցողությամբ ընտրելու ազատություն: Օրենսդիրը բողոքաբերին հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ շտկել վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ նշված խախտումները և սահմանված ժամկետում կրկին ներկայացնել վերաքննիչ բողոք, թե նշված որոշման օրինականության ստուգման նպատակով դրա դեմ ներկայացնել վճռաբեկ բողոք: Նշվածը Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի արտահայտումն է, որը բնութագրվում է որպես անձի՝ սեփական հայեցողությամբ իր նյութական և դատավարական իրավունքներն ու դրանց պաշտպանության



եղանակները տնօրինելու հնարավորություն: Շարադրվածից բխում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո սահմանված ժամկետում կրկին բողոք ներկայացնելու և որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի համապատասխանաբար 5-րդ և 6-րդ մասերով ամրագրված իրավունքներն օրենսդրի կողմից անձին տրված՝ միմյանց հավասար հնարավորություններ են (յրեն «ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն ընդդեմ «Կամեյա» ՍՊԸ-ի, «Տուրանդուր» ՍՊԸ-ի, «Նար ընդ Դավ» ՍՊԸ-ի, Արսեն Հովակիմյանի, Հարություն, Սամել և Սոսե Ավետիսյանների թիվ ԵԱՆԴ/1375/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.12.2021 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բողոքաբերի կողմից վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկելու և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից այն չվերացվելու դեպքերում չպետք է բացառվի անձի դատական պաշտպանության իրավունքի հետագա իրացման հնարավորությունը՝ այդ որոշմամբ նշված խախտումները շտկելու և կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվել են միայն վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վերացվելու հետևանքները՝ բողոքը վերադարձնելու այլ հիմքեր կամ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքեր առկա չլինելու դեպքում այն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից վարույթ ընդունելը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով կարգավորված չէ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկելու, բայց ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից այն չվերացվելու դեպքերում թերությունները շտկելու և կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու անձի իրավունքի իրացման կարգը:

ՀՀ սահմանադրական դատարանը 07.02.2017 թվականի թիվ ՍԴՈ-1344 որոշմամբ անդրադարձել է 17.06.1998 թվականին ընդունված, 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած և 09.04.2018 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգրք) 213-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության գնահատմանը վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքի քննության արդյունքում մերժելու դեպքում կրկին բողոք ներկայացնելու բողոքաբերի իրավունքի տեսանկյունից և արձանագրել, որ Նախկին օրենսգրքի 213-րդ հոդվածի 4-րդ մասը պետք է դիտարկել դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացման երաշխավորվածության և ապահովման համատեքստում: ՀՀ սահմանադրական դատարանը, բարձրացնելով իրավական հարցադրում այն մասին, թե վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերանայման արդյունքով վճռաբեկ բողոքը մերժելու դեպքերում ո՞ր պահից պետք է հաշվարկի և ինչքա՞ն պետք է լինի վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և կրկին ներկայացնելու ժամկետը, նշել է, որ «(...) Այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերանայումից հետո վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը մերժում է՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, բողոքաբերը պետք է ունենա այդ որոշումն արանայուց հետո որոշակի ժամկետում վերաքննիչ դատարանի կողմից մատչանշված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու հնարավորություն (...)»: ՀՀ սահմանադրական դատարանը, ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից, մարդու

հիմնական իրավունքների անմիջականորեն գործողության սահմանադրական պահանջից, ինչպես նաև վերաքննիչ բողոքը վերադարձնելու հետ կապված օրենսդրական կարգավորումների ընդհանուր տրամաբանությունից, արձանագրել է նաև, որ «(...) դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մտրեցմամբ, որ բողոք այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վերանայելուց հետո վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, բողոքաբերը պետք է հնարավորություն ունենա այդ որոշումն արանսպուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում վերացնել վերաքննիչ դատարանի կողմից մատրանսշված վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել՝ առաջնորդվելով դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ (...):»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Նախկին օրենսգրքի 213-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ենթակա է կիրառման նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 5-րդ մասը՝ նկատի ունենալով նաև այն, որ նշված նորմերն իրենց մեջ պարունակվող համապատասխան կարգավորումների իմաստով ունեն համանման բովանդակություն:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշմամբ նախատեսված մոտեցումը, չնայած շարադրված է վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքի քննության արդյունքով այն մերժելու կոնկրետ դեպքի վկայակոչմամբ, սակայն սահմանադրությանը համահունչ կիրառելու մոտեցումը վերաբերելի է վերաքննիչ բողոքը վերադարձնելու որոշումը Վճռաբեկ դատարանի կողմից չվերացվելու ցանկացած դեպքի: Հետևաբար՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից որոշում կայացնելու այն դեպքերում, երբ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը փաստացի չի վերացվում, օրինակ՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելը, առանց քննության թողնելը կամ վարույթ ընդունելը մերժելը, առաջանում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից նշված խախտումները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու հնարավորությունն ապահովելու անհրաժեշտություն:

Շարադրվածի ամփոփմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացվելու, բայց որոշումը չվերացվելու դեպքերում բողոքաբերին պետք է ընձեռվի այդ որոշումն ստանալուց հետո՝ բողոքարկված որոշմամբ սահմանված ժամկետում, վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները շտկելու և կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքը լիարժեք իրականացնելու հնարավորություն:

### ***Վերը նշված իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի կողմից 19.04.2021 թվականին կայացված վճիռը «www.court.am» կայքում հրապարակվել է 31.05.2021 թվականին: Կազմակերպությունը Դատարանի 19.04.2021 թվականի վճիռի դեմ առաջին անգամ վերաքննիչ բողոք է ներկայացրել 01.07.2021 թվականին՝ միաժամանակ միջնորդելով վերականգնել բաց թողնված ժամկետը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի որոշմամբ Կազմակերպության միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ, մերժվել է առարկայագուրկ լինելու հիմքով՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ բողոքը բերվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վճռի հրապարակման օրվանից հետո մեկամսյա ժամկետում, իսկ պետական տուրքի վճարումը տարածամեկտեղի վերաբերյալ միջնորդությունը մերժվել է, և վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Նշված որոշումը Կազմակերպությունը վճռաբեկության կարգով բողոքարկել է, որի արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 20.10.2021 թվականի որոշմամբ Կազմակերպության ներկայացրած վճռաբեկ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է ժամկետ թերությունները շտկելու ու վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշմամբ Կազմակերպության ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է: Այդ որոշումը նաև Կազմակերպությանն ուղարկելու նպատակով փոստային ծառայությանն է հանձնվել 03.12.2021 թվականին:

Դրանից հետո՝ 12.01.2022 թվականին, Կազմակերպությունը կրկին վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 19.04.2021 թվականի վճռի դեմ՝ միջնորդելով հարգելի համարել վերաքննիչ բողոք ներկայացնելու համար դատավարական ժամկետը բաց թողնելը՝ դրա հիմքում դնելով այն, որ Դատարանի վճիռը «datalex.am» կայքում հրապարակվել է 30 օր ուշացումով՝ 31.05.2021 թվականին, այն ստացել է 23.06.2021, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշումը մինչև օրս չի ստացել, այն «datalex.am» կայքում ևս հրապարակվել է 30 օր ուշացումով:

Վերաքննիչ դատարանի 03.02.2022 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու մասին Կազմակերպության միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են այն պատճառաբանությամբ, որ՝

*«բողոք բերած անձը Դատարանի 19.04.2021 թվականի վճիռն սրացել է 23.06.2021 թվականին, միջոցառումներով վերաքննիչ բողոքը ներկայացրել է միայն 12.01.2022 թվականին: Վերոնշյալից հետևում է, որ բողոք բերած անձը դատարանի ակտիվ սրանալու օրվանից՝ 23.06.2021 թվականից ձեռք է բերել իրական հնարավորություն ծանոթանալու բողոքարկվող դատարանի ակտի հետ, որպիսի պահից սկսած մինչև 24.07.2021 թվականը ներառյալ կարող էր իրացնել իր բողոք ներկայացնելու իրավունքը, ինչը, սակայն, չի արել:*

*Ինչ վերաբերում է այն պնդումներին, որ Դատարանի 19.04.2021 թվականի վճիռը սրացել է 23.06.2021 թվականին, և դրա դեմ 01.07.2021 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 30.07.2021 թվականի որոշմամբ վերադարձրել է՝ բողոքարկման ժամկետը բացթողնելու հիմքով, որպիսի որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի 08.12.2021 թվականի որոշմամբ, սակայն Վերաքննիչ դատարանը գրնում է, որ դրանք չեն կարող համարվել վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմք, քանզի բողոք բերած անձը, օգրվելով իր դատավարական իրավունքները սեփական հայեցողությամբ փոփոխելու իրավունքից և ընտրելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի որոշումը բողոքարկելու ճանապարհը, պետք է նաև*

կրի իր դատավարական գործողությունների իրականացման կամ դրանց չիրականացնելու բացասական հետևանքները» :

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք չէին կարող բավարար հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու մասին Կազմակերպության միջնորդությունը մերժելու, իսկ դրա արդյունքում՝ նաև վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու համար, քանի որ, նախ, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը, 30.07.2021 թվականին որոշում կայացնելով վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին, արդեն իսկ նույն որոշմամբ անդրադառնալով Կազմակերպության միջնորդությանը՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ, այն մերժել էր առարկայագուրկ լինելու հիմքով այն պատճառաբանությամբ, որ բողոքը բերվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վճռի հրապարակման օրվանից հետո մեկամսյա ժամկետում, այսինքն՝ գոնե այդ առումով Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը Կազմակերպության համար եղել է հստակ և ընկալելի, ու վերաքննիչ բողոքը վերադարձրել է բացառապես պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու հիմքով, և երկրորդը, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Կազմակերպությունը, 18.08.2021 թվականին ստանալով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը, և ունենալով օրենսգրքով սահմանված վարքագծի՝ իր համար նախընտրելի եղանակը սեփական հայեցողությամբ ընտրելու ազատություն, իրացրել է դրա դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 371-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված և այդ որոշմամբ նշված՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու իր իրավունքը: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի 30.07.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Կազմակերպության ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշմամբ մերժվելու դեպքում ևս չպետք է բացառվեր Կազմակերպության դատական պաշտպանության իրավունքի հետագա իրացման հնարավորությունը՝ այդ որոշմամբ նշված խախտումները շտկելու և կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքը, ու Կազմակերպությանը հնարավորություն տրվեր Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկության կարգով վերանայվելուց հետո Վճռաբեկ դատարանի որոշումն ստանալուց հետո՝ բողոքարկված որոշմամբ սահմանված ժամկետում, վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները շտկելու և կրկին ներկայացնելու վերաքննիչ բողոք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը Ընկերությանն ուղարկվել է 03.12.2021 թվականին, Ընկերության կողմից նշված որոշումը ստանալու փաստը հավաստող ապացույց գործում առկա չէ, ուստի Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առներ նշված հանգամանքը և կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետը վերականգնելու հարցը պետք է քննարկեր դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացման երաշխավորվածության ու ապահովման համատեքստում՝ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու հիմնական իրավունքների

անմիջականորեն գործողության սահմանադրական պահանջը, ինչպես նաև վերաքննիչ բողոքը վերադարձնելու հետ կապված օրենսդրական կարգավորումների ընդհանուր տրամաբանությունը:

Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում Վերաքննիչ դատարանին վերագրվող դատավարական խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքում ներկայացված փաստարկները, և վճռաբեկ բողոքի հիմքերը գնահատում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.02.2022 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից թիվ ՍԴ/1004/02/19 քաղաքացիական գործով 10.02.2023 թվականին կայացված որոշման վերաբերյալ**

**10.02.2023 թվական**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), գրավոր ընթացակարգով քննելով «Սահակյան Եղբայրներ» ՍՊԸ-ի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.02.2022 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կազմակերպության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, 10.02.2023 թվականին որոշել է «Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.02.2022 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:»:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորներ Էդ. Սեդրակյանս, Ա. Բարսեղյանս և Տ. Պետրոսյանս, համաձայն չլինելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից 10.03.2022 թվականին թիվ ՍԴ/1004/02/19 քաղաքացիական գործով կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում ենք մեր հատուկ կարծիքը՝ նույն որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

**1. Գործի դատավարական նախապայմանությունը**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է Կազմակերպությունից բռնագանձել 8.301.072 ՀՀ դրամ գումար և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տուկոսները:

ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ս. Գրիգորյան) (այսուհետ՝ Դատարան) 19.04.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի, Կազմակերպությունից հօգուտ Ընկերության բռնագանձվել է 8.024.380,56 ՀՀ դրամ, որից 7.264.494,56 ՀՀ դրամը՝ որպես մատակարարված ապրանքների համար վճարման ենթակա ընդհանուր գումար, 726.449 ՀՀ դրամը՝ որպես պայմանագրով սահմանված տույժի գումար և 33.437 ՀՀ դրամը՝ որպես 23.08.2019 թվականից մինչև 06.09.2019 թվականն ընկած ժամանակահատվածի համար պարտավորության մայր գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տուկոսի հաշվարկային դրույքի չափով հաշվեգրված տուկոսներ: 07.09.2019 թվականից մինչև պարտավորության փաստացի կատարման օրը պարտավորության՝ վարկի մայր գումարի՝ 7.264.494,56 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկվել և Կազմակերպությունից հօգուտ Ընկերության բռնագանձվել են նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տուկոսներ՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի

Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (նախագահող դատավոր՝ Կ. Չիլինգարյան, դատավորներ՝ Ն. Գաբրիելյան, Լ. Գրիգորյան) 30.07.2021 թվականի որոշմամբ Կազմակերպության միջնորդությունները՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու և պետական տուրքի վճարումը տաժամկետելու վերաբերյալ, մերժվել են, իսկ վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Կազմակերպության ներկայացրած վճարելի բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 03.02.2022 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոք ներկայացնելու օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու վերաբերյալ Կազմակերպության միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են:

Վճարելի բողոք է ներկայացրել Կամակերպությունը (ներկայացուցիչ՝ Հերմիսես Ավետիսյան):

Վճարելի բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճարելի բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում.

*Վերաքննիչ դատարանը խախտել ՀՀ Մահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասը և 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:*

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ պատասխանողը վերաքննիչ բողոք բերելու համար դատավարական ժամկետները բաց է թողել զուտ այն պատճառով, որ բողոքարկել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» 30.07.2021 թվականի որոշումը: Նշված վճարելի բողոքի ընդունումը ՀՀ վճարելի դատարանը մերժել է 17.11.2021 թվականի որոշմամբ, այդ որոշումը «www.datalex.am» կայքում գեներացվել է 08.12.2021 թվականին, իսկ դրա թղթային տարբերակը պատասխանողը մինչ օրս չի ստացել: Վերաքննիչ բողոքը կրկին ներկայացրել է 12.01.2022 թվականին, երբ տեղեկացել է այդ որոշման մասին՝ կից ներկայացնելով պետական տուրքի վճարման անդորրագիրը և միջնորդություն բաց թողնված դատավարական ժամկետները հարգելի համարելու մասին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 03.02.2022 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

### 3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) սույն գործով Դատարանի կողմից 19.04.2021 թվականին կայացված վճիռը «www.court.am» կայքում հրապարակվել է 31.05.2021 թվականին (**հատոր 4-րդ, գ.թ. 127-146**, «www.court.am» կայք)։

2) Դատարանի 19.04.2021 թվականի վճռի դեմ Կազմակերպությունը վերաքննիչ բողոքը ներկայացրել է 01.07.2021 թվականին՝ միջնորդելով վերականգնել բաց թողնված ժամկետը (**հատոր 5-րդ, գ.թ. 4-29**)։

3) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի որոշմամբ Կազմակերպության միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ, մերժվել է առարկայագուրկ լինելու հիմքով, իսկ պետական տուրքի վճարումը տարածամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է, և վերաքննիչ բողոքը վերադարձվել է (**հատոր 5-րդ, գ.թ. 30, 31**)։

4) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 20.10.2021 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի որոշման դեմ Կազմակերպության ներկայացրած վճռաբեկ բողոքը վերադարձվել է, և սահմանվել է ժամկետ թերությունները շտկելու ու վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար (**հատոր 5-րդ, գ.թ. 47-50**)։

5) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի որոշման դեմ Կազմակերպության ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է (**հատոր 5-րդ, գ.թ. 73-77**)։

6) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշումը նաև Կազմակերպությանն ուղարկելու նպատակով փոստային ծառայությանն է հանձնվել 03.12.2021 թվականին (**հատոր 5-րդ, գ.թ. 79**)։

7) 12.01.2022 թվականին Կազմակերպությունը կրկին վերաքննիչ բողոք է ներկայացրել Դատարանի 19.04.2021 թվականի վճռի դեմ՝ միջնորդելով հարգելի համարել վերաքննիչ բողոք ներկայացնելու համար դատավարական ժամկետը բաց թողնելը՝ դրա հիմքում դնելով այն, որ Դատարանի վճիռը «www.datalex.am» կայքում հրապարակվել է 30 օր ուշացումով՝ 31.05.2021 թվականին, այն ստացել է 23.06.2021 թվականին, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշումը մինչև օրս չի ստացել, այն «datalex.am» կայքում հրապարակվել է ևս 30 օր ուշացումով (**հատոր 5-րդ, գ.թ. 87-95**)։

8) Վերաքննիչ դատարանի 03.02.2022 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու մասին Կազմակերպության միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են (**հատոր 5-րդ, գ.թ. 97, 98**)։

### 3. Հարուկ կարծիքի պարճատարանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանի որոշման հիմքում դրվել է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1344 որոշման պատճառաբանությունները դատավարական ժամկետի վերականգնման հարցում այն դեպքի համար, երբ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին դատարանի համապատասխան որոշումը բողոքարկվել է վճռաբեկ դատարան։ Վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով ՀՀ սահմանադրական դատարանի 07.02.2017 թվականի թիվ ՄԴՈ-1344 որոշումը, գտել է,



որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասի և 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-1344 որոշմամբ արձանագրել էր իրավական բաց, քանի որ վճռաբեկ բողոքի ներկայացումը չէր խոչընդոտում վերաքննիչ դատարանի դատական ակտի ուժ ստանալուն և փաստացի դատարանի կողմից տրված դատավարական ժամկետի հոսքը շարունակվում էր: ՀՀ սահմանադրական դատարանն անդրադառնալով նշված իրավական խնդրին ձևավորել էր համապատասխան իրավական դիրքորոշում տվյալ իրավիճակի համար:

Վերաքննիչ դատարանի 03.02.2022 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու մասին Կազմակերպության միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են այն պատճառաբանությամբ, որ՝

*«բողոք բերած անձը Դատարանի 19.04.2021 թվականի վճիռն սրացել է 23.06.2021 թվականին, միջոցով սույն վերաքննիչ բողոքը ներկայացրել է միայն 12.01.2022 թվականին: Վերոնշյալից հետևում է, որ բողոք բերած անձը դատարան ակտն սրանալու օրվանից 23.06.2021 թվականից ձեռք է բերել իրական հնարավորություն ծանոթանալու բողոքարկվող դատարան ակտի հետք, որպիսի պակից սկսած մինչև 24.07.2021 թվականը ներառյալ կարող էր իրացնել իր բողոք ներկայացնելու իրավունքը, ինչը, սակայն, չի արել:*

*Ինչ վերաբերում է այն պնդումներին, որ Դատարանի 19.04.2021 թվականի վճիռը սրացել է 23.06.2021 թվականին, և դրա դեմ 01.07.2021 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 30.07.2021 թվականի որոշմամբ վերադարձրել է՝ բողոքարկման ժամկետը բացթողնելու հիմքով, որպիսի որոշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքի վարույթ ընդունումը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի 08.12.2021 թվականի որոշմամբ, սպա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք չեն կարող համարվել վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմք, քանզի բողոք բերած անձը, օգրվելով իր դատավարական իրավունքները սեփական հայեցողությամբ փոփոխելու իրավունքից և ընտրելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի որոշումը բողոքարկելու ճանապարհը, պետք է նաև կրի իր դատավարական գործողությունների իրականացման կամ դրանց չիրականացնելու բացասական հետևանքները:*

*Վերոգրյալի հիման վրա ներկայացված միջնորդությունը՝ վերաքննիչ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ, ենթակա է մերժման, ինչի հիման վրա վերաքննիչ բողոքի ընդունումը ենթակա է մերժման Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 372-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ուժով:*

Վճռաբեկ դատարանը բավարարել է վճռաբեկ բողոքը և վերացրել է Վերաքննիչ դատարանի 03.02.2022 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով նախատեսված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը այն պատճառաբանությամբ, որ՝

*«... Վերաքննիչ դատարանն անբեռն է, որ Կազմակերպությունը, 18.08.2021 թվականին սրանալով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 30.07.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը, և ունենալով*

օրենսգրքով սահմանված վարքագծի՝ իր համար նախընտրելի եղանակը սեփական հայեցողությամբ ընտրելու ազատություն, իրացրել է դրա դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 371-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված և այդ որոշմամբ նշված՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու իր իրավունքը: Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի 30.07.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Կազմակերպության ներկայացրած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի որոշմամբ մերժվելու դեպքում ևս չպետք է բացառվեր Կազմակերպության դատական պաշտպանության իրավունքի հետագա իրացման հնարավորությունը՝ այդ որոշմամբ նշված խախտումները շրկելու և կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավունքը, ու Կազմակերպությանը հնարավորություն տրվեր Վերաքննիչ դատարանի որոշումը վճռաբեկության կարգով վերանայվելուց հետո Վճռաբեկ դատարանի որոշումն արանալուց հետո՝ բողոքարկված որոշմամբ սահմանված ժամկետում, վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները շրկելու և կրկին ներկայացնելու վերաքննիչ բողոք:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.11.2021 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը Ընկերությանն ուղարկվել է 03.12.2021 թվականին, Ընկերության կողմից նշված որոշումը արանալու փաստը հավաստող ապացույց գործում առկա չէ, ուստի Վերաքննիչ դատարանը պետք է հաշվի առներ նշված հանգամանքը և կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետը վերականգնելու հարցը պետք է քննարկեր դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացման երաշխավորվածության ու ապահովման համարեքստում՝ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու հիմնական իրավունքների անմիջականորեն գործողության սահմանադրական պահանջը, ինչպես նաև վերաքննիչ բողոքը վերադարձնելու հետ կապված օրենսդրական կարգավորումների ընդհանուր տրամաբանությունը:»:

ՀՀ սահմանադրական դատարանը, 07.02.2017 թվականի թիվ ՄԴՌ-1344 որոշմամբ, անդրադառնալով իրավահարաբերության ծագման պահին գործող վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վճռաբեկության կարգով անմիջականորեն բողոքարկելու դատավարական իրավակարգավորմանն, արձանագրել է, որ տվյալ որոշման բողոքարկումը չպետք է բացառի վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշման վերանայումից հետո վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը մերժելու դեպքում անձի դատական պաշտպանության իրավունքի հետագա իրացման հնարավորությունը: ՀՀ սահմանադրական դատարանը նաև նշել է. «(...) վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո, մի կողմից, վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելը և այն կրկին ներկայացնելը և մյուս կողմից՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկելն օրենսդրի կողմից անձին տրված հավասարազոր իրավական հնարավորություններ են»:

Միաժամանակ, տվյալ որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ գործով բարձրացված սահմանադրականության հարցով առկա է իրավակարգավորման բաց: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը փաստել է, որ «(...) իրավական անդրադարձ չի կատարվել այն հարցերին, թե ո՞ր պահից պետք է հաշվարկվի և ինչքա՞ն պետք է լինի վերաքննիչ բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և կրկին ներկայացնելու ժամկետը բոլոր այն դեպքերում, երբ վճռաբեկ դատարանը վերաքննիչ

դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոքարկվելու արդյունքում կատարած վերանայումից հետո մերժում է վճարել բողոքը»:

Վերը նշվածի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը հանգել է այն հետևություն, որ մինչև ՀՀ ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումներ սահմանելը դատական պրակտիկան պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին որոշումը վերանայելուց հետո վճարել դատարանը մերժում է վճարել բողոքը դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, բողոքաբերը պետք է հնարավորություն ունենա այդ որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում վերացնել վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված վերաքննիչ բողոքում թույլ տրված խախտումները և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնել՝ առաջնորդվելով դատական ակտի բողոքարկման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ:

Գտնում ենք, որ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներն արտահայտվել են այն դեպքի համար, երբ վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված վճարել բողոքն ընդունվել է վճարել դատարանի վարույթ և բնականաբար չի կարող նույնացվել վճարել բողոքի ընդունումը մերժվելու դեպքի հետ, քանի որ մի դեպքում տեղի է ունենում բողոքարկված դատական ակտի քննություն վերադաս դատական ատյանում, և նման հանգամանքը բացակայում է երկրորդ դեպքում:

Բնականաբար իրավական հարցադրումներն էլ չեն կարող նույնացվել, քանի որ վճարել դատարանի կողմից բողոքը վարույթ ընդունելը պետք է անդրադառնար բողոքարկված դատական ակտով սահմանված դատավարական ժամկետների հոսքի վրա, որպիսի իրավական ռեժիմ չի կարող կիրառվել վճարել դատարանի կողմից բողոքը վարույթ չընդունելու դեպքի համար:

Դատավարության մեկ կողմը չի կարող չսահմանափակված ժամկետով սպասել, մինչև որ մյուս կողմը հերթականությամբ սպառի օրենքով իրեն վերապահված բողոքարկման բոլոր հնարավորությունները, քանի որ այդ վիճակը ևս կհակասի ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և իրավական որոշակիության սկզբունքներին: Պետք է ապահովել ողջամիտ հավասարակշռություն անձի կողմից դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման և ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրականացման միջև. մրցակցային դատավարության պայմաններում չի կարող լինել արդար դատաքննություն և իրավական որոշակիություն դատավարության միայն մեկ կողմի համար:

Բացի այդ, վճարել դատարանի քննարկվող դիրքորոշումը կնպաստի գործի քննության ձգձգման չարդարացված հնարավորության ստեղծմանը՝ հանգեցնելով դատավարական իրավունքների չարաշահման: Նման չարաշահումները կանխելու նպատակով պետք է գործի կանոնակարգում, համաձայն որի՝ այն դեպքում, երբ դատավարության մասնակիցն օգտվում է դատական ակտը բողոքարկելու իրավական հնարավորությունից, կրում է նաև ներկայացված բողոքը վերադաս դատարանի կողմից վարույթ չընդունելու բացասական հետևանքը, ինչն արտահայտվում է նրանում, որ բողոքարկման մեկ հնարավորությունից օգտվելու դեպքում բողոքարկման մյուս հնարավորության օրենքով սահմանված ժամկետի հոսքը չի դադարում:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ վճարել բողոքը ենթակա էր մերժման:

# 40. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական  
դատարանի որոշում  
Մասնկության գործ թիվ՝  
Նախագահող դատավոր՝

Մասնկության գործ թիվ **ՄԻԴ/0350/04/23**  
**2023թ.**  
ՄԻԴ/0350/04/23  
Կ. Համբարձումյան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- նախագահող* Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
- զեկուցող* Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
- Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
- Ս. ՄԵՂՐՅԱՆ
- Է. ՍԵՂՐԱՎՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 06-ին  
գրավոր ընթացակարգով քննելով սնանկության գործով կառավարիչ Վահ-  
րամ Ապրեսյանի (այսուհետ նաև՝ Կառավարիչ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ  
քաղաքացիական դատարանի 14.04.2023 թվականի որոշման դեմ՝ ըստ Լուսինե  
Վահրամյանի դիմումի՝ սեփական սնանկությունը ճանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապայմանությունը

Դիմելով դատարան՝ Լուսինե Վահրամյանը պահանջել է իրեն ճանաչել  
սնանկ:

ՀՀ սնանկության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 20.02.2023 թվականի  
վճռով դիմումը բավարարվել է:

Դատարանի 01.03.2023 թվականի որոշմամբ սնանկության գործով կառավա-  
րիչ է նշանակվել Վահրամ Ապրեսյանը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատա-  
րան) 14.04.2023 թվականի որոշմամբ Կառավարչի վերաքննիչ բողոքը մերժվել է,  
և Դատարանի 01.03.2023 թվականի «Մասնկության գործով կառավարիչ նշանա-  
կելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կառավարիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճուաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Վճուաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը, որը չպետք է կիրառել, չի կիրառել «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածը և 93-րդ հոդվածի 6-րդ մասը, որոնք պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ֆիզիկական անձի կամավոր սնանկության դեպքում սնանկության մասին տեղեկություններ հրապարակելու պարտականությունը դրված է տվյալ անձի վրա:

Վերաքննիչ դատարանն անդրադարձել է «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պարտականության մեկ դրվագին՝ սնանկ ճանաչվելու և սնանկության գործով կառավարիչ նշանակելու մասին հայտարարությանը, այնինչ անտեսել է, որ այդ հոդվածով սահմանված են սնանկության ողջ վարույթի ընթացքում հրապարակման ենթակա տեղեկությունները: Նշված հայտարարությունը չհրապարակելը չի խախտում որևէ պարտատիրոջ շահ, քանի որ նշված հայտարարության բացակայության դեպքում սնանկության գործով պարտատերերի պահանջների վերջնական ցուցակ չի հաստատվում, պարտատերերի առաջին ժողով չի նշանակվում և սնանկության գործը չի ավարտվում:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի նշած՝ պարտապանի և (կամ) սնանկության գործով կառավարչի շահագրգռվածության աստիճանին, ապա հնարավոր չէ կանխագուշակել, թե հայտարարության հրապարակման և այդ գործընթացի՝ օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում ընթացքն ապահովելու հարցում ով է ավելի շահագրգռված:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 14.04.2023 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

## **3. Վճուաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստը**

Վճուաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունի հետևյալ փաստերը՝

1) Լուսինե Վահրամյանը դիմում է ներկայացրել Դատարան՝ սեփական սնանկությունը ճանաչելու պահանջի մասին: Դատարանի 20.01.2023 թվականի վճռով Լուսինե Վահրամյանի դիմումը բավարարվել է՝ Լուսինե Վահրամյանը ճանաչվել է սնանկ (**հատոր 1-ին, գ.թ. 3-12, հատոր 2-րդ, գ.թ. 124-132**).

2) Դատարանը, 01.03.2023 թվականին որոշում կայացնելով Վահրամ Ապրեւսյանին Լուսինե Վահրամյանի սնանկության գործով կառավարիչ նշանակելու մասին, մինևույն ժամանակ նրան հանձնարարել է ոչ ուշ, քան նույն որոշման ուժի մեջ մտնելու պահից 5 օրվա ընթացքում պարտապանին սնանկ ճանաչելու և կառավարիչ նշանակելու մասին տեղեկությունները հրապարակել «<http://www.azdarrar.am>» հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում (**հավելված 2-րդ, գ.թ. 133**):

**4. Վճռաբեկ դատարանի պարճատարանությունները և եզրահանգումը**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի և 93-րդ հոդվածի 6-րդ մասի միատեսակ կիրառության համար, քանի որ.

- 1) թիվ ՍնԴ/3689/04/22 սնանկության գործով 03.03.2023 թվականի, թիվ ՍնԴ/0370/04/23 սնանկության գործով 07.04.2023 թվականի և թիվ ՍնԴ/0136/04/23 սնանկության գործով 10.04.2023 թվականի ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտերում նշված նորմերը կիրառվել են Վերաքննիչ դատարանի 14.04.2023 թվականի որոշման մեջ նույն նորմերին տրված մեկնաբանությանը հակասող մեկնաբանությամբ,
- 2) նշված նորմերի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անորոշառնալ ֆիզիկական անձանց կողմից կամավոր սնանկության դիմում ներկայացվելու դեպքերում իր սնանկության մասին տեղեկությունները հրապարակելու առանձնահատկություններին:*

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված սնանկության վարույթի պարտապան կարող է լինել ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, (...):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ կամավոր սնանկության դիմում ներկայացնելու և այն հետ վերցնելու իրավունք ունեն ֆիզիկական անձի անունից՝ տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ներկայացուցիչը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքը սահմանում է իրավաբանական և ֆիզիկական անձանց սնանկ ճանաչելու երկու ընթացակարգ՝ սեփական նախաձեռնությամբ՝ կամավոր սնանկության դիմումի հիման վրա, կամ պարտատիրոջ պահանջով՝ հարկադրված սնանկության դիմումի հիման վրա:

Թեև սնանկության վարույթով որպես պարտապան կարող է հանդես գալ ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ, ու Օրենքով ամրագրված դրույթների գերակշիռ մասն ընդհանուր է թե՛ իրավաբանական և թե՛ ֆիզիկական անձանց սնանկության վարույթների համար, այնուամենայնիվ Օրենքը ֆիզիկական անձանց սնանկության վարույթի մասով նախատեսում է ընթացակարգային որոշ առանձնահատկություններ: Այսպես՝

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 11-րդ գլխով սահմանված են **ֆիզիկական անձանց** սնանկության առանձնահատկությունները, որում ընդգրկված՝ 91-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձանց սնանկության հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են նույն օրենքի դրույթները, **եթե նույն գլխով այլ բան նախատեսված չէ:**

Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ ֆիզիկական անձանց սնանկության հետ կապված հարցեր քննարկելիս պետք է նկատի ունենալ, որ այդ վարույթի նկատմամբ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառվում են, **եթե Օրենքի 11-րդ գլխով այլ բան նախատեսված չէ:**

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո **դատարանը կառավարչին պարտավորեցնում է** ոչ ուշ, քան համապատասխան դատական ակտերի ուժի մեջ մտնելու պահից՝ 5 օրվա ընթացքում, **պարտապանին սնանկ ճանաչելու**, կառավարիչ և պարտատերերի առաջին ժողովը նշանակելու մասին տեղեկությունները հրապարակել <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով պարտապանին սնանկ ճանաչելու, կառավարիչ և պարտատերերի առաջին ժողովը նշանակելու մասին տեղեկությունները հրապարակելու հարցին, արձանագրել է, որ այդ տեղեկությունները հրապարակելը սնանկության վարույթի առանցքային փուլերից է և կոչված է այդ վարույթում ապահովելու ինչպես սնանկ ճանաչված պարտապանի, այնպես էլ նրա պարտատերերի իրավունքներն ու օրինական շահերը (*տե՛ս ըստ Ռուզան Առաքելյանի դիմումի թիվ ԵԱԴԴ/0048/04/14 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 11-րդ գլխում տեղ գտած՝ 93-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ **ֆիզիկական անձի սնանկության մասին տեղեկությունները հրապարակումն իրականացնում է** տվյալ ֆիզիկական անձը, **եթե սնանկ ճանաչելու դիմումը ներկայացրել է ինքը:**

Վերը նշված նորմերից հետևում է, որ օրենսդիրը, ի տարբերություն Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված ընդհանուր կանոնի, նույն Օրենքի 93-րդ հոդվածի 6-րդ մասով համապատասխան առանձնահատկություն է սահմանել ֆիզիկական անձանց կամավոր սնանկության դիմումի առումով՝ ֆիզիկական անձի կողմից կամավոր սնանկության դիմում ներկայացվելու դեպքերում **սնանկության մասին տեղեկությունները** հրապարակելու պարտականությունը դնելով հենց **տվյալ ֆիզիկական անձի** վրա:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմք ընդունելով Օրենքի 91-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումը, ֆիզիկական անձի՝ կամավոր սնանկության դիմումի հիման վրա հարուցված սնանկության դեպքում ենթակա է կիրառման հենց Օրենքի 93-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կանոնը:

Միննույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հատուկ կանոնը բխում է ֆիզիկական անձանց, ինչպես նաև կամավոր սնանկության վարույթների առանձնահատկություններից, երբ պարտապան ֆիզիկական անձին իր իսկ դիմումի հիման վրա հարուցված սնանկության վարույթի շրջանակներում տրվում է ակտիվ դերակատարություն՝ հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ անհրաժեշտ տեղեկատվությունը գտնվում է նրա տնօրինման ներքո,

և վերջինիս կողմից դրանց հրապարակումը ենթադրում է ժամանակի ու միջոցների խնայողություն:

**Վճարել դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Լուսինե Վահրամյանը դիմում է ներկայացրել Դատարան՝ սեփական սնանկությունը ճանաչելու պահանջի մասին: Դատարանի 20.01.2023 թվականի վճռով Լուսինե Վահրամյանի դիմումը բավարարվել է՝ Լուսինե Վահրամյանը ճանաչվել է սնանկ:

Դատարանը, 01.03.2023 թվականին որոշում կայացնելով Վահրամ Ապրեսյանին Լուսինե Վահրամյանի սնանկության գործով կառավարիչ նշանակելու մասին, մինևույն ժամանակ նրան հանձնարարել է ոչ ուշ, քան նույն որոշման ուժի մեջ մտնելու պահից 5 օրվա ընթացքում պարտապանին սնանկ ճանաչելու և կառավարիչ նշանակելու մասին տեղեկությունները հրապարակել [«http://www.azdarar.am»](http://www.azdarar.am) հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում:

Վերաքննիչ դատարանը 14.04.2023 թվականի որոշմամբ մերժել է Կառավարչի ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ.

- «(...) սնանկության գործով կառավարիչը բոլոր դեպքերում է պարտավորվում դատական ակտերի ուժի մեջ մտնելու պահից 5 օրվա ընթացքում, պարտապանին սնանկ ճանաչելու, կառավարիչ և պարտավորերի առաջին ժողով նշանակելու մասին տեղեկությունները հրապարակել <http://www.azdarar.am> հասցեում գրնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և փակցնել դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում»:

- «Օրենքով նման պահանջ նաև սնանկության գործով կառավարչի վրա դնելն ինքնասպարակ չէ: Միայն այդ կերպ Դատարանը կարող է վերահսկել և ապահովել պարտավորերի շահերի համակողմանի և երաշխավորված պաշտպանությունը, քանի որ միայն համապարասիսան հայրարարության հրապարակված լինելու պայմաններում պարտավորերը կարող են ներկայացնել իրենց պահանջները, որպիսի հարցում պարտապանի շահագրգռվածության աստիճանն ավելի նվազն է, քանի որ որքան քիչ պարտավորեր իմանան իր սնանկության մասին, այդքան քիչ պարտավորություն վերջնարդյունքում կորվի իր վրա: Եվ նման վարկածը կարող է շարժադիժ հանդիսանալ պարտապանի կողմից խուսափելու «Մասնկության մասին» օրենքի 93-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված գործողությունների կատարումից: Իսկ սնանկության գործով կառավարիչը՝ որպես գործընթացով անցնող առանցքային սուբյեկտ, ում վրա դրված է ոչ միայն պարտապանի, այլ նաև պարտավորերի շահերի հավասարակշռությունը, առավել քան իրավասու և պարտավոր սուբյեկտ է հիշյալ պահանջի կատարումն ապահովելու հարցում»:

- «Ոստի, Բողոքաբերի կողմից վկայակոչված «Մասնկության մասին» օրենքի 93-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնը գնահատելով սույն գործի փաստերի և արված իրավական վերլուծությունների լույսի ներքո՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սեփական դիմումի հիման վրա Լուսինե Վահրամյանի սնանկ ճանաչված լինելու պայմաններում իր սնանկության մասին տեղեկությունների հրապարակում կատարելու պարտականությունից զատ, զուգահեռ գործում է նաև կառավարչի կողմից համապարասիսան դատական ակտերի ուժի մեջ մտնելու պահից 5 օրվա ընթացքում, պարտապանին սնանկ ճանաչելու, կառավարիչ և պարտավորերի



առաջին ժողով նշանակելու մասին տեղեկությունները <http://www.azdarar.am> հասցեում գրնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու և դատարանի շենքում հատուկ հարկացված տեղում փակցնելու պարտականությունը: Այդ երկու գործողություններն ընդամենը լրացնում են միմյանց, բայց ոչ երբեք բացառում մեկը մյուսին: (...):»:

Վերը նշված դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Վկայակոչված իրավանորմերի և դրանց վերաբերյալ հայտնված իրավական դիրքորոշումների համատեքստում գնահատելով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են և չէին կարող հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը մերժելու համար, քանի որ տվյալ դեպքում սնանկության դիմումը ներկայացվել է ֆիզիկական անձի կողմից, ով պահանջել է ճանաչել սեփական սնանկությունը, ուստի վկայակոչված դիրքորոշումների համաձայն՝ սնանկության մասին տեղեկատվությունը պետք է ինքը հրապարակեր:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությանը, որ «Այդ երկու գործողություններն ընդամենը լրացնում են միմյանց, բայց ոչ երբեք բացառում մեկը մյուսին», ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը և 93-րդ հոդվածի 6-րդ մասը միմյանց փոխլրացնել չեն կարող այնքանով, որքանով երկու նորմերն էլ կարգավորում են սնանկության մասին տեղեկատվությունը հրապարակելու կարգը՝ տարբերակում դնելով միայն այն իրականացնող սուբյեկտների միջև, ուստի դրանց համակցված կիրառումը հանգեցնում է նույն տեղեկատվության՝ երկու տարբեր սուբյեկտների կողմից կրկնակի հրապարակման՝ ծանրաբեռնելով սնանկության վարույթը:

Վերոշարադրյալ պատճառաբանություններով Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված խախտումների կապակցությամբ վճռաբեկ բողոքում նշված փաստարկները՝ արձանագրելով, որ դրանք հանգեցրել են հարցի սխալ լուծման:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը, հետագուտելով թիվ ՍնԴ/3689/04/22 սնանկության գործով 03.03.2023 թվականի, թիվ ՍնԴ/0136/04/23 սնանկության գործով 10.04.2023 թվականի և թիվ ՍնԴ/0370/04/23 սնանկության գործով 07.04.2023 թվականի ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումները, դրանք համադրելով Վերաքննիչ դատարանի 14.04.2023 թվականի որոշման հետ՝ հաստատված է համարում բողոքը վարույթ ընդունելու հիմքի՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի և 93-րդ հոդվածի 6-րդ մասի կապակցությամբ հակասական մեկնաբանությունների առկայությունը: Հիմք ընդունելով սույն գործով Վճռաբեկ դատարանի կողմից հայտնված դիրքորոշումները «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի և 93-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նմանատիպ փաստական հանգամանքներով գործերի քննության ժամանակ նշված նորմերն անհրաժեշտ է կիրառել սույն որոշմամբ տրված մեկնաբանություններով:

Արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան անհրաժեշտ է Վերաքննիչ դատարանի 14.04.2023 թվականի որոշումը մասնակիորեն՝ Դատարանի 01.03.2023 թվականի «Սնանկության գործով

կառավարիչ նշանակելու մասին» որոշման 3-րդ կետն օրինական ուժի մեջ թողնելու մասով, վերացնել և կայացնել նոր դատական ակտ՝ պարտապանին սնանկ ճանաչելու և կառավարիչ նշանակելու մասին տեղեկությունները «<http://www.azdarar.am>» հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում սույն որոշումն օրինական ուժի մեջ մտնելու պահից 5 օրվա ընթացքում հրապարակելու և դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում փակցնելու պարտականությունը դնել պարտապան Լուսինե Վահրամյանի վրա:

Միաժամանակ Վճռարեկ դատարանն արձանագրում է, որ միջանկյալ դատական ակտ բողոքարկված լինելու պայմաններում դատական ծախսեր չեն առաջացել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ, 408-րդ հոդվածներով՝

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռարեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.04.2023 թվականի որոշումը մասնակիորեն՝ ՀՀ սնանկության դատարանի 01.03.2023 թվականի «Մնանկության գործով կառավարիչ նշանակելու մասին» որոշման 3-րդ կետն օրինական ուժի մեջ թողնելու մասով, վերացնել և կայացնել նոր դատական ակտ՝ պարտապանին սնանկ ճանաչելու ու կառավարիչ նշանակելու մասին տեղեկությունները «<http://www.azdarar.am>» հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում սույն որոշումն օրինական ուժի մեջ մտնելու պահից 5 օրվա ընթացքում հրապարակելու և դատարանի շենքում հատուկ հատկացված տեղում փակցնելու պարտականությունը դնել պարտապան Լուսինե Վահրամյանի վրա:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ  
01.07.2022 – 31.12.2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ**



## ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունում անընդհատ կատարվող դատական բարեփոխումներն ուղղված են մեր երկիրը՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավական պետության չափանիշներին առավելագույնս մոտեցնելուն:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի դեկտեմբերի 6-ին իրականացված սահմանադրական փոփոխությունների և 2018 թվականի փետրվարի 7-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված կարգավորումների արդյունքում Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող դատական ակտերին տրվեցին նոր օրենսդրական ձևակերպմամբ հատկանիշներ: Նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում Վճռաբեկ դատարանի կողմից կայացվող որոշումները բնութագրվեցին առավել արդիական եղանակներով՝ օժտվելով ժամանակակից իրավական մտքին հարիր բնութագրերով՝ որոշակիացնելով ներպետական իրավական համակարգում Վճռաբեկ դատարանի առաքելությունը և գործունեության նպատակը:

Վճռաբեկ դատարանը, հանդիսանալով անձի հիմնարար իրավունքների երաշխավոր և արդյունավետությամբ իրականացնելով այդ առաքելությունը, իր լուրջ դերակատարությունն ունի երկրի իրավական անվտանգության ապահովման հարցում, որն առավել արդիական է Հայաստանի Հանրապետությունում ներկայումս առկա մարտահրավերների ժամանակահատվածում:

Վճռաբեկ դատարանի վարչական պալատը, որպես առանձին պալատ ձևավորվելով 2022 թվականի հուլիս ամսից, իր ավանդն է ներդնում արդարադատության արդյունավետության առջև ծագող խնդիրների բացահայտման և դրանց լուծումներ տալու հարցում՝ ապահովելով Սահմանադրությամբ և վավերացված միջազգային պայմանագրերով երաշխավորված մարդու իրավունքների ու ազատությունների անխոչընդոտ իրացումը:

Վճռաբեկ դատարանի վարչական պալատի ձևավորման պահից վարույթ ընդունված վճռաբեկ բողոքների քննությամբ Վճռաբեկ դատարանի վարչական պալատը կայացրել է բազմաթիվ նախադեպային նշանակության որոշումներ՝ ձևավորելով միասնական դատական պրակտիկա, զարգացնելով իրավունքը և ապահովելով մարդու իրավունքների ու ազատությունների հիմնարար խախտումների բացառումը:

Սույն ընտրանին հանդիսանում է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների կողմից կայացրած որոշումների թվով 16-րդ հատորը, որը վարչական գործերի մասով բաղկացած է երկու բաժիններից (բաժին երրորդ և բաժին չորրորդ): Բաժիններն իրենց հերթին ներառում են վարչական իրավունքին և վարչական դատավարությանը վերաբերող գլուխներ:

Սույն ընտրանիում ներառվել են որոշումներ, որոնք ուղղորդող նշանակություն ունեն, մասնավորապես, այնպիսի հայցերի վերաբերյալ, ինչպիսիք են՝ առանձին տեսակի վարչարարության առանձնահատկությունները, վարչական պատասխանատվությունը, հարկային իրավահարաբերությունները, իրավունքների պետական գրանցումը, տնտեսական մրցակցության պաշտպանությունը, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը, ապացուցումը, վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկումը, վարչական ակտին բնորոշ հատկանիշները, վերաքննիչ դատարանում վարույթը, դատավարության մասնակիցները, գործի վարույթի կարճումը, դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, հայցադիմումի ընդունելիությունը, վարչական ակտի կատարման

կասեցումը, հայցատեսակները, մատնանշումը, դատավարական ժամկետները, միջանկյալ դատական ակտերի բողոքարկումը և երրորդ անձանց վերաբերող իրավական հարցերը և հայցի ապահովումը:

Վճռաբեկ դատարանի որոշումների սույն ընտրանին, ինչպես և նախորդները, նպատակ է հետապնդում ինչպես դատարաններին, այնպես էլ օրենքի կիրառման անհրաժեշտություն ունեցող այլ մարմիններին ու անձանց մատուցել այն խնդրահարույց իրավական կարգավորումների վերաբերյալ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները, որոնք, գործնականում կիրառվելով, առաջացրել են Վճռաբեկ դատարանի միջամտության կարիքն ունեցող իրավական վեճեր:

Վստահ եմ, որ սույն ընտրանու հրապարակումը կնպաստի օրինականության սկզբունքի ամրապնդմանը մեր իրավակիրառ իրականության մեջ, ինչպես նաև կամրապնդի հասարակության վստահությունը դատական իշխանության նկատմամբ:

**ՀՀ վճռաբեկ դատարանի  
վարչական պալատի նախագահ  
Հ. Բեդևյան**

### Աղբյուրների ցանկ թիվ 3

#### Սույն ընտրանիում ներառված վարչական գործերով կայացրած դատական ակտերում կիրառված ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներ

##### (գործն ըստ էության լուծող դատական ակտերում)

1. ՍԴՈ-1000, 29.11.2011 թվական	(25)
2. ՍԴՈ-1038, 18.07.2012 թվական	(5)
3. ՍԴՈ-1052, 16.10.2012 թվական	(27)
4. ՍԴՈ-1062, 18.12.2012 թվական	(27)
5. ՍԴՈ-1115, 24.09.2013 թվական	(2)
6. ՍԴՈ-1137, 04.02.2014 թվական	(20) (24)
7. ՍԴՈ-1139, 18.02.2014 թվական	(13)
8. ՍԴՈ-1142, 02.04.2014 թվական	(25)
9. ՍԴՈ-1148, 18.04.2014 թվական	(6) (25) (30)
10. ՍԴՈ-1249, 22.12.2015 թվական	(27)
11. ՍԴՈ-1254, 09.02.2016 թվական	(27)
12. ՍԴՈ-1268, 26.04.2016 թվական	(27)
13. ՍԴՈ-1270, 03.05.2016 թվական	(30)
14. ՍԴՈ-1394, 08.12.2017 թվական	(27)
15. ՍԴՈ-1395, 19.12.2017 թվական	(23)
16. ՍԴՈ-1424, 10.07.2018 թվական	(5)
17. ՍԴՈ-1575, 02.02.2021 թվական	(27)
18. ՍԴՈ-1669, 22.11.2022 թվական	(26)
19. ՍԴՈ-649, 04.10.2006 թվական	(25)
20. ՍԴՈ-719, 28.11.2007 թվական	(22)
21. ՍԴՈ-723, 15.01.2008 թվական	(25)
22. ՍԴՈ-731, 29.01.2008 թվական	(19)
23. ՍԴՈ-758, 09.09.2008 թվական	(25)
24. ՍԴՈ-881, 04.05.2010 թվական	(19) (25)
25. ՍԴՈ-920, 12.10.2010 թվական	(7)
26. ՍԴՈ-943, 25.02.2011 թվական	(5)
27. ՍԴՈ-967, 07.06.2011 թվական	(19)

##### (վարչական գործերով միջանկյալ դատական ակտերում)

28. ՍԴՈ-1022, 17.04.2012 թվական	(3)
29. ՍԴՈ-1127, 10.12.2013 թվական	(6) (9)
30. ՍԴՈ-1142, 02.04.2014 թվական	(7)
31. ՍԴՈ-1190, 10.02.2015 թվական	(6) (9)
32. ՍԴՈ-1192, 03.03.2015 թվական	(6) (9)
33. ՍԴՈ-1213, 09.06.2015 թվական	(7)
34. ՍԴՈ-1220, 16.06.2015 թվական	(6) (9)
35. ՍԴՈ-1222, 26.06.2015 թվական	(6) (9)
36. ՍԴՈ-1257, 10.03.2016 թվական	(6) (9)
37. ՍԴՈ-1270, 03.05.2016 թվական	(7)
38. ՍԴՈ-1293, 12.07.2016 թվական	(8)
39. ՍԴՈ-1561, 24.11.2020 թվական	(11)

- 
- |                                |     |
|--------------------------------|-----|
| 40. ՍԴՈ-630, 18.04.2006 թվական | (6) |
| 41. ՍԴՈ-719, 28.11.2007 թվական | (6) |
| 42. ՍԴՈ-747, 04.04.2008 թվական | (3) |
| 43. ՍԴՈ-787, 03.02.2009 թվական | (6) |
| 44. ՍԴՈ-918, 28.09.2010 թվական | (9) |
| 45. ՍԴՈ-922, 02.11.2010 թվական | (9) |



## Աղբյուրների ցանկ թիվ 4

### Սույն ընտրանիում ներառված վարչական գործերով կայաց- րած դատական ակտերում կիրառված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներ (գործն ըստ էության լուծող դատական ակտերում)

Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանգատով 28.05.1985 թվականի վճիռ	(22)
Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանգատով 28.05.1985 թվականի վճիռը	(28)
Bëles-ը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության, application no. 47273/99, 12.02.2003 թվականի որոշում	(22)
Bellet-ն ընդդեմ Ֆրանսիայի, application no. 23805/94, 04.12.1995 թվականի որոշում	(22)
Biao v. Denmark թիվ 38590/10 գանգատով 24.05.2016 թվականի վճիռ	(19)
Burdiv v. Russia (No. 2) թիվ 33509/04 գանգատով 15.01.2009 թվականի վճիռ	(2)
Burdiv v. Russia թիվ 59498/00 գանգատով 07.05.2002 թվականի վճիռ	(5)
Cañete de Goni-ն ընդդեմ Իսպանիայի, application no. 55782/00, 15.01. 2003 թվականի որոշում	(22)
De Geouffre de la Pradelle-ն ընդդեմ Ֆրանսիայի, application no. 12964/87, 16.12.1992 թվականի որոշում	(22)
Dumitru Gheorghe v. Romania գործով 12.04.2016 թվականի վճիռ	(28)
Fazli Aslaner v. Turkey, Application no. 36073/04 գործով 04.03.2014 թվականի վճիռ	(15)
Golder-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, application no. 4451/70, 21.02.1975 թվականի որոշում	(22)
Hornsby v. Greece թիվ 18357/91 գանգատով 19.03.1997 թվականի վճիռ	(2)
Khalfaoui v. France (34791/97) գործով 14.12.1999 թվականի վճիռ	(23)
Khalfaoui v. France, application no. 34791/97, 14.03.2000 թվականի որոշում	(22)
Kopecký v. Slovakia թիվ 44912/98 գանգատով 28.09.2004 թվականի վճիռ	(5) (6)
Kreuz v. Poland (28249/95) գործով 19.06.2001 թվականի վճիռ	(23)
Minasyan and Semerjyan v. Armenia թիվ 27651/05 գանգատով 23.06.2009 թվականի վճիռ	(5)
Miragall Escolano and Others v. Spain թիվ 55782/00 գանգատով 25.01.2000 թվականի վճիռ	(27)
Miragall Escolano-ն ընդդեմ Իսպանիայի, Applications nos. 38366/97, 38688/97, 40777/98, 40843/98, 41015/98, 41400/98, 41446/98, 41484/98, 41487/98 և 41509/98, 25.01.2000 թվականի որոշում	(22)
MUGEMANGANGO v. Belgium (310/15) գործով 10.07.2020 թվականի վճիռ	(23)
Nunes Dias-ն ընդդեմ Պորտուգալիայի, application no. 69829/01, 2672/03, 10.04.2003 թվականի որոշում	(22)
Philis-ն ընդդեմ Հունաստանի, application no. 12750/87; 13780/88; 14003/88, 27.08.1991 թվականի որոշում	(22)
Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium թիվ 17849/91 գանգատով 20.11.1995 թվականի վճիռ	(5)

Regner v. the Czech Republic թիվ 35289/11 գանգատով 19.09.2017 թվականի վճիռ	(26)
Stanev-ն ընդդեմ Բուլղարիայի [ՄԳ], application no. 36760/06, 17.01.2012 թվականի որոշում	(22)
Strijak v. Ukraine թիվ 72269/01 գանգատով 08.11.2005 թվականի վճիռ	(27)
Stubbings and others v. The United Kingdom գործով 22.10.1996 թվականի վճիռ	(28)
Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով 13.07.1995 թվականի վճիռ	(23)
Trgo v. Croatia, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով, 11.06.2009 թվականի վճիռ	(12)
Zavodnik v. Slovenia թիվ 53723/13 գանգատով 21.05.2015 թվականի վճիռ	(27)
Zvolský-ն և Zvolská-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության, application no. 46129/99, 12.11.2002 թվականի որոշում	(22)
Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի գործով 22.06.2004 թվականի վճիռ	(17)
Դարիկն ընդդեմ Խորվաթիայի գործով 18.03.2021 վճիռ	(17)
Թամրազյանն ընդդեմ Հայաստանի գործով 19.03.2020 թվականի վճիռ	(12)
Մինայանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով 23.06.2009 թվականի վճիռ	(25)
Յանոշեվիչն ընդդեմ Շվեդիայի գործով 23.07.2002 թվականի վճիռ	(13)
Պրեստոն Կոմպանիա Նավիեռան ՍԱ ընդդեմ Բելգիայի թիվ 17849/91 գանգատով 20.11.1995 թվականի վճիռ	(25)
Ռիսովսկին ընդդեմ Ուկրաինայի գործով 20.10.2011 թվականի վճիռ	(17)

### **(վարչական գործերով միջանկյալ դատական ակտերում)**

Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանգատով 28.05.1985 թվականի վճիռ	(8)
Cherednichenko and Others v. Russia 35082/13 գործով 07.11.2017 թվականի վճիռ	(9)
Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով 12.04.2016 թվականի վճիռ	(6) (9)
Fazli Aslaner v. Turkey, Application no. 36073/04 գործով 04.03.2014 թվականի վճիռ	(9)
Khalfaoui v. France (34791/97) գործով 14.12.1999 թվականի վճիռ	(6) (9)
Kreuz v. Poland (28249/95) գործով 19.06.2001 թվականի վճիռ	(6) (9)
Stubbings and others v. The United Kingdom (22083/93, 22095/93) գործով 22.10.1996 թվականի վճիռ	(9)
Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով 13.07.1995 թվականի վճիռ	(6) (9)
Zubac v. Croatia, թիվ 40160/12 գանգատով 05.04.2018 թվականի վճիռ	(8)

**ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԳ  
ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*2022 թվականի սեպտեմբերի 8*

Էջ  
604-616

1. «Առգո Ֆարմ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության, վարչական գործ թիվ ՎԳ/0439/05/19

*Խնդիր.* «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերի միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը նշված իրավանդումների համատեքստում հարկ է համարում անդրադառնալ ՀՀ կառավարության 20.09.2000 թվականի թիվ 581 որոշման գործողության հարցին:

Էջ  
617-635

*2022 թվականի նոյեմբերի 4*

2. Վայոց ձորի Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանն ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողի, երրորդ անձ՝ «Վայկ Մետալ» ՍՊԸ, վարչական գործ թիվ ՎԳ-3/0037/05/18

*Խնդիր.* արդյո՞ք համայնքի ղեկավարին՝ հողօգտագործման պայմանագիր կնքելուն պարտավորեցնող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումն անհնարին է դառնում համայնքի ավագանու թույլտվության (համաձայնության) բացակայության պայմաններում:

Էջ  
636-647

*2022 թվականի նոյեմբերի 29*

3. Արթուր Խաչատրյանն ընդդեմ ՀՀ կառավարության, երրորդ անձ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան ղեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ, վարչական գործ թիվ ՎԳ/4680/05/19

*Խնդիր.* ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության գնահատման որոշ առանձնահատկություններ:

Էջ  
648-661

*2022 թվականի դեկտեմբերի 13*

4. «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, երրորդ անձինք՝ Արմեն Տոնիկյան, Ավետիք Հարությունյան, վարչական գործ թիվ ՎԳ/12438/05/18

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 4-րդ մասում նշված՝ «նախորդ հերթի գույք» հասկացությունն իր մեջ ներառում է նաև նույն հոդվածի 3-րդ մասում նշված դրամական միջոցները՝ որպես օրենսդրությամբ սահմանված հերթականության մաս:

2. արդյո՞ք «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային նորմերի խախտումը յուրաքանչյուր դեպքում կարող է հանգեցնել վարչական ակտի անվավերության:

Էջ  
662-682

*2023 թվականի հոկտեմբերի 6*

5. Հրայր Պետրոսյանն ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն, վարչական գործ թիվ ՎԳ/10411/05/19

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ հարցադրումներին.

1. ո՞ր իրավական ակտերն են ենթակա կիրառման զինծառայողների շարքական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական

պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակի համար փոխհատուցում տրամադրելու իրավահարաբերությունների նկատմամբ:

2. արդյո՞ք առկա է ժամկետային սահմանափակում զինծառայողների չօգտագործված արձակուրդի փոխհատուցման համար:

**2023 թվականի ապրիլի 12**

**6. Ժորա Հարությունյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչական գործ թիվ ՎԳ/12432/05/17**

Էջ  
683-698

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունների օրինականացումը կարող է կատարվել բացառապես իրավասու մարմնի նախաձեռնությամբ, և ինքնակամ շինությունը կառուցած անձը չի կարող իր նախաձեռնությամբ հայցել տվյալ շինության օրինականացում,

2. արդյո՞ք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի նորմերը կիրառելի են այն դեպքում, երբ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ շինությունը կառուցած անձն իրավասու մարմնից հայցել է տվյալ շինության օրինականացում:

**ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**2022 թվականի հոկտեմբերի 12**

**7. Արտակ Նասիրյանն ընդդեմ ՀՀ պետական եկամտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/4748/05/19**

Էջ  
699-714

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է՝

1. քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու մասին որոշում կայացնելուց հետո մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելու ժամկետների առանձնահատկություններին,

2. Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելու կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու համար մաքսային ներկայացուցիչներին որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ դիտարկելու իրավական հնարավորությանը:

**2022 թվականի նոյեմբերի 4**

**8. Վարուժան Վարդանյանն ընդդեմ Պետական եկամտների կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթի իրականացման վարչության, վարչական գործ թիվ ՎԳ/6972/05/16**

Էջ  
715-725

*Խնդիր.* արդյո՞ք անձը, ում նկատմամբ մաքսանենգությանը հանցակցելու համար հարուցվել է քրեական գործ և վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է արարքի ապաքրեականացման հիմքով, կարող է նույն արարքի համար ենթարկվել վարչական պատասխանատվության:

**2022 թվականի դեկտեմբերի 1**

**9. Ցողիկ Ավետիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչական գործ թիվ ՎԳ/8942/05/19**

Էջ  
726-734

*Խնդիր.* վարչական իրավախախտման գործի քննության ժամկետների առանձնահատկություններ:

**2023 թվականի հունվարի 13**

**10. Վալերի Մեջլումյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչական գործ թիվ ՎԳ/1533/05/20**

Էջ  
735-745

*Խնդիր.* արդյո՞ք շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտելու դեպքում կառուցապատողին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու պարտադիր նախապայման է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու վերաբերյալ շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից կառուցապատողին նախազուշացում տալը:

**2023 թվականի փետրվարի 3**

**11. «Լիվաֆարմ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, վարչական գործ թիվ ՎԴ/5232/05/19**

Էջ  
746-799

*Խնդիր.* արդյո՞ք դեղեր իրացնողը ցանկացած պարագայում պարտավոր է ստուգել իր կողմից ձեռք բերված դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցված լինելու հանգամանքը:

**2023 թվականի ապրիլի 13**

**12. Մանվել Մկրտչյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձինք՝ Դավիթ Խաչատրյան և Կադաստրի կոմիտե, վարչական գործ թիվ ՎԴ/12657/05/18**

Էջ  
760-772

*Խնդիր.* արդյո՞ք տեղական ինքնակառավարման մարմնի որոշմամբ կամ դատական կարգով չճանաչված ձեռքբերման նախապատվության իրավունքը կարող է խոչընդոտել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի աճուրդի միջոցով օտարմանը:

**2023 թվականի հոկտեմբերի 2**

**13. Աշոտ Ազիզյանն ընդդեմ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության, վարչական գործ թիվ ՎԴ/9371/05/18**

Էջ  
773-783

*Խնդիր.* կարող է արդյո՞ք օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տնտեսվարողին հարկային պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ անբողոքարկելի չդարձած վարչական ակտը համարվել թույլատրելի ապացույց այդ միջոցառումների արդյունքում հայտնաբերված վարչական իրավախախտում կատարելու փաստը հաստատված համարելու համար:

**ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**2022 թվականի նոյեմբերի 3**

**14. Սամվել Զգմայանն ընդդեմ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԴ/2978/05/19**

Էջ  
784-794

*Խնդիր.* արդյո՞ք եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջանը որոշելու համար պետք է հիմք ընդունվի անշարժ գույքի նկատմամբ իրականացվող հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահը, թե առաջացող իրավունքների պետական գրանցման պահը:

**2022 թվականի նոյեմբերի 17**

**15. «Անտիպա» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԴ/0654/05/18**

Էջ  
795-811

*Խնդիր.* հարկային օրենսդրության խախտումների համար պատասխանատվության վաղեմության ժամկետի ինստիտուտին առնչվող առանձին հիմնահարցեր:

**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ**

**2022 թվականի նոյեմբերի 3**

**16. «Երևանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ի սնանկության գործով կառավարիչ Գագիկ Բարխուդարյանն ընդդեմ ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԴ/9799/05/18**

Էջ  
812-828

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի կիրառության համատեքստում անդրադառնալ հիփոթեքի առարկայի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով իրավունքների պետական գրանցման առանձնահատկություններին:

**2023 թվականի հոկտեմբերի 2**

**17. Քրիստինե Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԴ/11987/05/18**

Էջ  
829-846

*Խնդիր.* արդյո՞ք կադաստրային քարտեզում առկա սխալների արդյունքում անշարժ գույքերի համադրման փաստը կարող է բացառել անձի սեփականության իրավունքի պետական գրանցման հնարավորությունը:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

*2023 թվականի փետրվարի 1*

18. «Սվետա» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ներկայումս՝ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով), վարչական գործ թիվ ՎԳ/11331/05/18

Էջ  
847-859

*Խնդիր.* ապրանքի փաթեթվածքի մակնշվածքում ներմուծողի վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ և պահպանման ժամկետի, պահպանման պայմանների վերաբերյալ հայերեն տեղեկությունների բացակայությամբ ապրանք իրացնելն արդյո՞ք կարող է որակվել որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում, եթե տնտեսվարողի կողմից սովյալ ապրանքն իրացվել է ոչ ապառողին:

*2023 թվականի փետրվարի 17*

19. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, երրորդ անձ՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, վարչական գործ թիվ ՎԳ/2654/05/14

Էջ  
860-879

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով «գերիշխող դիրքի չարաշահում» իրավախախտման բովանդակությունը:

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՐԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ**

*2023 թվականի հոկտեմբերի 6*

20. «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ն ընդդեմ Երևան համայնքի, վարչական գործ թիվ ՎԳ/1206/05/21

Էջ  
880-895

*Խնդիր.* վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի քննարկման և լուծման առանձնահատկություններ:

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ**

*2022 թվականի հոկտեմբերի 13*

21. «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/2639/05/16

Էջ  
896-912

*Խնդիր.* Ի՞նչ միջոցներով կարող է անձը վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում կատարել իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը և ի՞նչ հետևանք կարող է ունենալ նրա կողմից այդ պարտականությունը չկատարելը:

**ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

*2022 թվականի հոկտեմբերի 4*

22. Հովիկ Շախկյանն ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, վարչական գործ թիվ ՎԳ/8385/05/19

Էջ  
913-922

*Խնդիր.* ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի մեկնաբանման վերաբերյալ, Վարչական դատարանի ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց մասով:

**2023 թվականի սեպտեմբերի 1**

Էջ  
923-934

23. «Լուսավոր Հայաստան» կուսակցությունն ընդդեմ թիվ 23 տարածքային ընտրական հանձնաժողովի, երրորդ անձինք՝ «Մամիկոն Ապանյան» կուսակցությունների դաշինք, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն, «Հայրենիք» կուսակցություն և «Ապրելու երկիր» կուսակցություն, վարչական գործ թիվ ՎԳ/13178/05/21

*Խնդիր.* արդյո՞ք ընտրական վեճերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով վերաքննության կարգով բողոքարկումը կարող է թույլատրելի լինել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում:

**2023 թվականի նոյեմբերի 10**

Էջ  
935-950

24. «Մեկտերս» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարության ու Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, երրորդ անձինք «Արմենիա Թի-Վի» ՓԲԸ, «Մո Թիվի Մեդիա Հոլդինգ» ՓԲԸ, «ԱրմենԱկոր» ՍՊԸ, «ԱՐ հեռուստաընկերություն» ՍՊԸ և «Հուսաբեր» ՓԲԸ, վարչական գործ թիվ ՎԳ/10869/05/19

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անդրադարձել է հետևյալ հարցադրումներին.  
1. արդյո՞ք Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով կայացվող դատական ակտում պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքում ներկայացված հիմքերից յուրաքանչյուրին.  
2. արդյո՞ք դատական կարգով կարող է ճանաչվել վարչական ակտի առոչինչ լինելն այն դեպքում, երբ վարչական ակտի իրավաչափության հիմքում դրված փաստարկները ենթակա են գնահատման հատուկ ընթացակարգով:

**ՊԱՐՏԱՎՈՐԵՑՄԱՆ ՀԱՅՑ**

**2023 թվականի մարտի 16**

Էջ  
951-953

25. Նարեկ Դամբարյանն ընդդեմ ՀՀ Պաշտպանության նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, վարչական գործ թիվ ՎԳ/2061/05/19

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում՝  
1. անդրադառնալ պարտավորեցման հայցի նախապայման հանդիսացող՝ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժող միջամտող վարչական ակտի գնահատման առանձնահատկություններին,  
2. որոշել պարտավորեցման հայցի հիման վրա հարուցված գործերով կիրառելի օրենսդրությունն այն դեպքերում, երբ դատական ակտի կայացման պահին գործող օրենքները և այլ իրավական ակտերը վատթարացնում են անձի իրավական վիճակը՝ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքների և այլ իրավական ակտերի համեմատ:

**2023 թվականի դեկտեմբերի 22**

Էջ  
984-999

26. Փամելյա Հաշեմն ընդդեմ ՀՀ Նախագահի, ՀՀ Վարչապետի և ՀՀ Ոստիկանության, երրորդ անձինք՝ Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողով, ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն, վարչական գործ թիվ ՎԳ/2116/05/20

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելուն պարտավորեցնելու պահանջով պարտավորեցման հայցի շրջանակներում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու առանձնահատկություններին:

**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

**2023 թվականի սեպտեմբերի 22**

Էջ  
1000-1008

1. Էդուարդ Մուքիայանն ընդդեմ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, վարչական գործ թիվ ՎԳ/11415/05/19

*Խնդիր.* ո՞ր դեպքում է գործն ըստ էության լուծող դատական ակտը դատավարության մասնակցին ուղարկելու դատարանի պարտականությունը համարվում պատշաճ կատարված:

**ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐՃՈՒՄ**

*2023 թվականի հունիսի 8*

Էջ  
1009-1023

**28. Արտյոմ և Գոհար Գասպարյանները, Մարինե Գրիգորյանը, Գեղեցիկ Սարգսյանը և Անի Ամիրզոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի ու ՀՀ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, երրորդ անձինք՝ Եպրաքսյա Մահակյան, Կարեն Վարդանյան, վարչական գործ թիվ ՎԳ/0585/05/19**

*Խնդիր.* կարո՞ղ է արդյոք վարչական դատարանը կարճել գործի վարույթը հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի լրացած լինելու պատճառաբանությամբ այն պայմաններում, երբ հայցադիմումի ընդունելիության փուլում, քննարկելով բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը, վերականգնել է վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված երկամսյա ժամկետը:

*2023 թվականի սեպտեմբերի 22*

Էջ  
1024-1032

**29. «ՌԻՈ» ՓԲԸ-ն ընդդեմ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի, երրորդ անձինք՝ «Տիտան Օիլ» ՍՊԸ և «Միվաս» ՍՊԸ, վարչական գործ թիվ ՎԳ/2102/05/20**

*Խնդիր.* արդյո՞ք վիճարկման հայցի քննության շրջանակներում հայցի նյութական օբյեկտ հանդիսացող վարչական ակտի իրավաբանական ուժը կորցնելու փաստը (այդ թվում՝ գործողության ժամկետի ավարտման հետևանքով) հիմք է վեճն ըստ էության սպառված համարելու և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիման վրա գործի վարույթը կարճելու համար:

**ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

*2023 թվականի հունիսի 7*

Էջ  
1033-1047

**30. Հելենա Ֆոն Հարթմանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վարչական գործ թիվ ՎԳ/1870/05/21**

*Խնդիր.* արդյո՞ք վիճարկման հայցերով վիճարկվող վարչական ակտի կատարումը հայցվորի միջնորդության հիման վրա ՀՀ վարչական դատարանի կողմից կասեցնելու վերաբերյալ որոշման վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկումը նշված որոշումն օրինական ուժի մեջ մտնելու արգելք հանդիսանում է:



## ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ

### ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

#### ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

2023 թվականի հոկտեմբերի 6

Էջ

1. Նվեր Պետրոսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության, վարչական գործ թիվ ՎԳ/3551/05/22 1048-1056

*Խնդիր.* ո՞ր դեպքերում է բավարարված համարվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-րդ մասով սահմանված՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկելու պահանջը՝ որպես ՀՀ վարչական դատարան դիմելու նախապայման:

### ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ

2023 թվականի հոկտեմբերի 13

Էջ

2. «ԱԳՐՈՏԵՆ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/3073/05/22 1057-1069

*Խնդիր.* մաքսային մարմնի կողմից ապրանքների ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշումն օժտված է արդյոք վարչական ակտին բնորոշ հատկանիշներով, և ըստ այդմ՝ դրա իրավաչափությունը կարո՞ղ է քննարկվել վիճարկման հայցի շրջանակներում:

### ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի փետրվարի 10

Էջ

3. Հայկ Հարությունյանն ընդդեմ Երևան համայնքի, վարչական գործ թիվ ՎԳ/0012/05/22 1070-1079

*Խնդիր.* արդյո՞ք հայցվորի կողմից հայցադիմումում և/կամ դրան կից՝ շահագրգիռ անձ լինելու փաստի վերաբերյալ հիմնավորումներ և/կամ բավարար ապացույցներ չենրկայացնելը կարող է հայցադիմումի ընդունելիության փուլում գնահատվել որպես դատարան դիմելու իրավական շահի բացակայություն:

### ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՄԵՑՈՒՄ

2023 թվականի հոկտեմբերի 6

Էջ

4. Համբարձում Մովսեսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ «Անտոշեն» ՍՊԸ, վարչական գործ թիվ ՎԳ/6304/05/22 1080-1087

*Խնդիր.* իրավասու է արդյո՞ք ՀՀ վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի հիմքով վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս վարչական ակտի կասեցման անհրաժեշտությունը գնահատել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով չնախատեսված չափանիշների կիրառմամբ:

2023 թվականի դեկտեմբերի 22

Էջ

5. «Վան Բիզնես Կենտրոն» ՓԲԸ-ն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձինք՝ Գագիկ Հովսեփյան և Ալբերտ Հովսեփյան, վարչական գործ թիվ ՎԳ/0257/05/23 1088-1098

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հստակեցնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի հիմքով վարչական ակտի կատարումը կասեցնելու անհրաժեշտությունը գնահատելու չափանիշները:

**ՀԱՅՑԱՏԵՍԱԿՆԵՐ, ՄԱՏՆԱՆՇՈՒՄ ԵՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ**

*2022 թվականի հոկտեմբերի 7*

Էջ

6. Շուշանիկ Վարդանյանը, Թորոս Վարդանյանը և Արարատ Խառատյանն ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, վարչական գործ թիվ ՎԳ/10875/05/18

1099-1123

*Խնդիր.* Ի՞նչ հայցատեսակի շրջանակներում է քննության ենթակա հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջը:

Վճռաբեկ դատարանը անդրադարձել է նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցը ներկայացնելու դատավարական ժամկետների հաշվարկման առանձնահատկություններին:

*2023 թվականի դեկտեմբերի 8*

Էջ

7. Տիգրան Աճեմյանն ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/5005/05/22

1124-1133

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ճիշտ հայցատեսակ մատնանշելու դատարանի պարտականության պատշաճ կատարմանը ներկայացվող պահանջներին՝ դատական ակտի որոշակիության ու կանխատեսելիության համատեքստում:

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ ԵՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ**

*2022 թվականի հոկտեմբերի 4*

Էջ

8. Տիգրան Խաչատրյանն ընդդեմ ՀՀ Պետական եկամտների կոմիտեի, վարչական գործ թիվ ՎԳ/7404/05/21

1134-1142

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման՝ օրենքով սահմանված ժամկետի հաշվարկման առանձնահատկություններին:

*2022 թվականի դեկտեմբերի 16*

Էջ

9. Էմիլ Վարդանյանը և Վարուժան Վարդանյանն ընդդեմ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, երրորդ անձինք՝ Վիգեն Բաղայան և Վահե Բաղայան, վարչական գործ թիվ ՎԳ/10813/05/19

1143-1155

*Խնդիր.* Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի հետաձգված բողոքարկման և վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետի, ինչպես նաև վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված երկամսյա ժամկետի պահպանման հարցերին:

**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԱԿԻՑՆԵՐ**

*2022 թվականի դեկտեմբերի 14*

Էջ

10. «Մոլիբդենի աշխարհ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, վարչական գործ թիվ ՎԳ/13512/05/21

1156-1163

*Խնդիր.* արդյո՞ք ընդունված համարվող վարչական ակտի տրամադրմամբ հայցվորին տրվող իրավունքով հայցվոր և պատասխանող չհանդիսացող անձանց համար առաջացող իրավական հետևանքների դեպքում դատավարությունում ներգրավվում է երրորդ անձ:

**ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

2022 թվականի դեկտեմբերի 27

11. «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանն ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի, երրորդ անձ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, վարչական գործ թիվ ՎԳ/3731/05/20

Էջ  
1164-1175

*Խնդիր.* Վճռարեկ դատարանն անհրաժեշտ է համարում հստակեցնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան հայցի ապահովման միջոցը վերացնելու հիմքերը:

**ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ**  
**ԳՈՐԾՆ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ**  
**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏ-  
ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/0439/05/19  
2022թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/0439/05/19

Նախագահող դատավոր՝

Ա. Առաքելյան

Դատավորներ՝

Կ. Մաթևոսյան

Ա. Բաբայան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող*    Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*գեկուցող*        Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  
                           Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  
                           Ք. ՄԿՈՅԱՆ

2022 թվականի սեպտեմբերի 08-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «Առզո Ֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ ՀՀ առողջապահության նախարարի 15.11.2018 թվականի «Ստրեպտոկոկ էքսպրես տեղային կիրառման դեղաչափավորված ցողաշիթ 0.58մգ/սեղմում+ 0.29մգ/սեղմում+ 0.78մգ/սեղմում, 20մլ (140 սեղմում (70 դեղաչափ)) ապակե շշիկ դեղաչափիչ սարքով» և «Նուրոֆեն էքսպրես դեղապատիճներ փափուկ 200մգ; (8/1x8/) բլիստերում» դեղերի ներմուծումը մերժելու մասին

թիվ 2942-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.02.2021 թվականի որոշման դեմ Նախարարության բերած վճռաբեկ բողոքը

## Պ Ա Ր Զ Ե Ց

### **1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ առողջապահության նախարարի 15.11.2018 թվականի «Ստրեպտոկոկոկոզի և Էբոլայի կիրառման դեղաչափավորված ցողաշիթ 0.58մգ/սեղմում+0.29մգ/սեղմում+0.78մգ/սեղմում, 20մլ (140 սեղմում (70 դեղաչափ))» ապակե շշիկ դեղաչափիչ սարքով» և «Նուրոֆեն էքսպրես դեղապատիճներ փափուկ 200մգ; (8/1x8/) բլիստերում» դեղերի ներմուծումը մերժելու մասին թիվ 2942-Ա հրամանը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Ագրոյան) (այսուհետ՝ Դատարան) 23.12.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.02.2021 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.12.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է բերել Նախարարությունը (ի պաշտոնե ներկայացուցիչ՝ Անահիտ Ավանեսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերը:*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված նորմերը գործում են անմիջականորեն: Բացի այդ, ստորադաս դատարանների արտահայտած դիրքորոշումների պայմաններում ստացվում է, որ նախքան ՀՀ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելը ՀՀ ներմուծվող դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծումը չէր կարող մերժվել՝ անկախ այն հանգամանքից, որ ներմուծվող դեղերը հնարավոր է լինեին ՀՀ-ում չգրանցված, ժամկետանց, գրանցված դեղի համեմատ ունենային պիտանիության ժամկետի անհամապատասխանություն կամ առկա լինեին «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դեղի ներմուծումը մերժելու որևէ այլ հիմք: Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ դեղի ներմուծման մերժումը, եթե առկա են «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված հիմքերը, հնարավորություն է տալիս բացառել ՀՀ տարածք չստուգված, մարդու կյանքի և առողջության համար վտանգավոր, անարդյունավետ և անորակ դեղերի շրջանառությունը:

Վերոնշյալից ելնելով՝ ակնհայտ է, որ «Դեղերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դեղի ներմուծումը մերժելու հիմքերը կիրառելի են նաև մինչև Կառավարության 28.03.2019 թվականի թիվ 202-Ն որոշումն ուժի մեջ մտնելը ծագած իրավահարաբերությունների նկատմամբ, իսկ Վերաքննիչ

դատարանը, չկիրառելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերը, թույլ է տվել նյութական իրավունքի խախտում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.02.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 07.11.2018 թվականի թիվ 15455-18 փորձագիտական եզրակացության համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության 01.11.2018 թվականի թիվ 15455-18 հայտի համաձայն իրականացվել է Ընկերության կողմից ՌԴ-ից ըստ թիվ 7537403 (...) առ 23.10.2018 թվականի հաշիվ-ապրանքագրերի ուղիղ արտադրողից ներմուծման ռեժիմով ՀՀ տարածք ներմուծվող դեղերի նմուշառում, նմուշների նույնականացում, փաստաթղթերի ուսումնասիրություն: Փորձաքննության ընթացքում պարզվել է, որ ներմուծվող դեղերը գրանցված են ՀՀ-ում, բացառությամբ ներքոհիշյալ դեղերի՝

- «Ստրեպսիլս Էքսպրեսս 0.58 մգ/սեղմում+0.29մգ/սեղմում+0.78մգ/սեղմում; 20մլ (140 սեղմում (70 դեղաչափ)) ապակե շշիկ դեղաչափիչ սարքով տեղային կիրառման դեղաչափավորված ցողաշիթ»՝ առկա է անվան անհամապատասխանություն՝ ՀՀ-ում գրանցված դեղի անունն է Strepsils Plus, մինչդեռ ներմուծվող դեղի անունն է Strepsils Express:

- «Նուրոֆեն Էքսպրեսս 200 մգ դեղապատիճներ փափուկ N8»՝ առկա է արտադրողի և գրանցման հավաստագրի իրավատիրոջ անհամապատասխանություն՝ ՀՀ-ում գրանցված դեղի արտադրողն է «Banner Pharmacaps Europe B.V., De Posthoornstraat 7, Tilburg, 5048 AS, the Netherlands» (դեղաձևի արտադրություն, առաջնային փաթեթավորում, երկրորդային փաթեթավորում, սերիայի բաց թողում), իսկ ներմուծվող դեղերի արտադրողներն են՝ «Производитель: Патеон Софтджелс Б.В., Посторнштрат 7, Тилбург, 5048AS, Нидерланды. Первичная упаковка, вторичная упаковка и выпускающий контроль качества: Рекитт Бенкизер Хелскер Интернешнл Лтд, Тейн Роуд, Ноттингем, NG90 20DB, Великобритания»: ՀՀ-ում գրանցված վերոնշյալ դեղերի ԳՀԻ է «Reckitt Benckiser Healthcare International Ltd, Thane Road, Nottingham, NG90 2DB, UK (Рекитт Бенкизер Хелскер Интернешнл Лтд, Тейн Роуд, Ноттингем, NG90 2DB, Великобритания)», մինչդեռ ներմուծվող դեղերի ԳՀԻ է «Рекитт Бенкизер Хелскер (Великобритания) Лимитед, Денсом Лейн, Халл, Ист Йоркшир, ХЮ8 7ДС, Великобритания» (**հատոր 1-ին, գ.թ. 65-66**):

2) Հիմք ընդունելով Նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ՀՀ կառավարության 20.09.2000 թվականի թիվ 581 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգի 34-րդ կետը, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի թիվ 15455-18 փորձագիտական եզրակացությունը և ղեկավարվելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերի պահանջներով՝ ՀՀ առողջապահության նախարարի 15.11.2018 թվականի թիվ 2942-Ա հրամանով մերժվել է Ընկերության կողմից Ռուսաստանի Դաշնությունից

23.10.2018 թվականի թիվ 7537403 հաշիվ-ապրանքագրով «Ստրեպսիլս Էքսպրես տեղային կիրառման դեղաչափավորված ցողաշիթ 0.58 մգ/սեղմում+0.29մգ/սեղմում+0.78մգ/սեղմում; 20մլ (140 սեղմում (դեղաչափ)) ապակե շշիկ դեղաչափիչ սարքով» և «Նուրոֆեն դեղահատեր թաղանթապատ 200 մգ; (8/1x8) բլիստերում» դեղերի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն (հատոր 1-ին, գ.թ. 40-42):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առնվազն մեկ այլ, մասնավորապես՝ թիվ ՎԴ/11133/05/18 վարչական գործով ստորադաս դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերը կիրառվել են հակասող մեկնաբանությամբ և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ նշված նորմերի կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ, կարող են էական նշանակությունը ունենալ նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝ ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և (կամ) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքը» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով:

*Տվյալ դեպքում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական իր առաքելությունն իրացնելու և ըստ այդմ՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերի միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ Վճռաբեկ դատարանը նշված իրավանորմերի համարեքսրում հարկ է համարում անդրադառնալ ՀՀ կառավարության 20.09.2000 թվականի թիվ 581 որոշման գործողության հարցին:*

17.05.2016 թվականին ընդունված և 15.12.2016 թվականին ուժի մեջ մտած «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառության հետ կապված հարաբերությունները՝ բնակչությանն անվտանգ,

արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով և դրանց մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովելու նպատակով, ինչպես նաև սահմանում է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների և դեղերի շրջանառության սուբյեկտների լիազորություններն այդ ոլորտում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառությունը կարգավորվում է նույն օրենքով, այլ օրենքներով և իրավական այլ ակտերով:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, (...):

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գրանցման ենթակա են դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող (ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող), գրանցման հավաստագրի իրավատեր:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է դեղի գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման նպատակով իրականացվող փորձաքննության կարգը՝ սահմանելով նոր, վերարտադրված դեղերի, կենսասնմանակների, դեղերի համակցությունների, հումեռայաթային, կենսաբանական դեղերի, ներառյալ՝ արյունից կամ պլազմայից ստացված, իմունաբանական, ռադիոակտիվ, անասնաբուժական դեղերի (ներառյալ՝ դեղանյութեր պարունակող անասնակերերի), բուսական դեղերի (այդ թվում՝ սպառողական փաթեթներում փաթեթավորված և պիտակավորված դեղաբուսական հումքի), մաշկի, լորձաթաղանթի, մազերի, եղունգների համար նախատեսված հիվանդությունների հարուցիչներին, ինչպես նաև դրանց փոխանցող միջատներին, մակաբույծներին ոչնչացնող հակասեպտիկների և հակապարազիտային դեղերի գրանցման, վերագրանցման և հավաստագրի ժամկետի երկարաձգման համար իրականացվող փորձաքննության եզրակացության ձևը, փորձաքննություն իրականացնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած միջազգային մասնագիտական կազմակերպության փաստաթղթի պահանջներին համապատասխան:

Նույն հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ դեղի գրանցման ժամկետը 5 տարի է, որը հաշվարկվում է դեղի գրանցման վերաբերյալ Լիազոր մարմնի հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից: Գրանցման արդյունքում տրվում է գրանցման հավաստագիր, և գրանցված դեղն ընդգրկվում է գրանցամատյանում: Լիազոր մարմինը հաստատում է գրանցման հավաստագրի ձևը, գրանցամատյանի ձևն ու վարման կարգը: Գրանցման հավաստագրին կցվում են դեղի առաջնային և (կամ) արտաքին փաթեթը, պիտակը, բժշկական կիրառման հայերեն հրահանգը (դեղի ընդհանուր բնութագիրը) և օգտագործման հրահանգը (ներդիր-թերթիկը), որոնք հիմք են հանդիսանում Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառության բոլոր փուլերում դեղերի նույնականացման, որակի հսկողության և (կամ) պաշտոնական տեղեկատվության համար: Լիազոր մարմինն ապահովում է գրանցամատյանի, գրանցման հավաստագրին կցված դեղի առաջնային և (կամ) արտաքին փաթեթի, պիտակի, բժշկական կիրառման հայերեն հրահանգի (դեղի ընդհանուր բնութագրի) և օգտագործման հրահանգի (ներդիր-թերթիկի)



հրապարակայնությունը և տեղադրումը Լիազոր մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածք դեղերը, դեղանյութերը, դեղաբուսական հումքը և հետազոտվող դեղագործական արտադրանքը ներմուծվում (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու միջոցով դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի ներս բերում (այսուհետ՝ ներմուծում)) և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանվում են (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու միջոցով դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի դուրսբերում (այսուհետ՝ արտահանում)) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի համաձայն:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի, հետազոտվող դեղագործական արտադրանքի ներմուծումն ու արտահանումը մերժվում են, եթե՝

1) ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը թերի են կամ ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված, կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով պահանջվող փաստաթղթերից որևէ մեկը բացակայում է, և եթե սահմանված ժամկետում թերությունները չեն վերացվել:

2) ներմուծվող դեղերը Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում չունեն, բացառությամբ նույն օրենքով սահմանված դեպքերի:

3) ներմուծվող դեղերի կամ դեղանյութերի կամ դեղաբուսական հումքի կամ հետազոտվող դեղագործական արտադրանքի (այսուհետ՝ ներմուծվող արտադրանք) որակական ցուցանիշները չեն համապատասխանում նույն օրենքով սահմանված կարգով հաստատված ցանկում ներառված դեղագրքերի և որակի հատկորոշիչների (սպեցիֆիկացիաների) պահանջներին:

4) ներմուծվող արտադրանքը ժամկետանց է:

5) ներմուծվող արտադրանքի պիտանիության մնացորդային ժամկետը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջներին:

6) արտադրանքը և դրան ուղեկցող փաստաթղթերի տվյալները չեն համապատասխանում միմյանց:

7) ներմուծվող դեղի փաթեթավորման գրառումներում բացակայում կամ գրանցանմուշի հետ չեն համապատասխանում դեղը բնութագրող այն ցուցանիշները, որոնք արտացոլված են գրանցամատյանում:

8) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում կամ ներդիր-թերթիկում բացակայում են դրա բաղադրության մեջ օգտագործված և Լիազոր մարմնի սահմանած փաթեթի վրա պարտադիր նշման ենթակա օժանդակ նյութերը, իսկ ներարկման, տեղային օգտագործման և ակնաբուժության մեջ կիրառվող դեղերի համար բացակայում կամ գրանցանմուշի հետ չի համապատասխանում որևէ օժանդակ նյութի նշումը:

9) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում բացակայում կամ գրանցանմուշի հետ չի համապատասխանում դեղի պիտանիության ժամկետի նշումը:

10) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում բացակայում կամ գրանցանմուշի հետ չեն համապատասխանում դեղի պահպանման հատուկ պայմանների նշումները:

11) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում բացակայում է արտադրական սերիայի նշումը.

12) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում հատուկ նախագգուշացումները բացակայում են կամ չեն համապատասխանում գրանցանմուշին.

13) ներմուծվող արտադրանքի փաթեթավորման գրառումներում առաջնային փաթեթը բացելուց հետո դրա օգտագործման թույլատրելի ժամկետը բացակայում է կամ չի համապատասխանում գրանցանմուշին.

14) խախտված է դեղի և (կամ) դեղանյութի տեղափոխման և պահպանման ջերմաստիճանային ռեժիմը («սառցային շղթան»).

15) ներմուծվող դեղի փաթեթավորման գրառումների լեզուն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դեղերի փաթեթավորման համար ընդունված լեզուներից որևէ մեկին:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դեղերի գուգահեռ ներմուծման թույլտվության տրամադրման կարգն ու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 07.04.2018 թվականից՝ 21.03.2018 ՀՕ-180-Ն օրենք) 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի տեսակները և ստորադասությունը, դրանց մշակման, փորձաքննության, ընդունման, հրապարակման, ուժի մեջ մտնելու, գործողության, փոփոխման, գործողության դադարեցման, մեկնաբանման, պարզաբանման ու համակարգման ընդհանուր կարգը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտի գործողությունը դադարում է՝

- 1) իրավական ակտն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում.
- 2) իրավական ակտը վերացվելու դեպքում.
- 3) իրավական ակտն անվավեր ճանաչվելու դեպքում.
- 4) իրավական ակտը չեղյալ ճանաչվելու դեպքում.
- 5) իրավական ակտի գործողությունը կասեցվելու դեպքում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի գործողության դադարեցման հետ միաժամանակ համապատասխանաբար գործողությունը դադարեցված են ճանաչվում նաև այդ իրավական ակտի համաձայն կամ ի կատարումն դրանց ընդունված նորմատիվ իրավական ակտերը կամ իրավական նորմերը, եթե իրավական ակտի գործողությունը դադարեցնելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ: (...)

Իրավական ակտի գործողությունը դադարած ճանաչելու՝ նույն մասով սահմանված հիմքերն իրավաստեղծ մարմինն, բացի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից, չեն ազատում համապատասխան իրավական ակտերի՝ նույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով գործողությունը դադարեցված ճանաչելու պարտականությունից:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի գործողության դադարեցումն իրավական ակտն ընդունած մարմինը կատարում է նույն տեսակի իրավական ակտով:

Այսպես, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ այն դեպքերում, երբ որևէ իրավական ակտի գործողություն դադարեցվում է, դրան համապատասխանաբար դադարեցվում են ի կատարումն դրանց ընդունված նորմատիվ իրավական ակտերը կամ իրավական

նորմերը, բացառությամբ՝ եթե իրավական ակտի գործողությունը դադարեցնելու մասին իրավական ակտով այլ բան է նախատեսված:

Այսինքն, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցվում է այն օրենքի գործողության դադարեցման հետ միասին, որին ի կատարումն ընդունվել էր տվյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը: Այս կանոնից հնարավոր է մեկ բացառություն, այն է՝ երբ օրենքի գործողությունը դադարեցնելու մասին իրավական ակտով նախատեսված է, որ ի կատարումն գործողությունը դադարեցված օրենքի ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը շարունակում է գործել:

21.03.2018 թվականին ընդունված և 07.04.2018 թվականին ուժի մեջ մտած «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտի որևէ դրույթ կարող է կատարվել միայն այդ նորմատիվ իրավական ակտով նախատեսված այլ նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է նորմատիվ իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա նորմատիվ իրավական ակտի այդ դրույթը գործում է համապատասխան նորմատիվ իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Միևնույն ժամանակ, սույն գործով կողմերի միջև առկա իրավահարաբերության ծագման պահին գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի բովանդակությունից ակնհայտ է, որ եթե նորմատիվ իրավական ակտի որևէ դրույթ կարող է կատարվել միայն այդ նորմատիվ իրավական ակտով նախատեսված այլ նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է նորմատիվ իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա նորմատիվ իրավական ակտի այդ դրույթը գործում է համապատասխան նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Այսինքն, այն պարագայում, երբ դեռ չի ընդունվել համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը, ապա օրենքի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտին հղում պարունակող դրույթը կգործի միայն համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանվել են այն դեպքերը, երբ մերժվում են Հայաստանի Հանրապետություն դեղերի ներմուծումը: Հետևաբար, եթե իրականացվում է Հայաստանի Հանրապետություն դեղերի ներմուծում, ապա լիազոր պետական մարմնի կողմից պարզման է ենթակա Հայաստանի Հանրապետություն դեղերի ներմուծման համար «Դեղերի մասին» ՀՀ օրենքով սահմանված մերժման հիմքերի առկայությունը կամ բացակայությունը: Միևնույն ժամանակ, օրենսդիրը «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 10-րդ մասով Հայաստանի Հանրապետության կառավարությանն է վերապահել Հայաստանի Հանրապետության տարածք դեղերի ներմուծման կարգն ու առանձնահատկությունները սահմանելու իրավասությունը: Հետևաբար, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 10-րդ մասը կարող էր գործել ի կատարումն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի ընդունված ՀՀ կառավարության 28.02.2019 թվականի թիվ 202-Ն որոշման ուժի մեջ մտնելու պահից:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 27.10.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ուժը կորցրած ճանաչվելու ժամանակ, այն է՝ 15.12.2016 թվականին, դեռևս գործել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը: Նման պարագայում, 27.10.1998 թվականին ընդունված

և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործողության դադարեցման հետ միաժամանակ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն, համապատասխանաբար գործողությունը դադարեցված է ճանաչվել ՀՀ կառավարության 20.09.2000 թվականի թիվ 581 որոշումը, որն ընդունվել էր ի կատարումն 27.10.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Այսպես, 27.10.1998 թվականին ընդունված և 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ուժը կորցրած ճանաչվելու ժամանակ գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի և սույն գործով կողմերի միջև առկա իրավահարաբերության ծագման պահին գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համալիր վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առկա է եղել իրավիճակ, երբ ՀՀ կառավարության 20.09.2000 թվականի թիվ 581 որոշումը դադարեցրել է իր գործողությունը, իսկ ՀՀ կառավարության 28.02.2019 թվականի թիվ 202-Ն որոշումը դեռևս ուժի մեջ մտած չի եղել, որպիսի պայմաններում 15.12.2016 թվականից մինչև 27.03.2019 թվականը «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 10-րդ մասը չի գործել:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործի փաստերի համաձայն 09.10.2018 թվականին Ընկերությունը Նախարարություն է ներկայացրել ներմուծման թույլտվություն ստանալու մասին հայտ, որով խնդրել է թույլատրել Ռուսաստանի Դաշնությանից ներմուծել 23.10.2018 թվականի թիվ 7537403 հաշիվ-ապրանքագրում նշված դեղերը:

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն իրականացրել է Ընկերության հաշիվ-ապրանքագրերի ուղիղ արտադրողից ներմուծման ռեժիմով ՀՀ տարածք ներմուծվող դեղերի նմուշառում, նմուշների նույնականացում, փաստաթղթերի ուսումնասիրություն: Փորձաքննության ընթացքում պարզվել է, որ ներմուծվող դեղերը գրանցված են ՀՀ-ում, բացառությամբ ներքոհիշյալ դեղերի՝ «Ստրեպսիլս Էքսպրես տեղային կիրառման դեղաչափավորված ցողաշիթ 0.58 մգ/սեղմում+0.29մգ/սեղմում+0.78մգ/սեղմում; 20մլ (140 սեղմում (դեղաչափ)) ապակե շշիկ դեղաչափիչ սարքով» տեղային կիրառման դեղաչափավորված ցողաշիթ՝ առկա է անվան անհամապատասխանություն՝ ՀՀ-ում գրանցված դեղի անունն է Strepsils Plus (Ստրեպսիլս Պլյուս), իսկ «Նուրոֆեն դեղահատեր թաղանթապատ 200 մգ; (8/1x8) բլիստերում» դեղի մասով առկա է դեղի արտադրողի և գրանցման հավաստագրի իրավատիրոջ անհամապատասխանություն:

ՀՀ առողջապահության նախարարի ««Ստրեպսիլս Էքսպրես տեղային կիրառման դեղաչափավորված ցողաշիթ 0.58 մգ/սեղմում+0.29մգ/սեղմում+0.78մգ/սեղմում; 20մլ (140 սեղմում (դեղաչափ)) ապակե շշիկ դեղաչափիչ սարքով», «Նուրոֆեն Էքսպրեսս դեղապատիճներ փափուկ 200 մգ; (8/1x8) բլիստերում» դեղերի ներմուծումը մերժելու մասին» 15.11.2018 թվականի թիվ 2942-Ա հրամանն արձակվել է՝ հիմք ընդունելով Նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, ՀՀ կառավարության 20.09.2000 թվականի թիվ 581 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման կարգի 34-րդ կետը, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական

կենտրոն» ՓԲԸ-ի 07.11.2018 թվականի թիվ 15455-18 փորձագիտական եզրակացությունը:

**Դատարանը** բավարարել է Ընկերության հայցը՝ պատճառաբանելով, որ ««Առգո Ֆարմ» ՍՊ ընկերությանը որոշ դեղերի ներմուծումը մերժելու հիմքում չէր կարող դրվել ենթաօրենսդրական ակտ, այն էլ այն դեպքում, երբ ենթաօրենսդրական ակտի վկայակոչած նորմը սահմանված չէ Օրենքով որպես Հայաստանի Հանրապետություն դեղերի ներմուծումը մերժելու հիմք: Ավելին, անգամ Օրենքում նման նորմ նախատեսված լինելու պարագայում վարչական մարմինը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ և 57-րդ հոդվածների ուժով պարտավոր էր իր միջամտող վարչական ակտում վկայակոչել Օրենքի համապատասխան իրավական հիմքը: Ավելին, անդրադառնալով վիճարկվող Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 15.11.2018թ. թիվ 2942-Ա հրամանի հիմքում դրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 20.09.2000թ. թիվ 581 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման կարգի 34-րդ կետին, Դատարանը փաստում է, որ մինչև 07.04.2018թ. գործած «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության իրավակարգավորման համաձայն՝ իրավական ակտի գործողության դադարեցման հետ միաժամանակ համապատասխանաբար գործողությունը դադարեցված են ճանաչվում նաև այդ իրավական ակտի համաձայն կամ ի կատարումն դրանց ընդունված նորմատիվ իրավական ակտերը կամ իրավական նորմերը, եթե իրավական ակտի գործողությունը դադարեցնելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ, մինչդեռ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 20.09.2000թ. թիվ 581 որոշումն ընդունված է եղել ի կատարումն 27.10.1998թ. ընդունված և 01.01.1999թ. ուժի մեջ մտած «Դեղերի մասին» ՀՀ-259 օրենքի, որն ուժը կորցրել է դեռևս 17.05.2016թ. ընդունված և 15.12.2016թ. ուժի մեջ մտած «Դեղերի մասին» ՀՀ-86-Ն օրենքով, որպիսի պարագայում, Դատարանի համոզմամբ, գործողությունը դադարեցված է համարվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 20.09.2000թ. թիվ 581 որոշումը, քանի որ 17.05.2016թ. ընդունված և 15.12.2016թ. ուժի մեջ մտած «Դեղերի մասին» ՀՀ-86-Ն օրենքով հիշյալ որոշման գործողության վերաբերյալ այլ բան նախատեսված չէ, և նման պայմաններում նշված որոշումը չէր կարող կիրառվել: Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում Դատարանը փաստում է, որ Օրենքով սահմանված՝ Հայաստանի Հանրապետություն դեղերի ներմուծման, դրա հետ կապված գործընթացների, դեղերի ներմուծման հավաստագրի տրամադրման ու մերժման հարցի լուծումը և, ըստ դրա՝ համապատասխանաբար Օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված հիմքերի կիրառելիությունն օրենսդիրն ուղղակիորեն պայմանավորել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետություն դեղերի ներմուծման կարգն ու առանձնահատկությունները սահմանող համապատասխան նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, որը տվյալ դեպքում, ինչպես արդեն վերը նշվեց, ընդունվել է միայն 28.02.2019թ. և ուժի մեջ է մտել 28.03.2019թ. խոսքը ՀՀ կառավարության թիվ 202-Ն որոշման մասին է: Նման պայմաններում, նկատի ունենալով, որ հայցվոր «Առգո Ֆարմ» ՍՊ ընկերության կողմից խնդրո առարկա՝ «Ստրեպտոցին էքսպրես տեղային կիրառման դեղաչափավորված ցողաչիթ 0.58մգ/սեղմում+0.29մգ/սեղմում+0.78մգ/սեղմում, 20մլ (140 սեղմում (70 դեղաչափ))» ապակե շշիկ դեղաչափիչ

սարքով» և «Նուրոֆեն էքսպրես դեղապատիճներ փափուկ 200մգ; (8/1x8/) բլիստերում» դեղերի ներմուծման հավաստագիր ստանալու վերաբերյալ թիվ 15455-18 հայտը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարին է ներկայացվել դեռևս 12.11.2018թ., նաև հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 28.02.2019թ. «Հայաստանի Հանրապետության տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու, ներմուծման կամ արտահանման նպատակով փորձաքննության իրականացման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի N 581 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 202-Ն որոշումն ուժի մեջ է մտել 28.03.2019թ., Դատարանը գտնում է, որ Օրենքով սահմանված՝ Հայաստանի Հանրապետություն դեղերի ներմուծման, դրանց հետ կապված գործընթացների, դեղերի ներմուծման հավաստագրի տրամադրման ու մերժման հարցի լուծումը և, ըստ դրա՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի N 581 որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով սահմանված հիմքը քննարկվող դեպքում կիրառելի չեն եղել հայցվոր «Առգո ֆարմ» ՍՊ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող վերոնշյալ դեղերի համար ներմուծման համար հավաստագիր տրամադրելու կամ ներմուծումը մերժելու իրավահարաբերությունների նկատմամբ»:

**Վերաքննիչ դատարանը,** մերժելով Նախարարության վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի հետևություններն այն պատճառաբանությամբ, որ «(...) օրենսդիրն ամեն դեպքում դեղերի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու կամ չլինելու խնդրի պարզումը /այդ թվում՝ փորձաքննության միջոցով/ և դրա հիմքով ներմուծման արգելելու կամ թույլատրելու հարցերը վերապահում է ՀՀ կառավարությանը՝ վերջինիս հանձնարարելով ընդունել համապատասխան կարգ: Իսկ սույն գործով իրավահարաբերության ծագման պահին՝ 2018 թվականի նոյեմբեր ամսին, նմանօրինակ կարգ ՀՀ կառավարության կողմից սահմանված դեռևս չի եղել»:

*Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով արորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.*

Այսպիսով, և՛ Դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը հայտնել են միևնույն դիրքորոշումն առ այն, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու կամ չլինելու խնդրի պարզումը (այդ թվում՝ փորձաքննության միջոցով) և դրա հիմքով ներմուծումն արգելելու կամ թույլատրելու հարցերը վերապահվել է ՀՀ կառավարությանը, իսկ սույն գործով իրավահարաբերության ծագման պահին՝ 2018 թվականի նոյեմբեր ամսին, նմանօրինակ կարգ ՀՀ կառավարության կողմից սահմանված դեռևս չի եղել: Հետևաբար՝ ՀՀ կառավարության 20.09.2000 թվականի թիվ 581 որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով սահմանված հիմքը քննարկվող դեպքում կիրառելի չի եղել Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող վերոնշյալ դեղերի համար ներմուծման համար հավաստագիր տրամադրելու կամ ներմուծումը մերժելու իրավահարաբերությունների նկատմամբ:

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը, սույն գործի շրջանակում ձեռնամուխ լինելով գնահատելու վիճարկվող հրամանի իրավաչափությունը, ստուգելով դրա համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, արձանագրում է, որ ինչպես վերը նշվեց, վարչական մարմինը դեղերի ներմուծումը մերժել է բացառապես փորձագետի եզրակացությամբ կատարված այն եզրահանգման հիմքով, որ այդ դեղերը գրանցված չեն Հայաստանի Հանրապետությունում: Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 27.10.1998 թվականին ընդունված և 15.12.2016 թվականի ուժը կորցրած «Դեղերի մասին» ՀՕ-259 օրենքին ի կատարումն ընդունված ՀՀ կառավարության 20.09.2000 թվականի թիվ 581 որոշման գործողությունը դադարել է 15.12.2016 թվականին՝ «Դեղերի մասին» ՀՕ-259 օրենքի ուժը կորցրած ճանաչվելու և «Դեղերի մասին» ՀՕ-86-Ն օրենքի օրինական ուժի մեջ մտնելու հետ միասին:

Տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանն արդարացիորեն նշել է, որ օրենսդիրը դեղերի՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու կամ չլինելու խնդրի պարզումը (այդ թվում՝ փորձաքննության միջոցով) և դրա հիմքով ներմուծումն արգելելու կամ թույլատրելու հարցերը վերապահում է ՀՀ կառավարությանը՝ վերջինիս հանձնարարելով ընդունել համապատասխան կարգ: Մինևս այն ժամանակ, իրավահարաբերության ծագման պահին՝ 2018 թվականի նոյեմբեր ամսին, նմանօրինակ կարգ ՀՀ կառավարության կողմից սահմանված դեռևս չի եղել:

Ինչպես Վճռաբեկ դատարանն արդեն արձանագրել է, առկա է եղել իրավիճակ, երբ ՀՀ կառավարության 20.09.2000 թվականի թիվ 581 որոշումը դադարեցրել է իր գործողությունը, իսկ ՀՀ կառավարության 28.02.2019 թվականի թիվ 202-Ն որոշումը դեռևս ուժի մեջ մտած չի եղել, որպիսի պայմաններում 15.12.2016 թվականից մինչև 27.03.2019 թվականը «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 10-րդ մասը չի գործել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ սույն գործի փաստական հանգամանքների համանման իրավիճակներում «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 10-րդ մասը չի գործում, իսկ դեղերի, դեղանյութերի, հետազոտվող դեղագործական արտադրանքի և դեղաբուսական հումքի ներմուծումը և արտահանումը կարգավորվում են բացառապես «Դեղերի մասին» ՀՀ օրենքում ամրագրված և ուժի մեջ մտած իրավանորմերի միջոցով:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հիմնավոր են Դատարանի և Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն առ այն, որ ՀՀ առողջապահության նախարարի 15.11.2018 թվականի թիվ 2942-Ա հրամանն ընդունվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի և մինչև 07.04.2018 թվականը գործած «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության խախտմամբ, հետևաբար՝ ՀՀ առողջապահության նախարարի 15.11.2018 թվականի թիվ 2942-Ա հրամանը ոչ իրավաչափ վարչական ակտ է և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ենթակա է անվավեր ճանաչման:

Անփոփոխվելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Դատարանը, հայցը բավարարելով, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ

թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ բողոքաբերը վճարել է վճռաբեկ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, իսկ վճռաբեկ բողոքը մերժվում է, և գործով առկա չեն գործի քննության հետ կապված այլ ծախսեր, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ, 171-րդ հոդվածներով և 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.02.2021 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ



## 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Վարչական գործ թիվ **ՎԴՅ3/0037/05/18**  
**2022թ.**

ՎԴՅ3/0037/05/18  
Կ. Մաթևոսյան  
Ք. Մկոյան  
Ա. Առաքելյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*զեկուցող* Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

2022 թվականի նոյեմբերի 4-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 31.07.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վայոց ձորի Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանի ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Վայոց ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողի, երրորդ անձ՝ «Վայկ Մետալ» ՍՊԸ՝ Հարկադիր կատարման ծառայության Վայոց Ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողի 13.12.2017 թվականի «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշումն ամբողջությամբ անվավեր ճանաչելու, կատարողական վարույթն ավարտելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողի 13.12.2017 թվականի «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշումը, պարտավորեցնել

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանն ավարտել կատարողական վարույթը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 22.02.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի: Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը պարտավորեցվել է ավարտել թիվ 03870523 կատարողական վարույթը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով, անվավեր է ճանաչվել Հարկադիր կատարման ծառայության 15.01.2018 թվականի թիվ Ե-182 պատասխանը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.07.2020 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 22.02.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Արամ Օսիկյան):

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել ՀՀ Վայոց ձորի մարզի Գլխավոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանը և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (ներկայացուցիչ՝ Մուսաննա Դավթյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը, 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, որոնք պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՎԴ3/0406/02/17 քաղաքացիական գործով 16.06.2017 թվականին կայացված, օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլխավոր համայնքի ղեկավարը պարտավոր է չխոչընդոտել ՀՀ Վայոց ձորի մարզի Գլխավոր համայնքի տարածքում գտնվող բազմամետաղային հանքավայրի՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների կատարմանը և պարտավոր է ուսումնասիրությունների իրականացման նպատակով համապատասխան պայմանագիր կնքել, սակայն ՀՀ Վայոց ձորի մարզի Գլխավոր համայնքի ղեկավարը հրաժարվել է վճռի պահանջները կատարել՝ այն պատճառաբանությամբ, որ համայնքի ավագանին 16.12.2017 թվականի թիվ 42 որոշմամբ մերժել է համայնքի ղեկավարի՝ համայնքի բազմամետաղային հանքավայրի 625 հա մակերեսով տարածքը օգտագործման տրամադրելու վերաբերյալ առաջարկը:

Բացի այդ, քանի որ Ընկերությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն դիմում է ներկայացրել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով որոշում կայացնել Ընկերության իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գործի վարույթը ենթակա էր կասեցման: Մինչդեռ Վերաքննիչ դատարանը նշել է, որ այդ գործի քննությունը որևէ կերպ անհնարին չի դարձնում սույն վարչական գործի քննությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել թիվ ՎԴՅ/0037/05/18 վարչական գործով Վերաքննիչ դատարանի 31.07.2020 թվականի որոշումը և հայցն ամբողջությամբ մերժել կամ գործն ուղարկել Դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

### **2.1 Վճարել բողոքի վերաբերյալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից ներկայացված պատասխանի հիմնավորումները.**

Վճարել բողոքը հիմնավոր է, քանի որ տվյալ դեպքում, բացակայում է որևէ փաստական կամ իրավական հիմք, որը կվկայեր Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից օրենքի խախտման, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով որոշում ընդունելու մասին:

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլորի համար և ենթակա է կատարման հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա: Ընդ որում, թե՛ հարկադիր կատարողը, թե՛ կատարողական վարչության մասնակիցներն իրավասու չեն միմյանց ներկայացնել այնպիսի պահանջներ, որոնք նախատեսված չեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա տրված կատարողական թերթում:

Հարկադիր կատարողը գործել է ամբողջությամբ օրենքի շրջանակներում՝ կատարողական թերթին համապատասխան:

### **2.2 Վճարել բողոքի վերաբերյալ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ղեկավարի կողմից ներկայացված պատասխանի հիմնավորումները.**

Վճարել բողոքն անհիմն է, քանի որ համայնքի սեփականությունը տնօրինվում է համայնքի ավագանու կողմից: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ հողային օրենսգրքով և այլ իրավական ակտերով առանց համայնքի ավագանու, իսկ սույն պարագայում՝ նաև առանց համայնքի բնակիչների անմիջական մասնակցության, համայնքի ղեկավարին ոչ ոք իրավասու չէ պարտավորեցնել համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի վերաբերյալ որևէ գործողություն կատարել: Համայնքի ղեկավարն սպառել է օրենքով իրեն վերապահված լիազորությունները՝ 14.12.2017 թվականի թիվ 95 որոշմամբ համայնքի ավագանուն ներկայացնելով հողօգտագործման պայմանագիր կնքելու համար համայնքի բազմամետաղային հանքավայրի 625հա մակերեսով տարածքն Ընկերության օգտագործմանը տրամադրելու մասին առաջարկություն, որը համայնքի ավագանու՝ 16.12.2017 թվականի թիվ 42 որոշմամբ մերժվել է:

### **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԱՎԴՅ/0406/02/17 քաղաքացիական գործով 16.06.2017 թվականի վճռով վճռել է. «Պատասխանող ՀՀ Վայոց Ձերի մարզի Գլաձոր համայնքի ղեկավարին պարտավորեցնել չխոչընդոտելու «Վայկ Մետալ» ՍՊԸ կողմից 14.09.2016թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, ի դեմս նախարար Լևոն Յոլյանի և «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ Պ-005 ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմանը և «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի հետ կնքել համաձայնագիր /հողօգտագործման պայմանագիր/՝ նշված ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնքի բազմամետաղային հանքավայրի 625 հա կազմող

տարածքում ռեգիոնալ բնույթի երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար՝ ըստ 14.09.2016 թվականի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունից տրված թիվ ԵՌԻՀ-29/005 ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնության»։ Նշված վճռի հիման վրա ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04.12.2017 թվականին տրվել է թիվ ԱՎԴ-3/0406/02/17 կատարողական թերթը, որում որպես պահանջատեր է նշվել «Վայկ Մետալ» ՍՊԸ-ն, իսկ որպես պարտապան՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլխավոր համայնքի ղեկավարը **(հատոր 2-րդ, գ.թ. 64):**

2) Հարկադիր կատարման ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողը ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 04.12.2017 թվականին տրված թիվ ԱՎԴ-3/0406/02/17 կատարողական թերթի հիման վրա 11.12.2017 թվականին կայացրել է «Կատարողական վարույթ հարուցելու մասին» որոշում **(հատոր 1-ին, գ.թ. 13):**

3) Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարման ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողը 13.12.2017 թվականին ընդունել է «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշում, որով որոշել է՝ պարտավորեցնել պարտապան ՀՀ Վայոց ձորի մարզի Գլխավոր համայնքի ղեկավարին չխոչընդոտել «Վայկ Մետալ» ՍՊԸ կողմից 14.09.2016 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, ի դեմս նախարար Լևոն Յոլյանի, և «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ Պ-005 ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև պարտավորեցնել՝ մինչև 18.12.2017 թվականը «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի հետ կնքել համաձայնագիր /հողօգտագործման պայմանագիր/՝ նշված ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլխավոր համայնքի բազմամետաղային հանքավայրի 625 հա կազմող տարածքում ռեգիոնալ բնույթի երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար՝ ըստ 14.09.2016 թվականի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունից տրված թիվ ԵՌԻՀ-29/005 ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնության **(հատոր 1-ին, գ.թ. 14):**

4) ՀՀ Վայոց ձորի մարզի Գլխավոր համայնքի ղեկավարը 14.12.2017 թվականի թիվ 95 որոշմամբ՝ որոշել է հողօգտագործման պայմանագիր կնքելու համար Գլխավոր համայնքի ավագանուն առաջարկել համայնքի բազմամետաղային հանքավայրի 625 հա մակերեսով տարածքն օգտագործման տրամադրել «Վայկ Մետալ» ՍՊԸ-ին **(հատոր 1-ին, գ.թ. 15):**

5) ՀՀ Վայոց ձորի մարզի Գլխավոր համայնքի ավագանին 16.12.2017 թվականի թիվ 42 որոշմամբ մերժել է Գլխավոր համայնքի ղեկավարի առաջարկը **(հատոր 1-ին, գ.թ. 94):**

6) 27.12.2017 թվականին ներկայացված դիմումով թիվ ԱՎԴ-3/0406/02/17 քաղաքացիական գործով պատասխանող ՀՀ Վայոց ձորի մարզի Գլխավոր համայնքի ղեկավար Ա. Մովսիսյանը խնդրել է պարզաբանել ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 16.06.2017 թվականի թիվ ԱՎԴ-3/0406/02/17 վճիռը **(հիմք՝ Դատավերքս դատական տեղեկատվական համակարգ):**

7) ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 29.12.2017 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը քննության առնելու մասին» որոշմամբ ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր

իրավասության դատարանի 16.06.2017 թվականի վճիռը պարզաբանելու մասին դիմումը մերժվել է (**հիմք՝ Դատալեքս դատական տեղեկատվական համակարգ**):

8) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԱՎԳ-3/0406/02/17 քաղաքացիական գործով 02.05.2018 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է: ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի՝ «Վճիռը պարզաբանելու դիմումը քննության առնելու մասին» 29.12.2017 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ՝ օրինական ուժի մեջ (**հիմք՝ Դատալեքս դատական տեղեկատվական համակարգ**):

9) ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ղեկավար Ա. Մովսիսյանի ներկայացուցիչ Նազելի Վարդանյանը 26.12.2017 թվականին ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ներկայացրել գրություն, որով խնդրել է վերացնել Վայոց ձորի մարզային բաժնի հարկադիր կատարողի 13.12.2017 թվականի «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշումը և, ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ավարտել կատարողական վարույթը, քանի որ Գլաձոր համայնքի ղեկավարը սպառել է ՀՀ օրենսդրությամբ օժտած իրավասությունների սահմաններում, «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի հետ հոգօգտագործման պայմանագիր կնքելու հնարավորությունը (**հատոր 1-ին, գ.թ. 102-106**):

10) Ծառայության Վայոց ձորի մարզային բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարը, ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ղեկավար Ա. Մովսիսյանի ներկայացուցիչ Նազելի Վարդանյանի 26.12.2017 թվականի գրության, 15.01.2018 թվականի գրությամբ հայտնել է, որ կատարողական վարույթը նշված հոդվածի համաձայն ավարտման ենթակա չէ, քանի որ բացակայում են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված հիմքերը (**հատոր 1-ին, գ.թ. 28**):

#### **4.Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի խնաստով, քանի որ խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պարտադիրության սկզբունքը, ինչպես նաև խախտվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչի արդյունքում խաթարվել է արդարադատության բուն էությունը:

*Սույն գործով վճռի առանցքում հետևյալ իրավական հարցադրումն է. արդյո՞ք համայնքի ղեկավարին՝ հոգօգտագործման պայմանագիր կնքելուն պարտավորեցնող օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումն անհնարին է դառնում համայնքի ավագանու թույլտվության (համաձայնության) բացակայության պայմաններում:*

Օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտերի պարտադիրության սկզբունքի արդյունավետ իրացումն իրավունքի գերակայության ցուցիչներից է և արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրիչը:

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) կողմից ընդունված

«Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը», ի թիվս այնի, Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում իրավունքի գերակայության գնահատման չափանիշ է դիտարկում իրավական որոշակիությունը, որի դրսևորումներից է *res judicata* սկզբունքը: Այս սկզբունքի պահանջն է, ի թիվս այնի, վերջնական դատական ակտերի կատարման ապահովումը: Դատական ակտը չկատարելու արդյունքում իմաստագրվում է դատական պաշտպանության իրավունքը և իրավունքի գերակայությունը («Իրավունքի գերակայության հսկիչ ցանկ», 107-րդ կետ):

Վենետիկի հանձնաժողովի «Իրավունքի գերակայության մասին զեկույցի» (ընդունված 2011 թվականին մարտի 25-26) (CDL-AD(2011)003rev) 46-րդ կետի համաձայն՝ իրավական որոշակիությունը պահանջում է հարգել *res judicata* սկզբունքը, ըստ որի՝ ի թիվս այնի, ներպետական դատարանների վերջնական դատական ակտերը չպետք է կասկածի տակ դրվեն:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Դատական ակտերի կատարման մասին» 09.09.2003 թվականի Rec(2003)17 հանձնարարականում ամրագրված է. «Մասնակից պետություններն ունեն պարտականություն երաշխավորելու վերջնական և պարտադիր դատական ակտերի կատարումը»: Հանձնարարականի «Կատարման ընթացակարգերը» բաժնի 1.6 կետի համաձայն՝ որպեսզի կատարման ընթացակարգը լինի հնարավորինս արդյունավետ, դատական ակտերը պետք է կատարվեն կիրառելի օրենքներին ու դատական ակտերին համապատասխան: Ցանկացած օրենք պետք է լինի բավարար չափով մանրամասն՝ ապահովելու համար գործընթացի որոշակիությունն ու թափանցիկությունը, կանխատեսելիությունն ու արդյունավետությունը:

Նշված հանձնարարականի արդյունավետ կատարումն ապահովող ուղեցույցի (ընդունված Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից) համաձայն՝ իրավունքի գերակայության ապահովման և դատարանների նկատմամբ վստահության ապահովումը պահանջում է դատական ակտերի կատարման արդյունավետ և արդար գործընթաց:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) հետևողականորեն ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքնության իրավունքի կարևոր բաղադրիչն է անձի օգտին կայացված օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումն ապահովելու իրավունքը: Այս առնչությամբ, մասնավորապես, Եվրոպական դատարանը գտել է. «Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքնության իրավունքը երևակայական կլիներ, եթե պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական ակտերը մնային անկատար՝ ի վնաս կողմի: Դժվար կլիներ պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները, չպաշտպաներ դատական ակտերի կատարումը. եթե 6-րդ հոդվածը վերաբերեր բացառապես դատարանի մատչելիության իրավունքին ու դատավարությանը, ապա կառաջանային իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակներ: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված դատական ակտի կատարում պետք է դիտվի որպես արդար դատաքնության անբաժանելի մաս՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով» (տե՛ս, *Hornsby v. Greece* թիվ 18357/91 գանգատով Եվրոպական դատարանի 19.03.1997 թվականի վճիռը, կետ 40):

Եվրոպական դատարանի հետևողականորեն ձևավորված պրակտիկայում ընդհանուր մոտեցումը հանգում է նրան, որ դատական ակտը չկատարելը սահմանափակում է դատարանի մատչելիության իրավունքը և անձին գրկում արդյունավետ դատական պաշտպանությունից:

Եվրոպական դատարանը նաև իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ պետության դեմ վեճը շահած հայցվորից չպետք է պահանջվի նախաձեռնել իր օգտին կայացված դատական ակտի կատարման առանձին վարույթ: Նման դեպքերում պատասխանող պետական մարմինը պետք է պատշաճ կերպով ծանուցվի դատական ակտի մասին, որից հետո պետք է նախաձեռնի դատական ակտը կատարելու համար անհրաժեշտ բոլոր միջոցները կամ փոխանցի մեկ այլ պետական մարմնի, որը պատասխանատու է տվյալ դատական ակտը կատարելու համար (*Կենս, Burdov v. Russia (No. 2) թիվ 33509/04 գանգաքով Եվրոպական դատարանի 15.01.2009 թվականի վճիռը, կետ 68*):

Ըստ Եվրոպական դատարանի՝ դատական ակտերի կատարման ներպետական ընթացակարգի բարդությունը կամ պետության բյուջետային համակարգը չի կարող պետությանն ազատել յուրաքանչյուրի՝ ողջամիտ ժամկետում պարտադիր և կատարման ենթակա դատական ակտի կատարման իրավունքը երաշխավորելու պարտականությունից: Մասնակից պետությունների խնդիրն է իրենց իրավական համակարգերը կազմակերպել այնպես, որ կարողանան կատարել իրենց այս պարտականությունը (*Կենս, նույն վճիռը, կետ 70*):

Վերը նշված իրավական փաստաթղթերին ու դիրքորոշումներին համահունչ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածն ամրագրում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պարտադիրության սկզբունքը: Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Նշված նորմերն առաջին հերթին ամրագրում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշը: Այնուհետև՝ հստակեցնում են այն սուբյեկտների շրջանակը, որոնց վրա տարածվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի գործողությունը. այդ սուբյեկտները տվյալ դատական ակտի հասցեատերերն են: Միաժամանակ՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարումն ապահովող իրավական երաշխիք օրենսդիրը նախատեսում է պատասխանատվություն դատական ակտը չկատարելու համար: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված պահանջը դրա հասցեատերերի կողմից չկատարելը կամ այդ պահանջին չհամապատասխանող վարքագիծը ոչ իրավաչափ վարքագիծ է, որն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն: Այսպիսով, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշի դրսևորումը նախևառաջ դրա հասցեատերերի՝ դատական ակտը կատարելու պարտականությունն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԱԴԳ/0913/02/13 քաղաքացիական գործով իր 25.12.2015 թվականի որոշմամբ անդրադարձել է դատական ակտի պարտադիրության հատկանիշին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն ամրագրել է. իրավական որոշակիության սկզբունքը, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը: Պարտադիրության

հատկանիշն (...) ենթադրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում:

Վճռաբեկ դատարանը սուբյեկտների նկատմամբ դատական ակտերի պարտադիրության աստիճանի առումով ընդգծել է, որ այն առաջնային նշանակություն ունի վիճելի հարաբերության կողմերի համար, քանի որ դատական ակտով նախ և առաջ վեճի կողմերի համար են սահմանվում որոշակի գործողություններ կատարելու կամ կատարումից ձեռնպահ մնալու պարտադիր պահանջներ (*տե՛ս, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժինն ընդդեմ Անուշ Բապիրյանի թիվ ՎԴՆ/0076/05/12 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պարտադիրության հատկանիշի դրսևորումը չի սահմանափակվում միայն դրա հասցեատերերի կողմից դատական ակտի եզրափակիչ մասի պահանջը կատարելու պարտականությամբ. օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշն ունի նաև այլ դատավարական դրսևորումներ:

Այսպես, ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռների պարտադիր իրավաբանական ուժի դրսևորում է, ի թիվս այնի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի նորմի կարգավորումը: Վերջինս ամրագրում է. Նախկինում քննված քաղաքացիական կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը միևնույն կողմերի մասնակցությամբ սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն: Այս նորմի բովանդակությունից բխում է, որ դատավարության մասնակիցներն այլևս չեն կարող կասկածի տակ դնել, վիճարկել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստերը. նրանց կողմից այդ փաստերը չեն կարող վիճարկվել իրենց մասնակցությամբ այլ դատական գործերի շրջանակներում, և ունեն նախադատելի նշանակություն այլ դատական գործերի համար: Այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստերն այլևս անվիճելի փաստեր են, և դատական ակտի պարտադիրությունը, ի թիվս այնի, դատավարության կողմերից պահանջում է միմյանց հետ իրավահարաբերություններում այսուհետ անվերապահորեն հիմք ընդունել դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտով հաստատված փաստերը:

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշի դատավարական դրսևորում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված նորմը, ըստ որի՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարումը երաշխավորելու՝ պետության պարտականության, ինչպես նաև դատական ակտերի պարտադիրության և կատարելիության սկզբունքների իրացմանն է ուղղված դատական ակտերի հարկադիր կատարման կառուցակարգը՝ սահմանված «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով:



ՀՀ սահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի ՍԴՌ-1115 որոշմամբ արձանագրել է. «Դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը վերջին հաշվով խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարման ապահովումն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունված է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառույթներ իրականացնող մարմնի ակտ, հակառակ պարագայում կիմաստագրվվեն ոչ միայն պետական, այդ թվում՝ դատական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, այլև ընդհանրապես արդարադատության և դատական գործառույթներ իրականացնող այլ մարմինների համակարգի գոյությունը: Հետևաբար՝ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը հանդիսանում է դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր և ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ «իր գործի հրապարակային քննության» որպես դատավարական գործընթացի փուլ»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է հարկադիր կատարման ենթակա դատական ակտերի շրջանակը, որը, ի թիվս այնի, ներառում է քաղաքացիական գործերով դատական ակտերը, բացառությամբ իրավաբանական անձին կամ քաղաքացուն սնանկ ճանաչելու և մրցությանին վարույթ սկսելու մասին գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատական ակտերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով նախատեսված գործերով դատական ակտերի:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է և կատարողական մակագրության թերթը (...):

Այսպիսով, դատական ակտի հարկադիր կատարումը կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթի շրջանակներում իրականացվող գործընթաց է, որն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը սահմանում է կատարողական վարույթն ավարտելու հիմքերն ու իրավական հետևանքները: Նշված օրենքի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե «...2) անհնարին է պարզել պարտապանի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

2.1) անհնարին է պարզել կատարողական թերթով նախատեսված պահանջի կատարման համար անհրաժեշտ՝ պարտապանի գույքի գտնվելու վայրը, իսկ հարկադիր կատարողի և (կամ) պահանջատիրոջ ձեռնարկած՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն:

3) պարտապանը չունի գույք կամ եկամուտներ, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել և հարկադիր կատարողի՝ սույն օրենքի 40 հոդվածի երրորդ

մասով սահմանված կարգով իրականացված հետախուզումը և (կամ) պահանջատիրոջ կողմից պարտապանի գույքը փնտրելու ուղղությամբ ձեռնարկված՝ օրենքով թույլատրելի բոլոր միջոցները եղել են ապարդյուն.

4) պարտապանի գույքը բավարար չէ պահանջատիրոջ (պահանջատերերի) պահանջները բավարարելու համար.

...

8) ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է դարձել դատական ակտի կատարումը...»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կատարողական վարույթն ավարտելը և կատարողական թերթը պահանջատիրոջը վերադարձնելն արգելք չեն կատարողական թերթը կրկին ներկայացնելու դեպքում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու համար: Նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի 1-ին մասի 2-9-րդ կետերով նախատեսված հիմքերի վերացման, (...) դեպքերում հարկադիր կատարողը պահանջատիրոջ դիմումի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ որոշում է կայացնում ավարտված կատարողական վարույթը վերսկսելու մասին»:

**Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ գույքային բնույթի կատարողական վարույթն ավարտելու հիմք է դատական ակտի կատարման անհնարինությունը.** նշված հիմքի վերացման դեպքում կատարողական վարույթը վերսկսվում է կամ պահանջատիրոջ դիմումի հիման վրա կամ հարկադիր կատարողի նախաձեռնությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հաշվի առնելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի արդյունավետ կատարման կարևորությունը՝ որպես իրավունքի գերակայության ցուցիչ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի վերը նշված դրույթն իրավակիրառ պրակտիկայում պետք է կիրառվի հնարավորինս նեղ մեկնաբանությամբ՝ բացառելով հարկադիր կատարման ենթակա դատական ակտի հիմնավորվածությունը կասկածի տակ դնելու հնարավորությունը: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի կատարման անհնարինությունը գնահատելիս պետք է հարկադիր կատարման ենթակա դատական ակտի եզրափակիչ մասի բովանդակությունը դիտարկել պատճառաբանական մասի բովանդակության հետ համակցության մեջ՝ հաշվի առնելով պատճառաբանական մասում նշված՝ հայցի բավարարման իրավական և փաստական հիմքերը:

ՀՀ Սահմանադրության 184-րդ հոդվածը սահմանում է. «1. Համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք:

2. Համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է:

3. Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը»:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը սահմանում է. «համայնքի ավագանին (...) համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին (...), որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները,

նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: (...):»

Նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 18-րդ կետերի համաձայն՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը, առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը հողօգտագործման բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունը՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն են համայնքի ղեկավարի կողմից, համայնքի ավագանու որոշմամբ, ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ հողօգտագործման պայմանագրի կնքումը:

ՀՀ հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «1. Հետախուզական, գեոդեզիական, երկրաբանական նկարահանման և այլ հետազոտություններ կատարող կազմակերպություններն ու հիմնարկներն այդ աշխատանքներն իրականացնում են բոլոր հողերում՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից՝ հետախուզական աշխատանքներ կատարելու մասին պետական մարմինների սահմանած կարգով ընդունված որոշումների ու հողամասի սեփականատիրոջ, օգտագործողի հետ կնքած պայմանագրերի հիման վրա: Հետախուզական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ հողամասերը չեն վերցվում:»:

Այսպիսով, համայնքի ավագանին՝ որպես տեղական ինքնակառավարման մարմին, համայնքի անունից և նրա փոխարեն իրականացնում է սեփականատիրոջ իրավագործությունը: Օրենսդիրը, նպատակ ունենալով ստեղծել զսպումների ու հակակշիռների կառուցակարգ, այդ իրավագործությունն իրականացնելու գործընթացում համապատասխան լիազորությունները բաշխել է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջև՝ համայնքի ղեկավարին իրավասություն վերապահելով համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի օգտագործման պայմանագիր կնքել համայնքի ավագանու համաձայնության առկայության պայմաններում:

Սույն վեճի առանցքում գտնվող վերն առանձնացված իրավական հարցադրումը դիտարկելով օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտերի պարտադիրության և կատարելիության սկզբունքի, ինչպես նաև իրավունքի գերակայության ու օրինականության սկզբունքի հարաբերակցության համատեքստում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը բավարար հիմք է համայնքի ղեկավարի համար՝ այդ դատական ակտով իր վրա դրված պարտականությունը կատարելու համար: Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարը համապատասխան

հողօգտագործման պայմանագիրը կնքում է ի կատարումն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի, որով վերջինս պարտավորեցվել է կնքել տվյալ պայմանագիրը, համայնքի ղեկավարի կողմից տվյալ գործողությունը կատարելու իրավական հիմքն այլևս համայնքի ավագանու որոշումը (համաձայնությունը) չէ, այլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը: Ավագանու որոշման (համաձայնության) բացակայության պայմաններում համայնքի ղեկավարի կողմից համապատասխան պայմանագրի կնքումը չի կարող դիտարկվել որպես վերջինիս ոչ իրավաչափ վարքագիծ՝ հաշվի առնելով, որ համայնքի ղեկավարն այդ դեպքում գործում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության սկզբունքին համապատասխան:

Հաշվի առնելով, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը հանդիսանում է անձի արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը, և այդ ակտի արդյունավետ կատարմամբ ապահովվում է իրավունքի գերակայությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի կատարման գործընթացում համայնքի ղեկավարից այլևս չի պահանջվում պահպանել օրենքով սահմանված այն ընթացակարգը, որը կիրառելի է վեճի և/կամ դատական ակտի բացակայության պայմաններում:

**Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ համայնքի ավագանու՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն օգտագործման տրամադրելու անհամաձայնությունն անհնարին չի դարձնում համայնքի ղեկավարի կողմից, ի կատարումն օրինական ուժի մեջ մտած դատական ակտի, հողօգտագործման պայմանագրի կնքումը:**

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը թիվ ԱՎԴ3/0406/02/17 քաղաքացիական գործով 16.06.2017 թվականի վճռով (այսուհետ՝ Վճիռ) վճռել է. «Պատասխանող ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ղեկավարին պարտավորեցնել չխոչընդոտելու «Վայկ Մետալ» ՍՊԸ կողմից 14.09.2016թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, ի դեմս նախարար Լևոն Յոլյանի և «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ Պ-005 ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարմանը և «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի հետ կնքել համաձայնագիր /հողօգտագործման պայմանագիր/՝ նշված ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված՝ ՀՀ Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնքի բազմամետաղային հանքավայրի 625 հա կազմող տարածքում ռեզիդնալ բնույթի երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար՝ ըստ 14.09.2016 թվականի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունից տրված թիվ ԵՈՒՀ-29/005 ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնության»: Նշված վճռի հիման վրա ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04.12.2017 թվականին տրվել է թիվ ԱՎԴ3/0406/02/17 կատարողական թերթը, որում որպես պահանջատեր է նշվել «Վայկ Մետալ» ՍՊԸ-ն, իսկ որպես պարտապան՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձորի համայնքի ղեկավարը (հատոր 2-րդ, գ.թ. 64):

Օրինական ուժի մեջ մտած Վճիռը ներկայացվել է հարկադիր կատարման:

**Սույն գործով հայցվորը ներկայացրել է «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողություններից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշումն անվավեր ճանաչելու և կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման**

մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով ավարտելուն պարտավորեցնելու պահանջ՝ այն հիմնավորմամբ, որ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ավագանին իր 16.12.2017 թվականի թիվ 42 որոշմամբ մերժել է համայնքի ղեկավարի առաջարկը՝ Գլաձոր համայնքի սեփականությունը հանդիսացող 625 հա մակերեսով տարածքը «ՎԱՅԿ ՄԵՏԱԼ» ՍՊԸ-ին օգտագործման տրամադրելու վերաբերյալ, որպիսի պայմաններում անհնարին է կատարել թիվ ԱՎԴՅ/0406/02/17 քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած Վճռի՝ նշված հողամասի առնչությամբ հողօգտագործման պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու վերաբերյալ պահանջը:

Դատարանը 22.02.2019 թվականի վճռով կատարողական վարույթն ավարտելուն պարտավորեցնելու պահանջի մասով հայցը բավարարել է: Վկայակոչելով ՀՀ հողային օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածի նորմերը՝ Դատարանը պատճառաբանել է. «...համայնքի ղեկավարն իր լիազորությունները՝ համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի, հողամասերի օտարման կամ օգտագործման տրամադրելու հետ կապված, ինչպես նաև ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց հետ հողօգտագործման պայմանագիր կնքելու հետ կապված, իրավասու է կատարելու բացառապես ... համայնքի ավագանու համապատասխան որոշման առկայությամբ: Մասնավորապես՝ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը երկրաբանական հետազոտություններ իրականացնելու նպատակով տրամադրելը պետք է իրականացվի որևէ կարգավիճակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը համապատասխան թույլտվություն ունեցող անձին կամ կազմակերպությանը տրամադրելու միջոցով, իսկ այդպիսի՝ հողօգտագործման տրամադրելու իրավասություն համայնքում վերապահված է համայնքի ավագանուն, այլ ոչ թե համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարն այդ բնագավառում միայն իրավասու է գործել համայնքի ավագանու որոշման կամ թույլտվության հիման վրա:

(...) Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնքի ղեկավարը, ըստ էության, իրականացրել է համապատասխան գործողություններ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 04.12.2017թ. տրված թիվ ԱՎԴՅ/0406/02/17 կատարողական թերթի պահանջի կատարմանը՝ 14.12.2017թ. թիվ 95 որոշմամբ որոշելով հողօգտագործման պայմանագիր կնքելու համար Գլաձոր համայնքի ավագանուն առաջարկել համայնքի բազմամետաղային հանքավայրի 625 հա մակերեսով տարածքը օգտագործման տրամադրել «Վայկ Մետալ» ՍՊԸ-ին, որպիսի գործողությամբ, ըստ էության, սպառել է նշված կատարողական թերթի պահանջի կատարմանն ուղղված իր լիազորությունների շրջանակներում գտնվող գործառույթների իրականացումը, միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնքի ավագանին 16.12.2017թ. թիվ 42 որոշմամբ որոշել է մերժել համայնքի ղեկավարի վերը նշված առաջարկը, իսկ համայնքի ղեկավարն արդեն իսկ կատարմամբ սպառել է օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում գտնվող գործողությունները, դատարանը գտնում է, որ սույն դեպքում առկա է կատարողական վարույթն ավարտելու «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված հիմքը՝ ոչ գույքային բնույթի կատարողական վարույթով

կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է դարձել դատական ակտի կատարումը»: ՀՀ վարչական դատարանն արձանագրել է նաև, որ «թեև թիվ ԱՎԴ-3/0406/02/17 քաղաքացիական գործով դատական ակտն այս պայմաններում փաստացի մնում է անկատար, այնուամենայնիվ, պարտապան պաշտոնատար անձի վրա չի կարող դրվել այնպիսի գործողությունների կատարում, որպիսի իրավասություն օրենսդրությամբ վերջինիս վերապահված չեն, իսկ վերջինս էլ իրացրել է օրենսդրությամբ վերապահված բոլոր միջոցները՝ դատական ակտի կատարումն ապահովելու նպատակով»:

Վերաքննիչ դատարանն իր 31.07.2020 թվականի որոշմամբ անփոփոխ թողնելով Դատարանի 22.02.2019 թվականի վճիռը և վերահաստատելով վճռում ամրագրված դիրքորոշումները, գտել է. «...համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասը երկրաբանական հետազոտություններ իրականացնելու նպատակով տրամադրելը պետք է իրականացվի որևէ կարգավիճակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը համապատասխան թույլտվություն ունեցող անձին կամ կազմակերպությանը տրամադրելու միջոցով, իսկ այդպիսի՝ հողօգտագործման տրամադրելու իրավասություն համայնքում վերապահված է համայնքի ավագանուն, այլ ոչ թե համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարն այդ բնագավառում միայն իրավասու է գործել համայնքի ավագանու որոշման կամ թույլտվության հիման վրա:

(...) անկախ դատական ակտի առկայությունից Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնքի ղեկավարը չի կարող կատարել գործողություններ որոնց համար լիազորված չէ ՀՀ Սահմանադրությամբ և/կամ օրենքով: Ուստի ինչպես իրավացիորեն արձանագրել է ՀՀ վարչական դատարանը առկա է կատարողական վարույթն ավարտելու «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված հիմքը՝ ոչ գույքային բնույթի կատարողական վարույթով կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է դարձել դատական ակտի կատարումը»:

Ի ամփոփումն Դատարանի և Վերաքննիչ դատարանի դիրքորոշումների՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ըստ այդ դիրքորոշումների՝ օրենքով սահմանված կարգին համապատասխան համայնքի ղեկավարն իրավասու է Վճռով նախատեսված հողօգտագործման պայմանագիրը կնքել միայն համայնքի ավագանու համապատասխան որոշման կամ թույլտվության առկայության պայմաններում, որպիսի որոշման կամ թույլտվության բացակայությունն անհնարին է դարձնում Վճռի կատարումը: Այսինքն՝ Դատարանն ու Վերաքննիչ դատարանը քննարկման առարկա են դարձրել այն իրավական հարցադրումը, թե արդյո՞ք օրենսդրությունը լիազորել է համայնքի ղեկավարին խնդրո առարկա պայմանագիրը կնքել առանց համայնքի ավագանու թույլտվության կամ համաձայնության առկայության և եզրահանգելով, որ նման լիազորություն վերապահված չէ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ավագանու 16.12.2017 թվականի թիվ 42 որոշումը դիտարկել են որպես Վճռի կատարման անհնարինության հիմք:

Սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելով վերը շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի ավագանու 16.12.2017 թվականի թիվ 42 որոշման առկայությունն անհնարին չի դարձնում Վճռի կատարումը, և օրինական ուժի մեջ մտած Վճռի պարտադիրության սկզբունքի իրացման համատեքստում համայնքի ղեկավարն իրավասու է կնքել խնդրո առարկա պայմանագիրը՝ համայնքի ավագանու թույլտվության (համաձայնության) բացակայության պայմաններում: Հետևաբար,

սույն դեպքում առկա չէ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված հիմքը, և ըստ այդմ՝ Ծառայությունը ոչ իրավաչափորեն է պարտավորեցվել այդ հիմքով ավարտել կատարողական վարույթը, ինչի արդյունքում օրինական ուժի մեջ մտած դատական ակտը մնացել է անկատար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոք բերած անձի համար չի երաշխավորվել արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ և իրավունքի գերակայության ցուցիչ հանդիսացող իր օգտին կայացված օրինական ուժի մեջ մտած դատական ակտի արդյունավետ կատարումն ապահովելու իրավունքը, ինչը հանգեցրել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության սկզբունքի խախտման և արդյունքում՝ արդարադատության բուն էության խաթարման:

*Նշված պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի վերաբերյալ հայցվորի կողմից ներկայացված պարասխանում բերված փաստարկները և հաստատվում են վճռաբեկ բողոքի վերաբերյալ Ծառայության կողմից ներկայացված պարասխանում բերված փաստարկները:*

Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման վերաբերյալ փաստարկներին, ապա վերջիններս, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե՝  
1) անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով որոշում, վճիռ կամ դատավճիռ կայացնելը.

2) առկա է անհաղթահարելի ուժ, որը խոչընդոտում է տվյալ գործով հետագա վարույթի իրականացմանը.

3) դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձի մահից հետո վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն.

4) դատավարության մասնակից հանդիսացող ֆիզիկական անձը ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

5) դատարանը «Մահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածով սահմանված կարգով դիմել է սահմանադրական դատարան:

2. Դատարանն իրավունք ունի կասեցնելու գործի վարույթը, եթե՝  
1) նշանակել է փորձաքննություն.

2) պատասխանող կամ երրորդ անձ հանդիսացող ֆիզիկական անձը հետախուզման մեջ է.

3) դատավարության մասնակից հանդիսացող իրավաբանական անձը վերակազմակերպվում է...»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածն առանձնացնում է գործի վարույթը կասեցնելու երկու խումբ հիմք.

-պարտադիր հիմքեր, որոնց առկայության դեպքում դատարանին հայեցողություն վերապահված չէ գործի վարույթը կասեցնելու կամ չկասեցնելու հարցում. գործի վարույթը կասեցնելու պարտադիր հիմքերը գործի հետագա ընթացքն արգելափակող, տվյալ գործով հետագա վարույթի իրականացումն անհնարին

դարձնող հանգամանքներն են, որոնց առկայության դեպքում դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը,

- ֆակուլտատիվ հիմքեր, որոնց առկայության դեպքում դատարանի հայեցողությանն է թողնված որոշելու՝ արդյոք տվյալ հանգամանքը խոչընդոտում է գործի քննության հետագա ընթացքին, թե՛ ոչ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի նորմում խոսքը վերաբերում է ոչ թե տվյալ գործի՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործի հետ զուտ փոխկապվածությամբ, առնչակցությանը, այլ հստակ սահմանվում է այդ փոխկապվածության, առնչակցության հատկանիշը, այն է՝ այնպիսի առնչակցություն, փոխկապվածություն, որն անհնարին է դարձնում, բացառում է տվյալ գործի հետագա ընթացքը:

Նման փոխկապվածության, առնչակցության բովանդակությունը բացահայտված է, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական գործով թիվ ՎԴ/0100/05/17 որոշման մեջ, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ գործի վարույթը կասեցնելու պարտադիր հիմքը ենթադրում է դատարանի կողմից քննվող գործի և սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործի այնպիսի փոխկապվածություն, որի առկայության պայմաններում դատարանի վարույթում գտնվող գործի քննությունը հնարավոր չէ մինչև վիճելի իրավահարաբերության ծավալից դուրս գտնվող, սակայն տվյալ գործի համար պարտադիր նշանակություն ունեցող հարցի կարգավորումը սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ Օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով գործի վարույթի կասեցումը կարող է արդար դատաքննության հիմնարար իրավունքի բաղադրիչ հանդիսացող՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի տեսանկյունից իրավաչափ համարվել միայն այն դեպքում, երբ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործի շրջանակներում կայացվելիք վերջնական դատական ակտով պետք է հաստատվեն այնպիսի իրավաբանական փաստեր, կամ պետք է հանգուցալուծվեն այնպիսի իրավական հարցեր, առանց որոնց դատարանի վարույթում գտնվող գործի լուծումը հնարավոր չէ, իսկ այդ հարցերի քննարկումը և դրանց վերաբերյալ գնահատականներ տալը դուրս է տվյալ գործով վարչական դատարանի իրավասության շրջանակներից (*տե՛ս, Ժաննա Միրզոյանն ընդդեմ ՀՀ Կուրայքի մարզի Չորաղբյուր համայնքի թիվ ՎԴ/0100/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.10.2018 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդված 1-ին մասի 1-ին կետով սահմանադրական հիմքով գործի վարույթը կասեցնելու համար անհրաժեշտ է հետևյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը.

- սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի առկայություն,

- դատարանի կողմից քննվող գործի և սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործի այնպիսի փոխկապվածություն, որի առկայության պայմաններում դատարանի վարույթում գտնվող գործի քննությունը հնարավոր չէ մինչև վիճելի իրավահարաբերության ծավալից դուրս գտնվող, սակայն տվյալ գործի համար պարտադիր



նշանակություն ունեցող հարցի կարգավորումը սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործի շրջանակներում:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտման վերաբերյալ բողոքաբերի փաստարկների առնչությամբ գտել է. «(...) տվյալ դեպքում բողոքաբերի վկայակոչված փաստն առ այն, որ 24.07.2018 թվականին «ՎԱՅԿ ՄԵՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ դիմում է ներկայացվել ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավության դատարան՝ խնդրելով որոշում կայացնել «ՎԱՅԿ ՄԵՏԱԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ այդ գործի քննությունը որևէ կերպ անհնարին չի դարձնում սույն վարչական գործի քննությունը: Վերաքննիչ դատարանն արձանագրում է Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնքի ղեկավարի լիազորությունների մասով օրենսդրական կարգավորումները հստակ են և դրանց մեկնաբանման առումով բողոքաբերի վկայակոչած քրեական գործը որևէ ազդեցություն սույն գործի քննության նկատմամբ ունենալ չի կարող»:

Վճռաբեկ դատարանը, հիմնավոր համարելով Վերաքննիչ դատարանի վերը նշված եզրահանգումը, գտնում է, որ սույն դեպքում առկա չեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով գործի վարույթը կասեցնելու համար անհրաժեշտ պայմանները: Սույն դեպքում առկա չէ նույնիսկ վերը նշված առաջին անհրաժեշտ պայմանը՝ քննվող քրեական գործի առկայությունը. բողոքաբերը որպես գործի վարույթը կասեցնելու փաստական հիմք վկայակոչել է ոչ թե քննվող գործի առկայության, այլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն դիմում ներկայացնելու փաստը, որով խնդրել է «որոշում կայացնել «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին»:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի խախտում առկա չէ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի առաջին հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝

անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառարանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար (...):

Հաշվի առնելով, որ բողոք բերած անձի կողմից վճարվել են վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարները՝ համապատասխանաբար 10.000 ՀՀ դրամի և 20.000 ՀՀ դրամի չափով, և վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվոր Վայոց ձորի Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանից հոգուտ բողոք բերած անձ «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի բռնագանձման է ենթակա 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, և 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար, իսկ ՀՀ վարչական դատարանում դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 31.07.2020 թվականի որոշումը և այն փոփոխել. ՀՀ վարչական դատարանի 22.02.2019 թվականի վճիռը՝ հայցը բավարարելու մասով, բեկանել և այդ մասով հայցը մերժել:

2. Հայցվոր Վայոց ձորի Գլաձոր համայնքի ղեկավար Արմեն Մովսիսյանից հոգուտ բողոք բերած անձ «Վայկ Մետալ» ՍՊԸ-ի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի

գումար, 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար: ՀՀ վարչական դատարանում դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

### 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Վարչական գործ թիվ ՎԴ/4680/05/19  
2022թ.

ՎԴ/4680/05/19  
Ա. Սարգսյան  
Ա. Բարսյան  
Կ. Բաղդասարյան  
Հ. Բեդկյան  
Ա. Պողոսյան

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական  
պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*գեկուցող* Ք. ՄԿՈՅԱՆ  
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

2022 թվականի նոյեմբերի 29-ին  
գրավոր ընթացակարգով քննելով Հայաստանի Հանրապետության կառա-  
վարության (այսուհետ՝ Կառավարություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վար-  
չական դատարանի 15.02.2021 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ  
դիմումի Արթուր Խաչատրյանի ընդդեմ Կառավարության, երրորդ անձ «Ակադե-  
միկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փոր-  
ձագիտական կենտրոն» ՓԲԸ՝ Կառավարության 28.02.2019 թվականի «Դեղերի  
շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունները  
և մասնագիտական դիտարկումները կազմակերպող և իրականացնող մարմին  
նշանակելու մասին» թիվ 150-Ն որոշումը մասնակի՝ 1-ին կետի մասով, անվավեր  
ճանաչելու պահանջի մասին,

#### Պ Ա Ր Զ Ե Ց

##### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Արթուր Խաչատրյանը պահանջել է մասնակի՝ 1-ին կե-  
տի մասով, անվավեր ճանաչել Կառավարության 28.02.2019 թվականի «Դեղերի  
շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունները  
և մասնագիտական դիտարկումները կազմակերպող և իրականացնող մարմին  
նշանակելու մասին» թիվ 150-Ն որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Ռ. Ազրոյան, դատավորներ՝ Մ. Պետրոսյան, Ս. Հովակիմյան, Ա. Ծատուրյան, Մ. Համբարձումյան) (այսուհետ՝ Դատարան) 13.04.2020 թվականի որոշմամբ դիմումը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան, դատավորներ՝ Ա. Բաբայան, Կ. Բաղդասարյան, Հ. Բեդկյան, Ա. Պողոսյան) (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.02.2021 թվականի որոշմամբ Կառավարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.04.2020 թվականի որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կառավարությունը (ներկայացուցիչ Անահիտ Ավանեսյան) :

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածը:*

Դատարանը, որոշումը կայացնելիս, կիրառել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 11.06.2018 թվականի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրության 6-րդ կետը, որը չպետք է կիրառեր:

Չնայած այն հանգամանքին, որ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի վերաբերյալ հիշատակում չկա նախարարության կանոնադրության մեջ, այդուհանդերձ, այն նախարարության ենթակայության ներքո գործող ընկերություն է, որի ընդհանուր ժողովի որոշումները կայացվում են առողջապահության նախարարի կողմից: Այսինքն՝ նշված ընկերությունը նախարարության կազմում գործող կազմակերպություն է: «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով փորձաքննությունների կազմակերպումն ու իրականացումը վերապահված է առողջապահության նախարարությանը, ինչը, սակայն, դեռևս չի նշանակում, որ առողջապահության նախարարությունն այն պետք է իրականացնի իր կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով:

Դատարանն անտեսել է ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրության 11-րդ կետի 9-րդ ենթակետը և 18-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր առջև դրված խնդիրներն ու նպատակները իրականացնում է իր ենթակայության ներքո գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և բաժնետիրական ընկերությունների միջոցով:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ կառավարության վիճարկվող որոշումն ընդունվել է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի խախտմամբ, ինչն էլ իր հերթին բացառում է այն հանգամանքի գնահատման անհրաժեշտությունը, թե ինչ կազմակերպաիրավական կարգավիճակ ունի «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն: Սակայն, նույնիսկ կառավարության վիճարկվող որոշումն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի խախտմամբ ընդունված լինելու պայմաններում Դատարանը եկել է սխալ եզրահանգման, և դատական ակտով սխալ մեկնաբանություններ է տվել ՀՀ առողջապահության նախարարության կառուցվածքում ընդգրկված միավորների մասին,

ինչի հիման վրա եզրահանգել է, որ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն ընդգրկված չէ ՀՀ առողջապահության նախարարության կառուցվածքում, ուստի նախարարությունն իր որոշ գործառույթներ չի կարող իրականացնել այդ ընկերության միջոցով: Վերաքննիչ դատարանը, չանդրադատնալով նշված հարցին, վերահաստատել է Դատարանի այդ դիրքորոշումը՝ այսպիսով խախտելով ՀՀ վարչական դատարավության օրենսգրքի 124-րդ հոդվածը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.02.2021 թվականի որոշումը և փոփոխել»:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունի հետևյալ փաստը.

1) Կառավարության 28.02.2019 թվականի «Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունները և մասնագիտական դիտարկումները կազմակերպող և իրականացնող մարմին նշանակելու մասին» թիվ 150-Ն որոշման 1-ին մասի համաձայն՝ հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Կառավարությունը որոշել է սահմանել, որ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննություններն ու մասնագիտական դիտարկումները կազմակերպում և իրականացնում է ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով (**հատոր 1-ին, գ.թ. 34**):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության գնահատման առանձնահատկությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միատեսակ դատական պրակտիկա ապահովելու համար:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության գնահատման որոշ առանձնահատկություններին.*

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

ՀՀ Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: (...)

ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կառավարությունն իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) նորմատիվ իրավական ակտ՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտ, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար. (...)

3) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ է:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ (...) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ունենում է նախաբան, որում նշվում է օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը, որը ներառում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության, որպես իրավական պետության, կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է **մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը**: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով (*տե՛ս*, «ՎՏԲ-Հայաստան քանկ» ՓԲԸ-ի

ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):

Զարգացնելով վերը նշված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սահմանադիրը հստակ ընդգծել է օրինականության սկզբունքի՝ իրավական պետության անկյունաքարերից մեկը լինելու հանգամանքը, որն ուղղակիորեն պահանջում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունը հիմնված լինի ՀՀ Սահմանադրության և օրենքների վրա: Ըստ այդմ, վերջիններիս լիազորությունները պետք է սահմանվեն ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, իսկ նրանց գործունեությունը և դրանց արդյունքում կայացված ակտերը, կամ կատարված գործողությունը և դրսևորված անգործությունը պետք է համապատասխանեն օրենքներին: Հետևաբար առանցքային նշանակություն ունի այն, որ որպես ընդհանուր կանոն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները պետք է ուղղակիորեն վերապահվեն (սահմանվեն) ՀՀ Սահմանադրությամբ և/կամ օրենքով, իսկ այլ ենթաօրենսդրական ակտերով դրանք կարող են սահմանվել միայն առանձին՝ օրենքով նախատեսված դեպքերում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց նորմաստեղծ գործունեությունը, որն ունի բացառապես ենթաօրենսդրական բնույթ, սահմանափակված է օրենքի գերակայությունն ապահովելու պարտադիր նախապայմանով:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը կարող են ընդունվել միայն ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կողմից, այլ կերպ ասած, ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասության հասցեատերերի ցանկը սպառիչ է. այդ մարմիններն են՝ **Կառավարությունը** (ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդվածի 3-րդ մաս), **կառավարության անդամները** (ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդվածի 4-րդ մաս), ինքնավար մարմինները (ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածի 3-րդ մաս), համայնքի ավագանին (ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 3-րդ մաս), Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ՀՀ Սահմանադրության 194-րդ հոդվածի 2-րդ մաս), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդվածի 5-րդ մաս), Կենտրոնական բանկը (ՀՀ Սահմանադրության 200-րդ հոդվածի 5-րդ մաս) և Բարձրագույն դատական խորհուրդը (ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ընդ որում, վերոհիշյալ մարմինները կարող են ենթաօրենսդրական ակտեր ընդունել միայն օրենքով հստակ նախատեսված դեպքերում, իսկ լիազորող նորմը պետք է համապատասխանի որոշակիության սկզբունքին, այսինքն, պետք է լինի բավականաչափ հստակ՝ օրենսդրի կամքի բովանդակությունն ու սահմանները հասկանալու համար:

Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ վերը նշված մարմիններն իրավասու են ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր միայն ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքով լիազորվելու դեպքում, ընդ որում, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի նախաբանում պետք է հստակորեն նշվի օրենսդրական իրավական ակտի հոդվածը կամ մասը, որը ներառում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիազորող նորմեր: Այս պահանջը ինքնանպատակ չէ, քանի որ միայն նման պայմաններում է հնարավոր պարզել, թե արդյոք գործադիր իշխանության մարմինն



օգտվել է իրեն օրենքով վերապահված լիազորությունից և գործել է օրենքով իրեն տրված լիազորությունների շրջանակում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ պահանջի պահպանումն ունի պարտադիր բնույթ, քանի որ այն ունի կարևոր նշանակություն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի իրավաչափության գնահատման տեսանկյունից:

Այսպես, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառության հետ կապված հարաբերությունները՝ բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով և դրանց մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովելու նպատակով, ինչպես նաև սահմանում է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների և դեղերի շրջանառության սուբյեկտների լիազորություններն այդ ոլորտում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունը դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում, մասնավորապես 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեղերի շրջանառության պետական կարգավորման նպատակով՝

**1) մշակում և իրականացնում է դեղերի շրջանառության ոլորտում պետական քաղաքականությունը.**

2) ընդունում է դեղերի շրջանառության ոլորտը կարգավորող իրավական ակտեր.

3) ապահովում է դեղերի ֆիզիկական և տնտեսական մատչելիությունը.

4) տրամադրում է բնակչությանը հիմնական դեղերով ապահովելու համար պետական երաշխիքներ.

5) իրականացնում է միջազգային համագործակցություն.

6) իրականացնում է սույն օրենքով և այլ օրենքներով իրեն վերապահված գործառնություններ:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունը դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում, մասնավորապես 1-ին մասի համաձայն՝ **առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ Լիազոր մարմին)** դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում իրականացնում է՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը դեղերի շրջանառության ոլորտում.

2) իր իրավասության շրջանակներում դեղերի շրջանառության կարգավորում.

3) դեղերի շրջանառության ոլորտի՝ օրենքով նախատեսված գործունեության տեսակների լիցենզավորում.

4) դեղերի պետական գրանցում.

**5) դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպում և իրականացում.**

6) դեղի գրանցման, պատշաճ արտադրական գործունեության, պատշաճ բաշխման գործունեության հավաստագրի տրամադրման համար և սույն օրենքով նախատեսված մասնագիտական այլ դիտարկումների ապահովում.

7) դեղերի գրանցամատյանի վարման ապահովում.

8) դեղերի արդյունավետ կիրառման և դեղերի կողմնակի ազդեցությունների մասնագիտական դիտարկման և համապատասխան երաշխավորությունների մշակման ապահովում.

9) միջազգային համագործակցություն.

10) միջգերատեսչական համագործակցություն.

11) դեղային պետական քաղաքականության ծրագրերի մշակում և դրանց իրականացման դիտարկում.

12) նույն օրենքով և այլ օրենքներով իրեն վերապահված գործառույթներ:

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները սահմանվում են նույն օրենքի հավելվածում: Նույն օրենքի հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ առողջապահության նախարարությունը մշակում և իրականացնում է առողջապահության, բժշկական օգնության որակի և արդյունավետության բարձրացման, առողջապահական համակարգի արդյունավետ գործունեության նպատակով առողջապահական կազմակերպություններին կազմակերպամեթոդական օգնության ապահովման, առողջապահության համակարգի արդյունավետ գործունեության, կազմակերպման, կառավարման և տնտեսավարման ժամանակակից մեխանիզմների ներդրման, կայուն ֆինանսավորման ապահովման, մարդու և հանրության առողջության պահպանման, բնակչության առողջության բարելավման, հիվանդությունների կանխարգելման, հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազեցման, աշխատողների առողջության և անվտանգության պահպանման, առողջապահության ոլորտում լիցենզիաների, թույլտվությունների և հավաստագրերի տրամադրման ապահովման, մոր և մանկան առողջության պահպանման, արտակարգ իրավիճակներում բնակչության բժշկական օգնության ապահովման, հանրապետությունում արտադրվող և ներմուծվող դեղերի անվտանգության, որակի և արդյունավետության ապահովման, հանրային առողջության և բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, լիցենզավորման և դեղերի պետական գրանցման ոլորտներում Կառավարության քաղաքականությունը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 11.06.2018 թվականի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (...) մշակում և իրականացնում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված գործունեության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունները վերապահվել են ՀՀ առողջապահության նախարարությանը, ու թեև դեղերի շրջանառության ոլորտում պետական քաղաքականությունը մշակում և իրականացնում է Կառավարությունը, այդուհանդերձ դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպումը և իրականացումը վերապահված է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնին, այն է՝ ՀՀ առողջապահության նախարարությանը:

**Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Դիմելով Դատարան՝ հայցվորի ներկայացուցիչ Սարգիս Մադաթյանը խնդրել է մասնակի՝ 1-ին կետի մասով, անվավեր ճանաչել «Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունները և մասնագիտական դիտարկումները կազմակերպող և իրականացնող մարմին նշանակելու մասին» 28.02.2019 թվականի թիվ 150-Ն որոշումը, քանի որ այն հակասում է առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին: Բացի այդ, նշված որոշումը հակասում է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին, որը որպես հիմք վկայակոչվել է խնդրո առարկա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտում:

**Դատարանը** 13.04.2020 թվականի որոշմամբ բավարարել է հայցվորի ներկայացուցիչ Սարգիս Մադաթյանի դիմումն այն պատճառաբանությամբ, որ Կառավարության 28.02.2019 թվականի թիվ 150-Ն որոշումն ընդունվել է ի կատարումն «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, որով դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպման և իրականացման իրավասությունը վերապահվել է բացառապես պետական կառավարման լիազոր մարմնին՝ ՀՀ առողջապահության նախարարությանը: Դատարանը գտել է, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր ներկայացրած պատասխանով չի փորձել առարկել դիմումով ներկայացված փաստերի դեմ, այլ փորձել է հիմնավորել, թե ինչով է պայմանավորված եղել այն հանգամանքը, որ վիճարկվող որոշումը կայացվել է Կառավարության կողմից, մինչդեռ ինչ նպատակ էլ որ հետապնդած լինի Կառավարությունը, մինևույն է՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու բացառապես այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Բացի այդ, Դատարանը հավելել է, որ «(...) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 6-րդ կետի համաձայն՝ նախարարության կառուցվածքում ընդգրկվում են նախարարի, նախարարի տեղակալների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի, նախարարի խորհրդականների, մամուլի քարտուղարի, օգնականների և նախարարի տեղակալների օգնականների պաշտոնները, կառուցվածքային ստորաբաժանումները, գործակալությունները: Նույն կանոնադրության V-րդ և VI-րդ բաժիններով սահմանված են նախարարության կառուցվածքային ստորաբաժանումները (հիմնական և աջակցող մասնագիտական) և գործակալությունները (Լիցենզավորման գործակալություն և Պետական առողջապահական գործակալություն): Վերը նշվածից հետևում է, որ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերությունը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կառուցվածքում, իսկ «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հստակ սահմանված է, որ դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների թե՛ կազմակերպումը և թե՛ իրականացումը վերապահված է բացառապես Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը»:

**Վերաքննիչ դատարանը** 15.02.2021 թվականի որոշմամբ, մերժելով Կառավարության վերաքննիչ բողոքը և Դատարանի որոշումը թողնելով անփոփոխ,

իրավաչափ է համարել Գատարանի դիրքորոշումները: Միաժամանակ Վերաքննիչ դատարանը հավելել է, որ «ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի «Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունները և մասնագիտական դիտարկումները կազմակերպող և իրականացնող մարմին նշանակելու մասին» թիվ 150-Ն որոշման 1-ին կետը՝ դրա ընդունման լիազորությունը չունեցող մարմնի կողմից ընդունված լինելու հանգամանքն արդեն իսկ վկայում է այն մասին, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ընդունվել է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող վերոհիշյալ իրավական ակտերի պահանջների խախտմամբ, ինչն էլ իր հերթին՝ բացառում է այն հանգամանքի գնահատման անհրաժեշտությունը, թե ինչ կազմակերպիչական կարգավիճակ ունի «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ն (նախարարությանը ենթակա ընկերություն, թե՛ այլ կարգավիճակ ունեցող կազմակերպություն), և որպես այդպիսին դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում ինչ գործառույթ է իրականացնում, քանի որ դրա գնահատումը որևէ կերպ չի կարող ազդել գործի ելքի վրա»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադարձ կատարելով սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարույթը կարգավորվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում նախատեսված նորմատիվ կանոններով, որոնք, իրավակարգավորման առանձնահատկություններից ելնելով, ամփոփված են օրենսգրքի՝ «Հատուկ վարույթներ» վերտառությունը կրող 5-րդ բաժնում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 191-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը. Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

Կառավարության 28.02.2019 թվականի «Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունները և մասնագիտական դիտարկումները կազմակերպող և իրականացնող մարմին նշանակելու մասին» թիվ 150-Ն որոշման 1-ին մասի համաձայն, հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, Կառավարությունը որոշել է սահմանել, որ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննություններն ու մասնագիտական դիտարկումները կազմակերպում և իրականացում է ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ վիճարկվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվել է Կառավարության կողմից՝ հիմք ընդունելով

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, որի համաձայն՝ առողջապահության բնագավառում պետական կառավարման **լիազոր մարմինը** դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում իրականացնում է դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպում և իրականացում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը գնահատելիս անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նորմատիվ իրավական ակտի ընդունման լիազորման հիմքը, այլ կերպ ասած՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասության նախապայմանը: Այսինքն, արդյո՞ք տվյալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունելու լիազորությունը ՀՀ Սահմանադրությամբ կամ օրենքով վերապահված է եղել դրանց իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմին:

Սույն դեպքում վիճարկվող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտում որպես իրավական հիմք վկայակոչված «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված է, որ դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպումը և իրականացումը վերապահված է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնին, որն, ինչպես արդեն վերը նշվեց, ՀՀ առողջապահության նախարարությունն է: Ավելին, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ նորմատիվ իրավական ակտերի ընդունման իրավասության փոխանցումն այլ մարմինների արգելվում է՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպումը և իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությանը չի վերապահվել որևէ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու լիազորություն, քանի որ դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպման և իրականացման իրավասությունն ուղղակիորեն վերապահվել է ՀՀ առողջապահության նախարարությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները եկել են այն իրավաչափ եզրահանգման, որ Կառավարության 28.02.2019 թվականի «Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունները և մասնագիտական դիտարկումները կազմակերպող և իրականացնող մարմին նշանակելու մասին» թիվ 150-Ն որոշման 1-ին մասը հակասում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին և «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ բողոքարեքի այն փաստարկին, որ «(...) նույնիսկ վիճարկվող կառավարության որոշումն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի խախտմամբ ընդունված լինելու պայմաններում Գալստարանը եկել է սխալ եզրահանգման, և դատարան ակտով սխալ մեկնաբանություններ է փոխել ՀՀ առողջապահության նախարարության կառուցվածքում ընդգրկված միավորների մասին, որի հիման վրա եզրահանգել է, որ «Ալյադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերությունը ընդգրկված

չէ ՀՀ առողջապահության նախարարության կառուցվածքում, ուստի նախարարությունը իր որոշ գործառույթներ չի կարող իրականացնել այդ ընկերության միջոցով»:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերոգրյալ հիմնավորումները որևէ նշանակություն չունեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի՝ դրա համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու տեսանկյունից, քանի որ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթով վարչական դատարանի առջև դրված է կոնկրետ խնդիր, այն է՝ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին համապատասխանության հարցի պարզումը:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վարույթի շրջանակներում գնահատման է ենթակա Կառավարության 28.02.2019 թվականի «Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունները և մասնագիտական դիտարկումները կազմակերպող և իրականացնող մարմին նշանակելու մասին» թիվ 150-Ն որոշման 1-ին մասի դրա համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանության հարցը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավաչափ են Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն առ այն, որ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կազմակերպարարական կարգավիճակի վերաբերյալ գնահատման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ այն չի կարող ազդել սույն վարույթի կարգով քննվող գործի ելքի վրա:

Անփոփոխվելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կառավարության 28.02.2019 թվականի թիվ 150-Ն որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, ինչպես նաև «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին, որպիսի պարագայում վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, քանի որ Դատարանը, բավարարելով Արթուր Խաչատրյանի ներկայացրած դիմումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի նշված որոշումը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես

նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կառավարության կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.02.2021 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

1. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում	Վարչական գործ թիվ <b>ՎԴ/12438/05/18 2022թ.</b>
Վարչական գործ թիվ	ՎԴ/12438/05/18
Նախագահող դատավոր՝	Լ. Հակոբյան
Դատավորներ՝	Էդ. Նահապետյան Կ. Գևորգյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող</i>	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
<i>զեկուցող</i>	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
	Ք. ՄԿՈՅԱՆ

2022 թվականի դեկտեմբերի 13-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն), երրորդ անձինք՝ Արմեն Տոնիկյան, Արա Տոնիկյան, Ավետիք Հարությունյան՝ թիվ 03648898, թիվ 03767098, թիվ 03767139, թիվ 03767305, թիվ 03767310 և թիվ 03767295 կատարողական վարույթներով պարտապանի արգելադրված դրամական միջոցները վերացնելու մասին 26.07.2018 թվականին ընդունված թվով 51 որոշումները վերացնելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 13.10.2021 թվականի որոշման դեմ Ծառայության բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն պահանջել է անվավեր ճանաչել թիվ 03648898, թիվ 03767098, թիվ 03767139, թիվ 03767305, թիվ 03767310 և թիվ 03767295 կատարողական վարույթներով պարտապանի արգելադրված դրամական միջոցները վերացնելու մասին 26.07.2018 թվականին ընդունված թվով 51 որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան) 21.11.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակի՝ անվավեր են ճանաչվել Արմեն Տոնիկյանի և Ավետիք Հարությունյանի դրամական միջոցների վրա դրված արգելադրանքները վերացնելու մասին 26.07.2018 թվականի որոշումները և



նույն մասով Ծառայության Երևան քաղաքի Շենգավիթի բաժնի պետի 26.10.2018 թվականի որոշումը, իսկ Արա Տոնիկյանի դրամական միջոցների վրա դրված արգելանքները վերացնելու մասին 26.07.2018 թվականի որոշումները վերացնելու պահանջի մասով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 13.10.2021 թվականի որոշմամբ Ծառայության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 21.11.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ծառայությունը (ներկայացուցիչ՝ Էլմիրա Մեջլումյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Դատարանի ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 44.3-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ, 27-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 3-րդ մասը:*

Բողոքաբերը նշված հիմքի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ սեփականության իրավունքը հանդես է գալիս որպես յուրաքանչյուր տնտեսական համակարգի էություն, անձի իրական ազատության երաշխավորման հիմնական բնութագրիչ և բնութագրվում է կոնկրետ գույքի տնօրինման, տիրապետման ու օգտագործման նկատմամբ անձի իրավունքն ու ազատությունը: Այնինչ, հայցագնի չափից ավել արգելք պահելը ոչ այլ ինչ է, քան անձի սահմանադրական և կոնվենցիոն իրավունքների խախտում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ օրենսդիրը հարկադիր կատարողի վրա դրել է պարտականություն հայցի ապահովման ժամանակ արգելանքները կիրառել հստակ հերթականությամբ: Նախորդ հերթի գույքի արժեքը հայցագնի չափին հավասար լինելու կամ գերազանցելու դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում հաջորդ հերթի գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու մասին: Ավելին, հարկադիր կատարողը, կատարողական վարույթ հարուցելիս հաշվի առնելով, որ չունի համապատասխան տեղեկատվություն պարտապանի գույքի կազմի և քանակի մասին, արգելանքը կիրառում է պարտապանի ողջ գույքի վրա՝ հետագայում պարզելով գույքի կազմը: Բացի այդ, հարկադիր կատարողը պարտավոր է, ղեկավարվելով 44.3-րդ հոդվածի 2-րդ մասով, արգելքները պահպանել ըստ հերթականության, իսկ դրամական միջոցների վրա դրված արգելքը պահպանել բացառապես վերջին հերթի այլ գույքի բացակայության պայմաններում՝ անկախ այն հանգամանքից, թե պարտապանի կողմից ներկայացվել է միջնորդություն, թե՛ ոչ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 13.10.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության սահմանելով նոր քննության ծավալը:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2017 թվականի թիվ ԵԱՔԴ/3114/02/17 կատարողական թերթի հիման վրա հարուցվել են թիվ 03767098, թիվ 03767139, թիվ 03767305, թիվ 03767310, թիվ 03648898 և թիվ 03767295 կատարողական վարույթները, և կիրառվել են արգելանքներ «ՔԱԼՐՍ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի, Արմեն Տոնիկյանի, Ավետիք Հարությունյանի, Արա Տոնիկյանի և Լևոն Քոչարյանի գույքի և դրամական միջոցների վրա (**հատոր 1-ին, գ.թ. 70**):

2) 18.07.2018 թվականին Ավետիք Հարությունյանը, Արա Տոնիկյանը և Արմեն Տոնիկյանը դիմումներ են ներկայացրել Ծառայությանը՝ խնդրելով վերացնել դրամական միջոցների վրա դրված արգելանքները, քանի որ արգելադրված մյուս գույքերը բավարար են հայցով պահանջվող գումարի ապահովման համար (**հատոր 1-ին, գ.թ. 82-84**):

3) Ծառայության Երևան քաղաքի Շենգավիթ բաժնի պետի տեղակալի կողմից 25.06.2018 թվականին, 23.07.2018 թվականին կայացված որոշումներով վերակսվել են համապատասխան կատարողական վարույթները (**հատոր 1-ին, գ.թ. 180, կատարողական վարույթի նյութեր, հատոր 2-րդ, գ.թ. 17, հատոր 3-րդ, գ.թ. 14, հատոր 4-րդ, գ.թ. 10, հատոր 5-րդ, գ.թ. 39, հատոր 6-րդ, գ.թ. 21**):

4) Ծառայության Երևան քաղաքի Շենգավիթ բաժնի պետի տեղակալի կողմից 26.07.2018 թվականին կայացված վիճարկվող որոշումներով վերացվել են Ավետիք Հարությունյանի, Արա Տոնիկյանի և Արմեն Տոնիկյանի դրամական միջոցների վրա դրված արգելանքները, իսկ կատարողական վարույթներն ավարտվել են (**հատոր 2-րդ, գ.թ. 36-87**):

5) 15.10.2018 թվականին «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն վարչական բողոք է ներկայացրել Ծառայություն, որը մերժվել է 26.10.2018 թվականի որոշմամբ (**կատարողական վարույթի նյութեր, հատոր 6-րդ, գ.թ. 34-37**):

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

*- արդյո՞ք «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 4-րդ մասում նշված՝ «նախորդ հերթի գույք» հասկացությունն իր մեջ ներառում է նաև նույն հոդվածի 3-րդ մասում նշված դրամական միջոցները՝ որպես օրենսդրությամբ սահմանված հերթականության մաս:*

-արդյո՞ք «Դարական ակրերի հարկադիր կարարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային նորմերի խախտումը յուրաքանչյուր դեպքում կարող է հանգեցնել վարչական ակտի անվավերության:

**1) Առաջին հարցադրման մասով Վճարելի դարարանն արձանագրում է հետևյալը.**

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Նույն հոդվածի 3-րդ մասերի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Նույն հոդվածի 4-րդ մասերի համաձայն՝ ոչ ոք չի կարող գրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել, դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցի ապահովման միջոց է՝ պատասխանողին պատկանող գույքի վրա հայցագնի չափով արգելանք դնելը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոցը պետք է համաչափ լինի ներկայացված պահանջին և հայցի ապահովմամբ հետապնդվող նպատակին:

Վերոգրյալի իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքում, երբ նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը, հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին, ուստի դրա նպատակն է երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը:

Օրենսդիրը որպես հայցի ապահովման միջոց, ի թիվս այնի, սահմանել է պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա **հայցագնի չափով** արգելանք դնելու պարտականություն, դրանով իսկ պաշտպանելով պարտապանի (պատասխանողի)՝ Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքը՝ իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել, տնօրինել իր պարտավորության չափը գերազանցող այլ գույքը: Այսպիսով, օրենսդիրը սահմանել է բացառապես հայցագնի չափով արգելանք դնելու հնարավորություն:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցների կիրառման հիմքը նույն օրենքով սահմանված կարգով տրված կատարողական թերթն է և կատարողական մակագրության թերթը,

ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր կատարման միջոցներն են՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում հարկադիր կատարողը կայացնում է որոշում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կամ պարտապանի մոտ գտնվող՝ հայցվորին (պահանջատիրոջը) պատկանող գույքի վրա արգելանք դնելը ներառում է դրա գույքագրումը, գույքը տնօրինելն արգելելը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օգտագործման իրավունքը սահմանափակելը, այն առգրավելը և ի պահ հանձնելը: (...) Հարկադիր կատարողը յուրաքանչյուր դեպքի համար որոշում է սահմանափակման տեսակները, ծավալները և ժամկետները՝ հաշվի առնելով գույքի հատկանիշները, սեփականատիրոջ կամ տիրապետողի համար դրա նշանակությունը և այլ հանգամանքներ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ կատարողական թերթով, ապա, որպես հայցի ապահովում, հայցագնի չափով արգելանք է դրվում պարտապանին պատկանող՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գույքի վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի գույքի վրա որպես հայցի ապահովում արգելանքը դրվում է հետևյալ հերթականությամբ.

1) պարտապան իրավաբանական անձի պարագայում՝

ա. անշարժ գույք,

բ. արտադրության մեջ անմիջականորեն չներգրավված հիմնական միջոցներ,

գ. անավարտ արտադրանք, այդ թվում՝ հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ,

դ. պատրաստի արտադրանք,

ե. շարժական գույք.

2) պարտապան ֆիզիկական անձի պարագայում՝

ա. անշարժ գույք,

բ. շարժական գույք:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարտապանի մոտ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գույքի բացակայության կամ անբավարարության դեպքում արգելանքը դրվում է պարտապանին պատկանող դրամական միջոցների վրա:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նախորդ հերթի գույքի արժեքը հայցագնի չափին հավասար լինելու կամ գերազանցելու դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում հաջորդ հերթի գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու մասին:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անշարժ գույքի վրա արգելանք չի դրվում, եթե հայցագինը չի գերազանցում 200.000 դրամը, ինչպես նաև եթե անշարժ գույքը, անկախ հայցագնի չափից, պարտապան ֆիզիկական անձի միակ բնակարանն է, բացառությամբ այն դեպքի, երբ պարտապանի այլ գույքի արժեքը պակաս է հայցագնի չափից:

Անփոփելիվ վերոգրյալ իրավական կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է պարտապանի գույքի վրա որպես հայցի ապահովում արգելանք դնելու որոշակի առանձնահատկություններ: Ըստ այդմ, եթե այլ բան նախատեսված չէ կատարողական թերթով, ապա, որպես հայցի ապահովում, հայցագնի չափով արգելանք է դրվում պարտապանին պատկանող օրենքով նախատեսված գույքի վրա որոշակի հաջորդականության պահպանմամբ: Ավելին՝ օրենսդիրը նաև սահմանել է պարտապան իրավաբանական անձի և պարտապան ֆիզիկական անձի դեպքերում որպես հայցի ապահովում արգելանք դնելու հստակ հերթականություն: Մասնավորապես, պարտապան իրավաբանական անձի գույքի վրա որպես հայցի ապահովում արգելանքը դրվում է հետևյալ հերթականությամբ՝ անշարժ գույք, արտադրության մեջ անմիջականորեն չներգրավված հիմնական միջոցներ, անավարտ արտադրանք, այդ թվում՝ հումք, կյուլեր, կիսաֆաբրիկատներ, պատրաստի արտադրանք, այնուհետև՝ շարժական գույք, իսկ պարտապան ֆիզիկական անձի դեպքում՝ անշարժ գույք, այնուհետև՝ շարժական գույք:

Ընդ որում, մի հերթից հաջորդ հերթի օբյեկտի վրա արգելանք հնարավոր է տարածել բացառապես այն պարագայում, երբ նախորդ հերթի գույքը բացակայում է կամ գույքի արժեքը հայցագնի չափից քիչ է: Այսպես օրինակ՝ պարտապան ֆիզիկական անձի շարժական գույքի վրա հնարավոր է տարածել արգելանք բացառապես այն դեպքերում, երբ պարտապան ֆիզիկական անձի անշարժ գույքի արժեքը զիջում է հայցագնի չափին:

Բացի այդ, օրենսդիրը նույն հոդվածի առանձին մասով հստակ սահմանել է այն դեպքերը, որոնցից թեկուզև մեկի առկայության պայմաններում արգելանք է դրվում պարտապանին պատկանող դրամական միջոցների վրա, այն է՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գույքերի անբավարարությունը կամ բացակայությունը: Նշված համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն «գույք» հասկացությունը ներառում է նաև դրամական միջոցները, որպիսի պայմաններում պարտապանի դրամական միջոցները ևս հանդիսանում են որպես հայցի ապահովում արգելանք դնելու ենթակա պարտապանի գույք: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրամական միջոցները նույնպես ներառված են արգելանք դնելու ենթակա օբյեկտների շարքում, սակայն այն տարբերությամբ, որ այս դեպքում հարկադիր կատարողը կրում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գույքերի անբավարարության կամ բացակայության փաստը հաստատված համարելու պարտականություն: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, դրամական միջոցների վրա արգելանք դնելը համարվում է պարտապանին պատկանող գույքի վրա որպես հայցի ապահովում արգելանք դնելու հաջորդականության վերջին հերթը:

Այսինքն՝ օրենսդիրը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 3-րդ մասով ըստ էության լրացրել է նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված որպես հայցի ապահովում արգելանք դնելու ենթակա գույքերի հերթականությունը, որը նպատակ է հետապնդում ապահովելու պատասխանող-պարտապանի սեփականության իրավունքը հայցի ապահովման միջոցի կիրառման համաչափության համատեքստում:

Շեղանաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ֆիզիկական անձ պարտապանի գույքի նկատմամբ արգելանք տարածելու հաջորդականությունը

պետք է ընթանա հետևյալ հերթականությամբ. նախ, հայցագնի չափով արգելանք կարող է դրվել ֆիզիկական անձ պարտապանին պատկանող անշարժ գույքի վրա, դրա բացակայության կամ հայցագնի չափից քիչ արժեք ներկայացնելու դեպքում արգելանք կարող է դրվել ֆիզիկական անձ պարտապանին պատկանող շարժական գույքի վրա՝ բացառապես հայցագնի չափով: Շարժական գույքի բացակայության կամ հայցագնի չափից քիչ արժեք ներկայացնելու դեպքում միայն արգելանք կարող է դրվել արդեն ֆիզիկական անձ պարտապանին պատկանող դրամական միջոցների վրա:

Վերոնշյալ հաջորդականության սահմանումը բխում է սեփականության իրավունքի և դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ փոխգործակցության տրամաբանությունից: Տվյալ պարագայում, հայցագնի չափին համապատասխան կամ հայցագնի չափը գերազանցող արժեք ունեցող անշարժ գույքի վրա արգելանք դնելու պարագայում այլևս բացակայում է պարտապանի՝ իր շարժական գույքի և (կամ) դրամական միջոցներից օգտվելը սահմանափակելու անհրաժեշտությունը, քանզի անշարժ գույքի արգելադրմամբ արդեն իսկ ապահովվում է դատական ակտի կատարելիությունը և հայցի ապահովման միջոցի կիրառման համաչափությունը: Հետևաբար՝ նշված հերթականության միաժամանակյա և (կամ) ոչ հաջորդական կիրառումը կհանգեցնի անձի սեփականության իրավունքի խաթարման:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ օրենսդիրը հարկադիր կատարողի համար սահմանել է նաև գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու պարտականություն, եթե արգելադրված գույքերի արժեքները միասին գերազանցում են հայցագնի չափը, և դրանց մի մասի արժեքն արդեն իսկ բավարար է հայցի ապահովման միջոցը կիրառելու համար: Այսինքն, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հերթականությամբ պայմանավորված, եթե ֆիզիկական անձ պարտապանին պատկանող անշարժ գույքի արժեքը հավասար է կամ գերազանցում է հայցագնի չափը, ապա հարկադիր կատարողը որոշում է կայացնում ֆիզիկական անձ պարտապանին պատկանող շարժական գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու մասին: Նույն կերպ, այնպիսի իրավիճակի առկայության պայմաններում, երբ պարտապանը ձեռք է բերել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ գույք, կամ հարկադիր կատարողը պարտապանին պատկանող դրամական միջոցի վրա արգելանք դնելիս չի տիրապետել վերջինիս պատկանող այլ գույքի առկայության վերաբերյալ բավարար տեղեկատվության, և տվյալ գույքի արժեքը հավասար է կամ գերազանցում է հայցագնի չափը, ապա հարկադիր կատարողն իրավասու է պարտապանին պատկանող դրամական միջոցներն արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու մասին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգը կիրառելի է նաև դրամական միջոցների՝ որպես օրենսդրությամբ սահմանված արգելանք դնելու ենթակա օբյեկտների հերթականության մասի, նկատմամբ:

**2) Երկրորդ հարցադրման մասով Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.**

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և

տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով (...):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի համաձայն՝ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանվում է, եթե՝

- 1) առկա են նույն օրենքի 42 հոդվածում նշված հիմքերը.
- 2) դատարանը որոշում է կայացրել գույքն արգելանքից հանելու մասին.
- 3) պահանջատերը հետ է պահանջել կատարողական թերթը.

3.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 243.1 հոդվածով սահմանված կարգով գրավի առարկան գրավառուի կողմից իրացվելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում.

4) պարտապանին սեփականության իրավունքով պատկանող ավարտված (ավարտական ակտի հիմքով պետական գրանցում ստացած) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի առանձնացված միավորի վերաբերյալ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունք ունեցող անձի կողմից պայմանագրային գնի վերջնահաշվարկի գումարը հարկադիր կատարման ծառայության դեպոզիտ հաշվին վճարվելու դեպքում.

5) առկա են նույն օրենքի 44.3-րդ հոդվածում նշված հիմքերը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պարտապանը, որի գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա, որպես հայցի ապահովում, հայցագնի չափով արգելանք է կիրառվել, կարող է միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին արգելանքն այլ գույքի վրա դնելու կամ հայցագնի չափը գերազանցող գույքը արգելանքից հանելու մասին՝ կցելով այլ գույքի կամ արգելադրված գույքի լիկվիդացիոն արժեքի՝ հայցագնի չափը գերազանցելու վերաբերյալ գնահատման եզրակացությունը և միջնորդությունն ու գույքի գնահատման եզրակացությունը պարտատիրոջ կողմից ստանալը հավաստող փաստաթուղթ:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ գույքի գնահատման եզրակացության մեջ նշված գույքի արժեքի հետ համաձայն չլինելու դեպքում պահանջատերը միջնորդությունն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, կարող է եզրակացության արժանահավատության վերաբերյալ առարկություններ ներկայացնել հարկադիր կատարողին:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողն առարկություններն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, գնահատման եզրակացության արժանահավատությունն ստուգելու նպատակով որոշում է կայացնում փորձաքննություն նշանակելու մասին:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ եթե փորձաքննության արդյունքներով հաստատվում է առաջարկվող կամ արգելադրված գույքի հայցագնից պակաս լիկվիդացիոն արժեք ունենալու հանգամանքը, ապա պարտապանի միջնորդությունը մերժվում է, և կատարողական վարույթն ավարտվում է:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե պարտապանի միջնորդության մեջ նշված գույքի լիկվիդացիոն արժեքը համապատասխանում կամ գերազանցում է հայցագնի չափին, ապա հարկադիր կատարողը որոշում է կայացնում արգելանքը միջնորդությամբ նշված գույքի վրա դնելու, նախկինում արգելադրված կամ հայցագնի չափը գերազանցող գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու մասին:

Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ արգելանքը դրամական միջոց չհամարվող գույքի վրա դրված լինելու դեպքում պարտապանը կարող է միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին արգելանքն իր անունով բացված բանկային կամ ավանդային հաշվում առկա դրամական միջոցների վրա դնելու վերաբերյալ՝ պայմանով, որ դրանց չափը պակաս չէ հայցագնի չափից, ինչպես նաև հայցագնի չափով գումարը մուծել հարկադիր կատարման դեպոզիտ հաշվին:

Նույն հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ պարտապանի անվամբ բացված բանկային կամ ավանդային հաշվում առկա դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դրվելու կամ հարկադիր կատարման դեպոզիտ հաշվին հայցագնի չափով պարտապանի կողմից գումար մուծված լինելու դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում նախկինում արգելադրված գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու մասին:

Նույն հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից ներկայացված՝ արգելանք դնելու մասին որոշումը և վճռի կատարման ապահովման վերաբերյալ կատարողական թերթը կատարվում են նույն հոդվածով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովմանը և վճռի կատարման ապահովմանը, ինչպես նաև վարչական մարմնի կողմից ներկայացված՝ արգելանք դնելու մասին որոշման կատարմանն ուղղված կատարողական վարույթները ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներ են:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ վարչական ակտի իրավաչափության իրավական հիմքերը սահմանվում են նյութական և ընթացակարգային իրավական նորմերում: Իրավաչափ վարչական ակտը պետք է համապատասխանի իր նկատմամբ կիրառելի բոլոր նյութական և ընթացակարգային իրավական նորմերին: Վարչական դատարանը վարչական ակտի իրավաչափությունն ստուգելիս պետք է պարզի՝ արդյո՞ք տվյալ վարչական ակտը համապատասխանում է օրենսդրի կողմից սահմանված վարչական ակտի նյութական իրավաչափությանը ներկայացվող պահանջներին, այսինքն՝ համապատասխանում է նյութական իրավական նորմերին, թե՛ ոչ և պետք է պարզի նաև՝ արդյո՞ք տվյալ վարչական ակտը համապատասխանում է օրենսդրի կողմից սահմանված վարչական ակտի ձևական իրավաչափությանը ներկայացվող պահանջներին, այսինքն՝ համապատասխանում է ընթացակարգային նորմերին, թե՛ ոչ: (...) Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ վարչական վարույթի ընթացակարգային պահանջների պահպանման և իրավաչափ որոշում կայացնելու և շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանություն ապահովելու միջև ուղղակի կապի բացակայության դեպքում ընթացակարգային պահանջների և դրանց խախտման իրավական հետևանքները կրում են հարաբերական բնույթ (տե՛ս, *Գիթա Հեղարիմարանյեհի ընդդեմ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության թիվ ՎԴ/6781/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Ամփոփելով վերոգրյալ իրավակարգավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գույքն արգելանքից հանելու մասին որոշումը վարչական



ակտ է, որն ընդունվում է օրենքով հատակ և սպառիչ սահմանված հիմքերով և կարգով, ուստի, նախատեսված է դրանցից յուրաքանչյուրի իրավաչափությունը վիճարկելու իրավական հնարավորություն: Հետևաբար, գույքն արգելանքից հանելու մասին որոշման իրավաչափության վիճարկման շրջանակներում պարզման ենթակա են հետևյալ հանգամանքները՝ առկա են արդյո՞ք գույքն արգելանքից հանելու «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված հիմքերը, խախտվել է արդյո՞ք գույքն արգելանքից հանելու նշված օրենքով սահմանված կարգը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի համալիր վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրն ըստ էության սահմանել է գույքն արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու երկու ընթացակարգ, այն է՝ հարկադիր կատարողի նախաձեռնությամբ և պարտապանի միջնորդության հիման վրա: Առաջինի դեպքում հարկադիր կատարողը կաշկանդված չէ ինքնուրույն պարզելու գույքի արժեքի՝ հայցագնի չափին հավասար լինելու կամ գերազանցելու հանգամանքը, մինչդեռ երկրորդ դեպքում հարկադիր կատարողն առաջնորդվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 6-12-րդ մասերով սահմանված գործողությունների հաջորդականությամբ:

Հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգը կիրառելի է նաև դրամական միջոցների նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այս դեպքում նույնպես տարածվում է ինչպես հարկադիր կատարողի կողմից ինքնուրույն, սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ պարտապանի միջնորդության հիման վրա արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու ընթացակարգը, որի խախտումներով կայացված վարչական ակտը ենթակա է անվավեր ճանաչման:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել նաև, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասը հստակ սահմանում է պարտապանի գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա, որպես հայցի ապահովում, հայցագնի չափով արգելանք կիրառված լինելու դեպքում արգելանքն այլ գույքի վրա դնելու կամ հայցագնի չափը գերազանցող գույքը արգելանքից հանելու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Դրանք են պարտապանի համապատասխան միջնորդությունը, այլ գույքի կամ արգելադրված գույքի լիկվիդացիոն արժեքի՝ հայցագնի չափը գերազանցելու վերաբերյալ գնահատման եզրակացությունը և միջնորդությունն ու գույքի գնահատման եզրակացությունը պարտատիրոջ կողմից ստանալը հավաստող փաստաթուղթը: Ընդ որում, գույքի գնահատման եզրակացության մեջ նշված գույքի արժեքի հետ համաձայն չլինելու դեպքում պահանջատերը կարող է եզրակացության արժանահավատության վերաբերյալ առարկություններ ներկայացնել հարկադիր կատարողին: Իսկ նման առարկության դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում փորձաքննություն նշանակելու մասին: Եվ միայն նշված վարույթային գործողությունների արդյունքում հարկադիր կատարողը կարող է հիմնավորված որոշում ընդունել գույքն արգելանքից հանելու կամ միջնորդությունը մերժելու մասին:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային նորմերի խախտումը յուրաքանչյուր դեպքում հանգեցնում է վարչական ակտի անվավերության:

**Վճուարեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ն հայց է ներկայացրել ընդդեմ Ծառայության, երրորդ անձինք՝ Արմեն Տոնիկյան, Արա Տոնիկյան, Ավետիք Հարությունյան՝ թիվ 03648898, թիվ 03767098, թիվ 03767139, թիվ 03767305, թիվ 03767310 և թիվ 03767295 կատարողական վարույթներով պարտապանի արգելադրված դրամական միջոցները վերացնելու մասին 26.07.2018 թվականին ընդունված թվով 51 որոշումները վերացնելու պահանջի մասին:

**Դատարանը** հայցը բավարարել է մասնակի՝ պատճառաբանելով, որ « (...) Տվյալ իրավիճակում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, հանելով պարտապանների դրամական միջոցների վրա դրված արգելանքները, խախտել է հայցվորի դատական պաշտպանության իրավունքը միայն Արմեն Տոնիկյանի և Ավետիք Հարությունյանի մասով: Մասնավորապես, վերջիններիս մասով վիճարկվող որոշումների արդյունքում առաջացել է քաղաքացիական դատավարության արդյունքում հայցվորի օգտին հնարավոր դատական ակտի կատարման վտանգ: Սակայն իրավիճակը նույնը չէ Արա Տոնիկյանի մասով: Բանն այն է, որ վերջինիս պարտավորությունները հայցվորի հանդեպ սահմանափակված են միայն 22.09.2015 թվականի երաշխավորության N 0292-1/2015 պայմանագրով, որով երաշխավորը (Արա Տոնիկյան) պարտավորվել է միայն «ք. Երևան, Արաբկիր համայնք, Բաղրամյան 1-ին նրվ., 4 շ., բն. 49» և «ք. Երևան, Կենտրոն, Մոսկովյան անց., 5 շ., թիվ 1 ձեղնահարկ» հասցեներում գտնվող անշարժ գույքերով կրել պատասխանատվություն պարտապանի 121.000.000 դրամի չափով պարտավորությունների համար: Այսինքն, երաշխավորության պայմանագրով պարտատիրոջ առջև պատասխանատվության այլ ծավալ է նախատեսվել, քան սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասի հիմնական կանոնով (նույն ծավալով, ինչ պարտապանը): Իսկ երաշխավորության պայմանագրով այլ բան նախատեսելը թույլատրված է նույն Քաղաքացիական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով: Նման պայմաններում Արա Տոնիկյանի դրամական միջոցների վրա դրված արգելանքները հանելու արդյունքում քաղաքացիական դատավարության կարգով հայցվորի օգտին հնարավոր դատական ակտի կատարման վտանգ չի առաջանում: Մինևնույն է, Արա Տոնիկյանի դրամական միջոցների վրա բռնագանձում չի կարող տարածվել, վերջինս պատասխանատու է միայն երաշխավորության պայմանագրում նշված անշարժ գույքերով: Արդյունքում դատարանն արձանագրում է, որ միայն Արմեն Տոնիկյանի և Ավետիք Հարությունյանի դրամական միջոցների վրա դրված արգելանքները վերացնելու մասին որոշումներն են խախտում հայցվորի իրավունքները, ուստի անվավեր են: Նույն հիմքերով և նույն մասով անվավեր է նաև հայցվորի 15.10.2018 թվականի վարչական բողոքը մերժելու մասին Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Շենգավիթի բաժնի պետի 26.10.2018 թվականի որոշումը: Իսկ Արա Տոնիկյանի դրամական միջոցների վրա դրված արգելանքները վերացնելու մասին որոշումներով հայցվորի իրավունքները չեն խախտվել, ուստի դրանց մասով հայցը ենթակա է մերժման»:

**Վերաքննիչ դատարանը**, մերժելով Ծառայության և Արմեն Տոնիկյանի վերաքննիչ բողոքները և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, արձանագրել է, որ «(...) պատասխանող վարչական մարմինը սույն դեպքում երրորդ անձանց դրամական միջոցների վրա դրված արգելանքը վերացնելու վիճարկվող որոշումներն ընդունելիս կիրառել է Օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասի նորմը, այդ նորմով սահմանված՝ պարտապանի գույքի վրա հայցագնի չափը գերազանցող

չափով արգելանքի կիրառումը բացառող եղանակը: Հետևաբար, վիճարկվող որոշումները Օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասի նորմի, դրանով սահմանված եղանակի կիրառմամբ կայացնելիս պատասխանողը պարտավոր էր ղեկավարվել այդ նորմով, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված՝ Օրենքի 44.3-րդ հոդվածի 7-10-րդ մասերի նորմերով սահմանված ընթացակարգով ու պահանջներով, և համապատասխանաբար վարչական դատարանի կողմից՝ վիճարկվող որոշումների ընդունման գործընթացի օրինականության նկատմամբ վերահսկողության շրջանակներում դատարանի խնդիրն էր ստուգել վարչական վարույթի ընթացքում կիրառված այդ նորմերի /Օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասի նորմեր/ պահանջների պահպանված լինելու/չլինելու հանգամանքը: (...) երրորդ անձանց և պատասխանողի վերաքննիչ բողոքների այն հիմքը, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն իրավասու է Օրենքի 44.3-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան դրամական միջոցների վրա դրված արգելանքները վերացնել նաև իր նախաձեռնությամբ, հիմնավոր չէ: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ հարկադիր կատարման ծառայությունը կատարողական վարույթի ընթացքում գործել է Օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասի գործողության տիրույթում և ըստ այդմ՝ պարտավոր էր ապահովել դրանով սահմանված ընթացակարգի կանոնները, որոնք, սակայն, չեն պահպանվել: Ի ամփոփումն վերոշարադրյալի Վերաքննիչ դատարանն անհիմն է համարում վերաքննիչ բողոքների նշված հիմքը ևս և ըստ այդմ՝ անհրաժեշտ է համարում իրացնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ վերաքննիչ բողոքները մերժելու և դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Տվյալ դեպքում, Երևան քաղաքի Արարկիյի և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2017 թվականի թիվ ԵԱԲԳ/3114/02/17 կատարողական թերթի հիման վրա հարուցվել են թիվ 03767098, թիվ 03767139, թիվ 03767305, թիվ 03767310, թիվ 03648898 և թիվ 03767295 կատարողական վարույթները և կիրառվել են արգելանքներ «ԲԱԼԲ ՌԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի, Արմեն Տոնիկյանի, Ավետիք Հարությունյանի, Արա Տոնիկյանի և Լևոն Քոչարյանի գույքի և դրամական միջոցների վրա:

18.07.2018 թվականին Ավետիք Հարությունյանը, Արա Տոնիկյանը և Արմեն Տոնիկյանը դիմումներ են ներկայացրել Ծառայությանը՝ խնդրելով վերացնել դրամական միջոցների վրա դրված արգելանքները, քանի որ արգելադրված մյուս գույքերը բավարար են հայցով պահանջվող գումարի ապահովման համար:

Հարկադիր կատարողի կողմից 26.07.2018 թվականին վիճարկվող որոշումներով վերացվել են Ավետիք Հարությունյանի, Արա Տոնիկյանի և Արմեն Տոնիկյանի դրամական միջոցների վրա դրված արգելանքները, նույն օրը կատարողական վարույթներն ավարտվել են: 15.10.2018 թվականին «ԱՐԱՐԱՏՖԱՆԿ» ԲԲԸ-ն վարչական բողոք է ներկայացրել Ծառայություն, որը մերժվել է 26.10.2018 թվականի որոշմամբ:

Վերը նշված կատարողական վարույթներով պարտապանների սեփականության իրավունքով պատկանող գույքերը էապես գերազանցում են հայցագնի, այն է՝ 410.881,65 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափը:

Հետևաբար, նման դեպքերում գործում է ֆիզիկական անձ պարտապանի գույքի նկատմամբ արգելանք տարածելու օրենսդրական հերթականությունը,

այն տրամաբանությամբ, որ նախորդ հերթի գույքի արժեքը հայցագնի չափին հավասար լինելու կամ գերազանցելու դեպքում հարկադիր կատարողը որոշում է կայացնում հաջորդ հերթի գույքն, այդ թվում՝ դրամական միջոցները, արգելանքից հանելու և կատարողական վարույթն ավարտելու մասին:

Մինևույն ժամանակ, անդրադառնալով վարչական ակտի ընթացակարգային իրավունքի նորմերի խախտումներով կայացված լինելու և, ըստ այդմ, անվավեր ճանաչելու հիմքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայությունը երրորդ անձանց դրամական միջոցների վրա դրված արգելանքը վերացնելու վիճարկվող որոշումներն ընդունելիս ըստ էության կիրառել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասի նորմը, այդ նորմով սահմանված՝ պարտապանի գույքի վրա հայցագնի չափը գերազանցող չափով արգելանքի կիրառումը բացառող եղանակը: Հետևաբար, Ծառայությունը պարտավոր էր առաջնորդվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 6-10-րդ մասերի նորմերով սահմանված ընթացակարգով:

Մինչդեռ, տվյալ դեպքում Ծառայության կողմից չեն պահպանվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները, այն է՝ միջնորդություններին կից չեն ներկայացվել արգելադրված գույքի լիկվիդացիոն արժեքի՝ հայցագնի չափը գերազանցելու վերաբերյալ գնահատման եզրակացությունը և միջնորդությունն ու գույքի գնահատման եզրակացությունը պարտասիրոջ կողմից ստանալը հավաստող փաստաթուղթ: Գործում առկա նյութերի ուսումնասիրությունից բխում է, որ Ծառայությունը չի վիճարկում Դատարանի կողմից հաստատված այն փաստը, որ դրամական միջոցների վրա դրված արգելանքը հանելու մասին միջնորդություններին կից պարտապանների կողմից չեն ներկայացվել արգելադրված գույքի լիկվիդացիոն արժեքի՝ հայցագնի չափը գերազանցելու վերաբերյալ գնահատման եզրակացությունը և միջնորդությունն ու գույքի գնահատման եզրակացությունը պարտասիրոջ կողմից ստանալը հավաստող փաստաթուղթ:

Ծառայությունը, հանելով պարտապանների դրամական միջոցների վրա դրված արգելանքներն առանց օրենքով սահմանված ընթացակարգի պահպանման, խախտել է հայցվորի պատշաճ վարչարարության իրավունքը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ծառայության կողմից վիճարկվող վարչական ակտերը կայացնելիս ամբողջությամբ չեն պահպանվել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 6-10-րդ մասերով նախատեսված պահանջները, հետևաբար, վերոհիշյալ որոշումներն ընդունվել են օրենքի խախտմամբ, ինչը բավարար էր դրանք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով անվավեր ճանաչելու համար, որպիսի իրավաչափ հետևության և հանգել են ստորադաս դատարանները:

Անփոփոխելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, մասնակի բավարարելով «ԱՐԱ-ԲԱՏԱՆԿ» ԲԲԸ-ի հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը: Միաժամանակ, նկատի ունենալով, որ ստորադաս դատարանի գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի է պատճառաբանված,

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Ծառայության կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 13.10.2021 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

ՎԴ/10411/05/19  
Լ. Հակոբյան  
Է. Նահապետյան  
Կ. Գևորգյան

Վարչական գործ թիվ ՎԴ/10411/05/19  
2023թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետև՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող և զեկուցող* Ք. ՄԿՈՅԱՆ  
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ  
Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ

2023 թվականի հոկտեմբերի 06-ին  
գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պաշտպանության նախարարության  
(այսուհետև՝ Նախարարություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դա-  
տարանի 06.04.2022 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի  
Հրայրա Պետրոսյանցի ընդդեմ Նախարարության, երրորդ անձ ՀՀ ֆինանսնե-  
րի նախարարություն՝ Նախարարությանը որոշակի գործողություն կատարելուն,  
այն է՝ հայցվոր Հրայրա Պետրոսյանցին 2000 թվականից մինչև զորացրման օրը՝  
14.11.2016 թվականը, աշխատած, սակայն վարձատրություն չստացած 699 շաբաթ  
օրերի և ծառայության ընթացքում ամենամյա արձակուրդներից չօգտագործված  
37 օրերի համար նախատեսված գումարները վճարելուն պարտավորեցնելու պա-  
հանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Հրայրա Պետրոսյանցը պահանջել է պարտավորեցնել  
Նախարարությանը կատարել որոշակի գործողություններ, այն է՝ իրեն վճարել  
2000 թվականից մինչև զորացրման օրը՝ 14.11.2016 թվականը, աշխատած, սա-  
կայն վարձատրություն չստացած 699 շաբաթ օրերի և ծառայության ընթացքում

ամենամյա արձակուրդներից չօգտագործված 37 օրերի համար նախատեսված գումարները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 17.02.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է. վճռվել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը վճարել 2000 թվականից մինչև գորացրման օրը՝ 14.11.2016 թվականը, աշխատած, սակայն վարձատրություն չստացած 699 շաբաթ օրերի և ծառայության ընթացքում ամենամյա արձակուրդներից չօգտագործված 37 օրերի համար նախատեսված գումարները:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 06.04.2022 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.02.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը (ներկայացուցիչ Արմեն Աղաբալյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 181-րդ հոդվածը, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետը, 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետը և 8-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 16-րդ հոդվածի 5-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հասարակելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, 7-րդ, 227-րդ և 231-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 03.07.2014 թվականի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակարարողական և փրկարար ծառայություններում ծառայության ստանձնահարկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշմամբ հասարակված 2-րդ հավելվածը, ինչպես նաև չի կիրառել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը և 73-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասը և 28-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ օրենսդրությունը գինձառայողի համար, ով ծառայողական պարտականությունների կատարման նպատակով ներգրավված է եղել հանգստյան կամ տոնական օրերին ծառայության՝ նախատեսում է հանգստի լրացուցիչ օրերի տրամադրում ծառայության շահերի հաշվառմամբ, որոնք կարող են միացվել հիմնական արձակուրդներին, այսինքն, գինձառայողի համար ծառայությունը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված չէ վարձատրություն կամ դրամական փոխհատուցում, այլ տրվում է լրացուցիչ հանգստյան օր, կամ այն կարող է միացվել հիմնական արձակուրդին:

Այլ կերպ ասած՝ օրենսդրությամբ նախատեսված չէ գինձառայողի վարձատրություն արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար կամ դրանց դիմաց դրամական փոխհատուցման տրամադրում, որպիսին դրված է հայցապահանջի հիմքում: Տվյալ դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը, որպես պետական մարմին, կարող է կատարել

միայն այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված են օրենքներով, իսկ զինձառայողի համար ծառայությունը կարգավորող օրենսդրությամբ նախատեսված չէ վարձատրություն կամ դրամական փոխհատուցում:

Այսպիսով՝ հաշվի առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորումը, առկա է իրավունքի զարգացման խնդիր հետևյալ հարցի վերաբերյալ. իրավահարաբերությունը կարգավորող հատուկ օրենքի («Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հասարակելու մասին» ՀՀ օրենք, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք) կարգավորող նորմի առկայության պարագայում, արդյոք ք կիրառելի է ընհանուր օրենքի (ՀՀ աշխատանքային օրենսգիրք) միևնույն իրավահարաբերությունը կարգավորող նորմը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ տվյալ դեպքում հայցվորի շաբաթ օրերին ծառայելու և այդ օրերն արձակուրդին չավելացնելու պարագայում այն կարող է դիտվել միայն որպես չօգտագործված արձակուրդի համապատասխան օրեր, որի վարձատրման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 09.08.2018 թվականի թիվ 898 որոշման 2-րդ կետով:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ հայցվորի կողմից 01.07.2014 թվականից մինչև ծառայությունից արձակման պահը՝ 2016 թվականն ընկած ժամանակահատվածում շաբաթ օրերին աշխատած, սակայն չվարձատրված գումարը վճարելուն պարտավորեցնելու պահանջը ենթակա է մերժման, քանի որ զինձառայողին յուրաքանչյուր ամիս ծառայության առանձնահատուկ պայմանների համար տրվել է հավելում, որպիսի փաստը հաստատվել է նաև հայցվորի կողմից:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 06.04.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ «գործն ուղարկել առաջին ատյանի դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության՝ սահմանելով քննության ծավալները»:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

**Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.**

1) Հրաչյա Պետրոսյանցը 15.04.2019 թվականին դիմում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարար Դ. Տոնոյանին առ այն, որ 2000 թվականից աշխատել է Նախարարությունում: 14.11.2016 թվականի թիվ 254 հրամանի համաձայն՝ գորացրվել է և անցել է ծառայողական կենսաթոշակի: Խնդրել է կատարել հաշվարկ իր աշխատած, սակայն վարձատրություն չստացած շաբաթ օրերի քանակի, ծառայության ընթացքում չօգտագործված ամենամյա արձակուրդների օրերի քանակի և այդ օրերի համար տրամադրվելիք վարձատրության չափի վերաբերյալ, և այդ գումարները վճարել (**հատոր 1-ին, գ.թ. 31-32**):

2) ՀՀ պաշտպանության նախարարի 14.11.2016 թվականի թիվ 2541 հրամանով որոշվել է. «արձակել ՀՀ զինված ուժերի պահեստազոր՝ ուղարկելով հաշվառման ՀՀ Նոր-Նորքի զինկոմիսարիատ՝ զինվորական համագգեստ կրելու իրավունքով փոխգնդապետ Հրաչյա Տիգրանի Պետրոսյանցին՝ թողնված ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի և ռազմական կրթության վարչության տրամադրության տակ» (**հատոր 1-ին, գ.թ. 85**):

3) Հրաչյա Պետրոսյանցի ներկայացուցիչը 24.07.2019 թվականի թիվ 2019/269 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ հայցվորի անձնական գործի ամբողջական փաթեթը ստանալու պահանջով, սակայն որևէ



պատասխան չստանալով՝ 13.08.2019 թվականին Հրաչյա Պետրոսյանցը կրկին դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ խնդրելով կատարել հաշվարկ աշխատած, սակայն վարձատրություն չստացած շաբաթ օրերի քանակի, ծառայության ընթացքում չօգտագործված ամենամյա արձակուրդների օրերի քանակի և այդ օրերի համար տրամադրվելիք վարձատրության չափի վերաբերյալ **(հատոր 1-ին, գ.թ. 88)**:

Այնուհետև՝ 17.10.2019 թվականին Հրաչյա Պետրոսյանցը ևս մեկ անգամ դիմում է ներկայացրել պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ խնդրելով կատարել վերահաշվարկ և տրամադրել աշխատած, սակայն վարձատրություն չստացած շաբաթ օրերի ծառայության ընթացքում չօգտագործված ամենամյա արձակուրդների օրերի համար հատուցման ենթակա գումարները:

4) Ի պատասխան վերոնշյալ դիմումների՝ ՀՀ պաշտպանության նախարարության 05.11.2019 թվականի թիվ 1119 գրությամբ ուղարկվել են Հրաչյա Պետրոսյանցի աշխատած օրերի վերաբերյալ տեղեկանքների պատճենները **(հատոր 1-ին, գ.թ. 91)**:

5) Հրաչյա Պետրոսյանցի 2000 թվականից մինչև զորացրման օրը՝ 14.11.2016 թվականը, աշխատած, սակայն վարձատրություն չստացած շաբաթ օրերի քանակը կազմում է 699, իսկ ծառայության ընթացքում ամենամյա արձակուրդներից չօգտագործված օրերի քանակը՝ 37 **(չվիճարկվող փաստ)**:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի առնչությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

- որ իրավական սկզբերն են ենթակա կիրառման զինծառայողների շաբաթական ծառայության ժամանակի սահմանված րեռոդությունից ռուրս ծառայողական պարտականությունների կարարմանը ներգրավված լինելու ժամանակի համար փոխհատուցում րրամադրելու իրավահարաբերությունների նկարմանը:

- արդյոք առկա է ժամկետային սահմանափակում զինծառայողների չօգրագործված արձակուրդի փոխհատուցման համար՝ վերահատարելով նախկինում արարահայրած իրավական դիրքորոշումը:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից՝ բացառությամբ ի շահ հանրության՝ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախկինում կայացրած որոշումներից մեկով ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել, որ ՀՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վկայակոչված նորմերից հետևում է, որ սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է ինչպես սահմանադրաիրավական, այնպես էլ միջազգային-իրավական նորմերի ուժով: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածում գործածվող «սեփականություն» եզրույթը մեկնաբանելիս պետք է ելակետ ընդունել և հաշվի առնել սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իրավակիրառ պրակտիկան:

Այս առումով ՀՀ վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել հիշատակել Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքը, համաձայն որի՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետով նախատեսված «գույք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներն ու շահերը նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև՝ «գույք» նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյոք գործի բոլոր հանգամանքներից ելնելով՝ դիմումատուն ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ (*լրե՛ս, օրինակ, Minasyan and Semerjyan v. Armenia (զանգար թիվ 27651/05) գործով Եվրոպական դատարանի 23.06.2009 թվականի վճիռը, կետ 55*):

Միաժամանակ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացությունը բնորոշել է ընդլայնված կերպով՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*լրե՛ս, Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium (զանգար թիվ 17849/91) գործով*

*Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, կետ 31): «Օրինական սպասելիք»-ն առկա է այն բոլոր դեպքերում, երբ անձինք ունեն բավականաչափ իրավական հիմքեր վստահելու այն իրավական ակտերի իրավաչափ լինելուն, որոնք ուղղված են իրենց համար որոշակի իրավունքներ առաջացնելուն, անձի մոտ ստեղծում են իրավաչափ իրավական ակտի տպավորություն և վերաբերում են սեփականության իրավունքին (յրե'ս, *Kopecký v. Slovakia* (գանգալ թիվ 44912/98) գործով Եվրոպական դատարանի 28.09.2004 թվականի վճիռը, կետեր 53-61):*

Ըստ Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշման՝ պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել (յրե'ս, *Burdov v. Russia* (գանգալ թիվ 59498/00) գործով Եվրոպական դատարանի 07.05.2002 թվականի վճիռը, 40-րդ կետ):

ՀՀ սահմանադրական դատարանը 18.07.2012 թվականի թիվ ՍԴՈ-1038 որոշմամբ **կարևորել է փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի արդյունավետ պաշտպանության հնարավորությունը** և գտել է, որ տվյալ դեպքում առկա է իրավունքի պաշտպանության խնդիր և այդ հարցի նկատմամբ չի կարող ձևական մոտեցում դրսևորվել: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանը նույն որոշմամբ արձանագրել է, որ *«Մոյն իրավական դիրքորոշումից շեղումը կհանգեցնի գործարտի պարասխանարվության անարեաման և աշխարհի իրավունքների նորսահարման, քանի որ կարարած փաստացի աշխատանքի դիմաց համարժեք հարուցում վճարելուց հրաժարվելը նաև անձի սեփականության իրավունքի նորսահարում է»:*

Համադրելով Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճարելի դատարանն արձանագրել է, որ կատարված աշխատանքի դիմաց վարձատրվելու իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերով պաշտպանվող գույքային իրավունք է, որը ենթակա է արդյունավետ իրավական պաշտպանության:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի, ինչպես նաև հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայության առանձին տեսակների կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան օրենքներով:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության գորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), (...):

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության տեսակ է: (...)

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնադիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքով հաստատվել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնադիրքը (այսուհետ՝ Կանոնադիրք), որով սահմանվել են զինված ուժերի զինծառայողների ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները, նրանց փոխհարաբերությունները, գնդի և նրա ստորաբաժանումների հիմնական պաշտոնատար անձանց պարտականությունները, ինչպես նաև ներքին կարգուկանոնը:

Կանոնագրքի 227-րդ հոդվածի համաձայն՝ զորամասում ժամանակի բաշխումն իրականացվում է այնպես, որ ապահովվի մշտական մարտական պատրաստությունը և պայմաններ ստեղծվեն կարգուկանոնի, զինվորական կարգապահության և անձնակազմի դաստիարակության, զինծառայողների մարտական կազմակերպված ուսուցման, նրանց կուլտուրական մակարդակի բարձրացման, կենցաղային համակողմանի սպասարկման, ժամանակին հանգստանալու և սնվելու համար:

Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ ծառայողական շաբաթվա տևողությունը սահմանվում է՝ ժամկետային ծառայության զինծառայողների, ուսանողների և զինվորական ուսումնական հաստատությունների, ուսումնական կենտրոնների (զորամասերի) ունկնդիրների և ուսանողների համար՝ վեցօրյա շաբաթ՝ հանգստյան մեկ օրով, սպաների, ենթասպաների, պայմանագրով զինվորական ծառայության անցած զինվորների, սերժանտների, ավագների, ինչպես նաև կին զինծառայողների համար՝ հնգօրյա շաբաթ՝ հանգստյան երկու օրով:

(...)

Հանգստյան և տոնական օրերին ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված սպաներին ու ենթասպաներին զորամասի (ստորաբաժանման) հրամանատարի որոշումով հանգիստ է տրվում շաբաթվա մյուս օրերին՝ ծառայության շահերի հաշվառումով: Հանգստի տևողությունը չպետք է գերազանցի հանգստյան կամ տոնական օրը ծառայության մեջ անցկացրած ժամանակը:

**Սպաներին, ենթասպաներին, պայմանագրով ծառայության անցած զինծառայողներին և կին զինծառայողներին շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավելու և այն շաբաթվա մյուս օրերին հանգստով**

**փոխհատուցելու անհնարինության դեպքում այդ ժամանակը գումարվում և զինձառայողին է տրվում հանգստի լրացուցիչ օրերի ձևով, որոնք կարող են միացվել հիմնական արձակուրդներին:**

Կանոնագրքի 231-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր շաբաթ գնդում անցկացվում է հավաքակայանային-տնտեսական օր՝ սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների սպասարկման հավաքակայանների և ուսումնանյութական բազայի օբյեկտների լրասարքավորման և բարեկարգման, զինվորական ավանները կարգի բերելու և այլ աշխատանքներ կատարելու նպատակով: Սովորաբար այդ նույն օրն անցկացվում է բոլոր շինությունների ընդհանուր մաքրումը, և անձնակազմը լողանում է բաղնիքում:

Բացի այդ, սպառազինությունն ու ռազմական տեխնիկան մշտապես մարտական պատրաստության մեջ պահելու նպատակով գնդում անցկացվում են հավաքակայանային օրեր՝ ամբողջ անձնակազմի ներգրավումով:

Հավաքակայանային-տնտեսական և հավաքակայանային օրերը անցկացվում են ըստ պլանների, որոնք մշակում է գնդի շտաբը գնդի հրամանատարի՝ սպառազինության և թիկունքի գծով տեղակալների հետ համատեղ և հաստատում է գնդի հրամանատարը: Պլանների քաղվածքները հասցվում են ստորաբաժանումներին:

Հավաքակայանային-տնտեսական օրերին կատարվող աշխատանքները և առաջին հերթին սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի սպասարկման աշխատանքները ղեկավարելու համար հերթականության կարգով նշանակվում են նվազագույն թվով սպաներ և ենթասպաներ: Շաբաթվա ընթացքում նրանց տրվում է հանգստյան օր:

Կանոնագրքի 290-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ հանգստյան և տոնական օրվա օրական վերակարգում եղած սպաներին և ենթասպաներին շաբաթվա ընթացքում հանգստյան օր է հատկացվում:

Վերոգրյալ իրավական նորմերի համալիր վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, հաստատելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը, սահմանել է զինված ուժերի զինձառայողների ընդհանուր իրավունքներն ու պարտականությունները, նրանց փոխհարաբերությունները, գնդի և նրա ստորաբաժանումների հիմնական պաշտոնատար անձանց պարտականությունները, ինչպես նաև ներքին կարգուկանոնը: Ըստ այդմ, Կանոնագրքի «Ժամանակի բաշխումը և առօրյա կարգուկանոնը» վերտառությամբ 5-րդ գլխում սահմանվել է գործնասում ժամանակի բաշխման իրականացման կարգը, որն, ի թիվս այլնի, ուղղված է մշտական մարտական պատրաստության ապահովմանը: Այս նպատակով գործնասում ըստ պլանների անցկացվում են հավաքակայանային-տնտեսական և հավաքակայանային օրեր, ինչն իր հերթին ենթադրում է զինձառայողների շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավման պարտականություն:

Մինևնույն ժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը Կանոնագրքում սահմանել է սպաներին, ենթասպաներին, պայմանագրով ծառայության անցած զինձառայողներին և կին զինձառայողներին շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակի փոխհատուցման հետևյալ եղանակները՝

- շաբաթվա մյուս օրերին տրամադրվում է հանգիստ՝ ծառայության շահերի հաշվառումով,

- այն շաբաթվա մյուս օրերին հանգստով փոխհատուցելու անհնարինություն դեպքում այդ ժամանակը գումարվում և զինծառայողին է տրվում հանգստի լրացուցիչ օրերի ձևով, որոնք կարող են միացվել հիմնական արձակուրդներին:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը Կանոնագրքում սահմանելով սպաներին, ենթասպաներին, պայմանագրով ծառայության անցած զինծառայողներին և կին զինծառայողներին շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու հնարավորություն և սահմանելով այն շաբաթվա մյուս օրերին հանգստով փոխհատուցելու, իսկ դրա անհնարինության դեպքում՝ այդ ժամանակը գումարվելու և զինծառայողին հանգստի լրացուցիչ օրերի (կարող են միացվել հիմնական արձակուրդներին) ձևով տրվելու իրավակարգավորումներ՝ չի հստակեցրել այն հարցը, թե լրացուցիչ օրերի ձևով հանգիստ տրամադրելու անհնարինության կամ չտրամադրելու դեպքերում ինչպես է փոխհատուցվում նշված զինծառայողներին շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականություններին կատարմանը ներգրավված լինելու ժամանակը:

Վերոգրյալի լույսի ներքո՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել անդրադառնալ հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի վարձատրությունը սահմանող ընդհանուր կանոններին և զինծառայողներին շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակի համար փոխհատուցումը՝ նախատեսող հատուկ կանոններին, ըստ այդմ՝ խնդրո առարկա իրավահարաբերության նկատմամբ կիրառելի իրավական նորմերի որոշման հարցին:

Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են նույն օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքը, եթե այն նախատեսված չէ աշխատանքի ժամանակացույցով, կողմերի համաձայնությամբ վարձատրվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի առնվազն կրկնակի չափով, կամ աշխատողին մեկ ամսվա ընթացքում տրամադրվում է վճարվի այլ հանգստյան օր, կամ այդ օրը ավելացվում է ամենամյա արձակուրդին, բացառությամբ նույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված դեպքի:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ զինծառայողների դրամական ապահովությունն իրականացվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սկզբունքներին և հիմնական պայմաններին համապատասխան: (...):

Նույն հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ զինծառայողներին տրվող հավելումը դրամական ապահովության բաղկացուցիչ մաս է, որը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ բացարձակ դրամական մեծությամբ և տրվում է՝ ելնելով զինվորական ծառայության

առանձնահատկություններից: Զինծառայողներին տրվող հավելումների դեպքերը, չափերն ու տրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետի համաձայն՝ նույն օրենքի գործողությունը տարածվում է՝ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող պետական ծառայող չհանդիսացող անձանց, որոնց վրա տարածվում են միայն սույն օրենքի 28-րդ հոդվածի դրույթները), այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր չկնքած զինծառայողների) կազմի և ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ հավելումը նույն ենթակետում նշված պայմաններից որևէ մեկի կամ դրանցից մի քանիսի, այն է՝ (...) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ծանր, վնասակար, առանձնապես ծանր, առանձնապես վնասակար աշխատանքներ կատարելու, բարձրլեռնային վայրերում, արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատելու, զինվորական, քրեակատարողական և փրկարար ծառայության, առանձնակի ռիսկայնության, ինչպես նաև հատուկ մասնագիտացման առանձնահատկություններով պայմանավորված՝ պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հաշվարկվող տոկոսային ավելացում կամ պաշտոնային դրույքաչափին դրամական բացարձակ մեծությամբ սահմանվող ավելացումն է:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին, քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին արտաժամյա, գիշերային ժամերին, հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում, եթե դրանք չեն կարգավորվում նույն օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասով:

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում, ոստիկանությունում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում, ծառայության առանձնահատկություններով պայմանավորված, տրվում են հավելումներ, որոնց վճարման դեպքերը, չափերը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ կառավարության 03.07.2014 թվականի «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և

կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշմամբ սահմանվել է զինված ուժերում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը և հաշվարկման գործակիցները՝ համաձայն N 1 հավելվածի:

Վերը նշված իրավակարգավորումների հիման վրա՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ զինվորական ծառայությունը, ի թիվս այլնի, պետական ծառայության տեսակ է, որն էլ իր հերթին հանրային ծառայություն է: Օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, սահմանելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի կիրառումը հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ, միևնույն ժամանակ չի բացառել հատուկ օրենքների կիրառումը, եթե համապատասխան օրենքներով այլ բան է նախատեսված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի դրույթները սահմանված են նշված ծառայության առանձնահատկությունների, զինվորական ծառայության մեջ ներգրավված ծառայողների սոցիալական երաշխիքների հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունների հաշվառմամբ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ նույն օրենքը համարվում է զինվորական ծառայության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող հատուկ օրենքը, իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքը սուբսիդիարության (լրացուցիչ) սկզբունքով կիրառելի է այն պայմաններում, երբ կոնկրետ հարցեր կարգավորված չեն հատուկ օրենքով:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասը ունի բլանկետային բնույթ և զինծառայողների դրամական ապահովությունն անհրաժեշտ է դիտարկել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների և հիմնական պայմանների լույսի ներքո:

Այսպես, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի (հատուկ նորմ) 8-րդ հոդվածը և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածը (ընդհանուր նորմ) ըստ էության կարգավորում են համասեռ հարաբերություններ, այն է՝ աշխատանքի վարձատրությունը հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին, ինչը նշված հատուկ օրենքի իմաստով որոշակի սուբյեկտների՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց տրվող հավելումներ են: ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքը հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ ստանալու հնարավորության կապակցությամբ այլ կարգավորում է նախատեսում, քան ՀՀ աշխատանքային օրենսգրքը, որպիսի պայմաններում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 185-րդ հոդվածի դրույթները տվյալ իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի չեն:

ՀՀ վճռաբեկ դատարանը վերոգրյալ հետևության համար հիմք է ընդունել այն, որ օրենսդիրը որոշակի սուբյեկտների դրամական ապահովության իրականացումը կարգավորել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքներին և հիմնական պայմաններին համապատասխան, իսկ հանրաճանաչ սկզբունքի համաձայն՝ «հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրի



գործողությունը» (*lex specialis derogat legi generali*): Հետևաբար ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ տվյալ դեպքում կիրառելի են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումները:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ, որպես կանոն, ՀՀ զինված ուժերում զինվորական ծառայություն իրականացնող անձանց հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հավելումների վճարումը նախատեսված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: ՀՀ զինված ուժերում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը սահմանված են ՀՀ կառավարության 03.07.2014 թվականի «Ջինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշմամբ հաստատված՝ «Ջինված ուժերում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը և հաշվարկման գործակիցները» թիվ 1 հավելվածով: ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել ընդգծել այն հանգամանքը, որ անձի կողմից կատարված ծառայությունը նշված Հավելվածով նախատեսված հավելումների տրամադրման առանձնահատուկ դեպքերում ներառված չլինելու պայմաններում գործում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կանոնն առ այն, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողներին հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ զինծառայողներին շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակի փոխհատուցման հետ կապված իրավահարաբերությունները ենթակա են կարգավորման «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն վերջիններիս հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում:

Միևնույն ժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը, քննարկելով զինծառայողների շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարումը այն շաբաթվա մյուս օրերին հանգստով փոխհատուցելու անհնարինության և հանգստի լրացուցիչ օրեր չտրամադրելու դեպքերում փոխհատուցման հարցը, արձանագրել է հետևյալը.

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ զինծառայողների շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս հանգստյան օրերին ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը ըստ էության օրենսդիրը փոխհատուցել է այլ հանգստյան օրերի տրամադրման միջոցով՝ երաշխավորելով Սահմանադրությամբ, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված՝ հանգստի իրավունքի ապահովումը: Ինչպես արդեն իսկ վերը նշվեց, հանգստյան և տոնական օրերին ծառայողական պարտականությունների կատարմանը սպաներին ու ենթասպաներին

ներգրավելու դեպքում գորամասի (ստորաբաժանման) հրամանատարի որոշումով հանգիստ է տրվում շաբաթվա մյուս օրերին՝ ծառայության շահերի հաշվառումով, իսկ դրա անհնարինության դեպքում այդ ժամանակը գումարվում և զինծառայողին է տրվում հանգստի լրացուցիչ օրերի ձևով, որոնք կարող են միացվել հիմնական արձակուրդներին:

Այսինքն, հանգստյան օրերին ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը գորամասի (ստորաբաժանման) հրամանատարի որոշումով շաբաթվա մյուս օրերին տրամադրելու անհնարինության և լրացուցիչ հանգստյան օրերը չօգտագործելու դեպքում այն միացվում է հիմնական արձակուրդներին: Կարևորելով փաստացի կատարված աշխատանքի դիմաց վարձատրության պահանջի իրավունքի իրացումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու դեպքում անձն ունի այդ ժամանակի դիմաց փոխհատուցում ստանալու «օրինական սպասելիք», որը կարող է իրացվել չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցման ձևով:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինծառայողներին տրվում է փոխհատուցում՝ ոչ ավելի, քան զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով: Նույն մասում նշված դեպքում չօգտագործված արձակուրդի օրերի հաշվարկում չեն ներառվում զինծառայողի՝ նույն օրենքի համաձայն՝ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում չներառվող ժամանակահատվածների օրերը:

ՀՀ սահմանադրական դատարանը, 10.07.2018 թվականի թիվ ՄԴՌ-1424 որոշմամբ անդրադառնալով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի սահմանադրականության հարցին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) զինվորական ծառայության ընթացքում ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի դիմաց փոխհատուցում նախատեսող իրավակարգավորման սպասողվումը Սահմանադրությանը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերով սահմանված պետության պոզիտիվ պարտականությունն է:

(...)

*Զինվորական ծառայությունը, ի թիվս այլնի, համարվում է պետական ծառայության տեսակ, որպեսզի գործող հարաբերություններն Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի ուժով կարող են կարգավորվել Օրենսգրքով միայն այն դեպքում, երբ համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ: Մինչդեռ, Օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասով այլ բան է նախատեսվում, քան այն նախատեսված է Օրենսգրքով: Մասնավորապես, ի տարբերություն Օրենսգրքի 170-րդ հոդվածի, որը թույլատրում է աշխատանքից ազատվելիս հարուցում սրանսպ չօգտագործված արձակուրդների համար ստանց ժամկետային սահմանափակման, Օրենքը նախատեսել է հարուցում սրանսպու իրավունք միայն զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց, իսկ Օրենքի 72-րդ հոդվածով հարակեցվում է զինծառայողների և զինծառայողներին հավասարեցված անձանց շրջանակը, որոնց վրա տարածվում է դիրտարկվող սոցիալական երաշխիքը: Դրանք են՝ Հայաստանի Հանրապետության*

պաշարպանության, ոստիկանության, ազգային անվտանգության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում համապարասիան ծառայության մեջ գրնվող անձինք, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակարարողական ծառայողները:

Ի տարբերություն այլ աշխատողների՝ Օրենքի 72-րդ հոդվածով նախատեսված զինծառայողների և զինծառայողներին հավասարեցված անձանց համար **նույն սոցիալական երաշխիքը նախատեսվել է ավելի փոքր ծավալով**: Եվ դա նախատեսվել է Օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասին համահունչ:

Այլ է ինդիքը, թե արդյոք օրենսդիրն իրավասու էր աշխատանքային բնույթի հարաբերությունների մեջ գրնվող բոլոր անձանց համար նախատեսված սոցիալական երաշխիքը որոշ կատեգորիայի ծառայողների համար սահմանել այլ ծավալով:

(...) արձակուրդի իրավունքը համապարփակ իրավունք է և տարածվում է ինչպես հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների, այնպես էլ մասնավոր անձանց վրա, որոնք գրնվում են աշխատանքային հարաբերությունների մեջ: **Ջինծառայողները թե՛ հանրային ծառայողներ են, թե՛ նաև լայն իմաստով աշխատանք կատարող անձինք, որոնց արձակուրդի և հանգստի իրավունքը չի կարող չերաշխավորվել օրենքով:**

Թեև Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդիրն է վերապահված ամենամյա վճարովի արձակուրդի իրավունքի բովանդակությունը որոշակիացնելու լիազորությունը, այդուհանդերձ, Սահմանադրությունը, ի թիվս այլնի, նախ բացառում է ընդհանրապես այս իրավունքի չերաշխավորելը օրենքով, ինչպես նաև խորական մտրեցումն այն երաշխավորելիս:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Օրենքը երաշխավորում է այս իրավունքը նաև զինծառայողների համար, բայց սահմանում է դրա պաշարպանության ավելի նեղ ծավալ՝ չսահմանելով և չհիմնավորելով այն չափանիշները, որոնցով հնարավոր կլիներ իրավաչափ տարբերակում դնել, մի կողմից՝ զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, մյուս կողմից՝ այլ պետական ծառայողների միջև:

Այդ առումով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չօգտագործված արձակուրդների օրերի դիմաց փոխհատուցում սրանալու միասնական իրավակարգավորումների սպահովումն օրենսդրի իրավասության շրջանակներում է: **Վերագրյալից ելնելով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կրկյա դեպքում տարբերակումը չունի օբյեկտիվ բնույթ, հիմնավորված չէ և չի հետապնդում իրավաչափ նպատակ»:**

ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՄԴՈ-1424 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով որոշել է. «**«Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասը՝ զինծառայողի՝ չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում սրանալու հնարավորությունը զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա ժամանակահատվածով սահմանափակելու մասով, ճանաչել Սահմանադրության 29, 60, 73-րդ և 82-րդ հոդվածներին հակասող և անվավեր»:**

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում սկզբունքային անդրադարձ է կատարել իր կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների էության, բովանդակության, դրանց իրավաբանական ուժի ու դերի հարցերին: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը 25.02.2011 թվականի թիվ ՄԴՈ-943 որոշմամբ արձանագրել է, որ. «Սահմանադրական դատարանի որոշումները պետք է ընկալվեն նաև իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (նախարան, նկարագրական-պարճատարանական և եզրափակիչ մասեր)՝ սպահովելու

այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաև դրանցից բխող օբյեկտիվ և սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հարակրթությունը: Այդ խնդրի իրագործմանն են միարված հարկապես Սահմանադրական դատարանի որոշումների նկարագրական-պարճատարանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները, որոնցում, որպես կանոն, բովանդակվում են սահմանադրական դատարանին հասցեագրված դիմումների առարկայի (բարձրացված հարցերի, սահմանադրաիրավական վեճերի) իրավավերլուծության արդյունքում դատարանի կողմից արված և որոշման եզրափակիչ մասի հիմքում դրված եզրահանգումները, որոնց էության և բովանդակության անսրեանան դեպքում չի կարող երաշխավորվել դատարանի որոշման կատարումը»:

ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների էության և բովանդակության հարցերի վերաբերյալ վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018 թվականի թիվ ՍԴՈ-1424 որոշմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի բովանդակային ամբողջականությունը վկայում է, որ «Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասը ՀՀ Սահմանադրության վերը նշված նորմերին հակասող և անվավեր է ճանաչվել միայն չօգտագործված արձակուրդի դիմաց փոխհատուցում սահմանելու հնարավորության ժամկետային սահմանափակման մասով:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1424 որոշման ուժի մեջ մտնելու պահից «Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի՝ չօգտագործված արձակուրդի դիմաց փոխհատուցում սահմանելու հնարավորության ժամկետային սահմանափակման մասով կարգավորման իրավական գործողությունը դադարել է և չօգտագործված արձակուրդի դիմաց փոխհատուցման հնարավորությունը կարգավորող իրավական նորմը գործում է առանց որոշակի ժամկետով սահմանափակող դրույթի:

Ընտևաբար՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1424 որոշման ուժով «Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասը զինձառայողների համար երաշխավորում է չօգտագործված արձակուրդի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքը՝ առանց որևէ ժամկետային սահմանափակման:

Անփոփելով վերոգրյալը և իրացնելով ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածում ամրագրված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու վճռաբեկ դատարանի առաքելությունը և այդ առումով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի կապակցությամբ իրավունքի զարգացումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հարկ է համարել արձանագրել, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային (ծառայողական) հարաբերությունների նկատմամբ վկայակոչված իրավանորմը կարող է կիրառելի լինել միայն այն պարագայում, երբ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային (ծառայողական) հարաբերություններին նկատմամբ վկայակոչված իրավանորմը կարող է կիրառելի լինել միայն այն պարագայում, երբ հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային (ծառայողական) հարաբերություններին առնչվող կոնկրետ հարցերը կարգավորված չեն տվյալ ծառայության առանձնահատկությունները կարգավորող հատուկ օրենքներով: Այլ կերպ ասած՝ եթե հանրային պաշտոններ և հանրային ծառայության

պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորված չեն տվյալ ծառայության առանձնահատկությունները կարգավորող հատուկ օրենքներով, ապա այդ հարաբերությունների նկատմամբ պետք է կիրառվի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը (տե՛ս, Կարեն Աթաջանյանն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության թիվ ՎԳ/0079/05/19 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 05.05.2023 թվականի որոշումը):

**Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործը հարուցվել է Հրաչյա Պետրոսյանցի կողմից ներկայացված գործողության կատարման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որոշակի գործողություններ, այն է՝ հաշվարկել և վճարել ծառայության ողջ ժամանակահատվածի ընթացքում 699 շաբաթ օր աշխատած, սակայն վարձատրություն չստացած և ծառայության ընթացքում ամենամյա արձակուրդներից չօգտագործված 37 օրերի համար նախատեսված գումարները:

**Դատարանը** բավարարել է Հրաչյա Պետրոսյանցի հայցը՝ պատճառաբանելով, որ «(...) Տվյալ դեպքում, սույն գործով ձեռք բերված սպացույցների համալերքարում, ինչպես նաև հայցվորի կողմից մատչելի փաստաթղթերի և դրանից որոշակի հանգամանքների վերաբերյալ պարասխանող կողմի առարկությունների, մասնավորապես՝ հանգարյան օրերին կատարած աշխատանքի դիմաց այլ ձևով փրամադրված հարուցման փաստաթղթի բացակայության հաշվառմամբ՝ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվոր Հրաչյա Պետրոսյանցին հանգարյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերին կատարված և աշխատանքի ժամանակացույցով չնախատեսված 2000-2016թ. շաբաթ օրերին կատարված աշխատանքի (ծառայության) դիմաց ծառայության մեկ ամսվա ընթացքում վճարվի այլ հանգարյան օր չի փրամադրվել և նույն օրերի քանակի չափով ավելացում ամենամյա արձակուրդին չի եղել, միաժամանակ, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ վարձատրության եղանակներից՝ վերջնանշվածները չեն կարող փրվել, քանզի 2016 թվականին հայցվորն արձակվել է զինվորական ծառայությունից, դատարանը գրնում է, որ սույն դեպքում հայցվոր Հրաչյա Պետրոսյանցին հանգարյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերին կատարված և աշխատանքի ժամանակացույցով չնախատեսված 2000-2016թ. շաբաթ օրերին կատարված աշխատանքի (ծառայության) դիմաց վարձատրությունը ենթակա է իրականացման՝ վարձատրություն, որպիսի պայմաններում դատարանը գրնում է, որ հայցվորի պահանջը հայցվոր Հրաչյա Տիգրանի Պետրոսյանցին 2000 թվականից մինչև գորացրման օրը՝ 14.11.2016 թվականը, աշխատած, սակայն վարձատրություն չստացած 699 շաբաթ օրերի համար նախատեսված գումարները վճարելուն պարտավորեցնելու մասին, հիմնավոր է և ենթակա է բավարարման: (...) դատարանն արձանագրում է, որ աշխատանքից կամ զինծառայությունից ազատվելիս աշխատակցին կամ ծառայողին ենթակա է փրամադրման չօգտագործված ամենամյա արձակուրդների համար դրամական հարուցում՝ չօգտագործված քոյոր արձակուրդների համար: Եշվածի հիմքով, միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ չօգտագործված արձակուրդի օրերի քանակի մասով պարասխանող կողմը որևէ առարկություն չի ներկայացրել, այս մասով հիմք ընդունելով նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի պետի 30.06.2020թ. թիվ 521 գրությունը, դատարանը գրնում է, որ հայցվորի

պահանջը՝ Հրաչյա Տիգրանի Պետրոսյանցին 2000 թվականից մինչև գորացրման օրը՝ 14.11.2016 թվականը, ծառայության ընթացքում ամենամյա արձակուրդներից չօգտագործված 37 օրերի համար նախարելաված գումարները վճարելուն պարտավորեցնելու մասին, նույնպես հիմնավոր է և ենթակա է բավարարման»:

**Վերաքննիչ դատարանի** 06.04.2022 թվականի որոշմամբ ՀՀ պաշտպանության նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ. «Վերաքննիչ դատարանը, վերը նշված իրավական դիրքորոշումները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկարմամբ, գրնում է, որ հայցվոր Հրաչյա Պետրոսյանցն ունի 2000 թվականից մինչև գորացրման օրը՝ 14.11.2016 թվականը ընկած ժամանակահատվածում ծառայության ընթացքում թվով 699 ոչ աշխատանքային շաբաթ օրերին կատարած աշխատանքի դիմաց համարժեք վարձատրության իրավունք, որպիսի իրավունքը ենթակա է արդյունավետ իրացման:

Միաժամանակ, անդրադառնալով բողոքաբերի՝ 699 շաբաթ օրերը կես աշխատանքային օր դիտարկելու վերաբերյալ փաստարկին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության Վագգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի թիվ 200, թիվ 230, թիվ 225, թիվ 222, թիվ 256, թիվ 280, թիվ 260, թիվ 277, թիվ 264 հրամաններով, ՀՀ պաշտպանության նախարարության 05.11.2019թ. թիվ 521 գրությամբ շաբաթ օրերին աշխատանքային ժամը սահմանված է 09:00-14:00 կամ 09:00-15:00: Նշված հանգամանքը ներկայացվել է նաև պարտափաստողի ներկայացուցչի կողմից 26.01.2021թ. կայացած դատական նիստի ընթացքում, որին ներկա են եղել հայցվորն ու հայցվորի ներկայացուցիչը: Վերջիններս որևէ առարկություն չեն ներկայացրել: Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ հայցվորը շաբաթ օրերին աշխատանքային պարտականությունները կատարել է ոչ լրիվ աշխատանքային օրով, որպիսի փաստը հարկ է հաշվի առնել համարժեք վարձատրության ընդհանուր չափը որոշելիս:(...):

Մինչդեռ, սույն պարագայում ինդրո առարկա իրավահարաբերությունները մինչև ՄԴՈ-1424 որոշման ուժի մեջ մտնելը որևէ դատական կամ վարչական ակտով չեն կարգավորվել: Հետևաբար, բողոքարկվող դատական ակտով հայցվորի նշված պահանջը բավարարելու համար ՀՀ սահմանադրական դատարանի 10.07.2018թ. ՄԴՈ-1424 որոշումը որպես իրավական հիմք դիտարկելը, չի ենթադրում նշված որոշման հետադարձ ուժով կիրառում:

Ըստ այդմ՝ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում Դատարանի եզրահանգումն առ այն, որ «աշխատանքից կամ ծառայությունից ազատվելիս աշխատակցին կամ ծառայողին ենթակա է փրամադրման չօգտագործված ամենամյա արձակուրդների համար դրամական հատուցում՝ չօգտագործված բոլոր արձակուրդների համար»:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը, գրնելով, որ առկա չեն վերաքննիչ բողոքը բավարարելու հիմքեր, իրացնում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախարելաված լիազորությունը՝ Վերաքննիչ դատարանը անփոփոխ է թողնում թերի պարձառաբանված դատական ակտը՝ պարձառաբանելով այն»:

Սույն որոշմամբ հայտնած իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Հրաչյա Պետրոսյանցի կողմից ներկայացվել է գործողության կատարման հայց, որով վերջինս պահանջել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարել որոշակի գործողություններ, այն է՝ իրեն վճարել 2000

թվականից մինչև գորացրման օրը՝ 14.11.2016 թվականը, աշխատած, սակայն վարձատրություն չստացած 699 շաբաթ օրերի և ծառայության ընթացքում ամենամյա արձակուրդներից չօգտագործված 37 օրերի համար նախատեսված գումարները:

Հայցվորը հայցային պահանջի իրավական և փաստական հիմքերում դրել է իր կողմից գինվորական ծառայության ողջ ժամանակահատվածում շաբաթ օրերին աշխատանքի ներկայանալու և այդ ժամանակի համար չվարձատրվելու փաստը պնդելով, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ զինված ուժերում զինվորական ծառայություն իրականացնող անձանց հանգստյան, տոնական օրերին աշխատանքի համար հավելումներ չեն տրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հավելումների վճարումը նախատեսված է ՀՀ կառավարության որոշմամբ, վերջինս հանգստյան օրերին կատարած աշխատանքի դիմաց ունի փոխհատուցում ստանալու «օրինաչափ ակնկալիք»:

Այսինքն, հայցվորը, ներկայացնելով ծառայության ողջ ժամանակահատվածի ընթացքում շաբաթ օրերին աշխատած, սակայն չվարձատրված գումարը հաշվարկելու և վճարելուն ուղղված որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին պահանջ, ըստ էության, պահանջել է հանգստյան օրերին կատարված աշխատանքի դիմաց վարձատրություն տրամադրելուն ուղղված գործողություններ կատարել:

Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում փաստել, որ պատասխանողի կողմից սույն վարչական գործով չի ներկայացվել հայցվորի կողմից իրականացված ծառայությունը ՀՀ կառավարության 03.07.2014 թվականի «Զինված ուժերում, ազգային անվտանգության մարմիններում, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում, քրեակատարողական և փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը և կարգը սահմանելու մասին» թիվ 712-Ն որոշմամբ հաստատված՝ «Զինված ուժերում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը և հաշվարկման գործակիցները» թիվ 1 հավելվածում ներառված լինելու, ըստ այդմ՝ հավելումներ հայցվորին վճարված լինելու հանգամանքը հաստատող ապացույցներ: Ավելին, բողոք բերած անձի մատնանշած հանգամանքը՝ յուրաքանչյուր ամիս հավելումներ հայցվորին ենթադրյալ վճարված լինելը, չի բացառում հայցվորի կողմից շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակ վարձատրություն ստանալու իրավական հնարավորությունը:

Ուստի, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Հրաչյա Պետրոսյանցի շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը ենթակա է փոխհատուցման, քանի որ վերջինս ունի փաստացի աշխատանքի դիմաց համարժեք հատուցում ստանալու իրավունք: Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ Հրաչյա Պետրոսյանցի շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը շաբաթվա մյուս օրերին հանգստի տրամադրմամբ չի փոխարինվել, ինչպես նաև վերջինիս չեն տրամադրվել հանգստի լրացուցիչ օրեր, որպիսի պայմաններում այդ ժամանակը ենթակա էր գումարման հիմնական արձակուրդներին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման պայմաններում Հրաչյա Պետրոսյանցի շաբաթական ծառայության ժամանակի սահմանած տևողությունից դուրս

ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը անհրաժեշտ է դիտարկել որպես չօգտագործված արձակուրդ, որը ենթակա էր վճարման վերջնահաշվարկի շրջանակներում՝ զինվորական ծառայությունից ազատելիս:

Այսպես, սույն գործով անվիճելի փաստ է հայցվորի կողմից 2000 թվականից մինչև զորացրման օրը՝ 14.11.2016 թվականն ընկած ժամանակահատվածում ծառայության ընթացքում թվով 699 շաբաթ օրեր ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելը: Բացի այդ, դատավարության մասնակիցները այդ փաստը չեն վիճարկել ստորադաս դատարաններում, իսկ ներկայացված վճռաբեկ բողոքով ՀՀ պաշտպանության նախարարությունը ըստ էության ընդունել է հայցվորի կողմից 2000 թվականից մինչև զորացրման օրը՝ 14.11.2016 թվականն ընկած ժամանակահատվածում ծառայության ընթացքում թվով 699 շաբաթ օրեր ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու փաստը: Ավելին, բողոքաբերը չի վիճարկել նաև այն, որ հայցվորի կողմից 2000 թվականից մինչև զորացրման օրը՝ 14.11.2016 թվականն ընկած ժամանակահատվածում ծառայության ընթացքում թվով 699 օրեր ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավելու փոխարեն հայցվորին չի տրվել համապատասխանաբար շաբաթվա մյուս օրերին հանգստյան օր և աշխատած շաբաթ օրերը չի գումարվել հայցվորի ազատ օրերին և տրվել հանգստի լրացուցիչ օրերի ձևով:

Սույն գործի փաստական հանգամանքները համադրելով վերը նշված իրավակարգավորումների հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 2000 թվականից մինչև զորացրման օրը՝ 14.11.2016 թվականն ընկած ժամանակահատվածում ծառայության ընթացքում թվով 699 թվականն ընկած ժամանակահատվածի ծառայության ընթացքում Հրաչյա Պետրոսյանցն ընդգրկվել է ծառայության 699 (վեց հարյուր ինսունինը) շաբաթ օր մինչև ժամը 14:00-ը և նշված ժամանակահատվածի ծառայության ընթացքում ոչ աշխատանքային շաբաթ օրերին ծառայության ներգրավելու փոխարեն Կանոնագրքով սահմանված որևէ եղանակով փոխհատուցում չի ստացել: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հրաչյա Պետրոսյանցի շաբաթական ծառայության ժամանակի սահմանված տևողությունից դուրս ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու ժամանակը ենթակա է փոխհատուցման չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու ձևով:

Ավելին՝ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ դեպքում ենթակա էր կիրառման ՀՀ կառավարության 09.08.2018 թվականին ընդունված և 18.08.2018 թվականի ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելիս և արձակուրդի անցկացման վայրից վերադառնալիս զինծառայողի տրանսպորտային ծախսերը փոխհատուցելու կարգը և պայմանները, զինվորական ծառայությունից արձակվելիս չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց զինծառայողին տրվող փոխհատուցման չափը սահմանելու, ինչպես նաև ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի N 778 և 2004 թվականի մայիսի 6-ի N 886-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 898 որոշումը:

Բացի այդ, անդրադառնալով հայցվորի չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում կողմերի միջև առկա չէ վեճ՝ հայցվորի՝ զինվորական ծառայությունից ազատվելու օրվա դրությամբ 37 օր չօգտագործված արձակուրդ ունենալու և դրա համար փոխհատուցում ստացած չլինելու վերաբերյալ, ուստի



հիմք ընդունելով սույն որոշման պատճառաբանությունները՝ հայցվորին ենթակա է հատուցման նաև նշված օրերի քանակով չօգտագործված արձակուրդի գումարը՝ առանց ժամկետային սահմանափակման:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, այդուհանդերձ Վերաքննիչ դատարանը խնդրո առարկա իրավահարաբերության նկատմամբ կիրառելի է համարել ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխան նորմերը, որը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն կիրառելի չէ:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի բողոքարկվող դատական ակտը պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը: Տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի թերի կամ սխալ պատճառաբանված դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Միաժամանակ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն վարչական գործի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը անփոփոխ թողնելը՝ սույն որոշման պատճառաբանություններով, բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է, և առկա ապացույցները և հաստատված հանգամանքները թույլ են տալիս նման դատական ակտ կայացնել:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ներկայացված վճռաբեկ բողոքնի հիմքերը բավարար չեն Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար, ուստի բողոքը ենթակա է մերժման, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ

կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որն իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վճռաբեկ բողոքի համար նախապես վճարվել է 40.000 ՀՀ դրամ, մինչդեռ, վճարման էր ենթակա 20.000 ՀՀ դրամ՝ որպես մեկ ոչ դրամական պահանջի գործով վճռաբեկ բողոքի համար օրենքով սահմանված պետական տուրքի գումար: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ավելի վճարված պետական տուրքը՝ 20.000 ՀՀ դրամը, ենթակա է վերադարձման ՀՀ պաշտպանության նախարարությանը:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 06.04.2022 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/12432/05/17  
2023թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/12432/05/17

Նախագահող դատավոր՝

Ա. Սարգսյան

Դատավորներ՝

Ա. Պողոսյան

Ա. Բաբայան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող</i>	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
<i>գեկուցող</i>	Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
	Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
	Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի ապրիլի 12-ին

գրավոր ընթացակարգով քննելով Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.10.2020 թվականի որոշման դեմ վարչական գործով՝ ըստ հայցի Ժորա Հարությունյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի Արագածի փողոցի 93ա շենքի դիմաց գտնվող, Ժորա Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակն օրինականացնելու մասին որոշում տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վարուժան Հարությունյանը և Ժորա Հարությունյանը պահանջել են պարտավորեցնել Երևանի քաղաքապետին տրամադրել Երևան քաղաքի Արագածի փողոցի 93ա շենքի դիմաց գտնվող, Ժորա Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակն օրինականացնելու մասին որոշում:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Հ. Այվազյան) (այսուհետ՝ Դատարան) 20.02.2018 թվականի որոշմամբ հայցվոր Վարուժան Հարությունյանի մասով գործի վարույթը կարճվել է:

Դատարանի 19.06.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.10.2020 թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.06.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի քաղաքապետարանը (ներկայացուցիչ՝ Անդրանիկ Մուրադյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 5-րդ, 25-27-րդ հոդվածները, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, սխալ է մեկնաբանել և կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ, 46-րդ, 48-րդ, 53-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկարմանը պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» թիվ 731-Ն որոշումը, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և փնտրիման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման հավելված 1-ի 33-34-րդ կետերը, սխալ է կիրառել ՀՀ վճռաբեկ դատարանի 25.04.2017 թվականի ՎԴ/0528/05/16 որոշումը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է համայնքի իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը՝ հաշվի չառնելով, որ ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ ինքնակամ շինությունն օրինական ճանաչելու իրավունքից օգտվելն օրենսդիրը պայմանավորել է համայնքի ղեկավարի՝ որպես հողամասի սեփականատիրոջ նախաձեռնություն դրսևորելու հետ, որպիսի պայմաններում համայնքի ղեկավարը կաշկանդված չէ տվյալ կառույցն իրականացրած անձի ցանկությամբ կամ մտադրությամբ: Այս տեսակ վարույթը չի հարուցվում և չի իրականացվում կառույցն իրականացրած անձի դիմումով, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի դրույթները քննարկվող պարագայում կիրառելի չեն:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև այն հանգամանքը, որ հայցվոր Ժորա Հարությունյանի համար ղեռնս չի ծագել ինքնակամ շինությունը գնելու նախապատվության իրավունքը, հետևաբար վերջինս վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով չի հանդիսանում իրավունքը խախտված շահագրգիռ անձ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.10.2020 թվականի որոշումը և հայցը մերժել կամ բեկանել այն և գործն ուղարկել նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Շենգավիթ համայնքի «Նժդեհ» համատիրության (որպես՝ Վարձատու) և Վարուժան Հարությունյանի (որպես՝ Վարձառու) միջև 20.08.2008 թվականին կնքվել է պայմանագիր, որով Վարձատուն պարտավորվել է իր անձնական օգտագործման ավտոտնակի գրադեցրած 44.8քմ տարածքի համար կատարել ամսական վճարումներ, իսկ Վարձատուն պարտավորվել է ավտոտնակի հանրային կամ այլ նպատակով հատկացում կատարելու դեպքում ապահովել ավտոտնակի համար այլ տարածք (**հատոր 1-ին գ.թ. 13**):

2) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի կողմից Վարուժան Հարությունյանին 05.02.2010 թվականին տրված N 22/01-247 տեղեկանքի համաձայն՝ Արագածի փողոցի թիվ 93ա շենքի բակում առկա քարե ավտոտնակը կառուցվել է 2000 թվականին (**հատոր 1-ին գ.թ. 12**):

3) 17.07.2014 թվականին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին մուտքագրված և «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի տնօրենին ուղղված դիմումով Ժորա Հարությունյանը խնդրել է չափագրել Արագած փողոց, թիվ 93ա շենքի դիմաց գտնվող իր կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակը (**հատոր 1-ին գ.թ. 15**):

4) Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲԸ տնօրենը 24.07.2014 թվականի թիվ ԷԲ20-459 գրությամբ Ժորա Հարությունյանին տեղեկացրել է, որ չափագրումը կատարվել է և 23.07.2014 թվականին տրամադրվել է ինքնակամ կառույցների օրինականացման հանձնաժողովին (**հատոր 1-ին գ.թ. 19**):

5) Փաստաբան Ա. Պողոսյանը 02.05.2017 թվականի փաստաբանական հարցմամբ Երևանի քաղաքապետին խնդրել է տեղեկություն հայտնել Երևան քաղաքի, Արագածի 93ա շենքի դիմաց ինքնակամ կառուցված ավտոտնակի օրինականացման գործընթացի վերաբերյալ և տրամադրել օրինականացման հանձնաժողովի որոշումը (**հատոր 1-ին գ.թ. 20**):

6) Երևանի քաղաքապետի խորհրդական Հ.Մուրադյանի 20.05.2017 թվականի №04/25643 գրությամբ՝ Երևանի քաղաքապետին հասցեագրված ք. Երևան, Արագածի փողոց, 93ա շենքի դիմաց գտնվող ինքնակամ կառուցված շինությունը (ավտոտնակ) և գրադեցրած հողամասը ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման շրջանակներում օրինականացնելու դիմումի վերաբերյալ փաստաբան Ա. Պողոսյանը տեղեկացվել է, որ առաջնահերթության նախապատվությունը տրվում է երեք և ավելի քարե ավտոտնակների շարքին: Տեղագնումից պարզվել է, որ քննարկվող ավտոտնակն իրենից ներկայացնում է առանձին շինություն և տարածքում ավտոտնակների շարք առկա չէ (**հատոր 1-ին գ.թ. 21**):

7) 14.08.2017 թվականին Երևանի քաղաքապետարան ներկայացված դիմումով Ժորա Հարությունյանը խնդրել է ընդունել որոշում Երևան քաղաքի Արագածի 93ա շենքի դիմաց գտնվող ինքնակամ կառուցված ավտոտնակն օրինականացնելու վերաբերյալ (**հատոր 1-ին գ.թ. 22-23**):

8) Երևանի քաղաքապետի խորհրդականի 21.08.2017 թվականի թիվ 04/50291 գրության համաձայն՝ տեղագնումից պարզվել է, որ քննարկվող ավտոտնակն իրենից ներկայացնում է առանձին շինություն և տարածքում ավտոտնակների շարք առկա չէ (**հատոր 1-ին գ.թ. 25**):

9) Երևանի քաղաքապետի խորհրդականի 04.07.2018 թվականի №04/484762 գրության համաձայն՝ Երևան քաղաքի Արագածի 93ա շենքի դիմաց գտնվող ինքնակամ կառուցված ավտոտնակը սեփականության իրավունքով տրամադրելու

վերաբերյալ ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման շրջանակներում պատրաստվել է Երևանի քաղաքապետի որոշման նախագիծ (**հատոր 2-րդ, գ.թ. 13**):

10) Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի տնօրենի առաջին տեղակալի կողմից 16.07.2018 թվականին տրված «Երևան քաղաքի (համայնքի) սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցի մասին» թիվ 18-06/Ա-111 մասնագիտական եզրակացության համաձայն՝ Արագածի փողոց, 93ա շենքի դիմաց Ժորա Հարությունյանի կողմից կառուցված քարե շինությունը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումներում, ենթակա է օտարման, կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին: Առաջարկվել է ճանաչել շինության նկատմամբ Երևան քաղաքի (համայնք) սեփականության իրավունքը հետագայում օրինական ճանաչելու և կառուցապատողին օտարելու հնարավորությամբ (**հատոր 2-րդ, գ.թ. 71**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 48-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի 33-34-րդ կետերով նախատեսված դրույթների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառույթի շրջանակներում վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

- *արդյո՞ք պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունների օրինականացումը կարող է կատարվել բացառապես իրավասու մարմնի նախաձեռնությամբ, և ինքնակամ շինությունը կառուցած անձը չի կարող իր նախաձեռնությամբ հայցել տվյալ շինության օրինականացում,*

- *արդյո՞ք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի նորմերը կիրառելի են այն դեպքում, երբ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ շինությունը կառուցած անձն իրավասու մարմնից հայցել է տվյալ շինության օրինականացում:*

Ինքնակամ կառույցի օրինականացման իրավական հիմքերն ու «ինքնակամ կառույց» հասկացությունը սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածում: Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 188-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է. «ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական

ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի կամ թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը, եթե իրավական ակտում՝

1) նշված նորմի կիրառումը պայմանավորված է «կամ» շաղկապով բաժանված պայմաններով, կամ

2) նշված նորմի կիրառումը պայմանավորված է ստորակետերով և «կամ» շաղկապով բաժանված պայմաններով»:

Օրենսդրական տեխնիկայի նշված կանոնի կիրառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինքնակամ կառույց է համարվում՝

- օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը,

- առանց թույլտվության կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը,

- թույլտվությամբ սահմանված պայմանների խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը,

- քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել:

Ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է այն անձի սեփականության իրավունքը, որին սեփականության իրավունքով պատկանում է այն հողամասը, որի վրա գտնվում է կառույցը:(...)»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով օրենսդիրն ինքնակամ կառույցն օրինականացնելու լիազորությունը վերապահել է համայնքների ղեկավարներին, համայնքի վարչական տարածքներից դուրս՝ մարզպետներին: Ըստ այդ նորմի՝ ինքնակամ կառույցները կարող են ճանաչվել օրինական՝ համայնքների ղեկավարների, համայնքի վարչական տարածքներից դուրս՝ մարզպետների կողմից, կառավարության սահմանած կարգով: Ինքնակամ կառույցը կարող է ճանաչվել օրինական միայն այն անձի դիմումով, որին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվում է այդ կառույցը:

Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է ինքնակամ կառույցի օրինականացումը բացառող հիմքերը, այն է՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության

գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը, սահմանելով «ինքնական կառույց» հասկացությունը, ինքնական կառույցի օրինականացման իրավական հնարավորությունը, օրինականացնելու վերաբերյալ որոշում ընդունելու լիազորությամբ օժտված սուբյեկտների շրջանակը, ինչպես նաև ինքնական կառույցի օրինականացումը բացառող հանգամանքների սպառիչ շրջանակը՝ ինքնական կառույցի օրինականացման կարգը սահմանելու լիազորությունը պատվիրակել է ՀՀ կառավարությանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածին համապատասխան՝ ընդունվել է «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշումը: Նշված որոշմամբ հաստատվել է «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման» կարգը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման (այսուհետ նաև՝ «Թիվ 912-Ն որոշում») 2-րդ կետի համաձայն՝ օրինականացման եկթակա չեն այն ինքնական կառույցները. «ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք»:

Ինքնական կառույցի օրինականացումը բացառող նշված հանգամանքները վերարտադրում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված՝ ինքնական կառույցի օրինականացումը բացառող հանգամանքները:

Թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգը սահմանում է քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող ինքնական կառույցների, բազմաբնակարան և ստորաբաժանված շենքերում, այդ թվում՝ շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքում քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից ինքնական կառուցված շինությունների օրինականացման, ինչպես նաև պետությանը կամ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է երկու տարբեր իրավական ռեժիմներ՝ քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող ինքնական կառույցների օրինականացման (Կարգի Բաժին 2) և պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնական կառույցների օրինականացման (Կարգի Բաժին 4) համար:

Կարգի «Քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում գտնվող ինքնական կառույցների



օրինականացումը» վերտառությամբ բաժնում գետեղված 8-րդ կետը սահմանում է. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում (տնամերձ, այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար հողամասեր) գտնվող ինքնակամ կառուցված բնակելի նշանակության (անկախ դրանց ավարտվածության աստիճանից) շենքերը, շինությունները կարող են ճանաչվել օրինական, եթե դրանք բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանները»:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ հողամասի սեփականատերն ինքնակամ կառույցի օրինականացման նպատակով, ըստ գույքի գտնվելու վայրի, պետք է դիմի համապատասխան համայնքի ղեկավարին:

Կարգի 10-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը դիմումն ստանալուց հետո՝ նույն Կարգի 8-րդ կետում նշված՝ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության կառույցների համար 30-օրյա ժամկետում ընդունում է դրանց օրինականացման կամ մերժման մասին որոշում:

Կարգի «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցների տնօրինումը» վերտառությամբ բաժնում գետեղված 33-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին: Օրինականացման որոշման մեջ, ի թիվս այլնի, նշվում են օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը՝ տվյալ կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) կամ նույն կարգի 34.2-րդ կետով նախատեսված դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անելու մասին տվյալները:

Կարգի 34-րդ կետը սահմանում է. «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինական ճանաչված կառույցների նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում օրինականացման լիազոր մարմնի կողմից տվյալ կառույցը՝ սույն կարգի 35-րդ կետով սահմանված գներով (վարձավճարով), ... ձեռք բերելու համար գրավոր առաջարկություն է արվում կառույցն իրականացրած անձին...»: Օրինականացման մասին որոշման մեջ, ի թիվս այլնի, նշվում են օրինականացված կառույցը և համապատասխան հողամասը՝ տվյալ կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) (...) տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անելու մասին տվյալները (Կարգի 33-րդ կետի (գ) ենթակետ):

Կարգի «Եզրափակիչ դրույթներ» վերտառությամբ բաժնի 44-րդ կետը սահմանում է ինքնակամ կառույցի օրինականացումը մերժելու հիմքերը: Ըստ Կարգի 44-րդ կետի «ա» ենթակետի՝ նույն Կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե դրանք չեն բավարարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և նույն Կարգով սահմանված օրինականացման պայմանները: Կարգի 45-րդ կետի համաձայն՝ արգելվում է ինքնակամ կառույցների օրինականացման՝ այլ պատճառներով մերժումը, այդ թվում՝ աննպատակահարմարության պատճառաբանությամբ:

Այսպիսով, ինքնակամ կառույցի օրինականացման համար՝ անկախ նրանից,

թե ում սեփականությունը հանդիսացող հողամասի վրա է կառուցված (պետական կամ համայնքային, թե մասնավոր սուբյեկտի), անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.

- տվյալ ինքնական կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,

- վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

- ինքնական կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,

- ինքնական կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ինքնական կառույցն օրինականացնելու համար անհրաժեշտ վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում արգելվում է մերժել օրինականացման պահանջը, այդ թվում՝ աննպատակահարմարության պատճառաբանությամբ: Նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնական կառույցը ենթակա է օրինականացման և օտարման այն կառուցած անձին (անձանց):

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը և դրա հիման վրա ընդունված Թիվ 912-Ն որոշումն օրինականացման համար անհրաժեշտ վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում ճանաչում և ամրագրում են ինքնական կառույցն իրականացրած անձի՝ ինքնական կառուցված շինության նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի իրավունքը: Հաշվի առնելով, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնական շինությունն օրինականացնելու դեպքում Թիվ 912-Ն որոշման իմպերատիվ պահանջն է դրանով սահմանված կոնկրետ ժամկետում օրինական ճանաչված կառույցը ձեռք բերելու համար գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած անձին (օրինականացված շինությունն օտարել ինքնական կառույցն իրականացրած անձին)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինքնական կառույցն իրականացրած անձը տվյալ կառույցի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի իրավունք ունի նաև այն դեպքում, երբ տվյալ շինությունը կառուցված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.04.2014 թվականի թիվ ՄԴՌ-1148 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետևողականորեն ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի

1-ին արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում պաշտպանության է ենթակա նաև օրինական ակնկալիքի իրավունքը՝ ներառվելով նշված արձանագրության մեջ «գույք» հասկացության բովանդակային ծավալում (*Կրեն, մասնավորապես, Եվրոպական դատարանի Kopecky v. Slovakia գործով 28.09.2004 թվականի վճիռը, գանձար թիվ 44912/98, կետ 35*):

Հաշվի առնելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ինքնակամ կառույցի օրինականացման համար անհրաժեշտ պայմանները բավարարելու դեպքում ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի իրավունքի իրացումը պետք է երաշխավորվի ինչպես այն դեպքում, երբ ինքնակամ կառույցով ծանրաբեռնված հողամասը սեփականության իրավունքով պատկանում է ինքնակամ կառույցն իրականացրած անձին, այնպես էլ այն դեպքում, երբ ինքնակամ կառույցով ծանրաբեռնված հողամասը պետական կամ համայնքային սեփականություն է: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կարգի 33-րդ կետի դրույթն առ այն, որ «համայնքի ղեկավարը *սեփական նախաձեռնությամբ* ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին», չի կարող բացառել ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից նշված հողամասերում կառուցված շինության նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի իրավունքի իրացման հնարավորությունը, որպիսի հնարավորությունը կարող է իրացվել կառույցն իրականացրած անձի կողմից իր իսկ նախաձեռնությամբ տվյալ կառույցի օրինականացում հայցելու միջոցով:

Վճռաբեկ դատարանը խնդրո առարկա իրավական վեճն անհրաժեշտ է համարում դիտարկել նաև անձի կողմից բարենպաստ վարչական ակտ հայցելու իրավունքի համատեքստում:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

- ա) անձի դիմումը, բողոքը,
- բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը, սույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն, վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին)»:

Օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է. «1. Եթե դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմին, ապա դիմումն ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին: 2. Եթե դիմումում ներկայացված հարցերից մեկը կամ մի քանիսը ենթակա են վարչական այլ մարմնի իրավասությանը, ապա վարչական մարմինը դիմումն այդ մասով վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին: Դիմումի՝ իրեն վերաբերող մասով, վարչական մարմնում վարույթ է հարուցվում սույն օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված կարգով:

3. Եթե դիմումով առաջադրված պահանջը չի մտնում ինչպես դա ստացած վարչական մարմնի, այնպես էլ որևէ այլ վարչական մարմնի իրավասության մեջ, ապա վարչական մարմինը դիմումը և դրան կից փաստաթղթերը, դրանք ստանալուց հետո՝

եռօրյա ժամկետում, վերադարձում է դիմողին՝ նշելով պատճառների մասին...»: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածը սահմանում է դիմումով հարուցված վարչական վարույթը կարճելու հիմքերը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը սահմանում է բարենպաստ վարչական ակտի հասկացությունը, այն է՝ բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

Վերը նշված նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բարենպաստ վարչական ակտի ընդունում հայցող՝ անձի դիմումը վերադարձնելու կամ վերահասցեագրելու օրենքով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում՝ իրավասու մարմին դիմում ներկայացնելու փաստի ուժով հարուցվում է վարչական վարույթ, և հարուցված վարույթը կարճելու՝ օրենքով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում՝ վարչական մարմինը կրում է դիմումի ըստ էության քննության պարտականություն՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում պարզելով դիմումով հայցվող բարենպաստ ակտի իրավաչափությունը, հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայությունը/ առկայությունը:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը յուրաքանչյուր անձի համար երաշխավորում է իրավասու վարչական մարմնից բարենպաստ վարչական ակտ հայցելու իրավունք: Յուրաքանչյուր անձ իրավասու է տվյալ վարչական մարմնի իրավասության շրջանակներում հայցել ցանկացած բարենպաստ վարչական ակտ, որպիսի իրավունքին հանդիպական՝ իրավասու վարչական մարմինը կրում է գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունն ստուգելու, անձի դիմումը մերժելու հիմքերի առկայությունը/ բացակայությունը պարզելու պարտականություն:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ կառույցի օրինականացման վերաբերյալ համայնքի ղեկավարի որոշումը տվյալ կառույցն իրականացրած անձի համար հանդիսանում է բարենպաստ վարչական ակտ՝ հաշվի առնելով, մասնավորապես, Թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի հետևյալ կարգավորումները: Թիվ 912-Ն որոշմամբ սահմանված՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինականացված ինքնակամ կառույցների տնօրինման կարգի պարտադիր պահանջն է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող՝ օրինական ճանաչված կառույցների նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում օրինականացման լիազոր մարմնի կողմից տվյալ կառույցը՝ նույն կարգի 35-րդ կետով սահմանված գներով (վարձավճարով), իսկ դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասը՝ կադաստրային արժեքով, ձեռք բերելու համար գրավոր առաջարկություն կատարել կառույցն իրականացրած անձին (Կարգի 34-րդ կետ): Կարգի 33-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ օրինականացման մասին որոշման մեջ նշվում են, ի թիվս այլնի, օրինականացված կառույցը և համապատասխան

հողամասը՝ տվյալ կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) կամ նույն կարգի 34.2-րդ կետով նախատեսված դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անելու մասին տվյալները:

Կարգի նշված իրավակարգավորումներից բխում է, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ կառույցն օրինականացնելու մասին համայնքի ղեկավարի որոշմանը պարտադիր կերպով հաջորդում է ինքնակամ կառույցն իրականացրած անձին Թիվ 912-Ն սահմանված գներով՝ տվյալ օրինականացված կառույցը ձեռք բերելու առաջարկը: Ընդ որում, դրա համար սահմանված է կոնկրետ ժամկետ, այն է՝ օրինական ճանաչված կառույցների նկատմամբ իրավունքների պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոհիշյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ կառույցն օրինականացնելու վերաբերյալ վարչական ակտն ստեղծում է այդ կառույցն իրականացրած անձի իրավական դրությունը բարելավող պայման՝ հիմք հանդիսանալով այդ կառույցի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի իրավունքն իրացնելու համար:

Գտնելով, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ կառույցն օրինականացնելու վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշումն ինքնակամ կառույց իրականացրած անձի համար հանդիսանում է բարենպաստ վարչական ակտ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ կառույցն օրինականացնելու վերաբերյալ դիմում ներկայացնելով կառույցն իրականացրած անձն իրացնում է վարչական մարմնից բարենպաստ վարչական ակտ հայցելու իր իրավունքը, որպիսի իրավունքն օրենքի որևէ նորմով սահմանափակված չէ:

Ըստ այդմ՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ կառույցն օրինականացնելու պահանջով կառույցն իրականացրած անձի դիմումը վարչական մարմնում ստանալու օրվանից վարչական վարույթը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, համարվում է հարուցված: Վարույթի հարուցման փուլին հաջորդող փուլում՝ վարչական վարույթի ընթացիկ փուլում, համայնքի ղեկավարը (մարզպետը), հանդիսանալով ինքնակամ կառույցի օրինականացման կամ մերժման մասին որոշում ընդունելու լիազորությամբ օժտված վարչական մարմին, պարտավոր է իրականացնել դիմումի ըստ էության քննություն՝ պարզելով հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, այն է՝ ստուգելով ինքնակամ կառույցի օրինականացումը մերժելու՝ Կարգի 44-րդ կետով սահմանված հիմքերի առկայությունը/բացակայությունը: Մերժման հիմքերի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից պետք է ընդունվի ինքնակամ կառույցն իրականացրած անձի դիմումը բավարարելու՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ շինությունն օրինականացնելու մասին որոշում, ինչի արդյունքում Կարգի կարգավորումներին համապատասխան տվյալ շինությունը օտարվում է կառույցն իրականացրած անձին:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ կառավարության Թիվ 912-Ն որոշմամբ սահմանված՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ կառույցի

օրինականացման կարգը, չի կարող մեկնաբանվել այնպես, որ սահմանափակվի անձի՝ իրավասու վարչական մարմնից բարենպաստ վարչական ակտ հայցելու օրենքով երաշխավորված իրավունքը: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է նաև, որ Կարգի 33-րդ կետում ամրագրված՝ «համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնական կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին» դրույթում **«սեփական նախաձեռնությամբ» ձևակերպումը ոչ թե բացառում է ինքնական կառույցն իրականացրած անձի դիմումի հիման վրա պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնական կառույցի օրինականացման հարցի քննարկումը, այլ թույլ է տալիս նշված հարցը քննարկել նաև սեփական նախաձեռնությամբ՝ անկախ շահագրգիռ անձի դիմումի առկայությունից:**

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնական կառուցված շինությունը համայնքի ղեկավարի (մարզպետի) որոշմամբ կարող է օրինականացվել ոչ միայն վերջինիս նախաձեռնությամբ, այլ նաև ինքնական կառույցն իրականացրած անձի նախաձեռնությամբ՝ վերջինիս կողմից նեկայացված դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքներով:

Ամփոփելով վերոգրյալը և իրացնելով ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածում ամրագրված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու վճռաբեկ դատարանի առաքելությունը և այդ առումով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերի, Թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի 33-34-կետերի կապակցությամբ իրավունքի զարգացումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ ինքնական կառույցն իրականացրած անձը կարող է հայցել այդ կառույցի օրինականացում նաև այն դեպքում, երբ տվյալ կառույցը գտնվում է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա, և ըստ այդմ՝ իրավասու վարչական մարմինը կրում է կառույցն իրականացրած անձի դիմումն ըստ էության քննարկելու և Թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի 44-րդ կետով նախատեսված՝ օրինականացումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում՝ դիմումը բավարարելու պարտականություն:

Ինչ վերաբերում է պետական կամ համայնքային հողամասերի վրա կառուցված ինքնական շինությունների օրինականացման վերաբերյալ դիմումներով վարչական վարույթների նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի կիրառելիության իրավական խնդրին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված իրավական խնդիրն ածանցվում է վերը քննարկված խնդրից, և հետևաբար վերը շարադրված պատճառաբանությունները կանխորոշում և պայմանավորում են նաև Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը այս խնդրի առնչությամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը սահմանում է. «1. Եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը

կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա սույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առ ոչինչ է (...):»:

Նշված հոդվածով օրենսդիրը ձևավորել է վարչական մարմնից բարենպաստ վարչական ակտ հայցող անձի պաշտպանության իրավական երաշխիք ընդդեմ վերջինիս դիմումի առնչությամբ վարչական մարմնի դրսևորած անգործության՝ ապահովելով նաև իրավական որաշակիությունն ու կանխատեսելիությունը վարչական վարույթում:

Միաժամանակ օրենսդիրը չի սահմանել որևէ բացառություն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի կիրառման առնչությամբ. դրանով ձևավորված պաշտպանության իրավական երաշխիքը կիրառելի է ցանկացած դեպքում, երբ անձը հայցում է բարենպաստ վարչական ակտի ընդունում: Հետևաբար, հաշվի առնելով, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ շինության օրինականացման պահանջով համայնքի ղեկավարին (մարզպետին) դիմելիս կառույցն իրականացրած անձն իրացնում է բարենպաստ վարչական ակտ հայցելու իր իրավունքը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը հավասարապես կիրառելի է նաև այն դիմումների նկատմամբ, որոնցով կառույցն իրականացրած անձը հայցում է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ շինության օրինականացում:

Իրացնելով ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածում ամրագրված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու վճռաբեկ դատարանի առաքելությունը և այդ առումով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 48-րդ հոդվածի կապակցությամբ իրավունքի զարգացումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ նշված նորմի ուժով կարող է ընդունված համարվել նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցված ինքնակամ շինության օրինականացման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտը:

### ***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Դիմելով դատարան՝ Ժորա Հարությունյանը պահանջել է պարտավորեցնել Երևանի քաղաքապետին տրամադրել Երևան քաղաքի Արագածի փողոցի 93ա շենքի դիմաց գտնվող, Ժորա Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակն օրինականացնելու մասին որոշում:

**Դատարանը** 19.06.2019 թվականի վճռով հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ 04.07.2018 թվականին Երևանի քաղաքապետարան դիմումի մուտքագրման պահից մինչև 05.08.2018 թվականն ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանի կողմից վարչական վարույթի շրջանակներում համապատասխան որոշում չի տրամադրվել հայցվորին, իսկ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չկայացնելու դեպքում հայցվորն իրավացիորեն կարող

Էր հայցվող վարչական ակտը համարել ընդունված և ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը՝ հաշվի առնելով նաև, որ բացակայում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերը:

**Վերաքննիչ դատարանը**, 14.10.2020 թվականի որոշմամբ մերժել է Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «... նկատի ունենալով, որ սույն գործում առկա ապացույցներով հաստատվում է, որ խնդրո առարկա անշարժ գույքը՝ Արագած փողոցի թիվ 93ա շենքի դիմաց գտնվող ինքնակամ կառուցված ավտոտնակը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումներում, համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, ինչպես նաև բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ կառույցը պահպանելը կխախտի այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ կներկայացնի քաղաքացիների կյանքի ու առողջության համար, սակայն Ժորա Հարությունյանի ներկայացուցչի 14.08.2017 թվականի դիմումի հիման վրա օրենքով սահմանված ժամկետում չի ընդունվել որոշում խնդրո առարկա անշարժ գույքը՝ Արագած փողոցի թիվ 93ա շենքի դիմաց գտնվող ինքնակամ կառուցված ավտոտնակը օրինականացնելու վերաբերյալ՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ առկա է եղել Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի Արագածի փողոցի 93ա շենքի դիմաց գտնվող, ինքնակամ կառուցված ավտոտնակն օրինականացնելու մասին որոշում տրամադրելուն պարտավորեցնելու, այսինքն՝ հայցը բավարարելու իրավական և փաստական հիմքերը:

... Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդումներին, որ հայցվորը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի իմաստով չի հանդիսանում իրավունքը խախտված շահագրգիռ անձ, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի Արագածի փողոցի 93ա շենքի դիմաց գտնվող, ինքնակամ կառուցված ավտոտնակն օրինականացնելու մասին ընդունվելիք որոշումը պետք է տեղեկություններ պարունակել կառույցն իրականացրած անձի վերաբերյալ և այնուհետև դրա հիման վրա վերջինիս պետք է գրավոր առաջարկություն ներկայացվել նշված գույքը սահմանված կարգով ձեռք բերելու վերաբերյալ, որպիսիք անհրաժեշտ և պարտադիր նախապայման էին հանդիսանալու հետագայում վիճելի գույքի նկատմամբ հայցվորի հետ օտարման պայմանագիր կնքելու համար: Հետևաբար, հիմնազուրկ են հայցվորի՝ շահագրգիռ անձ չհանդիսանալու վերաբերյալ բողոքով ներկայացված պնդումները»:

Վճռաբեկ դատարանը, գնահատելով Վերաքննիչ դատարանի վերլուծությունների հիմնավորվածությունը, գտնում է, որ դրանք հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործով անվիճելի փաստ է, որ Երևան քաղաքի Արագածի 93ա շենքի դիմաց գտնվող ինքնակամ կառուցված ավտոտնակով ծանրաբեռնված հողամասը հանդիսանում է համայնքային սեփականություն: Համայնքի ղեկավարը նախաձեռնություն չի դրսևորել խնդրո առարկա ինքնակամ կառույցն օրինականացնելու հարցում. վերջինիս օրինականացումը հայցվորը հայցել է Երևանի քաղաքապետին ուղղված իր դիմումով: Վճռաբեկ դատարանը վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո արձանագրում է, որ հայցվորը՝ որպես ինքնակամ կառույցն իրականացրած անձ, ուներ ավտոտնակի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու իրավաչափ ակնկալիքի իրավունք՝ անկախ այն հանգամանքից, որ ավտոտնակով ծանրաբեռնված հողամասը



համայնքային սեփականություն է: Ավտոտնակն օրինականացնելու վերաբերյալ դիմումով հայցվորն իրացրել է ավտոտնակի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու իրավաչափ ակնկալիքի և իրավասու վարչական մարմնից բարենպաստ վարչական ակտ հայցելու իր իրավունքները: Ըստ այդմ՝ իրավասու վարչական մարմնի պարտականությունն էր հայցվորի դիմումի հիման վրա հարուցված վարույթի շրջանակներում ստուգել հայցվորի կողմից հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը՝ պարզելով ինքնական ավտոտնակի օրինականացումը մերժելու՝ Կարգի 44-րդ կետով նախատեսված հիմքերի առկայությունը/բացակայությունը, և մերժման հիմքերի բացակայության դեպքում կայացնել ավտոտնակն օրինականացնելու վերաբերյալ որոշում:

Մինչդեռ, հայցվորի՝ Երևան քաղաքի Արագածի փողոցի 93ա շենքի դիմաց գտնվող, ինքնական կառուցված ավտոտնակն օրինականացնելու վերաբերյալ դիմումի առնչությամբ սահմանված 30-օրյա ժամկետում Երևանի քաղաքապետի կողմից չի ընդունվել ավտոտնակն օրինականացնելու կամ այն մերժելու վերաբերյալ որոշում, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ իրավական դիրքորոշումներին համապատասխան, Վարչական դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից իրավաչափորեն կիրառվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, բավարարելով Ժողա Հարությունյանի հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Մինևսյն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.10.2020 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

1. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

**7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում	Վարչական գործ թիվ <b>ՎԴ/4748/05/19 2022թ.</b>
Վարչական գործ թիվ	ՎԴ/4748/05/19
Նախագահող դատավոր՝	Ա. Առաքելյան
Դատավորներ՝	Կ. Մաթևոսյան Ա. Բաբայան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող և զեկուցող</i>	Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ Հ. ԲԵԴԵՎՅԱՆ Լ. ՀԱԿՈՒԲՅԱՆ Ք. ՄԿՈՅԱՆ
-----------------------------	--

2022 թվականի հոկտեմբերի 12-ին գրավոր ընթացակարգով քննելով Արտակ Նասիբյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 17.02.2021 թվականի որոշման դեմ՝ ըստ Արտակ Նասիբյանի հայցի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Արտակ Նասիբյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 23.04.2019 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 80 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Սոսյան) (այսուհետ՝ Դատարան) 29.11.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.02.2021 թվականի որոշմամբ Արտակ Նասիբյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, ու Դատարանի 29.11.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Արտակ Նասիբյանը (ներկայացուցիչ Արթուր Աբովյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ Արման Մնացականյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ և 247-րդ հոդվածները, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 2-րդ, 84-րդ, 401-րդ և 404-րդ հոդվածները, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ 20.02.2019 թվականին հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական ակտը կայացվել է 23.04.2019 թվականին, այսինքն՝ վարչական մարմինը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելու երկամսյա ժամկետը:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը թիվ ՎԴ/8026/05/16 վարչական գործով գտել է, որ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուց հետո (նույնիսկ այն դեպքում, երբ վարչական վարույթը և քրեական գործով նյութերը նախապատրաստվել են մինևնույն անձի նկատմամբ) նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցման մերժման որոշման առկայությունն իրավունք չի վերապահում վարչական մարմնին կիրառելու Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումը. նման իրավաբանական փաստերի առկայության պայմաններում վարչական մարմինը խախտում է նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված երկամսյա վաղեմության ժամկետը: Այսինքն՝ սույն գործով Վերաքննիչ դատարանի որոշումը հակասում է ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի վերը նշված որոշմանը. այն հակասում է նաև թիվ ՎԴ/10555/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշմանը, թիվ ՎԴ/5035/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 22.12.2020 թվականի վճռին, թիվ ՎԴ/4399/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.03.2021 թվականի վճռին:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վարչական մարմինը՝ որպես մաքսային կանոնների խախտում կատարած անձ դիտարկել է Արտակ Նասիրյանին, իսկ քրեական գործի նյութերը նախապատրաստվել են «ԲԱՐՁՐԱՎՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՆԵՐ» ՓԲԸ-ի տնօրեն Հայկ Հարությունյանի վերաբերյալ, նման պարագայում Արտակ Նասիրյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նկատմամբ չէր կարող կիրառվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասը: Այսինքն՝ բողոք բերած անձի նկատմամբ նյութեր չեն նախապատրաստվել, քրեական գործ չի հարուցվել, հետևաբար վարչական մարմնի կողմից արդեն իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում չէր կարող կիրառվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ վարչական մարմինը մաքսային կանոնների ենթադրյալ իրավախախտման հանգամանքը բացահայտել է դեռևս 16.01.2019 թվականին, հետևաբար մաքսային կանոնների խախտման

վերաբերյալ վարչական տույժը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով կարող էր նշանակվել մինչև 16.03.2019 թվականը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ Արտակ Նասիբյանը չի եղել հայտարարատու հանդիսացող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ներկայացուցիչը, Արտակ Նասիբյանը հանդիսացել է մաքսային ներկայացուցիչ համարվող «Տրանսիմպեքս» ՍՊԸ-ի աշխատակիցը, հետևաբար սույն գործով նրան չեն կարող վերագրվել մաքսային օրենսդրությամբ հայտարարատուին վերապահված իրավունքները/պարտականությունները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրությունը ՀՀ-ում կիրարկումից հետո նախկինում գործող ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված մաքսային բրոքերի և գործող մաքսային օրենսդրությամբ նախատեսված մաքսային ձևակերպումների մասնագետի իրավական կարգավիճակները նույնական չեն (նշված սուբյեկտները ունեն տարբեր իրավունքների և պարտականությունների ամբողջություն): Մաքսային հայտարարագրում կարող է իրականացնել կա՛մ տեղափոխվող բեռների սեփականատեր հանդիսացող հայտարարարտուն (տեղափոխողը), կա՛մ մաքսային ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձը:

Վարչական տույժ նշանակելու մասին վարչական ակտը, որով Արտակ Նասիբյանը ճանաչվել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով, ակնհայտորեն ոչ իրավաչափ է և հակասում է ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի մասին պայմանագրին, ինչպես նաև «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին՝ պատասխանատվության կանչված սուբյեկտի հիմքով (սույնիսկ, եթե պատասխանատվության կիրառման մյուս բոլոր նախապայմաններն առկա լինեին):

Որևէ ապացույցով չի հիմնավորվում, որ Արտակ Նասիբյանը հայտարարատու ընկերությունից կամ մաքսային ներկայացուցիչ համարվող «Տրանսիմպեքս» ՍՊԸ-ից ստացել է հանձնարարություն ստացված բեռները գնելու, կամ այլ գործողություններ կատարելու համար, ինչը բացառում է Արտակ Նասիբյանի մեղավորությունը ենթադրյալ իրավախախտումը կատարելու համար:

Վերոգրյալի հիման վրա բոլոր բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.02.2021 թվականի որոշումը:

### **2.1. Վճարել բողոքի պատասխանի հիմնավորումները.**

Արտակ Նասիբյանի կողմից հայտարարագրվել են ոչ ճշգրիտ տեղեկություններ, ինչի հետևանքով առաջացել են որոշակի չափով պակաս հաշվարկված մաքսային վճարներ:

Քրեական գործի հարուցումը մերժվել է 01.04.2019 թվականին, և 16.04.2019 թվականի ծանուցագրով մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 18.04.2019 թվականին: Արտակ Նասիբյանը ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով զանցառու է ճանաչվել և ենթարկվել վարչական պատասխանատվության 23.04.2019 թվականին:

Արտակ Նասիբյանը, հանդիսանալով հայտարարատու, ունեցել է ճշգրիտ տեղեկություններով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն: Վերջինս պատասխանատու է հայտարարագրում ոչ հավաստի տեղեկություններ հայտարարագրելու համար, քանի որ հայտարարագիրը ներկայացվել է նրա կողմից և հավաստվել նրա ստորագրությամբ:

### **3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) «ՏՐԱՆՍԻՄՊԵՔՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող), «Xian Electric Engineering Co. Ltd»-ի հայաստանյան մասնաճյուղի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԲԱՐՁՐԱՎՈՒՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ստացող) միջև 18.01.2018 թվականին կնքվել է «Մաքսային միջնորդական ծառայություն մատուցելու մասին» թիվ 06/18 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է Պատվիրատուի առաջադրանքով գործող մաքսային օրենսդրությանը համապատասխան մատուցել հետևյալ ծառայությունները՝ Ստացողի անունից իրականացնել վերջինիս հասցեագրված (ուղարկված) բեռների մաքսային հայտարարագրում և դրա հետ կապված անհրաժեշտ այլ ծառայություններ, իսկ Պատվիրատուն պարտավորվել է վճարել մատուցված ծառայությունների դիմաց (**հատոր 1-ին, գ.թ. 17-23**).

2) Պայմանագրի 2.1.1 և 2.1.2 կետերով նախատեսվել է, որ Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից և (կամ) Ստացողից նախապես, ինչպես նաև ծառայությունների կատարման ընթացքում պահանջելու և ստանալու ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ու հավաստի տեղեկատվություն և (կամ) փաստաթղթեր, իսկ անհրաժեշտության դեպքում մինչև հայտարարագրման գործընթացն սկսելը զննել Ստացողին հասցեագրված բեռները՝ կազմելով զննման արձանագրություն (**հատոր 1-ին, գ.թ. 17-23**).

3) Պայմանագրի 2.4.1 կետով նախատեսվել է, որ Պատվիրատուն պարտավոր է Կատարողին նախապես, ինչպես նաև ծառայությունների կատարման ընթացքում տրամադրել ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր (**հատոր 1-ին, գ.թ. 17-23**).

4) Պայմանագրի 4.1 կետով նախատեսվել է, որ Կատարողը պատասխանատու է իր կողմից կազմված զննման արձանագրության համապատասխան ծառայությունների մատուցման համար, իսկ Պայմանագրի 4.3 կետով նախատեսվել է, որ Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կատարողը պատասխանատվություն չի կրում, եթե առաջացած անբարենպաստ հետևանքները պայմանավորված են Պատվիրատուի և (կամ) Ստացողի կողմից տրամադրված տեղեկատվության և (կամ) փաստաթղթերի ոչ ամբողջական և (կամ) ոչ հավաստի լինելով (**հատոր 1-ին, գ.թ. 17-23**).

5) Պայմանագրի 4.4 կետով նախատեսվել է, որ Պատվիրատուն պատասխանատու է իր և (կամ) Ստացողի կողմից (հաշվի առնելով, որ Ստացողի տիրապետման տակ գտնվող տեղեկությունը տրամադրում է Պատվիրատուն) Կատարողին տրամադրվող տեղեկատվության և (կամ) փաստաթղթերի իսկության ու ամբողջականության համար: Տրամադրված տեղեկատվության և (կամ) փաստաթղթերի ոչ հավաստի և (կամ) ոչ ամբողջական լինելու ամբողջ պատասխանատվությունը և դրանց հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքները կրում է Պատվիրատուն (**հատոր 1-ին, գ.թ. 17-23**).

6) Պայմանագրի 5.2 կետով նախատեսվել է, որ այն դեպքում, երբ Կատարողի կողմից կազմված զննման արձանագրությամբ հայտարարագրվող բեռների տվյալները տարբերվում են Պատվիրատուի և (կամ) Ստացողի կողմից նախապես տրամադրված տեղեկատվության և (կամ) փաստաթղթերի տվյալներից, ապա բեռների հայտարարագրումն իրանակացվում է՝ հիմք ընդունելով զննման արձանագրության տվյալները (**հատոր 1-ին, գ.թ. 17-23**).

7) Ստացողի անվամբ 15.01.2019 թվականին Կատարող ընկերությունում որպես մաքսային ձևակերպումների մասնագետ աշխատող Արտակ Նասիբյանի կողմից լրացվել է թիվ 05100010/150119/0001545 ապրանքների հայտարարագիրը՝ առանց ապրանքները գննելու **(հատոր 1-ին, գ.թ. 60)**։

8) Ստացողի կողմից՝ հայցվոր Արտակ Նասիբյանի ստորագրությամբ 06.02.2019 թվականին դիմում է ներկայացվել Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետ Զ. Հակոբյանին այն մասին, որ վերը նշված հայտարարագրով հայտարարագրված ապրանքներից մեկը պետք է հայտարարագրվեր մի քանի անուն ապրանքով, իսկ թվով երեք անուն ապրանք հայտարարագրում չեն նշվել, այժմ ստացվել են նոր՝ ճշգրտված հաշիվ ապրանքագիր և ուղարկողի կողմից բացատրական նամակ՝ վերջինիս ուղարկած սկզբնական սխալ հաշիվ ապրանքագրի վերաբերյալ, ուստի խնդրել է թույլտվություն՝ հետ կանչելու վերը նշված ապրանքների հայտարարագիրը **(հատոր 1-ին, գ.թ. 50)**։

9) Կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործի և մտավոր սեփականության պաշտպանության ընթացակարգերի բաժնի ավագ մաքսային տեսուչի կողմից 20.02.2019 թվականին կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, որում նշվել է, որ «Քարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի անվամբ «18.09.2019» թվականի թիվ XD17-281(10) հաշիվ-ապրանքագրով ՀՀ փաստացի ներմուծված ջրի պոմպը, խողովակները և կցամասերն Արարատյան մաքսատուն-վարչությունում 15.01.2019 թվականի թիվ 05100010/150119/0001545 ապրանքների հայտարարագրի 4-րդ ապրանքային դիրքում հայտարարագրվել են ոչ ճշգրիտ տեղեկություններով՝ որպես ԱՏԳ ԱԱ 8424900000 ծածկագրով հրշեջ անվտանգության համակարգի ջրամատակարարման մասեր, իսկ այլումինե արկղերը և այլումինե ամրակային դետալները չեն հայտարարագրվել, այսինքն՝ Արտակ Նասիբյանի արարքում առկա են ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտման հատկանիշներ **(հատոր 1-ին, գ.թ. 15-16, 89-90)**։

10) Արտակ Նասիբյանը նշված խախտման վերաբերյալ բացատրություն է տվել նաև այն մասին, որ աշխատում է Կատարող ընկերությունում՝ որպես մաքսային ձևակերպումների մասնագետ։ Մաքսային միջնորդական ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա Կատարողը պարտավորվել է կատարելու Ստացողի անվամբ ներմուծված ապրանքների մաքսային ձևակերպումներ. նշված ձևակերպումները պետք է կատարվեին իր կողմից։ Հայտարարագրումը կատարել է՝ հիմք ընդունելով բեռն ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվությունը, բեռի նախնական գնություն չի իրականացրել, քանի որ Պատվիրատուն այն չի ցանկացել։ Դրանից հետո պարզել է, որ վերը նշված հայտարարագրում նշված որոշ ապրանքներ պետք է հայտարարագրվեին առանձին, և բացի այդ, առկա են եղել այլ ապրանքներ, որոնք նշված չեն եղել հաշիվ-ապրանքագրում, որի պատճառով և չեն հայտարարագրվել։ Այդ կապակցությամբ 06.02.2019 թվականին դիմում է ներկայացրել Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պետ Զ. Հակոբյանին, հայտնել կատարվածի մասին և խնդրել է թույլատրել հետ կանչել այդ հայտարարագիրը։ Ինքը որևէ դիտավորություն չի ունեցել, պատճառը եղել է հաշիվ-ապրանքագրում և բեռն ուղեկցող փաստաթղթերում առկա սխալ տեղեկատվությունը **(հատոր 1-ին, գ.թ. 91-92)**։

11) Կոմիտեի հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության 10-րդ բաժնի ավագ հետաքննիչ Վահագն Զաքարյանը 01.04.2019 թվականին որոշում է կայացրել նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ «ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԷԿՏՐՈՅԱՆՑԵՐ» ՓԲԸ-ի տնօրեն Հայկ

Հարությունյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հանցակազմի բացակայության հիմքով՝ որոշման պատճենն ուղարկելով Կոմիտեի իրավաբանական վարչություն վարչական վարույթ իրականացնելու հարցը քննարկելու համար **(հատոր 1-ին, գ.թ. 137-141)**։

12) Կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանը 23.04.2019 թվականին կայացրել է «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 80 որոշումը, որով Արտակ Նասիբյանին ճանաչել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով և նրան տուգանել է պակաս հաշվարկված մաքսային վճարների 50 տոկոսի չափով՝ 8.189.888 ՀՀ դրամ, այն բանի համար, որ «վերը նշված հայտարարագրի 4-րդ սպրանքային դիրքում հայտարարագրել է ոչ ճշգրիտ տեղեկություններով» **(հատոր 2-րդ, գ.թ. 24-30)**։

#### **4. Վճարել նատարանի պատճառարանությունները և եզրահանգումները.**

Վճարել նատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ, խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի, Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 2-րդ, 84-րդ, 401-րդ և 404-րդ հոդվածների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջները, որը խաթարել է արդարադատության բուն էությունը։

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճարել նատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ՝*

1) քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու մասին որոշում կայացնելուց հետո մաքսային կանտոնների խախտման վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելու ժամկետների առանձնահատկություններին,

2) Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և փրանսպորտային միջոցները չհայտարարագրելու կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու համար մաքսային ներկայացուցիչներին որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ դիտարկելու իրավական հնարավորությունը։

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու դեպքում, բայց երբ խախտողի գործողություններում առկա են վարչական իրավախախտման նշաններ, վարչական տույժը կարող է նշանակվել քրեական գործի հարուցումը մերժելու կամ այն կարճելու մասին որոշում կայացվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում։



Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից 3 տարվա ընթացքում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝ (...) վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին նույն օրենսգրքի 37 հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսել է, որ վարչական տույժը, որպես կանոն, կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում: Մինչև նույն ժամանակ, օրենսդիրը որոշակի բացառություն է նախատեսել այն դեպքերի համար, երբ առկա է քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու մասին որոշում, որի դեպքում վարչական վարույթն իրականացնող մարմնին իրավունք է վերապահվել վարչական տույժը նշանակելու քրեական գործի հարուցումը մերժելու կամ այն կարճելու մասին որոշում կայացվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում՝ պայմանով, որ խախտողի գործողություններում առկա են վարչական իրավախախտման նշաններ: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասը մեկնաբանելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ելնելով, անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դրանում նշված ժամկետում վարչական տույժ նշանակելու հատուկ կանոնը բացառապես կիրառելի է այն անձի նկատմամբ, ում վերագրվող խախտումն ի սկզբանե Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի իմաստով չէր կարող որակվել վարչական իրավախախտում, այդ արարքն իր բնույթով՝ գործող օրենսդրությանը համապատասխան, քրեական պատասխանատվություն առաջացնելու պատճառով, սակայն վերջինիս վերաբերյալ քրեական գործի հարուցումը հետագայում մերժվել է կամ գործի վարույթը կարճվել է և պարզվել է, որ նրա գործողություններում առկա են վարչական իրավախախտման նշաններ:

Օրենսդիրն առանձին իրավակարգավորման է ենթարկել նաև մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերով վարչական տույժ նշանակելու ընթացակարգը՝ սահմանելով, որ այն կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելու օրվանից 3 տարվա ընթացքում:

Հիմք ընդունելով վերը նշված իրավակարգավորումները՝ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով միննույն ժամանակ սահմանել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման, եթե վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին լրացել են նույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետները:

Նկատի ունենալով, որ ՀՀ մաքսային օրենսգրքի՝ «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը» վերտառությամբ 38-րդ գլխի 205-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործերի վարույթը կարգավորվում է նույն գլխով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նույն գլխին չհակասող մասով, ուստի վերը նշված դիրքորոշումները հավասարապես կիրառելի են նաև մաքսային կանոնների խախտման համար վարչական տույժ նշանակելիս:

2) ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային կանոնների խախտում է համարվում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար նույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և պաշտոնատար անձինք մաքսային կանոնները դիտավորյալ կամ անզգուշորեն խախտելու համար ենթակա են պատասխանատվության:

ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում առաջացնում է չհաշվարկված կամ պակաս հաշվարկված մաքսային վճարների գանձում օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև տուգանք՝ այդ մաքսային վճարների 50 տոկոսի չափով:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածի համաձայն՝ նույն Օրենսգրքի նպատակներով գործածվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

(...) 7) «հայտարարատու»՝ անձ, որը հայտարարագրում է ապրանքներ կամ որի անունից հայտարարագրվում են ապրանքներ. (...)

16) «անձ»՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, ինչպես նաև իրավաբանական անձ չհանդիսացող կազմակերպություն. (...)

32) «մաքսային հայտարարագիր»՝ մաքսային փաստաթուղթ, որը պարունակում է տեղեկություններ ապրանքների վերաբերյալ կամ ապրանքների բացթողման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ. (...)

35) «մաքսային հայտարարագրում»՝ մաքսային մարմնում մաքսային հայտարարագրի միջոցով ապրանքների վերաբերյալ տեղեկությունների, ընտրված

մաքսային ընթացակարգի վերաբերյալ և (կամ) ապրանքների բացթողման համար անհրաժեշտ այլ տեղեկությունների հայտագրում.

36) «մաքսային փաստաթղթեր»՝ մաքսային հայտարարագիր և այլ փաստաթղթեր, որոնք կազմվում են բացառապես մաքսային գործառնությունների կատարման և մաքսային հսկողության անցկացման համար, ինչպես նաև մաքսային գործառնությունների կատարման ու մաքսային հսկողության անցկացման ընթացքում և դրանց արդյունքներով.

37) «մաքսային գործառնություններ»՝ գործողություններ, որոնք կատարվում են անձանց և մաքսային մարմինների կողմից՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին ու ակտերին և (կամ) մաքսային կարգավորման վերաբերյալ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան. (...)

44) «մաքսային ներկայացուցիչ»՝ իրավաբանական անձ, որը ներառված է մաքսային ներկայացուցիչների ռեեստրում և մաքսային գործառնություններ է կատարում հայտարարատուի կամ շահագրգիռ այլ անձի անունից և հանձնարարությամբ. (...):

Օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարատուն իրավունք ունի զննելու և չափելու մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքները և բեռնային գործողություններ կատարելու դրանց հետ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարատուն պարտավոր է՝

1) կատարել ապրանքների մաքսային հայտարարագրում,

2) նույն Օրենսգրքով նախատեսված դեպքերում մաքսային մարմին ներկայացնել մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթեր (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտարարատուն, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պատասխանատվություն է կրում նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պարտականությունները չկատարելու, մաքսային հայտարարագրում ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու, ինչպես նաև մաքսային ներկայացուցչին անվավեր, այդ թվում՝ կեղծ և (կամ) ակնհայտ ոչ հավաստի (սուտ) տեղեկություններ պարունակող փաստաթղթեր ներկայացնելու համար:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մաքսային ներկայացուցիչը հայտարարատուի կամ այլ շահագրգիռ անձանց անունից և նրանց հանձնարարությամբ իրականացնում է մաքսային գործառնություններ այն անդամ պետության տարածքում, որի մաքսային մարմնի կողմից նա ընդգրկվել է մաքսային ներկայացուցիչների ռեեստրում՝ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերին և ակտերին համապատասխան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մաքսային ներկայացուցչի հարաբերությունները հայտարարատուների կամ այլ շահագրգիռ անձանց հետ ձևավորվում են պայմանագրային հիմքի վրա:

Օրենսգրքի 405-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մաքսային ներկայացուցչի կողմից մաքսային գործառնությունները հայտարարատուի անունից իրականացնելու դեպքում մաքսային ներկայացուցչին այդ հայտարարատուի հետ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու համապարտ պարտավորություն է կրում՝ մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերը վճարելու՝ կատարման ենթակա պարտավորության լրիվ չափով:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ հայտարարատու է այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ինչպես նաև իրավաբանական անձ

չհանդիսացող կազմակերպությունը, որը հայտարարագրում է ապրանքներ կամ որի անունից նշված մաքսային գործառնությունը պայմանագրի հիման վրա իրականացնում է մաքսային ներկայացուցիչը, այսինքն՝ այն **իրավաբանական անձը**, որը ներառված է մաքսային ներկայացուցիչների ռեեստրում և մաքսային գործառնություններ է կատարում հայտարարատուի կամ շահագրգիռ այլ անձի անունից և հանձնարարությամբ: Հայտարարատուն, ունենալով ապրանքների մաքսային հայտարարագրում կատարելու և մաքսային մարմնին մաքսային հայտարարագրում ներկայացված տեղեկությունները հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պարտականություն, մինևույն ժամանակ ունի մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքները զննելու և չափելու իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչական պատասխանատվության ոլորտում գործում են «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» կարևորագույն սկզբունքները: Անձնական պատասխանատվության սկզբունքը նշանակում է, որ անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության միայն անձամբ իր կողմից կատարված զանցանքի համար: Իսկ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի էությունն այն է, որ անձը ենթակա է վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ զանցանքի կատարման մեջ վերջինիս մեղավորությունը (դիտավորություն կամ անզգուշություն) հաստատված է իրավասու մարմնի կողմից, քանի որ անձի արարքում մեղքի բացակայությունը վկայում է վարչական իրավախախտման բացակայության մասին (*տե՛ս, Արսեն Խաչատրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/4936/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Նմանատիպ իրավական դիրքորոշում արտահայտել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ 12.10.2010 թվականի թիվ ՄԴՌ-920 որոշմամբ նշելով, որ վարչական պատասխանատվության սկզբունքներից է «պատասխանատվությունը մեղքի համար» սկզբունքը, ինչը նշանակում է, որ վարչական տույժը (պատասխանատվությունը) կարող է կիրառվել միայն վարչական իրավախախտում կատարելու մեջ մեղավոր անձի նկատմամբ: Հետևաբար մեղքը՝ որպես վարչական զանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր, հանդիսանում է վարչական պատասխանատվության իրավական միակ նախապայմանն ու նախադրյալը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ նշված սկզբունքը սերտորեն առնչվում է նաև վարչական պատասխանատվության մեկ այլ սկզբունքի՝ անձնական պատասխանատվության սկզբունքին, որի համաձայն՝ անձը ենթակա է պատասխանատվության՝ միայն անձամբ կատարած իրավախախտման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքով **հայցարարարուի** համար պատասխանատվություն է նախատեսվել ինչպես նույն օրենսգրքով նախատեսված պարտականությունները չկատարելու, այնպես էլ՝ մաքսային հայտարարագրում ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու, մաքսային ներկայացուցչին անվավեր, այդ թվում՝ կեղծ և (կամ) ակնհայտ ոչ հավաստի (սուտ) տեղեկություններ պարունակող փաստաթղթեր ներկայացնելու համար:

Համապատասխան իրավակարգավորում է նախատեսված նաև ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածով, որի համաձայն՝ օրենսդիրը մաքսային կանոնների խախտում է համարում անձի կողմից կատարված անօրինական գործողությունը կամ անգործությունը, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ և մաքսային ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության

միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության և մաքսային ձևակերպման սահմանված կարգի դեմ, և որի համար նույն օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելու կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու համար հայտարարատուին և(կամ) մաքսային ներկայացուցիչ իրավաբանական անձի աշխատակցին վարչական պատասխանատվության սուբյեկտ դիտարկելու համար նախևառաջ պետք է պարզվի վերոգրյալ արարքում վերջիններիս մեղավորությունը, քանի որ օրենսդիրը նաև դրանով է պայմանավորել անձին վարչական պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորությունը, ուստի հայտարարատուն և(կամ) մաքսային ներկայացուցիչ իրավաբանական անձի աշխատակիցը կարող է վարչական պատասխանատվության սուբյեկտ հանդիսանալ և նրա նկատմամբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելու կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու համար վարչական պատասխանատվություն կիրառվի այն պարագայում, եթե հաստատվի կատարված արարքում հայտարարատուի և(կամ) մաքսային ներկայացուցիչ իրավաբանական անձի աշխատակցի մեղավորությունը:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործի փաստերի համաձայն՝ «ԲԱՐՉՐԱՎՈՒՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-ն հանդիսացել է հայտարարատու, որի անունից և նրա հանձնարարությամբ Պայմանագրի հիման վրա մաքսային գործառնություն է իրականացրել մաքսային ներկայացուցիչ «ՏՐԱՆՍԻՄՊՊԵՔՍ» ՍՊԸ-ն՝ իր մաքսային ձևակերպումների մասնագետ Արտակ Նասիբյանի միջոցով: Մաքսային ներկայացուցիչը, ունենալով Օրենսգրքով և Պայմանագրով նախատեսված՝ ապրանքները զննելու, ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ու հավաստի տեղեկատվություն և (կամ) փաստաթղթեր պահանջելու ու ստանալու իրավունք, ստացել է համապատասխան փաստաթղթերը, սակայն չի օգտվել ապրանքները զննելու իրավունքից, և դրանք հայտարարագրել է առանց զննման:

Մաքսային ներկայացուցիչը, որի անունից հանդես է եկել հայցվոր Արտակ Նասիբյանը, ապրանքների հայտարարագրումն իրականացնելուց հետո պարզելով, որ տրամադրված տեղեկատվությունը և փաստաթղթերը ոչ ամբողջական են ու ոչ հավաստի, հիմք ընդունելով նաև Պայմանագրի 5.2 կետը, դիմում է ներկայացրել Կոմիտե այն մասին, որ վերը նշված հայտարարագրով հայտարարագրված ապրանքներից մեկը պետք է հայտարարագրվեր մի քանի անուն ապրանքով, իսկ թվով երեք անուն ապրանք հայտարարագրում չեն նշվել, այժմ ստացվել են նոր՝ ճշգրտված հաշիվ ապրանքագիր և ուղարկողի կողմից բացատրական նամակ՝ վերջինիս ուղարկած սկզբնական սխալ հաշիվ ապրանքագրի վերաբերյալ խնդրելով թույլտվություն հետ կանչելու վերը նշված ապրանքների հայտարարագիրը:

Դրանից հետո Կոմիտեի կողմից 20.02.2019 թվականին կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ վերը նշված արձանագրությունը, որում նշվել

է, որ Արտակ Նասիբյանի արարքում առկա են ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտման հատկանիշներ: Կոմիտեի հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության 10-րդ բաժնի ավագ հետաքննիչ Վահագն Զաքարյանի կողմից 01.04.2019 թվականին որոշում է կայացվել նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ «**ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՅԱՆՑԵՐ**» ՓԲԸ-ի տնօրեն **Հայկ Հարությունյանի** արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հանցակազմի բացակայության հիմքով, և որոշման պատճենն ուղարկվել է Կոմիտեի իրավաբանական վարչություն վարչական վարույթ իրականացնելու հարցը քննարկելու համար:

Արդյունքում Կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանը 23.04.2019 թվականին կայացրել է «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 80 որոշումը, որով Արտակ Նասիբյանին ճանաչել է զանցառու ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով և նրան տուգանել է պակաս հաշվարկված մաքսային վճարների 50 տոկոսի չափով՝ 8.189.888 ՀՀ դրամ, այն բանի համար, որ «վերը նշված հայտարարագրի 4-րդ ապրանքային դիրքում հայտարարագրել է ոչ ճշգրիտ տեղեկություններով»:

Արտակ Նասիբյանը դիմել է դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանի 23.04.2019 «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 80 որոշումը:

**Դատարանը** 29.11.2019 թվականի վճռով հայցը մերժել է՝ պատճառաբանելով, որ «Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 23.04.2019 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 80 որոշումն ընդունվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում, ուստի առկա չի եղել նաև նույն օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ կետի հիմքով հիշյալ որոշմանը վերաբերող մաքսային կանոնների խախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու որևէ իրավական հիմք», «հայցվորի կողմից վիճարկվող որոշմանը արձանագրված մաքսային կանոնների խախտումը թույլ է տրվել անզգուշությամբ, այսինքն հայցվորը թեև չի կանխատեսել իր գործողության վնասակար հետևանքներ առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր ու կարող էր կանխատեսել դրանք», «վիճարկվող որոշումն ընդունելիս մաքսային կանոնների խախտման գործի բոլոր ապացույցները պարասխանողը գնահատել է իր ներքին համոզմունքով՝ հիմնված գործի իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ ու օբյեկտիվ հետազոտման վրա՝ դրանով ապահովելով վերը նշված նորմերի պահանջները»:

**Վերաքննիչ դատարանը** 17.02.2021 թվականի որոշմամբ Արտակ Նասիբյանի վերաքննիչ բողոքը մերժել է, ու Դատարանի 29.11.2019 թվականի վճիռը թողել է անփոփոխ՝ պատճառաբանելով, որ «երբ կազմվում է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, և տվյալ գործն ուղարկվում է քրեական գործ հարուցելու իրավասությանը օժտված մարմին, որի կողմից կայացվում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, որից հետո արդեն ընդունվում է վարչական տույժ նշանակելու մասին որոշում, այս վարչական տույժը կարող է նշանակվել քրեական գործի հարուցումը մերժելու կամ այն կարճելու մասին որոշում կայացվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, այսինքն կիրառման է ենթակա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը», «Կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործի և մրավոր սեփականության պաշտպանության ընթացակարգերի բաժնի ավագ մաքսային տեսուչ Սերգեյ Թամեյանի 20.02.2019

թվականի «Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ» արձանագրությանը արձանագրված դեպքով Կոմիտեի հեղափոխության և օպերատիվ հեղափոխության վարչության 10-րդ բաժնի ավագ հեղափոխիչ Վահագն Զաքարյանի կողմից 01.04.2019 թվականին ընդունվել է «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը, իսկ վիճարկվող որոշումն ընդունվել է նշված որոշումը կայացնելու պահից մեկ ամսվա ընթացքում՝ 23.04.2019 թվականին, ինչն ամբողջությամբ համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որպիսի նորմի ուժով քրեական գործի հարուցումը մերժելու դեպքում, բայց երբ խախտողի գործողություններում առկա են վարչական իրավախախտման նշաններ, վարչական տույժը կարող է նշանակվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, ինչն էլ տվյալ դեպքում տեղի է ունեցել», «հայցվորն իր կողմից տրված բացատրություններով ևս ընդունել է, որ սայրանքների հայտարարագրումն իրականացրել է հիմք ընդունելով բեռն ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվությունը, և որ ինքը բեռի նախնական զննություն փաստացի չի իրականացրել, որը սակայն նա կարող էր անել նշված նորմերի ուժով», «իրավաչափ է Վարչական դատարանի եզրահանգումն այն մասին, որ սույն գործում առկա ապացույցներով հաստատվում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այն փաստական հանգամանքը, որ հայցվորը թույլ է տվել վիճարկվող որոշմամբ արձանագրված մաքսային կանոնների խախտումը՝ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված արարքը, և դա թույլ է տվել անզուգուրջյամը»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստերը և Վերաքննիչ դատարանի դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դրանք անհիմն են և չէին կարող բավարար հիմք հանդիսանալ վերաքննիչ բողոքը մերժելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Տվյալ դեպքում, ինչպես արդեն իսկ նշվել է վերը, մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությունը Կոմիտեի իրավաբանական վարչության մաքսային գործի և մտավոր սեփականության պաշտպանության ընթացակարգերի բաժնի ավագ մաքսային տեսուչի կողմից կազմվել է **20.02.2019 թվականին**, որում նշվել է, որ հենց **Արտակ Նասիբյանի արարքում** են առկա ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտման հատկանիշները: Չնայած դրան՝ Արտակ Նասիբյանի նկատմամբ վարչական տույժը նշանակվել է **23.04.2019 թվականին**, այսինքն՝ իրավախախտումը հայտնաբերվելու օրվանից երկու ամսվա ժամկետը լրանալուց հետո՝ խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը, որ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշումը 01.04.2019 թվականին, իսկ վիճարկվող որոշումը 23.04.2019 թվականին կայացված լինելու պայմաններում վարչական ակտն ամբողջությամբ համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի

պահանջին, ապա Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետում վարչական տույժ նշանակելու հատուկ կանոնը, ինչպես արդեն իսկ նշվեց վերը, բացառապես կիրառելի է այն անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելիս, ում վերաբերյալ մերժվել է քրեական գործի հարուցումը կամ այն կարճվել, և նրա գործողություններում առկա են վարչական իրավախախտման նշաններ: Մինդեռ տվյալ դեպքում քրեական գործի հարուցումը մերժվել է «ԲԱՐՁՐԱՎՈՒՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-ի *յնտեն Հայկ Հարությունյանի* արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հանցակազմի բացակայության հիմքով, իսկ վարչական տույժը նշանակվել է *հայցվոր Արտակ Նասիբյանի* նկատմամբ, այսինքն՝ այն անձի, որի նկատմամբ չի կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում, բայց դեռևս 20.02.2019 թվականին կազմված մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվել է, որ հենց Արտակ Նասիբյանի արարքում են առկա ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտման հատկանիշներ:

Ինչպես արդեն իսկ նշվեց վերը, հայտարարատու է հանդիսացել «ԲԱՐՁՐԱՎՈՒՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-ն, իսկ «ՏՐԱՆՍԻՄՊՊԵՔՍ» ՍՊԸ-ն հանդիսացել է մաքսային ներկայացուցիչ, որը «ԲԱՐՁՐԱՎՈՒՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-ի անունից և նրա հանձնարարությամբ Պայմանագրի հիման վրա իրականացրել է մաքսային գործառնություն: Նման պայմաններում, հիմք ընդունելով վերը նշված դիրքորոշումները և դրանք համադրելով սույն գործի փաստական հանգամանքների հետ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մաքսային կանոնների խախտման համար Արտակ Նասիբյանը չէր կարող հանդիսանալ պատասխանատվության սուբյեկտ, քանի որ գործով չի հիմնավորվել նրա արարքում մեղավորությունը:

Մինդեռ Վերաքննիչ դատարանն անտեսել է վերը նշված հանգամանքները՝ խախտելով Օրենսգրքի 2-րդ, 84-րդ, 401-րդ և 404-րդ հոդվածները, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա է եղել սույն գործով վիճարկվող՝ Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 23.04.2019 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 80 որոշումն անվավեր ճանաչելու «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված հիմք, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով՝ վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և

163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

*Վճռաբեկ բողոքի պատրասխանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պատճառարանությամբ:*

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը



բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝ եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Նկատի ունենալով այն, որ սույն գործով հայցադիմումը, վերաքննիչ և վճռաբեկ բողոքները ներկայացնելիս մինչև 19.04.2021 թվականին ընդունված ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-177-Ն օրենքի ուժի մեջ մտնելը, այն է՝ 09.05.2021 թվականը գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված լինելով վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով դատարաններում պետական

տուրքի վճարման պարտականությունից Արտակ Նասիբյանը հայցադիմումը ներկայացնելու համար վճարել է 4.000 ՀՀ դրամ, իսկ վերաքննիչ և վճարքերի բողոքների համար՝ համապատասխանաբար 10.000 ՀՀ դրամ և 20.000 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 10, 87, հատոր 3-րդ, գ.թ. 5), Վճարքերի դատարանը գտնում է, որ սույն գործով Արտակ Նասիբյանի կողմից հայցադիմումի, վերաքննիչ և վճարքերի բողոքների համար վճարված պետական տուրքի գումարը՝ ընդհանուր 34.000 ՀՀ դրամի չափով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ենթակա է վերադարձման այն վճարած անձին, ուստի նշված հիմքով սույն գործով պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Միևնույն ժամանակ Վճարքերի դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ սպացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճարքերի դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարքերի բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 17.02.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ Արտակ Նասիբյանի հայցը բավարարել, անվավեր ճանաչել ՀՀ պետական եկամտունների կոմիտեի իրավաբանական վարչության պետի 23.04.2019 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 80 որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում	Վարչական գործ թիվ <u>ՎԴ/6972/05/16</u> 2022թ.
Վարչական գործ թիվ	ՎԴ/6972/05/16
Նախագահող դատավոր՝	Ա. Սարգսյան
Դատավորներ՝	Ա. Պողոսյան
	Ա. Բարսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող</i>	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
<i>գեկուցող</i>	Ք. ՄԿՈՅԱՆ
	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
	Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

2022 թվականի նոյեմբերի 04-ին գրավոր ընթացակարգով քննելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.06.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Վարուժան Վարդանյանի ընդդեմ Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթի իրականացման վարչության՝ 08.08.2016 թվականի թիվ 170 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Վարուժան Վարդանյանը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթի իրականացման վարչության 08.08.2016 թվականի թիվ 170 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 28.11.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.06.2020 թվականի որոշմամբ Վարուժան Վարդանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 28.11.2018 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածը, Վարչական իրավահարաբերումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ, 215-րդ հոդվածները, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 189-րդ հոդվածը, ՀՀ Ազգային ժողովի կողմից 16.05.2016 թվականին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի 5-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ մինչև 25.05.2016 թվականը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում առանց հայտարարագրման մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար գործել է հանրային-իրավական պատասխանատվության երկու տարբերակ՝ քրեական կամ վարչական: Նշվածն ուղղակի բխում է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի՝ մինչև 25.05.2016 թվականը գործող խմբագրության և իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի բովանդակության վերլուծությունից՝ հաշվի առնելով նաև վերջին նորմում տեղ գտած «հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում» արտահայտությանը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի՝ մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությունը և իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը սերտորեն փոխկապակցված են եղել միմյանց հետ, և դրանց կիրառումը կախված է եղել խախտման չափերից: Դրա մասին է վկայում իրավախախտման երկու կազմերի մեկ ամբողջական լինելու հանգամանքը, թեև դրանք սահմանված են եղել երկու տարբեր իրավական ակտերում: Ուստի օրենսդրի կողմից քրեական պատասխանատվության վերացումը ենթադրում է ոչ թե պատժի ամբողջական վերացում, այլ դրա փոխարինում վարչականով: Նշվածի արդյունքում պարզ է դառնում, որ օրենսդիրը, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչելով, ոչ թե հրաժարվել է նման արարքը հանրային վտանգավոր որակելուց և, ըստ այդմ, ընդհանրապես վերացրել է դրա համար հանրային-իրավական պատասխանատվությունը, այլ ընդամենը մեղմացրել է արարքի իրավական գնահատականը և պատժի տեսակը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.06.2020 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Դատարանի 28.11.2018 թվականի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում 07.04.2014 թվականին իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58204314 քրեական գործը: Վարուժան Տիգրանի Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ այն արարքի համար, որ նա 2013 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում, տեղեկանալով Կոմիտեի նախաբացթողումային հսկողության վարչության Շիրակի բաժնի «Բավրա» մաքսային տեսուչ Աշոտ Գևորգյանի միջոցով, նշված մաքսակետով արտերկրից Հայաստան ներմուծվող ապրանքներն առանց մաքսային հսկողության տեղափոխելու հնարավորության մասին, վերջինիս և այլ անձանց հետ ձեռք բերված նախնական համաձայնությամբ 2014 թվականի հունվարի 12-ին, 19-ին և 22-ին 5 դեպքով օժանդակել է նշված պաշտոնատար անձի կողմից սահմանված գրաֆիկի համաձայն ծառայություն իրականացնելու ընթացքում պաշտոնեական դիրքի օգտագործմամբ մաքսանենգություն կատարելուն (հատոր 1-ին, գ.թ. 62-77):

2) ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 06.07.2016 թվականի որոշմամբ ամբաստանյալ Վարուժան Վարդանյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է՝ նկատի ունենալով, որ 25.06.2016 թվականին ուժի մեջ է մտել ՀՀ Ազգային ժողովի կողմից 16.05.2016 թվականին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ 83-Ն ՀՀ օրենքը, որի 5-րդ հոդվածի համաձայն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը ճանաչվել է ուժը կորցրած (հատոր 1-ին, գ.թ. 56-60):

3) Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության վարչական վարույթի իրականացման բաժնում 01.08.2016 թվականին Վարուժան Վարդանյանի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, որի համաձայն՝ վերջինիս արարքում առկա են իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտման հատկանիշներ (հատոր 1-ին, գ.թ. 42):

4) Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 08.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 170 որոշմամբ Վարուժան Վարդանյանը ճանաչվել է զանցառու իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով և ենթարկվել է վարչական պատասխանատվության չհաշվարկված և չզանձված մաքսային վճարների հիսուն տոկոսի չափով՝ 7.137.179 ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 48-53):

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված

հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտում ՀՀ Ազգային ժողովի կողմից 16.05.2016 թվականին ընդունված և 25.05.2016 թվականին ուժի մեջ մտած «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքի նորմերի մեկնաբանությունը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/7527/05/16 վարչական գործով 03.07.2020 թվականին կայացրած որոշման մեջ այդ նորմերին տրված մեկնաբանությանը:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.*

*- արդյո՞ք անձը, ում նկատմամբ մաքսանենգությանը հանցակցելու համար հարուցվել է քրեական գործ և վերջինիս նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է արարքի ապաքրեականացման հիմքով, կարող է նույն արարքի համար ենթարկվել վարչական պատասխանատվության:*

Նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված հարցադրմանը ՀՀ վճռաբեկ դատարանը թույլատրելի է համարել մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված արարքը կատարելու փաստի առթիվ քրեական գործի հարուցումն արարքի ապաքրեականացման հետևանքով մերժվելու կամ քրեական գործի վարույթը դրա հետևանքով կարճվելու դեպքում՝ վարչական իրավախախտման նշանների առկայության պայմաններում անձին ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկելը, եթե, իհարկե, չեն լրացել անձի նկատմամբ վարչական տույժ նշանակելու Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետները (տես, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընդդեմ Նիկոլայ Բարխուդարյանի թիվ ՎԴ/7527/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.07.2020 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառույթը ենթադրում է ոչ միայն միասնական դիրքորոշման ձևավորում՝ իրավական նորմի մեկնաբանության արդյունքում, այլև՝ ձևավորված դիրքորոշման հետագա զարգացում: Նման իրավիճակներում իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված նոր դիրքորոշումը պետք է գերակայի նախորդ դիրքորոշման նկատմամբ և հիմք ընդունվի Վճռաբեկ դատարանի նոր դիրքորոշումը՝ ձևավորած որոշման կայացման պահին դատարանների վարույթներում գտնվող գործերի լուծման համար:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թեև թիվ ՎԴ/7527/05/16 վարչական գործով 03.07.2020 թվականի որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտվել առ այն, որ մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված արարքը կատարելու փաստի առթիվ քրեական գործի հարուցումն արարքի ապաքրեականացման հետևանքով մերժվելու կամ քրեական գործի վարույթը դրա հետևանքով կարճվելու դեպքում՝ վարչական իրավախախտման նշանների առկայության պայմաններում, անձին իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 201-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկելը թույլատրելի է, այդուհանդերձ, գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայի առանձնահատկություններով պայմանավորված՝

նշված օրենքի միատեսակ կիրառությունն ունի էական նշանակություն և նշված դիրքորոշումը վերանայելու անհրաժեշտություն՝ ներքոշարադրյալ հիմնավորումներով: Այսպես՝

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձը ենթակա է պատասխանատվության իրավախախտումը կատարելու ժամանակ և վայրում գործող օրենսդրության հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված՝ հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է նույն օրենսգրքով:

Վերոգրյալ իրավակարգավորումներից բխում է, որ արարքը կարող է որակվել վարչական իրավախախտում (զանցանք) և հանգեցնել վարչական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ արարքը հանցագործություն չի համարվում:

Քրեական և վարչական օրենսդրության համադրված ուսումնասիրության արդյունքում՝ հարկ է փաստել, որ նշյալ օրենսդրությամբ շատ հաճախ նկարագրվում են հակաօրինական արարքների կրկնօրինակներ, որոնք գերազանցապես տարբերվում են հանրային վտանգավորության աստիճանով, ըստ այդմ՝ պատասխանատվության եղանակներով և չափերով:

Անձանց կողմից կատարված հակաօրինական արարքի որակման հարցն առանցքային նշանակություն ունի նրանց նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու թույլատրելի իրավական ակտն ընտրելու և դրանով նախատեսված կարգով պատասխանատվության հարցը լուծելու համար, քանի որ որոշ արարքներ կատարելը կարող է հանգեցնել ինչպես վարչական, այնպես էլ քրեական պատասխանատվության՝ կախված այդ արարքների որակման համար օրենքով նախատեսված պայմանների առկայությունից: Ընդ որում, հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 8-րդ հոդվածը և իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածը՝ արարքի որակումը որպես զանցանք կամ հանցագործություն կարող է տրվել բացառապես այն կատարելու պահին գործող օրենսդրության հիման վրա:

Այսպես. եթե անձի կողմից կատարվել է հակաօրինական այնպիսի արարք, որը տվյալ պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված է որպես հանցագործություն, ապա այդ արարքը չի կարող որակվել որպես վարչական իրավախախտում (զանցանք) ու հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու և վարչական պատասխանատվություն կիրառելու համար:

Բացառություն կարող է դիտվել թերևս այն իրավիճակը, երբ անձի կողմից կատարված հակաօրինական արարքին տրվի քրեաիրավական գնահատական, սակայն հետագայում (գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու ընթացքում) պարզվի, որ արարքին տրվել է սխալ որակում ու այն ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություն չէ (այսինքն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է), ապա քրեական

գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում անձը կարող է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ եթե պարզվի, որ խախտողի գործողություններում առկա են վարչական իրավախախտման նշաններ: Այնինչ, եթե արարքն ի սկզբանե որակվել է որպես հանցագործություն՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքով, ապա դա նշանակում է, որ բացակայել է արարքը վարչական իրավախախտում որակելու իրավական և փաստական հիմքը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, եթե անգամ հետագայում օրենսդրական փոփոխությունների արդյունքում տվյալ արարքն այլևս դադարի համարվել հանցագործություն (արարքը ապաքրեականացվի), ապա այդ հանգամանքը չի կարող ազդել արարքը կատարելու պահին դրան տրված իրավական գնահատականի վրա, քանի որ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Այլ կերպ ասած, եթե արարքը կատարելու պահին այն հանդիսացել է հանցագործություն, ապա հետագայում այդ արարքն ապաքրեականացնելուց հետո չի կարող հետևություն արվել այն մասին, որ նախկինում տրված որակումը եղել է սխալ և փաստորեն արարքը ոչ թե հանցագործություն է եղել, այլ՝ վարչական իրավախախտում:

Այսպիսով, անձի կողմից կատարված հակաօրինական արարքին տվյալ պահին գործող օրենսդրության հիման վրա քրեաիրավական գնահատական տալու դեպքում այդ արարքը հետագայում այլևս չի կարող որակվել որպես վարչական իրավախախտում, եթե անգամ օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանցագործություն համարվող արարքը ապաքրեականացվի: Հակառակ մեկնաբանությունն ամբողջությամբ խաթարում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված և իրավական պետությանը հարիր իրավական որոշակիության սկզբունքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ եթե արարքը կատարելու պահին հանցագործության հատկանիշներ պարունակելու հիմքով այն չի հանդիսացել վարչական իրավախախտում (գանցանք), ապա անգամ հետագայում այդ հատկանիշները կորցնելու հանգամանքը չի կարող արարքը դարձնել վարչական իրավախախտում:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը՝

- որի արդյունքում չի առաջանում մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ինչպես նաև ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ 50 հազար դրամի չափով,

- որի արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է չհաշվարկված կամ պակաս հաշվարկված մաքսային վճարների գանձում օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև տուգանք՝ այդ մաքսային վճարների 50 տոկոսի չափով,



- որն առաջացնում է ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով,

- որի արդյունքում չեն առաջանում մաքսային վճարներ (բացառությամբ մաքսավճարի), սակայն կատարված խախտման արդյունքում մաքսային հայտարարագրում արտացոլվել են ապրանքների արտահանման երկրում կամ Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված և մաքսային սահմանով տեղափոխված կամ տեղափոխվող ապրանքների ձեռքբերման արժեքներից կամ քանակներից բարձր կամ ցածր արժեքներ կամ քանակներ՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների մաքսային արժեքի 10 տոկոսի չափով:

Մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի (Մաքսանենգությունը) առաջին մասը քրեական պատասխանատվություն է սահմանել մաքսանենգության՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով՝ առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու միջոցով ապրանքների, մշակութային կամ այլ արժեքների տեղափոխման համար, եթե դրանք կատարվել են խոշոր չափերով, բացառությամբ նույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված ապրանքների կամ արժեքների:

Նույն հոդվածի հինգերորդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը համարվում է խոշոր չափերով կատարված, եթե տեղափոխված ապրանքների կամ առարկաների արժեքը գերազանցում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, բացառությամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված կամ չվերադրոշմավորված ապրանքներ տեղափոխելու դեպքի, երբ խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Նույն հոդվածի վեցերորդ մասի համաձայն՝ նույն հոդվածում գույք են համարվում մաքսանենգության առարկաները, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ դրանց արժեքը:

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսգրքերի (...) իմաստով որպես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել նույն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը: Նշված ակտերում որպես հաշվարկային հիմք պահպանվում է գործող 1.000 դրամը:

16.05.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 25.06.2016 թվականին) 5-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության 18.04.2003 թվականի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը:

Այսպիսով, մինչև 25.06.2016 թվականը գործել է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելու

կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու պատասխանատվության հետևյալ իրավակարգավորումը:

Այսպես՝ օրենսդիրը մաքսային կանոնի խախտում էր համարել անձի կողմից կատարված հետևյալ անօրինական գործողությունը՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը, որը վերը նշված օրենքով նախատեսված պայմաններից յուրաքանչյուրի դեպքում առաջացնում է համապատասխան չափով տուգանքի նշանակում:

Միևնույն ժամանակ օրենսդիրը քրեական պատասխանատվություն էր նախատեսել այն դեպքերի համար, երբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով՝ առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու միջոցով տեղափոխվում էին հանցագործության պահին 1.000.000 ՀՀ դրամ արժեքը գերազանցող ապրանքներ, մշակութային կամ այլ արժեքներ՝ այն որակելով որպես մաքսանենգություն՝ միևնույն ժամանակ դրա համար որպես պատիժ նախատեսելով նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեքհազարապատիկի չափով տուգանքը, կամ ազատագրվումը՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

Փաստորեն օրենսդիրը միևնույն արարք կատարելու համար նախատեսել է թե՛ վարչական և թե՛ քրեական պատասխանատվություն՝ այն պայմանավորելով Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների արժեքով և/կամ բնույթով (մշակութային կամ այլ արժեքներ), հետևաբար անձի կողմից կատարված հակաօրինական արարքին իրավական գնահատական տալու, կամ որ նույնն է արարքին համապատասխան որակում տալու համար անհրաժեշտ է ճշգրտորեն ընտրել կիրառման ենթակա օրենքը:

Դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվամբ հայտարարագրելը կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելն արձանագրելու յուրաքանչյուր դեպքում արարքին որակում տալու համար անհրաժեշտ է նախ և առաջ հաստատված համարել, որ դրանում բացակայում են հանցագործության հատկանիշները, քանի որ միայն այդ պարագայում վարչական մարմինն իրավասու կլինի հարուցել վարչական վարույթ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հիման վրա ենթադրյալ իրավախախտի նկատմամբ վարչական պատասխանատվության հարցը լուծելու համար: Մինչդեռ, հանցագործության հատկանիշների առկայության պարագայում վարչական վարույթ չի կարող հարուցվել:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 16.05.2016 թվականին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-83-Ն ՀՀ օրենքը, որի 5-րդ հոդվածով 25.06.2016 թվականից ուժը կորցրած է ճանաչվել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը, իսկ նույն օրենքի 6-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածներով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքը լրացվել է համապատասխանաբար 215.1-ին, 235.1-ին և 267.1-ին հոդվածներով, որոնք քրեական պատասխանատվություն են նախատեսում մաքսանենգության առանձին տեսակների համար:

Այսինքն, օրենսդիրն ըստ էության ապաքրեականացրել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված արարքը, բացառությամբ որոշակի տեսակի ապրանքների մաքսանենգության:

Հաշվի առնելով իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքում կատարված վերոգրյալ փոփոխությունները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ մաքսանենգության՝ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով՝ առանց մաքսային հսկողության կամ դրանից թաքցնելով կամ մաքսային և այլ փաստաթղթերը խաբեությամբ օգտագործելու կամ դրանց մասին ճշգրիտ տեղեկությունները սահմանված ձևով չհայտարարագրելու կամ ոչ իր անվամբ հայտարարագրելու միջոցով ապրանքների, մշակութային կամ այլ արժեքների տեղափոխման համար, եթե դրանք կատարվել են խոշոր չափերով, համար քրեական պատասխանատվության վերացման հետևանքով քրեական հետապնդումը դադարեցվելու դեպքում նույն արարքի համար անձին իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորությանը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում կրկին փաստել, որ արարքի որակումը կարող է տրվել այն կատարելու պահին գործող օրենսդրության հիման վրա: Այսինքն, եթե արարքը կատարելու պահին պարունակել է իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված հատկանիշներ ու այդ հիմքով հարուցվել է քրեական գործ, ապա դա նշանակում է, որ նշված հոդվածի ապաքրեականացման դեպքում անգամ նույն արարքը չի կարող որակվել վարչական իրավախախտում (զանցանք), քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի իրավակարգավորումները բխում է, որ արարքը կարող է որակվել վարչական իրավախախտում (զանցանք) և առաջ բերել վարչական պատասխանատվություն միայն այն դեպքում, երբ այդ արարքը հանցագործություն չի համարվում: Հետևաբար, եթե անգամ արարքի ապաքրեականացումից հետո այն ձեռք է բերում վարչական իրավախախտում (զանցանք) որակելու համար օրենքով նախատեսված հատկանիշներ, այդուհանդերձ դա բավարար չի կարող լինել անձի նկատմամբ վարչական պատասխանատվություն կիրառելու համար, քանի որ արարքի որակման համար էական են **ոչ թե արձանագրված հակաօրինական գործողություններից հետո կատարված օրենսդրական փոփոխությունները, այլ՝ արարքի կատարման պահը:**

Ընդ որում, իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունները՝ մաքսանենգության համար քրեական պատասխանատվության վերացման հետևանքով քրեական գործի հարուցումը մերժվելու կամ քրեական գործի վարույթը կարճվելու դեպքում նույն արարքի համար անձին իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորությունը պարզելու համար օրենքի հետադարձ ուժի կիրառման հարցը որևէ էական նշանակություն չի կարող ունենալ:

Անփոփելիվ վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչև 25.06.2016 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի դիսպոզիցիայով նախատեսված արարքը կատարելու փաստի առթիվ քրեական հետապնդումն արարքի ապաքրեականացման հետևանքով դադարեցվելու դեպքում՝ վարչական իրավախախտման նշանների առկայության պայմաններում,

անձին իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության ենթարկելն իրավաչափ չէ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում 07.04.2014 թվականին իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58204314 քրեական գործը: Վարուժան Տիգրանի Վարդանյանին մեղադրանք է առաջադրվել իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ այն արարքի համար, որ նա 2013 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում, տեղեկանալով Կոմիտեի նախաբացթողումային հսկողության վարչության Շիրակի բաժնի «Բավրա» մաքսային տեսուչ Աշոտ Գևորգյանի միջոցով, նշված մաքսակետով արտերկրից Հայաստան ներմուծվող ապրանքներն առանց մաքսային հսկողության տեղափոխելու հնարավորության մասին, վերջինիս և այլ անձանց հետ ձեռք բերված նախնական համաձայնությամբ 2014 թվականի հունվարի 12-ին, 19-ին և 22-ին 5 դեպքով օժանդակել է նշված պաշտոնատար անձի կողմից սահմանված գրաֆիկի համաձայն ծառայություն իրականացնելու ընթացքում պաշտոնեական դիրքի օգտագործմամբ մաքսանենգություն կատարելուն:

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 06.07.2016 թվականի որոշմամբ ամբաստանյալ Վարուժան Վարդանյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցվել է՝ նկատի ունենալով, որ 25.06.2016 թվականին ուժի մեջ է մտել ՀՀ Ազգային ժողովի կողմից 16.05.2016 թվականին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ 83-Ն ՀՀ օրենքը, որի 5-րդ հոդվածի համաձայն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածը ճանաչվել է ուժը կորցրած:

Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության վարչական վարույթի իրականացման բաժնում 01.08.2016 թվականին Վարուժան Վարդանյանի նկատմամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն, որի համաձայն՝ վերջինիս արարքում առկա են ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով նախատեսված մաքսային կանոնների խախտման հատկանիշներ:

Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության պետի 08.08.2016 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 170 որոշմամբ Վարուժան Վարդանյանը ճանաչվել է զանցառու իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով և ենթարկվել է վարչական պատասխանատվության չհաշվարկված և չզանձված մաքսային վճարների հիսուն տոկոսի չափով՝ 7.137.179 ՀՀ դրամ:

Վճարելի դատարանը գտնում է, որ 16.05.2016 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության 18.04.2003 թվականի քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչվելու հանգամանքը չէր կարող ազդեցություն ունենալ հայցվորի կողմից 2013 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին կատարված արարքի որակման վրա, քանի որ արարքը կատարելու պահի դրությամբ այն վարչական իրավախախտում (զանցանք) չի հանդիսացել ու այդպիսին չի որակվել, ուստի Վճարելի

դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, բավարարելով վերաքննիչ բողոքը, Դատարանի 28.11.2018 թվականի վճիռը բեկանելով և փոփոխելով ու Կոմիտեի իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթի իրականացման վարչության՝ 08.08.2016 թվականի թիվ 170 որոշումն անվավեր ճանաչելով, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի Կոմիտեի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չի կարող լինել Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.06.2020 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/8942/05/19  
2022թ.

Վարչական գործ թիվ

ՎԳ/8942/05/19

Նախագահող դատավոր՝

Կ. Ավետիսյան

Դատավորներ՝

Ք. Մկոյան

Ա. Թովմասյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*զեկուցող* Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

2022 թվականի դեկտեմբերի 01-ին  
գրավոր ընթացակարգով քննելով Երևան համայնքի վճռաբեկ բողոքը ՀՀ վե-  
րաքննիչ վարչական դատարանի 02.12.2021 թվականի որոշման դեմ՝ վարչական  
գործով ըստ հայցի Ցողիկ Ավետիսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի  
(այսուհետ՝ Երևան համայնք)՝ 25.09.2019 թվականի թիվ Վ-36/60 որոշումն  
անվավեր ճանաչելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Ցողիկ Ավետիսյանը պահանջել է անվավեր ճանաչել  
Երևան համայնքի 25.09.2019 թվականի թիվ Վ-36/60 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (այսուհետ՝ Դատարան) (դատավոր՝ Էդ. Նահապե-  
տյան) 23.09.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատա-  
րան) 02.12.2021 թվականի որոշմամբ Երևան համայնքի ներկայացրած վերա-  
քննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.09.2020 թվականի վճիռը թողնվել է  
անփոփոխ՝ Վերաքննիչ դատարանի 02.12.2021 թվականի որոշմամբ ամրագրված  
պատճառաբանություններով:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևան համայնքը (ներկայա-  
ցուցիչ՝ Արամ Աբովյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 46-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթների հարուցման և եզրափակման համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված են հատուկ ժամկետներ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը տվյալ դեպքում կիրառելի չէ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ իրավախախտման դեպքը բացահայտվել է 22.08.2019 թվականին, որի կապակցությամբ 22.08.2019 թվականին կազմվել է թիվ 030542 արձանագրությունը, հետևաբար առաջնորդվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթով, պարզ է դառնում, որ եզրափակիչ վարչական ակտը հնարավոր է կայացնել մինչև 23.10.2019 թվականը ներառյալ, և նկատի ունենալով, որ վիճարկվող վարչական ակտը կայացվել է 25.09.2019 թվականին, ապա ամբողջից պարզ է դառնում, որ վիճարկվող վարչական ակտը կայացվել է օրենսդրությամբ սահմանված ժամկետների պահպանմամբ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ վարչական վարույթի նյութերով ամբողջապես հիմնավորվում է կատարված վարչական իրավախախտման առկայության փաստը, հետևապես Ցողիկ Ավետիսյանն իրավաչափորեն է ենթարկվել վարչական պատասխանատվության, որպիսի պայմաններում բացակայում է բավարար իրավական հիմքը՝ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար:

Բացի այդ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 46-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վճռաբեկ դատարանի կողմից անհրաժեշտ է ստանալ հետևյալ հարցի պատասխանը.

- արդյո՞ք վարչական իրավախախտման վերաբերյալ գործերով հարուցված վարչական վարույթի նկատմամբ կիրառելի է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված վարույթի իրականացման և եզրափակման 30-օրյա ժամկետը, թե կիրառելի է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված երկամսյա ժամկետը՝ տարածական մեկնաբանմամբ:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.12.2021 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել, կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակից Հ, Ասատրյանի կողմից 22.08.2019 թվականին կազմվել է թիվ 030542 արձանագրությունը՝ Յողիկ Ավետիսյանի կողմից կատարված իրավախախտման վերաբերյալ **(գ.թ. 9):**

2. Երևանի քաղաքապետարանի 25.09.2019 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ հայցվորը ենթարկվել է վարչական պատասխանատվության 200.000 ՀՀ դրամի չափով այն հիմնավորմամբ, որ սեփականության իրավունքով հայցվորին և Գարեգին Էլոյանին պատկանող Երևանի Դավթաշեն 2-րդ փողոցի թիվ 12/1 հասցեում հայցվորն ինքնակամ իրականացրել է ավտոտնակի ծածկի և ավտոտնակի վրա քարե շարվածքի շինարարական աշխատանքներ **(գ.թ. 8):**

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 46-րդ հոդվածների և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վարչական իրավախախտման գործի քննության ժամկետների առանձնահատկություններին:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու (...) հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (...) միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմինների՝ վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեության նկատմամբ կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթները, իսկ այն դեպքերում, երբ առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանված են այլ օրենքներով և



(կամ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ապա այդ դեպքում կիրառման են ենթակա այդպիսի առանձնահատկություններ սահմանող օրենքների և (կամ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի դրույթները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, (...), նույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարույթն առանձին տեսակի վարչական վարույթ է, որի առանձնահատկությունները կանոնակարգվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր դրույթները կիրառելի են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի նկատմամբ միայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված վարույթի առանձնահատկությունների հաշվառմամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված են վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու ժամկետներ, ուստի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժ նշանակելու ժամկետների մասով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը վարչական վարույթի առավելագույն ժամկետ սահմանելու մասով կիրառելի չէ:

Այսպես՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հոդօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Ներկայումս գործող՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն

բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ փաստել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածում օրենսդիրը նախատեսել է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հատուկ ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր հանրային վնասակարությունը, և անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, քանի որ այդ ժամկետի լրանալուց հետո վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելը դառնում է աննպատակահարմար (*լրե'ս, Հուսիկ Մարգարյանն ընդդեմ ՀՀ Ֆինանսների նախարարության թիվ ՎԳ/10555/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 277-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և մյուս նյութերը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում:

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ գործի քննության համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է քննել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և մյուս նյութերը ստանալու օրվանից սկսած տասնհինգօրյա ժամկետում (բացառությամբ, այն դեպքերի, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված են այլ հատուկ ժամկետներ):

Ամբողջ վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) համար որպես վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության 15-օրյա ժամկետի սկիզբ օրենսդիրը սահմանել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և մյուս նյութերը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու օրը, որպիսի հանգամանքի պարզման համար վարչական մարմնի կողմից անհրաժեշտ է ներկայացնել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և մյուս նյութերը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու վերաբերյալ ապացույց, որպիսի ապացույցի առկայության դեպքում է հնարավոր միայն արձանագրել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության 15-օրյա ժամկետի սկիզբը և իրականացնել համապատասխան հաշվարկը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ այն դեպքերում, երբ հնարավոր չէ հստակ որոշել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և մյուս նյութերը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու օրը, վարչական մարմինը, պետք է կրի դրա պատճառով առաջացող հնարավոր բացասական հետևանքները:

Մինևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդիրը նախատեսել է վարչական տույժ նշանակելու, այսինքն՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու երկամսյա ժամկետ (բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի), անուղղակիորեն սահմանափակելով վարչական վարույթի իրականացման տևողությունը:

Վերագրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննվեն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և մյուս նյութերը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու օրվանից սկսած Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետներում: Միաժամանակ վարչական մարմինը պետք է հաշվի առնի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, գործի նյութեր ձեռք բերելու և դրանք գործի քննության համար լիազորված մարմնին (պաշտոնատար անձին) տրամադրելու, վերջինիս կողմից դրանք ստանալու ու վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետը, որպիսի ժամկետի լրանալուց հետո՝ անկախ գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և մյուս նյութերը ստանալու օրվանից, կատարված արարքը կկորցնի իր հանրային վստահարությունը, և անձը կազատվի վարչական պատասխանատվությունից:

**Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.**

Դիմելով դատարան՝ Յողիկ Ավետիսյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևան համայնքի 25.09.2019 թվականի թիվ Վ-36/60 որոշումը:

**Դատարանը** հայցը բավարարել է այն պատճառաբանությամբ, որ *վարչական վարույթի նյութերով չի հասարարվում Յողիկ Ավետիսի Ավետիսյանի մեղքը կարարված իրավախախտման մեջ, իսկ մեղքի բացակայության պայմաններում Յողիկ Ավետիսի Ավետիսյանը չէր կարող ենթարկվել պարասխանարվության: Դատարանը նշել է, որ սույն լրանակարներից պարզ չէ, թե դրանք երբ են կարարվել, որ հասցեում են կարարվել կամ ինչքանով են վերաբերելի իրավախախտմանը:*

**Վերաքննիչ դատարանը** Երևան համայնքի վերաքննիչ բողոքը մերժել է և Դատարանի վճիռը թողել է անփոփոխ այն հիմնավորմամբ, որ *վարչական ակտ ընդունելու վարչական մարմնի նախաձեռնության մասին ուղղակիորեն վկայում է 22.08.2019 թվականին կազմված արձանագրությունը: Վիճարկվող որոշումն ընդունվել է 25.09.2019 թվականի սեպտեմբերին: Այսինքն, րվյալ դեպքում, վարչական վարույթի սկիզբ է համարվում 22.08.2019 թվականը, հետևաբար 30-օրյա ժամկետը պետք է ավարտվեր 25.09.2019 թվականին: Վերաքննիչ դատարանը գրել է, որ քննարկվող դեպքում պահպանված չէ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական վարույթի առավելագույն 30-օրյա ժամկետը:*

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետի կողմից **22.08.2019** թվականին կազմվել է թիվ 030542 արձանագրությունը՝ Յողիկ Ավետիսյանի կողմից կատարված իրավախախտման վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանի **25.09.2019** թվականի «Վարչական տույժ նշանակելու» որոշմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ հայցվորը ենթարկվել է վարչական պատասխանատվության 200.000 ՀՀ դրամի չափով այն հիմնավորմամբ,

որ սեփականության իրավունքով հայցվորին և Գարեգին Էլոյանին պատկանող Երևանի Դավթաշեն 2-րդ փողոցի թիվ 12/1 հասցեում հայցվորն ինքնական իրականացրել է ավտոտնակի ծածկի և ավտոտնակի վրա քարե շարվածքի շինարարական աշխատանքներ:

Մույն գործում առկա է **22.08.2019** թվականին կազմված թիվ 030542 արձանագրությունը և մյուս նյութերը գործի քննության համար լիազորված մարմնի կողմից ստանալու օրվա վերաբերյալ որևէ ապացույց, որպիսի ապացույցի առկայության դեպքում միայն հնարավոր կլիներ արձանագրել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության 15-օրյա ժամկետի սկիզբը և իրականացնել համապատասխան հաշվարկը:

Վերաքննիչ դատարանը, արձանագրելով, որ քննարկվող դեպքում պահպանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական վարույթի առավելագույն 30-օրյա ժամկետը, նշված պատճառաբանությունը դիտել է բավարար վերաքննիչ բողոքը մերժելու համար՝ որևէ անդրադարձ չկատարելով վերաքննիչ բողոքի՝ վիճարկվող վարչական ակտի իրավաչափության վերաբերյալ հիմքին և այդ կապակցությամբ բերված հիմնավորմանն առ այն, որ հայցվորն իրավաչափորեն է ենթարկվել վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե („ex officio“) պարզելու սկզբունքը դրսևորվում է նաև վերաքննության փուլում: Մինևույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործի վերաքննության փուլում գործի **փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու** („ex officio“) սկզբունքի բովանդակությունը որոշակիորեն տարբերվում է գործի դատաքննության փուլում այդ սկզբունքի ունեցած բովանդակությունից: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի վերաքննության փուլում գործի **փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու** („ex officio“) սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին. վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար (*յրեն, անհար ձեռնարկատեր Գևորգ Դավթյանն ընդդեմ Կոմիտեի Մաշյոցի հարկային տեսչության թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ համակարգային վերլուծության ենթարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ և 144-րդ հոդվածները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ ի պաշտոնե իրականացնել բողոքի քննություն, իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտել բողոքում ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի վերը նշված դրույթը կկրի հոչակագրային բնույթ, եթե վերաքննիչ դատարանը սահմանափակվի գուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադառնա այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական ատյանում, և դատարանի

կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ: Այդուհանդերձ, հիշատակված դրույթների նման մեկնաբանումը չի նշանակում բողոքի յուրաքանչյուր հիմքում ներառված ցանկացած փաստարկի գնահատում և վերլուծում: Բողոքը քննող դատարանը բողոքի հիմքերում ներառված փաստարկներին պետք է անդրադառնա այն հաշվով, որ նախ դրանք լինեն վերաբերելի բողոքի հիմքերին, և այդ փաստարկներն ունենան ազդեցություն բողոքի հիմքը կամ հիմքերը հիմնավորված համարելու տեսանկյունից (տե՛ս, «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն ընդդեմ ՀՀ քննչական կոմիտեի թիվ ՎԴ/4169/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2019 թվականի որոշումը):

Նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը, ըստ էության, չի անդրադարձել վերաքննիչ բողոքի հիմքին և հիմնավորումներին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի հիմքը քննության առնելու և դրա հիմնավորվածությունը ստուգելու նպատակով գործն անհրաժեշտ է ուղարկել Վերաքննիչ դատարան՝ նոր քննության:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական ղեկավարամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 02.12.2021 թվականի որոշումը բեկանել և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում	Վարչական գործ թիվ	<b>ՎԴ-1533/05/20 2023թ.</b>
Վարչական գործ թիվ	ՎԴ-1533/05/20	
Նախագահող դատավոր՝	Կ. Ավետիսյան	
Դատավորներ՝	Ք. Մկոյան Ա. Թովմասյան	

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
գեկուցող	Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

2023 թվականի հունվարի 13-ին գրավոր ընթացակարգով քննելով Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 21.04.2022 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Վալերի Մեջլումյանի ընդդեմ Քաղաքապետարանի՝ 02.10.2019 թվականի թիվ Վ-37/2 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Վալերի Մեջլումյանը պահանջել է վերացնել 02.10.2019 թվականի թիվ Վ-37/2 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 25.05.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 21.04.2022 թվականի որոշմամբ Քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 25.05.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ՝ նույն որոշմամբ ամրագրված պատճառաբանություններով:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քաղաքապետարանը (ներկայացուցիչ՝ Զ. Սմբատյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջները.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածը և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ լիազոր մարմնի կողմից «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված նախագգուշացում ուղարկելու կամ չուղարկելու հանգամանքը որևէ կերպ փոխկապակցվածության մեջ չի գտնվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայով սահմանված իրավախախտման դեպքի բացահայտման պայմաններում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու գործընթացի իրականացման տեսանկյունից, ուստի եթե առկա է իրավախախտումը, ապա լիազոր մարմինը պարտավոր է այդ փաստն արձանագրել, ինչը տեղի է ունեցել քննարկվող դեպքում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 21.04.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

## **3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 10.12.2018 թվականի թիվ 01/18-Հ-8453-1243 շինարարության թույլտվության համաձայն՝ Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոցի թիվ 17/16 հասցեում կառուցապատող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ին արտադրական շենքի մի մասի վերակառուցման և հասարակական նշանակության շինության վերահատակագծման, վերակառուցման համար տրվել է թույլտվություն՝ նախատեսելով շինարարական աշխատանքներն իրականացնել 8 ամսվա ընթացքում (հատոր 1-ին, գ.թ. 61-62):

2) «Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի» ակտի համաձայն՝ Արին Բերդի փողոցի թիվ 17/16 հասցեում արտադրական շենքի մի մասի վերակառուցման և հասարակական նշանակության շինության վերահատակագծման աշխատանքների սկիզբը՝ 10.12.2018 թվական, ավարտը՝ 31.05.2019 թվական: Շինարարության տևողությունը՝ նախատեսված՝ 8 ամիս, փաստացի՝ 5 ամիս (հատոր 1-ին, գ.թ. 24-26):

3) Երևանի քաղաքապետի 11.09.2019 թվականի թիվ 031906 արձանագրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ՔՀՎ վարչության տարածքային երկրորդ բաժնի առաջատար մասնագետ Սարգիս Հակոբյանը հայտնաբերել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածով նախատեսված կառուցապատման համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելու իրավախախտումը: Ըստ արձանագրության՝ Էրեբունի վարչական շրջանի Արին Բերդի փողոցի թիվ 17/16 հասցեում կառուցապատող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրենին արտադրական շենքի մի մասի վերակառուցման և հասարակական



նշանակության շինության վերահատակագծման, վերակառուցման համար Երևանի քաղաքապետարանի կողմից 10.12.2018 թվականին տրված թիվ 01/18-Հ-8453-1243 շինարարության թույլտվությամբ սահմանվել է 8 ամիս ժամկետ, սակայն նույն թվականի 04.09.2019 թվականին հայտնաբերվել է, որ շինարարական օբյեկտի ընդունող հանձնաժողովի ակտը ձևակերպված չէ: Իրավախախտումը հայտնաբերվել է 04.09.2019 թվականին: Իրավախախտումը կատարվել է «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի կողմից. Վալերի Մեջլումյան: Նույն արձանագրությունը ստորագրվել է «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Վալերի Մեջլումյանի լ/ա Վահե Հարությունյանի կողմից և կատարվել է գրառում՝ «շին. ավարտական ակտ ստանալու համար 23.05.2019թ. դիմել եմ Երևանի քաղաքապետարան (դիմում հ-4795): Հրդեհային անվտանգության տեսչության մարմնի կողմից կատարված դիտողությունների և թերությունների վերացման ժամանակահատվածում ավարտվել է շին.թույլտվության ժամկետը» (հատոր 1-ին, գ.թ. 30-31):

4) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետի 02.10.2019 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-37/2 որոշմամբ կառուցապատող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Վալերի Մեջլումյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ վարչական տույժ 182.400 ՀՀ դրամի չափով (հատոր 1-ին, գ.թ. 54-55):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածների կապակցությամբ առկա իրավունքի զարգացման խնդիրը սույն գործով վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում առաջադրում է հետևյալ իրավական հարցադրումը. արդյո՞ք շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտելու դեպքում կառուցապատողին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու պարտադիր նախապայման է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու վերաբերյալ շինարարության թույլտվություն փոխ մարմնի կողմից կառուցապատողին նախագուշացում փայլը:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենքի միատեսակ կիրառության ապահովման՝ Վճռաբեկ դատարանի գործառույթը ենթադրում է ոչ միայն միասնական դիրքորոշման ձևավորում իրավական նորմի մեկնաբանության արդյունքում,

այլն՝ ձևավորված դիրքորոշման հետագա զարգացում: Նման իրավիճակներում իրավունքի զարգացման արդյունքում ձևավորված նոր դիրքորոշումը պետք է գերակայի նախորդ դիրքորոշման նկատմամբ և հիմք ընդունվի Վճռաբեկ դատարանի նոր դիրքորոշումը ձևավորած որոշման կայացման պահին դատարանների վարույթներում գտնվող գործերի լուծման համար:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թիվ ՎԴ/1876/05/13 վարչական գործով 28.11.2014 թվականի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «...Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտումը տեղ ունի համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետն ավարտվելու հաջորդ օրը, եթե այդ ժամկետում կառուցապատումը չի ավարտվել, հետևաբար վարչական մարմնի կողմից կառուցապատողին «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված նախազգուշացում ուղարկելը չի կարող որևէ նշանակություն ունենալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման համար կառուցապատողին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար»:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայի առանձնահատկություններով պայմանավորված՝ օբյեկտիվորեն առկա է նշված դիրքորոշումը վերանայելու և զարգացնելու անհրաժեշտություն ներքոշարադրյալ հիմնավորումներով:

Վճռաբեկ դատարանը վերն առանձնացված իրավական խնդիրն անհրաժեշտ է համարում դիտարկել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի նորմերի միջև առկա համակարգային փոխկապվածության լույսի ներքո:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթները և կարգավորում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները: Քաղաքաշինությունը Հայաստանի Հանրապետությունում կենսագործունեության համար բարենպաստ տարածական միջավայրի ստեղծման կամ փոփոխման նպատակով պետության, ֆիզիկական, իրավաբանական անձանց և դրանց միավորումների գործողությունների համախումբ է, որն ընդգրկում է (...) շենքերի, շինությունների նախագծման և շինարարության, վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ինչպես նաև տարածքների բարեկարգման բոլոր տեսակները (...):

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող կամ այն փոփոխելու իրավունքով օժտված օգտագործողը քաղաքաշինական գործունեություն իրականացնելիս հանդես է գալիս որպես կառուցապատող (...):

Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է կառուցապատողի պարտականությունները. ի թիվս այլնի, կառուցապատողները պարտավոր են կառուցապատման ավարտել տվյալ քաղաքաշինական գործունեության համար շենքերի և կառուցվածքների շինարարության տևողության նորմերով հաշվարկված ու շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում և ապահովել ավարտված շինարարական օբյեկտի շահագործման փաստագրումը («Ժ» կետ):

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է «շինարարության թույլտվություն» հասկացության բովանդակությունը.

այն է՝ շինարարության թույլտվությունը փաստաթուղթ է, որը հաստատում է կառուցապատողի իրավունքը՝ իրականացնել որոշակի շինարարական գործունեություն ինչպես նոր կառուցապատվող կամ վերակառուցվող տարածքում, այնպես էլ գոյություն ունեցող շենքերում և շինություններում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ շինարարության թույլտվությունը տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրած մարմնի կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը Կառավարության սահմանած կարգով համաձայնեցնելուց և կառուցապատողի կողմից դրանք հաստատելուց հետո՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի չորրորդ մասի «ժ» կետով նախատեսված ժամկետով:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 6-րդ հոդվածի չորրորդ մասի «ժ» կետով նախատեսված ժամկետներում կառուցապատումը (...) չավարտվելու դեպքում, շինարարության թույլտվություն տվող մարմինը գրավոր նախագգուշացնում է կառուցապատողին շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու վերաբերյալ: Ընդ որում, շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից շինարարության տևողությունը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան տվյալ օբյեկտի չիրականացված աշխատանքների համար շինարարության տևողության նորմերով հաշվարկված ժամկետի չափով:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նշված պահանջը չկատարելու դեպքում կառուցապատողը շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով ենթարկվում է վարչական պատասխանատվության:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եթե նախագգուշացումն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, կառուցապատողը չի դիմում շինարարության թույլտվություն տվող մարմին՝ շինարարության ժամկետը երկարաձգելու հայտով, կամ շինարարության թույլտվությամբ սահմանված նոր ժամկետում չի ավարտում կառուցապատումը, կամ չի օտարում սեփականության իրավունքով իրեն պատկանող օբյեկտը, ապա շինարարության թույլտվություն տվող մարմինը նրան կրկին անգամ ենթարկում է վարչական պատասխանատվության և դիմում է դատարան տվյալ օբյեկտը վաճառելու հայցով՝ դատարանի սահմանած կարգով և գնով, բայց ոչ պակաս, քան օբյեկտի կադաստրային արժեքի 75 տոկոսի չափով:

ՀՀ կառավարության 19.03.2015 թվականի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 596-Ն որոշման Հավելված 1-ի 123-րդ կետի համաձայն՝ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը (...) չավարտելու դեպքում իրավասու մարմինը կառուցապատողին գրավոր նախագգուշացնում է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու մասին: Նույն Հավելված 1-ի 124-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմնի կողմից շինարարության (...) թույլտվությամբ սահմանված շինարարության (...) տևողությունը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան տվյալ օբյեկտի չիրականացված աշխատանքների համար շինարարության (...) տևողության նորմերով հաշվարկված ժամկետի չափով:

Հավելված 1-ի 125-րդ կետը սահմանում է. «Սույն կարգի 123-րդ կետով սահմանված դեպքում կառուցապատողը շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով ենթարկվում է վարչական պատասխանատվության»:

Վերոհիշյալ նորմերի համակարգային վերլուծությունը վկայում է, որ կառուցապատման գործընթացի կայունությունը, որոշակիությունն ու կանխատեսելիությունը, ի թիվս այնի, ապահովվում է կառուցապատումը որոշակի կոնկրետ ժամկետներով սահմանափակելու միջոցով, որպիսի ժամկետը հաշվարկվում է տվյալ քաղաքաշինական գործունեության համար շենքերի և կառուցվածքների շինարարության տևողության նորմերով ու սահմանվում շինարարության թույլտվությամբ: Այդ ժամկետում կառուցապատողի կողմից շինարարության ավարտը երաշխավորելու նպատակով օրենսդիրը պարտականություններ է սահմանել ոչ միայն կառուցապատողի, այլ նաև շինարարության թույլտվություն տվող մարմնի համար: Ամրագրելով կառուցապատողի՝ տվյալ քաղաքաշինական գործունեության համար շենքերի և կառուցվածքների շինարարության տևողության նորմերով հաշվարկված ու շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատման ավարտելու պարտականությունը՝ օրենսդիրը միաժամանակ շինարարության թույլտվություն տվող մարմնին պարտավորեցրել է նախատեսված ժամկետներում կառուցապատումը չավարտվելու դեպքում գրավոր նախագգուշացնել կառուցապատողին՝ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատման ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու վերաբերյալ:

Օրենսդիրը վարչական պատասխանատվություն է նախատեսել ոչ թե ինքնին սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտելու համար, այլ սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտելու պայմաններում շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու վերաբերյալ նախագգուշացման պահանջը չկատարելու համար («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մաս):

Վերոհիշյալ իրավակարգավորումներից բխում է նաև, որ կառուցապատողին վերապահված է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու համար դիմելու իրավական հնարավորություն, իրավունք: Ըստ այդմ՝ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի նորմերն իրենց հիմքում ունեն այն տրամաբանությունը, որ հարկադրանքի միջոցը (վարչական պատասխանատվությունը) գործադրվում է միայն այդ իրավական հնարավորությունը չիրացնելու դեպքում:

Վարչական պատասխանատվությունն ինքնանպատակ չէ. սույն դեպքում վարչական պատասխանատվության նպատակն է ապահովել կառուցապատողի կողմից սահմանված ժամկետներում կառուցապատման իրականացումը՝ *օգրագործելով նաև սահմանված ժամկետը երկարաձգելու իրավական հնարավորությունը*: Այն դեպքում, երբ օբյեկտիվ պատճառներով շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտած կառուցապատողն իրացնում է այդ ժամկետը երկարաձգելու իր իրավունքը, վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելը դառնում է ինքնանպատակ և նաև իմաստագրվում ժամկետը երկարաձգելու իրավական հնարավորությունը:

Այսպիսով, ըստ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների՝ կառուցապատողը կրում է կառուցապատումը շինարարության թույլտվությանը սահմանված ժամկետում ավարտելու պարտականություն: Միաժամանակ, կառուցապատողին իրավունք է վերապահված դիմել իրավասու մարմին՝ շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու խնդրանքով: Կառուցապատումը շինարարության թույլտվությանը սահմանված ժամկետում չավարտելու դեպքում շինարարության թույլտվությունն տալու լիազորությանը օժտված վարչական մարմինը պարտավոր է իրացնել շինարարության թույլտվությանը սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու վերաբերյալ կառուցապատողին նախազգուշացնելու իր լիազորությունը: Նախազգուշացման պահանջի չկատարումը հանգեցնում է վարչական պատասխանատվության:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի՝ «Նշված պահանջը չկատարելու դեպքում կառուցապատողը շինարարության թույլտվությունն տվող մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով ենթարկվում է վարչական պատասխանատվության» նորմն իրացվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածում. նշված նորմը «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածն ամրագրվել են միաժամանակ՝ նույն օրն ընդունված համապատասխանաբար թիվ ՀՕ-494 և թիվ ՀՕ-496 օրենքներով: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի նորմերն ուղղակիորեն թղթակցում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի հետ, և ըստ այդմ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմի բովանդակությունը պետք է բացահայտվի այս նորմերի համակարգային փոխկապվածության համատեքստում:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությանը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառուցապատումը համապատասխան քաղաքաշինական գործունեության համար սահմանված քաղաքաշինական նորմերով նախատեսված ժամկետներում չավարտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ շինարարության նախահաշվային արժեքի մեկ տոկոսի չափով:

Հաշվի առնելով, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածն ընդունված է ի իրացումն <Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի, և այս նորմերը գտնվում են համակարգային փոխկապվածության մեջ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առայությունը՝

- կառուցապատողը շինարարության թույլտվությանը սահմանված ժամկետում չի ավարտել կառուցապատումը,

- շինարարության թույլտվություն տվող մարմինը գրավոր նախազգուշացրել է կառուցապատողին շինարարության թույլտվությանը սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու վերաբերյալ,

- գրավոր նախագգուշացումից հետո շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու պահանջը կառուցապատողը չի կատարել:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով չի կարող վարչական պատասխանատվության ենթարկվել ինքնին շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտելու փաստի ուժով: Շինարարության թույլտվություն տվող մարմինն իրավասու չէ անձին ենթարկել նշված նորմով նախատեսված վարչական պատասխանատվության, քանի դեռ չի իրացրել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով իրեն պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու վերաբերյալ կառուցապատողին գրավոր նախագգուշացնելու իր լիազորությունը: Ըստ այդմ՝ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտելու դեպքում կառուցապատողին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու պարտադիր նախապայման է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու վերաբերյալ շինարարության թույլտվություն տվող մարմնի կողմից կառուցապատողին տրված նախագգուշացումը:

Ընտևաբար, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված զանցակազմի օբյեկտիվ կողմի առկայությունը հաստատված համարելու համար, ի թիվս այլնի, պահանջվում է շինարարության թույլտվությունը տվող մարմնի գրավոր նախագգուշացումն ուղղված՝ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատումը չավարտած կառուցապատողին, գրավոր նախագգուշացումը վերջինիս կողմից ստացված լինելու ապացույցի և նախագգուշացման պահանջը կառուցապատողի կողմից չկատարելու փաստի առկայություն:

Վճռաբեկ դատարանը, սույն գործով վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնելով իրավունքի զարգացման իր գործառույթի տիրույթում, արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասին տրված վերը նշված մեկնաբանությանը համապատասխան:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Դիմելով դատարան՝ Վալերի Մեջլումյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 02.10.2019 թվականի թիվ Վ-37/2 որոշումը, որով վարչական պատասխանատվության է ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ կառուցապատումը սահմանված ժամկետում չավարտելու համար:

**Դատարանը,** հայցը բավարարելով, արձանագրել է, որ կառուցապատող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Վալերի Մեջլումյանին Քաղաքապետարանի կողմից շինարարության թույլտվությամբ

սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով կառուցապատողին պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու վերաբերյալ գրավոր նախազգուշացում կատարված չլինելու պայմաններում կառուցապատող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Վալերի Մեջլումյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասով չէր կարող ենթարկվել վարչական պատասխանատվության:

Դատարանը փաստել է, որ կառուցապատող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Վալերի Մեջլումյանին նման գրավոր նախազգուշացում կատարելու արդյունքում միայն Քաղաքապետարանը, որպես շինարարության թույլտվություն տվող մարմին, իրավասու էր նախազգուշացմամբ նշված պահանջը չկատարելու դեպքում կառուցապատող Վալերի Մեջլումյանին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկել վարչական պատասխանատվության:

**Վերաքննիչ դատարանը**, մերժելով Քաղաքապետարանի բողոքը, Դատարանի վճիռը թողել է անփոփոխ՝ հետևյալ հիմնավորումներով. Վերաքննիչ դատարանն անհիմն է համարել հայցվոր կողմի և Դատարանի դիրքորոշումն առ այն, որ վարչական մարմնի կողմից «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված կառուցապատողին նախազգուշացնելու պարտականությունը կատարված չլինելու պայմաններում կառուցապատողը չի կարող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ ենթարկվել վարչական պատասխանատվության: Վերաքննիչ դատարանը, հիմքում ունենալով թիվ ՎԴ/1876/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի հիմքով վարչական պատասխանատվության կիրառման վերաբերյալ արտահայտած դիրքորոշումը, վերահաստատել է, որ իրավախախտումը կատարելուց հետո շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու համար դիմելը չի կարող կառուցապատողին ազատել պատասխանատվությունից:

Վերաքննիչ դատարանը վիճարկվող ակտը ոչ իրավաչափ է ճանաչել այլ պատճառաբանությամբ՝ արձանագրելով, որ վարչական վարույթի շրջանակներում գործի քննության համար ենթադրաբար հրավիրված նիստի ժամանակի մասին հայցվորին պատշաճ ձևով չտեղեկացնելու արդյունքում վարչական մարմինը չի ապահովել հայցվոր կողմի լաված լինելու իրավունքը, որով ըստ էության վերջինս գրկվել է իր իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից:

Վճռաբեկ դատարանը, վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ին 10.12.2018 թվականին թիվ 01/18-Հ-8453-1243 շինարարության թույլտվությունը տրվել է 8 ամիս ժամկետով, իսկ ըստ Երևանի քաղաքապետի 11.09.2019 թվականի թիվ 031906 արձանագրության՝ հայտնաբերվել է, որ նշված ժամկետում շինարարական օբյեկտի ընդունող հանձնաժողովի ակտը ձևակերպված չէ:

Արդյունքում Երևանի քաղաքապետարանի 02.10.2019 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-37/2 որոշմամբ շինարարության թույլտվությամբ սահմանված 8 ամիս ժամկետում շինարարական օբյեկտի շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի ձևակերպված չլինելու համար Վալերի

Մեջումյանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանը վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ գործում առկա չէ կառուցապատումը 10.12.2018 թվականի թիվ 01/18-Հ-8453-1243 շինարարության թույլտվությամբ սահմանված 8-ամսյա ժամկետում չավարտվելու պայմաններում կառուցապատող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ին՝ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու և այդ ժամկետում կառուցապատումն ավարտելու կամ սեփականության իրավունքով կառուցապատողին պատկանող քաղաքաշինական գործունեության օբյեկտն օտարելու վերաբերյալ գրավոր նախագգուշացնելու վերաբերյալ որևէ ապացույց:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ կառուցապատող «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Վալերի Մեջումյանը չէր կարող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկվել, քանի դեռ շինարարության թույլտվություն սովոր մարմինը չէր իրացրել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ գրավոր նախագգուշացում կատարելու իր լիազորությունը: Պատասխանող վարչական մարմինը՝ որպես շինարարության թույլտվություն սովոր մարմին, իրավասու էր Վալերի Մեջումյանին վարչական պատասխանատվության ենթարկել միայն գրավոր նախագգուշացման պահանջը չկատարելու դեպքում:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի իրավական դիրքորոշումներն ու եզրահանգումը, ի տարբերություն Վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումների, համահունչ են Վճռաբեկ դատարանի սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումներին: Թեև Վերաքննիչ դատարանը վիճարկվող վարչական ակտն այլ պատճառաբանությամբ գնահատել է որպես ոչ իրավաչափ վարչական ակտ, այնուամենայնիվ, Վերաքննիչ դատարանի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154.1-րդ հոդվածի 1-ին մասը կիրառվել է սխալ մեկնաբանությամբ:

Ի անփոփոխ վերոշարադրյալի՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, բավարարելով հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը՝ թեև այլ հիմնավորմամբ և պատճառաբանությամբ, կայացրել են գործի ելքը ճիշտ լուծող դատական ակտեր:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ստորադաս դատարանի դատական ակտը պատճառաբանելու իր լիազորությունը, որպիսի պատճառաբանությունները բերված են սույն դատական ակտում:



**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է (...) մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Քաղաքապետարանի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 21.04.2022 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանությամբ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/5232/05/19  
2023թ.

Վարչական գործ թիվ	ՎԴ/5232/05/19
Նախագահող դատավոր՝	Ա. Թովմասյան
Դատավորներ՝	Ք. Մկոյան
	Կ. Ավետիսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*գեկուցող* Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  
 Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

2023 թվականի փետրվարի 03-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 17.03.2021 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «Լիվաֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Գագիկ Բոյախյանի ընդդեմ Տեսչական մարմնի՝ 03.05.2019 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 404 որոշումը վերացնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերության տնօրեն Գագիկ Բոյախյանը պահանջել է վերացնել Տեսչական մարմնի 03.05.2019 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 404 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Ագրոյան) (այսուհետ՝ Դատարան) 06.03.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 17.03.2021 թվականի որոշմամբ Տեսչական մարմնի ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.03.2020 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տեսչական մարմինը (ի պաշտոնե ներկայացուցիչ՝ Հակոբ Ավագյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճարել բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճարել բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավահարաբարումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ, 32-րդ, 251-րդ և 279-րդ հոդվածները, «Գեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը, 12-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածը, 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 27-րդ հոդվածի 1-ին մասը, 124-րդ հոդվածի 2-րդ մասը:*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերությունը հանդիսանում է ՀՀ առողջապահության նախարարությանը ենթակա մարմին, որի նպատակը Հայաստանի Հանրապետությունում անվտանգ, արդյունավետ, որակյալ դեղերի մատչելիության ապահովմանն ուղղված դեղային ազգային քաղաքականության իրագործումն է:

Ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ ԵԱՏՄ երկրներից դեղերի ներմուծումն իրականացվում է առանձնահատուկ կարգավորմամբ՝ ներմուծող պետական սահմանը հատելուց հետո դեղերը տեղափոխում է իրեն պատկանող պահեստ, դրոշմապիտակավորում է դրանք, ապա հայտ է ներկայացնում ՀՀ առողջապահության նախարարություն՝ համապատասխանության հավաստագիր ստանալու նպատակով, այսինքն՝ դրոշմապիտակի առկայությունն իրացնող կազմակերպության համար չէր կարող հիմք լինել կարծելու, թե դրանք ներմուծված են օրինական ճանապարհով, և ուրեմն գրանցված են Հայաստանի Հանրապետությունում: Շատ տնտեսվարողներ ուղակիորեն շրջանցում են համապատասխանության հավաստագրի ստացման փուլը, և առանց որևէ խոչընդոտի համապատասխանություն չանցած դեղերը, որոնք մեծ հավանականությամբ նաև գրանցված չեն Հայաստանի Հանրապետությունում, հայտնվում են շուկայում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն, որ օրենսդիրը գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների հաստատմանն ուղղված ապացույցների շարքին է դասել նաև վերոնշյալ ապացույցներից բացի այլ փաստաթղթեր ևս, այդ թվում՝ դեղերի գրանցամատյանը:

Տվյալ դեպքում, քաղաքացիների և իրավաբանական անձանց համար օրենքի իմացության կանխավարկածը նշանակում է օրենքներն իմանալու և դրանց հետևելու պարտականություն:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17.02.2017 թվականի թիվ 06-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցամատյանի» ուսումնասիրությունից հստակ երևում է, որ «Բիսեպտոլ 240մգ/5մլ, սերիա՝ 020518» դեղը գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում, քանի որ առկա է դեղերի անվան և արտադրողի անհամապատասխանություն:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 17.03.2021 թվականի որոշումը և փոփոխել այն, կամ գործն ուղարկել նոր քննության:

## **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 22.03.2019 թվականի ապրանքների մատակարարման թիվ Ա0456829556 հարկային հաշվի համաձայն՝ Ընկերությունը «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊ ընկերությունից, ի թիվս այլնի, ձեռք է բերել «Բիսեպտոլ կախ 240մգ/5մլ 80մլ» դեղը (**հատոր 1-ին, գ.թ. 101-104**):

2) 23.04.2019 թվականին վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 398 արձանագրության համաձայն՝ Ընկերությանը պատկանող դեղատանը 22.03.2019 թվականին իրականացված զննման ժամանակ հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցման և օրինական ներմուծման լիցենզիա տեսանկյունից կասկած հարուցող 6 անուն դեղ, որոնք Տեսչական մարմնի ղեկավարի 29.03.2019 թվականի թիվ 01/2620-19 գրությամբ ուղարկվել են ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերություն փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով (**հատոր 1-ին, գ.թ. 85-87**):

3) «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերության 02.04.2019 թվականի թիվ S-09/19 փորձագիտական եզրակացության համաձայն՝ Բիսեպտոլ դեղակախույթ ներքին ընդունման 240մգ/5մլ, 80մլ դեղը, սերիա՝ 020518, պիտանիության ժամկետ՝ 05.2021 թվական, գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում, անվանման անհամապատասխանության հիմքով՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի անվանումն է «Բիսեպտոլ Մեդանա», ներկայացված դեղի անվանումն է «Բիսեպտոլ» և արտադրողի անհամապատասխանության հիմքով (**հատոր 1-ին, գ.թ. 93-96**):

4) Տեսչական մարմնի 03.05.2019 թվականի «ԱԼՎԱՖԱՐՄ» ՍՊ ընկերության տնօրեն Գագիկ Բոյախյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 404 որոշման համաձայն՝ որոշվել է Ընկերության տնօրեն Գագիկ Բոյախյանին՝ որպես խախտում թույլ տված անձի, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները խախտելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված և իրացված Բիսեպտոլ 240մգ/5մլ սերիա՝ 020518, պիտանելիության ժամկետ՝ 05.2021 թվական, դրոշմապիտակ՝ Ե0770933977 (1 տուփ) դեղի համար ենթաբերել վարչական տույժի՝ մինչև 10 փաթեթի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ վարչական տուգանքի (**հատոր 1-ին, գ.թ. 78-81**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հերկյալ իրավական հարցադրմանը.*

- արդյո՞ք դեղեր իրացնողը ցանկացած պարագայում պարտավոր է ստուգել իր կողմից ձեռք բերված դեղի՝ Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցված լինելու հանգամանքը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի) կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելը կամ արտադրելը կամ պահպանելը կամ բաշխելը կամ իրացնելը կամ կիրառելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի՝

1) մինչև 10 փաթեթի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհինսապատիկի չափով.

2) 10-ից մինչև 30 փաթեթի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև երեքհարյուրհինսապատիկի չափով.

3) 30 և ավելի փաթեթի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

Տվյալ դեպքում հայցվորը վարչական պատասխանատվության է ենթարկվել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված դեղ իրացնելու համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառության հետ կապված հարաբերությունները՝ բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով և դրանց մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովելու նպատակով, ինչպես նաև սահմանում է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմինների և դեղերի շրջանառության սուբյեկտների լիազորություններն այդ ոլորտում:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքի և հետազոտվող դեղագործական արտադրանքի շրջանառությունը կարգավորվում է նույն օրենքով, այլ օրենքներով և իրավական այլ ակտերով:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **դեղ**՝ դեղաբանական և (կամ) իմունաբանական և (կամ) նյութափոխանակային ակտիվությամբ օժտված մարդկային և (կամ) կենդանական և (կամ) բուսական և (կամ) քիմիական և (կամ) կենսատեխնոլոգիական ծագման միջոց՝ համապատասխան դեղաչափով և դեղաձևով, անհրաժեշտ փաթեթավորմամբ և մակնշմամբ, որը նախատեսված է կիրառել մարդկանց և կենդանիների հիվանդությունները բուժելու, կանխարգելելու և (կամ) օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաները փոփոխելու, վերականգնելու, կարգավորելու համար կամ ներմուծվում է մարդու և կենդանու օրգանիզմ հիվանդությունը ախտորոշելու նպատակով. (...)

20) **դեղերի շրջանառություն**՝ դեղի ստեղծում կամ նախակլինիկական հետազոտություն կամ կլինիկական փորձարկում կամ ստանդարտացում կամ արտադրություն կամ պատրաստում կամ դեղաբուսական հումքի մշակում կամ որակի հսկողություն կամ գրանցում կամ ներմուծում կամ արտահանում կամ փոխադրում, պահպանում կամ իրացում կամ բաշխում կամ կիրառում

կամ արդյունավետության, անվտանգության և կողմնակի ազդեցությունների դիտարկում կամ տեղեկատվության կամ գովազդի տարածում կամ ոչնչացում.

21) **դեղերի շրջանառության սուբյեկտներ՝** դեղերի շրջանառության որևէ փուլն իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր. (...)

39) **գրանցամատյան՝** Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով գրանցում ստացած դեղերի ռեգիստր.

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի իրավասությունը դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում, մասնավորապես 1-ին մասի համաձայն՝ **առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ Լիազոր մարմին)** դեղերի շրջանառության պետական կարգավորման բնագավառում իրականացնում է՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը դեղերի շրջանառության ոլորտում.

2) իր իրավասության շրջանակներում դեղերի շրջանառության կարգավորում.

3) դեղերի շրջանառության ոլորտի՝ օրենքով նախատեսված գործունեության տեսակների լիցենզավորում.

4) դեղերի պետական գրանցում.

5) դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների կազմակերպում և իրականացում.

6) դեղի գրանցման, պատշաճ արտադրական գործունեության, պատշաճ բաշխման գործունեության հավաստագրի տրամադրման համար և սույն օրենքով նախատեսված մասնագիտական այլ դիտարկումների ապահովում.

7) դեղերի գրանցամատյանի վարման ապահովում.

8) դեղերի արդյունավետ կիրառման և դեղերի կողմնակի ազդեցությունների մասնագիտական դիտարկման և համապատասխան երաշխավորությունների մշակման ապահովում.

9) միջազգային համագործակցություն.

10) միջգերատեսչական համագործակցություն.

11) դեղային պետական քաղաքականության ծրագրերի մշակում և դրանց իրականացման դիտարկում.

12) սույն օրենքով և այլ օրենքներով իրեն վերապահված գործառույթներ:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դեղի գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը փորձագիտական եզրակացության հիման վրա իրականացնում է Լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով, բացառությամբ անասնաբուժական պատվաստանյութերի, շիճուկների և պիտոբոցի միջոցների, որոնց պետական գրանցումը, գրանցումը մերժելը, կասեցնելը և ուժը կորցրած ճանաչելը իրականացնում է գյուղատնտեսության բնագավառի պետական Լիազոր մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դեղի գրանցումը հիմնվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունված արտադրանքի անվտանգության, արդյունավետության և որակի գիտականորեն

հիմնավորված չափանիշների և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած միջազգային մասնագիտական կազմակերպությունների ընդունած փաստաթղթերի վրա՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի վրա անցանկալի ազդեցության հնարավոր վտանգի գործոնները:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գրանցման ենթակա են դեղերի յուրաքանչյուր անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող (ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող), գրանցման հավաստագրի իրավատեր:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գրանցման ժամանակ հաստատվում են դեղի առաջնային և (կամ) արտաքին փաթեթը, պիտակը, մակնիշը (այդ թվում՝ գունավոր պատկերների տեսքով), բժշկական կիրառման հրահանգը (դեղի ընդհանուր բնութագիրը), օգտագործման հրահանգը (ներդիր-թերթիկը) և որակի հատկորոշիչները (սպեցիֆիկացիաները):

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ գրանցման նպատակով հայտատու կարող է հանդես գալ արտադրողը կամ արտադրանքի համար պատասխանատու այլ անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, որը դեղի գրանցումից հետո համարվում է գրանցման հավաստագրի իրավատերը: Գրանցման փաստաթղթերը կարող է ներկայացնել նաև հայտատուի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված անձը: Ներկայացված տվյալների ճշտության և հավաստիության համար պատասխանատու է հայտատուն:

Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է դեղի գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման նպատակով իրականացվող փորձաքննության կարգը՝ սահմանելով նոր, վերարտադրված դեղերի, կենսանմանակների, դեղերի համակցությունների, հոմեոպատիային, կենսաբանական դեղերի, ներառյալ՝ արյունից կամ պլազմայից ստացված, իմունաբանական, ռադիոակտիվ, անասնաբուժական դեղերի (ներառյալ՝ դեղանյութեր պարունակող անասնակերերի), բուսական դեղերի (այդ թվում՝ սպառողական փաթեթներում փաթեթավորված և պիտակավորված դեղաբուսական հումքի), մաշկի, լորձաթաղանթի, մազերի, եղունգների համար նախատեսված հիվանդությունների հարուցիչներին, ինչպես նաև դրանց փոխանցող միջատներին, մակարոյծներին ոչնչացնող հակասեպտիկների և հակապարազիտային դեղերի գրանցման, վերագրանցման և հավաստագրի ժամկետի երկարաձգման համար իրականացվող փորձաքննության եզրակացության ձևը, փորձաքննություն իրականացնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած միջազգային մասնագիտական կազմակերպության փաստաթղթի պահանջներին համապատասխան:

ՀՀ կառավարության 28.02.2019 թվականի թիվ 162-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման, ինչպես նաև գրանցումը, վերագրանցումը, հավաստագրի ժամկետի երկարաձգումը մերժելու, գրանցումը կասեցնելու և ուժը կորցրած ճանաչելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի (այսուհետ՝ Հավելված 1), իսկ 2-րդ ենթակետով հաստատվել է դեղի պետական գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման նպատակով իրականացվող փորձաքննության, ինչպես նաև հետգրանցումային փոփոխությունների ներկայացման և փորձաքննության կարգը՝ համաձայն N 2 հավելվածի (այսուհետ՝ Հավելված 2):

Հավելված 1-ով հաստատված կարգի 1-ին կետի համաձայն՝ նույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում դեղի պետական գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման, ինչպես նաև դեղի գրանցումը, վերագրանցումը և հավաստագրի ժամկետի երկարաձգումը մերժելու, գրանցումը կասեցնելու և ուժը կորցրած ճանաչելու հետ կապված հարաբերությունները: (...):

Նույն կարգի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 23-րդ մասով և 21-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի:

Հավելված 2-ով հաստատված կարգի 1-ին կետի համաձայն՝ տվյալ կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման նպատակով իրականացվող փորձաքննության, գրանցումը, վերագրանցումը, հավաստագրի ժամկետի երկարաձգումն ուժը կորցրած ճանաչելու, դեղի գրանցումը կասեցնելու նպատակով իրականացվող փորձաքննության, ինչպես նաև հետգրանցումային փոփոխությունների համար փորձաքննության իրականացման հետ կապված իրավահարաբերությունները:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է իրացնել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված կամ գրանցումը կասեցված կամ շրջանառությունը դադարեցված (հետ կանչված), Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտմամբ ներմուծված դեղերը, կեղծ դեղերը, դեղանյութերը, դեղաբուսական հումքը, հետազոտվող դեղագործական արտադրանքը (...):

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը սահմանել է դեղերի գրանցման պարտադիր պայման դեղերի անվանման, բաղադրակազմի, դեղաչափի, դեղաձևի, թողարկման ձևի, նոր ցուցումի, արտադրողի /ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող/, գրանցման հավաստագրի իրավատիրոջ համար այն դեպքում, երբ այդ դեղերը նոր միայն պետք է Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ դրվեն:

Նշված իրավանորմերի համատեղ ուսումնասիրությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, ներմուծվող, պահպանվող, բաշխվող, իրացվող և կիրառվող յուրաքանչյուր դեղ պետք է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից իրականացված փորձաքննության եզրակացության հիման վրա պետական գրանցում ստացած լինի:

Այսպես, ՀՀ առողջապահության նախարարի 17.02.2017 թվականի թիվ 06-Ն հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության դեղերի գրանցամատյանը (ռեեստրը), որտեղ գրառվում են գրանցվող դեղը նույնականացնելու հնարավորություն ընձեռող այնպիսի վավերապայմաններ, ինչպիսիք են դեղի առևտրային անվանումը, միջազգային համընդհանուր կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումը, դեղաձևը, դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը), արտադրողը, երկիրը, դեղերի ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը, գրանցման հավաստագրի համարը, գրանցման



Ժամկետը, բաց թողնման կարգը, գրանցման հավաստագրի իրավատերը: Նման իրավակարգավորումը վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունում դեղի գրանցումը ենթադրում է դրա մասին Հայաստանի Հանրապետության դեղերի գրանցամատյանում (ռեեստր) թվարկված բոլոր ցուցանիշների վերաբերյալ տվյալների ամրագրում, իսկ գրանցված դեղ ներմուծելը, պահպանելը կամ իրացնելը՝ դեղերի ռեեստրում ամրագրված բոլոր ցուցանիշներին համապատասխանող արդեն իսկ գրանցված դեղերի ներմուծում, պահպանում կամ իրացում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վերը նշված իրավական նորմերին, արձանագրել է, որ դեղը դեղաբանական և (կամ) ինունաբանական և (կամ) նյութափոխանակային ակտիվությամբ օժտված մարդկային և (կամ) կենդանական և (կամ) բուսական և (կամ) քիմիական և (կամ) կենսատեխնոլոգիական ծագման միջոց է՝ համապատասխան դեղաչափով և դեղաձևով, անհրաժեշտ փաթեթավորմամբ և մակնշմամբ, որը նախատեսված է կիրառել մարդկանց և կենդանիների հիվանդությունները բուժելու, կանխարգելելու և (կամ) օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաները փոփոխելու, վերականգնելու, կարգավորելու համար կամ ներմուծվում է մարդու և կենդանու օրգանիզմ հիվանդությունը ախտորոշելու նպատակով: Դեղը բնութագրող հիմնական հատկանիշներն են՝ արդյունավետությունը՝ դեղի սպասվելիք դրական ազդեցության դրսևորման աստիճանի բնութագիրը, անվտանգությունը՝ առողջությանը վնասելու հնարավոր անթույլատրելի ռիսկի բացակայությունը, և որակը՝ համապատասխանությունը դեղագրքային պահանջներին և/կամ որակի հատկորոշիչներին (սպեցիֆիկացիաներին): Ընդ որում, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ միայն նշված հատկանիշների միաժամանակյա առկայության պայմաններում դեղը կարող է ծառայել իր նպատակին և պատշաճորեն կիրառվել գործնականում:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի մատչելիության ապահովման կարևորությունը և առանձնահատուկ դերը բնակչության համար՝ օրենսդիրը կարգավորել է Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառությունը, որն ընդգրկում է դրանց արտադրությունը, պատրաստումը, կշռաչափումը, փաթեթավորումը, գրանցումը, որակի հսկողությունը և այլ գործողություններ՝ դեղերի ստացման կամ ոչնչացման նպատակով, դեղերի ձեռքբերումը, պահպանումը, պահեստավորումը, բաշխումը, բացթողնումը, վաճառքը, արտահանումը, ներմուծումը, դրանց մասին տեղեկատվությունը, գովազդը, ինչպես նաև սահմանել է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների լիազորություններն այդ ոլորտում: Մինևույն ժամանակ, ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ վերոնշյալը բխում է հանրապետության առողջապահության այնպիսի սկզբունքներից, ինչպիսին են՝ պետական պատասխանատվությունը բնակչության առողջության համար և անվտանգ, արդյունավետ և որակյալ առողջապահական համակարգի ապահովումը:

Վերոգրյալի համատեքստում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում թույլատրվում է արտադրել, ներմուծել, պահպանել, բաշխել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում: Դեղերի պետական գրանցումը մի քանի փուլերից բաղկացած վարչական գործընթաց է, որը հնարավորություն է տալիս խուսափելու և բնակչությանը զերծ պահելու անորակ, անարդյունավետ կամ քիչ արդյունավետ, վտանգավոր և կեղծ դեղերի կիրառումից: Այլ կերպ ասած՝ դեղերի գրանցումը արտադրանքի արդյունավետության, անվտանգության և որակի ապահովման համակարգի հիմքն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ դեղերի Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու փաստը կարող է հաստատվել միայն ներմուծվող դեղերի և Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) պետական գրանցում ունեցող դեղերի՝ ներառյալ վերջինիս բոլոր վավերապայմանների համապատասխանության պայմաններում: Հետևաբար՝ դեղի Հայաստանի Հանրապետությունում գրանցում ունենալու փաստը պարզելու համար անհրաժեշտ է ստուգել Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) տվյալ դեղի մասին նշված տեղեկությունները:

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ դեղերի Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելը փաստելու համար անհրաժեշտ է դեղի բոլոր վավերապայմանների համապատասխանությունը դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստրում) գրանցված դեղի վավերապայմաններին, (...) (տե՛ս, «Մյրանդարյու Մեդիքլ» ՄՊԸ-ի տնօրեն Սյրյուպա Հայրապետյանն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնի թիվ ՎԳ/1096/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.07.2021 թվականի որոշումը):

Հիմք ընդունելով իրավահարաբերության ծագման պահին գործող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի իրավակարգավորումները՝ ակնհայտ է դառնում, որ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է ներմուծել, արտադրել, պահպանել, իրացնել, բաշխել և կիրառել միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղեր, ինչպիսի պահանջի խախտումը հիմք է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ գրանցում չի պահանջվում:

Վերոնշյալից բխում է, որ դեղ և (կամ) դեղանյութ պահպանողը կամ իրացնողը ցանկացած պարագայում պարտավոր է պարզել, թե արդյոք համապատասխան դեղը և (կամ) դեղանյութը գրանցված է, թե՛ ոչ, և արդյո՞ք իր ցուցանիշներով համապատասխանում է դեղերի ռեեստրում ամրագրված ցուցանիշներին:

Ամփոփելով ողջ վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դեղերի՝ գրանցված լինելու պահանջի պահպանման նկատմամբ վարչական մարմինները և դատարանները պետք է ցուցաբերեն առավել խիստ և հետևողական մոտեցում, քանի որ դեղերի գրանցված լինելու վերաբերյալ իրավակարգավորումների օրենսդրական ամրագրումը բխում է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված կյանքի և առողջության պահպանության իրավունքի ապահովման պետության պոզիտիվ պարտականությունից, քանզի դեղերի գրանցման վերաբերյալ իրավակարգավորումների պահպանությունն ուղղակիորեն կարող է ազդել մարդու կյանքի և առողջության վրա:

Հետևաբար, յուրաքանչյուր դեպքում ՀՀ օրենսդրության իմաստով դեղը համարվում է գրանցված, եթե արդեն իսկ տվյալ պահին գործող Հայաստանի Հանրապետության դեղերի գրանցամատյանում առկա է գրանցված նույն դեղի նույն առևտրային անվանումը, նույն միջազգային համընդհանուր կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումը, նույն դեղաձևը, նույն դեղաչափը և նույն թողարկման ձևը (փաթեթավորումը), նույն արտադրողը, նույն երկիրը, նույն դեղերի ծածկագիրը և/կամ տեսակային պատկանելությունը, գրանցման հավաստագրի նույն համարը, գրանցման նույն ժամկետը, բաց թողնման նույն կարգը, գրանցման հավաստագրի նույն իրավատերը, որը փորձաքննության եզրակացության համաձայն նույնականանում է իրացվող դեղի հետ: Իսկ նշված

նույնականացման պայմաններից որևէ մեկի կամ դրա որևէ մասի տարբերությունը հանգեցնում է նրան, որ տվյալ դեղը գրանցված չէ:

***Վճարելի դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Տեսչական մարմնի 03.05.2019 թվականի ««ԼԻՎԱՑԱՐՄ» ՍՊ ընկերության տնօրեն Գագիկ Բոյախյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 404 որոշման համաձայն՝ որոշվել է Ընկերության տնօրեն Գագիկ Բոյախյանին՝ որպես խախտում թույլ տված անձի, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները խախտելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով՝ Հայաստանի Հանրապետությունում չգրանցված և իրացված Բիսեպտոլ 240մգ/5մլ սերիա՝ 020518, պիտանելիության ժամկետ՝ 05.2021 թվական, դրոշմապիտակ՝ Ե0770933977 (1 տուփ) դեղի համար ենթարկել վարչական տույժի՝ մինչև 10 փաթեթի համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ վարչական տուգանքի: 23.04.2019 թվականին վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 398 արձանագրության համաձայն՝ Ընկերությանը պատկանող դեղատանը 22.03.2019 թվականին իրականացված զննման ժամանակ հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցման և օրինական ներմուծման լիսենզիա տեսանկյունից կասկած հարուցող 6 անուն դեղ:

**Դատարանը** բավարարել է Ընկերության տնօրեն Գագիկ Բոյախյանի հայցը՝ պատճառաբանելով, որ «(...) Հաշվի առելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ Ընկերության եզրակացությունը չէր կարող հիմք հանդիսանալ առ այն, որ հայտնաբերված դեղը ՀՀ-ում գրանցված չէ: Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» 20.09.2000 թվականի թիվ 581 որոշմամբ (ուժը կորցրել է Հայաստանի Հանրապետության կառավարության 28.03.2019թ. թիվ 202-Ն որոշմամբ) հաստատված Կարգի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ կարգը նպատակ ունի կանխելու չգրանցված, ժամկետանց, կեղծ և անորակ դեղերի ու դեղանյութերի մուտքը Հայաստանի Հանրապետություն: Նշված կարգի 5-րդ, 9-րդ, 14-րդ, 18-րդ, 24-րդ, 28-34-րդ կետերի իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում՝ Դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետություն դեղերը և (կամ) դեղանյութերը կարող են ներմուծվել ու արտահանվել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման կամ արտահանման հավաստագրի հիման վրա, որոնք տրամադրվելու ժամանակ, ի թիվս այլնի, ստուգվում է (այդ թվում՝ փորձաքննությունների միջոցով) նաև դեղերի և դեղանյութերի՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման առկայությունը: Փորձաքննությունների բացասական արդյունքի դեպքում տվյալ դեղի կամ դեղանյութի Հայաստանի Հանրապետություն ներմուծումը մերժվում է: Ապրանքախմբի մնացած դեղերի և (կամ) դեղանյութերի համար, որոնք ունեցել են փորձաքննության դրական արդյունք, տրվում է ներմուծման հավաստագիր»:

**Վերաքննիչ դատարանը**, մերժելով Տեսչական մարմնի ներկայացրած վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի հետևություններն այն պատճառաբանությամբ, որ «(...) Վերոգրյալ իրավական վերլուծությունները կիրառելով սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի

Հանրապետությունում դեղերի շրջանառության (այդ թվում՝ դեղերի ներմուծման) հետ կապված հարաբերությունները կարգավորող «Դեղերի մասին» ՀՀ օրենքով հստակ ամրագրվել է, որ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է ներմուծել այն դեղերը, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, իսկ դեղեր ներմուծել թույլատրվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարում Դատարանի եզրահանգումն առ այն, որ սույն գործով Հայցվորի՝ որպես դեղատան միջոցով դեղերի առևտրի գործունեություն իրականացնող սուբյեկտ մոտ, կարող էր առկա լինել ողջամիտ համոզմունք առ այն, որ ինքը Հայաստանի Հանրապետության տարածքում 22.03.2019թ. ապրանքների մատակարարման թիվ Ա 0456829556 հարկային հաշվով ձեռք է բերել և իրացման նպատակով դեղատանը պահպանել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղ: Հայցվորին վերագրվող արարքի կատարման մեջ բացակայում է վերջինիս մեղավորությունը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ դեղի վրա համապատասխան դրոշմապիտակների առկայությունը փաստում է, որ այդ դեղը Հայաստանի Հանրապետություն է ներմուծվել օրինական ճանապարհով, այսինքն՝ առկա են եղել դրա համապատասխանության ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, քանի որ դրանց բացակայությունը կհանգեցնեք այդ դեղի ներմուծումն արգելելուն, այսինքն՝ անձն օբյեկտիվորեն զրկված է եղել իր գործողությունների հակաիրավական բնույթը գիտակցելու հնարավորությունից, իսկ մեղքի բացակայությունը հանգեցնում է զանցակազմի բացակայության»:

*Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով արորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանք անսխիմ են հետևյալ պարճատարանությամբ.*

Տվյալ դեպքում, հայցվորը չի վիճարկել գրանցված և փորձաքննություն անցած դեղերի անվան և արտադրողի տարբերությունների առկայությունը, այլ վիճարկել է այն հարցը՝ արդյո՞ք իրավաչափ է դեղը համարել գրանցամատյանում չգրանցված, այն պարագայում, երբ ներմուծման ժամանակ տրվել է համապատասխան հավաստագիրը:

Այսպիսով, և՛ Դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը հայտնել են միևնույն դիրքորոշումն առ այն, որ տվյալ դեպքում հայցը ենթակա է բավարարման:

Վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո Վճռաբեկ դատարանը, սույն գործի շրջանակում ձեռնամուխ լինելով գնահատելու վիճարկվող որոշման իրավաչափությունը, ստուգելով դրա համապատասխանությունն օրենսդրության պահանջներին, արձանագրում է, որ ինչպես վերը նշվեց, վարչական մարմինները և դատարանները պետք է ցուցաբերեն առավել խիստ և հետևողական մոտեցում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեղերի գրանցման վերաբերյալ իրավակարգավորումների պահպանությունն ուղղակիորեն կարող է ազդել մարդու կյանքի և առողջության վրա: Հետևաբար անվանման և արտադրողի, ինչպես նաև դեղերը նույնականացնելու ցանկացած պայմանի տարբերություն հիմք է պնդելու, որ տվյալ դեղը գրանցված չէ:

Այսպես, վարչական մարմնի կողմից Ընկերությանը պատկանող՝ «Բիսեպտոլ 240մգ/5 մլ, սերիա՝ 020518» դեղը նույնական չէ ՀՀ առողջապահության նախարարի իրավահարաբերության ծագման պահին գործող Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանում գրանցված դեղի հետ՝ հաշվի առնելով անվանման և արտադրողի տարբերությունները:

Մասնավորապես, հայտնաբերված դեղը՝ Բիսեպտոլ դեղակախույթ ներքին ընդունման 240մգ/5մլ, 80մլ դեղը, սերիա՝ 020518, պիտանիության ժամկետ՝ 05.2021 թվական, արտադրող՝ «ԱԵՆ ԹԲԵՅԴ», պետական գրանցամատյանում գրանցված է «Բիսեպտոլ **Մեդանա**» անվանումով, արտադրող՝ **Մեդանա Ֆարմա**: Նշվածից հետևում է, որ պետական գրանցամատյանում նշված դեղի վերաբերյալ տվյալները նույնական չեն, մի դեպքում առկա է անվանման անհամապատասխանություն, մեկ այլ դեպքում՝ արտադրողի:

Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ցանկացած պարագայում իրացնողը պարտավոր է ստուգել դեղի գրանցված լինելու հանգամանքը, իսկ գրանցված և փորձաքննություն անցած դեղի անվանման և արտադրողի ցանկացած տարբերությունը հիմք է պնդելու, որ տվյալ դեղը գրանցված չէ՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրական կարգավորումներն առ այն, որ գրանցվող դեղը նույնականացնելու հնարավորություն ընձեռող վավերապայմաններից են նաև դեղի անվանումը և արտադրողը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և փոփոխելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունները հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր է, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը,

ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ եթե վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վերաքննիչ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը վերաքննիչ վարչական դատարանի կողմից մերժվում է, ապա վերջինս չպետք է կրի պատասխանող վարչական մարմնի կողմից վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի հատուցման պարտականություն (տե՛ս, *Գագիկ Ավետիսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/1390/05/17 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով, որ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունած որոշման դեմ բողոքներով հայցադիմումը դատարան ներկայացնելու պահին գործող օրենքի ուժով ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում, Վճարեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև այն դեպքում, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վճարեկ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը ստորադաս դատարանի դատական ակտի բեկանման և փոփոխման արդյունքում մերժվում է Վճարեկ դատարանի կողմից: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից հայցադիմումը դատարան ներկայացնելու պահին գործող օրենքի ուժով ազատված հայցվորի վրա չի կարող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վճարեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ այդ վճարեկ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվորի փոխվելու հանգամանքից:

Հաշվի առնելով, որ «Լիվաֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Բոյախյանը, հայցադիմումը դատարան ներկայացնելու պահին գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է սույն գործով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի վճարման պարտավորությունից, նրա կողմից ներկայացված հայցը ենթակա է մերժման, իսկ սույն գործով վերաքննիչ և վճարեկ բողոքներ ներկայացնելու համար Տեսչական մարմնի կողմից վճարված օրենքով սահմանված չափով պետական տուրքի փոխհատուցման պարտականությունը չի կարող դրվել «Լիվաֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Բոյախյանի վրա, Վճարեկ դատարանն արձանագրում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Մինևույն ժամանակ Վճարեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ սպացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով և 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 17.03.2021 թվականի որոշումը և այն փոփոխել. «Լիվաֆարմ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Բոյախչյանի հայցն ընդդեմ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ 03.05.2019 թվականի վարչական տույժ նշանակելու մասին թիվ 404 որոշումը վերացնելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/12657/05/18  
2023թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/12657/05/18

Նախագահող դատավոր՝

Կ. Բաղդասարյան

Դատավորներ՝

Ա. Սարգսյան

Կ. Ավետիսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- նախագահող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- զեկուցող* Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
- Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի ապրիլի 13-ին

գրավոր ընթացակարգով քննելով Դավիթ Խաչատրյանի և Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.10.2021 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Մանվել Մկրտչյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձինք՝ Դավիթ Խաչատրյան և Կադաստրի կոմիտե, մասնակիորեն՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Անդրանիկի թիվ 123/8 հասցեում գտնվող անշարժ գույքի մասով, Երևանի քաղաքապետի 05.04.2013 թվականի թիվ 1467-Ա որոշումն անվավեր ճանաչելու, որպես հետևանք՝ նույն գույքի մասով 2013 թվականին կայացած աճուրդը, դրա հիման վրա նույն գույքի մասով 17.05.2013 թվականի թիվ 2480-Ա որոշումը, 22.05.2013 թվականի հողամասի առուվաճառքի պայմանագիրը և 23.07.2013 թվականի Դավիթ Խաչատրյանի անվամբ կատարված պետական գրանցումը՝ 01-007-0408-1407 ծածկագիրը կրող հողամասի նկատմամբ անվավեր ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Մանվել Մկրտչյանը պահանջել է մասնակիորեն՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Անդրանիկի 123/8 հասցեում գտնվող անշարժ գույքի մասով, անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 05.04.2013 թվականի թիվ 1467-Ա որոշումը, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել նույն գույքի



մասով 2013 թվականին կայացած աճուրդը, դրա հիման վրա նույն գույքի մասով 17.05.2013 թվականի թիվ 2480-Ա որոշումը, 22.05.2013 թվականի հողամասի առուվաճառքի պայմանագիրը և 23.07.2013 թվականի Դավիթ Խաչատրյանի անվամբ կատարված պետական գրանցումը՝ 01-007-0408-1407 ծածկագիրը կրող հողամասի նկատմամբ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Էդ. Նահապետյան) (այսուհետ՝ Դատարան) 22.12.2020 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 14.10.2021 թվականի որոշմամբ Դատարանի 22.12.2020 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է. հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել Դավիթ Խաչատրյանը և Երևանի քաղաքապետարանը (ներկայացուցիչ Անահիտ Կճոյան):

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

## **2. Դավիթ Խաչատրյանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը, 65-րդ հոդվածը, 66-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 67-րդ հոդվածի 1-ին մասը, 72-րդ հոդվածի 2-րդ մասի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասը, 27-րդ հոդվածի 1-ին մասը, 29-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 1-ին կետը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 95-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, 34-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտեղ է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա Բ-2 թաղամասի թիվ 139/1 հասցեի անշարժ գույքի նկատմամբ Մանվել Մկրտչյանի սեփականության իրավունքը գրանցվել է միայն 2012 թվականին և վերագրանցվել է 23.03.2018 թվականին, որպիսի պայմաններում բացառվում է այդ գույքի հարևանությամբ գտնվող Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի թիվ 123/8 հասցեի հողամասը 10 տարի անընդմեջ օգտագործելու և տիրապետելու հանգամանքը: Բացի այդ, որևէ կերպ չի հիմնավորվել նաև վեճի առարկա հողամասը բարեխիղճ տիրապետելու հանգամանքը, այսինքն՝ առանց որևէ հիմքի Մանվել Մկրտչյանի մոտ չէր կարող ձևավորվել համոզմունք, որ նա վեճի առարկա հողամասից օգտվում է օրինական հիմքերով:

Հողամասի ձեռքբերման նախապատվության իրավունքի ծագման բարեխիղճության պայմանին Վերաքննիչ դատարանն ընդհանրապես չի անդրադարձել: Բացի այդ Վերաքննիչ դատարանը նաև հաշվի չի առել այն հանգամանքը, որ Մանվել Մկրտչյանի անձնագրային տվյալների համաձայն՝ վերջինս ծնվել է 06.12.1990 թվականին, հետևաբար՝ «90-ական թվականներին» դեռևս ծնված չլինելով կամ լինելով նորածին, չէր կարող որևէ գործողություն կատարել, առավել ևս՝ հողամաս օգտագործել:

Սույն գործում առկա ապացույցներով հիմնավորվել է, որ Երևանի քաղաքապետի կողմից վարչական շրջանների ղեկավարներին հանձնարարվել է սահմանել հսկողություն՝ օտարման ենթակա հողամասերում ապօրինի հողագավթումը և ինքնակամ կառուցապատումը բացառելու նպատակով: Նշված հանձնարարականի կատարման շրջանակներում Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի թիվ 123/8 հասցեում ապօրինի հողագավթման և ինքնակամ կառուցապատման որևէ դեպք չի հայտնաբերվել, վարչական վարույթ չի հարուցվել, որևէ անձ վարչական պատասխանատվության չի ենթարկվել, ինչի պայմաններում անհիմն է Վերաքննիչ դատարանի հետևությունն այն մասին, որ վարչական մարմինը միջոցներ չի ձեռնարկել առկա գործիքակազմով այլ անձանց իրավունքների, այդ թվում՝ լեգիտիմ ակնկալիքների հարցը պարզելու ուղղությամբ:

Վարչական վարույթի ընթացքում տրված հանձնարարականի կատարմանն ուղղված գործողություններով վեճի առարկա հողամասում ապօրինի հողագավթման և ինքնակամ կառուցապատման դեպքեր, ինչպես նաև հողամասի ձեռքբերման նախապատվության իրավունքի առկայության վերաբերյալ տեղեկություններ ձեռք չեն բերվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.10.2021 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 22.12.2020 թվականի վճիռն:

### **2.1 Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ, 67-րդ և 72-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, 25-րդ հոդվածի 1-ին մասը, 26-րդ հոդվածի 2-րդ մասը, 27-րդ հոդվածի 1-ին մասը, 29-րդ հոդվածը, 124-րդ հոդվածը, ՀՀ Սահմանադրության 6-րդ և 184-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտարբեր է հետևյալ փաստարկներով.*

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված աճուրդի արդյունքում օտարված հողամասի նկատմամբ հայցվորը չի ունեցել որևէ գույքային իրավունք, այդ թվում՝ չի ունեցել հողամասի ձեռքբերման նախապատվության իրավունք, որպիսին Վերաքննիչ դատարանը, ի խախտումն ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի դրույթների, համարել է հայցվորի՝ պաշտպանության ենթակա իրավունք:

Վերաքննիչ դատարանը չի պարզել, որ խնդրո առարկա հողամասի նկատմամբ հայցվորի ձեռքբերման նախապատվության իրավունքը ճանաչող վարչական կամ դատական ակտ առկա չէ, ինչը հիմնավորում է այն հանգամանքը, որ վերջինս խնդրո առարկա հողամասի նկատմամբ որևէ օրինական ակնկալիք կամ իրավունք ձեռք բերելու արդարացված շահ չի ունեցել, ինչը հիմնավորում է նաև այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետի վիճարկվող որոշումներով հայցվորի որևէ իրավունք չի խախտվել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի Անդրանիկի թիվ 123/8 հասցեում գտնվող հողամասը մինչ աճուրդային կարգով օտարելը հանդիսացել է համայնքային սեփականություն, այդ հողամասը որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի անվամբ գրանցված որևէ տեսակի իրավունքով ծանրաբեռնված չի եղել, ինչից հետևում է, որ նշված հողամասի աճուրդային կարգով վաճառքին ուղղված գործընթացն ու վարչարարությունը որևէ կերպ չի առնչվել հայցվորի՝ օրենքով նախատեսված և օրենքով պաշտպանության ենթակա իրավունքին:

Այն պայմաններում, երբ հայցվորը երբևէ չի դիմել Երևանի քաղաքապետարան Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի թիվ 123/8 հասցեում գտնվող հողամասն իր կողմից օգտագործվելու հիմքով իր ձեռքբերման նախապատվության իրավունքը ճանաչելու, իր անվամբ սեփականաշնորհելու կամ նշված հողամասի նկատմամբ իր որևէ այլ իրավունքը ճանաչելու խնդրանքով, իսկ հողամասն այլ անձի կողմից օգտագործվելու մասին որևէ այլ ապացույց, տեղեկատվություն կամ ուսումնասիրության արդյունք Երևանի քաղաքապետարանի տիրապետման ներքո չգտնվելու պայմաններում Երևանի քաղաքապետարանը ելել է այն հավաստի կանխավարկածից, որ հողամասն ազատ է երրորդ անձանց իրավունքներից, առկա չէ հողամասի վերաբերյալ վեճ, այն լիարժեք կերպով գտնվում է համայնքի տնօրինման ներքո, հետևաբար կազմակերպելով աճուրդային վաճառքը՝ թույլ չի տվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ Վերաքննիչ դատարանի կողմից մատնանշված դրույթների խախտում: Ավելին՝ հայցվորը ևս իրավունք ուներ դիմել և մասնակցել հողամասի աճուրդին, սակայն նման հայտ վերջինս չի ներկայացրել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 14.10.2021 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 22.12.2020 թվականի վճռին կամ գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

1) Երևանի քաղաքապետի 05.04.2013 թվականի թիվ 1467-Ա որոշման համաձայն՝ որոշվել է, Հայաստանի Հանրապետության հողային և քաղաքացիական օրենսգրքերին, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286, Երևան քաղաքի ավագանու 15.12.2012 թվականի թիվ 580-Ն և Երևանի քաղաքապետի 12.04.2010 թվականի թիվ 540-Ն որոշումների համապատասխան, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովի 05.04.2013 թվականի նիստի արձանագրությունները.

1. Աճուրդով օտարման նպատակով առանձնացնել հողամասեր՝ համաձայն կից հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գների:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված աճուրդով օտարման ենթակա

հողամասերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը և սահմանված կարգով ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:

3. Աճուրդի օր նշանակել հրապարակային ծանուցման օրվանից հետո 30-րդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

4. Հանձնարարել վարչական շրջանների ղեկավարներին՝ սահմանել հսկողություն կից հավելվածով նշված հողամասում ապօրինի հողագավթում և ինքնակամ կառուցապատում բացառելու նպատակով: Նույն որոշմանը կից հավելվածի համաձայն՝ աճուրդի ներկայացվող հողամասերի շարքում է ընդգրկվել նաև Երևան քաղաքի Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի թիվ 123/8 հասցեում գտնվող 108,85 քմ մակերեսով հողամասը՝ 1.523.900 ՀՀ դրամ մեկնարկային գնով (**հատոր 1-ին, գ.թ. 21**):

2) Երևանի քաղաքապետի 05.04.2013 թվականի թիվ 1467-Ա որոշման հիմքով աճուրդը տեղի է ունեցել 07.05.2013 թվականին, որի արդյունքները հաստատվել են Երևանի քաղաքապետի 17.05.2013 թվականի թիվ 2480-Ա որոշմամբ: Երևան քաղաքի Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի թիվ 123/8 հասցեում գտնվող 108,85 քմ մակերեսով հողամասի աճուրդային վաճառքի հաղթող է ճանաչվել Դավիթ Խաչատրյանը: Նշված որոշման հիմքով Երևան համայնքի և Դավիթ Խաչատրյանի միջև 22.05.2013 թվականին կնքվել է հողամասի առուվաճառքի պայմանագիր, և առուվաճառքից բխող Դավիթ Խաչատրյանի սեփականության իրավունքը ստացել է պետական գրանցում (**հատոր 1-ին, գ.թ. 9, 13, 15-17**):

#### **4. Վճարել նատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճարել նատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել նատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ սույն վարչական գործով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ նատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել նատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցադրմանը, թե արդյոք տեղական ինքնակառավարման մարմնի որոշմամբ կամ դատական կարգով չճանաչված ձեռքբերման նախապայրվության իրավունքը կարող է խոչընդոտել պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի աճուրդի միջոցով օրարմանը:*

ՀՀ հողային օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները, ինչպես նաև հողամասերի նկատմամբ օգտագործման

իրավունքների սահմանափակումները ծագում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներից և նրանց հետ կնքած պայմանագրերից, ձեռքբերման վաղեմության ուժով:

ՀՀ հողային օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է օրենքներով և պայմանագրերով գնման նախապատվության իրավունք ունեցող անձանց:

ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքը, բացառությամբ նույն օրենսգրքի 65-րդ և 66-րդ հոդվածներով նախատեսված դեպքերի, կատարվում է աճուրդով:

ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտվում են պետության կամ համայնքի հողերից, ունեն այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե արգելված չէ սեփականության իրավունքով տվյալ հողամասերը ձեռք բերելը կամ, եթե դրանք վաճառվում կամ անհատույց փոխանցվում են միևնույն նպատակային նշանակության համար և, եթե հողամասերը համապատասխանում են նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Ձեռքբերման վաղեմության իրավունքը տրամադրվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով կամ դատական կարգով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վերոգրյալ նորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարվելու հիմքերի առկայության պայմաններում, որպիսի հիմքերից է նաև համապատասխան անձի մոտ օրենքներով և պայմանագրերով գնման նախապատվության իրավունքի առկայությունը, բացառվում է նույն հողամասերի աճուրդով վաճառելու հնարավորությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշումներով անդրադառնալով ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի վերլուծությանը, նախ արձանագրել է, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ ձեռքբերման վաղեմության իրավունքի ծագման վերաբերյալ իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ հողային օրենսգրքով, իսկ այլ անձանց պատկանող հողամասերի նկատմամբ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (*յրենս, Միմոն Սարգսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ 3-1835(Ա) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.12.2007 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ նշել է, որ սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք ձեռք բերելու համար անձը պետք է հիմնավորի ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրավունքների իրավաբանական ձևակերպման պետության կամ համայնքի հողերը օգտագործելու փաստը (*յրենս, Արմեն Միմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/3691/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2010 թվականի որոշումը*):

ՀՀ վճռարեկ դատարանը նշել է նաև, որ սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունքը ենթադրում է, որ անձը, ով օրենքով սահմանված կարգով ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ, բացահայտ տիրապետում և օգտագործում է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը, այդ հողամասի օտարման դեպքում ունի հողամասը սեփականության իրավունքով ձեռք բերելու առաջնայնություն մյուս հավանական ձեռքբերողների համեմատ: Այսինքն՝ օրենսդրի կողմից ամրագրվել է այն մոտեցումը, որ պետական կամ համայնքային հողամասն օտարելիս հողամասի ձեռքբերման նախապատվությունը պետք է տրվի այն անձին, ով ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իր իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտվում է այդ հողամասից: Ընդ որում, օրենսդրորեն սահմանվել է սեփականության իրավունքը ձեռք բերելու նախապատվության իրավունքի տրամադրման երկու եղանակ՝ արտադատական կարգով (պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով) և դատական կարգով:

Այսպիսով, ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ պետության կամ համայնքի հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունքի համար անհրաժեշտ նախապայմաններն են՝

1. հողը պետք է պատկանի պետությանը կամ համայնքին,
2. քաղաքացիները և իրավաբանական անձինք պետության կամ համայնքի հողերից պետք է օգտվեն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման,
3. պետությանը կամ համայնքին պատկանող հողի օգտագործումը պետք է լինի բարեխիղճ: Օգտագործողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ նա գույքից օգտվում է օրինական հիմքերով,
4. օգտագործումը պետք է լինի տասը տարի և անընդմեջ: Այսինքն՝ 10 տարվա ընթացքում հողի օգտագործումը չպետք է ընդհատվի,
5. օգտագործումը պետք է լինի բացահայտ, այսինքն՝ հողի օգտագործումը չպետք է լինի երրորդ անձանցից գաղտնի եղանակով,
6. հողամասը պետք է համապատասխանի ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին,
7. հողամասը չպետք է գտնվի օրենքով սահմանված սահմանափակումների ցանկում կամ պետք է վաճառվի կամ անհատույց փոխանցվի միևնույն նպատակային նշանակությամբ (*լրեն, Վրեն Եզորյանն ընդդեմ Արխտղում և Խաչիկ Ավագյանների, երրորդ անձինք Եղվարդի քաղաքապետարան, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, Վարդան Գևորգյան՝ թիվ ԿԴՅ/0042/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռարեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

Նշված պայմանների առկայության դեպքում քաղաքացիները կամ իրավաբանական անձինք կարող են ունենալ ակնկալիք՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու հարցում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (*լրեն, մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով, Trgo v. Croatia, 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է. «(...) Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասով հստակ արգելվում է հրապարակային աճուրդով օտարել պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերն այն դեպքերում, երբ այդ հողամասերը ենթակա են ուղղակի վաճառքի: Միննույն ժամանակ, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսվում է, որ պետության և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը կատարվում է այն անձանց, որոնք այդ հողամասերի նկատմամբ ունեն ձեռքբերման նախապատվության իրավունք: (...) Հայաստանի իրավունքի համաձայն՝ անձը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու նախապատվության իրավունք ձեռք է բերում, երբ պահպանվում են բոլոր օրենսդրական պայմանները, այն դեպքում, երբ իշխանությունները որոշում են կայացնում հողը օտարելու մասին: Այսինքն՝ ներպետական իրավունքի համաձայն՝ այն հողամասը, որի նկատմամբ անձն ունի ձեռքբերման վաղեմության ուժով այն ձեռք բերելու նախապատվության իրավունք, ենթակա է այդ անձին ուղղակի վաճառքի» *(լրեն, Թավրազյանն ընդդեմ Հայաստանի գործով 19.03.2020թ. վճռի 53-րդ և 45-րդ կետեր):*

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում արձանագրել է, որ ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածով ամրագրված սեփականության իրավունքով պետական կամ համայնքային հողամասը ձեռք բերելու նախապատվության իրավունքի ճանաչումը կոչված է բացառապես ապահովելու հողամասն ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իր իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտագործող անձի առաջնահերթությունը մյուս հավանական ձեռքբերողների նկատմամբ հողամասը սեփականատիրոջ կողմից օտարվելու դեպքում: *(լրեն, Շուշանիկ Գեղամյանն ընդդեմ Երևան համայնքի թիվ ԵԳ/9457/02/19 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.10.2021 թվականի որոշումը):*

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ձեռքբերման վաղեմության իրավունքը պետության կամ համայնքի հողերից օգտվող անձանց նախապատվության իրավունքն է՝ իրավաբանորեն ձևակերպել այդ հողամասերի նկատմամբ իրենց սեփականության իրավունքը՝ հողամասերը նույն պայմաններով այլ անձանց տրամադրելու հնարավորության ծագման դեպքում:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդրությամբ նախատեսվել է ձեռքբերման վաղեմության իրավունքի տրամադրման երկու եղանակ. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով կամ դատական կարգով: Այսինքն՝ օրենսդիրը նախատեսել է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ձեռքբերման վաղեմության իրավունքով տրամադրման ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագմանը նախորդում է այդ հողամասի նկատմամբ այն օգտագործող անձանց ձեռքբերման վաղեմության իրավունքի՝ դատական կամ արտադատական կարգով տրամադրումը: Ուստի, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետական կամ համայնքային հողամասը ձեռք բերելու նախապատվության իրավունքի՝ վարչական կամ դատական կարգով ճանաչումն այն նախադրյալն է, որից հետո միայն անձը կարող է իրացնել իրեն տրամադրված իրավունքը, ինչի դրսևորում կարող է հանդիսանալ հողամասի՝ ուղղակի վաճառքի եղանակով օտարման դեպքում այլ գնորդների նկատմամբ գնման առաջնահերթություն ունենալը:

### **Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Մանվել Մկրտչյանի կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է մասնակիորեն անվավեր ճանաչել՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Անդրանիկի թիվ 123/8 հասցեում գտնվող անշարժ գույքի մասով Երևանի քաղաքապետի 05.04.2013 թվականի թիվ 1467-Ա որոշումը, և որպես հետևանք անվավեր ճանաչել նաև նույն գույքի մասով 2013 թվականին կայացած աճուրդը, դրա հիման վրա նույն գույքի մասով 17.05.2013 թվականի թիվ 2480-Ա որոշումը, 22.05.2013 թվականի հողամասի առուվաճառքի պայմանագիրը և 23.07.2013 թվականի Դավիթ Խաչատրյանի անվամբ կատարված պետական գրանցումը՝ 01-007-0408-1407 ծածկագիրը կրող հողամասի նկատմամբ:

**Դատարանը** 22.12.2020 թվականի վճռով մերժել է հայցը՝ պատճառաբանելով, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի թիվ 123/8 հասցեում գտնվող հողամասը մինչ Երևանի քաղաքապետի 05.04.2013 թվականի թիվ 1467-Ա որոշումը հանդիսացել է համայնքային սեփականություն, որն է անձի անվամբ, այդ թվում նաև հայցվոր Մանվել Մկրտչյանի, գրանցված սեփականության իրավունք չի եղել: Հետևաբար վիճելի տարածքի վերաբերյալ կայացած աճուրդը չի վերաբերել հայցվորի սեփականության իրավունքին:

Դատարանը նաև արձանագրել է, որ այն փաստական հանգամանքը, որ վիճարկվող Երևանի քաղաքապետի 05.04.2013 թվականի թիվ 1467-Ա որոշմամբ համայնքային սեփականություն հանդիսացող Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի թիվ 123/8 հասցեում գտնվող հողամասն աճուրդով օտարելու վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 06.04.2013 թվականի թիվ 63/5633/ համարում, որից բխում է, որ վերջինս հասանելի է եղել հանրությանը, ինչպես նաև սույն գործով կողմերին, հակադարձվում է հայցվորի այն պնդմանը, որ ավելի քան 10 տարի բացահայտ և անընդմեջ տիրապետել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի թիվ 123/8 հասցեում գտնվող հողամասը և այդ հողամասի նկատմամբ ուներ ձեռքբերման նախապատվության իրավունք: Միաժամանակ նշվել է, որ այն հանգամանքը, որ Կադաստրի կոմիտեի կողմից 23.07.2013 թվականին վիճելի հողամասի նկատմամբ կատարվել է Դավիթ Խաչատրյանի սեփականության իրավունքի պետական գրանցում, փաստում է այն մասին, որ դրա նկատմամբ նախապատվության իրավունք գրանցված չի եղել:

**Վերաքննիչ դատարանը** 14.10.2021 թվականի որոշմամբ Մանվել Մկրտչյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը բավարարել է, Դատարանի 22.12.2020 թվականի վճիռը բեկանել և փոփոխել է՝ հայցը բավարարել՝ պատճառաբանելով, որ ՀՀ հողային օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսված իրավական կարգավիճակ ունեցող հողամասերը ցանկացած կարգով օտարման ներկայացնելիս, վարչական մարմինը, ի թիվս այնի, պարտավոր է սեփական գործիքակազմի սահմաններում պարզելու նշված հողամասերի նկատմամբ այլ անձանց իրավունքների առկայության փաստը՝ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ինչպես նաև այլ անձանց իրավունքներին միջամտությունը կանխելու նկատառումներով, և միայն նշված գործիքակազմի /ցուցմունքներ, բացատրություն վերցնել, տեղանքի գննում և այլն/ պատշաճ իրացման ու սպառման դեպքում՝ հերքելով վերը նշված փաստական հանգամանքը, վարչական մարմնի կողմից իրականացված վարչարարությունը կարող է համարվել իրավաչափ:



Վերաքննիչ դատարանն արձանագրել է նաև, որ գործում առկա որևէ ապացուցողական նշանակություն ունեցող տվյալով, ապացույցներով չի հերքվում այն փաստական հանգամանքը, որ Մանվել Մկրտչյանի կողմից ք. Երևան, Մալաթիա-Մեքաստիա, Անդրանիկի թիվ 123/8 հասցեում գտնվող անշարժ գույքը /հողամաս/ դեռևս 90-ական թվականներից օգտագործվել է բարեխիղճ, բացահայտ և անընդմեջ, որպիսի փաստը բավարար է՝ արձանագրելու համար հայցվորի լեզիտիմ ակնկալիքի խախտումը գործով որպես հիմնական պահանջ վիճարկվող վարչական ակտով, քանի որ վարչական մարմինը նախքան գույքն աճուրդային կարգով օտարման ներկայացնելը պարտավոր էր ապահովել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացույցների ստացումը՝ պարզելու համար այլ անձանց /սույն դեպքում՝ հայցվորի/ հնարավոր իրավունքների առկայության փաստը, որպիսի գործառույթը պարտադիր էր՝ հաշվի առնելով օտարվող անշարժ գույքի առերևույթ օգտագործման ենթակա և բարեկարգված լինելը:

Վճռաբեկ դատարանը վերագրյալ պատճառաբանությունների և սույն գործի փաստերի համադրման արդյունքում արձանագրում է, որ սույն գործով վիճարկվում է Երևանի քաղաքապետի թիվ 1467-Ս որոշումը, որով նախատեսվել է աճուրդով օտարման նպատակով առանձնացնել հողամասեր՝ համաձայն որոշմանը կից հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գների, հանձնարարել Երևանի քաղաքապետարանի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հրապարակային սակարկությունների (մրցույթների և աճուրդների) կազմակերպման և անցկացման հանձնաժողովին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված աճուրդով օտարման ենթակա հողամասերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը և սահմանված կարգով ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը, աճուրդի օր նշանակել հրապարակային ծանուցման օրվանից հետո 30-րդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը, հանձնարարել վարչական շրջանների ղեկավարներին՝ սահմանել հսկողություն՝ կից հավելվածով նշված հողամասում ապօրինի հողագավթում և ինքնակամ կառուցապատում բացառելու նպատակով (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վեճի առարկա հողամասը, լինելով համայնքային սեփականություն, կարող էր օտարվել մասնավոր անձանց աճուրդի միջոցով, եթե բացակայում էին աճուրդ իրականացնելու՝ օրենսդրությամբ սահմանված արգելքները: Հետևաբար համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարումն աճուրդի միջոցով կարող էր կատարվել օրենսդրությամբ սահմանված արգելքների, այդ թվում նաև՝ ուղղակի վաճառքի միջոցով այն օտարելու հիմքերի բացակայության հարցը պարզելուց հետո: Իսկ ինչպես արդեն իսկ արձանագրվեց սույն որոշմամբ, հողամասի ուղղակի վաճառքի միջոցով օտարման հիմք է նաև օրենքով կամ պայմանագրով գնման նախապատվության իրավունքի առկայությունը, որը տրվում է դատական կարգով կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների որոշման հիման վրա: Հետևաբար, այն դեպքում, երբ առկա չէ դատական ակտով կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների որոշմամբ ձևակերպված գնման նախապատվության իրավունք, դրա մասին զուտ հայտարարությունը դեռևս որևէ իրավական հետևանք տվյալ անձի նկատմամբ չի առաջացնում:

Վերագրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Երևանի քաղաքապետարանը սույն պարագայում չի ունեցել

որևէ հիմք, որը խոչընդոտ կհանդիսանար հողամասն աճուրդով օտարելու համար, ուստի վեճի առարկա հողամասի նկատմամբ գնման նախապատվության իրավունքի առկայության փաստը հաստատող դատական ակտի կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշման բացակայության պայմաններում այն աճուրդի միջոցով իրացնելն իրավաչափ է:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել նաև, որ սույն գործով հայցվորի կողմից վեճի առարկա գույքի նկատմամբ օրինական ակնկալիքի առկայության փաստը սույն գործի քննության համար որևէ նշանակություն ունենալ չի կարող՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով ներկայացված նյութաիրավական պահանջը հանգում է Երևանի քաղաքապետի որոշման իրավաչափությունը պարզելուն, այլ ոչ թե ձեռքբերման վաղեմության իրավունքով սեփականության իրավունքի տրամադրմանը:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Երևանի քաղաքապետարանը վեճի առարկա գույքն աճուրդի միջոցով իրացնելիս չի ունեցել տվյալ հողամասն աճուրդով վաճառելու՝ օրենսդրությամբ սահմանված որևէ արգելք, այն է՝ տվյալ հողամասի նկատմամբ Մանվել Մկրտչյանի գնման նախապատվության իրավունքը սահմանող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշում կամ դատական ակտ:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքների հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

##### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ դատական ծախսերի հատուցման պարտականությունը մի քանի հայցվորների, բողոք բերողների կամ պատասխանողների միջև բաշխվում է հավասարաչափ, կամ յուրաքանչյուրը կրում է իր գործողություններով առաջացած ծախսերի մասնաբաժինը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ երրորդ անձինք դատական ծախսերի հատուցման պարտականությունը կարող են կրել միայն այն դեպքում, եթե նրանց գործողությունների կամ անգործության (ներառյալ՝ դատավարական) հետևանքով առաջացել են դատական ծախսեր:

Վճռաբեկ դատարանը հաշվի առնելով, որ Երևանի քաղաքապետարանի և Դավիթ Խաչատրյանի վճռաբեկ բողոքները ենթակա են բավարարման, իսկ հայցը ենթակա է մերժման, արձանագրում է, որ Մանվել Մկրտչյանից հօգուտ Երևանի քաղաքապետարանի և Դավիթ Խաչատրյանի, ենթակա են բռնագանձման 20.000-ական դրամներ՝ որպես վճռաբեկ բողոքների համար նախապես վճարված պետական տուրքի գումարներ:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Սույն գործով Մանվել Մկրտչյանի կողմից հայցադիմումի համար վճարվել է 12.000 ՀՀ դրամ, մինչդեռ վճարման էր ենթակա 4.000 ՀՀ դրամ՝ որպես մեկ ոչ դրամական պահանջի գործով հայցադիմումի համար օրենքով սահմանված պետական տուրքի գումար: Ոստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի հիմքով ավել վճարված պետական տուրքը՝ 8.000 ՀՀ դրամը, ենթակա է վերադարձման այն վճարած անձին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ սույն գործով պատասխանող Երևանի քաղաքապետարանը վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարել է 30.000 ՀՀ դրամ, այնինչ պետք է վճարեր 20.000 ՀՀ դրամ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից ավելի վճարված պետական տուրքը՝ 10.000 ՀՀ դրամի չափով, ենթակա է վերադարձման այն վճարած անձին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքները բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.10.2021 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 22.12.2020 թվականի վճռին:

2. Մանվել Մկրտչյանից հոգուտ Երևանի քաղաքապետարանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Մանվել Մկրտչյանից հոգուտ Դավիթ Խաչատրյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

### 13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում	Վարչական գործ թիվ <u>ՎԴ/9371/05/18</u> 2023թ.
Վարչական գործ թիվ	ՎԴ/9371/05/18
Նախագահող դատավոր՝	Կ. Մաթևոսյան
Դատավորներ՝	Ք. Մկոյան Ա. Առաքելյան

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող</i>	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
<i>զեկուցող</i>	Լ. ՀԱԿՈԲՅԱՆ Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

2023 թվականի հոկտեմբերի 02-ին գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.12.2020 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Աշոտ Ազիզյանի ընդդեմ Կոմիտեի իրավաբանական վարչության՝ 22.08.2018 թվականի թիվ 384592/01 որոշումը վերացնելու պահանջի մասին,

#### Պ Ա Ր Զ Ե Ց

##### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Աշոտ Ազիզյանը պահանջել է վերացնել Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 22.08.2018 թվականի թիվ 384592/01 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 12.03.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.12.2020 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.03.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ սերքոնի-շյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը ոչ վերաբերելի և ոչ թույլատրելի է գնահատել վիճարկվող ակտի հիմքում ընկած վարչական վարույթի նյութերում առկա ապացույցը՝ ՀՀ ՊԵԿ ՕՀՎ-ի կողմից 06.07.2018 թվականին կայացված թիվ 1502961 վարչական ակտը, մինչդեռ ինչպես վարչական իրավախախտման վարույթ իրականացնող մարմինը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը պետք է առաջնորդվելին վարչական ակտի իրավաչափության կանխավարկածով՝ անկախ այն հանգամանքից՝ վիճարկվող ակտի հիմքում դրված ստուգման ակտը անբողոքարկելի է, թե՛ դեռևս ոչ:

Վարչական վարույթի նյութերում առկա ստուգման ակտն ապացույց չդիտարկելը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/2085/05/12 գործով 30.04.2015 թվականին կայացրած որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, քանի որ ստուգման ակտ հանդիսացող ապացույցն անհրաժեշտ է եղել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի՝ իրավախախտման առկայությունը հաստատելու համար, և բացի այդ, վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում իրականացրել է այլ ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ, այդ թվում՝ հայցվորի համար բարենպաստ հանգամանքների վերաբերյալ, սակայն վարչական ակտի հասցեատերը չի ներկայացրել և որևէ փաստարկ կամ ապացույց ողջ վարչական վարույթի ընթացքում, որը կհաղթահարեր ստուգման ակտով արձանագրվածը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 11.12.2020 թվականի որոշումը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել դատական ակտը՝ բեկանված մասով գործն ուղարկել համապատասխան դատարան՝ նոր քննության, կամ որոշումը բեկանել և կայացնել նոր դատական ակտ:

## **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության 06.07.2018 թվականի «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1502961 վարչական ակտով, հիմք ընդունելով 25.06.2018 թվականի թիվ 1502961 արձանագրությունը, «Թոչնաֆարբիկա գետամեջ 2016» ՍՊԸ-ի նկատմամբ նշանակվել է 200.000 ՀՀ դրամ տուգանք՝ ՀՀ հարկային օրենսգրքի 410-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (**հատոր 1-ին, գ.թ. 32-34**): Նշված վարչական ակտը վիճարկվել է ՀՀ վարչական դատարանում (**հիմք՝ «Datalex.am» կայք**):

2) ՀՀ ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության 06.07.2018 թվականի «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1502961 վարչական ակտի պատճենի վերջնամասում առկա է 06.07.2018 թվականին կատարված՝ Աշոտ Ազիզյանի

ստորագրությունը և գրառում հետևյալ բովանդակությամբ. «Համաձայն չեմ ակտի հետ և պատրաստվում եմ բողոքարկել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով» (**հատոր 1-ին, գ.թ. 34**):

3) ՀՀ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի բաժնի առաջին կարգի մասնագետի կողմից 22.08.2018 թվականին կազմված «Վարչական իրավախախտման վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ «... «Թոչնաֆարիկա Գետամեջ 2016» ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Ազիզյանը (...) համաձայն ՀՀ ՊԵԿ ՕՀՎ 06.07.2018թ. թիվ 1502961 վարչական ակտի, հաշվապահական հաշվառումից բացի, օրենսդրությամբ նախատեսված այլ հաշվառում (գրանցում) չի վարել, որը կարող է առաջացնել հարկի նվազեցում, որի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 1-ին մասով ...» (**հատոր 1-ին, գ.թ. 28**):

4) ՀՀ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը 22.08.2018 թվականի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 384592/01 որոշմամբ, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 16635 գործը և ուսումնասիրելով 22.08.2018 թվականի արձանագրությունը և կից նյութերը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման համար Աշոտ Ազիզյանի նկատմամբ նշանակել է տուգանք՝ 15.000 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 6**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում բացահայտված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի առանձնահատկություններին: Մասնավորապես, կարևորվում է հետևյալ իրավական հարցադրումը. կարող է արդյո՞ք օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ցրտեմպարողին հարկային պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ անբողոքարկելի չդարձած վարչական ակտը համարվել թույլարդելի ապացույց այդ միջոցառումների արդյունքում հայրնաբերված վարչական իրավախախտում կատարելու փաստը հաստատված համարելու համար:*

Վճռաբեկ դատարանը նշված հարցադրումն անհրաժեշտ է համարում դիտարկել հարկային և վարչական պատասխանատվության տարանջատման համատեքստում՝ հաշվի առնելով նաև անբողոքարկելի չդարձած հարկային պատասխանատվության վերաբերյալ վարչական ակտերի կարգավիճակը:

Հարկային և վարչական պատասխանատվության՝ որպես պատասխանատվության առանձին տեսակների տարանջատման խնդրին է անդրադարձել

ՀՀ սահմանադրական դատարանն իր 18.02.2014 թվականի թիվ ՄԴՈ-1139 որոշմամբ: ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ հարկային պարտավորությունների չկատարման (ոչ պատշաճ կատարման) բնութագրիչներ պարունակող արարքի որակման և իրավագնահատման հարցում (եթե բացակայում են հանցակազմի հատկանիշները) օրենսդիրն ըստ էության տարանջատել է վարչական և հարկային պատասխանատվության տեսակները՝ նկատի ունենալով, ի թիվս այլնի, հարկային պատասխանատվությամբ և վարչական պատասխանատվությամբ հետապնդվող առանձին խնդիրներն ու նպատակները, կիրառվող հարկադրանքի միջոցները, տարբերակված հարկային և վարչական պատասխանատվության ենթակա սուբյեկտների կազմը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նույն կերպ տարանջատված են նաև տնտեսվարողին հարկային պատասխանատվության ենթարկելու վարույթը և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը: Վերջինս ունի իր ուրույն խնդիրները, որոնք ամրագրված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 245-րդ հոդվածում: Այն է՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործը օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը, ընդունված որոշման կատարումն ապահովելը, ինչպես նաև վարչական իրավախախտումների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելը, իրավախախտումները կանխելը (...):

Օրենսգրքի՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը բացառող հանգամանքները սահմանող 247-րդ հոդվածի և վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս պարզման ենթակա հանգամանքների շրջանակը սահմանող 279-րդ հոդվածի համադրված վերլուծությունից բխում է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով անհրաժեշտ է պարզել հետևյալ հանգամանքները. վարչական իրավախախտման դեպքի առկայությունը, անձին, ով կատարել է հակաիրավական գործողությունը (անգործությունը), անձի մեղավորությունը վարչական իրավախախտում կատարելու մեջ, վարչական պատասխանատվությունը մեղմացնող և խստացնող հանգամանքները, գույքային վնասի առկայությունը, այն հանգամանքները, որոնք բացառում են վարչական պատասխանատվության վարույթի հարուցումը:

Օրենսգրքի 251-րդ հոդվածը սահմանում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի ապացույցների շրջանակը: Օրենսգրքի 252-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ վարչական մարմինն անձին վարչական պատասխանատվության ենթարկելիս կրում է Օրենսգրքի 251-րդ հոդվածով սահմանված ապացույցների գնահատման արդյունքում վերը նշված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման պարտականություն:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը մեկնարկում է Օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմամբ և եզրափակվում Օրենսգրքի 282-րդ հոդվածով նախատեսված հետևյալ որոշումներից որևէ մեկի կայացմամբ՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշում կամ գործի վարույթը կարճելու մասին որոշում:

Միաժամանակ, Օրենսգրքը սահմանում է վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետները: Օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում,



բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի: ՀՀ վճռաբեկ դատարանը նշված երկամսյա ժամկետով է պայմանավորել նաև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի տևողությունը (*Կրե՛ս, Ցողիկ Ավետրիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/8942/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.12.2022 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր որոշումներում անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի իրավակարգավորման առանձնահատկություններին, արձանագրել է, որ օրենսդիրը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում հստակ սահմանել է այդ վարույթի խնդիրները: Դրանցից են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործն օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը: ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն իրականացվում են նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման միջոցով, որն իր մեջ ներառում է նաև ապացույցների բացահայտումը, հավաքագրումը և դրանց պատշաճ ձևակերպումը: Այսպիսով, օրենսդիրը միանշանակ պարտավորեցնում է վարչական մարմինի պարզել գործի փաստական հանգամանքները և բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկել դրանք: Վարչական մարմինն օրենքով սահմանված կարգով պետք է պարզի այն բոլոր փաստական հանգամանքները, որոնք, ըստ համապատասխան օրենքի, անհրաժեշտ են կոնկրետ վարչական ակտն ընդունելու համար:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերոնշյալ իրավանորմերի համակցված վերլուծությանը, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելիս համապատասխան վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պարտավոր է պարզել՝ կատարվել է արդյո՞ք վարչական իրավախախտումը, և արդյո՞ք անձը մեղավոր է այն կատարելու մեջ: Նշված հարցերը պարզելու համար վարչական մարմինը (պաշտոնատար անձը) պետք է ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ և ղեկավարվելով օրենքով՝ գնահատի գործով ձեռք բերված ապացույցները (*Կրե՛ս, Մուրեն Միմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/4842/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Ի ամփոփումն վերոգրյալի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթն առանձին տեսակի վարչական վարույթ է, որը մեկնարկում է վարչական արձանագրության կազմմամբ (հարուցման փուլ), որի ընթացիկ փուլում վարչական վարույթն իրականացնող մարմնի (պաշտոնատար անձի) խնդիրն է Օրենսգրքի 251-րդ հոդվածով սահմանված ապացույցների գնահատման արդյունքում բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ պարզել Օրենսգրքի 247-րդ և 279-րդ հոդվածներում նշված հանգամանքները, և երկամսյա ժամկետում վարչական վարույթը եզրափակել կամ վարչական տույժ նշանակելու մասին որոշմամբ կամ վարույթը կարճելու մասին որոշմամբ (եզրափակիչ փուլ):

ՀՀ հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «1. Օրենսգրքի 407-410-րդ հոդվածներով սահմանված իրավախախտումները

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվելու և արձանագրվելու դեպքում հարկային պարտավորությունները հաշվարկվում և գանձման են առաջադրվում հարկային մարմնի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում և նույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով»:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված և արձանագրված ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված խախտումների համար հարկային պարտավորություններ հաշվարկելու և գանձման առաջադրելու վարչական վարույթը և նույն միջոցառումների շրջանակներում բացահայտված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը միմյանցից տարանջատված, ինքնուրույն վարույթներ են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խնդիրները, իրականացման ընթացակարգը, պարզման ենթակա հանգամանքների շրջանակը:

Հետևաբար, անկախ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված և արձանագրված ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված խախտումների համար հարկային պարտավորություններ հաշվարկելու և գանձման առաջադրելու վարչական վարույթի ընթացքից և արդյունքներից՝ պետք է իրականացվի այդ միջոցառումների շրջանակում բացահայտված վարչական պատասխանատվության վերաբերյալ գործի վարույթը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված կարգին համապատասխան: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում բացահայտված վարչական իրավախախտման համար վարչական տույժ նշանակելու որոշումը պետք է հիմնվի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված կարգին համապատասխան իրականացված առանձին և ինքնուրույն վարույթի արդյունքների, այդ վարույթում ձեռք բերված և գնահատված՝ Օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցների բավարար համակցության վրա:

Վարչական ակտերի անբողոքարկելի դառնալու պայմանների վերաբերյալ ընդհանուր դրույթներ է բովանդակում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք):

Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «1. Վարչական բողոքը կարող է բերվել՝

ա) վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում.

(...)

դ) գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու դեպքում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետները բաց թողնելուց հետո ակտը դառնում է անբողոքարկելի: (...)»:

Այսպիսով՝ ընդհանուր կանոնի համաձայն՝ վարչական ակտն անբողոքարկելի է դառնում ուժի մեջ մտնելու պահից հաշված երկամսյա ժամկետի ավարտից հետո:

Հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման և հարկային պարտավորություններ առաջադրող այլ վարչական ակտերի անբողոքարկելի դառնալու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածով: ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով հարկային պարտավորություններ առաջադրված լինելու դեպքում նշված ստուգման կամ այլ վարչական ակտերը դառնում են անբողոքարկելի ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, և դրանցով արձանագրված հարկային պարտավորությունները հարկ վճարողի կողմից ենթակա են կատարման նշված ակտերն անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում:

Հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված հարկային պարտավորությունները նույն մասով սահմանված ժամկետում չվճարվելու դեպքում նշված ստուգման կամ այլ վարչական ակտերը կատարվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

ՀՀ հարկային օրենսգրքի 320-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ստուգման ակտով (ուսումնասիրության արձանագրությամբ) առաջադրված գումարների նկատմամբ դրանց անբողոքարկելի դառնալու երկամսյա և վճարման 10-օրյա ժամկետների համար տույժեր չեն հաշվարկվում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման նույն օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց, իսկ վարչական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դեպքում՝ հետաձգելու կամ տարաժամկետելու ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում:

Վճարեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված իրավակարգավորումները համահունչ են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իրավական դիրքորոշումներին: Բողոքարկման գործընթացում գտնվելու ընթացքում հարկային պարտավորություններ առաջադրող վարչական ակտերի կատարումը խնդրահարույց է համարել նաև Եվրոպական դատարանը: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է. «Կոնվենցիայի ո՛չ 6-րդ հոդվածը, ո՛չ էլ որևէ այլ հոդված սկզբունքորեն չի բացառում լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրող որոշումների կատարման միջոցառումների հնարավորությունը մինչև այդ որոշումների վերջնական դառնալը: (...) Այնուհանդերձ, հաշվի առնելով, որ լրացուցիչ հարկային պարտավորություններ առաջադրող որոշումների կատարումը՝ մինչև դրանց վերջնական դառնալը, կարող է լուրջ հետևանքներ ունենալ շահագրգիռ անձի համար և բացասաբար ազդել նրա պաշտպանության վրա հետագա դատական գործընթացներում, (...) պետություններից պահանջվում է ողջամտորեն սահմանափակել այդ որոշումների կատարումը՝ ապահովելով արդարացի հարաբերակցություն համապատասխան շահերի միջև: Նշվածը կարևորվում է հատկապես այն դեպքերում, երբ (...) կատարման միջոցառումները

տեղի են ունենում վարչական մարմինների որոշումների հիման վրա, այսինքն՝ մինչև այդ պարտավորությունների իրավաչափության հաստատումը դատարանի կողմից (*տե՛ս, Յանտշեյվիչն ընդդեմ Շվեդիայի գործով Եվրոպական դատարանի 23.07.2002 թվականի վճիռ, կետ 106*):

Վերը նշված իրավակարգավորումների համադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման և հարկային պարտավորություններ առաջադրող այլ վարչական ակտերը, այդ թվում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով տնտեսվարողին հարկային պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարչական ակտերն իրավական հետևանքներ չեն առաջացնում, քանի դեռ չի սպառվել անբողոքարկելի դառնալու համար օրենքով սահմանված երկամսյա ժամկետը՝ հաշված տվյալ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից: Այդ ակտերի բողոքարկման համար սահմանված երկամսյա ժամկետի ընթացքում դրանցով հաստատված փաստական հանգամանքները դեռևս վիճելի են, հերքելի և ոչ հավաստի. այդ փաստական հանգամանքները կարող են հերքվել բողոքարկման (վերադատության կամ դատական կարգով) արդյունքում:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ անբողոքարկելի չդարձած հարկային պարտավորություններ առաջադրող վարչական ակտերը չեն կարող դրվել անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման հիմքում: Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ նման մտեցումը հակասում է վարչական ակտերի իրավաչափության կանխավարկածին, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ կանխավարկածը վերաբերում է միայն անբողոքարկելի դարձած վարչական ակտերին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ 21.11.2019թ. ուժի մեջ մտած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-200-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 37-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով. «9. Հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտերով արձանագրված վարչական իրավախախտումների դեպքում վարչական տույժը կարող է նշանակվել ստուգման կամ այլ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում»: Նշված օրենսդրական փոփոխությունը վկայում է այն մասին, որ օրենսդիրը ևս առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ վարչական տույժ նշանակելու մասին որոշման հիմքում կարող է դրվել միայն անբողոքարկելի դարձած՝ հարկային մարմնի իրականացրած հարկային հսկողության արդյունքներով կազմված ստուգման կամ այլ վարչական ակտը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցների օգտագործումն արգելվում է: Դրանք ապացուցողական ուժ չունեն և չեն կարող դրվել դատական ակտի հիմքում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի գնատմամբ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տնտեսվարողին հարկային պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ անբողոքարկելի չդարձած վարչական

ակտը չի կարող ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի իմաստով համարվել թույլատրելի ապացույց այդ միջոցառումների արդյունքում հայտնաբերված վարչական իրավախախտում կատարելու փաստը հաստատված համարելու համար:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկարանմը.***

Դիմելով Դատարան՝ Աշոտ Ազիզյանը պահանջել է վերացնել Կոմիտեի 22.08.2018 թվականի թիվ 384592/01 որոշումը, որով վերջինս վարչական պատասխանատվության է ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար:

**Դատարանի** 12.03.2019 թվականի վճռով հայցը բավարարել է՝ արձանագրելով, որ «(...)վիճարկվող որոշումն ընդունելու հիմք հանդիսացող թիվ 1502961 ակտը կազմվել է 06.07.2018թ.: Նշված ակտն ուժի մեջ մտնելու օրվանից «Թոչնաֆարրիկա Գետամեջ 2016» ՍՊԸ-ն ուներ օրենքով երաշխավորված իրավունք բողոքարկելու նշված ակտը վարչական կարգով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով սահմանված ժամկետում կամ վիճարկելու այդ ակտը դատական կարգով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածով սահմանված ժամկետում, հետևաբար թիվ 1502961 ակտով արձանագրված խախտման առկայությունը հաստատված համարելու և դրա հիման վրա «Թոչնաֆարրիկա Գետամեջ 2016» ՍՊԸ-ի տնօրեն Աշոտ Ազիզյանին վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական մարմինը պարտավոր էր սպասել բողոքարկման ժամկետները լրանալուն, որպեսզի ակտը դառնար անբողոքարկելի, որից հետո միայն դրանում արձանագրված խախտումը կարող էր համարվել հաստատված»:

**Վերաքննիչ դատարանը**, 11.12.2020 թվականի վիճարկվող որոշմամբ մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի 12.03.2019 թվականի վճիռը թողնելով անփոփոխ, ևս անընդունելի է համարել վիճարկվող որոշմամբ անբողոքարկելի չդարձած վարչական ակտը հիմք ընդունելը:

Վճռաբեկ դատարանը, գնահատելով Վերաքննիչ դատարանի վերլուծությունների հիմնավորվածությունը, գտնում է, որ դրանք հիմնավոր են հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն դեպքում հայցվորը վարչական պատասխանատվության է ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.1-ին հոդվածի 1-ին մասի հիմքով, որը սահմանում է. «Հաշվապահական հաշվառումից բացի, օրենսդրությամբ նախատեսված այլ հաշվառում (գրանցում) չկարելը կամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը կամ հաշվառումը (գրանցումը) այնպիսի խախտումով վարելը կամ հայտարարագրի կամ հաշվարկի կամ հաշվետվության (այդ թվում՝ հաշվապահական) կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթի մեջ այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը, որոնք կարող են առաջացնել (առաջացրել են) հարկի նվազեցում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից մինչև քսանհինգապատիկի չափով»:

Վարչական իրավախախտման վերաբերյալ 22.08.2018 թվականի արձանագրության և վիճարկվող որոշման ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատասխանողը հայցվորին վերագրված իրավախախտման դեպքի առկայությունը հաստատված է համարել հիմք ընդունելով

ՀՀ ՊԵԿ ՕՀՎ 06.07.2018 թվականի թիվ 1502961 վարչական ակտը (այսուհետ՝ Թիվ 1502961 վարչական ակտ), որով օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտված՝ ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման համար ՀՀ հարկային օրենսգրքի պահանջների խախտման համար «Թռչնաֆարրիկա Գետամեջ 2016» ՍՊԸ-ն հարկային պատասխանատվության է ենթարկվել ՀՀ հարկային օրենսգրքի 410-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով: Այսինքն՝ որպես հայցվորին վերագրվող վարչական իրավախախտման դեպքի առկայությունը հիմնավորող ապացույց է դիտարկվել մեկ այլ վարչական ակտ, որով տնտեսվարողը ենթարկվել է հարկային պատասխանատվության: Ըստ գործում առկա ապացույցների՝ Թիվ 1502961 վարչական ակտը տնտեսվարողին է հանձնվել 06.07.2018 թվականին, որպիսի պայմաններում նշված վարչական ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, ուժի մեջ է մտել 07.07.2018 թվականին: ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան Թիվ 1502961 վարչական ակտն անբողոքարկելի է դարձել միայն 11.09.2018 թվականին (հաշվի առնելով, որ սեպտեմբերի 08-ը և 09-ը ոչ աշխատանքային օրեր են):

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 22.08.2018 թվականին ընդունված վիճարկվող որոշման հիմքում դրվել է բացառապես դեռևս անբողոքարկելի չդարձած վարչական ակտ, որում արձանագրված փաստական հանգամանքները դեռևս վիճելի և հերքելի էին: Կոմիտեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված կարգին համապատասխան վարույթ իրականացնելու, հայցվորի կողմից վերջինիս վերագրվող վարչական իրավախախտումը կատարված լինելու հանգամանքը այդ վարույթի շրջանակներում Օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցների գնահատման միջոցով պարզելու փոխարեն բավարարվել է միայն անբողոքարկելի չդարձած վարչական ակտին հղում կատարելով: Վճռաբեկ դատարանը, իր վերը նշված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ ոչ իրավաչափ է համարում Կոմիտեի նման վարքագիծը և ըստ այդմ՝ գտնում է, որ ստորադաս դատարանների դիրքորոշումը հիմնավոր է և իրավաչափ:

Անփոփոխելի վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, բավարարելով Աշոտ Ազիզյանի հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը,

ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.12.2020 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/2978/05/19  
2022թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/2978/05/19

Նախագահող դատավոր՝

Ա. Թովմասյան

Դատավորներ՝

Հ. Բեդկյան

Կ. Ավետիսյան

#### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող և գեկուցող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ք. ՄԿՈՅԱՆ

2022 թվականի նոյեմբերի 03-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.12.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Սամվել Ճզմաչյանի ընդդեմ Կոմիտեի՝ Սամվել Ճզմաչյանի և Հայաստանի Հանրապետության միջև եկամտային հարկի գծով իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջի մասին,

#### Պ Ա Ր Զ Ե Ց

##### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Սամվել Ճզմաչյանը պահանջել է ճանաչել իր և Հայաստանի Հանրապետության միջև եկամտային հարկի գծով իրավահարաբերության բացակայությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ալ. Հարությունյան) 25.11.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.12.2020 թվականի որոշմամբ Սամվել Ճզմաչյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 25.11.2019 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:



Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Սամվել Ճզմաչյանը (ներկայացուցիչ՝ Լուսինե Գրիգորյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ կետը, կիրառել է ՀՀ հարկային օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետը, որը ենթակա չէր կիրառման, չի կիրառել «Սահմանափակ պարտասխանարվությանը ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ հարկային օրենսգրքի 38-րդ հոդվածը, որը ենթակա էր կիրառման:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ բաժնեմասի օտարման պայմանագիրը կողմերի միջև կնքված է համարվել պայմանագիրը կնքելու պահից, իսկ հայցվորի և Հայաստանի Հանրապետության միջև անշարժ գույքի սեփականության իրավունքի փոխանցման իրավահարաբերությունը ծագել է հայցվորի կողմից անշարժ գույքի օտարման պայմանագիրը պետական գրանցման ներկայացնելու պահից, և դրա նկատմամբ հատուցումը կատարվել է ոչ թե պայմանագրի կնքման, այլ՝ բաժնեմասի պետական գրանցման պահին:

Անհիմն է Վերաքննիչ դատարանի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ սույն դեպքում հարկի հաշվարկման դրամարկղային մեթոդի կիրառմամբ հաշվետու ժամանակաշրջան պետք է համարել 2017 թվականի դեկտեմբեր ամիսը, քանի որ Վերաքննիչ դատարանը չի պարզել, թե անշարժ գույքի դիմաց հատուցումը Սամվել Ճզմաչյանը երբ է ստացել, այսինքն՝ երբ է բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել, քանի որ պայմանագրի կնքման պահին վերջինս հատուցում չի ստացել. սույն գործով այդպիսի ապացույցներ առկա չեն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.12.2020 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.**

Քաղաքացիաիրավական և հարկային իրավունքների ու պարտականությունների ծագումը չի կարող նույնացվել՝ հաշվի առնելով, որ հանրային (հարկային) իրավահարաբերություններն ունեն իրենց առանձնահատկությունները:

ՀՀ հարկային օրենսգրքում բացակայում է որևէ դրույթ, որի համաձայն՝ կարող է կիրառվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքը, ուստի նման պայմաններում պետք է առաջնորդվել ՀՀ հարկային օրենսգրքով: Տվյալ դեպքում կողմերի միջև պայմանագիրը կնքվել է 26.12.2017 թվականին, այդ պայմանագրով որպես հատուցում ստացվել է համապատասխան բաժնեմասը, որի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվել է պայմանագրի կնքման պահից:

Նման պայմաններում Սամվել Ճզմաչյանը չունի հարկային մարմին եկամտային հարկի տարեկան հաշվարկ ներկայացնելու և դրա արդյունքում առաջացող եկամտային հարկի գումար վճարելու պարտականություն:

**3. Վճարել քողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել քողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) «ՏԵՌԱԶԶԱ» ՍՊԸ-ի մասնակից Անժելիկա Իշխանյանի (մի կողմից) և Սամվել Ճզմաչյանի ու Կարինե Ալազյոզյանի (մյուս կողմից) միջև 26.12.2017 թվականին կնքվել է բաժնետնասի ապառիկ փոխանակության և նախավճարի խառը պայմանագիր, որի համաձայն՝ Անժելիկա Իշխանյանը պարտավորվել է Սամվել Ճզմաչյանին և Կարինե Ալազյոզյանին որպես սեփականություն հանձնել «ՏԵՌԱԶԶԱ» ՍՊԸ-ում իրեն պատկանող 33 տոկոս բաժնետնասը (այսուհետ՝ «Օբյեկտ-1»)՝ դրա դիմաց նրանցից ընդունելով պայմանագրում նշված ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Հանգստի 4-րդ փողոցի թիվ 8/14 հասցեում գտնվող 54.55 /հիսունչորս ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական/ քմ մակերեսով հասարակական նշանակության շինությունը և 0.03546 /գրո ամբողջ գրո երեք հազար հինգ հարյուր քառասունվեց/ հա մակերեսով՝ հատուկ պահպանվող տարածքներում հանգստի համար նախատեսված հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը (այսուհետ՝ «Օբյեկտ-2») և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Հանգստի 4-րդ փողոցի թիվ 8/15 հասցեում գտնվող 54.55 /հիսունչորս ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական/ քմ մակերեսով հասարակական նշանակության շինությունը և 0.03517 /գրո ամբողջ գրո երեք հազար հինգ հարյուր տասնյոթ/ հա մակերեսով՝ հատուկ պահպանվող տարածքներում հանգստի համար նախատեսված հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը (այսուհետ՝ «Օբյեկտ-3»), ինչպես նաև՝ «Օբյեկտ-1»-ի և «Օբյեկտ-2»-ի ու «Օբյեկտ-3»-ի գների տարբերությունը, իսկ Սամվել Ճզմաչյանը և Կարինե Ալազյոզյանը պարտավորվել են ընդունել «ՏԵՌԱԶԶԱ» ՍՊԸ-ում Անժելիկա Իշխանյանին պատկանող 33 տոկոս բաժնետնասն ու դրա դիմաց որպես սեփականություն վերջինիս հանձնել «Օբյեկտ-2»-ը և «Օբյեկտ-3»-ը, ինչպես նաև՝ «Օբյեկտ-1»-ի և «Օբյեկտ-2»-ի ու «Օբյեկտ-3»-ի գների տարբերությունը: Նշված պայմանագիրը նույն օրը նոտարական կարգով վավերացվել է **(հատոր 1-ին, գ.թ. 8-12).**

2) վերը նշված պայմանագրից բխող սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարվել է 08.02.2018 թվականին **(անվիճելի փաստ է).**

3) Կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետ Տ. Զաքարյանը Սամվել Ճզմաչյանին ծանուցագիր է հասցեագրել՝ առաջարկելով վերը նշված պայմանագրի Օբյեկտ հանդիսացող գույքն օտարելու հիմքով եկամտային հարկ վճարող հանդիսանալու կապակցությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մինչև հաջորդ հարկային տարվա ապրիլի 20-ը հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը **(հատոր 1-ին, գ.թ. 13).**

4) ի պատասխան նշված ծանուցագրի՝ Սամվել Ճզմաչյանը խնդրել է պարզաբանել ինչ օրենսդրական կարգավորումներ են գործելու 26.12.2017 թվականին կնքված պայմանագրի նկատմամբ՝ հաշվի առնելով, որ ՀՀ հարկային օրենսգրքին ուժի մեջ է մտել 01.01.2018 թվականից, և ճշգրտել ու տրամադրել տեղեկատվություն՝ առաջացող եկամտային հարկի պարտավորության չափի վերաբերյալ **(հատոր 1-ին, գ.թ. 14-15).**

5) ի պատասխան Սամվել Ճզմաչյանի գրության՝ Կոմիտեն հայտնել է, որ գույքի օտարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում անշարժ գույքի

նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման տարին՝ 2018 թվականը, իսկ օտարված անշարժ գույքի պայմանագրային արժեքները միասին կազմում են 57.771.600 ՀՀ դրամ, և առաջարկվել է մինչև հաջորդ հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի տարեկան հաշվարկ ու վճարել դրա արդյունքում առաջացող եկամտային հարկի գումարը (**հատոր 1-ին, գ.թ. 16**):

#### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ հարկային օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանը հարկ է համարում անորադատնալ հերկյալ իրավական հարցադրմանը. եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջանը որոշելու համար պետք է հիմք ընդունվի անշարժ գույքի նկատմամբ իրականացվող հարուցումների սրացման կամ վճարումների կատարման պահը, թե առաջացող իրավունքների պետական գրանցման պահը:*

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 03.04.2002 թվականին, ուժի մեջ է մտել 31.05.2002 թվականին, ուժը կորցրել է 07.04.2018 թվականին) 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն նույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ իրավական ակտով նախատեսված դեպքերում:

Նույն հոդվածի 3-րդ մասի երրորդ պարբերության համաձայն՝ ուժը կորցրած իրավական ակտի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը ծագած հարաբերությունների վրա, եթե նույն օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային օրենսգիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի (այսուհետ՝ հարկեր) և Օրենսգրքով նախատեսված վճարների (այսուհետ՝ վճարներ) հետ կապված հարաբերությունները (այսուհետ՝ հարկային հարաբերություններ), սահմանում է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի սկզբունքները, հարկի և վճարի հասկացությունները, տեսակները, հարկ վճարողների շրջանակը, հարկի դրույքաչափերը, հարկի հաշվարկման, վճարման, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝

հարկային պարտավորությունների գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաև հարկային արտոնությունները:

Օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով, Օրենսգրքով, վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանց հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասի 1-6-րդ կետերում նշված իրավական ակտերով (այսուհետ՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտեր) (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական ակտերից տարբերվող այլ իրավական ակտերով չեն կարող կարգավորվել հարկային հարաբերություններ, բացառությամբ. 1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի. 2) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի. 3) Հայաստանի Հանրապետության քրեական և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերի. 4) «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի. 5) «Հարկային ծառայության մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների. 6) «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվել «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-246-Ն օրենքը (...):

Օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները 2018 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերված՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կատարված հարկային օրենսդրության խախտումների համար կիրառվում են մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը սահմանված պատասխանատվության միջոցները, (...):

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ օրենսդրի կողմից հստակ սահմանվել է այն իրավական ակտերի շրջանակը, որոնցով Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են հարկային հարաբերությունները, այն է՝ ՀՀ Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը, Օրենսգիրքը, վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքները և դրանց հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը: Ընդ որում, նշված իրավական ակտերից տարբերվող այլ իրավական ակտերով չեն կարող կարգավորվել հարկային հարաբերություններ, բացառություն են կազմում հետևյալ իրավական ակտերը.

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը,

- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,
- Հայաստանի Հանրապետության քրեական և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերը,
- «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,
- «Հարկային ծառայության մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները,
- «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկային պարտավորությունների ծագման հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են **միայն** նշված իրավական ակտերի դրույթները, և այս հստակ կանոնից որևէ շեղում չի կարող համարվել իրավաչափ:

Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ, 25-րդ և 27-րդ կետերի համաձայն՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կիրառության իմաստով՝ ստորև նշված հասկացություններն ունեն հետևյալ իմաստն ու նշանակությունը.

23) եկամուտ՝ ձեռնարկատիրական, անձնական և (կամ) պասիվ եկամուտ.

25) անձնական եկամուտ՝ ֆիզիկական անձի կողմից աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում իրականացվող գործունեությանը վերագրվող կամ ցանկացած այլ հիմքով (բացառությամբ նույն մասի 24-րդ և 26-րդ կետերով սահմանված դեպքերի) ստացվող դրամական միջոց կամ այլ ակտիվ (այդ թվում՝ բնամթերային ձևով): Նույն կետի կիրառության իմաստով՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար համարվող ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից ստացվող շահաբաժինը համարվում է անձնական եկամուտ՝ անկախ շահաբաժինը որպես անհատ ձեռնարկատեր կամ որպես նոտար ստանալու հանգամանքից և նույն մասի 26-րդ կետի դրույթներից.

27) համախառն եկամուտ՝ հաշվետու ժամանակաշրջանում ստացված կամ ստացման ենթակա Օրենսգրքով սահմանված եկամուտների հանրագումար:

Օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանը ժամանակահատված է, որի համար հաշվարկվում և վճարվում են հարկեր և (կամ) բնօգտագործման վճար, ներկայացվում են հարկային հաշվարկներ (բացառությամբ ներմուծման հարկային հայտարարագրերի, ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին հայտարարության և արտահանման հարկային հայտարարագրերի), կատարվում են Օրենսգրքով սահմանված այլ պարտավորություններ:

Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկը կատարվում է հաշվառման հաշվեգրման մեթոդով, եթե օրենսգրքով չի նախատեսվում, որ հարկի կամ բնօգտագործման վճարի հաշվարկը կատարվում է հաշվառման դրամարկղային մեթոդով:

Օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի կիրառության իմաստով՝ հաշվառման դրամարկղային մեթոդը նշանակում է, որ հարկ վճարողը եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ ելնելով հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից՝ անկախ իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ իր համար այդ ծախսերը ճանաչելու պահից:

Օրենսգրքի 139-րդ հոդվածի համաձայն՝ եկամտային հարկը Օրենսգրքի 141-րդ հոդվածով սահմանված հարկման օբյեկտի համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է:

Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ եկամտային հարկով հարկման օբյեկտ է համարվում ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ նույն բաժնի կիրառության իմաստով՝ եկամտային հարկով հարկման օբյեկտի հաշվառումն իրականացվում է (հարկի հաշվարկը կատարվում է) քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների և (կամ) մատուցված ծառայությունների համար ստացվող եկամուտների մասով՝ **հաշվառման դրամարկղային մեթոդով:**

Օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ եկամտային հարկով հարկման բազա է համարվում ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերություն:

Օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկը հարկային գործակալի կողմից հաշվարկելու, պահելու և պետական բյուջե վճարելու դեպքերում եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

Վերոգրյալ իրավանդումների վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եկամտային հարկով հարկման օբյեկտ է համարվում ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, որը հաշվետու ժամանակաշրջանում ստացված կամ ստացման ենթակա հարկային օրենսգրքով սահմանված եկամուտների հանրագումարն է: Հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կիրառության իմաստով եկամուտը ձեռնարկատիրական, անձնական և (կամ) պասիվ եկամուտն է, իսկ ֆիզիկական անձի կողմից քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում իրականացվող գործունեությանը վերագրվող կամ ցանկացած այլ հիմքով ստացվող դրամական միջոցը կամ այլ ակտիվը համարվում է անձնական եկամուտ: Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների և (կամ) մատուցված ծառայությունների համար ստացվող եկամուտների մասով՝ եկամտային հարկով հարկման օբյեկտի հաշվառումն իրականացվում է (հարկի հաշվարկը կատարվում է) հաշվառման դրամարկղային մեթոդով: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հաշվառման դրամարկղային մեթոդի էությունը կայանում է նրանում, որ հարկ վճարողի եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է՝ հիմք ընդունելով հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահը, և հարկային օրենսդրության տեսանկյունից որևէ իրավական նշանակություն չունի հարկ վճարողի կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու պահը: Օրենսդիրը հստակ սահմանել է, որ հաշվառման

դրամարկղային մեթոդը կիրառվում է ելնելով հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից՝ անկախ իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ իր համար այդ ծախսերը ճանաչելու պահից: Եկամտային հարկով հարկման օբյեկտի հաշվառման համար էական է համարվում հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահը, որը չի կարող նույնացվել հատուցումների ստացման վերաբերյալ քաղաքացիաիրավական պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահի հետ:

Հետևաբար Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների և (կամ) մատուցված ծառայությունների համար ստացվող եկամուտների՝ եկամտային հարկով հարկման օբյեկտի հաշվառումն իրականացվում է (հարկի հաշվարկը կատարվում է) հաշվառման դրամարկղային մեթոդով, որի կիրառման համար հիմք է ընդունվում ոչ թե քաղաքացիաիրավական պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման, այլ հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահը: Հետևաբար, որպես եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջանը որոշելու ելակետ է ընդունվում հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահը՝ համաձայն հարկային օրենսդրության:**

*Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարագրում:*

Սույն գործի փաստերի համաձայն՝ «ՏԵՌԱԶԶԱ» ՍՊԸ-ի մասնակից Անժելիկա Իշխանյանի (մի կողմից) և Սամվել Ճգմաչյանի ու Կարինե Ալազյոզյանի (մյուս կողմից) միջև 26.12.2017 թվականին կնքվել է բաժնեմասի ապառիկ փոխանակության և նախավճարի խառը պայմանագիր, որի համաձայն՝ Անժելիկա Իշխանյանը պարտավորվել է Սամվել Ճգմաչյանին և Կարինե Ալազյոզյանին որպես սեփականություն հանձնել «ՏԵՌԱԶԶԱ» ՍՊԸ-ում իրեն պատկանող 33 տոկոս բաժնեմասը՝ դրա դիմաց նրանցից ընդունելով պայմանագրում նշված «Օբյեկտ-2»-ը և «Օբյեկտ-3»-ը, ինչպես նաև՝ «Օբյեկտ-1»-ի և «Օբյեկտ-2»-ի ու «Օբյեկտ-3»-ի գների տարբերությունը, իսկ Սամվել Ճգմաչյանը և Կարինե Ալազյոզյանը պարտավորվել են ընդունել «ՏԵՌԱԶԶԱ» ՍՊԸ-ում Անժելիկա Իշխանյանին պատկանող 33 տոկոս բաժնեմասն ու դրա դիմաց որպես սեփականություն վերջինիս հանձնել «Օբյեկտ-2»-ը և «Օբյեկտ-3»-ը, ինչպես նաև՝ «Օբյեկտ-1»-ի և «Օբյեկտ-2»-ի ու «Օբյեկտ-3»-ի գների տարբերությունը:

08.02.2018 թվականին կատարվել է պայմանագրից առաջացած իրավունքների պետական գրացում:

Կոմիտեն հայցվորին ուղղված ծանուցագրով հայտնել է, որ վերջինս հանդիսանում է եկամտային հարկ վճարող և պարտավոր է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պառտավորությունների գումարը, քանի որ հայցվորը 08.02.2018 թվականին օտարել է Մարգ Գեղարքունիք, համայնք Սևան ք. Հանգստի գոտի 4-րդ փողոց 8/15 հասցեում գտնվող անշարժ գույքը («Օբյեկտ-3»), որի պայմանագրային արժեքը կազմել է 57.771.600 ՀՀ դրամ, և 08.02.2018 թվականին օտարել է Մարգ Գեղարքունիք, համայնք Սևան ք. Հանգստի գոտի 4-րդ փողոց 8/14 հասցեում գտնվող անշարժ գույքը («Օբյեկտ-2»), որի պայմանագրային արժեքը կազմել է 57.771.600 ՀՀ դրամ:

Կոմիտեին ներկայացված 24.08.2018 թվականի դիմումով Սամվել Ճզմաչյանը խնդրել է պարգաբանել՝ ինչ օրենսդրական կարգավորումներ են գործելու 26.12.2017 թվականին կնքված պայմանագրի նկատմամբ՝ հաշվի առնելով, որ ՀՀ հարկային օրենսգիրքն ուժի մեջ է մտել 01.01.2018 թվականից, և ճշգրտել ու տրամադրել տեղեկատվություն՝ առաջացող եկամտային հարկի պարտավորության չափի վերաբերյալ:

Կոմիտեն 02.11.2018 թվականի թիվ 341 գրությամբ հայտնել է, որ տվյալ դեպքում գույքի օտարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման տարին՝ 2018 թվականը, իսկ օտարված անշարժ գույքի պայմանագրային արժեքները միասին կազմում են 57.771.600 ՀՀ դրամ և առաջարկվել է մինչև հաջորդ հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի տարեկան հաշվարկ ու վճարել դրա արդյունքում առաջացող եկամտային հարկի գումարը:

Դիմելով դատարան՝ Սամվել Ճզմաչյանը պահանջել է ճանաչել իր և Հայաստանի Հանրապետության միջև եկամտային հարկի գծով իրավահարաբերության բացակայությունը այն հիմքով, որ պայմանագիրը կնքվել է 26.12.2017 թվականին, ինքը պայմանագրով սահմանված հատուցումն ստացել է նույն օրը, և իր ու Հայաստանի Հանրապետության միջև չեն ծագել եկամտային հարկի գծով իրավահարաբերություններ, ուստի, ինքը չունի եկամտային հարկի հաշվարկման ու վճարման պարտավորություններ:

**Դատարանը** հայցը մերժել է այն պատճառաբանությամբ, որ պայմանագրի հիման վրա ծագած իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է այդ պայմանագրից ծագած իրավունքների պետական գրանցման ժամանակահատվածում գործող ՀՀ հարկային օրենսգիրքը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ 26.12.2017 թվականի նոտարի կողմից վավերացված պայմանագրի հիման վրա խնդրո առարկա հանդիսացող անշարժ գույքերի նկատմամբ իրավունքները պետական գրանցում են ստացել 08.02.2018 թվականին:

**Վերաքննիչ դատարանը** բավարարել է Սամվել Ճզմաչյանի վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ դատարանը եկամտային հարկի գծով հարկային պարտավորությունների ծագումը նույնացրել է քաղաքացիական օրենսդրության իմաստով 26.12.2017 թվականի պայմանագրի կնքման պահի և անշարժ գույքերի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հետ, մինչդեռ, եկամտային հարկի գծով հարկային պարտավորությունների առաջացման և հաշվարկման տեսանկյունից որևէ իրավական նշանակություն չունի հարկվող եկամուտների ստացման վերաբերյալ քաղաքացիաիրավական պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ Դատարանը եկամտային հարկի գծով հարկային պարտավորությունների ծագումը նույնացրել է քաղաքացիական օրենսդրության իմաստով 26.12.2017 թվականի պայմանագրի կնքման պահի և անշարժ գույքերի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման հետ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ պարագայում եկամտային հարկի հաշվարկը կատարվում է՝ ելնելով ոչ թե քաղաքացիաիրավական



պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման, այլ հատուցումների ստացման կամ վճարումների կատարման պահից:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ պարագայում հատուցումն ստանալու պահը 26.12.2017 թվականը, չի ներառվում 2018 թվականի փետրվար ամսվա եկամտային հարկի հաշվարկման և վճարման հաշվետու ժամանակաշրջանում, հետևաբար, ՀՀ հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, հարկային պարտավորությունները ենթակա են կատարման 26.12.2017 թվականին Անժելիկա Իշխանյանի և Սամվել Ջզմաչյանի ու Կարինե Ալագոյանի կնքված բաժնեմասի ապառիկ փոխանակության և նախավճարի խառը պայմանագրի դրությամբ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետը իրավակիրառ պրակտիկայում պետք զարգանա սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, որպիսի պարագայում սույն գործով վիճելի իրավահարաբերության նկատմամբ նշված իրավանորմի կարգավորումը չի կարող կիրառելի լինել, քանի որ հատուցումն ստանալու պահը 26.12.2017 թվականը, չի ներառվում 2018 թվականի հաշվետու ժամանակաշրջանում: Ըստ այդմ՝ հայցվորի համար պայմանագրի ուժով չի կարող ծագել իր նկատմամբ կիրառման ոչ ենթակա ՀՀ հարկային օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված՝ հարկային մարմին եկամտային հարկի հաշվարկ ներկայացնելու և դրա արդյունքում առաջացող եկամտային հարկի գումարը վճարելու պարտավորություն, ինչն իրավացիորեն արձանագրել է Վերաքննիչ դատարանը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը և ճանաչելով Սամվել Ջզմաչյանի և Հայաստանի Հանրապետության միջև եկամտային հարկի գծով իրավահարաբերության բացակայությունը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառարանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին

չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.12.2020 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վարչական վերաքննիչ  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝  
Դատավորներ՝

Վարչական գործ թիվ ՎԳ/0654/05/18 2022թ.  
ՎԳ/0654/05/18  
Ք. Մկոյան  
Հ. Բեդկյան  
Կ. Մաթևոսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), հետևյալ կազմով

*Նախագահող* Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ  
*գեկուցող* Լ. ՀԱԿՈՒՅԱՆ  
Ք. ՄԿՈՅԱՆ

2022 թվականի նոյեմբերի 17-ին  
գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի «Անտիպա» ՍՊԸ-ի (այսուհետ՝  
Ընկերություն) ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝  
Կոմիտե)՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական  
գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.10.2020 թվականի որոշման  
դեմ Կոմիտեի ներկայացրած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Մինչև սույն գործի դատավարական նախապատմությանն անդրադառնալը՝  
Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

Դատավորների վարքագծի բանցալորյան սկզբունքները (ընդունված  
26.11.2002 թվականին ՄԱԿ-ի շրջանակներում), ի թիվս այնի, սահմանելով  
դատավորի ինքնաբացարկի հիմքերը (կետ 2.5), միաժամանակ թույլ են տալիս  
այդ հիմքերի առկայության պայմաններում ինքնաբացարկ չհայտնել այն  
իրավիճակներում, երբ «որևէ այլ դատարան չի կարող քննել տվյալ գործը  
կամ պայմանավորված գործի հրատապությամբ՝ քննության ձգձգումը կարող է  
հանգեցնել լուրջ դատական սխալի»: Այսինքն՝ նշված սկզբունքներն ամրագրում  
են անհրաժեշտության կանոնը (դոկտրինը), որի համաձայն՝ ինքնաբացարկի  
հիմքերի առկայության պայմաններում դատավորը կարող է ինքնաբացարկ  
չհայտնել, եթե ինքնաբացարկը կարող է հանգեցնել արդարադատության  
մերժման:

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) և նմանատիպ իրավիճակներում արդարադատության գործառույթի իրականացումն ապահովելու միջոց է դիտարկում Բանգալորյան սկզբունքներում ամրագրված անհրաժեշտության կանոնի (դոկտրինի) կիրառումը (*լրես, 12.12.2016 թվականին ընդունված CDL-AD(2016)036 փաստաթուղթ*): Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ խնդրո առարկա իրավիճակում պետք է գերակայի արդյունավետ արդարադատություն ապահովելու շահը:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան)՝ այն փաստը, որ գործը քննող դատավորներից ոմանք արդեն իսկ ունեցել են որոշակի դիրքորոշում տվյալ գործի վերաբերյալ, ինքնին բավարար հիմք չէ անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության իրավունքի խախտում արձանագրելու համար (*լրես, մասնավորապես, Fazli Aslaner v. Turkey գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 36*):

Հիմք ընդունելով վերոհիշյալ անհրաժեշտության կանոնը (դոկտրինը), ինչպես նաև Եվրոպական դատարանի և Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումները՝ դատավոր Քրիստինե Մկոյանը, չնայած ստորադաս դատարանում գործի քննությանը մասնակցությանը, սույն գործով ինքնաբացարկ չի հայտնել՝ հաշվի առնելով, որ ինքնաբացարկի դեպքում անհնարին կդառնար վճռաբեկ բողոքի քննությունը, ինչը կհանգեցներ արդարադատության մերժման:

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 26.12.2017 թվականի թիվ 3640/06 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 05.12.2018 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.10.2020 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 05.12.2018 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը կիրառել է մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել ապացույցների բազմակողմանի և օբյեկտիվ գնահատում, չի պատճառաբանել անձնական հաշվի քարտում ներառված տվյալների ոչ բավարար լինելը, անտեսել է այն հանգամանքը, որ անձնական հաշվի քարտը ներառում է հենց հարկ վճարողի ներկայացրած տվյալները, և անձնական հաշվի քարտում ներառված տեղեկատվությունը համարվում է հարկային մարմնի կողմից հաստատված տեղեկատվություն:

Վերաքննիչ դատարանը կիրառել է մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, քանի որ սույն գործի շրջանակներում խոսք է գնում հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման

ենթակա գումարը գանձելու, ոչ թե հարկային մարմնի կողմից հարկային հսկողություն իրականացնելու մասին:

Վճռաբեկ դատարանի դիրքորոշումների համատեքստում մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով նախատեսված վաղեմության ժամկետը կարող է վերաբերել բացառապես հարկային իրավախախտման կատարմանն ու հարկային մարմնի կողմից դրա հայտնաբերմանը. նշված նորմը որևէ առնչություն չունի արդեն իսկ առկա և հայտնաբերված հարկային պարտավորությունների առաջադրման հետ: Սույն գործով վարչական վարույթի նյութերում առկա ծանուցագիրը վերաբերում է հարկային պարտավորությունների առաջադրմանը. նման վարույթի հարուցման նպատակն արդեն առկա պարտավորության գանձման նպատակով վարչական ակտի ընդունումն է: Վարչական վարույթի ընթացքում հարկային մարմինը գործել է մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում՝ իրականացնելով ժամանակին հայտնաբերված, հայցվորի կողմից պատշաճ չկատարված հարկային պարտավորությունների գանձմանն ուղղված լիազորություն, որի համար իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրությամբ որևէ վաղեմության ժամկետ սահմանված չէ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.10.2020 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 05.12.2018 թվականի վճիռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ընկերությունը 2010 թվականի 3-րդ, 4-րդ, 2011-2012 թվականների 1-4-րդ եռամսյակների համար հարկային մարմին է ներկայացրել պարտադիր սոցիալական ապահովության վճարների եռամսյակային հաշվետվություններ (**հատոր 1-ին, գ.թ. 48-77**):

2) Ընկերությունը 2013 թվականի հունվար ամսից մինչև 2014 թվականի մարտ ամիսների համար հարկային մարմին է ներկայացրել եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի ամսական ամփոփ հաշվարկներ (**հատոր 1-ին, գ.թ. 78-107**):

3) Սոցիալական ապահովության վճարի գծով անձնական հաշվի քարտի համաձայն՝ Ընկերության հարկային պարտավորությունը 31.12.2017 թվականի դրությամբ կազմել է 473.632 ՀՀ դրամ, որից ապառք՝ 282.500 ՀՀ դրամ, տույժ՝ 191.132 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 108**):

4) Եկամտային հարկի գծով անձնական հաշվի քարտի համաձայն՝ Ընկերության հարկային պարտավորությունը 31.12.2017 թվականի դրությամբ կազմել է 316.035 ՀՀ դրամ, որից ապառք՝ 204.228 ՀՀ դրամ, տույժ՝ 111.807 ՀՀ դրամ (**հատոր 1-ին, գ.թ. 109**):

5) Կոմիտեն 23.11.2017 թվականի ծանուցագրով հայտնել է Ընկերությանը, որ վերջինս 23.11.2017 թվականի դրությամբ ունի 789.667 ՀՀ դրամ չկատարված պարտավորություն և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ հարուցվել է վարչական վարույթ Ընկերության չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 113**):

6) Կոմիտեի 26.12.2017 թվականի թիվ 3640/06 որոշմամբ արձանագրվել է, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորությունները 13.12.2017 թվականի դրությամբ կազմել են 789.667 ՀՀ դրամ, որից ապառք՝ 486.728 ՀՀ դրամ, տույժ՝ 302.939 Հ դրամ: Միաժամանակ արձանագրվել է, որ նշված 789.667 ՀՀ դրամ գումարից 473.632 ՀՀ դրամը սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորություն է, որից 282.500 ՀՀ դրամ ապառքի գումարն առաջացել է 2010 թվականի 3-րդ, 4-րդ, 2011-2012 թվականների 1-4-րդ եռամսյակների գործատուների պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկներից, 191.132 ՀՀ դրամ տույժի գումարը հաշվարկվել է՝ համաձայն «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, իսկ 316.035 ՀՀ դրամը եկամտային հարկի գծով պարտավորություն է, որից 204.228 ՀՀ դրամ ապառքի գումարն առաջացել է 2013 թվականի հունվար ամսից 2014 թվականի մարտ ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկներից, 111.807 ՀՀ դրամ տույժի գումարը հաշվարկվել է՝ համաձայն Օրենքի 23-րդ հոդվածի: Նույն որոշմամբ որոշվել է Ընկերությունից գանձել 789.667 ՀՀ դրամ պարտավորության գումար (**հատոր 1-ին, գ.թ. 118-119**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության առանցքում հարկային օրենսդրության խախտումների համար պատասխանատվության վաղեմության ժամկետի ինստիտուտին առնչվող առանձին հիմնահարցերն են:*

Հարկային իրավունքի ինստիտուտներից է հարկային օրենսդրության խախտումների համար պատասխանատվության վաղեմության ժամկետի ինստիտուտը, որն իր ամրագրումն էր գտել իրավահարաբերության ծագման պահին գործող և 01.01.2018 թվականին ուժը կորցրած «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30.1-րդ հոդվածում, իսկ Օրենքի ուժը կորցնելուց հետո վերարտադրվել է 01.01.2018 թվականին ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածում: Հարկային օրենսդրության խախտումների համար պատասխանատվության վաղեմության ժամկետի ինստիտուտի նպատակն իրավակարգի կայունության, իրավական որոշակիության ու կանխատեսելիության ապահովումն է: Այս ինստիտուտի հիմքում, ի թիվս այլնի, ընկած է այն գաղափարը, որ ժամանակի ընթացքում տվյալ իրավախախտումը, պայմանավորված հասարակական հարաբերություններում տեղի ունեցած փոփոխություններով, կորցնում է իր հանրային վտանգավորությունը:

Մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածը սահմանում էր. «Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, բացառությամբ «Գույքահարկի մասին» և «Հողի

հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի:

Մույն հոդվածի առաջին պարբերության իմաստով հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային պարտավորությունների հաշվարկման առումով խախտման կատարման տարի է համարվում համապատասխան հաշվարկի, հայտարարագրի, հաշվետվության, տեղեկության կամ այլ փաստաթղթի (անկախ դրանց ներկայացման հանգամանքից) հարկային մարմին ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը ներառող օրացուցային տարին:

Մույն հոդվածի առաջին մասով սահմանված վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե հարկ վճարողի, հարկ վճարողի պաշտոնատար անձանց բացակայության կամ խոչընդոտող այլ գործողությունների հետևանքով ստուգման կամ այլ կերպ հարկային պարտավորությունների հաշվարկման հարկային մարմինների փորձը ձախողվել է՝ ձախողման փաստը հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արձանագրվելու պահից: Մույն մասով նախատեսված կասեցման հիմքերի դադարեցումից հետո վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է, եթե հարկային մարմինը կամ հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձը գիտեր կամ կարող էր իմանալ կասեցման հիմքերի դադարեցման մասին (...):»:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նշված կարգավորումների էությանն ու բովանդակությանը, արձանագրել է, որ առաջնորդվելով հարկատուների իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությամբ՝ օրենսդիրը սահմանել է նաև, որ հարկային օրենսդրությամբ հնարավոր է նախատեսել հարկային պարտավորության դադարման այլ դեպքեր: Մասնավորապես՝ հարկային իրավահարաբերություններում կանխատեսելիությունն ապահովելու նպատակով նույն օրենքի 30.1-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է հարկային պարտավորության դադարեցման լրացուցիչ հիմք: Այն դեպքերում, երբ հարկային օրենսդրության խախտումը հայտնաբերվում է կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո, հարկային պարտավորությունը համարվում է դադարած, ուստի անձն ազատվում է համապատասխան հարկային պատասխանատվությունից (*տե՛ս*, ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի Արթիկի քաղաքային հարկային տեսչությունն ընդդեմ «ՎԱ-ԱՐՏ» ՍՊԸ-ի թիվ ՎԳ5/0136/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):

Վերը նշված նորմերից բխում է, որ հարկային օրենսդրության խախտումների համար պատասխանատվության վաղեմության ժամկետի ինստիտուտի իրավակարգավորման հիմնական տարրերն ու էական հատկանիշները հանգում են հետևյալին.

- հարկային օրենսդրության բոլոր խախտումների համար սահմանված է մեկ ընդհանուր վաղեմության ժամկետ՝ երեք տարի,

- միակ բացառությունը, որի վրա Օրենքի 30.1-րդ հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված վաղեմության ժամկետը չի տարածվում, «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված դեպքերն են, այսինքն՝ բացառությունը կատարված է՝ ըստ հարկատեսակի. վաղեմության ժամկետը չի տարածվում միայն գույքահարկի և հողի հարկի գծով ունեցած պարտավորությունների վրա,

- սահմանված է վաղեմության ժամկետի հաշվարկման կարգը. եռամյա ժամկետի հաշվարկման ելակետը իրավախախտումը կատարելու տարին է,

վերջնակետը՝ իրավախախտումը հայտնաբերելու պահը. հստակեցված է «իրավախախտումը կատարելու տարի» հասկացության բովանդակությունը,

- օրենսդիրը որևէ տարբերակում չի կատարել իրավախախտումը հայտնաբերելու եղանակների ու միջոցների միջև,

- սահմանված է վաղեմության ժամկետի կասեցման իրավական հնարավորություն, ինչը դիտարկվում է որպես մասնավոր և հանրային շահերի հավասարակշռման միջոց,

- վաղեմության եռամյա ժամկետի լրանալը հարկային պարտավորությունների դադարման հիմք է և պատասխանատվությունը բացառող հանգամանք:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված վաղեմության եռամյա ժամկետի լրանալու փաստի ուժով դադարում են բոլոր հարկատեսակների գծով հարկային պարտավորությունները բացառությամբ գույքահարկի և հողի հարկի գծով պարտավորությունների: Վաղեմության ժամկետը լրանալուց հետո հարկատուն այլևս ենթակա չէ պատասխանատվության հարկային օրենսդրության ցանկացած խախտման համար (բացառությամբ գույքահարկին ու հողի հարկին առնչվող)՝ անկախ դրա հայտնաբերման եղանակից ու միջոցից:

Օրենքի 5-րդ հոդվածն ամրագրում էր Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ հարկեր վճարելու պարտականությունը: Նույն օրենքի 15-րդ հոդվածը սահմանում էր, ի թիվս այլնի, հարկ վճարողի հետևյալ պարտականությունները՝ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում ինքնուրույն հաշվարկել սահմանված հարկերի գումարները և իրականացնել դրանց վճարումը բյուջե, սահմանված ժամկետում հարկային մարմին ներկայացնել հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ, ժամանակին վճարել օրենքով սահմանված հարկերը՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում սահմանված կարգով կատարելով նաև դրանց կանխավճարային մուծումները:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին պարբերությունը սահմանում էր. «Հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը»:

Օրենքի 16.1-րդ հոդվածի համաձայն՝ «Հարկային պարտավորությունների հաշվառման համար հարկային մարմնում բացվում են անձնական հաշվի քարտեր: (...) Հարկային պարտավորությունները (այդ թվում՝ կանխավճարները և նվազագույն հարկերը) հաշվառվում են օրենքով սահմանված վճարման վերջնաժամկետով (այսինքն՝ տվյալ հարկային պարտավորության վճարման համար օրենքով սահմանված ամսաթվով)՝ անկախ հաշվարկների (հայտարարագրերի, հաշվետվությունների) ներկայացման ամսաթվից (...): Հարկային մարմին հաշվարկները (հայտարարագրերը, հաշվետվությունները, հաշվեկշիռները) ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո (...):»:

Ըստ Օրենքի 21-րդ հոդվածի՝ հարկային օրենսդրության խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով: Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին պարբերության



համաձայն՝ հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները և դրանց (...) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

Օրենքի՝ «Պատասխանատվությունը հարկային օրենսդրությունը խախտելու համար» վերտառությամբ 4-րդ գլխում ներառված 23-րդ հոդվածը որպես հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու համար պատասխանատվության միջոց սահմանում էր տույժերի վճարումը՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 տոկոսի չափով: Նշված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում՝ նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Վերոհիշյալ նորմերից բխում է, որ հարկային օրենսդրության խախտում է, ի թիվս այլի, հարկատուի կողմից հաշվարկված և հարկային մարմին ներկայացված հաշվարկներում, հաշվետվություններում և անձնական հաշվի քարտում արտացոլված հարկերի գումարներն օրենքով սահմանված ժամկետում չվճարելը, ինչի համար որպես հարկային պատասխանատվության միջոց կիրառվում են օրենքով սահմանված չափով տույժեր:

Հաշվի առնելով, որ օրենսդիրը Օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված՝ պատասխանատվության վաղեմության ժամկետը կիրառելի է համարել հարկային օրենսդրության ցանկացած խախտման նկատմամբ՝ բացառությամբ գույքահարկի և հողի հարկի առնչությամբ խախտումների՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վաղեմության եռամյա ժամկետը տարածվում է նաև հարկատուի կողմից հաշվարկված, հարկային մարմին ներկայացված հաշվարկներում, հաշվետվություններում և անձնական հաշվի քարտում արտացոլված հարկերի գումարներն օրենքով սահմանված ժամկետում չվճարելու ձևով դրսևորվող հարկային օրենսդրության խախտման նկատմամբ: Այսինքն՝ հարկատուի կողմից հաշվարկված, հարկային մարմին ներկայացված հաշվարկներում, հաշվետվություններում և անձնական հաշվի քարտում արտացոլված հարկային պարտավորությունները ևս դադարում են վաղեմության եռամյա ժամկետի լրանալու փաստի ուժով:

Գործնականում հարկային պատասխանատվության վաղեմության եռամյա ժամկետի կիրառման տեսանկյունից հատկապես կարևորվում է այդ ժամկետի հաշվարկման ելակետի և հարկային օրենսդրության խախտումը հայտնաբերելու պահի ճիշտ ընտրությունը:

Ըստ Օրենքի 30.1-րդ հոդվածի առաջին պարբերության՝ եռամյա ժամկետի հաշվարկման ելակետը տվյալ խախտումը կատարելու տարին է:

Օրենսդիրը, նպատակ ունենալով իրավակիրառ պրակտիկայում ապահովել իրավական որոշակիություն, հստակեցրել է նաև «խախտման կատարման տարի» հասկացության բովանդակությունը: Խախտման կատարման տարի է համարվում համապատասխան հաշվարկի, հայտարարագրի, հաշվետվության, տեղեկության կամ այլ փաստաթղթի (անկախ դրանց ներկայացման հանգամանքից)՝ հարկային մարմին ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը ներառող օրացուցային տարին: Օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ պարբերության

համաձայն՝ հարկ վճարողներն իրենց տնտեսական կամ ձեռնարկատիրական կամ այլ գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և այլ փաստաթղթերը ներկայացնում են «Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, իսկ օրենքներով նախատեսված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ՀՀ վճարեկ դատարանն այս առնչությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ վաղեմության ժամկետի հաշվարկման համար ելակետ է ընդունվում հարկային օրենսդրության խախտումը կատարելու տարին (ժամկետը հաշվարկվում է իրավախախտման կատարման տարվան հաջորդող տարվանից): Հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջադրման վաղեմության ժամկետների վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանված ընդհանուր կանոնը հետևյալն է. հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե հարկային օրենսդրության տվյալ խախտումը հայտնաբերվել է այն ժամանակ, երբ լրացած է եղել այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարվա ժամկետը: Այսինքն՝ հարկային օրենսդրության խախտման համար հարկային պարտավորությունների առաջացման վաղեմության ժամկետն ընդգրկում է տվյալ իրավախախտման կատարման տարվան անմիջապես հաջորդող երեք օրացուցային տարիները. այդ տարիներն անցնելուց հետո հայտնաբերված իրավախախտման համար հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ (*Կրե՛ս, Երվանդ Ոսկանյանն ընդդեմ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թիվ ՎԳ/0721/05/15 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

Այսպիսով, հաշվի առնելով, որ հարկային օրենսդրությամբ տարբեր հարկատեսակների մասով հաշվարկ, հայտարարագիր, հաշվետվություն, տեղեկություն կամ այլ փաստաթուղթ ներկայացնելու համար սահմանված են տարբեր ժամկետներ՝ վաղեմության ժամկետի հաշվարկման ելակետը որոշելու համար նախևառաջ հարկ է պարզել, թե որն է համապատասխան հաշվարկը, հայտարարագիրը, հաշվետվությունը, տեղեկությունը կամ այլ փաստաթուղթը ներկայացնելու համար օրենքով սահմանված վերջնաժամկետը: Եթե, օրինակ, տվյալ հաշվարկը ներկայացնելու վերջնաժամկետը 15.04.2018 թվականն է, ապա եռամյա ժամկետի հոսքն սկսվում է նշված վերջնաժամկետն ընդգրկող օրացուցային տարվան՝ 2018 թվականին հաջորդող տարվա սկզբից՝ 01.01.2019 թվականից:

Օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված վաղեմության եռամյա ժամկետի ավարտը հարկային օրենսդրության տվյալ խախտումը հարկային մարմնի կողմից հայտնաբերելու պահն է:

Վճարեկ դատարանը, հաշվի առնելով, որ Օրենքի 30.1-րդ հոդվածում օրենսդիրը որևէ տարբերակում չի կատարել հարկային օրենսդրության այս կամ այն խախտումը հայտնաբերելու եղանակների ու միջոցների միջև, արձանագրում է, որ նշված նորմով սահմանված վաղեմության ժամկետի կիրառումը չի սահմանափակվում միայն այն դեպքերով, երբ խախտումը հայտնաբերվում է հարկային հսկողության արդյունքում՝ հարկային հսկողության եղանակների ստուգումների կամ ուսումնասիրությունների միջոցով: Համեմատության մեջ հարկ է նկատել, որ ի տարբերություն սույն գործով կիրառելի Օրենքի 30.1-րդ հոդվածի՝ ներկայումս գործող ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածը հարկային պատասխանատվության վաղեմության ժամկետի կիրառումը սահմանափակել

է հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված խախտումներով՝ օգտագործելով «հարկային հսկողության արդյունքում Օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում» ձևակերպումը:

ՀՀ վճարեկ դատարանը թիվ 3-1586(ՏԴ) քաղաքացիական գործով 10.10.2007 թվականի որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ Օրենքի 30.1-րդ հոդվածը կիրառելի է ոչ միայն հարկային օրենսդրությանը սահմանված ընթացակարգերով անցկացվող ստուգումների արդյունքում հայտնաբերված հարկային պարտավորությունների նկատմամբ: ՀՀ վճարեկ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի նշված դրույթը կիրառման որևէ բացառություն չի նախատեսում՝ ելնելով պարտավորության հայտնաբերման եղանակից, գտել է, որ Օրենքի 30.1-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դրույթը վերաբերում է հարկային պարտավորությունների հայտնաբերման բոլոր դեպքերին՝ առանց բացառության:

Այսպիսով, վերը նշված այն դիրքորոշումների համատեքստում, որ Օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված վաղեմության եռամյա ժամկետը կիրառելի է, ի թիվս այլնի, նաև հարկատուի կողմից հաշվարկված, հարկային մարմին ներկայացված հաշվարկներում, հաշվետվություններում և անձնական հաշվի քարտում արտացոլված հարկերի գումարներն օրենքով սահմանված ժամկետում չվճարելու ձևով դրանորվող՝ հարկային օրենսդրության խախտման նկատմամբ, ինչպես նաև վաղեմության ժամկետի կիրառման տեսանկյունից էական չէ իրավախախտման հայտնաբերման միջոցն ու եղանակը, կարևորվում է հետևյալ հարցադրումը. նշված խախտման դեպքում ո՞րն է խախտումը հայտնաբերելու պահը:

Նշված հարցադրումը Վճարեկ դատարանը նախևառաջ հարկ է համարում դիտարկել հարկային ծառայության խնդիրների ու գործառույթների համատեքստում:

Այսպես, ըստ խնդրո առարկա իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ հարկային ծառայության մարմնի խնդիրներն են, ի թիվս այլնի, հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրության պահանջների խախտումների կանխումը, խափանումը, այդ խախտումների բացահայտումը, հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների չկատարման հետևանքով Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած պարտավորությունների մարման գծով աշխատանքների իրականացումը: Նույն օրենքի 7-րդ հոդվածը որպես հարկային ծառայության կազմակերպման սկզբունք էր ամրագրում հարկային ծառայությունն արդյունավետ կազմակերպելու սկզբունքը: Նույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը, ի թիվս այլնի, որպես հարկային ծառայության գործառույթ էր սահմանում հարկերի և պարտադիր այլ վճարների հավաքման կազմակերպումը:

Մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի առաջին պարբերությունը սահմանում էր. «Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս»:

Հիմք ընդունելով հարկային ծառայության վերը նշված խնդիրները,

գործառույթներն ու գործունեության սկզբունքները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որջամտորեն գործում է այն կանխավարկածը, որ հարկային մարմինը ձեռնամուխ է լինում հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների չկատարման հետևանքով Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների նկատմամբ առաջացած պարտավորությունների մարման գծով աշխատանքների իրականացմանը, մասնավորապես, հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշման կայացմանը, չվճարման փաստը հայտնաբերելուն պես: Հակառակ դեպքում, կատացվի, որ հարկային մարմինը գործել է՝ ի խախտումն հարկային ծառայության արդյունավետ կազմակերպման սկզբունքի և պատշաճ կերպով չի իրականացրել իր գործառույթներն ու լիազորությունները:

Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «հայտնաբերել» եզրույթն ինքնին ենթադրում է ակտիվ վարքագիծ, կոնկրետ գործողությունների ձեռնարկում, որոնց արդյունքում վեր է հանվում իրավախախտման փաստը: Էդուարդ Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» «հայտնաբերել» եզրույթը բացատրվում է որպես «հայտնի դարձնել», «երևան բերել», «բացահայտել», «պարզել»:

Ըստ այդմ՝ ելնելով հարկային մարմնի վարքագծի իրավաչափության, այն է՝ հարկային մարմնի կողմից իր գործառույթներն ու լիազորությունները պատշաճ և ժամանակին իրացնելու կանխավարկածից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկատուի կողմից հաշվարկված, հարկային մարմին ներկայացված հաշվարկներում, հաշվետվություններում և անձնական հաշվի քարտում արտացոլված հարկերի գումարներն օրենքով սահմանված ժամկետում չվճարելու ձևով դրսևորվող հարկային օրենսդրության խախտումը հայտնաբերելու պահ է հանդիսանում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ որոշում կայացնելուն ուղղված վարչական վարույթ հարուցելու պահը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է. «1. Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը.

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը: (...)

3. Սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը»:

Վերը նշված նորմերի բովանդակությունից բխում է, որ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը մեկնարկում է վարչական մարմնի այն գործողության կատարմամբ, որը նպատակամղված է վարչական ակտի ընդունմանը: Այլ կերպ՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցված լինելու փաստի մասին վկայում է այն գործողությունը, որի կատարմամբ վարչական մարմինն արտահայտում է վարչական ակտ ընդունելու իր նպատակը:

Ի ամփոփումն վերոշարադրյալի՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկատուի կողմից հաշվարկված, հարկային մարմին ներկայացված հաշվարկներում, հաշվետվություններում և անձնական հաշվի քարտում արտացոլված հարկերի գումարներն օրենքով սահմանված ժամկետում չվճարելու ձևով դրսևորված հարկային օրենսդրության խախտումը հայտնաբերված է

համարվում այն օրը, երբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ հարուցում է չվճարված գումարների գանձման վերաբերյալ որոշում ընդունելու նույնպես վարչական վարույթ, այն է՝ կատարում է այնպիսի գործողություն (գործողություններ), որը (որոնք) նպատակամղված է (են) այդ վարչական վարույթի հարուցմանը: Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում նման գործողությունը (գործողությունները) կարող է(են) տարբեր դրսևորումներ ունենալ՝ սույն դեպքում չվճարված հարկերի գումարները գանձելու վերաբերյալ որոշում ընդունելու նույնպես վարույթ հարուցվելու հանգամանքի մասին է վկայում ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջն ուղղված ծանուցագիրը, որի բովանդակությունից աներկբա է, որ վարչական մարմնի նախաձեռնությամբ այլևս հարուցված է վարչական վարույթ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ խնդրո առարկա խախտման հայտնաբերումը համապատասխան հաշվետվություններն ու հաշվարկները հարկային մարմին ներկայացնելու և դրանցում արտացոլված գումարներն օրենքով սահմանված ժամկետում վճարված չլինելու պահով պայմանավորելու դեպքում (սա է սույն գործով ՀՀ վարչական դատարանի իրավական դիրքորոշումը) հարկային մարմնին ժամանակի մեջ անսահմանափակ հնարավորություն կտրվի չվճարված գումարները գանձել հարկատուից, որպիսի պարագայում չի իրացվի Օրենքի 30.1-րդ հոդվածով հետապնդվող իրավական նպատակը, այն է՝ հարկատուի համար ապահովել որոշակի և կանխատեսելի դրություն: Ավելին, գործնականում կբացառվի նշված հոդվածով սահմանված պատասխանատվության վաղեմության ժամկետի կիրառումը խնդրո առարկա խախտման նկատմամբ, մինչդեռ նշված նորմը կիրառելի է հարկային օրենսդրության բոլոր խախտումների նկատմամբ (բացառությամբ գույքահարկին ու հողի հարկին առնչվողների):

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված վաղեմության եռամյա ժամկետը լրացած է համարվում, եթե վարչական վարույթը հարուցվում է տվյալ հարկատեսակի առնչությամբ հաշվետվություն, հաշվարկ կամ այլ փաստաթուղթ հարկային մարմին ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը ներառող օրացուցային տարվան հաջորդող տարվա առաջին օրվանից հաշված երեք տարին գերազանցող ժամանակահատվածից հետո:

Պատասխանատվության վաղեմության ժամկետ էր սահմանված նաև իրավահարաբերության ծագման պահին գործող և 01.01.2013 թվականին ուժը կորցրած «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով, ըստ որի՝ «(...) Սույն օրենքի խախտումներ հայտնաբերելու դեպքում սոցիալական վճարների գծով պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան հաջորդող երեք տարի հետո: Սույն մասով սահմանված վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե ապահովադրի, դրա պաշտոնատար անձանց բացակայության կամ խոչընդոտող այլ գործողությունների հետևանքով ստուգման կամ այլ կերպ սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման լիազոր մարմնի փորձը ձախողվել է՝ ձախողման փաստը լիազոր մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից արձանագրելու պահից: Սույն մասով նախատեսված կասեցման հիմքերի դադարումից հետո վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է, եթե լիազոր մարմինը կամ

դրա համապատասխան պաշտոնատար անձը գիտեր կամ կարող էր իմանալ կասեցման հիմքերի դադարման մասին (...)»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն որոշմամբ արտահայտված բոլոր իրավական դիրքորոշումները հավասարապես վերաբերում են նաև իրավահարաբերության ծագման պահին գործող և 01.01.2013 թվականին ուժը կորցրած «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վաղեմության եռամյա ժամկետի կիրառմանը:

***Վերը նշված դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել Կոմիտեի 26.12.2017 թվականի թիվ 3640/06 որոշումը:

**Դատարանը** հայցի մերժման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ սոցիալական ապահովության վճարների եռամյակային հաշվետվությունների, գործատուների պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվետվությունների, եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի ամսական ամփոփ հաշվարկների ներկայացնելու պահից հարկային մարմինը ստացել է տեղեկություններ՝ Ընկերության հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ, այսինքն՝ համապատասխան խախտումը հայտնաբերվել է հաշվետվություններն ու հաշվարկները ներկայացված լինելու և այդ հաշվարկներով առաջացած գումարը օրենքով սահմանված ժամկետում վճարված չլինելու պահից:

Դատարանը գտել է, որ հայցվորի կողմից թույլ տրված խախտման և այն հարկային մարմնի կողմից հայտնաբերելու միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցել երեք տարին, հետևապես տվյալ իրավահարաբերության նկատմամբ կիրառելի չեն իրավահարաբերությունների ծագման պահին գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները:

**Վերաքննիչ դատարանը**, բավարարելով Ընկերության վերաքննիչ բողոքը, արձանագրել է, որ հայցվորի կողմից հարկային հաշվարկներ ներկայացնելն ինքնին բավարար չէ՝ հաստատված համարելու, որ պատասխանողի կողմից հարկային իրավախախտման փաստը հայտնաբերվել է հարկային հաշվարկները ներկայացնելու պահին՝ այն հանգամանքի հաշվառմամբ, որ պատասխանողի կողմից իրավախախտման կատարման փաստը հայտնաբերելը Վերաքննիչ դատարանի գնահատմամբ պետք է ուղեկցվի վարչական մարմնի կողմից օրենքով վերջինիս վերապահված լիազորությունների կատարմամբ: (...) Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրության առարկա դարձնելով վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի նյութերը, նկատել է, որ նախքան 23.11.2017 թվականը՝ Կոմիտեի հարկադիր գանձումների բաժնի աշխատակցի կողմից հայցվորին ծանուցագիր ուղարկելը, առկա չէ որևէ ապացույց, որով կհաստատվի սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքն առ այն, որ պատասխանողի կողմից հայցվորին վերագրվող իրավախախտումը հայտնաբերվել է ավելի վաղ, քան 23.11.2017 թվականը: Միաժամանակ, Դատարան ներկայացված՝ 15.05.2018 թվականի դրությամբ հայցվոր ընկերության եկամտային հարկի գծով անձնական հաշվի քարտերի ուսումնասիրությանից պարզ է դառնում, որ այն ևս չի պարունակում որևէ տվյալ առ այն, որ հայցվորին

վերագրվող իրավախախտումը հայտնաբերվել է Օրենքի 30.1-րդ հոդվածով ամրագրված ժամկետի պահպանմամբ:

Տվյալ դեպքում, հայցվոր Ընկերությանն առաջադրված պարտավորության վերջին ժամանակահատվածը ներառում է 2014 թվականի մարտ ամիսը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատասխանողի կողմից հայցվոր ընկերության կողմից հարկերը ժամանակին չվճարելու իրավախախտումը հայտնաբերվել է 23.11.2017 թվականին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ եկամտային հարկի գծով հարկային պարտավորությունն առաջադրվել է Օրենքի 30.1-րդ հոդվածով ամրագրված տույժ նշանակելու համար նախատեսված վաղեմության 3 տարվա ժամկետի խախտմամբ:

Վերաքննիչ դատարանը, ղեկավարվելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով, փաստել է նաև, որ սոցիալական ապահովության վճարների մասով առաջադրված պարտավորությունների մասով ևս բաց է թողնվել վաղեմության եռամյա ժամկետը:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի 26.12.2017 թվականի թիվ 3640/06 որոշմամբ արձանագրվել է, որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորությունները 13.12.2017 թվականի դրությամբ կազմել են 789.667 ՀՀ դրամ, որից ապառք՝ 486.728 ՀՀ դրամ, տույժ՝ 302.939 Հ դրամ: Միաժամանակ արձանագրվել է, որ նշված 789.667 ՀՀ դրամ գումարից 473.632 ՀՀ դրամը սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորություն է, որից 282.500 ՀՀ դրամ ապառքի գումարն առաջացել է 2010 թվականի 3-րդ, 4-րդ, 2011-2012 թվականների 1-4-րդ եռամսյակների գործատուների պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկներից, 191.132 ՀՀ դրամ տույժի գումարը հաշվարկվել է՝ համաձայն «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, իսկ 316.035 ՀՀ դրամը եկամտային հարկի գծով պարտավորություն է, որից 204.228 ՀՀ դրամ ապառքի գումարն առաջացել է 2013 թվականի հունվար ամսից 2014 թվականի մարտ ամիսների եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկներից, 111.807 ՀՀ դրամ տույժի գումարը հաշվարկվել է՝ համաձայն Օրենքի 23-րդ հոդվածի: Նույն որոշմամբ որոշվել է Ընկերությունից գանձել 789.667 ՀՀ դրամ պարտավորության գումար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկվող որոշմամբ եզրափակված վարչական վարույթը հարուցելուն ուղղված՝ Կոմիտեի նախաձեռնությունը դրսևորվել է 23.11.2017 թվականի ծանուցագիրը հայցվորին ուղարկելով, որով Ընկերությունն իրագեկվել է, որ վերջինս 23.11.2017 թվականի դրությամբ ունի 789.667 ՀՀ դրամ չկատարված պարտավորություն և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ հարուցվել է վարչական վարույթ Ընկերության չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 113**): Հետևաբար, սույն դեպքում Օրենքի 30.1-րդ հոդվածով և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պատասխանատվության վաղեմության ժամկետը կարող է լրացած համարվել, եթե վարչական վարույթը հարուցվել է (ըստ հարկատեսակների) հաշվարկ կամ հաշվետվություն ներկայացնելու համար օրենքով սահմանված

ժամկետի վերջին օրն ընդգրկող օրացուցային տարրուն հաջորդող տարվա առաջին օրվանից հաշված երեք տարին գերազանցող ժամանակահատվածում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ սույն դեպքում Օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված վաղեմության ժամկետի լրացած լինելու ուժով եկամտային հարկի գծով պարտավորություններ չէին կարող առաջադրվել միայն 2013 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների համար, իսկ 2013 թվականի դեկտեմբեր-2014 թվականի մարտ ամիսների եկամտային հարկի գծով պարտավորությունների առնչությամբ վաղեմության ժամկետն իրավախախտումը հայտնաբերելու պահի դրությամբ՝ 23.11.2017 թվականին, դեռևս լրացած չէր, ուստի 2013 թվականի դեկտեմբեր-2014 թվականի մարտ ամիսների եկամտային հարկի գծով պարտավորությունների առաջադրումն իրավաչափ էր:

Այսպես, իրավահարաբերության ծագման պահին գործող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել եկամտային հարկի ամփոփ հաշվարկ:

Ըստ այդմ՝ 2013 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների համար եկամտային հարկի հաշվարկները ներկայացնելու վերջին օրը համապատասխանաբար 20.02.2013, 20.03.2013, 20.04.2013, 20.05.2013, 20.06.2013, 20.07.2013, 20.08.2013, 20.09.2013, 20.10.2013, 20.11.2013 և 20.12.2013 թվականներն էին, այսինքն՝ նշված ժամանակահատվածի մասով խախտումն ընդգրկող օրացուցային տարին 2013 թվականն էր, իսկ վաղեմության եռամյա ժամկետի հաշվարկի սկիզբը՝ 01.01.2014 թվականը: Հետևաբար, հաշվի առնելով, որ 2013 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների համար եկամտային հարկի գծով պարտավորությունների առնչությամբ 01.01.2014 թվականից մինչև վերը նշված ծանուցագրի թվագրման օրը՝ 23.11.2017 թվականն ընկած ժամանակահատվածը գերազանցել է երեք տարին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վաղեմության ժամկետն անցնելու փաստի ուժով 2013 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների համար եկամտային հարկի գծով պարտավորություններ չէին կարող առաջադրվել:

Մինչդեռ 2013 թվականի դեկտեմբեր-2014 թվականի մարտ ամիսների համար եկամտային հարկի հաշվարկները ներկայացնելու վերջին օրը համապատասխանաբար 20.01.2014, 20.02.2014, 20.03.2014 և 20.04.2014 թվականներն էին, այսինքն՝ խախտումն ընդգրկող օրացուցային տարին 2014 թվականն էր, իսկ եռամյա ժամկետի հաշվարկի սկիզբը՝ 01.01.2015 թվականը: Հետևաբար, հաշվի առնելով, որ 2013 թվականի դեկտեմբեր-2014 թվականի մարտ ամիսների եկամտային հարկի գծով պարտավորությունների առնչությամբ 01.01.2015 թվականից մինչև վերը նշված ծանուցագրի թվագրման օրը՝ 23.11.2017 թվականն ընկած ժամանակահատվածը չի գերազանցել երեք տարին՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վաղեմության ժամկետը 2013 թվականի դեկտեմբեր-2014 թվականի մարտ ամիսների եկամտային հարկի առնչությամբ դեռևս լրացած չէր, և այդ ժամանակահատվածի մասով եկամտային հարկի գծով պարտավորությունների առաջադրումն իրավաչափ է:

Իրավահարաբերության ծագման պահին գործող և 01.01.2013 թվականին ուժը կորցրած «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «գործատուները հաշվետու եռամսյակի համար լիազորված մարմին են ներկայացնում օրենսդրությամբ սահմանված ձևով սոցիալական վճարների եռամսյակային հաշվետվություն (ամսական



կտրվածքով՝ մինչև այդ եռամսյակին հաջորդող առաջին ամսվա 20-ը (ներառյալ)...)»:

Ըստ այդմ՝ 2010 թվականի 3-րդ, 4-րդ, 2011-2012 թվականների 1-ին, 2-րդ 3-րդ և 4-րդ եռամսյակների սոցիալական վճարների եռամսյակային հաշվետվությունները ներկայացնելու վերջին օրը համապատասխանաբար 20.10.2010, 20.01.2011, 20.04.2011, 20.07.2011, 20.10.2011, 20.01.2012, 20.04.2012, 20.07.2012, 20.10.2012 և 20.01.2013 թվականներն էին, որպիսի պարագայում Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ սոցիալական վճարների մասով առաջադրված պարտավորությունների մասով 23.11.2017 թվականին խախտումը հայտնաբերելու պահի դրությամբ լրացած է եղել իրավահարաբերության ծագման պահին գործող և 01.01.2013 թվականին ուժը կորցրած «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված վաղեմության եռամսյա ժամկետը:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Օրենքի 30.1-րդ հոդվածի և իրավահարաբերության ծագման պահին գործող և 01.01.2013 թվականին ուժը կորցրած «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի խախտման հիմնավորմամբ ոչ իրավաչափ են համապատասխանաբար 2013 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների համար եկամտային հարկի մասով առաջադրված պարտավորությունները, ինչպես նաև 2010 թվականի 3-րդ, 4-րդ, 2011-2012 թվականների 1-ին, 2-րդ 3-րդ և 4-րդ եռամսյակների սոցիալական վճարների գծով առաջադրված պարտավորությունները: Ըստ այդմ՝ Վերաքննիչ դատարանը բողոքարկվող դատական ակտով վիճարկվող որոշումն անվավեր ճանաչելով նաև 2013 թվականի դեկտեմբեր-2014 թվականի մարտ ամիսների համար եկամտային հարկի գծով առաջադրված պարտավորությունների մասով՝ թույլ է տվել Օրենքի 30.1-րդ հոդվածի խախտում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորի կամ բողոք բերողի պահանջները բավարարվում են մասամբ, ապա հաշվանցման եղանակով դատարանը կարող է հայցվորին, բողոք բերողին և պատասխանողին փոխադարձաբար ազատել դատական ծախսերի հատուցումից կամ համաչափորեն բաշխել դատական ծախսերը նրանց միջև: Իսկ նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ երրորդ անձինք դատական ծախսերի հատուցման պարտականությունը կարող են կրել միայն այն դեպքում, եթե նրանց գործողությունների կամ անգործության (ներառյալ՝ դատավարական) հետևանքով առաջացել են դատական ծախսեր:

Հաշվի առնելով, որ Ընկերության վճռաբեկ բողոքը եկթակա է բավարարման մասնակիորեն, ինչի արդյունքում հայցը բավարարվում է մասնակիորեն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է լուծվի հետևյալ կերպ.

Ընկերությունը հայցադիմում և վերաքննիչ բողոք ներկայացնելու համար վճարել է համապատասխանաբար 4.000 ՀՀ դրամ և 10.000 ՀՀ դրամ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցադիմումի և վերաքննիչ բողոքի համար սահմանված պետական տուրքի վճարման պարտականությունը պետք է համաչափորեն դրվի միաժամանակ թե՛ Ընկերության և թե՛ Կոմիտեի վրա: Վճռաբեկ դատարանը, նպատակ ունենալով համաչափորեն բաշխել նշված դատական ծախսերը, եզրակացնում է, որ պատասխանող Կոմիտեն պարտավոր է Ընկերությանը հատուցել հայցադիմումի և վերաքննիչ բողոքի համար վերջինիս կողմից արդեն իսկ վճարված համապատասխանաբար 4.000 ՀՀ դրամ պետական տուրքի կեսը՝ 2.000 ՀՀ դրամը, և 10.000 ՀՀ դրամ պետական տուրքի կեսը՝ 5.000 ՀՀ դրամ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերությունը պարտավոր է Կոմիտեին հատուցել վճռաբեկ բողոքի համար Կոմիտեի կողմից վճարված 20.000 ՀՀ դրամ պետական տուրքի կեսը՝ 10.000 ՀՀ դրամ:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**ՈՐՈՇԵՑ**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.10.2020 թվականի որոշումը և այն փոփոխել. հայցը բավարարել մասնակիորեն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 26.12.2017 թվականի թիվ 3640/06 որոշումն անվավեր ճանաչել սոցիալական ապահովության վճարների և 2013 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների համար եկամտային հարկի գծով առաջադրված պարտավորությունների մասով: Մնացած մասով հայցը մերժել:

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեից հոգուտ «Անտիպա» ՍՊԸ-ի բռնագանձել 2.000 ՀՀ դրամ և 5.000 ՀՀ դրամ՝ որպես համապատասխանաբար հայցադիմումի և վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի համաչափ բաշխման արդյունքում հատուցման ենթակա գումար:

«Անտիպա» ՍՊԸ-ից հոգուտ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի համաչափ բաշխման արդյունքում հատուցման ենթակա գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ**

**16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/9799/05/18  
**2022թ.**

Վարչական գործ թիվ

ՎԴ/9799/05/18

Նախագահող դատավոր՝

Ա. Բարսյան

Դատավորներ՝

Կ. Մաթևոսյան

Ա. Առաքելյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող և զեկուցող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ք. ՄԿՈՅԱՆ

2022 թվականի նոյեմբերի 03-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈւՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.04.2021 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ «Երևանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկության գործով կառավարիչ Գագիկ Բարխուդարյանի հայցի ընդդեմ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, երրորդ անձ՝ Կազմակերպություն՝ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Գագիկ Բարխուդարյանը պահանջել է անվավեր ճանաչել Կազմակերպության 13.06.2018 թվականի Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա թիվ 125/4 հասցեում գտնվող գործարանի նկատմամբ կատարված անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Խանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 25.12.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.04.2021 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Գագիկ Բարխուդարյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 25.12.2019 թվականի վճիռը բեկանվել ու փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Վերաքննիչ դատարանի նախագահող դատավոր Ա. Բարայանը սույն գործով ներկայացրել է հատուկ կարծիք:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը (ի պաշտոնե ներկայացուցիչ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 15-րդ, 249-րդ և 250-րդ հոդվածները, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 27-րդ և 40-րդ հոդվածները, «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 39.1-րդ և 39.2-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պարզապես անհաստատել է հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վարչական մարմինը նոտարական կարգով կնքված պայմանագրին վստահելու իրավունք ունի այնքան ժամանակ, քանի դեռ այն անվավեր չի ճանաչվել որևէ դատարանի կողմից, և միայն դրա անվավեր ճանաչումը կարող է հանգեցնել պետական գրանցման անվավերության: Տվյալ դեպքում կադաստրն ունեցել է նոտարի կողմից վավերացված պայմանագրին վստահելու լիարժեք իրավունք, ինչպես նաև օրինական ակնկալիք, որ այն կատարվել է իրավաչափորեն իրականացված բռնագանձման գործընթացի հիման վրա և հաջորդել է դրան:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ այն պարագայում, երբ հիմնական պարտավորության դիմաց գույքն ի սեփականություն ընդունելու գործընթացը կատարվում է նոտարական վավերացմամբ կնքված պայմանագրի հիմքով, ապա իրավահաստատող փաստաթուղթ կադաստրի համար պետք է հանդիսանա հենց այդ պայմանագիրը, քանի որ նոտարը համապատասխան պայմանագիրը վավերացնելիս ստուգել է դրա իրավաչափությունը, նոտարական գործում հավաքագրել տվյալ գործարքի հիմք հանդիսացող փաստաթղթերի բնօրինակները և գնահատել դրանք, ու մերժման հիմք չհայտնաբերելով՝ այն վավերացրել:

Վերաքննիչ դատարանն անտեսել է նաև, որ նոտարի կողմից պայմանագիրը վավերացնելիս տվյալ գործընթացի իրավաչափությունը հաստատելու համար Կազմակերպությունը նոտարի պահանջով նրան է ներկայացրել բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ նաև բռնագանձման ծանուցումների բնօրինակները, որոնք կցվել են նոտարական գործին և դրանց առկայության պայմաններում է նոտարն իրավասու եղել վավերացնել պայմանագիրը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև, որ միայն բռնագանձման ծանուցումը ոչ իրավաչափ ճանաչելը կամ առուվաճառքի պայմանագրին անվավեր ճանաչելը կարող են հանգեցնել պետական գրանցման անվավերության: Բռնագանձման գործընթացի ենթադրյալ ոչ իրավաչափությունը չէր կարող քննարկման առարկա դառնալ Վերաքննիչ դատարանի կողմից, և նաև դրա հիմքով անվավեր ճանաչվել պետական գրանցումը. այդ հիմքով պետք է

նախ անվավեր ճանաչվեր առուվաճառքի պայմանագիրը, քանի որ այն կնքվել է բռնագանձման ծանուցումը պատշաճ իրականացնելու հիմքով:

Ավելին, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, քննելով թիվ ԵԿԴ/1315/02/17 քաղաքացիական գործն ըստ հայցի «Երևանի Կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ի ընդդեմ Երևանի «Ադամանդ» Ապրանքա-Հումքային Բորսա ՓԲԸ-ի և Կորպորացիայի՝ աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի մասին, 19.10.2018 թվականի վճռով հայցը մերժել է: Նշված հայցի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ իբրև Կորպորացիայի կողմից իրեն ուղարկված որևէ բռնագանձման ծանուցում չի ստացվել: Նույն գործի քննության ժամանակ դատարանի կողմից էական է համարվել «Հայփոստ» ՓԲԸ-ի տնօրենի 09.06.2017 թվականի թիվ 2/3-2475 գրությունը, որն ապացույցների համադրության մեջ գնահատման արժանացնելու արդյունքում դատարանը հաստատված է համարել, որ «Երևանի Կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ի կողմից բռնագանձման որևէ ծանուցում ստացված չլինելու փաստարկն անհիմն է, իսկ «Հայփոստ» ՓԲԸ-ի տնօրենի հիշյալ գրությունը վերաբերում է «Երևանի Կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ին ուղարկված բռնագանձման ծանուցումն ստացված լինելու փաստի առկայությանը: Դատարանը հայցը մերժել է և բռնագանձման վերաբերյալ պատշաճ ծանուցված լինելու փաստը հաստատել է՝ հիմք ընդունելով նաև օրինական ուժի մեջ մտած վերը նշված վճիռը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 19.04.2021 թվականի որոշումը և փոփոխել այն, կայացնել նոր դատական ակտ՝ վերաքննիչ բողոքը մերժելու մասին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Վարկատու «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի (Կազմակերպության իրավանախորդն է) և վարկառու Ընկերության միջև 05.12.2014 թվականին կնքվել է վարկային պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ վարկատուն պարտավորվել է վարկառուին հատկացնել 180.000.000 ՀՀ դրամ գումարի չափով փուլային վարկ՝ նույն պայմանագրում նշված երկու փուլերով (**հատոր 1-ին, գ.թ. 21-26**).

2) Նույն կողմերի միջև 05.12.2014 թվականին կնքվել է նաև անշարժ գույքի հաջորդող գրավի (հիփոթեքի) պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Կազմակերպության և Ընկերության միջև 05.12.2014 թվականին կնքված վարկային պայմանագրով նախատեսված դրամական պարտավորության կատարում ապահովելու համար Ընկերությունը գրավ է դրել Երևանի Շենգավիթ համայնքի Արշակունյաց պողոտայի թիվ 125/4 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 1,06972հա մակերեսով հողամասը, 4.988,7քմ մարկերեսով շենք, շինությունները (**հատոր 1-ին, գ.թ. 28-30**).

3) Պայմանագրի 3.3 կետով Ընկերությունը տվել է իր համաձայնությունն այն մասին, որ Կազմակերպությունն իրավունք ունի վարկային պայմանագրով սահմանված պարտավորություններն իր կողմից չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում պահանջները բավարարելու նպատակով առանց դատարանի դիմելու բռնագանձում տարածել գրավ դրված անշարժ գույքի վրա և իրացնել այն ուղղակի վաճառքի կամ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ պահանջելու անշարժ գույքը վարկային պայմանագրով սահմանված պարտավորության համապատասխան չափի դիմաց

Կազմակերպությանը կամ վերջինիս նշած անձին ի սեփականություն հանձնելու (**հատոր 1-ին, գ.թ. 28-30**).

4) Պայմանագրի հիման վրա Կազմակերպության անվամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում 08.12.2014 թվականին կատարվել է գրավի իրավունքի պետական գրանցում, և տրվել է գույքի նկատմամբ գրավի իրավունքի պետական գրանցման վկայական (**հատոր 2-րդ, գ.թ. 38**).

5) Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.11.2016 թվականի վճռով Արաշ Նուրաթիլյանդարիի դիմումը բավարարվել է, ու Ընկերությունը ճանաչվել է սնանկ (**հատոր 1-ին, գ.թ. 31-33**).

6) 28.12.2016 թվականին Կազմակերպությունն Ընկերությանը գրավոր տեղեկացրել է վարկային պայմանագրով ստանձնած պարտավորության չափի մասին 28.12.2016 թվականի դրությամբ՝ առանձին նշելով հիմնական պարտքի և տույժի գումարների չափը, ու պահանջել է նշված ծանուցումն ստանալուց ոչ ուշ, քան տասը բանկային օրվա ընթացքում կատարել վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական մարում՝ միաժամանակ հայտնելով, որ նշված պարտավորությունը չկատարվելու դեպքում կնախաձեռնի համապատասխան միջոցներ վարկային պայմանագրի կատարման ապահովման միջոց հանդիսացող հիփոթեքի և երաշխավորության պայմանագրերից բխող վարկային կազմակերպության իրավունքներն իրականացնելու համար, այդ թվում՝ գրավ դրված գույքի նկատմամբ դատական կարգով կամ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու գործընթաց: Նշված գործությունը փոստին է հանձնվել 29.12.2016 թվականին (**հատոր 2-րդ, գ.թ. 126-128**).

7) Կազմակերպությունը դիմում է ներկայացրել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկան արտադատական կարգով իրացնել թույլատրելու խնդրանքով: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2017 թվականի «Միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ Կազմակերպության դիմումը բավարարվել է, Ընկերության նկատմամբ հաստատվել է Կազմակերպության պահանջը՝ 170.233.045 ՀՀ դրամի չափով, և վերջինիս թույլատրվել է, պահպանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-252-րդ հոդվածներով սահմանված պայմանները, արտադատական կարգով իրացնել նաև Երևանի Արշակունյաց պողոտայի թիվ 125/4 հասցեում գտնվող անշարժ գույքը (**հատոր 1-ին, գ.թ. 34-42, հատոր 2-րդ, գ.թ. 26-34**).

8) Կազմակերպության, ««Ֆլորես» աճուրդի տուն» ՍՊԸ-ի և «Երևանի «Ադամանդ» Ապրանքա-Հումքային Բորսա» ՓԲԸ-ի միջև 07.02.2014 թվականին կնքված պայմանագրի հիման վրա կազմակերպվել է աճուրդ, որը 06.06.2018 թվականին չի կայացել՝ որևէ մասնակցի կողմից գույքի մեկնարկային գնի ավելացում չկատարվելու պատճառով (**հատոր 2-րդ, գ.թ. 23**).

9) ««Ֆլորես» աճուրդի տուն» ՍՊԸ-ի և Կազմակերպության միջև 08.06.2018 թվականին կնքվել է գույքը հանձնելու մասին պայմանագիր, որով ««Ֆլորես» աճուրդի տուն» ՍՊԸ-ն, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ և 250-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Կազմակերպության ու գրավատուի միջև կնքված Պայմանագիրը, 70.490.000 ՀՀ դրամի դիմաց Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնել է Երևանի Շենգավիթ համայնքի

Արշակունյաց պողոտայի թիվ 125/4 հասցեում գտնվող գործարանը (**հատոր 1-ին, գ.թ. 47-48**).

10) Վերը նշված պայմանագրի հիման վրա 13.06.2018 թվականին Կազմակերպության անվամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում Երևանի Շենգավիթ համայնքի Արշակունյաց փողոցի թիվ 125/4 հասցեում գտնվող գործարանի նկատմամբ կատարվել է սեփականության իրավունքի պետական գրանցում (**հատոր 1-ին, գ.թ. 49**).

11) Թիվ ԵԿԴ/1315/02/17 քաղաքացիական գործով Ընկերությունը հայց է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Երևանի «Ադամանդ» ապրանքահումքային բորսա» ՓԲԸ-ի և Կազմակերպության՝ վերջինիս ու «Երևանի «Ադամանդ» ապրանքահումքային բորսա» ՓԲԸ-ի միջև կնքված աճուրդի անցկացման մասին պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջի մասին՝ հայցի հիմքում դնելով նաև այն, որ Կազմակերպությունը պարտավոր էր Ընկերությանը պատշաճ կերպով հանձնել բռնագանձման ծանուցում, որից հետո միայն երկու ամիս անց նրա մոտ կձագեր գույքը գրավատուի անունից իրացնելու իրավունք, մինչդեռ Կազմակերպությունը, չունենալով գրավատուի անունից գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով իրացնելու իրավունք, կնքել է աճուրդի անցկացման մասին պայմանագիր խախտելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները (**հատոր 2-րդ, գ.թ. 58-63**).

12) Թիվ ԵԿԴ/1315/02/17 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 19.10.2018 թվականի վճռով Ընկերության հայցը մերժվել է: Նշված վճիռը չի բողոքարկվել և 10.12.2018 թվականին մտել է օրինական ուժի մեջ (**հատոր 2-րդ, գ.թ. 58-63**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի կիրառության համապատասխան անդրադառնալ հիփոթեքի առարկայի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում փարսածելու հիմքով իրավունքների պետական գրանցման ստանձնահարկություններին:*

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ողջ ընթացակարգը կարգավորված է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, որի 2-րդ հոդվածով սահմանված են նույն օրենքում օգտագործվող հետևյալ հիմնական հասկացությունները.



**իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր՝** օրենքով սահմանված հիմքերով պետական գրանցման ենթակա իրավունքների ձեռքբերման համար օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի ավարտի իրավական ձևակերպման համար անհրաժեշտ և բավարար գրավոր փաստաթուղթ, այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրեր, պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների անհատական ակտեր, դատական ակտեր, իսկ օրենքի ուժով ճանաչված իրավունքի համար՝ այդ օրենքով նման իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ և բավարար նախապայման հանդիսացող իրավաբանական փաստերը հաստատող գրավոր փաստաթղթեր, **իրավահաստատող փաստաթղթեր՝** իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր և գույքագրման փաստաթղթեր:

**պետական գրանցում՝** նույն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից իրականացման ենթակա պարտադիր գործառույթ, որն ուղղված է պետության կողմից գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման, փոխանցման, դադարման և սահմանափակումների ճանաչման, ինչպես նաև պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների պաշտպանության, անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների հավաքագրման, մատչելիության, օբյեկտիվության, անընդհատության ու միասնականության ապահովմանը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գույքի նկատմամբ սեփականության, օգտագործման, հիփոթեքի, հողամասի կառուցապատման, սերվիտուտի, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ գույքային իրավունքների, այդ թվում՝ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների գրավի ծագման, դադարման, փոխանցման, փոփոխման պետական գրանցումը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար հիմք են հանդիսանում իրավահաստատող փաստաթղթերը, իսկ նույն օրենքի 4-րդ գլխով նախատեսված պետական գրանցման առանձնահատկությունների դեպքերում՝ նաև այդ գլխով սահմանված փաստաթղթերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար իրավահաստատող փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունը կրում են իրավունքի պետական գրանցման համար դիմող անձինք, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային իրավունքների պետական գրանցման համար իրավահաստատող փաստաթղթերի ներկայացման կամ ձեռքբերման պարտականությունը դրված է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների վրա:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 24-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ դիմողը պետք է ներկայանա անձը հաստատող փաստաթղթով և դիմումի հետ ներկայացնի իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ իրավահաստատող փաստաթղթերը, (...):

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը մուտքագրվելուց հետո գրանցող մարմինն ուսումնասիրում է իրավունքի պետական գրանցման համար ներկայացված իրավահաստատող փաստաթղթերը և նույն օրենքով

նախատեսված պետական գրանցման վարույթի կասեցման, դադարեցման կամ պետական գրանցումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում կատարում է իրավունքի պետական գրանցում նույն օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված սովորյալները մատչանում գրառելու միջոցով:

Հիփոթեքի առարկայի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով իրավունքների պետական գրանցում իրականացնելու առանձնահատկությունները սահմանված են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով, որի 1-ին մասի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար գրավառուի կողմից սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը բովանդակող դիմումին կից նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերի հետ պետք է **ներկայացվեն նաև գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը, բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը**, իսկ եթե գրավառու իրավաբանական անձ է, ապա նաև հիփոթեքի առարկան որպես սեփականություն գրավառուին հանձնելու մասին իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով **բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ է համարվում ծանուցման փոստային առաքման անդորրագիրը** կամ ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը, այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի՝ սույն գործով վիճարկվող իրավունքի պետական գրանցումն իրականացնելու պահին գործող խմբագրությամբ 40-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված հիմքով գրավառուի սեփականության իրավունքի պետական գրանցումը, նույն օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված մերժման հիմքերից բացի, **պետք է մերժվի նաև, եթե իրավունքի պետական գրանցման դիմումը ներկայացնելու պահին չի լրացել բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու օրվան հաջորդող երկամսյա ժամկետը**:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է նաև, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն ընդգրկում է նաև սեփականության իրավունքի պետական գրանցումը: Նման գրանցման համար հիմք են հանդիսանում իրավահաստատող փաստաթղթերը, իսկ հիփոթեքի առարկայի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով իրավունքների պետական գրանցման դեպքում՝ նաև **գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը, բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը**, իսկ եթե գրավառու իրավաբանական անձ է, ապա նաև հիփոթեքի առարկան որպես սեփականություն գրավառուին հանձնելու մասին իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը:

Մինևույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար իրավահաստատող փաստաթղթեր

ներկայացնելու պարտականությունը կրում են իրավունքի պետական գրանցման համար դիմած անձինք, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքային իրավունքների պետական գրանցման համար իրավահաստատող փաստաթղթերի ներկայացման կամ ձեռքբերման պարտականությունը դրված է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ վերլուծելով վերը նշված նորմերը, արձանագրել է, որ անշարժ գույքի պետական ռեգիստրի որևէ սպասարկման գրասենյակ ներկայացվող սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը բովանդակող դիմումին կից պետք է ներկայացվի նաև բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը: Ըստ այդմ, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ է համարվում ծանուցման փոստային առաքման անդորրագիրը կամ ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը, այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը: Արտադատական կարգով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ կարող է լինել *և՛ ծանուցման փոստային առաքման անդորրագիրը, և՛ ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը, այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը (տե՛ս, Հարություն Թովմասյանն ընդդեմ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի թիվ ՎԴ/3164/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.05.2021 թվականի որոշումը):*

Գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու և այն իրացնելու կարգի վերաբերյալ համապատասխան իրավակարգավորումներ է նախատեսում նաև ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե՝

1) դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ՝

2) առկա է գրավառուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

Նույն հոդվածի 1.1 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ գույքը հանդիսանում է հաջորդող գրավի առարկա, ի լրումն նույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պայմանների, նոր գրավառուն իրավասու է բռնագանձելու և իրացնելու գրավի առարկան՝ բացառապես նույն օրենսգրքի 236-րդ հոդվածով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառուն գրավոր՝ պատշաճ ձևով ծանուցում է գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): (...) Բռնագանձման

ծանուցումը գրավատուին և պարտապանին (եթե գրավատուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են), իսկ կիրառության դեպքում՝ նաև գրանցում իրականացնող մարմնին հանձնելուց երկու ամիս հետո գրավատուն նույն օրենսգրքի ուժով իրավունք ունի նույն օրենսգրքի 195 հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն և գրավատուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել (...):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 250-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավ դրված գույքն իրացվում (վաճառվում) է հրապարակային սակարկություններով՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով: Նոտարական կարգով վավերացված գրավի պայմանագրով կամ գրավատուի և գրավատուի միջև կնքված ու նոտարական կարգով վավերացված համաձայնությամբ (բացառությամբ նույն օրենսգրքի 252.1-ին հոդվածով նախատեսված դեպքի) կարող է սահմանվել գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) այլ կարգ:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավ դրված գույքի՝ օրենքով սահմանված կարգով իրացման (վաճառքի) ընթացքում, եթե աճուրդը չկայացած է համարվել աճուրդի ընթացքում որևէ մասնակցի կողմից գույքի մեկնարկային գնի ավելացում չկատարվելու պատճառով, գրավատուն յոթ օրվա ընթացքում իրավունք ունի պահանջել գրավ դրված գույքը գրավով ապահովված պարտավորության և իրացման (վաճառքի) փաստացի ծախսերի դիմաց հանձնել իրեն՝ վճարելով գրավ դրված գույքի իրացման (վաճառքի) ծախսերը (...):

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ գրավատուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝ գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց իրեն կամ իր նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու, եթե դա նախատեսված է գրավի պայմանագրով, կամ առկա է գրավատուի և գրավատուի միջև կնքված գրավոր համաձայնություն, իսկ եթե գրավի պայմանագիր կնքելու համար պահանջվել է երրորդ անձի համաձայնություն կամ թույլտվություն, ապա նաև վերջինիս գրավոր համաձայնությունը՝ առանց դատարանի վճռի գրավ դրված գույքի իրացման մասին:

Նշված պայմանները կիրառելի են նաև գույքի՝ հաջորդող գրավի առարկա հանդիսանալու դեպքում, որի ժամանակ ի լրումն այդ պայմանների, նոր գրավատուն իրավասու է բռնագանձելու և իրացնելու գրավի առարկան՝ բացառապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 236-րդ հոդվածով սահմանված կարգով:

Միաժամանակ, օրենսդիրը գրավատուին իրավունք է վերապահել գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում *գրավոր պարզաձև ձևով ծանուցելու գրավարուին և պարտապանին (եթե գրավարուն և պարտապանը տարբեր սուբյեկտներ են) առանց դատարանի դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին*՝ նշված գործողությունը որակելով որպես բռնագանձման ծանուցում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած իր որոշմամբ անդրադառնալով գրավատուի կողմից գրավատուին պատշաճ ձևով ծանուցելու (բռնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջին՝ արձանագրել է, որ այն ինքնանպատակ չէ և ուղղված է գրավատուի այլ իրավունքների իրականացման ապահովմանը:

Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությունը ենթադրում է գրավառուի կողմից գրավատուին՝ վերջինիս կողմից գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու մասին իրազեկելու (ծանուցելու) կապակցությամբ գրավառուի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն պատշաճ: Ընդ որում, անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գրավատուի՝ առանց դատարան դիմելու գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկացնելու փաստը: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությամբ նախատեսված՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի տեղեկանալու իրավունքը և գրավառուի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված գրավառուի իրավունքների ապահովման հետ: Այդ իրավունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գրավատուին ընձեռված է առանց դատարան դիմելու գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկանալու հնարավորություն: Այդ իսկ պատճառով գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի իրազեկումը գրավառուի պարտականությունն է, որի չպահպանման դեպքում վերջինս չի կարող իրականացնել առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իր իրավունքը (*տե՛ս, Վարդան Պետրոսյանն ընդդեմ «Արարար» նուրարական փարածքի նուրար Ալվարդ Հովհաննիսյանի թիվ ՎՊ3/0092/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2010 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ հարկ է համարում ընդգծել, որ գրավառուի կողմից գրավատուին պատշաճ ձևով ծանուցելու (բռնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջն ինքնասպատակ չէ: Այն հետապնդում է գրավատուի այլ իրավունքների իրականացման ապահովման նպատակ, ուստի կարևորվում է ոչ միայն այն հանգամանքը, թե արդյոք ապահովված է բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու և այդ մասին ապացույցն իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմին ներկայացնելու օրենսդրական պահանջը, այլ նաև այն, թե բռնագանձման ծանուցման բովանդակությունն արդյոք ձևակերպված է այնպես, որ գրավատուի համար պարզ լինի, թե ինչ գործընթաց է նախատեսվում իրականացնել: Այլ կերպ ասած, բռնագանձման ծանուցումը պետք է պարունակի բավարար տեղեկատվություն առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու գործընթացի վերաբերյալ, ինչն իրական հնարավորություն կտա գրավատուին լիարժեքորեն իրացնելու իր իրավունքները, ուստի բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու փաստը հաստատված համարելու դեպքում անպայմանորեն պետք է հաստատվի նաև բռնագանձման ծանուցման իրականացվող գործընթացի վերաբերյալ բավարար տեղեկատվություն պարունակելու հանգամանքը, որպիսի պարագայում միայն կարելի է փաստել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) պահանջը պահպանված լինելը:

Ամփոփելով վերոգրյալը և իրացնելով ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածում ամրագրված օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու վճռաբեկ դատարանի առաքելությունը

և այդ առումով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի կապակցությամբ իրավունքի զարգացումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ **բռնագանձման ծանուցման պատճենը գրավատուին հանձնելու, բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը ներկայացնելու պահանջը կարող է բավարարված լինել միայն այն դեպքում, եթե բռնագանձման ծանուցման բովանդակությունը պարունակում է բավարար տեղեկատվություն առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու գործընթացի վերաբերյալ: Այլ կերպ ասած գրավատուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավատուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար գրավատուի կողմից սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջը բովանդակող դիմումին կից «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերի հետ միասին **գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենը, բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը** կարող են բավարար լինել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) պահանջը պահպանված լինելը փաստելու համար միայն այն պարագայում, եթե բռնագանձման ծանուցման բովանդակությունը ձևակերպված լինի այնպես, որ գրավատուի համար պարզ լինի, թե ինչ գործընթաց է նախատեսվում իրականացնել: Ըստ այդմ, իրավունքի պետական գրանցում իրականացնող իրավասու մարմինը գրավատուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավատուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար գրավատուի կողմից սեփականության իրավունքի պետական գրանցման վարույթի ընթացքում, ի թիվս այլնի, պետք է նաև սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գնահատական տա գրավատուի կողմից ներկայացված բռնագանձման ծանուցման բովանդակությանը:**

*Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.*

Սույն գործի փաստերի համաձայն՝ վարկատու «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի (Կազմակերպության իրավանախորդն է) և վարկառու Ընկերության միջև 05.12.2014 թվականին կնքվել է վարկային պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ վարկատուն պարտավորվել է վարկառուին հատկացնել 180.000.000 ՀՀ դրամ գումարի չափով փուլային վարկ՝ նույն պայմանագրում նշված երկու փուլերով: Նույն կողմերի միջև 05.12.2014 թվականին կնքվել է նաև Պայմանագիրը, որի համաձայն՝ Կազմակերպության և Ընկերության միջև 05.12.2014 թվականին կնքված վարկային պայմանագրով նախատեսված դրամական պարտավորության կատարում ապահովելու համար Ընկերությունը գրավ է դրել Երևանի Շենգավիթ համայնքի Արշակունյաց պողոտայի թիվ 125/4 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ 1,06972հա մարկերետով հողամասը, 4,988,7քմ մարկերետով շենք, շինությունները: Պայմանագրի 3.3 կետով Ընկերությունը տվել է իր համաձայնությունն այն մասին,

որ Կազմակերպությունն իրավունք ունի վարկային պայմանագրով սահմանված պարտավորություններն իր կողմից չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում պահանջները բավարարելու նպատակով առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու գրավ դրված անշարժ գույքի վրա և իրացնելու այն ուղղակի վաճառքի կամ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, այդ թվում՝ պահանջելու անշարժ գույքը վարկային պայմանագրով սահմանված պարտավորության համապատասխան չափի դիմաց Կազմակերպությանը կամ վերջինիս նշած անձին ի սեփականություն հանձնելու: Պայմանագրի հիման վրա Կազմակերպության անվամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում 08.12.2014 թվականին կատարվել է գրավի իրավունքի պետական գրանցում, և տրվել է գույքի նկատմամբ գրավի իրավունքի պետական գրանցման վկայական:

Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 29.11.2016 թվականի վճռով Արաշ Նոսրաթիալանդարիի դիմումը բավարարվել է, ու Ընկերությունը ճանաչվել է սնանկ: Դրանից հետո՝ 28.12.2016 թվականին, Կազմակերպությունն Ընկերությանը գրավոր տեղեկացրել է վարկային պայմանագրով ստանձնած պարտավորության չափի մասին 28.12.2016 թվականի դրությամբ՝ առանձին նշելով հիմնական պարտքի և տույժի գումարների չափը, ու պահանջել է նշված ծանուցումն ստանալուց ոչ ուշ, քան տասը բանկային օրվա ընթացքում կատարել վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական մարում՝ միաժամանակ հայտնելով, որ նշված պարտավորությունը չկատարվելու դեպքում կնախաձեռնի համապատասխան միջոցներ վարկային պայմանագրի կատարման ապահովման միջոց հանդիսացող հիփոթեքի և երաշխավորության պայմանագրերից բխող վարկային կազմակերպության իրավունքներն իրականացնելու համար, այդ թվում՝ գրավ դրված գույքի նկատմամբ դատական կարգով կամ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու գործընթաց: Նշված գրությունը փոստին է հանձնվել 29.12.2016 թվականին:

Կազմակերպությունը դիմում է ներկայացրել Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկան արտադատական կարգով իրացնել թույլատրելու խնդրանքով: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2017 թվականի «Միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ, *այսինքն՝ բռնագանձման ծանուցումն ուղարկելուց երկու ամիս հետո*, Կազմակերպության դիմումը բավարարվել է, Ընկերության նկատմամբ հաստատվել է Կազմակերպության պահանջը՝ 170.233.045 ՀՀ դրամի չափով, և վերջինիս թույլատրվել է, պահպանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-252-րդ հոդվածներով սահմանված պայմանները, արտադատական կարգով իրացնել նաև Երևանի Արշակունյաց պողոտայի թիվ 125/4 հասցեում գտնվող անշարժ գույքը:

Կազմակերպության, ««Ֆլորես» աճուրդի տուն» ՍՊԸ-ի և «Երևանի «Ադամանդ» Ապրանքա-Հումքային Բորսա» ՓԲԸ-ի միջև 07.02.2014 թվականին կնքվել է պայմանագիր, որի հիման վրա կազմակերպվել է աճուրդ, որը 06.06.2018 թվականին չի կայացել որևէ մասնակցի կողմից գույքի մեկնարկային գնի ավելացում չկատարվելու պատճառով: Արդյունքում ««Ֆլորես» աճուրդի տուն» ՍՊԸ-ի և Կազմակերպության միջև 08.06.2018 թվականին կնքվել է գույքը հանձնելու մասին պայմանագիր, որով ««Ֆլորես» աճուրդի տուն» ՍՊԸ-ն, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ և 250-րդ հոդվածներով,

հիմք ընդունելով Կազմակերպության ու գրավատուի միջև կնքված Պայմանագիրը, 70.490.000 ՀՀ դրամի դիմաց Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնել է Երևանի Շենգավիթ համայնքի Արշակունյաց պողոտայի թիվ 125/4 հասցեում գտնվող գործարանը: Նշված պայմանագրի հիման վրա 13.06.2018 թվականին Կազմակերպության անվամբ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում Երևանի Շենգավիթ համայնքի Արշակունյաց փողոցի թիվ 125/4 հասցեում գտնվող գործարանի նկատմամբ կատարվել է սեփականության իրավունքի պետական գրանցում, և Կազմակերպությանը տրվել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական:

Ընկերության սնանկության գործով կառավարիչ Գագիկ Բարխուդարյանը հայց է ներկայացրել դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել 13.06.2018 թվականի սեփականության իրավունքի պետական գրանցումը՝ հայցի դիմքում դնելով նաև այն, որ *«կադաստրին ներկայացված դիմումին կից առկա չի եղել համապատասխան սպացույց, որ նախքան ք. Երևան, Արշակունյաց պողոտա թիվ 125/4 գործարանի հասցեում գտնվող անշարժ գույքի արտադարական կարգով իրացումը, «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն բռնագանձման ծանուցում է ուղարկել «Երևանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ին, ինչպես նաև համապատասխան սպացույց, որ այդ ծանուցումն «Երևանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ի կողմից սրացվել է: «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից ոչ «Երևանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ին և ոչ էլ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի կոմիտեին բռնագանձման որևէ ծանուցում չի ուղարկվել»:*

**Դատարանը** 25.12.2019 թվականին վճիռ է կայացրել հայցը մերժելու մասին՝ պատճառաբանելով, որ ՀՀ կադաստրի կոմիտեն գրանցումը կատարել է գույքը հանձնելու մասին պայմանագրի հիման վրա՝ առանց գրավատուին հանձնված բռնագանձման ծանուցման պատճենն իր տիրապետման ներքո ունենալու, որն իրավաչափ է:

**Վերաքննիչ դատարանը** 19.04.2021 թվականի որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ Գագիկ Բարխուդարյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարել է՝ Դատարանի վճիռը բեկանել ու փոփոխել է՝ հայցը բավարարել է, անվավեր է ճանաչել Երևանի Արշակունյաց պողոտա թիվ 125/4 հասցեում գտնվող գործարանի նկատմամբ 13.06.2018 թվականին Կազմակերպության անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն այն պատճառաբանությամբ, որ *«նշված ծանուցման բովանդակությունից ակնհայտորեն չի բխում, որ ուղարկվածը հանդիսանում է բռնագանձման ծանուցում, քանի որ նրանում հարակործում ամրագրված չէ, թե ինչ է նախատեսվում իրականացնել: Նշվածի արդյունքում էլ փաստում ենք, որ այն չի կարող համարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի հիմքով բռնագանձման ծանուցման ուղարկում գրավարու «Երևանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ին և պարտապահին: Հետևաբար նշվածի արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ վերը նշված 28.12.2016 թվականի թիվ 1044-16 գրությունից հարակործում պարզ չի դառնում, թե 10 օրվա ընթացքում «Երևանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ն պարտավորությունը չկատարելու դեպքում «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն կնախաձեռնի արդյոք բռնագանձում, թե ոչ: Անորոշ է նաև, որ եթե «Երևանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ն պարտավորությունը չկատարի, ապա «ՓՄՁ ներդրումներ» ՈւՎԿ ՓԲԸ-ն միանշանակ որոշել է բռնագանձումն իրականացնել առանց դատարան դիմելու, թե ոչ: Այսինքն վերը նշված գրությունը չի կարող համարվել բռնագանձման ծանուցում նաև այն պարճառով, որ դրանով*



որոշակի և հարակ կերպով չի բացահայտվել գրավառուի մրադրությունը գույքը արտադարական կարգով բռնագանձելու մասին, ինչը հնարավորություն կրար պարտապանին և գրավարուին իրենց շահերից բխող ձևով և եղանակներով իրացնելու պայմանագրով և օրենքով իրենց վերապահված իրավունքները»:

Մինևույն ժամանակ, Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «անգամ եթե «ՓՄՁ ներդրումներ» ՈԻՎԿ ՓԲԸ-ի 28.12.2016 թվականի թիվ 1044-16 գրությունը ուղղված «Երևանի կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ին, դիտարկելով որպես պարզաձև կարգով ներկայացված բռնագանձման ծանուցում, սակայն անգամ այդ պայմաններում այն չի կարող բավարարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 15-րդ գլխով սահմանված՝ բռնագանձման ծանուցումը պարզաձև ուղարկված լինելու պահանջներին, քանի որ նշված գրությունն ուղարկվել է հայցվոր ընկերությանը Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2017 թվականի թիվ ԵԱԲԳ/0370/04/16 որոշումից առաջ՝ 28.12.2016 թվականին: Այսինչ, միայն Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 01.03.2017 թվականի թիվ ԵԱԲԳ/0370/04/16 որոշումը է բավարարվել «ՓՄՁ ներդրումներ» ՈԻՎԿ ՓԲԸ-ի դիմումը և թույլատրվել վերջինիս, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-252 հոդվածներով սահմանված պայմանների պահպանմամբ, արտադարական կարգով իրացնել գրավի առարկաները, այդ թվում՝ ք. Երևան, Շենգավիթ համայնքի Արշակունյաց 125/4 գործարանի հասցեում գրավող անշարժ գույքը»:

Վերը նշված դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով 28.12.2016 թվականի թիվ 1044-16 գրությունը «բռնագանձման ծանուցում» չհանդիսանալու մասին Վերաքննիչ դատարանի պատճառաբանություններին՝ Վճռաբեկ դատարանը դրանք հիմնավոր է համարում հետևյալ հիմնավորումներով.

Կազմակերպության կողմից Ընկերությանն ուղարկված 28.12.2016 թվականի թիվ 1044-16 գրությունն ունի հետևյալ բովանդակությունը.

«Տեղեկացնում ենք, որ «ՓՄՁ ներդրումներ» ՈԻՎԿ փակ բաժնետիրական ընկերության և «Երևանի կենցաղային քիմիայի գործարան» բաց բաժնետիրական ընկերության միջ 2014 թվականի դեկտեմբերի 05-ին կնքված թիվ 909175Վ վարկային պայմանագրով սրանձնած պարտավորությունը առ 2016թ-ի դեկտեմբերի 28-ը կազմում է 173,474,219.00 ՀՀ դրամ /մեկ հարյուր յոթանասուներեք միլիոն չորս հարյուր յոթանասուն չորս հազար երկու հարյուր տասնինը ՀՀ դրամ/ գումար, այդ թվում՝

✓ 149,998,196.30 ՀՀ դրամ /մեկ հարյուր քառասունհինգ միլիոն ինը հարյուր ինսունույթ հազար մեկ հարյուր ինսունվեց ՀՀ դրամ և երեսուն լումա/ վարկի մնայր գումար, այդ թվում ժամկետանց մնայր գումար՝ 29,998,208.30 ՀՀ դրամ /քսանհինգ միլիոն ինը հարյուր ինսունույթ հազար երկու հարյուր ութ ՀՀ դրամ և երեսուն լումա/

✓ 15,185,441.90 ՀՀ դրամ /տասնհինգ միլիոն մեկ հարյուր ութսունհինգ հազար չորս հարյուր քառասունմեկ ՀՀ դրամ և ինսուն լումա/ հաշվարկված տրոխսագումար, որի ժամկետանց տրոխսագումար՝ 12,312,316.00 ՀՀ դրամ /տասներկու միլիոն երեք հարյուր տասներկու հազար երեք հարյուր տասնվեց ՀՀ դրամ/ և ժամկետանց գումար տրոխսագումար՝ 2,557,509.10 ՀՀ դրամ /երկու միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր ինը ՀՀ դրամ և տասը լումա/

✓ 8,290,580.80 ՀՀ դրամ /ութ միլիոն երկու հարյուր ինսուն հազար հինգ հարյուր ութսուն ՀՀ դրամ և ութսուն լումա/ ժամկետանց տրոխսագումարի տույժ:

Ըաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՓՄՁ ներդրումներ» ՈԻՎԿ փակ բաժնետիրական ընկերությունը բազմիցս զգուշացրել է վերջինիս նկատմամբ առկա

ժամկետանց պարտավորությունների կատարման անհրաժեշտության վերաբերյալ, ինչը սակայն չի կատարվել, ուստի վարկային կազմակերպությունը համաձայն վարկային պայմանագրի հորված 5-ի պահանջում է սույն ծանուցումը սրանսպուց ոչ ուշ քան 10 քանկային օրվա ընթացքում կատարել թիվ 909175Վ վարկային պայմանագրով սրանձնած պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական մարում (ներառյալ՝ տոկոսները, տույժը և տուգանքները):

Միաժամանակ հայրնում ենք, որ վերոնշյալ պարտավորությունը չկատարելու դեպքում «ՓՄՁ ներդրումներ» ՈԻՎԿ փակ բաժնետիրական ընկերությունը կնախաձեռնի համապատասխան միջոցներ վերոնշյալ վարկային պայմանագրի կատարման սպառնալից միջոց հանդիսացող թիվ 909175Գ/01 անշարժ գույքի հաշորդող գրավի /հիփոթեքի/, թիվ 909175Գ/02 անշարժ գույքի գրավի /հիփոթեքի/, թիվ 909175Գ/03, թիվ 909175Գ/04 և թիվ 909175Գ/05 Կոոպերատիվի բաժնային ֆոնդի մասի գրավի պայմանագրերից, ինչպես նաև թիվ 909175Ե/01, թիվ 909175Ե/02, թիվ 909175Ե/03 և թիվ 909175Ե/04 Երաշխավորության պայմանագրերից բխող վարկային կազմակերպության իրավունքներն իրականացնելու համար:

Հիմք ընդունելով սույն ծանուցումը, վերոնշյալ պարտավորությունը չկատարելու դեպքում վարկային կազմակերպությունը կնախաձեռնի գրավադրված գույքի նկատմամբ դատարան կարգով կամ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու գործընթաց»:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է նկատի ունենալ այն, թե օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետում «բռնագանձման ծանուցում» եզրույթն օգտագործելիս ինչ է ի նկատի ունեցել, որպիսի պարագայում 28.12.2016 թվականի թիվ 1044-16 գրությունն իր բովանդակությամբ չի կարող համապատասխանել որպես «բռնագանձման ծանուցում» ուղարկվող փաստաթղթի նշանակությանը, ուստի այն չի կարող գնահատվել որպես բռնագանձման ծանուցում:

Այսպես. Ընկերությանն ուղարկված 28.12.2016 թվականի թիվ 1044-16 գրությունը բովանդակում է միայն ընդհանուր տեղեկություններ այն մասին, թե ինչ տեղի կունենա այն բանից հետո, երբ Ընկերությունը նշված գրությունը ստանալուց հետո ոչ ուշ քան 10 քանկային օրվա ընթացքում չկատարի ժամկետանց պարտավորությունները: Միաժամանակ նշված գրությամբ Ընկերությունը նախագգուշացվել է, որ վերոնշյալ պարտավորությունը չկատարելու դեպքում Կազմակերպությունը կնախաձեռնի գրավադրված գույքի նկատմամբ դատարան կարգով կամ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու գործընթաց: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բռնագանձման ծանուցումը պետք է պարունակի տեղեկություն առանց դատարան դիմելու բռնագանձման գործընթացը փաստացի սկսելու վերաբերյալ, որպիսի բովանդակությամբ ծանուցումը ստանալուց հետո երկամսյա ժամկետում գրավատուն կարող է իրացնել իր իրավունքները:

Փաստորեն, Ընկերությանն ուղարկված 28.12.2016 թվականի թիվ 1044-16 գրությունը տեղեկություն է պարունակում ոչ թե առանց դատարան դիմելու բռնագանձման գործընթացը փաստացի սկսելու, այլ այդ գործընթացն սկսելու հնարավորության վերաբերյալ: Այսինքն՝ վերոգրյալ գրությունը չի պարունակում բավարար տեղեկատվություն առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու գործընթաց սկսելու վերաբերյալ, իսկ դրա բովանդակությունից գրավատուի համար պարզ չէր կարող լինել, որ 28.12.2016 թվականի թիվ 1044-16 գրությունը ստանալուց հետո փաստացի սկսվելու է առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու

գործընթաց, հետևաբար գրության բովանդակությունը չէր կարող հնարավորություն ընձեռել գրավատուին լիարժեքորեն իրացնելու իր իրավունքները, որպիսի պարագայում չի կարելի փաստել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի (իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ) պահանջը պահպանված լինելու մասին:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը սահմանում է իրավունքի պետական գրանցման մերժման հիմքերը, որի 1-ին մասի 5-6-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր է մերժել իրավունքի պետական գրանցումը, եթե իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը կայացվել է դրա ընդունման լիազորությունը չունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, կամ իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը չի համապատասխանում դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին, անշարժ գույքի գործարքը կնքել է (են) նման գործարք կնքելու իրավասություն չունեցող կամ նման գործարք կնքելու համար բավարար ծավալով իրավասություն չունեցող անձը (անձինք), առկա են օրենքով սահմանված այլ հիմքեր:

Գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չի պահպանվել հայցվորին օրենքով սահմանված կարգով առանց դատարան դիմելու բնագանձման ծանուցում ուղարկելու օրենսդրական պահանջը, ինչի արդյունքում էլ տեղի ունեցած իրավունքի պետական գրանցումը չի կարող համարվել իրավաչափ, ինչն իրավացիորեն արձանագրել է Վերաքննիչ դատարանը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը, փոփոխելով այն՝ հայցը բավարարելով և անվավեր ճանաչելով Երևանի Արշակունյաց պողոտա թիվ 125/4 հասցեում գտնվող գործարանի նկատմամբ 13.06.2018 թվականին Կազմակերպության անվանը կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը, կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճռաբեկ բողոքը մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը,

ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Կազմակերպության կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 19.04.2021 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում	Վարչական գործ թիվ <b>ՎԳ/11987/05/18</b>
Վարչական գործ թիվ	ՎԳ/11987/05/18
Նախագահող դատավոր՝	Ա. Պողոսյան
Դատավորներ՝	Կ. Բաղդասարյան
	Ա. Սարգսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող</i>	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
<i>զեկուցող</i>	Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի հոկտեմբերի 02-ին գրավոր ընթացակարգով քննելով Քրիստինե Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.02.2022 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Քրիստինե Հովհաննիսյանի ընդդեմ ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կադաստրային քարտեզի ուղղում կատարելուն և նվիրատվության գործարքից բխող ՀՀ, Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց, թիվ 47 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Քրիստինե Հովհաննիսյանի սեփականության իրավունքը գրանցելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Քրիստինե Հովհաննիսյանը պահանջել է պարտավորեցնել Կոմիտեին կատարել կադաստրային քարտեզի ուղղում և գրանցել նվիրատվության գործարքից բխող ՀՀ, Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց, թիվ 47 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան) 24.06.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.02.2022 թվականի որոշմամբ Դատարանի 24.06.2020 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել է. վարչական գործի վարույթը կարճվել է մասնակիորեն՝ կադաստրային քարտեզի ուղղում կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով, իսկ մնացած մասով Դատարանի 24.06.2020 թվականի վճիռը փոփոխվել է և կայացվել է նոր դատական ակտ. Քրիստինե Հովհաննիսյանի հայցը նվիրատվության գործարքից բխող, Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց, թիվ 47 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Քրիստինե Հովհաննիսյանի սեփականության իրավունքը գրանցելուն պարտավորեցնելու պահանջի մասով մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Քրիստինե Հովհաննիսյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքերի և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը, 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 152-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Վերաքննիչ դատարանի վերլուծությունները և եզրահանգումներն անհիմն են, քանի որ սույն գործով Քրիստինե Հովհաննիսյանը գործողությունների կատարման հայց չի ներկայացրել. հայցի առարկան է՝ պարտավորեցնել ՀՀ կադաստրի կոմիտեին կատարել կադաստրային քարտեզի ուղղում և գրանցել նվիրատվության գործարքից բխող ՀՀ, Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնքի 13-րդ փողոցի թիվ 47 հասցեում գտնվող գույքի նկատմամբ Քրիստինե Հովհաննիսյանի սեփականության իրավունքը: Պահանջը, այդ թվում կադաստրային քարտեզում ուղղում կատարելու վերաբերյալ, ուղղված է վարչական ակտի ընդունմանը (սեփականության իրավունքի գրանցմանը), քանի որ պետական գրանցում չկատարելու և գրանցման վարույթը կասեցնելու պատճառը կադաստրային քարտեզում առկա սխալն է:

Ավելին, սկզբնական հայցապահանջը կադաստրային քարտեզում ուղղում կատարելու պահանջով լրացնելու անհրաժեշտությունն առաջացել է դատաքննության ընթացքում, երբ պարզվել է, որ համադրումների պատճառը կադաստրային քարտեզի սխալի արդյունք է:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ կադաստրային քարտեզը պետք է համապատասխանի տեղանքին, իսկ չհամապատասխանելու դեպքում պետական մարմինը պետք է այն ուղղի, որպեսզի պաշտպանվեն այլ անձանց գույքային իրավունքները:

Միաժամանակ, սույն դեպքում առկա չէր Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ իրավունքի պետական գրանցումը մերժելու հիմքը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.02.2022 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 24.06.2020 թվականի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Քրիստինե Հովհաննիսյանը 09.10.2018 թվականին դիմել է Կոմիտեին՝ ՀՀ, Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնքի 13-րդ փ., թիվ 47 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ 26.09.2018 թվականին կնքված նվիրատվության պայմանագրից բխող իրավունքի պետական գրանցում կատարելու պահանջով **(հատոր 1-ին, գ.թ. 85):**

Դիմումին կից ներկայացվել է հողամասի փաստացի իրադրության հատակագիծը և ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ղեկավարի՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման ղեկավարին ուղղված 08.06.2018 թվականի թիվ 243 գրությունը, որով համայնքի ղեկավարը հայտնել է. «Նկատի ունենալով, որ քարտեզագրման ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց, թիվ 47 հասցեի՝ Անահիտ Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասում կատարվել է քարտեզի սխալ, ուստի խնդրում եմ «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 2-րդ ենթախմբի համաձայն և, հիմք ընդունելով «Վալերիկ Գալստյան» ԱԶ-ի կողմից կատարված հատակագիծը, կատարել քարտեզի ուղղում» **(հատոր 1-ին, գ.թ. 31):**

2. Կոմիտեի 16.10.2018 թվականի թիվ Կ-09/10/2018-2-0207 որոշմամբ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա կասեցվել է այն պատճառաբանությամբ, որ հայցվորի կողմից ներկայացված հատակագծում նշված կողորդինատներով հողամասը համադրվում է 0055-0007, 0055-0023, 0055-0028 ծածկագրերով հողամասերի և պետական սեփականություն հանդիսացող ճանապարհի հետ, և անհրաժեշտ է ներկայացնել ճշտված հատակագիծ **(կադաստրային գործ, էջ 79):**

3. Քրիստինե Հովհաննիսյանը 19.10.2018 թվականին վարչական բողոք է ներկայացրել Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ղեկավարին **(հատոր 1-ին, գ.թ. 27-28):**

4. Կոմիտեի ղեկավարի տեղակալի 14.11.2018 թվականի գրությամբ բողոքը մերժվել է **(հավելված, էջ 73-74):**

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ

Վերաքննիչ դատարանի կողմից «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. արդյո՞ք կադաստրային քարտեզում առկա սիսայների արդյունքում անշարժ գույքերի համադրման փաստը կարող է բացառել անձի սեփականության իրավունքի պետական գրանցման հնարավորությունը:*

Վճռաբեկ դատարանը նշված հարցադրումն անհրաժեշտ է համարում դիտարկել պետության՝ սեփականության իրավունքի պաշտպանության պոզիտիվ պարտականության համատեքստում՝ հաշվի առնելով կադաստրային քարտեզներն ուղղելու սահմանված ընթացակարգն ու առանձնահատկությունները:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին արձանագրության 1-ին հոդվածով սահմանված՝ սեփականության իրավունքը հարգելու պարտականությունը ներառում է պետության ինչպես նեգատիվ, այնպես էլ պոզիտիվ պարտականությունները: 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համատեքստում պոզիտիվ պարտականությունը կարող է պետությունից պահանջել ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սեփականության իրավունքը պաշտպանելու համար (*տե՛ս, ի թիվս այլնի, Բրուսիովսկին ընդդեմ Լեհաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) Մեծ պալատի 22.06.2004 թվականի վճիռը, կեյս 143*): Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող իրավունքի արդյունավետ իրացումը կախված չէ լոկ այդ իրավունքին չմիջամտելու պետության պարտականությունից. այդ իրավունքի արդյունավետ իրացումը կարող է պահանջել նաև իրավունքի պաշտպանության պոզիտիվ միջոցառումներ, մասնավորապես, այն դեպքում, երբ առկա է անմիջական կապ անձի կողմից պետությունից իրավաչափորեն ակնկալվող միջոցառումների և գույքից անարգել օգտվելու միջև (*տե՛ս, Դարիկն ընդդեմ Խորվաթիայի գործով Եվրոպական դատարանի 18.03.2021 վճիռը, կեյս 51*):

Սեփականության իրավունքի պաշտպանության պոզիտիվ պարտականությանը վերաբերող մի շարք գործերով Եվրոպական դատարանն ընդգծել է «պատշաճ կառավարման» սկզբունքի կարևորությունը: Այս սկզբունքի առնչությամբ, մասնավորապես, Եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «Պատշաճ կառավարման» սկզբունքը, որպես ընդհանուր կանոն, չպետք է խանգարի իշխանություններին շտկել սխալները, նույնիսկ այն սխալները, որոնք իշխանությունները թույլ են տվել իրենց անփութության արդյունքում: (...) Մյուս կողմից, հին «սխալը» ուղղելու անհրաժեշտությունը չպետք է անհամաչափորեն միջամտի այն նոր իրավունքին, որն անձը ձեռք է բերել բարեխղճորեն հիմնվելով պետական իշխանության գործողությունների օրինական լինելու համոզմունքի վրա: Այլ կերպ պետական մարմիններին, որոնք չեն պահպանում իրենց սեփական ընթացակարգերը, չպետք է թույլատրվի օգուտ ստանալ իրենց սխալ գործողություններից կամ խուսափել իրենց



պարտականություններից: Պետական մարմնի կողմից թույլ տրված ցանկացած սխալի ռիսկը պետք է կրի ինքը՝ պետությունը, և սխալները չպետք է շտկվեն շահագրգիռ անձանց հաշվին (տե՛ս, *Ռիստոյակին ընդդեմ Ոսկարինայի գործով Եվրոպական դատարանի 20.10.2011 թվականի վճիռը, կետ 71*):

Հաշվի առնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետության՝ սեփականության իրավունքի պաշտպանության պոզիտիվ պարտականությունից, ի թիվս այլնի, բխում է.

- անձի սեփականության իրավունքի իրացումը չի կարող խոչընդոտվել հանրային իշխանության մարմնի (մարմինների) կողմից թույլ տրված այս կամ այն սխալի պատճառով. անձը չի կարող կրել այդ սխալի բացասական ազդեցությունը,

- հանրային իշխանության մարմինը (մարմինները) պարտավոր է (են) իր (իրենց) իրավասությունների շրջանակում ուղղել անձի սեփականության իրավունքի իրացմանը խոչընդոտող՝ իրենց կողմից թույլ տրված սխալը/սխալները:

Անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ այլ գույքային իրավունք ունեցող անձանց սահմանադրական իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովումը, ի թիվս այլնի, հանդիսանում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ինստիտուտի հիմնական իմաստն ու նպատակը:

Գույքի նկատմամբ իրավունքների, իրավունքների սահմանափակումների (...) պետական գրանցման, գույքի, դրա նկատմամբ իրավունքների, սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման, գրանցում իրականացնող մարմնի իրավունքների և պարտականությունների իրավական հիմքերը, գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վարույթի առանձնահատկությունները սահմանված են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պետական գրանցման արդյունքում ստեղծվող հիմնական փաստաթղթերից է, ի թիվս այլնի, կադաստրային քարտեզը (հատակագիծը): Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Կադաստրային քարտեզները (հատակագծերը) տեղանքի փոքրացված և ընդհանրացված արտապատկերումներն են համապատասխան մասշտաբով և պայմանական նշաններով, որոնցում պատկերված են անշարժ գույքի միավորները, դրանց տեղադրությունը, սահմանները, մակերեսը, տեսքերն ու տեսակները, վերգետնյա և ստորգետնյա հաղորդակցությունների ցանցերը և այլ տվյալներ, որոնք ներառվում են կադաստրային քարտեզի տեղեկատվության բազային կամ թեմատիկ շերտերում»:

Միաժամանակ, առանձնացվում է կադաստրային քարտեզի տեղեկատվության բազային և թեմատիկ շերտերի բովանդակությունը: Կադաստրային քարտեզի տեղեկատվության բազային շերտում ներառվում են անշարժ գույքի միավորների տեղադրությունը, սահմանները, կողորդիսատները, հողամասերի մակերեսի չափի վերաբերյալ տեղեկությունները (Օրենքի 14-րդ հոդվածի 1.1-ին մաս): Կադաստրային քարտեզի տեղեկատվության թեմատիկ շերտում ներառվում են Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդը՝ ըստ նպատակային նշանակության, գործառնական նշանակության ու հողատեսքերի, իրավունքի պետական գրանցում ստացած վերգետնյա և ստորգետնյա հաղորդակցությունների

ցանցերի վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ այլ տեղեկություններ (Օրենքի 14-րդ հոդվածի 1.2-րդ մաս):

Ըստ «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի 17-րդ կետի՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված կադաստրային քարտեզի վարումը պետական նշանակության քարտեզագրական աշխատանք է, որպիսի աշխատանքը կատարելու լիազորությունը նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով վերապահված է Կոմիտեին:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 26.02.2009 թվականի «Կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 51-Ն հրամանով սահմանվել են անշարժ գույքի կադաստրային քարտեզագրման աշխատանքների բովանդակությունը, դրանց նկատմամբ առաջադրված պահանջները և այդ աշխատանքների իրականացման կարգը: Նշված հրամանի Հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ անշարժ գույքի պետական գրանցման նպատակով կադաստրային քարտեզագրման աշխատանքները կատարվում են անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար: Նույն Հավելվածի 20-րդ կետի համաձայն՝ կադաստրային քարտեզագրման աշխատանքների կարևորագույն և պարտադիր պայմաններից մեկը, դա անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի պլանային կոորդինատների կապակցումն է ընդունված մեկ միասնական կոորդինատային համակարգում՝ նույն հրահանգով սահմանված ճշտությամբ: Ըստ Հավելվածի 117-րդ կետի՝ կադաստրային քարտեզների թարմացման իրականացվում է ժամանակի տվյալ պահին համապատասխան արդիական կադաստրային քարտեզներ ստանալու նպատակով: Կադաստրային քարտեզների թարմացման աշխատանքները՝ կախված տեղանքում փոփոխությունների ինտենսիվությունից և իրականացվող քաղաքաշինական ծրագրերի ծավալից կատարվում են այն տարածքներում, որտեղ համատարած քարտեզագրման աշխատանքների ավարտից հետո անշարժ գույքի հետ կապված փոփոխությունները մեծ ծավալ են կազմում: Կադաստրային քարտեզները թարմացվում են նաև նոր առաջացած, միավորված և բաժանված անշարժ գույքի միավորների նկատմամբ իրավունքների պետական գրանցման ժամանակ, երբ իրականացվում է տվյալ գույքը քարտեզում արտացոլելու գործընթացը (Հավելվածի 118-րդ կետ):

Իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010 թվականի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» թիվ 186-Ն հրամանով (այսուհետ՝ Կոմիտեի թիվ 186-Ն հրաման) (ուժը կորցրել է 05.06.2021 թվականին, ներկայումս կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 29.04.2021 թվականի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» թիվ 698-Ն որոշմամբ) սահմանվել են Հայաստանի Հանրապետության համայնքների անշարժ գույքի միավորների կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման առանձնահատկությունները:

Կոմիտեի թիվ 186-Ն հրամանի Հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղումը կարող է կատարվել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (...) աշխատակազմի տարածքային ստորաբաժանման (...) ղեկավար-անշարժ գույքի պետական ռեգիստրի նախաձեռնությամբ՝ սեփական նախաձեռնությամբ.

2) շահագրգիռ անձանց նախաձեռնությամբ (իրավասու մարմիններ, անձինք), որոնց կողմից հաստատված կամ ներկայացված փաստաթղթերի հիման վրա կատարվել է իրավունքի պետական գրանցումը.

3) անշարժ գույքի պետական ռեգիստրի նախաձեռնությամբ՝ վերադասության կարգով:

Հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղումը կատարվում է համայնքի հերթապահ (անշարժ գույքի կադաստրի վարման ընթացքում մշտապես թարմացվող) էլեկտրոնային կադաստրային հատակագծերի և քարտեզների վրա՝ տարածքային ստորաբաժանման կողմից:

Հավելվածի 7-րդ կետը կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված անշարժ գույքի միավորների հետ կապված սխալները դասակարգում է երկու խմբի՝

1) սխալներ, որոնք չեն փոփոխում գույքի պատկանելությունը, դրա նկատմամբ իրավունքների բնույթը, որակական և քանակական բնութագրերը (ստրամտիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված թույլատրելի շեղումներ),

2) սխալներ, որոնք առաջացնում են գույքի պատկանելության, դրա նկատմամբ իրավունքների բնույթի, որակական և քանակական բնութագրերի փոփոխություն:

Հավելվածի 9-րդ կետը սահմանում է վերը նշված երկրորդ խմբին պատկանող սխալներն ուղղելու ընթացակարգը: Այն է՝ 7-րդ կետի 2-րդ ենթակետում նշված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղումները կատարվում են հետևյալ սկզբունքով.

1) Իրավունքների պետական գրանցման վկայականներում նշված և փաստացի օգտագործվող սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողամասերի սահմանների և մակերեսների տարբերությունների ուղղման նպատակով համայնքների ղեկավարները կից գրությամբ համապատասխան տարածքային ստորաբաժանում կարող են ներկայացնել իրենց կողմից հաստատված փոփոխվող հողամասերի ճշգրտված հատակագծերը, սեփականատերերին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականները և սեփականատերերի համաձայնությունները:

2) Համայնքներին հողերի փոխանցման ժամանակ առաջացած սեփականության սուբյեկտների անճշտությունների (քաղաքացիների սեփականության իրավունքով պատկանող հողամասերը որպես համայնքային սեփականության հողամասեր փոխանցման կամ համայնքային սեփականության իրավունքով պատկանող հողամասերը որպես քաղաքացիների սեփականության հողամասեր փոխանցման) դեպքում, համայնքների ղեկավարները կից գրությամբ տարածքային ստորաբաժանում կարող են ներկայացնել իրենց կողմից հաստատված փոփոխվող հողամասերի ճշգրտված հատակագծերը, սեփականատերերին տրված անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականները, սեփականատերերի համաձայնությունները, իրավունքների պետական գրանցում չստացած հողամասերի համար համապատասխան իրավական հիմքերը (հողի սեփականության իրավունքի

պետական ակտ, կամ ժամանակավոր վկայականներ, կամ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի որոշումից քաղվածք):

3) Համայնքներին հողերի փոխանցման ժամանակ առաջացած հողատեսքերի անճշտությունների ուղղման համար համայնքների ղեկավարները կից գրությամբ տարածքային ստորաբաժանում կարող են ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» N 1066-Ն որոշման պահանջներին համապատասխան կատարված փոփոխությունները:

(...)

Հավելվածի 10-րդ կետը սահմանում է. «Սույն հրահանգի 7-րդ կետի 2-րդ ենթակետում նշված և 9-րդ կետում չներառված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղումները կատարվում են միայն համապատասխան իրավասու մարմինների կողմից հաստատված իրավահաստատող (այդ թվում՝ գրաֆիկական և տեքստային տվյալներ պարունակող) փաստաթղթերի և անշարժ գույքի օգտագործողների (սեփականատերերի) գրավոր համաձայնությունների ամկայության դեպքում»:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կադաստրային քարտեզի վարումը պետական նշանակության քարտեզագրական աշխատանք է, որը կատարելու լիազորությունը վերապահված է Կոմիտեին: Օրենսդրությամբ սահմանված է ինչպես կադաստրային քարտեզագրման աշխատանքներն իրականացնելու, այնպես էլ կադաստրային քարտեզում ուղղում կատարելու կարգը: Ըստ սահմանված կարգի Կոմիտեին, կադաստրային քարտեզը վարելու լիազորության շրջանակներում, վերապահված է նաև իր իսկ նախաձեռնությամբ կադաստրային քարտեզն ուղղելու իրավասություն: Կադաստրային քարտեզն ուղղելու նախաձեռնությամբ օժտված են նաև իրավասու այլ մարմիններ, մասնավորապես, համայնքի ղեկավարները: Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նկատել, որ Կոմիտեի թիվ 186-Ն հրամանը կադաստրային քարտեզն ուղղելու նախաձեռնությամբ օժտված սուբյեկտների շրջանակում չի ներառել այն անձանց, ովքեր հայցում են իրավունքի պետական գրանցում. Կոմիտեի թիվ 186-Ն հրամանի Հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետը կադաստրային քարտեզում ուղղում կատարելու նախաձեռնությամբ օժտել է այն անձանց, որոնց ներկայացրած փաստաթղթերի հիման վրա արդեն իսկ գրանցվել է համապատասխան իրավունքը: Այլ կերպ՝ այն անձինք, որոնք դեռևս չունեն գրանցված իրավունք և հայցում են իրավունքի պետական գրանցում, չեն կարող հանդես գալ կադաստրային քարտեզում ուղղում կատարելու նախաձեռնությամբ:

Վերոհիշյալի հիման վրա և ելնելով պետության անձի սեփականության իրավունքի պաշտպանության պոզիտիվ պարտականության բովանդակությունից՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանրային իշխանության մարմինները՝ մասնավորապես, Կոմիտեն և համայնքի ղեկավարը, ունենալով կադաստրային քարտեզում առկա սխալն ուղղելու նախաձեռնությամբ հանդես գալու իրավասություն, պարտավոր են հանդես գալ նման նախաձեռնությամբ և այդպիսով վերացնել անձի իրավունքի պետական գրանցման՝ այդ սխալով պայմանավորված խոչընդոտը՝ հաշվի առնելով, որ **հանրային իշխանության պոզիտիվ պարտականությունն է ստեղծել անհրաժեշտ պայմաններ անձի հիմնարար իրավունքների, այդ թվում՝ անձի սեփականության իրավունքի իրացման համար: Անձի սեփականության իրավունքի պետական գրանցումը**

**չի կարող առկալվել՝ պայմանավորված հանրային իշխանության մարմնի (մարմինների) թույլ տված սխալով, որն ուղղելու նախաձեռնությամբ հանդես գալու իրավասությամբ օժտված են այդ մարմինները:**

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական գրանցման վարույթի հարուցման հիմք է իրավունքի պետական գրանցում հայցող իրավատիրոջ կողմից անշարժ գույքի պետական ռեգիստրի որևէ սպասարկման գրասենյակ (անկախ գույքի գտնվելու վայրից) ներկայացված դիմումը: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Դիմողը պետք է ներկայանա անձը հաստատող փաստաթղթով և դիմումի հետ ներկայացնի՝

1) իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ իրավահաստատող փաստաթղթերը, իսկ սույն օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ նաև այդ հոդվածով սահմանված այլ փաստաթղթեր. (...)»:

Օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված դեպքերն են.

«1. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետք է ներկայացվի նաև գրանցվող հողամասի հատակագիծը, եթե՝

1) գրանցման ներկայացվող հողամասի նկատմամբ 1998 թվականի մարտի 1-ից հետո իրավունքների պետական գրանցում չի կատարվել.

2) կատարվելու է 1998 թվականի մարտի 1-ից հետո գրանցված հողամասի սահմանների փոփոխության (բաժանման, միավորման կամ ուղղման), բացառությամբ գրանցված հողամասերի սահմանների միավորման, պետական գրանցում»:

«2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետք է ներկայացվի նաև շինության հատակագիծը, եթե՝

1) գրանցման ներկայացվող շինության նկատմամբ 1998 թվականի մարտի 1-ից հետո իրավունքների պետական գրանցում չի կատարվել.

2) կատարվելու է նոր ստեղծված (կառուցված) շինությունների նկատմամբ իրավունքների պետական գրանցում կամ գրանցված շինությունների վերակառուցման, բաժանման, ինչպես նաև այլ հիմքերով շինությունների մակերեսների փոփոխության պետական գրանցում.

3) օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավունքի պետական գրանցման վերաբերյալ դիմումը մուտքագրվելուց հետո գրանցող մարմինն ուսումնասիրում է իրավունքի պետական գրանցման համար ներկայացված իրավահաստատող փաստաթղթերը և նույն օրենքով նախատեսված պետական գրանցման վարույթի կասեցման, դադարեցման կամ պետական գրանցումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում կատարում է իրավունքի պետական գրանցում նույն օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված տվյալները մատյանում գրառելու միջոցով:

Օրենքի 28-րդ, 29-րդ և 30-րդ հոդվածները համապատասխանաբար սահմանում են իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու, դադարեցնելու և իրավունքի պետական գրանցումը մերժելու հիմքերը: Ընդ որում, Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է որևէ պատճառաբանությամբ, քան նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի առկայությունն է, իրավունքի պետական գրանցման մերժումը:

Ըստ Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի՝ իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմինը կասեցնում է իրավունքի պետական գրանցման վարույթը, եթե՝

1) դիմումի հետ չեն ներկայացվել պետական գրանցման որոշում կայացնելու համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ սույն օրենքով նախատեսված փաստաթղթերը կամ տեղեկատվությունը.

(...)

4) ներկայացված փաստաթղթերը կազմված են նման տեսակի փաստաթղթի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջների, այդ թվում՝ սահմանված ձևի կամ սույն օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների խախտմամբ.

5) առկա է փաստաթղթերով չհիմնավորված անհամապատասխանություն ներկայացված փաստաթղթերում կամ ներկայացված և գրանցման մատյանում կամ գույքագրման փաստաթղթերում (գրանցված չլինելու դեպքում) առկա տվյալների միջև, բացառությամբ տեխնիկական սխալի հետևանքով առաջացած դեպքերի.

(...)

8) առկա են օրենքով սահմանված այլ հիմքեր:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր է մերժել իրավունքի պետական գրանցումը, եթե՝

1) ներկայացված իրավունքը կամ սահմանափակումը սույն օրենքով գրանցման ենթակա իրավունք կամ սահմանափակում չէ.

2) անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ առկա է գրանցված իրավունք կամ սահմանափակում կամ նախնական նշում, որը բացառում է ներկայացված իրավունքի կամ սահմանափակման գրանցումը.

3) ներկայացվել է դատական ակտ, որով որոշված է պետական գրանցման մերժում.

(...)

5) իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը կայացվել է դրա ընդունման լիազորությունը չունեցող մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, կամ իրավունքը կամ սահմանափակումը սահմանող անհատական իրավական ակտը չի համապատասխանում դրա ընդունման համար հիմք հանդիսացած օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի պահանջներին.

6) անշարժ գույքի գործարքը կնքել է (են) նման գործարք կնքելու իրավասություն չունեցող կամ նման գործարք կնքելու համար բավարար ծավալով իրավասություն չունեցող անձը (անձինք).

(...)

8) առկա են օրենքով սահմանված այլ հիմքեր:

Վերոհիշյալ նորմերի համադրված վերլուծությունը վկայում է, որ իրավունքի պետական գրանցման վերաբերյալ դիմումի քննարկման արդյունքում գրանցում իրականացնող իրավասու մարմնին վերապահված են հետևյալ լիազորությունները. իրավունքի պետական գրանցման իրականացում, իրավունքի պետական գրանցման վարույթի կասեցում, վարույթի դադարեցում կամ իրավունքի պետական գրանցման մերժում: Ընդ որում, օրենսդիրը հստակ սահմանել է իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու, դադարեցնելու և իրավունքի պետական գրանցումը մերժելու հիմքերը, որոնց բացակայության դեպքում իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմնի համար ծագում է համապատասխան իրավունքը գրանցելու պարտականությունը:

Իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու և իրավունքի պետական գրանցումը մերժելու հիմքերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ ի տարբերություն պետական գրանցումը մերժելու հիմքերի, վարույթը կասեցնելու հիմքերն իրենց բնույթով այնպիսին են, որ ենթակա են շտկման, վերացման և չեն բացառում իրավունքի պետական գրանցման հնարավորությունը: Մինչդեռ, իրավունքի պետական գրանցումը մերժելու հիմքերը ներառում են այն պայմանները, որոնց առկայությունն օրենքի ուժով անհնարին է դարձնում իրավունքի պետական գրանցումը:

Վերը նշված նորմերի վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ կադաստրային քարտեզի սխալով պայմանավորված՝ անշարժ գույքերի համադրման փաստն իրավունքի պետական գրանցումը մերժելու հիմքերի շրջանակում չէ և ըստ այդմ՝ նման հանգամանքն անհնարին չի դարձնում իրավունքի պետական գրանցումը, չի բացառում սխալը շտկելու արդյունքում իրավունքի պետական գրանցման հնարավորությունը:

Այսպիսով, հաշվի առնելով, որ Օրենքը կադաստրային քարտեզի սխալով պայմանավորված՝ անշարժ գույքերի համադրման փաստը չի դիտարկում որպես իրավունքի պետական գրանցումը մերժելու հիմք, և միաժամանակ Կոմիտեն օժտված է կադաստրային քարտեզում ուղղում կատարելու լիազորությամբ և նախաձեռնությամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի սեփականության իրավունքի պետական գրանցումը չի կարող խոչընդոտվել կադաստրային քարտեզում առկա սխալի (սխալների) պատճառով. նման իրավիճակում կադաստրային քարտեզն ուղղելու նախաձեռնությամբ օժտված հանրային իշխանության մարմինների պարտականությունն է անձի սեփականության իրավունքի պաշտպանության պոզիտիվ պարտականության շրջանակներում ձեռնարկել համապատասխան միջոցներ անձի իրավունքի պետական գրանցման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով:

Ելնելով վերոհիշյալից՝ Վճռաբեկ դատարանը միաժամանակ անհրաժեշտ է համարում արձանագրել, որ այն դեպքում, երբ անձի իրավունքի պետական գրանցման պահանջը չի բավարարվում կադաստրային քարտեզում առկա սխալի պատճառով, իրավունքի պետական գրանցում հայցող անձն անհրաժեշտություն չունի, ի լրումն իրավունքի պետական գրանցման, հայցել նաև կադաստրային քարտեզի ուղղում՝ հաշվի առնելով, որ Կոմիտեն օժտված է սեփական նախաձեռնությամբ կադաստրային քարտեզն ուղղելու իրավասությամբ: Ավելին, խնդրո առարկա իրավիճակում իրավունքի պետական գրանցում հայցող շահագրգիռ անձն օբյեկտիվորեն չի կարող հայցել կադաստրային քարտեզի ուղղում՝ հաշվի առնելով, որ Կոմիտեի թիվ 186-Ն հրամանի Հավելվածի 3-րդ կետը իրավունքի պետական գրանցում հայցող շահագրգիռ անձանց չի վերապահել կադաստրային քարտեզում ուղղում կատարելու նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա իրավիճակում իրավունքի պետական գրանցում հայցող շահագրգիռ անձն անհրաժեշտություն չունի, ի լրումն իրավունքի պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջով պարտավորեցման հայցի, ներկայացնել նաև գործողության կատարման հայց՝ կադաստրային քարտեզում ուղղում կատարելու պահանջով. միայն պարտավորեցման հայցը բավարար դատավարական միջոց է շահագրգիռ անձի կողմից դատական պաշտպանության դիմելու նպատակն իրացնելու համար:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ կադաստրային քարտեզում առկա սխալների արդյունքում անշարժ գույքերի

համադրման փաստը չի կարող բացառել անձի սեփականության իրավունքի պետական գրանցման հնարավորությունը:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

**Դատարանը**, 24.06.2020 թվականի վճռով բավարարելով հայցը, փաստել է, որ «06.11.2007 թվականի դրությամբ կադաստրային քարտեզում որևէ համադրություն չի եղել, իսկ ներկայիս քարտեզում առաջանում է համադրություն: Սա նշանակում է, որ խնդիրը տեխնիկական է և պետք է լուծվի կադաստրային քարտեզներում ուղղումներ կատարելու միջոցով:

Ընդ որում, կադաստրային քարտեզի նման ուղղումը չի փոփոխում գույքի պատկանելությունը, դրա նկատմամբ իրավունքների բնույթը, ծավալը կամ չի հանգեցնում գույքի մակերեսի չափերի կամ կադաստրային արժեքի փոփոխության: Պատասխանողն այնպես պետք է կատարի հատակագծի փոփոխությունը, որ տեխնիկական համադրությունը վերանա ոչ թե մյուս գույքերի պակասեցման հաշվին, այլ դրանց հատակագծերի տեխնիկական ձևափոխման միջոցով: Արդյունքում կադաստրային հատակագիծը պետք է ստանա այն տեսքը, ինչպես որ բնության մեջ առկա է տվյալ անձանց պատկանող գույքը:

Նման պայմաններում կադաստրային քարտեզի փոփոխությունը համապատասխանում է Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ընթացակարգին, որը պետք է իրականացվի գրանցող մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով գրանցված իրավունքների սուբյեկտներին: Հայցվորը պարտավոր չէ ներկայացնելու լրացուցիչ որևէ փաստաթղթեր դրա համար: Նա միայն ներկայացնում է իրավահաստատող փաստաթղթերը, տվյալ դեպքում՝ նվիրատվության պայմանագիրը, իսկ պատասխանողը պետք է կատարի անհրաժեշտ ուղղումները, որպեսզի ապահովվի հայցվորի սեփականության իրավունքի իրացումը»:

**Վերաքննիչ դատարանը** 23.02.2022 թվականի որոշմամբ սույն վարչական գործի վարույթը կադաստրային քարտեզի ուղղում կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով կարճել է, իսկ նվիրատվության գործարքից բխող Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց, թիվ 47 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Քրիստինե Հովհաննիսյանի սեփականության իրավունքը գրանցելուն պարտավորեցնելու պահանջի մասով, հայցը մերժել է:

Վերաքննիչ դատարանը կադաստրային քարտեզի ուղղում կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով վարչական գործի վարույթը կարճելու հիմքում դրել է հետևյալ պատճառաբանությունը. «...հայցվորը չի ներկայացրել վերաբերելի ու թույլատրելի համապատասխան ապացույց կամ տեղեկատվություն առ այն, որ վերջինս դիմել է պատասխանող ՀՀ կադաստրի կոմիտեին՝ խնդրելով կադաստրային քարտեզի ուղղում կատարել, սակայն որը մերժվել կամ անտեսվել է վարչական մարմնի կողմից: Ավելին, սույն վարչական գործի նյութերում ևս բացակայում է հենց հայցվորի նման բովանդակության դիմում: Այսինքն՝ ըստ գործող իրավական կարգավորումների, նախքան վարչադատական պաշտպանության դիմելը հայցվորը պետք է իր պահանջն սահմանված կարգով ուղղորդվա՞րչական մարմնին, ինչը տվյալ դեպքում տեղի չի ունեցել: (...) տվյալ դեպքում պահպանված չէ գործողության կատարման հայցով դիմելու վավերապայմաններից մեկը՝ նախքան վարչադատական պաշտպանություն հայցելը



հայցվորը չի դիմել վարչական մարմինն՝ ներկայացնելով իր համապատասխան պահանջը: Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանն եզրակացնում է, որ հայցվոր Քրիստինե Հովհաննիսյանի ներկայացրած հայցապահանջը, այն է՝ կադաստրային քարտեզի ուղղում կատարելուն պարտավորեցնելու մասին, ենթակա չէ դատարանում քննության»:

Ինչ վերաբերում է իրավունքի պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջով պարտավորեցման հայցին՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ գործի նյութերով հաստատվում է հանգամանքն առ այն, որ հայցվորի կողմից պատասխանողին ներկայացված, քարտեզագրողի, գեոդեզիայի, չափագրողի (հաշվառողի), հողաշինարարի որակավորում ունեցող մասնագետ Վալերիկ Գալստյանի կողմից կատարված հողամասի փաստացի իրադրության հատակագծում նշված կոորդինատներով 0,2600 հեկտար հողամասը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնք, 13 փողոց թիվ 47 հասցեում, համադրվում է թիվ 07-043-0055-0007, 07-043-0055-0023, 07-043-0055-0028 ծածկագրերով հողամասերի և պետական սեփականություն հանդիսացող ճանապարհի հետ: Որպիսի հանգամանքը, Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով, այն է՝ եթե անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ առկա է գրանցված իրավունք կամ սահմանափակում կամ նախնական նշում, որը բացառում է ներկայացված իրավունքի կամ սահմանափակման գրանցումը, հիմք է իրավունքի պետական գրանցումը մերժելու համար: Հատկանշական է, որ ներկայացված դեպքում իրավունքի պետական գրանցման մերժման լիազորությունը կրում է իմպերատիվ (կարգադրական) բնույթ, ինչը նշանակում է, որ մերժման հիմքի առկայության պարագայում վարչական մարմինն իրավասու չէ կայացնել այլ տեսակի որոշում:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի վերը նշված եզրահանգումներն անհիմն է համարում՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ գործում առկա է ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ղեկավարի 08.10.2018 թվականի թիվ 243 գրությունը, հասցեագրված ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման ղեկավարին: Նշված գրությամբ ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ղեկավարը, նկատի ունենալով, որ քարտեզագրման ընթացքում ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց, թիվ 47 հասցեի Անահիտ Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասում կատարվել է քարտեզի սխալ, խնդրել է «Կադաստրայի հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010 թվականի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 2-րդ ենթախմբի համաձայն և, հիմք ընդունելով «Վալերիկ Գալստյան» ԱԶ-ի կողմից կատարված հատակագիծը, կատարել քարտեզի ուղղում:

Իրավահարաբերության ծագման պահին գործած ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010 թվականի «Կադաստրայի հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» թիվ 186-Ն հրամանի հավելվածի

3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղումը կարող է կատարվել շահագրգիռ անձանց նախաձեռնությամբ (իրավասու մարմիններ, անձինք), որոնց կողմից հաստատված կամ ներկայացված փաստաթղթերի հիման վրա կատարվել է իրավունքի պետական գրանցումը: Այս նորմին համապատասխան համայնքի ղեկավարը հանդիսանում է կադաստրային քարտեզում ուղղում կատարելու նախաձեռնությամբ օժտված իրավասու մարմին՝ հաշվի առնելով, որ իրավունքի պետական գրանցումը կատարվում է վերջինիս կողմից հաստատված հատակագծերի հիման վրա:

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ղեկավարի 08.10.2018 թվականի թիվ 243 գրության ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այդ գրությամբ համայնքի ղեկավարը՝ որպես կադաստրային քարտեզում ուղղում կատարելու նախաձեռնությամբ օժտված սուբյեկտ, հանդես է եկել նման նախաձեռնությամբ, որպիսի պայմաններում Կոմիտեն պետք է իրացնեի կադաստրային քարտեզում ուղղում կատարելու իր լիազորությունը՝ ապահովելով անհրաժեշտ պայման հայցվորի սեփականության իրավունքի պետական գրանցման համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ղեկավարի 08.10.2018 թվականի թիվ 243 գրությամբ դրսևորված՝ կադաստրային քարտեզում ուղղում կատարելու նախաձեռնության պայմաններում հայցվոր Քրիստինե Հովհաննիսյանն անհրաժեշտություն չունեի իր իրավունքի պետական գրանցման պահանջի բավարարմանը հասնելու նպատակով, ի լրումն այդ պահանջի, Կոմիտեից հայցել նաև համապատասխան գործողության կատարում, այն է՝ կադաստրային քարտեզի ուղղում: Ավելին, Քրիստինե Հովհաննիսյանն օբյեկտիվորեն չէր կարող հայցել կադաստրային քարտեզի ուղղում՝ հաշվի առնելով, որ Կոմիտեի թիվ 186-Ն հրամանի Հավելվածի 3-րդ կետն իրավունքի պետական գրանցում հայցող շահագրգիռ անձանց չի վերապահել կադաստրային քարտեզում ուղղում կատարելու նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Քրիստինե Հովհաննիսյանը նաև անհրաժեշտություն չունեի, ի լրումն իրավունքի պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջով պարտավորեցման հայցի, ներկայացնել նաև գործողության կատարման հայց՝ կադաստրային քարտեզում ուղղում կատարելու պահանջով. միայն պարտավորեցման հայցը բավարար դատավարական միջոց էր նրա կողմից դատական պաշտպանության դիմելու նպատակն իրացնելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերը նշված պատճառաբանությամբ կադաստրային քարտեզում ուղղում կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով վեճը ենթակա չէ քննության որևէ դատարանում, որպիսի պայմաններում առկա է գործի վարույթը նշված պահանջի մասով կարճելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմք (վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության):

Ինչ վերաբերում է գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու վերաբերյալ պահանջին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն

արձանագրում է, որ սեփականության իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու, դադարեցնելու և իրավունքի պետական գրանցումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմնի համար ծագում է իրավունքը գրանցելու պարտականությունը:

Սույն դեպքում Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ բացակայել են հայցվոր Քրիստինե Հովհաննիսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը մերժելու՝ Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված հիմքերը: Այս առչությանը Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա իրավիճակում կիրառելի չէ Վերաքննիչ դատարանի կողմից կիրառված և պարտավորեցման հայցի մերժման հիմքում դրված՝ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ըստ որի՝ պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պարտավոր է մերժել իրավունքի պետական գրանցումը, եթե անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ առկա է գրանցված իրավունք կամ սահմանափակում կամ նախնական նշում, որը բացառում է ներկայացված իրավունքի կամ սահմանափակման գրանցումը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ այն իրավիճակում, երբ իրավունքի պետական գրանցում հայցող անձի գույքը կամ դրա մի հատվածը կադաստրային քարտեզում համադրվում է գրանցված իրավունք ունեցող անձի անշարժ գույքի հետ, որևէ կերպ չի ենթադրում, որ իրավունքի պետական գրանցում հայցող անձի գույքի համադրվող մասի նկատմամբ առկա է գրանցված իրավունք: Նշված իրավիճակում առկա գրանցված իրավունքը վերաբերում է ոչ թե իրավունքի պետական գրանցում հայցող անձի գույքին, այլ այդ գույքի հետ համադրվող գույքին: Այլ կերպ՝ նշված իրավիճակում առկա գրանցված իրավունքը մեկ այլ գույքի՝ համադրվող գույքի նկատմամբ գրանցված իրավունքն է: Հետևաբար, սույն դեպքում առկա չի եղել Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ հայցվորի սեփականության իրավունքի գրանցումը մերժելու հիմք՝ հակառակ Վերաքննիչ դատարանի պնդման:

Միաժամանակ, վերը նշված իրավական դիրքորոշումներին համապատասխան՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ղեկավարի 08.10.2018 թվականի թիվ 243 գրությամբ դրսևորված՝ կադաստրային քարտեզում ուղղում կատարելու իրավասու մարմնի նախաձեռնության պայմաններում Կոմիտեն, ի կատարումն անձի սեփականության իրավունքի պաշտպանության պոզիտիվ պարտականության, պարտավոր էր անհրաժեշտ պայմաններ ստեղծել հայցվոր Քրիստինե Հովհաննիսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը կատարելու համար:

Վերոհիշյալի հիման վրա, հաշվի առնելով, որ հայցվորի սեփականության իրավունքի պետական գրանցման համար, կադաստրային քարտեզի սխալից բացի, որևէ այլ փաստական կամ իրավական խոչընդոտ առկա չէ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ հայցվորի՝ սեփականության իրավունքի պետական գրանցման պահանջն իրավաչափ է, և Կոմիտեն պետք է պարտավորեցվի կատարելու հայցվորի սեփականության իրավունքի պետական գրանցում:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են՝ դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծախսերի հատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, եթե գործի վարույթը կարճվում է, բացառությամբ նույն Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 10-րդ կետերում նշված դեպքերի: Նշված դեպքերում դատարանը կարող է դատական ծախսերի հատուցման պարտականությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն դնել պատասխանողի վրա:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորի կամ բողոք բերողի պահանջները բավարարվում են մասամբ, ապա հաշվանցման եղանակով դատարանը կարող է հայցվորին, բողոք բերողին և պատասխանողին փոխադարձաբար ազատել դատական ծախսերի հատուցումից կամ համաչափորեն բաշխել դատական ծախսերը նրանց միջև:

Հաշվի առնելով, որ Քրիստինե Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, ինչի արդյունքում հայցը բավարարվում է մասնակիորեն, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցը պետք է լուծվի հետևյալ կերպ.

Քրիստինե Հովհաննիսյանը հայցադիմում ներկայացնելու համար վճարել է 8.000 ՀՀ դրամ պետական տուրք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցադիմումի համար սահմանված պետական տուրքի վճարման պարտականությունը պետք է համաչափորեն դրվի թե՛ Քրիստինե Հովհաննիսյանի և թե՛ Կոմիտեի վրա: Ըստ այդմ՝ պատասխանող Կոմիտեն պարտավոր է Քրիստինե Հովհաննիսյանին հատուցել հայցադիմումի համար վերջինիս կողմից արդեն իսկ վճարված 8.000 ՀՀ դրամ պետական տուրքի կեսը՝ 4.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Քրիստինե Հովհաննիսյանը պարտավոր է Կոմիտեին հատուցել վերաքննիչ բողոքի համար Կոմիտեի կողմից վճարված 20.000 ՀՀ դրամ պետական տուրքի կեսը՝ 10.000 ՀՀ դրամ:

Վճռաբեկ բողոք ներկայացնելու համար հայցվորը վճարել է 40.000 ՀՀ դրամ պետական տուրք: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատասխանող Կոմիտեն պարտավոր է հայցվոր Քրիստինե Հովհաննիսյանին հատուցել վճռաբեկ բողոքի համար վերջինիս կողմից վճարված 40.000 ՀՀ դրամ պետական տուրքից 20.000 ՀՀ դրամը:

Միաժամանակ, հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի (գ) կետի նորմը (կիրառելի խմբագրությամբ)՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ 40.000 ՀՀ դրամ պետական տուրքից 20.000 ՀՀ դրամը ենթակա է վերադարձման հայցվոր Քրիստինե Հովհաննիսյանին:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.02.2022 թվականի որոշումը՝ կադաստրային քարտեզի ուղղում կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասով թիվ ՎԴ/11987/05/18 վարչական գործի վարույթը կարճելու մասով, թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.02.2022 թվականի որոշումը՝ Քրիստինե Հովհաննիսյանի հայցը նվիրատվության գործարքից բխող, Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց, թիվ 47 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Քրիստինե Հովհաննիսյանի սեփականության իրավունքը գրանցելուն պարտավորեցնելու պահանջի մասով ՀՀ վարչական դատարանի 24.06.2020 թվականի վճիռը բեկանելու մասով, բեկանել և փոփոխել՝ Քրիստինե Հովհաննիսյանի հայցը նվիրատվության գործարքից բխող, Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց, թիվ 47 հասցեում գտնվող անշարժ գույքի

նկատմամբ Քրիստինե Հովհաննիսյանի սեփականության իրավունքը գրանցելուն պարտավորեցնելու պահանջի մասով բավարարել: Պարտավորեցնել ՀՀ կադաստրի կոմիտեին կատարել Քրիստինե Հովհաննիսյանի սեփականության իրավունքի պետական գրանցում Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնքի 13-րդ փողոց, թիվ 47 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ:

2. ՀՀ կադաստրի կոմիտեից հոգուտ Քրիստինե Հովհաննիսյանի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի համաչափ բաշխման արդյունքում հատուցման ենթակա գումար:

ՀՀ կադաստրի կոմիտեից հոգուտ Քրիստինե Հովհաննիսյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի հատուցման ենթակա գումար:

Քրիստինե Հովհաննիսյանից հոգուտ ՀՀ կադաստրի կոմիտեի բռնագանձել 10.000 ՀՀ դրամ որպես վերաքննիչ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի համաչափ բաշխման արդյունքում հատուցման ենթակա գումար:

Քրիստինե Հովհաննիսյանին վերադարձնել վճարելի բողոքի համար վճարված 40.000 ՀՀ դրամ պետական տուրքից 20.000 ՀՀ դրամը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/11331/05/18  
2023թ.

Վարչական գործ թիվ

ՎԳ/11331/05/18

Նախագահող դատավոր՝

Ա. Պողոսյան

Դատավորներ՝

Ա. Բաբայան

Ա. Սարգսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*զեկուցող* Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ  
Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի փետրվարի 01-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ներկայումս՝ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով) (այսուհետ՝ Հանձնաժողով) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.12.2020 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «Սվետա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Հանձնաժողովի՝ վարչական ակտն անվավեր կամ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել 19.10.2018 թվականի թիվ 147-Ա վարչական ակտը:

05.03.2019 թվականին ՀՀ վարչական դատարան ներկայացրած հայցի հիմքի և առարկայի լրացմամբ հայցվորը խնդրել է ճանաչել 19.10.2018 թվականի թիվ 147-Ա որոշման առ ոչինչ լինելը կամ անվավեր ճանաչել 19.10.2018 թվականի թիվ 147-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքունյան) (այսուհետ՝ Դատարան) 12.09.2019 թվականի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչվել Հանձնաժողովի 19.10.2018 թվականի թիվ 147-Ա որոշումը: Ընկերության հայցն ընդդեմ Հանձնաժողովի՝ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջի մասով, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.12.2020 թվականի որոշմամբ Հանձնաժողովի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 12.09.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հանձնաժողովը (ի պաշտոնե ներկայացուցիչ՝ Գեղամ Գևորգյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, «Տարեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 2-րդ, 4-րդ, 11-րդ և 14-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատարավարության օրենսգրքի 5-րդ, 27-րդ հոդվածները և 144-րդ հոդվածի 1-ին մասը, կիրառել է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածը, որը չպետք է կիրառեր:*

*Բողոք քերած անձը նշված պնդումը պարզապես չի հետևյալ փաստարկներով.*

«Մանդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված տվյալները մակնշելու պահանջն ուղղված է հենց ապրանքը ձեռք բերողին ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովմանը: Այսինքն՝ օրենսդրությամբ նախատեսված մակնշման համար պարտադիր տեղեկատվության բացակայությունն ինքնին վկայում է այն մասին, որ սպառողը հնարավորություն չունի ամբողջական պատկերացում կազմելու իրացվող ապրանքի վերաբերյալ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասության կառուցվածքային և համապարփակ վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ նշված հոդվածի 2-րդ մասով ամրագրված հասարակության մոլորեցման ոչ բոլոր դրսևորումներն անբարեխիղճ մրցակցություն որակելիս պետք է լրացուցիչ հիմնավորել նաև այն հանգամանքը, որ դրանց արդյունքում սպառողին հնարավորություն չի տրվում ամբողջական պատկերացում կազմել իրացվող կամ գովազդվող ապրանքի վերաբերյալ, քանի որ մի շարք դրսևորումներ, ինչպես օրենսդրությամբ նախատեսված տվյալների բացակայությունը, ինքնին վկայում է ապրանքի մասին ամբողջական պատկերացում կազմելու հնարավորության բացակայության մասին:

Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանը պատշաճ չի վերլուծել և արդյունքում սխալ է մեկնաբանել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված դրույթները՝ սպառողներին ամբողջական պատկերացում կազմելու հնարավորության բացակայությունը դիտելով հայցվորի գործողությունը որպես հասարակության մոլորեցում որակելու պայման: Մինչդեռ, վերոնշյալ նորմի ճիշտ մեկնաբանման արդյունքում



Դատարանը կհանգեր ճիշտ հակառակ եզրահանգման՝ արդյունքում իրավաչափ համարելով Հանձնաժողովի թիվ 147-Ա որոշումը:

Վերաքննիչ դատարանը, խախտելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործված «սպառող» հասկացությունը նույնացրել է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում սահմանված «սպառող» հասկացության հետ, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 09.12.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 18.10.2017 թվականի թիվ Ա5429315671, 02.03.2018 թվականի թիվ Ա7042771946, 27.03.2018 թվականի թիվ Ա4899953667, 04.05.2018 թվականի թիվ Ա9027031131, 29.06.2018 թվականի թիվ Ա7481168644 հարկային հաշիվների համաձայն՝ Ընկերությունը «Արմինաշոդ» ՍՊԸ-ին մատակարարել է կարագ (**հատոր 1-ին, գ.թ. 64-68**):

2) «Ակադեմիկոս Ա.Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲ ընկերության և «Արմինաշոդ» ՍՊԸ-ի միջև 08.01.2018 թվականին կնքված պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի համաձայն՝ «Արմինաշոդ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Ակադեմիկոս Ա.Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ին մատակարարել պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (**հատոր 1-ին, գ.թ. 39-44**):

3) 23.01.2018 թվականի թիվ Ա54353116927, 21.02.2018 թվականի թիվ Ա7525863340, 26.03.2018 թվականի թիվ Ա2616521908, 25.04.2018 թվականի թիվ Ա8848537702, 25.05.2018 թվականի թիվ Ա4785344924, 15.06.2018 թվականի թիվ Ա1334198095, 26.06.2018 թվականի թիվ Ա0706597905 հարկային հաշիվների համաձայն՝ «Արմինաշոդ» ՍՊԸ-ն «Ակադեմիկոս Ա.Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ին մատակարարել է մթերք, այդ թվում՝ կարագ (**հատոր 1-ին, գ.թ. 53-63**):

4) Հանձնաժողովի նախագահի 28.06.2018 թվականի թիվ 102-Ա հրամանի համաձայն՝ հրամայվել է «Ակադեմիկոս Ա.Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի մոտ 29.06.2018 թվականից մինչև 13.07.2018 թվականը ներառյալ տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող փաստացի գործունեության, ինչպես նաև պետական գնումների շրջանակներում ձեռք բերված սննդամթերքի որակի և այլ բնութագրերի բացահայտման նպատակով Հանձնաժողովի աշխատակազմի վերահսկողության վարչության ստուգումների բաժնի պետ-վարչության պետի տեղակալ Վահան Մողոմոնյանին և նույն վարչության հաշվառման և հսկողության իրականացման բաժնի առաջատար մասնագետ Արմեն Հովհաննիսյանին իրականացնել դիտանցում (**հատոր 1-ին, գ.թ. 33**):

5) 29.06.2018 թվականին կազմված թիվ 102 արձանագրության համաձայն՝ «Ակադեմիկոս Ա.Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի

մոտ իրականացվել է դիտանցում: Դիտանցման արդյունքում արձանագրվել է, որ «Ակադեմիկոս Ա.Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ընկերության սննդամթերքի պահեստում, ի թիվս այլնի, առկա է եղել նաև կարագ սերուցքային՝ բաղադրությունը պաստերիզացված, կովի կաթնային սերուցք, յուղայնությունը 82,5%. արտադրող՝ «Ռուս Մոլոկո» ՍՊԸ, հասցե՝ ՌԴ, Ստավրոպոլի մարզ, ք. Ժելենավոդսկ (**հատոր 1-ին, գ.թ. 34-36**):

6) Հանձնաժողովի նախագահի 22.08.2018 թվականի թիվ 97-Ա որոշման համաձայն՝ որոշվել է Ընկերության կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հնարավոր խախտման վերաբերյալ վարչական վարույթ հարուցել (**հատոր 1-ին, գ.թ. 85-87**):

7) Հանձնաժողովի նախագահի 19.10.2018 թվականի թիվ 147-Ա որոշման համաձայն՝ Ընկերության գործողություններն ու վարքագիծը, այն է՝ նույն որոշմամբ արձանագրված ապրանքի փաթեթվածքի մակնշվածքում ներմուծողի վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ և պահպանման ժամկետի, պահպանման պայմանների վերաբերյալ հայերեն տեղեկությունների բացակայությամբ ապրանք իրացնելը, որակվել են որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ հասարակության մոլորեցում, և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտման համար «Սվետա» ՍՊԸ-ի նկատմամբ նշանակվել է տուգանք երեք միլիոն դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 97-102**):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 14-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

(...):

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

(...)

3. Օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական իր առաքելությունն իրացնելու և ըստ այդմ Օրենքի 14-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ իրավունքը զարգացնելու անհրաժեշտությունից ելնելով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե ապրանքի փաթեթվածքի մակնշվածքում ներմուծողի վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ և պահպանման ժամկետի, պահպանման պայմանների վերաբերյալ հայերեն տեղեկությունների բացակայությամբ ապրանք իրացնելն արդյո՞ք կարող է որակվել որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում, եթե տնտեսվարողի կողմից տվ յալ ապրանքն իրացվել է ոչ սպառողին:

Տնտեսվարող սուբյեկտների՝ առավելագույն շահույթ ստանալու ձգտումը հաճախ բախվում է այլ տնտեսվարող սուբյեկտների շահերին և ստիպում նրանց մրցակցել միմյանց հետ՝ վճարունակ սպառողների պահանջարկը ներգրավելու համար, այդ թվում՝ դրսևորելով անբարեխիղճ մրցակցության վարքագիծ: Այլ տնտեսվարող սուբյեկտների իրավունքների ռոտահարմանը զուգահեռ հաճախ անտեսվում են նաև հասարակության և, մասնավորապես, սպառողների շահերը:

Պետությունը կոչված է համապատասխան իրավական կառուցակարգերի ներդրմամբ հնարավորինս հստակ կանոնակարգելու տնտեսական մրցակցության ոլորտը, որի վերջնական նպատակը ազատ տնտեսական մրցակցության պաշտպանությունը, սպառողների իրավունքների խախտումները կանխելն ու դրանց վնասակար հետևանքները վերացնելն է:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածով ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորվում է յուրաքանչյուրի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, իսկ 86-րդ հոդվածի համաձայն՝ գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանությունը, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողությունը ներառված են տնտեսական ոլորտում պետության քաղաքականության հիմնական նպատակների մեջ:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանադրական մակարդակով ամրագրվել է շուկայում մրցակցության խաթարման առանձին ձևերի՝ շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման, անբարեխիղճ մրցակցության և հակամրցակցային համաձայնությունների արգելքը:

Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի 10 bis հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Միության երկրները պարտավոր են Միությունում մասնակցող երկրների քաղաքացիներին արդյունավետ պահպանությամբ ապահովել ոչ բարեխիղճ մրցակցությունից: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ոչ բարեխիղճ մրցակցության գործողություն է համարվում մրցակցության ցանկացած գործողություն, որը հակասում է արդյունաբերական և առևտրական գործերում արդար սովորույթներին: Իսկ նշված հոդվածի 3-րդ կետն առանձնացնում է մասնավոր արգելքները:

1) բոլոր գործողությունները, որոնք ընդունակ են որևէ ձևով շփոթություն առաջացնելու ձեռնարկության, մթերքների կամ արդյունաբերական կամ առևտրական գործունեության մրցակցի նկատմամբ,

2) սուտ պնդումները, որոնք առևտրական գործունեություն իրականացնելիս ընդունակ են վարկաբեկելու ձեռնարկությանը, ապրանքները կամ մրցակցի արդյունաբերական կամ առևտրական գործունեությանը,

3) նշումները կամ պնդումները, որոնց օգտագործումը առևտրային գործունեություն իրականացնելիս կարող է հասարակությանը մոլորության մեջ գցել ապրանքների բնույթի, պատրաստման եղանակի, հատկությունների, կիրառման պիտանելիության կամ քանակի վերաբերյալ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսվարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է նույն օրենքին, այլ օրենքներին, իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության գործողություններ են նույն օրենքի 12-15-րդ, 15.1-ին և 16-րդ հոդվածներում թվարկված դեպքերը, ինչպես նաև նույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողություններ:

Վերը նշված նորմերի բովանդակությունից բխում է, որ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը բացահայտում է անբարեխիղճ մրցակցության բովանդակությունը՝ առանձնացնելով այն հիմնական հատկանիշները, որոնց համակցությամբ պայմանավորված՝ տնտեսվարողի տվյալ գործողությունը կամ անգործությունը որակվում է որպես անբարեխիղճ մրցակցություն: Այդ հատկանիշներն են.

- Օրենքին, այլ օրենքների, իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին հակասությունը,

- մրցակից տնտեսվարող սուբյեկտների միջև, կամ տնտեսվարողի ու սպառողների միջև բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքների խախտումը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ վերը նշված հատկանիշների համակցությունն է տնտեսվարողի այս կամ այն գործողությանը կամ անգործությանը հաղորդում անբարեխիղճ մրցակցության որակ: Անբարեխիղճ մրցակցության պարտադիր հատկանիշ է կամ մրցակից տնտեսվարող սուբյեկտների

միջև, կամ տնտեսվարողի ու սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքների խախտումը: Այսինքն՝ տվյալ տնտեսվարողի կողմից դրսևորվող անբարեխիղճ մրցակցության ազդեցությունը կրող սուբյեկտներ են կամ վերջինիս մրցակից տնտեսվարողները, կամ *սպառողները*: Այլ կերպ՝ անբարեխիղճ մրցակցության վարքագիծն ունի իր օբյեկտային կազմը. վերջինս ներառում է կամ տվյալ վարքագիծը դրսևորող տնտեսվարողի մրցակից տնտեսվարող սուբյեկտներին, կամ *սպառողին*:

Օրենսդիրը, Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում անբարեխիղճ մրցակցությանը բնորոշ պարտադիր հատկանիշները, միաժամանակ նույն հոդվածի 4-րդ մասում առանձնացրել է անբարեխիղճ մրցակցության կոնկրետ դրսևորումների որոշակի ոչ սպառիչ շրջանակ: Այն է՝ տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության վերաբերյալ շփոթություն առաջացնելը (12-րդ հոդված), տնտեսվարող սուբյեկտին կամ նրա գործունեությունը վարկաբեկելը (13-րդ հոդված), հասարակությանը մոլորեցնելը (14-րդ հոդված), տնտեսվարող սուբյեկտի համբավը, վարկարժեքը վնասելը (15-րդ հոդված), անտեղի համեմատություններ կատարելը (15.1-ին հոդված), անբարեխիղճ մրցակցությունը չբացահայտված տեղեկատվության նկատմամբ (16-րդ հոդված):

Հաշվի առնելով Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում անբարեխիղճ մրցակցության բովանդակությունը պայմանավորող պարտադիր հատկանիշների վերը նշված շրջանակը, ինչպես նաև Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «ինչպես նաև նույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողություններ» ձևակերպումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 12-15-րդ, 15.1-ին և 16-րդ հոդվածներում թվարկված՝ անբարեխիղճ մրցակցության բոլոր կոնկրետ գործողությունները (դրսևորումները), այդ թվում՝ հասարակության մոլորեցումը, օժտված են Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում անբարեխիղճ մրցակցության բովանդակությունը պայմանավորող վերը նշված պարտադիր հատկանիշներով: Մասնավորապես, Օրենքի 12-15-րդ, 15.1-ին և 16-րդ հոդվածներում թվարկված՝ անբարեխիղճ մրցակցության բոլոր կոնկրետ գործողությունների (դրսևորումների), այդ թվում՝ հասարակության մոլորեցման, պարտադիր հատկանիշ է այդ գործողության բացասական ազդեցությունը կամ մրցակից տնտեսվարողների, կամ սպառողի նկատմամբ, որպիսի ազդեցությունը դրսևորվում է վերջիններիս հանդեպ բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքների խախտմամբ:

Ըստ Օրենքի 14-րդ հոդվածի՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորում է հասարակության մոլորեցումը: Վերջինս նույն հոդվածի 1-ին մասում բնորոշվում է որպես ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկված ապրանքների վերաբերյալ:

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով տրված ընդհանուր սահմանմանը զուգահեռ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսվել են հասարակության մոլորեցման առանձին կոնկրետ դրսևորումներ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով մոլորեցումը կարող է ծագել ապրանքների գովազդմանը կամ տարածմանը նպաստող միջոցառումների իրականացման ընթացքում, մասնավորապես, տեղի ունենալ ապրանքի աշխարհագրական ծագման, ինչպես նաև նույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված առանձնահատկությունների նկատմամբ: Մոլորեցում է համարվում նաև ապրանքների որակն անհիմն չափազանցնելը, որակի, քանակի կամ այլ բնութագրերի վերաբերյալ

համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման), կեղծիքը գովազդատուի անձի վերաբերյալ: Հասարակության մոլորեցում է համարվում նաև ապրանքի արտադրության տարեթվի, ամսվա, օրվա կամ պահպանման ժամկետի, տվյալ ապրանքը արտադրող կամ ներկրող տնտեսվարող սուբյեկտի անվան (անվանման) կամ հասցեի կամ օրենսդրությամբ նախատեսված տվյալների կամ պայմանների վերաբերյալ հայերեն նշումների բացակայությունը կամ օրենքին հակասող նշումների առկայությունը կամ գովազդի մեջ (գովազդման ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի, կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը, որը սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել իրացվող կամ գովազդվող ապրանքի վերաբերյալ կամ օրենքին հակասող գովազդը:

Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» մոլորեցնել բառը բացատրվել է՝ «մոլորեցնել, թյուրիմացության մեջ գցել» իմաստներով, իսկ Աշոտ Մուքիայանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանում» որպես մոլորեցնել բառի հոմանիշներ, ի թիվս, այնի նշված է «սխալեցնել, ապակողմնորոշել, խաբել, սայթաքեցնել»: Եզրույթաբանական վերլուծության ենթարկելով «մոլորեցնել» հասկացությունը՝ կարելի է եզրահանգել, որ տնտեսվարող սուբյեկտի վարքագիծը «հասարակությանը մոլորեցնել» որակելու չափանիշը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների սպառողական հատկությունների վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող, թյուր, ոչ ամբողջական տպավորության ստեղծումն է հասարակության մոտ:

Օրենքի 11-րդ հոդվածի և 14-րդ հոդվածի համադրված վերլուծության արդյունքում հաշվի առնելով, որ հասարակության մոլորեցումն անբարեխիղճ մրցակցության դրսևորում է և ըստ այդմ՝ կրում է այն բոլոր հատկանիշները, որոնք օրենսդիրն Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում վերագրել է անբարեխիղճ մրցակցությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում որպես հասարակության մոլորեցում դիտարկվող գործողությունների, այդ թվում՝ ապրանքը արտադրող կամ ներկրող տնտեսվարող սուբյեկտի անվան (անվանման) կամ հասցեի կամ օրենսդրությամբ նախատեսված տվյալների կամ պայմանների վերաբերյալ հայերեն նշումների բացակայության, պարտադիր հատկանիշը տվյալ գործողության բացասական ազդեցությունն է կամ մրցակից տնտեսվարողների, կամ սպառողի նկատմամբ, որպիսի ազդեցությունը դրսևորվում է վերջիններիս հանդեպ բարեխիղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքների խախտմամբ: Այլ կերպ՝ Օրենքի 14-րդ հոդվածում նշված հասարակության մոլորեցում դիտարկվող գործողությունները կամ անգործությունն ունեն իրենց կոնկրետ հասցեատերը, այն է՝ կամ մրցակցող տնտեսվարողը, կամ սպառողը: Ըստ այդմ՝ Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կամ անգործությունը կարող են որակվել որպես հասարակության մոլորեցում, եթե այդ գործողություններով կամ անգործությամբ նշված սկզբունքները խախտվել են կամ մրցակցող տնտեսվարողների, կամ սպառողների հանդեպ: Ըստ այդմ՝ Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կամ անգործությունը չեն կարող որակվել որպես հասարակության մոլորեցում, եթե առկա չէ այդ գործողությունների կամ անգործության բացասական ազդեցությունը կրող օբյեկտը՝ մրցակցող տնտեսվարողը կամ սպառողը:

Ինչ վերաբերում է «սպառող» հասկացության բովանդակությանը, ապա Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ օրենսդիրն սպառող հասկացությունը տարանջատել է գնորդ, ստացող, ընդունող հասկացություններից. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապրանքային շուկայի սուբյեկտներ են տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացնողը (վաճառողը, մատակարարը, օտարողը, մատուցողը, կատարողը) և ձեռքբերողը (գնորդը, ստացողը, ընդունողը, սպառողը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ խնդրո առարկա իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ Օրենքը չէր բացահայտում «սպառող» հասկացության բովանդակությունը (Օրենքում նշված հասկացության սահմանումը տրվել է 31.05.2021 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-92-Ն օրենքով), որպիսի պայմաններում կիրառելի էր «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում սպառող հասկացության սահմանումը՝ հաշվի առնելով, որ այդ սահմանումը տրված չէ միայն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով: Ըստ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ սպառող է բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացին (...):

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ ապրանքն արտադրող կամ ներկրող տնտեսվարող սուբյեկտի անվան (անվանման) կամ օրենսդրությամբ նախատեսված տվյալների կամ պայմանների վերաբերյալ հայերեն նշումների (գովազդման ընթացքում) բացակայությունն անբարեխիղճ մրցակցություն որակելու համար պետք է հաստատվի այն փաստը, որ սպառողին հնարավորություն չի տրվել ամբողջական պատկերացում կազմել իրացվող ապրանքի վերաբերյալ:

Ի ամփոփումն Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ սուբյեկտի՝ Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում նշված այս կամ այն գործողությունը որպես հասարակության մոլորեցում գնահատելիս պետք է, ի թիվս այլնի, պարզել այդ գործողությունների (անգործության) բացասական ազդեցությունը կրող օբյեկտի՝ մրցակցող տնտեսվարողի կամ սպառողի առկայությունը: Ըստ այդմ՝ ապրանքի փաթեթվածքի մակնշվածքում ներմուծողի վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ և պահպանման ժամկետի, պահպանման պայմանների վերաբերյալ հայերեն տեղեկությունների բացակայությամբ ապրանք իրացնելը չի կարող որակվել որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում, եթե տնտեսվարողի կողմից տվյալ ապրանքն իրացվել է ոչ սպառողին:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Դիմելով դատարան՝ ԸՆկերությունը պահանջել է ճանաչել 19.10.2018 թվականի թիվ 147-Ա որոշման առ ոչինչ լինելը կամ անվավեր ճանաչել 19.10.2018 թվականի թիվ 147-Ա որոշումը:

***Դատարանը*** 12.09.2019 թվականի վճռով հայցը բավարարել է մասնակիորեն՝ անվավեր է ճանաչել Հանձնաժողովի 19.10.2018 թվականի թիվ 147-Ա որոշումը՝ պատճառաբանելով, որ դատաքննությամբ հետազոտված ապացույցներով, մասնավորապես՝ հարկային հաշիվներով հիմնավորվել է, որ «Սվետա» ՍՊ

ընկերությունը կարագը մատակարարել է «Արմինաշոդ» ՍՊ ընկերությանը, որը չի կարող դիտվել որպես սպառող:

Ըստ Դատարանի՝ հայցվոր ընկերության գործողությունները, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով, չէին կարող որակվել որպես անբարեխիղճ մրցակցություն, քանի որ բացակայել է իրացվող ապրանքի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու՝ սպառողին հնարավորություն չտալու վավերապայմանը:

**Վերաքննիչ դատարանը**, 09.12.2020 թվականի որոշմամբ մերժելով Հանձնաժողովի վերաքննիչ բողոքը, պատճառաբանել է նաև, որ սույն գործով Ընկերությունը մատակարարել է ապրանք, այդ թվում՝ «կարագ» անվանումով, «Արմինաշոդ» ՍՊԸ-ին, որն իր հերթին, մատակարարել է ապրանք այլ սուբյեկտի՝ «Ակադեմիկոս Ա.Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ին: Նման պայմաններում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի ուժով «Արմինաշոդ» ՍՊԸ-ն Ընկերության հետ հարաբերություններում կարող է գնահատվել որպես ապրանքի ձեռքբերող (գնորդ), սակայն ոչ որպես սպառող, քանի որ սպառող լինելը նկատարում է բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված մտադրությամբ ապրանքի պատվիրում կամ ձեռք բերում, այլ ոչ թե վերավաճառք:

Սույն գործի փաստական հանգամանքները գնահատելով վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությանը վերագրված արարքը հասարակության մոլորեցում որակելու նպատակի համար էական նշանակություն է ստանում հետևյալ փաստի պարզումը. արդյոք խնդրո առարկա ապրանքը հայցվոր Ընկերության կողմից իրացվել է սպառողին, այսինքն՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացուն:

Ըստ վարչական վարույթի նյութերի՝ Հանձնաժողովի նախագահի 28.06.2018 թվականի թիվ 102-Ա հրամանով հանձնարարվել է «Ակադեմիկոս Ա.Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության մոտ 29.06.2018 թվականից մինչև 13.07.2018 թվականը ներառյալ տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող փաստացի գործունեության, ինչպես նաև պետական գնումների շրջանակներում ձեռք բերված սննդամթերքի որակի և այլ բնութագրերի բացահայտման նպատակով իրականացնել դիտանցում: Դիտանցման արդյունքների վերաբերյալ կազմվել է թիվ 102 արձանագրությունը, համաձայն որի՝ «Ակադեմիկոս Ա.Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ընկերության սննդամթերքի պահեստում, ի թիվս այլնի, առկա է եղել նաև կարագ սերուցքային՝ բաղադրությունը պաստերիզացված, կովի կաթնային սերուցք, յուղայնությունը 82,5%, արտադրող՝ «Ռուս Մոլոկո» ՍՊԸ, հասցե՝ ՌԴ, Ստավրոպոլի մարզ, ք. Ժելենավոդսկ: Ըստ գործի նյութերում առկա՝ «Ակադեմիկոս Ա.Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲ ընկերության և «Արմինաշոդ» ՍՊԸ-ի միջև 08.01.2018 թվականին կնքված պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի՝ «Արմինաշոդ» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով «Ակադեմիկոս Ա.Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲ ընկերությանը մատակարարել պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով



նախատեսված ապրանքը: Վարչական վարույթի նյութերում առկա հարկային հաշիվների համաձայն՝ «Արմինաշոդ» ՍՊԸ-ն «Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲ ընկերությանը մատակարարել է մթերք, այդ թվում կարագ: Իսկ 18.10.2017 թվականի թիվ Ա5429315671, 02.03.2018 թվականի թիվ Ա7042771946, 27.03.2018 թվականի թիվ Ա4899953667, 04.05.2018 թվականի թիվ Ա9027031131, 29.06.2018 թվականի թիվ Ա7481168644 հարկային հաշիվների համաձայն՝ հայցվոր Ընկերությունը «Արմինաշոդ» ՍՊԸ-ին մատակարարել է կարագ:

Հանձնաժողովի 19.10.2018 թվականի թիվ 147-Ա որոշմամբ արձանագրվել է, որ վարչական նյութերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված այլ ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում հաստատվել է Ընկերության կողմից «Արմինաշոդ» ընկերությանը ապրանքի սպառողական փաթեթվածքի վրա մակնշվածքում ներմուծողի վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ և պահպանման ժամկետի, պահպանման պայմանների վերաբերյալ հայերեն տեղեկությունների բացակայությամբ ապրանք իրացնելու փաստը:

Ըստ Հանձնաժողովի որոշման՝ Ընկերության կողմից նույն որոշմամբ արձանագրված ապրանքի փաթեթվածքի մակնշվածքում ներմուծողի վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ և պահպանման ժամկետի, պահպանման պայմանների վերաբերյալ հայերեն տեղեկությունների բացակայությամբ ապրանք իրացնելը, կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսվարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկված ապրանքների վերաբերյալ, և սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմել իրացվող կամ գովազդվող ապրանքի վերաբերյալ, ուստի այն համարվում է անբարեխիղճ մրցակցության գործողություն:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հանձնաժողովն անբարեխիղճ մրցակցության գործողություն՝ հասարակության մոլորեցում է համարել Ընկերության կողմից ապրանքի փաթեթվածքի մակնշվածքում ներմուծողի վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ և պահպանման ժամկետի, պահպանման պայմանների վերաբերյալ հայերեն տեղեկությունների բացակայությամբ ապրանք իրացնելը: Այլ կերպ՝ Հանձնաժողովն Ընկերությանն անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվության է ենթարկել այն բանի համար, որ Ընկերությունն «Արմինաշոդ» ՍՊԸ-ին (որն էլ իր հերթին ապրանքը մատակարարել է «Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն» ՓԲԸ-ին) է մատակարարել շուկայից ձեռք բերված «կարագ» անվանումը կրող ապրանք, որի փաթեթվածքի մակնշման վրա բացակայում է ներմուծողի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև պահպանման ժամկետի, պահպանման պայմանների վերաբերյալ հայերեն տեղեկատվությունը:

Վճռաբեկ դատարանը գործում առկա ապացույցների բավարար համակցությամբ հաստատված է համարում, որ «Արմինաշոդ» ՍՊԸ-ն, խնդրո առարկա ապրանքը գնելով Ընկերությունից, իր հերթին այն վերավաճառել է մեկ այլ տնտեսվարողի, ինչը նշանակում է, որ «Արմինաշոդ» ՍՊԸ-ն տվյալ ապրանքը ձեռք է բերել ոչ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման մտադրությամբ: Ըստ այդմ՝ սույն դեպքում կիրառելի համարելով «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով՝ «սպառող» հասկացության սահմանումը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

«Արմինաշոդ» ՄՊԸ-ն խնդրո առարկա հարաբերություններում չի հանդիսացել սպառող՝ չունենալով սպառողին բնորոշ հատկանիշները:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը խնդրո առարկա ապրանքը վաճառել է ոչ սպառողին, առկա չէ Ընկերություն-սպառող անմիջական կապը, որպիսի պայմաններում բացակայում է անբարեխիղճ մրցակցությանը բնորոշ հիմնական հատկանիշներից մեկը՝ սպառողի հանդեպ բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքների խախտման փաստը: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից առանց փաթեթվածքի մակնշման վրա ներմուծողի վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև պահպանման ժամկետի, պահպանման պայմանների վերաբերյալ հայերեն տեղեկատվության բացակայությամբ, «կարագ» անվանումը կրող ապրանքն իրացնելը չի կարող որակվել որպես «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի շրջանակներում հասարակության մոլորեցում:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, բավարարելով Ընկերության հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.12.2020 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

# 19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/2654/05/14  
2023թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/2654/05/14

Նախագահող դատավոր՝

Ա. Թովմասյան

Դատավորներ՝

Ա. Պողոսյան

Ա. Բաբայան

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*զեկուցող* Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի փետրվարի 17-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.12.2019 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Հանձնաժողովի, երրորդ անձ՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Կարգավորող հանձնաժողով)՝ 16.05.2014 թվականի թիվ 204-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է վերացնել 16.05.2014 թվականի ««Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 204-Ա որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) 01.12.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Գ. Ղարիբյան, դատավորներ՝ Ք. Մկոյան, Ա. Առաքելյան) 07.07.2016 թվականի որոշմամբ Հանձնաժողովի վերաքննիչ բողոքը բավարարվել է, ՀՀ վարչական դատարանի

01.12.2015 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նույն դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 19.06.2018 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.12.2019 թվականի որոշմամբ Հանձնաժողովի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 19.06.2018 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հանձնաժողովը (ներկայացուցիչ Գեղամ Գևորգյան):

Վճռաբեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ Գագիկ Թովմասյան) և Կարգավորող հանձնաժողովը (ներկայացուցիչ Գարեգին Բաղդասյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և չի կիրառել իրավահարաբերության ծագման պահին գործող «Տարեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «դ» և «ե» կետերը, որոնք պետք է կիրառեր, կիրառել է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածները, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 17-րդ, 41-րդ հոդվածները, որոնք չպետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 27.12.2006 թվականի «Էլեկտրական Էներգիայի մատակարարման և օգրագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 358-Ն որոշմամբ հաստատված կանոնների 13.1-րդ, 13.8-րդ կետերը, չի կիրառել 13.2-րդ կետը, սխալ է մեկնաբանել և կիրառել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» 21.12.2007 թվականի թիվ 659-Ն որոշումը, չի կիրառել ՀՀ կառավարության 08.05.2003թ. «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» թիվ 626-Ն որոշման 13-րդ կետը, խախտել է ՀՀ վարչական դատարանի օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասը, 27-րդ հոդվածը, 126-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերը:*

*Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի կողմից պայմանագրի կողմին կամ պայմանագիր կնքել ցանկացող անձին պայմանի պարտադրումը, որն իր բնույթով կամ իրականացման տեսանկյունից չի առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետով արգելված է որպես գերիշխող դիրքի չարաշահման դրսևորում:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ բազմաբնակարան շենքի դեպքում սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարների վճարման որևէ պարտավորություն բազմաբնակարան շենքի բնակարանի սեփականատերը չի կրում, այդ պարտավորությունը հստակ սահմանված է բազմաբնակարան շենքի կառուցապատողի համար:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել կառուցապատող-մատակարար կազմակերպություն-սպառող իրավահարաբերության առանձնահատկությունները, անտեսել է սույն գործում առկա մի շարք սպացույցներ և իրավահարաբերության պահին գործող ՀՀ կառավարության 08.05.2003 թվականի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» թիվ 626-Ն որոշման 13-րդ կետի պահանջները:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ Ընկերությունը, անկախ կառուցապատողի կողմից պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարված լինելու փաստից, իր ռիսկով կատարել և ավարտել է միացման աշխատանքները, ինչի արդյունքում 03.08.2010 թվականին կազմվել է Ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը, ապա կառուցապատողի կողմից վճարումներ չկատարելու հետևանքով վնասների ռիսկը կարող է կրել միայն Ընկերությունը, քանի որ Ընկերությունն ունեցել է պայմանագրով սահմանված բոլոր իրավունքները և երաշխիքները կառուցապատողի կողմից պարտավորությունների կատարում պահանջելու համար: Տվյալ դեպքում միացման նոր իրավահարաբերություններ շենքի բնակիչների հետ սկսելու և միացման աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը բացակայել է:

Վերաքննիչ դատարանը, Ընկերության կողմից լրացուցիչ պարտավորությունների պարտադրման բացակայությունը վերջինիս կողմից շենքի բնակիչներին առաջարկ ներկայացնելու հանգամանքով հիմնավորելով, անտեսել է, որ Ընկերությունը, առաջարկելով շենքի բնակիչներին մարել կառուցապատողի պարտքը՝ վճարել բազմաբնակարան շենքի միացման վճարը, շենքի սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելը և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելը պայմանավորել է բացառապես այդ պարտքը ամբողջությամբ մարելու պայմանով:

Վերաքննիչ դատարանը չի իրականացրել բոլոր սպացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտություն:

Կարգավորող հանձնաժողովի 09.04.2014 թվականի «Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղու 1/3 հասցեի բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու մասին» թիվ 79Ա որոշումը չի հանդիսանում վարչական ակտ, քանի որ այն չի համապատասխանում վարչական ակտին բնորոշ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված հատկանիշներին:

Հանձնաժողովը, Ընկերության գործողությունները որակել է որպես սպառողների նկատմամբ խտրական պայմանների կիրառում՝ հաշվի առնելով Կարգավորող հանձնաժողովի 27.12.2006 թվականի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 358-Ն որոշմամբ հաստատված կանոններով, ՀՀ կառավարության, Կարգավորող հանձնաժողովի և մի շարք այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումները, որոնցով սախատեսված չէ բազմաբնակարան շենքի բնակիչների պարտականություն Ընկերությանը վճարելու միացման վճարներ, և սահմանված է արգելք նրանցից պահանջելու սահմանված փաստաթղթերից բացի այլ փաստաթղթեր:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.12.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայքը մերժել կամ գործն ուղարկել համապատասխան դատարան՝ նոր քննության, և սահմանել նոր քննության ծավալը:

## **2.1 Վճարել բողոքի վերաբերյալ Ընկերության պատասխանի հիմնավորումները.**

Իրավաչափ չէ Հանձնաժողովի կողմից ներկայացված այն դիրքորոշումը, որ Ընկերությունը Կանոնների 13.2-րդ կետով նախատեսված փաստաթղթերից բացի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեի բնակիչներից պահանջել է վճարել կառուցապատողի կողմից չկատարված վճարումները՝ պարտքը համամասնորեն բաժանելով բոլոր բնակիչների միջև, ինչպես նաև այն պնդումը, որ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի մեկնաբանել կառուցապատող-մատակարար, կազմակերպություն-ապառող իրավահարաբերության առանձնահատկությունները, քանի որ Վերաքննիչ դատարանը 20.12.2019 թվականի որոշումը կայացնելիս առաջին հերթին հաշվի է առել սույն գործով ստեղծված իրադրության առանձնահատկությունները:

Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի իրավական կարգավիճակն ընդգրկում է ոչ միայն վերջինիս պարտականությունները (հատկապես գերիշխող դիրքը չհարաշահելու պարտականությունը), այլև վերջինիս բնորոշ հատուկ իրավունքները, որոնց թվին է դասվում իրավունքը հիմնավորելու իր գործունեության թույլատրելիությունը, որը տվյալ դեպքում արտահայտվել է համապատասխան գրությամբ Կարգավորող հանձնաժողովին դիմելու ձևով:

Տրամաբանական չէ Հանձնաժողովի այն պնդումը, որ Կարգավորող հանձնաժողովի կողմից թիվ 25-ն որոշմամբ տրված մեկնաբանությունները վերաբերում են օրենքի նախկին խմբագրությամբ կարգավորումներին և վերաբերելի չեն սույն գործով իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ Օրենքի 7-րդ հոդվածի «ա» կետին, այնինչ կատարված փոփոխությունը չի կարող համարվել էական և ազդել Կարգավորող հանձնաժողովի կողմից տրված պարզաբանման վրա:

Հաշվի առնելով տվյալ գործով առկա իրավիճակի առանձնահատկությունները և եզակիությունը՝ բացառվում է նախկինում նմանատիպ պայմաններում այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ այլ հավասար պայմանների առկայությունը, ուստի և բացառվում է Ընկերության կողմից խտրական պայմանների կիրառումը:

Վերոգրյալ պատճառաբանությունների հիման վրա Ընկերությունը խնդրել է մերժել Հանձնաժողովի վճարել բողոքը:

## **2.2 Վճարել բողոքի վերաբերյալ Կարգավորող հանձնաժողովի պատասխանի հիմնավորումները.**

Կարգավորող հանձնաժողովը, վերահաստատելով սույն գործի շրջանակներում արտահայտած դիրքորոշումները, խնդրել է մերժել Հանձնաժողովի վճարել բողոքը:

## **3. Վճարել բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Հանձնաժողովի 27.07.2005 թվականի թիվ 73-Ա որոշմամբ Ընկերությունը, «Բաշխիչ ցանցերով էլեկտրական էներգիայի մատակարարում» ապրանքային շուկայում՝ թիվ 0092 լիցենզիայի հիման վրա (չունի մրցակից) իրացման ծավալով գրավելով շուկայի 100 տոկոսը, համարվել է գերիշխող դիրք ունեցող և գրանցվել

է տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (**հատոր 1-ին, գ.թ. 15**):

2. Ընկերության Արևմուտք մասնաճյուղի և «Միլլար» ՍՊԸ-ի միջև 29.03.2010 թվականին կնքվել է «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող համակարգը էլեկտրական ցանցին միացման» թիվ E0400195.P պայմանագիրը, որի 6.3-րդ կետի համաձայն. «Սույն պայմանագիրը կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն պարտավոր է փոխանցել Մատակարարի հաշվին կանխավճար պայմանագրով սահմանված միացման վճարի առնվազն 50%-ի չափով, իսկ մնացած գումարը վճարել միացման աշխատանքների ավարտից հետո Մատակարարի կողմից դուրս գրված հարկային հաշիվը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում» (**հատոր 1-ին, գ.թ. 24-25**):

3. 21.03.2014 թվականին Ընկերությունը՝ իր և «Միլլար» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքներն ավարտելուց հետո, Կառուցապատողի կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու (միացման վճարը չվճարելու) կապակցությամբ, հայցադիմում է ներկայացրել Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ «Միլլար» ՍՊԸ-ին պայմանագրային պարտավորությունները կատարելուն պարտավորեցնելու պահանջով (**հավելված, գ.թ. 219-223**):

4. Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 շենքի թվով 19 բնակիչներ 20.02.2014 թվականին դիմել են Ընկերությանը՝ բազմաբնակարան շենքի տրանսֆորմատորային ենթակայանը լարման տակ դնելու, որպես բաժանորդներ գրանցելու, համապատասխան պայմանագրեր կնքելու, էլեկտրաէներգիա մատակարարելու խնդրանքով (**հատոր 4-րդ, գ.թ. 46**):

5. Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 շենքի մի քանի բնակիչներ 24.03.2014 թվականին դիմել են Հանձնաժողովին՝ խնդրով ուսումնասիրել Ընկերության կողմից մենաշնորհի դիրքի չարաշահման գործողությունները և հանձնարարել դադարեցնել դրանք՝ լարման տակ դնելով շենքը սնուցող ենթակայանը, բնակարանների սեփականատերերի հետ կնքելով համապատասխան մատակարարման պայմանագրեր (**հավելված, գ.թ. 265-266**):

6. 25.03.2014 թվականի թիվ 12-ԵԲ-426 գրությամբ Ընկերությունն ի պատասխան Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 շենքի բնակիչների 20.02.2014 թվականի դիմումի՝ հայտնել է, որ ստեղծված իրավիճակում բազմաբնակարան շենքի բնակարանների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացնելու համար նպատակահարմար է կիրառել Կարգավորող հանձնաժողովի նախադեպային որոշումը, բնակարանների սպառման համակարգերը ցանցին միացնել փուլերով, իսկ միացման վճարը կգանձվի յուրաքանչյուր դիմումի համար (...): Միացման վճարի չափը կազմում է 138.000 ՀՀ դրամ: Գրությամբ Ընկերությունը բնակիչներին տեղեկացրել է նաև, որ Ընկերությանն անհրաժեշտ է դիմել Կարգավորող հանձնաժողով՝ «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 358-Ն որոշմամբ հաստատված կանոնների 13.8-րդ կետին համապատասխան անհատական որոշում ընդունելու համար և խնդրել է բնակիչներին հայտնել դիրքորոշում նշված առաջարկի վերաբերյալ (**հատոր 5-րդ, գ.թ. 75-76**):

7. 26.03.2014 թվականի գրությամբ Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 շենքի մի քանի բնակիչներ համաձայնել են Ընկերության առաջարկի հետ (**հատոր 5-րդ, գ.թ. 77**):



8. Ընկերությունը 26.03.2014 թվականի թիվ 04-ԵԲ-436 գրությամբ դիմել է Կարգավորող հանձնաժողովին՝ բազմաբնակարան շենքի տեխնոլոգիական միացման աշխատանքների իրականացման հարցի լուծման խնդրանքով **(հավելված, գ.թ. 263):**

9. 09.04.2014 թվականին Կարգավորող հանձնաժողովն ընդունել է «Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղու 1/3 հասցեի բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու մասին» թիվ 79Ա որոշումը, որի համաձայն.

«Հաշվի առնելով՝

ա) որ Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղու 1/3 հասցեի բազմաբնակարան շենքի (այսուհետ՝ բազմաբնակարան շենք) մի խումբ բնակիչներ 2014 թվականի փետրվարի 20-ին դիմել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն՝ կառուցապատող ընկերության բացակայության և բնակարանների սեփականության վկայականների առկայության պայմաններում բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին փուլային եղանակով միացնելու խնդրանքով,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2014 թվականի մարտի 26-ի թիվ 04-ԵԲ-436 գրությունը, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Սահմանել, որ բազմաբնակարան շենքի՝

1) սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին իրականացվում է փուլային եղանակով՝ այդ համակարգի միացման համար ներկայացված անհատական դիմումների հիման վրա.

2) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարը յուրաքանչյուր դիմումի համար գանձվում է առանձին՝ հիմք ընդունելով 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» թիվ 659Ն որոշմամբ բազմաբնակարան շենքի սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման յուրաքանչյուր բնակարանի կամ առևտրային սպառողի համար սահմանված միացման վճարի չափը: Միացման վճարի վճարումը հավաստող փաստաթուղթը դիմումի հետ միասին ներկայացվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն:

3) բազմաբնակարան շենքի սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման անհատական դիմումները ներկայացվում են սպառման համակարգի ընդհանուր օգտագործման էլեկտրասարքավորումների՝ էլեկտրական ցանցին միացման վճարն ամբողջությամբ վճարելուց հետո. (...)» **(հատոր 1-ին, գ.թ. 18-19):**

10. Կարգավորող հանձնաժողովի 02.07.2014 թվականի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 09.04.2014 թվականի թիվ 79Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին դիմումը մերժելու և որոշումն անփոփոխ թողնելու մասին» թիվ 237Ա որոշմամբ մերժվել է Կարգավորող հանձնաժողովի 09.04.2014 թվականի «Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղու 1/3 հասցեի բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու մասին» թիվ 79Ա որոշումն

անվավեր ճանաչելու վերաբերյալ բազմաբնակարան շենքի բնակիչների դիմումը **(հատոր 1-ին, գ.թ. 75-78):**

11. Հանձնաժողովը 25.03.2014 թվականի թիվ ԱՇ-695, թիվ ԱՇ-696, թիվ ԱՇ-697, թիվ ԱՇ-698, թիվ ԱՇ-699 գրություններով Ընկերության տնօրենին, Ա. Հարությունյանին, Վ. Հարությունյանին, Ա. Գալստյանին և Ս. Կարապետյանին հայտնել է, որ քաղաքացիներ Ա. Հարությունյանի, Վ. Հարությունյանի, Ա. Գալստյանի և Ս. Կարապետյանի 24.03.2014 թվականի դիմումի հիման վրա Հանձնաժողովը հարուցել է վարչական վարույթ **(հավելված, գ.թ. 264-270):**

12. Հանձնաժողովի 16.05.2014 թվականի «Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 204-Ա որոշման համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է.

«1. «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության գործողությունը դիտարկել որպես մենաշնորհի դիրքի չարաշահում (...):

2. Մենաշնորհի դիրքի չարաշահման համար «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ նշանակել տուգանք քսան միլիոն դրամի չափով:

3. Հանձնարարել «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը սույն որոշումը ստանալուն հաջորդող օրվանից հետո հաշված մեկ շաբաթվա ընթացքում՝

1) վճարել սույն որոշման 2-րդ կետով նշանակված տուգանքը,

2) վերացնել Օրենքի խախտումը՝ ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող շենքի՝ ԷՄՕԿ-ին համապատասխան դիմում և փաստաթղթեր ներկայացրած բնակիչների հետ կնքելով էներգամատակարարման պայմանագրեր,

3) իրականացնել Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի սպառման համակարգի ընդհանուր օգտագործման Էլեկտրասարքավորումների՝ Էլեկտրական ցանցին միացում:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված գործողությունները կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում Հանձնաժողովը ներկայացնել տեղեկատվություն կատարման վերաբերյալ՝ կցելով համապատասխան ապացույցներ: (...)» **(հատոր 1-ին, գ.թ. 10-17):**

#### **4. Վճարել դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Վճարել դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, պայմանավորված բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «դ» և «ե» կետերի, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածների, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 17-րդ հոդվածների, Կարգավորող հանձնաժողովի 27.12.2006 թվականի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 358-Ն որոշմամբ հաստատված կանոնների 13.1-րդ, 13.2-րդ, 13.8-րդ

կետերի խախտում թույլ տալու հանգամանքով, ինչը, սակայն, հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Սույն գործով բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում բացահայտել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խնամարով «գերիշխող դիրքի չարաշահում» իրավախախտման բովանդակությունը:*

Տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը՝ որպես սահմանադրական կարգի հիմունք, ելակետային նշանակություն ունի Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար: Տնտեսական գործունեության ազատությունը շուկայական տնտեսության հիմնարար սկզբունքն է և շուկայական տնտեսական հարաբերությունների ձևավորման ու զարգացման օբյեկտիվ նախադրյալը: Միաժամանակ ազատ տնտեսական գործունեության իրավունքը բացարձակ չէ. բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու համար այն ենթակա է սահմանափակման՝ ազատ տնտեսական մրցակցության ապահովման նպատակից ելնելով: Հետևաբար, նշված երկու իրավական սկզբունքների՝ տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության ներդաշնակ ու հետևողական իրացման պայմաններում է միայն հնարավոր հասնել շուկայական հարաբերությունների վրա խարսխված արդյունավետ տնտեսական համակարգի ձևավորմանն ու կայուն զարգացմանը:

Շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական մրցակցային քաղաքականությունը հանդիսանում է պետության տնտեսական քաղաքականության անբաժանելի մասը: Բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու համար կարևոր նշանակություն ունի տնտեսական մրցակցության պաշտպանությունը, որն, ի թիվս այնի, շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների զսպման համատեքստում ուղղված է սպառողների իրավունքների պաշտպանությանը: Գերիշխող դիրքի չարաշահման արգելքն ամրագրվել է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ (այսուհետ՝ ՀՀ Սահմանադրություն), որի 33.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունն արգելվում են: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար:

Տնտեսական մրցակցության լեզալ բնորոշումը տրված է ոլորտը կարգավորող՝ իրավահարաբերության ծագման պահին գործող «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի՝ տնտեսական մրցակցությունը կամ մրցակցությունը բնորոշվում է որպես ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է տնտեսվարող սուբյեկտին գերիշխող դիրք ունեցող ճանաչելու չափանիշները: Մասնավորապես, Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե՝ (...)

2) որպես իրացնող կամ ձեռք բերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը, կամ

3) ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը, կամ

(...):

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող է համարվում Հանձնաժողովի որոշմամբ:

Այսպիսով, տնտեսվարողին՝ որպես շուկայում գերիշխող դիրք ունեցող ճանաչելու չափանիշը շուկայում վերջինիս զբաղեցրած մասն է՝ ըստ իրացման կամ ձեռքբերման ծավալների մեծության. տնտեսվարողի նման կարգավիճակը հավաստվում է Հանձնաժողովի որոշմամբ:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը, ի իրացումն ՀՀ Սահմանադրության 33.1-րդ հոդվածի 2-րդ մասի, արգելում է տնտեսվարող սուբյեկտների կողմից մենաշնորհի կամ գերիշխող դիրքի (այսուհետ՝ գերիշխող դիրք) չարաշահումը:

Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերն սպառիչ կերպով սահմանում են գերիշխող դիրքը չարաշահելու դրսևորումները: Ըստ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գերիշխող դիրքի չարաշահում է համարվում՝

ա) իրացման կամ ձեռքբերման չիմնավորված, խտրական գների սահմանումը կամ կիրառումը կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը.

(...)

դ) այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների կիրառումը.

ե) պայմանագրի կողմին կամ պայմանագիր կնքել ցանկացող անձին, ներառյալ առևտրի օբյեկտներին, լրացուցիչ պարտավորությունների պարտադրումը, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ.

(...):»:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահումն առաջացնում է տուգանքի նշանակում հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն դրամի չափով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրությամբ որպես ելակետային դրույթ ամրագրվել է գերիշխող դիրքի չարաշահման արգելքը, որի համատեքստում Օրենքն իր կարգավորման առարկայի շրջանակներում սահմանել է այն դեպքերը, երբ Հանձնաժողովը, իրականացնելով տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված իր գործառույթները տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համատեքստում, տնտեսվարող սուբյեկտին գերիշխող դիրքի չարաշահման համար ենթարկում է պատասխանատվության: Օրենքով սպառիչ կերպով թվարկված են այն բոլոր գործողությունները (վարքագիծը), որոնք, նույն Օրենքի իմաստով, կարող են դիտարկվել որպես գերիշխող դիրքի չարաշահում և հանգեցնել պատասխանատվության:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ արարքը ճանաչվում է իրավախախտում միայն այն դեպքում, երբ առկա է իրավախախտման չորս պարտադիր

տարրերի միասնությունը, այն է՝ սուբյեկտ, սուբյեկտիվ կողմ, օբյեկտ, օբյեկտիվ կողմ: Նշվածներից թեկուզ մեկի բացակայությունը վկայում է իրավախախտման բացակայության մասին: Օրենքի համակարգային վերլուծության, այդ թվում՝ գերիշխող դիրքի չարաշահման՝ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում թվարկված բոլոր դրսևորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «գերիշխող դիրքի չարաշահում» իրավախախտման տարրերն են.

1. Իրավախախտման սուբյեկտ. «գերիշխող դիրքի չարաշահման» իրավախախտման սուբյեկտը հատուկ է՝ տնտեսվարող սուբյեկտ, որը շուկայում ունի գերիշխող դիրք, այն է՝ տնտեսվարող սուբյեկտ, որը Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որևէ հիմքով Հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է գերիշխող դիրք ունեցող:

2. Իրավախախտման օբյեկտ. իրավախախտման օբյեկտը Հայաստանի Հանրապետությունում բարեխիղճ մրցակցության ապահովմանը և սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններն են:

3. Իրավախախտման սուբյեկտիվ կողմ. իրավախախտման պարտադիր հատկանիշը մեղքի առկայությունն է, որը դրսևորվում է դիտավորությամբ: Համապատասխան տնտեսվարող սուբյեկտի կողմից գերիշխող դիրքի չարաշահումը կամային գործընթաց է, այսինքն՝ շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտն իրավախախտման օբյեկտիվ կողմը կատարելիս գործում է իր կամքով, և նրա վարքագիծը պայմանավորված չէ այլ սուբյեկտի (սուբյեկտների) կամքով ու վարքագծով:

4. Իրավախախտման օբյեկտիվ կողմ. օբյեկտիվ կողմը դրսևորվում է Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված գործողություններից որևէ մեկի կատարմամբ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 7-րդ հոդվածի իմաստով «շուկայում գերիշխող դիրքի չարաշահում» իրավախախտումը կարող է առկա լինել միայն տվյալ իրավախախտման վերը նշված բոլոր չորս տարրերի միաժամանակյա առկայության պարագայում. այդ տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է տնտեսվարող սուբյեկտի պատասխանատվությունը: Ըստ այդմ՝ տնտեսվարող սուբյեկտին գերիշխող դիրքի չարաշահման համար պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշման նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում, ի թիվս այլնի, ՀՀ վարչական դատարանի խնդիրն է պարզել՝ արդյոք բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննության արդյունքում Հանձնաժողովի կողմից վարչական վարույթում ձեռք բերված բավարար սպացույցների համակցությամբ հաստատվում է խնդրո առարկա իրավախախտման վերը նշված բոլոր չորս տարրերի առկայությունը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը կարևորում է նաև Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում, մասնավորապես, 2-րդ մասի «ա», «դ», «ե» կետերում նշված՝ որպես գերիշխող դիրքի չարաշահում դիտարկվող գործողությունների բովանդակության բացահայտումը:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահում է իրացման կամ ձեռքբերման չիմնավորված, խտրական գների սահմանումը կամ կիրառումը կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը: Նույն հոդվածի 2-րդ մասի «դ» կետի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահում է նաև

այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների կիրառումը:

Վճռաբեկ դատարանը, արձանագրելով, որ գերիշխող դիրքի չարաշահման վերը նշված գործողությունների հիմքում տնտեսվարողի խտրական վերաբերմունքն է, անհրաժեշտ է համարում անդրադառնալ «խտրական վերաբերմունք» հասկացության եզրույթաբանական բովանդակությանը:

ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածն ամրագրում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը: Այս հոդվածի պահանջներին համապատասխան՝ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները (*տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 29.01.2008 թվականի թիվ ՄԴՈ-731 որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում տարբերակված մոտեցումը թույլատրելի է համարում միայն այն դեպքում, երբ առկա է տարբերակման օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ: Ըստ սահմանադրական դատարանի՝ խտրականության արգելքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (*տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թվականի թիվ ՄԴՈ-881 որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը շեշտադրել է նաև, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում *նույն իրավիճակում* գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, որի նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է (*տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 07.06.2011 թվականի թիվ ՄԴՈ-967 որոշումը*):

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան)՝ խտրականությունը բնորոշվում է որպես տարբերակված վերաբերմունք համանման կամ հարաբերականորեն նույնանման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ (*տե՛ս Biao v. Denmark, թիվ 38590/10 գանձադրով Եվրոպական դատարանի 24.05.2016 թվականի վճիռը, կետ 89*):

Հաշվի առնելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խտրական վերաբերմունք առկա է այն դեպքում, երբ անձի /անձանց/ նկատմամբ դրսևորվող վերաբերմունքն անբարենպաստ է համանման իրավիճակում գտնվող այլ անձի /անձանց/ նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի համեմատությամբ, եթե առկա չէ նման տարբերակված մոտեցման օբյեկտիվ հիմք ու իրավաչափ նպատակ:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում խտրական վերաբերմունքի առկայությունը որոշելու համար հարկ է պարզել.

-արդյոք առկա՞ է տարբերակված մոտեցում համանման կամ հարաբերականորեն նմանատիպ իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ,

-արդյոք նման տարբերակված մոտեցումն արդարացված է. մասնավորապես, արդյոք տարբերակված մոտեցումը հետապնդում է իրավաչափ նպատակ և

առկա է ողջամիտ համամասնություն կիրառվող միջոցի և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «դ» կետերով գերիշխող դիրքի չարաշահում դիտարկվող գործողությունների առկայությունը հիմնավորելու համար Հանձնաժողովից պահանջվում է վկայակոչել համանման կամ հարաբերականորեն նույնանման իրավիճակում գտնվող տնտեսվարողի կամ սպառողի (սպառողների խումբ), ում նկատմամբ դրսևորվել է ավելի բարենպաստ վերաբերմունք այն տնտեսվարողի կամ սպառողների համեմատությամբ, ում նկատմամբ չարդարացված տարբերակված մոտեցում է դրսևորվել: Այլ կերպ՝ այդ գործողությունների առկայությունը կարող է հաստատված համարվել, եթե առկա է.

- կոնկրետ տնտեսվարող կամ սպառող (սպառողների խումբ),
- վերջինս (վերջիններս) գտնվում է (են) համանման կամ հարաբերականորեն նույնանման իրավիճակում, ինչ այն տնտեսվարողը կամ սպառողը (սպառողների խումբը), ում նկատմամբ տարբերակված մոտեցում է դրսևորվում,
- համանման կամ հարաբերականորեն նույնանման իրավիճակում գտնվող տվյալ տնտեսվարողի կամ սպառողի (սպառողների խմբի) նկատմամբ դրսևորված վերաբերմունքն ավելի բարենպաստ է, քան այն տնտեսվարողի կամ սպառողի (սպառողների խմբի), ում նկատմամբ կիրառվել է տարբերակված մոտեցում,

- տարբերակված մոտեցումն արդարացված չէ որևէ իրավաչափ նպատակով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված տարրերից որևէ մեկի բացակայությունը բացառում է Օրենքի 7-րդ հոդվածի «ա» և «դ» կետերով գերիշխող դիրքի չարաշահում դիտարկվող գործողությունների համար պատասխանատվությունը:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահում է համարվում պայմանագրի կողմին կամ պայմանագիր կնքել ցանկացող անձին, ներառյալ առևտրի օբյեկտներին, լրացուցիչ պարտավորությունների պարտադրումը, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վկայակոչված նորմով նախատեսված գործողությունը որպես գերիշխող դիրքի չարաշահում դիտարկելու պարտադիր պայմանը պայմանագրի կողմին կամ պայմանագիր կնքել ցանկացող անձին պարտադրվող լրացուցիչ պարտավորությունների՝ պայմանագրի բուն առարկային առնչակցության բացակայությունն է:

Անդրադառնալով գործարքի առարկա հասկացությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործարքի առարկա կարող են լինել ինչպես նյութական առարկաները (օրինակ, առուվաճառքի պայմանագրի դեպքում՝ որոշակի ապրանքը, անշարժ գույքը), այնպես էլ որոշակի գործողությունները (օրինակ, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի դեպքում՝ ծառայություններ մատուցելը, կապալի պայմանագրի դեպքում՝ համապատասխան աշխատանքների կատարումը) *(յրեն, Նեյլի Հակոբյանը, Ոսրան և Արթուր Գևորգյաններն ընդդեմ «Համխա» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/1013/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.07.2015 թվականի որոշումը)*:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պայմանագրի կողմին կամ պայմանագիր կնքել ցանկացող անձին լրացուցիչ պարտավորություններ պարտադրելու փաստն ինքնին հիմք չէ այդ գործողությունը

գերիշխող դիրքի չարաշահում որակելու համար. անհրաժեշտ պայման է նաև, որ պարտադրվող լրացուցիչ պայմանն առնչություն չունենա այն նյութական առարկային կամ գործողությանը, որը տվյալ պայմանագրի առարկան է:

### **Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Դիմելով Դատարանը՝ Ընկերությունը պահանջել է վերացնել 16.05.2014 թվականի ««Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին» թիվ 204-Ա որոշումը:

**Դատարանը**, 19.06.2018 թվականին կայացրած վճռով բավարարելով հայցը, արձանագրել է, որ Ընկերությունը բնակիչների կողմից բարձրացված խնդրին լուծում տալու նպատակով դիմել է Կարգավորող հանձնաժողովին՝ պարզաբանումներ ստանալու նպատակով, որի արդյունքում 09.04.2014 թվականին ընդունվել է «Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղու 1/3 հասցեի բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու մասին» թիվ 79Ա որոշումը: Հետևաբար, բնակիչների կողմից բարձրացված հարցի լուծումը ընկերության կողմից պետք է տրվեր Հանձնաժողովի կողմից ընդունված որոշմամբ ամրագրված հիմնավորումներով:

**Վերաքննիչ դատարանը**, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, արձանագրել է, որ քննարկվող պարագայում Կարգավորող հանձնաժողովը՝ որպես հանրային ծառայությունների ոլորտում կարգավորում իրականացնող ինքնուրույն պետական մարմին, առաջնորդվելով սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը հավասարակշռելու օրենսդրական նպատակի իրականացմամբ, Ընկերության և սպառողների միջև ստեղծված իրավիճակը կարգավորելու նպատակով, սահմանել է այլընտրանքային լուծում պարունակող իրավունքի իրացման հնարավորություն, որը չի պարտադրվել Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղու 1/3 հասցեի բազմաբնակարան շենքի բնակիչներից որևէ մեկին, քանի որ Կարգավորող հանձնաժողովի 09.04.2014 թվականի «Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղու 1/3 հասցեի բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու մասին» թիվ 79Ա որոշմամբ նախատեսվել է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարը յուրաքանչյուր դիմումի համար առանձին գանձելու կարգը: Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Հանձնաժողովը չի հիմնավորել նաև մենշնորի դիրքի չարաշահման իրավական հիմքերի առկայությունը, քանի որ վարչական վարույթում առկա չեն ապացույցներ, որոնցով կհաստատվեր, որ նմանատիպ այլ իրավիճակներում Ընկերությունը դրսևորել է այլ վարքագիծ:

Սույն գործի փաստական հանգամանքները դիտարկելով Վճռաբեկ դատարանի վերն արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը, հիմնավոր համարելով ստորադաս դատարանների պատճառաբանությունները, գտնում է, որ Ընկերության վարքագծում բացակայել է «գերիշխող դիրքի չարաշահում» իրավախախտման բոլոր չորս տարրերի համակցությունը, որպիսի պայմաններում իրավաչափ չէ Ընկերությանը գերիշխող դիրքի չարաշահման համար պատասխանատվության ենթարկելը:

Այսպես, Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան Ընկերությունը Հանձնաժողովի 27.07.2005 թվականի թիվ 73-Ա որոշմամբ Ընկերության «Բաշխիչ ցանցերով էլեկտրական էներգիայի մատակարարում»



ապրանքային շուկայում՝ թիվ 0092 լիցենզիայի հիման վրա (չունի մրցակից) իրացման ծավալով գրավելով շուկայի 100 տոկոսը, համարվել է գերիշխող դիրք ունեցող և գրանցվել է տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը խնդրո առարկա իրավախախտման հատուկ սուբյեկտ է, որպիսի փաստն անվիճելի է:

Սույն դեպքում առկա է նաև իրավախախտման օբյեկտը՝ Հայաստանի Հանրապետությունում բարեխիղճ մրցակցության ապահովմանը և սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Վճռաբեկ դատարանը վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում, սակայն, հերքված է համարում իրավախախտման սուբյեկտիվ կողմի և օբյեկտիվ կողմի առկայությունը՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտը ներառում է, թիվս այլնի, էներգետիկայի բնագավառը: Այդ բնագավառում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի լիազորությունները և իրականացվող պետական քաղաքականության սկզբունքները նախատեսված են նաև «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից են, ի թիվս այլնի, սպառողների և էներգետիկայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովումը և շահերի հավասարակշռումը: Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ էներգետիկայի բնագավառի կարգավորման հիմնական սկզբունքներից են սպառողների կամ որևէ լիցենզավորված անձի նկատմամբ խտրականության բացառումը, սպառողների և էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռումը: Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ էներգետիկայի բնագավառի կարգավորման հիմնական միջոցներից է գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև էներգիայի և (կամ) բնական գազի մատակարարման (ծառայությունների մատուցման), ինչպես նաև սպառողների հետ կնքվող էներգիայի և (կամ) բնական գազի մատակարարման (առուվաճառքի) պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանումը:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Կարգավորող հանձնաժողովը՝

(...)

գ) վերահսկում է գործունեության լիցենզիայի պայմանների պահպանումը և կիրառում սույն օրենքով սահմանված տուժանքները.

(...)

ը) սահմանում է լիցենզավորված անձանց և սպառողների միջև կնքվող էներգիայի ու բնական գազի մատակարարման պայմանագրերի պարտադիր պայմանները կամ օրինակելի ձևերը և ապահովում դրանց ներդրումը.

(...)

Նույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից նույն օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, գործունեության լիցենզիայի պայմանները

չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները (...):

Իրավահարաբերության ծագման պահին գործող Կարգավորող հանձնաժողովի 27.12.2006 թվականի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 358-Ն որոշմամբ (ուժը կորցրել է 01.02.2022 թվականին) հաստատված կանոնների 13.1-րդ կետի համաձայն՝ մատակարարը նոր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման համար գանձում է Հանձնաժողովի 21.12.2007 թվականի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» N 659-Ն որոշմամբ հաստատված միացման վճարներ: Բազմաբնակարան շենքերի սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման համար դիմում ներկայացնում, մատակարարի հետ միացման պայմանագիր կնքում և միացման վճարները վճարում է կառուցապատողը: Նույն կանոնների 13.2-րդ կետի համաձայն՝ նոր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացվում է նոր սպառողի կամ կառուցապատողի, կամ սպառողի գրավոր դիմումի հիման վրա (...):

Նույն որոշման 13.8-րդ կետի համաձայն՝ Կարգավորող հանձնաժողովը, սպառողի և մատակարարի շահերի հավասարակշռման նպատակով՝ առանձին դեպքերում, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատակարարին տրամադրվող իրավունքների, թույլտվությունների, եզրակացությունների կամ այլ փաստաթղթերի պատճառով նույն կանոնների 13.4-րդ և 13.5-րդ կետերում նոր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման համար սահմանված ժամկետների պահպանման անհնարինության դեպքում՝ մատակարարի կամ Դիմող անձի դիմումի հիման վրա, կարող է ընդունել էլեկտրական ցանցին միացման անհատական որոշումներ: Սույն կետում նշված դեպքերում մատակարարը պարտավոր է դիմել Կարգավորող հանձնաժողով՝ դրանք ի հայտ գալու պահից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնելով նաև համապատասխան հիմնավորող փաստաթղթեր: Մատակարարը պարտավոր է այդ մասին նույն ժամկետում իրազեկել նաև Դիմող անձին:

Վերոնշյալ իրավակարգավորումների ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մատակարարը նոր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման համար գանձում է միացման վճարներ: Ընդհանուր կանոնի համաձայն՝ կառուցապատողն է այն սուբյեկտը, ով բազմաբնակարան շենքերի սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման համար ներկայացնում է դիմում, մատակարարի հետ կնքում միացման պայմանագիր և վճարում միացման վճարները: Միաժամանակ, առանձին դեպքերի համար սահմանվել է հատուկ ընթացակարգ. Կարգավորող հանձնաժողովի 27.12.2006 թվականի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 358-Ն որոշմամբ այդ դեպքերի սպառիչ ցանկ սահմանված չէ: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հատուկ ընթացակարգի կիրառումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում թելադրվում է սպառողի և մատակարարի շահերի հավասարակշռման նպատակով: Հատուկ ընթացակարգի բովանդակությունը հանգում է նրան, որ Կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով հավասարակշռել սպառողի և մատակարարի շահերը, բազմաբնակարան շենքերի սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացնելու գործընթացը կարգավորում է անհատական

որոշումներով, որպիսի որոշումները պարտադիր են գործունեության լիցենզիա ունեցող անձի համար և այդ որոշումները չկատարելը հանգեցնում է օրենքով նախատեսված պատասխանատվության:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության առջև կառուցապատողի՝ «Միլլար» ՍՊԸ-ի կողմից «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող համակարգը էլեկտրական ցանցին միացման» թիվ E0400195.P պայմանագրին համապատասխան նոր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման համար գանձվող միացման վճարը վճարելու պարտավորությունը չկատարելու արդյունքում միացման աշխատանքների ձախողման պայմաններում 20.02.2014 թվականին Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 շենքի թվով 19 բնակիչներ դիմել են Ընկերությանը՝ բազմաբնակարան շենքի տրանսֆորմատորային ենթակայանը լարման տակ դնելու, որպես բաժանորդներ գրանցելու, համապատասխան պայմանագրեր կնքելու, էլեկտրաէներգիա մատակարարելու խնդրանքով:

Ընկերությունը, ի պատասխան վերագրյալ դիմումի, 25.03.2014 թվականի թիվ 12-ԵԲ-426 գրությամբ հայտնել է, որ ստեղծված իրավիճակում բազմաբնակարան շենքի բնակարանների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացնելու համար նպատակահարմար է կիրառել Կարգավորող հանձնաժողովի նախադեպային որոշումը, բնակարանների սպառման համակարգերը ցանցին միացնել փուլերով, իսկ միացման վճարը կգանձվի յուրաքանչյուր դիմումի համար (...): Միացման վճարի չափը կազմում է 138.000 ՀՀ դրամ: Գրությամբ Ընկերությունը բնակիչներին տեղեկացրել է նաև, որ Ընկերությանն անհրաժեշտ է դիմել Կարգավորող հանձնաժողով՝ «էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 358-Ն որոշմամբ հաստատված կանոնների 13.8-րդ կետին համապատասխան անհատական որոշում ընդունելու համար և խնդրել է բնակիչներին հայտնել դիրքորոշում նշված առաջարկի վերաբերյալ:

Ընկերությունը միաժամանակ 26.03.2014 թվականին դիմել է Կարգավորող հանձնաժողովին՝ բազմաբնակարան շենքի տեխնոլոգիական միացման աշխատանքների իրականացման հարցի լուծման խնդրանքով:

Կարգավորող հանձնաժողովի 09.04.2014 թվականի «Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղու 1/3 հասցեի բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու մասին» թիվ 79Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է սահմանել, որ բազմաբնակարան շենքի՝ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարը յուրաքանչյուր դիմումի համար գանձվում է առանձին՝ հիմք ընդունելով 21.12.2007 թվականի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» թիվ 659-Ն որոշմամբ բազմաբնակարան շենքի սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման յուրաքանչյուր բնակարանի կամ առևտրային սպառողի համար սահմանված միացման վճարի չափը: Միացման վճարի վճարումը հավաստող փաստաթուղթը դիմումի հետ միասին ներկայացվում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն: Բազմաբնակարան շենքի սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման անհատական դիմումները ներկայացվում են սպառման համակարգի ընդհանուր օգտագործման էլեկտրասարքավորումների՝ էլեկտրական ցանցին միացման վճարն ամբողջությամբ վճարելուց հետո:

Վերը նշված փաստերի ուսումնասիրության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կարգավորող հանձնաժողովի 09.04.2014 թվականի «Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղու 1/3 հասցեի բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու մասին» թիվ 79Ա որոշումը Կարգավորող հանձնաժողովի 27.12.2006 թվականի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 358-Ն որոշմամբ հաստատված կանոնների 13.8-րդ կետի հիման վրա սպառողի և մատակարարի շահերը հավասարակշռելու նպատակով ընդունված անհատական որոշում է, որը պարտադիր էր Ընկերության համար և դրա չկատարումը կարող էր հանգեցնել վերջինիս պատասխանատվության: Կարգավորող հանձնաժողովի թիվ 79Ա որոշումը բողոքարկվել է միայն վարչական կարգով և Կարգավորող հանձնաժողովի 02.07.2014 թվականի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 09.04.2014 թվականի թիվ 79Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին դիմումը մերժելու և որոշումն անփոփոխ թողնելու մասին» թիվ 237Ա որոշմամբ թողնվել է անփոփոխ. թիվ 79 որոշումը դատական կարգով չի բողոքարկվել, ուժը չի կորցրել:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Ընկերության գործողությունները, որոնք վիճարկվող վարչական ակտով որակվել են որպես գերիշխող դիրքի չարաշահում, պայմանավորված են եղել Կարգավորող հանձնաժողովի գործառույթների ու լիազորությունների շրջանակներում ընդունված 09.04.2014 թվականի «Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղու 1/3 հասցեի բազմաբնակարան շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու մասին» թիվ 79Ա որոշմամբ, Ընկերությունը գործել է նշված անհատական որոշման հիման վրա և դրա կարգավորումներին համապատասխան: Այլ կերպ՝ Ընկերության վարքագիծը պայմանավորված է եղել այլ սուբյեկտի (Կարգավորող հանձնաժողովի) կամքով ու վարքագծով:

Հետևաբար, սույն դեպքում Ընկերության վարքագծում բացակայել է վերջինիս վերագրված արարքի սուբյեկտիվ կողմը, որը կարող էր դրսևորվել դիտավորության ձևով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Ընկերության վարքագծում բացակայել է նաև «գերիշխող դիրքի չարաշահում» իրավախախտման օբյեկտիվ կողմը, այն է՝ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «դ» և «ե» կետերում նկարագրված գործողությունները:

Բողոք բերած անձը Վճռաբեկ բողոքում Ընկերության կողմից Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «դ» կետերով նախատեսված իրավախախտման կատարման մասով նշել է, որ Հանձնաժողովը, Ընկերության գործողությունները որակել է որպես սպառողների նկատմամբ խտրական պայմանների կիրառում՝ հաշվի առնելով Կարգավորող հանձնաժողովի 27.12.2006 թվականի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 358-Ն որոշմամբ հաստատված կանոններով, ՀՀ կառավարության, Կարգավորող հանձնաժողովի և մի շարք այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավակարգավորումները, որոնցով նախատեսված չէ բազմաբնակարան շենքի բնակիչների պարտականություն Ընկերությանը վճարելու միացման վճարներ, և սահմանված է արգելք նրանցից պահաջելու սահմանված փաստաթղթերից բացի այլ փաստաթղթեր:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սպացուցման բեռը կրում է՝

1) վիճարկման հայցով՝ վարչական մարմինը, որն ընդունել է միջամտող վարչական ակտը՝ դրա համար հիմք ծառայած փաստերի մասով.

(...):

Վարչական դատավարությունում ապացուցման նշված կանոնին համապատասխան պատասխանող Հանձնաժողովից պահանջվում էր դատարան ներկայացնել բավարար ապացույցներ առ այն, որ համանման կամ հարաբերականորեն նույնանման իրավիճակում գտնվող սպառողների նկատմամբ դրսևորվել է ավելի բարենպաստ վերաբերմունք՝ Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 շենքի թվով 19 բնակիչների նկատմամբ դրսևորված վերաբերմունքի համեմատությամբ:

Մինչդեռ, Հանձնաժողովի վիճարկվող որոշումը չի բովանդակում որևէ փաստ առ այն, որ համանման կամ հարաբերականորեն նույնանման իրավիճակում գտնվող սպառողների նկատմամբ դրսևորվել է ավելի բարենպաստ վերաբերմունք՝ Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 շենքի թվով 19 բնակիչների նկատմամբ դրսևորված վերաբերմունքի համեմատությամբ: Վարչական վարույթի նյութերում, ինչպես նաև սույն դատական գործի նյութերում բացակայում է այդ փաստի վերաբերյալ որևէ ապացույց:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ չի հաստատվում Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «դ» կետերով նախատեսված գործողությունների կատարումն Ընկերության կողմից:

Վիճարկվող որոշմամբ Հանձնաժողովն Ընկերությանը վերագրել է նաև Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետով նախատեսված գործողության կատարում՝ պատճառաբանելով, որ «... քաղաք Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող շենքի բնակարանների սեփականատերեր հանդիսացող անձինք ԷՄՕԿ-ին համապատասխան Ընկերություն են ներկայացրել դիմում և փաստաթղթեր Ընկերության հետ էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու նպատակով, որին ի պատասխան Ընկերությունը ոչ միայն չի կնքել էլեկտրամատակարարման պայմանագիր, այլև նախաձեռնել է մի ընթացակարգ, որի արդյունքում առաջարկել է բնակիչներին համամասնորեն վճարել Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում գտնվող շենքի կառուցապատողի պարտքը: Այսինքն՝ Ընկերությունը պայմանագիր կնքել ցանկացող բնակիչներին անուղակիորեն պարտադրել է կատարել տվյալ պայմանագրի առարկայի հետ ընդհանրապես կապ չունեցող պարտավորություններ»: Ընկերությանը վերագրված այս գործողության առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետով նախատեսված գործողության կատարման փաստը կարող էր հաստատված համարվել միայն այն դեպքում, եթե Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 շենքի թվով 19 բնակիչներին Ընկերության կողմից առաջադրված լրացուցիչ պարտավորությունը, այն է՝ յուրաքանչյուր դիմումի համար 138.000 ՀՀ դրամ միացման վճար վճարելու պարտավորությունը, առնչություն չունենար էլեկտրամատակարարման պայմանագրի բուն առարկայի հետ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 550-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Էներգամատակարարման պայմանագրով էներգամատակարարող կազմակերպությունը պարտավորվում է արձնենտին (սպառողին) միացման ցանցի միջոցով մատուցել էներգիա, իսկ արձնենտը պարտավորվում է վճարել ստացած էներգիայի համար, ինչպես նաև պահպանել պայմանագրով նախատեսված սպառման ռեժիմը, ապահովել իր տնօրինության տակ գտնվող էներգետիկ ցանցերի շահագործման անվտանգությունը և իր կողմից օգտագործվող

Էներգիայի սպառման հետ կապված սարքերի ու սարքավորումների սարքինությունը:

Նույն օրենսգրքի 552-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Էներգամատակարարման պայմանագիրն արձանատի հետ կնքվում է նրա մոտ Էներգամատակարարող կազմակերպության գծերին միացված ու սահմանված տեխնիկական պահանջները բավարարող էներգաընդունիչ և այլ անհրաժեշտ սարքավորումների առկայության, ինչպես նաև սպառված էներգիայի հաշվառման սպահովվածության դեպքում:

Կարգավորող հանձնաժողովի 27.12.2006 թվականի թիվ 358-Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.1-րդ կետի համաձայն՝ մատակարարը նոր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման համար գանձում է Հանձնաժողովի 21.12.2007 թվականի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» թիվ 659-Ն որոշմամբ հաստատված միացման վճարներ:

Այսպիսով, վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Էներգամատակարարման պայմանագիրն առուվաճառքի պայմանագրի տեսակ է, որի առարկան մատակարարման ենթակա գույքն է (տվյալ դեպքում՝ էներգիան): Էներգամատակարարման համար ՀՀ օրենսդրության համաձայն անհրաժեշտ պայման է արձանատի միացման ցանցին միացած լինելը, որն իրականացվում է Կարգավորող հանձնաժողովի 21.12.2007 թվականի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» թիվ 659-Ն որոշմամբ հաստատված միացման վճարները վճարված լինելու դեպքում միայն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից բնակիչներին առաջադրված լրացուցիչ պարտավորությունը, այն է՝ յուրաքանչյուր դիմումի համար 138.000 ՀՀ դրամ միացման վճար վճարելու պարտավորությունը, չի կարող դիտարկվել որպես իր բնույթով կամ իրականացման տեսանկյունից էներգամատակարարման պայմանագրի բուն առարկայի հետ չկապված լրացուցիչ պարտավորություն, քանզի էներգամատակարարման պայմանագրի առարկան էներգիան է, ինչը կարող է մատակարարվել միայն նոր սպառողի սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացնելու պայմաններում, իսկ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացնելու պարտադիր նախապայմանը միացման վճարը վճարած լինելու հանգամանքն է: Այլ կերպ՝ խնդրո առարկա լրացուցիչ պարտավորությունն ինչպես իր բնույթով, այնպես էլ իրականացման տեսանկյունից առնչվում է էներգամատակարարման պայմանագրի բուն էությանը՝ հաշվի առնելով, որ միացման վճարը վճարած լինելու հանգամանքը արձանատին էներգիա մատակարարելու պարտադիր պայմանն է:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բացակայում է նաև Ընկերության կողմից «շուկայում գերիշխող դիրքի չարաշահում» իրավախախտման օբյեկտիվ կողմը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, բավարարելով Ընկերության հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի

169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

*Վճռաբեկ բողոքի դեմ Ընկերության և Կարգավորող հանձնաժողովի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի պատասխաններում նշված փաստարկները հասարակում են վերոնշյալ պարճատարանություններով:*

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին: Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե պատասխանող է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, ապա դատական ծախսերը դրվում են Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի վրա, եթե պատասխանողի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատարանը ճանաչել է ոչ իրավաչափ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Հանձնաժողովի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.12.2019 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ**

**20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/1206/05/21**  
**2023թ.**

Վարչական գործ թիվ

ՎԴ/1206/05/21

Նախագահող դատավոր՝

Ս. Հովակիմյան

Դատավորներ՝

Ա. Առաքելյան

Կ. Գևորգյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող և զեկուցող*

- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
- Լ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ
- Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի հոկտեմբերի 06-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերության) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 28.02.2023 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Ընկերության ընդդեմ Երևան համայնքի՝ ոչ իրավաչափ ճանաչված գործողությունների արդյունքում Ընկերությանը պատճառված վնասը հատուցելուն Երևան համայնքին պարտավորեցնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Երևան համայնքին հատուցել ոչ իրավաչափ ճանաչված գործողությունների արդյունքում Ընկերությանը պատճառված վնասը՝ 723.194.113,4 կամ 675.872.378 ՀՀ դրամ գումարը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Գազարյան) (այսուհետ՝ Դատարան) 12.07.2022 թվականի վճռով հայցը բավարարվել է՝ պարտավորեցվել է Երևան համայնքին (քաղաքապետարանին) «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ին հատուցել 675.872.408 (վեց հարյուր յոթանասուներկնգ միլիոն ութ հարյուր յոթանասուներկու



հազար չորս հարյուր ութ) ՀՀ դրամ՝ որպես ոչ իրավաչափ վարչարարությանը պատճառված վնաս:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 28.02.2023 թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 12.07.2022 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է ՀՀ վարչական դատարան՝ ամբողջ ծավալով նոր քննության:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Տ. Խուրշուդյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Երևանի քաղաքապետարանը (ներկայացուցիչ՝ Լ. Հարությունյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասը և 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ, 48-րդ և 102-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատարավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասը, 26-րդ հոդվածը, 27-րդ հոդվածի 1-ին մասը, 29-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Սույն վարչական գործում առկա գրավոր ապացույցներով հիմնավորված է Ընկերությանը պատճառված իրական վնասի փաստացի չափը, և Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունն առ այն, որ Դատարանը չի պարզել իրական վնասի փաստացի չափը, անհիմն է, քանի որ հայցվոր կողմը Դատարանին ներկայացրել է համապատասխան միջնորդություն՝ փորձաքննություն նշանակելու մասին: Դատարանը, 01.10.2021 թվականի որոշմամբ, բավարարելով Ընկերության կողմից ներկայացված գրավոր միջնորդությունը, նշանակել է դատաշինարարատեխնիկական և դատասպրանքագիտական համալիր փորձաքննություն:

Արդյունքում «Գնահատման և փորձաքննությունների ազգային կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 26.01.2022 թվականին տրվել է թիվ ԱԳ-01/ՎԴ/22 փորձագետի եզրակացությունը (այսուհետ՝ Եզրակացություն), որին ծանոթանալով Ընկերությունը 04.05.2022 թվականին Դատարան է ներկայացրել հայցապահանջը հստակեցնելու մասին դիմում, որը 03.05.2022 թվականին ուղարկվել է նաև պատասխանողին: Երևանի քաղաքապետարանը հայցվող փոխհատուցման ենթակա գումարի չափի և վնասի տեսակի՝ իրական և բաց թողնված օգուտի վերաբերյալ ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր կարգով Դատարանում որևէ առարկություն կամ դիրքորոշում չի հայտնել և չի վիճարկել վերջինիս արժանահավատությունը, սակայն վերաքննիչ բողոքը բավարարվել է հենց այդ փաստարկների հիմքով:

«Տիգրիս» ՍՊ Ընկերության կողմից տրված հաշվետվությամբ փաստացի արտացոլված է գույքի՝ մինչև այն քանդելը եղած (առկա) վիճակը և տրվել է վերջինիս շուկայական արժեքի գնահատումը: Նշված հաշվետվության բացակայության պարագայում գրեթե անհնարին կարող էր դառնալ փոխհատուցման գումարի հաշվարկը, քանի որ Երևան համայնքը նման իրավիճակում կարող էր անգամ պնդել, որ տարածքը կառուցապատված չի էլ եղել, Ընկերությունը որևէ ներդրում չի կատարել, հետևաբար հայցվորին որևէ վնաս չի պատճառվել:

Վերաքննիչ դատարանը համակցության մեջ պատշաճ չի գնահատել «Տիգրիս» ՄՊԸ-ի կողմից 05.12.2010 թվականին տրված գույքի շուկայական արժեքի վերաբերյալ հաշվետվությունը, փորձագիտական Եզրակացությունը, «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի կողմից 06.10.2020 թվականին տրված թիվ 720 և 07.02.2023 թվականին տրված թիվ 4-234 տեղեկանքները, սույն վարչական գործում առկա գրավոր մյուս ապացույցները: Ընդ որում, Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել իրադարձությունների՝ քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման ժամանակահատվածը, կառուցապատման աշխատանքների և վարկի տրամադրման ժամանակահատվածները, կատարված աշխատանքների գնահատումն ու տրամադրված վարկի գումարի չափերի մոտավոր համընկնումները, որոնց համակցության մեջ գնահատման դեպքում կարելի է եզրակացնել, որ «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված վարկային միջոցների ձեռք բերման նպատակը եղել է հիմնական միջոցների համալրումը, որոնք օգտագործվել են բացառապես ք. Երևան, Աբովյան փող., թիվ 26/3 հասցեում ստորգետնյա հասարակական զուգարանի և բացօթյա սրճարան կառուցելու նպատակով:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի կողմից փորձագիտական եզրակացության՝ «ապրանքագիտական» մասի վերաբերյալ պատճառաբանությանը և փորձագետի կողմից նշված այն հանգամանքին, որ արտացոլված գնահատման արդյունքը փորձագետի կարծիքն է գույքի հավանական շուկայական արժեքի վերաբերյալ և չի կարող հանդիսանալ երաշխիք, որ անշարժ գույքն ազատ շուկայում կտրվի վարձով նույն եզրակացությամբ հաշվարկված արժեքով, ապա այդ մասով Վերաքննիչ դատարանը պատշաճ չի ուսումնասիրել փորձագիտական Եզրակացությունը, հակառակ դեպքում նման եզրահանգում չէր կատարի, քանի որ ցանկացած եզրակացություն՝ ըստ իր բնույթի, ունի այդ բաժինը, որն ունի հստակ մշակված ձևաչափ: Այսինքն՝ դա Եզրակացության բովանդակության մի մասն է կազմում:

Տվյալ դեպքում պահպանված են բոլոր պայմանները հայցվող բարենպաստ վարչական ակտը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ուժով ընդունված համարելու համար, հետևյալ հիմքերով.

Երևանի քաղաքապետին Ընկերության կողմից ներկայացված վնասի հատուցման մասին դիմումով և կից ներկայացված փաստաթղթերով հաստատվում է այն փաստաիրավական հանգամանքը, որ պահպանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի պահանջները, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջները: Հայցվող բարենպաստ վարչական ակտով դրա հասցեատիրոջը՝ Ընկերությանը չի տրամադրվում ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք, քանի որ օրինական ուժի մեջ մտած վճռով արդեն իսկ հաստատված է, որ Ընկերության վնասը պատճառվել է պատասխանողի կողմից դրսևորած վարչարարության արդյունքում, հետևաբար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի հիմքով՝ այն ենթակա է հատուցման վերջինիս կողմից: Այսինքն՝ հայցվող վնասի հատուցում տրամադրելու մասին վարչական ակտն ընդունելու իրավասությամբ տվյալ դեպքում օժտված է բացառապես Երևանի քաղաքապետարանը՝ ի դեմս Երևանի քաղաքապետի: Ինչպես նաև վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինն օրենքով սահմանված ժամկետում ցուցաբերել է ոչ իրավաչափ անգործություն՝ չի ընդունել հայցվող բարենպաստ վարչական ակտը կամ չի կայացրել անձի դիմումը մերժելու մասին

որոշում կամ վարչական վարույթը եզրափակող օրենքով նախատեսված որևէ այլ անհատական իրավական ակտ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 28.02.2023 թվականի որոշումը՝ օրինական ուժ տալով Դատարանի 12.07.2022 թվականի վճռին:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.**

Դատարանը ապացույցները չի հետազոտել ամբողջությամբ, մի դեպքում նշանակված փորձաքննությամբ փորձագետին առաջադրել է վնասի չափը հաշվարկելու հարց՝ հաստատված համարելով վնասի առկայությունը, իսկ մյուս դեպքում վնասի առկայությունը հիմնավորել է փորձագետի եզրակացությամբ:

Վնասի առկայությունն իրավական գնահատման ենթակա հասկացություն է, այնինչ Դատարանի կողմից վնասի առկայությունը գնահատելու հարցը դիտարկվել է որպես հատուկ գիտելիք պահանջող:

Դատարանի կողմից չի հստակեցվել, թե որ գործողության արդյունքում է պատճառվել վնասը, առկա է արդյոք պատճառահետևանքային կապ, թե՛ ոչ:

Դատարանը չի պարզել՝ արդյո՞ք Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանած և Ընկերության կողմից կառուցված շինությունները նույնանում են, թե՛ ոչ:

Վերաքննիչ դատարանը եկել է ճիշտ եզրահանգման՝ արձանագրելով, որ Դատարանի կողմից թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/10942/05/18 վարչական գործով 27.05.2019 թվականին կայացված վճռով Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 26/3 հասցեում Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանած շինությունների քանդմանն ուղղված գործողությունները ճանաչվել են ոչ իրավաչափ (**հատոր 1-ին, գ.թ. 6-18**):

2) Ընկերությունը 01.12.2020 թվականին Երևանի քաղաքապետարանին ուղղված դիմումով խնդրել է հատուցել թիվ ՎԴ/10942/05/18 վարչական գործով ոչ իրավաչափ ճանաչված գործողությունների արդյունքում Ընկերությանը պատճառված նյութական վնասը (608.296.344 ՀՀ դրամ, որից՝ 254.482.062 ՀՀ դրամ գումարը կազմում է իրական վնասը և 353.814.282 ՀՀ դրամը՝ չստացված եկամուտները (բաց թողնված օգուտ)) (**հատոր 1-ին, գ.թ. 45-48**):

3) «Գնահատման և փորձաքննությունների ազգային կենտրոն» ՍՊԸ-ի կողմից սույն վարչական գործով տրվել է թիվ ԱԳ-01/ՎԴ/22 փորձագետի եզրակացությունը, որով Երևան քաղաքի Աբովյան փողոցի թիվ 26/3 հասցեում Ընկերության կողմից կառուցված շինությունը Երևանի քաղաքապետարանի կողմից ոչ իրավաչափորեն քանդելու արդյունքում Ընկերությանը պատճառված վնասը հաշվարկվել է երկու տարբերակով. տարբերակ առաջին՝ Ընկերությանը պատճառված ընդհանուր վնասը կազմում է 723.194.143 (յոթ հարյուր քսաներեք միլիոն հարյուր ինսուսուներս հազար հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ, որից՝ 232.903.682 (երկու հարյուր երեսուներկու միլիոն ինը հարյուր երեք հազար վեց

հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ իրական վնաս և 490.290.461 (չորս հարյուր իննսուն միլիոն երկու հարյուր իննսուն հազար չորս հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ բաց թողնված օգուտ, տարբերակ երկրորդ՝ Ընկերությանը պատճառված ընդհանուր վնասը կազմում է 675.872.408 (վեց հարյուր յոթանասունհինգ միլիոն ութ հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր ութ) ՀՀ դրամ, որից՝ 184.080.635 (հարյուր ութսունչորս միլիոն ութսուն հազար վեց հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ իրական վնաս և 491.791.743 (չորս հարյուր իննսունմեկ միլիոն յոթ հարյուր իննսունմեկ հազար յոթ հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ բաց թողնված օգուտ (**հատոր 2-րդ, գ.թ. 2-64**):

**4. Վճարել նատարանի պատճառարանությունները և եզրահանգումները.** Վճարել նատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ նատարանը խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի պահանջները, ինչը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վարչարարությամբ պարճառված վնասի հարուցման պահանջի քննարկման և լուծման առանձնահատկություններին՝ վերահասարակելով նախկինում արդարահայրած իրավական դիրքորոշումները.*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչարարությունը՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեությունն է, որը եզրավակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման նույն օրենքի 7-րդ բաժնի դրույթներին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության (...) հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է՝(ա) Հայաստանի Հանրապետությունը՝ նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերում նշված վարչական մարմինների դեպքում. (բ) համապատասխան համայնքը՝ նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետում նշված վարչական մարմինների դեպքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա: Վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի սկստմամբ կիրառվում են նույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ

մասի համաձայն՝ վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ նույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Անդրադառնալով վարչարարությանը պատճառված վնասի հատուցման իրավունքի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ իրավական պետությունը պահանջում է արդյունավետ իրավական պաշտպանության ապահովում, ինչը նշանակում է, որ մասնավոր անձինք պետք է պետության ոչ իրավաչափ գործողություններից կամ անգործությունից պաշտպանվելու հնարավորություն ունենան: Ընդ որում, իրավական պաշտպանությունը ոչ միայն ենթադրում է, որ հետագայում հնարավոր կլինի վերստուգել պետության գործողությունների կամ անգործության իրավաչափությունը, այլ նաև այդպիսի գործողության կամ անգործության հետևանքով առաջացած վնասը կհատուցվի: Արդյունավետ իրավական պաշտպանության ապահովման նպատակով օրենսդիրն ամրագրել է ոչ իրավաչափ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցման իրավական հնարավորություն՝ սահմանելով վարչական մարմինների պատասխանատվությանը վերաբերող այնպիսի իրավակարգավորում, որի միջոցով ապահովվում է անձանց կրած վնասների հատուցումը: Վարչական մարմինների պարտականությունների խախտման հետևանքով անձանց կրած վնասների հատուցման վերաբերյալ դրույթներ ամրագրելով՝ օրենսդիրը ոչ միայն երաշխավորել է պետության ոչ իրավաչափ գործողություններից պաշտպանվելու իրական հնարավորություն, այլ նաև՝ այդ գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու և օրենքով սահմանված պայմանների առկայության դեպքում հատուցում ստանալու իրական հնարավորություն (*տե՛ս, Աշոտ Մարտիրոսյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնիթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմինների կողմից ընդունված ոչ իրավաչափ վարչական ակտերի, նրանց կատարած ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով, այսինքն՝ ոչ իրավաչափ վարչարարությանը պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով հիշյալ օրենքի համապատասխան իրավադրույթներով սահմանված՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավունքի իրականացման կառուցակարգին, իր նախկին որոշումներում ձևավորել է այն կայուն նախադեպային դիրքորոշումը, որի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը: Իրանից հետո միայն անձը պարտավոր է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել

վերադասության կամ դատական կարգով (տե՛ս, *Ժորա Սարգսյանն ընդդեմ Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի թիվ ՎԳ/0277/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենքով սահմանված նախապայմանների առկայության դեպքում վնասի հատուցման պահանջը ներկայացվում է այն իրավասու վարչական մարմնին դիմելու միջոցով, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը: Ընդ որում՝ տվյալ դիմումի, ինչպես նաև դիմումով հայցվող պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքերի նկատմամբ կիրառվում են դիմումի քննարկման համար օրենքով սահմանված ընդհանուր կանոնները:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում նշել է, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը հատուցելու պարտականությունը կրող սուբյեկտը Հայաստանի Հանրապետությունն է կամ համայնքը, որոնք այդ պարտականությունը կատարում են համապատասխան վարչական մարմնին ներկայացված՝ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը հատուցելու դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում նշված դիմումը քննարկելու և օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում այն բավարարելու մասին որոշում ընդունելու միջոցով (տե՛ս, *Արդա Հարությունյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/0832/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ և 102-րդ հոդվածների վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի նկատմամբ կիրառելի են օրենքով վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները, իսկ վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումը վարչական մարմինը քննարկում և լուծում է վարչական վարույթի հարուցման համար հիմք հանդիսացող դիմումների քննարկման համար օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան: Փաստորեն, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումը ուղղված իրավասու վարչական մարմնին (այն վարչական մարմնին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է այդ վնասը), «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով վարչական վարույթ հարուցելու հիմք է (տե՛ս *Էրիկ Վարդանյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/0528/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.04.2017 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները, ևս մեկ անգամ արձանագրում է, որ իրավասու վարչական մարմնին ուղղված՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին դիմումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով վարչական վարույթ հարուցելու հիմք է: Ըստ այդմ՝ այդ վարույթի նկատմամբ կիրառվում են օրենքով սահմանված ընդհանուր կանոնները: Ուստի վարչական մարմինը, ստանալով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ դիմումը, պարտավոր է նախաձեռնել համապատասխան վարչական վարույթ

լուծելով հատուցում տրամադրելու կամ այն մերժելու հարցը: Հետևաբար այն դեպքում, երբ վնասի հատուցման դիմումին ի պատասխան՝ վարչական մարմինը դրսևորում է անգործություն և օրենքով սահմանված ժամկետում չի կայացնում վնասի հատուցման պահանջը բավարարելու կամ մերժելու մասին համապատասխան ակտ, վրա է հասնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքը:

Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ: Վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմումը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե դիմումով հայցվում է որոշակի փաստ հաստատելու կամ արձանագրելու վերաբերյալ վարչական ակտի ընդունում, որով սահմանված իրավունքները անձինք կարող են հավաստել սահմանված ձևի փաստաթղթով, ապա փաստաթուղթը չստացած անձն ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականություններից, որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթուղթը չունենալու համար:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթուղթն իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա դիմող անձին է տրամադրում վարչական ակտն ընդունելու ժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան յոթնօրյա ժամկետում:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկին որոշումներից մեկում արձանագրել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին շահագրգիռ անձի դիմումը վարչական մարմնի կողմից չքննարկվելու պարագայում առաջանում է օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիլեյիան, որի ուժով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում վարչական մարմնի կողմից չընդունված բարենպաստ վարչական ակտը՝ վնասի հատուցում տրամադրելու մասին, կարող է համարվել ընդունված, եթե առկա են դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Ընդ որում, նշված իրավական կառուցակարգի շրջանակներում վարչական ակտի ընդունված համարվելու դեպքերում այդ վարչական ակտից բխող իրավունքները դրա հասցեատիրոջ կողմից կարող են արդյունավետ կերպով իրացվել, եթե տվյալ անձին տրամադրվի հայցվող

քարենպաստ վարչական ակտի ընդունված լինելը հավաստող համապատասխան փաստաթուղթը *(տե՛ս Էրիկ Վարդանյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/0528/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.04.2017 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով վնասի հատուցման պահանջի ներկայացման կարգին, արձանագրել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքը կենսագործվում է հետևյալ ընթացակարգով.

1) նախնառաջ վնաս պատճառած պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ վարչական ակտը պետք է շահագրգիռ անձի դիմումով (վարչական կամ դատական կարգով) ճանաչվի ոչ իրավաչափ,

2) այնուհետև շահագրգիռ անձը պետք է դիմի ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին՝ վնասի հատուցման պահանջով,

3) վնասի հատուցման դիմումի լրիվ կամ մասնակիորեն մերժման դեպքերում շահագրգիռ անձը կարող է վարչական կարգով բողոքարկել այդ դիմումը մերժելու մասին վարչական ակտը կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի միջոցով դիմել վարչական դատարան՝ ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջով,

4) վնասի հատուցման դիմումը չքննարկվելու դեպքում գործում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիայի ինստիտուտը (դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայության պարագայում) *(տե՛ս, Միևնու հուլիանյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/11507/05/17 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.03.2021 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև իրավաբանական ֆիկցիայի գործողության պայմանների առկայությանը:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ հայցվող վարչական ակտի իրավաչափությունը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով սահմանված իրավաբանական ֆիկցիայի գործողության պայման չէ: Նշվածից բացառություն է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված վարչական ակտի առոչնչության հիմքի առկայությունը, այն է՝ ակտով դրա հասցեատիրոջը տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք: Այսինքն՝ օրենքով սահմանված ժամկետում վարչական մարմնի կողմից չընդունված վարչական ակտի օրենքի ուժով ընդունված համարվելու ֆիկցիայի գործողությունը պարզելիս դատական վերահսկողությունը սահմանափակվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված վարչական ակտի առոչնչության հիմքի առկայությունը (բացակայությունը) գնահատելով: Ինչ վերաբերում է հայցվող վարչական ակտի հնարավոր անվավերության հիմքերին, ինչպես նաև հնարավոր առոչնչության



մյուս հիմքերին, ապա քննարկվող իրավաբանական ֆիլցիայի գործողությունը պարզելիս դրանց առկայությունը (բացակայությունը) պետք է ենթակա չլինի դատարանի կողմից գնահատման (*յրեն Գարեգին Խաչատրյանն ընդդեմ Երևան համալսրի, երրորդ անձինք ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Դարյա Տուրիֆի թիվ ՎԴ/9652/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2021 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, վերոգրյալով պայմանավորված, անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված վարչական ակտի առոչնչության հիմքի առկայությանը վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները. ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից իրավաբանական ուժ չունի և ենթակա չէ կատարման կամ կիրառման, իսկ 3-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով վարչական ակտի առոչնչության հիմքերին, իր 04.02.2014 թվականի թիվ ՍԴՈ-1137 որոշմամբ, մասնավորապես, արտահայտելով այն իրավական դիրքորոշումը, որ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը պայմանավորված է ակնառու կոպիտ սխալներով, որոնք ի հայտ են գալիս առանց տվյալ վարչական ակտի իրավաչափությունը հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու անհրաժեշտության և բացառում են տվյալ ակտի առ ոչինչ լինելու վերաբերյալ հնարավոր վեճերը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի առոչնչ լինելու համար էական և անհրաժեշտ պայման է անձի վրա ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելը, կամ անձին ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելը: Այսինքն՝ անձի վրա դրվող պարտականությունը կամ անձին տրամադրվող իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի ակնհայտ ոչ իրավաչափ: Հետևաբար վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, դեռևս բավարար չէ վարչական ակտն առոչնչ դիտելու համար: Այսինքն՝ վարչական ակտի առոչնչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը կամ դրված պարտականությունը առերևույթ ոչ իրավաչափ լինի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առոչնչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր, այլ այն կարող է ճանաչվել անվավեր (*յրեն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչությունն ընդդեմ «Նովոուսինկայ» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/0562/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը, «Տավրու-66» ֆիրմա ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մաշտոցի*

հարկային տեսչության և ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/7157/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը, Ժիրայր Զոհրաբյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արարատի մարզային ստորաբաժանման, Աննա Զոհրաբյանի, երրորդ անձ ՀՀ Արարատի մարզի Գոռավանի գյուղական համայնքի թիվ ՎԴ3/0233/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը):

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դատական կարգով հաստատվի անձի վրա ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելը կամ անձին ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ հայցվող վարչական ակտի առոչնչությունը պայմանավորվում է այնպիսի հանգամանքներով, որոնց ազդեցությունը վարչական ակտի իրավաչափության վրա ենթակա է ստուգման և գնահատման հատուկ ընթացակարգով, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առոչնչ:

**Այսպիսով, ամբողջ վերոգրյալի հիման վրա՝ վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջով դիմելով համապատասխան վարչական մարմնին՝ շահագրգիռ անձը հայցում է իր պահանջի բավարարման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտի ընդունում, և այն պարագայում, երբ վարչական մարմինը վնասի հատուցման դիմումի վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, վրա է հասնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքը, այն է՝ հայցվող բարենպաստ վարչական ակտը համարվում է ընդունված:**

**Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը հայց է ներկայացրել ընդդեմ Երևան համայնքի՝ պահանջելով պարտավորեցնել Երևան համայնքին հատուցել ոչ իրավաչափ ճանաչված գործողությունների արդյունքում Ընկերությանը պատճառված վնասը:

**Դատարանը,** բավարարել է Ընկերության հայցը՝ արձանագրելով, որ «(...) Ընկերությունը պահպանել է վնասի հատուցման պահանջ ներկայացնելու՝ օրենքով սահմանված ընթացակարգը, մասնավորապես, 01.12.2020 թվականին դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետարան՝ թիվ ՎԴ/10942/05/18 վարչական գործով ոչ իրավաչափ ճանաչված գործողությունների արդյունքում «Մուշ-Մեղա» ՍՊԸ-ին պարճատված նյութական վնասը փոխհատուցելու պահանջով, որը, թեև գրավոր որոշմամբ չի մերժվել, սակայն, դրա վերաբերյալ որևէ պայրասխան չի սրացվել, այսինքն Ընկերության ներկայացված պահանջը վարչական մարմնի կողմից լուծման չի արժանացել:

Ներկայացված դիմումի վերաբերյալ որևէ պայրասխան չստանալով՝ հայցվորն իր պահանջի վերջնական լուծումն ստանալու նպատակով հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ վարչական մարմնի ոչ իրավաչափ

ճանաչված գործողությունների արդյունքում պատճառված վնասի հատուցման պահանջով:

(...) վնասը, որի գոյության վաստակը և չափը հասարակվել են սույն վարչական գործով իրականացված փորձարկման արդյունքում, հանդիսացել է վարչական մարմնի իրականացրած վարչարարության հետևանք կամ այլ կերպ ասած՝ վարչական մարմնի գործողության և ստաջացած վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ:

Ողջ վերոգրյալի հիման վրա Դատարանն արձանագրում է, որ առկա են ոչ իրավաչափ վարչարարությանը պատճառված վնասը հատուցելու բոլոր պայմանները, մասնավորապես, «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ին պատճառվել է վնաս, այն պատճառով է Երևան համայնքի (քաղաքապետարանի) իրականացրած վարչարարության հետևանքով, վարչարարությունը դատարան կարգով ճանաչվել է ոչ իրավաչափ, հայցվորը դիմել է վարչական մարմնին՝ ոչ իրավաչափ վարչարարությանը պատճառված վնասը հատուցելու պահանջով, սակայն դիմումի պարասիան սյրպես էլ չի արագել: Հետևարար Դատարանը գրնում է, որ հայցը հիմնավոր է: (...):

«Մուշ-Մէդա» ՍՊԸ-ին պատճառված վնասը հաշվարկվել է երկու տարբերակով. տարբերակ առաջին՝ «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ին պատճառված ընդհանուր վնասը կազմել է 723.194.143 (յոթ հարյուր քսաներեք միլիոն հարյուր ինսունչորս հազար հարյուր քառասուներեք) ՀՀ դրամ, որից՝ 232.903.682 (երկու հարյուր երեսուներկու միլիոն ինը հարյուր երեք հազար վեց հարյուր ութսուներկու) ՀՀ դրամ իրական վնաս և 490.290.461 (չորս հարյուր ինսուն միլիոն երկու հարյուր ինսուն հազար չորս հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ բաց թողնված օգուտ, որում նվազեցումներ է կատարվել միայն բացօթյա նստավայրերի, կահույքի, փակ արձարանի բարձրակարգ նստարանների և սպասարկման սպասքի ձեռքբերման շուկայական արժեքների մասով, և տարբերակ երկրորդ՝ «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ին պատճառված ընդհանուր վնասը կազմել է 675.872.408 (վեց հարյուր յոթանասունհինգ միլիոն ութ հարյուր յոթանասուներկու հազար չորս հարյուր ութ) ՀՀ դրամ, որից՝ 184.080.635 (հարյուր ութսունչորս միլիոն ութսուն հազար վեց հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ իրական վնաս և 491.791.773 (չորս հարյուր ինսունմեկ միլիոն յոթ հարյուր ինսունմեկ հազար յոթ հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ բաց թողնված օգուտ, որում նվազեցումներ է կատարվել բացօթյա նստավայրերի, կահույքի, փակ արձարանի բարձրակարգ նստարանների և սպասարկման սպասքի ձեռքբերման, լուսային և ձայնային տարբեր բարձրակարգ համակարգերի, հեռուստատեսային սարքերի և սարքավորումների, ինչպես նաև գովազդային սարքերի ձեռքբերման և տեղադրման շուկայական արժեքների մասով և հովաքման ու ջեռուցման «Չիլեր» համակարգի տեղադրման արժեքի մասով:

Դատարանը, (...) գրնում է, որ կատարված սպամոնտաժման հետևանքով հետազոտման ենթակա շինությունը բնության մեջ գոյություն չունենալու պայմաններում օբյեկտիվորեն հնարավոր չէ ճշգրիտ և ամբողջական կերպով որոշել նշված սարքերի և գույքերի տեղադրման և (կամ) ձեռքբերման արժեքները, դրանց հետագա տեսքն ու պիտանելիությունը և դրանք ամբողջությամբ հաշվարկել պատճառած վնասի չափի մեջ: Միաժամանակ հաշվի առնելով հայցվոր ընկերության կողմից ներկայացված դիմումը, որով վերջինս խնդրել է Երևան համայնքին պարտավորեցնել հատուցել ոչ իրավաչափ ճանաչված գործողությունների արդյունքում պատճառված վնասները՝ 723.194.143 (յոթ հարյուր քսաներեք միլիոն հարյուր ինսունչորս հազար հարյուր քառասուներեք) ՀՀ դրամի կամ 675.872.408 (վեց հարյուր յոթանասունհինգ միլիոն ութ հարյուր յոթանասուներկու հազար

չորս հարյուր ութ) ՀՀ դրամի չափով, Դատարանը գրնում է, որ ոչ իրավաչափ ճանաչված գործողությունների արդյունքում հայցվորին պատճառոված վնասը ենթակա է հասրուցման 675.872.408 (վեց հարյուր յոթանաստունհինգ միլիոն ութ հարյուր յոթանաստուներկու հազար չորս հարյուր ութ) ՀՀ դրամի չափով:

(...) Դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/10942/05/18 վարչական գործով 27.05.2019 թվականին կայացված վճռով հասարարվել է այն հանգամանքը, որ ք.Երևան, Արովյան փողոց, թիվ 26/3 հասցեում «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ի կողմից կառուցված շինության քանդման գործընթացը նահասձեռնվել է հենց Երևանի քաղաքապետարանի կողմից, և նույնիսկ եթե շինությունը չի քանդվել Երևանի քաղաքապետարանի աշխարակիցների կողմից, վարչական մարմնի կողմից նահասձեռնվել են այն քանդելուն ուղղված գործողություններ, այսինքն այդ շինությունը քանդվել է վարչական մարմնի կարգադրության արդյունքում: Նշված վճիռը սահմանված կարգով մերել է օրինական ուժի մեջ և դարձել անրողրքարկելի»:

**Վերաքննիչ դատարանը** բավարարել է Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը պատճառաբանելով, որ «(...) Վերաքննիչ դատարանի գնահարմամբ առկա է ոչ իրավաչափ վարչարարությանբ պատճառոված վնասի հասրուցման առաջին նահասրոյալը, մաննավորասպես Պատասխանողի կողմից ոչ իրավաչափ վարչարարության իրականացումը:

Վերաքննիչ դատարանը գալիս է հեերևության, որ որպես իրական վնաս գնահարված գումարը չի կարող հանարվել որպես ոչ իրավաչափ վարչարարությանբ պարճառոված վնաս, հիմնավորմանբ առ այն, որ Դատարանի կողմից նշանակված դարաշինարարաբեհինիկական և դարասարանքագիրական հանայիր փորճարնության արդյունքում փորճագերը պարչաճ քնության չի իրականացրել պարգելու փասարացի պարճառոված իրական վնասի չաիր, այլ հիմք է ընդունել շուրջ րասր րարի առաջ «Տիգրիս» ՍՊ ընկերության կողմից րրված գույքի շուկայական արճեքի գնահարման հաշվելելությունը, ընդ որում, փորճագիրական եգրակացությունում ևս արճանագրվել է, որ արդեն իսկ նշված հեերազրման եղանակով նույնպես հնարավոր չէ պարգել, թե որքանով են արճանահավար կամ անարճանահավար «Տիգրիս» ՍՊ ընկերության կողմից 20.11.2010թ. գնահարման թիվ Ծ-02/11.2010 պայմանագրի շրջանակներում ՀՀ, ք. Երևան, Կենարոն հանայք, Սայաթ-Նովա և Արովյան փողոցների հարման մնսում գրնվող արճարանի կառուցման շրջակայքում կարարված շինարարական և այլ աշխարանքների շուկայական արճեքի գնահարման վերաբերյալ «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ին 05.12.2010 թվականին րրված շինարարական և այլ րեսակի աշխարանքների շուկայական արճեքները:

(...) Վերաքննիչ դատարանը եգրահանգում է, որ սույն դեպքում չի պարգվել իրական վնասի փասարացի չաիր:

(...) Վերաքննիչ դատարանի գնահարմամբ վարկային պայմանագրերը Պատասխանողի կողմից իրականացված և թիվ ՎԴ/10942/05/18 վարչական գործով Դատարանի օրինական ուժի մեջ մերած վճռով ոչ իրավաչափ ճանաչված քանդման գործողության արդյունքում Հայցվորին պատճառոված վնասի չաիր հիմնավորող վերաբերելի սպացույց չեն կարող հանդիսանալ, քանի որ առկա չէ որևէ գրավոր սպացույց վարկերի նպարակային նշանակության մնսին, այսինքն նշված մնսով բացակայում է ոչ իրավաչափ վարչարարությանբ պատճառոված վնասի հասրուցման նահասպայման հանդիսացող և էական իրավական նշանակություն ունեցող պարճառական կասր:

(...) Վերաքննիչ դատարանը գրնում է, որ սույն գործով Դատարանը, գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքին համապատասխան, պարշաճ կերպով չի ձեռնարկել համապատասխան միջոցներ պարզելու Հայցվորի իրավահարաբերության պահին փաստացի (մասնավորապես՝ օրինակ՝ գույքը վարձակալության տրամադրելու գործողությունների մասին) իրական նպատակները և մտադրությունները ենթադրյալ բաց թողնված օգուտի հետ կապված»:

Վճռաբեկ դատարանը, վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Ընկերությունը, իրացնելով իր դատական պաշտպանության իրավունքը, հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ք.Երևան, Աբովյան փողոց, թիվ 26/3 հասցեում Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանած շինությունների քանդմանն ուղղված գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով: ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/10942/05/18 վարչական գործով 27.05.2019 թվականին կայացված վճռով հայցը բավարարվել է, և Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից ք.Երևան, Աբովյան փողոց, թիվ 26/3 հասցեում Ընկերության կողմից կառուցված շինությունների քանդմանն ուղղված գործողությունները ճանաչվել են ոչ իրավաչափ: Վճիռն օրինական ուժ է ստացել 05.08.2020 թվականին (հիմք՝ «www.court.am» պաշտոնական կայք):

Ընկերությունը 01.12.2020 թվականին Երևանի քաղաքապետարանին ուղղված դիմումով խնդրել է հատուցել թիվ ՎԴ/10942/05/18 վարչական գործով ոչ իրավաչափ ճանաչված գործողությունների արդյունքում Ընկերությանը պատճառված նյութական վնասը (608.296,344 ՀՀ դրամ, որից՝ 254,482,062 ՀՀ դրամ գումարը կազմում է իրական վնասը և 353.814,282 ՀՀ դրամը՝ չստացված եկամուտները (բաց թողնված օգուտ)), սակայն որևէ պատասխան՝ նշված դիմումի վերաբերյալ, չի ստացել:

Հաշվի առնելով սույն գործով արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա են իրավաբանական ֆիկցիայի կիրառման նախապայմանները, մասնավորապես՝ Ընկերությունը դիմել է վարչական մարմնին վնասի հատուցման պահանջով՝ հայցելով բարենպաստ վարչական ակտի ընդունում: Դիմումը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջներին, բացակայում է հայցվող բարենպաստ վարչական ակտի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված՝ առոչնչության հիմքը, Երևանի քաղաքապետարանը օժտված է հայցվող բարենպաստ վարչական ակտը կայացնելու իրավասությանը, այսինքն՝ եղել է հայցվող վարչական ակտը կայացնելու իրավասու սուբյեկտ, Երևանի քաղաքապետարանը օրենքով սահմանված ժամկետում ցուցաբերել է անգործություն՝ չընդունելով հայցվող բարենպաստ վարչական ակտն ընդունելու կամ դիմումը մերժելու մասին որոշում:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործի շրջանակներում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի համատեքստում գնահատման ենթակա են եղել սույն օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքի ուժով վարչական ակտն ընդունված համարվելու համար

հիմք հանդիսացող պայմանները: Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի փորձագետի եզրակացության արժանահավատության վերաբերյալ եզրահանգումներին, ապա դրանք չեն փաստում հայցվող բարենպաստ վարչական ակտի առոչնչության մասին, մասնավորապես այն, որ Ընկերությունը տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

Նման պայմաններում Ընկերության դիմումով հայցվող վարչական ակտը Վճռաբեկ դատարանի գնահատմամբ համարվում է ընդունված, քանի որ առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված՝ օրենքի ուժով վարչական ակտն ընդունված համարվելու համար հիմք հանդիսացող պայմանները, հետևաբար դիմող Ընկերությունը կարող էր ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը:

Այսպիսով վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից հայցվող վարչական ակտն առերևույթ ոչ իրավաչափ չէ, այսինքն՝ առ ոչինչ չէ, մինչդեռ Ընկերության դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում Երևանի քաղաքապետարանի կողմից որոշում չի կայացվել, որպիսի պայմաններում վարչական ակտը համարվել է ընդունված, և հայցվող Ընկերությունը ձեռնամուխ է եղել համապատասխան իրավունքի իրականացմանը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում

է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև նյութ կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Մույն գործով նկատի ունենալով այն փաստը, որ վճարելի բողոքը ենթակա է բավարարման, իսկ Ընկերությունը վճարելի բողոքի համար վճարել է 30.000 ՀՀ դրամ, այսինչ պետք է վճարեր 20.000 ՀՀ դրամ՝ որպես մեկ ոչ դրամական պահանջի գործով վճարելի բողոքի համար օրենքով սահմանված պետական տուրքի գումար, Վճարելի դատարանը գտնում է, որ Ընկերության կողմից նախապես վճարված 20.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումարը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Երևանի քաղաքապետարանի կողմից:

Միաժամանակ Վճարելի դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ավել վճարված պետական տուրքը՝ 10.000 ՀՀ դրամի չափով, ենթակա է վերադարձման այն վճարած անձին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճարելի դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճարելի բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 28.02.2023 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 12.07.2022 թվականի վճիռին:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Մուշ-Մէդա» ՍՊԸ-ի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարելի բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ**

**21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/2639/05/16  
2022թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/2639/05/16

Նախագահող դատավոր՝

Ա. Բաբայան

Դատավորներ՝

Ա. Թովմասյան

Ա. Պողոսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող և զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 13-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.02.2019 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Կոմիտեի՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետքացթողումային հսկողության վարչության 28.12.2015 թվականի կամերալ մաքսային ստուգման թիվ 0019 ակտը և 28.12.2015 թվականի ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին թիվ 0019 որոշումը վերացնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության հետքացթողումային հսկողության վարչության 28.12.2015 թվականի կամերալ մաքսային ստուգման թիվ 0019 ակտը և 28.12.2015 թվականի ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին թիվ 0019 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 05.12.2017 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.02.2019 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 05.12.2017 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:



Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ Ա. Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը, 42-րդ հոդվածի 1-ին մասը, 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերը, իրավահարաբերության ծագման պահին գործող Մաքսային միության մաքսային օրենսգրքի 98-րդ հոդվածի 4-րդ մասը, III-րդ հոդվածի 2-րդ մասը, 131-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Վրաստանի Կառավարության միջև մաքսային գործերում վարչական փոխօգնության մասին» 15.10.2007 թվականի համաձայնագրի 5-րդ և 6-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Ընկերության անվամբ տեղափոխվող բեռի տեսակի, քանակի, քաշի, տեղափոխող տրանսպորտային միջոցի, ինչպես նաև մատակարարի վերաբերյալ տվյալները Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության մաքսային մարմիններին ներկայացված հաշիվ-ապրանքագրերում նույնական են, սակայն առկա է տարբերություն տեղափոխվող ապրանքի արժեքների և առաքման պայմանի մեջ: Արտահանման երկրում ներկայացված հաշիվ-ապրանքագրերում բեռի արժեքը եղել է 35.221,99 ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ ներմուծված և մաքսային մարմիններին ներկայացված հաշիվ-ապրանքագրերում այն ներկայացվել է ցածր՝ 20.186 ԱՄՆ դոլար:

Վերաքննիչ դատարանը նշված հանգամանքները չի դիտարկել պատճառահետևանքային կապի մեջ և չի գնահատել, թե գործարքի կողմերի համար այն ինչ փաստացի հետևանքներ է առաջացրել: Ակնհայտ է, որ հաշիվ-ապրանքագրերում գործարքի արժեքը ցածր ներկայացնելը ձեռնառու էր միայն ՀՀ ներմուծող ընկերությանը, քանի որ վերջինս այդ պարագայում վճարում է պակաս մաքսային վճարներ, իսկ մատակարարող թուրքական ընկերության և Վրաստանից վերաարտահանող ընկերության համար ապրանքների արժեքը իրականից ավելի բարձր ներկայացնելը որևէ տրամաբանական բացատրություն չունի, քանի որ, ապրանքների արժեքն արհեստականորեն բարձրացնելով, արտահանող կազմակերպությունը կարող էր առանց որևէ տրամաբանության կրել վնասներ՝ հարկային ավել վճարումներ կատարելու տեսքով:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ մաքսային մարմինն ունեցել է Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը ոչ հավաստի դիտարկելու հիմնավոր կասկածներ և դրանց արժանահավատության մեջ հավաստիանալու նպատակով, ինքնուրույն, իր հաշվին ձեռնարկել է միջոցներ այլ ապացույցներ ձեռք բերելու ուղղությամբ, այսինքն՝ իրականացրել է համապատասխան հարցումներ և ձեռք է բերել բավարար ապացույցներ, որոնցով հաստատել է Ընկերության կողմից ոչ արժանահավատ տեղեկություններ և փաստաթղթեր ներկայացնելու փաստը:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել նաև այն հանգամանքը, որ ստուգման ընթացքում կատարվել է գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում,

ուսումնասիրվել են Ընկերության հաշվապահական, ապրանքն ուղեկցող փաստաթղթերը, կատարվել է նաև հայտարարագրված տվյալների համադրում, որի արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից հայտարարագրվել են ոչ ճշգրիտ տեղեկություններ ապրանքների մաքսային արժեքի վերաբերյալ, ինչի արդյունքում Ընկերությանն առաջադրվել է մաքսային արժեքները պակաս հայտարարագրելու հետևանքով քիչ վճարված մաքսային վճարների վճարման պահանջ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.02.2019 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ ֆինանսների նախարարության հետբացթողումային հսկողության վարչության Ստուգումների պլանավորման և ռազմավարության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Հ. Գրիգորյանի կողմից 12.11.2015 թվականին կազմվել է Ընկերության վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական տեղեկանք, որով, որպես վերլուծական աշխատանքի իրականացման հիմք, նշվել է Ընկերության 08.07.2012 թվականի թիվ C 19608 մաքսային հայտարարագիրը՝ կից փաստաթղթերով, Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 20.10.2015 թվականի թիվ 21-10/109595 (ՀՀ ԿԱ ՊԵԿ մուտք 28.10.2015 թվականի թիվ 16681) գրությանը կից տեղեկատվությունը: Վերլուծության ընթացքում պարզվել է, որ Ընկերությունը 08.07.2015 թվականի թիվ C 19608 հայտարարագրով՝ «բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով, ձևակերպել է REEXPOTRANS-GEO LLC (Վրաստան) ընկերությունից գնված և ՀՀ տարածք ներմուծված 9.136կգ բրուտոտո և 8.755,8կգ նետոտո քաշերով 300 հատ էլեկտրական գազօջախներ, էլեկտրական վառարաններ և գազօջախի մասեր: Հայտարարագրված ապրանքների ընդհանուր հաշիվ-ապրանքագրային արժեքը /հաշվին-ապրանքագիր թիվ TE 02 առ 03.07.2015թ./ կազմել է 20.186 ԱՄՆ դոլար՝ CIP Երևան մատակարարման բազիսային պայմանով, մաքսային արժեքների հանրագումարը՝ 10.156.409 դրամ:

Վրաստանի մաքսային ծառայության 20.10.2015 թվականի թիվ 21-10/109595 գրությամբ ստացված տեղեկատվության համաձայն՝ REEXPOTRANS-GEO LLC (Վրաստան) ընկերությունը՝ համաձայն 03.07.2015 թվականի թիվ 29 հաշիվ-ապրանքագրի Վրաստանից Ընկերությանն է մատակարարել 35.221,99 ԱՄՆ դոլար ընդհանուր հաշիվ-ապրանքագրային արժեքով /FCA Բաթումի մատակարարման բազիսային պայմանով/ ապրանք:

Համադրելով 08.07.2015 թվականի թիվ C19608 հայտարարագրով ներկայացված տվյալները Վրաստանի մաքսային ծառայությունից ստացված արտահանման երկրի մաքսային մարմինների տեղեկությունների հետ՝ պարզվել է, որ Ընկերության մոտ առաջանում են պակաս վճարված մաքսային վճարներ, ուստի առաջարկվել է 08.07.2015 թվականի թիվ C19608 հայտարարագրի մասով Ընկերությունում իրականացնել կամերալ մաքսային ստուգում (հատոր 1-ին, գ.թ. 87).

2) ՀՀ ֆինանսների նախարարության հետբացթողումային հսկողության վարչության ստուգումների պլանավորման և ռազմավարության բաժնի պետը, հիմք ընդունելով 12.11.2015 թվականին կազմված տեղեկատվական-վերլուծական

տեղեկանքը՝ Ընկերության կողմից մաքսային օրենսդրության հնարավոր խախտման մասին վկայող տեղեկատվության առկայության վերաբերյալ, 12.11.2015 թվականի զեկուցագրով հետքացթողումային հսկողության վարչության պետի ժ/պ Հ. Հակոբյանին առաջարկել է Ընկերությունում իրականացնել կամերալ մաքսային ստուգում (հատոր 1-ին, գ.թ. 86)։

3) «Ապավեն» ՍՊԸ-ի 23.12.2015 թվականի թիվ F/15-138 գրության համաձայն՝ 2015 թվականի հուլիս ամսվա ընթացքում Բաթումի-Երևան բեռնափոխադրման պարագայում Բաթումի քաղաքից մինչև Բագրատաշենի Մ/Կ հատվածի համար մեկ բեռնատարի 9-10 տոննա բեռի ընդհանուր քաշով տեղափոխման արժեքը կարող էր կազմել 650-750 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (հատոր 1-ին, գ.թ. 106)։

4) ՀՀ ֆինանսների նախարարության հետքացթողումային հսկողության վարչության կողմից 28.12.2015 թվականին կազմվել է կամերալ ստուգման թիվ 0019 ակտը, որի համաձայն՝ Ընկերությունում իրականացվել է կամերալ մաքսային ստուգում՝ 08.07.2015 թվականի թիվ C 19608 հայտարարագրով Արարատյան Տ/Մ ձևակերպված ապրանքների վերաբերյալ ներկայացված տեղեկությունների արժանահավատության ստուգման վերաբերյալ։

Ստուգման ժամանակ իրականացվել են հետևյալ միջոցառումները. Մաքսային ստուգում՝ ներմուծված ապրանքների հայտարարագրման ժամանակ ներկայացված տեղեկությունները Վրաստանի մաքսային ծառայությունից ստացված արտահանման ժամանակ ներկայացված հաշիվ-ապրանքագրերի տվյալների հետ համադրելու միջոցով։

Ստուգման արդյունքում պարզվել է, որ Ընկերությունը 08.07.2015 թվականի թիվ C 19608 մաքսային հայտարարագրով «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպել է վրացական Reexpotrans-Geo LLC ընկերության կողմից մատակարարված 9.136կգ բրուտոտո և 8.755,8կգ նետոտ քաշով (մեկ բեռնատար իր կիսակցորդով՝ OEO597/ BZ295 պետհամարանիշի) 300 հատ էլեկտրական գազօջախներ, էլեկտրական վառարաններ և գազօջախի մասեր՝ մաքսային ձևակերպումների ժամանակ ներկայացնելով Reexpotrans-Geo LLC (Վրաստան) ընկերության կողմից դուրս գրված 03.07.2015 թվականի թիվ TE02 հաշիվ-ապրանքագիրը 20186 ԱՄՆ դոլար արժեքով (1 ԱՄՆ դոլարը = 474.39 դրամ)՝ CIP Երևան մատակարարման պայմանով։ Հայտարարագրված ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը կազմել է 10.156.409 դրամ (10.152.420 դրամի էլ.սարքավորումներ և 3.989 դրամի էլ.սարք.մասեր)։

Վրաստանի մաքսային ծառայության՝ 20.10.2015 թվականի թիվ 21-10/109595 գրությամբ ստացված տեղեկության համաձայն՝ Reexpotrans-Geo LLC (Վրաստան) ընկերությունը Ընկերությանը OEO597/ BZ295 պետհամարանիշով մեկ տրանսպորտային միջոցով մատակարարել է 9.136 կգ բրուտոտո և 8.616 կգ նետոտ քաշով 300 հատ ընդհանուր քանակով էլեկտրական գազօջախներ, էլեկտրական վառարաններ և գազօջախի մասեր՝ համաձայն Reexpotrans-Geo LLC (Վրաստան) ընկերության 03.07.2012 թվականի թիվ 29 հաշիվ-ապրանքագրի 35.221,99 ԱՄՆ դոլար արժեքով (1 ԱՄՆ դոլարը = 474.39 դրամ)՝ FCA Բաթումի մատակարարման պայմանով (35.191,43 ԱՄՆ դոլարի էլ.սարքավորումներ և 3056 ԱՄՆ դոլարի էլ.սարք.մասեր)։

Մաքսային ստուգման ընթացքում կատարվել է հարցում «Ապավեն» ՍՊԸ ընկերությանը՝ վերը նշված ապրանքների՝ մինչև ՀՀ սահման տեղափոխման արժեքը որոշելու նպատակով։ «Ապավեն» ՍՊԸ ընկերության 23.12.2015 թվականի թիվ F/15-138 գրությամբ տրամադրված տեղեկության համաձայն՝ 2015 թվականի

հուլիս ամսին Վրաստանի Բաթումի քաղաքից մինչև Բագրատաշենի մաքսային կետ 1 բեռնատար ավտոմեքենայով 9-10 տոննա բեռի տեղափոխման արժեքը կազմել է 650-750 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերը նշված տեղեկությունները՝ Ընկերության կողմից 08.07.2015 թվականի C 19608 հայտարարագրով ՀՀ տարածք ներմուծված ապրանքների իրական մաքսային արժեքների հանրագումարը կկազմի՝

17.017.313 դրամ = (35.221,99 ԱՄՆ դոլար /ապրանքների հ/ա արժեքը արտահանման երկրում/ + 650 ԱՄՆ դոլար /Բաթումի-Բագրատաշենի մ/կ հատվածի փոխադրման մինիմալ արժեք/ x 474,39 /դրամի փոխարժեք/):

Պակաս հայտարարագրված մաքսային արժեքը կկազմի՝ 6.860.904 դրամ = (17.017.313 դրամ իրական մ/արժեք – 10.156.409 դրամ հայտարարագրված մ/արժեք):

Ակտի համաձայն՝ Ընկերության կողմից խախտվել են Մաքսային միության մաքսային օրենսգրքի 188-րդ և 189-րդ հոդվածների պահանջները՝ ՀՀ մաքսային մարմիններին ներկայացվել են ոչ ճշգրիտ տեղեկություններ ՀՀ տարածք ներմուծված ապրանքների հաշիվ-ապրանքագրային արժեքների վերաբերյալ (հատոր 1-ին, գ.թ. 88-93):

5) ՀՀ ֆինանսների նախարարության հետբացթողումային հսկողության վարչությունը, հիմք ընդունելով 28.12.2015 թվականի թիվ 0019 ակտը, նույն օրը կայացրել է «Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին» թիվ 0019 որոշումը, որով առաջադրվել է Մաքսային միության օրենսգրքի 191-րդ հոդվածին համապատասխան՝ ապրանքների հայտարարագրերում կատարել համապատասխան որոշմամբ ներկայացված փոփոխությունները և լրացումները՝ ճշգրտված տվյալների հիման վրա (հատոր 1-ին, գ.թ. 107-109):

6) ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.02.2016 թվականի թիվ 7/9 որոշման համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետբացթողումային հսկողության վարչության կամերալ մաքսային ստուգման 28.12.2015 թվականի թիվ 0019 ակտը և ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին 28.12.2015 թվականի թիվ 0019 որոշումը թողնվել է անփոփոխ, իսկ Ընկերության գանգատը մերժվել է (հատոր 1-ին, գ.թ. 18-22):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի «ա» կետի կիրառման կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձնալ այն իրավական հարցադրմանը, թե ինչ միջոցներով կարող է անձը վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում կատարել իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության սպասուցման պարտականությունը և ինչ հերևանք կարող է ունենալ նրա կողմից այդ*

*պարտականությունը չկատարելը՝ վերահասարակելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես 2005 թվականի, այնպես էլ 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունը հռչակվել է իրավական պետություն:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում նույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից 18.02.2004 թվականին ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածում ամրագրվել է, որ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:

Նշված օրենքի 2-րդ գլխում (հոդվածներ 4-12) ամրագրվել են նաև վարչարարության հիմնարար սկզբունքները: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

Վերոգրյալ իրավակարգավորումներից հետևում է, որ իրավական պետությունում վարչական մարմիններն իրենց գործունեությունում «ազատ» չեն, այլ կապակցված են իրավունքով և օրենքով, ինչը դրսևորվում է նաև օրենքի գերակայությամբ (վարչական մարմնի ոչ մի իրավական ակտ, գործողություն կամ անգործություն չպետք է հակասի օրենքին) և օրենքի վերապահմամբ (վարչական մարմինը որևէ լիազորություն իրականացնելու համար պետք է լիազորված լինի օրենքով): Վարչարարություն իրականացնող բոլոր մարմինները պարտավոր են պահպանել վարչարարության հիմնարար սկզբունքները, որոնցից առավել

մեծ նշանակությամբ, թերևս, առանձնանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված՝ վարչարարության օրինականության սկզբունքը: Այն իրավական պետության հիմնաքարերից մեկն է, քանի որ, եթե վարչական մարմինները գործում են ոչ թե իրավաչափորեն, այլ կամայականորեն, ապա մյուս սկզբունքների պահպանումն այլևս իմաստագրվում է:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր նախկին որոշումներից մեկում անդրադառնալով օրինականության սկզբունքին՝ նշել է, որ այս սկզբունքն ուղղակիորեն պահանջում է, որ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունը հիմնված լինի Սահմանադրության և օրենքի վրա. (...): Օրինականության սկզբունքը բացառիկ կարևոր նշանակություն ունի հատկապես այն ժամանակ, երբ պետական մարմիններն առնչվում են մասնավոր անձանց հիմնական իրավունքների հետ (*տե՛ս, «Ինտելոքանկ» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/2127/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով օրենսդիրը նախատեսել է օրինականության ենթասկզբունք հանդիսացող օրենքի վերապահումը: Օրենքի վերապահում նշանակում է, որ վարչական մարմինը որևէ գործողություն իրականացնելու համար պետք է լիազորված լինի օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքում՝ նաև այլ իրավական ակտով (*տե՛ս, ՀՀ ֆինանսների նախարարության Կասպանի տարածքային հարկային տեսչությունն ընդդեմ «Վարդանի Զարթոնք» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/11193/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում գտել է, որ վարչական վարույթը մի գործընթաց է, որը կարող է բաղկացած լինել մի քանի փուլերից, և այդ բոլոր փուլերը հետապնդում են միասնական նպատակ, այն է՝ վարչական ակտի ընդունումը (*տե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հանքարտարողների ոլորտային հարկային տեսչությունն ընդդեմ «Գևորգ-Ա» ՍՊԸ-ի թիվ 3-918(ՏԴ) գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.07.2007 թվականի որոշումը*):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Ապացույցները վարչական վարույթում» վերտառությամբ 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր հայեցողությամբ այդ մարմինը

այիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «Ապացուցման պարտականությունը բաշխելը» վերտառությամբ 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Անդրադառնալով վերոգրյալ իրավակարգավորումների վերլուծությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ օրենսդիրը հստակ ամրագրել է վարչական վարույթում ապացուցման պարտականության կանոնները, սահմանելով, որ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է տվյալ անձը, իսկ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Միևնույն ժամանակ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրը սահմանել է այն ապացույցների շրջանակը, որոնց միջոցով անձը և վարչական մարմինը կարող են կատարել ապացուցման իրենց պարտականությունը: Ընդ որում, վարչական վարույթի ընթացքում հետազոտվել և գնահատվել կարող են միայն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված և օրենքին համապատասխանող ապացույցները:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձի կողմից ապացուցման իր պարտականությունը չկատարելու որևէ բացասական հետևանք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով օրենսդիրը չի սահմանել: Նշված օրենքով բացասական հետևանք չի սահմանվել նաև վարչական մարմնի կողմից իր պարտականությունը չկատարելու համար, այդուհանդերձ, վարչական մարմնի վրա օրենսդիրը դրել է գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն ապահովելու, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու ուղղությամբ անհրաժեշտ ու համարժեք միջոցները ձեռնարկելու պարտականություն, քանի որ հենց վարչական մարմինն է կրում հիմնավորված և իրավաչափ վարչական ակտ ընդունելու պարտականությունը: Այսինքն՝ վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինը պարտավոր է վարչական վարույթի եզրափակման և վարչական ակտ ընդունելու համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ ու համարժեք միջոցներ՝ իր գործողությունները որևէ կերպ չպայմանավորելով անձի կողմից ապացուցման պարտականությունը չկատարելու հանգամանքով: Ավելին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում (հոդված 10-րդ), որպես վարչական մարմինների հետ հարաբերություններում վարչական վարույթի մասնակցի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք, ամրագրվել է հավաստիության կանխավարկածի սկզբունքը, համաձայն որի՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր

դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար (*լրեն, «ԱՄՈԿԱ ԳԼԱՍ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ/7522/05/17 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.03.2022 թվականի որոշումը*):

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում իր համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունն անձը կարող է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված ապացույցներ ներկայացնելու միջոցով, որոնցում պարունակվող տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Մինևույն ժամանակ, օրենսդիրը վարչական մարմնին պարտավորեցրել է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության մեջ հավաստիանալու համար, եթե հիմնավոր կասկածներ ունի այդ տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ: Ընդ որում, վարչական մարմնի կողմից անհրաժեշտ միջոցները պետք է ձեռնարկվեն օրենքին համապատասխան, իսկ ձեռք բերված ապացույցները պետք է համապատասխանեն օրենքի պահանջներին, որպեսզի դրանք համարվեն թույլատրելի, ենթակա լինեն հետազոտման և գնահատման:

### **Վերոգրյալ իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության կողմից ներկայացված վիճարկման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է վերացնել ՀՀ ֆինանսների նախարարության հետբացթողումային հսկողության վարչության 28.12.2015 թվականի կամերալ մաքսային ստուգման թիվ 0019 ակտը և 28.12.2015 թվականի ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին թիվ 0019 որոշումը:

**Դատարանը** բավարարել է Ընկերության հայցը՝ պատճառաբանելով, որ Կոմիտեն Ընկերության կողմից ներմուծված ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ տվյալները հերքելիս հիմնվել է բացառապես Վրաստանի մաքսային ծառայության կողմից վրացական մասնավոր տուրյեկտներին կատարված հարցումների հիման վրա ձեռք բերված փաստաթղթերով նշված մաքսային արժեքի վրա՝ առանց բազմակողմանի ուսումնասիրելու նշված փաստաթղթերը և միջոցներ ձեռնարկելու Ընկերության կողմից ներկայացված տվյալները հերքելու կամ հաստատելու համար այլ տեղեկություններ և ապացույցներ ձեռք բերելու ուղղությամբ: Դատարանը եզրահանգել է, որ երկու իրարամերժ, սակայն հավասարազոր տեղեկությունների առկայության պայմաններում նախապատվությունը տրվել է Վրաստանի մաքսային ծառայության ներկայացրած տեղեկությանը՝ առանց նշված հավասարազոր տեղեկությունները հերքելու կամ հաստատելու նպատակով այլ ապացույցներ ձեռք բերելու և գնահատելու:



**Վերաքննիչ դատարանը**, մերժելով Կոմիտեի վերաքննիչ բողոքը և Դատարանի վճիռը թողնելով անփոփոխ, իրավաչափ է համարել Դատարանի հետևությունները, գտնելով, որ մաքսային մարմինը ձեռնպահ է մնացել ՀՀ Ֆինանսների նախարարության հետքացթողումային հսկողության վարչության 28.12.2015 թվականի կամերալ մաքսային ստուգման թիվ 0019 ակտում արտացոլելու ստուգման ընթացքում ուսումնասիրված փաստաթղթերի ու դրանցում առկա տվյալների գնահատման և Ընկերության կողմից ոչ ճշգրիտ տեղեկություններ ներկայացված լինելու փաստը Վրաստանի մաքսային ծառայության կողմից ստացված փաստաթղթերի ու դրանցում առկա տեղեկությունների հիման վրա հաստատված համարելու գործընթացի կապակցությամբ իր դատողություններն ու այդ համատեքստում, կրելով Ընկերության համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների ապացուցման բեռը, չի նշել որևէ հիմնավորում Վրաստանի մաքսային ծառայության կողմից ստացված փաստաթղթերում առկա տվյալներն ավելի արժանահավատ լինելու վերաբերյալ ու չի պատճառաբանել, թե ինչպես են այդ տվյալներով հերքվում Ընկերության կողմից ՀՀ մաքսային մարմիններին ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունները:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստերը և գնահատելով ստորադաս դատարանների դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Օրենսդիրը, ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, միևնույն ժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու օբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վիճարկման հայցի առարկան միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է՝ հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (տե՛ս, Մամվել Մելքունյանի ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցը՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից

անձանց իրավական պաշտպանության միջոց, օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական կարգով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնելուն: Վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում դատարանը ձեռնամուխ է լինում վարչական ակտի իրավաչափության գնահատմանը՝ ստուգելով վիճարկվող վարչական ակտի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ օրենսդիրը հատկորեն կանխորոշել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության դատական վերահսկողության սահմանները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում: Դատարանի կողմից վարչական ակտի իրավաչափության գնահատումը պետք է կատարվի տվյալ վարչական ակտի ընդունման համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերով սահմանված պահանջների պահպանման հարցը պարզելու միջոցով (*լրեն, Հասանիկ Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչված անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ/8975/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկով արձանագրել է, որ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու նպատակով գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզում է ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով: Ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն ու վերլուծությունն է՝ դրանցից յուրաքանչյուրի վերաբերելիությունը, թույլատրելիությունն ու արժանահավատությունը որոշելու և գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու համար դրանց համակցության բավարարությունը պարզելու նպատակով, իսկ ապացույցների գնահատումը ենթադրում է ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակում՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից:

Դատարանը գործն ըստ էության լուծող պատճառաբանված դատական ակտ կայացնելու նպատակով պետք է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ գնահատի գործում եղած բոլոր ապացույցները՝ դրանց վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Դատարանի կողմից ապացույցների գնահատման արդյունքներն արտացոլվում են դատական ակտի պատճառաբանական մասում, որտեղ դատարանը պետք է մատնացույց անի այն ապացույցները, որոնց վրա կառուցում է իր եզրահանգումներն ու հետևությունները, ինչպես նաև այն դատողությունները, որոնցով հերքվում է այս կամ այն ապացույցը: Դատական ակտը կարող է համարվել պատշաճ կերպով պատճառաբանված միայն այն դեպքում, երբ դրա պատճառաբանական մասում դատարանը ցույց է տվել ապացույցների գնահատման հարցում իր ներքին համոզմունքի ձևավորման օբյեկտիվ հիմքերը (*լրեն, Ջաջուռի գյուղապետարանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչված անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և մյուսների թիվ ՎԳ5/0029/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը*):

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով օրենսդիրը սահմանել է, որ վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի շրջանակներում դատարանը ձեռնամուխ է լինում վարչական ակտի իրավաչափության գնահատմանը՝ ստուգելով վիճարկվող վարչական ակտի համապատասխանությունն օրենսդրության պահանջներին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ օրենսդիրը հստակորեն կանխորոշել է վիճարկվող վարչական ակտի իրավաչափության դատական վերահսկողության սահմանները՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրելով, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարչություն ձեռք բերված ապացույցների շրջանակում:

Անփոփելով վերոգրյալը և վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ վիճարկվող վարչական ակտի իրավաչափության գնահատմանն ուղղված դատական վերահսկողությունը պետք է ուղղված լինի այդ ակտի ընդունման հիմքում ընկած բոլոր փաստական և իրավական հիմքերի ստուգմանը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետքացթողումային հսկողության վարչության ստուգումների պլանավորման և ռազմավարության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Հ. Գրիգորյանի կողմից 12.11.2015 թվականին կազմվել է Ընկերության վերաբերյալ տեղեկատվական-վերլուծական տեղեկանք, որով, որպես վերլուծական աշխատանքի իրականացման հիմք, նշվել է Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 20.10.2015 թվականի թիվ 21-10/109595 (ՀՀ ԿԱ ՊԵԿ մուտք 28.10.2015 թվականի թիվ 16681) գրությանը կից տեղեկատվությունը (**հատոր 1-ին, գ.թ. 87**): Ընդ որում, նշված տեղեկատվական-վերլուծական տեղեկանքում շարադրվել է Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 20.10.2015 թվականի թիվ 21-10/109595 (ՀՀ ԿԱ ՊԵԿ մուտք 28.10.2015 թվականի թիվ 16681) օտարալեզու գրության (**հատոր 1-ին, գ.թ. 100**) բովանդակությունը:

ՀՀ ֆինանսների նախարարության հետքացթողումային հսկողության վարչության ստուգումների պլանավորման և ռազմավարության բաժնի պետը, հիմք ընդունելով 12.11.2015 թվականին կազմված տեղեկատվական-վերլուծական տեղեկանքը՝ Ընկերության կողմից մաքսային օրենսդրության հնարավոր խախտման մասին վկայող տեղեկատվության առկայության վերաբերյալ, 12.11.2015 թվականի գեկուցագրով հետքացթողումային հսկողության վարչության պետի ժ/պ Հ. Հակոբյանին առաջարկել է Ընկերությունում իրականացնել կամերալ մաքսային ստուգում (**հատոր 1-ին, գ.թ. 86**):

Ստուգման արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության հետքացթողումային հսկողության վարչության կողմից 28.12.2015 թվականին կազմվել է կամերալ ստուգման թիվ 0019 ակտը, որով արձանագրվել է, որ Ընկերությունը 08.07.2015 թվականի թիվ С 19608 մաքսային հայտարարագրով «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպել է վրացական Reexpotrans-Geo LLC ընկերության կողմից մատակարարված 9.136կգ բրուտոտո և 8.755,8կգ նետոտ քաշով (մեկ բեռնատար իր կիսակցորդով՝ OEO597/BZ295 պետհամարանիշի) 300 հատ էլեկտրական գազօջախներ, էլեկտրական վառարաններ և գազօջախի մասեր՝ մաքսային ձևակերպումների ժամանակ

ներկայացնելով Reexpotrans-Geo LLC (Վրաստան) ընկերության կողմից դուրս գրված 03.07.2015 թվականի թիվ TE02 հաշիվ-ապրանքագիրը 20.186 ԱՄՆ դոլար արժեքով (1 ԱՄՆ դոլարը = 474.39 դրամ)՝ CIP Երևան մատակարարման պայմանով: Հայտարարագրված ապրանքների ընդհանուր մաքսային արժեքը կազմել է 10.156.409 դրամ (10.152.420 դրամի էլ.սարքավորումներ և 3.989 դրամի էլ.սարք.մասեր):

Վրաստանի մաքսային ծառայության՝ 20.10.2015 թվականի թիվ 21-10/109595 գրությամբ ստացված տեղեկության համաձայն՝ Reexpotrans-Geo LLC (Վրաստան) ընկերությունը Ընկերությանը OEO597/ BZ295 պետհամարանիշով մեկ տրանսպորտային միջոցով մատակարարել է 9.136կգ բրուտոտո և 8.616կգ նետոտո քաշով 300 հատ ընդհանուր քանակով էլեկտրական գազօջախներ, էլեկտրական վառարաններ և գազօջախի մասեր՝ համաձայն Reexpotrans-Geo LLC (Վրաստան) ընկերության 03.07.2012 թվականի թիվ 29 հաշիվ-ապրանքագրի 35.221,99 ԱՄՆ դոլար արժեքով (1 ԱՄՆ դոլարը = 474.39 դրամ)՝ FCA Բաթումի մատակարարման պայմանով (35.191,43 ԱՄՆ դոլարի էլ.սարքավորումներ և 30.56 ԱՄՆ դոլարի էլ.սարք.մասեր):

Մաքսային ստուգման ընթացքում կատարվել է հարցում «Ապավեն» ՍՊ ընկերությանը՝ վերը նշված ապրանքների՝ մինչև ՀՀ սահման տեղափոխման արժեքը որոշելու նպատակով: «Ապավեն» ՍՊ ընկերության 23.12.2015 թվականի թիվ F/15-138 գրությամբ տրամադրված տեղեկության համաձայն՝ 2015 թվականի հուլիս ամսին Վրաստանի Բաթումի քաղաքից մինչև Բագրատաշենի մաքսային կետ 1 բեռնատար ավտոմեքենայով 9-10 տոննա բեռի տեղափոխման արժեքը կազմել է 650-750 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Հինք ընդունելով վերը նշված տեղեկությունները՝ Ընկերության կողմից 08.07.2015 թվականի C 19608 հայտարարագրով ՀՀ տարածք ներմուծված ապրանքների իրական մաքսային արժեքների հանրագումարը կկազմի՝

17.017.313 դրամ = (35.221,99 ԱՄՆ դոլար /ապրանքների հ/ա արժեքը արտահանման երկրում/ + 650 ԱՄՆ դոլար /Բաթումի-Բագրատաշենի մ/կ հատվածի փոխադրման մինիմալ արժեք/ x 474,39 /դրամի փոխարժեք/):

Պակաս հայտարարագրված մաքսային արժեքը կկազմի՝ 6.860.904 դրամ = (17.017.313 դրամ իրական մ/արժեք - 10.156.409 դրամ հայտարարագրված մ/արժեք):

Ակտի համաձայն՝ Ընկերության կողմից խախտվել են Մաքսային միության մաքսային օրենսգրքի 188-րդ և 189-րդ հոդվածների պահանջները՝ ՀՀ մաքսային մարմիններին ներկայացվել են ոչ ճշգրիտ տեղեկություններ ՀՀ տարածք ներմուծված ապրանքների հաշիվ-ապրանքագրային արժեքների վերաբերյալ (**հատոր 1-ին, գ.թ. 88-93**).

Նշված ակտի հիման վրա նույն օրը՝ 28.12.2015 թվականին ընդունվել է նաև սույն գործով վիճարկվող «Ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին» թիվ 0019 որոշումը (**հատոր 1-ին, գ.թ. 107-109**):

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.02.2016 թվականի թիվ 7/9 որոշման համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետքացթողումային հսկողության վարչության կամերալ մաքսային ստուգման 28.12.2015 թվականի թիվ 0019 ակտը և ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին 28.12.2015 թվականի թիվ 0019 ակտը թողնվել է անփոփոխ, իսկ Ընկերության բողոքը մերժվել է (**հատոր 1-ին, գ.թ. 18-22**):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կոմիտեն փաստորեն անարժանահավատ է համարել ներմուծված ապրանքների մաքսային արժեքների վերաբերյալ Ընկերության կողմից մաքսային մարմնին ներկայացված հայտարարագրերում պարունակվող տեղեկությունը, փոխարենը հավաստի համարելով Վրաստանի Մաքսային մարմնի կողմից տրամադրված փաստաթղթերով տեղեկատվությունը, որի հիման վրա էլ եզրահանգում է արել այն մասին, որ Ընկերությունը ճիշտ չի ներկայացրել հայտարարագրման ենթակա ապրանքների մաքսային արժեքները:

Անդրադառնալով Կոմիտեի կողմից որպես արժանահավատ ապացույց ընդունված Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված տեղեկատվությանը՝ կից փաստաթղթերով, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթն իրականացվում, և վարչական ակտն ընդունվում է հայերենով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

Եթե վարույթի մասնակիցները փաստաթղթեր են ներկայացրել այլ լեզվով, ապա վարչական մարմնի պահանջով նրանք պարտավոր են ներկայացնել նաև դրանց՝ օրենքով սահմանված կարգով կատարված հայերեն թարգմանությունները:

Վերոգրյալ իրավակարգավորումներից ակնհայտ է, որ վարչական վարույթի ընթացքում վարչական մարմիններն իրավունք չունեն օգտագործելու օտարալեզու փաստաթղթեր (գրավոր ապացույցներ):

Տվյալ դեպքում վարչական վարույթում հայերեն լեզվով կազմված են միայն Ընկերության կողմից մաքսային մարմնին ներկայացված հայտարարագրերն ու այլ փաստաթղթերը: Մնացած գրավոր ապացույցներն օտարալեզու են, ուստի դրանք չեն կարող հանդիսանալ թույլատրելի ապացույցներ, գնահատվել ու դրվել վարչական ակտի հիմքում: Մինչդեռ վարչական մարմինը հղում է կատարել Վրաստանի մաքսային մարմնի կողմից տրամադրված տեղեկատվությանը՝ կից փաստաթղթերով:

Այսպես. **սույն գործով վիճարկվող՝ 28.12.2015 թվականի թիվ 0019 վարչական ակտում, որպես հայցվոր Ընկերությանը վերագրվող խախտումը հիմնավորող ապացույց, վկայակոչվել է Վրաստանի մաքսային մարմնիներից ստացված 20.10.2015 թվականի թիվ 21-10/109595 (ՀՀ ԿԱ ՊԵԿ մուտք 28.10.2015 թվականի թիվ 16681) գրությունը և դրան կից փաստաթղթերը:**

Վկայակոչված գրությունը՝ «մուտք 28.10.2015 թվականի թիվ 16681» գրառմամբ (հատոր 1-ին, գ.թ. 100) օտարալեզու է, ուստի, ակնհայտ է, որ Կոմիտեն վարչական վարույթի ընթացքում գնահատել է օտարալեզու փաստաթուղթ՝ խախտելով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի

**պահանջները: Ավելին՝ նշված իրավանորմների խախտմամբ գնահատված օտարալեզու փաստաթուղթը Կոմիտեն դրել է վիճարկվող վարչական ակտի հիմքում:**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունը, ի կատարումն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված իր պարտականության, վարչական մարմնին է ներկայացրել օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող ապացույցներ, այդ թվում հայերեն լեզվով կազմված փաստաթղթեր, մինչդեռ վարչական մարմինը դրանց համեմատ առավելություն է տվել օտարալեզու փաստաթղթերին՝ չունենալով դրանց պատշաճ թարգմանված օրինակները: Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Կոմիտեն սույն գործով վիճարկվող ակտում չի նշել որևէ հիմնավորում Վրաստանի մաքսային ծառայության կողմից ստացված փաստաթղթերում առկա տվյալներն ավելի արժանահավատ լինելու վերաբերյալ ու չի պատճառաբանել, թե ինչպես են այդ տվյալներով հերքվում Ընկերության կողմից ՀՀ մաքսային մարմիններին ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկությունները:

Փաստորեն Վերաքննիչ դատարանը սույն գործով վիճարկվող վարչական ակտերի ընդունման հիմքում ընկած բոլոր փաստական և իրավական հիմքերի ստուգման միջոցով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատական վերահսկողության է ենթարկել նշված վարչական ակտերի իրավաչափությունը և անդրադառնալով Կոմիտեի կողմից վարչական ակտերի հիմքում դրված գրավոր ապացույցներին, իրավացիորեն եզրահանգել է, որ վարչական մարմինը ճիշտ չի գնահատել վարչական վարույթում առկա ապացույցները՝ առանց որևէ հիմնավորման դրանցից մեկին տալով առավելություն մյուսի նկատմամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ, Ընկերության ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ հիմնավոր կասկածներ ունենալու պարագայում վարչական մարմինը ոչ միայն իրավունք ուներ, այլ նաև պարտավոր էր ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար, սակայն այդ միջոցների ձեռնարկման արդյունքում ձեռք բերված ապացույցները պետք է համապատասխանեին օրենքի պահանջներին, որպեսզի դրանք համարվեն թույլատրելի և ենթակա լինեին հետազոտման և գնահատման:

Տվյալ դեպքում, ինչպես վերն արդեն նշվել է, **սույն գործով վիճարկվող 28.12.2015 թվականի թիվ 0019 վարչական ակտում, որպես հայցվոր Ընկերությանը վերագրվող խախտումը հիմնավորող ապացույց, վկայակոչվել է Վրաստանի մաքսային մարմիններից ստացված 20.10.2015 թվականի թիվ 21-10/109595 (ՀՀ ԿԱ ՊԵԿ մուտք 28.10.2015 թվականի թիվ 16681) գրությունը և դրան կից փաստաթղթերը, որոնք օտարալեզու են, չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում պետական լեզվի մասին սահմանադրական կարգավորմանը, ինչպես նաև վարչական վարույթը հայերենով իրականացնելու և վարչական ակտը հայերենով ընդունելու, վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը հայերենով կազմելու և ամբողջ գործավարությունը հայերենով իրականացնելու օրենսդրական կարգավորումներին, ուստի դրանք չէին կարող հետազոտվել, գնահատվել վարչական վարույթի ընթացքում և դրվել վիճարկվող վարչական ակտերի հիմքում:**

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող վարչական ակտերն ընդունվել են օրենքի խախտմամբ՝ միաժամանակ, ոչ իրավաչափորեն միջամտելով օրենքով չնախատեսված պարտականություններ չկրելու՝ ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող Ընկերության իրավունքներին, ինչն էլ հիմք է եզրահանգելու, որ քննարկվող դեպքում առկա է վիճարկվող վարչական ակտերն անվավեր ճանաչելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավական հիմքը, որպիսի իրավացի եզրահանգման են եկել ստորադաս դատարանները:

Անփոփոխվելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկնելու համար, քանի որ Դատարանը, անվավեր ճանաչելով ՀՀ Ֆինանսների նախարարության հետքացթողումային հսկողության վարչության 28.12.2015 թվականի արտագնա մաքսային ստուգման թիվ 0019 վարչական ակտը և 28.12.2015 թվականի ապրանքների մաքսային արժեքի ճշգրտման մասին թիվ 0019 որոշումը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը, կայացրել են գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտեր: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 15.02.2019 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ



**ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/8385/05/19  
2022թ.

Վարչական գործ թիվ

ՎԳ/8385/05/19

Նախագահող դատավոր՝

Կ. Ավետիսյան

Դատավորներ՝

Կ. Բաղդասարյան

Ա. Սարգսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*զեկուցող* Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ք. ՄԿՈՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 04-ին

գրավոր ընթացակարգով քննելով Հովիկ Շախսլյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.06.2021 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ ըստ հայցի Հովիկ Շախսլյանի ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն)՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալի «Վարչական բողոքը մերժելու մասին» 10.10.2019 թվականի որոշումն անվավեր ճանաչելու և Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԼԳ/1189/02/19 գործով տրամադրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթի շրջանակներում Հովիկ Շախսլյանի օգտին բռնագանձված 300.000 ՀՀ դրամը հայցվորի ներկայացուցիչ Ալեքսանդր Ծատիսյանի «Յունիբանկ» ԲԲ ընկերության կողմից սպասարկվող թիվ 24111000161700 հաշվեհամարին փոխանցելուն Ծառայությանը պարտավորեցնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Դիմելով դատարան՝ Հովիկ Շախկյանը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի տեղակալի «Վարչական բողոքը մերժելու մասին» 10.10.2019 թվականի որոշումը և Ծառայությանը պարտավորեցնել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԼԴ/1189/02/19 գործով տրամադրված կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթի շրջանակներում Հովիկ Շախկյանի օգտին բռնագանձված 300.000 ՀՀ դրամը փոխանցել հայցվորի ներկայացուցիչ Ալեքսանդր Ծատինյանի «Յունիքանկ» ԲԲ ընկերության կողմից սպասարկվող թիվ 24111000161700 հաշվեհամարին:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ղազարյան) (այսուհետ՝ Դատարան) 30.04.2021 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 09.06.2021 թվականի որոշմամբ Դատարանի 30.04.2021 թվականի վճռի դեմ հայցվորի ներկայացուցիչ Ալեքսանդր Ծատինյանի վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հովիկ Շախկյանը (ներկայացուցիչ՝ Ալեքսանդր Ծատինյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 14-րդ, 22-րդ, 24-րդ հոդվածները, 130-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 134-րդ հոդվածի 3-րդ մասը, 135-րդ հոդվածը, 137-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտեղ է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ սույն պարագայում վարչական գործում առկա է պատշաճ լիազորագիր, որով հայցվոր Հովիկ Շախկյանը լիազորել է Ալեքսանդր Ծատինյանին և որևէ վերապահում չի կատարել լիազորությունների կապակցությամբ, ինչից հետևում է, որ վերջինս իրավունք ուներ Հովիկ Շախկյանի անունից ներկայացնել վերաքննիչ բողոք:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 09.06.2021 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ, 130-րդ, 134-րդ հոդվածների կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յրեն'ս, Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանձարով ՄԻԵԴ-ի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքը պետք է մեկնաբանվի օրենքի գերակայության լույսի ներքո, որով պահանջվում է, որ դատավարության մասնակիցներն ունենան դատական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որոնք նրանց թույլ կտան պաշտպանել իրենց քաղաքացիական իրավունքները (*յրեն'ս Běles-ը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության, application no. 47273/99, Եվրոպական դատարանի 12.02.2003 թվականի որոշում, § 49*):

Յուրաքանչյուր ոք ունի իր «քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների» հետ կապված ցանկացած պահանջ դատարանում կամ տրիբունալում ներկայացնելու իրավունք: Այդպիսով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը ներառում է «դատարանի իրավունքը», որում մատչելիության իրավունքը, այսինքն՝ դատարանում քաղաքացիական գործով վարույթ հարուցելու իրավունքը, դրա մի մասն է (*յրեն'ս Golder-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, application no. 4451/70, Եվրոպական դատարանի 21.02.1975 թվականի որոշում, § 36*):

«Դատարանի իրավունքը» և մատչելիության իրավունքը բացարձակ չեն: Դրանք կարող են ենթարկվել սահմանափակումների, սակայն դրանով չպետք է սահմանափակվի կամ նվազեցվի անհատին տրամադրված մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*յրեն'ս Philis-ն ընդդեմ Հունաստանի, application no. 12750/87; 13780/88; 14003/88, Եվրոպական դատարանի 27.08.1991 թվականի որոշում, § 59, De Geouffre de la Pradelle-ն ընդդեմ Ֆրանսիայի, application no. 12964/87, Եվրոպական դատարանի*

16.12.1992 թվականի որոշում, § 28, Stanev-ն ընդդեմ Բուլղարիայի [ՄՊ], application no. 36760/06, Եվրոպական դատարանի 17.01.2012 թվականի որոշում, § 229):

Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի «գործնական և արդյունավետ» (ընդհանուր առմամբ *Bellet-ն ընդդեմ Ֆրանսիայի, application no. 23805/94, Եվրոպական դատարանի 04.12.1995 թվականի որոշում, § 38*): Որպեսզի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անհատը պետք է «ունենա հստակ, գործնական հնարավորություն՝ վիճարկելու այն ակտը, որով միջամտություն է կատարվում իր իրավունքներին» (ընդհանուր առմամբ *Bellet-ն ընդդեմ Ֆրանսիայի, application no. 23805/94, Եվրոպական դատարանի 04.12.1995 թվականի որոշում, § 36, Nunes Dias-ն ընդդեմ Պորտուգալիայի, application no. 69829/01, 2672/03, Եվրոպական դատարանի 10.04.2003 թվականի որոշում*): Այն կանոնները, որոնք կարգավորում են դատական վերանայման համար բողոք կամ դիմում ներկայացնելիս ձեռնարկվելիք պաշտոնական քայլերն ու ժամկետների հետ համապատասխանությունը, նպատակ ունեն ապահովելու արդարադատության պատշաճ իրականացումը և, մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքի հետ համապատասխանությունը (ընդհանուր առմամբ *Cañete de Goñi-ն ընդդեմ Իսպանիայի, application no. 55782/00, Եվրոպական դատարանի 15.01.2003 թվականի որոշում, § 36*): Հետևաբար, նշված կանոնները կամ դրանց կիրառումը չպետք է խոչընդոտեն դատավարության մասնակիցների իրավական պաշտպանության հասանելի միջոցի օգտագործումը (ընդհանուր առմամբ *Miragall Escolano-ն ընդդեմ Իսպանիայի, Applications nos. 38366/97, 38688/97, 40777/98, 40843/98, 41015/98, 41400/98, 41446/98, 41484/98, 41487/98 և 41509/98, Եվրոպական դատարանի 25.01.2000 թվականի որոշում, Zvolisky-ն և Zvolská-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության, application no. 46129/99, Եվրոպական դատարանի 12.11.2002 թվականի որոշում, § 51*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս փաստել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքնության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (ընդհանուր առմամբ *ի թիվս այլնի, «Ֆասթ Սիլայ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կատավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎՌ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը, Վարդան Աբրահամյանն ընդդեմ «Արդշինքանկ» ՓԲԸ-ի թիվ ԵՂ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատական քննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ կարևորելով դրանք որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատաբնթացակարգային բնագավառներում (քրեական, քաղաքացիական և վարչական):

Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 28.11.2007 թվականի ՍԴՈ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության

իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ...»:

Միաժամանակ, դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ է Եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (*յուն, Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000*):

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտերի բողոքարկման գործիքակազմի առկայությունը առավելագույնի է հասցնում մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և հնարավորինս նվազագույնի է հասցնում դատական սխալների առկայությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3)նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության մասնակիցներն են (այսուհետ՝ դատավարության մասնակիցներ՝)

1) կողմերը՝ հայցվորը և պատասխանողը.

2) երրորդ անձինք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմն իրավունք ունի դատարանում դատավարական գործողություններ կատարելու անձամբ կամ մեկ կամ մի քանի ներկայացուցչի միջոցով:

Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ ներկայացուցչի կատարած դատավարական գործողությունները դատավարության մասնակցի համար նույնքան պարտադիր են, որքան այն դեպքում, երբ դատավարության մասնակիցն ինքը դրանք կատարեր:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձին տրված լիազորագիրը վավերացնում է նոտարը կամ հաստատում է օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձը: Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և այն վավերացման կամ հաստատման ենթակա չէ: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-4-րդ մասերում նշված անձանց կողմից այդ մասերով սահմանված կարգով տրված լիազորագրով ներկայացուցիչները ստանձնում են լիազորագիրը տված անձի՝ որպես դատավարության մասնակցի բոլոր իրավունքները՝ անկախ դրանց վերաբերյալ լիազորագրում հատուկ նշում կատարված լինելու հանգամանքից, բացառությամբ այն դեպքի, երբ առկա է լիազորագիրը տվող անձի անհամաձայնությունը նույն օրենսգրքով դատավարության մասնակիցներին վերապահված իրավունքներից որևէ մեկով կամ մի քանիսով ներկայացուցչին օժտելու վերաբերյալ: Այդ մասին հատուկ նշվում է ներկայացուցչի լիազորագրում:

Օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանել է վարչական դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև նույն օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝ դատավարության մասնակիցները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքը ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե՝ չեն պահպանվել նույն օրենսգրքի 134-րդ հոդվածի պահանջները (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝ բողոքը բերել է այն անձը, որը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լիազորագրի հիման վրա դատավարության մասնակիցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունները պատվիրակում է լիազորագրով հանդես եկող իր ներկայացուցչին, ում կողմից կատարված դատավարական գործողությունները դիտարկվում են որպես դատավարության մասնակցի անունից կատարված գործողություններ և իրավական հետևանքներ են առաջացնում վերջինիս համար: Այսինքն՝ այն դեպքում, երբ դատավարության մասնակիցը հանդես է գալիս ներկայացուցչի միջոցով, դատարանի խնդիրն է, առաջին հերթին, պարզել լիազորագրի՝ օրենքով սահմանված կարգով տրված լինելու հանգամանքը, ինչպես նաև՝ բացահայտել լիազորագրով ներկայացուցչին տրված իրավազորությունների շրջանակը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում վերաքննիչ բողոք բերելու իրավասություն ունեցող անձանց

շրջանակում ներառված են դատավարության մասնակիցները, ինչպես նաև դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, սակայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումներից բխում է, որ դատավարության մասնակցի՝ ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով հանդես գալու իրավունքը չի սահմանափակվում դատավարության որևէ փուլում, և վերաքննիչ բողոք բերելու իրավասությամբ կարող է օժտվել նաև դատավարության մասնակցի ներկայացուցիչը, որպիսի փաստը հաստատվում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված այն իրավակարգավորմամբ, ըստ որի՝ վերաքննիչ բողոքը ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանության պարագայում լիազորված անձն իրավասու է լիազորողի անունից կատարելու դատավարական գործողություններ: Այսինքն լիազորագրում դատավարության մասնակցի իրավունքներից օգտվելու վերապահման վերաբերյալ որևէ հատուկ նշման բացակայության պայմաններում ներկայացուցիչը ստանձնում է դատավարության մասնակցի բոլոր իրավունքները, մասնավորապես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի ուժով իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ, անելու ինքնաբացարկ հայտներու միջնորդություններ, ներկայացնելու ապացույցներ և մասնակցելու դրանց հետազոտմանը, հարցեր տալու միմյանց, դատավարության մյուս մասնակիցներին, վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին, միջնորդություններ անելու, բացատրություններ տալու դատարանին, գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնելու իրենց դիրքորոշումը, առաջարկները, առարկություններն ու փաստարկները, առարկելու դատավարության մյուս մասնակիցների միջնորդությունների, դիրքորոշման կամ փաստարկների դեմ, **սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բողոքարկելու դատական ակտերը** և սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներից:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ներկայացուցիչ փաստաբանը, ստորագրելով հայցադիմումը, բողոքը, այլ դատավարական փաստաթղթեր, կատարելով ներկայացուցչություն և այլ դատավարական գործողություններ, պարզապես հանդես է գալիս լիազորողի՝ դատավարության մասնակցի անունից և չունի անձնական շահագրգռվածություն գործի ելքի հետ կապված: Հետևաբար անհրաժեշտ է արձանագրել, որ ներկայացված դատավարական փաստաթղթի բովանդակությունը ամբողջությամբ պետք է արտահայտի ներկայացվողի շահերը և գործը քննող դատարանի համար պարզ դառնա, թե ով է հանդիսանում գործով շահագրգիռ անձ:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով բողոքարկման լիազորություն ունեցող անձանց օրենսդրությամբ սահմանված շրջանակին, արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանի դատական ակտերը ՀՀ վերաքննիչ վարչական դատարան բողոքարկելու լիազորություն ունեն դատավարության մասնակիցները, դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, սակայն նշվածը չի բացառում լիազորությունների վերապահում ներկայացուցիչներին, ինչի հավաստումն է հանդիսանում օրենսդրական այն

կարգավորումը, համաձայն որի՝ բողոքը ստորագրում է բողոք բերած անձը կամ նրա ներկայացուցիչը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վարչական դատավարությունում ներկայացուցչության ինստիտուտի իրավական վերլուծությանը, նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վարչական դատավարությունում դատական ներկայացուցչություն իրականացնելու համար ներկայացուցիչը պետք է ունենա օրենքով սահմանված կարգով տրված լիազորություն, ինչն իր հերթին հնարավորություն կտա ներկայացուցչին ապահովելու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ ներկայացվողի դատական պաշտպանության իրավունքը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով դատարանները պետք է պարզեն դատավարական գործողություններ իրականացնելու համար անձին տրված լիազորագրի պատշաճ ձևակերպված լինելու հանգամանքը (արդյո՞ք այն տրվել է օրենքով սահմանված կարգով, արդյո՞ք պահպանված է լիազորագրի գործողության ժամկետը և այլն): ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատավարության մասնակիցները դատական ակտն իրավասու են բողոքարկելու ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով՝ օրենքով սահմանված կարգով տրված և ձևակերպված լիազորագրի հիման վրա: Ըստ այդմ էլ՝ վերաքննիչ բողոքն ստորագրում է բողոք բերող անձը կամ նրա ներկայացուցիչը: Ընդ որում, այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը պարզում է, որ վերաքննիչ բողոքն ստորագրված չէ կամ թույլ տրված խախտումը պայմանավորված է ներկայացուցչի լիազորությունների հավաստման կամ ձևակերպման հետ, վերաքննիչ դատարանն իրավասու է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով վերադարձնելու վերաքննիչ բողոքը՝ սահմանելով ժամկետ բողոքի թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար: Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքի ընդունումն այն դեպքում, երբ բողոքը բերել է այն անձը, որը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի, այսինքն՝ չի հանդիսանում դատավարության մասնակից կամ վերջինիս ներկայացուցիչ:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր դեպքերում ներկայացված բողոքը պետք է նշում պարունակի այն մասին, թե ով է ներկայացնում բողոքը՝ դատավարության մասնակիցը, թե՛ վերջինիս կողմից լիազորված ներկայացուցիչը:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու համար վերաքննիչ դատարանը նախ և առաջ պետք է պարզի, թե տվյալ դեպքում վերաքննիչ բողոքը կոնկրետ ում անունից է ներկայացվել և արդյոք տվյալ սուբյեկտը, ով ներկայացնում է վերաքննիչ բողոք, ունի վերաքննիչ բողոք ներկայացնելու իրավասություն: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերը նշված հանգամանքը բացահայտելու համար Վերաքննիչ դատարանը պետք է ուսումնասիրի ներկայացված վերաքննիչ բողոքի ոչ միայն ձևական կողմը, այլ նաև բովանդակությունը (*տե՛ս, Սարգիս Մախանուրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎՆ/10980/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.04.2021 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 24-րդ, 130-րդ և 134-րդ հոդվածների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածը



պետք է մեկնաբանվի այնպես, որ Վարչական դատարանի՝ ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն դատավարության մասնակիցները, սակայն վերջիններիս անունից տրված պատշաճ լիազորագրի առկայության դեպքում բողոքը կարող է ստորագրվել նաև ներկայացուցչի կողմից, հաշվի առնելով դատավարության մասնակցի՝ դատավարական գործողությունները՝ ներառյալ դատական ակտերը բողոքարկելու իրավունքը, ինչպես անձամբ, այնպես էլ մեկ կամ մի քանի ներկայացուցչի միջոցով իրացնելու օրենսդրական կարգավորման առկայությունը:

*Վերոգրյալ իրավական դիրքորոշումների համալրեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պարճատարանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 30.04.2021 թվականի վճռով հայցը մերժվել է **(հատոր 1-ին, գ.թ. 114-124):**

Վերոգրյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներակայացրել Հովիկ Շախկյանի ներկայացուցիչ Ալեքսանդր Ծատինյանը:

Վերաքննիչ դատարանը 09.06.2021 թվականի որոշմամբ Ալեքսանդր Ծատինյանի ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժել է՝ այն պատճառաբանությամբ, որ բողոքը ներկայացվել է սույն գործով դատավարության մասնակից չհանդիսացող, հայցվորի ներկայացուցիչ Ալեքսանդր Ծատինյանի կողմից: Այսինքն, Դատարանի 30.04.2021 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերել է ոչ թե հայցվորը, ում անունից պատշաճ լիազորությունների առկայության պայմաններում կարող է հանդես գալ վերջինիս ներկայացուցիչը, այլ հենց ներկայացուցիչն իր անունից: Այլ կերպ ասած՝ բողոքը բերել է դրա իրավունքը չունեցող անձը:

Վարչական գործում առկա լիազորագրով սույն գործով հայցվոր Հովիկ Շախկյանը 09.04.2019 թվականին՝ երեք տարի ժամկետով, լիազորել է փաստաբան Ալեքսանդր Ծատինյանին ցանկացած գործով լինել իր ներկայացուցիչը **ՀՀ բոլոր դատարաններում:**

Լիազորագիրը, ի թիվս այլ իրավունքների, նաև իրավունք է վերապահել փաստաբան Ալեքսանդր Ծատինյանին բողոքարկելու դատական ակտերը **(հատոր 1-ին, գ.թ. 39):**

Տվյալ դեպքում Դատարանի 30.04.2021 թվականի վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի առաջին էջում նշված է «**Բողոքաբեր թիվ ՎԴ/8385/05/19 վարչական գործով Հայցվոր Հովիկ Ռաֆիկի Շախկյանի ներկայացուցիչ՝ Ալեքսանդր Սամվելի Ծատինյան**», որից հետո մեջբերվել է փաստաբանական գործունեության արտոնագրի համարը և բողոք բերած անձի ծանուցման հասցեն **(հատոր 1-ին, գ.թ. 132)**, այնուհետև հաջորդ տողում նշված է «**Հայցվոր՝ Հովիկ Ռաֆիկի Շախկյան**», իսկ բողոքը ստորագրվել է Ալեքսանդր Ծատինյանի կողմից, ով, Հովիկ Շախկյանի կողմից տրված 09.04.2019 թվականի լիազորագրով, հանդես է գալիս վերջինիս անունից **(հատոր 1-ին, գ.թ. 140):**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ լիազորագիրը ստորագրվել է սույն գործով հայցվոր Հովիկ Շախկյանի կողմից, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Հովիկ Շախկյանը նպատակ է ունեցել նշված լիազորագրով իրացնելու իր դատական պաշտպանության իրավունքը, այդ թվում նաև՝ Դատարանի 30.04.2021 թվականի վճիռը բողոքարկելու իր իրավունքը, ներկայացուցչի՝ տվյալ դեպքում Ալեքսանդր Ծատինյանի

միջոցով, որպիսի հանգամանքով էլ պայմանավորված՝ Ալեքսանդր Ծատինյանը Հովիկ Շախկյանի անունից, վերջինիս կողմից 09.04.2019 թվականին տրված լիազորագրի հիման վրա, ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ բողոքի ներածական մասում նշելով իր անունը՝ որպես հայցվորի ներկայացուցիչ և ստորագրելով վերաքննիչ բողոքը:

Հետևաբար Վճռաբեկ դատարանի գնահատմամբ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանի կողմից առաջին հերթին գնահատման էր ենթակա Հովիկ Շախկյանի կողմից Ալեքսանդր Ծատինյանին տրված 09.04.2019 թվականի լիազորագրի պատշաճությունը մասնավորապես՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու լիազորություն տրված լինելու մասով, այնուհետև վերաքննիչ բողոքի բովանդակության ուսումնասիրության արդյունքում պետք է բացահայտվեր վերաքննիչ բողոք ներկայացնող անձը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ սույն գործով Դատարանի 30.04.2021 թվականի վճռի դեմ վերաքննիչ բողոքը ներկայացվել է Ալեքսանդր Ծատինյանի կողմից, ով հանդես է եկել որպես Դատարանի 30.04.2021 թվականի վճիռը բողոքարկելու իրավունք ունեցող անձի՝ հայցվոր Հովիկ Շախկյանի ներկայացուցիչ, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել առ այն, որ սույն գործով վերաքննիչ բողոքը ներկայացվել է դրա իրավունքը չունեցող անձի կողմից, ուստի անհիմն կերպով մերժելով վերաքննիչ բողոքի ընդունումը՝ Վերաքննիչ դատարանը ցուցաբերել է չափազանց ձևական (ֆորմալ) մոտեցում և անհամաչափորեն սահմանափակել Հովիկ Շախկյանի դատական պաշտպանության իրավունքը՝ վերջինիս զրկելով Դատարանի 30.04.2021 թվականի վճիռը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի 09.06.2021 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը ենթակա է վերացման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու և Վերաքննիչ դատարանի 09.06.2021 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 09.06.2021 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԳ/13178/05/21**  
**2023թ.**

Վարչական գործ թիվ

ՎԳ/13178/05/21

Նախագահող դատավոր՝

Ա. Պողոսյան

Դատավորներ՝

Ռ. Մախմուդյան

Կ. Մաթևոսյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով,

*նախագահող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

*գեկուցող*

Ք. ՄԿՈՅԱՆ

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

2023 թվականի սեպտեմբերի 01-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Լուսավոր Հայաստան» կուսակցության վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.01.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «Լուսավոր Հայաստան» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) ընդդեմ թիվ 23 տարածքային ընտրական հանձնաժողովի, երրորդ անձինք՝ «Մամիկոն Ասլանյան» կուսակցությունների դաշինք, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, Հայաստանի աշխատավորական սոցիալիստական կուսակցություն, «Հայրենիք» կուսակցություն և «Ապրելու երկիր» կուսակցություն՝ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 05.12.2021 թվականի ընտրությունների քվեարկության արդյունքներն անփոփելու մասին 12.12.2021 թվականի թիվ 23 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 37-Ա, թիվ 38-Ա որոշումներն անվավեր ճանաչելու և Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված համապատասխան թվով թեկնածուներին ընտրված ճանաչելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Կուսակցությունը պահանջել է անվավեր ճանաչել Լոռու մարզի Վանաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների

05.12.2021 թվականի ընտրությունների քվեարկության արդյունքներն ամփոփելու մասին 12.12.2021 թվականի թիվ 23 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 37-Ա, թիվ 38-Ա որոշումները, 05.12.2021 թվականի Վանաձոր խոշորացված համայնքի ավագանու ընտրության արդյունքները, դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների հիման վրա, որը կարող է տեղի ունենալ ընտրական տեղամասերի արդյունքների վերահաշվարկի միջոցով, կայացնել հետևյալ որոշումներից մեկը՝ ա) առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին, բ) ընտրություններն անվավեր ճանաչելու և ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին, գ) Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված համապատասխան թվով թեկնածուներին ընտրված ճանաչելու մասին:

ՀՀ վարչական դատարանի (նախագահող դատավոր՝ Գ. Դանիելյան, դատավորներ՝ Ռ. Ազրոյան, Ե. Առաքելյան, Ռ. Խանդանյան, Մ. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 21.12.2021 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.01.2022 թվականի որոշմամբ Դատարանի 21.12.2021 թվականի վճռի դեմ Կուսակցության վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատը 06.04.2023 թվականին որոշում է կայացրել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին համապատասխանության հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու կապակցությամբ սույն գործի վարույթը կասեցրել է:

ՀՀ սահմանադրական դատարանի 18.04.2023 թվականի թիվ ՄԴԱՌ-36 որոշմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննությունը մերժվել է:

ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատի 27.04.2023 թվականի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կուսակցությունը (ներկայացուցիչ՝ Էդմոն Մարուքյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը, 98-րդ հոդվածի 1-ին մասը, 99-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 114-րդ հոդվածի 6-րդ մասը, 152-րդ հոդվածի 2-րդ մասը, 208-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը, սխալ է մեկնաբանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը: Ավելին, Վերաքննիչ դատարանը չի կիրառել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը, 68-րդ հոդվածի 2-րդ մասը, 80-րդ հոդվածը, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 19.01.2000 թվականի «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի*

վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաքննման մասին» թիվ R (2000)2 հանձնարարականը, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքը, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը պարտավոր էր ոչ օրինական կազմով կայացված դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ, իրականացնել վերաքննություն և բեկանել դատական ակտը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի իմպերատիվ պահանջը վերաբերում է դատական ակտի բեկանման այն բոլոր դեպքերին, երբ ոչ օրինական կազմով կայացվել է դատական ակտ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասը գերակա է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավակարգավորման նկատմամբ:

Ավելին, հայցվորն ունի ոչ լեգիտիմ դատարանի կողմից իր վերաբերյալ կայացված դատական ակտի վերանայման իրավունք: Ընդ որում, այդ իրավունքը գործում է անմիջականորեն և չի կարող սահմանափակվել որևէ իրավական մեխանիզմներով: Այս համատեքստում, Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը, համաձայն որի՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Օրինական դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքը՝ որպես սահմանադրական անմիջականորեն գործող իրավունք, ենթակա է կիրառման և Վերաքննիչ դատարանը պարտավոր էր վերը շարադրված նորմերի անմիջական կիրառման արդյունքում ընդունել ներկայացված բողոքը և բեկանել ոչ օրինական կազմով կայացված դատական ակտը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 07.01.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, նույն օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.

- արդյո՞ք ընտրական վեճերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով վերաքննության կարգով բողոքարկումը կարող է թույլատրելի լինել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համարեքստում:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը վերաբերում է յուրաքանչյուր կոնկրետ ատյանի դատարանում տվյալ գործի քննության համապատասխան ընթացակարգերին և, մասնավորապես, արդարության պահանջներին համապատասխանող ընթացակարգերին: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածում ամրագրված՝ արդար դատաքննության վերաբերյալ դրույթը կիրառելի է միայն վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի իրացումից հետո, եթե տվյալ կատեգորիայի գործերով նախատեսված է վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու իրավունք: Նույնը վերաբերում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածին:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրեն, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*):

Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները

թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*լրեն, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետը*):

Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*լրեն Khalfaoi v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետը*):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետի համաձայն՝ «Սկզբունքորեն, պետք է ապահովվի ստորադաս ատյանի (առաջին ատյան) որոշումների նկատմամբ բարձր ատյանի (երկրորդ ատյան) վերահսկողությունը»:

**Նույն հանձնարարականի 1-ին հոդվածի (b) կետի համաձայն՝ «Այս սկզբունքից բացառությունները պետք է հիմնված լինեն օրենքի վրա և համապատասխանեն արդարադատության ընդհանուր սկզբունքներին»:**

Անդրադառնալով ընտրական վեճերի նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառելիությանը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ ընտրական վեճերը չեն ընկնում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կարգավորման ներքո, քանի որ ընտրական վեճերը չեն համապատասխանում նույն հոդվածով նախատեսված «քաղաքացիական իրավունքներ ու պարտականություն» կամ «քրեական մեղադրանք» հասկացություններին (*լրեն, MUGEMANGANGO v. Belgium (310/15) գործով Եվրոպական դատարանի 10.07.2020 թվականի վճիռը, 96-րդ կետը*):

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով)՝ 18.10.2002 թվականի թիվ 190/2002 եզրակացությամբ ամրագրված է այն դիրքորոշումը, ըստ որի՝ բողոքարկման (ընտրական օրենսդրության խախտման փաստերի արտադատական և դատական բողոքարկման) ընթացակարգը պետք է առավելագույն սեղմ ժամկետում լինի՝ հատկապես ընտրությունների նախօրյակին ընդունվող որոշումների բողոքարկման մասով: Հիշյալ եզրակացությամբ ամրագրված է նաև, որ նախ՝ բողոքարկման ընթացակարգը չպետք է արգելակի ընտրական գործընթացը, երկրորդ՝ քանի որ բողոքարկման արդյունքում ընդունված որոշումները չեն կարող ընտրությունների ամսաթվի տեղափոխման հիմք հանդիսանալ՝ այդ որոշումները պետք է ընդունվեն ոչ թե ընտրություններից հետո, այլ ընտրություններից առաջ: Ընտրությունների արդյունքների բողոքարկման ժամկետները պետք է շատ սեղմ լինեն, և բողոքարկման գործընթացի արդյունքում ընդունված որոշումները պետք է հնարավոր չափ օպերատիվ կերպով ընդունվեն: Միևնույն ժամանակ, ընդգծվում է, որ բողոքարկման ժամկետները պետք է բավարար լինեն, որպեսզի հնարավոր լինի բողոքարկումը, երաշխավորվի պաշտպանության իրավունքի իրացումը և հնարավոր լինի ընդունել ծանրակշիռ որոշում:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի բողոքարկման կամ վերաքննության իրավունքը թեև հանդիսանում է դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ

միջոցների իրավունքների բաղադրատարր, այնուամենայնիվ, նշված իրավունքները բացարձակ չեն և ենթակա են որոշակի սահմանափակման:

Նման սահմանափակման դրսևորում է հանդիսանում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ **գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:**

Օրենսդիրը նաև հստակեցրել է ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի շրջանակը: Ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի՝ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական ու հանրաքվեին մասնակցելու իրավունքների խախտման վերաբերյալ ներկայացված հայցադիմումների հիման վրա՝ նույն գլխին համապատասխան հարուցված գործերն են:

Վերոգրյալ իրավակարգավորումներից հետևում է, որ օրենսդիրն ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով կայացվող գործն ըստ էության լուծող դատական ակտերին վերապահել է այնպիսի դատավարական հատկանիշներ, ինչպիսիք են՝ վերջնականությունը, վերանայման ենթակա չլինելը և հրապարակման պահից ուժի մեջ մտնելը: Այսինքն՝ նշված գործերով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտերը հրապարակման պահից մտնում են օրինական ուժի մեջ և ձեռք են բերում անհերքելիության, բացառիկության, նախադատելիության, պարտադիրության և կատարելիության հատկանիշներ: Այդ պահից էլ նշված գործերով դատական ակտերը դառնում են վերջնական, քանի որ սպառվում է դրանց հետագա բողոքարկման ու վերադաս դատական ատյանի կողմից վերանայման հնարավորությունը, և դրանք ձեռք են բերում իրավական ակտի որոշակիության հատկանիշ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով ամրագրելով գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման իրավունքի սահմանափակում, չի նախատեսել որևէ բացառություն, այդ թվում՝ այն դեպքերի համար, երբ ՀՀ վարչական դատարանը թույլ է տվել արդարադատության բուն էությունը խաթարող խախտում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածում արտահայտված օրենսդրի կամքը հստակ է, միանշանակ ու որոշակի. ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով ՀՀ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը ենթակա չեն բողոքարկման՝ անկախ նրանից, թե ինչ բնույթի ենթադրյալ խախտում է թույլ տվել ՀՀ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտով: Օրենսդրի նման մոտեցումը պայմանավորված է ընտրական վեճերի ու ընտրական գործընթացի առանձնահատկություններով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը քննարկվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով: ՀՀ սահմանադրական դատարանի 19.12.2017 թվականի թիվ ՄԴՌ-1395 որոշմամբ նշված նորմը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանող:



ՀՀ սահմանադրական դատարանը վերոգրյալ որոշմամբ արձանագրել է.

«(...) - սահմանադրականության տեսանկյունից իրավաչափ է այն հանգամանքը, որ ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով օրենսդիրը, ընտրական գործընթացի ժամանակային սահմանափակումների առանձնահատկություններից ելնելով, վարչական դատարանին առաջադրել է արագ (սեղմ ժամկետներում), գործի հանգամանքների ամբողջական, բազմակողմ և արդյունավետ այնպիսի քննություն իրականացնելու իրավական ինտիր, որի արդյունքում գործով ըստ էության կայացված ակտն իրավաբանական ուժի տեսանկյունից անշրջելի անբողոքարկելի լինելով հանդերձ, կերաշխավորի նաև անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը,

- անբողոքարկելի դատական ակտի առկայության պայմաններում որպես անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիք օրենսդիրը դիտարկել է առանձին գործերի քննության և լուծման համար վարչական դատարանի կողմից կազմ (մասնավորապես 5 դատավորի կազմով՝ Օրենսգրքի 196-րդ, 208-րդ հոդվածներ, 3 դատավորի կազմով՝ 203-րդ հոդված),

- Օրենսգրքի 208-րդ հոդվածում 5 դատավորի կազմով քննության են ենթակա հատկապես այն գործերը, որոնք առնչվում են ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված վերջնական որոշումներին /որոնք Սահմանադրական դատարանում բողոքարկելի չեն/, այլև ողջ ընտրական համակարգին առնչվող այնպիսի իրավունքների պաշտպանությանը, որոնք առանձնահատուկ կարևորություն ունեն ընտրական գործընթացի անխափան իրականացման և ընտրությունների վերջնական արդյունքների ամփոփման տեսանկյունից (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածը սահմանում է վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերը, որի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվում է, եթե՝

3) բողոքը բերել է այն անձը, որը վարչական դատարանի դատական ակտը բողոքարկելու իրավունք չունի.

4) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ դատական ակտը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման, եթե՝

1) դատարանը գործը քննել է ոչ օրինական կազմով, ներառյալ՝ այնպիսի դատավորի կողմից, որը, «Հայաստանի Հանրապետության դատական

օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի համաձայն, պարտավոր էր ինքնաբացարկ հայտնել.

2) դատարանը գործը քննել է դատավարության մասնակիցներից որևէ մեկի բացակայությամբ, որը պատշաճ չի ծանուցվել նիստի ժամանակի և վայրի մասին.

3) դատական ակտը ստորագրված և կնքված չէ.

4) դատական ակտը ստորագրված և կնքված չէ այն կայացրած դատավորի կամ դատավորների կողմից.

5) դատական ակտը կայացրել է ոչ այն դատավորը, որը մտնում է գործը քննող դատարանի կազմի մեջ.

6) գործից բացակայում է դատական նիստի կամ առանձին դատավարական գործողության կատարման արձանագրությունը.

7) գործը քննվել է ընդդատության կանոնների խախտմամբ.

8) դատական ակտը շոշափում է դատավարության մասնակից չդարձված անձանց իրավունքները և պարտականությունները.

9) առկա են նույն օրենսգրքի 96-րդ հոդվածով սահմանված՝ գործի վարույթը կարճելու հիմքերը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի բովանդակությանն է անդրադարձել ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/1626/05/16 վարչական գործով 26.11.2021 թվականի որոշմամբ: Մասնավորապես, անդրադարձնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 168-րդ հոդվածով նախատեսված՝ բողոքարկվող դատական ակտը վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջների սահմաններում վերանայելու կանոնին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն չի կարող մեկնաբանվել այնպես, որ ՀՀ վճռաբեկ դատարանը պետք է կաշկանդված լինի վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջների սահմաններով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված բոլոր դեպքերում: ՀՀ վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «Դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման» եզրույթը պետք է մեկնաբանվի այնպես, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ և 9-րդ կետերով նախատեսված դեպքերում դատական ակտը բոլոր դեպքերում ենթակա է բեկանման՝ անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից *(տե՛ս, Մամվել Հովհաննիսյանն ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի թիվ ՎԴ/1626/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.11.2021 թվականի որոշումը)*:

Վերոհիշյալ նորմերից բխում է, որ վերաքննիչ բողոքը կարող է վարույթ ընդունվել և ըստ էության քննության առարկա դառնալ միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերի բացակայության պայմաններում: Բողոքարկման ոչ ենթակա դատական ակտի բողոքարկումը բացառում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և ըստ էության քննության առնելու հնարավորությունը: Մինչդեռ, դատական ակտի բեկանման հիմքերը, այդ թվում՝ պարտադիր, ի հայտ են գալիս վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի վերաքննության կամ վճռաբեկության կարգով քննության ժամանակ, երբ դատական ակտը բողոքարկելու իրավունք ունեցող անձի կողմից ներկայացված վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքն արդեն իսկ հաղթահարել է ընդունելիության փուլը, և բացակայել են բողոքը վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքերը: Մինչդեռ, առանձին գործերով հատուկ վարույթներով, որոնցով կայացվող գործն ըստ էության լուծող դատական ակտերին հրապարակման պահից տրվում են

անհերքելիության, բացառիկության, նախադատելիության, պարտադիրության և կատարելիության հատկանիշներ, վերաքննության կարգով բողոքարկման հնարավորությունը բացառվում է, իսկ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված պահանջը կիրառելի չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը կիրառելի են միայն բողոքարկման ենթակա դատական ակտերի նկատմամբ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորման ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ դրանով սահմանվում են այն դեպքերը, երբ անկախ բողոքում նշված հիմքերից՝ բողոքարկման (վերանայման) ենթակա դատական ակտը վերանայման արդյունքում ենթակա է բեկանման:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ որևէ իրավիճակում պայմանավորված ՀՀ վարչական դատարանի կողմից թույլ տրված խախտման բնույթով, խնդրո առարկա դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը բացառվում է օբյեկտիվորեն, քանզի առկա չեն բողոքարկման ժամկետներ: Օրենսդիրն ընդհանուր հայցային վարույթի շրջանակներում սահմանել է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետ, այն է՝ բողոքարկվող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված մեկամսյա ժամկետ, որպիսի ժամկետը չի կարող կիրառելի լինել այն ակտերի համար, որոնք օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից: Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի քննության ընթացակարգը սահմանելով հատուկ վարույթի նորմերով և ամրագրելով, որ այդ գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են ու վերանայման ենթակա չեն, ըստ այդմ՝ չի սահմանել բողոքարկման ժամկետ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ ընտրական վեճերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով վերաքննության կարգով բողոքարկումը չի կարող թույլատրելի լինել անգամ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստորադաս ատյանի (առաջին ատյան) որոշումների նկատմամբ բարձր ատյանի (երկրորդ ատյան) վերահսկողությունն ապահովելու սկզբունքից բացառությունն ամրագրված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով, այսինքն՝ նման բացառությունը հիմնված է օրենքի վրա, ինչը համապատասխանում է արդարադատության ընդհանուր սկզբունքներին:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կուսակցությունը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով անվավեր ճանաչել Լոռու մարզի Վանաձոր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների 05.12.2021 թվականի ընտրությունների քվեարկության արդյունքներն ամփոփելու մասին 12.12.2021 թվականի թիվ 23 տարածքային ընտրական հանձնաժողովի թիվ 37-Ա, թիվ 38-Ա որոշումները և ընտրված ճանաչել Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված համապատասխան թվով թեկնածուներին:

**Դատարանի** 21.12.2021 թվականի վճռով հայցը մերժվել է:

**Վերաքննիչ դատարանի** 07.01.2022 թվականի որոշմամբ Կուսակցության վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ. «(...) Փաստորեն, Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասում գերեզմանում դատավարական կարգավորումների ուժով Դատարանը 21.12.2021 թվականին կայացրել է գործն ըստ էության լուծող դատական ակտ, որը վերջնական է, վերանայման ենթակա չէ և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Հարկանշական է, որ քննարկվող վճռի եզրափակիչ մասի 3-րդ կետում Դատարանը նույնպես նշել է, որ «վճիռը վերջնական է, վերանայման ենթակա չէ և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»: Ընդ որում, նշյալ գործն ըստ էության լուծող դատական ակտը արտրագրված ու կնքված է կոլեգիալ հինգ դատավորի կողմից:

Այլեին, վերաքննիչ բողոքով բողոքաբերը նույնպես վկայակոչում է Օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասը, սակայն ընդգծում, որ նշված սահմանափակումը մեկնաբանելիս պետք է առաջնորդվել ՀՀ սահմանադրական դատարանի կողմից տրված բազմաթիվ և հստակ մեկնաբանություններով, որ առավել էական խախտումների դեպքում բողոքարկման իրավունքը պետք է գործի: Մինչդեռ, ներկայացված տեսակետի համարեքարում Վերաքննիչ դատարանը նպատակահարմար է գործում նկատել այն, որ վարչական դատավարությունն իրականացվում է գործի քննության ժամանակ գործող օրենքով (Օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մաս), իսկ գործող դատավարական կարգավորումների իմաստով ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից (տվյալ դատավարական նորմը չի ճանաչվել նաև ՀՀ Սահմանադրությանը հակասող ու անվավեր): (...):»

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը կամ հարցը քննում և լուծում է Սահմանադրությանը և օրենքին համապատասխան՝ գործի հանգամանքները գնահատելով իր ներքին համոզմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատավարությունն իրականացվում է գործի քննության ժամանակ գործող օրենքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածին համապատասխան ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործ է և, ըստ այդմ, քննության է առնվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Հատուկ վարույթներ» վերտառությամբ 5-րդ բաժնի «Ընտրական իրավունքի պաշտպանության գործերի վարույթը» վերտառությամբ 28-րդ գլխի կանոններով, մասնավորապես՝ քննվել է կոլեգիալ կազմով: Գործն ըստ էության լուծող դատական ակտը՝ Դատարանի 21.12.2021 թվականի վճիռը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 213-րդ

հողվածին համապատասխան ուժի մեջ է մտել հրապարակման պահից, բողոքարկման և վերանայման ենթակա չէ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված դատական ակտը բողոքարկման ենթակա չէ նույնիսկ այն դեպքում, երբ բողոքարկումն իրականացվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ խնդրո առարկա վճիռը կայացվել է ոչ օրինական կազմով, սպա թեև սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ տվյալ դեպքում այդ հանգամանքը որևէ նշանակություն ունենալ չի կարող, այդուհանդերձ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ նշված փաստարկը հերքվում է Բարձրագույն դատական խորհրդի 14.04.2022 թվականի թիվ ԲԴԽ-20-Ո-Կ-4 օրինական ուժի մեջ մտած որոշմամբ, որը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան կայացվել է դատարանի կարգավիճակում: Մասնավորապես, նշված որոշմամբ կատարվել են հետևյալ եզրահանգումները. «(...) դատական ակտի հրապարակման պարտականություն օրենսդիրը որևէ կերպ չի վերագրել միայն նիստը նախահագողին, ինչից ենթադրվում է, որ բոլոր դեպքերում, երբ կա օբյեկտիվ և բացառիկ անհասրիություն ֆիզիկապես մասնակցելու դատական ակտի հրապարակմանը (...), սպա դատական ակտի հրապարակումը, այն է՝ խորհրդակցական սենյակում գործի ելքի վերաբերյալ կայացված որոշման եզրահանակից մասի դատական նիստի ժամանակ բարձրաձայն ընթերցումը կարող է իրականացվել դատական կազմում ընդգրկված մեկ այլ դատավորի կողմից, որպիսի լիազորության իրականացման վերաբերյալ առկա չէ օրենսդրությամբ ամրագրված սահմանափակում, ինչի պարագայում հրապարակումը ոչ նախագահողի կողմից իրականացնելը չի կարող համարվել դատավարական նորմի խախտում:

(...) Տվյալ դեպքում խորհրդակցական սենյակում գործի ելքի վերաբերյալ կայացված որոշման եզրահանակից մասի դատական նիստի ժամանակ բարձրաձայն ընթերցումը կոլեգիալ դատական կազմում ընդգրկված դատավորներից որևէ մեկի կողմից, սույն գործի առանձնահատկություններից ելնելով, միջնորդ է եղել սպասիվել օրենքով սահմանված սեղմ ժամկետների պահպանմամբ հանրային կարևորություն ունեցող վեճի դատական կարգով լուծումը հանրության ավելի լայն շրջանակներին դատական ակտին հստակացնելու դարձնելուն:

(...) Ինչ վերաբերում է հեռահար եղանակով դատական նիստին դատավորի մասնակցությանը, սպա Վարչական դատավարության օրենսգրքով թեև դրա վերաբերյալ որևէ ընթացակարգ նախատեսված չէ, այնուամենայնիվ... դատավորի՝ նման եղանակով դատական նիստին մասնակցությունը որևէ կերպ չի ազդել դատարանի օրինական կոլեգիալ կազմի կողմից խորհրդակցական սենյակում կայացված վերջնական դատական ակտի ելքի կայացման վրա»:

Այսինքն՝ Բարձրագույն դատական խորհուրդը, իրացնելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելուն ուղղված իր լիազորությունը, ըստ էության, հանգել է այն եզրակացության, որ տվյալ պարագայում առկա չի եղել ոչ օրինական կազմով գործի քննություն իրականացնելու դեպքը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հիմնավոր է համարում Կուսակցության ներկայացրած վերաքննիչ բողոքի ընդունումը մերժման ենթակա լինելու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ տվյալ դեպքում վերաքննիչ բողոք է ներկայացվել Դատարանի 21.12.2021 թվականի վճռի դեմ այն պարագայում, երբ այն ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով վերաքննության կարգով բողոքարկման ենթակա չէ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերաքննիչ բողոքի ընդունումը մերժման ենթակա լինելը որևէ կերպ չի կարող պայմանավորվել նյութական և/կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումների, այդ թվում նաև ոչ օրինական կազմով գործի քննություն իրականացնելու հիմքի առկայությամբ, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Ընտրական իրավունքի պաշտպանության գործերի վարույթը» վերտառությամբ 28-րդ գլխի կարգավորումներն ուղղակիորեն բացառում են նշված գործերով դատական ակտերի վերանայման հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, մերժելով Կուսակցության վերաքննիչ բողոքի ընդունումը, կայացրել է պատճառաբանված և հիմնավորված դատական ակտ: Նշվածը բավարար հիմք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ վճռաբեկ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը կիրառելու համար:

*Նշված պարճառաբանություններով և հիմնավորումներով հերքվում են նաև բողոք բերած անձի վճռաբեկ բողոքում բարձրացված մյուս հիմքերը և հիմնավորումները, ուստի, Վճռաբեկ դատարանն անդրադարձ չի կատարում դրանց:*

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 07.01.2022 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում.

Վարչական գործ թիվ ՎԴ/10869/05/19 2023թ

Վարչական գործ թիվ

ՎԴ/10869/05/19

Նախագահող դատավոր՝

Կ. Գևորգյան

Դատավորներ՝

Լ. Հակոբյան

Ռ. Մախմուդյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող և զեկուցող*

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  
Ա. ԹՈՎԱՄԱՍՅԱՆ  
Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի նոյեմբերի 10-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Մելտեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.06.2022 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Ընկերության ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարության, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով), երրորդ անձինք «Արմենիա Թի-Վի» փակ բաժնետիրական ընկերություն, «Մո Թիվի Մեդիա Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերություն, «ԱրմենԱկոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, «ԱՐ հեռուստաընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն և «Հուսաբեր» փակ բաժնետիրական ընկերություն՝ Հանձնաժողովի 11.06.2003 թվականի թիվ 18-Ա, 18.07.2003 թվականի թիվ 31-Ա, 18.07.2003 թվականի թիվ 30-Ա, 18.07.2003 թվականի թիվ 29-Ա, 13.10.2003 թվականի թիվ 74-Ա, 13.10.2003 թվականի թիվ 75-Ա և 24.12.2003 թվականի թիվ 56 դեցիմետրային կապուղիով «Հուսաբեր» փակ բաժնետիրական ընկերությանը հաղթող ճանաչելու որոշումներն առ ոչինչ ճանաչելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է առ ոչինչ ճանաչել Հանձնաժողովի կողմից կայացված 11.06.2003 թվականի թիվ 18-Ա որոշումը, 18.07.2003 թվականի թիվ 31-Ա որոշումը, 18.07.2003 թվականի թիվ 30-Ա որոշումը,

18.07.2003 թվականի թիվ 29-Ա որոշումը, 13.10.2003 թվականի թիվ 74-Ա որոշումը, 13.10.2003 թվականի թիվ 75-Ա որոշումը և 24.12.2003 թվականի թիվ 56-րդ դեցիմետրային կապուղիով «Հուսաբեր» ՓԲ ընկերությանը հաղթող ճանաչելու որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Դ. Դանիելյան) (այսուհետ՝ Դատարան) 06.04.2021 թվականի վճռով Ընկերության հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.06.2022 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.04.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Դավիթ Ասատրյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը և 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը ընդհանրապես չի անդրադարձել վերաքննիչ բողոքի այն հիմքին, որը վերաբերում է միջանկյալ դատական ակտի հետաձգված կարգով բողոքարկմանը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետում սահմանված «տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք» ձևակերպման հետ կապված հիմքին, ինչպես նաև չի անդրադարձել այն հիմքին, որը վերաբերում է պատասխանողի՝ հայցադիմումի պատասխան, ապացույցներ և վարչական վարույթի նյութեր չներկայացնելու դատավարական հետևանքներին: Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել նաև այն հիմքին, որի համաձայն բողոքաբերը պնդում է, որ Դատարանը պատշաճ չի պատճառաբանել դատական ակտը:

Վերաքննիչ դատարանն անդրադարձ է կատարել միայն վարչական ակտերի առոչնչության տեսական վերլուծություններին՝ նշելով, որ Հանձնաժողովը դրանց ընդունման պահի դրությամբ գործող խմբագրությամբ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի ուժով իրավասու է եղել ընդունելու բողոքարկվող վարչական ակտերը:

Բողոքաբերը պնդում է, որ ներկայացրել է բավարար փաստեր և թվով 60 ապացույցներ, որոնց հիման վրա ապացուցվում է վիճարկվող որոշումները խտրականության հիմքով կայացված լինելու և, հետևաբար՝ առ ոչինչ հանդիսանալու հանգամանքը: Ո՛չ Դատարանը, ո՛չ Վերաքննիչ դատարանը չեն անդրադարձել հայցադիմումի և վերաքննիչ բողոքի գլխավոր հիմքին՝ խտրականությանը, և չեն գնահատել այն հանգամանքը՝ արդյո՞ք խտրականության հիմքով տրված իրավունքը կարող է համարվել ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք և հանգեցնել վարչական ակտի առոչնչության:



Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.06.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել համապատասխան դատարան՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Հանձնաժողովի 11.06.2003 թվականի թիվ 18-Ա որոշման համաձայն՝ «Արմենիա ԹԻ-ՎԻ» փակ բաժնետիրական ընկերությունը ճանաչվել է Երևան քաղաքի տարածքում 25-րդ դեցիմետրային կապուղիով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի հաղթող և տրվել է հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա (**հատոր 1-ին, գ. թ. 60**):

2) Հանձնաժողովի 18.07.2003 թվականի թիվ 29-Ա որոշման համաձայն՝ «Արմենակոբ-Թիվի» ՍՊ ընկերությունը ճանաչվել է Երևան քաղաքի տարածքում 31-րդ դեցիմետրային կապուղիով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի հաղթող և տրվել է հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա (**հատոր 1-ին, գ. թ. 25**):

3) Հանձնաժողովի 18.07.2003 թվականի թիվ 30-Ա որոշման համաձայն՝ «Թի Վի Ֆայֆ» ՓԲ ընկերությունը ճանաչվել է Երևան քաղաքի տարածքում 39-րդ դեցիմետրային կապուղիով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի հաղթող և տրվել է հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա (**հատոր 1-ին, գ. թ. 18**):

4) Հանձնաժողովի 18.07.2003 թվականի թիվ 31-Ա որոշման համաձայն՝ «Երևան» հեռուստաընկերություն ՓԲ ընկերությունը ճանաչվել է Երևան քաղաքի տարածքում 51-րդ դեցիմետրային կապուղիով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի հաղթող և տրվել է հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա (**հատոր 1-ին, գ. թ. 51**):

5) Հանձնաժողովի 13.10.2003 թվականի թիվ 74-Ա որոշման համաձայն՝ «ԱՐ հեռուստաընկերություն» ՍՊ ընկերությունը ճանաչվել է Երևան քաղաքի տարածքում 3-րդ մետրային կապուղիով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի հաղթող և տրվել է հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա (**հատոր 1-ին, գ. թ. 32**):

6) Հանձնաժողովի 13.10.2003 թվականի թիվ 75-Ա որոշման համաձայն՝ «ՄԻՆԵՄԱԲՍ» ՍՊ ընկերությունը ճանաչվել է Երևան քաղաքի տարածքում 63-րդ դեցիմետրային կապուղիով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի հաղթող և տրվել է հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա (**հատոր 1-ին, գ. թ. 46**):

7) Հանձնաժողովի 24.12.2003 թվականի թիվ 99-Ա որոշման համաձայն՝ «Հուսաբեր» ՓԲ ընկերությունը ճանաչվել է Երևան քաղաքի տարածքում 56-րդ դեցիմետրային կապուղիով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի հաղթող և տրվել է հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա:

### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջները, ինչը խաթարել է արդարադատության բուն էությունը:

*Սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.*

*1) արդյո՞ք Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով կայացվող դատական ակտում պարզավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքում ներկայացված հիմքերից յուրաքանչյուրին.*

*2) արդյո՞ք դատական կարգով կարող է ճանաչվել վարչական ակտի առջին լինելն այն դեպքում, երբ վարչական ակտի իրավաչափության հիմքում դրված փաստարկները ենթակա են գնահատման հստակ ընթացակարգով:*

*1) Անդրադատնալով առաջին հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.*

Դատական պաշտպանության իրավունքն իրենում ներառում է նաև վերադաս առյանի կողմից ստորադաս առյանի կայացրած դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը: Բողոքարկման իրավունքի իրացմամբ շահագրգիռ սուբյեկտը հնարավորություն է ստանում բողոքի միջոցով արտահայտելու ստորադաս առյանի կողմից կայացված դատական ակտի հետ իր անհամաձայնությունը՝ ակնկալելով իր կողմից ներկայացված հիմքերի պատշաճ կարգով քննություն իրավասու դատարանի կողմից:

Նշված իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև միջազգային մի շարք ակտերում: Մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995 թվականի փետրվարի 7-ի թիվ R (95) 5 Հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ առյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին առյանի դատարանի) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Այսինքն՝ առաջին առյանի դատական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որ հնարավորինս ապահովվի դատավարական օրենքով սահմանված կարգով բողոքարկման ենթակա դատական ակտի վերանայման հնարավորությունը վերադաս դատարանի կողմից (երկրորդ առյանի դատարան): Այն է՝ այն դեպքում, երբ պետության դատական համակարգն ունի եռաստիճան կառուցվածք, անձը պետք է ունենա առնվազն երկու առյանում լաված լինելու իրավունք: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դատարանների կողմից չեն կարող այնպիսի ձևական խոչընդոտներ ստեղծվել, որոնց արդյունքում կարող է խախտվել անձանց՝ դատական ակտի՝ օրենքով նախատեսված կարգով վերանայման իրավունքը (որեն նաև Խաչատրյուր Շահինյանն ընդդեմ Հայկ Մելքոնյանի թիվ ԵՄԴ/3578/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.01.2018 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս փաստել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու

դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (յրենս, օրինակ, «Ֆասթ Սիլյա» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնչվող պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը, Վարդան Արրահամյանն ընդդեմ «Արդշիրանակ» ՓԲԸ-ի թիվ ԵԴ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (“ex officio”):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ վերաքննիչ բողոքում նշվում են նյութական կամ դատավարական իրավունքի նորմի այն խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա, այդ խախտումների, ինչպես նաև գործի ելքի վրա դրանց ազդեցության վերաբերյալ հիմնավորումները, բողոք բերող անձի պահանջը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

4. Որոշման պատճառաբանական մասը բովանդակում է՝

(...)

2) եզրահանգում՝ բողոքում առաջադրված յուրաքանչյուր պահանջի հիմնավորվածության վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով հետևյալ հարցերին.

ա. արդյո՞ք հիմնավոր է տվյալ պահանջը՝ բողոքում դրա վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում կամ անկախ դրանցից,

բ. եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ, ապա ի՞նչ պատճառաբանմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրի, օրենքի և այլ իրավական ակտի նորմերին, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը համարում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ,

գ. եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր է, ապա ի՞նչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի այն նորմերին, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը համարում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր է,

դ. վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջի հիմնավորվածության դեպքում արդյո՞ք վերաքննիչ բողոքում նշված՝ դատարանի թույլ տված նյութական

կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա՝ պատճառաբանելով համապատասխան եզրահանգումը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (“ex officio”) պարզելու՝ վարչական դատարանին ուղղված օրենսդրական պահանջը նպատակաուղղված է վարչական արդարադատության առջև դրված առանձնահատուկ խնդիրների լուծմանը և հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ու լուծման միջոցով ֆիզիկական, իրավաբանական անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոցի կենսագործունեության ապահովմանը: Վարչադատական գործընթացում գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրավական ամրագրումը հետապնդում է դատավարությունում ֆիզիկական ու իրավաբանական անձանց նկատմամբ հանրային-իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները վերացնելու նպատակ: Քննարկվող իրավական սկզբունքը հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը (*լրեն, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎՂ/4315/05/14 վարչական գործով* ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս արձանագրել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (“ex officio”) պարզելու սկզբունքը դրսևորվում է նաև վերաքննության փուլում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ գործի վերաքննության փուլում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (“ex officio”) սկզբունքի բովանդակությունը որոշակիորեն տարբերվում է գործի դատաքննության փուլում այդ սկզբունքի ունեցած բովանդակությունից: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի վերաքննության փուլում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (“ex officio”) սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին. վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ վերաքննիչ դատարանը, մի կողմից՝ չի կարող սեփական նախաձեռնությամբ դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից, այսինքն՝ առանց վերաքննիչ բողոքում համապատասխան հիմքի առկայության կայացնել դատական ակտ այն իրավական և փաստական հիմքերով, որոնք առաջին ատյանի դատարանում քննության առարկա չեն դարձվել: Իսկ մյուս կողմից՝ վերաքննիչ բողոքում վարչական դատարանի կողմից քննության առարկա չդարձված հիմքի առկայության դեպքում վերաքննիչ դատարանը պարտավոր է ըստ էության քննության առարկա դարձնել նաև վերաքննիչ բողոքի այդ հիմքը՝ այս պարագայում չսահմանափակվելով վարչական դատարանում գործի քննության շրջանակներով:

Փաստորեն, վարչական դատավարությունում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (“ex officio”) սկզբունքի ուժով վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի

բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ բողոքում վկայակոչված այս կամ այն հիմքը վարչական դատարանում քննարկվել է, թե՛ ոչ: Իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքում վկայակոչված չէ այնպիսի հիմք, որի վերաբերյալ վարչական դատարանում քննություն չի իրականացվել, ապա վերաքննիչ դատարանը չի կարող դուրս գալ վարչական դատարանում գործի քննության շրջանակներից և կայացնել դատական ակտ վերաքննիչ բողոքում չվկայակոչված և վարչական դատարանում քննության առարկա չդարձված հիմքով (*լրե՛ս, ԱԶ Գևորգ Դավթյանն ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամտաբերի կումիլոնտի Մաշտոցի հարկային տեսչության թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 134-րդ և 144-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է քննության առարկա դարձնել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը՝ ի պաշտոնե իրականացնել բողոքի քննություն, իր դիրքորոշումն ու եզրահանգումներն արտահայտել բողոքում ներկայացված յուրաքանչյուր հիմքի վերաբերյալ: Հակառակ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի վերը նշված դրույթը կկրի հոչակագրային բնույթ, եթե վերաքննիչ դատարանը սահմանափակվի զուտ այդ դրույթին համահունչ վերաքննիչ բողոքի հիմքերը դատական ակտում շարադրելով և չանդրադառնա այդ հիմքերի հիմնավորվածության հարցին: Հետևաբար բողոքում բարձրացված հիմքերը պարտադիր քննության առարկա պետք է դառնան վերադաս դատական աստիճանում, և դատարանի կայացրած որոշումը պետք է պարունակի այդ հիմքերի վերաբերյալ եզրահանգումներ: Այդուհանդերձ, հիշատակված դրույթների նման մեկնաբանումը չի նշանակում բողոքի յուրաքանչյուր հիմքում ներառված ցանկացած փաստարկի գնահատում և վերլուծում: Բողոքը քննող դատարանը բողոքի հիմքերում ներառված փաստարկներին պետք է անդրադառնա այն հաշվով, որ նախ դրանք լինեն վերաբերելի բողոքի հիմքերին, և այդ փաստարկներն ունենան ազդեցություն բողոքի հիմքը կամ հիմքերը հիմնավորված համարելու տեսանկյունից (*լրե՛ս, «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն ընդդեմ ՀՀ քննչական կոմիտեի թիվ ՎԴ/4169/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2019 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ և 146-րդ հոդվածների համակարգային վերլուծության արդյունքում, վկայակոչված դիրքորոշումների հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում և որոշման պատճառաբանական մասում պետք է կատարի եզրահանգում՝ բողոքում առաջադրված յուրաքանչյուր պահանջի վերաբերյալ գնահատելով դրա հիմնավորվածությունը բողոքում դրա վերաբերյալ նշված հիմքերի սահմաններում: Վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերին և հիմնավորումներին անդրադառնալու պարտականությունը բխում է հենց վերաքննիչ բողոքում ներկայացված յուրաքանչյուր պահանջի հիմնավորվածությունը գնահատելու Վերաքննիչ դատարանի պարտականությունից: Գնահատել բողոքում ներկայացված յուրաքանչյուր պահանջի հիմնավորվածությունը բողոքում դրա վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում նշանակում է անդրադառնալ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և հիմնավորումներին, հակառակ պարագայում Վերաքննիչ դատարանի

եզրահանգումը՝ բողոքում ներկայացված պահանջների հիմնավորվածության վերաբերյալ, կլինի թերի և ոչ ամբողջական:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր է անդրադառնալ վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերին և քննության առարկա դարձնել բողոք բերած անձի համապատասխան հիմնավորումները՝ որոշման պատճառաբանական մասում եզրահանգման գալով վերաքննիչ բողոքի այդ հիմքերի հիմնավոր կամ անհիմն լինելու վերաբերյալ:

2) *Անդրադառնալով երկրորդ հարցադրմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր:

Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները), ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածով նախատեսված ճանաչման հայցը, որի 2-րդ մասով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

Այսպիսով, վիճարկման հայցը՝ որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց, օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական կարգով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն, իսկ ճանաչման հայցն ուղղված է օրենքով նախատեսված համապատասխան հիմքերի առկայության դեպքում վարչական ակտի դատական կարգով առոչինչ լինելու փաստը հաստատելուն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական ակտի առոչնչության և անվավերության հիմքերը սահմանված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխանաբար 62-րդ և 63-րդ հոդվածներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

(...)

դ) **ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից իրավաբանական ուժ չունի և ենթակա չէ կատարման կամ կիրառման, իսկ 3-րդ մասի համաձայն՝ առ ոչինչ վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է.

- օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով,

- կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով վարչական ակտի առոչնչության հիմքերին, իր 04.02.2014 թվականի թիվ ՍԴՈ-1137 որոշմամբ, մասնավորապես, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը պայմանավորված է **ակնառու կոպիտ սխալներով, որոնք ի հայտ են գալիս առանց տվյալ վարչական ակտի իրավափոթությունը հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու անհրաժեշտության և բացառում են տվյալ ակտի առ ոչինչ լինելու վերաբերյալ հնարավոր վեճերը:**

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած իր որոշումներում անդրադառնալով վերոգրյալ իրավանորմերին, եզրահանգել է, որ ոչ իրավաչափ վարչական ակտերը կարող են հանդես գալ երկու ձևով՝ որպես օրենքին (գերակայող իրավունքին) հակասող և որպես առոչնչ ակտեր:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրելով *վիճարկման* և *ճանաչման* հայցատեսակները՝ օրենսդիրը սահմանել է անվավեր և առ ոչինչ վարչական ակտերի ոչ իրավաչափ լինելը դատական կարգով հաստատելու երկու եղանակ: Ընդ որում, *վիճարկման հայցը* քննելիս դատարանը պարտավոր է նախևառաջ անդրադառնալ վարչական ակտի առոչնչության հիմքերի առկայությանը կամ բացակայությանը, քանի որ վարչական ակտի անվավերության նյութաիրավական հիմքերով պայմանավորված՝ անվավեր կարող է ճանաչվել միայն առ ոչինչ չհանդիսացող վարչական ակտը: Այսինքն՝ առ ոչինչ վարչական ակտի վերացման պահանջը չի կարող լինել վիճարկման հայցի առարկա, քանի որ անվավերության հիմքերի պարզման անհրաժեշտությունն առ ոչինչ վարչական ակտի պարագայում բացակայում է: Ավելին, եթե առկա է վարչական ակտի առոչնչ լինելու՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված հիմքերից որևէ մեկը, ապա այդ վարչական ակտը չի կարող ճանաչվել անվավեր (*յրեն, Գառնիկ Վերսիշյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0150/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.03.2019 թվականի որոշումը*):

Նմանատիպ դիրքորոշում է արտահայտել ՀՀ վճռաբեկ դատարանը նաև մեկ այլ վարչական գործով՝ մասնավորապես նշելով, որ նշված հայցատեսակներն իրենց մեջ ներառում են միմյանց բացառող տարրեր: Մասնավորապես վիճարկման հայցի առարկա կարող է լինել միայն այն վարչական ակտը, որն առ ոչինչ չէ: Այլ կերպ ասած՝ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքն ինքնին բացառում է վիճարկման հայցի հարուցումը և հետագա քննությունը: Համապատասխանաբար վարչական ակտի առ ոչինչ լինելու հիմքերի առկայության

պարագայում վարչական ակտի օրենքին համապատասխանությունը չի կարող քննարկման առարկա դառնալ վիճարկման հայցի շրջանակներում, քանի որ ընդունման պահից իրավաբանական ուժ չունեցող և կատարման կամ կիրառման ոչ ենթակա վարչական ակտի օրենքին համապատասխանելն այլևս որևէ նշանակություն չի կարող ունենալ (յրեն, Հովհաննես Եղյան ՆորքՄար Սուիթ կոոպերատիվի սնանկության գործերով կառավարիչն ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԻ թիվ ՎԴ/10906/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.06.2022 թվականի որոշումը):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական ակտի առոչինչ լինելու համար **էական և անհրաժեշտ պայման է անձի վրա ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն դնելը, կամ անձին ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք տրամադրելը:** Այսինքն՝ անձի վրա դրվող պարտականությունը կամ անձին տրամադրվող իրավունքը պարտադիր կերպով պետք է լինի ակնհայտ ոչ իրավաչափ: Հետևաբար վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը, որը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, դեռևս բավարար չէ վարչական ակտն առոչինչ դիտելու համար: Այսինքն՝ վարչական ակտի առոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դրանով տրամադրված իրավունքը կամ դրված պարտականությունը առերևույթ ոչ իրավաչափ լինի, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը կամ կիրառված նորմերի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առոչինչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր (յրեն, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Սպանդարյանի 1 հարկային տեսչությունն ընդդեմ «Նովոռուսիակար» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/0562/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը, «Տավրու-66» ֆիրմա ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Մաշյոցի հարկային տեսչության և ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/7157/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.03.2010 թվականի որոշումը, Ժիրայր Զոհրաբյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխարակազմի Արարարի մարզային ստորաբաժանման, Աննա Զոհրաբյանի, երրորդ անձ ՀՀ Արարարի մարզի Գոռավանի գյուղական համայնքի թիվ ՎԴ3/0233/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը):

Նախկինում կայացրած որոշումներում անդրադառնալով նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի վերլուծությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ օրենսդիրը ոչ իրավաչափ է դիտում այն վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, կամ եթե ներկայացվել են այնպիսի փաստաթղթեր, որոնցից ակնհայտ է, որ ըստ էության տվյալ վարչական ակտով պետք է ընդունվեր այլ որոշում: Այսինքն՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու համար պետք է առկա լինի հետևյալ հիմքերից որևէ մեկը, այն է՝

- «ա» վարչական ակտն ընդունվել է օրենքի սխալ կիրառմամբ, կամ
  - «բ» վարչական ակտն ընդունվել է օրենքի սխալ մեկնաբանմամբ, կամ
  - «գ» ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ պետք է ընդունվեր այլ որոշում:
- Ընդ որում, վարչական ակտի ոչ իրավաչափ՝ անվավեր լինելու հանգամանքը ճանաչվում է ինչպես այդ ակտն ընդունող վարչական մարմնի



կամ դրա վերադաս մարմնի կողմից, այնպես էլ դատական կարգով (յրե՛ս, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ընտրե՛մ Կամո Պետրոսյանի, «Դինո Գոլդ Մայնինգ Զամինի» ՓԲԸ-ի թիվ ՎԴՄ/0143/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.04.2012 թվականի որոշումը): Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական ակտի առ ոչինչ լինելը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ դատական կարգով հաստատվի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված պայմաններից որևէ մեկի առկայությունը, իսկ բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվող վարչական ակտի առոչնչությունը պայմանավորվում է այնպիսի հանգամանքներով, որոնց ազդեցությունը վարչական ակտի իրավաչափության վրա ենթակա է ստուգման և գնահատման հատուկ ընթացակարգով, ապա նման վարչական ակտը չի կարող դիտվել առոչնչ, այլ այն կարող է ճանաչվել անվավեր:

**Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերությունը, դիմելով Դատարան, պահանջել է առ ոչինչ ճանաչել Հանձնաժողովի կողմից կայացված 11.06.2003 թվականի թիվ 18-Ա որոշումը, 18.07.2003 թվականի թիվ 31-Ա որոշումը, 18.07.2003 թվականի թիվ 30-Ա որոշումը, 18.07.2003 թվականի թիվ 29-Ա որոշումը, 13.10.2003 թվականի թիվ 74-Ա որոշումը, 13.10.2003 թվականի թիվ 75-Ա որոշումը և 24.12.2003 թվականի թիվ 56-րդ դեցիմետրային կապուղիով «Հուսաբեր» ՓԲ ընկերությանը հաղթող ճանաչելու որոշումը:

**Դատարանը** մերժել է Ընկերության հայցը՝ արձանագրելով, որ «(...) Երևան քաղաքի րարածքում 25-րդ, 51-րդ, 39-րդ, 31-րդ, 63-րդ և 56 դեցիմետրային կապուղիներով, ինչպես նաև 3-րդ մետրային կապուղիով վիճարկվող որոշումներում նշված ընկերություններին հեռուստաադրորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթների հաղթող ճանաչելու և, ըստ դրա՝ հայցվոր «Մելրեք» ՄՊ ընկերության՝ հեռուստաադրորդումների հեռարձակման արտոնագիր (լիցենզիա) արանալու թիվով 7 հայտերը փաստացի մերժելու իրավաչափության հարցը հնարավոր է պարզել միայն վիճարկվող որոշումների և անցկացված մրցույթների հիմքում ընկած փաստաթղթերի, ապացույցների, որոշակի հանգամանքների մանրամասն ուսումնասիրության արդյունքում՝ պարզելով Հեռուստաարեստության և ոսդիոյի հանձնաժողովի կողմից վիճելի իրավահարաբերության ժամանակահատվածում գործող իրավական նորմերի սխալ կիրառումը կամ դրանց սխալ մեկնարանումը, այդ թվում՝ վիճարկվող որոշումների պարճառաբանված և հիմնավորված լինելու համարեքարում, ինչպես նաև վիճարկվող որոշումները Հեռուստաարեստության և ոսդիոյի հանձնաժողովի կողմից խարական հիմքով ընդունված լինելու համարեքարում: Այլ կերպ ասած՝ րվյալ դեպքում «Մելրեք» ՄՊ ընկերության կողմից ՀՀ վարչական դարավարության օրենագրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով նախարեակված ճանաչման հայցի հիմքում վկայակոչված փաստարկներն ու հիմնավորումները, մասնավորապես՝ վիճարկվող որոշումների պարճառաբանված և հիմնավորված չլինելը, խարականության հիմքով ընդունված լինելը, վերաբերում են բացառապես վիճարկվող Հեռուստաարեստության և ոսդիոյի հանձնաժողովի 11.06.2003 թվականի թիվ 18-Ա, 18.07.2003 թվականի թիվ 31-Ա, 18.07.2003 թվականի թիվ 30-Ա, 18.07.2003 թվականի թիվ 29-Ա, 13.10.2003 թվականի թիվ 74-Ա, 13.10.2003 թվականի թիվ 75-Ա և 24.12.2003 թվականի թիվ 56 դեցիմետրային կապուղիով «Հուսաբեր» ՓԲ ընկերությանը հաղթող ճանաչելու (29.12.2003 թվականի թիվ 99-Ա

որոշում) որոշումների անվավերության (ոչ իրավաչափ լինելու) հարցին, այսինքն՝ դրանք կարող են գնահատվել ոչ թե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի, այլ նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի տիրույթում՝ նշված վարչական ակտերն անվավեր ճանաչելու կամ, այլևս իրավաբանական ուժ չունենալու դեպքում, ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում»:

**Վերաքննիչ դատարանը** մերժել է Ընկերության վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ «(...) Հանձնաժողովի որոշումների ոչ իրավաչափության հիմքերը, որոնք մատնանշվել են հայցվորի կողմից, վերաբերում են դրանց ենթադրյալ անվավերությանը, այլ ոչ թե առնչչությանը:

Անդրադառնալով վարչական ակտն առ ոչինչ լինելու օրենքով նախատեսված մյուս հիմքերին՝ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ 11.06.2003 թվականի թիվ 18-Ս, 18.07.2003 թվականի թիվ 29-Ս, 18.07.2003 թվականի թիվ 30-Ս, 18.07.2003 թվականի թիվ 31-Ս, 13.10.2003 թվականի թիվ 74-Ս, 13.10.2003 թվականի թիվ 75-Ս և 24.12.2003 թվականի 56-րդ դեցիմեդրային կապուղիով «Հուսարեր» ՓԲ ընկերությանը հաղթող ճանաչելու որոշումները կայացվել են Հանձնաժողովի կողմից, որը դրանց ընդունման պահի դրությամբ գործած իմքագրությամբ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի ուժով իրավասու է եղել ընդունելու այդպիսի վարչական ակտեր, ինչպես նաև պարզ է, թե ում են դրանք հասցեագրված և ինչ հարց են կարգավորում:

Նման պարագայում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարչական ակտն առ ոչինչ լինելու մյուս հիմքերը նույնպես բացակայում են»:

Վճռաբեկ դատարանը, վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի հետևությունների հիմնավորվածությանը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ընկերության կողմից 19.06.2020 թվականին միջնորդություն է ներկայացվել Դատարան «Հայցի առարկան և հիմքը լրացնելը թույլատրելու մասին»:

Դատարանը 16.03.2021 թվականի դատական նիստում կայացված որոշմամբ մերժել է հայցի հիմքը և առարկան լրացնելու մասին միջնորդությունը:

Ընկերությունը, բողոքարկելով Դատարանի 06.04.2021 թվականին կայացրած վճիռը, վերաքննիչ բողոքում ներառել է հետևյալ հիմքերը՝ մասնավորապես՝ 1) բողոքարկվել է հայցի հիմքը և առարկան լրացնելու միջնորդությունը մերժելու մասին 16.03.2021 թվականին դատական նիստում կայացված որոշումը, 2) Վարչական դատարանը սխալ է մեկնաբանել «Վարչարարության հիմքումքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածը, 3) Դատարանն անտեսել է այն դատավարական հետևանքները, որոնք առաջացել են պատասխանողի կողմից դատական նիստերին ներկա չլինելու, հայցադիմումի պատասխան չներկայացնելու, պատասխանողների կողմից Դատարան ապացույցներ չներկայացնելու հետևանքով:

Վերաքննիչ դատարանը, սակայն, սույն գործով 01.06.2022 թվականին կայացված որոշմամբ միայն անդրադարձ է կատարել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի կիրառելիությանը՝ քննության առարկա չդարձնելով վերաքննիչ բողոքում նշված մյուս հիմքերը:

Վերոգրյալ փաստական և իրավական հանգամանքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը պարտավոր էր անդրադառնալ վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերին և քննության առարկա դարձնել բողոք բերած անձի համապատասխան հիմնավորումները՝ որոշման պատճառաբանական մասում եզրահանգման գալով վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերի հիմնավոր կամ անհիմն լինելու վերաբերյալ: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, չանդրադառնալով վերաքննիչ բողոքում ներկայացված բոլոր հիմքերին և չներկայացնելով համապատասխան եզրահանգումներ՝ բողոքում ներկայացված հիմնավորումների վերաբերյալ, բողոքաբերին գրկել է իր նկատմամբ կայացված դատական ակտի լիարժեք վերանայման հնարավորությունից, ինչի արդյունքում այդ իրավունքը կրել է ձևական բնույթ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ բողոքն ըստ էության քննելու համար, և քննության առարկա չի դարձրել վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերը և հիմնավորումները: Արդյունքում Վերաքննիչ դատարանը 01.06.2022 թվականի որոշման մեջ ամբողջությամբ չի գնահատել բողոքում առաջադրված պահանջի հիմնավորվածությունը, և նման պայմաններում Վերաքննիչ դատարանի եզրահանգումը՝ բողոքում առաջադրված պահանջի հիմնավորվածության վերաբերյալ թերի է և ոչ ամբողջական:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու, վերաքննիչ բողոքը դրանում ներկայացված պահանջի սահմաններում ըստ էության քննելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու նպատակով սույն գործն անհրաժեշտ է ուղարկել Վերաքննիչ դատարան նոր քննության:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով երկրորդ հարցադրմանը, փաստում է հետևյալը.

Ընկերությունը, դիմելով Դատարան, խնդրել էր առ ոչինչ ճանաչել Հանձնաժողովի 11.06.2003 թվականի թիվ 18-Ա, 18.07.2003 թվականի թիվ 29-Ա, 18.07.2003 թվականի թիվ 30-Ա, 18.07.2003 թվականի թիվ 31-Ա, 13.10.2003 թվականի թիվ 74-Ա, 13.10.2003 թվականի թիվ 75-Ա և 24.12.2003 թվականի թիվ 56-րդ դեցիմետրային կապուղիով «Հուսաբեր» ՓԲ ընկերությանը հաղթող ճանաչելու որոշումները՝ իր պահանջի հիմքում դնելով իրավական և փաստական հիմնավորումներ առ այն, որ այդ որոշումներով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա ստացած ընկերություններին տրամադրվել է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք, քանի որ որոշումները պատճառաբանված ու հիմնավորված չեն, ընդունվել են խտրական հիմքով, և չկա որևէ ելակետային տվյալ այն մասին, թե ինչու են մերժվել Ընկերության՝ հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա ստանալու վերաբերյալ թվով 7 հայտերը:

Դատարանի 06.04.2021 թվականի վճռով Ընկերության հայցը մերժվել է նաև այն պատճառաբանությամբ, որ «(...) *վիճարկվող որոշումների պարճառաբանված և հիմնավորված չլինելը, խորրականության հիմքով ընդունված լինելը վերաբերում են բացառապես վիճարկվող Հեռուստաբերության և ոսդրոյի հանձնաժողովի 11.06.2003 թվականի թիվ 18-Ա, 18.07.2003 թվականի թիվ 31-Ա, 18.07.2003 թվականի թիվ 30-Ա, 18.07.2003 թվականի թիվ 29-Ա, 13.10.2003 թվականի թիվ 74-Ա, 13.10.2003 թվականի թիվ 75-Ա և 24.12.2003 թվականի թիվ 56 դեցիմետրային կապուղիով «Հուսաբեր» ՓԲ ընկերությանը հաղթող ճանաչելու (29.12.2003 թվականի թիվ 99-Ա*

որոշում) որոշումների անավարտության (ոչ իրավաչափ լինելու) հարցին, այսինքն՝ դրանք կարող են գնահատվել ոչ թե «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի, այլ նույն օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի տիրույթում՝ նշված վարչական ակտերն անավարտ անսաչելու կամ այլևս իրավաբանական ուժ չունենալու դեպքում, ոչ իրավաչափ անսաչելու վերաբերյալ հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում:

(...) վիճարկվող որոշումները չեն պարունակում ակնառու կոպիտ սխալներ ոչ միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի հիմքով, այլ նաև նույն մասում նշված մյուս (...) կետերի հիմքով»:

Վերաքննիչ դատարանը 01.06.2022 թվականին կայացված որոշմամբ, ըստ էության, վերհաստատել է Դատարանի կողմից արատահայտված վերոնշյալ դիրքորոշումը:

Վճռաբեկ դատարանը, գնահատելով սույն գործի փաստերը, արձանագրում է հետևյալը.

Ընկերությունը Հանձնաժողովի վերը նշված որոշումների առ ոչինչ լինելը պայմանավորել է նշված որոշումների պատճառաբանված ու հիմնավորված չլինելու, խտրական հիմքով ընդունված լինելու և հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզիա ստանալու վերաբերյալ Ընկերության հայտերի մերժման համար հիմք հանդիսացած ելակետային տվյալների բացակայության հանգամանքներով: Նշված փաստարկներն ու դրանց հիմնավորումները պահանջում են այդ վարչական ակտերի իրավաչափության հատուկ ընթացակարգով ստուգելու և գնահատելու անհրաժեշտություն, մասնավորապես՝ վիճարկվող որոշումների և անցկացված մրցույթների հիմքում ընկած փաստաթղթերի, ապացույցների, որոշակի հանգամանքների մանրամասն ուսումնասիրություն՝ պարզելով Հանձնաժողովի կողմից վիճելի իրավահարաբերության ժամանակահատվածում գործող իրավական նորմերի սխալ կիրառումը կամ դրանց սխալ մեկնաբանումը, այդ թվում՝ վիճարկվող որոշումների պատճառաբանված և հիմնավորված լինելու համատեքստում, ինչպես նաև վիճարկվող որոշումները Հանձնաժողովի կողմից խտրական հիմքով ընդունված լինելու համատեքստում, ինչն արդեն իսկ բացառում է դրանց առ ոչինչ լինելը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը հայցվորն ինքը պայմանավորել է ոչ թե ակնառու կոպիտ սխալներով, այլ այնպիսի հանգամանքներով, որոնց ազդեցությունը վարչական ակտի իրավաչափության վրա ելթակա են ստուգման և գնահատման հատուկ ընթացակարգով, ուստի ՀՀ սահմանադրական դատարանի 04.02.2014 թիվ ՍԴՈ-1137 որոշմամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում կայացված որոշումներում և սույն որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումների հաշվառմամբ այդ վարչական ակտերը չեն կարող դիտվել առոչինչ:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվորի կողմից վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու պահանջի հիմքում դրված հիմնավորումները վերաբերում են ոչ թե վարչական ակտն առ ոչինչ ճանաչելուն, այլ՝ դրանց ենթադրյալ անվավերությանը, քանի որ տվյալ դեպքում վարչական ակտով անձի վրա նույնիսկ «ոչ իրավաչափ» պարտականություն դնելը կամ անձին «ոչ իրավաչափ» իրավունք տրամադրելը կարող է պարզվել այդ վարչական ակտի վիճարկման վարույթում, որպիսի եզրահանգման իրավաչափորեն եկել է նաև Վերաքննիչ դատարանը:

Անդրադառնալով վարչական ակտն առ ոչինչ լինելու օրենքով նախատեսված մյուս հիմքերին՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ 11.06.2003 թվականի թիվ 18-Ա, 18.07.2003 թվականի թիվ 29-Ա, 18.07.2003 թվականի թիվ 30-Ա, 18.07.2003 թվականի թիվ 31-Ա, 13.10.2003 թվականի թիվ 74-Ա, 13.10.2003 թվականի թիվ 75-Ա և 24.12.2003 թվականի 56-րդ դեցիմետրային կապուղիով «Հուսաբեր» ՓԲ ընկերությանը հաղթող ճանաչելու որոշումները կայացվել են Հանձնաժողովի կողմից, որը դրանց ընդունման պահի դրությամբ գործած խմբագրությամբ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի ուժով իրավասու է եղել ընդունելու այդպիսի վարչական ակտեր, ինչպես նաև պարզ է, թե ում են դրանք հասցեագրված և ինչ հարց են կարգավորում: Հետևաբար տվյալ դեպքում բացակայում են նաև Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վարչական ակտն առ ոչինչ լինելու մյուս հիմքերը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ բեկանված մասով գործը համապատասխան ստորադաս դատարան նոր քննության ուղարկելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ որպես գործի նոր քննության ծավալ սահմանելով վերը նշված իրավական դիրքորոշումների և վերլուծությունների համատեքստում վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելը և դրանց հիման վրա գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.06.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ նոր քննության:
2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՊԱՐՏԱՎՈՐԵՑՄԱՆ ՀԱՅՑ**

**25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/2061/05/19  
2023թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/2061/05/19

Նախագահող դատավոր՝

Ա. Թովմասյան

Դատավորներ՝

Ք. Մկոյան

Ա. Առաքելյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող* Ռ. ՀԱԿՈՒԲՅԱՆ  
*զեկուցող* Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  
Լ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

2023 թվականի մարտի 16-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության վճռաբեկ բողոքները ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.03.2022 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Նարեկ Ղամբարյանի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին Նարեկ Ղամբարյանին սեփականության իրավունքով քնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հրաման ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Նարեկ Ղամբարյանը պահանջել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանն ընդունել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին Նարեկ Ղամբարյանին սեփականության իրավունքով քնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հրաման:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ա. Միրզոյան) (այսուհետ՝ Դատարան) 07.04.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է. վճռվել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանն ընդունել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին Նարեկ Բուրավետի Դամբարյանին բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հրաման:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.03.2022 թվականի որոշմամբ ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի 07.04.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոքներ են ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարությունը (ներկայացուցիչ՝ Արմեն Աղաբալյան) և ՀՀ ֆինանսների նախարարությունը (ներկայացուցիչ՝ Հայկ Հարությունյան):

Վճռաբեկ բողոքների պատասխան չի ներկայացվել:

**2. ՀՀ պաշտպանության նախարարության վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, 124-րդ հոդվածի 3-րդ մասը, չի կիրառել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասը, ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի «ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային սպասիովության մասին» թիվ 384-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի բնակարանային սպասիանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման, ՀՀ ՊՆ հաշվեկշռում գրանցող բնակարանները զինծառայողներին և օրենքով սահմանված նրանց ընտրանիքների անդամներին սեփականության իրավունքով տրամադրելու, տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու անհատույց պետական ֆինանսական աջակցությամբ սպասիովելու կարգի» 17.1, 17.2, 17.3 կետերը և 17.4 կետի 3-րդ ենթակետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրված 18.03.2019 թվականի գրությամբ ոչ թե մերժվել է հայցվորի դիմումը, այլ պարզապես տրամադրվել է տեղեկատվություն այն մասին, թե ինչ գործողություններ են կատարվում ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի թիվ 1535-Ն որոշման պահանջները կատարելու համար և ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ սահմանված կարգով հայցվորին բնակարանի գնման վկայագրի միջոցով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով: Այսինքն՝ նշված գրությամբ հայցվորի պահանջը չի մերժվել և վերջինիս իրավունքները չեն խախտվել, քանի որ հայցվորի նկատմամբ չի կայացվել անբարենպաստ վարչական ակտ:

Շեռնաբար՝ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի բացակայության պայմաններում հայցվորը Դատարան պարտավորեցման հայց ներկայացնել չէր կարող:



Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելի է դառնում միայն այն դեպքերում, երբ դա բարենպաստ է վարչական մարմնի դեմ հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար, իսկ երբ այն բարենպաստ չէ (վատթարացնող է), ապա կարելի է կիրառել իրավահարաբերությունների ծագման պահին գործող իրավական ակտերը: Նման մոտեցումն անթույլատրելի է և դատավարության մասնակիցներին, որի մի կողմը հանդիսանում է վարչական մարմինը դնում է անհավասար պայմանների մեջ: Տվյալ դեպքում աղավաղվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորման ինպերատիվ բնույթը:

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը չի նախատեսում որևէ իրավական կարգավորում, որի պարագայում հնարավոր կլինի շրջանցել նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:

Վերաքննիչ դատարանը նաև հաշվի չի առել, որ ՀՀ պաշտպանության նախարարությանը պարտավորեցնելով ընդունել բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հրաման, խախտվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված առաջնահերթությունը, քանի որ հայցվորը հանդիսանում է Երևան քաղաքի բնակիչ, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական բնակարանային հանձնաժողովի կողմից դեռևս չի լուծվել սահմանամերձ բնակավայրեր ունեցող և այլ մարզերի նախկին զինծառայողներին բնակարանի գնման վկայագիր տրամադրելու գործընթացը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.03.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ *«հայցն ամբողջությամբ մերժել կամ բեկանել և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարանն նոր քննության՝ սահմաններով նոր քննության ծավալները»:*

## **2.1. ՀՀ ֆինանսների նախարարության վճարելի բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճարելի բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, 124-րդ հոդվածի 3-րդ մասը, չի կիրառել ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» թիվ 384-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հաշվեկշռում գրանվող բնակարանները զինծառայողներին և օրենքով սահմանված նրանց ընդամենների անդամներին անհատույց օգտագործման կամ սեփականության իրավունքով տրամադրելու, տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցությամբ ապահովելու կարգի» 17.1, 17.2 և 17.3 կետերը, որոնք պետք է կիրառել:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարձառաքանել է հետևյալ փաստարկով.*

Վերաքննիչ դատարանը գտել է, որ ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշման մեջ կատարված լրացումով վատթարացվել է հայցվորի իրավական

վիճակը, հետևաբար այն հետադարձ ուժ ունենալ չի կարող և նշված խմբագրությանը չի կարող կիրառվել հայցվորի նկատմամբ: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ հայցվորի բնակարանային ապահովության իրավունքը ծագել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու հիմքով զինվորական ծառայությունից ազատվելու պահին, իսկ բնակարանային ապահովություն ստանալու իրավունքը ծագել է այդ իրավունքը իրացնելու համար դիմում ներկայացնելու պահին, իսկ տվյալ պահին գործող «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ կետը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունքի իրացման կարգը և պայմանները սահմանելու լիազորությունը վերապահել է ՀՀ կառավարությանը:

Վերաքննիչ դատարանը նաև անտեսել է, որ օրենսդիրը որպես աջակցություն սահմանել է երեք հնարավոր տարբերակներից որևէ մեկը: Այսինքն, մի դեպքում կարող էր տրամադրել բնակարան, որը կլուծեր շահառուի բնակարանային խնդիրը, տնամերձ հողատարածք, որը կպահանջեր լրացուցիչ ջանքեր շահառուի կողմից՝ բնակարանային խնդիրը լուծելու համար և բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն, որը չի ենթադրում բնակարանի ձեռք բերում, քանի որ «աջակցություն» բառն արդեն իսկ ենթադրում է շահառուին օժանդակելու կամ գործակցելու մասին: Հետևաբար «բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն» հասկացությունը չի կարող ընկալվել որպես պետության վրա դրված բնակարան տրամադրելու իմպերատիվ պահանջ:

Այլ կերպ ասած՝ հայցվորի իրավական ակնկալիքը կարող էր ծագել միայն ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշմամբ արտացոլված համապատասխան գործիքակազմի և բնակարանային ապահովություն ստանալու իրավունքի միաժամանակյա առկայության դեպքում:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 16.03.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցն ամբողջությամբ մերժել:

### **3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

**Վճռաբեկ բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.**

1) Նարեկ Ղամբարյանի ներկայացուցիչ Նորիկ Նորիկյանը 14.02.2019 թվականի թիվ 044/19 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարար Դ. Տոնոյանին՝ հայտնելով, որ Նարեկ Բուրավետի Ղամբարյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու հիմքով արձակվել է զինված ուժերից և հաշվառվել է պահեստագործում: Վերջինս ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված մի շարք որոշումներով սահմանված կարգով նշված իրավական ակտերի պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետներում հաշվառվել է որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների հերթացուցակում: Ինչպես զինվորական ծառայության ընթացքում, այնպես էլ ՀՀ զինված ուժերից արձակվելուց հետո Նարեկ Ղամբարյանին մինչև օրս ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին

սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն չի տրամադրվել: Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ խնդրել է նշված գրությունն ընդունել որպես հիմք և Նարեկ Բուրավետի Ղամբարյանին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրել սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն (**հատոր 1-ին, գ.թ. 8-9**):

2) Ի պատասխան Նարեկ Ղամբարյանի ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումի՝ ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի կողմից տրված 18.03.2019 թվականի թիվ ՊՆ/510-ԱՂ-264 գրությամբ հայտնվել է, որ «(...) Նարեկ Ղամբարյանը արձակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքով, զինվորական ծառայության ընթացքում հաշվառված է եղել որպես բնակարանային ապահովության իրավունք ունեցող զինծառայող, զինվորական ծառայության ընթացքում նրան չի տրամադրվել անհատույց սեփականության իրավունքով բնակարան կամ անհատույց պետական ֆինանսական աջակցություն կամ տնամերձ հողամաս, որի հիման վրա զինվորական ծառայությունից արձակվելուց հետո նա պահպանել է հաշվառման մեջ գրնվելու իրավունքը՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասի ու ՀՀ կառավարության 2007թ. մարտի 7-ի N 384-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջների համաձայն:

Հայրնում եմ նաև, որ ՀՀ զինված ուժերի գոյության ընթացքում առաջին անգամ՝ երկարամյա ծառայության կամ տարիքի կամ առողջական վիճակի պարճառով զինվորական ծառայությունից արձակված նախկին զինծառայողների բնակարանային ապահովության իրավունքի իրացման շրջանակներում անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով, ՀՀ կառավարության 27.12.2018թ. N 1535-Ն որոշմամբ ՀՀ պաշտպանության նախարարությանը հարկացվել է 5,705 մլրդ դրամ: Նշված որոշման պահանջների համաձայն՝ անհատույց պետական ֆինանսական աջակցությունը տրամադրվելու է բնակարանի գնման վկայագրի միջոցով, իսկ քանի որ ՀՀ կառավարության 07.03.2007թ. որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլուխը չէր նախատեսում բնակարանի գնման վկայագրերի հարկացման ընթացակարգ՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը հանձնարարվել է մշակել և ներկայացնել ՀՀ կառավարության 07.03.2007թ. N 384-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծ:

Հանձնարարականի համաձայն նախագիծը մշակվել և ներկայացվել է շահագրգիռ պետական մարմինների քննարկմանը, ինչպես նաև տեղադրվել է իրավական ակտերի հանրային քննարկման համար նախատեսված միասնական կայքում, սրացված առաջարկությունների հիման վրա լրանշակված որոշման նախագիծը ներկայումս ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական-իրավական փորձաքննությանը, որի վերաբերյալ եզրակացությունը սրացվելուց հետո նախագիծը կներկայացվի ՀՀ կառավարություն և ընդունումից հետո 2019-2020թթ. ընթացքում սահմանված կարգով կիրականացվի համապատասխան շահառուներին բնակարանի գնման վկայագրերի միջոցով անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացը» (**հատոր 2-րդ, գ.թ. 75-76**):

#### **4. Վճարել նատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքներում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում.*

*ա) անդրադառնալ պարտավորեցման հայցի նախապայման հանդիսացող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժող միջամտող վարչական ակտի գնահատման առանձնահատկություններին,*

*բ) որոշել պարտավորեցման հայցի հիման վրա հարուցված գործերով կիրառելի օրենսդրությունն այն դեպքերում, երբ դատական ակտի կայացման պահին գործող օրենքները և այլ իրավական ակտերը վատթարացնում են անձի իրավական վիճակը՝ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքների և այլ իրավական ակտերի համեմատ:*

ա) Վճռաբեկ դատարանը, սույն գործով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական իր առաքելությունն իրացնելու անհրաժեշտությունից ելնելով, հարկ է համարում անդրադառնալ պարտավորեցման հայցի քննության պարագայում հայց ներկայացնելու համար նախապայման հանդիսացող միջամտող վարչական ակտի որակման հարցին և դատական ակտ կայացնելու առանձնահատկություններին:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել

անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեն Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրել է, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, մինչև նույն ժամանակ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանելով հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված պարտավորեցման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում փաստել է, որ **պարտավորեցման հայց ներկայացնելու համար օրենսդրի կողմից սահմանվել է պարտադիր պահանջ, համաձայն որի՝ դատարան դիմելու համար անհրաժեշտ է վեճի առկայություն, որը կարող է լինել այն դեպքում, երբ անձը համապատասխան պահանջով դիմել է վարչական մարմնին:** Այսինքն՝ պարտավորեցման հայցը ՀՀ վարչական դատարան ներկայացնելուց առաջ անհրաժեշտ է, որ անձը համապատասխան ակնկալվող բարենպաստ վարչական ակտն ընդունելու պահանջով դիմած լինի համապատասխան վարչական մարմնին (*Կրես, Նազելի Նահաբակյանը և Գրիշա Չառմյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎՆ/4571/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.08.2019 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ անդրադառնալով պարտավորեցման հայցի էությանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ **պարտավորեցման հայց ներկայացնելու համար նախապայման է հանդիսանում բարենպաստ վարչական ակտի ընդունումը վարչական մարմնի կողմից մերժելու հանգամանքը:** Ընդ որում, պարտավորեցման հայցը, բարենպաստ վարչական ակտն ընդունելու պահանջից բացի, օրենքի ուժով իր մեջ ներառում է նաև վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջը՝ անկախ հայցվորի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու հանգամանքից: Օրենսդրի կողմից նման պայմանի սահմանումը բխում է վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից այնքանով, որքանով անձը չի կարող հայցել իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունում, քանի դեռ այդպիսի ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտն օրենքով սահմանված կարգով վերացված

չէ: Ըստ այդմ, օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորեցման հայցի քննության արդյունքներով գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս հայցը բավարարելու դեպքում վարչական դատարանը վարչական մարմնին բարենպաստ վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու հետ մեկտեղ պետք է անվավեր ճանաչի վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը:

Միննույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ պարտավորեցման հայցի բուն նպատակը անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է: Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե վարչական դատարանը ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հաստատված է համարում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, վերջինս պետք է կայացնի հայցը բավարարելու վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ անվավեր ճանաչելով վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը և պարտավորեցնելով վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը: Այլ կերպ՝ վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի իրավաչափությունը պարտավորեցման հայցի շրջանակներում չի քննվում վիճարկման հայցի քննության համար սահմանված կարգով, և ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը հաստատվելն ինքնին հանգեցնում է վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի անվավերության *(տե՛ս, Կարեն Սարգսրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ **պարտավորեցման հայց ներկայացնելու համար օրենսդրի կողմից սահմանված պարտադիր պահանջը հանգում է նրան, որ դատարան դիմելու համար անհրաժեշտ է վեճի առկայություն, որը կարող է լինել այն դեպքում, երբ անձը համապատասխան պահանջով դիմել է վարչական մարմնին և վերջինս մերժել է հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը:** Ընդ որում, պարտավորեցման հայցը ներառում է նաև հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջը: Այլ կերպ ասած, անձի մոտ կարող է ծագել պարտավորեցման հայց ներկայացնելու իրավունքը միայն այն դեպքում, երբ նա դիմել է վարչական մարմնին՝ հայցելով բարենպաստ վարչական ակտի ընդունում, սակայն վարչական մարմինը մերժել է դրա ընդունումը: Հակառակ պարագայում, այն է՝ վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին որոշում, այսինքն՝ միջամտող վարչական ակտ կայացված չլինելու դեպքում անձի մոտ չի ծագում պարտավորեցման հայց ներկայացնելու իրավունքը, իսկ գոյություն չունեցող «վեճը» ենթակա չէ դատարանի քննությանը *(տե՛ս, «Էմբիդիոյան» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/2598/05/21 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.08.2022 թվականի որոշումը):*

Վերահաստատելով և զարգացնելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ

պարտավորեցման հայցի ներկայացման համար անհրաժեշտ նախապայման հանդիսացող՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի տրամադրման վերաբերյալ դիմումին ուղղված վարչական մարմնի պատասխանը որպես միջամտող վարչական ակտ որակելու հարցին:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժող միջամտող վարչական ակտի՝ անձանց իրավունքների իրականացումը մերժելու, միջամտելու, սահմանափակելու հատկանիշի առկայությունը կարող է դրսևորվել թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի եղանակով: Այլ կերպ ասած՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժող միջամտող վարչական ակտի՝ անձանց իրավունքների իրականացումը մերժելու, միջամտելու, սահմանափակելու հատկանիշի առկայությունը չի կարող պայմանավորված լինել բացառապես անձի դիմումի առնչությամբ վարչական մարմնի տված պատասխանագրությունում հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին ուղղակիորեն նշում կատարված լինելու փաստով, այն դեպքում, երբ այդ իրավունքի տրամադրման մերժումն անմիջականորեն բխում է այդ փաստաթղթի բովանդակությունից: Այսինքն՝ այն դեպքերում, երբ հայցվող բարենպաստ վարչական ակտ ընդունելուն ուղղված դիմումին ի պատասխան տրված գրությունն ուղղակիորեն չի պարունակում դրույթներ՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին, սակայն բովանդակային վերլուծությունը վկայում է հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունման մերժման մասին, կարող է որակվել որպես միջամտող վարչական ակտ:

Այդուհանդերձ՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ վարչական մարմնի կողմից հայցվող բարենպաստ վարչական ակտի տրամադրումը մերժված լինելու հանգամանքի գնահատումը յուրաքանչյուր դեպքում պայմանավորված է խնդրո առարկա վիճելի իրավահարաբերության բնույթով, տվյալ գործի փաստական հանգամանքներով, կիրառելի իրավական նորմերով և այլն: Հետևաբար՝ յուրաքանչյուր դեպքում պարտավորեցման հայց ներկայացնելու՝ քննարկվող իրավական նախադրյալի առկայությունը դատարանը պետք է գնահատի տվյալ գործի առանձնահատկությունների հաշվառմամբ և ներքին համոզմամբ:

բ) Սույն որոշմամբ առաջադրված երկրորդ հարցադրման շրջանակներում՝ Վճռաբեկ դատարանը, որպես օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովող սահմանադրական մարմին, հարկ է համարում անդրադառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտով լուծման ենթակա հարցերը» վերառույթյալ 124-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «հայցվող բարենպաստ վարչական ակտի (...) իրավաչափությունը որոշվում է (...) **դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա**» կանոնի կիրառման առանձնահատկություններին:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ անձի սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից ոչ միայն կարևոր նշանակություն ունի պարտավորեցման հայցի հարուցման թույլատրելիության նախապայմանների բավարարումը, այլև՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով լուծման ենթակա հարցերի շրջանակի հստակեցումը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հայցի տեսակներով է պայմանավորում հայց ներկայացնելու ժամկետները, ապացուցման բեռը, հայցի ապահովման միջոցները, **ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտով լուծման ենթակա հարցերի շրջանակը**

(*տե՛ս, Շուշանիկ Վարդանյանը, Թորոս Վարդանյանը և Արարատ Խառատյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/10875/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.11.2022 թվականի որոշումը*):

Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝

1) գնահատում է ապացույցները.

2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել, և որոնք չեն պարզվել.

**3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեն տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն.**

4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի, ինչպես նաև հայցվող գործողության կամ դրանից ձեռնպահ մնալու իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և **դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը հայցը բավարարելու դեպքում կայացնում է գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և **վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը պարտավորեցնելու մասին:**

Հիմք ընդունելով վերը նշված իրակական նորմերը և պարտավորեցման հայցի կապակցությամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը նախնառաջ հարկ է համարում արձանագրել, որ յուրաքանչյուր գործով գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս վճռորոշ նշանակություն ունի այն հարցը, թե որո՞նք են **տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը**, ինչպես նաև այն իրավական ակտերը, որոնք պետք է կիրառվեն տվյալ գործով, սակայն օրենքին հակասելու պատճառով կիրառման ենթակա չեն: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վարչական դատարանը պարտավոր է դատական ակտում արտացոլել ոչ միայն ապացույցների գնահատման և փաստերի հաստատման, այլ նաև իրավունքի կիրառման կապակցությամբ իր դատողությունների ընթացքը: Դատական ակտը շարադրելիս վարչական դատարանը չի կարող բավարարվել բացառապես կիրառելի իրավունքի նորմերի վրա հղումներ կատարելով և յուրաքանչյուր դեպքում պարտավոր է բացահայտել կիրառելի իրավական նորմերի բովանդակությունը, իսկ այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում ծագել է վեճ՝ կիրառման ենթակա նորմի վերաբերյալ, դատական ակտում պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ վճռի պատշաճ իրավական հիմնավորումը ընդգծում է դատական գործունեության և դատական վճռի օրինականությունը:



Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը սահմանել է գործն ըստ էության լուծող դատական ակտով լուծման ենթակա հարցերի առկայությամբ որոշակի առանձնահատկություններ՝ վարչադատավարական օրենսդրությամբ նախատեսված հայցատեսակների բնույթով պայմանավորված: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր հայցատեսակի քննության համար օրենսդիրը նախատեսել է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքների և այլ իրավական ակտերի վերաբերյալ որոշակի կանոններ: Այսպես՝ պարտավորեցման հայցի դեպքում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման դրությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա՝ համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա որոշելու ընդհանուր կանոնի բովանդակությունն անմիջականորեն բխում է պարտավորեցման հայցի էությունից և տրամաբանությունից, որը հանգում է հետևյալին. այն դեպքերում, երբ վարչական մարմինը մերժում է որոշակի բովանդակությամբ վարչական ակտ ընդունելու անձի պահանջը, վերջինս ձեռք է բերում հայցվող բարենպաստ վարչական ակտն ընդունելու սուբյեկտիվ հանրային պահանջի իրավունք, որը կարող է իրացնել պարտավորեցման հայցի շրջանակներում: Այսինքն՝ պարտավորեցման հայցի շրջանակներում անձը ներկայացնում է իր կողմից ներկայացված դիմումով հայցվող բարենպաստ վարչական ակտն ընդունելու հարցը քննարկելու պահանջ, որպիսի պահանջի հիմնավորված լինելու դեպքում դատարանը պարտավորեցնում է վարչական մարմնին այդ վարչական ակտն ընդունել: Այսինքն՝ վարչական մարմնի վրա պարտավորություն է դրվում ընդունելու հայցվող բարենպաստ վարչական ակտը, իսկ վարչական մարմնին իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վերոգրյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «հայցվող բարենպաստ վարչական ակտի (...) իրավաչափությունը որոշվում է (...) **դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա**» դրույթը միտված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված օրինականության սկզբունքը: Այդուհանդերձ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված կանոնը բացարձակ չէ և գործնականում չեն բացառվում դեպքերը, երբ տվյալ գործով կիրառելի օրենքները և նորմատիվ իրավական ակտերը փոփոխվում են մինչև դատական ակտի կայացման պահը՝ սահմանելով անձի վիճակը վատթարացնող նորմեր այն պահի համեմատությամբ, երբ անձի մոտ ծագել է հայցվող իրավունքը:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը, իրացնելով օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական իր առաքելությունը, հարկ է համարում անդրադառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա որոշելու կանոնի կիրառելիությանը այն դեպքերում, երբ դատական ակտի կայացման պահին գործող օրենքները վատթարացնում են անձի վիճակը՝ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքների համեմատ:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 73-րդ հոդվածին համապատասխան՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն, իսկ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Անդրադառնալով իրավական ակտերի հետադարձ ուժի խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանը 29.11.2011 թվականի թիվ ՍԴՈ-1000 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից:

ՀՀ սահմանադրական դատարանը իր թիվ ՍԴՈ-649, թիվ ՍԴՈ-723, թիվ ՍԴՈ-758, թիվ ՍԴՈ-881 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներում բազմիցս արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը, կարևորելով, որ «(...) անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է սպասհովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը», և որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը «(...) հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վարահովության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրարարներից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի սպասհովելման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից

քիտում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև սրանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով»:

ՀՀ սահմանադրական դատարանը նաև թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ գտել է, որ անհրաժեշտ է, որ համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ անձի հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունքի պաշտպանության տեսանկյունից ելակետային նշանակություն ունի անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը: Ընդ որում, այս արգելքը վերաբերում է ոչ միայն նյութական իրավունքի նորմերին, այլ նաև՝ ընթացակարգային նորմերին, որոնք կարող են որևէ կերպ վատթարացնել անձի իրավական վիճակը: Հետևաբար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված իրավական կարգավորումները ենթակա են մեկնաբանման ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի անմիջական գործողություն ունեցող նորմի լույսի ներքո:

Այսինքն՝ պարտավորեցման հայցի քննության դեպքում, երբ մինչև դատական ակտի կայացումը կիրառելի օրենքները փոփոխվում են՝ վատթարացնելով անձի վիճակը իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքների համեմատ, վարչական դատարանը պարտավոր է ղեկավարվել ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածով ամրագրված անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիության կանոնով և կիրառել իրավահարաբերության ծագման պահին գործող՝ անձի համար առավել բարենպաստ օրենքները և այլ իրավական ակտերը: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ նշված դիրքորոշումը նպատակ է հետապնդում անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել իրավական որոշակիության սկզբունքի ապահովման, օրենսդրության նկատմամբ լեզիտիմ ակնկալիքների պահպանման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման և մարդու իրավունքների երաշխավորման համար:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ 14.02.2019 թվականին ՀՀ պաշտպանության նախարարին ուղղված գրությամբ Նարեկ Ղամբարյանի ներկայացուցիչ Ն. Նորիկյանը խնդրել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին Նարեկ Ղամբարյանին տրամադրել սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն:

Ի պատասխան Նարեկ Ղամբարյանի ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումի՝ ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի կողմից տրվել է 18.03.2019 թվականի թիվ ՊՆ/510-ԱԳ-264 գրությունը, որով հայտնվել է, որ Նարեկ Ղամբարյանն արձակվել է երկարամյա ծառայության զինվորական

կենսաթոշակի իրավունքով, գինվորական ծառայության ընթացքում հաշվառված է եղել որպես բնակարանային ապահովության իրավունք ունեցող գինծառայող, գինվորական ծառայության ընթացքում նրան չի տրամադրվել անհատույց սեփականության իրավունքով բնակարան կամ անհատույց պետական ֆինանսական աջակցություն կամ տնամերձ հողամաս, որի հիման վրա գինվորական ծառայությունից արձակվելուց հետո նա պահպանել է հաշվառման մեջ գտնվելու իրավունքը՝ «Զինվորական ծառայության և գինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասի ու ՀՀ կառավարության 07.03.2007 թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջների համաձայն: Մինևույն ժամանակ տեղեկացվել է, որ ՀՀ գինված ուժերի գոյության ընթացքում առաջին անգամ՝ երկարամյա ծառայության կամ տարիքի կամ առողջական վիճակի պատճառով գինվորական ծառայությունից արձակված նախկին գինծառայողների բնակարանային ապահովության իրավունքի իրացման շրջանակներում անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու նպատակով, ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի թիվ 1535-Ն որոշմամբ ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացվել է 5,705 մլրդ դրամ: Նշված որոշման պահանջների համաձայն՝ անհատույց պետական ֆինանսական աջակցությունը տրամադրվելու է բնակարանի գնման վկայագրի միջոցով, իսկ քանի որ ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլուխը չէր նախատեսում բնակարանի գնման վկայագրերի հատկացման ընթացակարգ՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը հանձնարարվել է մշակել և ներկայացնել ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծ:

Սույն գործով Նարեկ Ղամբարյանի կողմից ի սկզբանե ներկայացվել է գործողության կատարման հայց, որով վերջինս պահանջել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը կատարելու որոշակի գործողություններ, այն է՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին Նարեկ Ղամբարյանին սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հրաման:

Այնուհետև՝ 18.09.2019 թվականին կայացված դատական նիստի ընթացքում հայցվորի ներկայացուցիչը խնդրել է փոփոխել հայցի առարկան և ընդունել հետևյալ պահանջը՝ պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանն ընդունել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին Նարեկ Ղամբարյանին սեփականության իրավունքով բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հրաման:

**Դատարանը** 07.04.2021 թվականի վճռով բավարարել է Նարեկ Ղամբարյանի հայցը՝ պատճառաբանելով, որ «*«Զինվորական ծառայության և գինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի մինչև 20.06.2019թ. խմբագրությամբ գործած 73-րդ հոդվածի 7-րդ մասի և 20.06.2019թ. ուժի մեջ մտնող 40-57-Ն օրենքով փոփոխված ներկայումս գործող խմբագրությամբ 73-րդ հոդվածի 7-րդ մասի բովանդակության համեմատական ուսումնասիրության արդյունքում դատարանն արձանագրում է, որ 40-57-Ն օրենքով կատարված փոփոխությամբ՝ նշված նորմով նախատեսված սուբյեկտների համար երաշխավորված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին սեփականության իրավունքով անհատույց բնակարան արանապու իրավունքը փոխարինվել է Հայաստանի Հանրապետության պետական*

բյուջեի միջոցների հաշվին բնակարանային պայմանների բարելավումն սրանապու հրավումքը:

(...) Վերը նշված իրավական ակտերի վերնագրերից ու բովանդակությունից, ինչպես նաև «բարելավում» եզրույթի բովանդակությունից բխում է, որ բնակարանային պայմանների բարելավումն սրանապու հրավումքը շատ ավելի նեղ հրավումք է, քան անհատույց բնակարան սրանապու հրավումքը: (...)

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասի նորմը մեկնաբանելով ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի անմիջական գործողություն ունեցող նորմի լույսի ներքո՝ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ դատական ակտի կայացման պահին գործող օրենքները /այլ իրավական ակտերը/ վարթարացնում են անձի իրավական վիճակը՝ ի համեմատ այն օրենքների /այլ իրավական ակտերի/, որոնք գործել են մինչև փյույվ անձի կողմից դատական պաշտպանություն հայցելը, սպա կիրառելի են մինչև վարթարացնող օրենքների /այլ իրավական ակտերի/ ուժի մեջ մտնելը գործած՝ անձի համար բարենպաստ օրենքները /իրավական ակտերը/:

(...) Հաշվի առնելով, որ ինչպես «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասը՝ ներկայումս գործող խմբագրությամբ, այնպես էլ ՀՀ կառավարության թիվ 540-Ն որոշմամբ ՀՀ կառավարության թիվ 384-Ն որոշման հավելվածում տեղ գրած 17.3-րդ կետի 1-ին ենթակետի նորմը վարթարացրել են հայցվորի իրավական վիճակը, և սույն գործի փաստական հանգամանքների նկարմամբ կիրառելով դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումներն ու եզրահանգումները՝ դատարանը գրնում է, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասը՝ ներկայումս գործող խմբագրությամբ և ՀՀ կառավարության թիվ 540-Ն որոշմամբ ՀՀ կառավարության թիվ 384-Ն որոշման հավելվածում տեղ գրած 17.3-րդ կետի 1-ին ենթակետի նորմը՝ որպես հայցվորի իրավական վիճակը վարթարացնող նորմեր, ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի անմիջական գործողության ուժով հայցվորի նկարմամբ կիրառելի չեն: Ըստ այդմ՝ հայցվորի նկարմամբ կիրառելի են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասը՝ մինչև 20.06.2019թ. գործած խմբագրությամբ և ՀՀ կառավարության 384-Ն որոշման հավելվածի 17-րդ կետը՝ մինչև 01.06.2019թ. գործած խմբագրությամբ: Այս իրավակարգավորումների կիրառմամբ դատարանը եզրահանգում է, որ հայցվորը պահպանել է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական սպասողության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով երաշխավորված՝ բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն սրանապու իր հրավումքը, և հայցվորին Երևան քաղաքում բնակարանի ձեռքբերման նպատակով փրամադրվող անհատույց պետական ֆինանսական աջակցության չափը հաշվարկելիս հիմք պետք է ընդունվի Երևան քաղաքում թաղային համայնքների վարչական սահմաններում գրնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին արժեքների թվաբանական միջինը»:

**Վերաքննիչ դատարանի 16.03.2022 թվականի որոշմամբ** ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության վերաքննիչ բողոքները մերժվել են, և Դատարանի վճիռը թողնվել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանը, իրավական գնահատական տալով ՀՀ պաշտպանության նախարարության 18.03.2019 թվականի թիվ ՊՆ/510-ԱԳ-264 գրությամբ, գտել է, որ այն միջամտող վարչական ակտ է, և սույն գործով պարտավորեցման հայց ներկայացնելու

իրավական նախադրյալի (վարչական մարմնի կողմից բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու) առկայությունը հաստատված է:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ սույն դեպքում Նարեկ Դամբարյանի 14.02.2019 թվականի թիվ 037/19 գրության հիման վրա հարուցվել է վերջինիս՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ վարչական վարույթ, որի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարությունը պարտավոր էր ընդունել վարույթը եզրափակող վարչական ակտ:

Մինչև սույն ժամանակ Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ զինվորական ծառայությունից արձակվելուց հետո հայցվոր Նարեկ Դամբարյանը պահպանել է հաշվառման մեջ գտնվելու իրավունքը՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասի ու ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջների համաձայն և նշված փաստերը վերստին ապացուցման կարիք չունեն:

Այնուհետև՝ Վերաքննիչ դատարանն անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք հայցվորի նկատմամբ կիրառելի է ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշմամբ ուժը կորցրած ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետը, արձանագրել է, որ ՀՀ կառավարության թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ կետի 1-ին ենթակետի (մինչև 01.06.2019 թվականը գործած խմբագրությամբ) և ՀՀ կառավարության 540-Ն որոշմամբ լրացված 17.3-րդ կետի 1-ին ենթակետի համեմատական վերլուծությունը վկայում է, որ ՀՀ կառավարության թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ կետը՝ մինչև 01.06.2019 թվականը ուժի մեջ մտած փոփոխությունը գործած խմբագրությամբ, Երևան քաղաքում բնակարանների ձեռքբերման նպատակով զինծառայողներին տրամադրվող անհատույց պետական ֆինանսական աջակցության չափը հաշվարկելիս հիմք էր ընդունում թաղային համայնքների վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին արժեքների թվաբանական միջինը, մինչդեռ, 01.06.2019 թվականի ուժի մեջ մտած փոփոխությամբ հիմք է ընդունվում թվաբանական միջինի 50 տոկոսը: Այսինքն, ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշմամբ Կարգում լրացված 17.3-րդ կետը, ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ կետի համեմատությամբ, նախատեսում է հայցվորի իրավական վիճակը վատթարացնող նորմ:

Վերոգրյալի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ հայցվորի նկատմամբ ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշումը կիրառելի չէ: Սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ կետը, քանի որ ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշմամբ Կարգում լրացված 17.3-րդ կետը, ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ կետի համեմատությամբ, նախատեսում է հայցվորի իրավական վիճակը վատթարացնող նորմ, ուստի դրան հետադարձ ուժ տալը և այն դրա ընդունումից առաջ ծագած հարաբերությունների վրա տարածելը, ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, անթույլատրելի է:

Սույն որոշմամբ հայտնաձևված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով հայցվոր Նարեկ Ղամբարյանը ՀՀ պաշտպանության նախարար Դ. Տոնոյանին ուղղված 14.02.2019 թվականի գրությամբ հայցել է բարենպաստ վարչական ակտի ընդունում, այն է՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին Նարեկ Ղամբարյանին տրամադրել սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ վարչական ակտ: Նշված դիմումին ի պատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի թիվ ՊՆ/510-ԱԳ-264 գրությամբ նշվել է, որ Նարեկ Ղամբարյանը զինվորական ծառայությունից արձակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքով, զինվորական ծառայության ընթացքում հաշվառված է եղել որպես բնակարանային ապահովության իրավունք ունեցող զինծառայող, զինվորական ծառայության ընթացքում նրան չի տրամադրվել անհատույց սեփականության իրավունքով բնակարան կամ անհատույց պետական ֆինանսական աջակցություն կամ տնամերձ հողամաս, որի հիման վրա զինվորական ծառայությունից արձակվելուց հետո նա պահպանել է հաշվառման մեջ գտնվելու իրավունքը՝ «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասի ու ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջների համաձայն:

Միաժամանակ հայտնվել է, որ ՀՀ կառավարության 27.12.2018 թվականի թիվ 1535-Ն որոշմամբ ՀՀ պաշտպանության նախարարությանը հատկացվել է 5.705 մլրդ դրամ: Նշված որոշման պահանջների համաձայն՝ անհատույց պետական ֆինանսական աջակցությունը տրամադրվելու է բնակարանի գնման վկայագրերի միջոցով, իսկ քանի որ ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլուխը (17-րդ կետ) չէր նախատեսում բնակարանի գնման վկայագրերի հատկացման ընթացակարգ՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը հանձնարարվել է մշակել և ներկայացնել ՀՀ կառավարության 03.07.2007 թվականի (իրականում՝ 07.03.2007 թվականի) թիվ 384-Ն որոշման մեջ անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծ: Հանձնարարականի համաձայն նախագիծը մշակվել և ներկայացվել է շահագրգիռ պետական մարմինների քննարկմանը ստացված առաջարկությունների հիման վրա լրամշակված որոշման նախագիծը ներկայումս ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական-իրավական փորձաքննությանը, որի վերաբերյալ եզրակացությունը ստացվելուց հետո նախագիծը կներկայացվի ՀՀ կառավարություն և ընդունումից հետո 2019-2020 թվականների ընթացքում սահմանված կարգով կիրականացվի համապատասխան շահառուներին բնակարանի գնման վկայագրերի միջոցով անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացը:

*Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը նախատեսջ հարկ է համարում անդրադառնալ այն հարցադրմանը, թե արդյո՞ք սույն դեպքում սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ դիմումին ի պատասխան տրված ՀՀ պաշտպանության նախարարության 18.03.2019 թվականի թիվ ՊՆ/510-ԱԳ-264 գրությունը միջամերող վարչական ակտ է:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: (...)

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի իմաստով՝

ա) **բարենպաստ վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

բ) **միջամտող վարչական ակտն** այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը: (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ առանձնահատուկ ուշադրության է արժանացրել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածում ամրագրված իրավակարգավորումները և արձանագրել է, որ որպես վարչական ակտին բնորոշող հատկանիշներ անհրաժեշտ է դիտարկել հետևյալները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առկալող կոնկրետ հարցի կարգավորմանը,



6) վարչական ակտն առաջացնում է ուղղակի իրավական հետևանքներ կամ ուղղված (միտված) է այդ հետևանքների առաջացմանը վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, դրանով վարչական մարմինը վերջիններիս համար սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև նրանց տրամադրում է իրավունքներ կամ ստեղծում է այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, կամ մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է նրանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն է դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը (լրեն, «Էյ Քեյ Էյ Ջի» ՄՊԸ-ի տնօրեն Արբեն Դուլյանն ընդդեմ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի թիվ ՎԳ/11082/05/20 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 17.12.2021 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով ՀՀ պաշտպանության նախարարության 18.03.2019 թվականի թիվ ՊՆ/510-ԱՂ-264 գրությունը՝ Վճարելի դատարանն արձանագրում է, որ այն միջամտող վարչական ակտ է, քանի որ համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածում նախատեսված՝ միջամտող վարչական ակտի հասկացության սահմանմանը: Այսպես՝

- ՀՀ պաշտպանության նախարարության 18.03.2019 թվականի թիվ ՊՆ/510-ԱՂ-264 գրությունն անհատական ակտ է, որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված հասցեատերերի համար, որոնց թվում է նաև Նարեկ Ղամբարյանը,

- ՀՀ պաշտպանության նախարարության 18.03.2019 թվականի թիվ ՊՆ/510-ԱՂ-264 գրությունն ընդունվել է վարչական մարմնի՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից,

- ՀՀ պաշտպանության նախարարության 18.03.2019 թվականի թիվ ՊՆ/510-ԱՂ-264 գրությունն ունի արտաքին ներգործություն, քանի որ առնչվում է Նարեկ Ղամբարյանին, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ, այսինքն՝ կարգավորում է վարչական մարմնի և ֆիզիկական անձի միջև ծագած իրավահարաբերությունները,

- ՀՀ պաշտպանության նախարարության 18.03.2019 թվականի թիվ ՊՆ/510-ԱՂ-264 ակտն ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում, քանի որ այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի, այն է՝ ՀՀ պաշտպանության նախարարության կատարված միակողմանի կարգադրություն է ուղղված ֆիզիկական անձանց, որոնց թվում է Նարեկ Ղամբարյանը,

- ՀՀ պաշտպանության նախարարության 18.03.2019 թվականի թիվ ՊՆ/510-ԱՂ-264 գրությունն ընդունվել է կոնկրետ գործի կարգավորման նպատակով, այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձի՝ Նարեկ Ղամբարյանին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը, այն է՝ սեփականության իրավունքով անհատույց

բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու հարցի լուծմանը,

- ՀՀ պաշտպանության նախարարության 18.03.2019 թվականի թիվ ՊՆ/510-ԱԳ-264 գրությունը ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող Նարեկ Ղամբարյանի համար: Տվյալ դեպքում հայցվոր Նարեկ Ղամբարյանի կողմից 14.02.2019 թվականի գրությամբ հայցվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրեն սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտի ընդունում, այսինքն՝ վերջինիս կողմից ակնկալվող իրավունքը՝ սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն ստանալն է, մինչդեռ ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի թիվ ՊՆ/510-ԱԳ-264 պատասխան գրությամբ հայտնվել է, որ կտրամադրվի բնակարանի գնման վկայագիր: Ավելին՝ նշված գրությամբ վերջինիս հայտնվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը մշակել և ներկայացրել է ՀՀ կառավարության 03.07.2007 թվականի թիվ 384-Ն որոշման մեջ անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծ գնման վկայագրերի հատկացման ընթացակարգի նախատեսման վերաբերյալ, որն ակնհայտորեն վատթարացնում է խնդրո առարկա վարչական ակտի հասցեատերերի իրական և փաստական դրությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի թիվ ՊՆ/510-ԱԳ-264 գրության բովանդակությունից ակնհայտ է հայցվոր Նարեկ Ղամբարյանի կողմից ակնկալվող իրավունքի տրամադրման մերժումը, քանի որ նույնիսկ բնակարանի գնման վկայագրերի միջոցով անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթաց իրականացվելու արդյունքում ընդունվելու է ոչ թե հայցվող բարենպաստ վարչական ակտը (ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ բարենպաստ վարչական ակտ), այլ տրամադրվելու է բնակարանի գնման վկայագիր, ինչը չի կարող մեկնաբանվել որպես Նարեկ Ղամբարյանի կողմից հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունում կամ ակնկալվող իրավունքի տրամադրում:

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ Նարեկ Ղամբարյանի կողմից հայցվող բարենպաստ վարչական ակտ ընդունելուն ուղղված դիմումին ի պատասխան տրված գրությունն ուղղակիորեն չի պարունակում դրույթներ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրումը մերժելու մասին, այդուհանդերձ այդ ակտի բովանդակությունն ուղղակիորեն վկայում է հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին:

Վերոշարադրյալի արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտավորեցման հայցի թույլատրելիության նախապայման հանդիսացող հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժող միջամտող վարչական ակտի առկայությունը հաստատված է:

Հաջորդիվ, Վճռաբեկ դատարանն ահրաժեշտ է համարում պարզել, *արդյո՞ք, առկա են բավարար հիմքեր ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ ՀՀ օրենսդրությանը սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին հայցվոր Նարեկ Ղաևբարյանին բնակարան ձեռք բերելու համար հասանելիք բնակարանի գնին համարժեք անհատուց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հրաման ընդունելուն պարտավորեցնելու համար, թե՛ ոչ:*

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից՝ բացառությամբ ի շահ հանրության՝ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասով նախատեսված «գույք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներ ու շահեր նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ», հետևաբար՝ «գույք» նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյո՞ք, գործի բոլոր հանգամանքներից ելնելով, դիմումատուն ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ (*իրեն, Մինասյանը և Մեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով ՄԻԵԴ 23.06.2009 թվականի վճիռը, 55-րդ կետ*):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը տվել է Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացության ընդլայնված մեկնաբանություն՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը, մասնավորապես՝ դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար (*իրեն, Պրեստոն Կոմյանիսա Նավիետան ՍԱ ընդդեմ Բելգիայի, 20.11.1995 թվականի թիվ 17849/91*):

ՀՀ վճռաբեկ դատարանը ևս նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է սեփականության իրավունքի պաշտպանության իրավական խնդրին: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ Սահմանադրությունը, հռչակելով սեփականության իրավունքի ճանաչումն ու պաշտպանությունը, երաշխավորում է յուրաքանչյուրի սեփականություն ունենալու բացարձակ իրավունքը՝ միաժամանակ ամրագրելով օրենքով նախատեսված դեպքերում այդ իրավունքից գրկելու հնարավորությունը միայն դատական կարգով (*իրեն, Գևորգ Գևորգյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/2434/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2009 թվականի որոշումը*):

ՀՀ սահմանադրական դատարանը 18.04.2014 թվականի թիվ ՍԴՌ-1148 որոշմամբ գտել է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների

իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:

Մույն գործով հայցվոր Նարեկ Ղամբարյանի՝ ՀՀ ՊՆ համակարգի բնակնակերեսի կարիքավոր զինծառայողների բնակարանային հաշվառման ցուցակում ընդգրկվելու պահին գործող «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 30.11.1998 թվականին և ուժը կորցրել է 16.12.2017 թվականին) 34-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողները, առողջության, տարիքի կամ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված այն նախկին զինծառայողները, որոնք ծառայության ընթացքում հաշվառված են եղել որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողներ, ինչպես նաև հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողները և ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքները բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում ապահովվում են **բնակարանով կամ տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար ստանում են անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:**

15.11.2017 թվականին ընդունված և 16.12.2017 թվականին ուժի մեջ մտած «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականության շրջանակներում քաղաքացիների զինվորական ծառայությանը նախապատրաստության, զինվորական ծառայության և պահեստագորային պատրաստության կազմակերպման և իրականացման, **ինչպես նաև զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների ու զինծառայողներին հավասարեցված անձանց իրավական և սոցիալական երաշխիքների հետ կապված հարաբերությունները:**

Նույն օրենքի մինչև 20.06.2019 թվականը գործող խմբագրությամբ «Անցումային և եզրափակիչ դրույթները» սահմանող 73-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի համաձայն, զինվորական ծառայության ընթացքում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված, սակայն զինվորական ծառայության ընթացքում սեփականության իրավունքով անհատույց բնակարան չստացած և առողջության կամ տարիքի կամ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված նախկին զինծառայողների համար **պահպանվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին սեփականության իրավունքով անհատույց բնակարան ստանալու իրավունքը:**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածում փոփոխություն է կատարվել 20.06.2019 թվականին ուժի մեջ մտած «**«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** ՀՕ-57 օրենքով, որի համաձայն՝ նույն օրենքի 73-րդ հոդվածում 7-րդ մասի «**սեփականության իրավունքով անհատույց բնակարան»** բառերը փոխարինվել են «**բնակարանային պայմանների բարելավում»** բառերով, իսկ նույն մասը

«իրավունքը» բառից հետո լրացվել է «**Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով**» բառերով:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասն այժմ գործում է հետևյալ խմբագրությամբ՝ մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը, «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, զինվորական ծառայության ընթացքում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված, սակայն զինվորական ծառայության ընթացքում բնակարանային պայմանների բարելավում չստացած և առողջության կամ տարիքի կամ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված նախկին զինծառայողների համար **պահպանվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:**

««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-57 ՀՀ օրենքի նախագծի ընդունման հիմնավորման համաձայն՝ «(...) *զինծառայողների և հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների բնակարանային ապահովության իրավունքի իրացման շրջանակներում վերացվում է թերկարգավորումը, քանի որ բնակարանային ապահովությունն ընդգրկում է ոչ միայն սեփականության իրավունքով անհարույց բնակարանի տրամադրումը, այլ նաև անհարույց պետական ֆինանսական աջակցության և տնամերձ հողամասով ապահովման ձևերը*» (լրեն, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10502&Reading=0>):

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների ու զինծառայողներին հավասարեցված անձանց իրավական և սոցիալական երաշխիքների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով: Ինչպես նախկինում գործող «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը, այնպես էլ ներկայումս գործող «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը զինծառայողների սոցիալական երաշխիքների համակարգի տարր է դիտարկում զինծառայողների բնակարանային ապահովությունը:

Անդրադառնալով զինծառայողների բնակարանային ապահովության իրավունքն ունեցող սուբյեկտների շրջանակին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 30.11.1998 թվականին ուժի մեջ մտած և 16.12.2017 թվականին ուժը կորցրած «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածն առողջության, տարիքի կամ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված այն նախկին զինծառայողներին, որոնք ծառայության ընթացքում հաշվառված են եղել որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողներ վերապահել է բնակարանով կամ տնամերձ հողամասով ապահովվելու կամ բնակարան ձեռք

բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունք: Մինչդեռ 16.12.2017 թվականին ուժի մեջ մտած «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված այն նախկին զինծառայողներին, որոնք ծառայության ընթացքում հաշվառված են եղել որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողներ բնակարանային ապահովության իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակում չի ներառել:

Նկատի ունենալով, որ 16.12.2017 թվականին ուժի մեջ մտած «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի «Զինծառայողների բնակարանային ապահովությունը» սահմանող 65-րդ հոդվածը բնակարանային ապահովության իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակում չի ներառել նաև զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված այն նախկին զինծառայողներին, որոնք ծառայության ընթացքում հաշվառված են եղել որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցողներ՝ օրենսդիրը «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածով սահմանել է անցումային կարգավորում այս սուբյեկտների իրավունքների երաշխավորման համար: Նշված անցումային դրույթների նպատակն է ապահովել իրավական որոշակիությունը և երաշխավորել նշված սուբյեկտների՝ բնակարանային ապահովության՝ օրենքով երաշխավորված բնակարան կամ տնամերձ հողամաս կամ բնակարան ստանալու պահանջի իրավունքը՝ որպես «օրինական ապանելիք»:

Ընդ որում՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ 30.11.1998 թվականին ուժի մեջ մտած և 16.12.2017 թվականին ուժը կորցրած «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը բնակարանային ապահովության իրավունք ունեցող սուբյեկտների համար նախատեսել է այդ իրավունքի իրացման հետևյալ ձևերը՝ **բնակարան կամ տնամերձ հողամաս կամ բնակարան ձեռք բերելու համար ստանում են անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:** Մինչդեռ՝ 16.12.2017 թվականին ուժի մեջ մտած «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի «Անցումային և եզրափակիչ դրույթները» սահմանող 73-րդ հոդվածի 7-րդ կետի ի սկզբանե գործող խմբագրության համաձայն՝ վերը նշված սուբյեկտների բնակարանային ապահովության իրավունքը երաշխավորվում էր միայն **ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին սեփականության իրավունքով անհատույց բնակարան ստանալու իրավունքը պահպանելու միջոցով:** Այլ կերպ ասած՝ օրենսդիրը տնամերձ հողամաս կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունքի պահպանման կապակցությամբ որևէ անցումային կարգավորում չէր նախատեսել:

Նշված թերկարգավորումը վերացնելու նպատակով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասում փոփոխություն է կատարվել 20.06.2019 թվականին ուժի մեջ մտած **««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** ՀՕ-57 օրենքով, որի համաձայն՝ **«սեփականության իրավունքով անհատույց բնակարան»** բառերը փոխարինվել են **«բնակարանային պայմանների բարելավում»** բառերով, քանի որ բնակարանային ապահովությունն ընդգրկել է ոչ միայն սեփականության իրավունքով անհատույց բնակարանի տրամադրումը,

այլ նաև անհատույց պետական ֆինանսական աջակցության և տնամերձ հողամասով ապահովման ձևերը:

Անփոփելիով վերոնշյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ զինվորական ծառայության ընթացքում որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված, սակայն զինվորական ծառայության ընթացքում բնակարանային պայմանների բարելավում չստացած և առողջության կամ տարիքի կամ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կապակցությամբ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակված նախկին զինծառայողների բնակարանային ապահովության իրավունքը պահպանվել է ամբողջ ծավալով:

Վերը նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադարձ կատարել ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» թիվ 384-Ն որոշմանը, որի 1-ին կետով հաստատվել է ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման, ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող բնակարանները զինծառայողներին և օրենքով սահմանված նրանց ընտանիքների անդամներին անհատույց օգտագործման կամ սեփականության իրավունքով տրամադրելու, տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցությամբ ապահովելու կարգը՝ համաձայն հավելվածի (այսուհետ նաև՝ Կարգ):

Կարգի 1-ին կետի համաձայն՝ նույն կարգով սահմանվում են ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման, ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող բնակարանները զինծառայողներին և օրենքով սահմանված նրանց ընտանիքների անդամներին անհատույց օգտագործման կամ սեփականության իրավունքով տրամադրելու, տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցությամբ ապահովելու պայմանները: Սույն կարգով նախատեսված զինծառայողների և օրենքով սահմանված նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովության պայմանները տարածվում են նաև ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի քաղաքացիական ծառայողների և օրենքով սահմանված նրանց ընտանիքների անդամների վրա:

Կարգի 4-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 1-ին կետով սահմանված գործընթացն իրականացնելու նպատակով ստեղծվում է ՀՀ պաշտպանության նախարարության կենտրոնական բնակարանային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով): Հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատում է ՀՀ պաշտպանության նախարարը: Հանձնաժողովի նիստերը կարող են գումարվել ըստ անհրաժեշտության, սակայն ոչ ուշ, քան յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ՝ հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Յուրաքանչյուր նիստ արձանագրվում է: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին ներկա հանձնաժողովի անդամները:

Հանձնաժողովի ընդունած որոշումներով զինծառայողներին կամ նրանց ընտանիքների անդամներին անհատույց օգտագործման կամ սեփականության

իրավունքով բնակարան, տնամերձ հողամաս կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրվում է ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով (բացառությամբ նույն կարգի 3-րդ կետի համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի հաստատած ցանկում ընդգրկված բնակելի տարածությունների):

Կարգի 7-րդ կետի համաձայն՝ բնակարանային հաշվառման մեջ գտնվող և երկարամյա ծառայության կենսաթոշակի անցած, առողջության, տարիքի կապակցությամբ զինված ուժերից արձակված և առնվազն 12 տարի 6 ամիս ժամկետով զինվորական ստաժ ունեցող անձինք **պահպանում են հաշվառման մեջ գտնվելու իրավունքը, իսկ հաշվառումից հանվում են բնակարանային պայմանների բարելավման դեպքում:**

Կարգի 12-րդ կետի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող բնակարանները, այդ թվում՝ նույն կարգի 9-րդ կետով նախատեսված դեպքերում անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված բնակելի տարածությունները կարող են զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին տրամադրվել նաև անհատույց սեփականության իրավունքով, եթե զինծառայողը կամ նրա ընտանիքի անդամները ՀՀ տարածքում սեփականության իրավունքով չունեն բնակելի տարածություն կամ սեփականության իրավունքով ունեն բնակելի տարածություն, սակայն բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող են, և առկա են հետևյալ պայմանները՝

- 1) զինված ուժերից արձակվել է առողջության, տարիքի կամ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով,
- 2) զինվորական ծառայությունից արձակվել է «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված հիմքերով և ունի առնվազն 12 տարի 6 ամիս ժամկետով զինվորական ծառայության ստաժ,
- 3) զոհվել (մահացել) է կամ հաշմանդամ է դարձել ծառայողական պարտականությունները կատարելիս,
- 4) գտնվում է զինվորական ծառայության մեջ և ունի առնվազն 10 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ:

Կարգի 15-րդ կետի համաձայն՝ բնակարանները սեփականության իրավունքով անհատույց տրամադրելու համար զինծառայողը կամ նրա ընտանիքի անդամը, ինչպես նաև նույն կարգի 7-րդ կետում նշված անձինք պարտավոր են ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- 1) բնակարանը սեփականության իրավունքով տրամադրելու մասին դիմում,
- 2) բնակարանի հատկացումը հաստատող փաստաթղթի պատճենը,
- 3) տեղեկանք տվյալ հասցեում հաշվառված անձանց մասին, եթե կան նման անձինք,
- 4) տեղեկանք զինվորական ծառայության ստաժի մասին,
- 5) կենսաթոշակի վկայականի պատճենը, եթե այդպիսին առկա է,
- 6) ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական կենտրոնի կողմից տրված տեղեկանք զինծառայողի և նրա ընտանիքի անդամների անվամբ ՀՀ տարածքում սեփականության առկայության մասին,
- 7) իր և իր ընտանիքի անդամների անվամբ սեփականության իրավունքով բնակարանի կամ բնակելի տան առկայության դեպքում՝ համապատասխան



մարմնի կողմից տրված տեղեկանք բնակարանային պայմանների մասին՝ կցելով սեփականության վկայականի պատճենը,

8) անհրաժեշտության դեպքում՝ նույն կարգի 6-րդ կետի 3-6-րդ ենթակետերում նշված փաստաթղթերը:

Կարգի 15.1-րդ կետի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող և նույն կարգի 9-րդ կետի համաձայն զինծառայողին կամ նույն կարգի 7-րդ կետում նշված անձին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված բնակարանը զինծառայողին կամ նույն կարգի 7-րդ կետում նշված անձին սեփականության իրավունքով անհատույց տրամադրելիս հիմք է ընդունվում զինծառայողի կամ նույն կարգի 7-րդ կետում նշված անձի ընտանիքի անդամների այն կազմը, որը հաշվի է առնվել զինծառայողին կամ նույն կարգի 7-րդ կետում նշված անձին ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող բնակարանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու ժամանակ:

Կարգի 17-րդ կետի (ուժը կորցրել է ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի «ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» թիվ 540-Ն որոշմամբ) համաձայն՝ բնակարանների ձեռքբերման նպատակով զինծառայողներին (այդ թվում՝ նույն կարգի 7-րդ կետով սահմանված պայմաններով պահեստազոր արձակված անձանց) տրամադրվող անհատույց պետական ֆինանսական աջակցության չափը հաշվարկվում է՝ ելնելով ֆինանսական աջակցություն տրամադրելու պահին նախորդող եռամսյակի դրությամբ տվյալ տարածաշրջանում բնակարանի՝ ձևավորված շուկայական միջին արժեքից՝ հետևյալ հաշվարկով՝

1) Երևան քաղաքում՝ թաղային համայնքների վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին արժեքների թվաբանական միջինով,

2) ՀՀ այլ քաղաքներում՝ համապատասխան քաղաքի վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին արժեքով,

3) ՀՀ գյուղական վայրերում՝ համապատասխան մարզի քաղաքների կամ գյուղական համայնքների վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին արժեքների թվաբանական միջինով:

ՀՀ տարածքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների՝ ձևավորված շուկայական միջինացված արժեքի մասին տվյալները տրամադրում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:

ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի «ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» թիվ 540-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով, ինչպես նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերին համապատասխան՝ ՀՀ կառավարությունը որոշում է ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի «ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» N 384-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) ուժը կորցրած ճանաչել կարգի 17-րդ կետը.

2) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին, 17.2-րդ, 17.3-րդ, 17.4-րդ, 17.5-րդ, 17.6-րդ, 17.7-րդ և 17.8-րդ կետերով՝ (...):

«17.3. Անհատույց պետական ֆինանսական աջակցությունը հաշվարկվում է բնակարանի գնման վկայագիր տրամադրելու վերաբերյալ եզրակացության ընդունման օրվան նախորդող եռամսյակի դրությամբ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ տարածքում բնակարանների ձևավորված շուկայական միջին գների մասին տեղեկատվության հիման վրա՝ հետևյալ չափերով՝

1) Երևան քաղաքի վարչական սահմաններում գրավող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գների թվաքանակական միջինի 50 տոկոսը.

2) ՀՀ այլ քաղաքներում՝ համապատասխան քաղաքի վարչական սահմաններում գրավող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գների թվաքանակական միջինը.

3) ՀՀ գյուղական վայրերում՝ համապատասխան մարզի քաղաքների (բացառությամբ ՀՀ Կուրայքի մարզի Ծաղկաձորի քաղաքային համայնքի, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզի Ախթալայի, Թումանյանի, Շամլուխի, ՀՀ Տավուշի մարզի Այրումի և ՀՀ Սյունիքի մարզի Դասարակերտի քաղաքային համայնքների՝ որպես 2000-ից պակաս մշրական բնակչություն ունեցող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գների թվաքանակական միջինի 90 տոկոսը»:

Վերը նշված իրավական նորմերի և սույն գործով փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Նարեկ Ղամբարյանը զինվորական ծառայության ընթացքում հաշվառվել է որպես բնակարանային ապահովության իրավունք ունեցող զինծառայող:

ՀՀ պաշտպանության նախարար Դ. Տոնոյանին ուղղված 14.02.2019 թվականի գրությամբ հայցվորի ներկայացուցիչ Ն. Նորիկյանը խնդրել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին Նարեկ Ղամբարյանին տրամադրել սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն:

Վերը նշված դիմումին ի պատասխան տրված ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի թիվ ՊՆ/510-ԱՂ-264 գրությամբ արձանագրվել է այն հանգամանքը, որ մի շարք նախկին զինծառայողներ, այդ թվում՝ Նարեկ Ղամբարյանը, զինվորական ծառայությունից արձակվել են երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքով, զինվորական ծառայության ընթացքում հաշվառված են եղել որպես բնակարանային ապահովության իրավունք ունեցող զինծառայող, զինվորական ծառայության ընթացքում նրանց չի տրամադրվել անհատույց սեփականության իրավունքով բնակարան կամ անհատույց պետական ֆինանսական աջակցություն կամ տնամերձ հողամաս, որի հիման վրա զինվորական ծառայությունից արձակվելուց հետո Նարեկ Ղամբարյանը պահպանել է հաշվառման մեջ գտնվելու իրավունքը՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասի ու ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջների համաձայն:

Վերոգրյալ փաստական հանգամանքներից ակնհայտ է, որ ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի թիվ ՊՆ/510-ԱՂ-264 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունն ընդունել է, որ Նարեկ Ղամբարյանը, զինվորական ծառայությունից արձակվել է երկարամյա ծառայության

զինվորական կենսաթոշակի իրավունքով, զինվորական ծառայության ընթացքում հաշվառված է եղել որպես բնակարանային ապահովության իրավունք ունեցող զինծառայող, զինվորական ծառայության ընթացքում նրան չի տրամադրվել անհատույց սեփականության իրավունքով բնակարան կամ անհատույց պետական ֆինանսական աջակցություն կամ տնամերձ հողամաս, որի հիման վրա զինվորական ծառայությունից արձակվելուց հետո նա պահպանել է հաշվառման մեջ գտնվելու իրավունքը՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 7-րդ մասի ու ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջների համաձայն:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Նարեկ Ղամբարյանը զինվորական ծառայությունից արձակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքով, զինվորական ծառայության ընթացքում հաշվառված է եղել որպես բնակարանային ապահովության իրավունք ունեցող զինծառայող և զինվորական ծառայության ընթացքում նրան չի տրամադրվել անհատույց սեփականության իրավունքով բնակարան կամ անհատույց պետական ֆինանսական աջակցություն կամ տնամերձ հողամաս: Ընդ որում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ նշված փաստերը սույն գործով չեն վիճարկվում:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը համարում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է: Ուստի, Վճռաբեկ դատարանը իրավաչափ է համարում Վերաքննիչ դատարանի հետևությունն առ այն, որ նշված փաստերը վերստին ապացուցման կարիք չունեն և համարվում են հաստատված:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվող բարենպաստ վարչական ակտի, այն է՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին Նարեկ Ղամբարյանին սեփականության իրավունքով բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հրամանի իրավաչափությունը գնահատելիս ելակետային նշանակություն ունի քննարկվող իրավահարաբերության նկատմամբ կիրառելի օրենսդրության հարցը:

Բողոքաբերների պնդմամբ ստորադաս դատարանները, կիրառելով ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշմամբ ուժը կորցրած ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետը, խախտել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն վեճի լուծման համար վճռորոշ նշանակություն ունի այն հարցը, թե արդյո՞ք սույն գործով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառելի է ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշմամբ ուժը կորցրած ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետը:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում Նարեկ Ղամբարյանի բնակարանային ապահովության իրավունքը ծագել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու հիմքով զինվորական

ծառայությունից ազատվելու պահից և վերջինս օրինական սպասելիք է ունեցել, որ իր՝ որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողի բնակարան ձեռք բերելու կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն ստանալու պայմանները կարգավորվելու են այդ պահին գործող ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգին համապատասխան: Այնուհետև՝ 14.02.2019 թվականին ՀՀ պաշտպանության նախարարին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու խնդրանքով դիմում ներկայացնելիս, Նարեկ Ղամբարյանը ձեռնամուխ է եղել իր իրավունքների իրացմանն այն ողջամիտ ակնկալիքով, որ խնդրո առարկա իրավահարաբերությունը կարգավորվելու է ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ մինչև ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշման ուժի մեջ մտնելը՝ 01.06.2019 թվականը, բնակարանների ձեռքբերման նպատակով զինծառայողներին տրամադրվող անհատույց պետական ֆինանսական աջակցության չափը հաշվարկվում էր՝ ելնելով ֆինանսական աջակցություն տրամադրելու պահին նախորդող եռամսյակի դրությամբ տվյալ տարածաշրջանում բնակարանի՝ ձևավորված շուկայական միջին արժեքից, հետևյալ հաշվարկով. **Երևան քաղաքում՝ թաղային համայնքների վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին արժեքների թվաբանական միջինով:** Այնուհետև՝ ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների արդյունքում լրացված 17.3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվել է, որ անհատույց պետական ֆինանսական աջակցությունը հաշվարկվում է բնակարանի գնման վկայագիր տրամադրելու վերաբերյալ եզրակացության ընդունման օրվան նախորդող եռամսյակի դրությամբ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ տարածքում բնակարանների ձևավորված շուկայական միջին գների մասին տեղեկատվության հիման վրա՝ հետևյալ չափերով՝ **Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գների թվաբանական միջինի 50 տոկոսը:**

Մինչև 01.06.2019 թվականը գործած խմբագրությամբ ՀՀ կառավարության թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 540-Ն որոշմամբ լրացված 17.3-րդ կետի 1-ին ենթակետի համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ կառավարության թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ կետը՝ մինչև 01.06.2019 թվականի ուժի մեջ մտած փոփոխությունը գործած խմբագրությամբ, Երևան քաղաքում բնակարանների ձեռքբերման նպատակով զինծառայողներին տրամադրվող անհատույց պետական ֆինանսական աջակցության չափը հաշվարկելիս հիմք էր ընդունում թաղային համայնքների վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին արժեքների թվաբանական միջինը, մինչդեռ, 01.06.2019 թվականին ուժի մեջ մտած փոփոխությամբ հիմք է ընդունվում թվաբանական միջինի 50 տոկոսը: Այսինքն՝ ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշմամբ Կարգում լրացված 17.3-րդ կետը նախատեսում է հայցվորի իրավական վիճակը վատթարացնող նորմ, իսկ մինչև նշված փոփոխությունը գործող ՀՀ

կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ սահմանված կարգն առավել բարենպաստ պայմաններ է նախատեսում բնակարան ձեռք բերելու կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն ստանալու համար:

Հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշումը, որը ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգի համեմատությամբ նախատեսում է զինծառայողի իրավական վիճակը վատթարացնող նորմ, չի կարող հետադարձ ուժով տարածվել նաև այդ ակտի ընդունումից առաջ ծագած հարաբերությունների վրա ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի ուժով, որի համաձայն՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ են Վերաքննիչ դատարանի հետևություններն առ այն, որ սույն գործով հայցվորի նկատմամբ ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշումը կիրառելի չէ: Սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի է ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ կետը, քանի որ ՀՀ կառավարության 10.05.2019 թվականի թիվ 540-Ն որոշմամբ Կարգում լրացված 17.3-րդ կետը, ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ կետի համեմատությամբ, նախատեսում է հայցվորի իրավական վիճակը վատթարացնող նորմ, ուստի դրան հետադարձ ուժ տալը և այն դրա ընդունումից առաջ ծագած հարաբերությունների վրա տարածելը, ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, անթույլատրելի է:

Հիմք ընդունելով սույն որոշմամբ հաստատված (չվիճարկվող) փաստերն առ այն, որ Նարեկ Ղամբարյանն արձակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունքով, զինվորական ծառայության ընթացքում հաշվառված է եղել որպես բնակարանային ապահովության իրավունք ունեցող զինծառայող, զինվորական ծառայության ընթացքում նրան չի տրամադրվել անհատույց սեփականության իրավունքով բնակարան կամ անհատույց պետական ֆինանսական աջակցություն կամ տնամերձ հողամաս, ինչպես նաև հայցվոր Նարեկ Ղամբարյանի նկատմամբ ՀՀ կառավարության 07.03.2007 թվականի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված Կարգի 17-րդ կետը կիրառելի լինելու վերաբերյալ վերը նշված հիմնավորումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավահարաբերության ծագման պահին գործող օրենսդրական կարգավորումների համաձայն, հայցվորն ունի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին սեփականության իրավունքով անհատույց բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունք:

Վերոգրյալ իրավական և փաստական հիմնավորումներով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն է եզրահանգել, որ պատասխանողը պետք է պարտավորեցվի ընդունել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին Նարեկ Ղամբարյանին բնակարան ձեռք բերելու համար անհատույց ֆինանսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ հրաման ֆինանսական աջակցության չափը հաշվարկելով Երևան քաղաքում թաղային համայնքների վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի

բնակարանների շուկայական միջին արժեքների թվաքանակյան միջինով՝ հաշվի առնելով այն փաստը, որ հայցվորը պահպանել է իր բնակարանային սպահովության իրավունքը և գինվորական ծառայության ընթացքում վերջինիս չի տրամադրվել անհատույց սեփականության իրավունքով բնակարան կամ անհատույց պետական ֆինանսական աջակցություն կամ տնամերձ հողամաս:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, ուստի բողոքարկվող դատական ակտը պետք է թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանի և Վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումներն ու եզրահանգումը համահունչ են Վճռաբեկ դատարանի սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումներին:

Անփոփոխվելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, բավարարելով հայցը, իսկ Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Դատարանի վճիռը՝ կայացրել են գործի ելքը ճիշտ լուծող դատական ակտեր, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանն իրացնում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ վճռաբեկ բողոքները մերժելու և դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որն իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջիններիս բողոքները ենթակա են մերժման:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ սպացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքները մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.03.2022 թվականի որոշումը թողնել անփոփոխ:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 26. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/2116/05/20**  
**2023թ.**

Վարչական գործ թիվ

ՎԴ/2116/05/20

Նախագահող դատավոր՝

Կ. Ավետիսյան

Դատավորներ՝

Կ. Բաղդասարյան

Ա. Սարգսյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>Նախագահող</i>	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
<i>գեկուցող</i>	Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 22-ին

գրավոր ընթացակարգով քննելով Փամելա Հաշեմի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.08.2022 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Փամելա Հաշեմի ընդդեմ ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ ոստիկանության, երրորդ անձինք՝ Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողով, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն՝ ՀՀ Նախագահի 29.01.2020 թվականի թիվ 25-Ա հրամանագիրն անվավեր ճանաչելու և վերջինիս Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ Փամելա Հաշեմի դիմումը բավարարելու մասին վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու, ՀՀ Վարչապետին՝ ՀՀ նախագահին Փամելա Հաշեմ Ֆարեսին Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու մասին առաջարկություն ներկայացնելուն՝ կցելով ՀՀ Նախագահի համապատասխան՝ քաղաքացիության շնորհելու մասին, հրամանագրի նախագիծ, պարտավորեցնելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Փամելա Հաշեմը պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ Նախագահի 29.01.2020 թվականի թիվ 25-Ա հրամանագիրը, պարտավորեցնել բավարարելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու



վերաբերյալ իր դիմումը և պարտավորեցնել ՀՀ Վարչապետին՝ ՀՀ նախագահին իրեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու մասին առաջարկություն ներկայացնել՝ կցելով ՀՀ Նախագահի համապատասխան՝ քաղաքացիության շնորհելու մասին, հրամանագրի նախագիծ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Ագրոյան) (այսուհետ՝ Դատարան) 04.08.2021 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.08.2022 թվականի որոշմամբ Փամելա Հաշեմի ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 04.08.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Փամելա Հաշեմը (ներկայացուցիչ՝ Ա. Հովհաննիսյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան են ներկայացրել ՀՀ վարչապետը և Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը չի կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 146-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի «ե» ենթակետը և 57-րդ հոդվածի 1-ին մասը, որոնք պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել և կիրառել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ պարբերությունը:

Վերաքննիչ դատարանը պատշաճ չի գնահատել գործում առկա բոլոր ապացույցները, չի համադրել դրանք օրենսդրական պահանջների հետ և եկել է սխալ եզրահանգման՝ թույլ տալով դատական սխալ և խախտելով անձի արդար դատաքննության իրավունքը ու քաղաքացիություն ստանալու իրավունքը, քանի որ անձին քաղաքացիություն շնորհելու վարույթում ընդգրկված մարմիններից ոչ մեկը չի տրամադրել մերժման հիմքում ընկած հանգամանքները, չի ներկայացրել որևէ ապացույց, որով հաստատվում է քաղաքացիություն շնորհելու դիմումի մերժման հիմքի առկայությունը:

Վերաքննիչ դատարանը, նշելով, որ առկա է «ծառայության բացասական եզրակացության իրավաչափության կանխավարկածը», միաժամանակ հաշվի չի առել այն հանգամանքը, թե որքանով է անձի համար պարզ և հստակ իր նկատմամբ կայացված վարչական ակտի պատճառաբանությունը:

Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին ամբողջությամբ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 05.08.2022 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցն ամբողջությամբ բավարարել:

### **2.1 Վճռաբեկ բողոքի վերաբերյալ ՀՀ վարչապետի, Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի պատասխանի հիմնավորումները.**

Դատարանն իրավացիորեն գնահատել է, որ Թուրքիայի Հանրապետություն

մեկնելու նպատակի, ինչպես նաև մի շարք այլ հանգամանքների բացահայտումը հայցվորի կողմից կարող էին էական նշանակություն ունենալ գործի բազմակողմանի և օբյեկտիվ քննության համար, մինչդեռ հայցվորը չի ապահովել իր ներկայությունը դատական նիստերին:

Բողոք բերած անձի այն պնդումը, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների պահպանման պայմաններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու դիմումը պետք է բավարարվեր, քանի որ բացակայել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումի մերժման համար նշանակություն ունեցող ապացույցները, անհիմն է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանները դիմումի պարտադիր բավարարման պայմաններ չեն:

Բողոք բերած անձի այն պնդումը, որ վարչական ակտի պատճառաբանվածության պահանջը չէր կարող սահմանափակվել, անհիմն է, քանի որ տվյալ պարագայում ընդհանուր և հատուկ նորմերի կոլիզիայի պայմաններում կիրառելի է հատուկ նորմը, այն է՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասը:

Բողոք բերած անձի այն փաստարկը, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել Դատարանի դատական ակտի պատճառաբանվածությանը, անհիմն է, քանի որ Վերաքննիչ դատարանն անդրադարձել է, թե դատական ակտի կայացման պահին գործող օրենքներով և առկա ապացույցներով արդյոք առկա են ՀՀ նախագահին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու բավարար իրավական և փաստական հիմքեր:

Վերոգրյալ պատճառաբանությունների հիման վրա ՀՀ վարչապետը և Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը խնդրել են մերժել Փամելա Հաշեմի վճարելի բողոքը:

### **3. Վճարելի բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճարելի բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 08.08.2019 թվականին Փամելա Հաշեմը դիմում է ներկայացրել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար (**անձնական գործի նյութեր, գ.թ. 1**):

2) ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 02.10.2019 թվականի թիվ 24/10225 գրությամբ նպատակահարմար է գտել մերժել Լիբանանի Հանրապետության քաղաքացի Փամելա Ֆարես Հաշեմին քաղաքացիություն շնորհելու դիմումը (**անձնական գործի նյութեր, գ.թ. 17**):

3) 08.11.2019 թվականի ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից տրված եզրակացությամբ «Փամելա Հաշեմի ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումի կապակցությամբ կազմված նյութերի վերաբերյալ» եզրակացությամբ հայտնվել է, որ Փամելա Հաշեմի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ դիմումը հնարավոր չէ բավարարել (**անձնական գործի նյութեր, գ.թ. 30**):

4) Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի 12.12.2019 թվականի արձանագրության համաձայն՝ Հայաստանի

Հանրապետության քաղաքացիություն շնորհելու վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է 79 բացասական եզրակացություն: Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի «Եզրակացություն» վերտառությամբ փաստաթղթին կից թիվ 2 հավելվածի (անձանց ցուցակ, որոնց դիմումները ՀՀ քաղաքացիություն ստանալու վերաբերյալ մերժվել են) 48-րդ տողում նշված է՝ Փամելա Հաշեմ, ծնված 12.09.1986 թվականի Լիբանանի Հանրապետությունում (Լիբանանի քաղաքացի):

5) 23.01.2020 թվականին ՀՀ վարչապետն առաջարկել է ՀՀ նախագահին մերժել Փամելա Հաշեմին ՀՀ քաղաքացիություն տրամադրելը (**հատոր 2, գ.թ. 54**):

6) 29.01.2020 թվականին ՀՀ նախագահը թիվ 25-Ա հրամանագրով մերժել է Փամելա Հաշեմին ՀՀ քաղաքացիություն տրամադրելը (**հավելված, գ.թ. 38**):

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում *Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելուն պարտավորեցնելու պահանջով պարտավորեցման հայցի շրջանակներում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելու առանձնահատկություններին:*

Քաղաքացիության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածում: Քաղաքացիության իրավունքը բաղկացած է մի քանի բաղադրատարրերից՝

ա) յուրաքանչյուրի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունքը,

բ) Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ քաղաքացիությունը փոխելու իրավունքը,

գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացուն քաղաքացիությունից զրկելու արգելքը (*տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 22.11.2022 թվականի ՄԳՈ-1669 որոշումը*):

ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացման կարգը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման այլ հիմքերը, ինչպես նաև դադարեցման հիմքերը սահմանվում են օրենքով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը սահմանվում է նույն օրենքով: (...) Յուրաքանչյուր անձ, օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք ունի (...):

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած, գործունակ (...), օտարերկրյա պետությունում բնակվող (գտնվող) կամ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքով բնակվող (գտնվող) յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե՝ 1) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում. 2) կարող է բացատրվել հայերեն լեզվով և 3) ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Նույն հոդվածի 5-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն հայցող անձը քաղաքացիություն ստանալու դիմումն անձամբ (...) պետք է ներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին: Նույն հոդվածի 6-րդ պարբերության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանում են քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

Օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ պարբերությամբ սպառիչ կերպով սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը մերժելու հիմքերը, այն է՝ տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը և բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել:

Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխան և նույն օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով, լուծում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դիմումն անձը ներկայացնում է անձամբ, բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի: Հայաստանի Հանրապետությունում գտնվելու դեպքում դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն (...):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ դիմումների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացություններն ուղարկվում են Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու վերաբերյալ եզրակացություններն ստանալուց հետո Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը դրանք քննարկում է հանձնաժողովի ղեկավարի կողմից հրավիրվող նիստերում: Քննարկման արդյունքում կազմվում են ամփոփ եզրակացություններ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կազմած եզրակացությունների հետ մեկամայա ժամկետում ներկայացվում Հայաստանի Հանրապետության վարչապետին:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության

վարչապետը Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կողմից եզրակացություններն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացնում է քաղաքացիության վերաբերյալ դիմում ներկայացրած անձին քաղաքացիություն շնորհելու կամ դադարեցնելու կամ քաղաքացիության շնորհումը կամ դադարեցումը մերժելու մասին առաջարկություն՝ կցելով Հայաստանի Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված բացառիկ դեպքերում Հայաստանի Հանրապետության վարչապետը կարող է անձին քաղաքացիություն շնորհելու մասին առաջարկությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին առանց Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովից եզրակացություն ստանալու: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծմանն ուղղված Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 139-րդ հոդվածով սահմանված կարգով:

Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին պարբերության 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու կարգը:

ՀՀ կառավարության 23.11.2007 թվականի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դիմումների քննարկման կարգը սահմանելու և ազգությամբ հայ լինելը հաստատող մկրտության մասին փաստաթուղթ տրամադրող եկեղեցական կառույցների ցանկը հաստատելու մասին» թիվ 1390-Ն որոշման (այսուհետ՝ Թիվ 1390-Ն որոշում) 1-ին կետի 1-ին ենթակետով որոշվել է սահմանել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու կարգը, իսկ 2-րդ ենթակետով սահմանվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (այսուհետ՝ նաև Ցանկ):

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ կարգի (այսուհետ՝ Կարգ) 25-րդ կետի համաձայն՝ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, իսկ նույն կարգի 5-րդ կետով նախատեսված դեպքում նաև՝ հայոց լեզվի իմացության ստուգումից հետո 10-օրյա ժամկետում փաստաթղթերի պատճենները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության իմացության թեստի հետ միասին վարչությունն ուղարկում է Ազգային անվտանգության ծառայություն (...):

Կարգի 27-րդ կետի համաձայն՝ նույն Կարգի 25-րդ և 26-րդ կետերով նախատեսված դեպքերում Ազգային անվտանգության ծառայությունը (...) փաստաթղթերն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում վարչություն են ներկայացնում իրենց եզրակացությունները (...):

Կարգի 28-րդ կետի համաձայն՝ Վարչությունը նույն Կարգի 27-րդ կետով նախատեսված եզրակացություններն ստանալուց հետո կազմում է առանձին եզրակացություն, որում ամփոփվում են (...) և Ազգային անվտանգության ծառայության եզրակացությունները: Վարչությունը նույն կարգի 27-րդ կետով

նախատեսված եզրակացություններն ստանալուց հետո իր կողմից կազմված եզրակացությունը քաղաքացիություն հայցող անձանց ցուցակի հետ միասին (որում նշվում են անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը տարեթիվը, ծննդավայրը, գործի համարը) մեկամսյա ժամկետում ներկայացնում է Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողով:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումի քննարկումը և դրա արդյունքում համապատասխան վարչական ակտի ընդունումը մի քանի փուլից բաղկացած գործընթաց է, որում ընդգրկված տարբեր սուբյեկտներ իրացնում են իրենց գործառույթներով պայմանավորված համապատասխան լիազորություններ: Այդ գործընթացին մասնակից սուբյեկտ է, ի թիվս այլնի, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը. վերջինիս մասնակցությունը դրսևորվում է իր գործառույթների շրջանակներում համապատասխան եզրակացություն տալու միջոցով: Այս ձևաչափով ՀՀ ազգային անվտանգության ծառայության մասնակցության անհրաժեշտությունը պայմանավորված է այն անմիջական կապով, որն առկա է մի կողմից՝ այս ծառայության գործառույթների ու խնդիրների, մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը մերժելու՝ Օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված հիմքերի միջև:

«Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 28.06.2018 թվականի թիվ 860-Լ որոշմամբ հաստատված կանոնադրությամբ (այսուհետև՝ Կանոնադրություն) ազգային անվտանգության ծառայության խնդիրներն են, ի թիվս այլնի, իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, պետական սահմանների անձեռնմխելիության, տարածքային ամբողջականության, սահմանադրական կարգի, քաղաքացիների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ապահովումը (15-րդ կետի 1-ին ենթակետ), Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության ամրապնդումը, առանձին անձանց հետախուզական և այլ քայքայիչ գործունեության բացահայտումը, կանխումն ու խափանումը (15-րդ կետի 4-րդ ենթակետ): ՀՀ ազգային անվտանգության ծառայության Կանոնադրությամբ սահմանված գործառույթներն են, ի թիվս այլնի, Հայաստանի Հանրապետության անվտանգությանն սպառնացող վտանգի մասին տեղեկատվության ստացումը, մշակումը և վերլուծումը, այդ վտանգի կանխատեսումը (16-րդ կետի 4-րդ ենթակետ), Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելուն և դադարեցնելուն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելուն ու տարածքից դուրս գալուն, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ռեժիմին վերաբերող հարցերի լուծմանը մասնակցությունը (16-րդ կետի 6-րդ ենթակետ):

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիություն շնորհելու գործընթացում ՀՀ ազգային անվտանգության ծառայության մասնակցությունը՝ համապատասխան եզրակացություն տալու միջոցով ինքնանպատակ չէ. այդ մասնակցությունը բխում է վերը նշված խնդիրներից ու գործառույթներից և նպատակաուղղված է ՀՀ քաղաքացիություն

ստանալու դիմումը մերժելու՝ Օրենքով սահմանված հիմքերի հայտնաբերմանը և միաժամանակ ազգային անվտանգության ապահովմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը մերժելու դեպքում շահագրգիռ անձի վարչադատավարական կարգով իրավունքների պաշտպանության համար պատշաճ հայցատեսակի ընտրության հարցին, արձանագրել է, որ իրավակիրատ պրակտիկան պետք է զարգանա այն ուղղությամբ, որ քաղաքացիությունը դադարեցնելու կամ շնորհելու վերաբերյալ վարույթի շրջանակներում դատարան ներկայացվող պատշաճ հայցատեսակ է պարտավորեցման հայցը, քանի որ ՀՀ նախագահին ուղղված պահանջը համապատասխանում է պարտավորեցման հայցին բնորոշ հատկանիշներին (*յոեն, Տիգրան Գևորգյանի օրինական ներկայացուցիչ Էռնեստ Գևորգյանն ընդդեմ ՀՀ նախագահի, երրորդ անձինք ՀՀ վարչապետ, ՀՀ ոստիկանություն, Քաղաքացիության հարցերով միջգերարեսպական հանձնաժողով թիվ ՎԴ/1638/05/19 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.08.2022 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված պարտավորեցման հայցատեսակն այն դատավարական կառուցակարգն է, որը կոչված է ապահովելու անձի արդյունավետ դատական պաշտպանությունն այն բոլոր դեպքերում, երբ շահագրգիռ անձի իրավական նպատակը վարչական մարմնի կողմից մերժված բարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է: Այս իրավական նպատակին համահունչ սահմանված են, մասնավորապես, պարտավորեցման հայցի դեպքում սպացուցման բեռի բաշխման կանոնները (Օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ), պարտավորեցման հայցի քննության շրջանակներում լուծման ենթակա հարցերի շրջանակը (Օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մաս):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով պարտավորեցման հայցի բովանդակությանը, արձանագրել է, որ պարտավորեցման հայցը, բարենպաստ վարչական ակտն ընդունելու պահանջից բացի, օրենքի ուժով ներառում է նաև վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջը՝ անկախ հայցվորի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու հանգամանքից: Օրենսդրի կողմից նման պայմանի սահմանումը բխում է վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից այնքանով, որքանով անձը չի կարող հայցել իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունում, քանի դեռ այդպիսի ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտն օրենքով սահմանված կարգով վերացված չէ: Ըստ այդմ, օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորեցման հայցի քննության արդյունքներով գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս հայցը բավարարելու դեպքում վարչական դատարանը վարչական մարմնին բարենպաստ վարչական ակտ ընդունել պարտավորեցնելու հետ մեկտեղ պետք է անվավեր ճանաչի վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե վարչական դատարանը ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հաստատված է համարում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, վերջինս պետք է կայացնի հայցը բավարարելու վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ անվավեր ճանաչելով վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը և պարտավորեցնելով վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանելով պարտավորեցման հայցով հայցը բավարարելու դեպքում վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և վարչական մարմնին այդ վարչական ակտի ընդունմանը պարտավորեցնելու մասին ինպերատիվ պահանջը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսել է պարտավորեցման հայցը բավարարելու նախապայմանը, այն է՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը: Այսինքն՝ հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությամբ է պայմանավորված վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշման իրավաչափությունը և ոչ թե՛ հակառակը:

Մյուս կողմից, պարտավորեցման հայցի դեպքում օրենսդիրը, կարևորելով հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափության պարզումը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսել է, որ վարչական դատարանը հայցը մերժելու դեպքում վճիռ է կայացնում այդ մասին: Դա նշանակում է, որ պարտավորեցման հայցի մերժումը ևս պայմանավորված է հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությամբ: Այսինքն, եթե ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա չի հաստատվում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, պարտավորեցման հայցը ենթակա է մերժման (*տե՛ս, Կարեն Մարդարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով 26.12.2016 թվականի որոշումը*):

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարտավորեցման հայցի դեպքում ապացուցման առարկան հայցվող բարենպաստ վարչական ակտը մերժելու՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության կամ բացակայության փաստն է, որպիսի հիմքերի առկայության փաստի ապացուցման բեռը Օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին համապատասխան կրում է պատասխանող վարչական մարմինը, բացակայության փաստի ապացուցման բեռը՝ հայցվորը: Հայցվող բարենպաստ վարչական ակտն իրավաչափ է, և պարտավորեցման հայցը ենթակա է բավարարման, եթե բավարար ապացույցների համակցությամբ հաստատվում է տվյալ վարչական ակտի ընդունումը մերժելու՝ օրենքով սահմանված **բոլոր հիմքերի բացակայության փաստը**: Համապատասխանաբար, հայցվող բարենպաստ վարչական ակտն իրավաչափ չէ, և պարտավորեցման հայցը ենթակա է մերժման, եթե բավարար ապացույցների համակցությամբ հաստատվում է տվյալ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու **որևէ հիմքի առկայության փաստը**: Ըստ այդմ՝ պարտավորեցման հայցի քննության շրջանակներում դատարանի խնդիրն է ինչպես կողմերի ներկայացրած ապացույցների, այնպես էլ գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքին համապատասխան իր կողմից ձեռք բերված ապացույցների հետազոտմամբ ու գնահատմամբ պարզել հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու՝ օրենքով սահմանված հիմքերի առկայությունը (բացակայությունը): Վճռաբեկ դատարանն այս առնչությամբ անհրաժեշտ է համարում ընդգծել, որ պարտավորեցման հայցի քննության շրջանակներում ՀՀ վարչական դատարանը պարտավոր է պարզել բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու՝ օրենքով սահմանված բոլոր հիմքերի առկայությունը (բացակայությունը)՝ անկախ նրանից, թե վարչական մարմինը կոնկրետ ինչ հիմքով է մերժել տվյալ բարենպաստ վարչական ակտի ընդունումը:



Այլ կերպ՝ եթե իրավաչափ չէ վարչական մարմնի՝ բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու վերաբերյալ վարչական ակտը, այս հանգամանքն ինքնին չի ենթադրում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափություն. նման իրավիճակում ՀՀ վարչական դատարանը պարտավոր է գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքին համապատասխան պարզել վարչական մարմնի կողմից չկիրառված մերժման մյուս հիմքերի առկայությունը (բացակայությունը), քանզի իրավաչափ է միայն այն վարչական ակտը, որը կայացվում է դրա ընդունումը մերժելու՝ օրենքով նախատեսված բոլոր հիմքերի բացակայության պայմաններում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածը սահմանում է. «1. Եթե վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ է նաև վարչական այլ մարմինների թույլտվությունը կամ համաձայնությունը, ապա դրանք հայցելու և ստանալու համար անհրաժեշտ գործողությունները, ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր հավաքելը, իրականացնում է վարչական վարույթ հարուցած վարչական մարմինը:

Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով վարչական մարմնի ստացած թույլտվությունները և համաձայնություններն առանձին բողոքարկման ենթակա չեն. դրանք կարող են բողոքարկվել վարչական ակտի հետ միասին»:

Նշված նորմի բովանդակությունից բխում է, որ ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթում ներգրավված սուբյեկտների, այդ թվում՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից տրվող համապատասխան եզրակացությունները, ինքնուրույն դատական վերահսկողության օբյեկտ չեն, և դրանց իրավաչափությունը ենթակա է ստուգման վարչական վարույթը եզրափակող վարչական ակտի՝ դիմումը մերժելու մասին ՀՀ նախագահի հրամանագրի բողոքարկման շրջանակներում:

Վերոհիշյալի հիման վրա նկատի ունենալով, որ

- պարտավորեցման հայցը ներառում է նաև ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը մերժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջ,

- ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթում ներգրավված սուբյեկտների, այդ թվում՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից տրվող համապատասխան եզրակացությունների իրավաչափությունը ենթակա է ստուգման վարչական վարույթը եզրափակող վարչական ակտի իրավաչափությունը ստուգելու շրջանակներում՝

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումի քննարկմանն ուղղված վարչական վարույթի շրջանակներում իրավասու մարմինների կողմից տրվող եզրակացությունները, այդ թվում՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության եզրակացությունը, պարտավորեցման հայցի քննության շրջանակներում օժտված չեն իրավաչափության կանխավարկածով. վերջիններին իրավաչափությունը ենթակա է դատական վերահսկողության պարտավորեցման հայցում ներառված՝ դիմումը մերժելու մասին վարչական ակտի վիճարկման պահանջի շրջանակներում:

Ինչ վերաբերում է նշված եզրակացությունների փաստական հիմքերի, դրանց հիմքում ընկած գաղտնի բնույթ կրող տեղեկությունների և ապացույցների՝ դատարանի համար մատչելիությանն ու հասանելիությանը, ապա այս առնչությամբ Վճռաբեկ դատարանը միջազգային արդարադատության մարմինների պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է հետևյալը.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նախնառաջ արձանագրել է, որ մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքներից

բխող իրավունքները բացարձակ չեն: Եվրոպական դատարանը շեշտադրել է, որ բացարձակ բնույթ չունի նաև դատավարության մասնակցի՝ առանձին ապացույցների ծանոթանալու իրավունքը: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի 6-րդ հոդվածին համապատասխան թույլատրելի են դատավարության մասնակցի իրավունքների միայն այն սահմանափակումները, որոնք չեն խաթարում այդ իրավունքների բուն էությունը: Յուրաքանչյուր դեպքում դիմումատուի իրավունքների սահմանափակմամբ նրան պատճառված դժվարությունները պետք է հակակշռվեն դատական մարմինների կողմից կիրառվող ընթացակարգով (*Stéu, Regner v. the Czech Republic* թիվ 35289/11 գանգաբով Եվրոպական դատարանի Մեծ Պալատի 19.09.2017 թվականի վճիռը, կետեր 147-148):

Նշված գործով դիմումատուի իրավունքների սահմանափակումը դրսևորվել էր նրանում, որ ոչ դիմումատուին, ոչ փաստաբանին ազգային անվտանգության նկատառումներից ելնելով հնարավորություն չէր տրվել դատավարության ընթացքում ծանոթանալ վիճարկվող որոշման հիմքում ընկած գաղտնի տեղեկություններին ու ապացույցներին: Մույն գործով Եվրոպական դատարանի խնդիրն էր պարզել, արդյո՞ք նման սահմանափակումը չի խաթարել դիմումատուի արդար դատաքննության իրավունքի բուն էությունը: Ըստ այդմ՝ Եվրոպական դատարանը քննարկման առարկա է դարձրել հետևյալ հարցը. արդյո՞ք մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքների նման սահմանափակումները բավարար չափով հակակշռվել են այլ դատավարական երաշխիքներով:

Եվրոպական դատարանը որպես կարևոր դատավարական երաշխիք ընդգծել է այն հանգամանքը, որ ներպետական դատարաններն ունեցել են անսահմանափակ հասանելիություն ազգային անվտանգության ծառայության կողմից հիմք ընդունված բոլոր այն գաղտնի փաստաթղթերին, որոնք անհրաժեշտ են եղել իրենց որոշումները հիմնավորելու համար: Դատարանները կարողացել են գնահատել դիմումատուի համար գաղտնի տեղեկություններն ու փաստաթղթերը չբացահայտելու պատճառները և կարգադրել դրանց բացահայտումը, եթե կգտնեին, որ դրանք իրենց բնույթով գաղտնի չեն: Ավելին, դատարաններն իրավասու են եղել ըստ էության գնահատելու ազգային անվտանգության ծառայության որոշման իրավաչափությունը և անհրաժեշտության դեպքում վերացնելու կամայական որոշումը (*Կոնս, Մույն տեղում, կետ 152*): Եվրոպական դատարանը որպես դատավարական երաշխիք կարևորել է նաև այն հանգամանքը, որ ներպետական դատարանները սահմանափակված չեն եղել միայն այն փաստերի հետազոտմամբ ու գնահատմամբ, որոնց վրա հիմնվել է դիմումատուն: Ներպետական դատարանները, Եվրոպական դատարանի գնահատմամբ, պատշաճ կերպով իրացրել են իրենց տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերի բազմակողմանի հետազոտման լիազորությունը: Գերագույն վարչական դատարանը պատճառաբանել է գաղտնի ապացույցները չբացահայտելու անհրաժեշտությունը՝ գտնելով, որ դրա արդյունքում կբացահայտվեն ազգային անվտանգության ծառայության գործունեության մեթոդները, տեղեկատվության աղբյուրները և հնարավոր կղառնան ճնշումները վկաների նկատմամբ: Ըստ այդմ՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ որևէ փաստ չի վկայում այն մասին, որ խնդրո առարկա փաստաթղթերին գաղտնի բնույթ է տրվել կամայականորեն կամ այդպիսով հետապնդվել է այլ նպատակ, քան ներկայացված իրավաչափ նպատակն է:

Եվրոպական դատարանը, ներպետական դատարաններում գործի վարույթը դիտարկելով իր ամբողջության մեջ, հաշվի առնելով գործի բնույթը և ներպետական մարմինների հայեցողական ազատությունը, նշված գործով

գտել է, որ մրցակցային դատավարության և կողմերի իրավահավասարության սկզբունքներից բխող դիմումատուի իրավունքների սահմանափակումները չեն խախտել կողմերի միջև արդար հավասարակշռությունն այն աստիճանի, որ խաթարվի դիմումատուի արդար դատաքննության իրավունքի բուն էությունը:

Նշված վճռում Եվրոպական դատարանը վկայակոչել է նաև իրավական խնդրի վերաբերյալ Եվրոպական Միության Արդարադատության դատարանի ZZ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով (գործ C-300/11) 04.06.2013 թվականի կայացրած նախնական վճռում արտահայտած իրավական դիրքորոշումները (*տե՛ս, նույն տեղում, կետ 71*): Ըստ Եվրոպական Միության Արդարադատության դատարանի՝ երբ բացառիկ դեպքերում ներպետական մարմինը, ելնելով ազգային անվտանգության նկատառումներից, մերժում է շահագրգիռ անձին ճշգրիտ և ամբողջական կերպով բացահայտել նրա մուտքը մերժող որոշման հիմքերը, անհրաժեշտ է, որ դատարանը հնարավորություն ունենա ստուգելու՝ արդյոք այդ պատճառները խոչընդոտում են խնդրո առարկա որոշման հիմքերի և համապատասխան ապացույցների ճշգրիտ և լիարժեք բացահայտմանը: (...) եթե դատարանը պարզում է, որ ազգային անվտանգությունը, իրոք, պահանջում է շահագրգիռ անձին չբացահայտել համապատասխան հիմքերը, ապա տվյալ որոշման օրինականության նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպիսի ընթացակարգով, որ ապահովվի պատշաճ հավասարակշռություն ազգային անվտանգությունից բխող պահանջների և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի պահանջների միջև: (...) իրավասու ներպետական դատարանը խնդիր ունի գնահատելու, արդյոք վիճարկվող որոշման հիմքերը և ապացույցները շահագրգիռ անձին չբացահայտելու արդյունքում վերջինիս դատական պաշտպանության իրավունքի սահմանափակումներն ազդել են գաղտնի ապացույցների ապացուցողական արժեքի վրա և ինչ չափով են ազդել:

Այսպիսով, միջազգային արդարադատության մարմինների պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ.

- յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարանի համար պետք է ապահովվի պատճառաբանված դատական ակտ կայացնելու համար անհրաժեշտ գաղտնի բնույթ կրող տեղեկությունների և ապացույցների մատչելիությունն ու հասանելիությունը, դատարանը պետք է հնարավորություն ունենա հետազոտելու և գնահատելու վիճարկվող որոշման հիմքում ընկած գաղտնի բնույթ կրող բոլոր վերաբերելի և թույլատրելի ապացույցները,

- դատավարության մասնակցի՝ գաղտնի բնույթ ունեցող տեղեկություններին, ապացույցներին ծանոթանալու իրավունքի սահմանափակումը չի հանգեցնում անձի արդար դատաքննության իրավունքի բուն էության խաթարման, միայն եթե դատավարության կողմերի միջև արդարացի հավասարակշռությունն ապահովվում է այլ դատավարական երաշխիքների միջոցով:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գնահատելու համար անձի կողմից հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը՝ դատարանը պետք է հետազոտի և գնահատի այն բոլոր ապացույցները, որոնք իրենց համակցության մեջ բավարար են եղել իրավասու վարչական մարմնին քաղաքացիություն ստանալու վերաբերյալ դիմումի մերժման համար՝ այդպիսով ապահովելով ինչպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերի պարզումը, այնպես էլ դատական ակտի պատճառաբանվածության պահանջի բավարարումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ քաղաքացիություն շնորհելուն պարտավորեցնելու պահանջով պարտավորեցման հայցի քննության

շրջանակներում քաղաքացիություն ստանալու վերաբերյալ դիմումը մերժելու հիմքերի առկայության (բացակայության) փաստը պարզելու համար դատարանը պետք է, ի թիվս այլնի, հավաստիանա խնդրո առարկա գործընթացում իրավասու մարմինների կողմից տրվող եզրակացությունների հիմնավորվածության մեջ:

*Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Փամելա Հաշեմի հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել ՀՀ Նախագահի 29.01.2020 թվականի թիվ 25-Ա հրամանագիրը, պարտավորեցնել բավարարելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ իր դիմումը և պարտավորեցնել ՀՀ վարչապետին ՀՀ նախագահին իրեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու մասին առաջարկություն ներկայացնել՝ կցելով ՀՀ նախագահի համապատասխան քաղաքացիության շնորհելու մասին, հրամանագրի նախագիծ:

**Դատարանի 04.08.2021 թվականի վճռով** Փամելա Հաշեմի հայցը մերժվել է: Դատարանը գտել է, որ հայցվորի ներկայացուցիչների կողմից չի ներկայացվել որևէ հիմնավոր պատճառաբանություն և ապացույց առ այն, որ Փամելա Հաշեմն իր գործունեությամբ չի վնասում պետական և հասարակական անվտանգությանը, այլոց իրավունքներին և ազատություններին: Դատարանը նշել է նաև, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրացման համատեքստում գործը բազմակողմանի և օբյեկտիվ ըննելու, ինչպես նաև հայցվորի իրավունքների ենթադրյալ խախտումները բացահայտելու նկատառումներից ելնելով, Դատարանը ծանոթացել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության 02.10.2019 թվականի թիվ 24/10225 գրության հիմքում ընկած փաստաթղթի բովանդակությանը, որն ազգային անվտանգության պաշտպանության շահերից ելնելով չի հրապարակվել դատական նիստում և չի կցվել վարչական գործին, որն էլ, սակայն, իր հերթին, առանձին վերցված, էական նշանակություն չի ունեցել գործի լուծման համար և որպես այդպիսին չի ազդել գործի ելքի վրա:

**Վերաքննիչ դատարանը**, անփոփոխ թողնելով Դատարանի 04.08.2021 թվականի վճիռը, նշել է, որ եթե ազգային անվտանգության ծառայությունը, թեկուզև առանց հիմնավորման, գտնում է, որ որևէ անձի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելը կարող է վտանգել Հայաստանի Հանրապետության շահերը, ապա որևէ այլ փաստարկ չի կարող հակառակ եզրահանգման հիմք հանդիսանալ: Ազգային անվտանգության ծառայությունը, որպես Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման՝ իր իրավասությանը վերապահված խնդիրների լուծման համար պատասխանատու պետական մարմին, իր գործունեության ընթացքում, ի թիվս այլնի, ղեկավարվում է նաև ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, հետևապես, այլ գերակշիռ հակագող ապացույցների բացակայության պայմաններում (համապատասխանում է քննարկվող դեպքին) ՀՀ ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը կասկածի տակ չի կարող դրվել, ինչը հանգում է ծառայության տրամադրած գրության բովանդակության՝ իրերի իրական դրությանը համապատասխանելու իրավական կանխավարկածին: Պայմանավորված ազգային անվտանգության ծառայության գործառույթների առանձնահատկություններով՝ գործում է ծառայության բացասական եզրակացության իրավաչափության կանխավարկածը:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ Վերաքննիչ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումները խնդրահարույց են նախևառաջ վարչական դատավարության՝ կողմերի իրավահավասարության սկզբունքի իրացման տեսանկյունից: Ըստ այս սկզբունքի՝ (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդված) դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, ներառյալ՝ յուրաքանչյուր կողմին ընձեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն: Այս սկզբունքին համապատասխան՝ կողմերը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, ի թիվս այլ իրավունքների, ունեն ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու, գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ իրենց դիրքորոշումը, առաջարկները, առարկություններն ու փաստարկները ներկայացնելու իրավունքներ: Մինչդեռ, Վերաքննիչ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումները ՀՀ ազգային անվտանգության ծառայության բացասական եզրակացության առկայության դեպքում ըստ էության արգելափակում են հայցվորի՝ քաղաքացիություն ստանալու դիմումը մերժելու հիմքերի առկայությունը հերքող փաստեր ու փաստարկներ, ապացույցներ ներկայացնելու իրավունքի իրացման հնարավորությունը:

Ավելին, Վերաքննիչ դատարանն ամրագրել է խնդրո առարկա վարչական վարույթում ՀՀ ազգային անվտանգության ծառայության եզրակացության իրավաչափության կանխավարկածի սկզբունքը՝ այդպիսով բացառելով նաև դատարանի կողմից՝ քաղաքացիություն ստանալու դիմումի մերժման հիմքում վարչական մարմնի կողմից դրված բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ հետազոտության իրավական հնարավորությունը: Մինչդեռ, հաշվի առնելով վերոնշյալ դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության 02.10.2019 թվականի թիվ 24/10225 գրությունը, ըստ որի՝ վերջինս նպատակահարմար է գտել մերժել Լիբանանի Հանրապետության քաղաքացի Փամելա Ֆարես Հաշեմին քաղաքացիություն շնորհելու դիմումը (**անձնական գործի նյութեր, գ.թ. 17**), օժտված չէ հավաստիության կանխավարկածով: Հաշվի առնելով նաև միջազգային արդարադատության մարմինների վերը նշված դատական պրակտիկան՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր դեպքում, երբ հայցվոր կողմը վիճելի է համարում նաև խնդրո առարկա վարույթում իրավասու մարմինների կողմից տրված եզրակացությունների իրավաչափությունը, դատարանը պետք է հավաստիանա այդ եզրակացությունների հիմնավորվածության մեջ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար: Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշման պատճառաբանական մասը բովանդակում է.

(...)

2) եզրահանգում՝ բողոքում առաջադրված յուրաքանչյուր պահանջի հիմնավորվածության վերաբերյալ, մասնավորապես պատասխանելով հետևյալ հարցերին.

ա. արդյո՞ք հիմնավոր է տվյալ պահանջը՝ բողոքում դրա վերաբերյալ նշված հիմնավորումների սահմաններում կամ անկախ դրանցից,

բ. եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ, ապա ի՞նչ պատճառաբանմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրի, օրենքի և

այլ իրավական ակտի նորմերին, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը համարում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր չէ,

գ. եթե վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր է, ապա ի՞նչ հիմնավորմամբ՝ հղում կատարելով միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի այն նորմերին, սահմանադրական դատարանի, վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի այն որոշումներին, որոնց հիման վրա վերաքննիչ դատարանը համարում է, որ բողոքի հիմքում դրված պահանջը հիմնավոր է,

դ. վերաքննիչ բողոքի հիմքում դրված պահանջի հիմնավորվածության դեպքում արդյո՞ք վերաքննիչ բողոքում նշված՝ դատարանի թույլ տված կյուրա-կան կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը ազդել է կամ կարող էր ազդել գործի ելքի վրա՝ պատճառաբանելով համապատասխան եզրահանգումը. (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ գործի վերաքննության փուլում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու („ex officio“) սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին. վերաքննիչ դատարանը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար (*տե՛ս*, «Թեոֆարնա» ՄԳԸ *տնօրեն Վահրամ Մակինյանն ընդդեմ ՀՀ ստորջապահական և աշխատանքի տեսչական մարմնի թիվ ՎԴ/11707/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.01.2023 թվականի որոշում*):

Վերը նշված իրավակարգավորումներին համապատասխան Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը վերաքննիչ բողոքի քննության շրջանակներում պետք է քննարկման առարկա դարձներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ու հիմնավորումները՝ հստակ գնահատական տալով Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված բոլոր հարցադրումներին՝ ապահովելու համար, ի թիվս այլնի, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշման պատճառաբանվածության պահանջը: Մինչդեռ սույն դեպքում Վերաքննիչ դատարանը, ի խախտումն Օրենսգրքի 146-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, ըստ էության չանդրադառնալով վերաքննիչ բողոքում նշված բոլոր հիմքերին, սահմանափակվել է միայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության բացասական եզրակացության իրավաչափության կանխավարկածի վերաբերյալ դիրքորոշման ամրագրմամբ:

Վերոհիշյալ պատճառաբանությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը չի անդրադարձել վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերին և ըստ այդմ՝ առկա է բավարար հիմք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ, 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում

է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև նյութ կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի

ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.08.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**  
**27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/11415/05/19 2023թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/11415/05/19

Նախագահող դատավոր՝

Ս. Հովակիմյան

Դատավորներ՝

Ռ. Մախմուդյան

Կ. Ավետիսյան

**ՈՐՈՇՈՒՄ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով

<i>Նախագահող</i>	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
<i>զեկուցող</i>	Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի սեպտեմբերի 22-ին գրավոր ընթացակարգով քննելով Էդուարդ Սուքիասյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 31.01.2023 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Էդուարդ Սուքիասյանի ընդդեմ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ 26.06.2019 թվականի թիվ 440 որոշումը վերացնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Էդուարդ Սուքիասյանը պահանջել է վերացնել 26.06.2019 թվականի թիվ 440 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) (այսուհետ՝ Դատարան) 07.10.2022 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 31.01.2023 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված



ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ Էդուարդ Սուքիասյանի միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժվել են:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Էդուարդ Սուքիասյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասը և 132-րդ հոդվածը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը ոչ իրավաչափ կերպով մերժել է վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը, քանի որ ներկայացվել էին միջնորդությունը բավարարելու և վերաքննիչ բողոքն ընդունելու համար բավարար հիմնավորումներ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ հայցվորը և իր լիազորված անձը չեն ստացել վճռի օրինակը, և դատավարական ժամկետի հաշվարկը պետք է կատարվեր սկսած 29.12.2022 թվականից՝ վճռի կրկնօրինակը ստանալու պահից:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 31.01.2023 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ և 132-րդ հոդվածների խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը.*

- *ո՞ր դեպքում է գործն ըստ էության լուծող դատական ակտը դատավարության մասնակիցին ուղարկելու դատարանի պարտականությունը համարվում պարզաճ կատարված:*

Դատական ակտի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման կարևոր պայման է բողոքարկման ենթակա դատական ակտի դատավարության մասնակիցներին հասանելիության ապահովումը: Դատավարության մասնակիցներին դատական ակտերի հասանելիության ապահովման գործուն

երաշխիք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով դատարանների՝ դատական ակտերը դատավարության մասնակիցներին համապատասխան ժամկետում ուղարկելու պարտականության սահմանումը և այդ պարտականության պատշաճ կատարումը: Իսկ նշված պարտականությունը պատշաճ չկատարելու դեպքում դատավարության մասնակիցների բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացումը գործնականում ապահովվում է ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներում (ՄԴՈ-1249, ՄԴՈ-1268, ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1254, ՄԴՈ-1394, ՄԴՈ-1575) արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից հետևողականորեն ձևավորված դատական պրակտիկայի արդյունքում, ըստ որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում դատավարության մասնակիցներին ուղարկելու պարտականությունը դատարանների կողմից պատշաճ չկատարելու և դրա արդյունքում դատավարության մասնակցի կողմից բողոքարկման օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում, բաց թողնված ժամկետը վերականգնվում է իրավունքի ուժով (ex jure): Ըստ ձևավորված դատական պրակտիկայի՝ բոլոր այն դեպքերում, երբ դատարանի թերացման հետևանքով դատական ակտն ուշ է հասանելի դառնում դատավարության մասնակցին, ապա վերջինիս համար իրավունքի ուժով երաշխավորվում է գործն ըստ էության լուծող դատական ակտը հասանելի դառնալու պահից բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետում բողոք բերելու հնարավորությունը:

Դատական ակտերը դատավարության մասնակիցներին ուղարկելու՝ դատարանների պարտականության պատշաճ կատարման՝ որպես բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող երաշխիքի կարևորությունն ընդգծել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան):

Այսպես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը չի սահմանում դատական փաստաթղթերն ուղարկելու որոշակի կոնկրետ եղանակ: Այնուամենայնիվ, արդար դատաքննության ընդհանուր գաղափարը, որը ներառում է կողմերի մրցակցության հիմնարար սկզբունքը, պահանջում է, որ քաղաքացիական դատավարության բոլոր մասնակիցները հնարավորություն ունենան ծանոթանալու մյուս կողմի ներկայացրած փաստարկներին կամ ապացույցներին և ներկայացնել իրենց դիրքորոշումը դրանց վերաբերյալ՝ դատարանի որոշման վրա ազդելու նպատակով: Եթե դատական փաստաթղթերը, ներառյալ ծանուցումները, չեն հանձնվում անձամբ, դիմողը կարող է գրկվել դատավարությունում իր շահերը ներկայացնելու հնարավորությունից:

Դատարանի մատչելիության իրավունքը ենթադրում է դատական որոշումների մասին համարժեք ծանուցում ստանալու իրավունք, մասնավորապես այն դեպքերում, երբ բողոքը պետք է ներկայացվի որոշակի ժամկետում (*լե՛ս, Zavodnik v. Slovenia* թիվ 53723/13 գանգատով *Եվրոպական դատարանի 21.05.2015 թվականի վճիռ, կետեր 70 և 71*):

Ըստ Եվրոպական դատարանի՝ հայց ներկայացնելու կամ բողոք բերելու իրավունքը պետք է առկա լինի հենց այն պահից, երբ կողմերն իրագեկվում են իրենց համար պարտականություններ սահմանող կամ իրենց օրինական իրավունքները կամ շահերը ենթադրաբար խախտող որոշման մասին: Հակառակ դեպքում դատարանները կարող են էապես նվազեցնել բողոք բերելու

Ժամկետները կամ նույնիսկ անհնարին դարձնել բողոքարկումը՝ ձգձգելով իրենց որոշումներն ուղարկելը: Դատական ակտերն ուղարկելը՝ որպես դատական մարմնի և կողմերի միջև հաղորդակցության միջոց, դատարանի որոշումը և դրա հիմքերը հասանելի է դարձնում կողմերին՝ դրանով նրանց համար հնարավորություն ստեղծելով ցանկության դեպքում բողոքարկել այն (*լրե՛ս, Miragall Escolano and Others v. Spain* թիվ 55782/00 գանգատով *Եվրոպական դատարանի 25.01.2000 թվականի վճիռ, կետ 37*):

Եվրոպական դատարանը նաև կարևորել է այն հանգամանքը, որ դատարանի որոշման մասին կողմի ծանուցման ձևը պետք է հնարավորություն տա ստուգելու որոշման հանձնումը կողմին, ինչպես նաև հանձնման ամսաթիվը (*լրե՛ս, Strijak v. Ukraine* թիվ 72269/01 գանգատով *Եվրոպական դատարանի 08.11.2005 թվականի վճիռ, կետ 39*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանի մատչելիության իրավունքը, ի թիվս այլնի, ենթադրում է դատական ակտերի մասին դատավարության մասնակիցների պատշաճ ծանուցում ստանալու իրավունք՝ որպես բողոքարկման իրավունքի իրացման կարևոր երաշխիք: Ընդ որում, դատական ակտի մասին դատավարության մասնակցին ծանուցելու վերաբերյալ իրավակարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան պետք է հնարավորություն տան ստուգելու ինչպես տվյալ դատական ակտը դատավարության մասնակցին փաստացի հանձնված լինելու հանգամանքը, այնպես էլ հանձնման ամսաթիվը՝ հաշվի առնելով, որ հանձնման պահն առանցքային նշանակություն ունի բողոք բերելու համար սահմանված ժամկետը պահպանված լինելու, ինչպես նաև բաց թողնված ժամկետը իրավունքի ուժով վերականգնելու հարցը քննարկելու նպատակի համար:

Հայաստանի Հանրապետությունում վարչական արդարադատության ոլորտում գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման և բողոքարկման ժամկետների հաշվարկման հետ կապված իրավակարգավորումները հանգում են հետևյալին.

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) գործն ըստ էության լուծող դատական ակտը հրապարակվում է գործի քննությունն ավարտելուց հետո՝ 15 օրվա ընթացքում, եթե նույն օրենսգրքով այլ ժամկետ սահմանված չէ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

Վերը նշված նորմերի համադրված վերլուծությունից բխում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այդ ակտի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքով դատական ակտը բողոքարկելու դեպքերի:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 148-րդ և 156-րդ հոդվածների համադրված վերլուծությունից բխում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Այսպիսով, գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման մեկամսյա ժամկետի հաշվարկի ելակետը՝ դատական ակտի հրապարակման պահն է:

ՀՀ սահմանադրական դատարանը, իր մի շարք որոշումներով իրավաչափ համարելով գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման ժամկետի հաշվարկումը հրապարակման պահից սահմանելը, միաժամանակ արձանագրել է, որ երբ վճռաբեկ բողոքը վճռաբեկ դատարան բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ է հանդիսանում համապատասխան բողոքարկվող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հանգամանքը, ապա բողոքաբերը պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն՝ կցելով համապատասխան հանգամանքը հավաստող, վկայող ապացույցները, իսկ վճռաբեկ դատարանը՝ տվյալ հանգամանքի հաշվառմամբ բավարարի ներկայացված միջնորդությունը: Այդ դեպքում բաց թողնված ժամկետը վճռաբեկ դատարանի կողմից վերականգնվում է իրավունքի ուժով / *ex jure*՝ համապատասխան դատական ակտում այդ մասին փաստելով (*տե՛ս, մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի 08.12.2017 թվականի ՄՌՆ-1394 որոշումը*):

Վերոհիշյալից բխում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտը դատավարության մասնակցի կողմից ստանալու պահն էական նշանակություն ունի բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու հարցը լուծելու համար:

Միաժամանակ օրենսդիրը որպես վերը նշված ժամկետներում անձի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու իրավական երաշխիք՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ամրագրել է գործն ըստ էության լուծող դատական ակտերը որոշակի ժամկետում դատավարության մասնակցիներին ուղարկելու դատարանների պարտականությունը, որպիսի պարտականության պատշաճ կատարումն էապես կարևորվում է գործն ըստ էության լուծող դատական ակտերն ուղարկելու պարագայում՝ հաշվի առնելով, որ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետի հոսքի ելակետը դատական ակտի հրապարակման պահն է:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ (այսուհետ՝ Օրենսգիրք) 114-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հրապարակվելուց անմիջապես հետո գործն ըստ էության լուծող դատական ակտը հանձնվում է դատավարության մասնակիցներին: Դատավարության մասնակիցներից որևէ մեկի ներկա չլինելու դեպքում գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինակը հրապարակման կամ դրան հաջորդող օրն ուղարկվում է նրան:

Օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի դատական ակտերը կայացվում կամ հրապարակվում և դատավարության մասնակիցներին են ուղարկվում վարչական դատարանի դատական ակտերի համար նույն օրենսգրքով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանների կողմից դատական ակտերն օրենքով սահմանված ժամկետում ուղարկելու պարտականության պատշաճ կատարումը երաշխավորելու նպատակի համար կարևորվում է նաև այն սուբյեկտի ճիշտ ընտրությունը, ում նկատմամբ դատարանը կրում է իր այդ պարտականությունը:

Օրենսգրքի 114-րդ հոդվածի 7-րդ մասի, 149-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրենքով սահմանված ժամկետում ուղարկելու դատարանի պարտականությունն ունի կոնկրետ հասցեատեր, այն է՝ դատավարության մասնակիցները՝ հայցվորը, պատասխանողը և երրորդ անձինք (Օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մաս): Օրենսգրքը դատավարության մասնակիցների ներկայացուցիչներին չի դիտարկում ո՛չ որպես դատական ակտերն ուղարկելու պարտականության լրացուցիչ, ո՛չ որպես այլընտրանքային հասցեատեր՝ հաշվի առնելով, որ նշված նորմերում օրենսդիրը չի օգտագործել «և դատավարության մասնակիցների ներկայացուցիչներին», «կամ դատավարության ներկայացուցիչներին» ձևակերպումները:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով գործն ըստ էության լուծող դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականությանը, արձանագրել է, որ օրենսդիրը դատական ակտը գործին մասնակցող անձի փոխարեն այլ անձի, այդ թվում՝ վերջինիս ներկայացուցչին ուղարկելու հանգամանքը չի նախատեսել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության այլընտրանք, հետևաբար դատական ակտը գործին մասնակցող անձի ներկայացուցչին ուղարկելը դատարանի հայեցողությունն է, սակայն այն չի կարող դիտարկվել որպես դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության պատշաճ կատարում, եթե գործին մասնակցող անձը նման միջնորդությամբ չի դիմել դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ դատական ակտը գործին մասնակցող անձին ուղարկելու դատարանի պարտականության սահմանումն օրենսդրի կողմից ինքնանպատակ չէ, այլ ուղղված է անձի՝ վերաքննիչ բողոք բերելու իրավունքի լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովմանը: Անձը կարող է լիարժեք իրականացնել վերաքննիչ բողոք բերելու իր իրավունքը միայն այն դեպքում, երբ ծանոթ է ստորադաս դատարանի կողմից իր իրավունքների (պարտականությունների) կամ օրինական շահերի վերաբերյալ կայացված դատական ակտին և դրա բովանդակությանը (*տե՛ս*, ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչությունն ընդդեմ Գայանե Սողոմոնյանի թիվ ՎԴ/8923/05/11 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.01.2015 թվականի որոշումը):

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտերն օրենքով սահմանված ժամկետում ուղարկելու դատարանների պարտականությունը պատշաճ կատարված կարող է համարվել, եթե դատական ակտերն օրենքով սահմանված ժամկետում ուղարկվում են ճիշտ հասցեատիրոջը, այն է՝ դատավարության մասնակցին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատավարության մասնակցի միանշանակ արտահայտած կամահայտնության դեպքում դատական ակտերը կարող են ուղարկվել դատավարության մասնակցի ներկայացուցչին: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարաններն իրավասու են դատական ակտերն ուղարկել դատավարության մասնակցի ներկայացուցչին միայն այն դեպքում, երբ իրացնելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ միջնորդություն ներկայացնելու իր իրավունքը, դատավարության մասնակիցը միջնորդում է դատարանին դատավարական փաստաթղթերը, այդ թվում՝ դատական ակտերն ուղարկել իր ներկայացուցչին: Նման միջնորդության առկայության դեպքում միայն դատական ակտերը դատավարության մասնակցի ներկայացուցչին ուղարկելը կոդիտարկվի որպես դատարանի՝ դատական ակտերը դատավարության մասնակցին ուղարկելու պարտականության պատշաճ կատարում:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքարկվող գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքաբերից անկախ պատճառներով վերջինիս ուշ հասու լինելու հիմնավորմամբ բողոք բերելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը քննարկելիս դատավարության մասնակցի ներկայացուցչի կողմից բողոքարկվող դատական ակտն ստանալու հանգամանքը չի կարող կարևորվել, եթե դատավարության մասնակցին տվյալ դատական ակտը չի ուղարկվել, և վերջինս չի միջնորդել դատարանին դատական ակտն ուղարկել իր ներկայացուցչին: Նման իրավիճակում դատական ակտը դատավարության մասնակցի կողմից անձամբ ստանալու ապացույցի բացակայության պայմաններում համարվում է, որ բողոք բերելու բաց թողնված ժամկետը ենթակա է վերականգնման իրավունքի ուժով (ex jure):

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **դատարանների կողմից դատական ակտերը դատավարության մասնակցի ներկայացուցչին ուղարկելը չի կարող համարվել դատական ակտն օրենքով սահմանված ժամկետում դատավարության մասնակցին ուղարկելու պարտականության պատշաճ կատարում, բացառությամբ այն դեպքի, երբ դատավարության մասնակիցը դատարանին ուղղված համապատասխան միջնորդությամբ խնդրել է դատական ակտերն ուղարկել իր ներկայացուցչին:**

*Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմամբ.*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Էդուարդ Սուքիասյանը պահանջել է վերացնել 26.06.2019 թվականի թիվ 440 որոշումը:

**Դատարանը** 07.10.2022 թվականի վճռով մերժել է Էդուարդ Սուքիասյանի հայցը: Հայցվոր Էդուարդ Սուքիասյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությամբ:

**Վերաքննիչ դատարանը**, 31.01.2023 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշմամբ մերժելով Էդուարդ Սուքիասյանի վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը, նշել է, որ «Նշված վճռի դեմ 13.01.2023 թվականին Էդուարդ Սուքիասյանի կողմից փոստային ծառայության միջոցով ներկայացվել է վերաքննիչ բողոք: (...) Բողոքաբերը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդության հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ

սույն վարչական գործով 2022 թվականի հոկտեմբերի 7-ի վճիռն իր կողմից չի ստացվել և դրա մասին վերջինս տեղեկացել է միայն 2022 թվականի դեկտեմբերի 29-ին՝ վճռի կրկնօրինակը ստանալուց հետո: Մինչդեռ սույն վարչական գործով 07.10.2022 թվականին հրապարակված վճիռը ստացվել է բողոքաբերի կողմից 13.10.2022 թվականին հայցադիմումում որպես ծանուցման հասցե նշված «ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 228/12» հասցեում»»:

Վճռաբեկ դատարանը, վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի նշված դիրքորոշումը, գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ըստ գործում եղած փաստաթղթերի՝ Դատարանի 07.10.2022 թվականի վճռի օրինակն ուղարկվել է հայցվոր Էդուարդ Սուքիասյանի ներկայացուցիչ Արսեն Հովհաննիսյանին՝ ք. Երևան, Նորք-Մարաշ 228/12 հասցեով (**հատոր 3, գ.թ. 15**): Ըստ հետստացման հավաստագրի՝ նշված հասցեում Դատարանի 07.10.2022 թվականի վճռի օրինակն ստացվել է 13.10.2022 թվականին (**հիմք՝ հետստացման հավաստագիր, հատոր 3, գ.թ. 16**): Գործում առկա չէ ապացույց Դատարանի վճիռը նաև անձամբ հայցվորին ուղարկելու վերաբերյալ, ինչպես նաև հայցվոր կողմի՝ Դատարանին ուղղված միջնորդություն՝ դատական ակտերն իր ներկայացուցչին ուղարկելու վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը չի բխում Վճռաբեկ դատարանի վերոնշյալ դիրքորոշումներից, քանի որ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 07.10.2022 թվականի վճռի օրինակն ուղարկվել է միայն հայցվոր Էդուարդ Սուքիասյանի ներկայացուցիչ Արսեն Հովհաննիսյանին՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն իր ներկայացուցչին ուղարկելու վերաբերյալ հայցվորի հստակ արտահայտված կամքի բացակայության պայմաններում, ինչը կարող էր արտահայտվել Դատարանին ներկայացված համապատասխան միջնորդության ձևով: Ինչ վերաբերում է նրան, որ հայցադիմումում որպես ծանուցման հասցե նշված է «ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 228/12» հասցեն, որին Դատարանի կողմից ուղարկվել է վճիռը, ապա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմումում ծանուցման հասցե նշելը դեռևս բավարար պայման չէ հաստատելու հայցվորի հստակ արտահայտված կամքի առկայությունն առ այն, որ դատական ակտերն ուղարկվեն միայն իր ներկայացուցչին:

Վճռաբեկ դատարանը սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան արձանագրում է, որ հայցվորի՝ դատական ակտերն իր ներկայացուցչին ուղարկելու վերաբերյալ Դատարանին ուղղված միջնորդության բացակայության պայմաններում Դատարանը վճիռն Օրենսգրքի 114-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջին համապատասխան պարտավոր էր ուղարկել հայցվորին: Նման միջնորդության բացակայության պայմաններում վճիռը հայցվորի ներկայացուցչին ուղարկելը չէր կարող համարվել դատական ակտը դատավարության մասնակցին ուղարկելու Դատարանի պարտականության պատշաճ կատարում: Ըստ այդմ՝ արձանագրելով, որ սույն գործում առկա չէ ինչպես հայցվորի՝ դատական ակտերն իր ներկայացուցչին ուղարկելու վերաբերյալ Դատարանին ուղղված միջնորդություն, այնպես էլ վճիռը հայցվորի կողմից ստացված լինելու վերաբերյալ ապացույց՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից հայցվորի՝ վերաքննիչ բողոք բերելու համար

օրենքով սահմանված բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա էր բավարարման իրավունքի ուժով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործով կայացնելով 31.01.2023 թվականին «Վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշում, սահմանափակել է Էդուարդ Սուքիասյանի դատարանի մատչելիության իրավունքը՝ ի խախտումն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի և 132-րդ հոդվածի:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 31.01.2023 թվականի «Վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ



**ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐՃՈՒՄ**

**28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/0585/05/19  
2023թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/0585/05/19

Նախագահող դատավոր՝

Ա. Առաքելյան

Դատավորներ՝

Հ. Բեդևյան

Կ. Մաթևոսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող  
զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի հունիսի 08-ին

գրավոր ընթացակարգով քննելով Արտյոմ և Գոհար Գասպարյանների, Մարինե Գրիգորյանի, Գեղեցիկ Մարգարյանի, Անի Ամիրգուլյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.12.2020 թվականի որոշման դեմ՝ ըստ հայցի Արտյոմ և Գոհար Գասպարյանների, Մարինե Գրիգորյանի, Գեղեցիկ Մարգարյանի, Անի Ամիրգուլյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, երրորդ անձինք՝ Եպրաքսյա Սահակյան, Կարեն Վարդանյան՝ Երևանի քաղաքապետի 14.08.2017 թվականի թիվ 2766-Ա որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք, քաղաք Երևան, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 3 շենք, 15-րդ շինություն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Եպրաքսյա Սահակյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը (սեփականության իրավունքի 03.10.2017 թվականի թիվ 03102017-01-0313 վկայական, կադաստրային ծածկագիրը 01-006-0208-0087-001-018) անվավեր ճանաչելու, Երևանի քաղաքապետի 01.09.2017 թվականի թիվ 2998-Ա որոշման հավելվածի 11-րդ Երևանի քաղաքապետի 14.08.2017 թվականի թիվ 2766-Ա որոշմամբ օրինական ճանաչված, Տիգրան Մեծի պողոտայի թիվ 3 շենքում Եպրաքսյա Սահակյանի կողմից ինքնակամ իրականացված 35.7քմ մակերեսով կառույցին (նկուղ) տրամադրել հասցե՝ Տիգրան Մեծի պողոտայի թիվ 3 շենք, շինություն 15-րդ տողն անվավեր ճանաչելու և 25.10.2018 թվականի Եպրաքսյա Սահակյանի և Կարեն Վարդանյանի միջև կնքված քաղաք Երևան Տիգրան Մեծի պողոտա, թիվ 3 շենք, 15-րդ շինություն հասցեում գտնվող անշարժ

գույքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Կարեն Վարդանյանի անունով 31.10.2018 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը (սեփականության իրավունքի 31.10.2018 թվականի թիվ 31102018-01-0496 վկայական, կադաստրային ծածկագիր 01-006-0208-0087-001-018) անվավեր ճանաչելու պահանջների մասին,

## **Պ Ա Ր Զ Ե Ց**

### **1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Արտյոմ և Գոհար Գասպարյանները, Մարինե Գրիգորյանը, Գեղեցիկ Սարգսյանը, Անի Ամիրգուլյանը պահանջել են անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 14.08.2017 թվականի թիվ 2766-Ա որոշումը, անվավեր ճանաչել քաղաք Երևան, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 3 շենք, 15-րդ շինություն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Եպրաքսյա Սահակյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը (սեփականության իրավունքի 03.10.2017 թվականի թիվ 03102017-01-0313 վկայական, կադաստրային ծածկագիրը 01-006-0208-0087-001-018), վերացնել Երևանի քաղաքապետի 14.08.2017 թվականի թիվ 2766-Ա որոշման և քաղաք Երևան Տիգրան Մեծի պողոտա, թիվ 3 շենքի 15-րդ շինության նկատմամբ Եպրաքսյա Երանոսյանի իրավունքի պետական գրանցման որոշման հետևանքները և անվավեր ճանաչել 01.09.2017 թվականի թիվ 2998-Ա որոշման հավելվածի 11-րդ՝ Երևանի քաղաքապետի 14.08.2017 թվականի հ. 2766-Ա որոշմամբ օրինական ճանաչված, Տիգրան Մեծի պողոտայի թիվ 3 շենքում Եպրաքսյա Սահակյանի կողմից ինքնակամ իրականացված 35.7քմ մակերեսով կառույցին (նկուղ) տրամադրել հասցե՝ Տիգրան Մեծի պողոտայի թիվ 3 շենք, շինություն. 15-րդ տողը, և անվավեր ճանաչել 25.10.2018 թվականի Եպրաքսյա Սահակյանի և Կարեն Վարդանյանի միջև կնքված քաղաք Երևան, Տիգրան Մեծի պողոտա, 3-րդ շենք, 15-րդ շինություն հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Կարեն Վարդանյանի անունով 31.10.2018 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը (սեփականության իրավունքի 31.10.2018 թվականի թիվ 31102018-01-0496 վկայական, կադաստրային ծածկագիր 01-006-0208-0087-001-018):

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 24.09.2019 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.12.2020 թվականի որոշմամբ Արտյոմ և Գոհար Գասպարյանների, Մարինե Գրիգորյանի, Գեղեցիկ Սարգսյանի, Անի Ամիրգուլյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.09.2019 թվականի «Վարչական գործի վարույթը կարճելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Արտյոմ և Գոհար Գասպարյանները, Մարինե Գրիգորյանը, Գեղեցիկ Սարգսյանը, Անի Ամիրգուլյանը (ներկայացուցիչներ՝ Մուշեղ Առաքելյան, Վարդան Զիլավյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել երրորդ անձ Եպրաքսյա Սահակյանը:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը եզրահանգել է, որ հայցվորները տեղեկացված են եղել վիճարկվող որոշման մասին 10.09.2018 թվականին Երևանի քաղաքապետարան ներկայացված դիմումից՝ անտեսելով, որ դիմումում նշված «Տիգրան Մեծի 3 շենքի բնակիչներից» բառակապակցությամբ չի կարող հաստատվել նշված շենքի բոլոր սեփականատերերի, մասնավորապես՝ բոլոր հայցվորների կողմից վիճարկվող որոշման մասին տեղեկանալու հանգամանքը: Ավելին, Վերաքննիչ դատարանը չի պարզել՝ Մարինե Գրիգորյանը շենքի բնակիչների անունից հանդես գալու լիազորություն ունեցել է, թե ոչ:

Վերաքննիչ դատարանն անտեսել է բողոքում ներկայացված մի շարք փաստարկներ առ այն, որ թեև Երևանի քաղաքապետի 14.08.2017 թվականի թիվ 2766-Ա որոշումն առնչվել է հայցվորների իրավունքներին, սակայն նրանք օրենքով սահմանված կարգով չեն իրազեկվել համապատասխան վարչական վարույթի և դրա արդյունքում կայացված որոշման մասին, այլ իրազեկվել են փաստաբանի միջոցով հարցում կատարելու և այն ստանալու արդյունքում, ուստի նրանց համար միայն այդ պահից որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած համարվել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 16.12.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը:

### **2.1. Վճռաբեկ բողոքի վերաբերյալ երրորդ անձ Եպրաքսյա Սահակյանի պատասխանի հիմնավորումները.**

Վերաքննիչ դատարանի որոշումն օրինական և հիմնավորված է, կայացվել է արդար դատաքննության և դատարանի մատչելիության բոլոր պահանջների պահպանմամբ՝ որևէ կերպ չսահմանափակելով հայցվորների դատական պաշտպանության իրավունքը:

Ինչ վերաբերում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ վճռաբեկ բողոքում բերված դատավարական իրավունքի նորմերին և այդ կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին, ապա Դատարանն այդ հարցերին արդեն իսկ անդրադարձել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին որոշմամբ: Ընդ որում՝ Դատարանի կողմից գործի վարույթի կարճման հիմքում դրվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, որը հնարավորություն է տալիս գործի քննության ցանկացած փուլում կարճել գործի վարույթը, եթե այդ փուլում պարզվում է, որ հայցադիմում ներկայացնելու պահին լրացած է եղել հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը:

Անդրադառնալով վարչական ակտի մասին հայցվորների կողմից իրազեկվելու ժամանակի վերաբերյալ վճռաբեկ բողոքի պատճառաբանությանը՝ նշել է, որ այն

նույնպես անհիմն է և չի կարող հիմք հանդիսանալ վճռաբեկ բողոքը բավարարելու համար, քանի որ «հայցվորներն իրենց նախաձեռնությամբ վարչական ակտի մասին իրազեկվելուն ուղղված քայլեր ձեռնարկել են» ոչ թե փաստաբանի միջոցով հարցում կատարելու պահից, ինչպես նշվել է վճռաբեկ բողոքում, այլ շատ ավելի վաղ: Նշված եզրահանգման համար հիմք են հանդիսանում սույն վարչական գործում առկա հայցվորների՝ Երևանի քաղաքապետի պաշտոնակատարին հասցեագրված 09.08.2018 թվականի դիմումները, Ազգային անվտանգության ծառայությանը հասցեագրված 19.09.2018 թվականի դիմումը, որոնցից ակնհայտորեն հետևում է, որ հայցվորները դեռևս մինչև նշված դիմումները ներկայացնելն իրենց տիրապետման ներքո ունեցել են վիճարկվող վարչական ակտերը, ավելին դրանք բողոքարկել են վարչական կարգով, ինչը հնարավոր չէր լինի իրականացնել առանց այդ ակտերի առկայության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Արտյոմ Գասպարյանը, Գոհար Գասպարյանը, Մարինե Գրիգորյանը, Գեղեցիկ Սարգսյանը, Անի Ամիրզոյանը 31.01.2019 թվականին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, Եպրաքյա Սահակյանի՝ խնդրելով անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 14.08.2017 թվականի թիվ 2766-Ա որոշումը, ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 3 շենք, 15 շինություն հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Եպրաքյա Սահակի Սահակյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը (սեփականության իրավունքի 03.10.2017թ. թիվ 03102017-01-0313 վկայական, կադաստրային ծածկագիրը 01-006-0208-0087-001-018) և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 01.09.2017 թվականի թիվ 2998-Ա որոշման հավելվածի 11-րդ՝ Երևանի քաղաքապետի 14.08.2017 թվականի հ. 2766-Ա որոշմամբ օրինական ճանաչված, Տիգրան Մեծի պողոտայի հ. 3 շենքում Եպրաքյա Սահակյանի կողմից ինքնական իրականացված 35.7 քառ. մետր մակերեսով կառույցին /սկուղ/ տրամադրել հասցե՝ Տիգրան Մեծի պողոտայի հ. 3 շենք, շինություն հ. 15 տողը և անվավեր ճանաչել Եպրաքյա Սահակյանի և Կարեն Վարդանյանի միջև 25.10.2018 թվականին կնքված ք. Երևան Տիգրան Մեծի պողոտա 3 շենք, 15 շինություն հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և դրա հիման վրա Կարեն Վարդանյանի անունով 31.10.2018 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը /սեփականության իրավունքի 31.10.2018 թվականի թիվ 31102018-01-0496 վկայական, կադաստրային ծածկագիր 01-006-0208-0087-001-018/:

Միաժամանակ հայցվորները ներկայացրել են բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն՝ հայտնելով, որ վիճարկվող ակտերի մասին տեղեկացել են Երևանի քաղաքապետարանի և Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից փաստաբանական հարցումներին 14.01.2019 թվականին և 23.01.2019 թվականին տրամադրված գրություններին կցված փաստաթղթերից (**հատոր 1-ին, գ.թ. 3-14**):

2) Դատարանի 07.02.2019 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է,

հայցադիմումը մասով ընդունվել է վարույթ, մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է:

3) Երրորդ անձ Եպրաքայա Սահակյանի ներկայացուցիչը 26.06.2019 թվականի դատական նիստում միջնորդել է կարճել գործի վարույթը՝ պատճառաբանելով, որ հայցվորները սույն գործով վիճարկվող որոշման մասին իրազեկվել են ավելի վաղ, քան ներկայացված է հայցադիմումում (**հատոր 2-րդ, գ.թ. 23-28**):

4) Դատարանի 24.09.2019 թվականի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հարակցցնել հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի խախտման հիմքով գործի վարույթը կարճելու դատարանի լիազորության իրացման անհրաժեշտ պայմանները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. կարո՞ղ է արդյոք վարչական դատարանը կարճել գործի վարույթը հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի լրացած լինելու պարճառաբանությամբ այն պայմաններում, երբ հայցադիմումի ընդունելիության փուլում, քննարկելով բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը, վերականգնել է վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված երկամյա ժամկետը:*

Դատարանի մատչելիության իրավունքի իրավաչափ սահմանափակման դրսևորում է դատարան հայց ներկայացնելու համար որոշակի ողջամիտ ժամկետների սահմանումը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 15.12.2004 թվականի «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին» Rec(2004)20 հանձնարարականի 2.с կետի համաձայն՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց պետք է տրամադրվի ողջամիտ ժամկետ վարչական ակտը դատական կարգով բողոքարկելու համար: Պետություններից պահանջում է սահմանել ողջամիտ ժամկետներ վարչական ակտը դատական կարգով վիճարկելու համար՝ դատարանի մատչելիության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակի համար: Հանձնարարականը չի սահմանում որևէ կոնկրետ ժամկետ վարչական ակտի իրավաչափությունը դատական կարգով վիճարկելու համար՝ նման ժամկետի սահմանումը թողնելով պետությունների հայեցողությանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի

մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յուն'ս, Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանգադրով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Ժամկետային սահմանափակումները, որոնք սահմանվում են պետության կողմից, հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից, որի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել այնպիսի դեպքեր, որոնք տեղի են ունեցել հեռավոր անցյալում այն ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*յուն'ս, Stubbings and others v. The United Kingdom գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, կետեր 51, 55*):

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*յուն'ս, Dumitru Gheorghe v. Romania գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք), վերը նշված դիրքորոշումներին ու չափանիշներին համապատասխան, սահմանել է ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելու, այդ թվում՝ վարչական ակտը դատական կարգով վիճարկելու, ողջամիտ ժամկետներ՝ ապահովելով իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքի իրացումը: Միաժամանակ, ժամկետների սահմանմամբ հետապնդվող նշված իրավաչափ նպատակի հետ հավասարակշռելով դատական պաշտպանության իրավունքի իրացման շահը, որպես դատական պաշտպանության երաշխավորման կառուցակարգ՝ սահմանվել է բաց թողնված ժամկետի վերականգնման ինստիտուտը:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին դատարանը կայացնում է որոշում և հետագայում այդ մասին նշում է գործն ըստ էության լուծող դատական ակտում:

Օրենսգրքի 72-րդ հոդվածը սահմանում է դատարան հայց ներկայացնելու առանձին ժամկետներ յուրաքանչյուր հայցատեսակի համար: Նշված հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վիճարկման հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ դատավորը վերադարձնում է հայցադիմումը, եթե լրացել է հայցադիմում ներկայացնելու համար նույն օրենսգրքով սահմանված ժամկետը, և չի ներկայացվել միջնորդություն այն վերականգնելու մասին:

Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե լրացել են հայցադիմում ներկայացնելու համար նույն օրենսգրքով սահմանված ժամկետները, իսկ ժամկետները վերականգնելու մասին միջնորդությունը վարչական դատարանը մերժել է:

Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե (...) 2) լրացել է հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը. (...) 9) եթե բացահայտվել են նույն օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը:

Օրենսգրքի 131-րդ հոդվածը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շարքին է դատում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին ՀՀ վարչական դատարանի որոշումները:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Եթե վարչական դատարանը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հիմքով որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին, ապա բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը համարվում է վերացված, իսկ հայցադիմումի ընդունումը՝ մերժված»:

Վերը նշված նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ.

- արդարադատության իրականացումը հայցվորին չի կարող մերժվել, քանի դեռ վերջինիս հնարավորություն չի տրվել օգտվելու դատարան դիմելու համար

օրենքով սահմանված բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու օրենքով ամրագրված իրավունքից,

- օրենսդիրը, հայցվորի՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման շահի հետ հավասարակշռելով դատավարության մյուս մասնակիցների՝ պատասխանողի և երրորդ անձի շահը, վերջիններիս համար երաշխավորել է դատարան դիմելու համար օրենքով սահմանված բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելու իրավական հնարավորությունը,

- հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի խախտման հանգամանքը կարող է դատարանին հայտնի լինել ինչպես հայցադիմումի ընդունելիության փուլում, այնպես էլ կարող է ի հայտ գալ գործի քննության ցանկացած փուլում. այն դեպքում, երբ նշված հանգամանքն ի հայտ է գալիս գործի քննության ընթացքում, դատարանին վերապահված է գործի վարույթը կարճելու լիազորություն, որպիսի լիազորությունը կարող է իրացվել միայն այն դեպքում, երբ հայցվորին հնարավորություն է տրվել օգտվել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու իրավական հնարավորությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, իր որոշումներում անդրադառնալով դատավարական ժամկետները վերականգնելու գործնական խնդիրներին, արտահայտել է հետևյալ ելակետային իրավական դիրքորոշումները. (...) դատավարական ժամկետները բաց թողնված լինելու հանգամանքը կարող է հաստատված համարվել միայն վիճարկվող վարչական ակտի, այդ թվում նաև վարչական բողոքի վերաբերյալ ընդունված վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվա վերաբերյալ անհերքելի ապացույցների առկայության պարագայում: Իսկ նշված հանգամանքի վիճելի լինելու դեպքում հայցվորը պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին:

(...) երբ դատավարական ժամկետները բաց թողնված լինելու հանգամանքը վիճելի է, այսինքն՝ առկա է դատական պաշտպանության դիմած անձի կողմից դատավարական ժամկետները բաց թողնված չլինելու վերաբերյալ ողջամիտ կասկած, անձը գործնականում պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու, իսկ դատարանն էլ պարտավոր է քննարկման առարկա դարձնել և գնահատել դատավարական ժամկետները բաց թողնված չլինելու վերաբերյալ անձի ներկայացրած հիմնավորումները, որովհետև այդ փաստը վիճելի մնալու դեպքում անձին դատական պաշտպանության տրամադրման մերժումը կհանդիսանա դատարանի մատչելիության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակում, ինչի հետևանքով կխախտվի այդ իրավունքի բուն էությունը, քանի որ անձն այլևս կզրկվի իր իրավունքների ենթադրյալ խախտումները վերացնելու հնարավորությունից:

Մինևույն ժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված իրավակարգավորումները լրացուցիչ երաշխիք են հանդիսանում դատարանի մատչելիության իրավունքը չսահմանափակելու իրավաչափ նպատակի իրագործման համար, քանի որ դատավարական նորմերի ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում գործնականում ապահովվում է դատավարական ժամկետները բաց չթողնելու վերաբերյալ անձի ներկայացրած հիմնավորումները քննարկելու և համապատասխան եզրահանգում կատարելու օբյեկտիվ հնարավորություն:



Արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ինչպես նաև 72-րդ հոդվածը պետք է մեկնաբանվեն և կիրառվեն ՀՀ Սահմանադրությամբ ու Կոնվենցիայով երաշխավորված՝ հիմնարար իրավունքների և ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումների լույսի ներքո (*յրեն, Հովհաննես Չամսարյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԳ/7268/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.07.2015 թվականի որոշումը*):

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ դատավարական ժամկետները բաց թողնելու և վերականգնելու մասին իրավակարգավորումները վերաբերում են ոչ միայն հայցադիմումի ընդունելիության, այլև վարչական դատավարության մյուս փուլերին: Ըստ այդմ, վարչական դատավարության բոլոր փուլերում վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի իրավակարգավորմանը համապատասխան պարտավոր է կատարել մատնանշման իր պարտականությունը, այդ թվում՝ նաև՝ մատնանշելով կողմերին դատավարական ժամկետների բացթողման դեպքում դրանք վերականգնելու նպատակով միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ: Այնուամենայնիվ, եթե դատավարության որոշակի փուլում վարչական դատարանը մատնանշման իր պարտականությունը չի կատարել, ապա նա գրկված չէ իր այդ պարտականությունը կատարելու հնարավորությունից դատավարության հետագա փուլերում՝ գործին մասնակցող անձանց միջնորդությունների և ներկայացրած նոր ապացույցների հիման վրա, իսկ այդ պարտականության կատարման պարագայում դատավարության մասնակցի կողմից բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն չներկայացնելու դեպքում կիրառվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատավարական հետևանքը, այն է՝ դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը (*յրեն, Աշոտ Ուլիխանյանն ընդդեմ Երևան համայնքի, Երրորդ անձինք Լուսիկ Պետրոսյանի, «Բարսյան ԼԱՏ նախագիծ» ՍՊԸ-ի, ՀՀ կատավարությանն ստրնֆեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ/2731/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներ կիրառելուց առաջ դատարանները պարտավոր են ապահովել բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու իրական (ոեալ) հնարավորություն: Մինևույն ժամանակ դատարանները պարտավոր են քննարկման առարկա դարձնել վիճարկման հայց ներկայացնելու երկամյա ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու միջնորդությունը և դրա վերաբերյալ կայացնել համապատասխան դատական ակտ: Հակառակ պարագայում, այսինքն՝ բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու հնարավորություն չընձեռելով՝ հանդերձ դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներ կիրառելով՝ կարող է խաթարվել արդարադատության բուն էությունը (*յրեն, Մհեր Մասցականյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/3194/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.07.2020 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով օրենքով դատարան հայց ներկայացնելու համար դատավարական ժամկետներ սահմանելու, ինչպես նաև բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու ինստիտուտի նպատակը և վերահաստատելով ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի խախտման հիմքով գործի վարույթը կարճելու լիազորության իրացումը պետք է ենթարկվի հետևյալ կանոններին: Պատասխանողի կամ երրորդ անձի կողմից՝ հայցը ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու հիմքով գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություն ներկայացվելու դեպքում, եթե դատարանը ևս գտնում է, որ հայցը ներկայացված է ժամկետի խախտմամբ, մինչ այդ հիմքով գործի վարույթը կարճելու լիազորությունն իրացնելը դատարանից պահանջվում է կատարել հետևյալ հաջորդական դատավարական գործողությունները.

- առաջարկել հայցվորին դատարան ներկայացնել միջնորդություն բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ՝ սահմանելով ողջամիտ ժամկետ միջնորդությունը ներկայացնելու համար,

- քննարկել ներկայացված միջնորդությունը,

- միջնորդությունը մերժելու դեպքում հնարավորություն տալ հայցվորին իրացնել ժամկետի վերականգնումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու իրավունքը:

Նշված հաջորդական դատավարական գործողությունները կատարելուց հետո միայն դատարանն իրավասու է կարճել գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով՝ համակցված նույն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հետ, եթե կամ հայցվորը չի իրացրել բաց թողնված ժամկետի վերականգնումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու իր իրավունքը կամ բողոքարկման արդյունքում նշված որոշումը թողնվել է անփոփոխ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործնականում հնարավոր է իրավիճակ, երբ հայցվոր կողմը դատարանի սահմանած ժամկետում չի ներկայացնում բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն: Այս դեպքում, դատարանն իրավասու է կարճելու գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ հաշվի առնելով, որ հայցվորը ձեռնպահ է մնացել բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու իր իրավունքի իրացումից:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վերը նշվածը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ ի սկզբանե հայցադիմումի ընդունելիության փուլում բաց թողնված ժամկետի վերականգնման միջնորդություն չի քննարկվել, և ըստ այդմ՝ առկա չէ հայցադիմումի ընդունելիության փուլում կայացված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատարանի բողոքարկման ենթակա որոշում: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **այն դեպքում, երբ առկա է դատարանի բողոքարկման ենթակա որոշում՝ դատարան հայց ներկայացնելու համար սահմանված բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ, դատավարության մասնակիցներն իրենց շահերի պաշտպանությունը կարող են իրականացնել միայն այդ որոշումը բողոքարկելու միջոցով:**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ դատարանը, հայցադիմումի ընդունելիության փուլում, քննարկելով հայցվորի ներկայացրած՝

հայց ներկայացնելու դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, բավարարել է այն՝ հայցադիմումն ընդունելով վարույթ, սակայն գործի քննության ընթացքում դատավարության մյուս մասնակցի (մասնակիցների) կողմից ներկայացվել են փաստեր ու փաստարկներ՝ հայցադիմումը ժամկետի խախտմամբ ներկայացված լինելու փաստի վերաբերյալ, և այդ հիմքով՝ գործի վարույթը կարճելու միջնորդություն, դատարանը կաշկանդված է հայցադիմումի ընդունելիության փուլում կայացված՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին բողոքարկման ենթակա որոշման առկայության փաստով: Ըստ այդմ՝ հավասարակշռելով հայցվոր կողմի և դատավարության մյուս մասնակիցների շահերը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ **բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատարանի որոշման առկայության պայմաններում պատասխանողի կամ երրորդ անձի շահերի իրավական պաշտպանության պատշաճ միջոցը բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատարանի որոշման բողոքարկումն է:** Հետևաբար, խնդրո առարկա իրավիճակում գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից քննարկման է ենթակա պատասխանողի կամ երրորդ անձի կողմից՝ հայցադիմումի ընդունելիության փուլում կայացված՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին որոշման բողոքարկման արդյունքում այդ որոշումը վերացվելուց հետո միայն: Նշված որոշման բողոքարկման արդյունքում որոշումը վերացվելու դեպքում դատարանն իրավասու է կարճել գործի վարույթը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիման վրա՝ համակցված նույն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հետ:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ եթե վարչական դատարանը հայցադիմումի ընդունելիության փուլում, քննարկելով բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը, վերականգնել է վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված երկամսյա ժամկետը և հայցադիմումն ընդունել վարույթ, ապա չի կարող կարճել գործի վարույթը, քանի դեռ պատասխանողը կամ երրորդ անձը չի բողոքարկել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին որոշումը, և բողոքարկման արդյունքում այդ որոշումը չի վերացվել:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործով հայցվորները, դիմելով Դատարան, պահանջել են անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 14.08.2017 թվականի թիվ 2766-Ա որոշումը, որով օրինական է ճանաչվել սույն գործով երրորդ անձ Եպրաքսյա Սահակյանի կողմից ինքնակամ իրականացված 35.7 քառ. մետր մակերեսով կառույցը (նկուղը) Տիգրան Մեծի պողոտայի հ. 3 շենքում:

**Դատարանը** 24.09.2019 թվականի որոշմամբ գործի վարույթը կարճել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ հետևյալ պատճառաբանությամբ. «...իրավական պետության կարևոր բաղադրիչ հանդիսացող իրավական որոշակիության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունից չի բխում, այն հանգամանքը, որ միայն բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատական ակտի առկայությունը կարող է հնարավոր դարձնել ժամկետանց հայցերով հարուցված գործերի հետագա քննությունը, եթե գործի քննության ընթացքում պարզվում է, որ հայցվորը վիճարկվող վարչական ակտի մասին իրազեկվել է ավելի վաղ, քան այն անսաթիվը, որը ներկայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու

փուլում, և որը դրվել է դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատական ակտի հիմքում: Այս պայմաններում Դատարանի գնահատմամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը հնարավորություն է տալիս ՀՀ վարչական դատարանին գործի քննության ցանկացած փուլում կարճել գործի վարույթը, եթե այդ փուլում պարզվում է, որ հայցադիմում ներկայացնելու պահին լրացած է եղել հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը:

Դատարանի գնահատմամբ որևէ այլ մեկնաբանության դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը կիմաստագրվի (...):

Տվյալ դեպքում սույն վարչական գործում առկա ապացույցների ուսումնասիրությունից Դատարանը պարզեց, որ հայցվորները դեռևս 09.08.2018 թվականին Երևանի քաղաքապետարան հասցեագրած դիմումով (մուտքի համար 2501) պահանջել են Երևանի քաղաքապետի 14.08.2017 թվականի թիվ 2766-Ա և 01.09.2017 թվականի թիվ 2998/Ա որոշումները չեղյալ համարել և բնակիչներին բաժնեմաս հատկացնել:

Հետևաբար Դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ սույն գործով վիճարկվող Երևանի քաղաքապետի 14.08.2017 թվականի թիվ 2766-Ա որոշումը հայցվորները բողոքարկել են վարչական կարգով, որպիսի պայմաններում ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետը սկսում է հոսել բողոքի քննության համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո, այն է՝ 10.09.2018 թվականից, հետևաբար, հայցվորները կարող էին սույն գործով հայցադիմումը ՀՀ վարչական դատարան ներկայացնել մինչև 10.11.2018 թվականը, մինչդեռ հայցադիմումը ՀՀ վարչական դատարան է ներկայացվել 31.01.2019 թվականին: (...) Այսպիսով, Դատարանն արձանագրում է, որ Դատարանի կողմից բաց թողնված դատավարական ժամկետները վերականգնելու վերաբերյալ միջնորդության հիմքում հայցվորների ներկայացուցիչները դրել են ոչ հավաստի տեղեկություններ՝ արհեստականորեն վերականգնելով դատարան հայց ներկայացնելու համար նախատեսված ժամկետները»:

**Վերաքննիչ դատարանը**, 16.12.2020 թվականի որոշմամբ անփոփոխ թողնելով Դատարանի 24.09.2019 թվականի որոշումը, արձանագրել է. « ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն իրավունք է վերապահում Դատարանին գործի քննության ցանկացած փուլում կարճել գործի վարույթը, եթե լրացել է հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը: Այսինքն՝ օրենսդիրը որպես գործի վարույթի կարճման հիմք է սահմանել հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված դատավարական ժամկետի լրացած լինելը, ընդ որում, Դատարանը պարտավոր է կարճել գործի վարույթը դատավարության ցանկացած փուլում: Այսինքն՝ օրենսդիրը սահմանելով գործի վարույթի կարճման նման հիմք, ըստ էության, կանխել է ժամկետանց հայցերի քննությունը:

ՀՀ վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ նշված նորմի առկայությամբ պայմանավորված՝ դատարանը պարտավոր է գործի ողջ քննության ընթացքում միջոցներ ձեռնարկել հայց ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետի բաց թողնված լինելու հանգամանքը բացահայտելու ուղղությամբ և նշված հանգամանքի բացահայտման դեպքում վրա է հասնում գործի վարույթը կարճելու դատավարական հետևանքը:

(...) վարչական դատարանը կաշկանդված չէ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելով, քանի որ վարույթ ընդունելուց

հետո դատավարության ցանկացած փուլում վարչական դատարանը կարող է բացահայտել հայց ներկայացնելու համար նախատեսված դատավարական ժամկետի բացթողումը և կիրառի համապատասխան դատավարական հետևանքներ՝ վարչական գործի վարույթը կարճել: Սույն դեպքում հայցադիմումը վարույթ ընդունելիս, Դատարանը հիմնվելով բացառապես հայցվորների կողմից ներկայացված պնդումների վրա և համարելով, որ ժամկետի բացթողումը պայմանավորված է եղել օբյեկտիվ հանգամանքներով, այն վերականգնել է, սակայն գործի քննության ընթացքում երրորդ անձի կողմից ներկայացվել է գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություն, որի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ հայցվորներն իրազեկ են եղել վիճարկվող վարչական ակտերի գոյության մասին ավելի վաղ:»

Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ հայցվորի կողմից վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված դատավարական ժամկետի խախտմամբ հայցը ներկայացված լինելու պայմաններում, անկախ այն հանգամանքից, առկա է բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդությունը բավարարելու որոշում թե՛ ոչ, վարչական գործի վարույթը ենթակա է կարճման ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, համաձայն որի՝ գործի քննության ցանկացած փուլում դատարանը կարճում է գործի վարույթը, եթե լրացել է հայց ներկայացնելու համար օրենքով նախատեսված ժամկետը և Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով, քանի որ բացահայտվում է հայցադիմումի ընդունումը մերժելու՝ Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքը, այն է՝ դատարանը հայցադիմումի ընդունումը մերժում է, եթե լրացել են հայցադիմում ներկայացնելու համար նույն օրենսգրքով սահմանված ժամկետները:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագործում է հետևյալը.

Սույն գործի փաստական հանգամանքները հանգում են հետևյալին. վիճարկման հայցատեսակով հայցադիմումի ընդունելիության փուլում Դատարանը 07.02.2019 թվականի որոշմամբ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայցվորները, ըստ հայցվորների ներկայացրած փաստերի ու փաստարկների, հայցադիմումը ներկայացրել են երրորդ անձի վերաբերյալ կայացված որոշմանն իրազեկվելուց հետո երկամյա ժամկետում, վերականգնել է վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված բաց թողնված ժամկետը և հայցադիմումն ընդունել է վարույթ: Գործի քննության ընթացքում, սակայն, երրորդ անձ Եպրաքսյա Սահակյանի ներկայացուցչի կողմից ներկայացվել է գործի վարույթը կարճելու վերաբերյալ միջնորդություն այն պատճառաբանությամբ, որ հայցվորները վիճարկվող որոշման մասին իրազեկվել են ավելի վաղ, քան ներկայացված է հայցադիմումում: Ըստ այդմ՝ Դատարանը, հաստատված համարելով հայցվորների կողմից վիճարկվող վարչական ակտին ավելի վաղ իրազեկված լինելու հանգամանքը, կարճել է գործի վարույթը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով: Դատարանը որպես ելակետ հիմք է ընդունել իր այն դիրքորոշումը, որ «բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ դատական ակտի առկայությունը չի կարող հնարավոր դարձնել ժամկետանց հայցերով հարուցված գործերի հետագա քննությունը»:

Վճռաբեկ դատարանը, ընդունելի համարելով հանդերձ Դատարանի նշված միտքը, այնուամենայնիվ, գտնում է, որ Դատարանը, ինչպես նաև Վերաքննիչ

դատարանը սխալ եզրահանգման են եկել խնդրո առարկա իրավիճակում ժամկետանց հայցերով հարուցված գործերի հետագա քննությունը բացառելուն ուղղված դատավարական գործիքակազմի առնչությամբ: Նախևառաջ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը սխալ եզրահանգման է եկել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի կիրառման պայմանների առնչությամբ: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված նորմի հիմքով գործի վարույթը ենթակա է կարճման միայն այն դեպքում, երբ դատարանը հայցվորի համար ապահովել է բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն ներկայացնելու հնարավորությունը, սակայն հայցվորը ձեռնպահ է մնացել նման միջնորդություն ներկայացնելու և այդպիսով բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու հնարավորությունից օգտվելուց: Այլ կերպ՝ գործի վարույթը Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ենթակա է կարճման, եթե գործի քննության ընթացքում հաստատվում է հայցվորի կողմից օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ հայց ներկայացրած լինելու հանգամանքը, սակայն հայցվորը դատարանի սահմանած ժամկետում չի ներկայացնում բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն:

Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմումի ընդունելիության փուլում բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ որոշման առկայության պայմաններում Դատարանն ընդհանրապես չէր կարող իրացնել գործի վարույթը կարճելու իր լիազորությունը որևէ իրավական հիմքով, քանզի այս պայմաններում ժամկետի խախտմամբ ներկայացված հայցի հիման վրա հարուցված գործի հետագա քննությունը բացառելու դատավարական միջոցը դատավարության մասնակիցների՝ պատասխանողի և/կամ երրորդ անձի կողմից բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ Դատարանի որոշման վերաքննության կարգով բողոքարկումն էր:

Վերոհիշյալի հիման Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին իր որոշման առկայության պայմաններում կարճելով գործի վարույթը, իսկ Վերաքննիչ դատարանն անփոփոխ թողնելով Դատարանի բողոքարկող որոշումը, անհամաչափորեն սահմանափակել են հայցվորների դատարանի մատչելիության իրավունքը, ինչի արդյունքում խաթարվել է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բուն էությունը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը ՀՀ վարչական դատարան նոր քննության ուղարկելու համար:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը,

ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և գործն ուղարկվում է նոր քննության, գտնում է, որ տվյալ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.12.2020 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

## 29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի  
որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/2102/05/20**  
**2023թ.**

Վարչական գործ թիվ ՎԴ/2102/05/20

Նախագահող դատավոր՝

Ա. Թովմասյան

Դատավորներ՝

Կ. Ավետիսյան

Ռ. Մախմուդյան

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող և զեկուցող*

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի սեպտեմբերի 22-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ՌԻՈ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.11.2021 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Ընկերության ընդդեմ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի, երրորդ անձինք՝ «Տիտան Օիլ» ՍՊԸ, «Միվաս» ՍՊԸ՝ 17.01.2020 թվականին տրված հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թիվ 223-01 թույլտվությունը և 17.01.2020 թվականին տրված ժամը 24:00-ից հետո աշխատելու համար թիվ 223-3 թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջների մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### **1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել 17.01.2020 թվականին տրված հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թիվ 223-01 թույլտվությունը և 17.01.2020 թվականին տրված ժամը 24:00-ից հետո աշխատելու համար թիվ 223-3 թույլտվությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 13.08.2020 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 05.11.2021 թվականի որոշմամբ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի և «Միվաս» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն, և



Դատարանի 13.08.2020 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել է՝ վարչական գործի վարույթը կարճվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Նորայր Յուզբաշյան):

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջները.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 96-րդ հոդվածը, «Վարչարարության հիմքունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը, 63-րդ հոդվածի 1-ին մասը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ վիճարկման հայցի դեպքում հայցվորի և վարչական մարմնի միջև վեճը վերաբերում է վերջինիս ընդունած վարչական ակտի իրավաչափությանը: Ընդ որում, վարչական ակտի իրավաչափության գնահատումն անհրաժեշտ է ոչ միայն այն անվավեր ճանաչելու համար, այլ վարչարարությամբ պատճառված վնասը հատուցելու, հետագայում համանման վարչական ակտ ընդունելը կանխելու և օրենսդրությամբ նախատեսված այլ նպատակներով: Այսինքն՝ այն դեպքում, երբ վարչական ակտն ուժը կորցրել է, սակայն հայցվորը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում նշված երեք հիմքերից որևէ մեկով արդարացիորեն շահագրգռված է ակտը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, ապա նյութաիրավական վեճը պահպանվում է, սակայն առաջ է գալիս միայն հայցատեսակի հստակեցման անհրաժեշտություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 05.11.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքների քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 17.01.2020 թվականի «Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի» թիվ 223-01 թույլտվության համաձայն՝ հայտատու «Տիտան Օիլ» ՍՊԸ-ին տրվել է Հր. Քոչար փողոցին հարող տարածքում 01.01.2020 թվականից մինչև 31.12.2020 թվականը հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառք իրականացնելու թույլտվություն (հատոր 1-ին, գ.թ. 28):

2) Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 17.01.2020 թվականի «Ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար» թիվ 223-03 թույլտվության համաձայն՝ հայտատու «Տիտան Օիլ» ՍՊԸ-ին տրվել է Հր. Քոչար փողոցին հարող տարածքում 01.01.2020 թվականից մինչև 31.12.2020 թվականը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն (հատոր 1-ին, գ.թ. 29):

#### **4. Վճարելի դատարանի պատճառարանությունները և եզրահանգումը.**

Վճարելի դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարելի բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարելի դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Սույն գործով վճարելի բողոքի քննության շրջանակներում Վճարելի դատարանը կարևորում է հետևյալ իրավական հարցադրումը. արդյո՞ք վիճարկման հայցի քննության շրջանակներում հայցի նյութական օբյեկտի հանդիսացող վարչական ակտի իրավաբանական ուժը կորցնելու փաստը (այդ թվում՝ գործողության ժամկետի ավարտման հետևանքով) հիմք է վեճն ըստ էության սպառված համարելու և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիման վրա գործի վարույթը կարճելու համար:*

ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում են անձի դատական պաշտպանության իրավունքը և դրա արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչները: Վերջիններս իրենց ամբողջության մեջ կոչված են ապահովելու անձի խախտված իրավունքների լիարժեք ու ամբողջական վերականգնումը կամ կանխարգելելու իրավունքների ենթադրյալ խախտումը:

Վարչական արդարադատության ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտ առաջնային նախապայմանն անձի և հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմինների միջև վեճի առկայությունն է: Այս հանգամանքով էլ պայմանավորված՝ օրենսդիրը որպես գործի վարույթը կարճելու հիմք ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում ամրագրել է վեճն ըստ էության սպառվելու հանգամանքը:

Յուրաքանչյուր վեճի առանցքում շահագրգիռ անձի այն կոնկրետ սուբյեկտիվ իրավունքն է, որը վերականգնելու կամ որի խախտումը կանխարգելելու նպատակով հայց է հարուցվել դատարանում: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 66-69-րդ հոդվածներով նախատեսված հայցատեսակների ճիշտ ընտրությունը կարևոր նախապայման է իրավունքի առավել արդյունավետ վերականգնումն ապահովելու համար: Ընդ որում, ճիշտ հայցատեսակի ընտրության գործընթացում ակտիվ դերակատարություն է վերապահված ՀՀ վարչական դատարանին՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով սահմանված՝ գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքին համապատասխան ճիշտ հայցատեսակը մատնանշելու պարտականության կատարման միջոցով:

Օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Նշված հայցատեսակի նյութական օբյեկտն իրավաբանական ուժ ունեցող վարչական ակտն է: Այս հայցատեսակի շրջանակներում դատական պաշտպանություն հայցելու դեպքում խախտված իրավունքի վերականգնումը տեղի է ունենում միջամտող վարչական ակտը վերացնելու միջոցով:

Միաժամանակ, նպատակ ունենալով վարչական արդարադատության ոլորտում երաշխավորել դատական պաշտպանության իրավունքի լիարժեք ու արդյունավետ իրացումը՝ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսել է ճանաչման հայցատեսակ՝ որպես դատավարական կառուցակարգ այն դեպքերի համար, երբ տվյալ միջամտող վարչական ակտն այլևս իրավաբանական ուժ չունի:

Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառնաճ գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

- 1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.
- 2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ
- 3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Նշված ճանաչման հայցի առարկայի շրջանակներում օրենսդիրը հնարավորություն է ընձեռում, ի թիվս այլնի, վիճարկել այն միջամտող վարչական ակտի իրավաչափությունը, որն այլևս իրավաբանական ուժ չունի: Ընդ որում, նման հայց ներկայացնելու դեպքում հայցվորը պետք է հետապնդի Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերում նշված խնդիրների լուծման նպատակ:

Նշված հայցատեսակով հետապնդվող՝ Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերում նշված իրավական նպատակների բովանդակություննից բխում է, որ այս հայցատեսակի շրջանակներում դատական պաշտպանություն հայցելու դեպքում խախտված իրավունքի վերականգնումը տեղի է ունենում.

- կամ նույնաբովանդակ խախտումը կանխելու միջոցով,
- կամ վնասի հատուցման պահանջի համար անհրաժեշտ նախադրյալ հանդիսացող՝ այլևս իրավաբանական ուժ չունեցող վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու փաստի ճանաչման միջոցով,
- կամ հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավ վերականգնելու միջոցով:

Օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցի և 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի առանձնահատկությունների համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այս հայցատեսակների համար ընդհանրական են հետևյալ տարրերը.

- երկու հայցատեսակների դեպքում էլ հայցի նյութական օբյեկտը վարչական ակտն է. մի դեպքում իրավաբանական ուժ ունեցող, մյուս դեպքում՝ իրավաբանական ուժը կորցրած,
- երկու հայցատեսակների դեպքում էլ վարչական ակտի հասցեատերը դատական պաշտպանություն է հայցում ընդդեմ միջամտող վարչական ակտի,

- երկու հայցատեսակների դեպքում էլ վեճի բովանդակությունը կազմում է վարչական ակտի ենթադրյալ ոչ իրավաչափության վերաբերյալ ակտի հասցեատիրոջ և ակտն ընդունած վարչական մարմնի միջև տարաձայնությունը:

Տարբեր են միայն այդ հայցատեսակների շրջանակներում դատական պաշտպանության արդյունքում իրավունքի վերականգնման եղանակները՝ պայմանավորված վիճարկվող վարչական ակտի իրավաբանական ուժ ունենալու և չունենալու հանգամանքով: Եթե վիճարկման հայցի դեպքում իրավունքի վերականգնումը տեղի է ունենում միջամտող վարչական ակտը վերացնելու միջոցով, ապա ճանաչման հայցի դեպքում՝ Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի 1-3-րդ կետերում նշված նպատակներն իրացնելու միջոցով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ և՛ վիճարկման հայցի, և՛ ճանաչման հայցի (Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված) պարագայում հայցվորի դատական պաշտպանության դիմելու հիմնական նպատակը դատարանի կողմից միջամտող վարչական ակտի ոչ իրավաչափ ճանաչումն է, այսինքն՝ վեճը վարչական ակտի ոչ իրավաչափ (իրավաչափ) լինելու հարցի շուրջ է, իսկ համապատասխան վարչական ակտի իրավաբանական ուժը կորցնելու փաստը (այդ թվում՝ վարչական ակտի գործողության ժամկետի ավարտման հիմքով) չի կարող ազդեցություն ունենալ առկա նյութաիրավական վեճի բովանդակության վրա: Նշված հանգամանքն ազդեցություն ունի միայն տվյալ սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության համար ճիշտ հայցատեսակի ընտրության վրա: Այսինքն՝ «նյութաիրավական վեճ» և «հայցի առարկա» հասկացությունները նույնական չեն և իրավակիրառ պրակտիկայում չեն կարող նույնացվել:

Հաշվի առնելով վիճարկման հայցի և Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի վերը նշված ընդհանրությունները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանում գործի քննության ընթացքում վարչական ակտի իրավաբանական ուժը կորցնելու փաստը որևէ կերպ չի ենթադրում, որ տվյալ ակտի ոչ իրավաչափության (իրավաչափության) շուրջ կողմերի միջև վեճն այլևս սպառված է: Վիճարկվող վարչական ակտի իրավաբանական ուժը կորցնելու դեպքում անփոփոխ է մնում վեճի բովանդակությունը կազմող՝ վարչական ակտի ենթադրյալ ոչ իրավաչափության վերաբերյալ ակտի հասցեատիրոջ և ակտն ընդունած վարչական մարմնի միջև տարաձայնությունը: Անփոփոխ է մնում նաև վեճի առանցքում գտնվող այն իրավունքը, որի պաշտպանությամբ շահագրգիռ անձն սկզբնապես ներկայացրել է վիճարկման հայց: Վարչական ակտի իրավաբանական ուժը կորցնելու դեպքում պարզապես տեղի է ունենում խախտված իրավունքի վերականգնման եղանակների փոխակերպում:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատարանում վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում վիճարկվող վարչական ակտի իրավաբանական ուժը կորցնելու դեպքում իրավաչափ չէ վեճն ըստ էության սպառված համարելը և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով գործի վարույթը կարճելը: Նման իրավիճակում ՀՀ վարչական դատարանի իրավաչափ վարքագիծը ճիշտ հայցատեսակ մատնանշելու պարտականության կատարումն է: Հաշվի առնելով, որ իրավաբանական ուժը կորցրած վարչական ակտը հանդիսանում է Օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ճանաչման հայցի նյութական օբյեկտը՝ նման իրավիճակում ՀՀ վարչական

դատարանից պահանջվում է առաջարկել հայցվորին ներկայացված վիճարկման հայցը փոխարինել ճանաչման հայցով:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ վեճը կարող է սպառված համարվել այն դեպքում միայն, երբ վերանում է տվյալ վեճի առանցքում գտնվող սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը, այն է՝ վերականգնվում է խախտված իրավունքը, որի պաշտպանությամբ շահագրգիռ անձը դիմել է դատարան կամ եթե վերացել է այն իրավունքի խախտման վտանգը, որը կանխարգելելու նպատակով անձը դիմել է դատարան: Մինչդեռ, վիճարկվող վարչական ակտի իրավաբանական ուժը կորցնելու արդյունքում հայցվորի իրավունքի վերականգնում տեղի չի ունենում և իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունը չի վերանում:

Վարչական ակտը, ի թիվս այլնի, իրավաբանական ուժը կորցնում է ակտի գործողության ժամկետի ավարտման ուժով: Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը կարող է գործել անորոշ կամ որոշակի ժամկետով: (...) Որոշակի ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է մինչև տվյալ ակտով նախատեսված ժամկետի լրանալը: Նշված նորմի բովանդակությունից բխում է, որ որոշակի ժամկետով ընդունված վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է, երբ ավարտվում է այդ ակտով նախատեսված ժամկետը:

Վերը նշված իրավական դիրքորոշումներին համապատասխան Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ ՀՀ վարչական դատարանում վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործի քննության ընթացքում լրանում է որոշակի ժամկետով ընդունված վիճարկվող վարչական ակտի գործողության ժամկետը, տվյալ վարչական ակտի իրավաչափության (ոչ իրավաչափության) շուրջ նյութաիրավական վեճը, անկախ նշված հանգամանքից, շարունակում է գոյություն ունենալ: Վիճարկման հայցի նյութական օբյեկտ հանդիսացող վարչական ակտի իրավաբանական ուժը կորցնելը՝ այդ ակտի գործողության ժամկետի ավարտման հիմքով, չի ենթադրում առկա նյութաիրավական վեճի սպառում, քանզի հայցվորի խախտված իրավունքների ամբողջական վերականգնում այդ պարագայում տեղի չի ունենում: ՀՀ վարչական դատարանում գործի քննության ընթացքում որոշակի ժամկետով ընդունված վիճարկվող վարչական ակտի գործողության ավարտի դատավարական հետևանքը ոչ թե Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով գործի վարույթի կարճումն է, այլ վիճարկման հայցը ճանաչման հայցատեսակով փոխարինելու առաջարկով մատնանշում կատարելն է:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այն դեպքում, երբ վիճարկվող վարչական ակտի գործողության ժամկետը լրանում է ՀՀ վարչական դատարանի կողմից վիճարկման հայցի հիման վրա վճիռ կայացնելուն հաջորդող դատավարության փուլերում, նշված հանգամանքը որևէ դատավարական հետևանք չի կարող առաջացնել՝ հաշվի առնելով, որ ՀՀ վարչական դատարանը վարչական ակտի գործողության ժամկետի լրացած չլինելու պայմաններում իրավաչափորեն գործը քննել է վիճարկման հայցի շրջանակներում:

*Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկարմանը.*

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել 17.01.2020

թվականին տրված հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թիվ 223-01 թույլտվությունը և 17.01.2020 թվականին տրված ժամը 24:00-ից հետո աշխատելու համար թիվ 223-3 թույլտվությունը:

**Դատարանը**, հայցը բավարարելով, արձանագրել է, որ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարը պարտավոր էր վիճարկվող թույլտվությունները տալ միայն բենզալցակայանի՝ քաղաքաշինական և տեխնիկական անվտանգության նորմերի պահանջներին համապատասխանելու դեպքում, մինչդեռ տվյալ դեպքում սույն գործի փաստերով հաստատվում է, որ վեճի առարկա հանդիսացող բենզալցակայանը չի համապատասխանում քաղաքաշինական և տեխնիկական անվտանգության նորմերին, որպիսի պայմաններում չէր կարող թույլատրվել հեղուկ վառելիքի վաճառք, ուստի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարը պարտավոր էր մերժել սույն գործով վեճի առարկա հանդիսացող թույլտվությունների տրամադրումը:

Դատարանը, անդրադառնալով երրորդ անձի այն փաստարկին, որ քաղաքաշինական կանոնների պահպանումը չի հանդիսանում վիճարկվող որոշումների տրամադրման համար անհրաժեշտ հիմք, արձանագրել է, որ այն անհիմն է, քանի որ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրաձախ առևտրի կետի համար սահմանված է քաղաքաշինական և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան կառուցված լինելու պահանջ, իսկ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով և Երևան քաղաքի ավագանու որոշմամբ վարչական շրջանի ղեկավարն իրավասու էր սույն գործով վիճարկվող թույլտվությունները տալ բացառապես հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրաձախ առևտրի կետի՝ քաղաքաշինական և տեխնիկական անվտանգության նորմերին համապատասխան կառուցված լինելու դեպքում:

**Վերաքննիչ դատարանը**, Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով կարճել է վարչական գործի վարույթը, նշելով, որ «(...) հայցվորի հիմնական պահանջը վերաբերում է 17.01.2020 թվականի «Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի» թիվ 223-01 թույլտվությունը և 17.01.2020 թվականի «Ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար» թիվ 223-03 թույլտվությունն անվավեր ճանաչելուն, իսկ վիճարկվող թույլտվությունների գործողության ժամկետը սպառվել է 2020թ. դեկտեմբերի 31-ին, և (...) վեճն ըստ էության սպառվել է»:

Վճռաբեկ դատարանը, վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը, արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերից հետևում է, որ Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 17.01.2020 թվականի «Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի» թիվ 223-01 թույլտվության համաձայն հայտատու «Տիտան Օիլ» ՍՊԸ-ին տրվել է Հր. Քոչար փողոցին հարող տարածքում 01.01.2020 թվականից մինչև 31.12.2020 թվականը հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառք իրականացնելու թույլտվություն և Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի 17.01.2020 թվականի «Ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար» թիվ 223-03 թույլտվության համաձայն՝ հայտատու «Տիտան Օիլ» ՍՊԸ-ին տրվել է Հր. Քոչար փողոցին հարող տարածքում 01.01.2020 թվականից մինչև 31.12.2020 թվականը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված վարչական ակտերը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, հանդիսանում են որոշակի ժամկետով ընդունված վարչական ակտեր, և դրանց գործողությունը սահմանափակվել է 01.01.2020-31.12.2020 թվականներն ընկած ժամանակահատվածով: Այդ ակտերը դրանցում նշված ժամկետի ավարտից հետո կորցրել են իրավաբանական ուժը:

Ընկերությունն իրավաչափորեն վիճարկման հայց է ներկայացրել 02.04.2020 թվականին՝ վիճարկվող վարչական ակտերի գործողության ժամկետում խնդրելով անվավեր ճանաչել 17.01.2020 թվականին տրված հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թիվ 223-01 թույլտվությունը և 17.01.2020 թվականին տրված ժամը 24:00-ից հետո աշխատելու համար թիվ 223-3 թույլտվությունը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանում գործի քննության ընթացքում, ՀՀ վարչական դատարանի կողմից սույն գործով 13.08.2020 թվականին վճիռը կայացնելու պահի դրությամբ վիճարկվող վարչական ակտերի գործողության ժամկետը դեռևս ավարտված չէր, և վերջիններս իրավաբանական ուժը չէին կորցրել: Այդ ակտերի գործողության ժամկետն ավարտվել է, և ըստ այդմ՝ դրանք կորցրել են իրավաբանական ուժը վերաքննության փուլում:

Վերաքննիչ դատարանը կարճել է վարչական գործի վարույթը վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով՝ այն հիմնավորմամբ, որ վիճարկվող վարչական ակտերի գործողության ժամկետներն սպառվել են 31.12.2020 թվականին:

Մինչդեռ, ՀՀ վճռաբեկ դատարանը վերը նշված իրավական դիրքորոշումներին համապատասխան նախ արձանագրում է, որ վիճարկվող վարչական ակտերի գործողության ժամկետի ավարտը և ըստ այդմ՝ իրավաբանական ուժը կորցնելու հանգամանքը չէր կարող դիտարկվել որպես փաստական հիմք՝ վեճն ըստ էության սպառված լինելու պատճառաբանությամբ գործի վարույթը կարճելու համար, քանզի այդ ակտերի իրավաչափության (ոչ իրավաչափության) վերաբերյալ իրավական վեճը կողմերի միջև շարունակվել է անկախ դրանց իրավաբանական ուժը կորցնելու հանգամանքից:

Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վիճարկվող վարչական ակտերի վերաքննության փուլում իրավաբանական ուժը կորցնելու հանգամանքը որևէ դատավարական հետևանք չէր կարող առաջացնել, քանզի Դատարանի կողմից 13.08.2020 թվականին վճիռը կայացնելու պահի դրությամբ վիճարկվող վարչական ակտերի գործողության ժամկետը դեռևս ավարտված չէր, և Դատարանն իրավաչափորեն գործը քննել է վիճարկման հայցի շրջանակներում:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման է եկել վեճն ըստ էության սպառված լինելու փաստի և այդ հիմքով գործի վարույթը կարճելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված հիմքի առկայության վերաբերյալ: Սույն դեպքում բացակայել է գործի վարույթը վեճն ըստ էության սպառված լինելու հիմնավորմամբ կարճելու փաստական հիմքը, որպիսի հիմքի բացակայության պայմաններում գործի վարույթի կարճումը սահմանափակել է հայցվոր Ընկերության դատարանի մատչելիության իրավունքը՝ զրկելով վերջինիս իր գործի ըստ էության քննության հնարավորությունից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը համարում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի

150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը ՀՀ վերաքննիչ վարչական դատարան ամբողջ ծավալով նոր քննության ուղարկելու համար:

**5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով այն, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, և գործն ուղարկվում է նոր քննության, գտնում է, որ տվյալ պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին պետք է անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 05.11.2021 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ



**ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՁ ՄՏՆԵԼԸ**  
**30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/1870/05/21 2023թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/1870/05/21

Նախագահող դատավոր՝

Ա. Սարգսյան

Դատավորներ՝

Կ. Ավետիսյան

Կ. Բաղդասարյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող և զեկուցող*

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Լ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի հունիսի 07-ին

գրավոր ընթացակարգով քննելով Երևանի քաղաքապետարանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.06.2022 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Հելենա Ֆոն Հարթմանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ 14.01.2021 թվականի թիվ Վ-1/22 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Հելենա Ֆոն Հարթմանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 14.01.2021 թվականի թիվ Վ-1/22 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Խսանդանյան) (այսուհետ՝ Դատարան) 22.06.2021 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 23.06.2022 թվականի որոշմամբ Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 22.06.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Երևանի քաղաքապետարանը (ներկայացուցիչ՝ Զավեն Սմբատյան):

Վճռաբեկ բողոքի պատասխանն չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ, 127-րդ, 131-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին դատական ակտը միջանկյալ բնույթի դատական ակտ է, որն ուժի մեջ է մտնում այդ որոշումը ստանալու պահից 5 օր հետո, իսկ ՀՀ գործող օրենսդրությունը չի նախատեսում միջանկյալ դատական ակտը բողոքարկելու ուժով դրա կատարումը կասեցնելու գործիքակազմ: Ըստ այդմ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ այն դեպքում, երբ կասեցված է շինարարության թույլտվության՝ որպես վարչական ակտի գործողությունը, ապա դրա հասցեատերը որոշ ժամանակով զրկվում է այդ վարչական ակտով իրեն տրված իրավունքից անարգել օգտվելու հնարավորությունից, այսինքն՝ որոշ ժամանակով տեղի է ունենում իրավունքի սահմանափակում: Վիճարկման ողջ ընթացքում վարչական ակտի հասցեատերը չունի իրավունք՝ իրականացնելու որևէ շինարարական աշխատանք և, եթե վերջինիս կողմից իրականացվում են շինարարական աշխատանքներ, ապա այդ գործողությունները որակվում են որպես ինքնակամ (առանց թույլտվության), ուստի նշված գործողությունները կատարող անձը ենթակա է վարչական պատասխանատվության՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով: Նման պայմաններում, առարկայական չէ, թե առանձին վերցրած կատարված աշխատանքի համար անհրաժեշտ է արդյոք շինարարության թույլտվություն, թե ոչ, քանի որ այդ աշխատանքի կատարումն ուղղված է կասեցված շինարարության թույլտվությամբ սահմանված ծավալի իրացմանը՝ վարչական ակտի կասեցված լինելու պայմաններում, այսինքն՝ շարունակելով շինարարական աշխատանքները՝ կառուցապատողը նպատակ է ունեցել վերջնական տեսքի բերել շինությունը՝ անտեսելով շինարարության թույլտվության գործողության կասեցված լինելու փաստական հանգամանքը:

Վերոգրյալի հաշվառմամբ անհիմն է Վերաքննիչ դատարանի դատողությունն առ այն, որ եթե առանձին վերցրած կատարված աշխատանքի համար չի պահանջվում շինարարության թույլտվության առկայություն, ապա չի կարող կիրառվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցը, ուստի Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումն էական նշանակություն կունենա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասի միատեսակ կիրառության համար՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նշված իրավանորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր հետևյալ հարցադրման համատեքստում. արդյոք միջանկյալ դատական ակտերը բոլոր դեպքերում ուժի մեջ են մտնում այն ստանալուց հինգ օր հետո, անկախ նրանից դրանք բողոքարկվել են, թե՛ ոչ:

Վերագրյալի հիման վրա բողոք բերող անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 23.06.2022 թվականի որոշումը և փոփոխել այն հայցը մերժել, կամ գործն ուղարկել նոր քննության:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 01.07.2020 թվականին Հելենա Ֆոն Հարթմանին և այլոց տրվել է թիվ 01/18-Մ-5296-791 շինարարության թույլտվությունը Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի թիվ 51 շենքի թիվ 10, թիվ 17, թիվ 18, թիվ 28, թիվ 29, թիվ 30, թիվ 39, թիվ 40 և թիվ 41 բնակարաններ հասցեում միասնական մասնաարդային հարկի իրականացման /միջինից բարձր ռիսկայնության օբյեկտ, III կատեգորիա/ կառուցման աշխատանքների կատարման համար (**հատոր 1-ին, գ.թ. 135**).

2) 01.07.2020 թվականին տրված թիվ 01/18-Մ-5296-791 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին Անելիա Միքաելյանի, Սերգեյ Ասատուրյանի, Նունե Գևորգյանի և Աշոտ Դորոխյանի կողմից ներկայացված հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/9163/05/20 վարչական գործի շրջանակներում ՀՀ վարչական դատարանը 16.11.2020 թվականին կայացրել է «Վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը, որով կասեցվել է Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի թիվ 51 շենք հասցեում միասնական մասնաարդային հարկի իրականացման համար 01.07.2020 թվականին տրված թիվ 01/18-Մ-5297-791 շինարարության թույլտվության կատարումը՝ մինչև նույն վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: ՀՀ վարչական դատարանի 16.11.2020 թվականի որոշումը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.01.2021 թվականի որոշմամբ վերացվել է: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի թիվ ՎԴ/9163/05/20 վարչական գործով 14.04.2022 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.01.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը վերացվել է և կայացվել է նոր դատական ակտ՝ ՀՀ վարչական դատարանի 16.11.2020 թվականի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ (*անալիզի փաստ, տե՛ս նաև [www.Court.am](http://www.Court.am) պաշտոնական կայքը*).

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության տարածքային 3-րդ բաժնի գլխավոր մասնագետի՝ 15.12.2020 թվականի թիվ 037043 արձանագրության համաձայն՝ նույն թվականի նոյեմբերի 24-ին Երևանի քաղաքապետարանի «թեժ գծի» հեռախոսահամարին ստացված տեղեկատվության հիման վրա կատարած տեղատեսությամբ պարզվել է, որ ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/9163/05/20 որոշմամբ բողոքարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը բավարարվել է՝ Մաշտոցի պողոտայի թիվ 51 շենք հասցեում մասնաարդային հարկի կառուցման համար 01.07.2020 թվականին տրված թիվ 01/18-Մ-5296-791 շինարարության թույլտվության կատարումը կասեցվել է մինչև նույն վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելը, սակայն շինարարական աշխատանքները շարունակվել են: Իրավախախտումը հայտնաբերվել է 24.11.2020 թվականին (**հատոր 1-ին, գ.թ. 43, 100**).

4) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետի 14.01.2021 թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-1/22 որոշմամբ Հելենա Ֆոն Հարթմանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ նշանակվել է վարչական տույժ՝ 200.000 ՀՀ դրամի չափով (**հատոր 1-ին, գ.թ. 19, 96**):

**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, քանի որ սույն վարչական գործով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասի կապակցությամբ՝ պայմանավորված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված միջանկյալ դատական ակտերի բողոքարկման արդյունքում այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու արգելքի բացակայությամբ, առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Վերոգրյալով պայմանավորված և սույն գործի փաստերի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասի կարգավորման համարեքսարում անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցադրմանը, թե արդյո՞ք վիճարկման հայցերով վիճարկվող վարչական ակտի կարարումը հայցվորի միջնորդության հիման վրա ՀՀ վարչական դատարանի կողմից կասեցնելու վերաբերյալ որոշման՝ վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկումը նշված որոշումն օրինական ուժի մեջ մտնելու արգելք է հանդիսանում:*

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, (...):

Վճռաբեկ դատարանը տվյալ դեպքում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական

իր առաքելությունն իրացնելու և ըստ այդմ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասի կիրառման կապակցությամբ իրավունքը զարգացնելու անհրաժեշտությունից ելնելով հարկ է համարում անդրադառնալ նշված իրավանորմի բովանդակությանը և բացահայտել դրանով կարգավորվող հարաբերությունները:

Իրավագիտությանը հայտնի իրավական կարգավորման տիպերի հիմքում ընկած է երկու կանխադրույթ՝ «թույլատրվում է այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով» և «թույլատրվում է այն, ինչ սահմանված է օրենքով»: Առաջին կանխադրույթը գործում է անձի համար, իսկ երկրորդը՝ պետական մարմինների և պաշտոնատար անձանց համար:

Վերոգրյալ կանխադրույթներն ստացել են իրենց սահմանադրական ամրագրումը: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Օրինականության սկզբունքի կիրառման պարտադիրության համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ հանրային օրենքը կիրառող իշխանության մարմինները, ներառյալ դատական իշխանության մարմինները՝ դատարանները, սահմանափակված են օրինականության սկզբունքով և իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով:

Դատավարական իրավունքը, լինելով հանրային իրավունքի ճյուղ, օժտված է թույլատրական իրավական կարգավորման տիպով: Այսինքն՝ արդարադատություն իրականացնող կամ արդարադատությանը օժանդակող պետական մարմինները և պաշտոնատար անձինք կարող են կատարել այնպիսի գործողություններ և ընդունել այնպիսի որոշումներ, որոնք նախատեսված են օրենքով: Պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից օրենքով չնախատեսված, սակայն և օրենքին չհակասող գործողությունների կատարումը կամ որոշումների ընդունումը կխախտի օրինականության սահմանադրական սկզբունքը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ դատավարական իրավունքում կարևորվում են իրավական որոշակիության և արդարադատության կանխատեսելիության սկզբունքները: Դատավարական նորմերի կիրառումը չպետք է որևէ պարագայում հանգեցնի նշված երկու սկզբունքների խախտմանը:

Դատավարության մասնակիցները, յուրաքանչյուր պարագայում դիմելով դատարան, առաջնորդվում են արդարադատության կանխատեսելիության սկզբունքով, այսինքն՝ գործում է այն կանխավարկածը, որ դատարանները կիրառում են կանոններ, որոնք հստակ նախատեսված են իրավական նորմերով: Օրինակ՝ այն պայմաններում, երբ հստակ նախատեսված է դատական ակտի ուժի մեջ մտնելու ժամկետ, դատարանները պարզապես իրավասու չեն որևէ այլ նորմ կիրառելու և դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու այլ ժամկետ նախատեսելու, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենսդիրն է նշվածի համար թույլատրող նորմ սահմանել:

ՀՀ սահմանադրական դատարանը 03.05.2016 թվականի թիվ ՍԴՌ-1270 որոշմամբ նշել է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես

այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ ՀՀ սահմանադրական դատարանը 18.04.2014 թվականի թիվ ՄԴՈ-1148 որոշմամբ արձանագրել է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատարանների կողմից կիրառելի յուրաքանչյուր օրենսդրական նորմ հանդիսանում է արդարադատության կանխատեսելիության սկզբունքի առանձին տարր, և դատական պաշտպանության դիմող անձը, հնարավորություն ունենալով իրագրել լինել օրենսդրական կարգավորումներին, իր դատական պաշտպանության միջոցները ընտրում է՝ ելնելով դատարանի կողմից դատավարական օրենսդրությամբ հստակ նախատեսված կանոնների կիրառման կանխավարկածից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այլ բան նախատեսված չէ նույն օրենսգրքով:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք բերելիս վարչական դատարանի ակտերն օրինական ուժի մեջ չեն մտնում:

Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց 5 օր հետո:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի նույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատական ակտերը:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունը հնարավորություն է տալիս արձանագրելու, որ օրենսդիրը սահմանել է գործն ըստ էության լուծող դատական ակտերի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում օրինական ուժի մեջ մտնելու կանոնը: Այնուհետև նույն հոդվածի այլ մասով սահմանել է դատական ակտերի՝ օրենքով սահմանված ժամկետում դատավարության մասնակիցների կողմից բողոքարկման պարագայում դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու արգելք:

Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորման կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածը վերնագրված է հետևյալ կերպ. «Վարչական դատարանի դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը», հետևաբար քննարկվող նորմը վերաբերելի է ՀՀ վարչական դատարանի դատական ակտերին, այսինքն՝ օրենսդրի նպատակն է եղել սահմանել ՀՀ վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու արգելք՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու հանգամանքով պայմանավորված:

Նշված դիրքորոշման համար հիմք է հանդիսանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը:

Բացի այդ, օրենսդիրը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանել է առանձին կարգավորում, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 148-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, իսկ երկրորդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք բերելիս այդ ակտերն օրինական ուժի մեջ չեն մտնում:

Դատավարական օրենքի անալոգիայի բացառման համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիրը, ունենալով նպատակ ՀՀ վարչական դատարանի կամ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը պայմանավորելու այդ դատական ակտերի բողոքարկմամբ, հստակ կարգավորումներ է նախատեսել դատավարական օրենքով և բացառել գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման պարագայում դրանց օրինական ուժի մեջ մտնելը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը սահմանել է հստակ կանոն միջանկյալ դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետի վերաբերյալ: Մասնավորապես նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված միջանկյալ դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալուց 5 օր հետո: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը չի նախատեսում որևէ այլ կանոն կամ բացառություն, որը թույլատրող կանոն կհանդիսանա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված միջանկյալ դատական ակտի՝ ստանալու պահից հնգօրյա ժամկետում օրինական ուժի մեջ մտնելու օրենսդրական կարգավորումից շեղվելու համար:

Դատավարական օրենքների անալոգիայի բացառման վերաբերյալ վերոգրյալ պատճառաբանությունների համատեքստում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ օրենսդիր կողմից սահմանված՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերին վերաբերող կանոնը կիրառելի չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված միջանկյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետի հաշվարկման պարագայում, որպիսի դիրքորոշումը բխում է նաև նշված միջանկյալ դատական ակտի էությունից:

Այսպես. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված միջանկյալ դատական ակտը գործի ըստ էության լուծմանն ուղղված դատավարական գործընթացի օրինաչափ օղակի մի մասն է կազմում: Այդպիսով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված միջանկյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար կրճատ ժամկետի նախատեսումը և դատական ակտի բողոքարկման դեպքում դրա օրինական ուժի մեջ մտնելու վրա ազդեցություն չունենալն օրինաչափ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ միջանկյալ դատական ակտով լուծվում են ընթացակարգային բնույթի հարցեր, որոնք չեն հանգեցնում դատական պաշտպանության դիմած անձի պահանջի ըստ էության քննությանը:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր 13.09.1989 թվականի «Վարչական գործերով ժամանակավոր դատական պաշտպանության վերաբերյալ» թիվ (89) 8 հանձնարարականով արձանագրել է, որ դատարանների կողմից կիրառվող ժամանակավոր պաշտպանության միջոցները կարող են լինել վարչական ակտի կատարումը ամբողջությամբ կամ մասնակի կասեցնելու, վարչական ակտի ընդունման պահին կամ հետագա ցանկացած ժամանակ եղած դրությունը ամբողջությամբ կամ մասնակի վերականգնելու և վարչակազմի վրա դատարանի լիազորություններից բխող ցանկացած պարտականություն ղնելու միջոցով: Նույն հանձնարարականով նշվել է, որ եթե վարչական ակտը վիճարկվում է դատարանում և դատարանը դեռևս չի հրապարակել իր որոշումը, հայցվորը կարող է դիմել նույն կամ նման իրավասություն ունեցող այլ դատարան՝ վարչական ակտից պաշտպանվելու ժամանակավոր միջոցներ կիրառելու համար: Վարչական ակտից պաշտպանվելու ժամանակավոր միջոցներ կիրառելու խնդրանքով դատարան դիմելու իրավունք ունեն նաև շահագրգիռ անձինք: Նույն հանձնարարականով նաև նշվել է, որ վարչական ակտից պաշտպանվելու ժամանակավոր միջոցներ կարող են կիրառվել մասնավորապես, երբ վարչական ակտի կատարումը կարող է ծանր վնաս հասցնել, որը վերականգնելը մեծ ջանքեր կպահանջի, և եթե *prima-facie* առկա են վարչական ակտի առոչնչության վերաբերյալ ապացույցներ<sup>3</sup>(1):

Այսպես. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցման համար սահմանել է ընդհանուր կանոն, այն է՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Այսինքն՝ օրենսդիրն առանձին որոշման կայացման անհրաժեշտություն չի սահմանել, և վիճարկման հայցի վարույթ ընդունելը պայմանավորել է նաև վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցմամբ մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը սահմանել է վերոգրյալ ընդհանուր կանոնից բացառություններ, որոնց առկայության պայմաններում վիճարկման հայցի վարույթ ընդունելն ինքնըստինքյան չի հանգեցնում վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցման: Օրենսդիրը, սակայն հաշվի առնելով նաև նշված հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի առկայության պայմաններում հայցվորին զգալի վնաս պատճառելու կամ նրա իրավունքների պաշտպանության անհնարին դառնալու հավանականությունը, սահմանել է հնարավորություն վերջինիս համար ներկայացնելու վարչական ակտի կատարման կասեցման մասին միջնորդություն:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցերի դեպքում վարչական դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հայցի ապահովման գործիքակազմ չի նախատեսել վիճարկման հայցի պարագայում, սակայն հաշվի

<sup>3</sup> Տե՛ս Council of Europe Committee of Ministers, Recommendation No. R(89) 8 of the Committee of Ministers to member states on provisional court protection in administrative matters, 13 September 1989, էջ 2 (հղումը՝ <https://rm.coe.int/16804f288f>):



առնելով վիճարկման հայցի առարկա հանդիսացող վիճարկվող վարչական ակտի կատարման արդյունքում դատավարության մասնակցի համար բացասական հետևանքների առաջացման վտանգը՝ նախատեսել է վարչական ակտի կատարման կասեցման իրավական գործիքակազմը:

ՀՀ սահմանադրական դատարանը 29.12.2020 թվականի թիվ ՍԳԱՌ-248 որոշմամբ արձանագրել է, որ վիճարկման հայցի պարագայում օրենսդիրը չի նախատեսել հայցի ապահովման միջոց կիրառելու հնարավորություն, սակայն սահմանել է հայցվորի իրավունքների նախնական պաշտպանության մեկ այլ եղանակ: Մասնավորապես, վիճարկման հայցի դեպքում վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցվում է օրենքի ուժով՝ վիճարկման հայցով հայցադիմումը վարույթ ընդունելն ինքնին հիմք է հանդիսանում տվյալ վարչական ակտի կատարումը կասեցնելու համար (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բացառություններով): Նշված կարգավորման տրամաբանությունը, ի թիվս այլնի, կայանում է նրանում, որ վիճարկման հայցի բավարարման դեպքում դատական ակտն ուժի մեջ մտնելով վիճարկվող վարչական ակտը պարզապես կորցնում է իր իրավաբանական ուժը: Այլ կերպ ասած՝ նշված տեսակի հայցի բավարարման դեպքում կայացվելիք վերջնական դատական ակտի կատարումը, որպես այդպիսին, պայմանական բնույթ է կրում, քանի որ այն չի ենթադրում միջնորդավորված որևէ գործողություն և, այդպիսով, չի առաջացնում կատարման հետ կապված այնպիսի դժվարություններ, որոնք բնորոշ են դասական իմաստով կատարում ենթադրող դատական ակտերին: Վերոգրյալը հաշվի առնելով՝ վիճարկման հայցի պարագայում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը նախատեսել է ոչ թե հայցի ապահովման միջոցի, այլ նախնական իրավական պաշտպանության կիրառման հնարավորություն, այն է՝ վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցում՝ դրանով իսկ որոշակի իրավական երաշխիքներ տրամադրելով հայցվորին՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման ենթատեքստում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական ակտի կատարման կասեցումն ըստ էության վերջնարդյունքում ունի վերջնական դատական ակտի կատարումն ապահովելու նպատակ և բնութագրվում է որպես անհապաղ կիրառվող միջոց՝ հաշվի առնելով չկիրառման արդյունքում հնարավոր բացասական հետևանքների վրա հասնելու վտանգը: Ուստի վարչական ակտի կատարման կասեցման անհապաղ չկատարումը և օրինական ուժի մեջ մտնելու ժամկետը բողոքարկմամբ պայմանավորելը և վերաքննության ու վճռաբեկության կարգով բողոքարկման արդյունքում օրենքով սահմանված ստանալու պահից հնգօրյա ժամկետում օրինական ուժի մեջ մտնելու ժամկետի հետաձգումը կհանգեցնի նրան, որ վարչական ակտի կատարման կասեցման օրենսդրական մեխանիզմները կկորցնեն իրենց իմաստն ու նպատակը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասն իրավակիրառ պրակտիկայում պետք է զարգանա այն ուղղությամբ, որ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերի բողոքարկումն արգելք չի հանդիսանում այդ ակտերի օրինական ուժի մեջ մտնելու համար:

**Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հելենա Ֆոն Հարթմանը, դիմելով

Դատարան, խնդրել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 14.01.2021 թվականի թիվ Վ-1/22 որոշումը:

**Դատարանը**, բավարարելով հայցը, արձանագրել է, որ «(...)Անելիսա Միքսելյանը, Սերգեյ Ասատրյանը, Նունե Գևորգյանը և Աշոտ Դորոնիսյանը 09.11.2020 թվականին հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ Հելենա Ֆոն Հարթմանին և այլոց 01.07.2020 թվականին պրամադրված 01/18-Մ-5296-791 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու և Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի թիվ 51 շենք հասցեում միասնական մանսարդային հարկի իրականացման նպատակով 10.12.2018 թվականի հ.01/18-05/1-Մ-10399-848 նսխագծման թույլտվության և 20.01.2020 թվականի հ.01/18-05/1-Գ-8838-1 նսխագծման թույլտվության պրամադրման գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին: ՀՀ վարչական դատարանի (դատավոր Անի Հարությունյան) 16.11.2020 թվականի որոշմամբ հայցադիմումը Երևան համայնքի կողմից Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի թիվ 51 շենք հասցեում միասնական մանսարդային հարկի իրականացման համար 01.07.2020 թվականին արված թիվ 01/18-Մ-5296-791 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասով, ընդունվել է վարույթ, մնացած մասով հայցադիմումի ընդունումը մերժվել է, ինչպես նաև «Վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշմամբ կասեցվել է 01.07.2020 թվականի 01/18-Մ-5296-791 շինարարության թույլտվության կատարումը՝ մինչև թիվ ՎԴ/9163/05/20 վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: «Վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշման դեմ օրենքով սահմանված ժամկետում ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 14.12.2020 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ, իսկ 08.01.2021 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է: Վերաքննիչ վարչական դատարանի 08.01.2021 թվականի որոշման դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: Ասվածը հիմք է տալիս Դատարանին արձանագրել, որ ՀՀ վարչական դատարանի (դատավոր Անի Հարությունյան) 16.11.2020 թվականի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշումն օրինական ուժի մեջ չի մտել, որպիսի պայմաններում վիճարկվող շինարարության թույլտվության կատարումը դեռևս կասեցված չէր և այդ ընթացքում իրականացվող շինարարությունը չէր կարող լինել ոչ իրավաչափ: Հետևաբար Դատարանը գտնում է, որ իրավախախտման դեպքի առկայությունը չի հաստատվում»:

**Վերաքննիչ դատարանը** մերժել է Երևանի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը՝ պատճառաբանելով, որ «(...) «ստանց թույլտվության» եզրույթը ներառում է բոլոր այն դեպքերը, երբ կառուցապարման իրավական հիմքը շինարարության թույլտվությունը, բացակայում է: Ընդ որում, դա վերաբերում է ինչպես շինարարության թույլտվության առհասարակ չլինելու, այնպես էլ դրա կատարման կասեցման գործողության ժամանակավոր դադարեցման պարագային: Ուղղակի, ի տարբերություն շինարարության թույլտվության առհասարակ չլինելու դեպքի, շինարարության թույլտվության կատարման կասեցումը ենթադրում է բնության մեջ գոյություն ունեցող վարչական ակտի իրագործման անհնարինություն ՀՀ վարչական դատարարության օրենսգրքով նախատեսված իրավական արգելքի ուժով:

(...) շինարարության թույլտվության կատարման կասեցումը ենթադրում է կառուցապարմում իրականացնելու իրավունքի ժամանակավոր դադարեցում, որպիսի ժամանակահատվածում իրականացվող շինարարական աշխատանքները պետք է որակվեն որպես «ստանց թույլտվության» իրականացվող շինարարական աշխատանքներ, ինչը, իր հերթին, հիմք է Վարչական իրավախախտումների

վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ վարչական պատասխանատվության ենթարկելու համար:

*Մինչդեռ, րվյալ դեպքում գործի նյութերով չի հիմնավորվում սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ («ստանց թույլտվության») կառուցելու փաստը, այսինքն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցակազմի օբյեկտիվ կողմի սակայությունը»:*

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թիվ ՎԴ/9163/05/20 վարչական գործի շրջանակներում 16.11.2020 թվականին կայացված որոշմամբ կասեցվել է 01.07.2020 թվականին սույն վարչական գործով հայցվոր Հելենա Ֆոն Հարթմանին տրված թիվ 01/18-Մ-5296-791 շինարարության թույլտվության կատարումը:

Վարչական գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության տարածքային 3-րդ բաժնի գլխավոր մասնագետի կողմից 15.12.2020 թվականին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 037043 արձանագրությունը (հիմք՝ 15.12.2020 թվականի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 037043 արձանագրություն), իսկ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետի 14.01.2021 թվականին «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ Վ-1/22 որոշմամբ Հելենա Ֆոն Հարթմանը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 200.000 ՀՀ դրամի չափով:

Վերոգրյալի կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում վկայակոչել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասը:

Այսպես.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելը, բացառությամբ գյուղական համայնքներում տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված անհատական բնակելի տան՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված վարչական իրավախախտման առարկան ինքնակամ կառույցն է (շենքը, շինությունը), հետևաբար նշված իրավադրույթի ուժով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար նախևառաջ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք անձի կողմից կատարված շինարարական աշխատանքներն ուղղված են եղել ինքնակամ կառույցի (շենքի, շինության) իրականացմանը, թե՛ ոչ (տե՛ս, Սասունիկ Մշեցյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության ծառայության պետի, երրորդ անձ Ռուբեն Աղաջանյան թիվ

ՎԴ/9692/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք շինարարության թույլտվության կատարումը կասեցված լինելու ժամանակահատվածում շենքեր և շինություններ կառուցելը, վերակառուցելը կամ տեղադրելը կամ շինարարական այլ աշխատանքներ իրականացնելն ու շարունակելը համարժեք են առանց շինարարության թույլտվության այդպիսի աշխատանքներ կատարելուն և հիմք են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի կիրառմամբ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե շինարարական գործունեությունը փաստացի իրականացվում է շինարարության թույլտվության կատարումը կասեցված լինելու ժամանակահատվածում, ապա այն պետք է որակվի որպես առանց շինարարության թույլտվության իրականացվող շինություն, որպիսի արարքի համար վարչական պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով» (տես, *Վարդան Չոփուրյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/3864/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.11.2022 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ՀՀ վարչական դատարանի 16.11.2020 թվականի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը, լինելով միջանկյալ դատական ակտ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի ուժով, օրինական ուժի մեջ է մտել ստանալու պահից հնգօրյա ժամկետում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատավարական կանոններ կիրառելիս դատարանները պետք է խուսափեն թե՛ չափից դուրս ձևականությունից, որը կարող է ազդել քննության անաչառության վրա, թե՛ չափից դուրս ճկունությունից, որը կարող է նախատեսված **դատավարական պահանջները դարձնել անօգուտ** (*Hasan Tunç-ը և այլք ընդդեմ Թուրքիայի, 2017, §§ 32-33*):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն պարագայում դատավարական նորմերի չափից դուրս ճկուն կիրառումը և արդյունքում վարչական ակտի կատարման կասեցման մասին որոշման ուժի մեջ մտնելը բողոքարկման փաստի հետ պայմանավորելը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված կարգավորումը դարձրել է անօգուտ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական ակտի կատարման կասեցման միջնորդության քննարկման փուլում դատարանների համար ուղենիշային գործոն է հանդիսանում այն հիմնավոր կասկածի առկայությունը, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

Սույն որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումները համադրելով սույն վարչական գործի փաստերի հետ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանի կողմից թիվ ՎԴ/9163/05/20 վարչական գործով 16.11.2020 թվականի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշմամբ կասեցվել է Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի թիվ 51 շենք հասցեում միասնական մանսարդային հարկի իրականացման համար 01.07.2020 թվականին տրված թիվ 01/18-Մ-5297-791 շինարարության թույլտվության կատարումը, ուստի այդ որոշման ուժի մեջ մտնելուց հետո սույն հասցեում կատարված շինարարական աշխատանքները համարվում են

**առանց թույլտվության** կատարված, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի իմաստով դիտարկվում են որպես ինքնակամ, անկախ «Վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկված լինելու հանգամանքից:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ է Հելենա Ֆոն Հարթմանին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետի 14.01.2021 թվականի թիվ Վ-1/22 որոշումը, իսկ հակառակի մասին ստորադաս դատարանների պատճառաբանությունները հերքվում են սույն որոշմամբ ներկայացված հիմնավորումներով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերոգրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

## **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը,

ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի 6-րդ պարբերության համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով (...):

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

ՀՀ վճարեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի վիճարկման համար օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտները՝ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք, չեն կարող կրել պետական տուրք վճարելու կամ վճարված կամ վճարման ենթակա պետական տուրքի գումարները փոխհատուցելու պարտականություն՝ թե՛ վարչական դատարանում, թե՛ դատական բողոքարկման փուլերում՝ անկախ գործի ելքից (*դե՛ս, Գագիկ Ավետիսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/1390/05/17 վարչական գործով ՀՀ վճարեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով, որ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով հայցադիմումը դատարան ներկայացնելու պահին գործող օրենքի ուժով ազատված են պետական տուրք վճարելու պարտականությունից՝ դատական բողոքարկման բոլոր փուլերում, Վճարեկ դատարանն արձանագրում է, որ վերը նշված իրավական դիրքորոշումը կիրառելի է նաև այն դեպքում, երբ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտի վիճարկման գործերով պատասխանող վարչական մարմնի վճարեկ բողոքի հիման վրա օրենքի ուժով պետական տուրք վճարելու պարտականությունից ազատված սուբյեկտի հայցը ստորադաս դատարանի դատական ակտի բեկանման և փոփոխման արդյունքում մերժվում է վճարեկ դատարանի կողմից: Այլ կերպ ասած՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտը վիճարկելու պահանջով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքից հայցադիմումը դատարան ներկայացնելու պահին գործող օրենքի ուժով ազատված հայցվորի վրա չի կարող դրվել պատասխանող վարչական մարմնի կողմից վճարեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման պարտականություն՝ անկախ այդ վճարեկ բողոքի քննության արդյունքում գործի ելքն ի վնաս հայցվորի փոխվելու հանգամանքից:

Վճարեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով հայցվոր Հելենա Ֆոն Հարթմանն ազատված է պետական տուրք վճարելու պարտականությունից, մինչդեռ հայցադիմումի համար վերջինս վճարել է 4.000 ՀՀ դրամ պետական տուրք, իսկ Երևանի քաղաքապետարանը վերաքննիչ և վճարեկ բողոքների համար վճարել է համապատասխանաբար՝ 10.000 ՀՀ դրամ և 20.000 ՀՀ դրամ պետական տուրք:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի «ա» կետի հիմքով Հելենա Ֆոն Հարթմանի կողմից հայցադիմումի համար վճարված 4.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի գումարը ենթակա է վերադարձման:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից վճարված՝ վերաքննիչ բողոքի համար սահմանված 10.000 ՀՀ դրամի չափով և վճռաբեկ բողոքի համար սահմանված 20.000 ՀՀ դրամի չափով պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ հաշվի առնելով, որ Հելենա Ֆոն Հարթմանը, հայցադիմումը դատարան ներկայացնելու պահին գործող «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի 6-րդ պարբերության ուժով ազատված է սույն գործով դատարան դիմելու համար սահմանված պետական տուրքի վճարման պարտավորությունից, և սույն գործով վճռաբեկ բողոք ներկայացնելու համար Երևանի քաղաքապետարանի կողմից վճարված օրենքով սահմանված չափով պետական տուրքի փոխհատուցման պարտականությունը չի կարող դրվել Հելենա Ֆոն Հարթմանի վրա:

Մինևույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 23.06.2022 թվականի որոշումը և այն փոփոխել. Հելենա Ֆոն Հարթմանի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ 14.01.2021 թվականի թիվ Վ-1/22 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ**  
**ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԱՐՏԱԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ**  
**ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ**

**1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական	Վարչական գործ թիվ <u>ՎԳ/3551/05/22</u> դատարանի որոշում 2023թ.
Վարչական գործ թիվ	ՎԳ/3551/05/22
Նախագահող դատավոր՝	Ա. Առաքելյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետև՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող</i>	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
<i>զեկուցող</i>	Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
	Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
	Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի հոկտեմբերի 06-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Նվեր Պետրոսյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետև՝ Ծառայություն) Ծառայության 27.01.2022 թվականի թիվ ԱՖ 844389 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.09.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ Նվեր Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը,



## Պ Ա Ր Զ Ե Ց

### **1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Նվեր Պետրոսյանը պահանջել է անվավեր ճանաչել Ծառայության 27.01.2022 թվականի թիվ ԱՖ 844389 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Վ. Միքայելյան) (այսուհետ՝ Դատարան) 13.07.2022 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 08.09.2022 թվականի որոշմամբ Նվեր Պետրոսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 13.07.2022 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նվեր Պետրոսյանը (ներկայացուցիչ՝ Մհեր Բադալյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 59-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ, 65-69-րդ, 72-73-րդ, 77-80-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը նշել է, որ այն դեպքում, երբ վարչական ակտի դեմ վարչական կարգով բողոք ներկայացնելու ժամկետը բաց թողնվելուց հետո ներկայացված բողոքը վարչական մարմինը քննության չի առել՝ բողոքի քննության համար սահմանված ժամկետը լրացած լինելու հիմքով, ապա չի հաղթահարվել մինչև դատարան հայց ներկայացնելը վարչական ակտը վարչական կարգով բողոքարկելու պարտադիր պահանջը: Մինչդեռ հայցվորը Ծառայության 27.01.2022 թվականի թիվ ԱՖ 844389 որոշումն ստանալուն պես օրենքով սահմանված կարգով բողոքարկել է վարչական մարմնին և ի պատասխան՝ ստացել է 30.03.2022 թվականի թիվ 7-13-25685 գրությունը, որը կցել է հայցադիմումին:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 08.09.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և (կամ) կայացնել նոր դատական ակտ:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի խախտում, ինչը հանգեցրել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտման, ինչի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանի ինդիքն է հստակեցնել, թե ո՞ր դեպքերում է բավարարված համարվում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-րդ մասով սահմանված՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերի արտատարական կարգով բողոքարկելու պահանջը որպես ՀՀ վարչական դատարան դիմելու նախապայման՝ վերահասարակելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-րդ մասով սահմանված ՀՀ վարչական դատարան դիմելու պարտադիր նախապայմանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումները:

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է անձի իրավունքների ու ազատությունների ինչպես դատական կարգով պաշտպանության իրավունքը (61-րդ հոդված), այնպես էլ վարչական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածը սահմանում է՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Նշված սահմանադրական նորմերին համահունչ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածը սահմանում է.

- «1. Ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:
- 2. Վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած՝
- ա) վարչական մարմին.
- բ) վարչական մարմնի վերադաս վարչական մարմին»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-րդ մասը սահմանում է. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց (զանգատարկվելուց) հետո»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 123-րդ, 123.1-ին, 123.3-րդ, 123.4-րդ, 123.5-րդ (բացառությամբ 8-րդ, 9-րդ, 14-րդ և 15-րդ մասերով նախատեսված իրավախախտումների), 123.6-րդ, 123.7-րդ, 124-124.4-րդ, 124.6-րդ, 125-րդ, 126-րդ, 128-րդ, 129.2-րդ, 129.3-րդ, 131-րդ, 132-րդ, 135.2-րդ և 140-րդ հոդվածներով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով զանգատարկվելուց (բողոքարկվելուց) հետո:

Ամրագրելով վերը նշված իրավախախտումների վերաբերյալ գործերով ընդունված վարչական ակտերի վարչական կարգով բողոքարկման պարտադիր պահանջը՝ որպես ՀՀ վարչական դատարան դիմելու նախապայման՝ օրենսդիրը միաժամանակ սահմանել է վարչական կարգով բողոքարկման կարգն ու ժամկետը, որոնց համապատասխան շահագրգիռ անձը պարտավոր է իրացնել վարչական կարգով բողոքարկման իր իրավունքը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերի, այդ թվում՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերի վարչական կարգով բողոքարկման

կարգն ու ժամկետը սահմանված են համապատասխանաբար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որոշումը վարչական կարգով գանգատարկվում է (բողոքարկվում է) վարչական ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավասու վարչական մարմին (...):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը նույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագործ մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածը սահմանում է. «(...) Որոշման պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում անձամբ հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ այն ընդունվել է, ինչպես նաև տուժողին՝ նրա խնդրանքով: Որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե՝

1) այն ստորագրությամբ առձեռն հանձնվել է հասցեատիրոջը, կամ հասցեատերը հրաժարվել է որոշումն ստանալուց, և առկա է որոշումը հանձնողի նշումն այդ մասին (...):»:

Այսպիսով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերի դեմ իրավական պաշտպանության ընթացակարգի հիմնական տարրերն են.

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը չեն կարող բողոքարկվել դատական կարգով, քանի դեռ չեն բողոքարկվել վարչական կարգով. վարչական կարգով բողոքարկման նախապայմանը չպահպանելը հիմք է նշված վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջով հայցադիմումը վերադարձնելու համար,

- վարչական ակտը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտը՝ վարչական ակտի հասցեատերը կամ խախտումը տեսանկարահանման կամ լուսանկարահանման միջոցով ամրագրված լինելու դեպքում՝ իրավախախտումը կատարած անձը պետք է վարչական կարգով պարտադիր բողոքարկումն իրականացնի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ և 288-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետում, այն է՝ վարչական բողոքը պետք է վարչական մարմին ներկայացվի վարչական ակտը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով իրեն հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, իսկ այն դեպքում, երբ բողոքը ներկայացնելու նշված ժամկետը բաց է թողնված, պետք է ներկայացնի բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն՝ վկայակոչելով ժամկետը բաց թողնելու այս կամ այն հարգելի պատճառը (պատճառները):

Համադրելով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերի բողոքարկման ընթացակարգի տարրերն ու վարչական

բողոքի քննության կարգն ու ժամկետը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերի արտադատական պաշտպանության միջոցն սպառված է համարվում, և ըստ այդմ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-րդ մասի պահանջը բավարարված է համարվում հետևյալ դեպքերում.

- օրենքով սահմանված կարգով ու ժամկետում ներկայացված վարչական բողոքի ըստ էության քննության արդյունքում վարչական մարմինն ընդունել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ որոշումն անփոփոխ թողնելու, իսկ բողոքն առանց բավարարման թողնելու մասին որոշում. այս դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան վիճարկման հայց կարող է ներկայացվել բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում,

- շահագրգիռ անձը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված 30-օրյա ժամկետում վարչական կարգով բողոքարկել է վարչական ակտը, սակայն վարչական մարմինը, անգործություն դրսևորելով, բողոքի քննության համար նույն օրենսգրքի 291-րդ հոդվածով սահմանված 30-օրյա ժամկետում բողոքը քննության չի առել. այս դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան վիճարկման հայց կարող է ներկայացվել բողոքի քննության համար սահմանված 30-օրյա ժամկետն ավարտվելուց հետո երկամսյա ժամկետում,

- վարչական ակտը վարչական կարգով բողոքարկվել է օրենքով սահմանված ժամկետում, սակայն վարչական մարմինը բողոքը թողել է առանց քննարկման՝ օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառաբանությամբ. այս դեպքում վիճարկման հայց կարող է ներկայացվել վարչական բողոքն առանց քննարկման թողնելու վերաբերյալ վարչական մարմնի գրությունն ստանալուց հետո երկամսյա ժամկետում,

- շահագրգիռ անձը վարչական բողոքը ներկայացրել է օրենքով սահմանված 30-օրյա ժամկետի խախտմամբ՝ ներկայացնելով ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն, սակայն վարչական մարմինը բողոքը թողել է առանց քննարկման՝ օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառաբանությամբ, առանց քննարկելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը. այս դեպքում վիճարկման հայց կարող է ներկայացվել վարչական բողոքն առանց քննարկման թողնելու վերաբերյալ վարչական մարմնի գրությունն ստանալուց հետո երկամսյա ժամկետում:

Ըստ այդմ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է նաև, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերի արտադատական պաշտպանության միջոցն սպառված չի համարվում, և հետևաբար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-րդ մասի պահանջը բավարարված չի համարվում. եթե.

- շահագրգիռ անձը վարչական բողոքը ներկայացրել է օրենքով սահմանված երեսնօրյա ժամկետի խախտմամբ՝ չներկայացնելով ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ

միջնորդություն, և վարչական մարմինն իրավաչափորեն վարչական բողոքը թողել է առանց քննարկման,

- շահագրգիռ անձը վարչական բողոքը ներկայացրել է օրենքով սահմանված երեսնօրյա ժամկետի խախտմամբ և վերջինիս կողմից ներկայացված՝ ժամկետի բացթողումը հարգելի համարելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը քննարկվել ու մերժվել է վարչական մարմնի կողմից՝ վարչական բողոքը թողնելով առանց քննարկման:

Միաժամանակ հաշվի առնելով, որ առանձին դեպքերում հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում կարող է օբյեկտիվորեն հնարավոր չլինի պարզել վարչական բողոքն օրենքով սահմանված կարգով ու ժամկետում ներկայացված լինելու հանգամանքը կամ նշված հանգամանքը վիճելի է՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատարանը նշված հանգամանքը կարող է պարզել նաև գործը քննության նախապատրաստելու փուլում: Եթե գործը քննության նախապատրաստելու փուլում հաստատվի, որ հայցվորը վարչական բողոքը ներկայացրել է օրենքով սահմանված կարգի ու ժամկետի խախտմամբ, ծագում է գործի վարույթը կարճելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը, այն է՝ վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ վարչական կարգով բողոքարկման պահանջի բավարարված լինելու փաստի վիճելի մնալու դեպքում անձին դատական պաշտպանության տրամադրման մերժումը կհանդիսանա դատարանի իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակում, ինչի հետևանքով կխախտվի այդ իրավունքի բուն էությունը, քանի որ անձն այլևս կզրկվի իր իրավունքների ենթադրյալ խախտումը վերացնելու հնարավորությունից (*տե՛ս, Արարակ Ոսկանյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/9834/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.10.2022 թվականի որոշումը*):

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության կողմից Նվեր Պետրոսյանի նկատմամբ 27.01.2022 թվականին կայացվել է վարչական իրավախախտման գործով թիվ ԱՖ 844389 որոշումը (**գ.թ. 29**): Սույն գործում բացակայում է նշված որոշման դեմ Նվեր Պետրոսյանի ներկայացրած վարչական բողոքը: Ծառայության պետի տեղակալ Ն. Սարգսյանը 30.03.2022 թվականի թիվ 7-13-25685 գրությամբ հայտնել է. «Ի պատասխան Ձեր 28.03.2022թ. ՄԴ/19340-22 դիմումի հայտնում եմ, որ (...) վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 27.01.2022 թվականին կայացված ԱՖ844388, ԱՖ844389 որոշումները համարվում են անձամբ հանձնված 27.01.2022 թվականին, քանի որ Դուք հրաժարվել եք ստանալ այն, և որոշման հիմք հանդիսացող արձանագրության մեջ առկա է այն հանձնողի նշումն այդ մասին, հետևաբար 28.03.2022 թվականին դիմում ներկայացնելով՝ Ձեր կողմից բաց է թողնվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված՝ վերը նշված որոշման դեմ գանգատ տալու 30-օրյա ժամկետը, ուստի դիմումը քննարկման ենթակա չէ» (**գ.թ. 10**): Նշված գրությունը հայցվորն ստացել է 07.04.2023 թվականին (**գ.թ. 10**), իսկ Ծառայության 27.01.2022 թվականի թիվ ԱՖ 844389 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի վերաբերյալ հայցադիմումը փոստային առաքման եղանակով ներկայացվել է 03.06.2022 թվականին (**գ.թ. 14**):

ՀՀ վարչական դատարանը 15.06.2022 թվականի որոշմամբ վերադարձրել է Նվեր Պետրոսյանի ներկայացրած հայցադիմումը՝ պատճառաբանելով, որ հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերում բացակայել է վիճարկվող

Ծառայության 27.01.2022 թվականի թիվ ԱՖ844389 որոշումը կամ դրա պատճենը և առկա չէր վիճարկվող ակտը ներկայացնելու անհնարինության վերաբերյալ որևէ գրավոր ապացույց, ինչպես նաև չէր ներկայացվել բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը:

Դատարանը 13.07.2022 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է ՀՀ վարչական դատարանի 15.06.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումն ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում հայցադիմումի՝ գործի քննության համար արգելք հանդիսացող սխալները չվերացնելու հիմքով: Դատարանն արձանագրել է, որ թեև կրկին ներկայացված հայցադիմումին կցվել է վիճարկվող վարչական ակտը, սակայն Դատարանի գնահատմամբ՝ օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ բողոքը վարչական մարմին ներկայացնելը և Ծառայության պետի տեղակալի 30.03.2022 թվականի թիվ 7-13-25685 գրության առկայությունն ինքնին բավարար չեն հայցվորի վերադասության կարգով բողոքարկման պարտականությունը հաղթահարված համարելու համար:

**Վերաքննիչ դատարանը**, հիմնավոր համարելով Դատարանի պատճառաբանությունը, 08.09.2022 թվականի որոշմամբ մերժել է հայցվորի վերաքննիչ բողոքը՝ անփոփոխ թողնելով Դատարանի 13.07.2022 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

Վերաքննիչ դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ «ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վարչական ակտը վարչական կարգով բողոքարկվելու պահանջի իմաստը կայանում է նրանում, որ վարչական ակտի անվավերության հարցով դատարան դիմելու անհրաժեշտությունը, և, ըստ այդմ, հայց հարուցելու իրավունքը, կարող է ծագել միայն այն դեպքում, երբ իրականացվել է նույն վարչական ակտի վարչական կարգով ներկայացված բողոքի ըստ էության քննություն: Իսկ այն դեպքում, երբ վարչական ակտի դեմ վարչական կարգով բողոք ներկայացվելու դեպքում առկա չէ վարչական մարմնի կողմից ներկայացված բողոքի ըստ էության քննության վերաբերյալ որևէ գրություն կամ որոշում, ապա դա նշանակում է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված՝ մինչև դատարան հայց հարուցելը վարչական ակտը վարչական կարգով բողոքարկելու պարտադիր պահանջը չի կարող համարվել կատարված, որպիսի իրողությունը հայցադիմումը վերադարձնելու հիմք է, հետագայում արգելք գործի քննության համար»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ՝ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն առ այն, որ արտադատական կարգով խնդրո առարկա վարչական ակտերի բողոքարկման պայմանը կարող է բավարարված համարվել միայն, «երբ իրականացվել է նույն վարչական ակտի վարչական կարգով ներկայացված բողոքի ըստ էության քննություն», չի բխում թիվ ՎԴ/9834/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.10.2022 թվականի որոշմամբ արտահայտված և սույն գործով վերահաստատված իրավական դիրքորոշումներից: Այդ դիրքորոշումների համաձայն՝ վարչական կարգով բողոքարկման պարտադիր պահանջը կարող է բավարարված համարվել նաև այն դեպքում, երբ վարչական մարմնի կողմից վարչական կարգով բողոքի ըստ էության քննություն չի իրականացվել: ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից առանձնացվել են այն դեպքերը, երբ վարչական բողոքի ըստ էության քննության բացակայության

պայմաններում ևս վարչական կարգով բողոքարկման պարտադիր պահանջը համարվում է բավարարված:

Սույն գործի նյութերում հայցվորի կողմից վարչական ակտի մասին օրենքով սահմանված կարգով իրազեկվելու օրվա վերաբերյալ առկա են երկու իրարամերժ ամսաթվեր. համաձայն Ծառայության պետի տեղակալ Ն. Սարգսյանի 30.03.2022 թվականի թիվ 7-13-25685 գրության և վիճարկվող վարչական ակտում Ծառայության տեսուչի կատարած գրառման՝ հայցվոր Նվեր Պետրոսյանը հրաժարվել է ստանալ 27.01.2022 թվականի վարչական իրավախախտման գործով թիվ ԱՖ 844389 որոշումը և այդ ակտը համարվել է անձամբ հանձնված՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի կարգավորմանը համապատասխան: Մյուս կողմից Նվեր Պետրոսյանը հայցադիմումում նշել է, որ վիճարկվող որոշման իր օրինակը կայացման օրը չի տրամադրվել իրեն, որից հետո իր 03.02.2022 թվականի գրավոր դիմումի հիման վրա թիվ 7-10656 գրությամբ փոստային առաքման ծառայության միջոցով որոշումն ստացել է 28.02.2022 թվականին, և հայցադիմումին կից ներկայացրել է Ծառայության պետի տեղակալ Ն. Սարգսյանի 11.02.2022 թվականի թիվ 7-10656 գրության և փոստային ծրարի պատճենները (**գ.թ. 3, 8**): Ըստ այդմ՝ ելակետ ընդունելով 28.02.2022 թվականը՝ պնդել է, որ վարչական բողոքը ներկայացրել է օրենքով սահմանված ժամկետում:

Արդյունքում հայցվորի կողմից վիճարկվող որոշմանն օրենքով սահմանված կարգով իրազեկվելու օրվա, ըստ այդմ՝ նաև՝ վարչական կարգով բողոքն օրենքով սահմանված ժամկետում ներկայացրած լինելու (չլինելու) իրարամերժ պնդումների պայմաններում՝ սույն գործով առկա է ՀՀ վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ դիրքորոշումներում նշված այն իրավիճակը, երբ հայցադիմումի ընդունելիության փուլում վարչական բողոքն օրենքով սահմանված կարգով ու ժամկետում ներկայացված լինելու(չլինելու), հետևաբար նաև՝ վարչական կարգով բողոքարկման պայմանը բավարարված լինելու(չլինելու) հանգամանքը վիճելի է: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ նշված հանգամանքների վիճելի լինելու պայմաններում հնարավոր չէր հայցադիմումի ընդունելիության փուլում միանշանակ եզրահանգում կատարել վարչական կարգով բողոքն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված չլինելու և ըստ այդմ՝ վարչական կարգով բողոքարկման պայմանը բավարարված չլինելու մասին: Այդ հանգամանքը ենթակա էր պարզման հայցադիմումը վարույթ ընդունելու պայմաններում՝ գործը քննության նախապատրաստելու փուլում: Հետևաբար, նշված հանգամանքի վիճելի լինելու պայմաններում իրավաչափ չէ հայցադիմումի ընդունումը մերժելը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, մերժելով Դատարանի 13.07.2022 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման դեմ Նվեր Պետրոսյանի բերած վերաքննիչ բողոքը, սահմանափակել է բողոքաբերի Դատարանի մատչելիության իրավունքը՝ չսպահովելով ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցի ու հետապնդվող նպատակների միջև:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանը, կայացնելով «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով, սահմանափակել է Նվեր Պետրոսյանի դատարանի մատչելիության իրավունքը այն աստիճան, որ վերջինս գրկվել է դատական կարգով խախտված իրավունքները վերականգնելու

հնարավորությունից, ինչի արդյունքում խաթարվել է դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բուն էությունը, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 08.09.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 13.07.2022 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ



**ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻՆ ԲՆՈՐՈՇ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ**

**2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/3073/05/22  
2023թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/3073/05/22

Նախագահող դատավոր

Կ. Մաթևոսյան

**Ո Ր Ո Շ ՈՒՄ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- նախագահող* Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- զեկուցող* Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
- Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի հոկտեմբերի 13-ին

գրավոր ընթացակարգով քննելով «ԱԳՐՈՏԵԽ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 22.08.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ վարչական գործով՝ ըստ հայցի Ընկերության ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի)՝ Կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետի «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» 22.03.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000047 և 18.04.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000068 որոշումները ոչ իրավաչափ լինելու հիմքով վերացնելու, Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պաշտոնատար անձանց 11.04.2021 թվականի և 21.04.2022 թվականի չհամարակալված որոշումները վերացնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է ոչ իրավաչափ լինելու հիմքով վերացնել Կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետի «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» 22.03.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000047 և 18.04.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000068 որոշումները, ինչպես նաև վերացնել Կոմիտեի

Արարատյան մաքսատուն-վարչության պաշտոնատար անձանց 11.04.2021 թվականի և 21.04.2022 թվականի չհամարակալված որոշումները:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Դարբինյան) (այսուհետ՝ Դատարան) 24.05.2022 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 22.08.2022 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 24.05.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ի պաշտոնե ներկայացուցիչ՝ Նաիրա Խաչատրյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը, 53-րդ հոդվածի 1-ին մասը և 63-րդ հոդվածը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 5-րդ հոդվածի 2-րդ մասը, 66-րդ հոդվածի 1-ին մասը, 69-րդ հոդվածի 1-ին մասը, 73-րդ հոդվածի 7-րդ մասը, 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 145-րդ հոդվածի 2-րդ մասը:*

*Բողոք քերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, գալով եզրահանգման, որ վիճարկվող որոշումներն ինքնին որևէ հետևանք հայցվորի համար չեն առաջացնում, անտեսել է այն հանգամանքը, որ Կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետը, ապրանքը դասակարգելով ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1404 90 000 8 ծածկագրով, վատթարացրել է Ընկերության փաստացի դրությունը՝ վերջինիս համար առաջացնելով ապրանքի ներմուծման համար ավել մաքսատուրք և ավելացված արժեքի հարկ վճարելու պարտավորություն:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է վերանայել Վերաքննիչ դատարանի 22.08.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը՝ վերացնել Դատարանի 24.05.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել

է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. մաքսային մարմնի կողմից ապրանքների ոչ ճիշդ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշումն օժտված է արդյոք վարչական ակտին բնորոշ հատկանիշներով, և ըստ այդմ՝ դրա իրավաչափությունը կարո՞ղ է քննարկվել վիճարկման հայցի շրջանակներում:*

Օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով ամրագրելով, որ ՀՀ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդված), նույն օրենսգրքի 66-69-րդ հոդվածներում սահմանել է այն հայցատեսակները, որոնց միջոցով շահագրգիռ անձինք իրավասու են իրացնել դատարանի մատչելիության իրենց իրավունքը: Ճիշտ հայցատեսակի ընտրությունը կարևոր երաշխիք է անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման համար: Ճիշտ հայցատեսակի ընտրությունն ապահովվում է ՀՀ վարչական դատարանի՝ ճիշտ հայցատեսակ մատնանշելու պարտականությամբ (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մաս):

Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վիճարկման հայցի առարկան միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու պահանջն է: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է՝ հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*Կրե՛ս, Սասնկեյ Մեյքումյանն ընդդեմ ՀՀ կատավարության թիվ ՎՊ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

Վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիզիկական ու իրավաբանական անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովի կողմից 18.02.2004 թվականին ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, որի 1-ին հոդվածում ամրագրվել է որ նույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտն արտաքին

ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասում օրենսդիրն առանձնացրել է վարչական ակտի տեսակները՝ սահմանելով դրանցից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշները: Այն է՝ նույն օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

ա) բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

բ) միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածով սահմանված «վարչական ակտ» եզրույթի բովանդակությանը և վարչական ակտին բնորոշ հատկանիշներին հանգամանորեն անդրադարձել է իր մի շարք որոշումներում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասով, որպես ընդհանուր կանոն, վարչական ակտը սահմանել է որպես արտաքին ներգործություն ունեցող որոշում, կարգադրություն, հրաման կամ այլ անհատական իրավական ակտ, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Այսինքն՝ վարչական ակտի որակումն օրենսդիրը պայմանավորել է ոչ թե դրանով ուղղակի իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հանգամանքով, այլ միայն նշված իրավական հետևանքների առաջացմանն ուղղված լինելու հանգամանքով: Այլ կերպ ասած, բնավ պարտադիր չէ, որ վարչական ակտը անպայմանորեն անձանց համար ուղղակիորեն սահմանի, փոփոխի, վերացնի կամ ճանաչի իրավունքներ և պարտականություններ, բավարար է միայն այն, որ այդ վարչական ակտն ուղղված լինի այդ իրավունքների և պարտականությունների սահմանմանը, փոփոխմանը, վերացմանը կամ ճանաչմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասում օրենսդիրը կոնկրետացրել է բարենպաստ և միջամտող վարչական ակտերին ներկայացվող պահանջները, ի թիվս այլնի, ամրագրելով նաև վարչական ակտի միջոցով անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող կամ վատթարացնող պայմանը: Այսինքն՝ վարչական վարույթը եզրափակող իրավական ակտի բնորոշումն օրենսդիրը պայմանավորել է նաև վարչական ակտի միջոցով անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող կամ վատթարացնող հետևանքի առաջացմամբ: Այլ կերպ ասած, եթե վարչական վարույթը եզրափակվել է այնպիսի վարչական ակտի ընդունմամբ, որի միջոցով

ցանկացած եղանակով բարելավել կամ վատթարացել է անձանց իրավական կամ փաստացի դրությունը, ապա իրավական համակարգում այդ ակտը չի կարող բնորոշվել այլ կերպ, քան համապատասխանաբար որպես բարենպաստ կամ միջամտող վարչական ակտ:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումը, սակայն, չի բացառում վարչական ակտով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար ուղղակի հետևանքներ առաջացնելը, հետևաբար վարչական վարույթը եզրափակող փաստաթուղթը ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ պետք է որակվի որպես վարչական ակտ ինչպես այն դեպքում, երբ դրանով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար առաջանում են ուղղակի հետևանքներ, այնպես էլ այն դեպքում, երբ ուղղված (միտված) են այդ հետևանքների առաջացմանը և ակներև է, որ դրանում արձանագրված խախտումներն ինքնին վատթարացնում են վերջիններիս իրավական կամ փաստացի դրությունը:

Ամբողջացնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ որպես վարչական ակտին բնորոշող հատկանիշներ անհրաժեշտ է դիտարկել հետևյալները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն առաջացնում է ուղղակի իրավական հետևանքներ կամ ուղղված (միտված) է այդ հետևանքների առաջացմանը վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, դրանով վարչական մարմինը վերջիններիս համար

սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև նրանց տրամադրում է իրավունքներ կամ ստեղծում է այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, կամ մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է նրանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն է դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական վարույթը եզրափակող փաստաթուղթը, ի թիվս այլ հատկանիշների, վարչական ակտ պետք է որակվի ոչ միայն այն պարագայում, երբ դրանով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար ուղղակի իրավական հետևանքներ են առաջանում, այլ նաև այն դեպքում, երբ տվյալ վարչական ակտն ուղղված է իրավական հետևանքներ առաջացնելուն և ակներև է, որ դրանում արձանագրվածն ինքնին բավարար է վերջիններիս իրավական կամ փաստացի դրությունը վատթարացնելու համար (դեռևս, «Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ի տնօրեն Արթեն Դույսանն ընդդեմ ՀՀ բնասպահականության և ընդերքի տեսչական մարմնի թիվ ՎԳ/11082/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.12.2021 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին համապատասխան գնահատելով մաքսային մարմնի կողմից ապրանքների ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշման իրավական բնույթը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված անհատական իրավական ակտն իր բնույթով վարչական ակտ է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

11.04.2017 թվականին ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրով անդամ պետություններն ընդունել են Եվրասիական տնտեսական միության տարածքում միասնական մաքսային կարգավորում՝ նույն պայմանագրի թիվ 1 հավելվածով ներկայացված Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրքը (այսուհետև՝ Օրենսգիրք): Օրենսգիրքը ներառում է Միության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման, Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս դրանց գտնվելու և օգտագործման կարգի ու պայմանների, Միության մաքսային տարածք ապրանքների ժամանման, Միության մաքսային տարածքից դրանց մեկնման, ապրանքների ժամանակավոր պահպանման, դրանց մաքսային հայտարարագրման ու բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների, այլ մաքսային գործառնությունների կատարման կարգի, մաքսային վճարների, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման ու մաքսային հսկողության անցկացման կարգի սահմանումը, ինչպես նաև մաքսային մարմինների և Միության մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքներ իրականացնող անձանց միջև իրավագործ հարաբերությունների կանոնակարգումը (Օրենսգրքի 1-ին մասի 1-ին կետ):

Անդամ պետությունները, «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին համապատասխան, կիրառում են մաքսասակագնային կարգավորման միասնական միջոցներ. դրանք կիրառվում են Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) ապրանքների նկատմամբ և ներառում են ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի, սակագնային քվոտաների,

սակագնային առանձնաշնորհումների, սակագնային արտոնությունների կիրառումը (Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ):

01.01.2015 թվականից առ այսօր գործում է Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը:

Օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը (այսուհետ՝ Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ) ապրանքների նկարագրման և ծածկագրման համակարգ է, որն օգտագործվում է ապրանքների դասակարգման համար՝ մաքսասակագնային կարգավորման միջոցներ, արտահանման մաքսատուրքեր, արգելքներ ու սահմանափակումներ, ներքին շուկայի պաշտպանական միջոցներ կիրառելու, մաքսային վիճակագրություն վարելու նպատակներով:

Վերը նշված դրույթով նախանշվում են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի սահմանմամբ հետապնդվող նպատակները, այն է՝

1. մաքսասակագնային կարգավորման միջոցների կիրառում,
2. արտահանման մաքսատուրքերի կիրառում,
3. արգելքների ու սահմանափակումների կիրառում,
4. ներքին շուկայի պաշտպանական միջոցների կիրառում,
5. մաքսային վիճակագրության վարում:

Բացի այդ, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը կարող է օգտագործվել ապրանքների հարկման նպատակներով և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով ու ակտերով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ նպատակներով (Օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերություն):

Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը հաստատվում է Եվրասիական տնտեսական Հանձնաժողովի կողմից, որի համար միջազգային հիմք են հանդիսանում Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակեցված համակարգն ու Անկախ պետությունների համագործակցության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը (Օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

Վերոնշյալ կարգավորումներից բխում է, որ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի կիրառումը թույլ է տալիս լուծել հետևյալ խնդիրները.

- մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման օրինականության պարզում,
- ապրանքների ներմուծման և արտահանման նկատմամբ արգելքների ու սահմանափակումների կիրառում,
- մաքսատուրքերի վճարման բազայի ստեղծում, և դրանք չվճարելու դեպքում պատասխանատվության միջոցների կիրառում,
- մաքսային վիճակագրության վարում և այլն:

Որպես կանոն՝ ապրանքների դասակարգումը, Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկին համապատասխան, իրականացնում է հայտարարատուն: Այսպես, Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատուն և այլ անձինք ապրանքների դասակարգումն իրականացնում են Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային

անվանացանկին համապատասխան՝ մաքսային հայտարարագրման ժամանակ և այն դեպքերում, երբ մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերի ու ակտերի համաձայն, մաքսային մարմին են հայտնում սպրանքի ծածկագիրը՝ Արտաքին տնտեսական գործունեության սպրանքային անվանացանկին համապատասխան:

Օրենսգիրքը սահմանել է նաև այն իրավիճակները, երբ սպրանքների դասակարգումն իրականացվում է մաքսային մարմնի կողմից: Այդ թվում է Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված իրավիճակը. «մաքսային հայտարարագրման ժամանակ մաքսային մարմնի կողմից սպրանքների ոչ ճիշտ դասակարգման հայտնաբերում՝ ինչպես դրանց բացթողումից առաջ, այնպես էլ դրանից հետո: Այդ դեպքում մաքսային մարմինն սպրանքների դասակարգման վերաբերյալ ընդունում է որոշում: Ասպրանքների դասակարգման վերաբերյալ որոշման ձևը, դրա ընդունման կարգն ու ժամկետները սահմանվում են անդամ պետությունների՝ մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան»:

Ի թիվս այլ նպատակների՝ Հայաստանի Հանրապետության կողմից մաքսային կարգավորման և մաքսային գործի քննազննում Եվրասիական տնտեսական միության իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերի և որոշումների կատարման ապահովման համար 17.12.2014 թվականին ընդունված «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) (ուժը կորցրել է 17.10.2022 թվականին) 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «արտաքին տնտեսական գործունեության մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման, ինչպես նաև մաքսային վիճակագրության վարման նպատակով Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է Միության հանձնաժողովի հաստատած՝ արտաքին տնտեսական գործունեության սպրանքային անվանացանկը (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ)»:

Օրենքի 63-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ասպրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագրերը նշվում են մաքսային հայտարարագրերում և մաքսային մարմինների ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության և Միության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերում:

(...) 4. Մաքսային մարմիններ ներկայացված մաքսային հայտարարագրում հայտարարատուի հայտարարագրած ԱՏԳ ԱԱ ծածկագիրը ճշգրտելու, ինչպես նաև դասակարգման համար լրացուցիչ տեղեկություններ պահանջելու անհրաժեշտության առաջացման դեպքում սպրանքների մաքսային ձևակերպումը և բաց թողնումն իրականացվում են հայտարարատուի նախապես հայտարարագրած ԱՏԳ ԱԱ ծածկագրին համապատասխան՝ հայտարարատուի կողմից առաջարկվող և մաքսային մարմինների որոշած ծածկագրերի կիրառման արդյունքում առաջացած՝ մաքսային վճարների դրական տարբերության չափով բանկային կամ վարկային կազմակերպության տրամադրած երաշխիքի ներկայացման դեպքում մինչև 90 օր ժամկետով, հետագայում, ըստ վերջնական ընդունված որոշման, վերահաշվարկված մաքսային վճարների և վճարված մաքսային վճարների դրական տարբերությունը պետական բյուջե վճարելու պայմանով:

(...) 6. Մաքսային մարմինների կողմից մաքսային հայտարարագրի գրանցումից հետո մինչև սպրանքների բաց թողնումը սպրանքների ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերվելու դեպքում մաքսային հսկողություն իրականացնող մաքսային մարմնի պաշտոնատար անձը կազմում է սպրանքների ոչ



ճիշտ դասակարգման վերաբերյալ արձանագրություն, որի հիման վրա կոմիտեն ընդունում է ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշում:

Կոմիտեի ընդունած՝ ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշումը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշում ընդունած մաքսային մարմնի անվանումը, ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի անունը, ազգանունը և ստորագրությունը.

2) հայտարարատուի անվանումը.

3) ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշման ընդունման ամսաթիվը և այն հայտարարագրի գրանցման ամսաթիվն ու համարը, որով հայտարարագրվել է դասակարգվող ապրանքը, ինչպես նաև մաքսային հայտարարագրում ապրանքի համարը, որի համար ընդունվել է ապրանքի դասակարգման մասին որոշումը.

4) ապրանքի անվանումը (մանրամասն նկարագիրը).

5) ապրանքի դասակարգման համար անհրաժեշտ տեղեկությունները.

6) ապրանքի ԱՏԳ ԱԱ տասանիշ ծածկագիրը՝ ԱՏԳ ԱԱ-ին համապատասխան.

7) ընդունված որոշման հիմնավորումը, պատճառը և ԱՏԳ ԱԱ մեկնաբանման համապատասխան կանոնին հղումը:

(...)

8. Ապրանքների դասակարգման վերաբերյալ մաքսային մարմնի որոշումը պարտադիր է հայտարարատուի համար:

9. Ապրանքների բաց թողնումից հետո ապրանքների դասակարգման վերաբերյալ մաքսային մարմնի կողմից որոշում ընդունվելու դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում այն ուղարկվում է հայտարարատուին: Սույն մասով նախատեսված որոշմամբ հաստատված ԱՏԳ ԱԱ ծածկագրի փոփոխության արդյունքում մաքսատուրքի, հարկերի չվճարված կամ պակաս վճարված գումարների, ինչպես նաև դրանց նկատմամբ հաշվարկված՝ օրենքով սահմանված տույժերի և տուգանքների գանձումն իրականացվում է սույն օրենքին համապատասխան»:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի միջոցով Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները ենթակա են դասակարգման, ինչը հիմք է հանդիսանում Օրենսգրքով և (կամ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախանշված նպատակների իրացման համար: Ապրանքների դասակարգումը, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ով սահմանված հատկանիշներին և դասակարգման կանոններին համապատասխան, դասակարգման կոնկրետ ծածկագրի որոշումն է: Ներմուծման մաքսատուրքի դրույքաչափը, և, համապատասխանաբար, վճարվող մաքսային վճարների չափը, ապրանքների նկատմամբ ոչ սակագնային միջոցների, արգելքների և սահմանափակումների կիրառումը կախված է նրանից, թե ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ դասակարգման որ ծածկագրին է դասվում տվյալ ապրանքը: Այլ կերպ՝ ծածկագրի որոշմամբ՝ ներմուծվող ապրանքի դասակարգմամբ է պայմանավորված, ի թիվս այլնի, այդ ապրանքի համար վճարվելիք մաքսային վճարների չափը:

Այն պարագայում, երբ մաքսային մարմինը մաքսային վերահսկողության շրջանակներում հայտնաբերում է հայտարարագրում ներկայացված ապրանքի և դրան տրված ԱՏԳ ԱԱ ծածկագրի միջև անհամապատասխանություն, այսինքն՝ հայտարարագրված ապրանքը չի նույնանում հայտարարագրում նշված ԱՏԳ ԱԱ

ծածկագրով կանխորոշվող հատկանիշների հետ, կայացնում է ապրանքների դասակարգման վերաբերյալ որոշում, որի հնարավոր իրավական հետևանքը ներմուծողի համար լրացուցիչ մաքսային վճարներ վճարելու պարտականության առաջացումն է: Նշված որոշումն ունի պարտադիր բնույթ, ինչը նշանակում է, որ մաքսային մարմնի կողմից այլ ծածկագրով դասակարգման վերաբերյալ որոշման առկայության պայմաններում ներմուծողը պարտավոր է մաքսային վճարներ վճարելու իր պարտականությունը կատարել ըստ մաքսային մարմնի համապատասխան որոշմամբ նշված ԱՏԳ ԱԱ ծածկագրից բխող մաքսատուրքերի դրույքաչափերի և դրանց համապատասխան հաշվարկված մաքսային վճարների չափերի:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա որոշմամբ ոչ ճիշտ դասակարգման փաստի արձանագրումը փաստական հիմք է ստեղծում մեղավոր անձին «ապրանքները կամ տրանսպորտային միջոցները չհայտարարագրելը կամ ոչ իրենց անվանմամբ հայտարարագրելը կամ հայտարարագրում ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելը» զանցանքի համար պատասխանատվության ենթարկելու համար: Մինչև 17.10.2022 թվականին ՀՀ մաքսային օրենսգրքի ուժը կորցնելը նշված զանցակազմը նախատեսված էր ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով, իսկ ներկայումս՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածով:

Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մաքսային մարմնի կողմից ապրանքների ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշումն օժտված է վարչական ակտին բնորոշ հատկանիշներով: Մասնավորապես՝

- այն անհատական իրավական ակտ է՝ ուղղված հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող սուբյեկտին,

- ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում հանրային իշխանությանը օժտված մարմնի, այն է՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետի կողմից,

- ունի արտաքին ներգործություն, քանի որ դրա հասցեատերը՝ հայտարարատուն, կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այդ որոշումն ընդունած մարմնի հետ, այսինքն՝ կարգավորում է վարչական մարմնի և ֆիզիկական (իրավաբանական) անձի միջև ծագած իրավահարաբերությունները,

- ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով, այն ուղղված է հանրային իշխանությանը օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձի՝ հայտարարատուին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը, այն է՝ ապրանքի ճիշտ դասակարգում իրականացնելուն,

- ուղղված (միտված) է այդ ակտի հասցեատիրոջ համար իրավական հետևանքների առաջացմանը, քանի որ դրանով վարչական մարմինը՝ Կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետը որոշում է ներմուծվող ապրանքի համար հայտարարագրում նշված ԱՏԳ ԱԱ ծածկագրից տարբերվող այլ ԱՏԳ ԱԱ ծածկագիր, ինչի արդյունքում փոփոխվում է սկզբնապես ներկայացված հայտարարագրից բխող հայտարարատուի պարտականությունների ծավալը, հայտարարատուն կրում է պարտադիր բնույթ ունեցող ակտով կատարված դասակարգմանը համապատասխան մաքսային վճարներ վճարելու պարտականություն: Բացի այդ, խնդրո առարկա որոշումը փաստական հիմք է դառնում հայտարարատուին (մեղքի առակայության դեպքում) պատասխանատվության ենթարկելու համար:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ մաքսային մարմնի կողմից ապրանքների ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ որոշումը վարչական ակտ է, և ըստ այդմ՝ ենթակա է վարչադատական կարգով բողոքարկման՝ վիճարկման հայցատեսակի շրջանակներում:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետի 22.03.2022 թվականի «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» թիվ ԱԴՈ-22-000047 և 18.04.2022 թվականի «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» թիվ ԱԴՈ-22-000068 որոշումներով (այսուհետ՝ Վիճարկվող որոշումներ) 05100010/250122/0004165 և 05100010/140422/0026221 հայտարարագրերի 1 և 2 ապրանքները՝ հայտարարագրված ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 5305 00 000 0 ծածկագրով՝ որպես «Կոկոսի և այլ բուսական մանածագործական մանրաթելեր, այլ տեղում չընդգրկված կամ չներառված, անմշակ կամ մշակված, բայց չմանած, այդ մանրաթելերի քոլքերը կամ մնացուկները» ապրանքատեսակ, դասակարգվել են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1404 90 000 8 ծածկագրով՝ որպես «կոկոսի մանրաթել-կոկոսի հիմք (սուբստրատ) բույսերի աճեցման համար» ապրանքատեսակ: Որոշումների մեջ նշված է, որ դրանք կարող են բողոքարկվել վերադատության կարգով կամ դատարան 2 ամսվա ընթացքում (**հատոր 1, գ.թ. 61-62, 64-65**):

Վիճարկվող որոշումների հիման վրա Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության տեսուչը կայացրել է համապատասխանաբար 11.04.2022 թվականի «Ապրանքների բացթողումից հետո մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագրում հայտագրված տեղեկություններում փոփոխությունների (լրացումների) կատարման մասին» և 21.04.2022 թվականի «Ապրանքների բացթողումից հետո մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագրում հայտագրված տեղեկություններում փոփոխությունների (լրացումների) կատարման մասին» որոշումները, որոնցով 25.01.2022 թվականի 05100010/250122/0004165 և 14.04.2022 թվականի 05100010/140422/0026221 ապրանքների հայտարարագրերում կատարվել են փոփոխություններ՝ վճարումների հաշվարկում մաքսատուրքի դրույքաչափը 3 տոկոսից փոխվել է 8 տոկոսի, և ավելացվել է ավելացված արժեքի հարկ 20 տոկոսի չափով (**հատոր 1, գ.թ. 30-32, 39-45, 52-55**):

Սույն գործով Դատարան ներկայացրած հայցադիմումով հայցվորը խնդրել է անվավեր ճանաչել Կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետի «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» 22.03.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000047 և 18.04.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000068 որոշումները ոչ իրավաչափ լինելու հիմքով վերացնելու, ինչպես նաև Կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պաշտոնատար անձանց 11.04.2021 թվականի և 21.04.2022 թվականի չհամարակալված որոշումները, և բռնագանձել վճարված պետական տուրքը:

**Դատարանը** 24.05.2022 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է՝ արձանագրելով, որ Վիճարկվող որոշումները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում չեն հանդիսանում վարչական ակտեր, քանի որ նշված որոշումները՝ որպես անհատական իրավական ակտեր, օժտված չեն վարչական

ակտին բնորոշ այնպիսի կարևոր յուրահատկությամբ, ինչպիսին է ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու՝ վերջիններիս համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու հատկանիշը: Արդյունքում, Դատարանը, եզրահանգելով, որ Ընկերության կողմից ներկայացվել է հայց ոչ ճիշտ հայցատեսակի շրջանակներում, մատնանշել է այն փոխարինել պատշաճ հայցատեսակով, «այն է՝ «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» 22.03.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000047 և 18.04.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000068 որոշումների վերացմանն ուղղված հայցը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված՝ ճանաչման հայցի կանոններով, որպիսի հայցատեսակի միջոցով հնարավոր է պահանջել ճանաչելու «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» 22.03.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000047 և 18.04.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000068 որոշումների հիմքով ծագող իրավահարաբերության բացակայությունը, իսկ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Արարատյան մաքսատուն-վարչության պաշտոնատար անձանց «Ապրանքների բացթողումից հետո մաքսային մարմնի կողմից ապրանքների հայտարարագրում հայտագրված տեղեկություններում փոփոխությունների (լրացումների) կատարման մասին» 11.04.2022 թվականի և 21.04.2022 թվականի որոշումները վերացնելու պահանջը կարող է ներկայացվել՝ որպես «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» 22.03.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000047 և 18.04.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000068 որոշումների հիմքով ծագող իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու պահանջներից, ածանցվող (հետևանք) պահանջ»:

**Վերաքննիչ դատարանը** բողոքարկվող դատական ակտով, հիմնավոր համարելով Դատարանի 24.05.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը, փաստել է, որ Վիճարկվող որոշումները չեն հանդիսանում վարչական ակտեր և չեն կարող վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցի շրջանակներում, վերահաստատել է այն դիրքորոշումը, որ նշված որոշումներով պարզապես արձանագրվել են որոշակի փաստեր՝ կապված ապրանքները ոչ ճիշտ դասակարգելու հետ, որպիսի փաստերը կարող են հետագայում հանգեցնել մաքսային վճարների կամ տույժերի գանձման վերաբերյալ որոշման կայացմանը, և դրանք ինքնին որևէ հետևանք հայցվորի համար չեն առաջացնում:

Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ Վիճարկվող որոշումներում հայցվորի կողմից ներկայացված 25.01.2022 թվականի 05100010/250122/0004165 և 14.04.2022 թվականի 05100010/140422/0026221 ապրանքների հայտարարագրերում նշված 1 և 2 ապրանքները՝ հայտարարագրված ԵՄՄ ԱՏԳ ԱԱ 5305 00 000 0 ծածկագրով, դասակարգվել են ԵՄՄ ԱՏԳ ԱԱ 1404 90 000 8 ծածկագրով՝ որպես «կոկոսի մանրաթել-կոկոսի հիմք (սուբստրատ) բույսերի աճեցման համար» ապրանքատեսակ: Արդյունքում՝ վճարումների հաշվարկում մաքսատուրքի դրույքաչափը 3 տոկոսից փոխվել է 8 տոկոսի, և ավելացվել է ավելացված արժեքի հարկ 20 տոկոսի չափով: Հաշվի առնելով սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետի 22.03.2022 թվականի «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու

դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» թիվ ԱԴՈ-22-000047 և 18.04.2022 թվականի «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» թիվ ԱԴՈ-22-000068 որոշումներն ուղղված են Ընկերության համար համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելուն, այն է՝ Ընկերության համար առաջացնում են ավելի մեծ չափի մաքսային վճարներ վճարելու պարտականություն: Նշված որոշումների պարտադիր բնույթով պայմանավորված՝ վատթարանում է Ընկերության իրավական և փաստական վիճակը՝ հաշվի առնելով, որ վերջինս պարտավոր է մաքսային վճարները վճարել՝ հիմք ընդունելով այդ որոշումներում նշված ԱՏԳ ԱԱ ծածկագրից բխող դրույքաչափը և մաքսային վճարների չափերը, որպիսի պայմաններում Վիճարկվող որոշումներն Ընկերության համար հանդիսանում են միջամտող վարչական ակտեր:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը, սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումների համատեքստում անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն առ այն, որ վիճարկվող որոշումներով պարզապես արձանագրվել են որոշակի փաստեր, և դրանք վարչական ակտեր չեն:

Վերոհիշյալի հիման վրա արձանագրելով, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը եկել են Կոմիտեի մաքսային հսկողության վարչության պետի «Ապրանքի ոչ ճիշտ դասակարգում հայտնաբերելու դեպքում ապրանքի դասակարգման վերաբերյալ» 22.03.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000047 և 18.04.2022 թվականի թիվ ԱԴՈ-22-000068 որոշումների վարչական ակտեր չհանդիսանալու և, հետևապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով նախատեսված վիճարկման հայցի շրջանակներում բողոքարկման ենթակա չլինելու վերաբերյալ սխալ եզրահանգման, այդպիսով կայացրել են ոչ իրավաչափ դատական ակտեր, ուստի դրանք ենթակա են վերացման:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 22.08.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ, այն է՝ վերացնել ՀՀ վարչական դատարանի 24.05.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

**3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԳ/0012/05/22  
2023թ.

Վարչական գործ թիվ

ՎԳ/0012/05/22

Նախագահող դատավոր

Ա. Պողոսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- նախագահող*    Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- գեկուցող*    Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
- Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի փետրվարի 10-ին գրավոր ընթացակարգով քննելով Հայկ Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.03.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Հայկ Հարությունյանի ընդդեմ Երևան համայնքի՝ Երևան համայնքի կողմից 29.07.2021 թվականին «Ռատկո» ՍՊԸ-ին տրված թիվ 01/18-Մ-10735-1252 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Հայկ Հարությունյանը պահանջել է վերացնել Երևան համայնքի կողմից 29.07.2021 թվականին «Ռատկո» ՍՊԸ-ին տրված թիվ 01/18-Մ-10735-1252 շինարարության թույլտվությունը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Ս. Հովակիմյան) (այսուհետ՝ Դատարան) 07.01.2022 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.03.2022 թվականի որոշմամբ Հայկ Հարությունյանի ներկայացրած վերաքննիչ

բողոքը մերժվել է, և Դատարանի 07.01.2022 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայկ Հարությունյանը:  
Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը և 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածը, 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին պարբերության «դ» կետը:*

*Բողոքաբերը նշված հիմքի առկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանն անփոփոխ է թողել Դատարանի 07.01.2022 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումն այն պատճառաբանությամբ, որ հայցվոր կողմը չի ներկայացրել որևէ թույլատրելի ու վերաբերելի ապացույց առ այն, որ հայցվորը բնակվում և հաշվառված է ք. Երևան, Ալիխանյան եղբայրներ 6 շենք, բն. 604 հասցեում կամ վերջինս շինարարության հասցեի հարևանությամբ կամ մոտակայքում ունի իրավասու մարմնի կողմից պետականորեն գրանցված որևէ գործող իրավունք, ինչը բացառում է նրա՝ ՀՀ վարչական դատարանում հայց ներկայացնելու դատավարական սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը: Մինչդեռ նշված ապացույցների ներկայացված չլինելը հայց ներկայացնելու փուլում բնավ չի կարող վկայել այն մասին, որ հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

Սույն գործով Դատարանն իրավասու չէր սահմանափակվել հայցվորի կողմից որևէ ապացույցի ներկայացված չլինելու փաստով՝ գործի քննությամբ իր շահագրգռվածությունը պարզելու և այդ հիմքով հայց ներկայացնելու իրավունքը որոշելու համար, այլ պետք է հայցադիմումն ընդունել վարույթ և համապատասխան հանգամանքները գործի քննության շրջանակներում պարզել: Ըստ այդմ՝ եթե բացահայտվեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, Դատարանը պետք է գործի վարույթը կարճի նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ գնահատման առարկա չի դարձրել այն հարցը, թե արդյոք Հայկ Հարությունյանի դատարան դիմելու իրավունքի ենթադրյալ բացակայությունն ակնհայտ է, թե՛ ոչ:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 11.03.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝

նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի խախտում, ինչը հանգեցրել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտման, ինչի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը:

Սույն դեպքում Վճռաբեկ դատարանի խնդիրն է օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու և մարդու իրավունքների ու ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու իր սահմանադրական գործառույթների շրջանակներում պարզել. *արդյո՞ք հայցվորի կողմից հայցադիմումում և/կամ դրան կից շահագրգիռ անձ լինելու փաստի վերաբերյալ հիմնավորումներ և/կամ բավարար ապացույցներ չներկայացնելը կարող է հայցադիմումի ընդունելիության փուլում գնահատվել որպես դատարան դիմելու իրավական շահի բացակայություն:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի /այսուհետ նաև՝ «Օրենսգրք»/ 3-րդ հոդվածը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր իրավունք ունեն դիմել ՀՀ վարչական դատարան: Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով վարչադատավարական կարգով դատական պաշտպանությունը երաշխավորվում է այն ֆիզիկական և իրավաբանական անձի համար, ով համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Վերը նշված նորմերից բխում է, որ անձն իրավասու է վարչադատավարական կարգով դատական պաշտպանություն հայցել ընդդեմ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի այն վարչական ակտի, գործողության կամ անգործության, որով *ենթադրաբար խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել* իր իրավունքներն ու ազատությունները: Անձն իրավասու չէ վիճարկելու այն վարչական ակտի, գործողության կամ անգործության իրավաչափությունը, որն ինքսին չի շոշափում իր որևէ իրավունք կամ ազատություն: Կոնկրետ գործով ՀՀ վարչական դատարանում իրավական պաշտպանություն հայցելու անհրաժեշտ նախապայմանն անմիջական պատճառահետևանքային կապն է վիճարկվող ակտի, գործողության կամ



անգործության և անձի այն իրավունքի կամ ազատության միջև, որի պաշտպանությունը անձը հայց է ներկայացնում դատարան:

Այսպիսով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանն ղիմելու անհրաժեշտ պայմանը հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքն է:

ՀՀ սահմանադրական դատարանը 04.04.2008 թվականի թիվ ՍԴՈ-747 որոշմամբ ամրագրել է. «Համաձայն ՀՀ Սահմանադրության 19 հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան ղիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ (...) վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարանն ղիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են»:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտել է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ դատարանն ղիմելու իրավունքն անձի համար ապահովում է իրավական երաշխիքներ՝ իր իրավունքների խախտումների դեպքում ստանալ արդյունավետ իրավական պաշտպանություն: Այստեղից հետևում է այն կարևոր կանոնը, որի համաձայն՝ դատական պաշտպանություն անձն ստանում է վերջինիս՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքների և (կամ) ազատությունների խախտման դեպքում: Դատական պաշտպանությունը չի կարող լինել ինքնանպատակ, այն ունի հստակ առաքելություն, հստակ սուբյեկտներ ու հասցեատեր և կոչված է ապահովելու անձի խախտված իրավունքների արդյունավետ վերականգնումը: ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով նախատեսված է ընդհանուր կանոն, որ դատարանն ղիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Օրենսդիրը, նույնպես առաջնորդվելով այս ընդհանուր կանոնով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրել է յուրաքանչյուրի՝ իր խախտված իրավունքների պաշտպանության համար վարչական դատարանն ղիմելու իրավունքը: Անձը կարող է ղիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ոեալ)» իրավունքներ (*տե՛ս, Կարինե Ջլալյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/6403/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 08.05.2014 թվականի որոշումը*):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի նորմերը համակարգային փոխկապվածության մեջ են գտնվում Օրենսգրքի 80-րդ հոդածի 1-ին մասի 4-րդ կետի նորմի հետ, որի համաձայն վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 17.04.2012 թվականի թիվ ՍԴՈ-1022 որոշման մեջ, անդրադառնալով 01.01.2008 թվականին ուժի մեջ մտած և

07.01.2014 թվականին ուժը կորցրած ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում ամրագրված նորմի (նույնաբովանդակ է գործող օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում ամրագրված նորմին) սահմանադրականության հարցին, ամրագրել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) ՀՀ սահմանադրական դատարանն ինքնանպատակ չի համարում այն հանգամանքը, որ օրենսգրքի վիճարկվող դրույթում օգտագործված է «ակնհայտորեն» բառը: Վերջինս վկայում է այն մասին, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառը ենթադրում է, որ առանց նյութական իրավունքի խախտման փաստի բացահայտման՝ կասկածից վեր է տվյալ իրավունքը հայցվորին չպատկանելը, հայցադիմումում խախտված տվյալ իրավունքը հայցվորին պատկանելու վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը, վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության և հայցվորի իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջև առկա հնարավոր պատճառահետևանքային կապի բացակայությունը, այդպիսի կապի վերաբերյալ հիմնավորվածության բացակայությունը կամ այդպիսի ենթադրյալ հիմնավորման ակնհայտ անհիմն լինելը: Օրենսգրքի վիճարկվող դրույթում «ակնհայտորեն» բառի ամրագրմամբ օրենսդիրը նպատակ է հետապնդել հայցադիմումի ընդունելիության փուլում ստուգելու ոչ թե նյութական իրավունքի խախտման առկայությունը, այլ ենթադրյալ խախտված իրավունքը տվյալ անձին պատկանելու հանգամանքը, այսինքն, հայցվորի՝ «շահագրգիռ անձ» հանդիսանալու հանգամանքը (...):»:

Անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցադիմումի ընդունումը մերժելու այն հիմքին, որ հայցադիմում է ներկայացրել դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ հայցադիմում ներկայացնելու իրավունքի ակնհայտ բացակայության պարագայում դատարանը ոչ թե իրավունք ունի, այլ պարտավոր է մերժել դրա ընդունումը: Օրենսդիրը նման իրավակարգավորմամբ իրավացիորեն խուսափել է ոչ տեղին ու քննության ոչ ենթակա գործերի հետազոտությունից, ինչը հանգեցնում է դատարանի ավելորդ և անհիմն ծանրաբեռնվածության և դատարանի վարույթում գտնվող մյուս գործերի քննության ձգձգումների: ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում նախատեսված «ակնհայտություն» եզրույթն իրենից ներկայացնում է անմիջապես աչքի զարնող, առաջին իսկ դիտարկման պահին երևացող, աչքի ընկնող և ոչ մի կերպ չվրիպող ու կասկած չհարուցող ակներևություն: Այսինքն՝ սույն իրավական կարգավորումը կարող է վերաբերել միայն հայցադիմում ներկայացնելու՝ չափազանց պարզորոշ, միանշանակ և հստակ իրավունք չունենալուն, երբ դատարանն աներկբայորեն և հիմնավոր կերպով գտնում է, որ տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձն այդպիսի հայցադիմում ներկայացնելու իրավունք չուներ (*լրե՛ս, Տիգրան Սահասարյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/3477/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով նաև ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն

արձանագրում է, որ հայցադիմումը համարվում է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից ներկայացված, եթե հայցադիմումի և/կամ կից փաստաթղթերի ուսումնասիրությունը հայցադիմումի ընդունելիության փուլում, առանց լրացուցիչ ապացույցներ հետազոտելու անհրաժեշտության, թույլ են տալիս դատարանին միանշանակ եզրահանգել, որ կասկածից վեր է ու աներկբա, որ.

- տվյալ ենթադրյալ խախտված իրավունքը չի պատկանում հայցվորին,
- վիճարկվող վարչական ակտի, գործողության կամ անգործության և հայցվորի իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման փաստի միջև առկա չէ պատճառահետևանքային կապ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմումում և/կամ դրան կից՝ հայցվորի շահագրգիռ անձ լինելու փաստի վերաբերյալ բավարար հիմնավորումների և/կամ ապացույցների բացակայությունն ինքնին չի կարող վկայել Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքի առկայության մասին՝ հաշվի առնելով, որ հայցվորը կարող է այդ ապացույցները լրացնել գործը քննության նախապատրաստելու փուլում, իսկ դատարանն էլ իր հերթին իրավասու է ձեռք բերել անհրաժեշտ ապացույցներ: ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է բավարար գործիքակազմ՝ հայցվորի շահագրգիռ անձ լինելու հանգամանքը գործը քննության նախապատրաստելու փուլում պարզելու համար: Մասնավորապես, Օրենսգրքի 5-րդ հոդվածում ամրագրված՝ գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի իրացմամբ, ՀՀ վարչական դատարանն իրավասու է հայցվորի՝ շահագրգիռ անձ լինելու հանգամանքի վերաբերյալ բավարար ապացույցներ ձեռք բերել գործը քննության նախապատրաստելու փուլում և Օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետին համապատասխան կարճել գործի վարույթը՝ Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքը բացահայտվելու պատճառաբանությամբ:

**Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանն իրավասու է Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով մերժել հայցադիմումի ընդունումը ոչ թե այն դեպքում, երբ հայցվորի՝ հայցադիմում ներկայացնելու իրավունքի առկայության վերաբերյալ բավարար հիմնավորումներ և/կամ ապացույցներ ներկայացված չեն հայցադիմումում և/կամ դրան կից փաստաթղթերում, այլ այն դեպքում, երբ հայցադիմումի բովանդակությունը և/կամ կից ներկայացված ապացույցներն առանց որևէ կասկածի և աներկբայորեն հաստատում են այդ իրավունքի բացակայության փաստը:**

Ելնելով արդարադատության իրականացման գերակա շահից՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել, եթե հայցվորի՝ հայց ներկայացնելու իրավունքի բացակայության վերաբերյալ չփարատված կասկածներ կան, և այդ հանգամանքը պարզելու համար լրացուցիչ ուսումնասիրության ու ապացույցների հետազոտման անհրաժեշտություն կա:

*Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.*

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայկ Հարությունյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Երևան համայնքի՝ պահանջելով վերացնել Երևան համայնքի կողմից 29.07.2021 թվականին «Ռատկո» ՍՊԸ-ին

տրված թիվ 01/18-Մ-10735-1252 շինարարության թույլտվությունը **(հատոր 1-ին, գ. թ. 3-9):**

Դատարանի 07.01.2022 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով մերժվել է այն հիմնավորմամբ, որ «ինչպես հայցադիմումում, այնպես էլ հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերի շարքում առկա չէ որևէ հիմնավորում կամ գրավոր ապացույց, ըստ որի՝ դատարանը կարող էր գալ հետևության, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, (սույն դեպքում 29.07.2021 թվականին «Ռատկո» ՍՊ ընկերությանը տրված շինարարության թույլտվությամբ), փաստացի խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել հայցվորի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները»:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող դատական ակտով մերժել է վերաքննիչ բողոքը հետևյալ պատճառաբանությամբ. «(...) սույն դեպքում հայցվորը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ վիճարկման առարկա դարձնելով Երևանի քաղաքապետի կողմից 29.07.2021 թվականին «Ռատկո» ՍՊ ընկերությանը տրված թիվ 01/18-Մ-10735-1252 շինարարության թույլտվության իրավաչափությունը, որով կառուցապատող «Ռատկո» ՍՊ ընկերությանն Աջափնյակ վարչական շրջան, Ալիխանյան Եղբայրներ փողոց 6/1 հողամաս հասցեում թույլատրվել է իրականացնել որոշակի շինարարական աշխատանքներ: (...) Նշյալի առնչությամբ հատկանշական է այն, որ հայցադիմումում և վերաքննիչ բողոքում, իբրև հայցվորի հասցե, նշված է «ք. Երևան, Ալիխանյան եղբայրներ 6 շենք, բն. 604» /գ.թ. 3/: Մինչդեռ, հայցադիմումին կից ներկայացված անձնագրի պատճենի համաձայն՝ հայցվորը հաշվառված է մեկ այլ՝ «ք. Երևան, Մարգարյան նրբ, 6 շենք, 604 բն.» հասցեում:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ սույն դեպքում հայցվոր կողմը չի ներկայացրել ք. Երևան, Ալիխանյան եղբայրներ 6 շենք, բն. 604 հասցեում բնակվելու և հաշվառված լինելու փաստը հիմնավորող որևէ թույլատրելի ու վերաբերելի ապացույց (օրինակ, համատիրության տեղեկանք): Որպիսի պարագայում հնարավոր չէ պնդել, որ հայցվորն օժտված է ք. Երևան, Ալիխանյան եղբայրներ 6 շենք, բն. 604 բնակվելու իրավունքով, ինչը վկայում է այն մասին, որ մատնանշված շինարարության թույլտվությամբ, ապրիլի, չէին կարող սահմանափակվել հայցվորի՝ որպես թաղամասի բնակչի իրավունքները: (...) հայցվորը հայցադիմումին կից չի էլ ներկայացրել որևէ թույլատրելի ու վերաբերելի ապացույց առ այն, որ, օրինակ, վերջինս տվյալ շինարարության հասցեի հարևանությամբ կամ մոտակայքում ունի իրավասու մարմնի կողմից պետականորեն գրանցված որևէ գործող իրավունք, հատկապես՝ սեփականության կամ օգտագործման, ինչը ևս բացառում է նրա ՀՀ վարչական դատարանում հայց ներկայացնելու դատավարական սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը (...):»:

Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ Հայկ Հարությունյանը, դատական պաշտպանություն հայցելով, ակնկալել է իր իրավունքները ենթադրաբար խախտող՝ երրորդ անձի համար բարենպաստ վարչական ակտի վերացում, այն է՝ Երևան համայնքի կողմից 29.07.2021 թվականին «Ռատկո» ՍՊԸ-ին տրված թիվ 01/18-Մ-10735-1252 շինարարության թույլտվության վերացում: Ներկայացված հայցապահանջի հիմքում հայցվորը դրել է իր որպես

տվյալ թաղամասի բնակչի իրավունքների խախտումը (**հատոր 1-ին, գ. թ. 3-9**): Ավելին, Երևանի քաղաքապետին ուղղված դիմումով (վարչական բողոքով) հայցվորը հայտնել է, որ, որպես գիտավանի բնակիչ, որն ունի արդարացված շահ գիտավանի լանդշաֆտը պահպանելու, ընդհանուր օգտագործման տարածքից իր ընտանիքի անդամների հետ համատեղ օգտվելու և իր բնակության շենքի անմիջական հարևանությամբ թույլ տրվող օրենքի կոպտագույն խախտումները բացառելու հարցում, վերջինս հանդես է եկել պահանջով (**հատոր 1-ին, գ. թ. 26**): Հայցվորը հայցադիմումում շեշտադրել է իր՝ տվյալ թաղամասի բնակիչ լինելու հանգամանքը՝ որպես իր հասցե նշելով ք. Երևան, Ալիխանյան եղբայրներ 6 շենք, բն. 604 հասցեն: Շինարարության թույլտվությունը տրամադրված է ք. Երևան, Ալիխանյան եղբայրներ 6/1 հասցեում կառուցապատում իրականացնելու համար:

Վերաքննիչ բողոքում հայցվորը շեշտադրել է, որ վիճարկվող շինարարության թույլտվության հիման վրա կառուցապատումն իրականացվելու է իր բնակության և հաշվառման հասցեի հարևանությամբ, որպիսի հասցեն (ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փողոց 6 շենք, բն. 604) նշվել է հայցադիմումում և կից ներկայացվել է անձնագրի պատճենը՝ հաշվառման հասցեի գրառմամբ:

Նախ՝ անդրադառնալով Դատարանի պատճառաբանությանն առ այն, որ հայցադիմումում և կից փաստաթղթերի շարքում առկա չէ հայցվորի իրավունքների խախտման վերաբերյալ հիմնավորում կամ ապացույց՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նման պատճառաբանությամբ հայցադիմումի ընդունումն Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով մերժելով՝ Դատարանն ըստ էության գնահատական է տվել նյութական իրավունքի խախտման առկայության/բացակայության հարցին, ինչը չի բխում նշված նորմի բովանդակությունից ու դրան ՀՀ սահմանադրական դատարանի կողմից տրված այն մեկնաբանությանը, որ օրենսդիրը հայցադիմումի ընդունելիության փուլում բացառում է վարչական դատարան դիմելու իրավունքի առկայությունն ստուգելու համար նյութական իրավունքի խախտման փաստի առկայության կամ բացակայության հարցն առանց համապատասխան դատավարական ընթացակարգերի քննության առարկա դարձնելը:

Վերաքննիչ դատարանի վիճարկվող որոշման ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում ընկած փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին. «հայցվոր կողմը չի ներկայացրել ք. Երևան, Ալիխանյան եղբայրներ 6 շենք, բն. 604 հասցեում բնակվելու և հաշվառված լինելու փաստը հիմնավորող որևէ թույլատրելի ու վերաբերելի ապացույց (օրինակ, համատիրության տեղեկանք)», «հայցվորը հայցադիմումին կից չի էլ ներկայացրել որևէ թույլատրելի ու վերաբերելի ապացույց առ այն, որ, օրինակ, վերջինս տվյալ շինարարության հասցեի հարևանությամբ կամ մոտակայքում ունի իրավասու մարմնի կողմից պետականորեն գրանցված որևէ գործող իրավունք, հատկապես՝ սեփականության կամ օգտագործման, ինչը ևս բացառում է նրա ՀՀ վարչական դատարանում հայց ներկայացնելու դատավարական սուբյեկտ հանդիսանալու հանագամանքը»:

Վերաքննիչ դատարանի որոշման վերը նշված փաստարկները գնահատելով իրենց համակցության մեջ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցադիմումի ընդունումը մերժելու՝ Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը հիմնվում է այն իրողության վրա, որ հայցվորի կողմից չեն ներկայացվել բավարար ապացույցներ վերջինիս շահագրգիռ անձ հանդիսանալու

հանգամանքը հիմնավորելու համար: Այլ կերպ՝ հայցվորի շահագրգիռ անձ լինելու փաստի վերաբերյալ ապացույցների բավարար համակցության բացակայությունն է պայմանավորել հայցվորի՝ հայց ներկայացնելու իրավունք ակնհայտորեն չունենալու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումը: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ շահագրգիռ անձ լինելու փաստի առկայության վերաբերյալ բավարար ապացույցների բացակայությունը չի կարող ինքնին վկայել հայցվորի՝ հայց ներկայացնելու իրավունք ակնհայտորեն չունենալու հանգամանքի մասին: Դատարանն իրավասու է Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով մերժել հայցադիմումի ընդունումը, երբ հայցադիմումի բովանդակությունը և/կամ կից ներկայացված ապացույցներն առանց որևէ կասկածի և աներկբայորեն հաստատում են այդ իրավունքի բացակայության փաստը:

Սույն դեպքում Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինչպես հայցադիմումի, այնպես էլ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ չի տալիս միանշանակ և աներկբայորեն եզրահանգում կատարել Հայկ Հարությունյանի մոտ Երևան համայնքի կողմից 29.07.2021 թվականին «Ռատկո» ՄՊԸ-ին տրված թիվ 01/18-Մ-10735-1252 շինարարության թույլտվությունը վերացնելու պահանջով հայց ներկայացնելու իրավական շահագրգռվածության բացակայության վերաբերյալ: Հայկ Հարությունյանն ինչպես հայցադիմումում, այնպես էլ վերաքննիչ բողոքում շեշտադրել է խնդրո առարկա շինարարության իրականացման հասցեի հարևանությամբ բնակվելու և հաշվառված լինելու հանգամանքը, որպիսի պայմաններում պարզելու համար՝ արդյոք հայցվորը սույն գործի քննության հարցում ունի իրավական շահագրգռվածություն, այն է՝ հանդիսանում է արդյոք իր ենթադրյալ խախտված «իրական (ռեալ)» իրավունքների պաշտպանությամբ դատարան դիմելու իրավունք ունեցող շահագրգիռ անձ, Դատարանը պարտավոր էր հայցադիմումն ընդունել վարույթ, և նշված հանգամանքը պարզել գործի ըստ էության քննության ընթացքում:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Վերաքննիչ դատարանը չէր կարող հայցվորի՝ դատարան դիմելու օրինական շահի առկայությունը հերքված, իսկ իրավական շահագրգռվածության բացակայությունը հաստատված համարել՝ պայմանավորված հայցվորի՝ տվյալ շինարարության հասցեի հարևանությամբ բնակվելու, հաշվառված լինելու և/կամ սեփականության կամ օգտագործման իրավունքով գույք ունենալու փաստերի վերաբերյալ բավարար ապացույցների բացակայության պատճառաբանությամբ:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն դեպքում առկա չէ հայցադիմումի ընդունումը մերժելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմք, որպիսի պայմաններում Դատարանը, մերժելով հայցադիմումի ընդունումը, իսկ Վերաքննիչ դատարանն անփոփոխ թողնելով Դատարանի 07.01.2022 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը, անհամաչափորեն սահմանափակել են հայցվորի դատարանի մատչելիության իրավունքը:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.03.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ**

**4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ  
Նախագահող դատավոր

Վարչական գործ թիվ ՎԴ/6304/05/22  
**2023թ.**  
ՎԴ/6304/05/22  
Է. Նահապետյան

**Ո Ր Ո Շ ՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- |                  |              |
|------------------|--------------|
| <i>Նախագահող</i> | Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  |
| <i>գեկուցող</i>  | Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  |
|                  | Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ |
|                  | Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  |
|                  | Ք. ՄԿՈՅԱՆ    |

2023 թվականի հոկտեմբերի 06-ին գրավոր ընթացակարգով քննելով Համբարձում Մովսեսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.12.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշման դեմ վարչական գործով՝ ըստ հայցի Համբարձում Մովսեսյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ «Անտոշեն» ՍՊԸ՝ Երևանի քաղաքապետի 08.04.2022 թվականի թիվ 01/18-Ք-165-579 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Համբարձում Մովսեսյանը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետի 08.04.2022 թվականի թիվ 01/18-Ք-165-579 շինարարության թույլտվությունը: Միաժամանակ միջնորդել է կասեցնել Երևանի քաղաքապետի 08.04.2022 թվականի թիվ 01/18-Ք-165-579 շինարարության թույլտվության կատարումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Մաքեյան) (այսուհետ՝ Դատարան) 13.10.2022 թվականի որոշմամբ Համբարձում Մովսեսյանի միջնորդությունը՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ, բավարարվել է:



ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.12.2022 թվականի որոշմամբ «Անտոշեն» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 13.10.2022 թվականի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին» որոշումը վերացվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Համբարձում Մովսեսյանը (ներկայացուցիչ՝ Դավիթ Դավթյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածը և 63-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ և 83-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անտեղյակ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, անտեսելով այն հանգամանքը, որ երրորդ անձի կողմից իր սեփականության իրավունքի իրացման՝ վիճարկվող վարչական ակտի հիման վրա կառուցապատման հետևանքով արդեն իսկ զգալի վնաս է հասցվել հայցվորի սեփականության իրավունքին, գտել է, որ երրորդ անձի կողմից շինարարություն իրականացնելու իրավունքի ապահովումն ավելի կարևոր և գերակա է, քան հայցվորի սեփականության իրավունքի պաշտպանությունը:

Վերաքննիչ դատարանը չի պատճառաբանել, թե հայցվորի կողմից ներկայացված փորձագիտական եզրակացությունների մեջ արտացոլված տեղեկատվությունն ինչ հիմնավորմամբ չի դիտարկում իբրև արդեն իսկ պատճառված զգալի վնաս և (կամ) վարչական ակտի կատարման արդյունքում հնարավոր պատճառվելիք զգալի վնաս:

Վերաքննիչ դատարանը գնահատման առարկա չի դարձրել բողոք բերող անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքի պատասխանում առկա բոլոր հիմքերն ու հիմնավորումները, չի գնահատել բոլոր ապացույցները, այլ սահմանափակվել է ընդամենը մեկ հիմքի գնահատմամբ, ինչի արդյունքում էլ չնկատելով ընդհանուր պատկերը՝ եկել է սխալ եզրահանգման:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է *«բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎՉ/6304/05/22 վարչական գործով 2022 թվականի դեկտեմբերի 26-ին կայացրած որոշումը՝ կայացնելով նոր դատական ակտ»:*

### **2.1 Վճռաբեկ բողոքի վերաբերյալ երրորդ անձ «Անտոշեն» ՍՊԸ-ի պատասխանի հիմնավորումները.**

Վերաքննիչ դատարանը գործի լրիվ, բազմակողմանի և ամբողջական քննություն է իրականացրել և եկել է հիմնավոր եզրահանգման՝ երրորդ անձ «Անտոշեն» ՍՊԸ-ի բողոքը բավարարելու վերաբերյալ:

Դատարանը հայցվորի միջնորդությունը բավարարել է վարչական ակտի կատարմամբ հենց հայցվորին զգալի վնաս պատճառելու հիմնավոր կասկածի առկայության հիմքով այն դեպքում, երբ հայցվորը չունի խնդրո առարկա հասցեում գրանցված որևէ իրավունք, իսկ ժառանգությունն ընդունած ժառանգ

հանդիսանալու հարցը դուրս է ներկայացված միջնորդության քննարկան շրջանակներից:

Սույն գործով առկա չէ հայցվորին զգալի վնաս պատճառելու կամ նրա իրավունքների պաշտպանությունն անհնարին դառնալու վերաբերյալ հիմնավոր կասկած, քանի որ մինչև գործով վերջնական որոշում կայացնելը վիճարկվող վարչական ակտը չկասեցնելը հայցվորի համար չի ստեղծի այնպիսի բացասական, վնաս պատճառող հետևանքներ, որոնք նյութական առումով ավելի կծանրացնեն հայցվորի վիճակը:

### **3. Վճարել նատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճարել նատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճարել նատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Սույն վճարել բողոքի քննության շրջանակներում Վճարել նատարանն անհրաժեշտ է համարում անորոշառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. իրավասու է արդյո՞ք ՀՀ վարչական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի հիմքով վարչական ակտի կարարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս վարչական ակտի կասեցման անհրաժեշտությունը գնահատել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով չնախատեսված չափանիշների կիրառմամբ:*

Նշված հարցադրումը Վճարել նատարանը նախևառաջ անհրաժեշտ է համարում դիտարկել իրավական պետության բաղադրատարր հանդիսացող օրինականության սկզբունքի համատեքստում՝ հաշվի առնելով նաև վարչական ակտի կատարումը կասեցնելու ինստիտուտի նպատակն ու գործառույթը:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածում իր ձևակերպումն է գտել օրինականության սահմանադրական սկզբունքը: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածում ամրագրված օրինականության սահմանադրական սկզբունքի բովանդակությունը հանգում է հետևյալին.

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց լիազորությունները որոշվում են Սահմանադրությամբ և օրենքներով,

- այդ լիազորությունները կամայական չեն և չեն կարող հակասել Սահմանադրությանը, օրենքներին,

- պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն Սահմանադրությամբ, օրենքներով նախատեսված գործողություններ և ձեռնպահ մնալ այդ ակտերով չնախատեսված կամ դրանց պահանջներին հակասող որևէ գործողությունից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատավարության կարգը սահմանվում է նույն օրենսգրքով և «Հայաստանի Հանրապետության դատական

օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով, իսկ նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Օրենսգրքի 2-րդ հոդվածի նորմերը դիտարկելով օրինականության սկզբունքի լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրինականության սկզբունքը ՀՀ վարչական դատարանից պահանջում է կատարել բացառապես այնպիսի դատավարական գործողություններ, որոնք կատարելու լիազորությունը վերջինիս է վերապահված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով, իսկ Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Վարչական ակտի կատարումը կասեցնելու ինստիտուտի նպատակն ու գործառնությունը բացահայտված են ՀՀ վճռաբեկ դատարանի առանձին որոշումներում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը որպես վիճարկման հայցերով հայցվորի իրավունքների նախնական պաշտպանության եղանակ՝ սահմանել է վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտը, որը նպատակ է հետապնդում ապահովել հայցվորի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը՝ դատական պաշտպանությունը չդարձնելով ինքնանպատակ (յրեն, «Երևանի Կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ի մասնկության գործով կատարվող Լուսինե Մարգարյան ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի թիվ ՎԴ/2643/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.09.2023 թվականի որոշումը):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընդհանուր կանոնին համապատասխան՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցվում է վիճարկման հայցը վարույթ ընդունելու փաստի ուժով: Միաժամանակ, նշված ընդհանուր կանոնից նույն հոդվածի 1-ին մասի 1-7-րդ կետերով սահմանված են բացառություններ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցվորի միջնորդությամբ վարչական դատարանը կարող է գործի քննության ժամանակ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 4.1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը: Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վիճարկվում է վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտ (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի դեպքում հասցեատիրոջ համար բարենպաստ դրույթները):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է դատարանի որոշմամբ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վավերապայմանները, այն է՝ վիճարկվող վարչական ակտը կասեցնելու մասին միջնորդությունը բավարարվում է, եթե առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանի առանձին որոշումներում վերլուծության են ենթարկված Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վավերապայմանները, որոնց հիման

վրա դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատում է վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու անհրաժեշտությունը:

Այսպես, օրենսդիրը վարչական ակտի կատարումը կասեցնելու դատարանի լիազորության կիրառման համար սահմանել է երկու վավերապայման, որոնցից առնվազն մեկի առկայությունը պարտադիր է վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար: Վարչական ակտի կատարումը կասեցվում է, եթե.

- առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի, կամ

- անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ հիմնավոր կասկածի հարցը քննարկելիս դատարանը, ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու պարտականությունից, պետք է քննարկման առարկա դարձնի երկու հիմնական փոխկապակցված հարցեր: Առաջին՝ առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի, և երկրորդ՝ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը: Մասնավորապես՝ «վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի» եզրույթի բովանդակությունը հանգում է այնպիսի իրավիճակի, երբ տվյալ գործով հայցի առարկայի շրջանակներում մինչև գործով վերջնական որոշում կայացնելը վիճարկվող վարչական ակտի կատարումը հայցվոր կողմի համար կստեղծի այնպիսի բացասական (վնաս պատճառող) հետևանքներ, որոնք նյութական իմաստով անհամեմատ կծանրացնեն հայցվորի վիճակը: Իսկ «վարչական ակտի կատարումն անհնարին կդարձնի հայցվորի իրավունքների պաշտպանությունը» եզրույթի բովանդակությունը հանգում է այնպիսի իրողության, երբ մինչև գործով վերջնական որոշում կայացնելը վիճարկվող վարչական ակտի կատարման պայմաններում այլևս անհնարին կարող է դառնալ հայցվորի իրավունքի (իրավունքների) պաշտպանությունը: Այս դեպքում, «անհնարին» եզրույթը վերաբերում է բացառապես տվյալ գործով ներկայացված և քննության առնված հայցի առարկայի շրջանակներում հայցվորի իրավունքների դատական պաշտպանությանը, և ոչ թե հայցվորի իրավունքների պաշտպանությանն ընդհանրապես: Դատարանի կողմից վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը չբավարարելը և գործի քննության արդյունքում նույն վարչական ակտն անվավեր ճանաչելը միանշանակորեն չի հանգեցնում հայցվորի իրավունքների պաշտպանության անհնարինության:

Օրենսդիրը նախատեսել է հիմնավոր կասկածի ենթադրությամբ վարչական ակտի կատարումը կասեցնելու հնարավորություն, եթե այն հայցվորին զգալի վնաս կհասցնի, կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը *(տե՛ս, Սոֆիա և Սիրվարդ Խաչատրյաններն ընդդեմ Հարկադիր կադրարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/5599/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2021 թվականի որոշումը)*:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն քննարկելիս դատարանի պարտականությունն է գնահատել վիճարկվող վարչական ակտի կատարմամբ պատճառվելիք զգալի վնասի կամ իրավունքի պաշտպանության անհնարին դառնալու հիմնավոր կասկածի առկայության (բացակայության) հարցը բազմակողմանի և օբյեկտիվ քննարկման առարկա դարձնելով պատճառվելիք զգալի վնասի կամ իրավունքի պաշտպանության անհնարին դառնալու հավանականության վերաբերյալ

հայցվորի ներկայացրած փաստերն ու փաստարկները, դրանց հիմքում ընկած ապացույցները:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական ակտի կատարումը կասեցնելու անհրաժեշտությունը գնահատելու՝ Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված չափանիշների շրջանակն սպառիչ է և, օրինականության սկզբունքին համահունչ՝ այդ շրջանակն իրավակիրառ պրակտիկայում չի կարող լրացվել որևէ այլ չափանիշով: Օրենսդիրը ՀՀ վարչական դատարանին լիազորել է վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը քննարկելու շրջանակներում կասեցման անհրաժեշտությունը գնահատել միայն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով սպառիչ կերպով սահմանված չափանիշներին համապատասխան՝ բացառապես հաշվի առնելով հայցվորին պատճառվելիք զգալի վնասի կամ իրավունքների պաշտպանության անհնարին դառնալու հիմնավոր կասկածի առկայությունը (բացակայությունը): Օրենսդիրը ՀՀ վարչական դատարանին չի վերապահել լիազորություն՝ վարչական ակտը կասեցնելու անհրաժեշտությունն իր հայեցողությամբ գնահատել նաև այլ՝ դատավարական նորմերով չնախատեսված չափանիշի կիրառմամբ: Ըստ այդմ՝ օրինականության սկզբունքին համապատասխան՝ ՀՀ վարչական դատարանը վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս պետք է ձեռնպահ մնա Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով չնախատեսված չափանիշի կիրառմամբ վարչական ակտը կասեցնելու անհրաժեշտությունը գնահատելուց:

Սույն գործով Համբարձում Մովսեսյանը, դիմելով Դատարան, խնդրել է վերացնել Երևանի քաղաքապետի 08.04.2022 թվականին տրված 01/18-Ք-165-579 շինարարության թույլտվությունը: Միաժամանակ ներկայացվել է վիճարկվող շինարարության թույլտվության կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն: Դատարանի 13.10.2022 թվականի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին» որոշմամբ Համբարձում Մովսեսյանի միջնորդությունը բավարարվել է և Երևանի քաղաքապետի 08.04.2022 թվականին տրված 01/18-Ք-165-579 շինարարության թույլտվության կատարումը կասեցվել է:

**Դատարանն** արձանագրել է. «ծանոթանալով վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին Հայցվորի միջնորդությանը, կից ներկայացված փաստաթղթերին («ԲԱԲԱՅԱՆ-ԼԱՏ ՆԱԻՍԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 03.10.2022 թվականի եզրակացություններին) և հաշվի առնելով միջնորդության ուսումնասիրությամբ ձևավորված հիմնավոր կասկածը, գտնում է, որ տվյալ դեպքում վարչական ակտի կատարումը չկասեցնելը կարող է Հայցվորին զգալի վնաս պատճառել կամ անհնարին դարձնել նրա իրավունքների պաշտպանությունը»:

**Վերաքննիչ դատարանը** 26.12.2022 թվականի որոշմամբ, բավարարելով երրորդ անձ «Անտոշեն» ՄՊԸ-ի վերաքննիչ բողոքը, վերացրել է Դատարանի 13.10.2022 թվականի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին» որոշումը: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «վարչական ակտի կատարման կասեցումը պետք է ուղղված լինի իրավաչափ նպատակի: Անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել վարչական ակտի կատարման կասեցման արդյունքում հայցվորի իրավունքների պաշտպանության և բարենպաստ վարչական ակտի հասցեատիրոջն այդ վարչական ակտով տրված իրավունքների պաշտպանության միջև: (...) սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցմամբ խախտվում է հայցվորի իրավունքների

պաշտպանության և բարենպաստ վարչական ակտի հասցեատեր՝ սույն գործով երրորդ անձանց այդ ակտով տրված իրավունքների միջև բարենպաստ հավասարակշռությունը՝ այն հաշվով, որ վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցման դատավարական ինստիտուտի կիրառման արդյունքում երրորդ անձը գործի քնության ողջ ընթացքում ժամանակավորապես զրկվում է իր սեփականության իրավունքն իրացնելու, մասնավորապես՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող տարածքում շինարարական աշխատանքներ իրականացնելու իրավունքից և կրում է բացասական հետևանքները, հետևաբար, վիճարկվող վարչական ակտի կասեցմամբ վերջինս սույն գործի քնության ողջ ընթացքում զրկված է լինելու իր տարածքի օգտագործումից»:

Նշված պատճառաբանությամբ Վերաքննիչ դատարանը գտել է, որ անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել վարչական ակտի կատարման կասեցման արդյունքում հայցվորի իրավունքների պաշտպանության և բարենպաստ վարչական ակտի հասցեատիրոջն այդ վարչական ակտով տրված իրավունքների պաշտպանության միջև, և եզրահանգել, որ չի ձևավորվում հիմնավոր կասկած առ այն, որ վիճարկվող վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշման բովանդակության վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը վիճարկվող շինարարության թույլտվության կատարումը կասեցնելու անհրաժեշտությունը գնահատելու համար կիրառել է այնպիսի չափանիշ, ինչպիսին է *բարենպաստ հավասարակշռությունը հայցվորի իրավունքների պաշտպանության և վարչական ակտի հասցեատեր երրորդ անձին այդ վարչական ակտով տրված իրավունքների պաշտպանության միջև*: Վերաքննիչ դատարանը վիճարկվող շինարարության թույլտվության կատարումը կասեցնելու անհրաժեշտության բացակայության վերաբերյալ իր եզրահանգումն ըստ էության հիմնավորել է նրանով, որ չի ապահովվում բարենպաստ հավասարակշռություն հայցվորի և վարչական ակտի հասցեատեր երրորդ անձի շահերի միջև՝ ի վնաս վերջինիս:

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասում սպառիչ կերպով սահմանելով վարչական ակտի կատարումը կասեցնելու անհրաժեշտությունը գնահատելու չափանիշները, չի ամրագրել այնպիսի չափանիշ, ինչպիսին բարենպաստ հավասարակշռությունն է մի կողմից՝ հայցվորի իրավունքների, մյուս կողմից՝ վարչական ակտի հասցեատեր երրորդ անձի վարչական ակտով տրված իրավունքների պաշտպանության միջև: Դատարանի 13.10.2022 թվականի «Վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին» որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քնության շրջանակներում Վերաքննիչ դատարանից պահանջվում էր գնահատել՝ արդյոք Դատարանը բավարար փաստական հիմքերի ու փաստարկների պայմաններում է եզրահանգել վիճարկվող վարչական ակտը չկասեցնելու արդյունքում հայցվորին պատճառվելիք զգալի վնասի կամ հայցվորի իրավունքների պաշտպանության անհնարին դառնալու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության մասին: Սակայն, նշվածի փոխարեն, Վերաքննիչ դատարանը վարչական ակտի կատարումը կասեցնելու անհրաժեշտությունը գնահատել է՝ հիմք ընդունելով օրենքով չսխալատեսված չափանիշ, ինչը չի բխում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի բովանդակությունից և օրինականության սկզբունքից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.12.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/0257/05/23  
2023թ.

Վարչական գործ թիվ

ՎԴ/0257/05/23

Նախագահող դատավոր

Կ.Ավետիսյան

Ո Ր Ո Շ ՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- Նախագահող* Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- զեկուցող* Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
- Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 22-ին գրավոր ընթացակարգով քննելով Գագիկ Հովսեփյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.05.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ վարչական գործով՝ ըստ հայցի «Վան Բիզնես Կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձինք՝ Գագիկ Հովսեփյան և Ալբերտ Հովսեփյան՝ Երևանի քաղաքապետարանի 15.11.2022 թվականի թիվ 01/18-Դ-87659-2033 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 15.11.2022 թվականի թիվ 01/18-Դ-87659-2033 շինարարության թույլտվությունը: Միաժամանակ, Ընկերությունը միջնորդել է կասեցնել Երևանի քաղաքապետի 15.11.2022 թվականի թիվ 01/18-Դ-87659-2033 շինարարության թույլտվության կատարումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Վ. Միքայելյան) (այսուհետ՝ Դատարան) 09.03.2023 թվականի որոշմամբ Ընկերության միջնորդությունը՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ, բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 29.05.2023 թվականի որոշմամբ երրորդ անձ Գագիկ Հովսեփյանի վերաքննիչ



բողոքը մերժվել է՝ Դատարանի 09.03.2023 թվականի «Վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել երրորդ անձ Գագիկ Հովսեփյանը (ներկայացուցիչ՝ Երեմիա Ասատրյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Հասմիկ Նազարեթյան):

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ և 83-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես անհիմն է հետևյալ փաստարկներով.*

Հայցվորն իր միջնորդության հիմքում դրել է վարչական ակտի կատարմամբ իրեն զգալի վնաս պատճառվելու հանգամանքը՝ ի հիմնավորումն իր «փաստարկների» ներկայացնելով լուսանկարներ:

Դատարանը հայցվորի միջնորդության բավարարման և վարչական ակտի կասեցման հիմքում դրել է հայցվորին զգալի վնաս պատճառվելու վերաբերյալ հիմնավոր կասկածը և հայցվորի կողմից ներկայացված լուսանկարները, իսկ Վերաքննիչ դատարանն էլ բողոքաբերի վերաքննիչ բողոքը մերժելիս ըստ էության հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումները: Մինչդեռ, հայցվորը վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջնորդությամբ սուսկ վկայակոչել է այն հանգամանքը, որ շինարարական աշխատանքներն իրականացվում են Ընկերության գույքին վնաս պատճառելով:

Հայցվորին պատկանող գույքի և կառուցվող օբյեկտի պատկից լինելը որևէ կերպ չի կարող վկայել զգալի վնասի պատճառման հնարավորության մասին և դրվել վարչական ակտի կասեցման հիմքում, քանի որ Թումանյան 23 և 21/2 հասցեների անշարժ գույքերը միմյանց անմիջականորեն պատկից վիճակում գոյություն ունեն և պետական գրանցում են ստացել դեռևս տասնամյակներ առաջ:

Հայցվորի կողմից ներկայացված լուսանկարներով որևէ կերպ չի կարող հիմնավորվել վերջինիս վնաս պատճառվելու հիմնավոր կասկածը, ենթադրյալ վնասի զգալի լինելը, դրանցով չի կարող հիմնավորվել նաև, որ պատկերված ինչ-որ պատի քանդված հատվածներ պատկանում են հենց հայցվորին և արդյունք կամ հետևանք են իրականացված շինարարական աշխատանքների:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ ներկայացված չէ որևէ վերաբերելի և հիմնավոր ապացույց, որը կհավաստեր, որ հայցվորի պատը փորվել է, տեղադրվել են երկաթյա հարմարանքներ և այլն, որի արդյունքում կարող է առաջանալ առնվազն հիմնավոր կասկած առ այն, որ հայցվորին կարող է պատճառվել զգալի վնաս և (կամ) անհնարին դառնալ վերջինիս իրավունքների պաշտպանությունը:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է *վերացնել թիվ ՎԳ/0257/05/23 վարչական գործով Վերաքննիչ դատարանի 29.05.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ վերացնել Դատարանի 09.03.2023 թվականի «Վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը:*

**2.1 Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված պատասխանի հիմնավորումները.**

*Վճռաբեկ բողոքի պատասխանով Ընկերությունն ամբողջությամբ առարկել է բողոքի դեմ՝ իր պնդումը պատճառաբանելով հետևյալ փաստարկներով.*

Հայցվոր կողմին պատկանող շինությունը և շինարարական աշխատանքներ իրականացվող խնդրո առարկա հասցեի շինությունն անմիջականորեն հարում են միմյանց, և սերտորեն հարող հասցեում իրականացվող շինարարական աշխատանքներով վնաս պատճառելու հավանականությունն ավելի է մեծանում: Բողոքաբերի այն պնդումը, որ գույքերի միմյանց պատկից լինելու փաստն ինքնին բավարար չէ վարչական ակտի կատարումը կասեցնելու համար, իրապես ողջամիտ է, սակայն բողոքաբերն անտեսում է, որ այս հանգամանքի առկայությունը ներգործում է հիմնավոր կասկածի ձևավորման վրա՝ դրա ողջամտությունն առաջացնելով:

Բողոքաբերի պնդումը, որ ֆիքսված, ստատիկ լուսանկարով չէր կարող հիմնավորվել զգալի վնաս պատճառվելու կասկածը, չի կարող հիմնավոր համարվել, քանզի ինքնին վարչական ակտի կատարման կասեցումը հետապնդում է բացասական իրավական հետևանքների հավանական առաջացումը կանխելու նպատակ:

**3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի իմաստով, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում հարակեցնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի հիմքով վարչական ակտի կատարումը կասեցնելու անհրաժեշտությունը գնահատելու չափանիշները:*

Նախնական պաշտպանության միջոցները, արդար դատաքննության այլ երաշխիքների հետ միասին, ապահովում են իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության վերաբերյալ» Rec(2004)20 հանձնարարականը (այսուհետ՝ Հանձնարարական) առանձնացնում է վարչական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության հինգ հիմնական սկզբունք, այդ թվում՝ դատական վերահսկողության արդյունավետության սկզբունքը: Հանձնարարականը որպես արդյունավետ վերահսկողության անհրաժեշտ տարր է դիտարկում նախնական պաշտպանության միջոցը: Հանձնարարականի 5 (d) կետի համաձայն՝ դատարանին պետք է վերապահվի մինչև գործի քննության ավարտը նախնական պաշտպանության միջոցներ կիրառելու լիազորություն:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Վարչական գործերով նախնական դատական պաշտպանության մասին» R (89) 8 հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը, նախնական պաշտպանության միջոց

տրամադրելու հարցը քննարկելիս, պետք է հաշվի առնի բոլոր վերաբերելի գործոններն ու շահերը: Նախնական պաշտպանության միջոց, մասնավորապես, պետք է կիրառվի այն դեպքում, եթե վարչական ակտի կատարումը կարող է պատճառել լուրջ վնաս, որը կարող է վերականգնվել դժվարությամբ կամ վարչական ակտն առերևույթ (prima-facie) իրավաչափ չէ:

Նույն հանձնարարականի 3-րդ կետի համաձայն՝ իրավասու դատարանի կողմից կիրառվող նախնական պաշտպանության միջոցները կարող են դրսևորվել վարչական ակտի կատարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնելով, վարչական ակտի ընդունման պահին գոյություն ունեցած վիճակը ամբողջովին կամ մասնակիորեն պահպանելով և վարչական մարմնի վրա որևէ պարտականություն դնելով: Նախնական պաշտպանության միջոցները կարող են տրամադրվել այնքան ժամկետով, որքան դատարանը պատշաճ կհամարի: Դրանք կարող են ենթարկվել որոշակի պայմանների: Դրանք կարող են վերացվել: Նախնական պաշտպանության միջոցները որևէ կերպ չեն կարող կանխորոշել վիճարկվող վարչական ակտի իրավաչափության վերաբերյալ դատարանի որոշումը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ նաև՝ Օրենսգիրք) սահմանված անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունն ապահովելուն ուղղված նախնական պաշտպանության միջոցներից է վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու ինստիտուտը: Նախնական պաշտպանության այս միջոցը հնարավորություն է տալիս պահպանել այն փաստական և/կամ իրավական վիճակը, որը գոյություն է ունեցել վիճարկվող վարչական ակտի բացակայության պայմաններում:

Վարչական ակտի կատարումը կասեցնելու ինստիտուտի նպատակը ու գործառնությունը բացահայտված են ՀՀ վճռաբեկ դատարանի առանձին որոշումներում: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը որպես վիճարկման հայցերով հայցվորի իրավունքների նախնական պաշտպանության եղանակ՝ սահմանել է վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտը, որը նպատակ է հետապնդում ապահովել հայցվորի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը՝ դատական պաշտպանությունը չդարձնելով ինքնանպատակ (յրեն, «Երևանի Կենցաղային քիմիայի գործարան» ԲԲԸ-ն ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի թիվ ՎԴ/2643/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.09.2023 թվականի որոշումը):

Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընդհանուր կանոնին համապատասխան՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցվում է վիճարկման հայցը վարույթ ընդունելու փաստի ուժով: Միաժամանակ, նշված ընդհանուր կանոնից նույն հոդվածի 1-ին մասի 1-7-րդ կետերով սահմանված են բացառություններ: Օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցվորի միջնորդությամբ վարչական դատարանը կարող է գործի քննության ժամանակ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 4.1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը՝ նույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում: Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված բացառությունը վերաբերում է այն դեպքին, երբ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վիճարկվում է վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտ (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի դեպքում հասցեատիրոջ համար բարենպաստ դրույթները):

Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է դատարանի որոշմամբ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վավերապայմանները, այն է՝ վիճարկվող վարչական ակտը կասեցնելու մասին միջնորդությունը բավարարվում է, եթե առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանի առանձին որոշումներում վերլուծության են ենթարկված օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վավերապայմանները, որոնց հիման վրա դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատում է վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու անհրաժեշտությունը:

Այսպես, օրենսդիրը վարչական ակտի կատարումը կասեցնելու դատարանի լիազորության կիրառման համար սահմանել է երկու վավերապայման, որոնցից առնվազն մեկի առկայությունը պարտադիր է վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելու համար: Վարչական ակտի կատարումը կասեցվում է, եթե.

- առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի, կամ

- անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ հիմնավոր կասկածի հարցը քննարկելիս դատարանը, ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու պարտականությունից, պետք է քննարկման առարկա դարձնի երկու հիմնական փոխկապակցված հարցեր: Առաջին՝ առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի, և երկրորդ՝ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը: Մասնավորապես՝ «վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի» եզրույթի բովանդակությունը հանգում է այնպիսի իրավիճակի, երբ տվյալ գործով հայցի առարկայի շրջանակներում մինչև գործով վերջնական որոշում կայացնելը վիճարկվող վարչական ակտի կատարումը հայցվոր կողմի համար կստեղծի այնպիսի բացասական (վնաս պատճառող) հետևանքներ, որոնք նյութական իմաստով անհամեմատ կծանրացնեն հայցվորի վիճակը: Իսկ «վարչական ակտի կատարումն անհնարին կդարձնի հայցվորի իրավունքների պաշտպանությունը» եզրույթի բովանդակությունը հանգում է այնպիսի իրողության, երբ մինչև գործով վերջնական որոշում կայացնելը վիճարկվող վարչական ակտի կատարման պայմաններում այլևս անհնարին կարող է դառնալ հայցվորի իրավունքի (իրավունքների) պաշտպանությունը: Այս դեպքում, «անհնարին» եզրույթը վերաբերում է բացառապես տվյալ գործով ներկայացված և քննության առնված հայցի առարկայի շրջանակներում հայցվորի իրավունքների դատական պաշտպանությանը, և ոչ թե հայցվորի իրավունքների պաշտպանությանն ընդհանրապես: Դատարանի կողմից վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը չբավարարելը և գործի քննության արդյունքում նույն վարչական ակտն անվավեր ճանաչելը միանշանակորեն չի հանգեցնում հայցվորի իրավունքների պաշտպանության անհնարինության:

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև հավելել է, որ կասկածի ողջամտությունը չի կարող լինել վերացական կամ հայեցողական, այլ պետք է գնահատվի գործի հանգամանքների համատեքստում: Փաստի վերաբերյալ կասկածը ողջամիտ է, եթե հաստատված այլ հանգամանքները հնարավորություն չեն տալիս հետևության հանգել այդ փաստի՝ սովորականից բարձր հավանականության մասին,

կամ հակառակ փաստը նույնքան ողջամիտ և հավանական է: Այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ ի հայտ է գալիս «կասկած», այն պետք է լինի ողջամիտ, այսինքն՝ պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված: *(տե՛ս, Մոֆիս և Միրվարդ Բաշապրյաններն ընդդեմ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/5599/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.06.2021 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն քննարկելիս դատարանի պարտականությունն է գնահատել վիճարկվող վարչական ակտի կատարմամբ պատճառավելիք զգալի վնասի կամ իրավունքի պաշտպանության անհնարին դառնալու հիմնավոր կասկածի առկայության (բացակայության) հարցը՝ բազմակողմանի և օբյեկտիվ քննարկման առարկա դարձնելով պատճառավելիք զգալի վնասի կամ իրավունքի պաշտպանության անհնարին դառնալու հավանականության վերաբերյալ հայցվորի ներկայացրած փաստերն ու փաստարկները, դրանց հիմքում ընկած ապացույցները:

(...) Օրենսդիրը ՀՀ վարչական դատարանին լիազորել է վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը քննարկելու շրջանակներում կասեցման անհրաժեշտությունը գնահատել միայն Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով սպառիչ կերպով սահմանված չափանիշներին համապատասխան՝ բացառապես հաշվի առնելով հայցվորին պատճառավելիք զգալի վնասի կամ իրավունքների պաշտպանության անհնարին դառնալու հիմնավոր կասկածի առկայությունը (բացակայությունը) *(տե՛ս, Համբարձում Մովսեսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/6304/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 06.10.2023 թվականի որոշումը):*

Վերահաստատելով և զարգացնելով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ վարչական ակտի կատարմամբ հայցվորին վնաս պատճառելու հիմնավոր կասկածն օրենսդրի կողմից որոշակիացվել է «զգալի» հատկանիշի կիրառմամբ, որպիսի հատկանիշի ամրագրումն ինքնանպատակ չէ: Օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասում «զգալի» եզրույթի կիրառումը ենթադրում է, որ դատարանը կարող է կասեցնել վարչական ակտի կատարումը հայցվորին՝ ոչ թե ցանկացած վնաս (անկախ դրա չափից ու ընդգրկումից) պատճառվելու հիմնավոր կասկածի, այլ **զգալի վնաս** պատճառվելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում: Այսինքն՝ պատճառավելիք վնասը պետք է ունենա խստության, լրջության որոշակի մակարդակ, որպեսզի արդարացված լինի վարչական ակտի կատարման կասեցումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վնասի զգալի բնույթի գնահատումը հարաբերական է և կախված է գործի կոնկրետ հանգամանքներից: Վնասի զգալի բնույթը գնահատելու համար, ի թիվս այլնի, հարկ է հաշվի առնել, թե անձի որ սուբյեկտիվ իրավունքին և ինչ ինտենսիվությամբ է միջամտություն տեղի ունենում: Վնասը կարող է զգալի որակվել, մասնավորապես, եթե տվյալ վարչական ակտի կատարման հետևանքներն իրենց բնույթով այնպիսին են, որ հայցվորի համար կարող են առաջացնել լուրջ դժվարություններ կամ էական անհանգստություն: Առանձին դեպքերում վնասի լրջության մակարդակը գնահատվում է ըստ հայցվորի վրա ունեցած ֆինանսական ազդեցության: Վճռաբեկ դատարանն

արձանագրում է, որ վնասի զգալի բնույթը գնահատելիս հարկ է հաշվի առնել նաև հայցվորի պաշտպանության ենթակա իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում այդ իրավունքի վերականգնելիության հնարավորության աստիճանը. վնասի չափը հակադարձ համեմատական է իրավունքի վերականգնելիության հնարավորության աստիճանին, այսինքն՝ որքան փոքր է իրավունքի վերականգնելիության հնարավորության աստիճանը, այնքան մեծ է հնարավոր վնասի չափը:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ոչ միայն պետք է հիմնավորվի զուտ վնասի վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը, այլ նաև վնասի զգալի բնույթը: Զուտ վնասի վերաբերյալ հիմնավոր կասկածը դեռևս բավարար հիմք չէ վարչական ակտի կատարումը կասեցնելու համար. անհրաժեշտ պայման է նաև վնասի զգալի լինելու հանգամանքը: Ընդ որում, վնասի զգալի չափը չի կարող հիմնվել զուտ հայցվորի սուբյեկտիվ ընկալման վրա, այն պետք է ունենա իր օբյեկտիվ հիմնավորումը, հիմնվի որոշակի փաստական տվյալների վրա:

Սույն գործով դիմելով Դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել Երևանի քաղաքապետարանի 15.11.2022 թվականի թիվ 01/18-Դ-87659-2033 շինարարության թույլտվությունը, իսկ 03.03.2023 թվականին ներկայացրած միջնորդությամբ միջնորդել է կասեցնել Երևանի քաղաքապետի 15.11.2022 թվականի թիվ 01/18-Դ-87659-2033 շինարարության թույլտվության կատարումը:

Դատարանի 09.03.2023 թվականի «Վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին» որոշմամբ Ընկերության միջնորդությունը՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ, բավարարվել է, և Երևանի քաղաքապետի 15.11.2022 թվականի թիվ 01/18-Դ-87659-2033 շինարարության թույլտվության կատարումը կասեցվել է:

**Դատարանն** արձանագրել է. «(...) այն տարածքը, որի շինարարական աշխատանքներ կատարելու համար տրվել է վիճարկվող շինթույլտվությունը, անմիջականորեն, սերտորեն կապած է հայցվոր ընկերությանը պատկանող տարածքին: Ընդ որում, որոշ յուսանկարներում երևում են երկաթյա ամրաններ, որոնք, ըստ հայցվորի, մխրճված են իրենց ընկերության հիմնապատերի մեջ:

Նման պայմաններում Դատարանի գնահատմամբ զգալի վնաս պատճառվելու ողջամիտ կասկածը հիմնավորելու շեմը տվյալ պարագայում համարվում է բավարարված:

Ի հավելումն վերոգրյալի՝ Դատարանը հարկ է համարում նկատել նաև, որ, եթե չկասեցվի վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցումը, ապա առկա է հիմնավոր կասկածն առ այն, որ հայցվորի իրավունքների պաշտպանություն կդառնա ինքնանպատակ՝ չծառայելով իր բուն նպատակին»:

**Վերաքննիչ դատարանը**, 29.05.2023 թվականի որոշմամբ, մերժելով երրորդ անձ Գագիկ Հովսեփյանի վերաքննիչ բողոքը, «Վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին» Դատարանի 09.03.2023 թվականի որոշումը թողել է անփոփոխ: Վերաքննիչ դատարանն արձանագրել է. «(...)հայցադիմումին կցված յուսանկարների (դրանք համակարգչային օրինակներ են) բովանդակությունն ուղիղ վկայում է կառուցվող օբյեկտի և Ընկերության սեփականության ներքո գտնվող շենքի պատկից լինելու մասին (օբյեկտի կառուցապատումն իրականացվում է Երևանի Թումանյան փողոցի թիվ 21/2 հասցեում, իսկ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը (շենքը) գտնվում է Երևանի Թումանյան փողոցի

թիվ 23 հասցեում): Միաժամանակ պետք է փաստել, որ նշված լուսանկարների բովանդակությունը հանգում է վիճահարույց շինարարության իրականացմամբ իրեն զգալի վնաս պատճառվելու վերաբերյալ Ընկերության փաստարկների՝ իրերի իրական դրությանն առավելապես համապատասխանելուն, որպիսի հանգամանքը ողջամտորեն կարող է ձևավորել կատարվելիք շինարարությամբ Ընկերությանը զգալի վնաս պատճառվելու հնարավոր վտանգի մասին հիմնավոր կասկած:

Միաժամանակ, հաշվի առնելով վիճարկվող շինարարության թույլտվությամբ կատարվելիք շինարարական աշխատանքների համար հատկորոշված ժամանակային տիրույթը (շինարարության թույլտվությունը տրվել է 2022 թվականի նոյեմբերի 15-ին՝ տասներկու ամիս ժամկետով)՝ կարելի է պնդել նաև, որ այդ թույլտվության կատարման չկատեցումը կարող է անհնարին դարձնել քննարկվող դեպքում ընդունված և քննության պահպանված հայցի առարկայով Ընկերության իրավունքների դատական պաշտպանությունը»:

Վերաքննիչ դատարանի բողոքարկվող որոշման բովանդակության վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը և Վերաքննիչ դատարանը, վիճարկվող շինարարության թույլտվության կատարումը կատեցնելու անհրաժեշտությունը գնահատելիս Ընկերությանը զգալի վնաս պատճառվելու և Ընկերության իրավունքների դատական պաշտպանության անհնարինության վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության մասին եզրահանգում կատարել են՝ հիմք ընդունելով վերջինիս կողմից ներկայացված լուսանկարները (**հավելված 1, գ. թ. 70-75**):

Մինչդեռ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ներկայացված լուսանկարներն ինքնին չեն կարող ձևավորել Ընկերությանը զգալի վնաս պատճառելու և Ընկերության իրավունքների դատական պաշտպանության անհնարինության վերաբերյալ հիմնավոր կասկած՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Երևանի քաղաքապետի 15.11.2022 թվականի թիվ 01/18-Դ-87659-2033 շինարարության թույլտվությամբ Գագիկ Հովսեփյանին և Ալբերտ Հովսեփյանին թույլատրվել է իրականացնել Թումանյան փողոց 21/2 հասցեում շինության ներքին վերակառուցման, շինության վրա երկու հարկի և մասսաբդային հարկի կառուցման շինարարական աշխատանքներ (**հավելված 1, գ. թ. 47-48**):

Ընկերությունը 03.03.2023 թվականին ներկայացված միջնորդությամբ միջնորդել է կատեցնել Երևանի քաղաքապետի 15.11.2022 թվականի թիվ 01/18-Դ-87659-2033 շինարարության թույլտվության կատարումը՝ փաստարկելով, որ շինարարության պատճառով փորվել են Ընկերությանը պատկանող գույքի հիմնապատերը և դրանցում տեղադրվել են երկայթա հարմարանքներ, որի արդյունքում Ընկերությունը կրելու է զգալի վնասներ: Միաժամանակ Ընկերությունը նշել է, որ իր գույքը սեյսմակայունության տեսանկյունից խոցելի է դարձել և դատնայու, ու նման պայմաններում շինարարության թույլտվության վիճարկումն իմաստագրկվելու է (**հավելված 1, գ. թ. 64-69**):

Միջնորդության, ինչպես նաև հայցադիմումի և կից փաստաթղթերի հետազոտման արդյունքում Վճռաբեկ դատարանը նախևառաջ արձանագրում է, որ Ընկերության կողմից միջնորդությամբ չի նշվել որևէ շինարարական նորմատիվի (ներառյալ սեյսմանվտանգության ապահովմանն ուղղված) ենթադրյալ խախտում. այդպիսի փաստարկ ներկայացված չէ անգամ հայցադիմումով՝ շինարարության թույլտվության վիճարկման հիմքերում: Սեյսմակայունության տեսանկյունից խոցելիության վերաբերյալ Ընկերության փաստարկը որևէ փաստական տվյալով չի հիմնավորվում:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ինչպես Դատարանի, այնպես էլ Վերաքննիչ դատարանի կողմից զգալի վնասի հիմնավոր կասկածի առկայության վերաբերյալ եզրահանգումները բացառապես հիմնվում են կառուցվող օբյեկտի և Ընկերության սեփականության ներքո գտնվող շենքի պատկից լինելու հանգամանքի վրա: Մինչդեռ, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ երկու շինությունների պատկից լինելու հանգամանքն ինքսին չի կարող ձևավորել Ընկերությանը պատճառվելիք վնասի վերաբերյալ հիմնավոր կասկած, առավել ևս որևէ կերպ չի կարող վկայել հնարավոր վնասի զգալի բնույթի մասին: Ավելին, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել նաև, որ երրորդ անձին պատկանող շինությունն ու Ընկերությանը պատկանող շինությունը պատկից են եղել ի սկզբանե՝ մինչև վիճարկվող շինությունվության տրամադրումը: Շինությունվությունը վերաբերում է Թումանյան փողոց 21/2 հասցեում *շինության ներքին վերակառուցմանը, շինության վրա երկու հարկի և մանսարդային հարկի* կառուցման շինարարական աշխատանքների: Այսինքն՝ վիճարկվող շինությունվությունը վերաբերում է ոչ թե Ընկերության շինությանը պատկից շինություն կառուցելուն, այլ արդեն իսկ գոյություն ունեցող պատկից շինության ներքին վերակառուցմանը, այդ շինության վրա երկու հարկի և մանսարդի կառուցմանը, որպիսի պայմաններում Ընկերությանից պահանջվում էր բավարար փաստական տվյալների միջոցով հիմնավորել Թումանյան փողոց 21/2 հասցեում շինության ներքին վերակառուցման, շինության վրա երկու հարկի և մանսարդային հարկի կառուցման շինարարական աշխատանքների արդյունքում Ընկերությանը պատճառվելիք վնասի վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը, ինչպես նաև այդ վնասի զգալի բնույթը: Մինչդեռ, Ընկերության կողմից միջնորդությանը կից ներկայացվել են միայն երկու շինությունների լուսանկարները, որոնք վկայում են միայն երկու շինությունների պատկից լինելու մասին, սակայն որևէ կերպ չեն կարող վկայել վիճարկվող շինությունվության հիման վրա կատարվող շինարարական աշխատանքների արդյունքում Ընկերությանը պատճառվելիք վնասի վերաբերյալ հիմնավոր կասկածի, առավել ևս՝ այդ վնասի զգալի բնույթի մասին:

Ինչ վերաբերում է Ընկերության այն փաստարկին, որ երրորդ անձի կողմից կատարվող «(...) աշխատանքների արդյունքում փորվել են Ընկերությանը պատկանող գույքի հիմնապատերը և դրանցում տեղադրվել երկաթյա հարմարանքներ: (...) Ընկերության հիմնապատերի մեջ տեղադրվել են երկաթյա ձողեր՝ կառուցվելիք շինության ամրությունն ապահովելու համար», ապա ներկայացված լուսանկարներով որևէ կերպ չի հաստատվում նշված փաստը: Ավելին, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ընկերությունն իր իսկ ներկայացրած միջնորդության մեջ ընդունում է, որ Ընկերության հիմնապատերի մեջ երկաթյա ձողի տեղադրված լինելն «արտաքինից տեսանելի չէ» (**հավելված 1, գ. թ. 68**):

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ Դատարանն իր 09.03.2023 թվականի «Վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին» որոշմամբ փաստել է որոշ լուսանկարներում միայն երկաթյա ամրանների տեսանելիությունը, սակայն Ընկերության հիմնապատերի մեջ մխրճված լինելու հանգամանքը գուտ Ընկերության պնդման մակարդակում է: Այդ մասին է վկայում Դատարանի որոշման մեջ տեղ գտած հետևյալ արձանագրումը. «(...) որոշ լուսանկարներում երևում են երկաթյա ամրաններ, որոնք, *ըստ հայցվորի*, մխրճված են իրենց ընկերության հիմնապատերի մեջ»:



Ինչ վերաբերում է առանձին լուսանկարներում երրորդ անձի շինության մեջ երևացող երկաթյա ամրանին, ապա այդ ամրանի և վիճարկվող շինությունների կատարվող աշխատանքների միջև պատճառական կապը որևէ կերպ չի հիմնավորվում:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ և՛ Դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը սխալ եզրահանգման են եկել Ընկերությանը պատճառվելիք զգալի վնասի վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը հատուտված է համարել նաև Ընկերության իրավունքների պաշտպանության անհնարին դառնալու վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը՝ նշելով հետևյալը. «(...) հաշվի առնելով վիճարկվող շինարարության թույլտվությամբ կատարվելիք շինարարական աշխատանքների համար հատկորոշված ժամանակային տիրույթը (շինարարության թույլտվությունը տրվել է 2022 թվականի նոյեմբերի 15-ին՝ տասներկու ամիս ժամկետով)՝ կարելի է պնդել նաև, որ այդ թույլտվության կատարման չկատարված կարող է անհնարին դարձնել քննարկվող դեպքում ընդունված և քննության պահպանված հայցի առարկայով Ընկերության իրավունքների դատական պաշտպանությունը»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել, թե շինարարական աշխատանքների համար նախատեսված ժամանակահատվածը ինչպես է պայմանավորում Ընկերության իրավունքների պաշտպանության անհնարինության վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայությունը:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը եզրահանգում է, որ Դատարանը վիճարկվող շինությունների կատարումը կասեցրել է, իսկ Վերաքննիչ դատարանը Դատարանի 09.03.2023 թվականի «Վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին» որոշումն անփոփոխ է թողել վիճարկվող շինությունների կատարումը կասեցնելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում, որպիսի պայմաններում Ընկերության՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա էր մերժման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 29.05.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 09.03.2023

թվականի «Վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՏԵՍԱԿՆԵՐ, ՄԱՏՆԱՆՇՈՒՄ  
ԵՎ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ**

**6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական Վարչական գործ թիվ **ՎԴ/10875/05/18 2022թ.**  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ **ՎԴ/10875/05/18**  
Նախագահող դատավոր՝ **Հ. Բեդեյան**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող և զեկուցող* **Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ**  
**Լ. ՀԱԿՈԲՅԱՆ**  
**Ք. ՄԿՈՅԱՆ**

2022 թվականի հոկտեմբերի 07-ին  
գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Շուշանիկ Վարդանյանի, Թորոս Վարդանյանի և Արարատ Խառատյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) թիվ 00470697, թիվ 00470711, թիվ 00470674 և թիվ 00420720 կատարողական վարույթներով պարտապան Շուշանիկ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Տերյան փողոցի թիվ 87/4 բնակելի տան վերաբերյալ Ծառայության Շիրակի մարզային բաժնի կողմից 23.07.2018 թվականին անցկացրած հարկադիր էլեկտրոնային աճուրդը, Ծառայության և գնորդ Հեղինե Գրիգորյանի կողմից 26.07.2018 թվականին ստորագրված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և Հեղինե Գրիգորյանի անվամբ նույն հասցեում բնակելի տան նկատմամբ 21.09.2018 թվականին կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.04.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ներկայացրած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Շուշանիկ Վարդանյանը, Թորոս Վարդանյանը և Արարատ Խառատյանը պահանջել են անվավեր ճանաչել Ծառայության թիվ 00470697,

թիվ 00470711, թիվ 00470674 և թիվ 00420720 կատարողական վարույթներով պարտապան Շուշանիկ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Տերյան փողոցի թիվ 87/4 բնակելի տան վերաբերյալ Ծառայության Շիրակի մարզային բաժնի կողմից 23.07.2018 թվականին անցկացրած հարկադիր էլեկտրոնային աճուրդը, Ծառայության և գնորդ Հեղինե Գրիգորյանի կողմից 26.07.2018 թվականին ստորագրված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և Հեղինե Գրիգորյանի անվամբ նույն հասցեում բնակելի տան նկատմամբ 21.09.2018 թվականին կատարված սեփականության իրավունքի գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 05.11.2018 թվականի որոշումներով Շուշանիկ Վարդանյանի, Թորոս Վարդանյանի և Արարատ Խառատյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ, ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն (այսուհետ՝ Կադաստր), Բանկը և Հեղինե Գրիգորյանը ներգրավվել են սույն գործով որպես երրորդ անձինք:

Դատարանի 05.11.2018 թվականի «Ապացույց պահանջելու մասին» որոշմամբ Ծառայությունից պահանջվել է որոշումն ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում Դատարան ներկայացնել Ծառայության թիվ 00470697, թիվ 00470711, թիվ 00470674 և թիվ 00420720 կատարողական վարույթների նյութերը և Գյումրու Տերյան փողոցի թիվ 87/4 բնակելի տան վերաբերյալ Ծառայության Շիրակի մարզային բաժնի կողմից 23.07.2018 թվականին անցկացրած հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հայցվորներին իրազեկելու վերաբերյալ ապացույցը:

Արարատ Խառատյանի և Թորոս Վարդանյանի կողմից 15.02.2019 թվականին Դատարան է ներկայացվել միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ:

Դատարանի 22.02.2019 թվականի որոշմամբ Թորոս Վարդանյանի և Արարատ Խառատյանի կողմից ներկայացված միջնորդությունը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.04.2019 թվականի որոշմամբ Դատարանի 22.02.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշման դեմ Բանկի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 22.02.2019 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճարեկ բողոք է ներկայացրել Բանկը (ի պաշտոնե ներկայացուցիչ՝ Բագրատ Ճզմայան):

Վճարեկ բողոքի պատասխաններ են ներկայացրել Ծառայությունը (ներկայացուցիչ՝ Գոռ Սարգսյան), Շուշանիկ Վարդանյանը, Թորոս Վարդանյանը և Արարատ Խառատյանը (ներկայացուցիչ՝ Կարինե Դանիելյանը):

## **2. Վճարեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճարեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասը, 72-րդ հոդվածի 1-ին մասը, 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Դատարանն ի սկզբանե չպետք է հայցադիմումն ընդուներ վարույթ, քանի որ հայցվորները բաց էին թողել հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը, իսկ Բանկի ներկայացուցչի կողմից կատարված գրավոր միջնորդությունը ներկայացնելուց հետո Դատարանը չպետք է բավարարեր հայցվորների ներկայացուցչի՝ օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ բերված միջնորդությունը և պետք է գործի վարույթը կարճեր: Հայցվորների ներկայացուցչի հարցումների հիման վրա հարկադիր կատարողի որոշումների պատճենները 13.09.2018 թվականին ստանալը դեռևս հիմք չէր կարող հանդիսանալ, որպեսզի բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարվի «սուբյեկտիվ գործոնի» տեսակետից: Ավելին՝ քրեակատարողական հիմնարկում գտնվող կալանավորը չէր կարող չստանալ հարկադիր կատարողի որոշումը: Բացի այդ, գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին որոշումը տեղադրվել է [www.azdarar.am](http://www.azdarar.am) պաշտոնական կայքում, ինչպես նաև այն ուղարկվել է Թորոս Վարդանյանի բնակության վայրի համայնքի ղեկավարին: Ուստի պարտապանները չեն ձեռնարկել իրենցից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ՝ պահանջը հիմնավորող ապացույցներ դատարան ներկայացնելու համար:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 26.04.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը:

### **2.1. Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Շուշանիկ, Թորոս Վարդանյանների և Արարատ Խառատյանի կողմից ներկայացված պատասխանի հիմնավորումները.**

Ծառայության կողմից Թորոս Վարդանյանին ուղարկված որոշումները և ծանուցագրերն առաքվել են քրեակատարողական հիմնարկի հասցեով և վերջինիս կողմից չեն ստացվել: Բացի այդ, քրեակատարողական հիմնարկում իր պատիժը կրող անձը չէր կարող ունենալ և օգտագործել ինտերնետային հասանելիություն ապահովող սարքավորումներ, հետևաբար Թորոս Վարդանյանը ծանոթ չէր և օբյեկտիվորեն չէր կարող ծանոթ լինել նշված որոշումներին:

### **2.2. Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Ծառայության կողմից ներկայացված պատասխանի հիմնավորումները.**

Թորոս Վարդանյանը Ծառայության 20.03.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը ստացել է 03.04.2018 թվականին և օրենքով սահմանված ժամկետում չի բողոքարկել այն, իսկ Արարատ Խառատյանին այն նույնպես ուղարկվել է օրենքով սահմանված կարգով կատարողական թերթում նշված հասցեով, որը վերադարձվել է «տեղափոխված է» նշագրումով: Այնուհետև այն տեղադրվել է ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում: Բացի այդ, Արարատ Խառատյանը դեռևս 2016 թվականից տեղեկացված է, որ Ծառայությունում հանդիսանում է պարտապան, ինչի մասին են վկայում վերջինիս կողմից տրված հայտարարությունները: Այսպիսով՝ համահայցվորներն ակնհայտորեն բաց են թողել հայց ներկայացնելու դատավարական ժամկետը:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը, սակայն, հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Սույն բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն իրավական հարցադրմանը, թե ի՞նչ հայցադեմսակի շրջանակներում է քննության ենթակա հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջը:*

*Վերոգրյալով պայմանավորված Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցը ներկայացնելու դատավարական ժամկետների հաշվարկման ստանձնահարկություններին:*

**3.1.** ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (...), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով (...):

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝

1) հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը.

2) վարչական մարմինների միջև այն վեճերը, որոնք ենթակա չեն լուծման վերադատության կարգով.

3) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների, ներառյալ՝ արհեստակցական միությունների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ վեճերով գործերը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՄԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՄԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՄԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՄԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՄԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՄԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան) այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*Կրեյս, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*):

Դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից

որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*յրեն, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*):

Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*յրեն Khalfaoui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*):

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*յրեն, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 28.11.2007 թվականի թիվ ՄԴՈ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ամանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը և պայմանները սահմանում է օրենսդիրը: Օրենսդիրն այս գործընթացում օժտված է գնահատման որոշակի ազատությամբ, սակայն սա չի նշանակում, որ օրենսդիրն իրավասու է սահմանելու դատարան դիմելու իրավունքի իրացմանը վերաբերող ցանկացած իրավակարգավորում: ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված այս հիմնարար իրավունքի իրացման կարգը և պայմանները նախատեսող իրավակարգավորումները պետք է



նպատակ հետապնդեն ապահովելու դատական պաշտպանության միջոցների գործնականում արդյունավետ երաշխավորումը, այլ խոսքով՝ արդարադատության պատշաճ իրականացումը և անձանց իրավունքների և ազատությունների գործնականում արդյունավետ պաշտպանությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը 03.02.2009 թվականի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատական պաշտպանության իրավունքի բաղկացուցիչ տարրն է հանդիսանում անձի՝ այն դատարանում իր գործի քննության իրավունքը, որի ընդդատությանն օրենքով հանձնված է տվյալ գործը: Ըստ այդմ, իրավունքների պաշտպանության հայցի կամ դիմումի հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության հարցը որոշվում է՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպիսի (հանրային կամ մասնավոր) իրավահարաբերություններից ծագող վեճից է բխում այդ գործերի հարուցման համար հիմք հանդիսացած պահանջը (իսկ մի քանի փոխկապակցված հայցապահանջների առկայության դեպքում՝ դրանցից հիմնականը):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս անդրադարձել է հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարբերակման և դրա հիման վրա դատական գործերի ընդդատության տարանջատման հարցին (*Կրե՛ս, «Վեսթ» ՄԴԸ-ն ընդդեմ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մրավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/0823/05/14, թիվ ՎԴ/0830/05/14 և թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումները*):

**3.2. Վճռաբեկ դատարանը, վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները հանրային իրավահարաբերություններին բնորոշ առանձնահատկությունների վերաբերյալ, հարկ է համարում հավելել, որ օրենսդիրը ՀՀ վարչական դատարավարության օրենսգրքի 10-րդ հոդվածով հանրային իրավահարաբերություններից բխող բոլոր վեճերի ընդդատությունը վերապահել է վարչական դատարանին՝ միաժամանակ սահմանելով նշված կանոնից բացառությունները:**

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածում ամրագրելով, որ վարչական դատարանում գործ հարուցելու հիմքը հայցն է, օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի մյուս հոդվածներում սահմանել է հանրային իրավահարաբերություններից ծագող գործերով իրավասու սուբյեկտների կողմից վարչական դատարան դիմելու հայցատեսակները՝ որպես վարչական գործի հարուցման հիմքեր: Այսինքն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը հստակ սահմանում է այն հայցատեսակները, որոնց միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են վարչական դատարանից հայցել իրենց խախտված իրավունքների և շահերի դատական պաշտպանություն: Ընդ որում, նշված հայցատեսակները միմյանցից առաջին հերթին տարբերվում են հայցի առարկայով, այսինքն՝ այն նյութաիրավական պահանջի բովանդակությամբ, որը ֆիզիկական և իրավաբանական անձինք ուղղում են այս կամ այն վարչական մարմնին:

*Անիտիելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գրել է, որ այն դեպքում, երբ անձը, իր խախտված իրավունքների պաշտպանության նպատակով դիմում է վարչական դատարան, ասյա վերջինիս իրավունքների և շահերի դատական պաշտպանությունը պետք է իրականացվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պարզաճ հայցաբեռասկի հիման վրա հարուցված*

վարչական գործի ըստ էության քննության և լուծման միջոցով: Այսինքն՝ վարչական դատավարությունում հայցվորի պահանջը պետք է համապատասխանի օրենքով սահմանված այն հայցարեսակին բնորոշ հայցի առարկային, որի միջոցով ԿԿՄՎՎ-ի իրավահարաբերության շրջանակներում հնարավոր է գործնականում հասնել անձի իրավունքների և շահերի դատական պաշտպանության ապահովմանը (տե՛ս, Վարուժան Ավետիսյանի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճարելի դատարանի 14.03.2017 թվականի որոշումը):

Վճարելի դատարանը հավելում է, որ վարչական դատարանին ընդդատյա՝ հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի լուծումը ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը նախատեսում է հայցային և հատուկ վարույթի կարգով, ընդ որում, հայցային վարույթի կարգով վեճերի լուծումն օրենսդիրը սահմանափակել է չորս հայցատեսակներով: Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հայցատեսակները սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանն ուղղված դատավարական գործուն կառուցակարգեր են, որոնք ելակետային նշանակություն ունեն անձի խախտված իրավունքների վերականգնման տեսանկյունից: Մինևն ժամանակ, Վճարելի դատարանն արձանագրում է, որ հայցատեսակի ընտրությունը պայմանավորված է անձի խախտված սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության եղանակով: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ վարչական դատարանում գործի քննության և լուծման կարգն ըստ էության պայմանավորված է անձի կողմից ընտրված հայցատեսակով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործող ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հայցի տեսակներով է պայմանավորում հայց ներկայացնելու ժամկետները, ապացուցման բեռը, հայցի ապահովման միջոցները, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտով լուծման ենթակա հարցերի շրջանակը:

Միաժամանակ Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել, որ որքան էլ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակներն ունենան ընդգրկուն բնույթ, այդուհանդերձ, բնության մեջ կարող են ծագել հանրային իրավահարաբերություններից բխող այնպիսի վեճեր, որոնք առերևույթ կարող են չհամապատասխանել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված հայցի տեսակներին ներկայացվող պահանջներին: Այս համատեքստում Վճարելի դատարանը հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ նման իրավիճակների առաջացումը պայմանավորված է այնպիսի գործոնով, ինչպիսին է հասարակական հարաբերությունների դինամիկ բնույթը, այլ կերպ ասած՝ հասարակական հարաբերությունների անընդմեջ զարգացումը: Վճարելի դատարանի գնահատմամբ վերոգրյալն օրենսդրին հնարավորություն չի տալիս ի սկզբանե կանխատեսել բոլոր հնարավոր իրավիճակները, ինչն իրավակիրառ պրակտիկայում կարող է առաջացնել տարաբնույթ իրավական փակուղիներ: Նման պայմաններում Վճարելի դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է ձևավորվի հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ուղղված լինելով ոչ միայն անձի սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, այլև իրավունքի գերակայության համընթացության ապահովմանը: Հետևաբար Վճարելի դատարանը հարկ է համարում արձանագրել, որ հանրային իրավահարաբերություններից բխող, սակայն ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքով նախատեսված հայցատեսակների կամ հատուկ վարույթների կարգով քննությանը ներկայացվող պահանջներին չհամապատասխանող վեճերը ևս պետք է քննվեն անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի պահպանմամբ: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հաշվի առնելով վիճելի իրավահարաբերության բնույթը, դատական պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքը, ինչպես նաև փյոյալ իրավունքի վերականգնման հնարավոր եղանակի առանձնահատկությունները, դատարանը կարող է որոշել, թե որ հայցարեսակին բնորոշ կանոնների կիրառումը կարող է առավելագույնս արդյունավետորեն ապահովել անձի խախտված իրավունքների վերականգնումը՝ ապահովելով դատարանի մատչելիության իրավունքը, մասնագիտացված արդարադատության նպատակայնությունը և սուբյեկտիվ իրավունքների ճիշտ պաշտպանության համար անհրաժեշտ և բավարար իրավական գործիքակազմը:

3.3. Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ որպես հանրային իրավահարաբերություններից բխող, սակայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցատեսակների կամ հատուկ վարույթների կարգով քննությանը ներկայացվող պահանջներին չհամապատասխանող վեճի օրինակ կարող է լինել հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու նյութափրավական պահանջը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջի առարկայական ընդդատության հարցին, արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համակարգում գործող դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը՝ որպես պետական իշխանություն իրականացնող մարմին, կոչված է ապահովելու դատական ակտերի հարկադիր կատարումը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին և այլ իրավական ակտերին, մասնավորապես՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքին համապատասխան: ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով, իրականացվում է նաև գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացնելու միջոցով, այն է՝ սակարկություններով վաճառելու և այն հետագայում իրացնելու միջոցով: Ընդ որում, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465-րդ հոդվածների հիմքով անցկացվող սակարկությունների, որտեղ որպես սակարկությունների կազմակերպիչ կարող է հանդես գալ գույքի սեփականատերը, իրավունքների տիրապետողը, աշխատանքներ կամ ծառայություններ առաջարկողը, ինչպես նաև այն անձը, ով գործում է սեփականատիրոջ կամ իրավատիրոջ հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա և հանդես է գալիս նրանց կամ իր անունից, գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդի միջոցով իրացվելու դեպքում սակարկությունները կազմակերպվում և անց են կացվում ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից՝ դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթին համապատասխան:

Նման պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջով վիճելի իրավահարաբերության կողմերից մեկը ՀՀ արդարադատության նախարարության

դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն է, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով վարչական մարմին է:

Տվյալ հայցապահանջի հիմքում ընկած վեճը ծագում է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությանը: Գործով քննության ենթակա հիմնական պահանջի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունն ուղղված է հանրային շահի՝ դատական ակտի կատարման ապահովմանը (*լրեն, Դեզդեմոնա, Էդիկ, Գոհար, Սյրեփան, Նունե, Հմայակ և Ալիսա Մանուկյանները, Անահիտ Հարությունյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ԿԴՅ/ՕԼԴ/ՕԷ/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը*):

**3.4.** Այսպիսով, վկայակոչված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը հանգել է այն եզրակացության, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցապահանջն ընդդատյա է վարչական դատարանին: Նման պայմաններում հարց է առաջանում, թե ի՞նչ կանոններով է ենթակա հարուցման և քննության հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելուն ուղղված հայցապահանջը:

Այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի քննության առանձնահատկություններին՝ վարչադատավարական օրենսգրքով նախատեսված յուրաքանչյուր հայցատեսակի շրջանակներում:

**3.4.1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը (ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները):

Վարչական դատարանում գործի հարուցման հիմք հանդիսացող առանձին հայցատեսակներից է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող ոչ իրավաչափ վարչական ակտը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վիճարկման հայցով հայցվորն իրավունք ունի պահանջելու վերացնել իր իրավունքները և ազատությունները խախտող վարչական ակտը, որը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում դառնում է դատական վերահսկողության առարկա: Վիճարկման հայցը որպես ոչ իրավաչափ վարչական ակտերից անձանց իրավական պաշտպանության միջոց, օրենսդրի կողմից սահմանված հայցի տեսակ է, որն ուղղված է դատական կարգով վարչական ակտն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելուն: ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ նշել է, որ վիճարկման հայցի առարկան միջամտող վարչական ակտն ամբողջությամբ կամ մասամբ վերացնելու

պահանջն է: Հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ որ նույնն է՝ հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը (*յրեն, Սամվել Մեյրունյանն ընդդեմ ՀՀ կառավարության թիվ ՎԴ/1346/05/10 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2013 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված վարչական գործերի քննության ընթացքում առաջին հերթին անհրաժեշտ է պարզել՝ արդյոք ներկայացված հայցապահանջի նյութական օբյեկտը վարչական ակտ է, թե՛ ոչ (*յրեն, Վարունաս Ավետիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- վարչական ակտն անհատական իրավական ակտ է, այն ունի հստակորեն որոշված հասցեատեր,

- վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

- վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

- վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

- վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,

- վարչական ակտն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում իր հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար. դրանով վարչական մարմինը սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար (*յրեն, Ռոբերտ Հովհաննիսյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ թվարկված որակական հատկանիշներից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ դրանց համակցությունը՝ բավարար, գրավոր փաստաթուղթը վարչական ակտ որակելու համար. այդ հատկանիշներից որևէ մեկի բացակայության դեպքում փաստաթուղթը չի կարող դիտարկվել որպես վարչական ակտ (*յրեն, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ*

*Ֆինանսների նախարարության թիվ ՎԳ/4610/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.05.2021 թվականի որոշումը):*

Վերահաստատելով վարչական ակտի բնորոշմանը վերաբերող վեց հատկանիշներից առաջին հինգի, մասնավորապես՝ վարչական ակտն անհատական իրավական ակտ հանդիսանալու, վարչական մարմինների կողմից հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով ընդունված լինելու և արտաքին ներգործություն ունենալու վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները և անհրաժեշտ համարելով անդրադառնալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար վարչական ակտով ուղղակի իրավական հետևանքներ առաջացնելու, դրանով վերջիններիս համար իրավունքներ և պարտականություններ սահմանելու, փոփոխելու, վերացնելու կամ ճանաչելու մասով վարչական ակտի բնորոշմանը վերաբերող հատկանիշին և զարգացնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի վերաբերյալ նշված իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ որպես վարչական ակտին բնորոշող հատկանիշներ անհրաժեշտ է դիտարկել հետևյալները.

1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր,

2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,

3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,

4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,

5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առկա կոնկրետ հարցի կարգավորմանը,

6) վարչական ակտն առաջացնում է ուղղակի իրավական հետևանքներ կամ ուղղված (միտված) է այդ հետևանքների առաջացմանը վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, դրանով վարչական մարմինը վերջիններիս համար

սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև նրանց տրամադրում է իրավունքներ կամ ստեղծում է այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, կամ մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է նրանց իրավունքների իրականացումը, որն է պարտականություն է դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական վարույթը եզրափակող փաստաթուղթը, ի թիվս այլ հատկանիշների, վարչական ակտ պետք է որակվի ոչ միայն այն պարագայում, երբ դրանով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար ուղղակի իրավական հետևանքներ են առաջանում, այլ նաև այն դեպքում, երբ տվյալ վարչական ակտն ուղղված է իրավական հետևանքներ առաջացնելուն և ակներև է, որ դրանում արձանագրվածն ինքնին բավարար է վերջիններիս իրավական կամ փաստացի դրությունը վատթարացնելու համար (*Կրեն, «Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ քննապահպանության և ընդերքի տեսչական մարմնի թիվ ՎԴ/11082/05/20 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.12.2021 թվականի որոշումը*):

**3.4.2.** Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առաջնահերթ պետք է պարզել, թե արդյո՞ք հարկադիր էլեկտրոնային աճուրդը ՀՀ իրավական համակարգում վարչական ակտ է, թե՛ ոչ:

Այսպես՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքը կարգավորում է հրապարակային աճուրդների միջոցով գույքի, գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ իրավունքների իրացման, ինչպես նաև հրապարակային մրցույթների կազմակերպման հետ կապված հարաբերությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Նույն օրենքը տարածվում է էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների և հարկադիր աճուրդների վրա, բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների (...):

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում բացահայտված են նույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները.

(...) հրապարակային սակարկություններ կամ սակարկություններ՝ աճուրդի (մրցույթի) կազմակերպման միջոցով պայմանագրերի կնքման գործընթաց, որին կարող է մասնակցել նույն օրենքով նախատեսված պայմաններին բավարարող անձանց անորոշ շրջանակ.

աճուրդ՝ սակարկությունների ձև, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին. (...)

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ լուտի (լոտերի) վաճառքից հետո հաղթողը և կազմակերպիչը ստորագրում են սակարկությունների արդյունքների մասին արձանագրությունը, և տվյալ լուտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր է ճանաչվում այն աճուրդը, որն անցկացվում է կատարողական թերթին և նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր աճուրդը կազմակերպում և անցկացնում է հարկադիր կատարողը:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը էլեկտրոնային համակարգերի (...) կիրառմամբ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի (...) միջոցով կազմակերպվող սակարկություններն են, որը կազմակերպում և անցկացնում է ծառայությունը՝ կատարողական թերթին, ինչպես նաև նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթին համապատասխան:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 35.1-րդ և 35.2-րդ հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի պահանջով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում կազմակերպվում է նոր հարկադիր էլեկտրոնային աճուրդ՝ նույն օրենքով սահմանված կարգով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը հրապարակային աճուրդների միջոցով գույքի, գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների և դրանց նկատմամբ իրավունքների իրացման, ինչպես նաև հրապարակային մրցույթների կազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով: Վկայակոչված օրենքը տարածվում է էլեկտրոնային համակարգերի միջոցով կազմակերպվող սակարկությունների և հարկադիր աճուրդների վրա, բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող գործառնությունների:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն իրականացվում է հարկադիր կատարողի կողմից կազմակերպված կատարողական գործողությունների շրջանակում: «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի մեկնաբանությունից պարզ է, որ ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով հատուկ էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ կազմակերպվող և անցկացվող աճուրդների հիմքը կատարողական թերթն ու նոտարի կողմից տրված կատարողական մակագրության թերթն են: Տվյալ դեպքում ևս աճուրդի կարող է հանվել ցանկացած շարժական կամ անշարժ գույք, այդ թվում՝ գույքային իրավունքներ, օրենքով նախատեսված բացառություններ չպարունակելու դեպքում: Տեխնիկական և էլեկտրոնային հատուկ համակարգերի և միջոցների կիրառումն ու դրանք ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի միջոցով իրականացվելու հանգամանքը հաշվի առնելով՝ այդպիսի աճուրդները կոչվում են հարկադիր էլեկտրոնային աճուրդներ, որոնք հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման որոշակի առանձնահատկություններ ունեցող տարատեսակներ են:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի համար հիմք է հանդիսանում հարկադիր կատարողի համապատասխան որոշումը գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին, որպիսի որոշումից հետո «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդը: Ընդ որում, այն պետք է իրականացվի նշված օրենքով սահմանված կարգին համապատասխան, հակառակ պարագայում այդ աճուրդը կարող է ճանաչվել անվավեր: Հատկանշական է, որ աճուրդի ավարտի կապակցությամբ օրենսդրի կողմից չի նախատեսվել իրականացված հարկադիր էլեկտրոնային աճուրդն ամփոփող վարչական ակտի կայացում, այլ օրենքով սահմանված է աճուրդում հաղթած անձի կողմից որոշակի գործողությունների կատարում, որին հաջորդում է առուվաճառքի պայմանագրի կնքումը:



Փաստորեն, հարկադիր էլեկտրոնային աճուրդը սկսվում է համապատասխան որոշման կայացմամբ, ավարտվում է աճուրդում հաղթած անձի՝ համակարգի կողմից որոշմամբ և աճուրդի արդյունքներն ամփոփող փաստաթղթի՝ արձանագրության կազմմամբ, որին հաջորդում է առուվաճառքի պայմանագրի կնքումը և դրա հիման վրա կատարված սեփականության իրավունքի գրանցումը: Ստացվում է, որ հարկադիր աճուրդի համար ելակետային տվյալ հանդիսանում է համակարգի կողմից հաղթող ճանաչված անձի ընտրվելը և արձանագրության կազմումը, որն իրավունք է վերապահում աճուրդում հաղթողին նշված արձանագրության հիման վրա ձեռք բերել պահանջի իրավունք լուրի գինը վճարելու դեպքում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ Ծառայությունը նշված գործողությունները համակարգող վարչական մարմին է, որը հետևում է հարկադիր աճուրդի ընթացակարգային նորմերի իրականացմանը և որպես աճուրդի կազմակերպիչ գնորդի և վաճառողի համար իրավունքներ և պարտականություններ առաջանալու փաստն ամրագրում համապատասխան արձանագրության մեջ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.3-րդ հոդվածի 2-րդ մասը հնարավորություն է տալիս նույն օրենքի 35.1-րդ և 35.2-րդ հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի պահանջով դատական կարգով ճանաչել անվավեր: Հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու արդյունքում կնքված առուվաճառքի պայմանագիրն անվավեր է ճանաչվում, հարկադիր էլեկտրոնային աճուրդի արդյունքում գնած գույքի նկատմամբ դատարանի վճռի հիման վրա վերականգնվում են պարտապանի սեփականության իրավունքը, իրացման հետևանքով գույքի նկատմամբ դադարած այլ իրավունքները և արգելանքները, իսկ պահանջատերը, հարկադիր կատարողը և պարտապանը լուրի վաճառքից ստացված գումարներն իրենց ստացած չափով վերադարձնում են գնորդին: Արդյունքում կազմակերպվում է նոր հարկադիր էլեկտրոնային աճուրդ՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

*Այսպիսով՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդը հարկադիր աճուրդի փարսպենսակ է և իրենից ներկայացնում է մեկը մյուսի հետ փոխկապակցված, որոշակի հաջորդականություն պահանջող գործողությունների համակցություն:*

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու մասին պահանջը չի կարող հանդիսանալ վիճարկման հայցի առարկա, քանի որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն օժտված չէ վարչական ակտին բնորոշ վերը նշված հատկանիշներով և իր բնույթով այն որոշակի հաջորդական գործողություններից բաղկացած գործընթաց է:

3.5. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է վարչական մարմինը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորեցման հայցը ներառում է վարչական մարմնի կողմից նույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով պարտավորեցման հայցի էությանը, արձանագրել է, որ պարտավորեցման հայցով անձը կարող է պահանջել պարտավորեցնել վարչական մարմնին ընդունելու իր համար այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը վարչական մարմինը

մերժել է: Այսինքն՝ պարտավորեցման հայց ներկայացնելու համար նախապայման է հանդիսանում բարենպաստ վարչական ակտի ընդունումը վարչական մարմնի կողմից մերժելու հանգամանքը: (...) Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտավորեցման հայցի բուն նպատակը անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է (...) *(լրե՛ս, Կարեն Սարգսրյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը):*

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջը որևէ կերպ չի համապատասխանում պարտավորեցման հայցի էությանը, ուստի նշված պահանջի ըստ էության քննությունը և լուծումը պարտավորեցման հայցի շրջանակներում բացառվում է:

**3.6.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված գործողության կատարման հայցի հասկացության վերլուծության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ նշված հայցատեսակով հայցվորը կարող է վարչական մարմնից պահանջել՝ (ա) կատարելու որոշակի գործողություններ կամ (բ) ձեռնպահ մնալու այնպիսի գործողությունների կատարումից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը: Փաստորեն, գործողության կատարման հայցով դատարանն դիմած անձը կարող է վարչական մարմնից պահանջել դրսևորելու վարչական ակտի ընդունման հետ չկապված՝ ինչպես ակտիվ վարքագիծ՝ կատարելու որոշակի գործողություններ, այնպես էլ պասիվ վարքագիծ՝ ձեռնպահ մնալու որոշակի գործողությունների կատարումից *(լրե՛ս, Շուշանիկ Տրդատյանն ընդդեմ ՀՀ աղետի գուրու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ինդիքների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի թիվ ՎԴ/6072/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.07.2015 թվականի որոշումը):*

Վերը նշվածի համատեքստում Վճռաբեկ դատարանը, ևս մեկ անգամ վերահաստատելով գործողության կատարման հայցի էության կապակցությամբ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները, հարկ է համարում փաստել, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջով դատական պաշտպանություն հայցող անձի հետապնդած նպատակը որևէ կերպ չի համատեղվում գործողության կատարման հայցի բովանդակության հետ:

**3.7.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել նույն օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել վարչական ակտի առ ոչինչ լինելը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.3-րդ հոդվածի 2-րդ մասի իրավա-կարգավորումների ուժով նույն օրենքի 35.1-րդ և 35.2-րդ հոդվածներով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի պահանջով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Հարկ է նշել, որ այս դեպքում օրենսդիրը հատուկ օրենքով հստակ նշել է հայցի առարկան, այն է՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու մասին պահանջը, որը որևէ կերպ չի կարող հավասարագոր լինել որևէ իրավահարաբերության առկայության կամ բացակայության փաստը ճանաչելու պահանջի հետ:

Հաջորդիվ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ճանաչման հայցին, փաստում է, որ վիճարկման հայցի կապակցությամբ նշված դատողությունները հավասարապես կիրառելի են նաև այս դեպքում:

Անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ճանաչման հայցին, ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ գտել է, որ հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը: Այսինքն՝ նշված հայցատեսակի առարկան այլևս իրավաբանա-կան ուժ չունեցող միջամտող վարչական ակտը, ինչպես նաև կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավա-չափ ճանաչելու պահանջն է: Միևնույն ժամանակ օրենսդիրը, ի լրումն ՀՀ վարչա-կան դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոնի, նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել է ճանաչման հայցով դատարան դիմելու համար իրավական շահագրգռվածության հատուկ կանոն, որի համաձայն՝ հայցվորը պետք է արդարացիորեն շահագրգռված լինի համապատասխան վարչական ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ (*յրե՛ս, Գևորգ Հարությունյանը և Էլիզա Մարգարյանն ընդդեմ ՀՀ կառավարության, երրորդ անձ «ՄՈԳԼԱՄԻԵ-ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ի թիվ ՎԳ/6572/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2019 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու մասին պահանջ ներկայացրած հայցվորի՝ արդարացիորեն շահագրգռված լինելը հաստատող պայմանները, որոնք թվարկված են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասում, բացակայում են: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերը թվարկված՝ հայցվորի շահագրգռվածությունը

պայմանավորող պայմաններն արդեն իսկ կանխորոշում են ոչ իրավաչափ ճանաչված այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտի կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողության կամ անգործության իրավական հետևանքները, որոնք էականորեն տարբերվում են հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելուն հաջորդող իրավական հետևանքից: Այսպես՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու իրավական հետևանքը նույն օրենքով սահմանված կարգով նոր հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպումն է: Հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ ճանաչման հայցով հարուցված գործի շրջանակներում անձի շահագրգռվածությամբ պայմանավորված իրավական հետևանքները էականորեն տարբերվում են հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու դեպքում օրենքով նախատեսված իրավական հետևանքից, որպիսի պատճառաբանությամբ անձը նշված հայցատեսակի շրջանակներում ևս չի կարող հասնել իր խախտված իրավունքների վերականգնմանը:

**3.8. Վերոգրյալ իրավական վերլուծությունների արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.**

1) մի կողմից՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործն ընդդատյա է վարչական դատարանին և պետք է քննվի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված կանոններին համապատասխան,

2) մյուս կողմից՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու նյութաիրավական պահանջն առերևույթ չի կարող դառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-69-րդ հոդվածներով նախատեսված հայցի տեսակների առարկա:

Այս համատեքստում Վճռաբեկ դատարանը՝ որպես օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովող սահմանադրական մարմին, հարկ է համարում արձանագրել, որ օրենքով հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու իրավական հնարավորությունը պետք է երաշխավորված իրացվի՝ անկախ վարչադատավարական օրենսդրությամբ աճուրդի իրավաչափությունը դատական քննության անմիջական առարկա դարձնելու պատշաճ կառուցակարգի բացակայության հանգամանքից:

ՀՀ սահմանադրական դատարանը 10.02.2015 թվականի թիվ ՍԴՌ-1190 որոշմամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության ինստիտուտի ներդրումը, ի թիվս այնի, նպատակ է հետապնդում առաջին հերթին ապահովելու տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հայցի տեսակները և դրանց օրենսդրական բնորոշումները չեն կարող խոչընդոտել անձանց արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի կենսագործումը: Հայցի տեսակների գոյության նպատակն այն է, որ հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերն արդյունավետ կերպով քննության առնվեն վարչական դատարանի կողմից՝ հաշվի առնելով միայն տվյալ հայցատեսակին բնորոշ առանձնահատուկ

հատկանիշները: Այլ կերպ ասած՝ հայցի տեսակներն ուղղված են անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման ապահովմանը: Հայցի տեսակների՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված բնորոշումները չեն կարող մեկնաբանվել կամ կիրառվել որպես գործիք՝ անձին դատական պաշտպանություն փաստացի չտրամադրելու և վարչական արդարադատությունից հրաժարվելու համար: Նման մոտեցումը Վճռաբեկ դատարանը գնահատում է որպես դատավարական նորմերի մեխանիկական ընկալման և կիրառման հետևանք, ինչի արդյունքում խաթարվում է դատական պաշտպանության իրավունքի բուն էությունը (*լրեն, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներով բազմիցս նշել է, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացման հնարավորությունը: Այսպես՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի քննության կապակցությամբ առկա իրավական բացը լուծելու համար անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել այն հանգամանքը, որ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.3-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումների ուժով շահագրգիռ անձն իրավունք ունի կատարողական վարույթի շրջանակներում կազմակերպված և օրենքով նախատեսված կանոնների խախտմամբ անցկացված աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջ ներկայացնել: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջով վիճելի իրավահարաբերությունն իր բնույթով հանրային է և ենթակա է վարչական դատավարության կարգով քննության, սակայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը չի նախատեսում այնպիսի հայցատեսակ, որը լիարժեք կարտացոլի նշված նյութաիրավական պահանջի էությունը:

Նման պայմաններում, հաշվի առնելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում դատավարական նորմերի անալոգիայի կիրառման արգելքի բացակայությունը, ինչպես նաև արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովումը Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջի հիման վրա հարուցված գործի քննության նկատմամբ առավել համահունչ է վիճարկման հայցի իրավակարգավորումների կիրառումը, քանի որ այս դեպքում գործ ունենք համասեռ հարաբերությունների հետ: Մասնավորապես՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջն իր բնույթով և դատական պաշտպանություն հայցող անձի հետապնդած նպատակով առավելապես նման է վիճարկման հայցի առարկային և բովանդակությանը, քանի որ երկու դեպքում էլ առաջնային իրավական հետևանքն անվավերությունն է: Հաշվի առնելով այն, որ ներկա իրավակարգավորումներով հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջն ուղղակիորեն չի համապատասխանում վարչական դատավարությունում առկա հայցատեսակներին, ինչը չի համապատասխանում արդարադատության արդյունավետության, անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատարանի մատչելիության իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշներին, այդ թվում նաև՝ հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վարչադատավարական կարգով քննության և լուծման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներին, Վճռաբեկ դատարանն արձանագրում

է, որ առավել համահունչ և հավասարակշռված դատական պաշտպանության կառուցակարգը վիճարկման հայցի կանոնների կիրառումն է հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի նկատմամբ:

Անփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ներկայիս իրավակարգավորումների պայմաններում իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն ուղղությամբ, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու հայցապահանջով վիճելի իրավահարաբերության նկատմամբ կիրառվեն վիճարկման հայցի կանոնները՝ ապահովելով դատական պաշտպանության իրավունքի և դրա իրացման համար անհրաժեշտ դատավարական ընթացակարգերի կիրառման արդյունավետությունը:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության 20.03.2018 թվականի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշմամբ Շուշանիկ Վարդանյանին պատկանող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Տերյան փողոցի թիվ 87/4 բնակելի տունը ներկայացվել է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի (harkadir.achurd.am) միջոցով: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 18.05.2018 թվական (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 30-31**):

23.07.2018 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվել է գրավի առարկա հանդիսացող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Տերյան փողոցի թիվ 87/4 բնակելի տունը:

Ծառայության՝ որպես վաճառողի և Հեղինե Գրիգորյանի՝ որպես գնորդի միջև 26.07.2018 թվականին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որի 1-ին կետի համաձայն՝ վաճառողը վաճառում է, իսկ գնորդը որպես սեփականություն ձեռք է բերում Շուշանիկ Վարդանյանի սեփականություն հանդիսացող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Տերյան փողոցի թիվ 87/4 բնակելի տունը: Պայմանագիրը ենթարկվել է նոտարական վավերացման և գրանցվել սեղանամատյանում 4270 համարի ներքո (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 35-37**):

30.10.2018 թվականին ՀՀ վարչական դատարան է մուտքագրվել Շուշանիկ Վարդանյանի, Թորոս Վարդանյանի և Արարատ Խառատյանի՝ 25.10.2018 թվականին փոստի միջոցով ներկայացված հայցադիմումը, որով հայցվորները պահանջել են անվավեր ճանաչել Ծառայության թիվ 00470697, թիվ 00470711, թիվ 00470674 և թիվ 00420720 կատարողական վարույթներով պարտապան Շուշանիկ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Տերյան փողոցի թիվ 87/4 բնակելի տան վերաբերյալ Ծառայության Շիրակի մարզային բաժնի կողմից 23.07.2018 թվականին անցկացրած հարկադիր էլեկտրոնային աճուրդը, 26.07.2018 թվականին Ծառայության և գնորդ Հեղինե Գրիգորյանի կողմից ստորագրված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 21.09.2018 թվականին Հեղինե Գրիգորյանի անվամբ սույն հասցեում բնակելի տան նկատմամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումը (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 3-11**):

ՀՀ վարչական դատարանի 05.11.2018 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ (**հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 51-52**):

Թորոս Վարդանյանը և Արարատ Խառատյանը 15.02.2019 թվականին միջնորդություն են ներկայացրել Դատարան բաց թողնված դատավարական

ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ այն պատճառաբանությամբ, որ «Հարկադիր կարարումն սպահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի կողմից հարուցված թվով չորս կարարողական վարույթներից թիվ 00470674 կարարողական վարույթով պարտապան հանդիսացող Թորոս Վարդանյանը, և թիվ 00470720 կարարողական վարույթով պարտապան հանդիսացող Արարայր Խառատյանը չեն իրագելվել 22.09.2016 թվականին կայացված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» և նրան նախորդած մնացած բոլոր որոշումների հետ, որոնք կայացվել են 11.11.2016, 29.11.2017, 20.03.2018 թվականներին: Ավելին փաստաբանի 03.09.2018 թվականին հարցմանն ի պատասխան Հարկադիր կարարումն սպահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի 07.09.2018 թվականի գրությամբ նշում է, որ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը Թորոս Վարդանյանին հետադարձ ծանուցման միջոցով ծանուցվել է «Արթիկ» ԲԿ-ում, իսկ Արարայր Խառատյանին ուղարկված ծրարը հետ է վերադարձվել, քանի որ փութային գրատման մեջ նշված է պարտապանը տեղափոխվել է: Վերջինիս ծանուցումը տեղադրվել է ՀՀ պաշտոնական [www.azdarar.am](http://www.azdarar.am) հրապարակային ծանուցումների կայքում: 07.09.2018 թվականի գրությամբ կից հարկադիր կարարումն սպահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի կողմից տրամադրված հետադարձ ծանուցման փաստը հաստատող ծանուցագրի լուսապատճենից հարակ էրևում է, որ ոչ սրացողի ստորագրությունն է համապատասխանում պարտապան Թորոս Վարդանյանի ստորագրությանը և ոչ էլ անուն ազգանունը, որից էրևում է, որ Թորոս Վարդանյանը «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման և որևէ մեկի վերաբերյալ տեղեկացված չի եղել և տեղեկացել է միայն 13.09.2018 թվականին, երբ դիմում է ներկայացրել հարկադիր կարարումն սպահովող ծառայության ՇՄ ծառայության բաժնի խնդրելով տրամադրել 23.07.2018 թվականին հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լուրի մասին կազմված արձանագրությունը և դրա հիման վրա կազմված առումլաճառքի պայմանագրի պարձեները, (...): Բնչ վերաբերում է հարկադիր կարարումն սպահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի այն պատասխանին, թե Արարայր Խառատյանին «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման ծանուցումների կայքում, դա չի կարող նշանակել, որ Արարայր Խառատյանը իրագելվել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման հետ» **(հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 107-109):**

Դատարանի 22.02.2019 թվականի որոշմամբ Թորոս Վարդանյանի և Արարատ Խառատյանի կողմից ներկայացված՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդությունը բավարարվել է հետևյալ պատճառաբանությամբ. «(...) Դատարանը, Թորոս Վարդանյանի մասով եզրահանգեց, որ վերջինս «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման ընդունման պահին գրնվելիս է եղել «Արթիկ» քրեակարարողական հիմնարկում, ուստի վերջինիս կողմից վիճարկման հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը մուր մեկ ամիս բաց թողնելու հանգամանքը, դատարանը համարում է որջամիսի հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս օբյեկտիվորեն կարող էր հնարավորություն չունենալ հերևելու հարկադիր էլեկտրոնային աճուրդին: Անդրադատնալով Արարայր Խառատյանի կողմից հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հանգամանքին, դատարանն արձանագրում է, որ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումն ուղարկվել է Արարայր Խառատյանին, սակայն ծրարը ետ է վերադարձվել և վերջինս փաստացի չի ծանուցվել

որոշման մասին, բացի այդ, կայարարողական վարույթի նյութերում առկա է հարկադիր կայարարողի 18.09.2018 թվականի որոշումն այն մասին, որ պարտապան Արարար Խառապյանը ներկայացել է հարկադիր կայարարումն ապահովող ծառայության ՇՄ բաժին, որի հիմքով որոշել է դադարեցնել վերջինիս նկատմամբ հայարարված հետախուզումը, որպիսի պայմաններում դադարանք գրնում է, որ Արարար Խառապյանի կողմից սույն հայցը ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց է թողնվել իրենից անկախ հանգամանքներով պայմանավորված» **(հավելվածի հատոր 1-ին, գ. թ. 122-128):**

Վերաքննիչ դատարանը, մերժելով Բանկի վերաքննիչ բողոքը, ըստ էության, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները:

Վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով սույն գործի փաստերը և Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Շուշանիկ Վարդանյանի, Թորոս Վարդանյանի և Արարատ Խառապյանի կողմից ներկայացված հիմնական պահանջը՝ Ծառայության թիվ 00470697, թիվ 00470711, թիվ 00470674 և թիվ 00420720 կատարողական վարույթներով պարտապան Շուշանիկ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Տերյան փողոցի թիվ 87/4 բնակելի տան վերաբերյալ Ծառայության Շիրակի մարզային բաժնի կողմից 23.07.2018 թվականին անցկացրած **հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելն է**, իսկ 26.07.2018 թվականին Ծառայության և գնորդ Հեղինե Գրիգորյանի կողմից ստորագրված և նոտարական կարգով վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը և 21.09.2018 թվականին Հեղինե Գրիգորյանի անվամբ նույն հասցեում բնակելի տան նկատմամբ կատարված սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու հայցապահանջները հայցվորների կողմից ներկայացվել են որպես ածանցյալ պահանջներ:

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը նախ փաստում է, որ Ծառայության կողմից թիվ 00470697, թիվ 00470711, թիվ 00470674 և թիվ 00420720 կատարողական վարույթներով պարտապան Շուշանիկ Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Տերյան փողոցի թիվ 87/4 բնակելի տան վերաբերյալ Շիրակի մարզային բաժնի կողմից 23.07.2018 թվականին անցկացրած **հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջն ընդդատյա է վարչական դատարանին**, քանի որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցապահանջը բխում է հանրային իրավահարաբերություններից:

Հաշվի առնելով վերը նշված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի նկատմամբ վիճարկման հայցի կանոնների կիրառման պայմաններում հայց ներկայացնելու ժամկետների հաշվարկման առանձնահատկություններին.

Այսպես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է նույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների



ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

Ընդգծելով այն հանգամանքը, որ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու իրավական հնարավորություն և այդ պահանջի նկատմամբ առավել նպատակահարմար դատական պաշտպանության կառուցակարգը վիճարկման հայցի կանոնների կիրառումն է՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դեպքում նշված պահանջով հայցադիմումը ներկայացնելու համար գործում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետը:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ այն իրավական հարցին, թե հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի շրջանակներում ներկայացվելու դեպքում որ պահից պետք է հաշվարկվի հայց հարուցելու երկամսյա ժամկետը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջի ներկայացման պայմաններում վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի հաշվարկման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն իրենից ներկայացնում է մեկը մյուսի հետ փոխկապակցված, որոշակի հաջորդականություն պահանջող գործողությունների համակցություն, որի ավարտի կապակցությամբ օրենսդրի կողմից չի նախատեսվել իրականացված հարկադիր էլեկտրոնային աճուրդն ամփոփող վարչական ակտի կայացում: Նման պայմաններում հաշվի առնելով, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը եզրափակվում է միայն արդյունքներն ամփոփող փաստաթղթի՝ արձանագրության կազմմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի շրջանակներում ներկայացվելու դեպքում, երկամսյա ժամկետը հոսում է արձանագրության կազմման պահից: Այդուհանդերձ Վճռաբեկ դատարանը, նկատի ունենալով, որ վարչական մարմինն օրենքով նախատեսված կարգով չի կրում աճուրդն ավարտվելու վերաբերյալ պարտապանին իրազեկելու պարտականությունը, գտնում է, որ սույն դեպքում արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին հայցվոր կողմի իրազեկվելու հանգամանքը կարող է ելակետային նշանակություն ունենալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետի բաց թողումը հարգելի համարելու հարցի քննարկման համար:

Այսպես, հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջը արձանագրության կազմման պահից սկսած երկամսյա ժամկետում ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է դատավարական ժամկետում ներկայացված, ուստի այդ պարագայում դատավարական ժամկետը

վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

Մինչդեռ, եթե հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու պահանջը դատարան է ներկայացվում արձանագրության կազմման պահից սկսած երկամսյա ժամկետը լրանալուց հետո, ապա այդ դեպքում հայցվորը պետք է ներկայացնի դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն: Ընդ որում, եթե միջնորդության հիմքում հայցվորը դնում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին իր իրազեկված լինելու կոնկրետ օրվա մասին փաստարկ՝ այդ փաստարկը հիմնավորող թույլատրելի ապացուցով հանդերձ և դատարանը պարզում է, որ հայցադիմումը դատարան է ներկայացվել այդ օրվանից հաշվված երկամսյա ժամկետում, ապա բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը պետք է վերականգնվի իրավունքի ուժով (*ex jure*)՝ ապահովելով ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածներով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իրավունքն արդյունավետ իրացումը:

Ինչպես վերը նշվեց՝ վիճարկվող հարկադիր էլեկտրոնային աճուրդը տեղի է ունեցել 23.07.2018 թվականին և նույն օրը կազմվել է «Հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լուտի մասին» թիվ 000470697-18/01 արձանագրությունը (թիվ 00470697 կատարողական վարույթ): Նշված աճուրդն անվավեր ճանաչելու և դրանից աճանցվող մյուս պահանջների մասին հայցադիմումը փոստային առաքմանն է հանձնվել 25.10.2018 թվականին, այսինքն՝ արձանագրության կազմման պահից սկսած երկամսյա ժամկետը լրանալուց հետո:

Թորոս Վարդանյանի և Արարատ Խառատյանի կողմից դատարան ներկայացված բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդության հիմքում դրվել է այն հանգամանքը, որ ծանուցագրի վրա առկա ստորագրության հեղինակը Թորոս Վարդանյանը չէ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ հակառակը հավաստող այլ ապացույցների բացակայության պայմաններում հայցվորի հայտնած տվյալը՝ 20.03.2018 թվականին ընդունված «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման վերաբերյալ ծանուցված չլինելու մասին, պետք է համարել հավաստի: Ավելին՝ սույն գործում բացակայում է որևէ այլ ապացույց առ այն, որ ծանուցագիրը հանձնվել է հայցվոր Թորոս Վարդանյանին:

Անդրադառնալով Արարատ Խառատյանի կողմից հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու հանգամանքին՝ Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում ստորադաս դատարանների պատճառաբանություններն առ այն, որ վերջինս աճուրդի անցկացման մասին փաստացի չի ծանուցվել: Ավելին՝ կատարողական վարույթի նյութերում առկա է հարկադիր կատարողի 18.09.2018 թվականի որոշումն այն մասին, որ պարտապան Արարատ Խառատյանը ներկայացել է հարկադիր կատարումն ապահովող ծառայության ՇՄ բաժին, որի հիմքով որոշվել է դադարեցնել վերջինիս նկատմամբ հայտարարված հետախուզումը, ինչը ևս վկայում է այն մասին, որ Արարատ Խառատյանը փաստացի չի ծանուցվել աճուրդի անցկացման մասին:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով ոչ միայն չի հիմնավորվել 23.07.2018 թվականին անցկացված հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին Թորոս Վարդանյանի և Արարատ Խառատյանի իրազեկված լինելու փաստը, այլ նաև 20.03.2018 թվականին ընդունված «Արգելադրված

գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը Թորոս Վարդանյանի և Արարատ Խառատյանի կողմից ստացված լինելու փաստը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման պայմաններում պետք է հիմք ընդունվեր սույն գործով վիճարկվող՝ 23.07.2018 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին իրազեկված լինելու օրվա վերաբերյալ Թորոս Վարդանյանի և Արարատ Խառատյանի կողմից Դատարանին հայտնված այն տվյալը, ըստ որի՝ Թորոս Վարդանյանն իրազեկվել է միայն 13.09.2018 թվականին, երբ դիմում է ներկայացրել հարկադիր կատարումն ապահովող ծառայության ՇՄ ծառայության բաժին խնդրելով տրամադրել 23.07.2018 թվականին հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացված լուտի մասին կազմված արձանագրությունը և դրա հիման վրա կազմված առուվաճառքի պայմանագրի պատճենները, իսկ Արարատ Խառատյանն առհասարակ իրազեկված չի եղել, որպիսի պարագայում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը ենթակա էր վերականգնման, որպիսի իրավաչափ եզրահանգման հանգել են ստորադաս դատարանները:

*Վճռաբեկ բողոքի վերաբերյալ Շուշանիկ, Թորոս Վարդանյանների և Արարատ Խառատյանի կողմից ներկայացված պարասիսանում բերված փաստարկները հասարակում, իսկ Ծառայության կողմից ներկայացված պարասիսանում բերված փաստարկները հերքվում են վերը նշված պարճատարանությամբ:*

Այսպիսով, սույն բողոքի քննությամբ չհաստատվեց Վերաքննիչ դատարանի կողմից արդարադատության բուն էությունը խաթարող դատական սխալ, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի, 72-րդ հոդվածի 1-ին մասի, 96-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի խախտում թույլ տալու փաստը, քանի որ դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդության բավարարումը համապատասխանում է սույն որոշմամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին, ուստի վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է ոչ բավարար Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.04.2019 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը թողնելով օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառարանություններով:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

# 7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝

Վ.Գ./5005/05/22  
Վ.Գ./5005/05/22  
Ռ. Խանդանյան

Վարչական գործ թիվ Վ.Գ./5005/05/22  
2023թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով

Նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  
գեկուցող Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ք. ՄԿՈՅԱՆ

2023 թվականի դեկտեմբերի 08-ին  
գրավոր ընթացակարգով քննելով Տիգրան Աճեմյանի վճռաբեկ բողոքը ՀՀ  
վերաքննիչ վարչական դատարանի 16.01.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը  
մերժելու մասին» որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Տիգրան Աճե-  
մյանի ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) Երևան քաղաքի  
Նուբարաշեն Ե-2 թաղամաս 5 հասցեով (սեփականության վկայական՝ 29032018-  
01-0079) ապօրինի գրանցված սեփականության իրավունքի դադարեցման  
պետական գրանցում կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Տիգրան Աճեմյանը պահանջել է պարտավորեցնել  
Կոմիտեին կատարել Երևան քաղաքի Նուբարաշեն Ե-2 թաղամաս 5 հասցեով  
(սեփականության վկայական՝ 29032018-01-0079) ապօրինի գրանցված սեփա-  
կանության իրավունքի դադարեցման պետական գրանցում:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Գ. Մոսյան) (այսուհետ՝ Դատարան)  
23.08.2022 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Դատարանի 27.09.2022 թվականի որոշմամբ կրկին ներկայացված հայցադի-  
մումը վերադարձվել է:

Դատարանի 31.10.2022 թվականի որոշմամբ հայցադիմումի ընդունումը  
մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.01.2023 թվականի որոշմամբ Տիգրան Աճեմյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 31.10.2022 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տիգրան Աճեմյանը (ներկայացուցիչ՝ Կարո Ասատրյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ, 26-րդ, 27-րդ, 73-րդ, 74-րդ, 78-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել 80-րդ հոդվածի դրույթները, ինչը հանգեցրել է ՀՀ Սահմանադրության 60-րդ և 61-րդ հոդվածների և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտման:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատաբանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը, հաշվի չառնելով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած դիրքորոշումները, եկել է սխալ եզրահանգման՝ պարտադիր համարելով հայցվորի համար Դատարանի կողմից մատնանշած ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու հանգամանքը, քանի որ այն ընդամենն առաջարկ է հայցվորին, այսինքն՝ հայցվորի իրավունքն է այդ առաջարկն ընդունելը կամ չընդունելը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը հայցվորին տալիս է գործի քննության ընթացքում հայցապահանջի հստակեցման և (կամ) փոփոխման հնարավորություն:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 16.01.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ հայցադիմումն ընդունել վարույթ:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածների խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ճիշտ հայցարեսակ մատնանշելու դատարանի պարտականության պարզաճ կատարմանը ներկայացվող պահանջներին՝ դատական ակտի որոշակիության ու կանխարեսելիության համարեքարում:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե («ex officio»): Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

ՀՀ վարչական դատարանի ճիշտ հայցատեսակ մատնանշելու պարտականությանը՝ որպես Օրենսգրքի 5-րդ հոդվածով սահմանված գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի բաղադրիչ, ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում:

Այսպես, գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը («ex officio») հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերից բխող գործերի քննության ընթացքում վարչական դատարանին օժտում է ակտիվ դերակատարությամբ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն ապահովելու իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ընդունած իրավական ակտերի, գործողությունների ու անգործությունների դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների դատական պաշտպանության իրացումը: (...) դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է, մասնավորապես, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու՝ վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները՝ ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները: Նշված դեպքերում վարչական դատարանի՝ դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում է ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև՝ անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը (յուրև, նաև Ալեքսանդր Կարապովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս շեշտադրել է, որ որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու վարչական դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի էությունից բխող պարտականությունը վարչական դատավարությունում կարող է իրականացվել թե՛ գործի հարուցման, թե՛ գործը դատաքննության նախապատրաստելու, թե՛ դատաքննության փուլերի ընթացքում: Այլ կերպ ասած, եթե գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե («ex officio») պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող

այս կամ այն դատավարական գործողությունը գործի քննության սկզբնական (գործի հարուցման կամ հայցադիմումի ընդունելիության) փուլում կատարելու համար առկա են բավարար իրավական և փաստական հիմքեր, ապա վարչական դատարանը պարտավոր է տվյալ դատավարական պարտականությունը կատարել հենց այդ փուլում՝ ելնելով գործի հետագա քննության արդյունավետությունն ապահովելու նկատառումներից: Ըստ այդմ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատարանի կողմից ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ հայցվորին առաջարկ անելու պարտականությունը կարող է կատարվել նաև գործի հարուցման փուլում: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ հայցադիմումի ընդունելիության (գործի հարուցման) փուլում նշված դատավարական գործողությունը պետք է կատարվի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման շրջանակներում (տե՛ս, Վարուժան Ավետիսյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության թիվ ՎԳ/3804/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ՝ որպես ճիշտ հայցատեսակ մատնանշելու պարտականության կատարման ելակետային սկզբունք ամրագրել է հետևյալը. (...) յուրաքանչյուր գործով մատնանշման պարտականության կատարումը պետք է կատարվի այն հաշվառմամբ, որ չխախտվի ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից մեկը՝ տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները (տե՛ս, Տիգրան Սահակյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առնիթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԳ/6067/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2019 թվականի որոշումը):

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը, ելնելով տնօրինչականության սկզբունքի էությունից, արձանագրել է, որ, սրանստով սիսալ հայցարեսակով ձևակերպված հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը՝ հայցվորը կարող է կատարել, *inter alia*, հերկյալ դատավարական գործողությունները.

1) ընդունել ոչ ճիշտ հայցարեսակը պարշաճ հայցարեսակով փոխարինելու (պարշաճ հայցարեսակը մատնանշելու) վերաբերյալ դատարանի առաջարկը և կրկին ներկայացվող հայցադիմումի մեջ պահանջը ձևակերպել դատարանի կողմից մատնանշված պարշաճ հայցարեսակին համահունչ,

2) չընդունել դատարանի առաջարկը և կրկին ներկայացվող հայցադիմումի մեջ պահանջը ձևակերպել նույն կերպ, ինչպես որ այն ձևակերպված է եղել սկզբնապես ներկայացված հայցադիմումի մեջ (տե՛ս, Գագիկ Միմոնյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԳ/8117/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.09.2019 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև հայցադիմումը վերադարձնելու որոշմամբ ՀՀ վարչական դատարանի կողմից կատարված ճիշտ հայցատեսակի մատնանշումը հայցվորի կողմից չընդունելու իրավական հետևանքներին, մասնավորապես, մատանշումը չընդունելու դեպքում հայցադիմումի ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով մերժելու իրավական հնարավորությանը: Նշված նորմի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը,

եթե նույն Օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում հայցվորը չի վերացրել հայցադիմումի այնպիսի սխալները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար:

Այս առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ հատակ կամ ոչ ճիշտ հայցատեսակը հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված (տե՛ս, Ալեքսանդր Կարալովն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ այն դեպքում, երբ հայցվորը կրկին ներկայացված հայցադիմումով պնդում է սկզբնապես ներկայացված հայցադիմումը, նշված հանգամանքն արգելք չէ գործի քննության համար. ըստ այդմ՝ հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով: (...) հայցադիմումի ընդունումը չի կարող մերժվել այն պատճառաբանությամբ, որ ճիշտ հայցատեսակի մատնանշմամբ դատարանի կողմից վերադարձված հայցադիմումը կրկին ներկայացրած հայցվորը պնդել է սկզբնապես ներկայացված պահանջը (*տե՛ս, Հայկ Բարուխանյանն ընդդեմ Պետրական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/4606/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.05.2023 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում հարկ է համարում նաև անդրադառնալ ճիշտ հայցատեսակի մատնանշում բովանդակող՝ հայցադիմումը վերադարձնելու որոշման որոշակիության և կանխատեսելիության անհրաժեշտ որակներին:

ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՄԴՈ-630, ՄԴՈ-1142, ՄԴՈ-1213) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում: (...) իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին (*տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 03.05.2016 թվականի թիվ ՄԴՈ-1270 որոշումը*):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի ինչպես հիմնավորումներն ու պատճառաբանությունը, այնպես էլ եզրահանգումները



պետք է հասցեատերերի համար լինեն որոշակի և կանխատեսելի՝ վերջիններիս համար ապահովելով պատշաճ վարքագծի հստակ ընտրության հնարավորություն: Դատական ակտի որոշակիության և կանխատեսելիության որակների միջոցով պետք է բացառվի կողմերի հարաբերություններում անորոշությունը, ինչպես նաև դատական ակտի բովանդակության տարընկալումներն ու տարընթերցումները: Դատական ակտով կողմերից պահանջվող համապատասխան վարքագիծը պետք է ձևակերպվի հնարավորինս միանշանակ ու հստակ, որպեսզի կողմը հնարավորություն ունենա պատշաճ կերպով կատարել դատական ակտի պահանջը:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ոչ ճիշտ հայցատեսակը ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ մատնանշում կատարելու ՀՀ վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարումը, ի թիվս այլնի, պետք է ելնթարկվի հետևյալ պահանջներին.

- հայցադիմումի ընդունելիության փուլում ճիշտ հայցատեսակի մատնանշումը պետք է կատարվի այդ պարտականությունը կատարելու համար անհրաժեշտ իրավական և փաստական հիմքերի բավարար համակցության առկայության դեպքում միայն: Եթե հայցադիմումում ներկայացված փաստերը և հայցադիմումին կից ապացույցները բավարար հիմք չեն ձևավորում ճիշտ հայցատեսակ մատնանշելու համար, ապա ճիշտ հայցատեսակ մատնանշելու պարտականության կատարումը պետք է կատարվի գործը դատաքննության նախապատրաստելու փուլում,

- դատական պրակտիկայում պետք է բացառվի այն իրավիճակը, երբ հայցվորը կրկին ներկայացված հայցադիմումով ընդունում է հայցադիմումը վերադարձնելու որոշմամբ կատարված մատնանշումը, սակայն դատարանը կրկին ներկայացված հայցադիմումով լրացված փաստերի ու ապացույցների հետազոտման արդյունքում կատարում է մեկ այլ հայցատեսակի մատնանշում՝ կրկին վերադարձնելով հայցադիմումը,

- ճիշտ հայցատեսակի մատնանշումն իր բովանդակությամբ պետք է լինի որոշակի, հստակ ու միանշանակ՝ հիմնված հայցադիմումում ներկայացված փաստերի և կից ապացույցների ամբողջական հետազոտման ու գնահատականի վրա, հայցադիմումը վերադարձնելու որոշումից հայցվորի համար պետք է միանշանակորեն պարզ լինի, թե կոնկրետ ինչ հայցատեսակ է մատնանշվել, որպեսզի վերջինս հնարավորություն ունենա հայցադիմումը կրկին ներկայացնելիս իր վարքագիծը համապատասխանեցնել հայցադիմումը վերադարձնելու որոշման պահանջներին:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Դիմելով Դատարան՝ Տիգրան Աճեմյանը պահանջել է պարտավորեցնել Կոմիտեին Երևան քաղաքի Նուբարաշեն Ե-2 թաղամաս 5 հասցեով (սեփականության վկայական՝ 29032018-01-0079) ապօրինի գրանցված սեփականության իրավունքի դադարեցման պետական գրանցում կատարել:

Դատարանը 23.08.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է՝ պատճառաբանելով, որ, տվյալ դեպքում հայցվորի դատական պաշտպանությունը կարող է իրականացվել վիճարկման հայցի շրջանակում, քանի որ նրա փաստարկները հանգում են համապատասխան վարչական ակտի օրենքի խախտմամբ ընդունված լինելուն: Ըստ այդմ՝ Դատարանը հայցվորին առաջարկել է կրկին ներկայացվելիք հայցադիմումում ոչ ճիշտ հայցատեսակը պարտավորեցման հայցը, փոխարինել պատշաճ հայցատեսակով՝ վիճարկման հայցով:

Հայցվորը, ընդունելով Դատարանի կողմից կատարված մատնանշումը, կրկին ներկայացված հայցադիմումով խնդրել է անվավեր ճանաչել ք. Երևան, Նուբարաշեն Ե-2 թաղամաս 5 հասցեով Հասմիկ Թոքատյանի անվամբ կատարված պետական գրանցումը, և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել պատասխանողի կողմից կատարված ք. Երևան, Նուբարաշեն Ե-2 թաղամաս 5 հասցեով Կարեն Աբրահամյանի անվամբ կատարված պետական գրանցումը:

Քննարկելով կրկին ներկայացված հայցադիմումի ընդունելիության հարցը՝ Դատարանը 27.09.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ նշել է, որ, ի թիվս այլնի, «հայցվորի կողմից հայցադիմումին չի կցվել քաղաք Երևան, Նուբարաշեն Ե-2 թաղամաս 5 հասցեով Կարեն Աբրահամյանի անվամբ կատարված պետական գրանցումը (սեփականության վկայական՝ 29032018-01-0079), որպիսի դեպքում հնարավոր չէ պարզել, թե այդ գրանցումը երբ է կատարվել, ինչ իրավահաստատող փաստաթղթի հիման վրա է կատարվել, արդյոք Կարեն Աբրահամյանը վիճելի գույքը ձեռք է բերել Հասմիկ Թոքատյանից կամ հակառակը, և նշված վարչական ակտի բացակայության պայմաններում հնարավոր չէ որոշել, թե վիճարկվող գրանցումները տվյալ պահին իրավաբանական ուժ ունեն, թե ոչ»: Դատարանը նշված որոշմամբ փաստել է նաև, որ «եթե նշված գրանցումներից որևէ մեկը կորցրել է իր իրավաբանական ուժը, ապա նման գրանցումը կարող է վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակում, իսկ այն գրանցումը, որը տվյալ պահին գործում է, կարող է վիճարկվել հենց նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի շրջանակում»:

Քննարկելով կրկին ներկայացված հայցադիմումի ընդունելիության հարցը **Դատարանը** հայցադիմումի ընդունումը մերժել է Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով՝ նշելով, որ «հիմնական պահանջով վիճարկման հայցի շրջանակում վիճարկվող իրավունքի պետական գրանցումն իրավաբանական ուժ չունի, ուստի այն չի կարող դառնալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցի առարկա, ինչի վերաբերյալ հայցվորին հստակ մատնանշվել էր, սակայն մատնանշման պահանջները չեն կատարվել»:

**Վերաքննիչ դատարանը**, մերժելով Տիգրան Աճեմյանի վերաքննիչ բողոքը, նշել է, որ Դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված կանոնակարգումների հաշվառմամբ շեշտադրել է սույն դեպքի նկատմամբ հնարավոր ճիշտ հայցատեսակները, մինչդեռ, հայցվորը Հասմիկ Թոքատյանի անվամբ կատարված պետական գրանցման (սեփականության վկայական՝ թիվ 2291611) այլևս իրավաբանական ուժ չունենալու պայմաններում որպես հիմնական պահանջ կրկին ներկայացրել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայց, որպիսի պահանջով ամփոփված վեճը ենթակա չէ դատարանում քննության: Այսինքն, հայցվոր կողմը չի շտկել իր կողմից թույլ տրված սխալը, որպիսի իրողությունը հանգեցրել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին Դատարանի հիմնավոր հետևությանը: Վերաքննիչ դատարանը նշել է նաև, որ Դատարանը եկել է ճիշտ եզրահանգման՝ մերժելով հայցադիմումի ընդունումը, քանի որ Տիգրան Աճեմյանը Հասմիկ Թոքատյանի անվամբ կատարված պետական գրանցման (սեփականության վկայական՝ թիվ 2291611) այլևս իրավաբանական ուժ չունենալու պայմաններում կրկին ներկայացված հայցադիմումով որպես հիմնական պահանջ պնդել է հայցադիմումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված վիճարկման հայցի շրջանակներում

ներկայացնելու իր դիրքորոշումը, մինչդեռ, եթե գրանցումը կորցրել է իր իրավաբանական ուժը, ապա այն կարող է վիճարկվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակում, իսկ այն գրանցումը, որը տվյալ պահին գործում է, կարող է վիճարկվել նույն օրենսգրքի 66-րդ հոդվածի շրջանակում:

Վճռաբեկ դատարանը, վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով Վերաքննիչ դատարանի նշված դիրքորոշումը, գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի փաստերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը 23.08.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ կատարել է ճիշտ հայցատեսակի մատնանշում, այն է՝ ըստ Դատարանի դիրքորոշման՝ հայցվորի դատական պաշտպանությունը կարող է իրականացվել վիճարկման հայցի միջոցով: Տիգրան Աճեմյանը, շտկելով Դատարանի 23.08.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ նշված թերությունը, հայցադիմումի պահանջը ձևակերպել է վիճարկման հայցի շրջանակներում, սակայն Դատարանը 27.09.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ կրկին վերադարձրել է հայցադիմումը՝ նշելով, որ հնարավոր չէ պարզել, թե երբ է կատարվել վիճարկվող պետական գրանցումը (վարչական ակտը), և եթե տվյալ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցրել է, անհրաժեշտ է հայցադիմումը ներկայացնել ճանաչման հայցի շրջանակներում, եթե ոչ, ապա հայցադիմումը ներկայացնել վիճարկման հայցի շրջանակներում:

Տիգրան Աճեմյանը հայցադիմումը կրկին ներկայացրել է վիճարկման հայցի շրջանակներում՝ հայցադիմումին կցելով քաղաք Երևան, Նուբարաշեն Ե-2 թաղամաս 5 հասցեով Կարեն Աբրահամյանի անվամբ կատարված պետական գրանցումը (սեփականության վկայական՝ 29032018-01-0079): Դատարանը, սակայն, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով մերժել է հայցադիմումի ընդունումը՝ այն հիմնավորմամբ, որ Տիգրան Աճեմյանը չի վերացրել հայցադիմումի այնպիսի սխալները, որոնց չվերացնելն արգելք է գործի քննության համար, այն է՝ քաղաք Երևան, Նուբարաշեն Ե-2 թաղամաս 5 հասցեով Կարեն Աբրահամյանի անվամբ կատարված պետական գրանցումը (սեփականության վկայական՝ 29032018-01-0079) պահանջել է անվավեր ճանաչել վիճարկման հայցի շրջանակներում, այնինչ տվյալ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցրել է, և անհրաժեշտ է տվյալ պարագայում դատական պաշտպանությունն իրականացնել ճանաչման հայցի շրջանակներում:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը նախ արձանագրում է, որ Դատարանի կողմից մինևնույն հայցադիմումը վերադարձվել է երկու անգամ: Ընդ որում, հայցվորը, ընդունելով 23.08.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ կատարված մատնանշումը, ներկայացրել է վիճարկման հայց: Մինչդեռ, 27.09.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ Դատարանը կրկին վերադարձրել է հայցադիմումը՝ առաջարկված ճանաչման և վիճարկման հայցատեսակների միջև ընտրությունը թողնելով հայցվորին և պայմանավորելով վիճարկվող իրավունքի պետական գրանցման (վարչական ակտի) իրավաբանական ուժ ունենալու կամ չունենալու հանգամանքով՝ նշված հանգամանքի գնահատականը թողնելով հայցվորին: Դատարանը վիճարկվող որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի

հիմքով՝ հայցվորի կողմից Դատարանի 27.09.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ կատարած մատնանշումը չընդունելու պատճառաբանությամբ: Այլ կերպ՝ Դատարանը գործի քննության համար արգելք է դիտարկել 27.09.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ կատարված մատնանշմանը համապատասխան ճիշտ հայցատեսակ չներկայացնելը:

Վճռաբեկ դատարանը Դատարանի 31.10.2022 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշման ուսումնասիրության արդյունքում նախ և առաջ արձանագրում է, որ Դատարանի դիրքորոշումն առ այն, որ մատնանշմանը համապատասխան հայցատեսակը չշտկելը արգելք է գործի քննության համար, հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԴ/4606/05/22 որոշմամբ արտահայտված վերը նշված իրավական դիրքորոշումներին:

Ավելին, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նկատել, որ 27.09.2022 թվականի որոշմամբ Դատարանի կողմից կոնկրետ հայցատեսակ չի էլ առաջարկվել: Հայցադիմումին կից վիճարկվող պետական գրանցման վերաբերյալ ապացույցի բացակայության պայմաններում Դատարանը, հնարավորություն չունենալով գնահատել այդ գրանցման՝ որպես վարչական ակտի, իրավաբանական ուժ ունենալու (չունենալու) հանգամանքը, կոնկրետ հայցատեսակ չի մատնանշել: Դատարանն առաջարկել է ճիշտ հայցատեսակի այլընտրանքային տարբերակներ (վիճարկման կամ ճանաչման)՝ պայմանավորված տվյալ վարչական ակտի իրավաբանական ուժը կորցրած լինելու (չլինելու) հանգամանքով: Ընդ որում՝ վիճարկվող վարչական ակտի իրավաբանական ուժ ունենալու (չունենալու) հանգամանքի գնահատումը և ըստ այդմ՝ առաջարկված հայցատեսակների միջև ընտրությունը Դատարանը թողել է հայցվորին:

Մինչդեռ, դատական ակտին ներկայացվող որոշակիության պահանջին համապատասխան՝ Դատարանը պարտավոր էր կատարել կոնկրետ մեկ ճիշտ հայցատեսակի մատնանշում, ինչը հիմնված կլիներ բավարար ապացույցների, այդ թվում՝ վիճարկվող իրավունքի պետական գրանցման փաստի վերաբերյալ ապացույցի հետազոտման արդյունքում տվյալ գրանցման՝ որպես վարչական ակտի իրավաբանական ուժ ունենալու (չունենալու) հանգամանքի Դատարանի կողմից տրված հիմնավոր գնահատականի վրա:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խնդրո առարկա իրավիճակում նույնիսկ բացակայում է հայցվորի կողմից Դատարանի ճիշտ մատնանշումը չընդունելու փաստը, քանզի Դատարանի 27.09.2022 թվականին կատարված մատնանշումը որոշակի չէ, կատարվել է երկու այլընտրանքային հայցատեսակների մատնանշում, որպիսի պայմաններում հայցվորը հնարավորություն չի ունեցել իր հետագա վարքագիծը համապատասխանեցնել հայցադիմումը վերադարձնելու որոշման պահանջներին: Ընդ որում, հայցվորը կրկին ներկայացրել է երկու այլընտրանքային հայցատեսակներից մեկը, ինչը հնարավոր է՝ արդյունք է հայցվորի կողմից վիճարկվող վարչական ակտի իրավաբանական ուժ ունենալուն (չունենալուն) տրված գնահատականին: Դատարանը հայցվորին էր թողել նշված հանգամանքի գնահատումը, հետևաբար հայցվորը կարող էր ընտրություն կատարել երկու հայցատեսակների միջև և ընտրել վիճարկման հայցը՝ հիմք ընդունելով իր սուբյեկտիվ գնահատականն առ այն, որ վիճարկվող վարչական ակտն իրավաբանական ուժը չի կորցրել:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ խնդրո առարկա իրավիճակն արդյունք է նրա, որ Դատարանը 23.08.2022 թվականի և 27.09.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումներով հայցատեսակի

մատնանշումները կատարել է՝ հայցադիմումի ընդունելիության փուլում իր տրամադրության տակ չունենալով ճիշտ հայցատեսակը մատնանշելու պարտականության պատշաճ կատարման համար անհրաժեշտ բավարար իրավական և փաստական հիմքեր: Մասնավորապես, Դատարանը 23.08.2022 թվականի և 27.09.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշումներով մատնանշումը կատարել է՝ իր տրամադրության տակ չունենալով վիճարկվող իրավունքի պետական գրանցման փաստի վերաբերյալ որևէ ապացույց: Մինչդեռ, օբյեկտիվորեն հնարավոր չէ պատշաճ կերպով կատարել ճիշտ հայցատեսակը մատնանշելու պարտականությունը, քանի դեռ հստակ չէ, թե կոնկրետ ինչ վարչական ակտ է (տվյալ դեպքում՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը) վիճարկվում, հայցադիմումին կից ներկայացված չէ վիճարկվող ակտը: Սույն դեպքում, մատնանշման պարտականությունը կարող էր պատշաճ կատարվել միայն այն պայմաններում, երբ հայցվորի կողմից Դատարանի պահանջով ներկայացվեր վիճարկվող իրավունքի պետական գրանցման փաստի վերաբերյալ ապացույցը և դրա հետագոտման արդյունքում Դատարանը գնահատական տար տվյալ վարչական ակտի իրավաբանական ուժ ունենալու (չունենալու) հանգամանքին: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Դատարանը ճիշտ հայցատեսակ մատնանշելու պարտականությունը պատշաճ կերպով կարող էր կատարել առնվազն գործը դատաքննության նախապատրաստելու փուլում՝ պարզելով ու գնահատելով տվյալ պարտականության կատարման համար անհրաժեշտ իրավական և փաստական հիմքերը:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Դատարանի 27.09.2022 թվականի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ նշված սխալը Տիգրան Աճեմյանի կողմից չշտկելն արգելք չէր գործի քննության համար, և սույն գործով 31.10.2022 թվականին կայացնելով «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշում՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով, Դատարանը սահմանափակել է Տիգրան Աճեմյանի դատարանի մատչելիության իրավունքը: Դատարանի նման դիրքորոշումը հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի հետևողականորեն ձևավորված նախադեպային պրակտիկային, ինչն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 163-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.01.2023 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել ՀՀ վարչական դատարանի 31.10.2022 թվականի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ ԵՎ  
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ**

**8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում	Վարչական գործ թիվ <b>ՎԴ/7404/05/21 2022թ.</b>
Վարչական գործ թիվ	ՎԴ/7404/05/21
Նախագահող դատավոր	Կ. Բաղդասարյան

**Ո Ր Ո Շ ՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

<i>նախագահող</i>	Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ
<i>զեկուցող</i>	Լ. ՀԱԿՈՒՅԱՆ
	Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
	Ք. ՄԿՈՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 4-ին գրավոր ընթացակարգով քննելով ըստ հայցի Տիգրան Խաչատրյանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտեի) Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 13.01.2020 թվականի «Չկատարված հարկային պարտավորությունները բռնագանձելու մասին» թիվ 1-Ա որոշումը, Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 16.04.2021 թվականի թիվ 26/5 որոշումը վերացնելու պահանջի մասին, վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.02.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշման դեմ Տիգրան Խաչատրյանի ներկայացրած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Տիգրան Խաչատրյանը պահանջել է վերացնել Կոմիտեի իրավաբանական վարչության պետի 13.01.2020 թվականի «Չկատարված հարկային պարտավորությունները բռնագանձելու մասին» թիվ 1-Ա որոշումը, Կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 16.04.2021 թվականի թիվ 26/5 որոշումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր Գ. Առաքելյան) (այսուհետ՝ Դատարան) 14.12.2021 թվականի «Բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու

վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ Տիգրան Խաչատրյանի ներկայացրած միջնորդությունը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 25.02.2022 թվականի որոշմամբ Տիգրան Խաչատրյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը վերադարձվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Տիգրան Խաչատրյանը (ներկայացուցիչ՝ Տիգրան Խուրշուդյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ հոդվածները, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 131-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 127-րդ հոդվածի 11-րդ մասը, սխալ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասը:*

*Բողոքաբերը նշված հիմքի առկայությունը պարճատարանել է հետևյալ հիմնավորումներով.*

Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի հիմնավորել, թե ինչու է եկել այն եզրահանգման, որ Դատարանի 14.12.2021 թվականի որոշման դեմ վերաքննիչ բողոքը ներկայացվել է սահմանված ժամկետի խախտմամբ, այսինքն՝ Վերաքննիչ դատարանի որոշումը չի պարունակում հիմնավորում սահմանված ժամկետի խախտմամբ վերաքննիչ բողոքը ներկայացված լինելու վերաբերյալ:

Ավելին, Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի փորձել պարզել, թե երբ է Դատարանի 14.12.2021 թվականի որոշումը մտել օրինական ուժի մեջ, այն դեպքում, երբ առնվազն նշված հանգամանքն էական նշանակություն ունի նշված հարցի լուծման համար:

Դատարանի 14.12.2021 թվականի որոշումը 05.01.2022 թվականին ստանալու պայմաններում բողոքարկման հնգօրյա ժամկետը սկսում է հոսել 07.01.2022 թվականից, քանի որ 06.01.2022 թվականը, համաձայն «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի, հանդիսացել է ոչ աշխատանքային օր (Սուրբ Ծնունդ և Հայտնություն): Նման պայմաններում Դատարանի 14.12.2021 թվականի որոշման դեմ վերաքննիչ բողոք կարող էր ներկայացվել մինչև 13.01.2022 թվականը ներառյալ: Վերաքննիչ բողոքը ներկայացվել է 12.01.2022 թվականին, ուստի Վերաքննիչ դատարանի որոշումը հիմնավորված և պատճառաբանված չէ և հակասում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասին, 131-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին և 127-րդ հոդվածի 11-րդ մասին, այն հիմնավորմամբ, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է սահմանված ժամկետում:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 25.02.2022 թվականի որոշումը:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝

նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 131-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 127-րդ հոդվածի 11-րդ մասի խախտում, ինչը հանգեցրել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտման, ինչի հետևանքով խաթարվել է արդարադատության բուն էությունը:

*Սույն գործով վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման օրենքով սահմանված ժամկետի հաշվարկման առանձնահատկություններին:*

Վճռաբեկ դատարանը նշված խնդիրը հարկ է համարում դիտարկել ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված՝ մարդու արդարադատական իրավունքների իրացման երաշխիքների ապահովման համար էական նշանակություն ունեցող՝ ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ Եվրոպական դատարան) հետևյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո.

ՀՀ սահմանադրական դատարանն իր 12.07.2016 թվականի թիվ ՄԴՌ-1293 որոշմամբ առանձնացրել է դատարանի մատչելիության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովող հետևյալ չափանիշները.

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,
- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,
- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը,
- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով, իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատարանի մատչելիության իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասն է: Այնուամենայնիվ, այդ իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ: Այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ այն չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն



էությունը: Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն իրավաչափ նպատակ չհետապնդի, և եթե չլինի ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև համաչափության առումով (*յուն'ս, Ashingdane v. The United Kingdom, թիվ 8225/78 գանգադրով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57*):

Ինչ վերաբերում է դատարանի մատչելիության իրավունքի իրացմանը վերաբնիչ ու վճռաբեկ առյաններում և դատական ակտերի բողոքարկման ժամկետային սահմանափակումներին, Եվրոպական դատարանը բազմիցս իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ Կոնվենցիան մասնակից պետություններին չի պարտադրում ստեղծել վերաբնիչ կամ վճռաբեկ դատարաններ: Այնուամենայնիվ, եթե նման դատարաններ գոյություն ունեն, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքները պետք է կիրառվեն նաև այս առյաններում՝ մասնավորապես, այն առումով, որ նշված հոդվածը հայցվորների համար երաշխավորում է դատարանի մատչելիության արդյունավետ իրավունք (*յուն'ս, Zubac v. Croatia, թիվ 40160/12 գանգադրով Եվրոպական դատարանի մեծ պալատի 05.04.2018 թվականի վճիռը, կետ 80*):

Դատարանի մատչելիության, մասնավորապես, ՀՀ վերաբնիչ վարչական դատարանի մատչելիության իրավունքի իրավաչափ սահմանափակումներն օրենսդիրը սահմանել է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում վերաբնիչ բողոք ներկայացնելու համար որոշակի իրավական պահանջներ ու պայմաններ ամրագրելու միջոցով, որոնք վերաբերում են ինչպես վերաբնիչ բողոքի ներկայացման կարգին ու ժամկետներին, այնպես էլ ձևին և բովանդակությանը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը սահմանում է նաև կոնկրետ կառուցակարգ, որի շրջանակներում ՀՀ վերաբնիչ վարչական դատարանն իրավասու է գնահատել վերաբնիչ բողոքի ընդունելիությանն առնչվող պարտադիր պահանջների ու պայմանների պահպանվածությունը: Միաժամանակ սահմանված են այդ պահանջներն ու պայմանները չպահպանելու իրավական հետևանքները, այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է վերաբնիչ բողոքը վերադարձնելու, իսկ նույն օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասը՝ վերաբնիչ բողոքի ընդունումը մերժելու հիմքերը:

Ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ վերաբնիչ բողոքը ենթակա է վերադարձման, եթե վերաբնիչ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո և միջնորդություն չի պարունակում բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը ներկայացնելու իրավական հնարավորությունն ու հիմքերն ամրագրված են նույն օրենսգրքի 54-րդ հոդվածում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածը տարբերակում է գործն ըստ էության լուծող դատական ակտի և միջանկյալ դատական ակտի դեմ վերաբնիչ բողոք բերելու ժամկետները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վերաբնիչ բողոք կարող է բերվել օրենքով նախատեսված դեպքերում՝ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը: Նույն օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց 5 օր հետո:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասն սպառիչ կերպով սահմանում է ՀՀ վարչական դատարանի՝ բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շրջանակը: Նշված միջանկյալ դատական ակտերը ներառում են նաև բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին ՀՀ վարչական դատարանի որոշումները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասի, 132-րդ հոդվածի 2-րդ մասի և 131-րդ հոդվածի 1-ին մասի համադրված վերլուծությունից բխում է, որ օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ՀՀ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել բողոքարկվող միջանկյալ դատական ակտն **ստանալուց** հետո հնգօրյա ժամկետում: Նշված ժամկետի ավարտից հետո վերաքննիչ բողոքը ներկայացնելու դեպքում բողոք բերող անձից պահանջվում է ներկայացնել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն: ՀՀ վարչական դատարանի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հնգօրյա ժամկետի հաշվարկի ելակետը վերաքննիչ բողոք բերող անձի կողմից բողոքարկվող միջանկյալ դատական ակտն ստանալու պահն է:

Միաժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է նույն օրենսգրքով սահմանված դատավարական ժամկետների հաշվարկման հատուկ կանոններ: Այն է՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, շաբաթներով և օրերով (այդ թվում՝ օրացուցային): Օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը: Օրացուցային օրերով հաշվարկվող ժամկետներում ներառվում են հանգստյան և օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով, շաբաթներով կամ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, շաբաթվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է այդ ժամկետի սկիզբը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրերով հաշվարկվող դատավարական ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ դատավարական ժամկետի վերջին օրն օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտման օրը դրան հաջորդող աշխատանքային օրն է, բացառությամբ օրացուցային օրերով հաշվարկվող ժամկետների: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե հայցադիմումը, բողոքը, այլ փաստաթղթերը կամ դրամական միջոցները հանձնվել են փոստին, փոխանցվել կամ ներկայացվել են համապատասխան մարմնին կամ դրանք ընդունելու լիազորություն ունեցող անձին մինչև դատավարական ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը, ապա ժամկետը չի համարվում բաց թողնված, բացառությամբ օրացուցային օրերով հաշվարկվող ժամկետների (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 6-րդ մասի վկայակոչված իրավակարգավորումներին, գտել է, որ մինչև վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված վերաքննիչ բողոքը պետք է համարվի վերաքննիչ դատարանին հանձնված այդ ժամկետի պահպանմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ

դատարանում տվյալ բողոքը փաստացի երբ է ստացվել: Տվյալ դեպքում վերաքննիչ բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը չի կարող համարվել բաց թողնված՝ դրանից բխող իրավաբանական հետևանքներով (*Կրե՛ս, Աշոտ Արզարյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության ՎԳ/4453/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.01.2017 թվականի որոշումը*):

Դատավարական ժամկետների հաշվարկման վերը նշված կանոններից բխում է, որ օրերով հաշվարկվող ժամկետի ընթացքն սկսվում է այն ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է այդ ժամկետի սկիզբը, և ավարտվում այդ ժամկետի վերջին օրը՝ բացառությամբ այն դեպքի, երբ տվյալ ժամկետի ավարտման օրն օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օր է: Այն դեպքերում, երբ դատավարական ժամկետի վերջին օրն օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտման օրը դրան հաջորդող աշխատանքային օրն է: Ընդ որում՝ օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում հանգստյան օրերը՝ շաբաթն ու կիրակին (ՀՀ աշխատանքային օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մաս) և օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

«Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքը սահմանում է տոների և հիշատակի օրերը՝ միաժամանակ ամրագրելով, թե դրանցից որն է ոչ աշխատանքային օր: «Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված ոչ բոլոր տոներն ու հիշատակի օրերն են համարվում ոչ աշխատանքային օրեր, այլ միայն այն տոներն ու հիշատակի օրերը, որոնք օրենսդիրը հիշյալ օրենքով հստակ նախատեսել է որպես ոչ աշխատանքային օր:

Այսպիսով, վերաքննիչ բողոք բերող անձից, ի թիվս այլնի, պահանջվում է, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, վերաքննիչ բողոքը ներկայացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան կամ հանձնել փոստին բողոքարկվող միջանկյալ դատական ակտն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում, որպիսի ժամկետի մեջ չեն ներառվում հանգստյան և «Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերը. այդ ժամկետի ընթացքն սկսվում է դատական ակտն ստանալու հաջորդ օրվանից ու ավարտվում այդ ժամկետի վերջին օրը՝ բացառությամբ այն դեպքի, երբ տվյալ ժամկետի ավարտման օրն օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օր է: Նշված դեպքում վերաքննիչ բողոք բերող անձը վերաքննիչ բողոքն իրավասու է ՀՀ վերաքննիչ վարչական դատարան ներկայացնել կամ փոստին հանձնել ժամկետի վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Վերը նշված ժամկետի ավարտից հետո վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում վերաքննիչ բողոք բերող անձից պահանջվում է ներկայացնել վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն:

Վերաքննիչ բողոքը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով վերադարձնելու համար անհրաժեշտ է երկու պայմանի միաժամանակյա առկայություն, այն է՝ բաց է թողնված ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով՝ համակցված 127-րդ հոդվածի 11-րդ մասի հետ, սահմանված հնգօրյա ժամկետը, և ներկայացված չէ նշված ժամկետը վերականգնելու միջնորդություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի ընդունելիության փուլում ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, ստուգելով վերաքննիչ բողոք

ներկայացնելու համար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների ու պայմանների բավարարված լինելու հանգամանքը, ի թիվս այլնի, պետք է պարզի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով՝ համակցված 127-րդ հոդվածի 11-րդ մասի հետ, սահմանված ժամկետի պահպանված լինելու հանգամանքը: Նշված հանգամանքը պարզելու համար ՀՀ վերաքննիչ վարչական դատարանից պահանջվում է գործի նյութերի բազմակողմանի, լրիվ ուսումնասիրմամբ պարզել բողոքարկվող միջանկյալ դատական ակտը բողոք բերող անձի կողմից ստանալու օրը, ինչը ելակետ է հանդիսանում խնդրո առարկա հնգօրյա ժամկետի հաշվարկման համար, հաջորդիվ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ և 52-րդ հոդվածներով սահմանված՝ օրենքով հաշվարկվող ժամկետների հաշվարկման կանոններին համապատասխան որոշել հնգօրյա ժամկետի վերջին օրը՝ այդ ժամկետում չներառելով հանգստյան օրերը և «Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված ոչ աշխատանքային օրերը:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումները, արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելն այն պայմաններում, երբ վերաքննիչ բողոքը ներկայացված է օրենքով սահմանված հնգօրյա ժամկետում, հանդիսանում է անհամաչափ միջամտություն բողոք բերող անձի՝ դատարանի մատչելիության իրավունքին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Տիգրան Խաչատրյանը ՀՀ վարչական դատարան է ներկայացրել վիճարկման հայց՝ միաժամանակ միջնորդելով վերականգնել վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված՝ բաց թողնված դատավարական ժամկետը (**հավելված 2, գ.թ. 78-80**): Դատարանի 14.12.2021 թվականի որոշման համաձայն՝ Տիգրան Խաչատրյանի անունից ներկայացուցիչ Տիգրան Խուրշուդյանի կողմից 07.12.2021 թվականին ներկայացված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է (**հավելված 2, գ.թ. 81-87**): Դատարանի 14.12.2021 թվականի որոշումն ուղարկվել է հայցվոր Տիգրան Խաչատրյանին, սակայն հետ է վերադարձվել (**հավելված 2, գ.թ. 89**): Այնուհետև նշված որոշումն ուղարկվել է հայցվոր Տիգրան Խաչատրյանի ներկայացուցիչ Տիգրան Խուրշուդյանին, վերջինս նշված որոշումն ստացել է 05.01.2022 թվականին (հիմք՝ փոստային հետադարձ ծանուցագիր, **հավելված 2-րդ, գ.թ. 94**): Դատարանի 14.12.2021 թվականի որոշման դեմ Տիգրան Խաչատրյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել 12.01.2022 թվականին (հիմք՝ փոստային ծրար, **հավելված 2-րդ, գ.թ. 112**):

Վերաքննիչ դատարանի 25.02.2022 թվականի որոշմամբ, ի թիվս այլ հիմքերի, Տիգրան Խաչատրյանի ներկայացրած վերաքննիչ բողոքը վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ՝ «(...) *Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ քննարկվող դեպքում, Բողոքաբերի կողմից չի պահպանվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ և 134-րդ հոդվածների վերը վկայակոչված դրույթների պահանջները, մասնավորապես, բողոքը չի ներկայացվել մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը և չի ներկայացրել համապատասխան ժամկետի բացթողումը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդություն (...)» (**հավելված 2, գ.թ. 114-116**):*

Վերոգրյալ իրավական վերլուծությունները կիրառելով սույն գործի փաստերի նկատմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորի ներկայացուցչի կողմից՝ Վարչական դատարանի բողոքարկվող դատական

ակտը 05.01.2022 թվականին ստանալու պայմաններում այդ ակտը վերաքննության կարգով բողոքարկելու հնգօրյա դատավարական ժամկետի սկիզբը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան, 06.01.2022 թվականն էր: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ըստ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությանը «Տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ 06.01.2022 թվականը (Սուրբ Ծնունդ և Հայտնություն) եղել է ոչ աշխատանքային օր, իսկ 08.01.2022 թվականը և 09.01.2022 թվականը՝ հանգստյան օրեր:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ բողոքարկման հնգօրյա դատավարական ժամկետի մեջ սույն դեպքում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը՝ 06.01.2022 թվականը, 08.01.2022 թվականը և 09.01.2022 թվականը, որպիսի պայմաններում վերաքննիչ բողոք ներկայացնելու հնգօրյա ժամկետի վերջին օրը 13.01.2022 թվականն էր, և հայցվորը կարող էր բողոքարկման իր իրավունքն իրացնել մինչև 13.01.2022 թվականը ներառյալ:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ 12.01.2022 թվականին վերաքննիչ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված հնգօրյա ժամկետում, և ըստ այդմ՝ առկա չէր վերաքննիչ բողոքը վերադարձնելով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով վերադարձնելով օրենքով սահմանված հնգօրյա ժամկետում ներկայացված վերաքննիչ բողոքը, թույլ է տվել արդարադատության բուն էությունը խաթարող՝ դատավարական նորմի խախտում, ուստի այդ մասով բողոքարկվող դատական ակտը ենթակա է վերացման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վերաքննիչ դատարանի 25.02.2022 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձվել է նաև այլ հիմքով, այն է՝ «բողոքին կից չեն ներկայացվել նաև բողոքի պատճենները դատական ակտ կայացրած վարչական դատարանին և դատավարության մասնակիցներին ուղարկելու մասին ապացույցները», և քննության առարկա վճռաբեկ բողոքի հիմքերը վերաբերում են միայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով վերաքննիչ բողոքը վերադարձնելուն՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, իսկ Վերաքննիչ դատարանի 25.02.2022 թվականի որոշումը ենթակա է վերացման՝ միայն բողոքարկված մասով:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը մասով վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.02.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը՝ վերաքննիչ բողոքը սահմանված ժամկետը լրանալուց հետո բերելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացված չլինելու մասով:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 25.02.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

# 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԴ/10813/05/19**  
**2022թ.**

Վարչական գործ թիվ **ՎԴ/10813/05/19**

Նախագահող դատավոր՝ **Ք. Մկոյան**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*Նախագահող* **Ռ. ՀԱԿՈՒՅԱՆ**  
*գեկուցող* **Հ. ԲԵԴԵՎՅԱՆ**  
**Լ. ՀԱԿՈՒՅԱՆ**  
**Ք. ՄԿՈՅԱՆ**

2022 թվականի դեկտեմբերի 16-ին

գրավոր ընթացակարգով քննելով Էմիլ Վարդանյանի և Վարուժան Վարդա-  
նյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.04.2021 թվա-  
կանի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշման դեմ, վարչական  
գործով ըստ հայցի Էմիլ Վարդանյանի և Վարուժան Վարդանյանի ընդդեմ  
ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության,  
երրորդ անձինք՝ Վիգեն Բադալյան և Վահե Բադալյան՝ ՀՀ ԱՆ իրավաբանա-  
կան անձանց պետական ռեզիստրի գործակալության կողմից «ՖԱՍՏ ԿՐԵԴԻՏ»  
ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) լուծարման գործընթացում գտնվելու  
մասին պետական գրանցումը և Ընկերության լուծարման 20.02.2015 թվականի  
պետական գրանցումը վերացնելու պահանջների մասին,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Մինչ սույն գործի դատավարական նախապատմությանն անդրադառնալը՝  
Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Դատավորների վարքագծի բանցալորյան սկզբունքները (ընդունված  
26.11.2002 թվականին ՄԱԿ-ի շրջանակներում), ի թիվս այլնի, սահմանելով  
դատավորի ինքնաբացարկի հիմքերը (կետ 2.5), միաժամանակ թույլ են տալիս  
այդ հիմքերի առկայության պայմաններում ինքնաբացարկ չհայտնել այն  
իրավիճակներում, երբ «որևէ այլ դատարան չի կարող քննել տվյալ գործը  
կամ պայմանավորված գործի հրատապությանը՝ քննության ձգձգումը կարող է  
հանգեցնել լուրջ դատական սխալի»: Այսինքն՝ նշված սկզբունքներն ամրագրում

են անհրաժեշտության կանոնը (դոկտրինը), որի համաձայն՝ ինքնաբացարկի հիմքերի առկայության պայմաններում դատավորը կարող է ինքնաբացարկ չհայտնել, եթե ինքնաբացարկը կարող է հանգեցնել արդարադատության մերժման:

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) ևս նմանատիպ իրավիճակներում արդարադատության գործառույթի իրականացումն ապահովելու միջոց է դիտարկում Բանգալոյայան սկզբունքներում ամրագրված անհրաժեշտության կանոնի (դոկտրինի) կիրառումը (տե՛ս, 12.12.2016 թվականին ընդունված CDL-AD(2016)036 փաստաթուղթը): Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ խնդրո առարկա իրավիճակում պետք է գերակայի արդյունավետ արդարադատություն ապահովելու շահը:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան)՝ այն փաստը, որ գործը քննող դատավորներից ոմանք արդեն իսկ ունեցել են որոշակի դիրքորոշում տվյալ գործի վերաբերյալ, ինքնին բավարար հիմք չէ անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության իրավունքի խախտում արձանագրելու համար (տե՛ս, մասնավորապես, Fazli Aslaner v. Turkey գործով Եվրոպական դատարանի վճիռը, կետ 36):

Հիմք ընդունելով վերոհիշյալ անհրաժեշտության կանոնը (դոկտրինը), ինչպես նաև Եվրոպական դատարանի և Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշումները՝ դատավորներ Լ. Հակոբյանը և Ք. Մկոյանը, չնայած ստորադաս դատարանում գործի քննությանը մասնակցությանը, սույն գործով ինքնաբացարկ չեն հայտնել՝ հաշվի առնելով, որ ինքնաբացարկի դեպքում անհնարին կդառնար վճռաբեկ բողոքի քննությունը, ինչը կհանգեցնեք արդարադատության մերժման:

Դիմելով դատարան՝ Էմիլ Վարդանյանը և Վարուժան Վարդանյանը պահանջել են վերացնել ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին պետական գրանցումը և Ընկերության լուծարման 20.02.2015 թվականի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Լ. Հակոբյան) (այսուհետ՝ Դատարան) 24.12.2019 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է, հայցադիմումն ընդունվել է վարույթ, և նշանակվել է նախնական դատական նիստ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.04.2021 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մասով մերժելու, մասով՝ վարույթ ընդունելու մասին» որոշմամբ Վահե Բաղալյանի ներկայացրած միջնորդությունը՝ դատավարական ժամկետի բաց թողումը հարգելի համարելու և վերականգնելու մասին միջնորդությունը թողնվել է առանց քննարկման, իսկ վերաքննիչ բողոքը՝ «Բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու» մասով ընդունվել է վարույթ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 26.04.2021 թվականի որոշմամբ Դատարանի 24.12.2019 թվականի «Բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու, հայցադիմումը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին» որոշման դեմ Վահե Բաղալյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու մասով Դատարանի 24.12.2019 թվականի որոշումը վերացվել է:



Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Էմիլ Վարդանյանը և Վարուժան Վարդանյանը (ներկայացուցիչ՝ Վահե Սիմոնյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

### **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 78-րդ, 80-րդ, 135-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 59-րդ, 60-րդ և 71-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձինք նշված պնդումը պարզապես անհիմն են հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ երրորդ անձ Վահե Բաղայանը Դատարանի 09.09.2020 թվականի «Երրորդ անձ ներգրավելու մասին» որոշումն ստացել է 24.09.2020 թվականին: Ավելին երրորդ անձ Վահե Բաղայանի ներկայացուցիչը 08.01.2021 թվականին կայացած դատական նիստից առաջ ներկայացրել էր գործի նյութերին ծանոթանալու մասին դիմում: Հետևաբար՝ երրորդ անձ Վահե Բաղայանի միջնորդությունը միջանկյալ դատական ակտի դեմ բողոք բերելու դատավարական ժամկետը վերականգնելու մասին հիմնավոր չի եղել և ենթակա է եղել մերժման, իսկ բողոքը ենթակա չէր վարույթ ընդունման Վերաքննիչ դատարանի կողմից:

Վերաքննիչ դատարանի այն փաստարկը, որ հայցվորները դեռևս 26.09.2019 թվականից իրազեկված են եղել Ընկերության լուծարման մասին, հիմնավոր չէ, քանի որ վերջինիս լուծարման մասին ապացույցը ստացվել է միայն 18.10.2019 թվականին:

Վերագրյալի հիման վրա բողոք բերած անձինք պահանջել են վերացնել Վերաքննիչ դատարանի 26.04.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը:

### **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ սույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 78-րդ, 80-րդ, 135-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 59-րդ, 60-րդ և 71-րդ հոդվածների խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը, սակայն, հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի հետաձգված բողոքարկման և վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետի, ինչպես նաև վիճարկման հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված երկամսյա ժամկետի պահպանման հարցերին:*

3.1 ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995 թվականի «Քաղաքացիական և տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի գործադրման և գործունեության կատարելագործման մասին» թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի (a) կետով նախատեսված սկզբունքի համաձայն՝ պետք է առկա լինի վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) ցանկացած որոշման վերանայման հնարավորություն: Նշված հանձնարարականի 1-ին կետի a) ենթակետը սահմանում է. «Սկզբունքորեն պետք է գոյություն ունենա վերադաս դատարանի («երկրորդ ատյանի դատարան») կողմից ստորադաս դատարանի («առաջին ատյանի դատարան») կողմից կայացված ցանկացած որոշման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն»: Միաժամանակ նույն հանձնարարականի 3-րդ հոդվածում (կետ «d») ամրագրված է, որ պետությունները կարող են «... հետաձգել որոշակի միջանկյալ հարցերի բողոքարկման իրավունքի իրականացումը՝ մինչև հիմնական գործով գլխավոր բողոքի ներկայացումը»:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.11.2010 թվականի թիվ ՄԴՈ-922 որոշման շրջանակներում վկայակոչելով և զարգացնելով իր՝ 28.09.2010 թվականի թիվ ՄԴՈ-918 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ արձանագրել է, որ օրենսդիրը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանելով տվյալ միջանկյալ ակտի անմիջական բողոքարկման հնարավորություն՝ չի բացառում միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությունը գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման շրջանակներում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», և միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ հնարավոր միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է:

Այսպիսով Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ միջանկյալ դատական ակտերի՝ «հետաձգված բողոքարկում» իրականացնելու

կառուցակարգի նախատեսումը նպատակ է հետապնդում նաև դատական գործընթացի ձգձգումը կանխելու՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջնական դատական ակտի ելքը նույնպես կարող է դատավարության մասնակցի համար լինել անբարենպաստ, իսկ երկու դատական ակտերի միաժամանակյա բողոքարկումը կհանգեցնի դատավարական ողջամիտ ժամկետների պահպանմանը:

Անդրադառնալով ընդհանուր առմամբ բողոքարկման կառուցակարգի իրավական նշանակությանը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատական ակտի բողոքարկումը հնարավորինս նվազագույնի է հասցնում դատական սխալների առկայությունը և անձանց արդար դատաքննության իրավունքի իրացումը հասցնում է առավելագույնի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշումներում բազմիցս փաստել է, որ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքները, որոնց կարևոր բաղադրիչներից մեկը բողոքարկման իրավունքն է: Բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս որոշակի ընթացակարգի միջոցով գործնականում ապահովելու դատական սխալների բացահայտումը և ուղղումը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը (*տե՛ս, ի թիվս այլնի, «Տասթ Սիլայ» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ3/0347/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2015 թվականի որոշումը, Վարդան Արսահալյանն ընդդեմ «Արդշիրսանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԴ/17609/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 19.04.2019 թվականի որոշումը*):

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետի պահպանվածության հարցին, արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը միջանկյալ դատական ակտերի բողոքարկման համար նախատեսել է բողոքարկման կրճատ ժամկետ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց 5 օր հետո:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի հետևյալ միջանկյալ դատական ակտերը.

- 1) հայցադիմումի ընդունումը մերժելու մասին.
- 2) հայցադիմումը վերադարձնելու մասին.
- 3) հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին.
- 4) լրացուցիչ վճիռ կայացնելը մերժելու մասին.
- 5) վրիպակները, գրախալները կամ թվաբանական սխալներն ուղղելու կամ ուղղում կատարելը մերժելու, վճռի պարզաբանումը մերժելու մասին.
- 6) բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու կամ դրա վերականգնումը մերժելու մասին.
- 7) դատավարական ժամկետները երկարաձգելու կամ դրա երկարաձգումը մերժելու մասին

8) կողմին իրավահաջորդով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու մասին, ինչպես նաև երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու դիմումը մերժելու կամ դատավարության մասնակիցների կազմից երրորդ անձին հանելու մասին.

9) սույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված դատական ակտերը.

10) գործի վարույթը կասեցնելու մասին, բացառությամբ սույն օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքի.

11) ինքնաբացարկի մասին դատական ակտերը.

12) այլ որոշումներ՝ օրենքով սահմանված դեպքերում:

Նույն օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել օրենքով նախատեսված դեպքերում՝ մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի բողոքարկման ժամկետը կապում է տվյալ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետի հետ, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու՝ դատական ակտն ստանալու պահից հաշվարկվող հնգօրյա ժամկետը հանդիսանում է դատական ակտի բողոքարկման առավելագույն ժամկետ:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) պրակտիկայի համաձայն՝ դատական ակտի բողոքարկման (հայց ներկայացնելու) իրավունքը պետք է իրականացվի այն պահից, երբ համապատասխան անձը ստացել է դատարանի որոշմանը ծանոթանալու իրական հնարավորություն (*տե՛ս, Cherednichenko and Others v. Russia 35082/13 գործով Եվրոպական դատարանի 07.11.2017 թվականի վճիռը, 66-րդ կետը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտը ստանալու փաստը հավաստում է, որ անձը լիարժեք հնարավորություն ունի ծանոթանալու դատական ակտի բովանդակությանը, և այդ պահից սկսած էլ հաշվարկվում է բողոքարկման իրավունքի իրացման ժամկետը:

**Վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն գործի փաստերի համաձայն՝ Դատարանի 24.12.2019 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է, հայցադիմումն ընդունվել է վարույթ, և նշանակվել է նախնական դատական նիստ (**հավելված 1-ին, գ.թ. 25-27**):

Վերոգրյալ որոշման դեմ երրորդ անձ Վահե Բաղայանը 16.03.2021 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք, ինչպես նաև միջնորդություն՝ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախատեսված դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու և վերականգնելու մասին (**հավելված 3-րդ, գ.թ. 3-7**):

Վերաքննիչ դատարանը 01.04.2021 թվականի «Վերաքննիչ բողոքի ընդունումը մատով մերժելու, մատով վարույթ ընդունելու մասին» որոշմամբ բողոքաբերի կողմից ներկայացված դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու մասին միջնորդությունը թողել է առանց քննարկման՝ այն հիմնավորմամբ, որ բողոքաբերը բողոքարկվող

որոշումն ստացել է **12.03.2021 թվականին**, իսկ վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանն ուղարկելու նպատակով համապատասխան փոստային բաժանմունք է հանձնել **16.03.2021 թվականին**՝ միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու հնգօրյա ժամկետի պահպանմամբ, որպիսի պայմաններում բացակայել է միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունը:

Անդրադառնալով վերաքննիչ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետի պահանվածության հարցին՝ վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ

- ✓ Դատարանը 09.09.2020 թվականին կայացրել է «Դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու մասին» որոշում, որով դատավարության մեջ որպես երրորդ անձինք են ներգրավվել Վիգեն Բադայանը և Վահե Բադայանը (**հավելված 1, 91-92**):
- ✓ Գործի հավելվածում առկա դատական ծանուցագրի համաձայն՝ Դատարանի՝ 24.12.2019 թվականի «Բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու, հայցադիմումը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին» որոշումը Վահե Բադայանի ներկայացուցիչն առձեռն ստացել է 12.03.2021 թվականին (**հավելված 2, գ.թ. 115**):
- ✓ Վահե Բադայանը վերաքննիչ բողոք է ներկայացրել 16.03.2021 թվականին և ներկայացրել է միջնորդություն՝ դատավարական ժամկետի բաց թողումը հարգելի համարելու և վերականգնելու մասին:

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բողոքարկվող դատական ակտի բովանդակությանն անձը հասու է եղել միայն 12.03.2021 թվականին՝ դատական ակտը առձեռն ստանալու միջոցով: Նշված փաստն արձանագրելու կարևորությունը կայանում է նրանում, որ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման համար որոշիչ է այն պահը, թե երբ է անձը լիարժեք հնարավորություն ունեցել ծանոթանալու դատական ակտի բովանդակությանը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հիմնավոր բողոք ներկայացնելու համար անհրաժեշտ է լիովին ծանոթանալ դատական ակտի բովանդակությանը:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ բողոքը ներկայացվել է օրենքով սահմանված՝ որոշումը ստանալու պահից հնգօրյա ժամկետի պահպանմամբ, հետևաբար Վերաքննիչ դատարանն իրավացիորեն ներկայացված միջնորդությունը թողել է առանց քննարկման՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոք բերած անձինք Դատարանի 24.12.2019 թվականի «Բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու, հայցադիմումը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին» որոշումն ստացել են 12.03.2021 թվականին, այսինքն՝ նշված ժամանակահատվածից է սկսվում հոսել դատական ակտի բողոքարկման ժամկետը, իսկ սույն պարագայում վերաքննիչ բողոքը ներկայացվել է 16.03.2021 թվականին՝ որոշումն ստանալու պահից հնգօրյա ժամկետի պահպանմամբ:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նաև արձանագրել, որ օրենսդիրն ուղղակիորեն չի նախատեսում դատարանների պարտականությունը՝ անձին դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելուց հետո վերջինիս ուղարկելու նախքան այդ որոշման կայացումը դատավարական գործողությունների կատարման արդյունքում կայացված բոլոր որոշումները, սակայն նշված պարտականությունը բխում է օրենսդրական այն կարգավորումից, որ երրորդ անձինք օգտվում են կողմի բոլոր իրավունքներից և կրում են նրա

բոլոր պարտականությունները, բացառությամբ հայց (ներառյալ՝ հակընդդեմ հայց) ներկայացնելու, հայցի հիմքը և (կամ) առարկան փոխելու, հայցային պահանջների չափը ավելացնելու և (կամ) նվազեցնելու, հայցն ընդունելու կամ հայցից հրաժարվելու և դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու իրավունքներից, իսկ կողմերն ունեն իրավունք ստանալու դատավարական բոլոր փաստաթղթերը: Նշված իրավունքի իրացումը կհանգեցնի ոչ միայն երրորդ անձանց իրավունքների լիարժեք պաշտպանությանը, այլ նաև կբացառի դատական գործընթացների անհարկի ձգձգումը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև անձին դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելը կարող են կայացվել որոշումներ, որոնք վերջինս իրավունք ունի բողոքարկելու, իսկ դատարանների կողմից նշված դատական ակտերի և «Երրորդ անձ ներգրավելու մասին» որոշման միաժամանակ ծանուցումը և անձին իր իրավունքների մասին տեղեկացնելը հնարավորություն կտա վերջինիս դատական ակտերի հետ անհամաձայնության պարագայում առավել շուտ իրացնել բողոքարկման իրավունքը:

3.2 ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վիճարկման հայցով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել միջամտող վարչական ակտը, ներառյալ՝ զուգորդվող վարչական ակտի միջամտող դրույթները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարանի դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, ինաստա՞զրկել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն Եվրոպական դատարանն այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը:

Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դատարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդար, հրապարակային և արագ բնութագրիչները, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացներին ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում (*յրեւ, Kreuz v. Poland (28249/95) գործով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, 52-րդ կետ*): Մինչդեռ Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ գրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը (*յրեւ, Tolstoy Miloslavsky v. The United Kingdom (18139/91) գործով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, 59-րդ կետ*): Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև՝ համաչափության առումով (*յրեւ, Khalifaoui v. France (34791/97) գործով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, 36-րդ կետ*): Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը (*յրեւ, Dumitru Gheorghe v. Romania (33883/06) գործով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, 28-րդ կետ*):

Անդրադառնալով դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումներին՝ Եվրոպական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված այդպիսի սահմանափակումները հետապնդում են որոշակի կարևոր նպատակներ, մասնավորապես՝ իրավական որոշակիության երաշխավորումը, հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից: Ըստ Եվրոպական դատարանի՝ նմանատիպ հայցերի դեպքում դժվար կլինի կանխել անարդարությունը, որը կարող է առաջանալ, եթե դատարաններից պահանջվի քննել հեռավոր անցյալում տեղի ունեցած իրադարձություններ այնպիսի ապացույցների հիման վրա, որոնք կարող են լինել ոչ արժանահավատ և ոչ ամբողջական՝ բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով: Եվրոպական դատարանը գտել է, որ ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե

դատարանի մատչելիությունն ինչպես պետք է սահմանափակվի (*յրենս, Stubbings and others v. The United Kingdom (22083/93, 22095/93) գործով Եվրոպական դատարանի 22.10.1996 թվականի վճիռը, 51-րդ և 55-րդ կետեր*):

Այսպես. Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ դատավարական գործողություններ կատարելու համար սահմանված բաց թողնված ժամկետների վերականգնման իրավակարգավորումներին:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական գործողությունները կատարվում են սույն օրենսգրքով, այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետներում, իսկ դրանց սահմանված չլինելու դեպքում՝ դատարանի սահմանած ժամկետներում:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո դատավարության մասնակիցները կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումների ընդունումը մերժվում է սույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով, եթե բաց թողնված դատավարական ժամկետները վարչական դատարանի որոշմամբ չեն վերականգնվում: Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է, եթե վարչական դատարանը համարում է, որ անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնումը մերժելու մասին դատարանը կայացնում է որոշում:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ «...ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքը թողնելով դատարանների գնահատմանը: ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը: Օրինակ՝ երբ ֆիզիկական անձը գրկված է դատական պրոցեսին մասնակցելու կամ ներկայացուցչի միջոցով մասնակցությունն ապահովելու հնարավորությունից երկարատև հիվանդության կամ գործուղման մեջ գտնվելու պատճառով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, բաց թողնված ժամկետը հարգելի համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ դատարան դիմելու,



դատական պրոցեսին մասնակցելու, պահանջը և այն հիմնավորող ապացույցները ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով նշված ժամկետը չի բավականացրել համապատասխան դատավարական գործողությունները կատարելու համար» (յրեն, Հրաչյա Գրիգորյանն ընդդեմ Ռուբեն, Բարկեն, Աշոտ Հովհաննիսյանների, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԳ/1963/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 24.12.2014 թվականի որոշումը):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե հայց ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառ են հանդիսանում որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներ, ապա բողոք բերող անձը պարտավոր է ներկայացնել միջնորդություն՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ և ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված միջոցներ իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելու ուղղությամբ:

Միջնորդության քննարկման արդյունքում ներկայացված ապացույցները կամ կողմի ներկայացրած փաստարկները բավարար համարելու պարագայում դատարանները բավարարում են հայց ներկայացնելու համար սահմանված բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը:

#### ***Վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Դատարանը 24.12.2019 թվականի «Բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությունը բավարարելու, հայցադիմումը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին» որոշմամբ բավարարելով դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու վերաբերյալ հայցվորի միջնորդությունը՝ արձանագրել է հետևյալը. «...Հաշվի առնելով, որ անձի մոտ՝ իր իրավունքներին և օրինական շահերին առնչվող վարչական ակտի դեմ դատական պաշտպանության դիմելու անհրաժեշտությունն օբյեկտիվորեն ծագում է այն պահից, երբ իրազեկվել է իր իրավունքներին ենթադրաբար միջանրող վարչական ակտի գոյության մասին, և նկատի ունենալով, որ վիճարկվող վարչական ակտի/պետական գրանցման/ մասին իրազեկվելուց հետո /18.10.2019թ./ հայցվորները դատական պաշտպանության են դիմել երկամսյա ժամկետում՝ դատարանը, հավասարակշռելով դատարանի մատչելիության և իրավական որոշակիության շահերը, գրնում է, որ բաց թողնված ժամկետը ենթակա է վերականգնման, իսկ միջնորդությունը բավարարման»:

Վերաքննիչ դատարանը 26.04.2021 թվականի որոշմամբ բավարարել է Վահե Բաղալյանի բերած վերաքննիչ բողոքը՝ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու միջնորդությունը բավարարելու մասով Դատարանի 24.12.2019 թվականի որոշումը վերացրել է այն պատճառաբանությամբ, որ հայցադիմումին կից Դատարան ներկայացված բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությամբ չի հիմնավորվում համահայցվորներ Էմիլ Վարդանյանի և Վարուժան Վարդանյանի կողմից հայց ներկայացնելու դատավարական ժամկետը հարգելի պատճառով բաց թողնելը, և առկա չէ դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու անձի իրավունքը վերականգնելու որևէ հիմք:

Անդրադառնալով վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի պահպանվածության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

- ✓ սույն վարչական գործի նյութերում առկա է «Ֆաստ Կրեդիտ Կապիտալ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի 23.02.2021 թվականի գրությունը, ըստ որի՝ «Ի պատասխան Ձեր 16.02.2021 թվականի գրությանը՝ կից Ձեզ ենք ներկայացնում թիվ ԵՇԴ/4962/05/16 քաղաքացիական գործով Հայցվորներ Էմիլ և Վարուժան Վարդանյանների ներկայացուցիչ Վահե Միմոնյանի կողմից 12.09.2019 թվականի թիվ Ե-19/09/20-03 գրության պատշաճ վավերացված պատճենները: Մինչույն ժամանակ, կից Ձեզ ենք ներկայացնում փոստային առաքման հավաստագրի պատճենը, համաձայն որի Հայցվորների ներկայացուցիչ Վահե Միմոնյանը գրության պատասխանը ստացել է **26.09.2019 թվականին**»:
- ✓ համաձայն «Ֆաստ Կրեդիտ Կապիտալ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի տնօրենի 20.09.2019 թվականի թիվ Ե-19/09/20-03 գրության՝ «Հարգելի պարոն Միմոնյան, ի պատասխան Ձեր «Ֆաստ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին (այսուհետ նաև ընկերություն) 12.09.2019 թվականին հասցեագրված դիմումների՝ հայտնում ենք Ձեզ, որ թեև «Ֆաստ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն և «Ֆաստ Կրեդիտ» ՍՊԸ-ն հիմնադրվել են նույն հիմնադիրների կողմից, սակայն «**Ֆաստ Կրեդիտ**» ՍՊԸ-ի **լուծարումից հետո** «Ֆաստ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն չի հանդիսանում վերջինիս իրավահաջորդը: Միաժամանակ, հայտնում ենք որ կայքում նշված տեղեկատվությունը վերաբերում է բացառապես «Ֆաստ Կրեդիտ» ՍՊԸ-ի լուծարման պահին գործող վարկերին...»:
- ✓ «AG017587165AM փոստային ծառայության հավաստագրի համաձայն՝ «առաքանու հասցեատեր հանդես է եկել Վարուժան Բադալյանի ներկայացուցիչ Վահե Միմոնյանը», առաքանին ստացվել է **26.09.2019 թվականին**:
- ✓ վիճարկման հայցը ներկայացվել է **17.12.2019 թվականին**:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորների ներկայացուցիչ Վահե Միմոնյանին ուղղված գրության տեքստում արձանագրված է Ընկերության լուծարման փաստը, հետևաբար այդ պահից սկսած սույն վարչական գործով հայցվորները հնարավորություն ունենին ձեռնարկելու համապատասխան միջոցներ դատական պաշտպանության դիմելու համար՝ հատկապես այն պայմաններում, երբ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հնարավորություն է տվել հայցվորին վիճարկման հայց ներկայացնելիս վիճարկվող վարչական ակտը հայցադիմումին չկցելու, եթե դա անհնարին է դարձել, մասնավորապես՝ վարչական մարմնի կողմից այդ ակտը հայցվորին չտրամադրելու, չհանձնելու հետևանքով:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոգրյալ գրության բովանդակության ուսումնասիրության արդյունքում բողոք բերած անձինք հնարավորություն են ունեցել իրազեկվելու վարչական ակտի բովանդակության մասին, սակայն չեն ապացուցել օրենքով սահմանված ժամկետի ընթացքում դատարան դիմելու ուղղությամբ իրենցից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ ձեռնարկելու և իրենց կամքից անկախ պատճառներով օրենքով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու հանգամանքների առկայությունը, հետևաբար վիճարկման հայց ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ վերջիններիս միջնորդությունն անհիմն է:

Այսպիսով, սույն բողոքի քննությանը չհաստատվեցին Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 78-րդ, 80-րդ, 135-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 21-րդ, 59-րդ, 60-րդ և 71-րդ հոդվածները խախտելու փաստերը, ուստի վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Վճռաբեկ դատարանը գտնում է ոչ բավարար Վերաքննիչ դատարանի 26.04.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը վերացնելու համար:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 26.04.2021 թվականի «Վերաքննիչ բողոքը բավարարելու մասին» որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

**10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ **ՎԳ/13512/05/21**  
**2022թ.**

Վարչական գործ թիվ

ՎԳ/13512/05/21

Նախագահող դատավոր՝

Կ. Մաթևոսյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

- Նախագահող*    Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
- զեկուցող*     Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
- Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
- Ք. ՄԿՈՅԱՆ

2022 թվականի դեկտեմբերի 14-ին գրավոր ընթացակարգով քննելով «ԷՆ ԷՌ ԷՄ (ՆԵՅՉՐԼ ՌԻՍՈՐՍ ՄԵՆԵՋ-ՄԵՆԹ)» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.05.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «Մոլիբդենի աշխարհ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) թիվ ՇԱԹ-29/174 թույլտվության վրիպակն ուղղելու և դրա գործողության ժամկետը 12 տարի սահմանելու մասին հրաման տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ «Մոլիբդենի աշխարհ» ՍՊ ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Նախարարությանը տրամադրել թիվ ՇԱԹ-29/174 թույլտվության վրիպակն ուղղելու և դրա գործողության ժամկետը 12 տարի սահմանելու մասին հրաման:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) (այսուհետ՝ Դատարան) 03.01.2022 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

10.03.2022 թվականին դատարան ներկայացված դիմումով Ընկերությունը միջնորդել է սույն գործով իրեն ներգրավել որպես երրորդ անձ:

Դատարանի 17.03.2022 թվականի «Դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին» որոշմամբ մերժվել է Ընկերության դիմումը՝ դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 16.05.2022 թվականի որոշմամբ Ընկերության ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.03.2022 թվականի «Դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերությունը (ներկայացուցիչ՝ Տիգրան Նահապետյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածերը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ ու 19-րդ հոդվածները և «Ընդերքի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետը:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկով.*

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ «Մոլիբդենի աշխարհ» ՍՊ ընկերության կողմից սույն գործով ներկայացված հայցապահանջը և Ընկերության ընդերքօգտագործման իրավունքի ստացման դիմումը վերաբերում են նույն հանքավայրին, իսկ Նախարարությունն Ընկերության դիմումի կասեցման վերաբերյալ որոշման կայացումը 21.02.2022 թվականի N ՀՀ/261/1992-2022 գրությանը ուղղակիորեն պայմանավորել է սույն գործի առկայությամբ և դատաքննությանը, ինչով անմիջականորեն շոշափվելու են Ընկերության իրավունքները:

Ավելին, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ Ընկերությունը թիվ ՎԴ/2122/05/22 վարչական գործի շրջանակում արդեն իսկ ստացել է ՀՀ Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրում ընդերքօգտագործման բացառիկ իրավունք, իսկ «Մոլիբդենի աշխարհ» ՍՊ ընկերությունը նշված վարչական գործով ներգրավվել է որպես երրորդ անձ, ինչի մասին Վերաքննիչ դատարանն իմացել է կամ պետք է իմանար բողոքարկվող որոշումը կայացնելուց առաջ:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է վերացնել Վերաքննիչ դատարանի 16.05.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և Ընկերությանը ներգրավել որպես երրորդ անձ:

## **3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի խախտման արդյունքում թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարան դիմելու կամ արդարադատության մատչելիության իրավունքը մարդու՝ սահմանադրաիրավական և միջազգային իրավական նորմերով երաշխավորված դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնարար իրավունքների կարևորագույն բաղադրիչն է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երրորդ անձինք այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են կամ մարմինները, որոնց իրավունքները շոշափվում են կամ անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, ինչպես նաև այն մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնց լիազորություններին առնչվում է կամ կարող է առնչվել ընդունվելիք դատական ակտը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երրորդ անձինք դատավարության մեջ կարող են ներգրավվել իրենց դիմումի հիման վրա:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե դատական ակտը անխուսափելիորեն և ուղղակիորեն տարածվելու է նաև որոշակի անձանց կամ մարմինների վրա, ապա վարչական դատարանը պարտավոր է այդ անձանց (մարմիններին) ներգրավել դատավարության մեջ որպես երրորդ անձ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ երրորդ անձանց դատավարության մեջ ներգրավելու կամ ներգրավման դիմումը մերժելու մասին վարչական դատարանը կայացնում է պատճառաբանված որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ երրորդ անձինք օգտվում են կողմի բոլոր իրավունքներից և կրում են նրա բոլոր պարտականությունները, բացառությամբ հայց (ներառյալ՝ հակընդդեմ հայց) ներկայացնելու, հայցի հիմքը և (կամ) առարկան փոխելու, հայցային պահանջների չափը ավելացնելու և (կամ) նվազեցնելու, հայցն ընդունելու կամ հայցից հրաժարվելու և դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու իրավունքներից:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով երրորդ անձ ներգրավելու հարցին, իր որոշումներից մեկում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը,

որ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածում սահմանել է, որ վարչական դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ դատավարության մեջ որպես երրորդ անձ ներգրավել այն անձանց, որոնց իրավունքները շոշափվելու են գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, այսինքն՝ ընդունվելիք դատական ակտն անխուսափելիորեն և ուղղակիորեն տարածվելու է այդ անձանց վրա:

Նույն որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ անձի արդար դատաքննության իրավունքի էությունից և իրավական բովանդակությունից ակնհայտորեն բխում է, որ դատավարության մասնակից չդարձված անձը պետք է ունենա իր խախտված իրավունքները բոլոր հնարավոր արդյունավետ միջոցներով վերականգնելու իրական հնարավորություն, եթե համապատասխան գործի քննության արդյունքներով կայացված դատական ակտն անմիջականորեն առնչվում է իր իրավունքներին ու պարտականություններին (*լրեն*, «*Բուրգեր Քինգ Քորփորեյշն*» ՄՊԸ-ի ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի նկատմամբ սեփականության գործակալության թիվ ՎԴ/0475/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.12.2016 թվականի որոշումը):

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանել է երրորդ անձի կարգավիճակով դատավարությունում ներգրավվելու երկու հիմք՝ երրորդ անձի դիմումի հիման վրա և դատարանի նախաձեռնությամբ: Ներգրավվելով արդեն իսկ հարուցված վարչական գործի քննությանը և ձեռք բերելով դատավարության մասնակցի կարգավիճակ՝ երրորդ անձանց նպատակն է պաշտպանելու կողմերի կամ դրանցից որևէ մեկի իրավունքների և շահերի հետ չհամընկնող իրենց սուբյեկտիվ իրավունքներն ու օրինական շահերը: Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ մարմիններին դատավարությունում որպես երրորդ անձ ներգրավելու կարևոր նախապայման է ոչ միայն գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով վերջիններիս իրավունքների պարտադիր շոշափվելը, այլ նաև հետագայում գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով վերջիններիս իրավունքները շոշափվելու հնարավորությունը, իսկ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց դեպքում դատավարությունում որպես երրորդ անձ ներգրավելու կարևոր նախապայման է ոչ միայն գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով վերջիններիս լիազորություններին առնչվելը, այլ նաև գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով վերջիններիս լիազորություններին առնչվելու հնարավորությունը:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում հավելել, որ երրորդ անձի կարգավիճակով դատավարությունում ներգրավվելիս դատարանն առաջնորդվում է տվյալ գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտի՝ դատավարության կողմ չհանդիսացող անձի իրավունքները շոշափելու հավանականության չափանիշով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործողության կատարման հայցով հայցվորը կարող է պահանջել նաև օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին

մասի «ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Նույն օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական ակտը չի կարող ընդունված համարվել, եթե դա նույն օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն առ ոչինչ է:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի և ՀՀ վարչական դատավարության 19-րդ, 68-րդ հոդվածների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ընդունված համարվող վարչական ակտը տրամադրելը որպես կանոն առաջացնում է իրավական հետևանքներ կողմերի՝ հայցվորի և պատասխանողի համար: Միևնույն ժամանակ, ընդունված համարվող վարչական ակտի տրամադրմամբ կարող են շոշափվել նաև գործով հայցվոր և պատասխանող չհանդիսացող անձանց իրավունքները: Հետևաբար, դատարանը, գտնելով, որ ընդունված համարվող վարչական ակտի տրամադրմամբ հայցվորին տրվող իրավունքով իրավական հետևանքներ են առաջանում նաև հայցվոր և պատասխանող չհանդիսացող անձանց համար, պետք է ներգրավի վերջիններիս դատավարությունում՝ որպես երրորդ անձ:

*Սույն գործի փաստական հանգամանքներից ելնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.*

Դիմելով դատարան՝ «Մոլիբդենի աշխարհ» ՍՊ ընկերությունը պահանջել է պարտավորեցնել Նախարարությանը տրամադրել թիվ ՇԱԹ-29/174 թույլտվության վրիպակն ուղղելու և դրա գործողության ժամկետը 12 տարի սահմանելու մասին հրաման (**Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 1-7**):

Դատարանի 03.01.2022 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ (**Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 27**):

Դատարան ներկայացրած դիմումով Ընկերությունը պահանջել է իրեն ներգրավել սույն գործով դատավարության մեջ որպես երրորդ անձ՝ իր դիմումը պատճառաբանելով այն փաստարկով, որ 21.02.2022 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հ. Հարությունյանը N ՀՀ/261/1992-2022 գրությամբ (**Հավելված 1-ին, գ.թ. 50**) Ընկերությանը տեղեկացրել է, որ «Մոլիբդենի աշխարհ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 24.12.2021 թվականին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Նախարարության՝ թիվ ՇԱԹ-29/174 թույլտվության վրիպակն ուղղելու և դրա գործողության ժամկետը 12 տարի սահմանելու մասին հրաման տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին: Վարչական դատարանը 03.01.2022 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ և 17.05.2022 թվականին նշանակել նախնական դատական նիստ: Հետևաբար, Ընկերության 20.01.2022 թվականի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի իրավակարգավորման համաձայն՝ քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը (**Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 41-53**):



**Դատարանի 17.03.2022 թվականի «Դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին» որոշմամբ մերժվել է Ընկերության դիմումն այն պատճառաբանությամբ, որ «(...) որևէ կերպ չեն կարող շոշափվել «ԷՆ ԷՌ ԷՄ (ՆԵՅՉՐԼ ՌԻՍՈՐՍ ՄԵՆԵՋՄԵՆԹ)» ՓԲԸ-ի իրավունքները, ինչպես նաև այն անխուսափելիորեն և ուղղակիորեն չի տարածվելու վերջինիս վրա, քանի որ սույն գործով քննության առարկա է հանդիսանում հայցվորին վերաբերող օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի վերաբերյալ վեճը» **(Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 54-57):****

**Վերաքննիչ դատարանի 16.05.2022 թվականի որոշմամբ** Ընկերության ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 17.03.2022 թվականի «Դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին» որոշումը թողնվել է անփոփոխ այն պատճառաբանությամբ, որ «(...) կասեցման համար հիմք է հանդիսացել թիվ ՎԴ-7404/05/20 վարչական գործը, որի շրջանակներում վիճարկվում է հայցվոր ընկերությանը տրամադրված լիցենզիան դադարեցնելու վերաբերյալ 1008Ա հրամանը: Արդյունքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով կայացվելիք դատական ակտը որևէ կերպ չի կարող շոշափել բողոքաբերի իրավունքները: Այն վերաբերում է հայցվորին տրամադրված թիվ ՇԱԹ-29/174 թույլտվությունում առկա ենթադրյալ վրիպակի շտկմանը, որը որևէ առնչություն չունի բողոքաբերի հետ: Իսկ բողոքաբերի ակնկալիքներն այս պահի դրությամբ երևակայական են: Այսինքն՝ որևէ փաստ առկա չէ առ այն, որ հայցվորի կողմից խնդրարկվող վրիպակի շտկումը մերժելու վերաբերյալ դատական ակտի կայացման պարագայում անխուսափելիորեն բողոքաբերին է տրամադրվելու թույլտվություն՝ նույն տարածքում գործունեություն ծավալելու համար: Բողոքաբերի դիմումի վերաբերյալ վարույթը կասեցված է և հնարավոր չէ որևէ կերպ հստակորեն պնդել, որ այդ վարույթի արդյունքում կայացվել է բողոքաբերի համար բարենպաստ վարչական ակտ: Իսկ այն պայմաններում, երբ բողոքաբերին հնարավոր թույլտվության տրամադրումը միանշանակ չէ, սույն գործով կայացվելիք դատական ակտը չի կարող որևէ կերպ առնչվել վերջինս իրավունքներին» **(Հավելված 1-ին, գ.թ. 111-118):**

*Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով սրորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճարել դատարանը գրնում է, որ դրանք անհիմն են հետևյալ պայմանաբանությամբ.*

Այսպես՝ ինչպես արդեն իսկ վերը նշվեց, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ անձը կարող է պահանջել օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը: Մինևնույն ժամանակ, նման փաստաթուղթով կարող են շոշափվել նաև այլ անձանց իրավունքները:

Վճարել դատարանն արձանագրում է, որ այն հանգամանքը, որ հայցվորի կողմից ներկայացվել է թիվ ՇԱԹ-29/174 թույլտվության վրիպակն ուղղելու և դրա գործողության ժամկետը 12 տարի սահմանելու մասին հրաման տրամադրելուն պարտավորեցնելու պահանջ, դեռևս չի նշանակում, որ սույն գործով կայացվելիք դատական ակտը չի կարող առնչվել այլ անձանց իրավունքներին կամ օրինական շահերին:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում սույն գործի փաստերից հետևում է, որ «Մոլիբդենի աշխարհ» ՍՊ ընկերության կողմից սույն գործով ներկայացված հայցապահանջը և Ընկերության ընդերքօգտագործման իրավունքի ստացման դիմումը վերաբերում են միևնույն հանքավայրին, իսկ Նախարարությունը Ընկերության դիմումի կասեցման վերաբերյալ որոշման կայացումը 21.02.2022 թվականի N ՀՀ/261/1992-2022 գրությամբ ուղղակիորեն պայմանավորել է սույն գործի դատաքնությամբ: Ավելին, ՇԱԹՎ-29/174 թույլտվությունը «Մոլիբդենի Աշխարհ» ՍՊ ընկերությանը 06.11.2012 թվականին տրվել է 9 տարի 2 ամիս ժամկետով (**Հավելվածի հատոր 1-ին, գ.թ. 12**), որն օրենքի ուժով ավարտվել է 06.01.2022 թվականին: Այսպես, Վերաքննիչ դատարանի որոշման կայացման պահին «Մոլիբդենի աշխարհ» ՍՊ ընկերությունը ՀՀ, Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի նկատմամբ իրավունքի գրանցման վրիպակն ուղղելու պահանջով դիմել է Դատարան, մինչդեռ Ընկերությունը նույն հանքավայրի ընդերքօգտագործման իր իրավունքի ձևավորման բոլոր փուլերն ավարտել էր և ձևավորել ողջամիտ ակնկալիք նշված հանքավայրի նկատմամբ ընդերքօգտագործման իրավունք ձեռքբերելու վերաբերյալ: Այսպիսով, երկու տարբեր սուբյեկտներ միևնույն ժամանակահատվածում փորձում են ընդերքօգտագործման իրավունք ստանալ միևնույն տարածքի նկատմամբ:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործի քննությունը և դրա արդյունքում ընդունվելիք դատական ակտն անխուսափելիորեն և ուղղակիորեն էական նշանակություն ունեն Ընկերության համար, քանի որ պայմանավորելու են Ընկերության՝ ՀՀ, Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի պաշարների վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստանալու դիմումի բավարարումը կամ մերժումը, ինչով անմիջականորեն շոշափվելու են Ընկերության իրավունքները:

Բացի այդ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ մեկ այլ թիվ ՎԴ/2122/05/22 վարչական գործով, ըստ հայցի Ընկերության ընդդեմ Նախարարության՝ 04.06.2021 թվականի դիմումի վերաբերյալ որոշման կայացման ժամկետի կասեցումը վերացնելուն և Ընկերությանը ՀՀ, Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի պաշարների վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ. Զարիկյան) 22.04.2022 թվականի որոշմամբ բավարարվել է հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին Ընկերության միջնորդությունը, և Նախարարությունը պարտավորեցվել է վերացնել Ընկերության 04.06.2021 թվականի դիմումի վերաբերյալ որոշման կայացման ժամկետի կասեցումը և Ընկերությանը տրամադրել ՀՀ, Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի պաշարների վերագնահատման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն անտեսել է այն փաստը, որ Ընկերությունը թիվ ՎԴ/2122/05/22 վարչական գործի քննության ընթացքում կիրառված հայցի ապահովման միջոցի շրջանակներում արդեն իսկ ստացել է ՀՀ, Սյունիքի մարզի Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրում ընդերքօգտագործման բացառիկ իրավունք, որպիսի պարագայում սույն գործով ցանկացած ելք շոշափում է Ընկերության իրավունքները:

Անփոփելիով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ յուրաքանչյուր անձ, ում իրավունքները շոշափվում կամ անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով, պետք է ներգրավված լինի դատավարության մեջ որպես երրորդ անձ՝ հնարավորություն ունենալով անհրաժեշտության դեպքում պաշտպանել իր սուբյեկտիվ իրավունքներն ու օրինական շահերը:

Հետևաբար, Ընկերության կողմից ներկայացված երրորդ անձ ներգրավելու մասին միջնորդությունը ենթակա էր բավարարման, ինչն անտեսվել է ստորադաս դատարանների կողմից:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 152-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու և նոր դատական ակտ կայացնելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 16.05.2022 թվականի «Վերաքննիչ բողոքը մերժելու մասին» որոշումը և կայացնել նոր դատական ակտ. վերացնել «Դատավարության մեջ երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ դիմումը մերժելու մասին» ՀՀ վարչական դատարանի 17.03.2022 թվականի որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅՅԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

**11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ**

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում  
Վարչական գործ թիվ  
Նախագահող դատավոր՝

ՎԴԻ/3731/05/20  
Հ. Բեդկյան

Վարչական գործ թիվ ՎԴԻ/3731/05/20  
2022թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

*նախագահող* Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
*զեկուցող* Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ  
Ք. ՄԿՈՅԱՆ

2022 թվականի դեկտեմբերի 27-ին  
գրավոր ընթացակարգով քննելով «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ)  
վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.11.2020 թվականի  
«Վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու մասին» որոշման դեմ՝ վարչական  
գործով ըստ հայցի «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) սնանկու-  
թյան գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի (այսուհետ՝ Կառավարիչ) ընդդեմ  
ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), երրորդ անձ՝ Բանկ՝ Երևան  
քաղաքի Հրազդանի կիրճ 79-րդ, 89-րդ և 89/1-րդ, Դ. Փարպեցու փողոցի 22-րդ  
շենքի թիվ 7ա բնակարանի և Մոլդովական փողոցի 43-րդ շենքի թիվ 43 և թիվ  
44 հասցեներում գտնվող գույքերի նկատմամբ Բանկի իրավունքների պետական  
գրանցումն առոչինչ ճանաչելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է առոչինչ ճանաչել Երևան  
քաղաքի Հրազդանի կիրճ 79-րդ, 89-րդ և 89/1-րդ, Դ. Փարպեցու փողոցի 22-րդ  
շենքի թիվ 7ա բնակարանի և Մոլդովական փողոցի 43-րդ շենքի թիվ 43 և թիվ  
44 հասցեներում գտնվող անշարժ գույքերի նկատմամբ Բանկի իրավունքների  
պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Ագրոյան) 30.06.2020 թվականի որոշմամբ Ընկերության միջնորդությունը հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ բավարարվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Ագրոյան) 30.07.2020 թվականի որոշմամբ «Հակընդդեմ ապահովում կիրառելու վերաբերյալ» Բանկի միջնորդության քննարկումը մերժվել է:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ռ. Ագրոյան) (այսուհետ՝ Դատարան) 14.09.2020 թվականի «Հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ Բանկի միջնորդությունը բավարարվել է, և 30.06.2020 թվականի որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովումը վերացվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 11.11.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու մասին» որոշմամբ Ընկերության Կառավարչի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 14.09.2020 թվականի «Կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը՝ Բանկի կողմից ներկայացված միջնորդությունը՝ ՀՀ վարչական դատարանի 30.06.2020 թվականի որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցները՝ Ընկերության Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79-րդ, 89-րդ և 89/1-րդ հասցեներում գտնվող գույքերի օգտագործման և տիրապետման իրավունքը ժամանակավորապես պահպանելու, ինչպես նաև՝ Ընկերության նույն գույքերն օգտագործելու և տիրապետելու իրավունքին խոչընդոտելը, էլեկտրաէներգիայի, ջրի, գազի կամ այլ ծառայությունները դադարեցնելուն ուղղված գործողություններ կատարելը որևէ անձանց արգելելու մասերով վերացնելու մասով բավարարվել է և այդ մասերով Դատարանի 30.06.2020 թվականի որոշումը վերացնելու մասերով վերացվել է, իսկ մնացած մասով որոշումը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը (ներկայացուցիչ Վ. Զհանգիրյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

*Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 10-րդ, 70-րդ և 74-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 91-րդ և 93-րդ հոդվածները:*

*Բողոք բերած անձը նշված պնդումը պարճատարանել է հետևյալ փաստարկներով.*

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտումներն ազդել են գործի ելքի վրա, քանի որ Բանկը գրկվել է իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերի տիրապետման և օգտագործման իրավունքից: Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը ոչ միայն սխալ է մեկնաբանել իրավական նորմերը, այլ նաև պատշաճ գնահատական չի տվել գործի փաստական հանգամանքներին՝ անտեսելով մի շարք առանցքային հանգամանքներ:

Անդրադառնալով Վերաքննիչ դատարանի այն պնդումներին, որ Դատարանը, վերացնելով կիրառված հայցի ապահովման միջոցները, որևէ կերպ չի

հիմնավորել, որ **վերացել է կիրառված հայցի ապահովման միջոցները նշված մասերով պահպանելու անհրաժեշտությունը**, պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ Դատարանի 14.09.2020 թվականի որոշման ուսումնասիրությունից հետևում է, որ Դատարանը ոչ թե գտել է, որ **վերացել է կիրառված հայցի ապահովման միջոցները նշված մասերով պահպանելու անհրաժեշտությունը**, այլ հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքեր ի սկզբանե գոյություն չեն ունեցել, իսկ Դատարանի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը հիմնված է եղել բացառապես հայցվոր կողմի մատնանշած փաստերի վրա, որոնք, բնականաբար, միակողմանի են և չեն արտահայտում օբյեկտիվ իրականությունը:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ Դատարանը, քննելով Բանկի միջնորդությունը, և պարզելով, որ առկա են հայցվոր կողմի ներկայացրած տվյալները հերքող փաստեր, եկել է այն իրավաչափ եզրահանգման, որ սույն գործով հայցի ապահովման միջոց կիրառելու որևէ հիմք առկա չէ, ինչի պատճառով վերացրել է այն:

Բացի այդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը ևս շատ հստակ է այս հարցում. ՀՀ վարչական դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ պարտավոր է կիրառել հայցի ապահովման միջոց, եթե նման միջոց չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը: Այսինքն՝ Դատարանը ոչ թե բոլոր դեպքերում պետք է կիրառի հայցի ապահովման միջոց, այլ միայն՝ երբ ապացուցվում է, որ հայցի ապահովման միջոց չկիրառելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է *«մասնակի՝ բավարարված մասով վերացնել թիվ ՎԴ/3731/05/20 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.11.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու մասին» որոշումը»:*

### **3. Վճարել կատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.**

Վճարել կատարանն արձանագրում է, որ սույն գործով վճարել բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի խախտման հետևանքով առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, որի առկայությունը, սակայն, հերքվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

*Սույն վճարել բողոքի քննության շրջանակներում Վճարել դատարանն անհրաժեշտ է համարում հստակեցնել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան հայցի ապահովման միջոցը վերացնելու հիմքերը:*

Անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու գործուն կառուցակարգերից է դատավարական օրենսգրքերով սահմանված հայցի ապահովման ինստիտուտը: Վերջինիս կարևորությունը պայմանավորված է նրանով, որ այս ինստիտուտի միջոցով ապահովվում է

արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ հանդիսացող՝ վերջնական դատական ակտերի կատարելիության սկզբունքի արդյունավետ իրացումը:

Այս ինստիտուտի գործառույթն ու բովանդակությունը բացահայտված են ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներում:

*ՀՀ սահմանադրական դատարանը 24.11.2020 թվականի թիվ ՄԴՈ-1561 որոշմամբ արձանագրել է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու օրենսդրական հնարավորություն նախատեսվել է այն անձանց իրավունքների պաշտպանությունն ապահովելու և երաշխավորելու համար, որոնք տարբեր պահանջներով դիմել են դատարան՝ ակնկալելով իրենց խնդիրների լուծում, սակայն, կախված հանգամանքներից՝ կան ռիսկեր, որոնք կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել դատական ակտի կատարումը, այդ իսկ պարճատով անհրաժեշտություն է առաջանում ձեռնարկել լրացուցիչ քայլեր, որոնք կապահովեն հետագայում կայացված դատական ակտի պարշաճ կատարումը: Ուարի նման ինստիտուտի նախատեսումն ինքնին իրավաչափ և ընդունելի է պայմանով, որ առկա են համարժեք և բավարար հիմքեր՝ մյուս կողմի իրավունքները և ազատությունները մինչև դատական ակտի կայացումը սահմանափակելու համար:*

*Որպեսզի դատարանը բավարարի հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը, պետք է միջնորդությամբ ներկայացված հանգամանքների լույսի ներքո համոզվի, որ նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել համապարասիան դատական ակտի պարշաճ կատարումը՝ հայցվորի պահանջը բավարարելու դեպքում:*

Մինևույն ժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ գործին մասնակցող անձի ներկայացրած պահանջը դատարանի կողմից բավարարվելու դեպքում դատական ակտի կատարման անհնարինությունը կամ ցածր հավանականությունը իմաստագրկում են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի իրականացումը, քանի որ այդ իրավունքների իրականացման արդյունքում ակնկալվող նպատակին անձն այդպես էլ չի հասնում:

ՀՀ վճռաբեկ դատարանի բնորոշմամբ՝ հայցի ապահովման ինստիտուտը հանդես է գալիս որպես օրենսդրությամբ նախատեսված՝ անձանց իրավունքների պաշտպանության երաշխիքներից մեկը, որով պաշտպանվում են հայցվորի օրինական շահերն այն դեպքերից, երբ պատասխանողը կարող է գործել անբարեխիղճ, կամ երբ այդպիսի միջոցները չկիրառելն անհնարին կարող է դարձնել դատական ակտի կատարումը: Քննարկվող դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Դրանով իսկ այն ուղղված է անձանց խախտված իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն (*տե՛ս, Մեր Ավերիսյանը և այլք ընդդեմ «ԲՏՍ Բանկ» ՓԲԸ-ի ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1807/02/13 քաղաքացիական գործով 27.11.2015 թվականի որոշումը*):

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցի ապահովման ինստիտուտը հետապնդում է կայացվելիք վերջնական դատական ակտի կատարման համար անհրաժեշտ երաշխիքներ ապահովելու նպատակ: Այլ կերպ՝ հայցի ապահովման միջոցի կիրառման նպատակն անձանց ենթադրյալ խախտված իրավունքների իրական և ամբողջ ծավալով վերականգնումը երաշխավորելն է: Ըստ այդմ, հայցի ապահովման միջոց ձեռնարկելով՝ դատարանն

ըստ էության կանխում է հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքի անվերականգնելի դառնալու հավանականությունը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգրք) «Հայցի ապահովումը» վերտառությամբ 15-րդ գլխով սահմանված են հայցի ապահովման հիմքերը, հայցի ապահովում կիրառելու, հայցի ապահովման մասին որոշման կատարման կարգը, ինչպես նաև հայցի ապահովման միջոցը փոփոխելու, փոխարինելու և վերացնելու իրավական հնարավորությունն ու կարգը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման հայցերի դեպքում վարչական դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներն են՝ (...) դատավարության մասնակցին որոշակի գործողություն կատարելն արգելելը. (...):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովումը թույլատրվում է դատավարության յուրաքանչյուր փուլում:

Օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ իրավունք ունի հայցի ապահովման մեկ միջոցը փոխարինելու մեկ այլ միջոցով, փոփոխելու այն կամ վերացնելու:

*Օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված են հայցի ապահովման միջոցի կիրառման հիմքերը, այն է՝*

-հայցի ապահովման միջոցը չկիրառելը կարող է անհնարին դարձնել դատական ակտի կատարումը, կամ

-հայցի ապահովման միջոցը չկիրառելը կարող է դժվարացնել դատական ակտի կատարումը:

Հայցի ապահովման միջոցի կիրառման նշված հիմքերն ուղղակիորեն բխում են հայցի ապահովման ինստիտուտի գործառնությունից ու նպատակից, և չափանիշ են հայցի ապահովման կիրառման անհրաժեշտությունը գնահատելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հայցի ապահովման դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանելու հայցվորի (ապագա հնարավոր պահանջատիրոջ) իրավունքները և օրինական շահերը: Ընդ որում, հայցի ապահովումը կիրառվում է համարժեք և բավարար հիմքերի առկայության պայմաններում՝ մյուս կողմի իրավունքները և ազատությունները մինչև դատական ակտի կայացումը սահմանափակելու համար: Նման պարագայում դատարանի վրա դրված է պարտականություն՝ հիմնավորելու հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու համար համարժեք և բավարար հիմքերի առկայությունը (*Իրեն՝ս, Արտավազ Փարսադանյանը և Նարինե Փարսադանյանն ընդդեմ Հարկադիր կարարումն ապահովող ծառայության թիվ ՎԴ/6921/05/21 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2022 թվականի որոշումը*):

Հաշվի առնելով, որ հայցի ապահովման միջոցի կիրառումը որպես կանոն ենթադրում է դատավարության մյուս մասնակցի (մասնակիցների) իրավունքների սահմանափակում՝ հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությամբ հայցվորից պահանջվում է բավարար, համարժեք և ամբողջական փաստարկների



համակցությամբ հիմնավորել հայցի ապահովման միջոց կիրառելու անհրաժեշտությունը, իսկ դատարանի իմպերատիվ պարտականությունն է միջնորդությամբ ներկայացված փաստարկների բազմակողմանի և օբյեկտիվ վերլուծության ու գնահատման արդյունքում հաստատել կամ հերքել նման անհրաժեշտության առկայությունը: Հայցի ապահովման միջոցը կիրառելու համար դատարանից պահանջվում է բավարար և համարժեք փաստարկների համակցությամբ հիմնավորել, որ հայցի ապահովման տվյալ միջոցը չկիրառելու դեպքում կամ անհնարին կդառնա դատական ակտի կատարումը կամ կոժվարանա դրա կատարումը:

Վերը նշված նորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել վարչական դատավարությունում հայցի ապահովման ինստիտուտին բնորոշ հետևյալ առանձնահատկությունները.

-*հայցի ապահովում կիրառվում է պարտավորեցման հայցի (Օրենսգրքի 67-րդ հոդված), գործողության կատարման հայցի (Օրենսգրքի 68-րդ հոդված) և ճանաչման հայցի (Օրենսգրքի 69-րդ հոդված) հիման վրա հարուցված գործերով. բացառություն են հանդիսանում վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործերը, որպիսի պարագայում օրենսդիրը որպես հայցվորի շահերի պաշտպանության ապահովման իրավական երաշխիք, նախատեսել է վիճարկվող վարչական ակտի կասեցման իրավական հնարավորությունը (Օրենսգրքի 83-րդ հոդված),*

-*հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ որոշումը ենթակա չէ բողոքարկման, որպիսի պայմաններում դատավարության մյուս մասնակիցների շահերի պաշտպանության դատավարական միջոցն Օրենսգրքի 93-րդ հոդվածով սահմանված՝ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, այն փոփոխելու կամ վերացնելու միջնորդությամբ դատարան դիմելու իրավական հնարավորությունն է. ընդ որում՝ հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու, հայցի ապահովումը վերացնելու մասին ՀՀ վարչական դատարանի որոշումը ենթակա է բողոքարկման (Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ),*

-*օրենսդիրը, ամրագրելով դատավարության մասնակցի միջնորդությամբ հայցի ապահովման կիրառված միջոցը վերացնելու իրավական հնարավորություն, չի սահմանել հայցի ապահովման միջոցը վերացնելու կոնկրետ հիմքեր:*

Վճռաբեկ դատարանը հայցի ապահովման միջոցը վերացնելու հիմքերն ու պայմաններն անհրաժեշտ է համարում հարակեցնել հայցի ապահովման ինստիտուտի վերը բացահայտված գործառնության ու նպատակի լոյսի ներքո և հայցի ապահովման միջոցի կիրառման՝ Օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերի համալրեքայում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ որոշման ընդունումից հետո կարող են ի հայտ գալ նոր փաստեր, կարող է տեղի ունենալ փաստական դրության այնպիսի փոփոխություն, որ վերջիններիս առկայության պայմաններում վերանա կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանելու անհրաժեշտությունը: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով հայցի ապահովման գործառնության ու նպատակը, ինչպես նաև հայցի ապահովում կիրառելու օրենքով սահմանված հիմքերը, արձանագրում է, որ նախ՝ հայցի ապահովման միջոցը կարող է վերացվել, եթե հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ դատարանի որոշման ընդունումից հետո տեղի ունեցած փաստական դրության փոփոխության ուժով վերացել է կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանելու անհրաժեշտությունը, այն է՝ հայցի ապահովման միջոց չկիրառելն այլևս չի կարող դժվարացնել

կամ անհնարին դարձնել դատական ակտի կատարումը: Այլ կերպ՝ կիրառված հայցի ապահովման միջոցը կարող է վերացվել այն դեպքում, երբ առկա է գործի փաստական հանգամանքների այնպիսի փոփոխություն, որպիսի պայմաններում հայցի ապահովումը այլևս չի ծառայում իր գործառույթին ու նպատակին և դառնում է ինքնանպատակ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես կանոն հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդության քննարկման արդյունքում որոշում կայացնելիս դատարանն իր տրամադրության տակ ունենում է միայն հայցվոր կողմի ներկայացրած փաստարկները, փաստերն ու ապացույցները՝ ինչով պայմանավորված, գործնականում չի բացառվում, որ դատարանը հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում կայացնելիս հայցի ապահովման միջոցի կիրառման անհրաժեշտությունը գնահատի միջնորդության քննարկման համար էական նշանակություն ունեցող այնպիսի փաստի և/կամ ապացույցի բացակայության պայմաններում, որին տիրապետելու պարագայում կվերծեր հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցի ապահովման միջոցը կարող է վերացվել նաև այն դեպքում, երբ հայցի ապահովման միջոցը կիրառելիս դատարանի տրամադրության տակ չի գտնվել այնպիսի փաստ և/կամ ապացույց, որի առկայության պայմաններում դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը չէր բավարարվի:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդություն ներկայացնելիս դատավարության մասնակցից պահանջվում է ներկայացնել.

-կամ հայցի ապահովման միջոց կիրառելու որոշումից հետո ի հայտ եկած նոր փաստ և/կամ ապացույց, փաստական դրության փոփոխություն՝ հիմնավորելով, որ վերջիններիս առկայության պայմաններում վերանում է կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանելու անհրաժեշտությունը,

-կամ այնպիսի փաստ և/կամ ապացույց, որը դատարանի տրամադրության տակ չի եղել հայցի ապահովման միջոց կիրառելու որոշում կայացնելիս՝ հիմնավորելով, որ այդ փաստին և/կամ ապացույցին տիրապետելու պայմաններում դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը չէր բավարարվի:

Վերոհիշյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությամբ ներկայացված փաստարկները չեն կարող գտնվել հայցի ապահովման միջոց կիրառելու որոշման հիմնավորվածությունն ու իրավաչափությունը վիճարկելու տրամաբանության մեջ: Այլ կերպ՝ հայցի ապահովման միջոցը վերացնելու իրավունքի իրացումը չպետք է վերաձվի հայցի ապահովում կիրառելու մասին որոշման քողարկված բողոքարկման, որպիսի իրավական հնարավորություն օրենսդիրը չի սահմանել: Ըստ այդմ՝ հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդության քննարկման շրջանակներում չի կարող գնահատման առարկա դառնալ հայցի ապահովման միջոց կիրառելու որոշման հիմնավորվածությունն ու իրավաչափությունը:

Ի ամփոփումն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցի ապահովման միջոցը կարող է վերացվել, եթե.

-հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությամբ ներկայացված՝ հայցի ապահովման միջոցը կիրառելու որոշումից հետո ի հայտ եկած նոր փաստի և/կամ ապացույցի լույսի ներքո գնահատելով հայցի ապահովման

միջոց կիրառելու անհրաժեշտությունը՝ դատարանը եզրահանգում է, որ վերացել է կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանելու անհրաժեշտությունը, այսինքն՝ այլևս առկա չէ դատական ակտի կատարման անհնարինության կամ կատարումը դժվարանալու հավանականություն, կամ

- դատարանը գնահատելով հայցի ապահովման միջոցը կիրառելու միջնորդության քննարկման ժամանակ իր տրամադրության տակ չգտնված և հայցի ապահովման միջոցը վերացնելու միջնորդությամբ վկայակոչված փաստը և/կամ ապացույցը եզրահանգում է, որ այդ փաստի ուժով բացակայել է հայցի ապահովման միջոց կիրառելու անհրաժեշտությունը:

**Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.**

Սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության Կառավարչի կողմից ներկայացված հայցադիմումի հիման վրա, որով վերջինս խնդրել է առոչինչ ճանաչել Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79-րդ, 89-րդ և 89/1-րդ հասցեներում, Ղ. Փարպեցու փողոցի 22-րդ շենքի թիվ 7ա բնակարանի և Մոլդովական փողոցի 43-րդ շենքի թիվ 43 և թիվ 44 հասցեներում գտնվող անշարժ գույքերի նկատմամբ Բանկի իրավունքների պետական գրանցումը:

Մինևսույն ժամանակ, հայցվորի կողմից ներկայացվել է հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ միջնորդություն, որով հայցվորը խնդրել է ժամանակավոր պահպանել վիճելի հասցեներում գտնվող գույքերի նկատմամբ օգտագործման և տիրապետման իրավունքը, ինչպես նաև արգելել որևէ անձանց խոչընդոտել Ընկերության և երրորդ անձ գրավատուների նշված գույքերն օգտագործելու և տիրապետելու իրավունքը, կատարելու էլեկտրաէներգիայի, ջրի, գազի կամ այլ ծառայությունները դադարեցնելուն, ինչպես նաև նշված գույքի օտարմանը կամ գրավադրմանը ուղղված գործողություններ՝ բացառությամբ դատական կարգով կատարված գործողությունների:

ՀՀ վարչական դատարանի 30.06.2020 թվականի «Հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ Ընկերության Կառավարչի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ, բավարարվել է. որոշվել է *«ժամանակավորապես պահպանել Հայցվորի և երրորդ անձ գրավատուների Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79, 89 և 89/1, Ղ. Փարպեցու փողոց 22 շենք, 7ա բնակարանի և Երևան քաղաքի Մոլդովական փողոց 43 շենք 43 և 44 հասցեներում գտնվող գույքերի օգտագործման և տիրապետման իրավունքը:*

*Արգելել որևէ անձանց խոչընդոտել Հայցվորի և երրորդ անձ գրավատուների նշված գույքերն օգտագործելու և տիրապետելու իրավունքը, կատարելու էլեկտրաէներգիայի, ջրի, գազի կամ այլ ծառայությունները դադարեցնելուն, ինչպես նաև նշված գույքերի օտարմանը կամ գրավադրմանն ուղղված գործողություններ»:*

Բանկը 05.08.2020 թվականին ՀՀ վարչական դատարան է ներկայացրել հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդություն, որով խնդրել է վերացնել ՀՀ վարչական դատարանի 30.06.2020 թվականի «Հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը այն պատճառաբանությամբ, որ սույն գործով հայց ներկայացնելու իրավունք չունեցող սուբյեկտը ու հայց չներկայացնող անորոշ անձինք օժտվել են անխոչընդոտ ու անորոշ ժամկետով գույքերի տիրապետման և օգտագործման իրավունքներով:

**Դատարանը**, 14.09.2020 թվականի «Հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ բավարարել

է ներկայացված միջնորդությունը և վերացրել է ձեռնարկված հայցի ապահովման միջոցը: Դատարանն արձանագրել է, որ Երևան քաղաքի Գ. Փարպեցու փողոցի 22-րդ շենքի թիվ 7ա բնակարանի և Մուղովական փողոցի 43-րդ շենքի թիվ 43 և թիվ 44 հասցեներում գտնվող անշարժ գույքերի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքը գրանցված չի եղել, իսկ Ընկերության Կառավարիչը պատշաճ ծանուցված լինելու պայմաններում չի ներկայացել դատական նիստին և որևէ առարկություն չի հայտնել, նշված փաստը հերքող որևէ ապացույց կամ տեղեկություն չի ներկայացրել, հետևաբար Կառավարիչը չէր կարող Ընկերությանը չպատկանող գույքերի նկատմամբ իրականացնել որևէ գործողություն, ուստի ձեռնարկված հայցի ապահովման միջոցները ենթակա են վերացման:

Անդրադառնալով Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79-րդ, 89-րդ և 89/1-րդ հասցեներում գտնվող անշարժ գույքերի մասով կիրառված հայցի ապահովման միջոցներին՝ Դատարանը փաստել է, որ Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79-րդ և 89/1-րդ հասցեներում գտնվող անշարժ գույքերը հողամասեր են, որոնք չեն կարող քանդվել, ոչնչացվել կամ այլ կերպ ձևափոխվել, իսկ Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 89-րդ հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ առկա չեն ռեալ սպառնալիքներ առ այն, որ սույն գործով գործն ըստ էության լուծող դատական ակտը Դատարանի 30.06.2020 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովումները վերացնելու պարագայում չի կարող մնալ անկատար:

**Վերաքննիչ դատարանը** 11.11.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու մասին» որոշմամբ Ընկերության Կառավարչի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակի և որոշել է. «(...) Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի թիվ ՎԴ/3731/05/20 վարչական գործով 14.09.2020 թվականի «Կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը՝ երրորդ անձ «Հայէկոնտրանկ» ԲԲ ընկերության կողմից ներկայացված միջնորդությունը՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 30.06.2020թ. որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցները՝ Հայցվորի Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79, 89 և 89/1 հասցեներում գտնվող գույքերի օգտագործման և փրկապետման իրավունքը ժամանակավորապես պահպանելու, ինչպես նաև՝ Հայցվորի նույն գույքերն օգտագործելու և փրկապետելու իրավունքին խոչընդոտելը, էլեկտրաէներգիայի, ջրի, գազի կամ այլ ծառայությունները դադարեցնելուն ուղղված գործողություններ կատարելը որևէ անձանց արգելելու մասերով վերացնելու մասով բավարարելու և այդ մասերով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 30.06.2020թ. որոշումը վերացնելու մասերով վերացնել: Մնացած մասով որոշումը թողնել անփոփոխ»:

Վերաքննիչ դատարանը, անդրադառնալով Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79-րդ, 89-րդ և 89/1-րդ հասցեներում գտնվող անշարժ գույքերի մասով կիրառված հայցի ապահովման միջոցները վերացնելու մասին Դատարանի եզրահանգմանը, գտել է, որ երրորդ անձ՝ Բանկի ներկայացուցչի կողմից դատական նիստի ընթացքում կատարված բանավոր հայտարարությունը միայն չէր կարող բավարար հիմք հանդիսանալ նշված գույքի մասով Դատարանի կողմից 30.06.2020 թվականի կիրառված հայցի ապահովման միջոցները վերացնելու համար: Այսինքն, տվյալ մասերով Դատարանը, վերացնելով կիրառված հայցի ապահովման միջոցները, որևէ կերպ չի հիմնավորել, որ վերացել է կիրառված հայցի ապահովման միջոցները նշված մասերով պահպանելու անհրաժեշտությունը, հետևաբար այդ մասերով Դատարանի որոշումը հանդիսանում է որևէ կերպ չհիմնավորված:

Անդրադառնալով Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79 և 89/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերին՝ Վերաքննիչ դատարանը գտել է, որ տվյալ գույքերի՝ բացառապես հողամասեր հանդիսանալու հանգամանքը միայն չէր կարող բավարար հիմք հանդիսանալ նշված գույքերի մասերով Դատարանի կողմից 30.06.2020 թվականի կիրառված հայցի ապահովման միջոցները վերացնելու համար: Այսինքն՝ տվյալ մասերով Դատարանը, վերացնելով կիրառված հայցի ապահովման միջոցները, որևէ կերպ չի հիմնավորել, որ վերացել է կիրառված հայցի ապահովման միջոցները նշված մասերով պահպանելու անհրաժեշտությունը, հետևաբար այդ մասերով ևս Դատարանի որոշումը հանդիսանում է որևէ կերպ չհիմնավորված:

Վերոգրյալի արդյունքում Վերաքննիչ դատարանը փաստել է, որ տվյալ դեպքում Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79, 89 և 89/1 հասցեներում գտնվող գույքերի մասով կիրառված հայցի ապահովման միջոցները՝ Ընկերության օգտագործման և տիրապետման իրավունքը ժամանակավորապես պահպանելու, ինչպես նաև Ընկերության նույն գույքերն օգտագործելու և տիրապետելու իրավունքին խոչընդոտելը, էլեկտրաէներգիայի, ջրի, գազի կամ այլ ծառայությունները դադարեցնելուն ուղղված գործողություններ կատարելը որևէ անձանց արգելելու մասերով վերացնելով, Դատարանը որևէ կերպ չի հիմնավորել, որ բացակայում է դրանք պահպանելու անհրաժեշտությունը, և որ այլևս առկա չէ կամ վերացել է Դատարանի կողմից 30.06.2020 թվականի որոշմամբ հիմնավոր համարված՝ դատական ակտն անկատար մնալու կամ դրա կատարումը դժվարացնելու վտանգը:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Նախ՝ ՀՀ վարչական դատարանի կողմից 30.06.2020 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները վերացնելու Բանկի 05.08.2020 թվականի միջնորդության ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միջնորդության փաստարկները (Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79, 89 և 89/1 հասցեներում գտնվող խնդրո առարկա գույքերի մասով) առավելապես ՀՀ վարչական դատարանի 30.06.2020 թվականի «Հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման ենթադրյալ ոչ հիմնավորվածության ու ոչ իրավաչափության վերաբերյալ փաստարկներ են, որոնք չեն առնչվում հայցի ապահովման միջոցը վերացնելու՝ Վճռաբեկ դատարանի կողմից հստակեցված վերը նշված հիմքերին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Բանկի 05.08.2020 թվականի միջնորդությամբ Հրազդանի կիրճ 89 հասցեում գտնվող գույքի առնչությամբ չի ներկայացվել և ըստ այդմ նաև՝ Դատարանի կողմից քննարկման առարկա չի դարձվել որևէ փաստ, որը Դատարանին հայտնի չի եղել և հայտնի լինելու դեպքում Դատարանը չէր բավարարի հայցի ապահովում կիրառելու միջնորդությունը: Նշված գույքի առնչությամբ միջնորդությամբ չի ներկայացվել և ըստ այդմ՝ Դատարանի կողմից քննարկման առարկա չի դարձվել նաև ՀՀ վարչական դատարանի 30.06.2020 թվականի «Հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշման ընդունումից հետո ի հայտ եկած որևէ նոր փաստ, փաստական դրության փոփոխություն, որպիսի պայմաններում վերացած կլիներ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանելու անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է Հրազդանի կիրճ 79, 89/1 հասցեներում գտնվող գույքին, ապա վերջիններիս առնչությամբ Բանկի 05.08.2020 թվականի միջնորդությամբ

ներկայացված և Դատարանի կողմից հիմք ընդունված փաստարկը հանգում է նրան, որ նշված հասցեներում գտնվող գույքերը հողամասեր են: Այս փաստարկի առնչությամբ Վերաքննիչ դատարանը վիճարկվող որոշմամբ իրավաչափորեն արձանագրել է. «Դատարանը նշված գույքերի մասով կիրառված հայցի ապահովման միջոցները վերացրել է բացառապես Բանկի ներկայացուցչի կողմից՝ 14.09.2020թ. տեղի ունեցած դատական նիստի ընթացքում բանավոր հայտնած այն տեղեկատվության հիման վրա, որ «Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79 և 89/1 հասցեներում գտնվող անշարժ գույքերը հողամասեր են», որի հիման վրա էլ Դատարանը եկել է եզրահանգման, որ նշված անշարժ գույքերը հողամասեր են, որոնք չեն կարող քանդվել, ոչնչացվել կամ այլ կերպ ձևափոխվել:

Նման պայմաններում Վերաքննիչ դատարանի գնահատմամբ տվյալ գույքերի՝ բացառապես հողամասեր հանդիսանալու հանգամանքը միայն չէր կարող բավարար հիմք հանդիսանալ նշված գույքերի մասերով ՀՀ վարչական դատարանի կողմից 30.06.2020թ. կիրառված հայցի ապահովման միջոցները վերացնելու համար, այսինքն, տվյալ մասերով Դատարանը վերացնելով կիրառված հայցի ապահովման միջոցները որևէ կերպ չի հիմնավորել, որ վերացել է կիրառված հայցի ապահովման միջոցները նշված մասերով պահպանելու անհրաժեշտությունը, հետևաբար այդ մասերով ևս Դատարանի որոշումը հանդիսանում է որևէ կերպ չհիմնավորված:

Ընդ որում, Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև այն, որ Բողոքաբերը, անդրադառնալով Դատարանի այն փաստարկին, որ ք. Երևան Հրազդանի կիրճ 79 և 89/1 հասցեներում գտնվող գույքը հանդիսանում է հողամաս, վերաքննիչ բողոքով ներկայացրել է հետևյալ հակափաստարկը, որ «թեկուզ և նշված հասցեներով տարանջատված են գույքերը, այնուամենայնիվ բոլոր երեք հասցեները հանդիսանում են մի ամբողջություն, առանց ք. Երևան Հրազդանի կիրճ 79 և 89/1 հասցեների գույքի ք. Երևան Հրազդանի կիրճ 89 հասցեում գտնվող ռեստորանային համալիրը հնարավոր չէ պատկերացնել»:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հրազդանի կիրճ 79, 89 և 89/1 հասցեներում գտնվող գույքերի առնչությամբ կիրառված հայցի ապահովման միջոցները վերացնելու հիմքեր (բացառությամբ օտարման կամ արգելադրման գործողություններն արգելելու մասով) առկա չեն եղել, որպիսի իրավաչափ եզրահանգման է եկել Վերաքննիչ դատարանը վիճարկվող որոշմամբ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար չէ Վերաքննիչ դատարանի դատական ակտը վերացնելու համար, քանի որ Վերաքննիչ դատարանը, մասնակիորեն վերացնելով Դատարանի 14.09.2020 թվականի «Կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշումը և պահպանելով Դատարանի 30.06.2020 թվականի որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցները՝ Ընկերության՝ Երևան քաղաքի Հրազդանի կիրճ 79, 89 և 89/1 հասցեներում գտնվող գույքերի օգտագործման և տիրապետման իրավունքը ժամանակավորապես պահպանելու, ինչպես նաև՝ Ընկերության նույն գույքերն օգտագործելու և տիրապետելու իրավունքին խոչընդոտելու, էլեկտրաէներգիայի, ջրի, գազի կամ այլ ծառայությունները դադարեցնելուն ուղղված գործողություններ կատարելը որևէ անձանց արգելելու մասով, կայացրել է պատճառաբանված և հիմնավորված դատական ակտ: Հետևաբար, սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ վճռաբեկ բողոքը

մերժելու և ստորադաս դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու Վճռաբեկ դատարանի լիազորությունը:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 153-րդ, 169-րդ և 171-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 11.11.2020 թվականի «Վերաքննիչ բողոքը մասնակի բավարարելու մասին» որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ  
01.07.2022 – 31.12.2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ**

**Հատոր XVI**



Անտարես

«Անտարես» հրատարակչատուն  
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1  
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69  
antares@antares.am  
www.antares.am